ՍԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

...Ես անբարբառ մի տխուր
Երկու ձեռքս պարբերի,
Եվ իմ անկար թևերով
Ավարտեցնեմ գրկեի...

Ուսուցո ապաստանելի ընտ-
հանուր մարդկութեան ապաստա-
նութեան վերաբերութեամբ, մեծ
խոհեմութիւն ունի...

Ն. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт Литературы им. М. Абегяна

МИКАЭЛ НАЛБАНДЯН

ИЗБРАННЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ

Издательство АН Армянской ССР
Ереван
1953

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ե31.99
Ն-19

ՄԱՏԵՆԱՐԱՆ Է 1961 թ.

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Ա 28786

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն
Երևան 1953

Տպագրվում է
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ:

Կազմեցին և ծանոթագրեցին
Հ. ՄԵԼԻՔՅԱՆ և Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Խմբագիր՝
Մ. ՄԿՐՅԱՆ



N. Lunsford

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ մեծ ռեալյուցիոն-գեմոկրատ Մ. Նալբանդյանի գրական ժառանգությունը միայն առանձին տարիներին գնահատվեց ինչպես հարկն է և արժանացավ ամբողջական հրատարակության:

Ձնայած իր ժամանակի հայ մտավորականի հոգեպարակում էր իր երկերը և ապրում հասարակական ժտի վրա. անոգոմ պայքար մղելով կղերա-ֆեոդալական հասանի և լիբերալիզմի դեմ, այնուամենայնիվ ճա իր կենդանության օրով առանձին գրքով տպագրված տեսավ միայն «Երկու տող» և «Երկոգործությունը որպես ազիզ հանապարհ» աշխատությունները, որոնք գաղտնի բաժանեցվեին Ռուսաստան և Թյուրքիա, լայնորեն տարածվելով ժողովրդի մեջ: Այնուհետև գրաքննական պաժան հետապնդումները այլևս անդադար դարձրին Նալբանդյանի երկերի հրատարակությունը՝ ամբողջ 40 տարի: 1903—1906 թվականներին Ռուսգովում փորձեր եղան Նալբանդյանի երկերը ամփոփել մի քանի հատորների մեջ և հրատարակել: Սակայն գրան նախաձեռնողները չկարողացան այն գլուխ բերել. հազիվ կարողացան երկու հատոր հրատարակել, իսկ հրանցում տեղ գտած երկերը ցնդությական ոգելիքի և հրատարակողների լիբերալ մոտեցման հետևանքով հրապարակ եկան մեծ ապհատումներով. «Երկոգործությունը որպես ազիզ հանապարհ» ճշանավոր աշխատության կարևոր հատվածների այնպիսի կրճատումով,- որը քան էության ազավաղում էր Նալբանդյանի երկի գաղափարական ուղղության բովանդակությունը:

Նալբանդյանի երկերի լրիվ տեքստերի տպագրությունը հնարավոր դարձավ միայն մեր օրերում: Ուոս երկերի առանձին հրատարակությունից հետո, 1940 թվականին Արմֆանը ձեռնարկեց ճա ամբողջ գրական ժառանգության գիտական հրատարակությանը, որոյ թվականին հրատարակելով 3-րդ հատորը: Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի հպարտական վախճանից անմիջապես հետո Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը լույս ընծայեց Նալբանդյանի երկերի 1-ին, 2-րդ և 4-րդ հատորները: Ձնայած իր զգալի բերություններին, այդ հրատարակությունը փաստորեն առաջին անգամ ի մի էր հավաքում Նալբանդյանի մեզ հայտնի գրական ամբողջ ժառանգությունը և ներկայացնում էր ընթերցողին անհրաժեշտ ծանոթագրություններով ու կոմենտարներով. Նալբանդյանի երկերի չորս հատորների, ինչպես նաև 1941 թվականին տպագրված ռուսերեն միհատորյակի, կարճ ժամանակում սպառվելը վկայում է, թե ինչպիսի մեծ հետաքրքրություն կա ընթերցող լայն հասա-

ռակայության մեջ դնելի մեծ ժառանգություն: Վերջին տարիներին Սովետական Հայաստանի գիտնականները Նալբանդյանի ժառանգության մարմնավորման լուրջ հետազոտության և արխիվային նյութերի հիման վրա առավել պարզությամբ ցույց տվին նրա տեղը ռուս ռեալյուցիոն դեմոկրատական մտքի այնպիսի խոշոր դեմքերի կողքին, ինչպիսիք են Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը, Պիսկները և ուրիշներ: Ռուս գիտնականները վերջերս հայտնաբերված նոր նյութերի հիման վրա հաստատեցին, որ Նալբանդյանը եղել է մեծ Չերնիշևսկու մերձավոր և հավատարիմ գինակիցներից մեկը:

Նալբանդյանագիտությունը զարգացման մի այնպիսի ասպարեզի է հասել, որ վերոհիշյալ չորսհատորյակի հրատարակությունն իր արդեն հնացած կոմենտարիաներով ու ծանոթագրություններով, սխալ դրույթներով և տեխնիկական վիճակով, հասկանալի է, որ այսօր չի կարող այլևս բավարարել: Նալբանդյանի գրական ժառանգության նոր, գիտական հրատարակությունը հրամայական պահանջ է դարձել:

Նկատի ունենալով, որ Նալբանդյանի երկերի 1940—1949 թթ. հրատարակությունը վաղուց սպառված է և նրա լիակատար երկերի նոր հրատարակությունը պահանջում է լուրջ նախապատրաստական աշխատանք, բներեցող հատարակության բուռն պահանջը բավարարելու համար, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտը այժմ հրատարակում է Նալբանդյանի բնտիր երկերի սույն մի հատորյակը:

Այս հատորում զետեղված է Նալբանդյանի բե գեղարվեստական ստեղծագործության, հրապարակախոսական, գրականագիտական ու փիլիսոփայական երկերի և բե համակերի հանրածանոթ բնտիր մասը:

Ներկա հրատարակության համար հիմք է բնդունված նախորդ հրատարակության տեքստը, բացառությամբ «Երկու տող», «Երկրագործությունը որպես ուղիղ հանապարհ» և «Երեխիկա Սոս և Վարդիքեր» նշանավոր աշխատությունների, որոնցից առաջին երկուսի համար հիմք է բնդունվել հեղինակի կենդանության օրով տպված տեքստը, իսկ վերջինի համար՝ Նալբանդյանի ձեռագրի ֆոտոպատճենը, որը պահվում է Գրական բանգարանի Նալբանդյանի արխիվում:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.Ջ.Ա.Տ.Ո.Ւ.Թ.Յ.Ո.Ւ.Ն

Ազատ ստվածն այն օրից,
երբ հանեցավ շունչ փչել,
իմ հոգանյութ շինվածքին
կենդանություն պարգևել.
ես անբարբառ մի մանուկ
երկու ձևոս պարզեցի.
եվ իմ անզոր բևերով
Ազատությունն գրկեցի:

Մինչ գիշերը աննահանգիստ
Օրորոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մորս ոուները խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ոխանեցի
Ազատությունը սիրել:

Թորով լեզվիս մինչ կապերը
Արձակվեցան, բացվեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խոսքն որ ասացի,
Չէր հայր, կամ մայր. կամ այլ ինչ.
Ազատությո՜ւն, դուրս թռավ
Իմ մանկական բերանից:

«Ազատությո՜ւն» ինձ կրկնեց
Ձակատագիրը վերևից.
«Ազատությա՜ն դու զինվոր
Կամիս գրվիլ այս օրից:

Ո՛ն, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փոթանք կը սպասե.
Ազատություն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է:

— Ազատությո՞ւն,— գոչեցի,—
Թող առատա իմ գլխին
Փայլակ, կայծակ, ճուր, Լերկար,
Թող դավ դնեն բշնամին,
Ես միշչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու այուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար ազատությո՞ւն:

ՀԻՄԱՐԱՅ ՈՒՄՄԱՆ ՎՐԱ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՐԾԻՔԸ

Ի՞նչ ըս անձնդ մանուկ մատաղ՝ կըշարչարես նաֆիլէն,
Հոդիդ կյանդդ ուսման համար՝ որ շատ հիմար պոշ պան է.
Վարդապե՞տ մը կուզես ըլլալ, թե աստղաբաշխ փիլիսոփա,
Թե կուզես որ՝ իմաստասիրյանդ վրա աշխարհ զարմանա:
Ինչո՞ւդ է պետք դրել կարդալ՝ որ մեկ փողի չի աժեր,
Գլխիդ հազար գիրք ժողովել՝ բանդ դործդ ձգել անտեր:
Ի՞նչ հարկավոր միշտ ամեն օր՝ նոր նոր բաներ մտքիդ հանել,
Կամ աստչման ընկերներուդ՝ ախմախ, հիմար, պակաս կանչել:
Արի՛ երթանք շուտով խանութ մեր գանագան հնարքով
Աչքերնէ ծախենք թնկուզ մեր հորը, սակայն շատ մեծ օգուտով:
Ինձ վրա դուս մեկ լավ նայէ՝ որ չգիտամ անունս գրել,
Ընդ հակառակն փողը ճիպտամս՝ հազարավոր ձեզ է հանել:
Դուս ե՞րբ տեսար խելոք գիտուն՝ որ հորներուս տառիվով
Աստված պաշտեր, ժամը երթար, պատը պահեր հավատքով.
Արի՛ բա՛ց թող այդ ուսումը, դուս որ այժմեն՝ չես հավան
Եկեղեցվո կանոններուն, վաղը կըլլաս փրոտեստան.
Ո՛չ պատ գիտնաս և ո՛չ ուսիք, ո՛չ հավատքով աղոթել.
Ո՛չ մեղքդ լալ ջերմ արցունքով, ո՛չ աստուծո տուն մտնել:
Ճենպրգ նայէ թե որ լի՛ք է ասկի արծաթի փողերով,
Փիլիսոփա գիտնականեն դուս միշտ վե՛ր ես՝ իմ խելքով՝
Ձերն փողով ամեն բանը կը լըմընաս աշխարհիս,
Բայց ուսումով գիրք կարդալով չի կըշտանալ փորերնիս:
Ներկա դարուս ուսումնականք ինչ մեծ գիտեն, ինչ իշխան.
Ազատ աստված մեզ առնղծեց, կասեն կելլան մահ կուգան,
Բայց որ երթանք մենք խանութը, բարև կուտանք ամենուն
Եթե աղա՝ իշխան՝ անձինք՝ մեղիմեն պատիվ կառնուն,
Փող շատ ըլլա՝ ուսանք հագնենք՝ գինին խմենք ու պառկենք.
Եվ աս կերպով մեր օրերնիս՝ ուրախությամբ անցընենք.
Մեր գիտցածը մեզի կօգնե, թե հավատքի զորությունը,
Եկեղեցի, ավետարան, ամուր պահենք մեր մտքումը:

ՄԱՐԴԱՐԵ

(ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ)

Հավերժը ինձ՝ այն օրից երբ
Շնորհ ավից մարգարեի,
Ջարուխյան ու հանցանքի էջը
Մարդոց աչքում կարդում էի։

Ես սկսա անր քարոզել,
Սուրբ ուսումը Ճշմարտության.
Ինձ մերձավորքս ես կատաղած
Քար ձգեցին անարդությամբ։

Մոխիր ցանած գլխիս վերա
Ես քաղաքից փախա աղքատ.
Անապատում բնակիմ ահա
Տյառն շնորհիվ, ինչպես թռչնակ։

Հավերժի ուխտը պահելով,
Ինձ արարածք խոնարհում են.
Առյուծն էլ խոտքիս լսելով
Ուրախ շողերով խաղում են։

Բայց, երբ ամբոխված քաղաքից
Ես շտապով անցնում եմ,
Մերերը անձնասիրությամբ
Յուրյանց տղերքին ասում են.

«Նայեցե՛ք, սա օրինակ ձեզ,
«Զատրեց մեզ հետ, նա հպարտ էր,
«Կուզը ուզեց հավասարել մեզ
«Թե նորա բերնով ասածք խոսում էր։

«Նայեցե՛ք, տղերք, նորա վերան,
«Ի՞նչպես նվաղ ու դունաթափ.
«Ի՞նչպես, անարդ, խեղճ, կենդանիեմ
«Ի՞նչպես անարգում են նորանս։

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Քանի բանաստեղծն չունի մուսայից
Մի բան երգելու հատուկ հրամանի,
Նորա քնարը միշտ մունջ է մնում,
Մութը անհոգի, անզոր ու անձայն։

Բայց երբ երկնքից կը փայլի հոգուն
Անաղոտ լույսը պայծառ արևին,
Նա կմոռանա բոլոր աշխարհը,
Այլ չի պատկանիլ նա այս աշխարհին։

Գրիչը ձեռին թղթի դաշտումը
Կվազի արագ, ինչպես եղջերու,
Ո՛չ ոք չէ կարող նորա հակառակ
Իզուր փորձ փորձել կամքը կոտրելու։

Նա այն ժամանակ սուր ունի հատու,
Կրծակ է թափում այրող բերանից.
Մուսան նորանով խոսում է մեր հետ,
Սիրտ է դմայլում նորա երգերից։

Նա այն միջոցին ոչինչ այլ բան չէ,
Բայց եթե թարգման մուսայի խոսքին,
Նորա ասածը, որ նա լսում է,
Մեղի բաշխում է դինչ գոհար անգին։

Ոչինչ դատավոր, ոչինչ իրավունք
Չեն այնքան սուրբ, ճիշդ, չինչ, քան հայելին.
Որքան դատաստան բանաստեղծ հոգուն
Մի բան ասելո՞ վ թե շար, թե բարի։

Ողջ մին է նորան՝ եթե թագակիր,
Եթե սոսկական քաղաքացի լոկ.
Պատճառ՝ ուղիղը խոսելից հետո
Պետք է սպասել դառնալու մերկ, բոկ։

ՎԱՂՈՂ ՉՐԻՆ

Իսառակ ջուր վազուկ, արդյոք ի՞նչ կլիներ,
Որ քո ալիքներ տաներ իմ ցավեր,
Կամ ի՞նչ կլիներ, թե իմ վիշտ ու լաց
Ինչպես ծուխ օդում ցրվեին հանկարծ։

Կամ ինչո՞ւ համար ուրախությունը
Թռչում է շուտով, մընում է ցավը.
Ո՛ղ քո ալիքներ ցնդեն իմ վշտեր,
Լվանան սիրտս ո՛ղ քո մաքրիկներ։

Սիրտս խոցված է զանազան կողմից,
Արյուն ու շարավ կիջափի նրանից.
Լվա՛, մաքուր ջուր, արբե՛ ինչպես հուր,
Ո՛ղ փայլի սիրտս, չքմնա մի մուր։

Դու ստրկացիր ինձ՝ երբ որ ես ծնա,
Ես քո մեջ իսառակ ձեռքով թաղվեցա.
Դու լվացող ես հոգու ու մարմնի,
Լվա՛ իմ սիրտս, ո՛ղ քեզ պես փայլի։

Ողղ մաքուր լինիմ, ինչպես դու ստուր ես,
Ողղ ողջ աշխարհին երևիմ քեզ պես։

ՎԵՑԵՐՈՐԴԸ—ՄԻ ՇՆԱՐ

Նվիրապացոց առհասարակ քաղաքական մի ծես էր,
Որ այր մարդը հանդիպելիս՝ կնոջ ձեռը կպաչեր.
Չկար Քեև խնեչության մի անպարկեշտ նշանակ,
Բայց վեցերորդ Պիոս պապը դուրս ուվեց մի մեծ կոնդակ.

«Որ ոչ մի մարդ այնուհետև կին մարդու կամ աղջկա
«Ջըհանդգնի ձեռը պաչել ըստ հասարակ կանոնին,
«Քեև լոկ նայելն աղջկերանց և կամ կնիկներուն վերա
«Մասամբ մեղք է, արդեն ընդդեմ ասովածային օրենքին»։

Նա պատժում էր, նզովում էր հրապարակավ մարդերը,
Որ յուր խոսքը չէին պաշտում ու յուրյանց հին կանոնով
Վարվում էին միշտ համարձակ, ինչպես յուր քարտուղարը
Բռնըվեցավ այս հանցանքում ու դատվեցավ ժողովով։

Քարտուղարը խելոք մարդ էր, նա գիտեր, որ Պիոսը,
Քեև կին դանե, պիտի անշուշտ պաչե նորա ոտները,
Բարկացել էր նորա վերա, յուր ամոթի փոխանակ
Աշխատում էր ոչջ քաղաքին պապը առնել խայտառակ։

Չգիտեմ ինչո՞ւ. բայց գիտեմ որ Գերմանիո Թագուհին
Հյուր էր եկել պապի մոտը մի օր, երբ նա տանը չէր.
«Պարտեզումը նա ճեմում է» — ծառաները ասացին.
Թագուհին էլ գնաց պարտեզ, որ գտնվում էր տան մոտին։

Իմ պապը երբ տեսավ նորան, տեսավ չքնաղ երեսը,
Սի էր գալի երակներում... արյունը.
Թեպետ նա միշտ անսխալ է ու Քրիստոսի փոխանորդ,
Սակայն բռնեց ձեռքը տիկնոջ, գաշեց նորան իրեն մոտ։

Երբ առանձին չերմ համբույրներ նորա ձեռին տալիս էր,
Քարտուղարը ծառի հետքից՝ պարզ ամենը տեսնում էր.
Նա յուր մտքում ուրախացավ, ասաց՝ ա՛ ա՛ դու էլ ընկար.
Առավ ածուխ, գրեց պատին. «վենգերորդը՝ մի՛ շնորհ»։

Պապը տեսավ որ յուր գործը քարտուղարը իմացավ,
Այլն կոնդակը որ տվել էր, բոլորովին չքացրավ.
Քարտուղարը այն մասին գրեց, որ պապը վենգերորդ էր,
Մանավանդ այս համարները խորհրդական են ինչևիր։

1855 թ., Մոսկվա։

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

«Հայրիկ, ասաց դուստրը հորը,
Կապույտ երկնքի վերա
Ո՞րքան աստղեր փայլում են վառ,
Ասես համար, թիվ չըկա.
Ասում են որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում.
Ճշմարի՞տ է, ասա՛, հայրիկ,
Իմը ո՞րտեղ է փայլում»։

— Այո՛, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիվ ու համար,
Եվ մեզանից յուրաքանչյուր
Մի աստղ ունի յուր համար։

«Հայրիկ, տես, տես, աստղը թռավ,
Հետքից պայծառ դիծ թողեց.
Աստղիկն ընկավ երկնքիցը,
Մյուս անգամ այլ չերևեց»։

— Ո՛հ, իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ յուր օրում, յուր կյանքումը
Խիղճ աստծը չը գիտեր.
Աղքատներըը նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածված.
Մի մարդ չը կար նորան ծանոթ,
Որ չը լիներ վշտացած։

«Հայրիկ, տես, տես, աստղ թռավ,
Հետքից պայծառ դիծ թողեց,
Աստղիկն ընկավ երկնքիցը,
Մյուս անգամ այլ չերևեց»։

4 28786

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

— Ով իմ զավակ, մի՛ վրդովվիր,
Դա աղջկա մի ասող էր,
Որ յուր հոր ու մորը խոսքը
Յուր կյանքումը հարգած չէր.
Նա փախել էր յուրյանց անից...
Մուր էր բանլ ատն վնրա...
Յուր ծնողքը լացուցել էր,
Ինչքը վատնել անխնա։

«Հայրիկ, զարձյալ ինամ մի ասող,
վայր ընկավ նա երկնքից.
Հայրիկ, ովի՞ ասողն էր արդյոք,
Որ զրկվեցավ յուր տեղից»։

— Ո՛հ, զաորիկս, հանգիստ կացիր,
Կեղծավորի դա ասող էր,
Որ յուր օրում ուղիղ մի խոսք
Մարդու երբեք ասած չէր.
Փարիսեական յուր ձևերով
Աշխարհք խաբեց, զարմացուց,
Այդ պատճառով ասոված նորա
Ասողի լույսը խավարցուց։

«Հայրիկ, տես, տես, մյուս ասող ինամ
Ով գիծ անգամ չը ինդեց,
Ասողինն ընկավ երկնքիցը,
Մյուս անգամ այլ չերևեցա։

— Ո՛հ, սիրական, խաղաղ մնա,
Բռնակալի դա ասող էր,
Որ աշխարհը յուրյան դևրի
Ծնած օրից կաթնել էր,
Շատ հալածանք, շատ նեղուիյուն
Պատճառեց նա յուր կյանքում.
Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց,
Գութ չունեցավ յուր սրտում։

«Ապա այն ի՛նչ ասող է, հայրիկ,
Որ այնպես պարզ վառվում է,
Նորա մաքուր պայծառ լույսը
Ջորա կողմը քակ բռնել է»։

— Ո՛հ, իմ զաորիկ, աղո՛թք արա,
Դա ծերունու մի ասող է,

Որ յուր կյանքում ոչինչ մարդու
Ոչինչ վնաս տված չէ.
Այն յուսավոր բանն է նորա
Առաքինի գործքերը.
Ազոխք արա, որ երկարվին
Նորա կյանքի ինելերը։

Շատ օր չանցավ, երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց.
Ովի՞ աստղին էր որ բնկավ,
Բան հարցանող չերևնց։
Մինչ գնո յուսինն արծաթափայլ
Լույս էր տալիս գիշերին,
Խորհրդավոր մինչ տիրել էր
Անվրդով խոր լռություն.
Մի սրտաճմլիկ, մազերն արձակ
Վազեց աղջիկ ոգավոր
Դևպի գեղի գերեզմանքը,
Մտնիկ շոքեց մի շիրմի մոտ։
«Հայրի՛կ, աստղիկդ չէ փայլում,
Դու Համլետյան բնեցիր.
Ա՛ռ ինձ քո մոտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչո՛ւ անտեր թողեցիր։
Իմ աստղիկն ասա՛ նույնպես,
Որ չը փայլի. հերի՛ք է.
Այս աշխարհը ինձ առանց քեզ
Մութն ու խավար մի բանտ է»։

Մի մարդ չը կար, որ նկատեր,
Որ հեռվյալ գիշերին
Պակասեցավ երկնքիցը
Մի պայծառ աստղ խնդագին։
Նրբորդ օրը շատ ոգավորք
Փորեցին մի գերեզման,
Ուր թաղվեցավ յուր հոր մոտին
Մարմինը խնդճ աղջկան։

«Հայրիկ, տես, տես, աստղը թռավ,
Հետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկավ երկնքիցը,
Մյուս անգամ այլ չերևնց...»

Ա.Գ.ՔԱՏ ԿԻՆ

Ցուրտը փչեց. ձմեռ սաստիկ.
Ձյունը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտավ յուր տուն,
Պատսպարվիլ ցրտից ըզ·
ժամի դռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին.
Նորա հանդերձը պատառ, պատառ,
Չունի շապիկ յուր հագին.
Անհամարձակ նա յուր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութիւն արէ՛ք, պարոն,
Անտուն, անտեր աղքատին»·

Ձեզ, սիրելիք, ասե՞մ ով էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը, ոտաբոբիկ
Կանգնած, ժամի դռնումը.
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատվով
Մտն էր գալիս փողոցներում
Յուր սևփական կառքերով
Այժմ վախով նա յուր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութիւն արէ՛ք, պարոն,
Անտուն, անտեր աղքատին»·

Մինչ թատրոնում հայտնվում էր,
Մինչ խաղում էր հանդիսում,
Դղրդում էր թեատրոնը,
Նա գոփնիք շատ էր հնձում.

Ժողովուրդը հավաքվում էր
Մոտ թատրոնի պատշգամբին.
Չէր կշտանում նայել նորա
Բնքուշ շքնաղ երեսին.
Այժմ նորան չեն ճանաչում,
Մոռացել են բնավին—
«Ողորմություն արե՛ք, պարոն,
Անառուն, անտեր աղքատին»։

Ամենայն օր նորա դռնում
Կանգնած էին շատ կառքեր.
Միշտ հացկերույթ, ընթրիք, գինի,
Նվագարան ու տաղեր.
Ամենայն որ ցանկանում էր
Լինել նորան բարեկամ.
Ամենայն ժամ նորան բաց էր
Ճոպյլ թաղկը մեծատան.
Այժմ գրկված ամեն բանից,
Չունի անգամ հացի գին—
«Ողորմություն արե՛ք, պարո՛ն,
Անառուն, անտեր աղքատին»։

Ամենայն օր յուր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լվանում էր, մազը սանրում
Ոսկյայի սանրով.
Նա հագնում էր բնհնդ, կնրպաս,
Դիպակ, թավիշ թանկագին.
Նա չգիտեր ի՞նչ ասել է
Արծաթի կարոտություն.
Այժմ անլվա, մազերն արձակ,
Չունի հագուստ թեև հին—
«Ողորմություն արե՛ք, պարոն,
Անառուն, անտեր աղքատին»։

Նորա շքեղ ննջարանում
Բնակվում էր Աստղիկը.
Նորա որդին փայփայում էր
Նորան ամբողջ գիշերը...
Ախտաբորբոք երիտասարդք
Յուրյանց անձը երջանիկ
Էը հաշվեին, թե լինեին

Նորա ձևորում խազայիր...
Այժմ փողոցում բնում է նա
Խոնավ պատերի տակին—
«Ողորմություն արե՛ք, պարոն,
Անտուն, անտեր աղքատին»։

Ժամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ճուկ.
Նորա նախկին բարեկամքը
Չեն ասում նորան, «խղճուկ,
Ե՛կ դու մեր մոտ, մեր կամոքենք
Քո վիճակի դառնություն,
Որ յուզեննք ճակատագրիդ
Խիստ հարվածի ատատկությունը»։
Նա տանում է, տատապելով,
Այս սոսկալի վշաերին—
«Ողորմություն արե՛ք, պարո՛ն,
Անտուն, անտեր աղքատին»։

Ա. ՊՈԼՈՆԻՆ

Դու Ապոլոն, որ ամէնը
Ինձ այս քնար հոգնամաշ,
Ակո՛, գոհ չե՛մ քնզանից.
Տրանջում է և աչխարհ։

Երբև պատիժ ինձ ամէնը,
Տրտում սրտիս մխիթար,
Թե՞ գգալով չարչարվիլ
Ու չքանալ վայրապար։

Ա՛ո նորան հետ, ինձ պետք չէ,
Տո՛ւր ուրիշի, ում կամիս.
Քնզ մի անգամ ասել եմ,
Հիշի՛ր նիև միտք ունիս։

Կյանքիս գարունն է անցել,
Ինձ ուշացած է քնար.
Ծառը աչխարհ պանդխտիլ
Ինձ մնում է մշտահար։

Բայց դու, որ քնզ մարդ ոկար
Ասուված կանչնց ու խնկնց,
Մի՛ կարծներ իև միջարնկ,
Գիտ՝ պաղատիմ դնպի քնզ։

Ես կընդունիմ կամակար,
Թե բախտ անգութ ոխնրիմ
Մատռվակն Բույն, լնզի
Յուր ատփորից, ինձ բաժին։

Բայց ո՛չ երբնք պիտ՝ աղաղամ
Ոտքիդ առակում ինչպնս շատ
Մարգնկ, որ չնն իմանում,
Թե էակնր նն ազատ։

Էմս, 1859 մայիս 31

ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հայ մարդ, հայ ազդ, ասա՛, արդյոք
Ո՛րտեղ է քո հայրենիքդ.
Կամ ունի՞ս դու ուրևիցե,
Ո՛վ են արդյոք ազգակիցքդ։

Հայ մարդ, ասա՛, ո՞ւր է տունդ,
Հայ մարդ, ո՛րտեղ քո կենարոնդ,
Ունի՞ս մի բան քեզ անփոխան.
Ցույց տուր ինձ դու քո պարծանքդ։

Ա՛հ նէ հայրենիք, հիմար ազնգ,
Հարցանում ես դու ինձանից.
Ուր եմ ծնած, ա՛յդ ես քննում.
Այտտեղ եկած եմ Թիֆլիզից։

Ես տուն ունիմ և այն քարյա
Երկու հարկով շենք փառավոր.
Ծառաներիս թիվը չը կա,
Իմ հյուրերը հաբյուրավոր։

Եղբարք ունիմ, ունիմ որդիք,
Դստերք ու այլ շատ ազգական,
Ընտիր ծանոթք, շատ մեծատունք,
Ունիմ փեսա և այն իշխան։

Իմ պարծա՛նքը, հիմա՛ր ազնգ.
Ցույց տուր ինձ դու հառաջ քոնը.
Ճաշ եմ ուտում, աղնիվ ընթրիք,
Որ չէ կերել Լուկուլլոսը։

Ես խմում եմ շամպայն, մադեռ,
Ուրցնում ես դու փորդ չրով.
Ունիմ բանի առնակ կատրիր,
Բայց դու ման ես գալիս ոտքով։

Ռակի, արծաթ, գոհարնդեն,
Իմ պարծանքը, իմ գանձերը.
Ին գոցանով չես բավական,
Տե՛ս իմ երկու պատվի նշանը։

Դու ի՛նչ կենսարան ես հարցանում,
Իմ կենսարանը է իմ փորը.
Ռակի, արծաթ, հարստություն,
Ահա կյանքիս լոկ խորհուրդը։

Բան ես ուսել, հիմար գլեղ,
Ին հայրենիք պիտի սիրել.
Բայց ին ի՛նչպես հարկավոր էր,
Ամենևին չիամիք լսել։

Ես սիրում եմ հայրենիքը,
Նորան միշտ ու միշտ գովում եմ.
Ծառը ազգի առաջևը
Գլակատությունքը ծածկում եմ։

Ին մի աղքատ կը գա իմ մոտ,
Նորան կը տամ ողորմություն.
Բայց ին ո՞րքան, կամ ի՞նչ չափով,
Այդ քո գործ չէ, ներողություն։

Ամենայն օր դուք մեր ազգը
Բամբասում եք անխղճմտանք,
Ազգի գլխից ձերպհաններով
Նկավ անցավ այնքան փորձանք...

Ողորմելի՛, դու կարծում ես,
Ին հայրենիքդ սիրելով
Բան կը շինես. սխալվում ես,
Այդպես հիմար մտածելով։

Քո ուսումը չէ կշտացնում
Իմ, կամ իմպնդների փորը.

Մեզ պիտո է Հարատութիւն,
Որ պարտքենք մեր մարմինը։

Հազու համար ուսում պետք չէ,
Բ՛ը աւրերդը ուսյալ էին.
Կրանի ծեռքը պահելով,
Անշուշտ կերթամ արքայութիւն։

Ուրախացի՛ր, դու Հայաստան,
Լսելով քո որդու խոսքը.
Փառք ու պատիվ քե՛զ կը բերեն
Քո մարմնապաշտ մեծատուններդը։

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

Մանկությա՜ն օրեր, երազի նման
Անցար գնացիր, այլ չեր դառնալու.
Ո՜հ դուք երջանիկ, ո՜հ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու։

Ջեզանից հետո եկավ դիտությունն
Յուր ծանր հայացքով աշխարհին վերա,
Ամեն բան քննավ մտածությյան տակ,
Բոպե չմնաց ազատ կամ ունայն։

Գիտակցությունը հաչորդեց սրտան.
Ապրի վիճակը ծանրացավ սրտիս...,
Ապրելն ուվեց ինձ յուր քնարը,
Որպես փարատիչ սրտում ցավերիս։

Ավա՜ղ. այդ քնարը իմ ձեռքում հնչեց
Նույնպես լալագին, նույնպես վշտահար,
Ինչպես իմ սիրտն էր, իմ զգացմունքը.
Ուրախացուցիչ չգտա մի լար։

Ես այն ժամանակ միայն զգացի,
Որ այդ ցավերից ազատվելու չեմ,
Որշափ իմ ազգս կը մնա սուրուկ
Օտարների ձեռք, անխոս, տխրագեմ։

Մանկությա՜ն օրեր, ինչո՜ւ այդպես շուտ
Թռաք գնացիք, անդարձ հավիտյան.
Ես այն ժամանակ անհոգ ու ազատ
Կարծում էի ինձ աշխարհի իշխան։

Գերության շղթան ինձ զգալի չէր,
Եվ ոչ բռնության անգութ ձանկերը.
Ընդանիք հետս ծանրացան նորա,
Ո՛հ, անիծում եմ ես այս օրերը։

Լո՛ւռ կաց, դու քնար, այլ մի՛ հնչեր ինձ,
Ապրելն, հե՛ռ առ դարձյալ դու նորան,
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Ջոհ բնելել կյանքը սիրած ազգիդան։

Ես պիտի դուրս գամ դևպի հրապարակ
Առանց քնարի, անզարդ խոսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով։

Ներկա օրերում այլ ի՛նչ ես քնար,
Սուր է հարկավոր կտրճի ձեռքին.
Արյո՛ւն ու կրա՛կ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին։

Թո՛ղ պատգամախոսը, հնացած Դևլֆի,
Յուր նստատեղը վերա փրփրի.
Թո՛ղ մխչին դարու գաղափարներով
Ամբոխը խաբել ձգնի աշխատի։

Թո՛ղ նա թարգմանե զրպարտությունը,
Թո՛ղ մխիթարվի ծովի ափերում,
Մենք ազատության ենք միայն թարգման,
Միայն այս խոսքս ունինք բնթանում։

«Ո՛վ հայր, ո՛վ դու հայր, որ երկնքումն ես,
Խնայիր թշվառ մեր անառակ ազգին.
Մի՛ սար զոհ գնալ թշնամիներին».
Նա այլ չէ լսում դևլֆյան հարցուկին։

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲԻ ՏՈՆԻՆ

Տավսես ինև օրենք տվնց,
Բայց գիրը կար շատ առաջ,
Մեսրովբ ազգերին գիր տվնց,
Զարժե՞ սա մի խաչնարած։

Այո՛, և սա արածում է,
Բայց հայ ազգի գառներր,
Սորա հոտը լուսակիզն է.
Ի՞նչ էր քուրմ Հոմորինը։

Գոռնպնդած մե՞ծ Պարսնի—
Սահակի հետ միասին,
Աշխա՞րհ ծնան, լո՞էյս աշխարհի.
Մա՛հ, մի՛ մոտեցիր սուրբին։

Հուր լուսամեմ նշանը վառ,
Էջմիածնից Օշական
Գագաղին վրա բռնած պար՝
Չէ՞ր բուն լույսը Մեսրոպյան։

Նա Մեսրովբին՝ աստղերից վեր
Գրնց անուն բոցավառ,
Թող գան, երթան բյուր բյուր դարեր.
Նորան չի տիրել խավար։

Յո՛հա՛, ծիրած իմաստակներ,
Վաստակի զարմ ուրացող,
Ո՛ւր եք նամաղուլ քհնաբներ
Անուս, որպես հերձվածող։

Իբր. «Մեսրովբ պարտական է
Սբվաղցի[1] Մխիթարին.
Հացնկացին[2] սիրել է,
Բայց կատարել Սբվաղցին»։

Ըսխե՜ն յաշխր, դու, այդ չքի,
Տե՛ս, ինչ մեծ մեծ է բրգում,
Հոգս պլխիդ, ձեր ո՞ր գործի
Համար այդպես եք խոսում։

Թե՞ կարծում եք, որ աշխարհում
Վիճննացուց գատ մարդ չկա.
Ըՙհ, Մեսրովբի սատկա՜ծ կատուն
Ձեզ մի այնպիսի գործ տա,

Որ մուկի պես վհատիկանի
Մանեք ծակերն ահարնկ.
Այսօր առնն է մեր Մեսրովբի,
Ուրացողք, ծո՛ւնկ չոքեցեք։

Ո Ւ Ղ Ե Ր Ջ

Առ Մեչուխենցան ի Կոստանդնուպոլիս

Հոգմերից ինձ ասած, ինչում ես Մեչուխենչա,
Մովսիից ու ցամաքից քեզ արգելք չկա.
Մեռացիր ժամանակը, ատրածությունը ջնջեցիր,
Փայլակը նախանձեցավ արագությանդ երկնածիր։

Տավրոսից Այրարատ, Բոսփորից Աղթամար,
Քո տեսած, քո պատմած ինչ-ասությունք անհամար.
Ո՛վ հոգաց, ո՛վ վազեց լսել ազգի հանչյուն,
Ո՛վ ներկա նորա ճոա, երբ փչում էր նա հոգին։

Ո՛վ արբեց նեղվածի արտասուք աչքերից,
Ո՛վ ոդրաց, բոլորեց, երբ խլեցին հաց որբից։
Քեռած էր ամիրան, աչք փակած և դիտող,
Ի ժամու, ատրաժամ դու եղար միայն օգնող։

Քեզ սիրեց Հայաստան, Քեզ օրհնում է բյուր բերան,
Քեզ դափնի պսակներ հյուսում է ապագան։
Ընդունի՛ր այս երկաող իմ անշուք հյուսվածը,
Պակասը ին՛ղ լցնեն սիրած իմ, Քո ազգը։

ՕՇԱԿԱՆ

Օշակա՜ն,
Վէմ հայերի գերեզման.
Ամէրիկ առաջարիդ մէջ
Մեսրոպի վայր հանգստեան,

Որ ազգին գիր պարգեւեց,
Կեանք տվեց հայոց լեզվին,
Ազգը նորա պլացավ
Գիր ընծայել անշուք շիրմին։

Խարխափելով առաջարի մէջ,
Քրիստոսեան սեղանի տակ,
Ննջում է այն մեծ հայրը.
Օշակա՜ն, քեզ փառք պարծանք։

Բայց ազգին որ նա սիրեց,
Որի համար շատ քրտնեցավ,
Այդ ազգին ևս չեմ ներում,
Որ Մեսրոպին այդպես մոռցավ։

Գեռնատիպ այն բեմի տակ
Սողալո՜վ պետք էր մտնել,
Կամ անթափանց խավարում
Քարը ժամո՜վ տեսանել։

Ո՛հ, Մեսրոպ, ների՛ր դու ինձ,
Իբրև որդու քո ազգի.
Ապերախտ եմ առաջիդ,
Որպես անդամ ամբողջի։

Օշակա՞ն,
Վեհ հայերի գերեզման,
Քո ժայռից ես ցած իջա,
Ուսաի հերոսն մեր Վահան։

Բայց Վահան դեռ նայեցավ
Եկեղեցուն, որ շինեց.
Նա տեսավ շքեղ տաճար
Ու գնպի նա աղոթեց։

Իմ աչքին ի՞նչ երևեց,—
Մի շինվածք կիսակործան,
Որի գլխին կորացած
Երկաթյա խաչ քրիստոսյան։

Դարավոր փոշվով ծածկած,
Տաճարի պարսպի տակ,
Կա մի ծակ, ուր օձի պես
Կարև մտնել մարդ միայնակ։

Ահ խարխափ շոշափելով
Գտնում է այն ծակի մեջ
Քարի ծայրը... անգիր, անհուշ...
Այդ ի՞նչ քար է այդպես անտեր։

Լանլով պատմում է քեզ
Գյուղական խեղճ քահանան,
Թե այնտեղ ամփոփված է
Մեր քաջ Վահան Մամիկոնյան,

Որ ազգին կյանքը տվեց,
Հայրենիքին կացավ պաշտպան.
Ազգը նրան գլացավ
Կատուցանել մի գերեզման։

Օշակա՞ն,
Վեհ հայերի գերեզման.
Բողոքի՛ր մինչև երկինք,
Ընդդեմ այս ամարդությյան։

Բարձրարերձ քո ժայռերից
Արծաթալիք մեր Քասաղը
Ինգալով անցանում է,
Մինչև Վարդենի ավանը։

Նվիրական այն հին գետին
Հանձն արա՛ այիքներին
Հասցընել քո դանգաւոր
Էջմիածնյան վեհապետին։

Ժ. Ժ. ՌՈՒՍՍՈՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Քնզ ո՛չ կրնք, ժան-ժակ Ռուսսո,
Պետի մոռանա աշխարհ.
Անմահ ես դու, ոգի արգո,
Բնեւ հազար սահի դար։

Քո կրկնաշունչ մեծ գործերը
Հավիտյան պիտի ծաղկեն.
Անթառամ է քո պսակը,
Ո՛ղ ազգեր գան, ի՛ղ կորչեն։

Գիտեմ, վրադ շատ հաչեցին
Տգիտությյան շուներըը.
Քնզ շատ անգամ բարկոծեցին
Կեղծավորաց խումբերը։

Բայց դու մենա՛կ, մարդ քաջարի,
Միշտ անպղտրդ, անսասան,
Կանգնած նման ապառաժի՝
Ձեռք պարզեցիր մարդկության։

Եվ ցնդեցիր հազարամյա
Շղթաներըը ծանրացած.
Հզոր ձեռքիդ՝ այն կրկաթյա
Կապանքն ընկան փշրված...

Բնեւ այսօր պիղծ բերաններ
Ոմանք, գայթյալ քո ընդդեմ
Ոռնան ինչպես քաղցած գայլեր,
Քնզ ինչ. չե՞ն տարբ սնադեմ։

«Ահա հանգչում է բնության մարդը,
Մարդը և հշմարտության».
Ժիրարդենի գրնց ձեռքը
Տապանաքարիդ վրան։

Ով՞ւնր եմ գնում ես այդ քարին,
Ուխտուն յոթը տարուց հետո՝
Քեզ պատվում է հայի որդին.
Եվ նա՛, մա՛րդ է, վա՛րդապետ։

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՄԵԾ ՎԱՀԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հիմի է՞լ խոսենք, եղբարք, հիմի՞ էլ,
Երբ ընտանեկան երկպառակությամբ
Ուրիշ բան չունինք, բայց իրար դավել,
Նվ սարսափելի ազգուրացությամբ
Մեր նախնյաց ուխտը ոտքով կոխել ենք.
Հիմի է՞լ խոսենք։

Հիմի է՞լ խոսենք, երբ քաջն Վարդան,
Վաթնաուն հազարից, հազարով մնաց,
Մինչ մնացել էր պարսից լոկ մատյան
Գունդը, մեր վաթնաուն հազարի դիմաց,
Երբ մեր վատությամբ՝ ո՞ղջ կորուսել ենք.
Հիմի է՞լ խոսենք։

Հիմի է՞լ խոսենք, երբ օտարից շատ
Մենք ենք մեր ազգի արյունը խմում.
Մոխրատնով լցինք Դվինն, Արտաշատ,
Մխի մեջ կորավ խաչն եկեղեցուն,
Երբ այս ամենը մենք կատարել ենք.
Հիմի է՞լ խոսենք։

Հիմի է՞լ խոսենք, երբ հրապարակում
Պարսիկը առակ արել է հային.
«Քրիստոս ասորու նման աշխարհում
Չկա մի վատ ազգ, բայց, քան ասորին,
Է՛լ վատ է հայը», մենք այս առնո՞ւմ ենք.
Հիմի է՞լ խոսենք։

Հիմի է՞լ խոսենք, երբ իշխանությունն
Ծախում է անարգ հայկատակներին,

Մինչ սարուկ ժարդիկ նստան մեր դլխին
Եվ մեզ կարծում են հող իրենց ոտքի,
Ու մենք մեզ կոխող ո՞ւրբ լինում ենք.
Հիմի է՛լ խոսենք։

Հիմի է՛լ խոսենք, երբ հատամոքչի
Բնիկ ժառանգի թևերը կոտած,
Անարդ պաթախկը՝ այս ու այն ինմի՝
Կարդում է տեսուչ բան յուր չար մտաց
Եվ մենք դեռ՝ «կենցդ՝ արինս գոռում ենք։
Հիմի է՛լ խոսենք։

Հիմի է՛լ խոսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողչունում ենք մենք այդ չքերին,
Որ դրան շուն են, և մեզ տեսնելիս՝
Շուտ դիմակները դնում երեսին,
Այդպիսիներին գարձյալ պատվում ենք.
Հիմի է՛լ խոսենք։

Էլ մեր երեսին մնա՞ց մի կաթիլ
Ամոթի սուրբ ջուր, որ բերան բանանք։
Ո՛չ, թե չենք ուզում հողից հող կորչիլ,
Թշնամու արյունով մեր բերին ջուր տանք,
Ազգ, նկնդեցի փրկենք ազատենք,
Ապա թե խոսենք։

ԿՆԴՈՒԿ ՊՈՉԱՏԻ ԵՎ ՆՈՐԱ ՍԱՆԶՈՅԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

«Կնդուկ պոչատն է գալիս,
Ճամփա տուր, է՛, մե՛ր տղա,
Տե՛ս, հետն էլ ո՞ւմ թաշ տալիս».
— Ասում՞ծ, ձի՛շտ Սանչո Պանսա։
«Ասա՛, հաճի կարապետ,
Ո՞ւր են կիտվել այդ հիմարք,
Ուզում են կռվե՞լ մեր հետ.
Ա՛հ, խելագար ապստամբք։
Ուզո՞ւմ են, որ մի խոսքով
Դարանց դժոխք ուղարկեմ,
Կամ նզովքի շանթերով
Շան ատամնե՞րը հանեմ»։
— Տե՛ր իմ, խնայե՛, հոգևոր
Մի՛ տալ պատիժ խիստ ատամիկ.
Մի՞թե չկա մարմնավոր
Մի ուրիշ հնար փոքրիկ.
Մի թուղթ, մի պատիկ նամակ...
Մի քանի տո՛ւտ... ի՞նչ վնաս...
Մյուսներին էլ օրինակ...—
Խոսքը բերանը մնաց։
«Տո՛, այդ կնդուկ պոչատին
Քաշեցեք կպրեն կարաս,
Մի բարթիի մկրտվին
Սանչու հետ, փառաց ի փառաս։
Լոթին գոռաց այն կողմից,
Սանչու լերդին չուր գնաց.
Մոդին էլ չռվե՞ց մի կից,—
Գլո՛ւնձ ի կպրեն կարաս։

Հ Ի Շ Ե Ն Ք

Հայկ ու Տիգրանին հիշենք միշտ, եղբարք,
Թափենք նոցանից հնության փոշին.
Նրանց հիշելով արդյոք մի նոր կյանք
Առնու Հայաստան — նոցա խե՞ղճ այրին։

Կնցցե՛ Համիտյան այրին Հայաստան,
Նա՝ որ իր որդոց դեռ արտի խորքում
Ջունի հառաչուն մի ոսքի կայան,
Ու որդիքն պանդո՛ւխտ, իրենց բո՛ւն երկրում։

Եղբա՛րք, բանը չէ անշոշափելի,
Միայն թե կամավ չկարծենք ցնորք.
Վաղո՞ւց մարմնացել ու տեսանելի
Դարձել է Հայոց լուծը անողոք։

Մեր հույսը սակայն մեր վրա լինի.
Այսինքն ազգի մեր ընդհանրության.
Աղքատ ու հարուստ տված թև թևի՝
Այսպես թե միայն կա ճար փրկության։

Կնցցե՛ Հայաստան, որ երազական
Եղել է այսօր իրոք և խոսքով,
Ոչինչ ավելի հնախոսական
Քան թե անխորհուրդ անուն դառնալով։

Աղատության իղձ շրթունքի վրա
Մի քանի մարդոց տեսնում ենք, այո՛,
Ովքե՞ր են դոքա, ո՞չ երգվյալ ծառա,
Որ օտար լուծին մնան միշտ հլու։

«Ով փշրն շղթան... կերթա Հայաստան».
Ա՛խ, ա՛խ, ա՛խ, այդ էր պակաս մնացել,
Որ նախանձահույզ դառնա հայուհյան
Կատարելապես, բայց հետո ի՞նչ էլ:

«Ցտեսո՛ւթ, նկել եմ, մայր իմ հարազատ,
Գիրկդ բաց որդուդ քո չվառական.
Համբուրում եմ քո փոշին անարատ...»
Հետո՞, մի ամբոխ գայլի շարականն:

Հարավ հյուսիսից փոշի բարձրացավ...
Շառաչյուն գնդի... մթնեցավ օրը,
Ղազախ, սարբազի գլուխն երևցավ,
Մեր աղջաների մաավ ծակուրը:

«Հը՛, Հայաստանը՛»— ի՞նչ անդը կենա,—
Առում է գդույշ մեր աղջաները.
«Բահ ու հրացան, ի՞նչ նշան նորա,
Թե՞ քշում էիր դու ուրջունները...»

— Ես այդ ամենը անում եմ բերնով,
Կեցցե՛ սուրբ Մեսրոպ, որ մեզ գիր ավեց.
Հողեր եմ վարում հեռուից՝ խոսքով.
Հրացան իմ գնդը կուրծքին ե՞րբ անցնեց...

Է՛լ Հայկ, Տիգրանին հիշենք մենք, եղբարք,
Նորոգենք նոցա փառքը սուրբ անվան,
Գուցե այս կերպով մի առույգ նոր կյանք
Առնու խնդճ, այրի, մայրն Հայաստան:

Ա. Պ. Յ Մ Ի Ք

II

ՆԱԽԱՀՈՐ ԱՐԿԱԾՆԵՐԸ

„Yes, love indeed is light from heaven;
A spark of that immortal fire
With angels shared, by Alla given
To lift from earth our low desire..“
Byron—*The Giaour.*

Կենաց կանաչ ծառի տակ
Հրնշտակներով շուրջպատված,
Տխուր՝ Ադամն էր նստել
Եվ արտնջում էր հուզված.
«Ինչո՞ւ ստեղծեց տերն ինձ,
Է՞ր զրահեն այս փափկությամբ,
Եվ ինչո՞ւ ես կարգվեցի
Արարածոց տեր, իշխան։
Ինչի՞ւ են պետք ինձ պատիվք
Լուսապաճույճ, օդային,
Է՞ր հրնշտակաց այս բանակ
Եվ զորությունք երկնային...
Այնինչ փոքրիկ մի մակույկ,
Որ կրծքիս տակ նավում է,
Ջուններալով անուշ այուդ՝
Առագաստել անզոր է։
Ասաց՝ աչքից ցողելով
Մարգարիտները արտում.
Առաջին արցո՞ւնքն էր մարդու՝
Հոսում տխուր այս հովտում։

Եվ սերովբեն սրբելով
Արտասուքներ Ադամա՝
Գութգուրում էր՝ յուսալիկ
Ճախրելով շուրջը նրա.
Եվ բարբառով դրախտային
Խոսում նրա հետ — սրտում,
Դրան նրկինքն է վկա,
Որ սերովբեն չէ՛ր սուտուկ։
«Մխիթարվի՛ր, տե՛ր Ադամ,
Որ չը տրվեց սրտիդ հեզ,
Ինչ կոչում ես շարժիչ հով.
Այն գլացավ տերը քեզ,
Չի ին սրտիդ մեջ փչեր
Շունչն այն բոցեղ, կիզանուտ,
Ապա իրո՛ք կը կորչեր
Անդորրությունը հոգուդ։
Եվ ո՞ւր դու կը ճախճեիր
Բորբ կայծերը նրա բարկ,
Կարո՞ղ էիր դու միթե
Ցոլքն այն կրել կրծքիդ տակ.
Եվ ո՞վ պետք է քեզ հոգար,
Ո՞ւր էակն այն ընդունակ,
Որ ժողովել կարենար
Քո շանթն, ամպրոպ ու փայլակ»։
«Ի՞նչ ես փշում, սերովբե,
Եվ զուր՝ ատեր հետարում,
Մարգուն, իսպառ, դու, ի՞նչ է,
Անզգա՞ ես համարում.
Եվ տիեզերքը, միթե,—
Գործն աստուծո, այս ահա՛,
Իմ աչքերի առաջ չէ՞.
Եվ ինքն իսկ չէ՞ Եհովան,
Որ շրջում է, ժուռ գալիս
Այս դրախտում պատվական
Եվ ողջունում ինձ՝ ինձ բավական։
Ջարմանում եմ անհանճար
Քո խոսքերին, սերովբե՛,
Ըստ քեզ, դեպի վանեմը
Սիրտն անզգա՞ է միթե։
Կարո՞ղ եմ ես աստրծուն
Սիրել սիրով վերամբարձ,

Արարածները համրուն—
Նրա ձեռքով ստեղծված՝
Արև, լուսին և աստղեր,
Մեզմ երկիր, առավոտ,
Հաղագ ու գով գիշերներ
Եվ ցերեկը լուսահորդ,
Ծառ, ոտ՛ւնկ դալար և ածող,
Ծաղիկ բնքուշ, գեղանի,
Վարդեր մեի վրա ճոխ,
Եվ շուշանը գարնանկի.
Ո՛չ կենդանեյաց խայտուն խումբք,
Ո՛չ սոխակի երգն անուշ,
Որով ամենքն են հրճվում—
Բնութիւնք բիրտ և քնքուշ
Նախ ոտ՛ւր ինձ սեր, իմ սրտի
Ամայութիւնը լցրու,
Ապա տես ինչ կը գայթի՛
Վնաս բնութիւնը մարդու.
Երբե՛ք ատոր կրքերի
Համար սիրտը չէ՛ թիրախ.
Իսկ դու ինչո՛ւ ես ժպտում,
Ուխտ չեմ անում ես խարդախ»։
«Քա՛վ լիցի, տե՛ր իմ Ադամ»,
Կրկնում էր հեզ սերովբեն.
«Ծող չըշնչե՛ս Հավիտյան
Դու այն օդը բոցեղեն.
Չը տառապե՛ս ծող՝ կամա
Անձըդ հրին մատնելով,
Որին մարդը, հավատա՛,
Տակալ քնա՛վ չի կարող»։
Ադամը խիստ հեգնում է
Սերովբեին և ասում,
Եվ մի վայրկյան լոկ՝ դժնի՝
Դեմքին ժպիտն է փայլում.
«Դո՛ւ, որ մարդ չես հողանյութ,
Ինչպե՛ս քընույթը մարդու
Գիտես այդպես, օ՛, հմուտ,
Այդ որտեղի՛ց ուսար դու
Զարմացնում են ինձ ատոնիկ
Քո խոսքերը, հիրավի,
Եվ քանզի չեմ սերովբե՝
Չիմանալըս ծող ներվի՛»։

Համբերում էր սերովբեն
Կամակորին այդ աղու,
Չի պատվերն էր արարչի՝
Լինել նրան պատկառու.
Ուստի և նա անվրդով
Խաւարչյունից Ադամա՝
Գուրգուրում էր՝ ճախրելով
Անդադար շուրջը նրա։
Եվ մինչ Ադամն զրաղված
Միրո մասին չէր խոսում,
Սերովբեն, հո՛ւշ, նրա վրա
Թափեց խաղաղ ու խոր քուն։
Չնփչուռն ո՞վ շոյանքի
Տակ ինքում է ու ննջում,
Նրա շուրջը սոխակի
Թովիչ դայլա՞յն է հնչում։
Եվ սերովբեն թևատար
Դեպ աստղերն է սլանում,
Անցնելով հուր այն կամար՝
Արագ վեր է բարձրանում.
Մինչ գահույքը աստղահուռ,
Քերովբեների շուրջպատված,
Կանգնում գահի հանդեպ, ուր
Փառաբանո՞ւմ էր աստված։
Անդ վեցթևյան երկուսով
Դեմքն է սրտում սարսափած,
Ոտքերն՝ ցածի թևերով,
Միջիններով մնացած
Ծիսում արցունք մարդկային,
Իբր անուշ խունկ՝ առ աստված,
Ալելուներն են հնչում
Երկնային ողջ զորությանց։
Հոտոտո՞ւմ է լիառունգ
Տերը անհա՞գ, հնշտորե՞ն՝
Արցունքներն այն— իբր խունկ՝
Որ սիրում էր սերովբեն։
Եվ կարկաւոում է աստղծիշ
Աչն էությանց վա՛ր դեպի,
Բարեխոսներն շուրթերից
Այս են լսում — «Ծով արվի՛»։
Սո՛ւրբ, սո՛ւրբ, սուրբ ես, Տեր որ էն,
Լի՛ է երկինք քո փառքով,—

Օրհնեցդում է սերովբեն
Եվ վերցնում ունելով
Կայծը կիզիչ բոց-կրակ
Այն ծխացող սեղանից,
Եվ դնում երկիրը՝ արագ
Ճանապարհվում է նորից։
Ադամն ոչինչ չգիտեր,
Նա դեռ քնած է հանգարտ,
Չի այդ ամենն հազիվ թե
Տեսում է մի ակնթարթ։
Կենաց ծառը մեղմօրոր
Հով էր անում հեշտորեն
Եդեմյան քնած նախահոր,
Երբ որ հասավ սերովբեն.
Նա ճոռ գալով Ադամին՝
Նստում ձախ կողմը նրա
Եվ կիզիչ կայծը ջերմին
Դնում կրծքին... Եվ ահա՛,
Մխում է մորթը խակուլն
Եվ այրվում սրտան անփորձ,
Բարձրանո՞ւմ է գուլնզգուլն՝
Երկինքն ի վեր ծուխն ու բոց։
Շուրջ՝ կենդանիքն այն ամեն
Կրակի տեսքից խրտնելով,
Մասն են առնում — ասում են—
Սիրո հրից հազիվով.
Եվ ամոլները գուլգ-գուլգ
Կրքով վառված, խայտ ի խայտ
Փախչում վայրեր դեպ ծածուկ,
Բն ինչո՞ւ... — չի՛ ասվում այդ։
Այն, ինչ պիտի կատարվեր՝
Գիտակ եղավ սերովբեն.
«Արդ շտապիր նավարկել,
Ո՛վ տեր Ադամ, համարեն,
Չի սրտերին առագաստ
Լցրեց սիրո բոց-մրրիկ,
Կը դիմանա՞ բոցին ասաստ
Արդյոք մակույկըդ փոքրիկ։
Արդ, այսպես էր սերովբեն
Կշտամբատում և խոստում,
Մինչ Ադամը քնի մեջ՝
Ի՛չ զգում էր, ո՛չ լսում։

. . . . . the elements
So mix'd in him that Nature might stand up
And say to all the world „This was a man".

Shakespeare,

Julius Caesar, **Act V. Sc. 5**

Ջը ձգձգենք որպեսզի
Գաղափարն այս չափածո՝
— Ինչո՞ւ խոսել ավելորդ—
Ուսոի պատմենք կարճառոտ։
Մարդը հենց որ սեր զգաց,
Գոչեց. «Մեռնո՛ւմ եմ, աստվա՛ծ,
Չունե՞մ բնկեր կամոզին».
Տերը ավազ նրան կին.
Իսկ ինչ ինչո՞ւ կամ ինչպե՞ս,—
Չի՛ սովրեցրել Գիրքը քեզ,
Թե չես լսել մինչ հիմա,
Ասպա վեր առ և կարդա։
Իսկ այն մասին, թե նրան
Սիրեն Ադամն պիտ մարդուր
Եվ մնզկ կրքին՝ սիրած նա
Ջը դարձնեն կնրակուր.
«Ինչո՞ւ տալիս էր պատվեր,—
Ադամն ասում է հուզյալ,—
Մինին միշտ չե՞մ խոստացել
Սիրել սիրով կատարյալ՝
Ասածուն և այն ամեն բան,
Որոնց ինքն է հեղինակ
Եվ սկիզբը գոյությյան.
Ուխտիս ես չեմ հակառակ»։
Եվ անտվքեն, որ գիտեր
Մարդու սրտի շինվածքը,
Եվ ամեն ինչ տեսնում էր
Նրա անվրեպ սուր աչքը՝
Գողդողում էր երդումից
Եվ ակնարկում Ադամին՝
Խնդրել ներումն նորից՝
Երդման համար զժվարին։
«Դնա՛, կորի՛ր, անտվքեն,
Խոսքերդ անցնում են չափից,
Եվ ինչո՞ւ չես հեռանում,
Անզգա՞ս ես կարծում ինձ.
Ես խաղովո՞ւմ եմ ձեր զորձին,

Լանՙլ ևք մի խոսք ինձնից։
Թեՙ ասելիք չունեի
Չեր անկայուն բարքերից»։
Եվ նա սաստում է այսպես
Խոժոռադեմ հրնշտակին,
Որ խրատված խստապես՝
Դառնում է իր կրընկին.
Արտասվելով վշտագին
Թռչում խակուլն, հեռանում,
Իսկ հարանարքն նվաղին
Ադամի մոտն է բերում։
Նախահայրը սիրավետ
Գինդ գրկում է իր էգին,
Սիրախառնվում նրա հետ
Ու վեր ճախրում միասին։
Հնչուանքներից արբարբած
Առում է նա տարփագին.
«Օ՜, չե՛մ երբեք ուխտազանց,
Ինչո՞ւ է ինձ տրվել կին։
Խաստացել եմ չլինել
Ես ուխատպրուժ — այդ շա՛տ լավ,
Բայց ՓՆ սիրուց հրաժարվե՞լ,
Չը ճաշակե՞լ այն բնավ։
Ուրեմն ինչո՞ւ տրվեց ինձ
Սեր, կին, ինչո՞ւ տերն օրհնեց,
Ակնարկում է խոսքն այն ի՞նչ՝
Թե՝ աճեցեք...» և լռեց։
Եվ կռվում են խիստ անհաշտ
Ներքին հրամանն ու բնությունն,
Ո՞ւմ կմնա մարտադաշտ,
Ո՞վ կը տանի հաղթություն,—
Դար ժամանակ՝ այս հարցն էր,
Նույնիսկ կնճռոտ հույժ, ավա՛ղ,
Բայց գիտություն լուսաբեր
Կնճիռը այդ լուծեց վա՛ղ։
Նրանց, որ չեն հավատում
Այս խոսքերիս անպաճուճ՝
Հայտնում ենք, որ չենք խաբում,
Ահավասիկ ապացույց։
Ադամն ուխտել էր անխախ
Չը սխալվել մեզկորեն,
Ուստի հախտան ընդվզմամբ՝

Մեջքի վրա տեղն ու տեղ
Դույսին զարկում է գետին
Հուժկու ուժով նժույգի
Եվ ձգտում է հարվածել
Իր եղջյուրով շնչատակի.
Ապա, ոտքի՛ քաջարար
Կպչում է լավ ճմլված
Թրախտաբնակին գետնահար
Եվ քայլո՞ւմ է վնհրընթաց։
Մեղկությո՞ւն է որևէ
Կամ թե սուր կի՞րք է այն,
Երբ ձգտում է վայելել
Սանձակոծ սերն իր ընծան։
Կարո՞ղ է որ բնության
Ճգմել կզակը սանձով,
Եվ կամ նրա զորության
Դեմ դնել իր թույլ կրծքով.
Բնությունն ինչո՞վ է շարժվում,
Ո՞վ է նրա հեղինակ,
Հիմարությո՞ւն չէ՞ աստված
Կենալ նրան հակառակ։
Որը պաշտամունք բնության
Բռնադատել են ջանում,
Նրանց հրնշտակն բարձրածայն՝
Անլսագար է անվանում։
Իսկ մենք ջանանք, օ՜, փութով
Ավարտել վեպն այս մեկին,
Պատմենք ամենը հերթով,
Ինչ պատահեց մեր զույգին։
Երբ որ երկրում հարսնքույր
Եվ խորանի վարագույր
Պատռտվում են անկարկատ՝
Նաև թել-թել, աննկատ՝
Կտրտվում են արնատար
Անոթները մազանման՝
Արդյոք հեղված առաջին
Արյունը չէ՞ սրբազան։
Կույս զույգերը թևիթև
Գլորվում են տագնապով,
Դատավճիռը պարզ է՝
«Անմեղությո՛ւն, գնաս բարո՛վ»։
— Իսկ հարսն ի՞նչպես, քույրն ի՞նչպես։

«Ցնցվո՜ւմ էին մկանունք,
Եվ խլրտում, գալարվում,
Շոգում նրա վառ աչկունք.
Կուլա գրկումը իր ջերմին
Մերթ պրկում էր ու ցողնում,
Մերթ շոշափում Ադամին,
Մերթ հևում էր, մերթ ուշո՜ւմ.
Թռչում էին հեշտանքի
Հառաչանքները... ինչպես պետ՝
Կրծքից քրտինքն էր հոսում...»
Ադամն էլ չէր մնում ետ,
Մերթ մի համբույր էր դրոշմում
Կուլաի շուշան շուրթերին,
Հուզմունքից շունչն ապառվում,
Եվ մերթ կրծքով իր ուժգին
Ճմլում փափուկ, ձյունափայլ
Նոնների պես կամնագեղ
Սիրնքների լուսափայլ
Պտուկները վարդագեղ։
— Երանությո՜ւն խնդահնդ...
Չի այդ շարժմանց ժամանակ
Հեշտին՝ անոթին ընտրությյան
Ով էր գալիս շնչի տակ
Վարդի — մեծն բալասան...
Ամե՛ն. եղավ հոտառո՜ւշ
Ընծայարերումն բնությյան
Եվ դրախտից հեշտալի
Արտաքսվեցավ զույգն այն
Փշոց աշխարհն, ուր Եվան
Մնում է ցավո՜վ մինչ այսօր,
Թևև եկել է Մեսիան։
— Իսկ Ադա՞մը,— «Դեռ քրտնո՜ւմ էր։

ԱՐՁԱԿ

ՄԵՌԵԼԱՅՑՈՒԿ

Ա.

1858 թվականի մայիս ամիսն էր։ Դեռ նոր լուսացել էր առավոտը, դեռևս նոր վեր բարձրացել էր արևը Հորիզոնի վերա, ոսկեզօծելով ամպերն կաթնագույն սարերի գագաթները, դեռևս նոր զարթնում էին մարդիկ յուրյանց քնից, որ մանավանդ շատանում է և զորանում է գարնան ժամանակ, աղախինը պ. Մարկոսի ներս մտավ ասրա սենյակը։ Պ. Մարկոսը քնաթաթախ բացնց աչքերը և երևսը շփելով հարց արնց քնից վեր կացած աղախնու ներս մտանելու պատճառը։ Այս միջոցին մոտեցել էր նորան աղախինը և հատաջ քան թե պ. Մարկոսը սկսարռել էր յուր հարցմունքը, ստացավ սորանից մի նամակ, որ պ. Շաքարյանցի ծառան բերել էր։

Պ. Մարկոսը բացնց կնիքը և աչքերը սրսրելով կարդաց հետևյալ խոսքերս.

ԱՍՏԱԿԻՑ ԲԱՐԵԿԱՄ,
ՊԱՐՈՆ ՄԱՐԿՈՍ

«Չնեղանաս բաց խոսածիցս, ինչպես նկատում եմ, քո խոստանալը «շատ է, քան թե կատարելդ. խոսքս մեր խնջույքի վերա է, որի մասին «պրուցելով անցյալները խոստացար հոգաբարձու լինել, բայց, մի շար «բախտով, ո՛չ մի հոգացողության նշան, որ ցույց տված լինեիր, չտեսա «մինչև այսօր։ Օրերը անցանում են, մեր կյանքը թռչում է, իսկ մենք, քո «շնորհքիցը, բանտարկված մեր բնակարաններում թառամում ենք տրխ«րության մեջ։ Տեսանելով, որ բանը այսպես է, որ այս մասին մի բարի «հույս չկա քեզանից, ես ինքնին սկսեցի լինել այդ խնջույքի հոգաբար«ձուն։ Ամենայն պատրաստություն տեսել եմ, թե կերակրեղենի և թե «զմայելիքի մասին։ Միմիայն արագ առել եմ մի վեդրո, իսկ հատարակ «ձամելի պինդ հարյուր քսան շիշ, շամպայն, շատ լավերը, կլիկ և ընդներս «քսան չորս շիշ. մադերա, խերես, ռեյն-վեյն, մի խոսքով թուղթ պինդներ

առաջ և ուժն շիշ։ Կատարումն օրինաց և մարդարեից կլինի լավ մարդ ակնով, որ առացել էի ծառ աշխարհից։

«Այս հաշվից անառնում ևս ահա, որ ևս քեզ նման ախանջի վերա գնած չեմ. ինչևիցն ին մեղադրանք է, ին խրատ է, ընդունիր, և այս անամակս առացածովդ շահագի՛ր գալ իմ մոտ, մեր ծանոթներից և բարեկամներից ոմին հրավիրելու և ոմին չհրավիրելու մասին, խորհուրդ տվատարելու համար։

«Քեզ միշտ բարի կամեցող Հ. ՇԱՔԱՐՅԱՆՑ»։

Պ. Մարկոսը, ավարտելով նամակի կարդալը, սկսեց ծանր կերպով և մտածողությամբ համարել. հարյուր քսան, տասն և ութն ևս, հարյուր երեսուն ութն, քսան չորս դորա վերա, հարյուր վաթսուն երկու, մի բան չէ. բայց ևին մի վնդրո արաղը ձգնեք հառաջարանի փոխանակ, իսկ մարտականը վերջարանի տեղ, այն ժամանակ հարյուր վաթսուն երկու շիշը մի բանի նման կլինի։ Բայց ինչո՛ւ ոտ մոռացել է... Կոնյակ ևս չկա, անգլիական ձին չկա, մի վնդրո խստակ արաղով կամենում է աչքերս ներկել... չէ նդրայր, այդպես չէ, ևս քեզ մի նոր ցուցակ դարձյալ կատա... վայ, վայ, վայ, սարեպտի բալասան ևս մոռացել է. այդ ի՛նչ խնջույք կլինի։

Այս խորհրդածություններից հետո, որ նորա կյանքի մեջ բավական մեծակշիռ բան էր, սկսեց հագնել յուր զգեստքը։ Աղախինը պատրաստելով ինչի մեքենան ներա բերեց և դրեց սեղանի վերա։ Պ. Մարկոսը սկսեց ինչ պատրաստել և նատելով աթոռի վերա, զանազան պատկերներ երևակայել յուրյանց խնջույքի մասին։ Միանգամ երևակայում էր յուր բոլոր ընկերքը արբեցած ընկած դաշտերի վերա, որը քնած և որը... իսկ ինքը աղամարդի պես գինու բաժը ձեռքին կանգնած նոցա մոտ, ծաղր առնելով նոցա թուլամորթությունը։ Հետո երևակայում էր, որ յուր ընկերքը, գլուխները տաքանալուց, տուր ու ծեծ սկսել էին միմյանց հետ, որոնցից մինը լաց էր լինում և դանգատում էր, ին վշտացնում են յուրյան, իսկ միւսը քարձր քարձր գոռալով հայհոյում էր նորան և ասում էր, որ ևին շափը չճանաչե, ոչ միայն այշափ, այլ և աշքի լույսը ևս հանելու էր։ Այստեղ պ. Մարկոսը երևակայում էր յուրյան միջին գարնեի տապանների նման մի բան, որ գինու բաժակը ձեռքում մոտենալով կքավորներին միխիթարում էր վշտացածը, ին արժան չէր կին մարդու պես ամենաչն բանից նեղանալ, միևնույն ժամանակ բարկանալով հարատահարողի վերա, ին ընկերության մեջ մեծ անկարգ բան է մի այդպիսի կոշտ վարեցողություն և այլն։

Այսպիսի պատկերներ առնդածագրծելով ուղեղի մեջ, խոռում էր պ. Մարկոսը յուր ինչը, նրբեմն նրբեմն արձակելով բերանից քաքակի քանձր ծուխը օղերի նման դուրս փչելով։ Նա ուրախանում էր մանավանդ մտածելով, ևին բոլոր արաղը և գինիքը խմվելուց հետո, մի քանի մարդ և ինքը մնան զգաստ, առանց արբենալու, այն ժամանակ ի՛նչպես

բարձր բարձր խոսելով պինի պահանջելու էր պ. Շաբարյանցից, որպա ժլատությունը խայտառակելու մտքով։ Այսպես էր նորա հոգու տրամադրությունը նամակը կարդալուց հետո։ Երբ ավարտել էր ինչ խմելը, վեր առավ վերարկուն, գլխարկը և ջոխին և դուրս գնաց յուր տանից։

Կարդացողը այս գործի, կարելի է, կարծե, թե պ. Մարկոսը մի անսովոր արբեցող մարդ է. քա՛վ լիցի. այդ զրպարտություն կլիներ։ Պ. Մարկոսը, ճշմարի՛տ է, խմում է, բայց ինչպես ուրիշները, ինչպես մի բարի հայ քրիստոնյա։ Նորա շատ խմելու վերա երևակայելը և երազելը պ. Շաբարյանցի ժլատ հոգացողության վերա նեղանալը, շատ սովորական բան է։ Երիտասարդ մարդը, որքան շատ խմե, այնքան շատ պատվելի է նա, այնքան փառք ու պարծանք է նորա համար։ Շատ ժամանակ չէ, նա պատահեցավ Կոնցով[1] ագարակում մի քանի հայ երիտասարդների, որ մանէին գալիս մի ուսի հետ, որ դժվարությամբ կանգնում էր ոտքի վերա և որի լեզուն, համարյա թե փայտանալով, հազիվ հազ շարժվում էր բերանի մեջ. հայ երիտասարդներից մինը, պ. Ծ....վը ասաց մեզ հայերեն.— Տեսանում եք, ի՛նչ օրն ենք ձգել սորան, այսինքն թե ի՛նչպես արբեցած է։

Խոսքս այն բանի վերա է, թե պ. Մարկոսի համար մի պակասություն չէ, եթե նա մտածում է շատ խմելու վերա, և ո՛չ այլևսպի միայն, այլև պարտական է մտածել և աշխատել, որ օրն օր ավելի կարողանա խմել, որովհետև մեր հայ երիտասարդներից շատերը խմելով շափում են յուրյանց քաջությունը։ Սորանից մի քանի տարի հառաջ, պատահեցա մի հայ երիտասարդի ...քաղաքում, որ իրավամբ ստացավ Բեքրի-Մուստաֆա պատվանունը հասարակաց վկայությամբ. այդ պարոնը, մի օր մի լավ երկրպագության և ուխտ կատարած լինելով Բաքոսի տաճարում, հանդիպեցավ ինձ և մեղադրանք լսելով ինձանից յուր արբեցության մասին, այսպես խոսեց.

— Պարոն, դու գիտե՞ս, որ մարդը աշխարհի մյուս բոլոր արարածներից գերազանց է։

«Գիտեմ» պատասխանեցի ես։

— Ուրեմն, ինչո՞ւ մեղադրում ես ինձ, եթե ես աշխատել եմ հարգի կացուցանել իմ մարդկությունը քան թե մի անբան արարած։

«Ես չեմ հասկանում քո ասածը»։

— Մա՞րդն է գերազանց, թե փայտը,— հարց արեց նա։

«Այդ ի՛նչ տարակուսելի բան է»։

— Տեսաք՛նդ, եթե ճանաչում ես ճշմարտությունը, ապա է՞ր չես ընդունում։ Ես մարդ եմ, լավ նայիր իմ վերա, ես աստուծո պատկեր եմ, ես բանականություն ունիմ, և այս խոսքերիցս տեսանում ես ահա, որ ես շատ լավ ճանաչում եմ իմ արժանավորությունը աշխարհի արարածների մեջ։ Մի անշունչ էակ, մի տակառ, որ փայտից էր շինած, որ ո՛չ հոգի ուներ, ոչ աստուծո պատկեր էր, այդպիսի մի ընչին էակ, աստում եմ, տանում է յուր մեջ մինչև քառասուն վեդրո գինի. ես տեսանելով այս, կարո՞ղ եմ

մինչև այն աստիճան անարգել իմ մարդկութիւնը, որ սառն աչքով նայեմ այդ բանի վերա, և հայհոյութիւն չէ՞ր իմ կողմից աստուծո շնորհին, որ ավել էր ինձ, մինչ մի բուռն հողից գոյացար, նրին չաշխատանի հավասարվիլ և գերազանցել այդ շնչին փայտից։ Մեղանից յուրաքանչյուրը պարտական է գետնի հետ չհավասարել յուր մարդկութիւնը, չանարգել աստուծո շունչը, որ փչել էր մեր վերա. մենք պարտական ենք իրավացուցանել արարիչը, հարգի կացուցանելով այն շնորհը, որի ընդունակ միմիայն մեզ էր ընտրել յուր բոլոր ձեռագործներից։ Մենք պարտական ենք, ոչ թե միայն հավասարվիլ տակառին, այլև անցանել նորանից... դինին երկների արքայութեան ցողն է. նոյ նահապետը չրհնղնղից հետո խնկույն գործ գրեց նորան.... ի՞նչ կառնուա գորտի նման ջուր խմելուց. ջուրը աստուծո ձեռին մի գործիք է, չարագործ մարդիկ պատուհասելու համար։ Աստծիս ապացույց թող չրհնղնղը, ինչո՛վ չնչեց աստված մարդկութիւնը, գինո՛վ, թե ջրով.... Քրիստոս ինքը կանա-Գալիլեայումը, հարսանիքի մեջ ջուրը գինի փոխեց, դու ինչո՞ւ ես խոսում։

Եթե մեր հայերի մեջ կան և այսպիսի մտածութիւն ևս մարդիկ, ապա ուրնմն, դեռևս պ. Մարկոսը մի երանելի մարդ է։ Որովհետև խոսք բնկալ այստեղ պ. Մարկոսի վերա, ապա թող ծանոթացնենք մեր ընթերցողներին գորա ով լիննելը։ Դա, մի երիտասարդ է քառասուն տարեկան. երբեմն ժամանակից աշակերտվելով մի դերձակի մոտ, այժմ, համարվում է լավ դերձակներից մինը։ Բայց հաց հարելով այդպիսի ծառայական արհեստով, նա պարապում է և գանազան գրչանք կտրտալով։ Նա միշտ համարել է յուրյան, և այժմ ևս համարում է ազգասեր պարոններից մինը և ինչո՛ւ չէ համարելու յուրյան ազգասեր, ի՛նչ մի դըժվար բան է ազգասեր համարել յուրյան կամ համարվիլ ուրիշների աչքում։ Ես այս խոսքը ասում եմ միմիայն մեր հայերի համար և ոչ ուրիշ ազգերի. պատճառ, որքան հեշտ է մեր ազգի մեջ ազգասերի անուն ժառանգել, նույնքան դժվար է այդ ուրիշ ազգերի մեջ։ Ինչո՞ւ. հայ մարդը, որ մի երկու բառ լսել էր այստեղից և այնտեղից, նստում է յուր տան մի անկյունում և դառնում է ազգասեր, ինչ լավ ցանկութիւնք ասես հայտնում է յուր ազգի մասին, ցանկանում է, որ ազգը լուսավորվի, որ բան ուսանին ազգի վայրենացած զավակները, որ լինին և շարունակվին լավ լավ և գեղեցիկ օրագրութիւնք, բայց այս բաները թող ինքյանք լինին, թող ուշնշից և ուշնշով գոյանան. իմ պատվելի ազգասերը հանգիստ թող նստի տանը, նորան թող անհանգիստ չառնեն, մի՞թե նա երեսփոխա՛ն է ամբողջ ազգի, մի՞թե նա պարտակա՛ն է ազգին, թող ազգը մտածե, թող ինքը հոգա առնե, իմ ազգասերը մանավոր մարդ է, փորը կուշտ, արծաթը շատ, նորան ի՛նչ փույթ, որ ազգի զավակները յուրյանց անգրամիտարակութեան և տգիտութեան պատճառով դատապարտված են ոտատրորիկ այս ու այն կողմ վազվզել մի կտոր հաց հարելու, մի բնակութեան գտանելու կամ մերկութեունը ծածկելու համար։ Իմ ազգասերը պատվելի է միայն նորա համար, որ օգով ամենայն բան ցանկանում է, ամենայն

բարեխիղճ մարդու հետ համաձայնում է և օգնում է ազգին, մի քանի ազգասի երկու երեք մանեթի ողորմություն տալով: Նա գովում է ազգը, նա օտարի առաջև ծածկում է նորա պակասությունքը: Նա այնքան սիրում է հայոց ազգը, որ նորա պակասությունքը խայտառակողներին առելով առում է, բամբասում է և հայհոյում է նորանց և... ի՛նչ այլևս կամիք, օրհնում է օտար աշխարհում, պանդխտության մեջ յուր կյանքը և հարըստությունը կնքած մի անբրախտի դերեզման...

Այսպիսի մի մարդ, ո՛հ, ցավելի ճշմարտություն, հարկ ունի խաժամուժ ամբոխի աչքում, այսպիսի մի մարդ, որ փորը հաստացրել էր և ընչացքը սրել, համարձակվում է պատիվ ու հարգանք պահանջել մեզանից, որովհետև նա հարուստ էր, իսկ մենք ոչ, նա կառքերով էր մեզ պալիս, իսկ մենք ոտով: Հեռի՛ մեզանից, դու հանդուգն հիմար, կորի՛ր մեր աչքից, առաջից և անպատիվ դու, մենք ճանաչում ենք քո խաբերայությունը, քո արհեստը ընդհատը չունի մեր մեջ: Ազգասե՞ր. ո՛րտեղից ո՛րտեղ. ինչո՞ւ փորասեր, արծաթասեր չես կոչում քեզ. ի՛նչ է, ականջիդ լա՞վ է ևկել ազգասիրի անունը, դու առանց զրկանքի կամիս առաքինի՞ լինել. ի՞նչպես կարելի է այդ, մինչ առաքինությունը զրկանք է մի մարդու համար, որ առաքինություն էր գործում: Զրկանք հանձն առնո՞ւս. քա՛վ լիցի, դու երկու կոպեկով, ոչ միայն ազգասեր պատվանունը, այլև բոլոր ազգը և քո հոր ոսկերքը կհանևես գերեզմանից և կվաճառևս:

Եթե մեր ազգի մեջ կան և այսպիսի մտածության տեր մարդիկ, մարդիկ, որ կարող էին միանալով յուրյանց նման կարողության տեր պարոնների հետ օգնել ազգի ողորմելի և թշվառ դրությանը, բայց պ. Շահբենի[2] ասածի պես բոլորովին մարմին դառնալով, պարարում են ընշիր ցերեկ յուրյանց փորը և այնուամենայնիվ համարվում են ազգասեր, ապա ուրեմն պ. Մարկոսը, մի խեղճ մարդ, արժանի է, որ միմիայն ազգին բարի ցանկացած լիներու պատճառով, համարվի ազգասեր:

Պ. Մարկոսը հոգեկից բարեկամ էր պ. Շաքարյանցին: Նորա երեխայությենից սկսած դրացի էին միմյանց, և համարյա քե միասին աճելով, եղբոր պես վարվում էին մինչև այժմ, քեպեհ պ. Շաքարյանցն ավելի հարուստ էր, քան քե պ. Մարկոսը, որովհետև Շաքարյանցի հայրը թողել էր մի քանի անշարժ կալվածք, որոնց արդյունքով կառավարվում էր նա առանց պլխացավության:

Պ. Շաքարյանցը, յուր բոլոր կյանքը 18 տարեկան հասակից բռնած մինչև այսօր (այժմ կլինի նա 36 տարով) անգործ պարապում էր զանազան դյուրմական գրքերով. ինչ հին, ձեռագիր ախտարք ասես, որ նա չունենար, ինչ մագաղաթի վերա գրած կարմիր ու կապույտ գրերով ուրբաթագիրք ասես, որ չունենար. նա դեռևս պարծենում է, քե վեցհազարյակ ևս ունի....

Շատ անգամ տեսել են Շաքարյանցին փակված մի ախոռի մեջ, որ, մի ձեռքին գրչագիր մագաղաթ, իսկ մյուս ձեռքում կավիճ, մի բո-

յորշի դիծ էր քարշում գնանի վերա։ Նորա ծառայքը, շատ անգամ գոնէ են ախտոի մէջ, այդ բոլորշի գծի կենտրոնում մի մարմնած սև հաւ, առանց ամենայն պիտակի, և մի սև կտիով դանակ։ Բնական բաներից ցաւում էր պ. Շաբարեանցի դլուխը, նա սիրում է ոգիների և փերիների հետ խոսակից լինել միշտ. նորա բան ապացարել, և շատ անգամ հավատացուցած է յուր ընկերներին և բարեկամներին, թէ նա, յուր դյուցական արարողութեան միջնորդութեամբ, հասել է շատ բաների։ Դոցա կարգումն է և այն, որ մի շատ գնդցիկ ազդրիկ, որի վերա սիրահարված է նազած երկար ժամանակ, և որ պ. Շաբարեանցին ամենևին մարդու տեղ ևս չէ գնում նազած, ինքը, յուր ոտքով, միայն մի շաղիկով եկել է կնա գիշերին պ. Շաբարեանցի ախտոր և ծունկ չոքած նորա առաջև, աչքը արտասուք խնդրել է...

Ահա այս պարոնն էր պ. Մարիոսին տանած դրողը, և սա էր, որի մոտ գնաց պ. Մարիոսը, ուր կտանանք մենք և մեր ընթերցողքը։

Բ

Պ. Մարկոսը, նկատ առանելով Շաբարեանցի տունը, չգտավ նորան այնտեղ։ Հարցնելով ծառայից իմացավ, որ դյուցուհյամբ պարապում է դարձյալ ախտոումն։— Ի՛նչ անբրիատնյա մարդ է դարձել գա,— մտածում էր պ. Մարկոսը պ. Շաբարեանցի մասին։— Աստված, հրնշտակները, սուրբերը, նահատակները թողած, բան է բռնում սատանաների հետ. ահա ի՛նչ է նշանակում դաստիարակության պակասութիւնը։ Եթե նա կարդացած լիներ այն դրյանքը, ինչ որ ես կարդում եմ, այն ժամանակ, մազերը դլխի վերա ցցվելու էին։ Ես երանելի մարդ եմ,— մտածում էր նա,— որ երեխա ժամանակից աշակերտվեցա Սիմոն վարժապետին, այնպիսի կարդացող և ատտվածաբան մարդու։ Ի՛նչ դլուխ ուներ, ի՛նչ ուսում ուներ. կարճ խոսելով, փիլիսոփա մարդ էր։ Ի՛նչպես գնդցիկ մնկնում էր ժողովածուն. ապա նկնդցի և կամոդիկոս բառերի մեկնութիւնը, չկարծեմ, որ եպիսկոպոսները ևս այնպես իմանան։ Աստված լուսավորեսցե քո հոգին, Սիմոն վարժապետ, եթե դու չլինեիր, եթե քո դրյանքը ինձ ժառանգութիւն չմնային, ո՛վ դիտե, ո՛վ կարող է երաշխավոր լինել, դուցե ևս ևս Շաբարյանցի նման գլուխս տայի դիվականի պարապմունքի։

Այստեղ պ. Մարկոսը երեք անգամ երևնը խաչ հանեց, որպես թե հրաժարվելով դևերից և վահանափակելով յուր անձը սատանայական փորձանքների երեսից. հետո հարց արեց ծառայից, թե վաղո՛ւց է արդեն, որ նորա պարոնը գնացել էր ախտոր։ Մառան պատասխանեց, թե բավական ժամանակ էր։— Բայց,— հավելյացրեց նա,— ես չկարծեմ, որ այսօր շուտ ավարտվի նորա հանդիսը. պատճառ, շատ պատրաստութիւնք անսաւ ախտոր մտանելուց հառաջ։

«Ի՛նչ պատրաստութիւնք»,— սկսեց պ. Մարկոսը հարց առնել։

— Հրամայել էր ինձ գտանել մի բոլորովին սև կատու, մի սև հավ, մի հայելի, մի որձ չղջկի կուրծքի կարթաձև ոսկր, մի պտուկ և այլ մանրամասնություններ, որ ուրիշ ժամանակ չէր գործ ածում։

«Ես կերթամ նորա մոտ, և կասեմ, որ Բողու այժմ այդ բանը մի այլ ժամանակի...»

— Չգնաք, չգնաք,— ազաչում եմ,— գոռաց Ծառան, համարյա ինն արտասուքը աչքերում,— այդ վնասակար կլինի և ձեզ և իմ պարոնիս։ Նա միշտ այդպիսի դիպվածներում արգելում է մտանել ախոռը և մոտենալ նորան, որովհետև շատ ոգիների ազդելուց կարելի էր խեղդանալ իսկույն կամ անզամալուծվիլ։

«Ապա Հավատով խոստովանիմը ո՞ր օրի համար է, հիմա՛ր, նարնջագույն աքանչելի և դիվահալած աղոթքները։ Բացի դորանից, ես միշտ իմ վերա պահում եմ կտորը այն ծառի, որին կապել էին Քրիստոսին Գեթսեմանի պարտիզում մատնության գիշերին։ Ես դևերից երկյուղ չունիմ...»

— Գուցե ճշմարիտ եք խոսում, ապա ուրեմն, այդպիսի վատաբախտ դիպվածում վնասը կհասանի իմ պարոնին։

«Բան չկա, գոնե կխնդրեցանա և կդադարի այդ բաներից։ Ծույլ տո՛ւր ինձ ախորը. արի՛ գնանք»։

— Ամենևին. կամիք սպանեցեք ինձ, այնուամենայնիվ հանձնառու չեմ գնալ. ես ձրի չեմ գտել իմ կյանքը, որ հիմարաբար վտանգի մեջ ձգեմ։

Մինչդեռ պ. Մարկոսը խոսում էր ծառայի հետ, և ահա պ. Շաքարյանցը բարկացած, շորիքը բնթանից թափելով ներս մտավ։

«Այդ անկարելի է.... այդ անհնարին է.... չկամիմ ամենևին տեսանել. այդ ի՛նչ սոսկալի կերպարանափոխություն.... կապիկ է միանգամայն։ Ափսո՛ս աշխատանքիս, ափսո՛ս սիրելուս, որ զուր տեղը կորավ.... երկինք, փուլ արի իմ վերա.... երկիր, կուլ տուր ինձ, ո՛հ, մի օգնություն, սիրտս այրվում է.... ո՛հ... ո՛հ» — և մի քանի այապիսի կցկտուր խոսքեր դեռևս արտաբերելով, ընկավ աթոռի վերա ամենևին ուժաթափ։

Պ. Մարկոսը նայում էր զարմացած։ Ծառան դուրս փախավ սենեկից, հայր մեր ասելով։ Պ. Մարկոսը տեսանելով, որ բանը վատ է, փորր է մնացել, որ յուրյանց մտքումը դրած խնջույքը դնալի տրտմության փոխվի, յուր կարգով սկսեց գործ դնել յուր արհեստը, և, կանգնելով պ. Շաքարյանցի գլխի տակ, սկսեց մրմնջել մի աղոթք, և երեք անգամ կրկնելով նալին մեղմ, նալածին դևի խոսքերը, այլև մի փորր ջուր սրբսկելով Շաքարյանցի երեսին, զգաստացուց նորան։

Պ. Շաքարյանցը վեր կացավ և կովի նման նայում էր պ. Մարկոսի վերա. հետո սկսեց, մի քանի արաբական խոսքեր արտաբերելով, պատյա գալ սենեկի մեջտեղում։ Պ. Մարկոսը տեսանելով, որ մի աղոթքով բան չդարձավ, բռնեց Շաքարյանցին, նատեցուց բռնությամբ աթոռի վերա և սկսեց անգիր կարդալ մի այլ աղոթք, որ ավելի ներգործական էր նորա աչքում։ Պ. Շաքարյանցը քնեց.... Դեռ ևս ամբոխված էր նորա շնչա-

ռութիւնը, սիրտը մի առանձին խռովութեամբ բաբախում էր կուրծքի մէջ. երեսի վերա, երբեմն, երբեմն երեում էին ակամա և անզգա ցնցողական զարկողութիւններ։

Ա՛խ՛որ աստուածո,— ասաց պ. Մարկոսը,— դոնե՛ քնեցու Աբի մի գնամ դորա ախտը. ի՛նչ կա այդտեղ, որ այս խնդմի լերդը պատառել էր։

Քնե պ. Մարկոսը, զանազան դիմահարած ազդրիքներով վահանափակել էր յուր անձը, այնուամենայնիվ հարկաւոր համարեց հանել շապիկի տակից մի փայտի կտոր, որ արծաթեայ շղթայով կախած էր կուրծքի վերա, համբուրեց և հառաջ գնաց... Նա տեսաւ, որ ախտներից մինի դուռը բաց է, ուստի կարծելով որ այդտեղ պիտո է կատարուած լինի դիմահարցութիւնը, ներս մտաւ նորա մէջ։ Ախտի հատակի վերա քարշած էր կավիճով մի շրջանագիծ. նորա մէջտեղում մի ահագին սև կատու թաթերով բռնելով մի գլխատած հավի մարմին, ուստում էր մոմռալով։ Դորա մոտ դրած էր մի պտուկ։ Պ. Մարկոսը մոտեցաւ պտուկին, տեսաւ որ ջրով լիքն է, շրջեց պտուկը, և ահա նորա միջից դուրս ընկան չղջկի կուրծքի կարմրաձև ոսկրը և Հուլիա Գոստրանայի* պատկերը։ Այս բաները մեծ զարմանք բերեցին պ. Մարկոսի վերա, բայց չկարողացան դրանք կանապես պատասխանել նորա հարցասիրութեանը, թե ի՛նչ դիպվածով Հատկապես ընկել էր Շաքարբյանցը այդ վիճակի մէջ։ Շաքարբյանցի ծառան դրսումը կանգնած զարմանում էր պ. Մարկոսի քաջասրտութեան վերա, որով նա համարձակվել էր ներս մտանել մի բնակութեան մէջ, ուր առանց հավաքվում էին փերիներ և դևեր։

---

* Հարկավոր ենք համարում այստեղ մի փոքր, ծանոթացանել Հուլիա Գոստրանայի մասին։ Դա մի աղջիկ է, Մենկոնկոյից, 23 տարեկան. հասակի բարձրութիւնը 4 ոտնաչափ և 6 թաթաչափ, զարմանալի կանոնավոր կազմվածքի տեր։ Կզակի վերա բուսած է երկայն մորուք, որ միավորվում է նորա ընչացրի և թուշերի մորուքի հետ։ Հոնքերը թանձր որպես և գլխի մազը, սաստիկ սև և առանց դանդուրների։ Երեսի մյուս մասերը, որպես և բոլոր մարմինը, բացի արմունկներից, ձեռքի ափերից և ոտքի գարշապարից, պատած է կարճ մազերով։ Կուրծքը սաստիկ կնրպարանագործված և լիքը։ Քթի պնչերը տափակած և քարշված, այնպես որ առիթ են տալիս եզրակացնելու թե աճառ չկար նորա մէջ։ Բերանը մեծ, շրթունքը դնդի գույս գարձված։ Ներքին ծնոտի վերա կան առաջնները ամրողջապես, իսկ վերին ծնոտի առաջներում երեում են պատուիրուններ։ Դեմքի գծագրութիւնը չունի նեգրի բնավորութիւն, բավական փոքր է երեսի անկյունը։ Ձայնը կանացի է, մանավանդ բարձր ոճերը։ Բնե անկիրթ է նա, այնուամենայնիվ ունի լավ խելք և հասկացողութիւն։

Այս աղջիկը, որին շատերի հետ, և մենք ակնածանս եղանք, ավելի նմանութիւն ունի կապկի քան թե մարդու, և նայելով զանազան բնագետների և ճկրտագիների օրագրերի և լրագրերի խոսքերին, դեռևս մի հատ է ամբողջ երկրագունդի վերա։ Անտարակույս մենք բնթերցողներից շատեր կլինին նորան, մինչդեռ գտանվում էր նա 1858 թվականին Պետերբուրգ և Մոսկվա մայրաքաղաքներում։

Այս աղջիկ ծագումը ծածկած է անհայտութեան վարագույրի տակ։ Չէ կարելի գրանալ ասել, թե նա պատկանում է արմատական ցեղերի մի ցեղին. պատճառ, ունի շատ որակութիւններ, որով բաժանվում էր նոցանից։ Չկամենք այստեղ երկարաբանել մեր լրերով այդ զանազանութեան ապացույցները, չկամենք նույնպես հիշել այն բոլոր խոսք

Գ. Մարկոսը, թողնելով յուր հետաքրքրությունը, նայում մտավ Շաբաթայանցի սենյակը, ուր քնած թողել էր յուր բարեկամը։ Սա զարթնեցավ պ. Մարկոսի նայս մտանելուց. առաւտ քրտինքը թափվում էր նորա ճակատից, և ամենևին չիմանալով յուր գլխից անցածը, համարեց, թե նոր է դալիս պ. Մարկոսը։ Այս պատճառով վեր կացավ տեղից և կամեցավ, հառաջ գնալով, ողջունել յուր բարեկամը. բայց պ. Մարկոսը հառաջեց խոսել.

«Ի՛նչպես է այժմ առողջությունդ, ես, Հշմարիտն ասեմ, շատ վախեցա...»

— Երևի թե առավոտուն վաղ մարդ ուղարկելուս պատճառով։ Օրհնած հոդի, ո՞ր ապարանն տոմսակումս գրել էր հրավիրելուս պատճառը. փառը աստուծո. ի՛նչ վախենալու բան կա. պիտու էր ուրախանալու։

«Մև ուրախություն կգար քո գլխին, եթե չէի կարդացել... ի՛նչ օր էին ձգել քեզ քո բարեկամքը. հավատա՛, Շաբաթյանց, դու մի օր հանկարծ կմեռանիս, և հոդիդ բաց աչքով կմաանանա, որ կերակուր լինի սատանայի։ Մի՛թե ամոթ չունիս. դու քրիստոյա մարդ ես. ի՛նչպես կարելի է սատանայական բաներով պարապիլ....»

Գ. Մարկոսի այս բաները խոսելու ժամանակ, Շաբաթյանցը ընկավ մի տխուր մտածության մեջ։ Երազի նման հիշում էր յուր ախտից ներս վազելը և պ. Մարկոսին տեսանելը։ Հավատալու համար, թե այդպե՞ս

ու զրույցը այս աղչկա մասին, այլ միայն դնում ենք այստեղ այն, ինչ որ մեծ մասով ընդունելի է եղած և որ երևում է ավելի ստույգ։

1830 թվականին, արմատականների ցեղից մի քանի կանայք Կոպալից, գնացին սարի տակ չէի մեջ լվացվելու Յուրյանց տեղը վերագառնալով նկատեցին, որ չէ յուրյանց մի ընկերը Շատ որոնեցին, շատ հարց ու խնդիր արեցին, բայց բոլորը զուր եղավ, և ամենեքեան համաձայնեցան կարծել, որ խեղդված լինի չրում։ Վեց տարի հետո այս անցքից մի հովիվ յուր ոչխարները սարերում արածեցնելու ժամանակ, մի քարայրի միջից լսեց մի ձայն, որ համարեց մեկնիկացու ձայն։ Նա սկսեց որոնել ձայն ավողը և գտավ. նա էր կորուսած հնգիական աղչիկը։ Սա պատմեց, թե լվացվելուց հետո, մոլորվելով սարերի մեջ, ընկել էր արմատականների մի այլ ցեղի ձեռք, որ այսքան ժամանակ արգելել էր նորան վարվելով թոնակալի պես։ Բայց տեղը, ուր գտել էր հովիվը այդ կնոջը, բանի հարյուր մղոնով հեռի էր մարգկային բնակութենից և գտանվում էր այնպիսի կողմում, ուր լիք էին կապիկներ և արջեր։ Այդ միջոցին կերակրում էր նա մի երկու տարեկան աղչիկ, որին շատ սիրում էր, թե հավատացնում էր, թե ինքը չէ նորա մայրը, այլ գտանելով նորան անհոգ և անխնամ, գտրման էր տանում։ Այդ աղչիկը անվանեցին Հուլիա Գոստրանա, և յուր մայրացուի մահից հետո գրեցին նորան Ալլուայի գավառական գերդաստանի մեջ, որպես ազգականն։ Այստեղ մնաց Հուլիան մինչև 1854 թ. ապրիլը պետ գերդաստանի մեջ, և հետո գնաց դեպի Մխայլալ նահանգները։ Այդ օրից սկսեց նա երևել Մխայլալ նահանգների մեծ քաղաքների մեջ և ամենայն տեղ գրգռեց բժիշկների և բնագետների հետաքրքրությունը։ Երբ որ Ամերիկայում բավական տեղ երևել էր, ապա եկավ Եվրոպա, համարյա թե յուր վերա գարձուց բոլոր մայրաքաղաքների ուշադրությունը։ Մոտ երեք տարի մնաց Գետերբուրգ և Մոսկվա մայրաքաղաքներում. հետո ճանապարհորդեց դեպի Գերմանիա։ Նորնրումս առաւ օրագրերը հրատարակելու նորա վերադարձը դեպի Գետերբուրգ, ուր երևում է բազմությանը մի Ալբինոս կնոջ և մի 30 բաշարակ գաճաճի հետ։

էր արդյոք, կամեցավ հառաջ ուրանալ այն խորհրդով, որ նմին պ. Մարկոսը առուգապահս տեսնել էր ամենայն բան, ապա ինքն ևս խոստովանելու էր բոլորը. այս դիտմամբ կարնելով պ. Մարկոսի խոսքը, ասաց. «Եղբա՛յր, ինչե՛ր ևս խոսում. ի՛նչ գև, ի՛նչ աղոթք, ի՛նչ բան. խելքդ գլխի՞դ է մն ոչ»:

— Իմ խելքս գլխիս է, քայց քոնը նկա՞վ մն չէ. մի ժամ հառաջ խելագարվել էիր ախոռից ներս վազելով, այնպես, որ քեզ հանգստացնելուց հետո, ստիպվեցա գնալ և հարցաւիրել քո խելագարության պատճառը: Ախոռը ներս մտա, տեսա մի մեծ շրջանագծի մեջ, մի սև կատու, որ լափում էր մի գլխատած սև հավի մարմին, տեսա մի ջրով լիր պատուկ. բայց ասա՛ խնդրեմ, մի՞ն Հուլիա Պոսարանայի պատկերը ևս անհրաժեշտ առարկա է դյուցուիյան մեջ, որ շղթկի ոսկրի հետ միասին դրել էիր ջրով լիրը պատուկի մեջ...

«Մի՛ մն դու մի բան տեսա՞ր»,— կարնեց խոսքը պ. Շաքարյանցը:

— Եղբա՛յր, ես կույր չեմ, և ինչ որ մարդկային աչքով կարելի է տեսանել, միշտ տեսանում եմ: Ի՞նչպես չտեսա Պոսարանայի պատկերը, և դեռ ևս ներկով նկարած:

«Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ես այժմ հասկանում եմ»,— ասելով զարկեց երկու ձեռքով ճակատին:

«Ես խաբվել եմ.... ախո՛ռ և հազար ախո՛ռ, այդ մի հիմարություն է եղել, երևի մն դրացուս կողմից, որովհետև նա նկարել գիտե... այո՛, նորա բանն է, անիծածը երևի երեկոյան երևի լսել է իմ ձայնավոր խորհրդածությունը իմ հետ, և այդ բանը քերել է իմ գլուխը: Փուլմ չէ, դրացի՛, ևս մի օր քո դռան առաջև ևս կշրջեմ...»

— Ասա՛, խնդրեմ, ի՛նչ խորհուրդ ունի այս բոլորը. ևս ոչինչ բան չեմ հասկանում. և քո ընթացքը, ախոռի հանգերձանքը, այժմյան խոսակցությունդ, իմ համար, եգիպտական առեղծվածներից (հանելուկներից) անցան:

«Պարո՛ն Մարկոս, հոգի՛ս, դու գիտես, որ ես քեզ հոգուս պես սիրում եմ և քեզանից երբեք մի բան ծածկած չեմ, ուրեմն լսիր և այս գաղտնիքս, որ ոչ ոք չգիտե, և առաջինը դու պիտի լինես, որ իմանաս: Ես քո բարեկամության վերա երկբայություն չունիմ, ուստի և անկասկած կարող եմ հավատալ քեզ իմ գաղտնիքը, որովհետև ճակատագիրը այսպես է բերել, որ դու իմանայիր նորան: Փո՛ւլմ չէ, դու ևս մի կարդացող մարդ ես, այսօր գործիր և խոստովանահայր, ի՛նչ կա որ»:

Գ

Պ. Շաքարյանցը, այս յուր հառաջաբանով, այլև ձևանների և գնմքի շարժվածքով մի այնպիսի ձև ցույց ավեց պ. Մարկոսին, որ սա կարծեց, մն նորա հավատալու գաղտնիքը մի քաղաքական մեծակշիռ բան է, վասն որո պ. Մարկոսը, պատրաստվելով լսել, ավելորդ չհամարեց վերսաին

հավատացնել պ. Շաբարյանցին, յուր դեպի նա անկեղծ բարեկամությունը։

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ,— ասաց Շաբարյանցը,— ես գիտեմ թե բարեկամությունը, և այդ էր պատճառը, որ հոժարեցա հավատալ քեզ իմ դաղտնիքը, լսի՛ր ուրեմն։

— Մի քանի ժամանակ է, որ երազում մի գեղեցիկ աղջիկ տեսանելով, սիրահարվել էի նորա վերա, այնպես, որ ո՛չ ցերեկս ցերեկ էր, ո՛չ գիշերս գիշեր։ Նրա միայն մնում էի տանս և ընկնում էի մտածության մեջ, հանկարծ մի շարժողությունից, մի աղաղակից դուրս գալով այդ խոր մտածության միջից և աչքս դարձնելով դեպի այն կողմը, որտեղից լսել էի աղաղակը կամ շարժողության ձայները, այն սիրած աղջիկս, ուրվականի պես երևում էր աչքիս և անհայտանում դարձյալ։ Շատ մտածեցի, շատ որոնեցի մեր քաղաքի մեջ, թե կա՞ր արդյոք այդպիսի մի աղջիկ. ճշմարիտն ասեմ, նրա լիներ, այնուհետև ամենայն ջանք պիտու է գործ դնեի, այդ աղջիկը ինձ կին խնդրելու, որովհետև ինձ թվում էր, թե ստեղծված եմ միմիայն նորա համար, և միմիայն նորա հետ ամուսնանալով, կարծում էի, թե կարող էի երջանկանալ։ Բայց բոլոր իմ հարց ու խնդիրս, բոլոր աշխատությունս զուր կորան. իսկ աղջկա պատկերը տես թե բևեռել էին աչքիս, որովհետև աչքերս այս կամ այն կողմը ձգելու ժամանակ, անդադար տեսանում էի նորան։ Թուլացա, մաշվեցա. մարդու հետ խոսելու ժամանակ, շատ անգամ չհասկանալով նորա խոսածը, որովհետև միտքս թռչում էր այն աղջկա քամակից, ամենևին մեքենաբար պատասխանում էի մի անորոշ բան, ո՛չ բացասական և ո՛չ բացասական, այն խորհրդով, որ դիմացիս կանգնած մարդը հակառակախոսության պատճառը չգտանելով, թողուր ինձ հանգիստ։ Ամենայն ջանք գործ էի դնում հեռի փախչել որևիցե ընկերակցություններից. այն մարդիկը, որ հառաջ շատ սիրելի էին ինձ, այժմ դարձել էին իմ աչքում փախուղական փոշի. նոցա իմ մոտ ներս մտանելը ատելի էր ինձ, որովհետև ընդհատվում էր իմ մտածությունը. ես երջանիկ էի, մինչև անգամ, միմիայն երևակայելով այն հրեշտակային պատկերը։ Ահա այսպիսի հոգևամաչ հանգամանքների մեջ կորուսի բոլոր հոգևական և մարմնական կարողությունքս, փորր էր մնացել որ մահիճ ընկնէի։

— Անցյալները.... մի օր, քաղաքից դուրս գնացած լինելով, մի ծառաստանի մեջ մտնելու ժամանակ, հանկարծ, ծառերի քամակից տեսանում եմ այդ աղջիկը, որ կանգնած, կամենում է բռնել մի թիթեռնակ։ Ինձ թվեց, թե աչքիս է երևում.... շփում եմ ձակատս, արբում եմ աչքերս, որպեսզի, եթե երևույթ է այդ, ապա արյունը երակներումս ընթացքը առանալով, անհետանա այդ երևույթը.... բայց ահա զարմանք.... աղջիկը նույն դրության մեջ, կանգնած ոտքի մատների վերա և պարզած աջ ձեռքը, աշխատում է բռնել մի մեծ թիթեռնակ, որ նստած մի ծաղիկի վերա, շարժում էր յուր պայծառ, ծաղկանկար թևերը։ Մի անգամ դարձյալ արբում եմ աչքս.... և դարձյալ տեսանելով նորան վազում եմ դեպի

նա.... բայց, ավա՛ղ.... աղջիկը, մի զարհուրալից երկյուղ ցույց ավող ձայն արձակելով, անհայտացավ ծառերի թավախում։ Ես որոնեցի նորան անտառի մեջ, այնուամենայնիվ չկարողացա գտանել։ Այդ բանից հետո, սերը, առավել և առավել զորացավ իմ մեջ, որ հալումաշ արեց ինձ. ինչում էր, ին մի վերը գոյացել էր սրտումս և ճարակում է որան։ Քունը խափան փախավ աչքիցս. օրը ինձ տարի էր ինչում. վերջապես, զրկվելով ամենայն բարեհաճող հույսերից, մտածեցի գործ դնել իմ դերմարդկային զորությունը... Ես հառաջ ևս կարող էի այդ բանը առնել, բայց չէի կամենում, հուսալով, որ առանց դրան ևս կարող եմ մի բան իմանալ։ Քանի օր էր արդեն, որ վճռել էի կատարել մի մեծ վհկական արարողություն, բայց մնացել էր այդ իմ դիտավորությունը անկատար, չգտանելով մի բոլորովին սև հավ, որ անշուշտ հարկավոր էր. մյուս այլ բաները վաղուց պատրաստել էի։ Երեկ երեկոյան, ապատավորս գալ էր մի այդպիսի հավ, և այնպես ուրախ էի դորա վերա, որպես ին այդ հավի մեջ տեսանում էի այն գեղեցիկ օրիորդը, որ խնդրս առել էր գլխիցս։ Ուրախ ուրախ մատն էի գալիս դրսումը ամբողջ գիշերը. լուսնի արծաթափայլ ճառագայթները խաղում էին տանս պատուհանի ապակիների հետ։ Կապույտ երկինքը զարդարված անհամար գոհարներով, ասես ին, ուրախակից էր լինում ինձ. մեղմիկ քամին ողջունում էր ծառերի ամեն մի տերևը. այս բոլոր բանաստեղծական հանգամանքները, այնպես վառեցին ու բորբոքեցին հոգիս, որ չկարողացա զսպել սրտիս խորհուրդը, որ նոսած ջրի նման վեր ու վայր էր լինում իմ մեջ։ Սկսեցի բարձր բարձր խոսել իմ հետ, կատարելի վհկական արարողությանս մասին։ Ջայնավոր մտածություն էի առնում և նկարագրում էի այն օրիորդը, որ անշուշտ համարում էի հավերժահարսն։

— Երբ որ ամենայն բան խոսել էի և մի փորր հանգարտել էի, թափելով սրտիս ուրախության ավելորդը, լսում եմ ահա, որ մի մարդ, պարսպի մյուս կողմից ծիծաղում է բարձրաձայն։ Ես ամբոխվեցա, որովհետև իմ բոլոր խոսակցությունները անտարակույս պիտի լսած լիներ այդ անպարկեշտ մարդը։ Վեր եկա պարսպի վերա, կամելով տեսանել ին ո՛վ էր այն, և ահա ոչ ոք չկար.... բայց.... արդարացի կասկած ունիմ դրացուս վերա, որի հետ անցյալները կռվել էի մի մարահավի համար։

— Գնալով անկողին մտածեցի հոգ տանել և մեր կատարելի խընջույքի վերա, որովհետև երջանկություն ասացյալը ոչինչ հարգ ու արժանավորություն չունի, եթե փակվում է միայն մի մարդու մեջ, և եթե այդ մարդը չէ կարող ուրիշները ևս հաղորդել նորան։ Գիշերը, երազում տեսա իմ հավերժահարսը, որ, մի բարակ բատիստյա շապիկով, դուրս էր գալիս գետից։ Ջուրը թացացնելով նորա շապիկը շինել էր բոլորովին թափանցիկ, և այդ պատճառով աչքերս վերստին կախարդվեցան նորա գեղեցկություններից....

— Այսօր առավոտ ուղարկեցի քեզ այն առնսակը, որ առացար. իսկ ինքս գնացի ախտ կատարելու իմ վհկական արարողությունը։ Այդ դյու-

Իյուիյան խորհուրդը այն էր, որ անմաքուր ոգիների միջնորդությամբ կանչեի իմ գեղեցկության գաղափարի ուրվականը, որ անտարակույս պիտի երևներ ինձ, յոթին չրհորի ջրով լցրած պատուկի մեջ, և հարցաներ նորանից, նորա ո՛վ և ի՛նչ լինելը:

— Քանզ արդեն հայտնի է, որ ես շատ անգամ կատարել եմ և ավելի ծանր գործեր, այս պատճառով ոչինչ տարակույս չունեի իմ հաջողության վերաբ: Հանկարծ, մինչ բոլոր արարողությունը կատարած, ինձ և անդովանալի փափագով աչքս ձգում եմ պատուկի վերաբ, երևում է ինձ մի կերպարանք, որ սատանա լինելու համար, միմիայն կոտոշ չուներ գլխին: Ես նայում եմ դարձյալ, երևում է նույն կերպարանքը, և ինձ թվեցավ, թե այդ կերպարանքը ժպտում էր.... բայց այնպես ահարկու էր նորա տեսիլը, որ մահու սարսափ բերեց վերաբ: Իմ գեղեցիկ օրիորդի ուրվականը կանչելը և այդ հրեշի ինձ երևելը ապացուցանում էր, թե օրիորդը, որի վերաբ սիրահարված էի, արդարև ադամորդի չէր, որ խայտառակելով իմ թեթևամտությունը, երևել էր ինձ այդ դիվական կերպարանքով, դեռ ևս ծիծաղելով իմ վերաբ.... Այսանդ կորուսի ես ինձ.... գիտեմ միայն, որ նեբա վազեցի.... բայց թե ի՛նչ էր պատահել այնուհետև, դու պիտո է ինձանից լավ իմանաս, որովհետև ներկա էիր:

Գ. Շաբաթյանցը այնպիսի անկեղծ ոգևորությամբ խոսեց այս բաները, որ պ. Մարկոսը շարժվեցավ: Նորա երևակ մեռելատիպ կերպարանքը, վշտահար աչքերը, դողդողուն ձայնը և հնկնկանքից ընդհատված կարճ և արագ շնչառությունը — այս բոլորը միանալով կազմում էին արդարև մի սխրալի և սրտաշարժ ներդաշնակություն:

Գ. Մարկոսը աշխատելով այս խավար մտածության ամպերը ցրվել յուր բարեկամի գլխից, ասաց. «Ես, մտանելով սիրտը, գնացի քո արարողության համար պատրաստած բաների մնացորդը և տեսա մի ջրով լիք պատուկի հատակում Հուլիա Գոսարանայի պատկերը, որ ձեռքով և բավական կոպիտ նկարած էր. հանեցի և ձգեցի նորան հատակի վերա....»

— Ի՛նչ բան ունի այդ հրեշի պատկերը իմ պատուկի մեջ, ո՞ր սատանան ձգել է նորան այստեղ, և մի՞թե ճշմարիտ է այդ, մի՞թե ես երկյուղ կրելով այդ հիմար պատկերից, անկատար թողեցի իմ արարողությունը, որ գուցե հաջողացներ ինձ իմ նպատակիս:

Գ. Շաբաթյանցը, այս խոսքերը ասելով, սկսաց երևիայի պես լալ և գլուխը ծնծել ձեռներով: Նա մտածում էր, որ էթե կիսակատար չթողուր յուր վհկական արարողությունը, ապա երևելու էր նորա հավերժահարսը և ինքը հաճանելու յուր փափագելի նպատակին: Գ. Մարկոսի կարեկցությունը ստացավ մի գործունյա բնավորություն: Նա մտքումը գնելով անպատճառ գտանել այդ օրիորդը, որի համար խելքը թռուցել էր պ. Շաբաթյանցը, խնդրեց սորանից նկարագրել այդ օրիորդը:

Գ. Շաբաթյանցը թեև բանաստեղծ չէր, թեև չուներ մի աոույգ և կայտառ հոգի, մի կենդանի լեզու, այնուամենայնիվ, այս դիպվածում, այնպես խոսեց, որ, ասես թե, նորա բոլոր շարժողությունքը, դեմքը, աչ-

քերի փայլը, ձայնը, և այլն, և այլն, ամեններին յուրյանց համար չոկ չոկ չնորհ տարձած խոսում էին պ. Շաթարյանցի փոխանակ: Նա հայտնեց, թե այդ օրիորդը բարձրահասակ է, սպիտակ, մազերը շիկագույն, աչքերը պարզ երկնագույն, շրթունքը կարմիր, որի երևսը նմանեցնում էր նռնիշի. իրանը շատ կանոնավոր, կուրծքը կատարելապես կերպարանագործված և պարարտ, իսկ հագուստը վերջին — ամենանոր ձևով, որ կրում էին Փարիզում: Պ. Շաթարյանցը կարծում էր նույնպես, թե այդ օրիորդը պիտո է գեղեցիկ և սուր ձայն ունենա, նա եզրափակում էր այսպես ոտրա ադազակից, որ արձակել էր անտառի մեջ, պ. Շաթարյանցի երևելու ժամանակ:

Պ. Մարկոսը, այս բոլոր նշանները գրելով յուր ծոցի տետրակի մեջ, խոստացավ ամենայն հնար գործ դնել, ամենայն հարց ու խնդիր անտես չառնել, այդ օրիորդը գտանելու համար, նրա միայն կար արդարև մի այդպիսի օրիորդ յուրյանց քաղաքում:

Երբ մի փորր հանդարտել էր պ. Շաթարյանցը, պ. Մարկոսը խնդրեց մի բաժակ ադող, և մի փորր նախաճաշիկ: Նա ասում էր, որ այդ կամբացնեն պ. Շաթարյանցի ծուլացած զորությունները: Արդարև մի բաժակ հոգի առնելուց հետո, երկու սրտակից բարեկամների խոսակցությունը ատացավ բոլորովին այլ ուղղություն:

Դ

«Այժմ խոսենք մեր խնջույքի մասին»,— ասաց պ. Մարկոսը, ադողը խմելուց հետո, ցած դնելով բաժակը:

— Խոսենք, եղբա՛յր, խոսենք,— պատասխանեց պ. Շաթարյանցը մեքենաբար, ցանկանալով մոռանալ անցած դեպքերը:

«Քո պատրաստության մեջ, ես տեսանում եմ ինքնություն,— շարունակեց պ. Մարկոսը,— եղրակացնելով այն ծանոթություններից, որ տվեցիր ինձ այսօր քո կարճառոտ ոտմանովդ: Դու մոռացել ես հոգալ, նախ, ոսմ, երկրորդ, անգլիական ձին, երրորդ, կոնյակ, չորրորդ, սարեպտի բալասան, մյուս ինչ որ հոգացել ես, լավ է: Բայց այսքան պիտո է իմանալ, որ ուրախությունը ուրախություն չէ լինում, եթե նորա շինվածքը, հաստատ պահող հիմքերը չկային, այն չորս տեսակ ըմպելին այնպիսի սյուներ են, որոնց վերա կարելի է ուրախության պալատներ ևս շինել»:

— Եղբա՛յր, ների՛ր, մոռացել եմ. մի գուցե այդ բանը վերագրես իմ ժլատությանը. ես իսկույն կհոգամ, և շնորհակալ եմ, որ ասացիր, թեև կարող էի ես ևս միաք բերել, բայց այսպիսի շտապության մեջ... գուցե մոռանայի ևս: Շատ ատելագ է, թե ոչինչ բան այնպես հիմնավոր չէ, ինչպես միաբան խորհրդով կատարվածը. և ահա ես իսկույն կհոգամ ինչ որ պակաս է. է՛յ, Սարգի՛ս:

Մարգիսը Շաքարյանցի սպասավորն էր, որ իսկույն երևեցավ յուր պարոնի ձայն տալու վերա։

«Տե՛ս, ի՛նչ է ասում պարոնը,— շարունակեց Շաքարյանցը ծառային, ցույց տալով պ. Մարկոսի վերա,— իսկույն պատրաստիր ինչ որ կհրամայեն քեզ»։

— Երկու շիշ Յամայկայի լավ ռոմ, երկու շիշ կոնյակ, երկու շիշ անգլիական ճին և երկու շիշ սարնպոի բալասան,— իսկույն կցորդեց պ. Մարկոսը։

Մարգիսը գլուխ տվեց և դուրս գնաց։

Պ. Շաքարյանցը շարունակեց.— Ուրիշ ի՛նչ այնպիսի բաներ կային, որոնց վերա պիտո է խոսել։

«Դու դրում էիր, թե պիտո է խորհուրդ կատարել, ո՛վին հրավիրել և ո՛վին ոչ»,— պատասխանեց պ. Մարկոսը։

— Այո՛, այդպես։ Ես չինել եմ ահա մի ցուցակ, որի մեջ գրել եմ, մեր հրավիրելի բարեկամների և ծանոթների անունները։

«Կարդա՛ տեսանեմ»։

Պ. Շաքարյանցը հանեց սեղանի վերայի թղթերի տակից, որ խառնիխուռն ընկած էին, մի թերթ թուղթ և սկսեց կարդալ։

— Ուրեմն բոլորը տասն մարդ,— ասաց պ. Մարկոսը,— մեզանով կլինի տասներկու. առաքելական թիվ է, խորհրդավոր է։ Միայն գիտե՞ս, ես այդ մարդկերից մի քանիսին չեմ ճանաչում, իսկ այսպիսի հրավերի ժամանակ, հարկավոր էր որ վերահասու եղած լիներինք դոցա բոլորի բնավորությանը, որովհետև առանց այսպիսի խորության, հանդիպողին հրավիրել, իմ կարծիքով, հիմարություն է։ Նախ, այն պատճառով, որ մեր խնջույքի մեջ կարող էր մի անախորժ դիպված հառաջանալ, պատճառված որևիցե հիմարություններից. երկրորդ, զանազան խոսակցություններ ծագել, որ ընդդեմ էին մեր ուրախությամբ ոգևորված ընկերության ուղղությանը։ Պատահում են մարդիկ, որ առանց ուշադիր լինելու տեղին, հանգամանքներին և պատշաճին, փիլիսոփայություն է, որ առնում են և այդ կերպով պլիսացավություն պատճառելով ներկա գտանված մարդկերին, արդեն հերիք պատճառ են դառնում, որ նոցա հոգին ուրախություններից դեպի տրտմություն փոխադրվի։ Եվ ճշմարիտը պիտո է ասել, ուրախության մեջ ի՛նչ հարկավոր են ուսումնական խոսակցություններ. մարդը ուրախանալու ժամանակ, պիտի մոռանա յուր անձը, յուր որպիսությունը, յուր շրջակայքը և հանգամանքները, որ ուրախությունը համ տա նորա բնությանն։ Խոսքը մեր մեջ մնա, մարդը այդպիսի ժամանակ պիտի մի փոքր անասնանա... կարծեմ, դու ևս ընդդեմ չես այս իմ կարծիքին։

«Քո ասածը դուռ ճշմարտություն է, ի՛նչպես կարելի է ընդդիմանալ նորան, ամենայն ժամանակ ուսումնականություն հա ուսումնականություն անտանելի է, մարդու գլուխ կճաքեցնեն. մյուս կողմից ի՛նչ մեծ վնաս է, երբ մարդը երբեմն երբեմն անասնանա նույնպես. հավատա՛ ինձ, անասունի կյանքը մեր կյանքից շատ վատ չէ աշխարհի երեսին։

— Դու ևս ճշմարիտ ես խոսում։

«Բացի դրանից, մարդը ինչո՞վ է զանազանվում անասուններից և ի՛նչ բանով գերազանց է քան թե անասունքը, մի՞թե նորանով, որ խելքը և ուսումնականքը գոռում են, թե մարդը բանականություն ունի, թե նա մի բարոյական էակ է և այլն և այլն. ամեններին ոչ։ Մարդու զանազանությունը և գերազանցությունը անասուններից այն է, որ անասունը խոսում է այն ժամանակ միայն, երբ ծարավի է. իսկ մարդը և ծարավի չլինելով կարող է բաժակներ դատարկել։ Անասունը խոսում է միայն լոկ շուր, իսկ մարդը, ցույց տալով յուր մեծությունը և անասուններից գերազանցությունը, խոսում է ոգիավոր հեղանյութը, երբեմն 30° և երբեմն ավելի բարձր աստիճանի։ Արի՛, ճշմարիտը խոստովանենք, պ. Մարկոս, մի՞թե մարդը ևս մի տեսակ անասուն չէ. բայց մեր ինչամիքը, այն ուսումնական անվանված հիմարքը, պիտի ասեն, թե մարդը բանական հոգի ունի, մարդը խոսում է և այլն։ Նախ, ո՛վ է տեսել այդ հոգին, մարդու վիզը որ կտրես, ո՞չ ապարեն այնպես մեռանում է, ինչպես այն սև հավը, որ տեսար ախոռումս. երկուքի ևս մեռելությունը միևնույն է, երկու դիպվածում ևս մահ, և ո՛չ որ միևնույն ժամ չէ տեսել, մարդու մեռնելու ժամանակ նորա հոգու դուրս գնալը մարմնի միջից։ Երկրորդ, մի՞թե անասունքը բան չեն հասկանում, ապա, թե մարդ ես, վեր ա՛ռ գնահիցը մի քար և տես թե քեզնից ոչ շատ հեռի նստած ճնճղուկը, ագռավը, կամ շունը կտրատե՞ն, որ դու զարկելիր նորանց։ Եվ ի՞նչ տեղից գիտենք, որ այդ անասունքը չեն խոսում միմյանց հետ յուրյանց լեզվով, մեր նոցա լեզուն չհասկանալուց կարելի՞ է եզրափակել նոցա անբանությունը, ոչ ապարեն մեր խոսածը ևս նոցա համար այնպես անհասկանալի է, որպես նոցանը մեր համար։ Այդ փիլիսոփայությունքը և գիտությունքը խարեբայություն են։ Գոնե, իմ կարծիքով, վերին աստիճանի փիլիսոփայությունը այն է, որ մարդու փորը կուշտ լինի, ըմպելիքը առատ, օրը ուրախ, սիրական կինը կողքումը։ Եթե, սորանից ավելի, կա մի երջանկություն, ասա, ընդունեմ»։

— Ինչ որ ճշմարիտ է, ճշմարիտ է. սիրելի Շաքարյանց, ուրեմն համաձայն ևս ինձ, որ պիտո էր ընտրություն առնել հրավիրելի մարդերի մեջ։

«Ամեններին համաձայն եմ, և այդ պատճառով ևս խնդրել եմ քեզ իմ մոտ. արի՛ նստենք և կատարենք մեր գործը»։

— Շատ բարի, բայց, ինչպես ասացի, այդ մարդերից շատերը անծանոթ են ինձ։ Արդյոք ավելի լավ չէ՞ր լինելու, եթե այդ խորհուրդը կատարեինք պ. Մանթուխյանցի ներկայությամբ. նա գոցա բոլորին ճանաչում է, և բարեկամ լինելով մեզ, իհարկե ճշմարիտը կասե մեր օգտի համար։

«Հայտնի բան է, այդ լավ էր, բայց ցավը այս է, որ նա հազիվ թե ժամանակ ունենա. նորա պարապմունքը կներե՞ն արդյոք ժամանակը կորուսանել այս խորհրդակատարության վերա»։

— Դա ի՛նչ մի երևելի գործ ունի, ի՛նչ մի արքունի պաշտոնի տեր է, որ չկարողանար բարեկամներին համար մի քանի ժամ հետ դնել յուր պարապմունքը։

«Ճշմարի՛տ է, ասաց նա գործը մի երևելի բան չէ, ինչպես քեզ ևս հայտնի է, և նա այնպիսի մարդ է, որ ոչ քեզ մի քանի ժամ, այլև օրեր պատրաստ էր զոհ բերել յուր բարեկամներին. բայց ի՛նչ առնես, այս րոպեին նա այնպիսի դրության մեջ է, որ ժամանակը շատ թանկ արժի նորան։ Ես ընդհանից պաղատնիք չունիմ,— հավելացրեց պ. Շաբարյանցը, բարեկամաբար զարկելով պ. Մարկոսի ուսին,— և հույս ունիմ, որ դու այնքան խորհրդապահ կլինիս, որ ոչ ոքի չասես այն գաղտնիքը, ևքն երդում տալով հավատացի քեզ»։

— Երեք հարյուր տասն և ութն հայրապետների նզովքը գլխիս չինի, եթե մի մարդու ևս հայտնեմ այդ բանը,— ասաց ջերմ, ջերմ պ. Մարկոսը։

«Լա՛վ ուրեմն, պ. Մանթուխյանցը շուտով այնպես հարուստ կդառնա, որ Րոթշիլդը կոպեկ չարժե նորա առաջև»։

— Ի՛նչ ես խոսում։

«Լա՛վ, նա պարապում է ալքիմիայով....»

— Ի՛նչ ասել է ալքիմիա, խնդրեմ հասկացրու,— վեր առնց շուտով պ. Մարկոսը։

«Դա մի գիտություն է, որ ուսուցանում է հասարակ մետաղները, որ օրինակ, երկաթը, պղինձը, անագը և այլն, ազնվացնել, այսինքն ոսկի և արծաթ փոխարկել նորանց»։

— Մի՛թե կարելի՞ է այդպիսի բան։

«Անտարակույս. հարկավոր է միայն լավ ուսանել ալքիմիան»։

— Ճշմարի՛տ, առաջին անգամ լսում եմ այդպիսի բան։

«Ապա ի՛նչ էիր կարծում, սիրելիս։ Ալքիմիան քո կարդացած բաններին նման չէ. ի՛նչ քո կարդացած, և իմ քալիսմաններին ևս նման չէ. դա մի ջոկ բան է...

— Ի՛նչ տեղից է այդ գիտությունը, և ի՛նչպես ուսել է պ. Մանթուխյանցը։

«Թե ի՛նչ տեղից է այդ գիտությունը, երկար կլինի պատմել, մանավանդ ևս ևս հաստատ չգիտեմ, թեև միանգամ պատմել է ինձ պ. Մանթուխյանցը, իսկ քե ի՛նչպես հասել է նա այդ գիտությանը, այդ բանը մի գաղտնիք է, որ ինձ ևս չէ բացել»։

— Տարակույս չկա, որ շատ քե փորր տեղեկություն ունես այդ գիտության վերա, գո՛նե այնքան պատմի՛ր ինձ, որքան գիտես, հետո ևս ինքս ման կգամ գրքերի մեջ։

«Դու զուր տեղը մի՛ որոնիր քո գրքերի մեջ, ոչինչ գտանելու չե՛ս. իսկ քե շատ խնդրում ևս ինձ, ուրեմն ևս ցույց կտամ քեզ մի թուղթ, որի վերա գրած է Մանթուխյանցը մի քանի ծանոթություններ ալքիմիայի մասին։ Նա տվեց ինձ այդ թուղթը հավատացնելու համար ինձ, քե կա մի

այդպիսի գիտություն և ին շատ խելացի մարդիկ եղած են դորա տարա-տաճորը»։

— Աստուծո սիրուն ցույց տուր ինձ այդ թուղթը, ես շատ ուրախ կլինիմ և շատ շնորհակալ, և դորա փոխանակ կտամ քեզ մի գրշադիր ազոթագիրք, որի գործությանը չեն դիմանում ոչ ին հատարակ գևերը, այլև բնհեղնբուղը, բելիարը և սատանան իսկ։

Գ. Շաքարյանցը վեր կացավ տեղից և գնալով մյուս սենյակը, բացեց պահարանը և սկսեց որոնել։ Նորա պահարանի անկարգությունը անցել էր օսմանյան սուլթանի կանանոցի անկարգություններից, և, ինչպես ասում է ոուսաց առածը, սատանան ոտը կկոտրեր մտանելով այդ անկարգ պահարանի մեջ։ Գրշադիր ախտաբրթների, ուրբաթագրքերի, կարմիր թանաքով գրված մադաղամիների միմը համարը չկար, բոլորը խառն ի խուռն ծալված ընշված, որը առանց երեսի, որի ինքինը ցիրուցան, որը ցեցակեր. մի խոսքով, բարելոնյան խառնակություն։ Ահա այս պահարանի մեջ սկսեց որոնել Մանթուխյանցի, ալքիմիայի մասին ասված, ծանոթարանություններ։

Գ. Մարկոսը, մնալով մյուս սենեկում, կամաց, քիի տակից, երգում էր մի մեղեդի։

Գ. Շաքարյանցը երկար որոնելուց հետո գտավ Մանթուխյանցի գրշադիրը և ինքնաբավական կերպով նկամ մյուս սենյակը, ուր գ. Մարկոսը երգում էր յուր մեղեդին։

— Գտա, գտա,— կանչեց Գ. Շաքարյանցը։

«Տնաքա՛նդ, խոսելու ժամանակ չէ, բե՛ր կարդանք» — իսկույն պատասխանեց գ. Մարկոսը։

— Աո, կարդա՛, բայց ձայնով, ես ես կամիմ լսել, որովհետև մոռացել եմ դորա բովանդակությունը,— ասաց գ. Շաքարյանցը, տալով թուղթը գ. Մարկոսին։

«Այնպես կարդամ, որ հիանաս» — պատասխանեց գ. Մարկոսը չերմությամբ։ Եվ արդարև նորա անդադար Նարեկ կարդալը շատ ձեռնտու էր եղել նորան ընթերցանության մեջ վարժվելու։

Գ. Շաքարյանցը նստավ յուր բարեկամի մոտ։

Գ. Մարկոսը սկսեց կարդալ։

«ԺԱՆՕԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱԼՔԻՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ, ՔԱՂՎԱԾ ՄԻ ՀԻՆ ԳՐՉԱԳՐԻՑ»։

Այդ գրշադիրը գրված էր Ուռհա քաղաքում Հայոց ՌԻՀ թվականին։

«Ձևոս երթայ դիրս մնայ, ակար մարմինս ի հող դառնայ։ Յիշեցէք միով հայր մեղայիւ զաշխատաւոցս, զներքևևալ ոգիս Աստուծոյ ծառայից ծառայ զՄանթուխանանցս։

«Ալքիմիայի սկիզբը հայանի չէ. չէ պիտս որոնել նորան ո՛չ հունաց, ո՛չ եգիպտացոց, ո՛չ հնդկացոց և ո՛չ չինաց մեջ. այս իմաստուն ազ-

դերը չեն մատածել մարմիններուն վերլուծութեան վերաբ։ Պիտու է, որ արաբացիք Համարվին ամենահին ալքիմիկոսք, նոցա մեջ միայն այդ գիտութեան խորհուրդը էր ոսկի շինել ուսուցանելը։

«Սկիզբը կարծիքի, թե կարելի բան էր զանազան նյութերից ոսկի շինել, նույնպան հին է, որքան ազահութիւնը դեպի ոսկին։ Հուլիոս Ֆիրմիկ Մատուքնոսը չորրորդ դարու սկզբում և Լինեաս Բլասիուս, հնանյալ դարում, խոսում են այդ գիտութեան վերաբ, որպես արդեն բոլորովին հայտնի առարկայի վերաբ։ Ալքիմիկոսներից ոմանք հաստատում էին թե յուրյանց գիտութեան հնարքը երևում են եգիպտական քուրմերի արձանների մեջ, և թե եգիպտացոց ձեռքով վուլկանին նվիրված առաջերը կանգնեցուցած էր ալքիմիայի պատմի համար. ոմանք, թե այդ գիտութիւնը վեր է քան թե մարդկային խելքը, և թե աստվածակույս կոզմից հայտնված է նա մարդկերին. նոքա Ադեպտ անվանում էին յուրյանց և ամենևին կամք չունեին հաղորդել ուրիշները յուրյանց գաղտնիքին, ասելով, թե սարսափելի սարսափութիւն անպատճառ հասանելու էր նոցա, գաղտնիքը բանալու համար։

«Ուրիշներդ դարու մոտ, ապրել է արաբացոց մեջ Գեբեր կամ Ջեբեր անունով գիտնական, որ ծնած է Խորասանում. այդ մարդը հնգինակ է ալքիմիայի մասին գրված ամենահին աշխատութիւններին։ Այդ աշխատութիւններից մինի մեջ, որ լատին բարգմանութեամբ հայտնի էր անունով Summa perfectionis*, նա հավաքած ունի այն բոլոր տեղեկութիւնքը ալքիմիայի մասին, ինչքան եղած էին դոքա մինչև նորա օրը։ Այդ աշխատութեան խորհուրդը է, բանալ մետալների գիտի ոսկի փոխարկելու գաղտնիքը և գտանել ընդհանուր դեղը — կենսական կաթիլը։ Եվ արդարև Ջեբերը, յուր կարմիր կաթիլը, որ լուծած ոսկի էր, տալիս է որպես մի հնար, կյանքը անորոշ ժամանակով երկարացնելու և մանկութեան ծաղիկը վերանորոգելու։

«Մինը բոլոր հին և նշանավոր ալքիմիկոսներից Եվրոպացոցը էր այն սարսափելի կախարդը, որի անունի հետ կապակից է այն հրաշալի «սղնձյա գլխի» հիշատակը,— Յոհաննիսկյան կարգի աբեղա, Բոճեր Բեքոնը։

«Բոճեր Բեքոնը ծնած է Սոմերսետա կոմսութեան մեջ 1214 թվականին և ուսումն է առած նախ Օքսֆորդում, հետո Փարիզում։ Նորա աշխատութիւնքը կարդալով չէ կարելի չդարմանալ հնդինակի բազմահայաց գիտութեան վերաբ, հայտնի բան է հաշվի առակ ձգելով նորա դարու անկրթութիւնը և տգիտութիւնը, որի մեջ երևել է Բեքոնը։ Նորա Opus majus** գործը հաստատում է մեզ, թե մի քանի ալքիմիկոսք կարող են ոսկի շինել և գտել են այն դեղը, որի օգնութեամբ կարելի է քանի հարյուր տարիներ ապրել։ Յոհաննիսկյան կարգի աբեղայքը, նորա նախանձոտ

---

* (Լատ.) Գագաթի կատարելութեան մեր.։

** (Լատ.) Մեծ աշխատութիւն մեր.։

Եղրայրակիցքը, դատապարտեցին Նորան որպես կախարդ, երևի ին պղնձյա գլխի համար, որ խոսում էր և համարում էր ոչինչ պակաս, քան ին կարող էր մարդը, և խնդմ Բոհեր Բևբոնը յուր դավաճան կարգակիցների ձևերով ձգվեցավ բանտի մեջ։

«Այդ միջոցին ալքիմիայի ասպարիզում փայլում էր մի այլ նշանավոր մարդ, ոչինչ պակաս յուր գիտությամբ քան ին Բևբոնը։ Սա էր Ալբերտոս Բոլստեդցյանը, կամ Ալբերտոս Մեծը, որ համբաված էր որպես երևելի կախարդ և ծնած է Շվաբիում, 1205 թվականին։ Նա մտավ Դոմինիկյան կրոնավորների կարգը Քյոլն քաղաքում և վերջապես դարձավ Ռեգենսբուրգի եպիսկոպոս։ Սա ևս Բևբոնի նման աշխատում էր այն ամենայն ուսման և գիտության մեջ, որ վերաբերում էին մարդուն, magnus in magia, major in philosophia, maximus in theologia[*]։ *Շատ են այս մարդու աշխատությունքը, բայց ալքիմիայի մասին երկու։ Առաջինը անվանվում է* De Alchymia[**]. *այստեղ կարդում է քիմիական նյութերի մանրամասնությունքը, որ հայտնի էին յուր ժամանակին, նկարագրում է անոթները, որ գործածության մեջ էին այն միջոցներում, և զանազան փորձեր և նկատողություններ, որ հաջողել էր Նորան կատարել։ Երկրորդի առարկան են հանքերը, որ ցույց են տալիս հեղինակի հաստատ գիտությունը քարերի, մետաղների և աղերի որպիսություններին։ Ալբերտոսը վարժապետ էր Թոմմաս Ակվինացու, որ նույնպես բողել է մի աշխատություն ալքիմիայի մասին. բայց այդ աշխատությունը, Նորա բոլոր մյուս աշխատությունների նման, պատած է ծածկախոսության մառախուղով։ Այս ասուվածաբանի աշխատություններին մեջ առաջին անգամ տեսնում ենք աստեղագիտության և ալքիմիայի զուգակցությունը։*

«Ազգային կարծիքը ասում էր, որ Ալբերտոսը ունի մի գերբնական գործակից, որ օգնում էր Նորան աշխատության մեջ, այլև հաղթելու այն բոլոր դժվարություններին, որոնց հանդիպում էր նաև Ալբերտոսը միանգամ ձաշի խնդրանց յուր մոտ մի հոլլանդացի կոմս։ Յուր երևելի հյուրը ավելի պատվասիրելու համար հրամայեց նա սեղան դնել այգում. եղանակը ձմեռն էր։ Հայտնի բան է, որ կոմսը և Նորա մարդիկը զարմացան ալքիմիկոսի այս գործողության վերա, քան որում դեռևին ընկած էր մի բանի ոտնաչափ ձյուն։ Բայց Ալբերտոսը սեղան նստած չնստած, անհայտացավ ձյունը, մի ախորժ ջերմություն տիրանակից անհամբույր յուրտը. ծառերը զգեցան կանաչ, ծաղիկները անուշահոտությամբ լցուցին օդը, և անհամար բազմություն ուրախ թռչունների սկսանին գրուցել կանաչ հյուղերի վերա։ Այս զմայլանքը շարունակվեցավ ամբողջ ձաշի ժամանակ. բայց գինու վերջին բաժակը խմելով, խնդուն անհետացավ ամառը, և ցուրտը դարձյալ փչեց յուր բոլոր առաջին խստությամբ։

---

[*] *(Լատ.) Մեծ՝ կախարդության մեջ, ավելի մեծ՝ փիլիսոփայության մեջ, ամենամեծ՝ աստվածաբանության մեջ։* Խմբ.։

[**] *(Լատ.) Ալքիմիայի մասին։* Խմբ.։

«Երկար ժամանակ, բացի Բենեդիկտյան կարգի Բասիլիոս Վալենտին արեղայից, որ Գերմանիայի էրֆուրդ քաղաքում ծնած էր 1394-ին, չեր-վեցավ մի օրինավոր ալքիմիկոս, թեև շատ կային անձնաշան մարդիկ, որ պարապում էին այդ գիտությամբ։ Այս մարդերից մինը, հատկապես Հով-հան դը Մեոն (Jean de Meun), վարդի պատմության հեղինակը, մի քա-նի ուսանավորների մեջ ցույց էր տվել փիլիսոփայական քարի գաղտնիքը, առանց հայտնելու շահատակության ցանկությունը։ Պետք է նույնպես հիշել այստեղ և Նիկոլայոս Ֆլամելը, որ շատ խոսքերի պատճառ է եղել յուր կյանքի մասին։ Ազգը ասում էր թե նա գտանելով փիլիսոփայական քարը, տեր էր դարձել անհամար հարստության, որոնց մի մասը գործ է դրել տներ և մինչև անգամ եկեղեցիք շինելու համար, և մեռած ձևանա-նալով, յուր կնոջ հետ միասին, գնացել է մի հեռավոր աշխարհ և անմա-հանալով այնտեղ թագավորում էր անապատելի գանձերի վերա։

«1527 թվականը մի մեծ տարեգլուխ է ալքիմիայի համար։ Առաջին ամբիոնը դասախոսության հիմնվեցավ Բազել քաղաքում և Թեոֆրաստ Պարացելսոսը հրավիրվեցավ ունել այդ ամբիոնը։ Այս գերօրինակ մարդը ծնած է 1493 թվականին Յյուրիխ քաղաքի մոտ։ Նորա հայրը, որպես բժիշկ ուսուց նորան ֆիզիկա և խիրուրգիա, բայց ալքիմիան սիրական գիտությունն էր երիտասարդ Պարացելսոսի. նա ուսավ այդ գիտությունը նախ Տրիթեմիոս Մանհեյմյան աբեղայի մոտ, հետո Սիգիսմունդ Ֆուգե-բոսի մոտ։ Պարացելսոսը պարապում էր որոնելով ընդհանուր դեղը և անորոշ ժամանակով կյանք երկարացնելու հնարը։ Յուր աշխատություն-ների մեջ նա մեծ զանազանություն է դնում ընդհանուր դեղի, panacea*, և կենսական կաթիլի մեջ։ Յուր նպատակին հասնելու համար, նա կա-տարեց շատ փորձեր. «Բայց,— ասում է Պարացելսոսը,— նա դեռ շատ հառաջ գիտեի փիլիսոփայական քարի գաղտնիքը, որ ուսել էի Կոստանդ-նուպոլսում, գտանվելով ռուսաց թագավորի որդու (?), որ դեսպան էր այդ մայրաքաղաքում, պաշտոնյանների կարգում։

«Մի զարմանալի հանգամանք հասուցել է զորան այդ գաղտնիքին։ Նա այդ ելանելով եվրոպական համալսարանների մեծ մասին, գերի ընկել էր Թաթարների ձեռք և արձակվելով դեպի Ռուսիա, ներկայացել էր թագա-վորին, երևի թե վասիլիոս չորրորդին, որ յուր որդու հետ ուղարկել էր նորան Կոստանդնուպոլիս։

«Պարացելսոսը երկար ժամանակ չմնաց որպես ուսումնապետ ալ-քիմիայի։ Մի օտարոտի անցք պատճառ դարձավ, որ նա հրաժարվի այդ պաշտոնից։ Նա, ուսուցանելով ալքիմիա, պարապում էր և գործնական բժշկությամբ։ Միանգամ հրավիրեցին նորան գնալ մի վտանգավոր ցա-վով հիվանդ արեղայի մոտ։ Պարացելսոսը, հառաջ քան թե սկսած էր գործ դնել յուր բժշկությունը, հարկավոր համարեց պայման կապել յուր աշխատության համար առանալու վարձի մասին։ Արեղան խոստացավ

* (Լատ.) Ամենաբուժ դեղ։ Խմբ.։

100 դուքեն, նրան միայն առողջանար։ Պարացելսուսը պատրաստեց օծխումից երեք նատադեղ և բան և շրջա ժամի մեջ առողջացրեց հիվանդ արքային։ Առողջացած արքան համարեց, որ խոստացած արժանիք շատ մեծ էր, համեմատելով Պարացելսուսի կարճաժամանակյա բժշկագործությանը, ուստի և հրաժարվեցավ հատուցանելուց։

«Բացվեցավ մի պատահականական վեճ. դործը հանձնվեցավ վերջապես բժիշկների քննության և վերահաստության, որոնք վճռեցին, որ հիրքը է մի շատ չափավոր վարձատրություն, որովհետև հիվանդը խոստ կարճ միջոցում առողջացել էր։ Պարացելսուսը կրկտանելով այս վճռը, ցույց տվեց պատահականի մեջ յոր արհամարհանքը այդպիսի անհրամ վճռահատության վերա. այս բանը պատճառ տվեց նորա ընդդեմ մի մեծ ինդահատության հատուցանելու, որ և ապա հարկադրեց նորան հեռանալ Բազրից։ Նա դրկված ամենայն օգնություններից, մանև նկատ շատ բազարներ, հետո հատանելով վերջին աղքատության, 1541 թվականի սեպտեմբերին վախճանվեցավ Սորատորդ քաղաքում։ Այս մեծ ալքիմիկոսը սահմիկ անձնատուր էր արբեցության, և շատերը ասում են թե նա զոհ գնաց յոր նախանձորդների վրեժխնդրության, որոնք մի խնջույքի մեջ դնել էին նորան։

«1703 թվականին, երեսնյակ Անգլիայում մի մեծ ալքիմիկոս-բժշկության վարդապետ, Պրայս անունով (Price)։ Այս բժիշկը պատրաստում էր փոշիներ, սպիտակ և կարմիր, և դոցա միջնորդությամբ, կամեցածի պես, ժիպակը փոխարկում էր երբեմն ոսկի և երբեմն արծաթ։ Նա յոթն անդամ հրապարակական փորձեր փորձեց, մինչ նեղկա էր մի մեծ բազմություն ժողովրդի։ Բազավորական հասարակություններ, որ հետաքրքիր շատ սահմ աչքով նայում էր այս փորձերի վերա, հարկ համարեց, որովհետև վարդապետ Պրայսը անդամ էր այդ հասարակության, մի առանձին ժողով կարգել, ոսկեգործության հնարներն և եղանակները քննելու համար։ Երբ հարկադրեցին Պրայսին փորձ կատարել ժողովի անդամների առաջև, նա պատասխանեց, թե չունի այլ ևս այն փոշիները, առանց որոնց անհնար էր. բայց սորանից մեջ բերեց մի քանի այլ պատճառքեր ժողովը ժամանակ տվեց նորան փոշիներ պատրաստելու համար, և հետևյալ տարումը պիտի վճռվեր նորա գաղտնիքի գործը, բայց ալքիմիկոսը չկամեցավով հայտնել յոր գաղտնիքը, մահացավ ընդունելով մեռավ։

«Բացի այս երեսնյի մարդկերից ուրիշ շատերը պատրաստած են այս գիտությունով, բայց ցույց տալու համար թե ուշադրության արժանի էր այս ուսումը, հերիք համարվում է այս հարևանցի գծագրություններ։ Այժմ անցանենք համառոտապես դնել այսանդ ալքիմիայի տեսությունը, թե նա ի՛նչ հիման վերա կացնի է համարում ոսկեգործությունը, և թե ի՛նչ հնարներ ունի այդ մասին։

«Ջևերի տեսությունը այսպես է, թե բոլոր մետաղները բաղկացած են ժիպակից և շատ կամ փոքր մաքուր ծծումբից (բացի այս երկու տարբական մարմիններից Ջևերը խառնվանում էր և մի երրորդ մարմին—

մինչեղը). այսպես անանձնով բոլոր մետալները, որոնմն և ոսկին, ապա հարկավոր էր փորձել և իմանալ թե այս մարմիններից որքան և ինչ չափով գտանվում են ոսկու մեջ, կամ մյուս հատարակ մետալների մեջ. հանկանալով այս բանը, մյուս մետալների բաղադրական մասները համապատասխանով ոսկու բաղադրական մասներին, անտարակույս անագը, պղինձը, երկաթը և մյուսները փոխարկվելու էին դեպի ոսկի։ Այս փորձերի մեջ ներգործողը էին գանազան աղեր, պաղլնդ, արջասպ, ապակի, բուռա, բացախ և կրակ։

«Չերների ժամանակից սկսած մինչև երկու հարյուր տարի հետո, ալքիմիան, անդադար մշակվելով, փոխեց յուր անուշիյունը և դարձավ այսպես. որովհետև ոսկու բաղկացուցիչ մասները շատ կամ սակավ գտանվում են մյուս բոլոր մետալների մեջ, և որովհետև սատոկ խառնված լինելով պահանջում են մի ամենազուտ մաքրողություն, այդ պատճառով կրակը է մի մեծ ներգործող, որի կարողությունը անսահման է։ Ոչինչ չէ հատաջանում առանց նորան. իսկ նորանով ամենայն բան կարելի է։

«Կրակի օգնությամբ, հանքերը հողային վիճակից հեշտությամբ կարող են հեղափոխվիլ դեպի մետալ, իսկ կերպարանափոխությունը, որ գործվում է նոցա մեջ կրակի ազդեցություններից, է մի ապացույց, թե այդ մետալները կարող են առավել ևս կատարելագործվիլ։ Ալքիմիկոսք կարծում են, թե կրակի միջնորդությամբ, ամենախոշոր մետալները կարելի է հեղափոխել դեպի լավ, այսինքն դեպի ոսկի։

«Այս համառոտ ծանոթաբանությունը քաղված է վերոհիշյալ գրչագրից այն դիտավորությամբ, որ չհասկացող մարդիկ ծաղր չառնեն մեր դիտությունը։

«Մեղապարտ ծառա Քրիստոսի՝ ՄԱՆԹՈՒԽՅԱՆՑ»։

— Մե՛ծ ասուված,— բացագանչեց պ. Մարկոսը, ավարտելով թղթի կարդալը.— այս ի՛նչ բաներ են... և զնորհուրդս քո ո՛ դիտաց... որպէս պի մեծ են գործք քո, տէր....

«Ասա, պ. Մարկոս, այսպիսի բաներ կան աշխարհի երեսին»։

— Բայց ասացեք խնդրեմ,— շարունակեց պ. Մարկոսը,— եթե Մանթուխյանցը այդպես սատոկ պարապած է, ասել է, թե նա խնջույրում ևս չէ կարող գտանվիլ։

«Ինչո՛ւ համար. ես հույս ունիմ, որ նա մինչև էգուց բանը ավարտած կլինի։ Երեկի երեկոյին եկել էր իմ մոտ, որ ածուխ գնելու համար կես մանեթ արծաթ խնդրե։ Այդ միջոցին ասաց ինձ, թե փոքր է մնացել նպատակին հասանելու համար, որովհետև արդեն յոթանասուն հինգ փորձ կատարել է, իբրյար հետ միավորելով գանազան մետալներ, գանազան չափերով. բոլոր փորձերը բաղկանում են յոթանասուն և յոթն փորձից, որոնմն մնացել են երկու փորձք, որ անտարակույս կկատարե այսօր, կամ էգուց առավոտ և կվերջացնե բանը։ Դժվարը յոթանասուն հինգ փորձն էր, որ կատարել է, երկու փորձը ի՛նչ բան է նորա համար»։

— Ինչու համար բնդանից խնդրում էր կես մանեթ ածուխ գնելու համար, մի՛թե ինքը չունի՞ այդչափ կարողություն,— հարց արեց պ. Մարկոսը։

«Նա մոտ երկու հազար մանեթ արծաթ ուներ, բայց այդ բոլորը զոհեց ալբիմիային դանազան նյութեր գնելով։ Այս վերջին երեք ամսումը դանազան ժամանակ ինձանից է առանում հարկավոր արծաթը. ես արդեն տվել եմ նորան մոտ իրրև երեք հարյուր մանեթ. երեք հազար ես կհավատամ. ի՛նչ բան է այդ, մանավանդ այնպիսի մարդու համար, որ այսօր էգուց գառնալու է աշխարհի հարստության տեր»։

— Ես տեսանում եմ, որ դու մի ընկերություն նման բան ունիս նորա հետ. աստված տա, աստված տա, ես ուրախ եմ, հարստացի՛ր, եղբայր, և դու, քո նման մարդը, խնայցի, հասուն դատողությամբ, անպակաս լինի մեր ազգից... բայց ինչ գլուխ գա ձեր բանը, չասե՞ս, մի նոր խնջույք այլևս կկատարենք։

«Ի՛նչ մին, ի՛նչ տասը... խնդրե, ես քո համար շամպայնից վաննա (բաղանիս) կշինեմ, որ լվացվիս. այն ժամանակ ի՛նչ բան է մեր համար արծաթը։ Նորան այն ժամանակ ծանր է դուրս գալ գրպանից, նրա ճարել ես ճակատիդ դառը քրտինքով, նրա նորան հավաքելու համար գտորել ես մեջքիդ օղը. բայց նրա ունեիր մի գիտություն, որ հրամայում էր պղնձին կամ երկաթին ոսկի փոխվիլ, և անշուշտ մետալը հնազանդվում էր քո իշխանական հրամանին, այն ժամանակ ի՛նչ հարգ ոսկուն կամ արծաթին։ Թո՛ղ ուրիշները որոնեն նորան Ուրալյան սարերում, Բրազիլիայի և Կալիֆորնիայի մեջ, մեր Մանթուխյանցի քուրայից կստանանք նորան» — պատասխանեց պ. Շաբարյանցը ինքնաբավական կերպով։

Այս խոսքերից հետո, լցրեց նա ծխամանը թաթաքով։ Պ. Մարկոսը էս, հետևելով պ. Շաբարյանցի օրինակին, սկսեց ծխել թուրքի թաթաքը և, արձակելով ծուխ օղեր, որ շատ հաջողակությամբ բաց էր թողում բերանից, թվում էր, ին ընկնում է մտածողության մեջ։ Մինչդեռ սորա զբաղված էին, և ահա սենեկի դուռները բացվեցան հանկարծ և շամքի վերա երևեցավ քիմը բերանը մրոտ մի մարդ։ Նորա հին սերտուկը շատ տեղ ծակոտված էր կրակի կայծերից, ձեռնները, գործ ունենալով միշտ չերմ մետալների հետ, կոշտացած էին բոլորովին և ճաքճքված, և այդ ճեղքվածքը, լցված լինելով ածուխի և այլ կեղտերի փոշիներով, կազմում էին դանազան ուղղություններով սև գծեր։

Նորա ալևոտած մազերը համարյա ին դեղնած էին բոլորովին և այդ անկանոն գունափոխությունը մազերի, երևի ին, պատճառված էր դանազան քիմիական շոգիների ազդեցություններից, որպիսի էին խլտոից բազխացած աղերի շոգիքը, որոնք մեծ ազդեցություն ունին ներկանյութի (pigmentum) վերա։ Նրանի գծագրությունը բավական անկանոն, խոր նեռս ընկած աչքերը, յուրյանց անսովոր փայլողությամբ, հաստատում էին նորա հոգու անհանգիստ բնավորությունը։ Ճակատը ճաղատացած,

ինչպես թվում է, ժիպակեղեն բազապրումիններուն շոգիներից, քիմը մեծ (թեև յուրաքանչյուր ոք մեղանից, որպես հայ, տեղիք չունի գանգատելու քիի փորրության վերա), որի ծայրը բուն կտուցի նման կեռացած դեպի վերին շրթունքը, համարյա թե ծածկվում էր թավ ընչացքի մեջ, որ նույնպես դեղնած էր։ Երեսը ընդհանրապես դեղին, բայց այտերի վերին մասները մուգ կարմիր։ Այդ կարմրության մասին այսպես է մեր կարծիքը, թե պիտո է, որ այդ մարդը շատ կանդնած լիներ կրակի առաջև, որովհետև այդպիսիների երեսը մեծ մասով հատկանում է քշերի վերին մասների մուգ կարմրությամբ։ Զարմանք չէ. երեսի այդ մասը զրկված լինելով մազերից, առավել ենթարկվում է ջերմության ազդեցությանը, որ գրգռելով կաշին, պատճառ է տալիս արյունի ավելորդ հավաքվելուն։ Արյունը անդադար և սովորականից դուրս առատությամբ մտանելով այդ մազի նման երակների մեջ, լայնացնում է նորանց, այս ընդլայնողությունը ձևնատու է լինում և ջերմությունը. այս կերպով այդ երակները ավելի մեծ մակերևույթ ստանալով դուրս են փայլեցնում յուրյանց գույնը երեսի վերա։ Ինչևիցե. այդ պարոնը կլիներ այսպես 55 տարեկան։

— Բարո՛վ, բարո՛վ, պ. Մանթուխյանց. այս ո՞ր բամին փչեց քեզ մեր մոտ, այս րոպեիս խոսում էինք քո մասին Մ. Մարկոսը խնդրում էր ինձանից, որ յուր հետ միասին գայի քո մոտ, բայց ես իմանալով քո ժամանակի սակավությունը, հրաժարվեցա, որովհետև անտարակույս պիտի ննջության պատճառեի քեզ. խնդրեմ, հրամայեցեք նստեցեք, շատ ուրախ եմ։

«Բարով» — Մանթուխյանցը, դառնալով դեպի պ. Մարկոսը, և քարշելով մի աթոռ, նստավ սեղանի մոտ։

— Ճշմարիտը պիտո է ասել, այսօր շատ վաստակած եմ...

«Ի՛նչպես վերջացավ քանը, հաջո՛ղ, թե անհաջող»։

Պ. Մանթուխյանցը խոսքերով շպատասխանեց այս հարցմունքին, աչքով միայն սորտատարար նշանացի արեց. նորա ինքնաբավականությունը երևեցավ և դեմքի ուրախ ցուցակության մեջ, որ համարյա թե պատանվում էր մի ջերմախոտական-ցնցողական վիճակում։ Նա չէր կարող բառերով հայտնել յուր ուրախությունը և հաջողությունը, որովհետև երբորդ մարդ կար այնտեղ, որից թաքուն էր, դոնե համարում էր թաքուն, այդ բանը։

— Ճշմարիտը պիտո է ասել, այսօր շատ վաստակած եմ,— կրկնեց պ. Մանթուխյանցը,— մի բաժակ արագ արժե՛ որ խմեմ. ասում են, թե «ծներաց դավաղան» է երկար աշխատությիններից հետո։

«Հրամայեցե՛ք, անուշ արեցեք»։ Այս ասելով պ. Շաքարյանցը լցրեց արագը մի բաժակի մեջ և տվեց Մանթուխյանցին։ Պ. Մանթուխյանցը, բաժակը ձեռք առած չառած, կարդաց տակի գրերը...

— Չկամի՞ք ծխել,— հարց արեց պ. Շաքարյանցը։

«Ի՛նչ է հարցանում այս մարդը. երկնքից ի՛նչ է թափվել երկրի վերա, որ սա չէ ընդունել»։

Թարաք ծխողները դարձան երեք հոգի. ծխով լցվել էր ամբողջ առնը, ծխողքը հաղիվ հաղ անասնում էին միմյանց. պ. Շաքարյանցի անդյակը դարձել էր մի մարթասուն։ Մի քանի վայրկեններից հետո, այս երեք մարդիկը, ամենայն ծանրութիւամբ սկսեցին ընտրութիւն առնել մարդերի, որ հրավիրելու էին յուրյանց խնջույքին մասնակից լինելու համար։

ե

— Ի՛նչ մարդիկ միտք ունիք հրավիրել,—հարց արեց Մանթուխյանցը։

«Ահա, ցուցակը» — պատասխանեց պ. Շաքարյանցը։

Մանթուխյանցը վեր առավ ցուցակը և հարևանցի նայելով նորա վերա ասաց.— Չե՞ք հրավիրելու այն մարդուն, որ նոր եկել է այստեղ և որ ամենուրեք գտանվում է, ի՛նչպես է նորա անունը....

«Ո՛ր մարդը,— կրկնեցին բարեկամքը միաբերան։

— Սատանայական մոռացել եմ....ա՛հ....այնպես է, այնպես, Կոմս Էմմանուել...

«Որ սիրուն քո՛ւյր ունի»,— ասաց պ. Մարկոսը։

Շաքարյանցը աչքերը չորս բացեց սիրուն քվեր անուն լսածի պես։

— Այն նորա քույրը չէ,— շարունակեց Մանթուխյանցը,— նրա այն օրիորդի համար եր ասում, որ միշտ պատահում է նորա տնումն. բայց այսքան պիտի իմանալ, որ շատ օրիորդք մուտ և ել ունին նորա տան մեջ, և այդ օրիորդքը թատրոնախաղ աղջիկներ են մեծ մասնով։

Պ. Մարկոսը, որ, ինչպես հայտնի է ընթերցողին, մի փոքր հառաջ խոսք էր ունել պ. Շաքարյանցին, ոչինչ հարցուխնդիր անտես չառնել, ամենայն կերպ հնար գործ դնել նորա սիրական օրիորդը որոնելու համար, մեծ ախորժանքով լսեց թատրոնական աղջիկների Կոմս Էմմանուելի մոտ երթևեկութիւն ունենալու պատմութիւնը։ Նա, ինչպես համարում էր ինքը յուրյան, որպես բարակ քաղաքագետ, մտքումը դրեց անպատճառ ծանոթանալ Կոմսի հետ, որպեսզի հետո կարողանա նորա միջնորդութիւամբ ծանոթանալ և թատրոնական աղջիկների հետ։

«Եթե արժան է, հրավիրենք նորան ևս,— հավելացրեց պ. Շաքարյանցը,— ես ծանոթ չլինելով, չէի նշանակելը»։

— Կհրավիրենք, ծանոթ կլինի կներթա,— իսկույն պատասխանեց պ. Մարկոսը։

«Ինչ բաներ եք խոսում. ես շատ ուրախ եմ, որ չկա նորա անունը. և եթե դուք հրավիրելու միտք ունենայիք, ես անտարակույս պիտի խորհուրդ տայի ձեզ հրաժարվիլ այդ մտքից,— ասաց Մանթուխյանցը։

— Ինչո՛ւ համար, եթե ամենեքյան հրավիրում են նորան,— խոսեց Շաքարյանցը։

«Նորա համար.... պատասխանեց Մանթուխյանցը,— նորա համար.... մի խոսքով նորա համար, որ նա մի անառանելի մարդ է»։

— Ինչո՛վ,— հարց արեցին բարեկամքը։

«Ամենաչն բանով.... նա խելագա՛ր է.... վկա՛ է ասում, խելագար է։ Հավատացեք ինձ, մի մարդ չկա, որին հավաներ այդ պարոնը. նորա աչքում ամենևքյան հիմար են, ամենևքյան օբսկուրանտ, ամենևքյան նզվիտ... ի՛նչ ասել է, ասում է միմիայն Կոմս Էմմանուելին է խելացի ասեղծել։ Շատ բարի, ինձ այդպես չէ, բայց ասենք, ին խելացի է մի փորր, բայց բնակվելով անխելքների և ապուռների հետ, ո՞չ ապաքեն պարտական էր գո՛նե պատշաճի ընդդեմ շներգործելով, ինքը ևս անխելանալ և հիմարանալ։ Առածը ասում է, ինի մի քաղաքում բնակվող մարդիկը միականի են, դու ևս, մտանելով այդ քաղաքը, պարտական ևս մի աչքդ հանել, որ հավատարվիս ուրիշներին։ Բայց Կոմս էմմանուել ասած մարդը այնպես չէ, ամբողջ քաղաքի, ամբողջ ազգի սովորութիւններին և հասկացողութիյանը ընդդեմ պատերազմ է բացում. չէ խնայում ոչ որին, ամենի ճակատին զարկում է. ասացեք այժմ, խելացի՞ մարդու գործ է այդ։ Խելացի մարդը հարգում է ուրիշները և ինի մի բարձրաստիճան կամ հարուստ մարդ, որ հարգելի էր հասարակութիյան աչքում, ասե ին այսօր ամսի բառաստուն և հինգն է, նա պիտո է համաձայնի. ո՛վ չգիտե, որ ամսի բառաստուն և հինգը չէ կարող լինել, բայց մեջտեղում քաղաքավարութիյուն կա. մեր կարծիքով, այսպես պարտական է ներգործել խելացի մարդը։ Կոմս էմմանուելը ոչ ին չէ ընդհանում այսպես, այլ յուր տարտարայման համարձակախոսութիյամբ ազգի պակասութիւնների վերա, կամ ազգին հարգելի մարդերի վերա, ինև վաղուց մնած էին նորա, զզվեցուցել է ժողովուրդը այնպես, որ ոչ ոք չկամի լսել նորա խոսակցութիյունը։ Չէ՛, եղբա՛յր, նա մեր ընկեր մարդ չէ, հետի մնանք այդպիսիններից, որոնք մարդ խայտառակելը շինել են յուրյանց կյանքի և գոյութիյան խորհուրդ։

Այս խոսքերը ատատիկ ապավորութիյուն գործեցին ալ. Մարկոսի վերա և, վշտացնելով նորա անձնասիրութիյունը, որովհետև նորան ևս հավանելու չէր Կոմս էմմանուելը, ինչնամական ուղղութիյուն տվեցին դեպի ատ։ Զարմանք բան է. շատ անգամ պատահում է, որ մեզանից յուրաքանչյուրը ատանում է շատ անծանոթ և անտես ինչնամիք. ես ոչինչ վնաս հասուցած չեմ Մարկոսին, բայց Կիրակոսը անգործութիւններից ատիպվելով և իմ անձնավորութիյունը յուր դատարկաբանութիյան համար նյութ շինելով, կամ, ավելի լավ ասել, կերակուր տալով բամբասանքի և նախանձու օձին, որ վաղուց նատել է նորա փորի մեջ, վատաբանում է ինձ։ Մարկոսը, որ չէ ճանաչում ինձ, որ չգիտե իմ գործերը, իմ սիրտը, իմ հոգին և ուղղութիյունը, որին մի մազի չափ վնաս չեմ տվել, որի հետ ոչինչ ունիմ հասարակաց, դառնում է իմ ինչնամին, ինձ բամբասող և վատաբանող։ Մի՛թե կարելի՛ է այս, ո՛չ ապաքեն Մարկոսը և Կիրակոսը քրիստոնյայք են։ Եվ ի՛նչպես քրիստոնյայք. ուրբաթի, չորեքշաբթի, և շաբաթական պահքերը, այլև մեծ պահքը պահում են ամբողջ, երեկո առավոտ եկեղեցի են գնում, տարին մի քանի անգամ պատարագ և մատաղ են առնում, և

նրին տնեղ գա, նա լուսավորչական եմ, գա ավետարանական է, ասելով. պատրաստ են միմյանց գլուխ ջարդել։ Բայց չնայելով այս բաների վերա, Մարկոսը և Կիրակոսը չեն խղճահարվում կատարել մի բարոյական սպանություն, և այս բանը գործվում է այն՝ քրիստոնեության և բարեպաշտության դիմակների տակ։ Քրիստոնեությունը, շարաշար գործ ղբրված, միշտ պատճառ է եղել անքրիստոնեա բարբարոսություններին. քրիստոնեությունը, այդպիսի երկնային և ազնիվ բանը, շատ անպիտան և անարժան մարդերի ձեռքում եղել է դավաճանության և արյունահեղության գործիք։ Շատ ամբարիշտ մարդիկ յուրյանց հանցանքը ծածկել են քրիստոնեության վարագույրի տակ։

Գ. Շաթարյանցը, լսելով Մանթուխյանցի կարծիքը Կոմս Էմմանուելի մասին, որպես բնիկամիտ մարդ իսկույն համաձայնելով պատասխանեց. «Նրին մի այդպիսի մարդ է Կոմս Էմմանուելը, եղբայր, ապա նզովյալ լինի դրա ծնունդը. ինչ հարկավոր է մեզ հրավիրել մի այդպիսի գազան մեր ազգասեր և եղբայրասեր ընկերության մեջ»։

— Մի բան ասեմ. մանավանդ նորան պիտո է հրավիրել, որովհետև այդպիսի բնավորության տեր մարդ էր,— չերմ խոսեց պ. Մարկոսը։

«Այդ ի՛նչ խորհրդով,— հարց արեցին բարեկամքը։

— Ո՛ր տեղում կարելի է խայտառակել մի այդպիսի մարդ, նրին ոչ մի խնջույքի մեջ, մանավանդ նրին այդ խնջույքի հրավիրված անդամքը բոլոր մեր մարդիկ էին,— ասաց պ. Մարկոսը։

«Ի՛նչ մի խայտառակություն է. մեր նորան հրավիրելը արդեն մի մեծ պատիվ էր, որ ցույց էինք տալիս,— շարունակեցին բարեկամքը։

— Սխալվո՛ւմ եք. մեք կհարթեցնենք նորան և հետո կծիծաղենք նորա վերա։ Այդպիսի մարդիկ, որ շատ ժամանակ այդպիսի բունավոր չեղու ունին, որ վատ առողջության տեր են, հարբելով դառնում են մի թրջած հավ, և այնուհետև մեր ձեռքումն էր նա, կարող ենք ամենայն տնաակ լրությունն առնել,— հառաջ տարավ յուր խոսքը պ. Մարկոսը։

«Գիտե՞ս, որ նա հարբելու էր և դու զգաստ մնալու, որ կարողանայիր քո դիտավորությունդ իրագործել. նա մի չիլ մարդ է, դուցե քեզանից շատ խմե,— ասաց Մանթուխյանցը։

— Եղբա՛յր, դու վշտացնում ես ինձ. նա ի՞նչ մարդ է, որ ինձանից շատ խմե։ Ես մինչև այժմ կարծում էի, որ դու փոքր ի շատե ճանաչում էիր ինձ, փոքր ի շատե հարգում էիր ինձ, բայց այժմ հասկացա, որ ես մազի չափ պատիվ չեմ ունեցել քո մոտ։ Մի՛թե խա՞ղ է, կամ, կատա՞կ է իմ հետ խմել. ես նորան այն օրը ձգեմ, որ շունը ձեռքից հաց չառնու,—

«Դուք ինձանից խորհուրդ հարցրեցիք,— ասեց Մանթուխյանցը,— բայց ինձանից, որ ցույց էր ավել յուր խմելու վերա,— նրին դուք հրավիրելը հանձն առնուք, խայտառակելը իմ վիզը, կամի՛ք, դաշն բռնենք մի վնգրա արագով։

«Դուք ինձանից խորհուրդ հարցրեցիք,— ասեց Մանթուխյանցը,— ես հայտնեցի ձեզ իմ սրտի վկայությունը, որպես անկեղծ բարեկամ, նրին

արժան էր. որքան կարելի է, հնոի մնալ կոմս Էմմանուել ասած մարդուց. բայց նրան ձեր միտքը հրավիրել է, հրավիրեցեք, ինձ մի մասնավոր վնաս չունի, շատ շատ, մյուս օր պիտի մի ոտանավոր գրե, կամ յուր Հիշատակարանին գոհե իմ պատվասիրությունը, անձնասիրությունը, ինչպես սովոր է, ինչ կամի առնե, գլուխը քարը»...

— Կորչի գնա... մեզ հարկավոր չէ. նորա խոսկ ու մոմը պետք չէ, միայն թե մեր եկեղեցին հող չգա: Ես տեսանել չկամիմ մի այդպիսի ինքնահավան մարդ, որ ողջի վերա ծիծաղում էր,— պատասխանեց Շաքարյանցը:

«Ով ի՛նչպես էր ծիծաղում, հրապարակով... եզովյալը — լեզուն շինել է օձի լեզու, մի աման արյուն գլխին դրած ման է գալիս, սորա կամ նորա վերա թափելու համար,— կցորդեց շուտով Մանթուխյանցը:

— Ինչպես հաճո է ձեզ,— խաղաղ սրտով ասաց պ. Մարկոսը,— ես շատ դիտավորություն ունեի... Այս խոսքերը ասելու ժամանակ մի այնպիսի հայացք ձգեց պ. Շաքարյանցի վերա, որ սա հասկացավ, թե պ. Մարկոսի խորհուրդը, ծանոթանալու կոմս Էմմանուելի հետ, է ծանոթանալ նորա սիրուն բարեկամ օրիորդների հետ:

— Ես կամեի մեր խնջույքի մեջ խայտառակել նորան,— շարունակեց պ. Մարկոսը,— ես այնպիսի բաներ հարցանեի, որ բաց մնար նորա բերանը, զոր օրինակ, «Որ է լերինն այլակերպեալ ցուցեր զքո գօրութիւնդ» ի՞նչ ասել է, ըո՛ղ մի մեկներ ինձ: Նա միանգամայն պիտո է խայտառակվեր անպատասխանի մնալով:

«Ինչպես չէ, կպատասխանե քեզ. եղբա՛յր, նա քո ասած մարդերից չէ և ոչ միայն քո ասած, այլ նա մարդ չէ ընդհանրապես: Դու կարծում ես, թե նա կխոսե՞ քո հետ, երևսը շուրջ կտա և կհեռանա, մանավանդ եթե մի այդպիսի խնդիր առաջարկես. ըոզ այդ խնդիրը լիներ խելացի և լոգիկական, բայց այդ բոլորը անվանելու է խելագարություն և հիմարություն: Ես, որ խոսում եմ այս բաները, փորձով գիտեմ: Մի անգամ քնական գիտություններից մի բան հարցրեցի, թեև քաջ գիտեի, որ չգիտեր նա այդ բանը և գիտել ևս չէր կարող, որովհետև ոչ մի դպրոցի մեջ չեն ուսուցանում, բայց նա փոխանակ խոստովանելու յուր տգիտությունը, հրապարակով ծիծաղեցավ իմ վերա: Նա ասաց, թե իմ առարկան միջին դարերում ահա խելքից հանել էր Եվրոպայում մի քանի բնիկհավատ մարդիկ, և թե նոր այժմ մի շար բախտով յոթն ուրն դարերից հետո հասել էր հայերին»:

— Շար բախտո՞վ. ուրեմն չկամի այդ մարդը, որ մեր ազգը ստանա եվրոպական լուսավորություն,— հարց արեց պ. Մարկոսը:

«Աստանան գիտե նորա խորհուրդը. ո՛վ գիտե թե ինչ օձեր նստած կան նորա փորում. նա ասում է թե պիտո է հետևել եվրոպական այժմյան լուսավորության, և ո՛չ այն լուսավորություն ասված խավարին, որով պատած էր Եվրոպան միջին դարերում: Չէ իմանում, որ ամենայն հին քան լավ է, չէ իմանում, որ մի ժանգոտ դրամ լավ է քան թե նորը

և փայլունը, ինչպես ամենայն առողջամտությամբ Հատտատեց Մեղու Հայաստանի[3] անունով լրագիրը, որ դուրս է տալիս Թիֆլիզում մեր ժիանական, լուսավոր, եվրոպացի և մեծաքանքար Մանդինյանց տեր Սահակյանցը։ Չկամի լսել և հասկանալ, թե ինչ որ հնարը կար, այժմ չկա. ինչ երևելի փիլիսոփաներ եղած են հունաց մեջ, ի՛նչ հարատասաններ հռոմայեցոց մեջ. նա ասում է, թե այդ փիլիսոփայքը յուրյանց դիտությամբ, այժմյան ժամանակումս կարող են միայն աշակերտ լինել եվրոպական դպրոցներին,— պատասխանեց Մանթուխյանցը։

— Ինչպես է տալա նորա կարծիքը գուշակողների մասին, կամ նոցա գործած գերբնական գործերի մասին,— շարունակեց պ. Մարկոսը։

«Հատկապես խոսեցի այդ մասին։ Ասում է, թե այդ իմաստությունքը ոչ այլ ինչ էին, եթե ոչ կրթված մարդիկ, յուրյանց հայացքով ավելի վերհամբարձ քան թե խաժամուժ ամբոխը։ Նորա, այն ժամանակի հայացքով, լավ ուսած լինելով ազգերի ներկա դրությունքը, նոցա հիման վերա գուշակում էին նոցա համար գալոց օրերը։ Արևելյան ազգերը, շատ անձնատուր եղած լինելով երևակայության և ֆանտաստիկական պատկերների, առավել շուտով ընդունում էին մի հմայություն, եթե բնական պատճառներից հառաչացած գործողություն կամ բնական կերպով կատարվելու իրողությունը մեկնվեր նոցա գերբնական կերպով, կամ դրվեր ֆանտաստիկական շրջանակի մեջ։ Նա ասում է, թե այժմյան Եվրոպի պատմաբաններն և քաղաքագետ մարդիկ գուշակությունքը ավելի ճշտությամբ կատարվում են, բայց ոչ մինը այդ լուսավոր մարդկից պահանջողություն չունի գուշակողական պատմանուն առանալու։ Հրաշքների մասին ասում է, թե անհնավատ, բյուր, շնացող և շար ազգը միայն նշան կխնդրե. պատճառ, ինքը խելք չունենալով հասկանալ որևիցե հմայություն, այլև հավատ և գիտակցություն չունենալով պահանջում է, որ հմայություն խոսողը մի գերբնական զորություն ցույց տա յուրյանից, որպեսզի տեսանելով նորա կարողությունը հետևաբար կշիռ տա նորա ասածներին կամ ընդունե։ Առհասարակ ատրկության մեջ գոյացած և ատրկության ատմոսֆերայի մեջ աճած մարդը, բացի յուր վզի լուծից և բռնավորի գավազանից ուրիշ բան տեսած չլինելով, մի մարդու պատահելու ժամանակ, երբեք չէ մտածում, որ այդ մարդը ևս յուր նման ստեղծած էր, այլ իսկույն ծնուցանում է յուր և այդ մարդու մեջ մի իվարանական հարաբերություն, և պատրաստ է ատրկանալ նորան, եթե նա կարողանա մի զորություն ցույց տալ. նա չունի մի ազնիվ գաղափարություն անձնական պատվի մասին. պատճառ, մինչև անձնական պատիվը և անձնասիրությունը չմեռանի, ատրկությունը չէ ծնանում։

«Նա հարց արեց ինձանից, թե փո՞ր բաներ կան բնության օրենքների վերա հառաջացող, որ տգետ և խաժամուժ ամբոխը ամենայն միամտությամբ պատրաստ է ընդունել մի գերբնական բանի տեղ։ Ի՛նչ կասեն այժմ Աֆրիկայի կամ Ամերիկայի վայրենիքը, եթե տեսանեն, որ շոգեշարժ կառքը, առանց մի գրաստի կամ թե մարդու օգնության, որ

մինչև այժմ ճանաչել էին ազգույր հառաջ շարժողության մի տեղից դեպի մի այլ տեղ, վազում է անհավատալի արագությամբ մի օրվա մեջ կատարելով հարյուրավոր մղոններ. կամ թե տեսանեն, որ մի աշխարհից դեպի մյուսը խոսում են երկու բոպեում, էլեքտրամագնիտական հեռագրով։ Նրա մի խաբերա մարդ, կամենար օգուտ քաղել այդ ազգերի կուրությունից, հրաշքի տեղ չէ՞ պիտո կարողանար ընդունել տալ այս բաները, որ կատարվում էին բնության օրենքներով։

— Ի՛նչ անզգամ մարդ է դա, ի՛նչ շար լեզու ունի. առաված ազատուն,— ասաց Շաքարյանցը։

«Ո՛ր անզգամը խելացնոր չէ. նրա մի մարդ նորա ասածներին նայելու լինի, անտարակույս տարու մեջ տասն անգամ գլուխ կկատարե։ Իմ կարծիքը այս է, որ ինչքան կարելի է պիտո է հեռի մնալ դորանից. բայց այս մի լոկ կարծիք է իմ կողմից, դուք ազատ եք տնօրինել ինչպես կամիք, պատասխանեց Մանթուխյանցը»։

Պ. Շաքարյանցը, որպես տանուտեր, նախագահ հանդիսացավ խորհրդածու ընկերության և բոլորովին բացատրեր վճռեց, որ Կոմս Էմմանուելը, այդ հատարակաց խաղաղության վրդովիչը, չհրավիրվի, այլ միայն մնացած մյուսերով, որ գրված էին ցուցակի մեջ, կատարվի յուրյանց խնջույքը։

Պ. Մարկոսը խնդրեց հատկացնել խնջույքի օրը. նորան պատասխանեց Շաքարյանցը թե լինելու է մայիսի 20-ին։

Պ. Մարկոսը, մնաս բարյավ ասելով, դուրս գնաց Շաքարյանցի տանից, թողնելով այնտեղ երկու բարեկամքը։

Ջ

Պ. Մարկոսը դուրս եկած չեկած Շաքարյանցի տանից, Մանթուխյանցը, որ մինչև այս րոպես մեծ բանություն գործ դնելով յուր վերա, վարագուրել էր յուր ուրախությունը, վեր թռավ տեղից, և երկու ձեռքով փաթաթվելով Շաքարյանցի վզին, փորր մնաց, որ յուր ասիացի քնքշությամբ խեղդեր սորան։

Մի օտարոտի տեսարան էր։ Շաքարյանցը ամենևին ոչինչ տեղեկություն չուներ այս տարօրինակ ուրախության մասին, որ այսպես բարբարոսաբար դուրս էր երևում Մանթուխյանցից. այս պատճառով, ամենայն առանություամբ հանձն էր առնում Մանթուխյանցի կոպիտ քնքշությունքը։ Դորա փոխանակ, Մանթուխյանցը հատած լինելով վերջապես յուր այսքան տարիներով հղացած ցանկությանը, խելքը թռցնում էր ուրախությունից։ Երկու բարեկամքը ևս բավական ժամանակ մնացին առանց խոսելու։ Այդ միջոցին, նոցա միտք հատկացնող միջնորդը չէր աստվածեղեն խոսքը և բանականությունը, այլ մի տեսակ կատաղի ցընցողական շարժողություն։ Նրա մի օտար մարդ նկատեր հեռվից այս տե-

սարանը, անտարակույս, կարծելու էր թե մարդիկ չէին սոքա, այլ վայրենի արջեր, որ թավալվում էին սոճիայի վերա, թնդան մինը նոցանից կարծում էր յուր անձը երևելի դյուի (народей кахатырь), իսկ մյուսը երևելի ալբիմիկոս։

Երբ բավական զորություն գործ դնելով երկուքը ևս ուժասպառվեցան, Մանթուխյանցը, ուրախական արտասուք աչքերում և հևկևկանքից ընդհատված ձայնով ազազակեց.— Ոսկին ծոցումս է...

Շաբաթյանցի ականջին շատ քաղցր եկավ ոսկու ձայնը, վասն որո վերջին անգամ համբուրելով Մանթուխյանցի երեսը, շնորհավորեց նորա հառաջադիմություններ, որ յուրյանց պայմանի զորությամբ, պիտի մնծ ազդեցություն ունենար և Շաբաթյանցի կյանքի վերա։

Երկու բարեկամքը ևս մի փոքր հանդարտելով նստան աթոռների վերա, Շաբաթյանցը լցրեց արաղը բաժակների մեջ։ Մնծ սիրով բաժակները միմյանց դարկելուց հետո խմեցին։ Բայց Մանթուխյանցը արաղի վերջին ումպը կուլ չտված, սկսեց պատմել, թե ինչ կերպով վերջապես հաջողել էր յուր խորհրդական խառնուրդից սառնալ անարատ ոսկի։

— Վերջին փորձն էր մնացել,— ասաց Մանթուխյանցը, մի կաթ հաց բերանը դնելով,— և աշխարհիս պիտո է ասել, փորր մնաց, որ մնզանչևի այս սուրբ գիտության ընդդեմ. յոթանասուն վեց զուր փորձերը դղրդել էին իմ հույսի և հավատի հաստատությունը, և այդ վերջին փորձը նրին զուր դնար նույնպես, պիտո է դյութեր ինձ հուսահատության ծովը։ Բայց աստված ողորմեցավ երեսիս ջրին։ Վառնցի կրակը, շարնցի քուրայի մեջ զանազան մետաղներով լցրած հողեղեն ամաններդ և սկսեցի փուքսի գործադրությամբ զորացնել կրակը, որով և բարձրացնել ջերմության աստիճանը, որ անպատճառ հարկավոր էր դժվարահալ մետաղները հալեցնելու համար։ Բավական չէր միայն նոցա հալվիլը, այլ և հարկավոր էր որ եռ գային. այս պատճառով ծողնցի այդ աստիճ կրակի մեջ իմ պատրաստությունքը, զուրս գնացի արվեստանոցիցս մի փոքր մկնդեղ բերելու, մետաղների հետ խառնելու համար։ Բայց երբ վերադարձա դեպի արվեստանոցս, չես կարող երևակայել, թե ինչ աստիճանի հասավ իմ կատաղությունը։ Հողեղեն ամանները ո՛րը հաքվել էին և որը բոլորովին փշրվել, այնպես, որ ոչինչ նյութ մնացած չէր նոցա մեջ։ Երկաթի գավազանով խառնելով քուրան, հասկացա, որ հալած էին մետաղները կրակի տակ քուրայի մեջ, որ նախատեսությամբ հառաջուց պատել էր բարակ մաղած մոխրով։ Հնացուցի կրակը։ Հալած մետաղները, որ խառնվելով միմյանց հետ կազմում էին մի փոքրիկ լճակ, և որի երեսի վերա սերի պես կանգնել էր կապտագույն կեղևը, գրավեցին իմ ուշադրությունը. կանաչ ու կապտագույն բաց կարմիր բարձրանում էր նորանից։ Սիրտս կոտրած էր բոլորովին, որովհետև համարում էի թե զուր է գնացել աշխատությունս, զատ որում մկնդեղը պակաս էր։ Վերջապես առեցավ խառնուրդը և կարելի եղավ քննել նորան... ո՛վ, բախտիս, գործողությունը հաջողվել էր այնպես, որ առավելյալ չէր կարելի ցանկանալ...

Այս խոսքերը խոսելով, Մանթուխյանցը հանեց կնգռատ և հնոտի սերտուկի ծոցից մի սևագույն դեղին մետալի կտոր և դրեց սեղանի վերա։ Բայց նորա սիրտը և հոգին այնպես ջերմացած էին այդ մետալի վերա, որ իսկույն հափշտակեց դարձյալ սեղանից և բռնելով ձեռքում պննում էր, շուռուվ Շաքարյանցի ձեռքը։

— Լա՛վ է, լավ, թող ես ես տեսանեմ,— ասաց Շաքարյանցը,— դու տեսել ես և դարձյալ կտեսանես։ Բայց դրանից, քո համար մի զարմանալի բան չէ, ո՞չ ապաքեն դու ես դորա արարիչը, ո՞չ ապաքեն էգուց փուդերով կարող ես առանալ. թող մի լավ պննեմ դորան։

«Որովհետև իմ աշխատությանն վաստակն է դա, այդ պատճառով ևս ինձ ավելի քաղցր է նայել դորա վերա, քան թե մի այլ մարդու։ Մի՞թե չգիտես, որ ծնողին ավելի քաղցր է յուր զավակը, քան թե մի օտարին։ Գիտե՞ս, թե ինչքան քրտինք եմ թափել ես, մինչև հասել եմ դորան»։

Մանթուխյանցը այս խոսքերը ասելով տվեց մետալը Շաքարյանցին. քայց աչքի հայացքով, ասես թե, հետևից լափում էր այդ մետալի կտորը։

Շաքարյանցը, սեղանավորի աչքով քննելով մետալը, խոստովանեց նույնպես, թե ոսկի էր այն,— Բայց մի բանի վերա շատ զարմանում եմ, ասաց նա,— ինչպես է, որ առանց մկնդեղի ստացվել է։ Ո՞չ ապաքեն ուրիշ անգամ, սույն իսկ նյութերով որ այժմ բաղկացնում են այս մետալը, փորձ արել էիր, ինչո՞ւ ապա այն ժամանակ չհաջողվեցավ ու այժմ այսպես...

«Է՛հ, ինչ առնենք, եթե փորձը չհաջողվեցավ այն ժամանակ, միթե դատապարտվեցա՞ն այդ նյութերը երբեք չհաջողվելու։ Դու փոխանակ ուրախանալու, տրտմում ես...», ասաց Մանթուխյանցը տհաճությամբ։

— Չեմ տրտմում,— բացագանչեց Շաքարյանցը,— միայն...

«Գուցե կասկածում ես, կամ երկբայություն ունիս այդ մետալի արդարև ոսկի լինելու մասին. եթե կամիս, տա՛ր ոսկերիչների մոտ, նորա կվկայեն քեզ, որ առուգապես ոսկի է»։

— Ոսկի եղածը ոսկի է, խոսք չկա...

«Ուրեմն ինչ։ Այդ պրծած բան է. այժմ ցնծանք և ուրախանանք։ Թող պարծենա Անգլիան յուր հարստությամբ, թող և Ռուսլան սառցապուխս սարերը ուսին յուրյանց մեջ, թե ոսկու մայր էին։ Կեցցե՛ գիտությունն, կեցցե՛ աշխատությունն։ Ասացի, այս վերջացած բա՛ն է, այժմ մտածենք խնջույքի վերա»։

— Խնջույքի վերա ի՛նչ մտածելու բան կա, այնպես խնջույք կարելի է առնել, որ աշխարհը զարմանա։ Եամպայն ասածդ հնդեղի պես կթափիմ, կբանամ քսակիս բերանը, թո՛ղ մեր Սարգիսը դիմանա միայն ծացանը բանալով. բայց բանը այդ չէ, մենք ուրիշ մտածելիք ունինք։

«Օրհնած, մտածելուց գլուխներս ճաքեցավ, փորր մնաց, որ գլխիս ուղեղը հոտի, թող մի փորր հանգստանանք, ուրախանանք»։

— Բայց լսի՛ր, իմ ասած մտածելիքը զվարճալի բաներ են, և կար-

ծեմ, որ դու ևս հնոի չմնաս այդ բաներից. անտարակույս քո հոժարությունը ևս հարկավոր է, այստեղ ևս համարյա թե ոչինչ եմ։

«Ի՛նչ բաներ են ապա», հարց արեց Մանիուխյանցը։

— Ոսկին, որ առաջին անգամ այդքան փոքր շինեցիր, երկրորդ անգամը շատ պիտի շինես, այնպես չէ՞։

«Անտարակույս. այս մի փորձ էր, և ես հավատի չլինելով հաջողության մասին, խնայարար գործ էի դնում միշտ նյութերը, որ թեև թեթևագին բաներ են, այնուամենայնիվ իմ պես մարդու համար, ինչպես էի մինչև ներկա րոպես, այդ փորրը ևս բան արժեր։ Զեղ քաջ հայտնի է, որ քանի քանի անգամ չնչին արծաթներ խնդրած եմ քեզանից ածուխ գնելու համար։ Այժմ որ աստված ամենակարողը հաջողություն տվեց ինձ, ես պատրաստություն կտեսանեմ դեռ հատաջ մի փուղ պատրաստելու. հետո դարձյալ կշատացնեմ, այժմ չէ կարելի, քանի որում անոթներս փոքր են, հարկավոր է անոթներ և գործիք բերել տալ օտար աշխարհներից»։

— Շատ լավ, եթե մի մի փուղ ևս պատրաստելու լինիս, այնուամենայնիվ կարճ միջոցում մեծ հարստություն կարելի է դիպել։

«Երկբայություն չունիմ այդ մասին»։

— Այդքան հարստության տեր դառնալուց հետո, ասելիքս այս էր, թե ի՛նչ պիտո է առնելը ազգի համար։

«Ուրեմն քո առաջարկած մտածելի բաները ազգի՞ն են վերաբերվում»։

— Այո։

«Այդ ուրիշ բան է. ես այդ խնդրի մասին պատրաստ եմ օրերով խոսել սիրական Շաքարյանց, և բացահայտ կերպով հասկացնել քեզ իմ տեսությունս, թե ի՛նչ էր մի հայի պարտականությունը, յուր ազգի առաջև»։

— Դու մի պիտուն մարդ ես, մի գուցե սկսանես այժմ խոր փիլիսոփայություններ, իմ գլուխս դուրս չէ գալիս այդպիսի բաներից. հասարակ կերպով հասկացրու ինձ և հայտնիր քո դիտավորությունը։ Իմ կարծիքը այս է, որ շատ ոսկի շինելուց հետո, վաճառենք նորան և գոյացնենք մի մեծ արծաթագլուխ, որ և դնելով մի շահավետ դանձարանի մեջ, կարողանանք մի հոյակապ դպրոց բանալ և այդ գումարի տարեկան շահովը կըրթել ազգի խելոք ողորմելի զավակները, որոնց մասին այնքան ազաղակում են օրագիրքը և հեղինակները։

«Ի՞նչ մեծ աստուծո ձևոք վեր առնք այդպիսի խորհրդից. եթե կամիս, որ պատճառ լինինք ազգի կործանությանը, ապա բանանք այդ դպրոցը»։

— Ի՛նչ ես խոսում։

«Ի՛նչ պիտի խոսեմ. ո՛ր դպրոցի աշակերտը տեսար, որ ազգը սիրեր ու նորա օգուտը պաշտեր։ Ամենայն օր, որ փորր ի շատն ուսումն է ստանում, մոռանում է յուր ազգը, յուր հավատն ու օրենքը, ո՛չ պահք է խմանում, ո՛չ մատաղը, ո՛չ քավություն, ո՛չ Թողություն։ Եթե մի փորր մեղադրես այդպիսուն նորա տխմարների պատճառով, կտեսանես ահա, որ հետևար ֆանատիկոս անունը կրևեռն ճակատիդ։ Մեր ազգը ինչպես որ Լուսավորչից (մատաղ գնամ նորա ղորությանը), ստացել է յուր կրոնը, ինչ-

պես պաշտում է Լուսավորչի լույս հավատը, պետք է աշխատենք, որ այդ հավատը ամուր և անխախտ պահպանվի, մեզ հարկավոր է ոչ թե հավատի թշնամիք հավելացնել, այլ հավատի պաշտպանք և պատսպարողք։ Վարժատուն ասած բանդ, ճշմարիտ է, ուսուցանում է մարդու զանազան լեզուք, զանազան արուամին գիտություններ, բայց եթե առողջ բանականությամբ քննենք, այդ բոլորը հոգու փրկության պատճառ չէ կարող լինել, այլ մանավանդ կորստի։ Ինչ ունինք, սիրելի, այս աշխարհիս մեջ, ինչ պիտի տանենք այստեղից. մի չոր հոգի ունինք, պետք է աշխատել, որ գժոխքի բաժին չլինի մեր խեղճ հոգին։ Ուսում ասացողը նույնպես պիտի մնանի՞ թե ոչ, ուսում ասացողի կյանքը նույնքա՞ն է որքան ուզեմները թե ոչ. ուրեմն ի՛նչ գործնական օգուտ ունի հոգին ուսումից. ո՛ր սուրբերը ուսյալ էին։ Մարգարեքը հովիվ չէ՞ին, առաքյալքը ձկնորս չէ՞ին։ Աստված, ողորմիր ինձ ասել չուսանողը, այլ, դորա փոխանակ, աստված, ես քեզ ողորմիմ ասողը չէ՞ր, որ ծովի վերա ոտքով վազեց դեպի նավը, որով աստված. ողորմի՛ր ինձ ազոթքը ուսուցանող վարդապետը գնում էր։ Եվ այս վարդապետը չէ՞ր որ տեսանելով այն ամիկ մարդու սրբությունը, որով, անտարակույս, որպես ցամաքի վերա մեն էր գալիս նա, ասաց թե քեզ ոչինչ ավելի հարկավոր չէ, երանի՜ թե ես ևս քո պես անգետ լինեի, բայց քո ազոթքի պես իմ ազոթքը ևս արժանընդունակ լիներ։ Մեր գլխավոր պարտականությունն է, եկեղեցիք շինել, եղած եկեղեցիների պատկերները արծաթապատել, քառասնիցը անպակաս առնել, ննջեցյալների գերեզմանը օրհնել տալ, մատաղը շմոռանալ և պահքը պահել. եթե սորանից ավելի կամենանք, ընդունելի և աստվածահաճո բաներ դեռ ևս շատ կան, ջրհոր փորել, տանը մնացած աղջիկ լույս ու արև հանել, տոնի, զատկի աղքատներին հանդերձ բաժանել։ Անտարակույս այս բոլորը կատենք մեք քո հետ. բայի սորանից հարկավոր է, որ դարպաս ուղարկենք Երուսաղեմ, Մշու սուրբ Կարապետ և այլ այսպիսի ուխտատեղեր, որ orհնեն-fագիր տառանք։ Ախ ի՛նչ գեղեցիկ են այդ օրհնության գրերի ոճը և շարադրությունը։ «Ի սուրբ և աստուածընկալ գրանէ.... աստուածային օրհնութիւնն եկեալ հանդիցէ, ծաւալեսցի ի վերայ ձեր և համայն ձեր տանցդ....» և այսպիսի օրհնության գիր շատ անգամ կարելի է կնա մանեթով առանալ։ Ի՛նչ է մարդուս երջանկությունը սորանից ավելի. «Յայսմ լիցի աստուածասիրութիւնդ», կշարունակն օրհնության գիրը, «զի զոր առաքեալ էիր ձեռամբ (այս ինչ անձին) զմի տեօրտի պիրլիճ[1], ընկալաք մեծաւ օրհնութեամբ և զանուն ձեր և համայն ննջեցելոց ձերոց գրեցաք առաջի սուրբ սեղանոյն, յորոյ վերայ սուրբ պատարագն մատչի» և այլն։ Քանի որ այդ վանքերք կան, քանի որ անմահ պատարագը կմատուցանվի այդ տեղերում, այդ արծաթը տվողի և նորա բոլոր ննջեցյալների անունը պիտի հիշատակվի։ Երանի՜ մեզ, Շարաբյանց, երանի — հազար երանի։ Ո՛ղ ուրիշները գլուխ կոտրեն ուսում առանալու, մեք քո հետ հոգիներիս պատրաստությունը տեսանենք։ Հարկավոր է մեր ճարելու հարստություններից մասն և բաժին հանել վարագա սուրբ նշանին, վանկո

սուրբ նշանին, Աղիամարտա սուրբ նշանին, Գնդարդա սուրբ նշանին, Օթյաց սուրբ նշանին* և այլ մյուս սուրբ նշաններին, որ գրված կան իմ մոտ գանված գրչագիրների մեջ։ Այս անպատճառ հարկավոր է, որ այդ սուրբ նշանների բարեխոսություններ ևս անպակաս լինի մեր վերայից. սուրբ նշանները անբարբառ բարեխոս են հավատացյալներին. բացի դրանից, ոմանք ի յայն միտքն եմք յուսացնալ, յոր Տէր Յիսուս բնևնացաւ, ասում է խալխ ատղը։ Իմ կարծիքով ազգը նկնդեցին է, հոգևորքն են, մեք մասնավոր մարդիկ ենք, մեք մեր հոգու փրկության մասին մտածելուց ավելի ուրիշ պարտականություն չունինք, իսկ ազգի բաները, նկնդեցու բաները ինչ հոգան. փառք աստուծո, կաթողիկոս ունինք, Լուսավորչի հաջորդը, պատրիարքներ, առաջնորդներ. վանքերը լի են վարդապետներով, ինչ նորա մտածեն այդ բաները, և մտածել են և մտածում են ևս։ Դու ի՛նչ ես կարծում, նրանք չլինեին, մեր լույս հավատը կպահպանվե՞ր մինչև այժմ. աստված կյանք տա մեր հոգևորներին, աստված նոցա շուրը մեր վերայից անպակաս առնե։

Այսպես էր Մանթուխյանցի քարոզը, որ կարդաց Շաթարյանցի դլխին։ Շաթարյանցը մի դիտնական մարդու տեղ գրած լինելով Մանթուխյանցին, իսկույն հնազանդեցավ նորա ասածներին, մանավանդ ինքը պատրաստվով դյումչական բաներով, մի փոքր երկյուղ ևս ուներ, որ մի՛ դուցե աստված բարկանա յուր վերա, ուստի և հոժարակամ ընդունեց այն յուր առաջարկություններ, որոնց խորհուրդը և նպատակն էր մոտ մնալ նկնդեցուն և հոգևորներին, որոնց միջնորդությամբ կարող էր ինչուչ աստված յուր դյումչությամբ պատրաստելու մեղքը։

— Մեք այս բաների վերա ուրիշ անգամ ավելի ընդարձակ կխոսանք,— ասաց Մանթուխյանցը, ձեռքը պատրելով դնդի արտի շիշը։ Շաթարյանցը հասաջամատուց գտանվեցավ և իսկույն լցրեց բաժակները արտով։ Այս րոպեից սկսած Մանթուխյանցի և Շաթարյանցի հարաբերությունք ամենևին այն չէր, ինչ որ քանի մի օր հառաջ։

Մանթուխյանցը, ասկին շինելուց հառաջ, գալիս էր Շաթարյանցի մոտ, որպես յուրյանից առավել մեծ մարդու մոտ, ըստ որում, ինչպես ասել ենք յուր տեղում, Շաթարյանցը ուներ մի փոքր կարողություն։ Բայց երբ գտավ ասկի շինելու դաղանիքը, Շաթարյանցը սկսաց նայել Մանթուխ-

---

* Օթյաց սուրբ նշան անվանվում է այն խաչ քարը, որ ինչպես պատմվում է Այսմավուրքի մեջ, Թադիոս և Բարթողիմեոս առաքյալքը միմյանց հանդիպելով Պարսկաստանի և Հայաստանի սահմաններին մոտ և մի տեղ օթևելով գիշերը առավոտուն ծծել են այն քարը որպես հիշատակ յուրյանց միմյանց հանդիպելուն. այս պատճառով ևս տալում է քարը որպես հիշատակ յուրյանց միմյանց հանդիպելուն. այս պատճառով ևս տալում է Օթյաց սուրբ նշան։ Մի բնթանցի ավանդություն, որ հասել է ինձ ծերունի մարդկերից. Օթյաց սուրբ նշան։ Մի բնթանցի ավանդություն, որ հասել է ինձ ծերունի մարդկերից. տալում է թե Նոր-Նախիջևան բազարի մոտ գտանված սուրբ խաչի անունով վանքը շինած է այդ սուրբ նշանի անունով, և թե այն խաչն նշան ունեցող քարը, որ գրած է վանքի ձախակողմյան պատի մեջ, ուր կա և Թադիոս Առաքյալ պատկերը, է այն Օթյաց սուրբ նշանը։ Բայց այս մի ավանդություն է. գրավոր հիշատակարան գտանելու համար այդ մասին, ինձ բոլոր հարցաքննություններս զուր է անցած մինչև այժմ։

յանցի վերա նուչնպիսի մեծարական աչքով եվ Մանթուխյանցը, որպես մի տգետ մարդ, խնդուքն սկսեց օգուտ քաղել յուր դրութենից, փոխեց յուր խոսակցության ոճը Շաքարյանցի հետ, և կրավորական բնավորությունը դնալի ներգործական։ Ճշմարիտը պիտու է ասել, Շաքարյանցը յուր ժամանակին այս աչքով նայած չէր Մանթուխյանցի վերա։ Ինչևիցե։ Մենք թողնք առ ժամանակ սորանց այստեղ, և տեղափոխվինք մաքով դնալի մի այլ ընկերության։

Ի

Շատ ժամանակ չէր, որ Կոմս Էմմանուելը բնակվում էր այս քաղաքի մեջ, ուր անցան նախընթաց գլուխներում պատմած անցքերը։ Նորա անձնական ակարությունքը հարկադրել էին նորան, օգափոխության համար դուրս գալ յուր մայրյուա բնակարանից, ուր շատ տարիներ անցուցել էր մեկամաղձական և տխուր միայնության մեջ։

Դպրության կանոնքը արգելում են մեզ, առանց որևիցե մարդու կամք ստանալու, տպագրությամբ հրատարակել նորա վարքագրությունը. այս պատճառով համարձակություն չունիմ խոսել հրապարակով իմ ընթերցողների հետ, Կոմս Էմմանուելի անձին վերա, հերիքանալով, որ իրավունք ունիմ նորա կողմից ասել այնքան, որքան ասացի կամ որքան դեռևս պիտի ասեմ։

Բացի սորանից, Կոմս Էմմանուելը մի նոր մարդ չէ մեր ազգի համար. նա փորր ի շատե հայտնի է ընթերցող հասարակությանը յուր Հիշատակարաններով և ուսանավորներով, որ տպվում են Հյուսիսասիայի օրագրի մեջ. այս պատճառով և իմ ընթերցողքը չեն կարող ասել ինձ, թե խոսում էի մի բոլորովին նոցա անծանոթ մարդու մասին։ Ինչևիցե։

Ահա այս քաղաքը գալով Կոմս Էմմանուելը սկսավ նկել համարյա թե բոլոր փողոցները, տեսել էր բոլոր նկնղեցիքը, վաճառանոցները, ըստ որում հայարնակ քաղաքներում սոցանից ավելի բան չկա, որ կարողանար գրավել մի նկատող կամ հարցասիրող մարդու ուշադրությունը։ Անհատապրակ շատ տխուր երևույթ է այս, բայց անմիջական հետևանք հայերի կյանքի սահմանական բնավորությանը։ Այնտեղ, ուր չկա կրթություն և գաղափարակություն, չէ կարող լինել ընկերական կյանք. իսկ ուր չկա ընկերական կյանք, այնտեղ թագավորում են միմյանցից բաժանող և հեռացնող նսեմական սկզբունք, որի հիմքի վերա ոչ թե միայն բան չէ շինվում, այլ հատաքուց շինվածները ևս քանդվում են։ Որևիցե գործ, որ պիտի պատկաներ ամբողջ ազգին, հարկ է որ կատարվի հասարակաց ձեռքով, հասարակաց հոգու միաբան գործակցությամբ. բայց ուր իշխում է նսեմ կանոնություն, այնտեղից հալածական է միաբանական ատելածային հոգին։ Նսեմական հոգով բան չէ հատաքանում նորա համար, որ նա կենսորո-

նացած է յուր մեջ. նա մնացած է շրջակայքի համար, թեև գտանվում էր մի կենդանավորյան պատկեր ունեցող կեղևի մեջ: Մի այդպիսի մարդու վարդապետությունը գոհարերության մասին (առանց որին աշխարհ առաքինություն չկա) այսպես է, թե այն գոհն է արժան և ընդունելի, որ վարձատրվում է իսկույն նյութական ճանապարհով: Նա չկամի ևս հասկանալ, թե առաքինությունն ասածը մի վերացական բան է և չէ երևում նյութական կերպարանքի տակ: Հետ է նորանից այն հասկացողությունը և վարդապետությունը, թե ամենայն գոհ, որ վարձատրվում էր մարդու խրոխտ գրատանքի գիտակցությամբ, արդեն ամենալավ ապրյուրն էր մխիթարության: Ո՛հ, արևը շատ անգամ դեռևս պիտի մատնե հայերի ասիական այդտոր հայացքի վերայով.... գնայուն մեռյալները (ходячие трупы) դեռևս շատ ժամանակ պիտի կենդանի մարդիկ թվին մեր արտաքսելի ազգի աշքում: Երևում է, որ մենք տեսանելու չէինք նախախնամության այցելությունը այս ազգին հասած. բայց արդյոք պիտի տեսանե՞ն մեր որդիքը կամ թոռները, դժվար է հավատալ: Ըսկսմանած, հնձելու հույսը շատ անձնախաբեության է. եթե մեր պապերը և հայրերը սերմանած լինեին, մենք այժմ կհնձեինք, ներկայումս չենք հնձում նորա համար, որ մեր նախնիքը չեն սերմանած, բայց մենք ևս չենք սերմանում, թ'նչպես ուրեմն կարող են հնձել մեր որդիքը և թոռները: Հայերի համար, երեկ և այսօր նույն և միշտ. չեմ ասում հավիտյան, որովհետև այդ ազգի բռնած ճանապարհը այնպես է, որ գարերի ևս դժվար թե կդիմանար, որ մնա հավիտյանը:

...Երեկոյան ժամանակ, կուս էմմանուելը հեռացավ դեպի քաղաքի ծայրը, դեպի մի պարապավոր նկեղեցի, որի բակը էր միևնույն ժամանակ և գերեզմանատուն:

Կանաչապատ էր բոլորովին այդ նկեղեցու բակը, և շատ ծառեր անկած կային պարապի հետ զուգահեռաբար, որոնց սովիները ատանում էին առավել և առավել հակայական երկայնություն, որքան արևը խոնարհվում էր դեպի մուտ: Թևթև քամին, խաղալով ծառերի տերևների հետ, պատճառում էր մի ախորժելի խշխշոց. ծաղիկները և արոտները սկսանում էին առուգանալ, թարմանալ և բարձրացնել յուրյանց գլուխը, ազատվելով արևի ուղղահայաց այրող ճառագայթներից, որ խաղում էին այժմ կաթողիկեի ոսկեզօծ խաչի վերա:

Այցելուն, աչքը ձգնց լայնարձակ, գեղեցկանիստ բակի վերա. ոչի՛նչ, և ո՛չ ոք... Այնտեղ տպրում էր միայն անշունչ բնությունը. այնտեղ, քամին միայն, ուրուր, և նշանակյալ ժամերում, եկեղեցու ախուր հնչող զանգակը կարող են ընդհատել միշտ թագավորող լռությունը: Գերեզմանները որը կարգով և որը անկարգ շարված էին կանաչ, թավիշապատ հատակի վերա: Ասես թե մարդերի գերեզմանքը ծառայում են բնության ձևերում շահմատի քարերի տեղ: Բնությունը խաղում է այս խաղը ժամանակի հետ: Ամեն մի նոր գերեզման, նոր քար է, որ ատանում է բնությունը և դնում է և զանազան ուղղություններով շարում է յուր

խաղակից ժամանակի առաջև։ Ժամանակը տանում է այդ քարերը հաւտակից...

Երբ Կոմս Էմմանուելը ման գալով գերեզմանների մէջ և կարդալով անուր և անալներով լի տապանագիրերը, որոնց և՛ գրել տվողը, և՛ գրողը և՛ փորողը չեն գիտեցած հայերեն, անցավ դեպի եկեղեցու սեղանի քամակը, այսինքն, արևելյան կողմը. այստեղ տեսավ նա մի կենդանի էակ. բայց և սա սպասավոր էր մահու թագավորութիւնը...

Մի վանեռնամյա, բայց առույգ ծերունի, ճաղատ ճակատով և սպիտակ մազերով, բահը ձեռքին փորում էր.... Նորա խոշոր դեմքի գծագրութիւնն հանգարտութիւններից երևում էր, որ շատ սառնութեամբ կատարում էր այդ գործը, և ամենևին մեքենաբար, առանց մտածելու և յուր գործի հետևանքից կամ շարժառիթից մի տպավորութիւն ներս ընդունել յուր հոգու վերա։

Կոմս Էմմանուելը մոտեցավ այս մարդուն։

«Բարև, ծերունի», ասաց նա։

— Աստուծո բարին,— պատասխանեց խոտակիցը։

«Դարձյա՞լ գերեզման....»

— Օրհնած, այս տարի դեռ տասներորդն է, որ փորում եմ, մինչև շա՞տ է։ Թէև այսքան ևս չլինի, ասե՞ս որ պիտոր քաղցած մեռանել։ Ի՞նչ է իմ ստացածս եկեղեցուց, որպես տարեկան ռոճիկ,— երեսուն մանեթ. աստուծո համար ասա՛, կարելի՞ է այդքան գումարով ապրիլ, տուն տեղ և ընտանիք պահել։ Մեզ ասում են, թէ արդյունք ունենինք ժողովրդից. ի՛նչ տեղից է մեր արդյունքը։ Մկրտութիւններից, պսակից և մեռյալից, բայց մկրտութիւնը և պսակը, համարյա թէ ոչինչ արդյունքի աղբյուր չեն. քսան կոպեկ, երբեմն երեսուն և երբեմն կես մանեթ։ Ամբողջ մանեթ տասն տարին մի անգամ չէ պատահում։ Մնում է մեռյալը. գերեզման փորելուց ստանում եմ երկու մանեթ, լվանալու համար, եթե արական է, տալիս են մի բան. մնաց որ մեռյալի շապիկը, վերայի գտանվածը հանգերձեղենը կամ մահիճը, որի մեջ հանգուցյալը փչել էր յուր հոգին, նույնպես պատկանում է մեզ. նոր հանգերձը իրեն կոզոպուտ* կպատկանի ծխատեր քահանային, այս պատճառով ահա մեռյալից ավելի եկամուտքի արդյունավոր աղբյուր չունինք։

«Երբեմն, դու ուրախանում ես, երբ մեռանում է մի մարդ»։

— Ինչ մեղքս պահեմ, այո՛. իմ աղքատութիւնը ստիպում է ուրախանալ։ Զքավորութիւնը, աղքատութիւնը, ապրելու և ընտանիք պահելու հոգսը, շատ անգամ խորութիւն չունին հնարների մեջ, որոնցով կարելի էր արծաթ վաստակել, կյանքի անհրաժեշտ պիտույքը հոգալու համար։ Բացի սորանից, այս ևս կա, որ իմ ուրախանալուցս չէ, որ մարդիկ

* Ցավելով մտարերում եմ այստեղ մի քանի քահանայք, որ ժողովրդի հետ կռիվ ու վեճ էին բռնում կոզոպուտ պահանջելով, թէ արժան է որ այս հանգուցելու այս ինչ և այն ինչ հանդերձները ևս տային նոցա։ Զզվելի՛ իրավունք։

մնոանում են։ Խոնարհի ժամանակ՞ ճշմարի՛տ ավելի պատճառ ունեի տրտմելու, քան որում երկյուղ կար որոխս մնջ, որ մի գուցե նա ևս, կամ իմ ընտանիքիցս մի մարդ մնոանի. բայց դորա փոխանակ, այն ի՛նչ տրդյունք էր այն տարում....

«Բայց, մի կատարված գործողության վերա մեծ ուրախություն ցույց տալը, ասել է, թե պատրաստություն կար ձեռնատու լինել, նեի միայն հնար լիներ, որ այդպիսի գործողություն կատարվեին առավել ատնա։

— Ճշմարի՛տն ասեմ, ցավելու չեմ, նեի ամենայն օր գերեզման փոխեմ այնպիսի մարդերի համար, որպիսու համար փորում եմ այս գերեզմանը։

«Ուրեմն կան մարդիկ, որոնց մնոանելը այնքան ախորժ չէր քեզ, չնայելով, որ պիտի արդյունավորվեիր»։

— Ինչպես չէ։ Ջորօրինակ երիտասարդ մարդիկ, նոր գնուա ընտանիքի տեր դարձած, նոր տնսած կյանքի արևը, որոնց դուռը միշտ բաց է իմ պես աղքատների համար. տունի, զատկի, տալիս են մի բան, նեի մկրտություն կամ մի այլ հոգևոր պնտք կատարվի նոցա տանը, նույնպես չեն մոռանում ժամակոչը։ Որքան և իցեն, այդպիսի մարդերից տարու մնջ ատանում եմ գո՛նե մի մանեի. ճշմարի՛տ, նեի այդպիսիք մնոանեին, մինչև չորս հինգ մանեի կատանայա, բայց, բանը այս է, որ այդ չորս կամ հինգ մանեիով բոլոր հաշիվդ կվերջանա մնոանողին հետ։ Ահա այսպիսի մարդիկ, նեի մնոանեին, ափսոսում եմ. բայց այն մյուս մարդի՛կը, որոնցից ոչինչ արդյունք չունինք, որոնց շնմքը երբնք չենք կտրած, որք հացը մի անգամ ուտում են, մյուս անգամ կշտում, թե մի՛ գուցե պակաս էր, որ բոլորովին նման են անպիտան ձիու, որի տերը միմիայն օգուտ, որ կարո՛ղ էր քաղել նորանից, այդ էր նորա կաշուցը, որ տատակելուց հետո կարող էր վաճառել, քան որում նորա կենդանությունը չէր արժում և նորա կաշուն։

«Այն մարդը, որի համար փորում ես այդ գերեզմանը, նույնպես պատկանում է այս վերջի՛ն տնսակի մարդերինո։

— Ավելի վատթար։ Սա, մեր եկեղեցու նախկին երեսփոխանն էր, տասն և հինգ տարի կատարեց այս պաշտոնը, բայց ի՛նչպես, մի հարցրուս

Տարին մի անգամ մի քանի քահանայք գալիս էին հաշիվ տնսանելու, բայց ի՛նչ հաշիվ, ի՛նչ քննություն։ Հանդուցյալը լավ գիտեր յուր բանը։ Հաշիվը սկսանելուց հառաջ, պատրաստում էր, ահա այն ծառերի տակ, խորովածը, գինին և արաղը։ Անտարակույս, հառաջ գնում էին այդ բարությունքը վայելելու, որ մի փորը ուժ ատանան այն մեծ և երկար, ամբողջ տարու մանրամասն հաշիվը քննելու համար։ Նելացի էր շատ մեր երեսփոխանը, նա սկսանում էր մի մի արաղից և բանը բերում էր հասցնում էր այնտեղ, որ հաշվետուքը տաղ չէին ֆողնում, մնղկի, շարաչան չէին ֆողում, որ չներգնին.... Սովորաբար առավոտյան տասն ժամից կսկսվեր այս բանը և կտևեր մինչև ժամը երկու կամ երեքը ճաշից հետո. այս միջոցին երեսփոխանը տատ էր, «այժմ սկսենք հաշվի

բանը, որովհետև մի երկու ժամից երեկոյան զանգակը կզարկեն, ժողովուրդ գուցե սկսանի գալ եկեղեցի և խափան լինել մեր գործին»։ Առհասարակ շատ բարեսիրտ են մեր քահանայք, այս չէ կարելի ուրանալ. նրանց հոգևորականության մասին ևս հետ չեն ժողովրդից. այս պատճառով ևս ասում էին.— Ո՛րհնած, այսքան տարի եկեղեցու դռանը ծերացար, այժմ պիտի խարդախությո՞ւն գործներիր հաշիվների մեջ. մի՛թե մեզ չենք հավատում քեզ։ Մեր գալը մի օրենք է, որ կատարում ենք, լցուցանում ենք առաջնորդի հրամանը, որ ամսոիկ պատվիրում է ուշի ուշով քննել հաշիվները, որպես թե գողերի և ավազակների ձեռքում էր եկեղեցին։ Հանճարեղ երեսփոխանը պատասխանում էր. «Չէ՛, տյարք Հարք, ես խնդրում եմ, որ հաշիվներիս վերա աչք դարձուցանեք, եկեղեցու մի կոպեկը ևս կրակ լինի իմ համար, եթե խառնել եմ իմ գույքի մեջ»։— Թե ամսոված սիրում ես, ձեռք վեր առ այդ բաներից, մենք լավ ճանաչում ենք քեզ, ամսոված տա, որ բոլոր երեսփոխանք այն հոգին ու հավատը ունենային, ինչ որ դու ունիս. բե՛ր մատյանները,— շարունակում են քահանայք։ Երեսփոխանը բերում է. և ահա, եկեղեցու տարեկան ելից և մտից տակը գրվում է գեղեցիկ գրչով. «Հոգևոր կառավարությիւնս վերահասու եղեալ առուգութիւնեան հաշուոց, ելից և մտից եկեղեցւոյն, եգիտ զայնս ի պատշաճեալ կարգի, բաւ օրինացն հրամայելոյ, զորմէ ստորագրութիւնամբ անդամոց և դրութիւնամբ կնքոյ վկայէ»։

Այնուհետև մի ամբողջ տարի ո՛վ էր եկեղեցու մոտ եկողը, ո՛վ էր հաշիվ հարցնողը։ Տարեգլխին, նույն քահանայքը, նույն խորոմածը, նույն պատիվը, տաղը և շարականը, հետևաբար և նույն վկայությունը «ստորագրութիւնամբ անդամոց դրութիւնամբ կնքոյ»։

Ահա այս կերպով տասն և հինգ տարի վարեց հանգուցյալը երեսփոխանության պաշտոնը։ Բայց երբ սորանից հինգ տարի հառաջ հիվանդանալով հարկադրվեցավ թողուլ յուր արհեստը, եկեղեցին, բացի քանի մի փութ մոմից, կոճառից և խունկից այլ բան չուներ....

«Ապա ժողովո՞ւրդը», հարց արեց Կոմս էմմանուելը։

— Հը՛մ, ժողովրդին ի՛նչ. եկեղեցական գործերի մեջ ի՛նչ գործ ունի ժողովուրդը. այսաեղ հոգևոր իշխանություն կա, կառավարություն և առաջնորդ,— պատասխանեց ժամակոչը, ճակատի քրտինքը սրբելով։

«Շատ բարի. բայց եկեղեցին ո՛չ հոգևոր կառավարությանն է և ոչ առաջնորդին. եկեղեցին պատկանում է ժողովրդին և դեռ օրենքի զորությամբ ևս ժողովուրդը պիտի վերահասու լինի եկեղեցու տարեկան արդյունքին և ծախքին։ Երեսփոխանը ի՛նչ է. ո՛վ է երեսփոխանն է նա. ո՞ր ապաքեն ժողովրդի եկեղեցու մեջ, ժողովրդի գործակատարը։ Ժողովուրդը դնում է մի մարդ եկեղեցու մեջ, որ նա տեսնեն տարեկան արդյունքը և ծախքը, այլև հոգաբարձու լինի եկեղեցու պիտույքին»։

— Մեր ժողովուրդը այդպիսի բան չգիտե։ Նորան վաղուց արդեն հավատացուցել են, որ ժողովուրդը, ազգը հոգևոր բանների մեջ իրա-

վունք չունի խառնվելու, որովհետև այդ բոլորը պահված է հոգևոր իշխանությանն:

«Եկեղեցու ևս ու մուսը հոգևոր պաշտոն չէ, մի սրբազան խորհուրդ չէ, որ սոսկական մարդը համարձակություն չունենար մերձենալու: Հոգևոր իշխանության գործը է հոգաբարձու լինել եկեղեցու կրոնական մասին և ոչ եկեղեցու անասելությանը, որ հասարակաց ոչինչ չունի կրոնի հետ: Եկեղեցին շինողը և պահողը է ժողովուրդը, սորա վերա է նորա ծանրությունը. եթե եկեղեցին քանդվի, ժողովուրդն է շինում, դարձյալ եկեղեցու արդյունքը ժողովրդինն է»:

— Ոշխարը, բուրդը և կաթը յուր տիրոջը տալով, իրավո՞ւնք ունի պահանջելու, որ տերը հաշիվ տար նորան, թե ո՛րքան արդյունք էր առացել նորա բուրդից և կաթից, և թե ո՛ւր, կամ ի՛նչ բանի համար ծախք էր արել:

«Ոշխարը անբան անասուն է. բայց ժողովուրդը բաղկանում է բանական մարդկերից. մի՛թե ընդունո՞ւմ է ժողովուրդը, որ վարվելին յուր հետ, որպես անբան անասունի հետ: Ես շատ զարմանում եմ ձեր ժողովրդի վերա»:

— Եթե զարմանում ես, ապա ուրեմն ոչինչ հասկացողություն չունիս մեր ազգի մասին: Ժողովուրդ ասացյալը բաղկանում է զանազան առանձին առանձին մարդկերից, այնպես չէ՞:

«Անտարակույս»:

— Ուրեմն ժողովուրդը խոսելու համար, հարկավոր է, որ այդ առանձին առանձին մարդիկը միմյանց մոտենան, խորհուրդ կատարեն, և յուրյանց մասնավոր ձայները, դեպի մի ամբողջ հավաքելով, լսեցնեն որպես մի հասարակաց ձայն, այնպես չէ՞:

«Ամենևին այդպես»:

— Բայց դու տեսա՞ր, երբ և իցե քո կյանքում, երկու հայ, մարդուր խղճմտանքով և անկեղծ սրտով միմյանց մոտ եկած մի ազգային գործի համար, որի օգուտը անմիջական հարաբերություն չուներ նոցա անձնական շահախորությանը: Տեսա՞ծ բան է հայերի մեջ բարոյական մտավորություն, կա՞ հայերի համար մի սուրբ առարկա, որի անունով ամենայն երկրորդական պատրուվիչներ հետ դնելով բարեկամական ձեռք պարզնեին միմյանց: Ախ, պարո՛ն, երևում է, որ դեռ անփորձ ես և երիտասարդ, արյունդ տաք, ինչ ասես մտածել է տալիս, առանց կշռելու այն հանգամանքը, որոնց իրավլորվիչներից կախ էր այդ գեղեցիկ գաղափարների իրագործությունը: Իմ այս մտերիմը չեն սպիտակացել քրտաղացի դռնում, այլ ժողովրդի մեջ. և ես մտել եմ ժողովրդի ամեն մի կարգի մեջ, սկսած հետին աղքատից մինչև երևելի պարոնը: Տարու մեջ, ես տեսանում եմ շատ տեսակ հասարակություններ: Ամեն մի թաղումի, կիրակամտի կամ այլ այսպիսի բաների ժամանակ՝ ըստ մեծի մասին մի տան մեջ հավաքված են լինում երեսուն, քառասուն և երբեմն հիսուն կամ վաթսուն հոգի: Այդ տեղերում լինում են շատ խոսակցություններ, և

այդպիսի տեղերում կարելի է ճանաչել ժողովրդի ստույգ բնավորությունը։ Նա այստեղ ազատ է, չէ հավաքվել պաշտոնական խորհրդով, որ միտքը փոքր ի շատե լարված կամ նախապաշարված լինի, չէ սերտել խոսելիքը, ինչպես պաշտոնական ժողովների ժամանակ. բացի սորանից, նա անվամբ է համարում այն բոլոր խոսք ու զրույցը, որ լինում էին այսպիսի տեղերում, և այս պատճառով ևս ցույց է տալիս յուր հոգու միջինը ամենայն միամտությամբ, և խելացի կամ զննող մարդը, որ կամներ, շատ բան կարող է իմանալ այսպիսի ժողովներից։ Իմ կոչումը և պաշտոնը այնպես է, որ ոչ որ արժան չէ համարում խոսել իմ հետ. աղախինները կամ սպասավորքը զրվելով տալիս են ինձ մի բաժակ արաղ, կամ առաջս դնում են կնբակուրը. շատ անգամ տեսել եմ, որ բաժակը կամ ամանը, որ ես գործ էի դրել, խակուլն կոտրում էին, որպես թե նա պղծվել էր։ Այսպես լինելով իմ դրությունը ժողովրդի մեջ, ինքս ոչինչ չխոսելով հարկադրվում եմ ականջ դնել ուրիշների խոսածին։ Միանգամ մի տան մեջ հավաքված կային մոտ իրր իննսուն հոգի, կիրակամուտ էինք կատարում մի հանգուցելու։ Այդտեղ սկսվեցավ մի խոսակցություն հասարակաց և մտանավոր խնդիրների վերա, որ տևեց ամբողջ երեք ժամ։ Բայց չկարծենք, որ իննսուն հոգին ևս խոսում էր, քանզի գործը իննսունին ևս վերաբերվում էր։ Այնտեղ երեսուն հոգու չափ հետին դասակարգից, այսինքն չունևորք, կային, որոնք ոչ լեզու ունին և ոչ բերան, ձուկի նման մունջ են։ Այս դասակարգը այրկնշտ է, և գիտելով յուր աղքատությունը, որովհետև խոսելու կամ բանի մեջ խառնվելու իրավունքը շատ կամ սակավ կարողության տեր մարդն ունի, ոչինչ չէ խոսում, քանզի և խոսել ևս չգիտե, ինչպես նաև շատերը.... և թե ի՛նչ բանի վերա խոսում էին, նույնպես չգիտե. նորա խելքը չէ հասանում այդպիսի բաններին։ Նա ապրում է քաղաքի մեջ յուր չքավորությամբ և հույս ունի հարուստների վերա, որ կհոգան քաղաքի բոլոր պիտույքը։ Այսպես ահա, իննսունից երեսունը դուրս եկավ, մնաց վաթսուն։ Բայց այս վաթսունը ևս չէ խոսում։ Վաթսունի մեջ կան քառասուն և հինգ կամ հինսուն միջակ մարդիկ, որոնց սովոր է հարուստի ներկայությամբ խոսել, կամ հրաժարակել յուրյանց կարծիքը. պատճառ, միանգամ հավատացած են, թե կարծիք հայտնելու իրավունքը պատկանում է միայն պարոններին, այսինքն նոցա, որ շատ արծաթ ունին։ Միջին դասակարգի մարդիկը, եթե հավաքվին մի այնպիսի տեղ, ուր չկան հարուստ մարդիկ, այնտեղ խոսում են, քննում են և շատ անգամ ավելի առողջապար մտածում են, քան թե մի ութսուն տարեկան ջախջախած ծեր, որ միշտ կանչվում է ժողով, որովհետև հարուստ էր։ Այս կերպով մնացին մեջ տեղում տասն կամ տասն և հինգ հոգի հարուստը, որ խոսում էին։ Բայց պիտի այս ևս ասել, որ այս մարդիկը ևս բաժանվում են զանազան դասակարգ։ Մեր կամ հին ժամանակներից հարուստ տան ժառանգը, ավելի պատրաստ է քան թե մի երիտասարդ կամ նոր հարստացած մարդ. այս պատճառով ևս, նորա կարծիքը կամ խոսքը ավելի մեծակշիռ է։ Սակայն այս է բանը, որ

այդ ծերերը անցուցած լինելով, ինչպես ևս, յուրյանց ժամանակները, ամենայն բանի վերա նայում են այն աչքով, ինչ աչքով նոցա հայրերը նայում էին, կամ ամենայն բան չափում էին հին չափով։ Այժմյան ժամանակիս տղայքը բոլորովին ուրիշ կերպով են նայում և հավան չեն ծերերի կարծիքին։ Մերերը պահանջում են, որ ամենայն բան կամաց կամաց լինի, համբերությամբ լինի, առանց մի մարդու անձնասիրության մոռնալու, բայց երիտասարդքը պահանջում են, որ վճռաբար կատարվի ամենայն գործ, հետ գրվի դանդաղկոտությունը և չխնայվի մի մարդու անձնասիրություն, եթե այդ մարդը յուր անձնասիրությամբ կապում էր ազգի կամ քաղաքի հառաջադիմության ընթացքը։ Խոսակցության ձայնը սկսանում է այնուհետև բարձրանալ, հասանում է մինչև միմյանց պատվի ձևնամերձ լինելու. ծերը ազդում է երիտասարդին, դու դեռ տղա ևս, ի՛նչ մարդ ևս որ մեջտեղ ևս ելել, քո խելքի՞ բան է այսպիսի բաներին վերա խոսել։ Երիտասարդը առավել է զայրանում և պատասխանում է. ժամանակը մեզ է պահանջում, և մեր ավելի լավ ճանաչում ենք նոքան քան քեզ դուք, ձեր ժամանակը անցավ, հներիք է որ ձեր պնդանքի անխնել կարծիքները երեսուն քառասուն տարի պաշտվեցան քաղաքի կամ ազգի վնասի համար։ Մյուս մեռացող հարուստներից ոմանք նույնպես խոսում են յուրյանց մեջ։ Նոցանից մինը կամ երկուքը պահում են երիտասարդի կողմը, մյուսքը պաշտպանում են ծերի կարծիքը. բաբևընկյան խառնակություն։ Բայց այս բոլորը չէ դեռ ևս. այնտեղ երկու երեք մարդ, միօրինակ պատասպարում են երկու կողմը ևս, այլև արտաքին կերպով ցույց են տալիս, որ ոչ մի կողմին կուսակից չեն, բայց եթե առանձնապես պատահեն երիտասարդին, գովում են նորա կարծիքը և համաձայնում են նորա հետ. իսկ եթե բախտը բերե պատահել ծերին, նորանից ևս չեն հրաժարվում, նորա ասածները ևս ճշմարիտ են, և այս պարոնները պատրաստ են ատորագրությամբ հաստատել ծերի խոսքերը։ Այս տեսակ չեզոքական մարդիկը այսպես մոտածում են. թե հարկավոր չէր հասարակաց օգտի համար առանալ անձնական թշնամիք. ինչ որ պիտի մոռանն հասարակության դանձարանը, միթե օդո՞ւտ ունի նոցա անձնական շահասիրությանը, ուրեմն ի՛նչ հարկավոր է ամեն մարդու հետ կռիվ վեճ բանալ։ Քաղաքը մինչև այժմ կառավարվել է, այսուհետև ևս կկառավարվի, մենք մեր կյանքի շատ մասը անցուցել ենք, թող մեր որդիքը ինչ կամին առնեն։

Ահա քեզ, պարոն, մի անշուք, բայց ճիշտ պատկեր մեր հասարակությանը. այսպես լինելով բանը, ո՞ւր կմնան ձեր պահանջողությունքը և խոսքերը։

Շատ սխալ տպավորություն գործեցին այս բաները Կոմս էմմանուելի վերա. նա, որ քաջ գիտեր այս բոլորը, վերստին լսում է մի ժամակոչի բերանից…

Արևը հետ քարշեց յուր վերջին ճառագայթքը և ժամակոչը երկու ձեռքը դնելով գերեզմանի ափերին, դուրս եկավ նորա միջից։

— Հերիք է այսքանը,— ասաց նա ինքն յուրյան, բայց այնպես, որ լսեց Կոմս Էմմանուելը։

«Ինչպես թե հերիք է, հապիվ մի և կես կանգուն կա փորածի խորութիւնը, այդպիսի գերեզմա՞ն կլինի» — պատասխանեց Կոմս Էմմանուելը։

— Ի՛նչ է, մտածում ես, որ դուրս կփախչի մեռյալը, այդ երբեք լինելու չէ։ Քահանան աննշարժ եղիցի ասելով խաչի կնիքը դնելուց հետո, նրան մի կանգուն ևս խորութիւն չունենա փորածը, մեռյալը չէ դուրս գալու։

«Ես գիտեմ, որ մեռյալը չէր դուրս գալու, բայց փոքր հողի տակ ծածկելով մարմինը, երբ որ սկսանում էր փտել, յուր վերլուծութիւնի միջոցին, օդը կապականեն անտիտան արտաշնչութիւնքով, որից հառաջանում են դանազան վատ հիվանդութիւնք։ Նվ այս է պատճառը, որ օրենքը ևս հրամայում է երեք կանգուն խորութիւնով փոքել գերեզմանը, այս պահանջում են առողջապահական կանոնքը»։

Բայց ժամակոչը ուշադիր չնդամ այս խոսքերին. նա յուր կյանքում չէր փորել այդպիսի խոր գերեզման։

Ը

Կոմս Էմմանուելը, սխրութիւնքով լցված, բաժանվեցավ մահու քաղաքութիւնի ապատավորից, և սկսեց դիմել դեպի պարսպի դարպասը, որ դնա յուր օթևանը։ Նա մտածում էր, թե արդարև հայոց ազգը թնդանաև քանի հազար տարեկան, այնուամենայնիվ դեռևս մի խակ տղա է և գուցե երբեք դուրս գալու չէ այս տղայութենից։ Այսպիսի ազգերը, ասում էր ինքն յուրյան, կարոտ են, որ, ինչպես անչափահաս որբեր, գտանվին հոգաբարձութիւնի տակ. բայց հայոց ազգը չունի հոգաբարձու և գտանելու չէ երբեք։ Ուրեմն ի՛նչ պիտի լինի այս ազգի վերջը, շարունակում էր նա մտածել. անտարակույս այն, ինչ որ լինում է առանց հոգաբարձուի մնացած անչափահաս որբերի վերջը....

Այս խորհրդածութիւնքը, բայց տխուր և արտասուի մտածութիւնքը պատցուցին Կոմս Էմմանուելի սիրտը, և արտասուքի երկու խոշոր կաթիլներ դուրս թռան նորա լցված աչքերից և թաղվեցան գետնի փոշու մեջ։ Ա՛յո՛,— ասաց նա, նայելով յուր արտասուքի ընթացքին,— թնդանաև ասում են, որ արտասուքի թափվիլը թեթևութիւն է տալիս մի վշտահար սրտի, բայց դուք թաղվելով այս ոտնակոխ փոշու մեջ, տեղիք եք տալիս որ ավելի տխրութեան ամպեր պատեն իմ սրտին։ Դուք ցույց եք տալիս ինձ, որ տարտղիր ընկած ազգի կամ մանավոր մարդու արտասուքի հաշար ևս չկա մի ազնիվ առարկա, որ ժողովեր այս ազնիվ հյութը, որ միմիայն հոգու ներքոծելուց դուրս է գալիս մարմնից։

Այո՛, երանի՜ այն անբախտին, այն ինվալիդին, որ մնաց յուր տեղում, գոնե նորա արտասուքը կիմափին հայրենիքի ավերակների կամ յուր անցած կյանքի հիշատակարանների վերա, որ սուրբ են և միշտ պիտի սուրբ մնան քնքուշ և հասկացող սրտի համար։ Բայց վա՜յ այն ազգին, այն ժողովրդին, որի արտասուքի համար օտար փոշուց ավելի շկա մի ուրիշ ազնիվ ընդունարան։

«Ի՛նչ այդպես գլուխներդ կախած գնում եք, պարոն», ասաց մի ձայն։

Կոմս էմմանուելը վեր բարձրացրեց գլուխը և ձեռքի ինչկինակով սրբեց աչքերը շտապով, բայց, ծածկել կամենալով յուր արտասուած լինելը, ձևացուց, որպես թե սրբում էր ճակատի փոշին կամ քրտինքը։ Նրբեմն, արտասուքներ, որ հառաչանում են հոգու խիստ մոտիկ, խիստ սիրական, բայց օտարի համար գաղտնի պատճառից, չէ պիտու երևին ուրիշին. սա իրավունք շունի նկատել այդ նվիրական գաղտնիքի ազդեցության հետևանքը, այդ մի սուրբ բան է և պիտի ծածուկ մնա միշտ ուրիշից, որ մի գուցե օտարոտի խորհուրդների տեր լինելով, անարժանաբար տեսաներ մի այսպիսի մաքուր զնդումն սրտի։

Կոմսի հետ խոսողը էր մի տիրացու։

— Դո՛ւք եք,— ասաց Կոմսը փոխված ձայնով։ Նորա կիրքը նստած չէր դեռևս, և արյունը ալեկոծվում էր սրտի և ջոքերի մեջ։

«Այո՛, ե՛ս եմ», պատասխանեց տիրացուն։ «Երևի, օդի լավության պատճառով դուրս եք եկել ման գալու, շատ լավ եք արել։ Մի միայն նրշանկություն, որ կա մեր քաղաքում, դա օդի մաքրություն է, մանավանդ առավոտները և երեկոյան ժամանակ»։

— Ստո՛ւյգ է, ես ևս նկատում եմ այդ,— պատասխանեց Կոմսը, բայց այնպիսի սառնությամբ, որ հայտնի ցույց էր տալիս, թե ծանրություն էր յուրյան, խոսել այն բոպեին օդի վերա։

Արդարև, երեք մարդու կյանքը առնում որպես մի բեկ, ապա ուրեմն, շատ խայտառըղետ և պիտակ մի բեկ է նա։ Այդ կարճ կամ երկայն շղթայի օղերը ունին յուրյանց վերա դանագան դրոշմներ, ոմանք ուրախության, ոմանք տրտմության, ոմանք հուսահատության. մի խոսքով, հոգու բոլոր զգացողությունքը, բոլոր հոգեբանական երևույթքը։ Կյանքի մեջ կան և այնպիսի բոպեներ, երբ մարդը պիտի խոսե միմիայն յուր հետ, յուր հոգու հետ, յուր աստուծո հետ։ Այդպիսի նվիրական բոպեներում մարդը հրաժարվում է նյութական աշխարհից, նա մոռանում է յուր շրջակայքը, նա դուրս է գալիս մարի ծովի վերա և այդ ճանապարհորդությամբ ապրում է այն բոպեին։ Այդպիսի բոպեներում, մարդու բոլոր զգացողությունքը և կարողությունքը կենտրոնանալով մարի գործարանի մեջ, ուղեղի վերին կիսաբաժինների մեջ, մյուս ջղերը և գործարանքը, ասես թե դադարում են ներգործելուց։ Աչքը, տեսողական գործարանը, համարյա թե սառչում է, և այն բոպեին նորա վերա ընկած ճառագայթը մի աստղկայից, չէ հասանում դեպի ուղեղը. ականջը, լսողական գործարանը,

նույնպես, և նրա առաջինը կամ երկրորդը հասուցաննն մի կիսատ թերատ տպավորություն դնպի ուղեղը, սա նագ է և չէ կարող ընդունել տպավորությունները, մինչև մի դղրդնցուցիչ խթան չներգործե նորա վերա։ Բայց, սատանայական, այնպես է պատահում, որ նրա ոչ միշտ, գո՛նե շատ անդամ, այսպիսի քաղցր րոպենները ընդհատվում են այդ րոպենների բնավորության մի բոլորովին հակառակ հանդիպմամբ։ Սա մի անախորժ զգացողություն է, որ մարդը ձգտում է համարյա թե մի տեսակ կատարության մեջ. և ամենաախրելի մարդը սատանա է թվում այսպիսի ժամանակ։

Բայց Կոմս Էմմանուելի սառն ընդունելությունը ոչինչ ազդեցություն չգործեց տիրացուի վերա։ Նա սովորած չէր օդից խոնավություն ընդունել. դրա հակառակ, այն տեսակ մարդկերից էր, որոնց չրհնդնղ է հարկավոր խոնավություն զգացուցանելու համար, անձրևը փոքր է։

— Ես ևս դուրս եմ նկած ման գալու,— ասաց տիրացուն, նրա կամիք, գնանք միասին։

Թևակոխ շատ ծանր էր Կոմսին ընդունել այս հրավերը, բայց մի փոքր մեղմացնել էր արդեն սրտի կրակը. բացի սորանից հիշեց նա յուր սովորական կանոնը, թե չէ պիտու արհամարհել և գայթակղեցնել մի խելոք մարդ, որի պատահական դրությունը նախանձելի մի բան չէր աշխարհի երեսին։

«Գնանք, գնանք», պատասխանեց Կոմսը, «բայց այսպես.... ուղի՛ղ. պատճառ, ես այժմ վերադառնում եմ դնպի տուն և միտք չունիմ երկար միջոց ման գալու»։

Սկսեցին գնալ։ Երկու կողմից ևս պահվում էր մի կամակոր լռություն։

Կոմսի միտքը նմանում էր մի ծովի, որը երկար ժամանակ մրրկից ալեկոծվելով, չէ կարող իսկույն հանդարտել, թեև դադարել էր մրրիկը։ Մրրկից հետո ևս դեռ բավական ժամանակ վազում են կատաղությամբ դնպի ծովեզերը փրփրած ու դնպի վեր ցից ցից գագաթներով սուր անկյունավոր ալիքները, մինչև որ ծովի մրրկից առացած ուժը թուլանա և ալիքների սուր և կոնաձև գագաթները առանալով ավելի կամաշտաձևություն՝ մոռնան հորիզոնական մակերևույթին։ Բայց այս բանի համար հարկավոր է երկար միջոց. տիրացուն հանդիպեցավ Կոմսին, երբ նորա միտքը հասել էր խռովության մինչև հնարավոր ծայրը. այս պատճառով Կոմսը չէր կարող խոսել այլ բանի մասին, քան թե նյութ էր եղած նորա ամբոխմունքին։ Տիրացուի լռությունը հառաջանում էր նորանից, որ չգիտեր թե ինչպես խոսք բանա և ինչ բանի համար. մանավանդ յսած լինելով յուր ուղեկցի անունը, հարկավոր էր համարում զգուշություն գործ դնել, որովհետև Կոմսը համարված էր այդ քաղաքում, որպես մի վտանգավոր մարդ։

Տիրացուն մոածեց մոածեց և վերջապես ուժ և սիրտ առանալով ասաց.— Պարոն, դուք ի՞նչպես եք վերլուծում վույս զվարրը»[6]։

Ահա թեղ մի ուռումնական խնդիր, որ արժե tartarus emeticus*. ինձ հարկավոր չէ մի խոսք ևս հավելացնել. ինքյանք ընթերցողք կարող են հասկանալ խեղճ Կոմսի դրությունը։ Ի՛նչ պիտո է ասնել։ Ընկել էր միանգամ։

«Երկնաւոր, անմահ աստր և կենարար Հօր աստր փառրի, զոսրի յոյս — Յիսուս Քրիստոս», պատասխանեց Կոմսը, ահ քարշելով սրտի խորրից։ Ինքը ի՛նչ բաների վերա էր մտածում, ի՛նչ օդնեն ամրացներ էր շինում, սիրացուն, որ և քառասունի չափ աշակերտ ուներ, ի՛նչ բան էր հարցանում։

Տիրեց գարձյալ լռությունն։

Տիրացուն առաջարկեց մի այլ պատմական խնդիր։

— Գարոն,— ասաց նա,— Առաքել պատմագիրը, Քյոռ-Օղլուն և նորա ավազակ ընկերները անվանում է Ջալալիք, այս մարդիկը հա՞յ էին՞։

«Մի՞թե չգիտեք, որ մահմեդականք էին նորա», պատասխանեց Կոմսը։

— Ապա ո՛րտեղից է հայերի մեջ Ջալալյան մականունը. ես այնպես էի կարծում, որ այդ մունները հետաքրքում են Ջալալիներից։

«Նշանակում է, ասնիվ ծագում եր վերագրում նրանց այդ մուններին։ Ես չգիտեմ այդ մուների ծագման պատմությունը, սակայն հավանական է, որ Ջալալիների ժառանգները չեն դրա, ինչ որ նոցանից Բահան արարիչից Կոստանդնուպոլիս գալով միացել էր Քյոռ-Օղլուի հետ, երբ սա գնացել էր այնտեղ Տևմիրճի Օղլուի ձեռից Ալվաղը — յուր սիրական մանկավիկը — ազատելու, որ յուր կարդով մի փոքր ժամանակից հետո նույնպես Ջալալի դարձավ»։

Դարձյալ վերջացան սիրացուի երկրաչափական խնդիրները, դարձյալ լռությունն։

Փաղոցը, որով գնում էին այս երկուքը, պատարկ էր բոլորովին մարդերից։ Կովերը նախորից ուշ վերադառնալով բարձրացրել էին մի քանձր փոշի, որ քամի չլինելուց բավական երկար մնում էր օդի մեջ, որ միմիայն դողում էր այս անասունների բառանչելուց։

Այս և այն բաց պատուհաններում երևում էին կանանց և աղջիկների կերպարանքներ, որ մի ձանձրալի միօրինակությամբ անշարժ նայում էին այս երկու գնացողների վերա։

— Մայրի՛կ, մայրի՛կ,— ասաց դուստրը յուր մորը,— ահա այն մարդը, որ նոր է եկել, երևի Բև գարձյալ գնում է Մահտեսի Բռվմասի տուն. առավոտ ևս այնտեղ էր, ես տեսա նոցա տանից դուրս գնալը։

«Շատ կարելի է», պատասխանեց մայրը. զգուշ նշանվելու դիտավորություն ունի, Մահտեսի Բռվմասի Մարիամը գեղեցիկ աղջիկ է և վարժված, ո՛վ գիտե....

Հանկարծ, այս միջոցին, Կոմս էմմանուելի ականջին հասավ մի

* (Լատ.) Գիննարի փսխեցուցիչ, ործկագնդ. Եմք.։

Ֆորտոպիանոյի ձայն... Ուշադրութիւնս ականջ դնելով հասկացաւ որ ածում էին «Տէր, կեցո՛ զու զՀայս»[*] երգի եղանակը։ Տիրացուն նկատեց, որ այս ձայնը ապաւորութիւն գործեց Կոմսի վերա, վասնորո և ասաց. «Ես իմանում եմ, թէ ո՛վ է դորա ածողը. ահա՛, այն ապիտակ տանիցն է լսվում... Մահտեսի Թովմասի տանից, նորա զաւակն է ածողը»։ Արդարև մի վայրկենից հետո լսվեցաւ մի քնքուշ և թարմ կանացի ձայն, որ երգում էր.

«Աջովդ համատարած
Ազգ մեր արտասուալած
Փոյթ գումարեա
Յաչխարհ Աւարատեան,
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեպհական
Օտար ազգաց»։

Դարձյալ մի սխրութեան ամպ անցավ Կոմս Էմմանուելի երեսի վերայով։ Այս խեղճ մարդը դարձել էր մի ամենազգայուն ծանրաչափ—բա-

---

[*] *Այս երգը առաջին անգամ երևեցավ Կալկաթայի Ազգասէր անունով օրագրի մէջ, որ հրատարակում էր Հովհաննեական հիշատակի արժանավոր Մեսրոպ Դավթյան Թազիադյանց ուսումնական ազգասերը։ Այս երգը քե յուր բովանդակութեան, քե յուր բանաստեղծական վսեմութեան հորինվածքի և քե հայոց ներկա վիճակի ճշգրիտ պատկերը հանդիսացնելու և գորա բարվոքելու համար հարկավոր եղած հնարները խնդրելու մասին, արժանի է ազգի մանավոր ուշադրութեանը։ Քե հնար ունենայի ես, ամենասուրբ պարտականութեան կդնեի ամեն մի հայի վերա անգիր ուսանել այս երգը։ Մինչև այսօր իմ կյանքի մէջ չեմ տեսած կամ լսած մի այսպիսի երգ. ահա բուն ազգային երգ։ Ես՝ ոչ Թազիադյանց. խաղաղութի՛ւն քո հոգուն, չարչարվեցար, չարչարվեցար ազգի լուսավորութեան համար, բայց չհաջողեցավ քեզ, որպես և շատերին, տեսանել քո մարդարեական ազգու բարեզութեան պաղաքերութիւնը մեր ազգի մեջ։*

«Արշալոյս Արարատյան»[10] *Զմյուռնիո պատվական և անգրանիկ օրագրի 1858 թվականի հոկտեմբ. 31, ուրբաթ, 583 համարի մի հոդվածը արժանահիշատակ Թազիադյանցի մասին, արժան եմ համարում դուրս գրել այստեղ բառ առ բառ, իմ ծանոթարանութեամբ հանդերձ։*

«Եւս յարգոյ հրատարակիչ Արշալուսոյ Արարատեան,

Յարգոյ պարո՛ն,

«Տխրութեամբ ծանուցանեմ, որ Մեսրոպ Դավիթ Թազիադեան, վաղաժամօրն յար-«գութենանդ գրաւեալ է ի քանզագին կենաց իւրոց ի 10 Յունիսի այսր ամի ի Շիրազ «քաղաքի, յորոյ վերայ ի ներքոյ գրեալս սակաւատող բանսն խնդրեմ, շնորհ արարեալ «հաճիցիր հրատարակել միջոցաւ պատուական օրագրի ձերոյ, որով և շնորհապարտ «կացուցանել զձեր խոնարհ ծառայ Թազիոս ի. Աւետումեան։ Կալկաթա, 21 օգոս-«տոսի, 1858»։

Ահա հոդվածը, որ ուղարկում է պարոնը։

«Չէ մեր նպատակ գրել զվարս ազգասէրն հեղինակին, մանաւանդ զի չունիմք «գրաւական նիւթս առ նմին ձեռնարկ, այլ սակաւուք միայն յայտնել կամիմք զմասն «գործոց նորա, որք գրեն մեզ ծանօթս։

«Մեսրովբ Դաւիթ Թազիադեան ծնեալ էր ի Կարբի, որ յերեսան և սննեալ ի սուրբ «աթոռն էջմիածնի, առ ժամանակաւ Սրբազնասուրբ Կաթողիկոսին Ներսէսայ, ուր և

բոլորը ազգային բանների համար, որոնց և վերջինը, ամենամեծը ազգեցուցիչն էին դարձել նորա վերա։ Մի թոքեի մեջ ուղղելով յուր այլայլված դրությունը, ասաց,— ա՛ա՛, Մահտեսի Թումասի տանի՞ց, ուրեմն օրիորդ Մարիամն է ածողը։

«Ի՞նչպես. դուք դիտեք և անունը», հարց արեց տիրացուն. «դուք ճանաչո՞ւմ եք նորան»։

— Այո՛,— պատասխանեց Կոմսը,— նա այսօր առավոտ ևս այնտեղ էի, և օրիորդ Մարիամը ածեց իմ համար Գուտիչիու համր[11] անունով ողբերգության գնդեցիկ ներածությունը։ Ես չդիտեի, որ ունի նա «Տէ՛ր կեցո»-ի նոտաները, ապա ինչ ո՛չ, խնդրած կլինեի ածել այդ ևս, բան որում շատ սիրում եմ այդ տաղը։

«Ճշմարի՛տ է, լավ տաղը շատ լավ բան է։ Բայց իմ տաղարանի մեջ չկա այս, չնայելով, որ բավական հարուստ տաղարան ունիմ, չնայելով որ Բաղդասար Խալֆայի բոլոր տաղերը[12]. Ձիս ըո սիրոյն, Արիք որ երթամք, Գարունն է բացվեր...

Երգի կախարդիչ շարունակությունը ընդհատեց իմ տիրացուի բանաստեղծական քննությունը. լավում էր.

«Ենովագրեցաւ սարկաւագ Իրիք յամի 1823, եկն ի Հնդիկս յերիտասարդութենան հասակի և մինչորդութեամբ Տեառն Աբրահամու ծայրագոյն նուիրակին Սրուանձտեան, եմուտ ի «Համալսարանն եպիսկոպոսական ուսանել գԱստղաբերն, ուր քարգմանեաց ի մեր ելեզու և ի լոյս ընծայեաց գՀուգօ Գրովտիոսի Ճշմարտութիւն Քրիստոսական հաւատոյ գործ ընտիր։ Ետն ասկաւուց նլնալ անտի եկաց երրորդ վարժապետ ի մարգասէրական ընտրանի մերում»։

«Ապա գնացեալ ի Զուզայ կարգեցաւ գլխաւոր վարժապետ դպրոցի որ անդ, զամս երկուս։ Անտի չորս ի կոստանդնուպոլիս, շրջի վաստրանեցի քնդ Հայս և Պարսս և վերադառնայ միւսանգամ ի «Հնդիկս»։

Զարմանալի բան է. այս մարդու (Քաղիքոզյանցի) և Աբովյանի կյանքը շատ նմանութիւն ունին միմյանց։ Երկուքը ևս դուրս գալով էջմիածնից գնում են օտար և հեռավոր աշխարհներ և ուսանելով խոկուն վերադառնում են էջմիածին. ինչո՞ւ համար. մի դպրոց հիմնարկելու, սակայն լույսը ազգի մեջ տարածելու համար։ Աբովյանը կատարեց երկրորդ անօգուտ փորձը, որի առաջինը կատարել էր Քաղիքոզյանցը։ Սա վերադարձավ էջմիածին Հովհաննես կաթողիկոսի ժամանակին (1835—1840) և աղաչելով պաղատանքով, որոան միջնորդ և միաժին բարեխոս բռնելով կարողացավ որպես գլխավոր ուսուցիչ մտանել էջմիածնի դպրոցը։ Բայց ի՛նչ ուսուցչություն. ի՛նչ նշավ այս նոտան դուս չանցի հնականները։ Կարճ միջոցում ատացավ նա, ինչպես սովորական է հայերի մեջ, մի ահագին բազմություն թշնամիների, որոնցից գլխավորը էին Սյունհոդոսի պրոկուրոր Զորզանյանցը և ատենապետ Քարատաշյանցը։ Ի՛նչ պատճառությունը, ի՛նչ հալածանք բարձրացավ այնուհետև խնդե Քաղիքոզյանցի վերա։ Ցուրտ սննդի մեջ, փայտ չէր ատանում վառելու, ահա միևնույն այս վիճակին հասավ նորա թշվառությունը։ Ոչ ոք տար որտով արժան չէր համարում նայել դպրոցի և հետևաբար նորա գլխավոր վարժապետի կամ կառավարչի վերա։ Հովհաննես կաթողիկոսի իշխանությունը հասած էր վերջին ատիճանի թուլության։ Ութերյանց (այսպես անվանում էին էջմիածնեցիք այն ութն արհղանների, որ ապստամբվել էին կաթողիկոսից և բողոք էին գրել դեպի ռուսաց տերությունը) վճռական գործակատարությունը շվարեցուցել էր Հովհաննես կաթողիկոսը, և ամենամերձ եպիսկոպոսը, որը դեռևս բարերարված էին կաթողիկոսից, հարցաս-

«Առաքե՛ր ի բարձանց
«Ջհամակցութիւն կամաց
«Ի մերազնեայս,
«Զոմն ի մէնջ յարո՛
«...ազգի մերոյ,
«Տո՛ւր նմա ցուպ հուժկու
«Հովուել զմեզ»:

— *Չէ,— ասաց Կոմս Էմմանուէլը,— չէ կարելի, որ ես մի բոպէ չմտանեմ Մահտեսի Թումմասի տունը: Մնացեք բարյաւ. ներողութի՛ւն, որ չեմ կարող ավելի երկար ընկերակից լինել ձեզ:*

«Մ՛չինչ, ո՛չինչ», պատասխանեց տիրացուն կակազելով և բոլորովին մեքենաբար, առանց հասկանալու ասածի խորհուրդը:

Կոմս Էմմանուէլը մտավ Մահտեսի Թումմասի բակը:

Արդեն երեկոյան ժամը ինն էր համարյա, և շամանդաղը սկսում էր փոքր առ փոքր գետինը առնուլ: Գառարկ փողոցի մեջ լսվում էր մի բարձրաձայն երգեցողութիւն. «Յո՛ր քահանայն և ղեւտացին հանդիպանալ պանց արարին, աւա՛ղ ո՛հ....»

չէին ասրան, մեպետև ես երես բարեկամ և գործակից Քարտաշյանցը սկսել էր մի երկար ու ձիգ խոխ Ներսես առաչնորդի հետ, Լուսավորչական և Գրիգորյան, Սյունեցոց և Սիւնեցի բառերի մասին: Ներսես արքեպիսկոպոսը գրում էր ի Գ ր ի գ ո ր յ ա ն Հայոց Սիւնեցն, Քարտաշյանցը պահանջում էր որ գրե ի Լուսավորչական Հայոց Սյունեցոց: Ուրիշանից չոկ ուրիշ այլ բաների մասին, մինչև որ բողոքել գնալի մինիսար Բլուդովը: Ներսես արքեպիսկոպոսը այս բողոքի ընդդեմ հասավ Բլուդովի հարցորդի կոմս Գեորգիևու ձեռքը: Շատ չանցավ սորա վերայով, Ներսեսը կաթողիկոսացավ, և Քարտաշյանցը իսկույն գուրս եկավ սյունհոգոսի գործութենից, ինչևիցե, Ահա այսպիսի մի ժամանակում կացավ Բաղիշացյանցը էջմիածին: Վերջապես անսանելով, որ ոչինչ հնար չկար մնալու, ստիպվեցավ վերսին գուրս գնալ Ամոսից:

Մի փոքրիկ անցք, որ պատահում է սուրն այս միջոցում, ավելի հետքիս պատկեր և տալիս Բաղիշացյանցի վատ աշխուժի մասին:

Վերջին անգամ գնում է Հովհաննես կաթողիկոսի մոտ հրաժարական ողջույն տալու: Վեհարանում գանվում են նրան, հին ժամանակներից կաթողիկոսին ընծա ուղարկված ճախարակյա մարմարիոնյա թրամաններ: Մոցանից մի փորրը և գեղեցիկը, կաթողիկոսի սարկավագը չինել է թանաքաման: Բաղիշացյանցը անսանելով այս փոխարկութիւնը թրամանի գնալ թանաքաման, անպատրաստից ասում է հետևյալ ոտանավորը:

«Եթէ բիաման, բանահաման
Դարձնալ նոնս այս Վեհարան,
Չի՛նչ այլ ինչ յոյս ասոնք մնալ
Մեսրոպ Դարբնան Բաղիշեանց»:

«Յամի 1845, յամանան օգոստոսի օժանդակութեամբ Արարատեան ընկերութեան «սկսաւ հրատարակել զԱզգասէր լրագիր. ասիայն գրաւումն ի կենաց միոյ և ժամերգու«թիւնը միւսոց ընկերացն բակտնցին զընկերութիւնն վազվազակի: Բայց նոանց հանգու«ցելոյս ոչ շիջաւ. այլ շարունակեաց գոյագրութիւնն լրագրին մինչ ցամէն 1852 ամի: Թէ «որքան վատ էր նոանց նորա յայտնիսի գործ, և որքան մեր յաչխատութենան, գործք իւր «ինքնին յայտնեսցեն քաւր: Զի ի միջոցի նոցին ամաց սակաւուց քաց ի տպագրութենէ «Ազգասէր լրագրին և ի կառավարութենէ առանձին գպրոցի իւրոյ, ի լոյս ընծայեաց և

Այդ ախթացուն էր, որ տագնապ մասին խոսելուց ոգեորվելով ցույց էր տալիս անմարդագած փոդոցի պատերին յուր նրաժշտական բանաթյուր։

Այստեղ հարկավոր է չմոռալ առանց հիշատակի այն, որ մյուս առավոտը, որի օրամտի մասին խոսեցի, պաշտոնական յուր էր այդ բաղաքի պատասխանի բնդունում, ին կոմս Լմմանուելը կամի նշանվիլ Մահտանի Թովմասի դստեր հետ։

Մայր ու աղջիկ, որոնց մասին հիշեցի վերևումը, պատուհանից անսկ էին կոմսի մատանելը նոցա առաջ։ Հայերի մեջ մի անառոտ բան չէ, մանաւանդ կանանց մեջ, այսպիսի հիմքերով դրսական բան խոսել։

ԻԹ

Մահտանի Թովմասի տանը կային շատ հյուրեր, արք և կանայք, երբ ներս մտավ կոմս Լմմանուելը։ Ին փորրիկ հետս կծանոթացնեմ իմ ընթերցողը Մահտանի Թովմասի տան հետ, այժմ թողնե՛ք, որ չկրատնեմ բանի թելը։

«զկնատպոյ գրնաս յօրինեալս յիւրմէ։ Այրրևնատաե, Գասաթատակութիւն օրհուդաց — «Հատ, Հանապատհուդութիւն ի Հայս, Գատմութիւն Գատից, Սօս և Սօնդիպի, բանատանդծութիւն չափնալ, Վատանիկ — ատնդծատրանութիւն արձակ, և բնրատկանութիւն համառօտատ։

«Եւ Յարգմանեալս։

«Առակի Գատից. Առաչնուդ մանկանց և Վարդիս։ Թողնալ զոգագրութիւն այլոց «վինչատատն մատանից, որը ընդ վնրակացութինամբ իւրով ոգագրնցան, ունի և զայլ «գործս Յարգմանեալս և ի յոյս ընծայնալս ատս, նախ քան զկազմիլ Ընկերութնան «Աբարատեան. որը են վնրայինալ Գրովմիտն, Դիւցարանութիւն, Գաղնատին — Ռ. Հնդրնալ — չափնալ, և Գատմութիւն հին Հնդկաստանի։ Ունէր և զայլ գործս բանատտեղծատկան և զօրագիր մնացնալ ճանապարհորդութնան իւրոյ, զորս ոչ ժամանեալ ի «լոյս ընծայել, ատրաւ ընդ իւր, և որը Հասցնե՛ արգնօր ի Քուզայ ընդ այլոց մատանդնից, Ին ի Շիրազ անդ անհնա եղիցին, չկարնմ ամենեին գուշակնլ։

«Մնաք ի վախճան 1857 ամի, Հիւանդագին և տխար ևլ ատի վնրագառնալ ի Քու«զայ և զմնացեալ աւուրս իւր նուիրել գատախարակութնան մանկանց ազգիս, և Հատնալ «ի Շիրազ գրասի անդ չագգօգուս կնեաց իւրոց ի 10 Յունիսի այսր ամի ի Հատակի իրրև «36 ամաց. կտակնլով գՀագարատաւս մատանս, պատկանեալս Ին՛ ինքեան և Ին՛ «Աբարատեան Ընկերութնան, Սրբազան ատաչնորդին Սրբոյ Ամենափրկի Վանաց, որ ի «Քուզայ, ուր և Հատնալ իսկ են, և զայլ ատացուածս իւր քնատանեաց իւրոց, որը բնակին «ընրևան բազարին։

«Ին՛Ն չարդի լինէր գրագիտութնան և ի միջի մերում Հարիւր մատամբ չափ նւրա«տպատց, աչխատութնամբ տորա չոյժ ատնչի լինէին բան որը նգնեն. զի վճռնալ նմա «զրաժնիցս, բնական աչխոյժ նուանդնան նորա, որ նատնալ էնոյր զէջս բազատա խիտա «զդնրութնամբ և քնտիր նայկարատնութնամբ ի մէկոջի ատիաւ ժամուց առանց չնչնլոյ «զգացնս և գրատ մնտ։

«Շարժնալ ի տխրութննէ սրտիս, զնետագալ Ողբերգն նուիրնամ վանի Հոգւոյն այն«տնիկ, որ չուտատ նրկնային պատկին արժանի նգնալ, ատկս չարգնլոյն զատագանգն ատան «զդնալ ինրևան, չօդուտ և ի գատս նգլատց ի բոցս։

Կոմսը ներս մտած, չմտած, բոլորքրյան ամբոխվեցան, վեր կացան տեղերից և օրիորդ Մարիամը նույնպես դադարելով երգելուց և ածելուց, սկսեց ողջունել նորեկ հյուրը։ Կոմս Էմմանուելին շատ անախորժ երևցավ այս, բայց որում այնտեղ, ուր մտանում ես, որպես մի մոտ ծանոթի տուն, շատ անտեղի են արտաքին քաղաքավարական արարողություններ։

Կոմս Էմմանուելը բոլորին ողջունելուց հետո դիմքը դարձուց դեպի օրիորդ Մարիամը և ասաց.— Ես հատկապես ներս մտա, որ լսեմ «Տէր կենցաղ» բայց դուք դադարեցաք խնդրեմ։ Այժմ կրկնապատիկ եղավ իմ ցավը, նախ, որ ես չեմ լսում, երկրորդ, որ իմ անակնկալ ներս մտանելու պատճառով այս արդո հյուրերը ևս զրկվեցան այդ քաղցր երգի վայելքից, որ շատ դեղեցիկ երգում եք։

«Խնդրեմ, առանց հաճոյախոսության... ես ի՛նչ երգող եմ. այսքան հրապարակի մեջ, ամոթ է մինչև անգամ իմ պնդին երգել», պատասխանեց օրիորդը մի փոքր կարմրելով։ Բայց բոլորովին սուտ էր խոսածը. նորա կարծիքը յուր երգածի մասին ամենևին այնպես չէր, ինչպես կամեր հավատացնել Կոմսին։ Այս էր լավը, որ նորա առաջև կանգնողը ևս շատ խորվելու պատուղ չէր. նա ինքը մի բան արտի վկայությամբ ճանա-

---

Եվ դու Մեսրովբ, անգի՛ն Մեսրովբ,
Եվ դու այդպէս վազ ճանգեար.
Ի վշտալից աչխարճէս մեր
Յերանաւէտաճ ճեպեցար։
Վաստակեցար, այո՛, մարմինդ,
Այլ ոչ ճոգիդ. ես գիտեմ.
Անճմաճ ճոգիդ. միշտ աննկուն.
Միշտ վառվռուն, միշտ վսեմ։
Ափսո՜ս Մեսրովբ.— իմ պէս բազումք
Ափսոսացին այսուճետ.
Ճոգ ճոգի ազգիս փառաց
Նախանձաւոր իցէ եր։
Մնո՛ր, յետոյ սիրեմ զինզ
Այլ ասացին, այլ ոչ ես.
Ես սիրեցի զինզ կանխաւ,
Ազգասիրաւդ վկայես։
Ոչ ափսոսամ վասն ես ինչ.
Ի դու զերծար ի ցաւոց.
Զարդիճաչատ աւուրս մո
Ազգին ի սպաս զոճելով։
Որճան կացցէ լեզու Հայոց.
Որճան կացցէ և մեր գիր,
Գայծառ անուն իմ Մեսրովբիդ
Անմահանացի անխտիր։
Այլ ափսոսամ վասն ազգիս.
Որ ինչ պէս մարդ առ կորոյս.
Որոյ նման ճազուագիւտ է,
Հայիմ յոր կողմ և ի կոյս։
Զի բանաստեղծ, ի բնութենէ
Ուարէ միայն ծնանիլ.
Տալեալ կանխալն աբենստիս
Ո՞չ կարէ յայլ ժամանիլ։
Բռւ բանաստեղծ և ճարտասան
Միանգամայն յայտնեցար,
Բէև անձուկ էր ասպարէզդ,
Սակայն ոչինչ վերջացար։
Աչխարճանազ Սօս Սօնդիպի
Եվ ազգասէր լրագիր,
Բաւական են ի ճաստատիլ,
Զար ասացի, լիալիր։
Ոչ է ինձ ճարկ բունլ զամենք
Զգործ մատանցդ ճարտար,
Ժամանակաւ, գնդի իմ
Վկայեցէ և աչխարճ։
Բայց ե՛կ Մեսրովբ, ե՛կ ասա՛ ինձ
Ի՞մ ստ օտարս նաւս վազ.
Ո՞ր Հայաստան fո նայրենիք
Եվ ո՞ր Գարեգին Շիրազ։
Յոգրալս զինզ լամ և գիմ ազգ.
Վտարանդի ցան ու ցիր.
Ընդ ամենայն ոյրտս երկրի
Քան գԽոսրայէլ տարագիր.
Իմ ընտանեացս պատմութիւն
Կարծեմ ուղիղ օրինակ
Է իմ ազգիս, որ յայսքան դարս
Զարչարին տար օրինակ... և այլն
և այլն։

չնչուց և գնահատելուց հետո, հաղար պարկեշտություն, հաղար չքմեղություն չէին կարող փոխել նորա կարծիքը։

— Ամենևին զուր եք խոսում,— պատասխանեց Կոմս Էմմանուելը,— և ես չէի կարող երբեք երևակայել, որ դուք ընդունակ էիք հանել բերանից՝ երբևիցե, մի անարդար վկայություն ձեր մասին։ Առանց կկոծամոլության ասում եմ, դուք շատ գեղեցիկ երդում եք, և ո՛չ միայն ձեր, այլ և ձեր բարեկամների տան մեջ ես կարո՛ղ եք երդել, եթե մի խնջույք կամ մի բան պատահի։

«Շատ շնորհակալ եմ. բայց չեմ կարող ընդունել ձեր ասածները հալած յուղի տեղ, քանի որում ես ինքս նկատում եմ զանազան թերություններ իմ երդնցողության մեջ»։

— Ա՛, ա՛, ես այժմ տեսանում եմ, որ դուք կամենիք ոչինչ թերություն չունենալ երդելու մեջ, այդ այլ բան է. ես խոսում եմ համեմատաբար։ Այո՛, կատարելության ցանկությունը մի գեղեցիկ առաքինություն է և եթե դուք այդ աչքով նայում եք խնդրի վերա, ուրեմն թույլ տվեցեք ինձ ասել ձեզ իմ կարծիքը և խորհուրդը։ Ինչքան, այսօր առավոտ ձեր տան մեջ, և այժմ փողոցից լսելով, նկատեցի ձեր երգածը, ձեր կոկորդային լյա խաղը կարոտ է մի փոքր մշակության։ Եվ առ ժամանակ ես խորհուրդ չեմ տալիս ձեզ երդել այնպիսի բաներ, ուր շատ կային ցած խաղեր, այդ կարող է վնասակար լինել ձեր ձայնին։ Խնդրեմ այս ասածներս ընդունել, որպես մի բարեկամի խորհուրդ, և ոչ որպես պատվիր կամ խրատ. ես առհասարակ սովորություն չունիմ իմ խրատներով զբաղացավություն պատճառել օրիորդներին,— հավելացուց Կոմսը ծիծաղելով։

Այս վերջին պարբերությունը համարյա թե նույն խոսքերն են, որ Եվժեն Սյու ֆրանսիական հեղինակի «Թափառական հրեայի» մեջ խոսում է ինքը թափառական հրեան։

Սորանից հետո շարունակված բանի մի այլ պարբերություն հարակցություն չունենալով Բազիլյանցի հետ, հարկավոր չհամարեցի զուրս գրել։

Առհասարակ, թո՛ղ հաճի պարոն Ավետումյանը ընդունել իմ առ ի սրտե անկեղծ շնորհակալությունը այս հոդվածի մասին, որով կամենում է պատվել մեր քանքարավոր հեղինակի հիշատակը։ Շնորհակալություն և Աղշալույս պատվական օրագրին, որ յուր թերթերի վերա հասուց մեզ այս, թեև սխալ, բայց սրտերիս խիստ մոտ ծանուցություններ։ Ազաչում եմ Աղշալույսը, միչնորդ լինել իմ և պարոն Ավետումյանի մեջ, և իմ շնորհակալությունը հայտնել նորան նույնպես Աղշալույսի միչնորդությամբ։ Խորհուրդ այն է, որ հարգելի պարոնը միխիթարվի, լսելով, որ յուր ոգրացած Բազիլյանցի հիշատակը հարգելի է մեզ բոլորիս և մեն նորա գեղեցիկ հոդվածը զուր չէ գրված հայերի համար։

Ազաչում եմ և Ջուղայու Սուրբ Ամենափրկիչ անունով վանքի սրբազան առաջնորդը աշխատասիրություն հանձն առնուլ հոգաբարձու լինել, որ Բազիլյանցի գրչագիր մնացած աշխատասիրությունքը պահպանվին կորստի և ժամանակի երեսից։

Տավելի բան, հայերի անգրագիտության մեղքից հառաչացած մի դառն հեռանար, որ մեր հեղինակներից (հին և նոր) շատերի աշխատասիրությունը ծնանելով, այլ գեռևս հրապարակի լույսը չտեսած, գատապարտվում են գեղ ի մահ — գատապարտվում են որ վանական խցերի անկյուններում թաղվին փոշիների տակ և որդնակեր ու ցեցակեր ոչնչանան։

«Շնորհակալ եմ. ես ինքս բավական նեղություն զգում եմ ցած խաղեր երգելու ժամանակ, վասն որո իրավունք տալով ձեր դիտողությանը, կաշխատեմ օգուտ քաղել նորանից. սակայն այս է բանը, որ չեմ հավատում, թե կարող էի երբևիցե հասանել այն աջողակությանը, որ տանելի կերպով երգեի»։

— Ձեր անձին վերա հավատ չունենալը — ասել է անարգել յուր անձը. իսկ յուր անձը ինքը անարգողը կորուսանում է ուրիշներից հարգանք պահանջելու իրավունքը։ Գիտե՞ք այս, օրիորդ Մարիամ,— ասաց Կոմսը ծիծաղելով։

Օրիորդը շառագունեցավ և զգաց վիճի ավելորդությունը, տեսանելով, որ բանի տեղ չէ անցնում յուր կոտրատվիլը։

Մյուս կողմում, բոլոր հյուրերը կանգնած լսում էին այս խոսակցությունքը. երբ որ վերջացան, իսկույն բոլորքյան նատան յուրյանց տեղերը և Կոմսը աթոռը մոտ քաշելով Մահտեսի Թովմասին ասաց.— Օրհնած, եթե օրիորդ Մարիամը ուներ Ձեր կեցոյի նոտաները, ինչո՛ւ չասացիք առավոտ, որ մի րոպե ավելի հառաջ վայելած լինեի այդ երգը լսելու երջանկությունը։

«Առավոտուն չկար, և մի օտարոտի բան պատճառ եղավ, որ գնեցի երգարանը*։ Մի մարդ, այսօր առավոտ, ձեր քամակից ներս մտավ մեր տուն, լավ որ Մարիամը տանն էր, որ կարողացավ ֆրանսիարեն խոսել, ապա թե ոչ, անհնարին պիտի լիներ միմյանց հասկանալը»։

Կոմս էմմանուելը լարեց յուր ուշադրությունը այս պատմությունը լսելու համար։

«Յուդա է այդ մարդու ազգը», շարունակեց Մահտեսի Թովմասը, «բոլոր Սվրոպա ման է նկած, վերջումը պատահել է Պետերբուրգ, կարծեմ Մոսկվա ևս, այժմ ճանապարհի վերա անցանելով այս քաղաքից, բայց ոչինչ ծանոթ չունենալով, այլև սուուգած լինելով, որ այստեղ շատ սակավ մարդ կար ֆրանսիագետ, նկել էր մեր տուն, որ ինչ ասես բաների մասին խոսեր։

— Բայց նա ուսուի՛ պիտեր, որ ձեր տանը կա ֆրանսիագետ,— հարց արեց Կոմս էմմանուելը.— այս շատ զարմանալի բան է, հանկարծ, ոչ այն, հազարավոր ֆրանսիարեն չիմացող տուներից ուղղակի մի տուն մտանել, ուր խոսում էին այդ լեզվով։

«Ես ևս զարմացա, երևի այդպես պատահել է... ինչևիցե, խնդրեցի որ նատի. արդեն ժամը տասներկուան էր, իսկույն դահվն մատուցինք,

* Մի օրինավոր հայոց երգարան, առաջին անգամ տպվեցավ Պետերբուրգ պ. Գամառ-Քաթիպայի աշխատությամբ։ Շատ տաղերի նոտերը ևս տպած են քամակում։ Շնորհակալություն, պ. Գամառ-Քաթիպային. գուցե այսուհետև հայերի ուրախությունը կամ տրտմությունը հայտնող երգերը լինին ազգի սրտի և հոգու բղխվածք, և գաղտնին քրոջդուկի ևլվազի տաղերը երգելուցը։ Թեպետև պիտի ասել, որ մեր երգերը ևս մի նրևնլի բան չեն, բայց ինչ պիտո է առնել, ու ժամս չնզտածից լավ են, և կարող են գործ դրվիլ, մինչև որ դուրս գան օրինավոր ազգայինն բանաստեղծք։

խմենք և խոսենք երկար միջոց Մարիամի և իմ հետ (Մարիամի թարգմանչությամբ)։ Ինձ ասաց, որ շատ կցանկանար լսել մի հայոց երգ, փորձելու համար, թե ի՞նչ ազդեցություն կգործեր յուր վրա հայոց երգը. ես խոստացա լցուցանել նորա ցանկությունը։ Մի փոքր նստելուց և քաղաքի որպիսության մասին այս և այն տեղեկությունքը հարցանելուց հետո, գնալու ժամանակ խնդրեց ինձանից, թե երբ կարող էր դալ մեր տունն մի հայոց երգ լսելու համար։ Ես ժամանակ նշանակեցի էգուց առավոտ դարձյալ տասներկու ժամը. նա կարո՛ղ էր, դուք ևս շնորհ բերեք»։

— Մենք ուրախությամբ կգայի, բայց կարող չեմ, որովհետև այդ ժամին հյուր պիտի ընդունեմ իմ մոտ,— պատասխանեց Կոմսը։

«Ահա այս պատճառով գնացի գնեցի հայոց երգարանը, որի մեջ Մարիամս որոնեց որոնեց, այդ տաղից ավելի ազնիվը, ավելի հավանելին չգտավ»։

— Օրիորդ Մարիամը ցույց է տվել զորանով յուր ճաշակագիտությունը,— ասաց Կոմսը։— Ուրեմն այս անհրաժեշտությո՞ւն էր, որ կատարում էիր,— շարունակեց նա դառնալով դեպի օրիորդ Մարիամը։

«Այո՛», պատասխանեց օրիորդը։

— Չէ՞ կարելի, որ վերստին կրկնեք. ավելի լավ է. Repetitio est mater studiorum, ասում է առածը,— հավելացուց Կոմսը, ժպտելով։*

«Ինչո՛ւ չէ կարելի», ասաց խոսուն Մահանի Բուլմասը և նշանացի արեց դասերը, որ մոտ գնա ֆորտոպիանին։

Օրիորդ Մարիամը սկսեց ածել և երգել։

*Երգեցողության ժամանակ, մի բան շատ անախորժ ազդավորություն գործեց Կոմսի վրա, այդ էր, որպես հյուր նատած կանանց միմյանց հետ բարձր ձայնով խոսելը և ծիծաղելը, մինչև երբեմն երբեմն խափանելով ոչ թե միայն երգողի այլև ֆորտոպիանոյի ձայները։ Այս հառաջանում էր նորանից, որ իբրև ասիացիք ոչինչ հասկացողություն և համակրություն չունեին կանոնավոր երաժշտության հետ, այլև չէին հասկանում տաղի խոսքերը նորա լսվելի հնչության պատճառով**։*

Ցավելի է մեր ազգի դրությունը ընդհանրապես, բայց մասնավոր ուշադրության արժանի են հայ կանայքը։ Անդեմները բոլորովին անկիրթ և անդաստիարակ, համարյա թե ապրում են միմիայն բուսական և շնչական կյանքով, իմացականի մասին գաղափար ևս չունին։ Կարդալ, գրել, ընդհանրապես շրիտեն, շատ շնչին բացառությամբ։ Յուրյանց տանից կամ

---

* (Լատ.) Կրկնողությունը մայրն է ուսման։

** Ես մինչև այժմ չեմ հասկանում, թե Բազիկոդյանցը ի՞նչ խորհուրդով գործածական լինու յուր մատենագրության հանդիսում հին և մեռած լեզուն։ Ազգասեր օրագիրը ևս հրատարակվում էր այդ լեզվով։ Դժվար է հասկանալ այսպիսի անբնական գործը, մանավանդ Բազիկոդյանցի կողմից, որ եվրոպական կրթություն առացած լինելով և այն մի գործակից ազգից, ինչպես անգլիացիք են, չէ մտածել, թե խոսելու կամ գրելու խորհուրդը այն է, որ ժողովուրդը կարգա և բան հասկանա։ Ինձ շատ ծանր է թվել Բազիկոդյանցը այն հայերի կարգում, որ մտածում էին մեռյալը գործիք շինել, ժողովրդի մեջ կյանք ներս բերելու համար։

յուրյանց բնակված քաղաքից դուրս աշխարհ կա՞, չկա, այդ մասին ևս չունին ոչինչ տեղեկություն։ Այսպես լինելով նոցա դրությունը, ի՛նչ զարմանք, որ մի տաղ կամ մի կանոնավոր երաժշտություն տեղ չգտանե նոցա արտումբ. ի՛նչ զարմանք, եթե տառն աչքով նային այսպիսի բանի վերա, առանց որևիցե գաղափար ունենալու ազատական արվեստների մասին։ Նորա ինչո՛վ մեղավոր են, ո՛վ կրթեց ու դաստիարակեց նորանց, և նորա յուրյանց անընդունակությամբ չուսաավորվեցան, կամ մեզանից վայրենի հասկացողության վիճակի մեջ։ Կոմսը, յուր մի բոպե նեղացնալը դատապարտեց իսկույն, աչքի տակ առնելով այս բոլորը։ Եթե այնքան ուժ և զորություն ունենար մարդկային բնավորությունը, որ յուր կրքի առնձը միշտ ամուր պահեր ձեռքում և ամենայն բանի վերա դատաստան կատարելու ժամանակ անտես չառներ այն հանգամանքները, որոնց մեջ գոյացել ու աճել էր դատաստանի տակ ընկած իրողությունը կամ անհատը, ապա ուրեմն, անտարակույս, հարյուրին յոթանասուն պիտի փոքրանար նեղսրտելու և բարկանալու պատճառների թիվը։

Վերջապես, օրիորդ Մարիամը ավարտեց յուր երգելը և ածելը, և վերստին լանլով Կոմս Էմմանուելի գովեստը, շնորհակալ եղավ նորանից, կատարելով մի խորին բնվերանար։

— Տեսանենք,— ասաց Մահտեսի Թովմասը,— ի՛նչ ազդեցություն կգործե այս տաղը պ. Յումի վերա։

«Ի՛նչ ազդեցություն պիտի գործե. նա չէ կարող ընդունել գորան, որպես բուն հայկական ազգային երգ։

— Ի՛նչ պատճառով։

«Այն պատճառով, որ տաղի բովանդակությունը նա չէ կարող հասկանալ, քան որում նա չգիտե հայերեն**. միակ տպավորություն, որ պիտի գործեր նորա վերա, այդ էր տաղի երաժշտությունը — եղանակը, բայց դուք ևս, ինչպես ես, գիտե՛ք, որ նորա եղանակը հայկական չէ։

---

* Ներկայումս փորր ի շատե զգացել են հայը կանանց սեռի դաստիարակության կարուսությունը, և այս ու այնտեղ սկսել են երևել մասնավոր դպրոցներ օրիորդների համար։ Բայց որովհետև մի անկարգ ազգի ամենայն բանը անկարգ կլինի, վասն որո և հայերը ևս չեն կամեցել դուրս մնալ այս կատեգորիայից։ Դպրոց պահողը առհասարակ օտարազգիք են և հայ ազդիկները օտարի լեզվով պիտի լուսավորվին, որովհետև հայոց լեզուն հատած է։ Գաստապարտե՛լի ձգտողություն և անխել գործ։ Լսեցեք, սիրական հայեր, սուտ է այն լուսավորությունը, որ պիտի լինի օտարի լեզվով. այդպիսի դիպվածում, դուք ձեր զավակները օտարացնում եք ձեզանից, նորա օտարի լեզվով գաստիարակվածք

Անտարակույս, նա ցանկացած էր լսել մի այնպիսի երաժշտություն, որից կարող էր մի գաղափար ծնուցանել յուր մեջ հայոց ազգի երաժըշտական ճաշակի կամ հասկացողության վերա. բայց բանը այս է, որ մենք ամենևին չունինք երաժշտություն»:

— Ապա հնուց մնացած տաղե՞րը և խազե՞րը:

«Նոցա եղանակների մեծ մասը թուրքից է առած. մյուսները, նայելով թե ժողովուրդը ինչ ազգերի մեջ բնակվել էր, ուրիշներից: Ես ման գալով շատ հայաբնակ տեղեր, շատ աշխատել եմ, որ բուն հայկական մի բան կարողանամ լսել, բայց այդ բանը մինչ այժմ էլ չի հաջողվել ինձ»:

— Եկեղեցական երգերի կամ շարականների մասին ի՞նչ է ձեր կարծիքը:

«Նոցա բոլորի արմատական բնավորությունը բյուզանդական է, որ եթե այժմ, մի փոքր դուրս ևս եկել է բյուզանդական ճշտություններից, այդ պատահել է բոլորովին ակամա: Պատճառ, երգեցողության գործոց չիմնելով, ամեն մարդ յուր կարողացածի կամ յուր հասկացողության պես երգելով, փոքր ի շատե հեռացել են այդ եղանակները հունական գաղափարից, բևև կան նույնպես մի քանի ձայներ, որ մինչև այժմ հարազատ են հունականին, զորօրինակ երկրորդ ձայնը:

— Մի՛թե հայերը չունե՞ին հատուկ կրոնական երգեցողություններ:

«Տարակույս չկա, որ մի բան ունեցել են, բայց հեթանոսության ժամանակ: Ձեզ հայտնի է, որ Հայաստանի կրոնական լուսավորությունը, չորրորդ դարում կատարված սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռքով, ծագում էր հունական աղբյուրից: Լուսավորիչը մեծ եռանդով քրիստոնեությունը վերստին հաստատելով հայերի մեջ, Տրդատ թագավորի հրամանով և զորքով գնաց էրզրում Հայաստան, մեհյանները — կռքատունները, կուռքերը քանդելու և կործանելու համար, մեհենական գրքերը այրելու և չքացնելու համար, որ հեթանոսության հիշատակը ևս չմնա հայերի մեջ: Եթե նա չէ խնայել այս պատմական հիշատակարանքը, այն հոյակապ արձանները և մեհենական գործությունը, որ այժմ մեծ լույս կարող էին ծագել այն խնդրի վերա, թե ի՛նչպես էր նախնի հայկազանց հայկաբանությունը, կարելի՞ է որ թուլլ տար հիմնված եկեղեցիների մեջ, քրիստոնեական կրոնի պաշտելության հարակից եղած աղոթքները և երգերը երգել թևև հեթանոսական ժամանակից մնացած, այլ բուն աղգային եղանակներով: Եվ անհնարին էր թուլլ տալ, որ ժողովուրդը լսե վերստին այն ձայները աղոթքի, որ դատապարտված էին, անհնարին էր թուլլ տալ մանավանդ այն պատճառով, որ շատ տեղեր Հայաստանում քրիստոնեությունը ներս մտավ թագավորական հրամանի ուժով, շատ տեղ սուր ևս գործ դրվեցավ և մի փոքր հատաջ քրիստոնյա կոտորող ու հալածող հեթանոս հայերը կոտորվեցան ու հալածվեցան քրիստոնյա հայերից: Մի կողմից հեթանոսականը բաց ձգելով, մյուս կողմից հարկավորաբար քրիստոնեականը — հունականը պիտո էր ներս բերել: Բա-

ցի սորանից, շարականները կամ եկեղեցական երգերը, որ լսում ենք այժմ եկեղեցու մեջ, կնա մի գրվելցան թարգմանչաց ժամանակին, թարգմանչաց ձեռքով և կնա մի հնաոր. մինչև տասներեքերորդ դարը հավելյանում է շարականների թիվը: Մեր թարգմանիչքը ստացան Հունաստանում, և ինչպես նոցա բոլոր գրվածների ու թարգմանութիւնների մեջ տեսանվում է հունական հոգու ներկայութիյունը, այսպես ևս եկեղեցական երգերի ճակատագիրը: Վերջին ժամանակների երգերը, բովանդակութիյամբ միայն գանազանվում են, քան որում ուխ ձայները, ինչպես ունի հունաց եկեղեցին, վաղուց ահա ներս էին մտած մեր եկեղեցու մեջ: Հարկավոր է առանց ուշադրութիյան չթողուլ այն ևս, որ նիմն հայերի հեթանոսութիյան ժամանակ կային մեհենական երգեր ու երաժշտութիյունք, ասպա ուրեմն խնդիր ողորմելի բաներ, քան որում օրինավոր բան չէին կարող ունենալ»:

— Ի՞նչ պատճառով:

«Ի՛հ, շատ խո՛ր է դորա պատճառը, և որքան խոր, այնքան ևս խորին ցավակցութիյան արժանի: Ի՞նչ հարկավոր է այժմ դորա մասին խոսք բանալ և սխուր մտածութիւններով կամ քննութիւններով ձանձրացնել և այս պատվելիքը, որոնք առանց տարակուսի ախորժակ չունին սխրելու»:

— Ո՛չինչ, ո՛չինչ. մեզ ամենևին ձանձրութիյուն չէ լսել ձեր խոսակցութիյունը,— պատասխանեցին մի քանի ձայներ հյուրերի միջից:

«Տեսանո՞ւմ եք», ասաց Մահտեսի Թումմասը, «ահա նոքա ևս ցանկանում են լսել, Մարիամա ևս հնոի չէ փախչելու լանլուց»:

Այս մասին բոլորովին անընտրող էր օրիորդ Մարիամը, քան որում գաղափար ևս չուներ ազգութիյան մասին, յուր փոքր ի շատե կրթութիյունը ստացած լինելով մի օտար ազգի դպրոցում:

— Բացի դորանից,— հավելացուց Մահտեսի Թումմասը,— դնուա տասն ժամը չկա, թե տուն գնաս՝ ի՞նչ պիտո է առնես. ո՞չ ապաքեն ժամանակ է որ անցուցանում ենք, նիմն միայն ձանձրալի չէր ձեզ մեր ընկերակցութիյունը:

«Բայց դուք այժմ մի՛ կարծեք, թե ես ժամերով քարոզ ունեի այդ մասին ասելու.... ո՛ւր էր այն երանութիյունը, որ հնար լիներ սրտիս վերայի եղածը դուրս տալ և թեթևանալ այն անտանելի ծանրութիւնից, որ ճնշում է հոգիս.... բայց ինչ....ատ այժմ այսքան ասեմ ձեզ, որ ազգային, երգ, կամ առհասարակ ազգային երաժշտութիյուն ասած բանը պատկանում է բանաստեղծութիյանն:

— Անտարակույս,— պատասխանեցին մի քանի մարդիկ Մահտեսի Թումմասի հետ միասին, որով խոսակցութիյունը դարձավ հասարակաց:

«Հառաջ գնանք, և չդադարենք սորա վերա», շարունակեց կոմսը: «Ազգերի բանաստեղծութիյան միակ աղբյուրը է նոցա ազգային պատմութիյունը, այսինքն ազգի կյանքը: Ազգային է բանաստեղծութիյունը, նիմն բովանդակում է յուր մեջ ազգին պատկանած բաները, նիմն այդ բաները բովանդակում է յուր մեջ ազգին պատկանած բաները, նիմն երգում էր ազգին պատկանած. նույնպես, ազգային է բանաստեղծը, նիմն երգում էր

կամ պրում էր մի այնպիսի բան, որ անմիջական հարաբերություն ուներ ազգի հետ, ազգի իմացական և բարոյական կյանքի հետ. այս չէ կարելի հերքել։ Բանաստեղծությունը պիտի որ հոգի ունենա, կյանք ունենա, և այս կյանքը նա կարող է ստանալ միայն այնպիսի բանից որ կյանք ուներ, որ ապրում էր ոչ որպես մի հանք կամ մի նիւթական մումիա*, այլ որպես գործարանավոր էակ հառաջ էր գնում յուր կերպարանագործության մեջ։ Ինչպես ազգն է, ազգի կյանքն է, այնպես է և նորա պատմությունը, իսկ ինչպես պատմությունն է, այնպես է և նորա բանաստեղծությունը։

«Մի՛ նայեք այն արտաքին դանազանությանը, պատմության և բանաստեղծության մեջ, որ երևում է մի անփորձ աչքի, ին պատմությունը մի հիշատակարան է ստուգական կատարված իրողություններին, կամ այդ գործերի մեջ պատահած մարդկերի, իսկ բանաստեղծությունը դուրս է գալիս իրական ճշդություններից։ Այո՛, պատմության առաջադրեալը է միմիայն իրական աշխարհը, բայց բանաստեղծությունը չէ կարող դրանով բավականանալ։ Նա բարձրանում է իրականից դեպի մի այլ անշափելի տարածություն ու լայն աշխարհ — մի անեղծ կամ հոգևական աշխարհ։ Պատմությունը ավանդում է մեզ ամբողջ կարգ իրողություններին, որ կատարվեցան որպես հետևանք ազգերի կյանքի պահանջողության, որպես հետևանք այդ ազգերի՝ կերպարանագործության բաղաքական հանդիսում։ Պատմությունը քննում է այդ անցքերի բնական և լոգիկական պատճառները, առանց տալու յուր էջերի վերա վերացականության. և մի իրողության առաջությունը հաստատում է ուրիշ հարաբերից կամ երկրորդական իրողությունների վկայությամբ։ Իսկ բանաստեղծությունը օգուտ է քաղում մի ծայրացյալ ազատությունից և ստիպված չէ ենթարկվիլ տեղագրական, ժամանակագրական կամ իրողությունների կատարվելու համար հարկավոր նյութ մեքենականության կանոններին։ Արդարև պատմության և բանաստեղծության մեջ կա այս զանազանությունը, բայց դա մի արտաքին բան է, և խոր քննելով խնդիրը, կտեսանենք, որ բանաստեղծությունը ևս նույնպես ճշգրիտ հիշատակարան է, ինչպես պատմությունը։ Պատմությունը նկարագրում է մեզ ազգի հոգևական կյանքի այն երևույթը, որ մարմին առած ու երևեցած իրական աշխարհի մեջ այս և այն կերպարանքով, բայց բանաստեղծությունը մարմնավորում է, տեսանելի և շոշափելի կացուցանում է մեզ ազգի հոգևական կյանքի այն երևույթը, որ առանց մարմին առնելու մնացին ազգի հասկացողության մեջ որպես լոկ գաղափար, բայց որպես մի անհերքելի և որոշյալ դրոշմ ազգի բնավորության վերա։

---

* Կարելի էր հարցանել, մի՞թե հանքերը կամ եգիպտական հազարամյա մումիաները ապրում են. սորան կարելի է պատասխանել, թե անգործարանավոր էակների կյանքը երևում է նոցա անձնապահության մեջ։ Որքան ժամանակ կա նոցա մեջ արտաքին ներգործող ուժերի գիմացող զորություն, որով պահպանվում էր այդ հանքերի կամ մումիաների կերպարանքը, այնքան ժամանակ ևս ապրում են նոքա։

«Բանաստեղծությունը կատարելագործում է մեր հասկացողությունը աղգի հոգու կամ հոգեղեն կյանքի մասին, որ պակաս էր Ղողնէ պատմությունը*։ Դիցուք թե բանաստեղծությունը, պատմելով մի անցք կամ խոսելով մի մարդու մասին, չէ պահում այդ անցքերի կարգը, գործ է դնում զանազան կամայական և հնարաստեղծյալ հանգամանքներ, նկարագրում է երբեմն զերբնական անցքեր ու տեսարաններ և այլն, բայց այս է խնդիրը. կատարվե՞լ են այդ իրողությունքը, կամ, եթե չեն ևս կատարված, ապա, կարո՞ղ էին կատարվիլ թե ո՛չ։ Այն զերբնական տեսարանքը, որ ոչ եղած են, ոչ կան և ոչ ևս լինելու են, բայց համաձա՛յն էին նորա ազգի հասկացողությանը, և այդ ֆանտաստիկական գաղափարների ուրմէ խոր դրա՞ծ էր ազգի ուղեղի և արյունի մեջ, ահա խնդիրը»։

«Այժմ աչքի տակ առնունք մեր ազգի կյանքը — ամայի՞ անապատ, կամ ձոր Հովսափատայան — տրտմության հովիտ. աչքի տակ առնունք մեր ազգի պատմությունը, քննենք նորա քաղաքական և հոգեբանական կողմերը։ Բայց արի տե՛ս, որ մեր ժողովուրդը պատմական ժողովուրդ չէ և նորա կյանքը չէ եղած պատմաբանական, կապակից և լոգիկական, այլ կցկտուր. և այդ կյանքի շարունակությունը և ապահովությունը բոլորովին ապաստան մնացած արտաքին պատահմունքի։ Այն փորը ի շատն աշխարհակալությունքը մեր Արշակունի թագավորների, Հայաստանի սահմանապահյան ցիցերի մինչև օտարների հողերի վերա զարկվելը, որ

* Բարի հիշատակի արժանավոր Արամյանի Վեմ Հայաստանի անունով գործը— է ազգային բանաստեղծության մի հարազատ գաղափար։ Մեռ մինչև այժմ չէր հայտնվել մի բանի բառ խոսել այդ աշխատության մասին։ Ահա այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներքին վիճակը, ազգի հասկացողությունը։ Այստեղ, որպես մի կախարդական հայելու մեջ ցույց է տալիս բանաստեղծը հայոց ազգի ընտանեկան կյանքի անշուք և անմխիթար պատկերները, այնտեղ տեսանում ենք գյուղերի տանուտերերը, ծանոթանում ենք նոցա հասկացողության հետ։ Բարեխիղճ բանաստեղծը հանգիպցնում է մեզ հոգևոր մարդերի, խոսեցնում է նոցա յուրյանց հասկացողության պես այս և այն բանի մասին, պատկերացնում է մեր առաջն նոցա ունկնդիրների հասկացողության վիճակը, սահմանում է այն տխուր հարաբերությունը, որ կար նոցա մեջ։ Մենք տեսանում ենք այդ Ազդունյան հայելու մեջ հայկական կյանքի մեռած պատկերը, Մենք տեսանում ենք, թե, ինչպես այդ մեռելային դաշտի գանազան կետերում խլրտվում է տեսանում ենք, թե, ինչպես այդ մեռելային դաշտի գանազան կետերում խլրտվում է տարաբնեությունը և հովվական կամ նահապետական ժամանակների հասկացողությամբ տարաբնեությունը և հովվական կամ նահապետական ժամանակների հասկացողությամբ ընդգծմ է զինվորվում այս կամ այն անիրավության, թե ինչպես հալածվում է այս ընդգծմ է զինվորվում այս կամ այն անիրավության, թե ինչպես հալածվում է այս տարաբնեությունը և պատճառ է լինում բյուր կաթիլներով արտասուքի։ Նա ցույց է տարաբնեությունը և պատճառ է լինում բյուր կաթիլներով արտասուքի։ Նա ցույց է տալիս Աղասու ընկերներով, թե ո՛չ բոլորովին սառել է հայկական արյունը Հայաստանի մեջ

մեծ խորհուրդ և արժեք ունին մեր դիտուն անվանված պարոնների աչքում, ոչինչ են վերաբերութիւյամբ դեպի ազգի քաղաքական կյանքը։ Տերութիյան սահմանադրիչ այս կամ այն տեղ լինելը, օտար ազգեր յուր գայիսոնի տակ խոնարհեցնելը պատահական բաներ են, ոչ թե նում են ազգի կյանքի բնավորութիւններից և ո՛չ կարող են պահպանել ազգը կամ տերութիյունը։ Սորա ուժը և կյանքը կենում է միմիայն ազգութիյան մեջ, զանազան անհատներ դեպի մի ամբողջ հավաքող զորութիյան մեջ. և օտար ազգերի տիրելը ասել չէ նորանց անմահականել — յուրացուցանել բարոյապես։ Այդ մի ֆիզիկական միավորութիյուն է, ուժի զորութիյամբ կատարված, յոկ մեքենական մոտավորութիյուն. այդպես չէ կենում քիմիական միավորութիյուն, որ միավորվածքը կորուսանելին յուրյանց առաջին տիպը և որակութիյունքը և կազմելին մի նոր մարմին։ Ֆիզիկապես միավորվածքը, նրա բաղկանում են հազար մասնից, ապա այդ հազարը ևս պահում են յուրյանց արմատական կամ բնական բնավորութիյունը։ Հայոց կղկղանք քաղաքական կյանքը վարելով յուր քաղաքականութիյունը յոկ, ֆիզիկապես մեքենականութիյան վերա հիմնված լինելով նորա տեսութիյունքը, կյանք տեսանել համարելով միմիայն սահմանների պլխում, չէ մտածել երբեք յուր ուժը և զորութիյունը ամփոփել յուր բարոյական կենտրոնում, չէ մտածել ամենցնել յուր զորութիյունքը և ազգութիյան տունկը որպես մի գործարանավոր էակ, այլ հանքերի նման, առանց նրբքին զորութիյան, առանց գործարանների, միմյանց վերա բար-

---

այդ գրութենից դուրս գալու հնարքը։ Տեսանում ենք այն հայելու մեջ պարսիկների բարբարոս վարմունքութիյունը մեր խնդրե ազգի հետ, մեր ազգի հարատահարված վիճակը. այստեղ ցույց է տալիս բանաստեղծը այն հարաբերութիյունը, որ մի անկիրթ ազգ կարող էր ունենալ դեպի մի բանական իշխանութիյուն։

Փարիզի «Ասիական» անունով հայկական օրագիրը, որ հրատարակվում է ներկա 1859 հունվարից, արգո Մանեփասոս Ոսկանյան գիտնական պարոնի ձեռքով, յուր 6 համարի մեջ ասիի առանալով այս գրքի հայտնութենից խոսում է Արծրյանի վարքի վերա, իսկ 7 համարի մեջ հայտնում է յուր կարծիքը «Վերք Հայաստանի» անունով գործի մասին։ Առհասարակ գիտուն հրատարակողը Ասիմուսի գովութիյամբ խոսում է Արծրյանի մասին և հաճացնել է բոլորովին քե գրքի խորհուրդը և քե հեղինակի արժանավորութիյունը, բայց այդ աշխատութիյան մասնավոր կողմերին վերաբերված մի քանի կարծիքներին մեջ, չեմ կարող համաձայնել պ. Ոսկանյանի հետ։ Ես տարակուսա չունիմ, որ ամենայն բարեմտութիյամբ կընդունի պարոնը իմ այս համառոտ նկատողութիյունքը։ Առում է. «Անշնարի՛ն է այս գիրքը դատել եվրոպական կանոնով, վասնզի, հինչպես ըսինք, ոամիկներու համար և ոամկի ոճով գրված է այն, և իրեն գրական շենք ոճը չընծայվիր մեր ազգս»։

Նրա Արծրյանի Վերք Հայաստանին ունի արժանավորութիյուն, և նրա այդ արժանավորութիյունը կարելի է գնահատել, ապա ուրեմն միմիայն եվրոպական կանոնով, որ նայում է միշտ գործի խորհրդին և քե հեղինակը մինչև ո՛ր աստիճան կարողացել էր հասկանալ և լուծանել յուր առաջև գրած խնդիրը։ Նրա եվրոպական կանոնը բռնում ու ասիական աչքով նայենք այդ գործի վերա, այն ժամանակ նա երևում է մեզ որպես մի առաստղ (հնդիրիք)։ «Իմիկի համար և ոամկի ոճով գրված է այն», ասում է պարոնը. համաձայն չեմ։ Բոլոր ազգի համար է գրված. այնտեղ կա ուսանելիք ոչ միայն շինականի համար, այլ և բազարացու, այլ և հայոց կիսատ թևրատ ուսումնականների համար

դնելով կուտակելով և նոցա միավորության ապահովությունը այդ միավորվածների քարշողական հատկության մեջ տեսանելով։ Այսպիսի սխալ և անբնական ճանապարհներով հառաջ գնալով քաղաքականությունը, չէր կարող ապրել որպես մի բարոյական էակ. ամենայն էակ ապրում է պայմանների տակ, բայց հայոց համար պակաս էին այս պայմանները, վասն որո և չդիմացավ հին կամ միջին դարերի քաղաքական փոթորիկներին և բապավորը փոխանց յուր գայիսոնը դնելի մի քաղաքական թշվառ գավազան։ Կառավարության հայացքի նյութական բնավորությունը խոր արմատացավ ազգի մեջ, կառավարությունը կործանվեցավ, բայց նյութականության դրոշմը մնաց ապավորված հայերի վերա։ Այս շատ խորախորհուրդ վնաս էր, բայց իմ մտքերը կերպարանագործելու և այս մասին երկար խոսելու համար հարկավոր է ժամանակ.... մանավանդ այստեղ հարմար չէր երկարաբանել.... գուցե ավելորդ ևս խոսեցի...

«Ահա այսպես լինելով հայերի կյանքը, բանաստեղծությունը ևս ավելի չէր կարող լինել, քան ինչ եղած է։ Բայց ինչ կար. ո՛չինչ։ Ասացի մի անգամ, երանի՛ ինչ քանի չեմ մեռած, Յաւիւն սրտիս եղածը մեր ազգի առաջև, պատառների մի քանի կախարդական վարագույրներ... բայց դժվար ինձ հաջողի ինձ այս և ես վախում եմ, որ այն բաները ինչ որ այժմ ճնշում են հոգիս, սիրտ ճնշեն և ոսկերքս գերեզմանիս մեջ . . .

. . . . . .

ևս Հայոց ազգը կորուսած լինելով յուր քաղաքականությունը, անհետացած լինելով տոհմական ազնվականությունը տունների, ոմանիկը ևս չկա, որ կարող է լինել այնտեղ մեկայն, ուր կա ազնվություն։ Ազնվությունը հարստության վերա չէ, և ոչ նաև ոմանիկությունը ազգաստության վերա. այս բոպեիս մեր ազգի ամեն մի անդամը հավասար են յուրյանց մեջ։ Ազնվական և ոմանիկ չլինելով մեր ազգի մեջ, չունինք և այդ կացութիւններուն անփոխան բարբառներ. հին և մեռած գրաբար լեզուն ազնվական չէ, և ոչ կենդանի ժողովրդականը ոմանիկան, ինչպես մի քանի վայր ի վեր մարդիկ ասում են, որոնց մեջ և պ. Դյուլորիե ֆրանսիացին, որ մեր ժողովրդական լեզուն և առհասարակ կենդանի հայկական խոսքը անվանում է jargon։ Արովյանի լեզվի համար կարելի է ասել այս միայն, որ շատ հաղթահարված է տեղական բարբառից, բայց այդ բանում Արովյանցը ունեցել է յուր մասնավոր խորհուրդը։ Բայց այս պատճառով անիրավություն կլինի չընդունել այդ գրքի խորին արժանավորությունը,— որ է պատկերացնել ազգի կյանքը նույնիսկ ազգի առաջև։ Այո՛, Արովյանցը յուր բանաստեղծությանը չէ ավել աշխատի ընթացք կամ վերջ, որ սովորական է եվրոպական բանաստեղծներին, չէ երևում նա որպես մի անհատ կազմած, այլ որպես մի հանգիսարան որոշ որոշ պատկերների, բայց դորա առաջը առել է նա մի ընդհանուր անուն տալով յուր աշխատությանը— «Վերք Հայաստանի»։ Լեզվի և ոճի հապաղությունը հետևանք չէ բանաստեղծի գերմանատիությանը, այլ բուն ազգեցություն տեղական ժողովրդի կյանքին և միայն հայտնելու ձևերին։ Նույնանշան բառերի անհամ կրկնությունը տեսանում ենք այո՛, բայց չմոռանանք որ Արովյանցի խորհուրդը է գրել այնպես, որ անկիրթ ժողովուրդը չկարծե թե գիրք է կարդում, այլ կարծե թե մի մարդ խոսում էր յուր հետ. ինչ առնե Արովյանցը նրա ասացին չափազանց է ամենայն բանի մեջ։ Առհասարակ շնորհակալություն Արևմուտքին. շատ բարեհոգությամբ կատարել է յուր պարտականությունը և մեր արած ծանոթությունները չեն պակասեցնում նորա հոգվածի արժանավորությունը։

«Մենք չունինք ազգային երգեր, չունինք ազգային երաժշտություն, չունինք բանաստեղծություն, որովհետև ապրում ենք միմիայն բուսականաբար և շնչականաբար։ Հավը կորնկ է տեսանում երազում, իսկ հայը նյո՛ւթ։ Հատ ու կոտոր բաներ, որ այժմ անխորձ մարդիկ ազգային են համարում, ժողոված են թուրքից, քաֆարից, պարսից, հույնից և ուրիշներից, որոնց ժամանակ առ ժամանակ հպատակեցան հայը։ Նորերումս դուրս եկան ազգային երգերի անունով մի քանի անալի ոտանավորք. Սայաթ Նովա, Ադամ Աղբար, Շիրին և այլն[13], բայց նորանց ազգային երգ անվանողը և այդպիսի մտավորական հրեշների վերա, անդատաստան երեխայի պես ուրախացող պարոնները ինքյանք չգիտեն, թե ի՛նչ պայմաններ էին հարկավոր որ մի երգ լիներ ազգային։ Նորա ունին միայն մի պայման և համարում են թե դորա մեջ էր ամեն բան — երգիչը հայ էր. բայց հայ է միայն նորանով, որ ծնել է հայ ծնողներից. նորա երգը չէ և չէ հայերեն. երեք բառ թուրքի, քաֆարի և չգիտեմ ինչի, իսկ հայի մի երկու աղճատված կամ ճղակոտոր բան։ Երգերի կազմակերպությունքը հետևած թուրքի ոտանավորներին, հիմնած միմիայն ոտքերի և վերջերի նույնահանդույնյան վերա առանց ամենևին մտքի, բովանդակությյան, խորհրդի և բանականության։ Ազգային են այն երգերը և պիտի համարվին ազգային, քանի որ կա հայերից ինչ ինչ. մարդերի մեջ այն սխալ և վնասակար վարդապետությունը — թե ամենևին բան, որ երևում էր հայոց ազգի վերա, անշուշտ պիտի ազգանա. ազգի հանցանքը ևս առաքինություն է, այն տիրոջը և հոտած ճահիճը, որի մեջ պարանոցամիապ խեղդվում ենք, ամիրաական է, որովհետև մենք նորա մեջ ենք.... Ո՛վ բարեկենյան խառնակության մարքերի. բայց փորր է այս, մտավորական կամ բարոյական հարիներ»։

— Ինչպես ես շատ գլուխ չունիմ ուսումնական բաներին,— ասաց Մահտեսի Թովմասը, երբ Կոմսը ավարտեց յուր խոսքը,— բայց ասես թե ասածներդ խելքիս նստում են. ինչևիցե. դորա ուսումնական բաներ են և դուք ձեր մեջ ի՛նչ կամիք արեցեք, մեզ չեն վերաբերվում սորա։

Կոմսը կամեր մի բան ասել, բայց Մահտեսի Թովմասը հառաջ ասելով յուր խոսքը չթողեց նորան բերան բանալ։

— Ձեր խոսակցությունը, որի մեջ հիշեցիք գերբնական ու ֆանտաստիկական բաներ, մի բան միտքս ձգեց։ Ես մի դրացի ունիմ, ահա, այս կապուտ պատուհաններով միահարկ տանն է բնակվում,— այս ասելով Մահտեսի Թովմասը մատով ցույց տվեց պատուհանից մի տուն, որի բնակիչը ծանոթ է արդեն իմ ընթերցողներին։— Շաբաթյանց է նորա ազգանունը,— հավելացրեց Մահտեսին,— մի վերին աստիճանի ողորմելի մարդ։ Գլխին դրել է, թե աշխարհի երեսին կար մի առանձին գիտություն — թաքնամանական, վհկություն, և թե ամենայն բան կարելի էր հառաջացնել շար ոգիների գործակցությամբ։ Միշտ պարապում է խեղ և խեղաթ բաներով, գիծեր է քաշում ախոռի մեջ, սև հավեր է մորթում։ Սև կատու

մարդու գանգ, չորացուցած գորտ ու շղթիկ, բու և այլ այսպիսի բաներ լի են դորա ախոռի մեջ...

«Չեր պատմելով», խոսքը ընդմիջեց Կոմսը, «դորա ախոռը բավական նմանություն ունի Ֆաուստի սեննկինն»:

— Ես չգիտեմ Ֆաուստի ով կամ ինչ եղածը, միայն ճշմարիտ է այն, ինչ որ ասացի: Այս քանի օր է, դարձյալ, վեր ու վայր էր այդ պարոնը. իսկույն հասկացա, որ մի փորացավ ունի, մի նոր խելագարություն մտել է գլուխը, բատ որում, երբեմն ամիսներով, ամենայն ինչ հանդարտ է և ոչինչ չկա. մարդ է մարդու պես: Երեկյան երեկոին երկինքը պայծառ էր, դուրս եկա բակը մի փոքր մաև գալու: Տեսանեմ որ այդ պարոնը նա մաև է գալիս յուր բակում, որ բաժանվում է իմից միայն մի բարակ տախտակյա պատով: Մաև է գալիս, բայց, բարձրաձայն խորհելով — ինքը յուր հետ խոսակցելով: Ի՛նչ մեջը պահեմ, հետաքրքրություն բռնադատեց ականջ դնել: Մոտեցա պատին, և ահա լսում եմ, որ շաղփաղփում է մի դեղեցիկ օրիորդի մասին, որ չգիտեմ թե ուր տեսել էր, և այնուհետև շատ և շատ որոնելով ու չգտանելով, այժմ վհկական արարողությամբ, շար ոգիների — փերիների գործակցությամբ պիտի տեսաներ նորա պատկերը կամ ուրվականը, մի չրով լցված պատկի մեջ, որ դրած էր նորա ախոռում, այլ և պիտի խոսեր նորա հետ և այլն: Ես, որովհետև չեմ հավատում այդպիսի բաների, վասն որո մտքումս դրեցի մի խաղ խաղալ դորա հետ: Ետր գիշերի մեջ, մինչ ամենայն մարդ քնեց ու շորս կողմը հանդարտեց, առա թղթերիս միջից Հուլիա Պատրանայի պատկերը, ցած խլա պատից նորա բակը և որովհետև միշտ համարյա քաց են նորա ախոռի դուռները, խնամով ընկղմեցի պատկերը պատկի մեջ և լավ զետեղեցի նորա պատկի հատակի վերա: Չգիտեմ տեսավ թե չէ, կամ թե ի՛նչ ազդեցություն գործեց այդ պատկերի հայտնությունը, ոթե տեսավ:

«Ի՛նչ պիտո է առնել», ասաց Կոմս Էմմանուելը, ճանապարհավատությունը և նախապաշարմունքը, անկիրթ ժողովրդի համար, վաղուց դարձել է հոգեղեն կամ իմացական կյանքի մի մասնը: Դուն այդ բանը երբեք դուրս գալու չէ հայոց ազգի սրտից, քանի նորա լուսավորությունը գտանվում է այդպիսի վիճակում, ինչպես այսօր: Թողած ուսանել բնությունը, որով պիտի մեկնվեր նոցա մի ամբողջ կարգ հրաշքների և պիտի փարատվեին այնուհետև այսպիսի մոլորության ամպերը պղտորված փարատվելին այնուհետև այսպիսի մոլորության ամպերը պղտորված հայկական հորիզոնից, աշխատում են ուսանել մի այնպիսի բան, որ չկա, և որի գոյությանը երաշխավոր է միայն անհիմն, ընչին և պատահական ավանդություն»:

— Ես, որ մաև նորա ախոռը, հերիք չէր որ դրեցի վերատացյալ պատկերը, այլ և մի բան ևս գողացա:

«Գողացա՞ք», ընդհատեց Կոմսը:

— Այո՛,— պատասխանեց Մահտեսի Թովմասը,— գողացա ահա այս թուղթը, որ դրած էր սեղանի վերա, պատկի մոտ, և որ տեսա, այս թուղթը, որ դրած էր սեղանի վերա, պատկի մոտ, և որ տեսա, մինչ զննեցի չորս կողմս փոքրիկ լապտերի լուսով, որ ունեի ձեռքումս:

Այս անելով մի թուղթ հանեց ծոցից և տվեց Կոմս Էմմանուելին։ Կոմսը վեր առավ և սկսեց կարդալ.

ՓԵՐԻՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԽՐԱՏ

*«Մեզ կամենաս փերիները հրավիրել, հարկ է, որ առաջ մնաս անակռնուց։ Առ մի կլայնկած աման, դի՛ր նորա մեջ մի հայելի, հետո տայնքան ջուր լի՛ց ամանի մեջ, որ հայելին ծածկվի։ Առ մի ուլ կամ առանց տարեկան տղա, բայց հարկավոր է, որ նոր և մաքուր լինին տղայի հանդերձքը, սկսած շապիկից մինչև վերարկուն. ծածկի՛ր տղայի գլուխը մի կարմիր թաշկինակով, իսկ ինքդ սկսի՛ր կարդալ։ Մեզ ահա սկարդալու բաներդ. Ծննդյան Հրագալուցի գրքերը բացի առաջինից, «Ի սկզբանէ արար Աստուած» և բացի վերջինից՝ «Յամին ումիուսասանեւրորդի»։ Երբ որ ավարտել էիր այս ընթերցմունքը, հրավիրված փերիքդ կգան. և տղան կտեսանեն նորանց հայելու մեջ։ Իսկ մեզ չգան, մյուս անգամ կրկնի՛ր ընթերցմունքը. և եթե այս անգամ ևս չգան, ապա ուրեմն տղայի անձնավորության մեջ կա մի ներհակություն դեպի փերինները, առատի փոխի՛ր տղան և երրորդ անգամ կարդա, անպատճառ կգան։ Ինչ որ ունիս հարցանելու նոցանից, պիտի լինի տղայի միջնորդությամբ. ոչ ու կասես տղային, իսկ սա կհարցանի փերիններից, որոնց պատասխանը նույնպես կստանաս տղայի միջնորդությամբ։ Բայց դիտելի է, որ երբ երևին փերիքը, առանց ուրիշ բան հարցանելու, պիտո է հարցանել,— ի՛նչ ազգից եր։ Նորա կհայտանին յուրյանց որ ազգից լինելը, այն ժամանակ, այն ազգի ձեռով երգում տալ տուր և ապա հարցրու «հարցանելիքդ, որ պատասխանեն և ամենայն ճշտությամբ և հավատարմությամբ։ Երբ ավարտեցիր հարց ու փորձդ, պիտո է նորանց արձակել, որ գնան, ապա թե ոչ, պարտական՛ են մնալու մինչև որ հրամայես տալ։ Արձակելու մասին կարդալիքդ այս է. «Ես ի կատարել եմացայն բառանիցդ» վերջին «ի լեռան Սինայ», Սուրբ Ստեփանոսի գրքից։ «Այս կկարդաս կավարտես և երեք անգամ կպչես ջրի երեսը և ջուրը մի ոտք շկոխած տեղ կթափես, ահա բոլորը»։

Մինչդեռ կարդում էր Կոմսը այս հիմարական խրատը, բոլոր հյուրերը որ կային Մահտեսի Թումասի տանը, մեծ ուշադրությամբ և մասնակցությամբ ականջ էին դնում։ Կոմսը կարդալով ասաց.— Եղեք մարդ, ամենայն կարեկցությամբ արժանի. Ճշմարիտ, եթե պատահեի նորան կխրատեի, որ հետ կենար այսպիսի անօգուտ և հիմարական բաներից, և եթե կամեր մի բան ուսանիլ, պարապեր բնական գիտությամբ. այդ մանավանդ հարկավոր է, որովհետև ժողովրդի կյանքը միշտ գործ ունի նյութի հետ։

Օրիորդ Մարիամը այս թղթի կարդացվելու ժամանակ դուրս էր գնացել հյուրընդունարանից և արդեն Կոմսը խոսելու վերա էր, երբ նորա մտավ։ Ձեռքում բռնել էր մի թուղթ։ Կոմսը վերջացնելով յուր խոսքը

դարձավ դեպի օրիորդը հարցանել թե ինչ թուղթ էր այն։ Օրիորդը պատասխանեց թե մի տաղ է, և թե պատրաստ էր երգել այն ևս, եթե, դորա փոխանակ, Կոմսը խոստանար Յումի սոցա տուն գալու ժամանակ ներկա լինել։

— Ի՛նչպես անգութ եք,— ասաց Կոմսը,— իմանալով որ չեմ կարող խոստանալ, պահանջում եք. մի՛թե չէ կարելի խնդրել, որ առանց փոխարինի երգեք։

«Մի՛թե չէ կարելի», պատասխանեց օրիորդ Մարիամը, «որ դուք մի փորր վազ ճանապարհ ձգեք ձեր հյուրը, իսկ ես մի փորր երկար պահեմ Յումը մեր մոտ, այնպես որ դո՛ւք հանդիպեք նորան այստեղ»։

— Լսելու համար այդ երգը, ի՛նչ պիտո է առնել, հարկավոր է հանձն առնուլ այդ թեև ծանր պայմանը։

Օրիորդի շրթունքի վերա խաղաց մի խորամանկ, բայց ինքնաբավական ժպիտ։

«Բայց ասացեք խնդրեմ», հարց արեց Կոմսը, «ի՛նչ առանավոր է այդ և ո՛վի շինած»։

— Այն ժամանակ կասեմ, երբ լսեմ ձեր կարծիքը նորա մասին։

Այս ասելով օրիորդ Մարիամը մոտ քաշեց սիրուց ֆորտոպիանոյին, զարկեց մատները կլավիշներին և սկսեց երգել։

Ես՛ն, լոկ երազ էր, մի՛ խռովեմ ինձ,
Իմ մոլորության խաղցր պատկերներ.
Ինձ չէ բույլ տված երկարի կյանքում
Հանգալ, վայելել ոսկի րոպեներ։

Մի՛ հիշեցնեմ, մի՛, այն զգացմունքը,
Որով լցված էր սիրտս և հոգիս,
Որով շնչեցի, որով ապրեցա,
Ինչպես մի ծաղիկ զգված զեփյուռից։

Այդ մի երազ էր... կամ գեթ առաչոք,
Որ կրակ ձգեց սրտիս մեջ անմար.
Թշնամի վճուկ, երևի, կախեց
Աչքերիս վերա բժժանք անհամար։

Ինձ այն ժամանակ հանի՛ ու հանի՛
Ներևեցավ նա այն ծառերի տակ,
Ամենչ, լիալուսին խոր գիշերի մեջ,
Երգում էր ուրախ, անհոգ, միայնակ։

Ես տեսա նորան, բայց մի այլ տեղում,
Հավերժահարսնի ուներ կերպ ու ձև,

Թռչում էր, շարժում օդի մեջ, այնպես,
Ինչպես մի փետուր. առավե՛լ թերև:

Մի անգամ տեսա Աբենասի պես
Ջրահավորված զինվորի գենեով,
Մի ամբողջ խմբի տալիս էր հրաման,
Յուր ձեռի բռնած բերև հրացանով:

Ես տեսա դարձյալ, մի ուրիշ անգամ,
Մինչ աննոգ, ուրախ, խաղացած տեղից
Նորան բռնեցին, որպես մահապարտ.
Ի՛նչ անմեղություն, ի՛նչ հայացք աչից:

Մինչ ոտից գլուխ սպիտակ հագած
Դիմում էր տխուր դեպի պատժարան,
Աննոգ արձակած սարի պես մազերը,
Առտսուտ բափելով ճերեղի նման:

Մինչ զրպարտողը խոստանում էր կյանք,
Թե միայն հաներ... լինել համաձայն.
Այն ի՛նչ չնորհիվ էր, որ կարեց մատից,
Որով ցույց տվեց երկինք ժանտին այն:

Ո՛ն, մի այլ անգամ, ի՛նչպես փրկից Ցա
Ավազակներից մի անմեղի կյանք.
Առանց խոսելու, համր նշանով,
Կտանգի ժամը հայտնեց բացարձակ:

Ի՛նչ կարեկցությամբ, ի՛նչ անմեղ սիրով
Թունալի բաժակը տեղափոխեց Ցա,
Որով դավաճանը թունավորվելով
Թմրեցավ մնաց, աթոռի վերա:

Ո՛ր միերը հիշեմ. ես տեսա դարձյալ,
Մինչ դուրս էր գալիս ծովից լայնարձակ,
Հազար պչրանքով, ճերուկ շարժմունքով,
Ձկնորս էր որսում, սրտով համարձակ:

Ենա խոստանում էր նորան անմահ կյանք.
Ե՛նթրան սիրելը էր անմահություն.
Ես տեսա, ինչպես ձկնորսը ուրախ
Վայելում էր մի նոխ արհայություն:

«Վերջին անգամն էր, ավել չտեսա,
«Գնում էի ծովով հեռավոր աշխարհ...
«Երկինքը մրընց, մրրիկը սուլեց,
«Ուռա, փայլակը անթիվ փայլակեց:

«Սարերի նման մեծ մեծ ալիքի
«Կատաղած ծովին եղած խաղալիք,
«Թալիս էր մի նավ, չարդված կայմերով,
«(Հառաչ մեր նավից տեսան նավաստիք):

«Նկավ մոտեցավ նավը մեր նավին.
«Ի՛նչ սիրտ կարասող մի պատկեր էր այն,
«Թշվառ նուսահատ իբր անխել նավորդ
«Կտրուսել էին և նույս փրկությանն:

«Նավորդների մեջ ես տեսա Եորաե,
«Բռնել էր կայմից խելքը կորուսած,
«Ինչպես նուսահատ անմեղ աղավնին,
«Բազեի աչից անգութ նալածված:

«Անդունդի վերա այսպես հանի ժամ,
«Օրորաց նոնաց տարաբախտ նավը.
«Գիշերը կոխեց... կայծակը բռնաց...
«Ուլ ավեց բոլոր անհատակ ծովը...

«Կայծակի բունդը, մրրիկի ձայնը,
«Ահուլ աղաղակը կատաղի ծովի
«Միախառնվեցան վերջին ձայնի հետ,
«Ու առնակեցին այնման շատ հոգի:

. . . . . .

Մրրիկը անցավ, ծովը հանդարտեց.
«Շատ հեռի չէինք մեք ծովեզերից...
«Ջրերեն դաշտում, դեռ նոր խաղաղած
«Մի ապառաժուտ կղզի երևեց:

«Ահա՛, նա դարձյալ ծովում լողալով
«Գիմում է դեպի ֆարֆարուտ կղզին.
«Մեք տեսանում ենք... բռնեց ֆարերից
«Ել շուտ վեր ելավ իբր անհյուր մարմին:

«Հոգնած, ուժաթափ, մինչ վեր բարձրացրեց
«Յուր առտաստումով լցված աչքերը,
«Եվ աճա լուսինը ամպերի տակից
«Դուրս սողաց տեսնել նորա երեսը:

«Ես շատ նայեցա.... բայց մեր նավն արագ
«Վազեց դեպ հառաջ.... կորավ իմ աչքից....
«Եվ այլ մյուս անգամ մինչև այս րոպես,
«Պատմ գուցե հավերժ զրկվեցա բախտից:

«Չէ, այն երա՛զ էր... հեռի՛ ինձանից,
«Հոլական ցեռր, հոգի գիշատող.
«Թողե՛ք ինձ հանգիստ մաշել իմ կյանքը
«Եվ խաղաղ արտով մտնել դեպի հող»[14]:

Երբ ավարտեց երգը օրիորդ Մարիամը, ամենի աչքը դարձան Կոմսի վերա, որ լսեն նորա կարծիքը այդ երգի մասին: Բայց Կոմսը ոչինչ չասաց, միմիայն շնարհակալ եղավ օրիորդից, որ զվարճություն պատճառեց, երգելով ու ածելով. սակայն Կոմսի երեսը չէր ցույց տալիս, թե նա զգացած լիներ զվարճություն, դորա հակառակ միմիում և միմիում էր նորա դեմքը, որքան երգը մոտենում էր վերջանալուն: Նորա հիպնակը էր ինքը Կոմսը, և երգի բովանդակությունը առած էր առաջապես պատահած անցքից....

— Արդեն ժամանակ է դեպի տուն դառնալու,— ասաց Կոմսը և հրաժարական ողջույն տալով բոլորին, խոստացավ օրիորդ Մարիամին նորից լինել Յումի գալու ժամանակ: Կոմսը անձնատուր լինելով տխուր մտածություններին դուրս գնաց Մահտեսի Թումասի տանից:

Ժ.

Այն քաղաքի մեջ, ուր անցանում էին վերևում պատմած անցքերը, վաղուց ահա բնակվում էր պ. Հովնաթանյանցը: Այս անունը առաջին անգամ պատահում է մեր ընթերցողներին, ուստի պարտականություն ենք համարում մի փոքր անդնդություն տալ նորա մասին, որ հետո կարողանանք նորա տանել մեր ընթերցողը նորա տունը. այն րոպեին երբ Կոմս էմմանուելը անձնատուր եղած մելամաղձության ուղղում էր ընթացքը դեպի յուր օթևանը:

Պ. Հովնաթանյանցը, որպես, հայերի աչքով, մի փոքր ի շատե հարուստ վաճառականի գործակալ, դնում յուր երիտասարդության ժամանակ ուղարկված էր այստեղ: Նա բավական միջոց հառաջ վարելով յուր պարոնի գործերը այս քաղաքում, իհարկե ոչ առանց անձնական օգտի, վերջա-

պես դարձել էր նորան ընկերակիցը։ Բնության մեջ կա մի օրենք, որ միմեանց է հակադրում և կամ խանգարվում է որևիցե զգայարանը մարդու, կամ այլ կենդանու կազմվածքի, իսկույն մի այլ զգայարան ավելի զորությունն և նրբությունն ստանալով կատարում է, գո՛նե կիսով չափ, այն խանգարված զգայարանի պաշտոնը։ Կույր մարդերի ձեռքի մատները կամ առհասարակ շոշափողական ջլերը այնպես զորանում են և նրբանում են, որ մի մաշված դրամ ևս շոշափելով կարո՛ղ են հասկացնել կուրին դրամի որպիսությունը և արժեքը։ Տեսողությունը խուլ մարդերի նրբանում է և զորանում է մինչև այն աստիճան, որ առանց մի ձայն լսելու, միմիայն նայելով խոսողի բերանի, դեմքի և ձեռքերի շարժողություններին, խուլը կարողանում է հասկանալ թե ի՛նչ էր ասում նորա հանդեպ կանգնած մարդը։ Այս օրենքը, բնական և բժշկական գիտությունների մեջ, հայտնի է անունով անտագոնիսմոս (Antagonismus)։

Երևի թե այս, կամ սորա նման մի օրենքի հիմքի վերա, կամ գուցե մի այլ բնական պատճառից, պ. Հովնաթանյանցը, ամենևին զուրկ լինելով կրթություններից և դաստիարակություններից, շատ վարժ և հաջող կերպով սկսեց յուր առևտրական գործողությունքը։ Նա ձեռք էր զարկում գործերի նույն վստահությամբ, ինչ վստահությամբ հմուտ և վարժ որսորդը ուղղում է յուր հրացանը որսի վերա, հավատի լինելով, որ շուտով պիտի գետին ընկնի որսը որսորդի օգտի համար։ Պ. Հովնաթանյանցի բախտից, ժամանակը ձեռնտու էր նորան, բանների կարգը ևս հաջողում էր... Մի քանի ժամանակից հետո սկսեց նա ձեռք զարկել մեծ մեծ գործերի. սկսեց յուր վերա առնուլ զանազան առևտրականական պաշարներ պատրաստելու պարտականություններ։

Ո՛ւր մնացին նորա նախկին պարոնը կամ ընկերակիցը. նա սկսեց նայել նոցա վերա այնպես, ինչպես մի մարդ կնայեր բարձր աշտարակից դեպի վայր, փորը ինչ հառաջ, յուր հետ միասին մի հատակի վերա կանգնող մարդերի վերա։ Չար լեզուներ ասում էին... ի՛նչ ասում էին... ասում էին, թե... ինչե՛ր չեն ասում չար լեզուները... Առհասարակ պիտի իմանալ, որ այսպիսի գործողություններուն մեջ մտանող մարդը, եթե հետևում է այն վարդապետության, թե նպատակը կարևոր հնարը, ապա ուրեմն շատ հեշտությամբ կարող է կարճ ժամանակից միլիոնների մասին խոսք բանալ. ըստ որում, որքան քայլ, այնքան շահաստացություն։ Բայց ընդհատ պիտի է ասել, ինչո՞ւ չէ պիտո օգուտ քաղել դիպվածներից, օգուտը գողություն չէ, հափշտակություն չէ, այլ հառաջ է բղխում գործերը օրինավոր և խելացի կերպով հառաջ վարելուց։ Դևևնք, թե ևս պարտականություն էի առել իմ վերա տերության զորքի համար պատրաստել մի բան, ասենք թե կոշիկներ։ Եվ այսպես, ինձ հանձնած է երկու հարյուր հազար կոշիկ պատրաստել, յուրաքանչյուր կոշկի համար ևս պիտի ստանամ, դևևնք թե մի և կես մանեթ։ Բայց այն կոշիկը, որ ցույց էին տալիս ինձ որպես գաղափար, որի նմանը ևս պարտական էի հատուցանել կառավարությանը, ինձ նստելու էր մի մանեթ և մի քառորդ, և այս

կերպով ամեն մի կոշիկից իմ առանձին էր մի բառորդ, այսինքն է բան և հինգ կոպեկ արծաթ. մի՞թե հիմարություն չէ լինելու իմ կոշիկից, եթե ավելի ստոր արժանավորության նյութերից չպատրաստանամ կոշիկները այնպես որ յուրաքանչյուրը ինձ մի մանեթի նստելով, կես կես մանեթի դուռ օդուռ բերեին։

Եվ այսպես պ. Հովնաթանյանցը հառաջ գնալով, արդեն վազուց և բնտանեկրի տեր դարձած էր։ Ուներ բավական մեծ գերդաստան, կին, որդիք, դստերք, որոնց բացի նյութական հարստությունից ոչինչ ուներ թողնելու, բայ որում հոգարարձու չէր եղած յուր զավակների կրթության մասին։ Պարոնը ապրում էր բավական լավ, և նորա մտա եվ ու մուտ ունեին ոչ թե միայն նորա նման մարդիկ, այլև... զանազան խորհուրդներով։ Պ. Հովնաթանյանցի տեսությամբ, բոլոր աշխարհը շարժող և կառավարող ուժը և զորությունը էր արծաթը, և նա այնպիսի մարդկերից էր, որոնք դեռևս պարմանում են, թե ի՛նչպես աստված ստեղծել է աշխարհը առանց մի օգտի ակնկալության, և թե ի՛նչպես ամենայն օր երկնքի լուսավորքը լուսավորում են երկիրը առանց մի բան առանալու։ Այս պարոնը ուներ նույնպես մի քանի եղբարք, որոնցից փորքը ավելի մտա հարակցություն ուներ մեր նկարագրած պարոնին քան թե մյուսքը։ Կինը և դստերքը տեր լինելով ավելի հարստության, քան թե յուրյանց կարգի շատ մարդիկ, դատապարտելի հպարտությամբ նայում էին ուրիշների վերա, և նոցա հայացքի մեջ կար մի թունավոր բան, որ հանդիպողի երեսին էր գարկում ստոր շքավորությունը, իսկ յուրյանց հարստությունը։ Դստերքը, այսպիսի ուղղությամբ և այսպիսի խանդարված բարոյականությամբ ատմոսֆերայի մեջ ածելով և կրթվելով, դեռևս երեխայությենից սկսեցին մարդու երջանկությունը որոնել ամենայն տեսակ զեղխության մեջ։ Որդիքը, միանգամայն մարմնից բաղկացած, բթացած ուղեղներով և ասես թե արբեցած յուրյանց հոր հարստությամբ, քոլորովին անզգայացած դեպի ամենայն մարդկային և վայելչական բան, յուրյանց անտատանականության և անընդունակության պատճառով, դուրս քշվեցան դպրոցից, ուր դրել էր նորանց նոցա հայրը, ո՛չ այն դիտավորությամբ, որ բան ուսանեին (պ. Հովնաթանյանցը, յուր սրտում, առեցող էր ամենայն լուսավորության), այլ մանավանդ, ուրիշներին բամբասանքի տեղիք շատու համար, որպես թե զանցառու էր զավակների կրթության մասին։

Ինքը պարոնը, ինչպես սովորաբար լինում են շնչին դրուններից վեր բարձրացող մարդիկը (թեպետև պ. Հովնաթանյանցը դուրկ էր ամենայն բարոյական բարձրություններից), անփոփանել էր ինքյան մի հիմար հպարտություն, և ամենայն հասարակության մեջ կամենում էր խելացի մարդու պաշտոն վարել։ Նորա ամեն մի քայլը, ամեն մի շարժվածքը հաշված ու համարած էին, որպեսզի, մի փորր ծանրություն բարքի տալով ինքյան գրավչ տեսողների համարումը։ Եվ նա սխալված չէր յուր հաշվում։ Հայոց ազգի մեջ դժվարին չէ առանալ մեծարողական պատվանուններ, որովհետև նախ և հառաջ սովորքը չգիտեն յուրյանց արժանա-

վորութիյունը, երկրորդ, այդ պատվանուններուն արժանավորութիյունքը։ Հարկ չկա ասելու, որ այս ճանապարհով ստացածը լինում է բոլորովին անխորհուրդ։

Մեր պարոնը, մանավանդ խաժամուժ ամբոխի աչքերը ներկելու համար, ազգասիրութիյուն էր ցույց տալիս այնպիսի տեղերում և դիպվածներում, ուր հարկ չկար յուր ցանկութիյունը խակուն գործով ապացուցանելու։ Ի՛նչ մի դժվար բան է խոսքերով միայն լինել ազգասեր և այսպիսի ամուլ շատախոսութիյամբ, առանց ամենայն զոհաբերութիյան, տոնացուցի մեջ դրվելու արժանի համարվիլ... Մեր մեջ, ինչ ասես կարելի է։ Պ. Հովնաթանյանցը խոսում էր դպրոցների վերա և բերան սերտած բառերով հաստատում էր նոցա օգուտը, առանց ամենևին գաղափար ունենալու, թե ի՛նչ ասել է դպրոց, և թե ինչպես պիտի լիներ նա, որ լցուցաներ յուր խորհուրդը։ Պարոնը կլիներ այսպես մոտ հիսուն տարեկան, միջահասակ, հաստատուն և ճաղատ ճակատով. նորա հոնքերի և ընչացքների սևութիյունը մանավանդ ավելի որոշակի հայտնի էր լինում նկատողին, որքան անասնական անհոգութիւններից ուռած թշերը կարմրում էին նորա անխորհուրդ երեսի վերա։

Երբ ինձանից հարցաններին, թե ո՛ր բանից մանավանդ զգվում եմ աշխարհի երեսին, ապա պատասխանելու էի, թե մի երեսից, որ ոչինչ մարդկային բան չէր ցույց տալիս։ Երեսը արդարև հոգու պատկեր է. հոգու ամեն մի շարժվածքը չլերի անբացատրելի միջնորդութիյամբ երևում են երեսի գծերի վերա։ Եվ երեսը, որ ոչինչ էր ցույց տալիս, վկայում է ոչնչութիյունը հոգու, որ նստած էր մի կազմվածքի մեջ։ Սա գերադասում եմ չքութիյունը, քան թե լինելութիյունը, երբ մարդը պիտո է լիներ ու ապրեր որպես մի լոկ բուսական կամ շնչական արարած։ Սա անգութ չեմ դնալ որևիցե արարած, բայց դորա փոխանակ հարցում եմ նորանց յուրյանց տեղում. մարդկային պատկերի տակ անասնութի՜ւն... կղկղա՛նք մարդկութիյան։

Բայց պ. Հովնաթանյանցի համար, այսպիսի մտածութիյունք երազի նյութ ևս չէին, մինչ ամբողջ գիշերը թավալվում էր յուր անկողնի մեջ խռխռալով։ Նա քնած ժամանակ ևս մտածում էր շահատացութիյան վերա. առավոտը զարթնում էր և նորա կիսաբաց աչքերին երևում էին ոսկեղեն սարեր։ Նա հաց էր ուտում առանց մոռանալու ճիշտ մաթեմատիկական հաշիվը, թե այն օրվա ճաշի համար ծախսված արծաթից, ո՛րքան բաժին հասանում էր այն վերջին, ամենափոքրիկ հացի փշրանքին, որի տասը կտորը միասին կարող էր առնել մի մրչյուն դնալի յուր բունը։

Նա ստացել էր քարյա, երկու հարկով բավական ընդարձակ տուն, և այս տան գլխավոր արժանավորութիյունը էր այն, որ միևնույն ժամանակ պատկանում էր երկու փողոցի. նորա պատուհանքը նայում էին դնալի արևելքը և արևմուտք։ Թո՛ղ որքան կամին զրպարտեն պ. Հովնաթանյանցին, որպես թե նա հոգաբարձու չէր յուր ընտանիքի երջանկութիյանը. նորա այսպիսի տուն ընտրելը արդեն հիմնավորապես ապացուցանում է,

Թե որքան շատ մտածում էր և հոգս էր առնում յուր ընտանիքի մասին։ Մի խուլ տան մեջ նորա ընտանիքը կարող էին ձանձրանալ, բայց մի այդպիսի տան մեջ, որի պատուհանքը նայում էին դեպի դանազան փողոցներ, երբեք չէր կարելի ձանձրույթ զգալ, որովհետև մանկահասակ դատերքը երբեմն այս և երբեմն այն պատուհանից կարող էին մի անմեղ հայացքը ձգել անցավորի վերա։ Ուր ինդուկը այն մեծախորհուրդ հոգացողությունը ալ. Հովնաթանյանցի, որով մի ապահենկատ սենյակ ևս հավելացուց յուր տան կողքին, որի ծագկազարդ վայելչությունը կարող էր տրամադրել պատանի օրիորդների սիրտը և հոգին դեպի մի բոմանական կյանք...

Պ. Հովնաթանյանցի մասին այսքան տեղեկություն տալուց հետո, շտապում եմ սկսանել իմ պատմությունը այն րոպեից, երբ, ինչպես ասացի, Ռոմս էմմանուելը գնում էր յուր օթևանը։

Արդեն բավական ուշ էր, և պ. Հովնաթանյանցը միայնակ նստած յուր առանձնարանում նայում էր ճրագին, որ չգիտեմ ոչինչ անտեսություն և անխնա վառվում է տան սիրուց վնասի համար։

Գունաթափած էր երեսը և թրթիռները դուրս էր գարկել ճաղատ ճակատի վերա կաթ կաթ, ամենևին նույն կերպով, ինչ կերպով յուզում ամանի մեջ կանգնում է սրսկած ջուրը։ Նեղության կամ բարկության ժամանակ ձեռքերը հնշել և տրորել ժառանգություն է փորոգի մարդերի. պարոնը վեր կացավ սոֆայի վերայից, ուր ընկած էր որպես մի շնչավոր և ձեռքերը տրորելով սկսեց ման գալ սենեկի մեջ զանազան ուղղությամբ, անհավասար քայլերով։

«Չէ», ասաց նա, «պիտի այս բանի առաջը առնուլ. անշուշտ վատ կլինի սորա վերջը և կխայտառակվի իմ տունը այս քաղաքի մեջ միևչ ի ապառ։ Ես շատ անբախտ մարդ եմ», շարունակեց նա, «անբախտ, որպես եղբայր, անբախտ, որպես ամուսին, անբախտ, որպես հայր։ Ով այս քանի տարու մեջ ի՛նչ բաներ անցկացան իմ գլխից. և այդ բոլոր անախորժությենների, վատահամբավությենների պատճառքը ո՛վքեր են. եղբայր, եղբոր կինն, դատերք, փեսա, որդիք և վերջապես ամուսինս։ Սատ՛ան է, որ ասում են, թե աշխարհի երեսին, ամենայն լավություն վճարվում է ապերախտությամբ։ Եղբայրս որ, եթե ես չլինեի պիտի ծառա լիներ ուրիշին, գլխավոր պատճառն է այս բոլոր բաներին։ Նորա կինը, թեև դեղեցիկ հրեշակված, սակայն իմ ընտանիքի համար դարձավ մի անախորժության անլուծանելի մակարդ։ Ո՛վ ճանապարհից հանեց իմ դուստրը, եթե ոչ նա. ո՛վ սովորեցուց նորան... ա՛հ, մտածելը անգամ դառն... իսկ որդիքս, որդիքս. ի՛նչ առնեմ, ո՞ւմ ասեմ, իմ երեսի կեղտը պիտի որ ես ինքս ծածկեմ օտարների աչքից...»։

Մինչդեռ այսպիսի մտածմունքով ման էր գալիս նա տան մեջ, ներս մտավ ծառան և հայտնեց բժշկապետի գալը։ Պ. Հովնաթանյանցը իսկույն ընդունեց մի պատշավոր դրության և, աշխատելով մի փոքր գոր-

ծունյա մարդու կերպարանք ցույց տալ բժշկապետին, հոնքերը մոտ քարշնց աչքերին։

Դուռը բացվեցավ, և բժշկապետը երևեցավ շեմքի վերա։

Սովորական ողջունաւորութիւններից հետո, պ. Հովնաթանյանցը հարց արնց.

«Ի՞նչպես գտար»։

— Չէ կարելի գովել,— պատասխանեց բժշկապետը։— Նորա հիվանդությունը խճճվում է վերահաս ախտավոր հայտնութիւններով։ Քաջ դիտեր դուք, որ նա եղած չէ իմ բժշկական հոգաբարձութեան տակ յուր ամուսնութիւնից հառաջ. ես այն օրից տեսա ձեր դուստրը, երբ նա կապտեցավ իմ մանկաբարձական օգնութեանը։ Նորա, հառաջուց ունեցած հիվանդութեան մասին այսքան միայն լսած եմ բժշկող պարոններից, թե հառաջանում էր արյունի անկարգ շրջանառութիւններից տեղական գործարաններում։ Ես ընդունում եմ հարգելի բժիշկների վկայութիւնը, որպես առույգ իրողութիւն։ Մարդկային կազմվածքը քաղկանում է զանազան գործարաններից, որոնք մեծ հարաբերութիւն ունին միմյանց հետ. նոցանից մինը խանգարվելով, խանգարում է մյուսը, որով շատ անգամ վտանգվում է և ամբողջ կազմվածքը։ Դուք գանգատել եք ինձ շատ անդամ, թե ձեր դուստրը երկար ժամանակ ունեցած էր էպիլեպսիա, և թե այժմ, թեպետև չէ երևում, սակայն առնչ առնչ տաստիկ ծանրանում է նորա շնչառութիւնը։

Ինչ ասեմ. եթե բժիշկ կամ թե բնագետ լինեիք, կարո՛ղ էի հասկացնել ձեզ, թե տեղական գործարաններում արյունի անկարգ շրջանառութիւնը, ի՛նչ կերպով ծանրացնում է շնչառութիւնը։ Բայց այժմ, որքան ես բացահայտեմ, այնուամենայնիվ դուք հասկանալու չեք. այս ես կա, որ ձեզ այնքան հարկավոր չէ ցավի պատմութիւնը, որքան այդ տկարութեան դարման առնելու հնարը։

«Ամենևին ճշմարտութիւն է, որ խոսում եք», ասաց պ. Հովնաթանյանցը, «և ես մեծ հոժարութեամբ պատրաստ եմ լսել ձեր մարդասիրական խորհուրդը»։

— Լավ ասացիք,— պատասխանեց բժշկապետը,— իմ տալու խորհուրդը չէ միայն բժշկական, այլև բարոյական. տարակույս չկա, որ բարոյականութիւնը հիմնված է մարդասիրութեան վերա։

«Մեղուն գրել է, Ճռաֆաղը[15] ևս հաստատեց...»

— Ես չգիտեմ, թե ի՛նչ է գրել մինը և ինչ է հաստատել մյուսը. բայց իմ խորհուրդը,—շարունակեց բժշկապետը, ընդհատելով պարոնի խոսքը։

Պ. Հովնաթանյանցը յուր կարգով ընդհատեց նորա խոսքը.

«Պարո՛ն բժշկապետ, ես բարեբար և գործակալ էի Մեղուին. Ճռաֆաղը ևս հետի չէ մնացել իմ շնորհից, խնդրեմ չմոռանալ»։

— Այդ բաները այնքան աննշան են և մանավանդ անխորհուրդ ձեր դասեր բժշկութեան մասին, որ չգիտեմ, թե ինչ մտածեմ, թե ի՛նչ պատճառով մնջ եք բերում այդ բաները։

«Ներողություն, ներողություն, ինձ իմնցավ ին ազգանունյան վերա ևնք խոսում ձեր հետ»։

— Ուրեմն դուք չգիտեք ձեր խոսածը, և ինչպես վարձկան լալականը ննջեցեալու տունը տնտածն պես սկսանում է յուր ողբը, այնպես և դուք մեքենաբար խոսում եք այդպիսի բաների վերա, առանց զգալու...

«Ես շատ պարապած եմ, ուստի շատ անգամ չվիրավում եմ», պատասխանեց պ. Հովնաթանյանցը, ծածկելով յուր տհաճությունը։ «Սակայն խնդրում եմ լսել ձեր խորհուրդը, որի պատճառով այսքան խոսք հատցացավ»։

— Իմ առաջին և վերջին խորհուրդը այս է, որ հետ հրավիրեք դուք ձեր փեսան... Համաձայնեցեք ինքներդ. ձեր դուստրը պատրվում է պատանեկության հատակում. նա տակավրած լինելով քնքշության, արվեստական կերպով դարձել է մի ջերմին խառնվածքի տեր, կենակցությունը յուր փեսայի հետ այս դարումս միակ հնար է կին մարդերի համար, ազատվելու յուրյանց ծնողների կամ ամուսիններների խոսքերից և նկատողություններից. մանավանդ որ ձեր դուստրը, ամենայն օր շրջապատած է հրապուրչներով, ամենայն օր բորբոքված է նորա ուղեղը... ևս կարճ եմ ասում ձեզ, որ նրին դուք չկատարեք իմ առաջարկությունը, ձեր դառը բանը շատ և շատ վատթարանալու է։

«Ներկայումս այդ առաջարկությունը կատարել ինձ ամենևին անհնար է», պատասխանեց պ. Հովնաթանյանցը։

— Բայց ձեր դառը համար արդանդի կատաղություն (Nymphomania) ասանելը ամենևին հնարավոր է,— պատասխանեց բժշկապետը դեմքանական առնությամբ։

«Դուք վաճառական չնք և ոչինչ հաշիվ չգիտեք. վաթսուն հազար մանեթ...»

— Իսկ ձեր համար բացի մանեթներից, այլ բան չկա՞ աշխարհիս երեսին։

«Մի՞թե դուք առանց օգտի կատարում եք ձեր բժշկական պաշտոնը»։

— Ես ոչ որին պարտական չնմ ձրի ծառայել. բայց իմ համար, իմ անձի համար, միշտ ընչին արժեք ունի արծաթը։

«Այդ կորստական սկզբունքը հերիք պատճառ է, որ դուք չհարստանայիք երբեք»։

— Դորա փոխանակ, դուք հարստացել եք. բայց արծաթի ժանգը նստել է ձեր ուղեղի վերա։ Երբեք ցանկանալու չէի այդպիսի հարստություն։

«Դուք շատից դուրս եք գնում»։

— Նորա համար, որ դուք երբեք չնք եղած չափի տակ. և ձեր այդպիսի անբարեխառնությունը ցոլանում է ձեր ընտանիքի և ձեր զավակների վերա։ Պարոն, խնդրեմ, թողլ տվեցեք ինձ, որպես բժշկապետի, մի քանի նկատողություններ առնել ձեր ընտանեկան կյանքի մասին, բարի խորհրդով։

«Ախ ես, խնդրում եմ, պարոն բժշկապետ, ինչ հնար է աղատ թողել ինձ ձեր նկատողություններից. պատճառ, ամենայն խրատ և խորհուրդ որ ուղղակի վերաբերվում էին իմ ընտանեկան կյանքին, որ մի բան ևս հաստատակաց չունի ձեր հետ, պատշաճ չեմ համարում լսել»։

— Բե՜ ձեր ընտանեկան կյանքը մի բան ունի՞ հաստատակաց իմ հետ, կամ ի՛նչպես և ո՛ր չափով ունի, այդ ինձ դուք ուրանաք, քաղաքը վկայում է... ես այժմս ամենի միայն վկայություններով և աշխարհի երևոյթին կատարված փորձերով ապացուցանել ձեզ, ինչ մի ընտանիք, ինչպես ձերն է, երբեք ճաշակելու չէր երջանկության բաղդրությունը։

«Ինչու այդպես խիստ պատժում է նախախնամությունը իմ ընտանիքը»։

— Ո՛հ, սխալվում եք, պարոն. այդ, նախախնամության գործը չէ. Նախախնամությունը միօրինակ պահպանում է և դարմանում է ամբողջ տիեզերքը առանց խորության առնելու ինչ մինը մարդ էր, իսկ այն մյուսը մի խեղճ ճճի։ Նախախնամության գործում, հավասարապատիվ գավակներ են բոլոր արարածք, որ գոյանում են և պահպանվում են բնության մեջ։

«Ես մի ժամ առաջ ինձ համարում էի անբախտ, բայց այժմ տեսանում եմ, որ դուք առավել անբախտ եք եղած, քան ինչ ես։ Հավատարության որոնել այս աշխարհում, արդեն իշվառություն է. պատճառ, մի մարդի չափով ևս խելք չկա դորա մեջ։ Ինչպես կարելի է, որ ես իմ պատվանունների և պատվանշանների հավասար լինիմ իմ եղբոր հետ, որ ոչինչ ուներ. դուք ուրանում եք մարդկային արժանապատվությունը, պարոն բժշկապետ»։

— Ես խոստովանում եմ և քարոզում եմ մարդկային արժանավորությունը մարդկության և ոչ արտաքին, պատահական, կամ դնած պատիվների մեջ. և դուք, դերազանց համարելով ձեզ քան ինչ ձեր եղբայրը, անդի՞ք ունեիք բամբասել նախախնամությունը, ինչ նա էր պատճառը, որ ձեր ընտանիքը ճաշակելու չէր երջանկության բաղդրությունը։ Ուր չէ խոստովանվում մարդկային հավասարություն, ուր յուրաքանչյուր մարդ կցորդ չէ ազատության հավասարապես, այնտեղ թագավորում է մոլություն։ Իսկ ուր մոլություն է, չկա հոգու խաղաղություն. այնտեղ սիրտում է մի դժոխային ամբոխամն և նախանձի որդերը նա են գալիս այն ապականյալ սրտի վերա։

«Արդյոք այդ բաները հարակցություն ունե՞ն իմ դատեր հիվանդության կամ բժշկելու հնարի հետ»։

— Անտարակույս, այո՛։ Բժշկության մեջ գործակատար են ոչ միայն դանազան մարմինք, որ շատ անգամ պիտոյ էր զգուշությամբ ներս բերել հիվանդի կազմվածքի մեջ, այլ, գլխավորապես հոգին։ Որևիցե անախորժություն խանգարելով հոգու և սրտի անդորրությունը, ձգում է ամբողջ կազմվածքը մի ալեկոծված վիճակի մեջ։ Այդպիսի վիճակում ոչ մի բժիշկ չէ կարելի հիվանդը բժշկել, այլև առողջ մարդիկ կարող են հիվանդ

պանալ և մեռանել եմ։ Դո՛ւք, ձեր տարապատման ժլատության պատճառով, չկամենալով կատարել ձեր խոստումները, որ արել էիք ձեր փեսային, հարկադրել եք նորան հեռանալ ձեր ընտանիքի միջից...։ Հնարիք չէր այս, դուք հետ եք պահել ձեր մոտ նորա ամուսինը, որ, ասեվածային և բաղաքական օրենքներով, պարտական էր հետապնդիլ նորան և գնալ նորա քամակից։ Մի՞թե այս անբնական գործողության հետևանքը չէ, որ այսօր ձեր դուստրը գտանվում է այդ վիճակում։ Հայտնի բան է, մինչդեռ ձեր փեսան հեռանում էր այս քաղաքից, դուք մոտածեցիք, թե ոչինչ պակասելու չէր ձեր գտած երը այստեղ, բայց մոռացաք, որ պակասելու էր նորան մի մարդ, որի պաշտոնը օրինավոր կերպով ոչ որ չէր կարող յղուցանել, և որի հետ զուգված էր ձեր դուստրը այնպիսի անբակտելի կապով, որ մարդու ձեռքը իշխանություն չունի բաժանել։ Դո՛ւք չարաչար գործ դրեցիք ձեր ծնողական իշխանությունը, որ, դավակի ամուսնությունից հետո, վերջանում է իսկույն. դո՛ւք չարաչար օգուտ քաղեցիք ձեր հարստությունից, և առանց մարզկային արտի զգացողության ընթանալով ձեր դստեր և փեսայի հետ, նոցա հոգու անդորրությունը փոխանակեցիք արծաթի հետ։

Պ. Հովնաթանյանցի երեսը ծածկվեցավ կարմրությամբ, տհաճությունը կաթում էր նորա մեռած աչքերից։ Նա վերջին ջանքը գործ դրեց յուր անձը սառնարյուն ցույց տալու, որովհետև ձեռնտու չէր պատերազմ հայտնել բժշկապետին, նախ, որ նա գիտեր պ. Հովնաթանյանցի բոլոր ընտանեկան գաղտնիքը, և երկրորդ, որ պարոնի ընտանիքը միշտ կարոտ էր բժշկապետի այցելությանը...

«Ի՛նչ պիտո է առնել», ասաց պ. Հովնաթանյանցը, մի փոքր ուղղվելով, «երբեմն գանազան հանգամանք ստիպում են մեզ այլապես ընթանալ, քան թե ցանկանում էինք»։

— Մարդը կորուսանում է յուր արժանավորությունը, եթե կամք չունի, եթե գաղտնում է նորա մեջ ձգտողությունը։ Մեր պարտականությունն է պատերազմել հանգամանքների հետ և հաղթ հետ չհավասարվիլ ամեն մի հանգամանքի առաջև, որպես մի անբան անասուն կամ մի կոտոր կապերտ։

«Ուրեմն ձեր վերջին խոսքն է հրավիրել իմ փեսան, որի երեսը ցանկալի չէր ինձ տեսանել»։

— Այո՛, այդ է իմ վերջին խոսքը։

«Համաձայնեցեք, պարոն բժշկապետ, որ դուք ձեր խորհուրդը ավելցիք ինձ շատ խիստ խոսքերով»։

— Ճշմարտությունը միշտ աչք է ծակում։

«Ճշմարտությունը մի վերացական բան է, որով ամենայն մարդ արդարացնում է յուր գործերը»։

— Այո՛, և գողերը և հափշտակողը կամին հավատացնել աշխարհին, թե յուրյանց կողմում ունեին ճշմարտությունը, բայց այդպիսի դիպվածում չարաչար էր գործ դրված ճշմարտության անունը։

Վերջին խոսքերը ասելով դուրս գնաց բժշկապետը, յուր արծաթապահի մեջ դնելով մի տասն մանեթանոց թղթարծաթի։

Պ. Հովնաթանյանցը մնաց միայն։ Ժամը մոտ էր տասն և մինին։ Նա հնչեցուց զանգակը և երևեցավ ապաստավորը։

— Պողո՛ս,— կանչեց պարոնը,— կոչի՛ր շուտով Գրիգորը։

Գրիգորը գլխավոր գործակատար էր պ. Հովնաթանյանցի, և նորա ձեռքում էին բոլոր գործերի հաշիվքը։

Շատախոսով ներս մտավ գործակատարը։

— Ի՛նչ շինեցիք գործարանում,— հարց արեց պ. Հովնաթանյանցը։

«Ինչպես հրամայել էիք, ամեցի գործավորներին հարյուր քառասուն փութ արմիճ...»

— Ստատիկ պատվիրեցի՞ր, որ ոչ ովին բան չասեն։

«Այո՛, ասացի։ Երբ կավարտեք գործողությունը, հավելացուցի, պարոնը կպարգևե ձեզ բավական մեծաքանակ արծաթ արարի համար», պատասխանեց գործակատարը, ստրկական պատկառանքով,

— Շատ լավ. ևթե խոսք դուրս չգա գործավորներից, ոչ ով ոչինչ չէ իմանալու։ Այնքան կլայենկի մեջ հարյուր քառասուն փութ արմիճը մի մեծ բան չէ... ընդունողը վաղուց ատացել է երկու հազար մանեթ... անտարակույս, ընդունելուց հետո մի քան դարձյալ պիտո է անցնել նորան։

«Այո՛, իմ պարոն. բայց դուք շատ լավ իմանում եք այս գործերը։ Աշխատավորքը գործարանում անձնատուր են մեզ, ընդունողը արդեն հառաջուց պատրաստված... ոչինչ երկյուղ չկա։ ևթե կևերնք արդեն համարձակությանս, դուք բավական օգուտ կատանաք այս գործողություններից»։

— Հը՛մ, բավական օգուտ,— կրկնեց քիթ տակից պարոնը,— բայց ի՛նչ արժե ինձ այդ օգուտը, և ի՛նչ է մնում նորանից ինձ անփական։ Այս մինչև քերանը ծեփիր, այն մյուսին ընծա տուր... իսկ ո՛րքան դողալ մինչև քերանը ծեփիր, այն մյուսին ընծա տուր... իսկ ո՛րքան դողալ հարկավոր է, մինչև այդ բոլորը ամենայն ապահովությամբ կանցանեն ձեռքից։ Ամենայն անգամ ես պիտեմ, ևթե ի՛նչ եմ կրում. դնպարտամենտ դուռները մաշվեցան։

«Է՛հ, ձեզ պիտեն...»

— Գիտեն, պիտեն, բայց առաջին ժամանակները չեն այժմ. ասես ևթե իմ ասողը վայր է ընկել երկնքից։

Պարտականություն կա մեր վերա, պարզելով այս խոսակցությունը մի փոքր հասկանալի կացուցանել մեր ընթերցողներին բանի խորհուրդը։

Պ. Հովնաթանյանցը յուր վերա էր առած տերությենական հիվանդ նոցների համար պատրաստել, չգիտեմ ևթե որքան կլայենկյա անօրենք և համաններ։ Այժմյան հոգաբարձության խորհուրդը այն էր, որ հարյուր քառասուն փութ արմիճ խառնվի կլայենկի մեջ։ Սորա հետևանքը լինելու էր այն, որ կառավարությունը այդ արմճի քանակությունը պիտի ստանար որպես անգլիական կլայենկ։ Կարծում ենք, ևթե այժմ կհասկանան

մեզ, մանավանդ նորա, որ փորր ի շատե պատրաստ ունին կյանքի և արճճի արժողութիւնների վերա։

Մինչդեռ խոսում էր պարոնը յուր գործակատարի հետ, ամենայն պզուշութեամբ բացվեցավ նախասենեկի դուռը։ Պ. Հովնաթանյանցի առաջն դրած սեղանի վերա վառվում էին երկու հրագ, որ չէին լուսավորում սան հնարավոր անկիւնը, որ բացվեցավ դուռը. այս պատճառով ևս, դուռը բացվելուց հետո, շեմքի վերա երևեցավ միայն մի մառախլապատ կերպարանք։ Այս կերպարանքը երկու քայլ հառաջ առալով դնդի խոսողը, հետ դնաց հանկարծ երեք քայլ։ Պ. Հովնաթանյանցը չհասավ և չնկատեց այս կերպարանքը. բայց նորա պատահական հայացքից դնդի դրան կողմը սարսափեցավ կերպարանքը և սաստ մի հառաջուց գուշակեց որոտալու կայծակները։

Մի ընշված, խնդճ ոգորմելի սիրտ ամենայն վայրկյան, հարյուրներով զարկում էր այդ կերպարանքի մեջ։ Նորա սրտի և հոգու խռովությունը անցել էր չափից, հուսահատությունը արատապեցց նորան և նա հառաջ նկավ ոտքի մատների վերա երեք քայլ։ Նորա այդ երեք քայլափոխությունը կատարվեցավ հինգ րոպեում, հետո սակաց հանկարծ և մի վայրկենի մեջ, այնպես սաստիկ հետ գնաց դնդի դուռը, որ անզգուշաբար զարկելով և ազաղակ հանելով, դարձուց պարոնի ուշադրությունը դեպի այն կողմը։

— Ո՛վ է այդտեղ,— գոռաց պ. Հովնաթանյանցը բիրտ ձայնով։

Այս հարցմունքից հետո չէր կարելի այլևս ծածկվել, պիտո էր հառաջ գալ, և կերպարանքը, գլուխը կախած սորուկի պես, մոտեցավ սեղանին։ Դա մի ծառա էր, որ շորս ամիս ոչինչ վարձ չստանալով և հասած լինելով վերջին տառապանքի և նեղության, եկել էր խնդրել յուր անցած ծառայության վարձը։

—Ինչո՛ւ ես եկել,— հարց արեց պ. Հովնաթանյանցը։

«Պարոն», պատասխանեց ծառան դողալով, «խնդրեմ, եթե կարելի է, շնորհեցեք ինձ տասն արծաթ»։

— Ի՛նչ հաշվով տասն արծաթ. ինչի՛ դ է հարկավոր այդքան մեծ դումար...

«Պարոն, ես շորս ամիս է, բան չեմ ստացած. ամիսը հինգ մանեթով արդեն քսան մանեթ պատկանում է ինձ. բայց ես չեմ համարձակվում այդքան խնդրել, առժամս հերիք է տասն արծաթը։ Խնդրում եմ, ողթերդ համբուրում եմ, մի մերժիք ինձ, ես աղքատ տղա եմ...»

— Այդ բոլորը լավ, բայց ամսական հինգ մանեթի անուն ավելիր, այդ ի՛նչ հինգ մանեթ է։

«Իմ ամսական ծառայության վարձը»։

— Քեզ ո՛վ է կարգել հինգ մանեթ թոշակ. քո պես ծառան դեռ կեսյած հացի համար ևս պիտո է մի բան վճարել սիրողը։

«Պարոն, աղաչում եմ արդարադատ եղիք. մի՞թե վատ ծառայեցի մինչև այժմ, կամ մի՞թե այժմ զանցառու եղա իմ ծառայական պարտա-

կանուիյանը։ Ո՞չ ապաքեն դուք ինքներդ գուշեցիք ինձ, մինչ ևս երկու միլիոն կանգուն տասներկու կոպեկանոց կտավը, որ գնել էի իմ ձեռքով, ամենայն պաշար ընդունող աստիճանաւորին նշանակած տասն և ուղ կոպեկանոցի տակը։

— Կորի՛ր, անիծած, դո՛ւրս, դո՛ւրս, անզգամ։ Ապասի՛ր, ես քեզ այն օրը ձգեմ, որ օրական հացի կարոտ դառնաս, եղովյալ. հայ չե՞ս, քեզ մարդ ասողին ի՛նչ ասեմ։ Սորան նայիր, ծառայութիյանը նայիր, պահանջած վարձին նայիր.... կորի՛ր, կորի՛ր, որ աչքս չտեսանեմ։

Այլ բան չկար, որ խոսեր ողորմելի ծառան, ուստի դուրս եկաւ, անիծելով յուր ծնած օրը, յուր հայութիյունը, որովհետև ուրիշ ամենն անդ անարգվելուց հետո, հայ պաքոնի առաջև ևս անարգվում էր։

Մի՛ վրդովվիր, պատվելի ընթերցողդ, այս պատկերը պատկանում է պ. Հովնաթանեանցի նորին ընտանեկան կյանքին։ Բազմութիյան մեջ, նա դարձյալ երևելի հայ է, և միևը այն ազգասերներից, որոնք յուրյանց ազգասիրութիյամբ այնքան լցրել են օդը, որ բոլոր մարդկութիյան շնչառութիյունը դժվարացել է.... Նա ազգասեր է. աստված կյանք տա, աստված հատատա պահե, որ ազգը սիրելով, կառքերով մեն գա, աշխարհի վայելչութիւններով իմրի, արբենա. մեզ հայերիս պարծանք է և մեր ազգին մեծ օգուտ....

Մի քանի րոպեից հետո, երբ փոքր ինչ հանգստացել էր պ. Հովնաթանեանցը, պատվիրեց գործակատարին, շտեմարանի պատուհանների կատարամած ապակիների տեղ հատ թուղթ կպցնել, որ ընդունող աստիճանաւորը չկարողանա լավ նկատել պատրաստված հազարաւոր վարկուեանների մահուղի անպիտանութիյունը։ Այս ևս մի շատ զգուշաւոր հոգաբարձութիյուն էր. վաճառականութիյունը ևս ունի յուր մեքենութիւնները....

Գործակատարը պատրաստակամութիյամբ հանձն առավ կատարել յուր պարոնի պատվիրը ամենայն ճշտութիյամբ։

— Մուրհակը, որ ատացաք այսօր, վավերացուցա՞ծ է օրենքի զորութիյամբ,— հարց արեց պ. Հովնաթանեանցը։

«Այո՛», պատասխանեց գործակատարը և ձեռքը տարավ դեպի ծոցը, որ հանե և ցույց տա։

«Ներողութիյո՛ւն», ասաց նա, «հավատիկ մուրհակը, քայց այսօր երևկույին մի նամակ ատացա ձեր անունով քաղաքական տուրհանգակից, որ մոռանալով չմատուցի մինչև այժմ»։

Այս ասելով, հանեց գործակատարը մի փոքրիկ ծրար և տվեց պ. Հովնաթանեանցին։

Պարոնը արձակեց գործակատարը և սկսեց կարդալ նամակը, որի բովանդակութիյունը այսպես էր.

«Ողորմած պարոն.

«Ցավում եմ, որ ձեր կատագիրը դարձյալ զարկում է մեզ միմյանց. ցավում եմ մանավանդ, որովհետև երբեք ցանկալի չէր ինձ գործ ունե-

նալ ձեր հետ։ Չգիտեմ, թե ինչ կամիք դուք ինձանից։ Մի անգամ ձեր անզգուշության և դատարկաբանության փոխարեն ընկերացաք Հայի հայրենիքը[16]. բայց երևում է, որ փորր էր ձեզ այդքանը. դուք վերստին վշտացնում եք իմ այրական պատիվը մրոտ ճանապարհներով որ ես... բայց ո՛չ. ես չկամիմ բնավին ունենալ որևիցե հարաբերություն մի այնպիսի մարդու հետ, որին արհամարհում եմ հոգով և հոգու բոլոր զորությամբ։ Մի մոռանաք, գնի այսուհետև, զգուշությամբ բերան առնուլ իմ անունը. դուք չեք կարող ծամել և կուլ տալ նորան, նա կփշրե ձեր ժանտատ ատամները։

Կարծեմ, որ այս հառաջաբանությունը անհատնականալի չէ ձեզ. բայց հատատելուս մարդու հետ ավելի պարզախոս լինել մեր պարտականությունն է։

Ահերը նկա ես այս քաղաքը, որից երկար ժամանակ հեռացել էի, մի քանի բարեկամք ասացին ինձ, թե քաջափայլ պարոնի մինը ատացել է մի անատորագիր նամակ, որպես թե Աատրախանից, որի մեջ ամենը ցմեղ բաներ խոսվելուց հետո, ասվում է նորած, թե դուք հետամուտ եք խլել այդ պարոնի պաշտոնը և այլ այսպիսի շատ բաներ։ Դուք, իմանալով այս, իսկույն վճռում եք, թե պիտի է, որ ես լինիմ այդ հիմար նամակի հեղինակը, և այդպես հավատացնելով այն պարոնին, որի հետ վազ ուրեմն վերջացուցած եմ ամենայն հարաբերություն, բորբոքում եք դուք անգը նորա թշնամությունը դեպի ինձ։ Թե ի՛նչ է ձեր փաստը, և ի՛նչ հատատող վկայություն այդ մասին կարող էիք մեջ բերել, չգիտեմ, այլ այսքան դրականապես ատում եմ, որ ձեր կողմից այդպիսի կարծիք ատելը իմ մասին մեծ ցածություն է։ Իմ համար ոչինչ է այդ պարոնի բարեկամությունը կամ թշնամությունը, քատ որում սովորած չեմ բարեկամ լինել կամ ոտք լինել օգտի ակնկալությամբ, սակայն ձեր ընթացքի մեջ տեսանում եմ մի վերին աստիճանի ամարդություն։

Թողունք ամենայն հակառակարանող պատճառքը, այլ այս միայն առնունք աչքի տակ, թե դուք ի՛նչպես կարողացաք կարծել, որ Կոմս Էմմանուելը կարող էր երբևիցե մտածել, թե դուք կարող էիք հատանել այն պարոնի պաշտոնին։ Գուցե դուք ձեր ծանծաղամտությամբ երևակայում եք ձեզ մի նշանավոր մարդ, և ձեզ այդպես հավատացնում է ամբոխը ստորաքարշ մարդերի, որոնք աչքերը տնկել էին, որևիցե կերպով օգուտ քաղել ձեր հարստությունից, բայց, իմ աչքում ամենևին զանազանություն չունիք այն ոամիկներից, որոնց վերա գոռում է ձեր արծաթը. արծաթին եմ ատում և ոչ դուք, որովհետև արծաթին է տալիս ձեզ այդպիսի ամարդի իրավունք, և առանց այդ արծաթին, պիտի է մինը լինեիք այն ոամիկներից, եթե ոչ ավելի վատթար. քատ որում շատ ոամիկների սիրտ և հոգի այնքան ապականված չէ, ինչպես ձերը։

Կարծեմ թե ատացուցել էի ձեզ և ձեր ընկերակիցներին, թե տեղիք չունիմ ծակամուտ ճանապարհներով գործ կատարել, և իմ ատածը կամ պրածը ունիմ զորություն իմ ստորագրությամբ կնքելու, որին եթե վերջս-

տին մի նոր ապացույցի տեղ չկարողանա ծառայել այս նամակս, մի օր, երբ ինձնից կլինեմ գործերից, ցույց կտամ ձեզ ձեր անձը Հիշատակարանիս հայելու մեջ։

«Ուրիշ կերպ չեմ կարող վերջացնել նամակս, եթե ոչ այս խոսքերով, թե դուք վշտացնելով իմ պատիվը, պարտական եք զղջալ և քավություն տրոնել, այլապես ուրիշ տեսակ հաշիվ կունենաք իմ հետ և կզղջաք ձեր համառության վերա։

«Ողջ եղիք, ձեր անձը և բարքը փոխելու, այլև փորր ինչ խելք ուսանելու համար, իսկ ես մնում եմ միշտ պատրաստ, որքան կարող եմ ձեզ օգտակար լինել»։

«Ձեր իրավասությունը մնրժող «ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԵԼ»

— Ա՛ռ քեզ խայտառակություն,— բացագանչեց պարոնը, ձեռքը միմյանց զարկելով։— Не было печали, черти накачали, *որը ասում է ռուսը, շատ հարմար է այս հանգամանքներին, որոնց մեջ ընկա... Սուտչի է, որ ես, ասել եմ քաջափայլ պարոնին, թե Կոման էր այն անասորագիր նամակի հեղինակը. բայց այդ իմ անփոփական կարծիքը չէր. ինձ այդպես հավատացրել էին Մահտեսի Քուշարը և նորա երախտապարտ տանը։ Բայց արի տե՛ս, որ նեղիկայումս, Մահտեսին բոլորովին ազատ է Կոմսի հարձակումներից, որ ուղղվում է միայն իմ ընդդեմ։ Ինչպես առնել, որ մի կերպ վերջացնենք այս բանը... ինչ հիմար մտածություն. Կոմսը ո՛վ է, որ Հովնաթանյանցը երկյուղ կրե նորանից. ի՛նչ պիտո է առնէ, որի՞ն է վախեցնում։ Ես այսուհետև ավելի զայրացած կխոսիմ նորա վերա, և պատահած տեղը կաշխատեմ խապտա խայտառակել նորա և՛ անունը և՛ անձը։ Լավ, ապա եթե այդ նզովյալը վեր կենա, և ինձ ևս ինչպես Ընդրագին[17] մատին փաթիթ շինեն ու աշխարհին խայտառակեն։ Դեռևս ես ևս չունիմ այնպիսի գործեր, որ կարողանային երկյուղ կրել Կոմսի հարձակումներից. բայց ընտանի՞քս ի՛նչ առնեմ.... որ կարող է ծառայել Կոմսին առատ շռնմարանի տեղ....*

Այս մտածությունքը ընդհատվեցան տիկին Հովնաթանյանցի ներս մտանելով մեր պարոնի առանձնարանը։

Հովնաթանյանցը, բոլորովին ամբոխված, ծածկեց նամակը, որովհետև սովոր էր նա մեծ մարդ ցույց տալ յուրյան, մանավանդ յուր ընտանիքի առաջև։ Այսպիսի խայտառակող մի նամակ կարող էր ցածացնել պ. Հովնաթանյանցի պատիվը նորա ընտանիքի աչքում։

«Առավոտը ես գնում եմ ամառանոց», ասաց տիկինը. «արդեն ժամանակ է. համարյա թե ամբողջ քաղաքը բնակվում է այժմ ամառանոցում, իսկ մենք փտում ենք այստեղ։ Ամենայն պատրաստություն տեսնել ցույց, որ մենք էլ գնում ենք ամառանոց։ Ամենայն ինչ պատրաստ է. կահ կարասիք բարձված են սայլերի վերա։ Դուք էգուց ձեր գործերի ավարտելուց հետո, 5 ժամուն կգաք ամառանոց Հաշելուս, հավելյալ ցույց տիկինը։

— Ինչպես կարելի է,— պատասխանեց պ. Հովնաթանյանցը. նախ որ ես դեռ որոշած չէի գնալու օրը, երկրորդ, գործերս դեռ չեմ ավարտել, երրորդ, պաևերս հիվանդոսիյանը....

«Առաջինը», կարեց խոսքը սիկին Հովնաթանյանցը շատ խոսելով, «բնատանեկան բանների մեջ ներգործական է իմ ձայնը և վճիռը. երկրորդ, ձեր գործերը վերջ չունին. երրորդ, մեր գուատրը ամառանոցում ավելի հնար կունենա յուր ցավին դարման տանելու.... ես վճռել եմ և վերջացուցել եմ. էդուց գնում եմ, կամի՛ս, ևի, չկամիս՝ ինչպես դիտեաս»:

Տիկին Հովնաթանյանցի ցավը չէր, որ մի երկու օր հետս անցափոխվելին գնալի ամառանոց, բայց սիկինը այդ օրում ժամադրել էր ամառանոցում մի անասիյան...

Վերջին, վճռական խոսքերը ասելուց հետս, գուրս գնաց սիկինը:

Յավելի էր նայել պ. Հովնաթանյանցի վերա. նա մեռած էր, քան իբ կենդանի: Երկար ժամանակ անկնկի մեջ, դեպի այս և այն կողմը մատ գալուց հետս, մատավ անկողին, որշնլով յուր մտքում, առավոտան գնալ Կոմախ մոտ և բանը մի կերպ վերջացնել խաղաղությամբ:

Այդ դիշերը անցուց նա մի չերմախտական վիճակի մեջ, երբեմն մի բարակ դող և երբեմն չերմություն խաղում էին նորա մարմնի մակերևույթի վերա. վերջապես քուն եղավ.... քուն եղավ, բայց նորա աչքին, երազում, երևեցան Կոմս էմմանուելը և Բևզդադեն:

ՓՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԵԼԻ ՕՐԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

Ա.

Ապրիլի 20: *Այսօր շատ վաստակած եմ և բավական թուլլ, բայց տկարությունս բավական թնթև է և տանելի։ Այսօրյան օրագրությունս հարուստ է այն խոսակցություններով, որ պատահեցավ իմ և պ. Ֆ... մնջ, որ ընդհում ամենայն քաղաքավարության նկել էր իմ մոտ գիշերազգեստով (խալաթով)։*

Բարեկամական կերպով իրար ողջունելուց հետո, իմ հյուրի առաջին խոսքը այն եղավ, որ հարցանե ինձանից զանազան նորություններուն մասին. ես ոչ մի այնպիսի ուշագրության արժանի բան չգիտեի։ Պ. Ֆ. սկսանց յուր խոսակցությունը իմ հետ այսպես.

«Կարդացե՞լ ես Հայաստանի Մեղուի[1] 16-րդ համարը»։

— Չէ. չեմ կարդացել,— պատասխանեցի ես,— որովհետև չեմ առանում։

«Ափսոս, որ չես կարդացել. նորա հրատարակողը, Մանդինյանց Ստեփանոս քահանան, այնպես տղամարդի պես հանդես է եկել և խայտառակում է Նազարյանցին և Նալբանդյանցին, որ ասել չէ կարելի։ Հավատա՛ ինձ, այն օրն է ձգել նորանց, որ կարծեմ թե այդ երկուքը ես ղղջացած լինին յուրյանց գրածների վերա. մանավանդ այսպիսի հզոր և գիտնական հակառակորդի պատահելուվ»։

— Ես հիմարությունների կարդացող չեմ, և ժամանակ չունիմ ես ուշադիր լինելու տգետ մարդերի ցնորամիտ վայրախոսության, և չեմ կարծում, որ Նազարյանցը և Նալբանդյանցը ղղջացած լինեին յուրյանց մինչև այժմ գրածների վերա, ինչպես դու ասում ես, ճանդիպելով մի այդպիսի հզոր և գիտնական հակառակորդի։ Ձեր աչքումը, հշմարիտ, այդպիսի հզոր և գիտնական հակառակորդին։ Ձեր աչքումը, հշմարիտ, դուցե մի անկիրթ և բյուր տեսակ նախապաշարմունքով լցված մարդ ունի մի հարգ ու արժանավորություն և դուցե կարող էիք դուք այդպիսի մի մարդ գիտնական անվանել, իսկ իմ կարծիքը Մեղուի հրատարակողի մասին շատ անշահ է։

«Մանդինյանց տեր Ստեփանի՞ մասին...»

— Ինչո՞ւ ես զարմանում. ի՛նչ մի երևելի մարդ է դու։

«Մանդինյանց տեր Մանուե՞ը...»

— Այո, նա. ի՞նչ պատճառով այդքան շատ հարցանում ես։

«Նորա համար, որ նա ուսումնական, խելոք և եվրոպացի մարդ է, և նորա հրատարակած Մեղուն ուսումնական լրագիր է, որով հույս ունի նա լուսավորել հայոց ազգը»։

Այստեղ չկարողացա ես ծածկել իմ ծիծաղը, որ առաստիյամբ դուրս թռավ կուրծքիցս։ Պ. Ե. անտրտունջ կերպով նայելով իմ վերա, թիվնցուց չուր երեսը և մեծ տհաճությամբ շարունակեց. «Պարո՛ն, ներիր ինձ ասել քեզ, որ դու ոչինչ հասկացողություն չունիս ուսումնական բաների մեջ. Մանդինյանց տեր Մանուկը քանի տարի գրագիր էր Ներսես կաթողիկոսի մոտ. եթե նա ուսումնական, խելացի և եվրոպացի մարդ չլիներ, կաթողիկոսը կպահե՞ր նորան յուր մոտ։ Ես չգիտեմ թե ինչ մտածեմ քո մասին. հառաջ կարծում էի, որ դու միտք ի շատ բան գիտես, այժմ, ների՛ր համարձակությանս, տեսանում եմ, որ շատ տգիտի ես եղած ուսումնականությենից»։

— Բոլորովին ներում եմ քեզ,— պատասխանեցի ես,— կարող ես ինչ կամիս խոսել, որովհետև հիվանդին և խելագարին ամենայն ինչ նեելի է. օրենքի և պատշաճի խոսությունը թուլանում է այս երկու դիպվածներումը, դու լինելով և մինը և մյուսը, ազատապես կարող ես խոսել. բայց այնքան խնդրում եմ հասկանալ, որ Մեղուի հրատարակողի գրագիր լինելը կաթողիկոսի մոտ ոչինչ ապացույց չէ նորա գիտնականի, ուսումնական և եվրոպացի մարդ լինելուն. ինչ կոնդակ որ կաթողիկոսը թան անգամ գրելով ու ճեղքելով վերջապես գրում էր, նույն կոնդակը Մանդինյանց տեր Մանուկը մատյան էր անցուցանում»։

Հազիվ թե ավարտել էի խոսքս, պ. Ե. կանչեց, «շարախոսություն է, որ առնում ես կաթողիկոսի վերա. ի՞նչպես համարձակվում ես...»

— Ես ճշմարիտ բան եմ ասում և սուտ չկա խոսածիս մեջ, ո՛վ կարող է արգելուլ ճշմարտության հանապազորդը։

«Ճշմարտություն. ճշմարտություն, բայց մոռանում ես որ այդ ճշմարտությունը ասելով, մերկացնում ես ազգի պակասությունքը և ամոթը։ Եթե մի ճշմարտություն հրապարակելու հետ կապակից է ազգային ամոթի հանդիմանությունը, չի՛ լինի այդպիսի ճշմարտությունը, այդպիսի դիպվածում լավ է սուտը, որ վարագուրում էր ազգի պակասությունը։ Բան եք չինել ձեր համար. ճշմարտություն հա՛ ճշմարտություն. ի՞նչ օգուտ կա մի այնպիսի ճշմարտությենից որ կորստում էր ազգի սիրտը»։

— Պարոն, քո խելքի բանը չէ դատել և հասկանալ ճշմարտության հարգը և արժանավորությունը։ Ինքը Քրիստոսը ճշմարտություն էր և ճշմարտության համար խաչի մահը հանձն առավ. իհարկե այդ բաները քո համար անհասկանալի են, միայն պիտո է ինձ այսքան ասել քեզ, որ ոչ դու և ոչ քո գիշերաթաթ դարանամուտ ընկերքդ չեն կարող փակել իմ բերանը, որ չխոսիմ նա ճշմարտություն. ձեր շատ և անխորտա-

կելի կամակորությունը ոչինչ այլ բանի պատճառ չէ լինելու, եթե ոչ հարկադրելու ինձ, որ այժմյան Հայոց ազգի դրությունը հրատարակեմ բովանդակ աշխարհի մեջ հայերեն, ուսերեն, գերմաներեն, ֆրանսիարեն և յատիներեն, հրավիրելով այդ ազգերի ուսումնականները, հասկանալ մեր այժմյան ազգային պիտույքը կամ յուսավորության մասին բարձրացած խնդիրները և անաչառապես դատաստան կատարել։ Ինչո՞ւ փախչենք յուսո տակ քննելուց մեր ազգային գործերը, ինչո՞ւ սիրենք խավարի վարագուրով ծածկել մեր վերքերը, որոնք այսքան տարիներ թարուն մնալով բժիշկներից, կարող են այժմ մեծամեծ վիրաբուժական հնարների։ Այնպես է, մեր քարոզած Ճշմարտությունը դուցե թե կարատում է ազգի սիրտը, բայց այդ սուրը միակ հնար է փտած և ճարակած խոցը առողջ մասներից բաժանելու և հեռացնելու համար։ Ես Ճշմարտություն քարոզելով, ասում եմ դու թե հայտնում էի ազգի պակասությունը. եթե այդպես եմ լինի, մի ուրիշ խորհրդով չէ դա, եթե ոչ, որ ազգի սրտացավ անդամը փոքր առ փոքր հասկանալով բանի զորությունը, բժշկության հնար որոնելու ընկնեին. ես, ոչ թե մի սևահոգի մարդու պես, այն խորհրդով եմ մերկացնում այդ պակասությունը, որ ծիծաղեմ դոցա վերա, կամ պախարակելով անցանեմ հարևանցի նոցա մոտով. ո՛չ, այդ պակասությունը ծակում են իմ սիրտը, և շատ արտասուքի պատճառ են դառնում։ Ես դիտավորություն չունիմ մի մարդ կամ մի ազգ անարգելու. քա՛վ լիցի. բայց ինչ որ խոսում եմ, խոսում եմ որպես պաշտոնյա Ճշմարտության. Ճշմարտությունը ավելի մեծ հարգ ունի իմ աչքումը, քան թե աշխարհի բոլոր թանկագին գոհարները և հարստությունքը։

Այս խոսքերի վերա պ. Ն. մի փոքր հանդարտեց և բոլորովին այլ ընթացք տալով խոսքին, շարունակեց.

«Մի՛ բարկանար, լավ է. մի՛ բարկանար, մենք շատ խոր մտանք, իմ խոսքը Մանդինյանց տեր Սահականոսի վերա էր, որ յուր ուսումնական, Մեղու անունով թերթի 16 համարում խայտառակել էր Նազարյանցին և Նալբանդյանցին,— դու ի՛նչ ես ասում այս մասին»։

— Ի՞նչպես է խայտառակել, և այդ քահանան ինչ մի գործել մարդ է, այդպես ջարդել ու փշրել է Նազարյանցին և Նալբանդյանցին։ Համաառա ինձ, եթե առքա արժան համարին գլուխ դնել, այն ժամանակ Մեղուի և նորա հրատարակողի շնչառությունը շատ կծանրանար, մինչև այն աստիճան, որ հարկավոր կլինի սպանիական ճանճի գործադրությունը Մեղուի կուրծքի վերա, որ դուրս քարշվելով սպականյալ հյութերը ճանապարհ տային ազատ շնչելու։

«Մեղուի հրատարակողը խայտառակել է Նազարյանցին նորանով, որ նորա վարդապետությունը անվավեր է համարում և նորա կարծիքները սխալական, որոնց գլխավորը Հայոց լեզվի մասին. Նազարյանցը ասել է, թե Հայոց լեզուն հառաջանում է սանսկրիտյան լեզվի մի ճյուղից, մինչդեռ Ջամշյանը, Ավգերյանը և Խաչիճյանը ապացուցանում են Հայոց լեզվի առաջնությունը և Ադամի լեզու լինելը։ Նալբանդյանցին խայտա-

ռակել է նորա համար, որ սա Հայոց մի քանի երևելի ուսումնականներին ախոյատիկ էր կոչել։ Այժմ հասկացա՞ք թե ինչո՛ւ համար կամ ի՛նչպես է խայտառակել»։

— Սըրտայր, Նազարյանցի վարդապետությունը երևակայական չէ, ինչպես մի ուրիշի մագիստրոսություն, մի բարձրաստիճան մանավոր մարդու ձևերից առացված[3]։ Նազարյանցի վարդապետությունը հաստատված է տերությունական օրենքների վրա. բայց դուցե Մեղուի հրատարակողը այն պատճառով անվավեր է համարում, որ Նազարյանցը ևս չէր առացել մի այդպիսի մանավոր մարդուց յուր ուսումնական վարդապետությունը։ Այս ևս հարկավոր է իմանալ, որ Նազարյանցը չէր համաձայնելու ընդունել ևս մի այդպիսի պատվանուն, այնպիսի մարդուց որ չուներ տալու իրավունքը. և մի բարձրաստիճան անձն համալսարա՞ն է, ակադեմիա՞ է թե ի՞նչ է, որ կարող էր մագիստրոսություն և վարդապետություն բաժանել. այդ արատնությունքը առացվում են շատ մեծ և ուսումնական քննություններով և համալսարանական և ակադեմիկական հաստատություններով, և Նազարյանցը այս ճանապարհո՛վ է հասել վարդապետական աստիճանին, որ ոչ որ չէ կարող խլել նորանից, և նրա պատվապատ, ինչպես դու ասում ես, Մեղուի հրատարակողը հարձակվել է ձևնամերձ լինել նորա վարդապետությանը, ապա հավատացած կաց, որ դորա համար պատասխանատու կլինի նա տերության դատաստանի առաջև։ Ինչ որ դու ասում ես Հայոց լեզվի համար, ես ամաչում եմ պատասխանել, ամաչում եմ խոստովանել, որ այժմ ևս կան հայերի մեջ մարդիկ, որ մոլորվելով կարծում էին բոլորովին երևելական աստվածներով, թե Հայոց լեզուն Ադամի լեզուն է։ Իսկ Նալբանդյանցը երբեք չէ մեղանչել ախոյատիկ կոչելով Հայոց այն կիսագրագետ մարդիկը, որ ինչպես ինքը Մեղուի հրատարակողը ևս, պարապվը կրիտիկայի տեղ են գործ ածում, արագիլը սիրամարդի տեղ, ինչպես ասել էր Նալբանդյանցը[4]։ Դու առհասարակ լավ կարդա Հյուսիսափայլը և կտեսանես, որ նա ամենայն կերպով նվիրված է Հայոց ազգի ճշմարիտ օգտին և դաստիարակությանը։

«Ես շատ խոր չեմ մտանում ուսումնական բաների մեջ», պատասխանեց իմ հյուրը, «բայց ինչ որ վերաբերվում է վաճառականության և այն գործական վաճառականության, ես առավել լավ գիտեմ քան թե Հյուսիսափայլի հրատարակողը։ Ես Հյուսիսափայլի երեք համարի մեջ մի հոդված տեսա վաճառականության մասին. ինձ չեմ կարդացել, բայց գիտեմ որ հիմար բան պիտո է լինի. պատճառ, չեմ կարծում, որ համաձայն լիներ իմ վաճառական տեսությանը (теория)»։

— Դու ի՛նչ անձնասեր մարդ ես, ինչ բան որ համաձայն չէ քու տեսությանը, մի՞թե հիմար էր։

«Այն պատճառով, որ վաճառականության մասին իմ տեսությունը հաստատապես օգտակար է»։

— Ի՛նչ է քո այդքան օգտակար տնտեսությունը, վաճառականության մեջ։

«Նախ, որ տերության սահմանի ներսումը գործած ապրանքների վերա, Կարոլոս Բոսքոյի ճարտարությամբ, երևի մաքսատան կնիքը... ապացուցանելու համար, թե սահմանից դուրս գործված ու ներս բերված էր։ Երկրորդ, որովհետև իմ խանութի գործակատար մարդիկը միշտ անհարազատ լինելով, շատ վնասներ էին հասուցանում, ծածուկ կերպով վատնելով յուրյանց պարոնի արծաթը. այս պատճառով, նրա մի այդպիսի տղամարդ դուրս գնալու լինի իմ ծառայություններից, որ լինի նա տասն տարի ծառայած, ի՛ղ և օգտակար եղած լինի, այնուամենայնիվ իմ մշտնջենական կանոնը այն է, որ նորա հետ հաշիվ տնտանելու միջոցին, ոչ թե միայն նա պարտական չմնամ նորան, այլև մի քանի հարյուր մանեթի մուրհակ առնում նորանից այն արծաթի հանդեպ, որ ցույց էի տալիս իմ իմաստուն հաշվումս, թե նա ստացել էր ավելորդ քան թե պատկանում էր նորան. ահա իմ վաճառականության գլխավոր սյունը, գլխավոր հաստատանը, որի վերա շարժվում են իմ բոլոր խանութները այստեղ... այնտեղ... մյուս տեղ... և այլն և այլն։ Այս կանոնը երևի արմատանան հայոց ազգի մեջ, կարող են գլխավոր պատճառ դառնալ ազգի հարստության»։

— Սիրելի,— պատասխանեցի ես,— քո կանոնների առաջինը խաբեություն է և մաքսանենգություն, երկրորդը գրկողություն. երկուքը միասին դատապարտելի գործ, և՛ աստվածային և՛ քաղաքական օրենքով։ Ի՛նչպես կարելի է դավել մի վաճառականության, որ հիմնված է նենգով։ Ի՛նչպես կարելի է դավել այդ ընդհանուր քրիստոնեության կանոնների վերա. ամոթ քեզ, որ այդպիսի գործերով ես պարապում. ո՛վ գիտե, ո՛րքան խեղճ հայ պատանիք այդպիսի գործերով ես պարապում. ո՛վ գիտե, ո՛րքան խեղճ հայ պատանիք անբախտացած են քո բարբարոսություններով և դու այդպիսի կեղտոտ ճանապարհով ձեռք բերելով քո հարստությունը, համարձակվում ես կուլ տալ այն հացի կտորը, որ գնված էր ուրիշների աշխատանքի գնով...

«Դու ի՛նչ անհասկանալի մարդ ես, ես փիլիսոփայության վերա չեմ խոսում քո հետ, այստեղ բանը վաճառականության վերա է»։

— Մի՞թե վաճառականությունն ասացյալը դրականապես մի պիղծ բան է, որ անպատճառ պիտո է հիմնված լիներ սատանայական կանոնների վերա. ո՛չ, ո՛չ. վաճառականությունը սուրբ բան է, պիտո է արդարության և ջանքով գործակատար լինել և այդ հանդիսում. ինչ որ բնությամբ և խղճմտ

հշմարտությամբը երբեք հարկու չեք աշխարհի երեսին մի երևելի արժանապատիւ։

— Եթէ չհարենք ևս, գոնե մեր խիղճը մաքուր է և հոգին հանգարտ, գոնե չկա մի մարդ որ ասե, թե այս ինչ մարդը իմ արժանիքը կերաւ, ինձ զրկեց և ինքը հարստացաւ։ Բայց ինչ որ ասում ես դու, թե բոլոր հարուստ մարդիկ յուրյանց հարստութիւնը հարել են սրյունով, զրկողութիւնով և այլ հանցանքներով, ես չեմ ընդունում այդ. կան մարդիկ, որ արդարութիւնամբ վաստակում են և ամենակալ տերը օրհնել է նոցա վաստակը։

Երբ ավարտեցի խոսքս, պ. Խ. վեր կացավ տեղից և բարյավ մնա ասելով խնդրում էր ինձանից յուր մոտ հյուր գնալ։ Ես զարմացա գոնե անդգամութիւնն վերա, որովհետև այդքան կիծու խոսակցութիւններից հետո, արդեն ինչ տեղիք կար իրար հյուրասիրելու։ Վերջապես գնաց պ. Խ...

Մեր բոլոր խոսակցութիւնները նորա հետ այն եղան ինչ որ գրած է Հիշատակարանիս մեջ։ Այս խոսակցութիւնն մին բանի վերա միայն զարմացած եմ, թե ինչպես մի բանի մարդիկ տեղ են տալիս յուրյանց սրտի մեջ մի վայրահոսութիւնն և բանի տեղ են դնում Մեղուի ցնորաբանութիւնները. բայց չէ պիտու մոռանալ Զաղար Փարպեցու առածը, «Ըստ խոցի հարանացնելոյ կոյացուր բաղանիք», այդպիսի տգետ և կամակոր դիշերածին զավակների և այնպիսի լրագիր։

Այսօր երեկոյին մի անսովորապիր նամակ առացա. շատ ծիծաղելի է նորա բովանդակութիւնը, այս պատճառով արտագրում եմ բառ առ բառ։

Պ. Տոմս Էմմանուել.

«Ես լսած եմ որ դու հիշատակարան ես պահում տանդ և ամենայն օրում պատահած կամ լսած անցքերդ գրում ես այնտեղ, մանավանդ ևթէ մի արժանի ուշադրութիւնն բան պատահի. այս օրերս իմ բարեկամներից մինի հետ պատահեցա ևս մի հազվագյուտ քաղաքավարի մարդու։

«Այս քաղաքավարի մարդը երեկոյան ժամանակի խնդրեց ինձ և ասիմ մի բարեկամիս, որ ինձ խմելու գնանք յուր մոտ. հոժարութիւն ցույց տվինք և գնացինք։ Երբ որ դռնից ներս մտանք, մեզ հյուրասիրողը անհայտացավ մյուս սենյակներում, և ես իմ բարեկամի հետ մնացինք միայն, սպասելով գործի կատարածին։ Երկար ու ձիգ սպասելուց հետո հանկարծ երևեցավ քաղաքավարի մարդը, բայց ի՛նչ դրութիւնն ունէր. զարմանալի բան։ Սորա կինը չիմանալով, որ այրը հյուրեր է կանչելու, ջուր է պատրաստել որ լվանա յուր ոտուները, իսկ երբ ոտուները ևներս է մտանում, կինը առաջին ուշադրութիւնն չդարձուցանելով ներկա հանդամանքի վերա, հարկադրում է ոտուանուն լվացվիլ. ի՛նչ պիտու է ասուներ, կամա ակամա հոժարում է։ Մեր, իմ բարեկամի հետ առանձնութեան միջոցին, մյուս սենյակումը բաղանիքի հանդես է կատարվել. և ապրարև քաղաքավարի մարդը երևեցավ շամքի վերա կարմիր, ճերմակ գծաց մազերով, լվացող կինը քամակից։

Բ

Մայիսի 1: *Մտածում եմ, թե մինչև ո՞ր աստիճան ողբալի էր կասկածամիտ մարդերի դրությունը. այդ բանի քանի օրինակները տեսած եմ: Նեղճ ողորմելիքը չէին կարող հաց ուտել հանգիստ, ամեն մի շնչին բան վրդովում էր նոցա փոքրիկ հոգու խաղաղությունը, ծառի տերևների շարժողությունը կայծակնաբեր որոտումների նման բան է այդ մարդերի համար: Ոչ որ չէ նկատել այս բանը, թող ուշադիր լինի, և տարակույս չունիմ, որ ցավելու էր թե ի՛նչ պատճառով բնությունը այդպես վշտացուցել է այդ մարդերին: Դոցա մեջ թագավորված է մի տարօրինակ երկյուղ, երկյուղ օտարից, երկյուղ ազգականից, երկյուղ ընտանիքից, երկյուղ բարեկամից, երկյուղ թշնամուց, հեռավորից և մերձավորից և ասես թե դրա ինքյանք մի կերպարանված երկյուղ լիններին, ասես թե երկինքը այն պատճառով հաստատ պահել էր յուր կամարակապ տարածությունը, որ կործանվելով մի այդպիսի մարդու գլխի վերա, չքացներ նորան: Ցավելի՜ մտածություն. արդյոք կա՞ մի բնական պատճառ, որ այդ մարդիկը ստանում էին այդպիսի տարօրինակ ուղղություն հոգու: Եվ այդ պատճառը պիտու էր որոնել նոցա կազմվածքի՞ մեջ ֆիզիկաբար, թե լոկ բարոյական պատճառների մեջ. արդյոք ա՞յդպիսի մարդիկ շատ հարստահարված էին, կամ շատ խորված, որ այժմ մատնվել էին այդ ողորմելի վիճակին. թե չարագործ, ննջեցյալոր և այլ հանցանքների տեր լինելուց, մի խորով հոգու անբարոյականություններից հառաջանում էր այդ կասկածամտություններ:*

Մտածություններս կտրվեցան թղթաթերի ներս մտանելով, և ահա ստացած նամակիս բառացի պատճենը.

Ողորմած պարոն, Կոմս Խմմանուել.

Ապրիլի 14, 1858, Բեդուակէլէ

«Իմ ձեռքը հասած Հյուսիսապիայլ անունով օրագրի՝ մի քանի համարներից տեսանում եմ, որ դուք գործակից եք այդ օրագրին. ուրախ եմ «և հոգվով շատ ուրախ, որ ձեր կոչումը և դրությունը աշխարհի երեսին «խափան չէ ձեզ մի ազգային և բարի գործի մասնակից լինելու. երանի՜ «թե և ես կարողանայի մի կերպով օգտակար լինել այդ ընդհանուր «ազգային գործի հառաջադիմության. այո՛ ցանկանում էի երբեմն ներ«քինն տեղեկություններ տալ այդ պատվական օրագրին, բայց երկրագործ «եմ, մի գուցե պարոն Հրատարակողը տեղ չգտանե յուր օրագրի մեջ իմ «պրած բաների համար: Ես ծանոթություն չունենալով ոչ պ. Հրատարակողի և «ոչ պ. Նալբանդյանցի հետ, որ ինչպես տեսանում եմ, պիտու է գլխավոր «աշխատակից լինի պ. Հրատարակողին, գրում եմ ձեզ այս նամակը այն «խորհրդով, որ դուք մի նամակով միջնորդ լինիք իմ և Հյուսիսապայլ «օրագրի մեջ, որպեսզի ընդունե իմ աշխատությունքը, եթե պատահի ինձ

«ուղարկել։ Ես կարդում եմ այստեղ Մեղու Հայաստանի անունով լրագիրը և շատ անգամ տեսանում եմ նորա մեջ այնպիսի բաներ, որ արժանի չէին բերանից հանելու, ինչ ին պղծելով Գուտաններբերգի դյուրը «Հասարակութեան Հրատարակելու։ Չգիտեմ, արդյոք առանո՞ւմ եք դուք այդ լրագիրը ին ոչ. բայց եթե չեք առանում, մի կորուստ չունիք. դորա «գործակատարների մեջ չէ երեում մի հատուտ բնավորութիւն և ինքը լրագիրը չունի յուր համար մի ուխտյալ խորհուրդ, առաջնումը մի նպատակ, որին հասանելը. դա մի առօրյա բան է և հակատագիրը նույն վիճակով վճռելու է դորա ապագան, որով վճռվեցան Կովկասը[5] և Աւետարեր[6]։ Ես չեմ կարող տեսանել մի գործ, որ ազգային դիմակ ծածկելով «երեսին, բայց էապես հիմնված լինելով նյութական շարժառիթների վրա, աշխատում էր հանձն առնուլ ամենայն տեսակ ցածութիւն, շորթելով ազգի ին ինքնամիտ և կարճատես անգամների անձնասիրութիւնը «և այդ ճանապարհով հաճոյանալով ազգին, տարածել յուր անձնական լրագրի համարները արծաթի ժողովելու ապագալ։ Այսպես անմխիթար է իմ հայացքը Մեղուի վերա. և ես անդադար դրագրութիւն ունենալով «Թիֆլիզի հետ տեսանում եմ, որ այնտեղ ևս խելացի և բանագետ մարդիկ այդ աչքով նայում են դորա վերա։ Մի քանիքը իմ բարեկամներից, «ինչով ինձանից ին կամենում էի երբեմն երբեմն քննութեան տակ ձգել «դորա թերթերը, ասացին ինձ ին անպատշաճ էր ուշադրութիւն դարձնել այդպիսի մի չնչին գործողութեան վերա, և խոսակից լինելով նորա գործակատարների հետ անպատվել իմ անձը։ Ես բոլորովին համաձայն եմ, և ին այդ գործը հարաբերութիւն չունենար մեր ազգի հետ, «ին դա հիմար դազափարներ չտարածեր ազգի մեջ, հավատամ՝, որ «հետևելով իմ բարեկամների խորհրդին, անունը ևս տալու չէի այդ «գործին։

«Ուղարկում եմ այժմ իմ մի քանի նկատողութիւնքը, «Հրավիրակ հայրենասիրութեան» մակագրով պ. Խաչակյանցի հոդվածի վերա, որ տպած էր այդ Մեղուի 14 համարում, ապրիլի 5-ից։

«Խնդրեմ շուտով ուղարկել ինձ այն երաժշտական նոտաները, որոնց «համար դնում էի մարտի մեջ. դուք չգիտեք ին այսպիսի մի խուլ «տեղում մինչև որ ատենման գտալի է գեղեցիկ ձայների կարոտութիւնը «տկանցի համար։ Գարունը բավական շուտ սկսեց այստեղ։ Հյուսիսային «արևելյան մրրիկները խռովում են անդադար Սև ծովի տարածութիւնը։

«Ողջ եղիք։

«Միշտ պատրաստական խնդարկ ծառա

«ՍԵՐՈՎԲԵ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ՇԱՀԲԵԳ»

«P. S. Այս րոպեիս ձեռքս հասավ Մոսկվայում տպած նոր Քեար «Հայաստանի[7] անունով տետրակի չորրորդ համարը. ին ի՛նչ ապավորու«թյուն կգործե իմ վերա այդ բանը կգրեմ հետևյալ փոստայով»։

Ս. Շ.

Գ. Շահրեզի նկատողությունը պ. Խահակյանցի «Հրավիրակ հայրենասիրության» մակագրով հոդվածի վերա, որ տպած էր **Մեղուի** մեջ, նորա 14 համարում։

Գ. Խահակյանցը յուր գրուիյամբը հայտնում է յուր որպիսուիյունը. տեսանում եմ, որ դա բարեմիտ և աշխույժ երևակայուիյամբ մի երիտասարդ է, բայց շատ թույլ դաստիարակված, որովհետև նորա գրածի մեջ չէ երևում մի հիմնավոր դաստիարակության հետք։ Շատ տեղ չարշարվում է լոգիկան, և այդ պատճառով պ. Խահակյանցը ինքն չէ իմանում կշռի որ թաթի վերա դնե յուր ծանրության քարը։ Այդ պարոնը, ազգի հետ մնալու պատճառ լուսավորության կողմից, գնում է այն բանը, որ շուն հետևն էր նորա հառաջխաղացության. այսինքն այն մեղադրանքը որ նորերումս լսվում է մի քանի պարոնների գլխի բերանից, ինչպես վկայում է պ. Խահակյանցը, ազգի անուսումնասիրության վերա։ Գ. Խահակյանցը ասում է, թե այն ժամանակ միայն պատշաճ էր այդ, «երբ ազգայինք ազավնևվաճառության և լոմայափոխության մեջ մոլորված և ապականված լինեին, և ազգային գիտության և հառաջադիմության միջոցները ավազակաց ալր շինած լինեին». այս խոսքերից հետո, որ բավական հանդարտությամբ հառաջ է տարել, իակուլն վայր է ձգում գրիչը և ասպարեզ է մտանում. «այս ի՞նչ դատաստան է, որ մեր երեսի դիմակը և ասպարեզ է մտանում. «այս ի՞նչ դատաստան է, որ մեր «ընդվզագնացները գործ են դնում։ Այս ի՞նչ հայրենասիրություն է, որ կա«ցին և մանգաղ վեր առած, լեզուները սրած, ազգը պախարակելու վերա «են և վերք վերքի վերա դնելու։ ա՜խ, մինչև ե՞րբ մեր խեղճ ազգը այս «առաժանակիր լծո տակը ծնկի և տառապի. մինչև ե՞րբ պետք է նախա«ապահանաց, քամբասանաց և զրպարտության պարսաքարեր և քուր ու մուր «արձակվին նորա վերա. ով պարոններ, ազգը այս տեսակ կրքություն «չի առանալ, ազգը վայ ու վաղչախով իրա կորուսաը չի գտնիլ. մանկու«թյունը սիրում է գգվանք, սիրում է փափկություն, սիրում է փաղաքշանք...»։

Չենք հասկանում, պ. Խահակյանց, թե հայոց ազգը ո՞ր տեղում ունի գիտության և հառաջադիմության տուն, որի մասին ասում եք թե չէ շինել նա այլ ավազակների, ուրեմն և անպատշաճ էր զուր տեղը ազգը մեղադրել. մենք ևս ինչպես դուք ազգի որդիք ենք և կցորդ դորա փառքին և անարգանքին, դորա հարստությանը և կարոտությանը, տեղյակ նորա կարողությանը և տկարությանը, բայց չնայելով այս յոլոր բաների վրա, ոչ մի տեղում չենք տեսանում մի բան, որ սեփական լիներ հասարակ ազգին, չենք տեսանում մի ծառ, որ ազգը միարան գործակցությամբ տնկած լիներ, և ազգային եղբարց կծու, բայց ճշմարտախոս մեղադրանքը ամենևին հառաջանում է դուն այդ բաների չլինելուց։ Եվ թե ցույց տալ մեզ երկու հայ, որ միասին խորհուրդ կատարած լիներ ազգի հառաջադիմության վերա, հոգ տարած լիներին ազգի զավակներին ազգի կրթության և լուսավորության վերա, և ի՛նչպես է, որ այս լուսավորության և կրթ

քանի պարոնների վերա, այն պատճառով, որ նորա հիմարասիրություն բարոյելով բամբասանքի տակ էին ձգում յուրյանց անձը հիմանդուռ և կարճառնա մարդերի կողմից։ Դուք ասում եք, թե ա՛յն ժամանակ արժան էր դնել ազգի վերա այն մեղադրանքը, եթե ազգայինքը ազատվնեվաճառուիյան և յոմայափոխուիյան մեջ մոլորված ապականված չինեին։ Սիրելիս, ազատվնեվաճառուիյունը և յոմայափոխուիյունը դատապարտվում է Ավետարանի մեջ որպես անպատշաճ գործ ասատծո տան համար, և այժմյան բանների կարգը չէր թույլ տալու, որ այդ հանդնաը բացվեր եկեղեցու մեջ. բայց եկեղեցուց դուրս, ի՞նչ մի պակաս բան է թողնամաճառուիյունը, ձեզ հայտնի չէ՞ որ Անգլիայում բնկերուիյունք կան և այն, հարուստ բնկերուիյունք, որ պարապում էին թողնամաճառուիյամբ Հարավային Ամերիկայի և Եվրոպայի հետ, և Եվրոպացի երևելի բանկերը ի՞նչ մի պակաս արդյունաբեր կամ անբարոյական գործ են, որ եթե մեր հայերը ևս պարապելու լինեին այդ գործերով, արժանի էին դատապարտուիյան։

Մի՞թե ձեր կարծիքով հայերի վաճառականուիյունը մի երևելի բան է. չէ սիրելիս. այդ վաճառականուիյուն չէ, և այդ ճանապարհով հայոց ազգը երբեք հառաջանալու չէ վաճառականուիյան մեջ. և մեք պատապարանելու չէինք հայոց ազգը, եթե նա Եվրոպական կրթությով ազատվնեվաճառուիյամբ և յոմայափոխուիյամբ պարապեր։

Ընդհանրապես ակառնելով ձեր գրվածքը, խոսում եք ազգի հետ հառաբակարար, բայց հանկարծ տեսանում ենք հետո, որ գործ ունիք մի քանի պարոնների հետ. ցանկալի էր մեզ իմանալ այդ պարոնների անունները, որ այդպես վրդովել էին ձեր հոգու խաղաղուիյունը և պատճառ էին տվել ձեր այնքան խոսելու, մինչև որ Մուրան հարկադրվեր Մասյաց դարևանդիցը դադարեցնել ձեր գոչյունը...։

Եղբայր, սիրական, պարոն (ներեցեք ինձ որ այսպես ընտանեբար վարվում եմ ձեր հետ), ե՛րբ կամ ո՞ւր տեսաք, որ հայրենասերքը ազգի վերքերի վերա վերք էին հավելացնում. դուք հարցանում եք թե ամինչև ե՞րբ պետք է նախատանաց, քամբասանաց և դրպարտուիյան պարապքարեր և թուր ու մուր արձակվին ազգի վերաա. հառաջուց ասացեք ո՞վքեր են այդ մարդիկը որ անարգում էին ազգը և թքում ու մրում էին նորան. ոչ ոք չէ կատարել այդպիսի գործ. ես տեսանում եմ, որ դուք հայոց ազգի մի քանի այլ անդամների հետ միասին, ֆանատիկոսուիյամբ և տենդային ջերմուիյան մեջ խոսում եք, և այդ է պատճառը, որ չեք կարող զանազանել ազգի անմխիթար պակասուիյունքը բուն ազգիցը և ձեր աշքումը, ինչպես հայտնի ցույց եք տալիս, մինչդուն իշիւ ու հարգ ունին թե ազգը և թե նորա պակասուիյունքը, և, եթե ավելի լավը կամիք, պակասուիյունքը ավելի նախընտիր են քան թե բուն ազգը։ Եթե այսպես չլիներ, դուք ուրանալով ազգի ապագա բարօրուիյունը և լուսավորուիյունը որ պիտո է հառաջանար պակասուիյունքը վերանալուց հետո, խունկ չէիք ծխելու այդ պակասութիւնների կուռքերին և չէիք ազգացուցանելու նորանց։

Ազգը էապես անաբգողբը չեն նորա, որոնցից գանգատ ունիք, որովհետև մերկացնում էին ծածուկ պահած ազգի վերքերը, վիրաբուժական դարմաններ մատուցանելով, այո, և բարոյական երկաթի ու կրակ գործ դնելով, այլ այն սուտ ազգասերքը, որ խնդճ ողորմելի Միղուին լծել են մի սայլի և ինքյանք լցվելով մեջը հարկադրում են նորան ավելի մեծ ապարեզ կատարել աշխարհի երեսին, հայկական լուսավորության մեջ, քան իրն բնությունը կարողություն էր տվել Միղուին. այդ սուտ ազգասերքը անարգում են ազգի անունը ամենայն եվրոպացի մարդու առաջև, որովհետև այն մարդը, որ չէր խոստովանում յուր պակասությունքը, չուներ ուրեմն և անփական արժանավորություն: Հայերի միջից շատ մարդիկ անպատճառ կամենում են, որ Թագավորն սուտը և թաքնություն. բայց ամենայն բանիմաց և ճշմարտասեր հայի վերա պարտականություն կա պատժել և պատուհասել բնությամբ և գրչով ազգի պակասությունքը, հրապարակել նորանց այնքան, մինչև որ ազգը տեսանելով յուր վերայի կեղտը զզվի, գարշի և խնամ առնե յվանալու և մաքրելու յուր անձը, որպեսզի արժանի լինի լուսափայլ դեմքով մասնակից լինել եվրոպական մարդկության բարիքին: Եթե մենք, որպես անդամ ազգի ճանաչում ենք մեր արժանավորությունը, պիտու է ուրեմն խոստովանենք մեր ունեցած պակասությունքը, որովհետև նա՛ միայն ուղղակի և կարեկան կերպով կարող է խոսել յուր պակասություններուն վերա, որ գիտակցաբար ճանաչում էր յուր արժանավորությունը: Առանց որևիցե փորրոգի կասկածավորության պիտու է հանգիս հանել ազգի առաջև նորա խավար կողմերը, ապացուցանելու համար թե լավության ուժը չէր կարող հաղթահարվիլ չարությենից, այլ դորա հակառակ պիտու է հաղթեր նորան և կանգնեցներ թեններ

խորհուրդը Հայաստանին, մեք ևս կառնեինք այդ գործը և չէինք ծանրանալու ձեզ, եթե մտա լինեինք Մասյաց դարևանդին և եթե նորա Մուղան խոսակից լիներ մեր հետ։ Եվ ձեր հետ խոսելու վերա ևս կասկած ունինք, մի՛ գուցե Թիֆլիզի վարձավոր յայտականների ձայնը համարած լինիք ձեր վատ երևակայությամբ Մուղայի ձայն Մասյաց դարևանդից. սակայն, մուղայը չեն բնակվում Արարատի վերա, այդ քնքուշ արարածը յուրյանց անզգուշությամբ վտանգի մեջ կարող էին ձգել յուրյանց անձը սաստիկ մրսելով և ջրային տենդ (febris nervosa) առանալով, որ շատ անգամ պատահառում են Արարատի և Արագածի մեջ խաղացած տաք հողմերը։ Մեք մուղաների բնակարան ճանաչում ենք Պարնասը, այլև գիտենք մեր ազգային ավանդությունը, որ Մասյաց սարումը կա մի փոս, դժոխք անվանված, որ շատ անգամ ընկնում են մարդիկ...[8]։

Պարոն, դուք մեղադրելով ուրիշների դաստիարակելու կերպը, ցույց եք տալիս ձեր վերին աստիճանի բուլությունը պեդագոգիայի մեջ. դուք ասում եք, մանկությունը պիտու է դաստիարակել դիվելով, փաղաքշելով, վախեցնելով և այլն. չգիտեք, որ իսկապես այդ բաները այնպիսի բուռնավոր տարերք են, որ մտանելով դաստիարակության մեջ կարում են նորա ընթացքը. և մի մարդ ձեր կերպով դաստիարակություն առանալով կդառնա շատ անբարոյական մարդ։ Խնդրում հնք, որ դուք մի փորր աշխատություն հանձն առնուիք ծանոթանալ պեդագոգիայի կանոնների հետ. և առհասարակ վատ չէր լինելու եթե մի բարեկարգ դպրոցում առանալիք մի հիմնավոր կրթություն, որովհետև Ներսիսյան դպրոցի շնորհքով շատ հեռի չեք կարող գնալ։ Բայց այս մի խորհուրդ է խաղակ սրտից, ինչպես կամիք։

«Ահավասիկ պարոններ», հանդես եք գալիս, պարոն Բահադյանց, «եթե մեք ազգասեր ենք, եթե հայրենասիրությունը պարծանք ենք համարում, այսպես առնենք կամ այնպես առնենք». ինչ կամիք արեցեք սիրելիս, և մեք հոգվով շատ ուրախ կլինինք ձեր հառաջադիմության վերա եթե հաջողի ձեզ առանալ. բայց լսելով ձեզ, դիմել մեր բոլորովին մարմին դարձած մեծատուններուն ոտքը, ազգի անունով բան խնդրելու համար, հանձնառու չենք. մեք փորձը առած ենք այդ բաների, և մեր մեծատունների սրտով համը առել են մեր առաջները. բայց եթե դուք չեք փորձել, փորձեցեք, և կգա ժամանակ, որ ինքներդ կխոստովանիք այս ճշմարտությունը, թե հայոց մեծատունը կերակրի, հանդերձի, դինու, փառավոր ապրելու, անոտի և անցավոր փառք ճարելու համար թափում է յուր քսակից վերջին մանեթը, բայց ազգային գործի, մի վերացական առաքինության համար, որի վարձը իսկույն երևելու չէր նորա վերա, նա շատ նեղությամբ կբանա յուր քսակը. նորա ձեռքը սովորած չէ այդպիսի բաների համար արծաթ ձգել ազգի դանձանակը։ Այո, պարոն, բան խոսելու ժամանակ չէ պիտու մոռանալ այն շրջապատը, որի մեջ կատարվում էին այն իրողությունքը, որոնց վերա են մեր խոսք ու զրույցը։

Ճշմարտության պաշտոնյա լինել մի հատիկ խորհուրդն է մի բարո-

յական մարդու, և վա՞յ այն մարդուն որ պիտու է ուրիշի ճշմարտությունը չափեր բարեկամության կամ թշնամության չափով։ Ստույգ ազգասերը պիտու է խոսի ճշմարիտը, այո՛, ճշմարտությունը շատ անուանելի է լինում այնպիսի մարդերի համար, որ յուրյանց ծնած օրից նվիրել էին յուրյանց անձը ստության ապաստավորությանը, բայց ի՛նչ պիտու է առնել, այդ նոր բան չէ աշխարհի երեսին, և մատածող մարդիկ վաղուց ահա փորձով իմացած են, որ ճշմարտությունը հալածվում է միշտ և պատճառ է լինում յուր պաշտոնեի հալածանքին. մի այդպիսի անբասիր պաշտոնեի համար ճշմարտությունը շատ անգամ ճանապարհ է բացել դեպի գլխապարտության սյունը (էշաֆոտ), շատ անգամ հանել է նորան փայտահատի վերա։ Ի հարկե կարդացած կլինիք Լերմոնտովի Մարգարեն. նա մի տեղ ասում է.

«Սկսեցի սեր քարոզել,
Սուրբ ուսումը ճշմարտության,
Եվ իմ բոլոր մերձավորը
Կամեին ինձ քարկոծ առնել»։

Եվ արդարև ճշմարտությունը մի այնպիսի բան է, որ պատճառ է լինում մարդերի միմյանցից հեռանալուն. ինքը ճշմարտության վարդապետը դուշակել էր, որ յուր քարոզությունը, յուր ճշմարտությունը պիտու է բաժինը հառաջացնեին։ Բայց ծածկել և վարագուրել ճշմարտությունը աշխարհին հաճոյանալու համար, սատանայի գործ է. հեռի՛ մեզանից, և մենք անպատրաստ ենք։ Մեզ բամբասվինք ճշմարտության համար, փույթ չէ, միայն թե աստուծո ձայնը չասե մեր սրտի մեջ թե մեղանչել էինք ընդդեմ ճշմարտության։

Ձեր հոգվածը վերջացնում եք նորանով, որ ազգը վատաբանելը և ազգի վերա կոծելը և ոչը կատարելը անօգուտ եք համարում ազգին. իրրև ապացույց ձեր խոսքին մեջ եք բերում Խորենացու ոտրը Հայոց ազգի վերա և ասում եք, թե այդ չորս հազար տարվա ոտրը ոչինչ արդյունք հառաջացուցած չէ և այլն. այսքան պիտու է իմանալ, որ ոչ ոք դեռևս ճըշմարտախոս հեղինակներից պարտավանական չէ և այդ պաշտոնը յուր պարծանքով հանդերձ մնացած է հայոց միակողմանի ուսումնականներին, որոնց թիվը բարձրացնում եք մինչև բյուր. գուցե ձեր աչքումը շատ փոքր նշանակություն ունի բյուրը, բայց մենք ասան հազարը համարում ենք մի բյուր։ Նմանապես մենք անարժան ենք համարում կանացի ոտր ու կոծը, որ հառաջանում են մեծ մասով հուսահատություններից, մինչ մենք կոծը, որ հառաջանում են մեծ մասով հուսահատություններից, մինչ մենք իրրև քրիստոնյա դատապարտվում ենք երբեմն կորուստներով մեր հույսը ձգելինք մեր անձը հուսահատության ծովը։ Ասում եք թե Խորենացու ոտրից բան չէ հառաջացել. դորա մեղավորը Խորենացին չէ։ Աշխարհիս երեսին բան չկա որ ամեն մարդու համար էլ, ով ականջ ունի լսելու, թող լսե. իսկ սին ձայն ասացյալը լսողի համար է, ով ականջ ունի լսելու, թող լսե. իսկ հայոց ազգի համար շատ բաներ անցանում են որպես «ձայն բարբառոյ

յանապատին։ Դուք կամիք արդարացնել Հոբենացու անձը, ասելով որ Հանգամանքը բանի խլել էին նորա բնթանից այդ ողբը. առաջինը, պարան, Հոբենացին անկարող է մեր նման փաստաբանների պաշտպանությեան, մանավանդ որ ոչինչ աստ չկա նորա ազատի մեջ. երկրորդ, ձեր այդ ընթացքով ցույց եք տալիս ձեր թուլությունը Հայկական պարույրյան մեջ։ Հոբենացին վերադառնալով Ալեքսանդրիայից չգտավ Հայաստանը այն վիճակի մեջ, ինչ վիճակում բարյա՛վ մնա էր ասել նորան։ Արշակունյաց թագավորությունը և Հայրապետությունը Լուսավորչի անից վերջացել էին, երբ նա մեծամեծ Հույսերով ետ էր կոխում Հայաստան, Հունական լուսավորությունը տարածելու, և պատահելով ազգի իշխանների անօրէն ընդունելությանը և Հոգևորների կռպիտ, խավարասեր Հայածանքին, ամենայն արդարությամբ պիտու է ըրներ, մանավանդ Հոբենացու պես երկնաբաղաքացի և առնելի մարդ։ Նա բացի այդ ողբից նոյնվ ևս ըրել է Հայոց կաթողիկոսների վերա, որ արևգանների ձևերով ոչնչացուցած է երևում, ինչպես և մյուս նորա գործը «Շարք կաթողիկոսաց» անունով. խնդրեմ կարդացեք Զազար Փարպեցու նամակը, որ գրած է Մամիկոնյանց տիրոջ վահանին (տպած Մոսկվա, 1853)։ Դուք կհամաձևք այնուհետև, որ Հայոց արևգայլը մինչև ի մահ Հալածելուց Հետո և մահից ետքն չեն Հաշտված այն պատիժների ծնրունու Հետ, անզգամաբիծ ձևերով մոռանում են նորա խնկելի ոսկրներին և Հանելով գերեզմանից թափում են ջրի մեջ։ Այսուհետև ավելորդ չէ խնդրել ձեզմանից, որ Հայտնեք նույնպես, մի գուցե ո՞ր ժամանակից սկսանում եք ձեր տաբերդությունը, որ Հոբենացուն շինել եք շատ Հազար տարեկան. սովորական տարեգրությանը նայելով, նա գնում Հազար երեք Հարյուրի և Հազար չորս Հարյուրի մեջ է, որովհետև այդ մեծարգո Հիշատակի արժանի մարդը կնցած է 370—389 Քրիստոսից Հետո։

Եվ այսպես, պ. Խաչակյանց, մեր ավարտում ենք մեր նկատողությունքը, որ գուցե մի անախորժ թվին ձեզ, և եղբայրական (եթե միայն Հաճիք ընդունել) խորհուրդ ենք տալիս ձեզ բան գրելու ժամանակ չպատկանել այս և այն Հակառակող բաժիններին, խոսել սառն Հոգով, և Հավատարիմ մնալով լուսիկական կանոններին։

Բացի այս նամակակցությիւնից ուրիշ արժանի ուշադրության բան չէ կարող այսօր զարդարել իմ Հիշատակարանը։ Ներողություն, պիտու էր այսուհետև գրել այն խոսակցությունը, որ պատահել է մի շինականի և մի վաճառականի մեջ։

Շինականը.— «Պարո՛ն, քաղաք մտանելով տեսանում եմ բարձր տների վերա ձողեր, որոնցից վայր է գնում մինչև գետինը մի երկաթի չար, դորա ինչացո՞ւ են»։

Վաճառականը.— «Այդ շանթապահ գործիք է, որ Հնարել է Բենիամին Ֆրանկլինը»։

Շին.— «Ի՞նչ ասել է շանթապահ գործիք»։

Վաճ.— «Կայծակից պահպանող. ուր որ կա այդ բանը, այնտեղ կայ-

ծակը չէ կարող վնասազերծություն հասաջացնել, որովհետև այն ձողի ծայրին մագնիսացուցած մետալ լինելով, անգործ է կացուցանում կայծակի զորությունը։ Այդ բանի համար փառավորվեցավ Բենիամին Ֆրանկլինը»։

Ենի.— «Այդպիսի ոչինչ բանի համա՞ր. դա ի՛նչ է, որ մարդ փառավորե։ Մեր գնդումը մի զրացի կին կար. նա շատ անգամ վայր էր քարշում կայծակը»։

Վահ.— «Ինչպե՞ս»։

Ենի.— «Խոսույն կասեմ. միայն հասաջուց պիտո է իմանալ, որ այդ կինը վայր էր քարշում կայծակը մի մարդու զարկել տալու համար, ելնե դա ուներ մի ինշանմի։ Նվ ահա այսպես է դորա արտարոդությունը, ինչ մարդու կամենար, որ նա կայծակից զարկվեր, առանում էր նա որևիցե հանապարհով այդ մարդու հասակի (բարձրության) շափը, այդ շափով մոմ էր շինում և վառում էր եկեղեցում, բայց ոչ սովորական կերպով, այլ գլխիվայր. մոմի վերա մի տեղում գրում էր առեղով և շատ աննշմարելի այս բառը «նլդբրբմ»։ Մոմը վառվելով մինչ հասանում էր այս խոսքին, որ կայծակ է նշանակում, խոսույն երկինքը մթնում էր, որոտմունքը ինդում էին, փայլակները չրի պես սկսանում էին վազել և մի ակնթարթում կայծակը սևացնում էր այն մարդը, որի չափով շինած էր մոմը»։

Վահ.— «Դու ի՛նչ հիմար բաներ ես ասում. ի՛նչ հարաբերություն կա օդի էլեկտրականության և մի մոմի մեջ, ելող գլխիվայր ես վառելիր, ի՛նչպես կարելի է հավատալ այդպիսի բաներին։ Նվ դու տեսա՞ծ ես մի օր, որ այդ կնոջ կամքով կայծակը մի մարդ չքացներ»։

Ենի.— «Ճշմարիտը պիտո է ասել, չեմ տեսած. ինպետև այդ կինը շատ անգամ վառում էր եկեղեցում մի այդպիսի մոմ...»

Ահա անկրոնության և թերհավատության պատուղը. ասելիք իմ, ի՛նչ ողբալի մարդիկ կան աշխարհիս երեսին։

Գ

Մի մարդու առաքինի կամ վատթար լինելու շարժառիթը գտանվում է նույն այդ մարդո՞ւ մեջ, թե՞ նորա շրջակա ընկերության մեջ. մի մարդ որ այժմ առաքինի էր, կարո՞ղ էր դա վատթար մարդ լինել, ելնե անած ու սհած լիներ մի վատթար շրջակայքի մեջ, կամ մի վատթար մարդ առաքինի լիներ՝ գտանվելով առաքինի շրջակայքում. այս խորհրդածությունով պարապված է միտքս այս րոպեիս, մինչ գրում եմ Հիշատակարանիս այս տողերը, մայիսի 30-ին։

Շատ փորձեր և օրինակներ ստորագարար պատասխանում են այս խնդրին, այո՛ և իմ սեփական նկատողությունքը, ուրիշ շատ մարդկերի նկատողություններուն հետ, դրականապես հաստատում են այս բանը, թե մարդը ծնանելով չունի յուր մեջ առաքինության կամ վատթարության

սկիզբն կամ տարբ, և հոգու այդ ունակութիւնքը հնտհանք են նորա լավ կամ վատ շրջակայքի ազդեցութիւններից։

Արտասվելի՜ բան. մարդը, որ կարող էր առարինի լինել, լինում է մի վատթար, մի չարագործ էակ, դատապարտութեան արժանի և մարդկային և աստվածային դատաստանի առաջև։

Արի՛ մի փորր, ֆիզիկապես և բարոյապես, քննենք այս խնդիրը և տեսանենք, թե կարի՞ն այսպիսի օրենքներ բնական և բարոյական աշխարհներում, որ թույլ տային այսպիսի հնդափոխութիւն։

Առնենք մի բույս, որ դիցուք թե բուսանում էր Հայաստանում և բերենք անկենք նորան Ռուսիայի հողի վերա և նկատենք, թե այդ բույսը պահում է արդյոք յուր բնական որակութիւնքը, որ ուներ կամ պետնա պիտու է առանձար մնալով յուր Հայրենի հողի վերա։ Այս խնդիրը լուծանելու համար հարկավոր է քննել այն պայմանքը, որոնց ազդեցութեան տակ պիտու է կերպարանագործվեր այդ բույսը. ի՞նչ պայմաններ են դորա. հողը, օդը, ջուրը։ Նրա անտարակույս էր Հայաստանի և Ռուսիայի հողերի, օդերի և ջրերի զանազանութիւնը, կարելի՞ է արևմն թույլ տալ, որ մի բույս, այստեղից այնտեղ տարած, կամ, այնտեղից այստեղ բերած անփոփոխ պահեր յուր բուն հատկութիւնը, մինչդեռ փոփոխվելու էին նորա վերա ազդող և ներգործող արտաքին պատճառքը, մինչդեռ այդ բուսականի գոյութիւնը, աճելութիւնը և կերպարանագործութիւնը կախվում էր հողից, օդից և ջրից։ Մի բուսական կամ մի ծառ առնենք, որ օրինակ, փշատը, որ Հայաստանում տալիս է քաղցրահամ պտուղ. այդ ծառը տնկվելով Հարավային Ռուսիայում կորուսանում է յուր պտղատու որակութիւնը, թեև բացում էր հոտավետ ծաղիկներ. դույն այդ ծառը, տնկվելով Մեծ Ռուսիայի մեջ, կորուսանում է և ծաղիկ բուսնալու որակութիւնը։ Այս ի՞նչ բան է. ո՞չ ապաքեն այդ ծառը ուներ յուր մեջ պտուղ բերելու ընդունակ գործարանները, ո՞չ ապաքեն ոչինչ բան ավերված ու պակաս չէ նորա ներքին կազմակերպութեան միջից, ինչո՞ւ ննթարկվում է այսպես զգալի փոփոխութեան. նորա համար որ փոխվում էին արտաքին ներգործողքը նորա վերա, և նա բնական և աստվածադիր օրենքով, այն ժամանակ միայն կարող էր պահել յուր բուն հատկութիւնը, եթե յուր անձնավորութեան և արտաքին շրջապատի մեջ կար մի ներդաշնակութիւն, մի համակրութիւն։ Եթե այսպես ցույց է տալիս փորձը, ուրեմն մարդը, յուր կամեցածի պես որակութիւն տալու համար մի բույսի, կարող էր նորան պահել այնպիսի շրջապատի մեջ, որի արդյունքը (результат) համաձայն էին նորա մտքին. ամենևին այդպես։

Առնենք այժմ մի կենդանի, որ ծնել էր դիցուք թե Հարավային Ամերիկայում, և բերենք այդ կենդանին Հայաստան, արդյոք կարո՞ղ էր պահել դա յուր բուն հատկութիւնքը, ասենք թե չէր մնանում այնտեղ, կարո՞ղ էր պահպանել յուր մարմնի կանոնավոր մեծութիւնը, ծննդականութիւնը, բուրդի հատկութիւնը, գույնը և բնութիւնը։ Հարկավոր չէր այդքան հնտավոր տեղափոխութիւն. ավելի մոտը ասեմ. վան քաղա-

քից էջմիածին տարված երկայն բրդով մեծ մեծ կառուներ, մի քանի տարի անցանելով, կորուսին յուրյանց բրդի այդ հատկությունը և կամաց կամաց ընկան տեղական կառուների կարգը, ինչև զանազանությամբ, ինչև ոչինչ բնական կապակցություն չէր պատահած այդ օտար երկրացի կառուների հետ։ Այսպես ևս Միքիթարյից Ռուսիա բերված կառուքը կորուսանում են յուրյանց բրդի հատկությունը։ Շատ կան այսպիսի օրինակներ, բայց մենք այս տեղից ևս տեսանում ենք ահա, որ բնական աշխարհի օրենքը թույլ է տալիս անհատի մեջ հեղափոխություն, ինչև միայն փոխված էր նորա արտաքին շրջակայքը։

Մտանենք այժմ բարոյական աշխարհը և առնենք մի առաքինի մարդու գործակ, որի բնավորությունը կերպարանագործված չէր դեռևս, և ձգենք այդ մանուկը ավազակների և գողերի ընկերության մեջ, մի քանի տարի վերայովը անցանելուց հետո հանդիպելով նորան, արդյոք տեսանելու չէի՞նք, որ նա ևս դարձել էր մի արյունկզակ գող և ավազակ։ Համ ապա հակառակ, ինչև մի ավազակի որդի, որի բնավորությունը դեռևս կերպարանագործված չէր, որ դեռևս չուներ դիտակցություն, ինչև մի այդպիսի մանուկ առնուինք և տայինք առաքինի դաստիարակի ձեռք հետո դնեինք նորան մի բարեկարգ և բարոյական դպրոցի մեջ, այնուհետև շրջապատեինք նորան առաքինի մարդիկ, այդ մանուկը չափահաս լինելով կարո՞ղ էր առանց զզվելու նայել յուր հոր կամ եղբայրների դատապարտելի գործի վերա — ամենևին ոչ. պատճառ, նա չէր տեսել յուր շրջապատի մեջ, որ, իբրև մի սովորական բան, գործվելին այդպիսի անօրինություն. դորա հակառակ, նորա հոգու մեջ տնկել էին առաքինության սերմերը, որ հետզհետև աճում ու զորանում էին, նորան անդադար թարոզել էին, ինչ ի՞նչ ստոիճանի զզվելի և գարշելի բան է մի այդպիսի անօրեն գործողություն, նորան ուսուցել էին ճանաչել յուր անձը, յուր ընկերը, յուր ազգը և մարդկությունը։ Երեխան, որի բնավորությունը կերպարանափոխված չէր դեռևս, մի հայելի է, որի մեջ կցոլանա այն, ինչ որ ցույց կտաս. նա միևնույն է յուրյան շրջապատող արտաքին աշխարհի և ընկերության ձեռքում, ինչպես կավը բրուտի ձեռքում, որին սա կարող էր ամենայն ձև տալ։

Երեխան աճում է, բացվում են նորա հոգեկան ընդունակությունքը, բայց այդ ընդունակությունքը գտանվում են մի անտարբեր վիճակի մեջ. այդ ընդունակությունքը, աճած ու անտարբեր, նման են մի վարած հողի, որ այն կրաուսցանեն, ինչ որ ուրմանիներ։ Այսպիսի երեխայքը, մանավանդ դոցա միջից նորա, որ ավելի հոգի ունին (энергия), երկար չեն մնում անտարբեր վիճակի մեջ. գարթած ինչ չգարթած նոցա հոգեկան ընդունակությունքը, այնուհետև շատ անգամ, պատահական ուղղությանն են հետևում. ինչև գտանվում են առաքինի մարդերի մեջ, ապա սկսան հետևել. ինչև գտանվում են առաքինանալ, ինչև գտանվում են անբարոյական մարդերի մեջ, ամենևին բնականաբար վատթարանալ։ Թևև առաքինության կամ վատթարության կերպարանագործությունը կարող է ժա-

մանակի, բայց դուցա նշանը կնոքին իսկույն, իհարկե փոքր դրույթամբ, էլեն մի բանագնա և հետախույզ մարդ, ինչ սահավ միջոց, կենակից լիներ մի այդպիսի մանուկի հետ։

Այսպիսի փորձական քննություններ հավասատում են մեզ, թե մարդու առաքինի կամ վատթար լինելը պատահական բան է և կախված նորա դաստիարակություններից և կրթություններից, նորա ընկերություններից և շրջապատից. այլապես, արդար չէր լինելու աստուծո անհետևությունը, միևնույն և մյուսը վատթար ստեղծելով, և այնուհետև այդ վատթար մարդը ինքը չէր լինելու մեղավոր յուր վատթարության մասին, որովհետև աստված ստեղծել էր նորան վատթար լինելու համար. քա՛վ լիցի այսպիսի ամբարշտություն։ Առաքինի մարդը ևս կորուստանելու էր յուր արժանավորությունը, քանի որում նորա առաքինությունը յուր վաստակը չէր, վանդի աստված առաքինի էր ստեղծել նորան։ Ամենակալ տերը արդա՛ր է և հավասար աչքով նայում է ոչ թե միայն բոլոր մարդկության վերա անխտիր, այլև բոլոր աշխարհների, բոլոր արարածների վերա, որ բարեղում էին նորա ամենակարողությունը և փառքը։

Մարդու առաքինությունը և վատթարությունը կախված է նորա դաստիարակություններից. հնձվում է սերմանվածը։ Մի մարդ որ կամի, թե յուր զավակը առաքինի դառնա, ապա նախ և առաջ ինքը առաքինության օրինակ լինի յուր զավակի առաջև, թո՛ղ ոչ թե միայն պիշեր ցնծնի առաքինություն քարոզել յուր զավակներին, այդ շատ փոքր էր, այլև ինչ յուր գործերը ևս հարմար ընթացուցանեն միշտ յուր քարոզությանը. ապա թե ոչ, երեխան իսկույն կնկատե յուր հոր քարոզության և նորա գործերի մեջ գտանված հակառակությունը, և այդ բանը կդառնա նորա համար մի գայթակղության քար։

Ամենայն բանական մարդ, թեև պարտական է միշտ, ճիշտ կերպով պաշտել բարոյականության սուրբ օրենքը, բայց մանավանդ այս խստությունը պիտո է գործ դնել յուր անձի վերա, երբ կենակից էր երեխաներ։ Մի անզգուշություն, մի անտեղի խոսք, մի անպատշաճ գործողություն, որ կատարվում էր երեխայի մոտ, նման է մի կայծի, որ ընկնելով մի դյուրավառ նյութի մեջ հառաջացնում էր մի մեծ հրկեզ ու անթիվ ավերածք։ Ինչ տեսակ կին կարող էին դառնալ ապագայում այն աղջիկ բոռները, որ յուրյանց մեծ մորից լսում են հետևյալ խոսքերը.

Մենք մանր

Պառավը, մի փոքր հարբած,
Յուր բոռների առաջև,
Թառամ գլուխը շարժելով
Մեղմերն հայտնեց բացերև։

«Այսօրիս անցած օրերում,
Ո՞րման մարդ էր ինձ սիրում.
Ես ապրել լավ գիտեի.
Ո՞ւր ես, իմ ջերմ մանկություն,
Իմ սպիտակ ձեռ փափկամորթ,
Կաճոճավոր, սիրուն ոտ»:

— Մի՛թե թույլ էիր տալիս,
Մեծ մայր,— թոռներդ հարց արիճ:

«Ո՛հ զավակներս, գիտեի
Գեղեցկության իմ գինը,
Մինչ հասակս չէր անցել
Տասն և հինգի մյուս կողմը,
Չէի ճնում գիշերներ...

Ես ապրել լավ գիտեի.
Ո՞ւր ես, իմ ջերմ մանկություն.
Իմ սպիտակ ձեռ փափկամորթ,
Կաճոճավոր, սիրուն ոտ»:

— Եվ դու, մեծ մայր, դու նորանց
Սիրո՞ւմ էիր, ինչպես ինձ,
Պաշտում էին սիրողդ,
Որ պատմում ես այժմ մեզ:—

«Աստված ինձ սիրտ էր տվել
Ապա ի՞նչ բանի համար.
Սիրականիս չուտ գտա,
Նա ևս չըսպասեց ինձ երկար:

Ես ապրել լավ գիտեի.
Ո՞ւր ես, իմ ջերմ մանկություն.
Իմ սպիտակ ձեռ փափկամորթ,
Կաճոճավոր, սիրուն ոտ»:

Մեծ մայր, դու ինչո՞ւ սիրով
Սիրում էիր այն մարդուն:—

«Ինչուչ սիրով նորա հետ
վարվում էի. բայց հաճախ
Օր անցկացնում առավել,
Ուրիշի հետ ինչությամբ:

Ես ապրել լավ գիտեի.
Ո՞ւր ես, իմ ջերմ մանկություն.
Իմ սպիտակ ձեռ փափկամորթ,
Կաճոճավոր, սիրուն ոտ»:

— Ուրիշի ճե՞տ, հարազատ,
Ասում ես չամաչելո՞վ:—

«Իմ բոլոր սիրականքը
Հիմար չէին, այլ գիտուն,
Բայց ես նոցանից խելոք
Դուրսվեցա, հաստատուն,
Եկեղեցու միջումը
Օրենքով պսակվելով:

Ես ապրել լավ գիտեի.
Ո՞ւր ես, իմ ջերմ մանկություն.
Իմ սպիտակ ձեռ փափկամորթ,
Կաճոճավոր, սիրուն ոտ»:

— Մեծ մայր, զարհուրելի չէ՞ր
Քեզ, ամուսնուդ հանդիպել:—

«Նորա խելքը քոել էր
Սիրով վառված իմ վերա,
Շատ բան տեսնել կարող էր....
Չտեսավ. բեև էր ներկա....

Ես ապրել լավ գիտեի.
Ո՞ւր ես, իմ ջերմ մանկություն.
Իմ սպիտակ ձեռ փափկամորթ,
Կաճոճավոր, սիրուն ոտ»:

— Բայց, մեծ մայր, ձեր ամուսնուն
Չէի՞ք խաբում կամ նենգում:—

«Այդ ի՛նչ կարելի բան է,
Որ անմեղ օր անցանեն.
Բայց ես իմ բահաճայիս,
Խոստովանքի միջոցին,
Բոլոր գործած մեղքերըս
Հազիվ կասեմ պարզ, մեկին:

Ես ապրել լավ գիտեի.
Ո՞ւր ես, իմ ջերմ մանկություն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոճավոր, սիրուն ոտ»:

— Չրկվեցա՞ք վերջապես,
Մեծ մայր, դուք ձեր ամուսնուց:—

Վայո՛, բայց մեծ զրկանք չէր.
Նոր չէր բեև տաճարը,
Բայց շատ ջերմեռանդ զոհեր,
Միշտ ստանում էր կուռքը:

Ես ապրել լավ գիտեի.
Ո՞ւր ես, իմ ջերմ մանկություն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոճավոր, սիրուն ոտ»:

— Մեծ մայր, արդյոք արժա՞ն էր
Եվ մեզ ապրել, ինչպես դուք
Ապրել էիք ձեր կյանքում,—
Թոռներն արեցին հարցումնէ:

«Ո՛հ զավակներս, այդ մասն է
Կին մարդերի վիճակվել,
Մեծ մարք զործեցին երբ,
Ձեզ, ասսված է հրամայել:

Ես ապրել լավ գիտեի.
Ո՞ւր ես, իմ ջերմ մանկություն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոճավոր, սիրուն ոտ»:

Տարակույս չկա, որ դպրոցների և համալսարանների մեջ ավանդված գիտությունքը և ուսմունքը շատ մեծ խորհուրդ ունին մի աշակերտի կամ մի ուսանողի համար, բայց դորանից եղեն մեծ չլինի, գոնե փոքր չէ մի երեխայի սկզբնական, ընտանեկան դաստիարակությունը յուր ծնողքի ձեռքովն: Շատ անգամ, մի զավակ տան մեջ հոգու վատթար յուր ծնողքի ձեռքովն: Շատ անգամ, մի զավակ տան մեջ հոգու վատթար ուղղություն ստանալով, արդեն փոքր կերպարանքով յուր հոգին տրամադրած լինելով դեպի շարը, կրթվելով մի օրինավոր դպրոցում կամ համալսարանում, լուսավորությունը կշինեն յուր համար մի շարության գործիք, և կաշխատի նորանով ծնուցանել և կերպարանագործել այն շարությունքը, որ վաղուց հղացած էր յուր սրտի մեջ և անծին թողած,

որովհետև հնար չուներ այն ժամանակ յուր դաղափարը իրագործելու։ Առանին, կամ ծնողական դաստիարակութիւնը առանում է երեխան դլխավորապես յուր մոր ձեռքով. ուրեմն նախ և հառաջ հարկավոր է մեծ ուշադրութիւն դարձուցանել աղջիկ զավակների կրթութեան և դաստիարակութեան վերա, բանապետ և առաքինի մայրեր պատրաստելու համար։ Առանց այս հոգաբարձութեան ո՛տ է ամենայն կատարյալ և ընդհանուր լուսավորութիւն մի ազդի։ Զավակ ասացյալը, յուր մոր ձեռքով պիտո է կրթվի և դաստիարակվի առաուծո երկյուղի մեջ. մայրը, կամից հետո պիտո է կերակրե յուր զավակը այդ վերին հոգևոր կերակուրներով. որանից հետո դպրոցական և համալսարանական կրթութիւնը կարո՛ղ է հառաջացնել մի այդպիսի ազգի մեջ ցանկալի հետևանքը։

Այս աչքով նայելով այս ծանրակշիռ և մեծախորհուրդ բանի վերա, ո՛րքան ծանր դատապարտութեան արժանի էին այն ծնողքը, որ յուրյանց ձեռքումը նյութական հնար ունենալով անտես էին առնում յուրյանց զավակների դաստիարակութիւնը, և կերակրելով, և դինաւավորելով, և վերջապես ամուսնացուցանելով նորանց, համարում էին, թե լիովին ահա կատարած էին յուրյանց ծնողական պարտականութիւնը։ Այս պարտականութիւնը մի սուրբ և մեծ պարտականութիւն է, որ այլապես պիտո էր կատարել. իսկ այնպես կատարել ինչպես հիշեցինք, այդ ծնողական բարբարոսութիւն ճանաչվում է մեզանում։

Ծնողի դլխավոր խորհուրդը և նպատակը չէ պիտո այն լինի, որ աշխատի, յուր մահից հետո, հետ ձդել յուր ժառանգներին շատ արծաթ, մեծ հարստութիւն, փայլուն կոչումն և այլն և այլն. դորա չեն մարդկային առաքինութեան սարերքը, դորա խանդարիչը են առաքինութեան. եթե մի մարդ, ունենալով այդ բոլորը, դուրկ էր սուրբ դաստիարակութենից և կրթութենից, ծնողի դլխավոր ջանքը և փութը պիտո է լինի հառաջ հառաջ հոգաբարձու լինել յուր զավակների դաստիարակութեան մասին, որովհետև այդ դաստիարակութեան մեջ պարունակվում են նորա զավակի ապագա առաքինութեան, երջանկութեան, վաստիարութեան և քշվառութեան սերմերը։

Նույնպես սուրբ դաստիարակութիւն և լուսավորութիւն տալ չէ, եթե մի ծնող դնում է յուր որդին մի օտար ազգի դպրոցի մեջ. նա այն օտար շրջակայքի մեջ կփոխե յուր բուն հատկութիւնքը, ինչպես բուսականը կամ կենդանին տեղափոխված յուրյանց սեփական շրջակայքից, որի մասին մի քանի տող հառաջ դրեցի Հիշատակարանիս մեջ։ Սուրբ և աստվածադիր դաստիարակութիւնը այն է, որ ամենայն ծնող կրթե յուր որդին ազգային սեփական դպրոցի մեջ. ամենայն բույս պիտո է աճե յուր հողի վերա, ամենայն կենդանի պիտո է ապրի յուր աշխարհում։ Այդ օտար դպրոցներ ուղարկված զավակներից, շատ փոքր պատահում է, որ նմանանին մնդուն, թուլը թողած և միմիայն մնդրը և մոմը քաղելով հետ դառնային յուրյանց տեղը. այս մի շատ քնքուշ խնդիր է՝ անտես մնացած մեր ազգից մինչև այսօր։

Ի՞նչ է մարդկային կյանքի խորհուրդը, մի՞թե լավ ուտել, լավ խմել, լավ հագնել, փառավոր ապրել, հարստություն ձարել, փառք ու պատիվ ստանալ. մի՞թե մարդը չունի մի բարոյական խորհուրդ յուր կյանքում, մի՞թե այդ բանի համար է ստեղծել մեզ աստված, մի՞թե Քրիստոս մեռավ, որ հարստություն և փառք պարգևի մարդկության, թա՛վ լիցի. հեռո՛ւ այսպիսի մոլորություն: Մարդը անմահ է ստեղծված. նա յուր կյանքում պիտո է նմանի աստուծո, որ մահից հետո ժառանգե նորա երկնային արքայությունը: Աստուծո նմանելու համար պիտո է լինել առաքինի և բարոյական մարդ, որովհետև աստված աղբյուր է և կենտրոն ամենայն առաքինության և բարոյականության, իսկ մարդը հարստություն ձարելով, փառք պատիվ գտանելով չէր կարող առաքինի դառնալ, նորա առաքինության շարժառիթը գտանվում է դաստիարակության և կրթության մեջ: Մարդը պարտական է դաստիարակվիլ, կրթվիլ, հետո, ոտքա ազդեցությամբ առաքինանալով, աստուծո նմանիլ և վայելել մի հոգևական և հավիտենական երջանկություն:

Ո՛վ չէ ցանկանում վայելել այս երանությունը. բայց ով որ կամի, պիտո է արժանի կացուցանե յուր մարդկությունը այս շնորհին, յուր առաքինական գործերով, ուրեմն, պիտո է լուսավորև և հարստացնե յուր բանականություն, պիտո է ուսանի ճանաչել աստվածը, յուր ընկերը, յուր անձը, յուր ազգը և առհասարակ բոլոր աստուծո գործերը, նա պիտի սիրե որոնց բոլորին, և այս բաները հնարավոր են միայն դաստիարակության միջնորդությամբ: Ո՛րքան մեծ պարտականություն կա ամենայն ծնողի վերա հոգալարձու լինել յուր զավակի դաստիարակության համար, որովհետև դորա մեջ պարունակվում էր նորա մարմնավոր և հոգևական երջանկության ապահով գրավականը, և ո՛րքան մեծ է այս պարտականությունը, ո՛րքան նրանելի է մի ծնող լիապես կատարելով այս պարտականությունը, նույն չափով և նույն կշռով թշվառ է մի ծնող և ամենայն դաստիարակության արժանի, եթե զանցառու էր այդ սուրբ պարտականության մասին:

Եվ ամենայն ծնող, որ հնար ուներ դաստիարակելու և լուսավորելու յուր զավակը և չէր գործ դնում այդ հնարը կամ անհոգ լինելով յուր զավակի բարոյական կրթության մասին, յուր արծաթը վատնում էր աշխարհային ունայն և անցավոր վայելչություններների համար, և եթե մի խարհային ունայն և անցավոր վայելչություններների համար, և եթե մի այդպիսի զավակ յուր հոր անհոգություններից անկիրթ ու խավար մնալով ապագայումը դառնար մի վատթար մարդ, աստուծո և մարդկության առաջ պատասխան տա աստուծո ահեղ դատաստանի առաջև:

Հայրերդի՛ ծնողներ, զգուշացեք այս ծանր պատասխանատվությունից. հերի՛ք է, եթե մեզանից յուրաքանչյուր ոք յուր համար միայն կարողանա պատասխան տալ աստուծո արդար դատաստանի առաջև. հարկավոր չէ յուր վերա առնուլ և զավակների պատասխանատվություններ:

Այս միջոցներում ստացած նամակներիցս, հետևյալ նամակը կարող եմ մեջ բերել Հիշատակարանիս մեջ։

Պարոն ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԵԼ.

Մայիսի 17, 1838, Բեզուսկոյէ։

Վերջին նամակովս, որի հետ ուղարկել էի իմ քանի մի նկատողությունքը պ. Խաչակյանցի գրվածքի վերա «Հրավիրակ հայրենասիրության», խոստացել էի գրել և հաստացանել ձեզ այն տպավորությունը, որ գործել էր իմ վերա պ. Հովհաննիսյանի «Նոր Քնար Հայաստանի» անուն նով չորրորդ տետրակը (տպած Մոսկվա, 1858)։ Ահավասիկ կատարում եմ իմ խոստումնքս. այս նամակիս հետ ուղարկում եմ մի փոքր տետրակ, որի մեջ գրել եմ իմ դատողությունը պ. Հովհաննիսյանի Նոր Քնարի և առհասարակ ազգային երգ անունով աշուղների գրած կամ ասած բաներ ի վերա ընդհանրապես, իսկ դուն այդ Քնարի չորրորդ տետրակի և մանավանդ նորա հառաջաբանի վերա մանավորապես[10]։

Այստեղ չկան նորություններ, որոնց մասին կարողանայի ծանոթություն տալ ձեզ. վարում եմ մի ձանձրալի և միօրինակ կյանք։ Շատ անգամ սրտիս նեղությունից դնում եմ ծովի ափը և տեսանելով Սև ծովի սպիտակ փրփուրները, որ շատ հեռի տեղերից երևում են ալիքների գագաթի վերա, և որոնք ազատությամբ շարժվում են հետ և հառաջ, ակամա երանի եմ տալիս մինչև անգամ այդ անշունչ էակի անգիտակից ազատությանը։

Սև ծով ասացի, միտքս նկավ. նորերումս այդ ծովի մեջ, մի նավ անցանելով Սինոպի առաջնից նստավ ցամաքի վերա։ Երբ մի այլ նավից օգնություն առանալով դուրս նկավ այդ վտանգավոր դրությունից, նավապետը նկատեց, որ մագնիսյան սլաքը ընդունեց ամենևին այլ ուղղություն, քան թե սովորականը։ Այս բանը լինելով մի նորանշան երևույթ, նավապետը ծանոթություն տվեց Սինոպի ծովապետին, որ իսկույն մի նավ ուղարկելով հանդերձ բանագետ մարդերով, տեղեկություն առացավ, թե արդարև նավը մոտենալով այդ տեղին, մագնիսյան սլաքը սկսում է դողդողալով փոխել յուր ուղղությունը և հետանալ հյուսիսային բևեռից։ Այս բանի մանրամասն քննությունը հանձնվելով գիտնական բնագետների առուգվեցավ, որ այդ տեղերում ծովի տակին կան շատ երկաթահանք, և մագնիսաքար, որ պատճառում էին այդ ազդեցությունը մագնիսյան սլաքի վերա։

Ոչինչ այլ բան չունիմ առ ժամս ձեզ գրելու, մնացնք բարյավ մինչև ցմյուս նամակս։ Ցանկալով ձեզ ողջություն և հաջողություն, մնամ ձեզ միշտ բարյացակամ եղբայր,

Ս. Խ. ՇԱՀԲԵԳ

Ես շատ շնորհակալ եմ այս պարոնից, դա միշտ կերակուր է տալիս իմ Հիշատակարանին։ Անցյալները գրում էր մի պարոնի տեսությունը, առանց ծույից արծաթ դուրս տալու յուր պարտքերը հատուցանելու մասին։

«Մի պարոն» — գրում էր նա — «որ պարտական էր մնացած մի կառավարության մի արծաթի մեծ գումար, շատ տարիներով կամակորվում էր և չէր կամենում հատուցանել այդ գումարը, արդյոք ա՞յն պատճառով, որ այդ պարտքը հատուցանելով խանգարելու էր յուր վաճառականության ընթացքը, թե ագահությունը ստիպում էր նորան ձեռքից չհանել այդ գանձը, չգիտեմ. միայն երբ վերջապես օրինավոր դատաստան բանալով սկսեցին պահանջել այդ գումարը և նա դարձյալ կամակորվեցավ, այն ժամանակ պահանջողը իրավաբանական կարգով արգելք դրեցին նորա անշարժ կալքերի վերա, որ բավական մեծ գումար արժեին։

«Այդ պարոնը, մի քանի ժամանակ անցանելուց հետո, բողոքում է, «թե անօրինաբար վարվել են յուրյան հետ, և թե նա, յուր պարտապահանջների ապօրինի ընթացքի պատճառով հասել է մեծ վնասի, որ դուրս էր բերում հետևյալ կերպով։ Նա գրում է յուր բողոքի մեջ թե յուր կալքը այսքան արժելով, կարո՞ղ էր գրավ դնել և առանալ այսքան արծաթ, որ գործ դնելով վաճառականության մեջ միտք անպատճառ շահվեր այսքան գումար — ավելի շատ, քան թե ինքը յուր իմաստուն հաշվումը ցույց էր տալիս յուրյան պարտական — բայց որովհետև արգելք են դրել կալքի վերա, վասնորո չէ կարողացել գրավ դնել, չէ կարողացել արծաթ առնուլ ուրեմն և այն մեծ շահը շահվիլ։

«Այժմ դատաստան է բացել յուր պարտապահանջների հետ և պահանջում է նոցանից յուր չկրած, մտացածին վնասը, նա կամի այդ գումարով հատուցանել յուր պարտքը և մնացորդը գործ դնել շամպայն գնելու համար, որովհետև շատ է սիրում նա այդ գինին։

«Տե՛ս թե ո՞րտեղ է հասել աշխարհիս բանը. պարտականը ոչ թե միայն չկամի հատուցանել յուր պարտքը,— ո՛չ, հերիք չէ այդ,— այլև մի մեծ գումար ևս կամի առանալ յուր պարտապահանջներից, որպես «նվ պատճառ են, թե այդ մարդը ունի մի քանի ցախավելով «հավաքած կոզմնակից մարդիկ, որ արդարացնում էին նորա ո՛չ թե միայն այդ ընթացքը, այլև բոլոր անօրենությունքը, որ գործած էր յուր «կյանքումն։

Նթե այս տեսությունը կապակից չլիներ խարեբայության և անբարոյականության հետ — պարտք հատուցանել առանց յուր ծույից արծաթ դուրս տալու — շատ լավ բան էր, բայց որովհետև դա հիմնված է սուտության և խարդախության վերա, այդ պատճառով պիտու է միշտ մնա գող և ավազակ մարդկանց սեփական։

Դ

Հունիսի 24-ից սկսած, ամբողջ երեք օր, անձրևը գետի նման թափվում էր երկնքից, առանց մի րոպե դադարելու։ Այս առասպելյանը անձրևի պատճառ էր ավել մեր գյուղի շինականներին հրատարակել նանրահավատություններից հառաջացած մի առասպել, թե կայծակից զարկված ու մեռած կին լվացել են անձրևի տակ այդ կնոջ անդուլ մերձավորը, և թե այդ պատճառով վեց շաբաթ շարունակ անձրևը հեղեղելու էր մեր արտերը։ Մի քանի այլ շինականների բերանից լսում էր մի այլ առասպել, որով մխիթարվում էին նորա, որ չկամենին անձրևի տևողությունը, թե կղմինդր և ագյուս շինողները, որովհետև մեծ վնաս ունեին անձրևից, կենդանի կենդանի թաղել են մի հորի, որ կտրվի անձրևը, որպեսզի հնար առնան յուրյանց կղմինդրները և ագյուսները չորացնելու։ Չգիտեմ, կհաստատե՞ն արդյոք այն մարդիկը, որոնց ձևրը ընկնելու էր մի օր իմ տխուր Հիշատակարանը — իմ անմխիթար միայնության արդյունքը. թե ինչ հարաբերություն կա անձրևի և մեռած կնոջ կամ թե մի կենդանի թաղված հորիի մեջ. ես ինքս չեմ հաստատում, միայն գրում եմ այն, ինչ որ կա շինականների մեջ և ինչ որ նոցա կենդանի լեզվովը լսում եմ նոցանից։ Ավանդությունը ասում է, «Եթե կայծակից մեռած կնոջ մարմինը լվացվի անձրևի տակ, ապա կշարունակվի այդ անձրևը վեց շաբաթ, իսկ այդպիսի անձրևային եղանակի մեջ, եթե վեր առնվի մի հորի և ողջ ողջ թաղվի գետնի մեջ, այնուհետև անձրևը կկտրվի քառասուն օրս։ Ինչպես և էր այդ բանը, ասույդը այս է, որ անձրևը անդադար թափվում էր և ես նստած իմ սենեկի մեջ միայնակ, նայում էի պատուհանից դեպի դուրս։ Աչքս ոչինչ այլ բան չէր տեսանում բացի պատռտվող ալդալակներից, որ լողում էին լճացած անձրևաջրի երեսին։

Արևը մայր էր մտել արդեն. որոտմունքը դղրդում էին ոչ թե միայն երկնակամարի օդը, այլև իմ ոդորմելի պատուհաններիս ապակիքը, որ ներկել էր ժամանակը ծիրանի գոտու գույներով։ Ահագին փայլակները մութ ու թանձր ամպերի մեջ փայլատակելու ժամանակ, թվում էր թե պատռվում է երկինքը. իսկ փայլակների լույսը ներկում էին ամենայն բան երբեմն մորագույն և երբեմն ծծմբագույն։ Անձրևի կատաղությունը, որոտմունքի ինդյունը, փայլակի լույսը, մրրկի սուլելը և ծառերի հպատակորեն խոնարհելը նորա բռնության առաջ, բյուր տեսակ սոսափյունք պատճառելով յուրյանց տերևներով ու ճյուղերով, այս բոլորը միասին, կազմում էին մի ահարկու և տխուր ներդաշնակություն, և հառաջացնում էին մարդու մեջ մի այնպիսի անախորժ զգացողություն, որ ասելիր թե ահա ամենայն ինչ վերջացած էր նորա և աշխարհի մեջ, թե մի սատակիչ շանթ կարող էր իսկույն չքացնել նորան, և այնուհետև դուր էր ծագելու դեղեցիկ և խաղաղ առավոտը նորա լուռ ու մունջ գերեզմանի վերա։

Այս անախորժ վիճակի մեջ անցուցել էի ահա երեք օր և երեք կիսով շափ անքուն գիշերներ, և այդ միջոցին, երբ սկսում եմ իմ պատմու-

Բյուրը, գտանվում էի պատուհանիս մոտ մի տաղտկալի միայնության մեջ, որ շարունակվում էր երրորդ օրից սկսած։ Հանկարծ ի՛նչ տեսանեմ. մի մարդ, փաթաթված յուր վերարկուի մեջ, այս տաստիկ անձրևի տակով վազում է դեպի իմ տան կողմը։ Ես ամենևին չկարծեցի թե իմ մոտ է գալիս, որովհետև ոչ օրի չէի սպասում. և իմ ծանոթքը այնքան խելք ունևին, որ այսպիսի եղանակում ոտք դուրս չէին դնելու շեմքից։ Մտածեցի թե այդ մարդը գալիս է իմ դրացու տուն, կամ գուցե ի՛նքը դրացիս է, որ վերադառնում էր դեպի տուն, մի շատ հարկավոր ընտանեկան գործի համար դուրս գնացած լինելով։ Օրի մռայլոտ մթությունը, այդ մարդու թրջված հալավները, որոնց վերայից ամենայն գույն կորել էր, անհնարին էին կացուցանում ստուգապես ճանաչել այդ մարդը։ Վերջապես լսում եմ, դուռիս զանգակը զարկեցին... Ծառաս դնաց դեպի դուռը և մի քանի վայրկյան ուշացավ։ Լսում եմ մի խոսակցության անորոշ ձայն, բայց բան չեմ հասկանում. վերջապես ներս մտավ ծառաս և հայտնեց, թե մի մարդ կամենում էր տեսանել ինձ, հավելացնելով, թե որովհետև առաջին անգամ տեսանում էր այդ մարդը, վասնորո և չէր կարողացել ճանաչել նորան։ Իսկույն հասկացա, որ հյուրը մի քաղաքավարի մարդ պիտոո է լինի, որովհետև առանց յուր անունը և ո՛վ լինելը ծառային հայտնելու, հրամայել էր նորան հայտնել ինձ յուր ցանկությունը։ Ինչ և իցն, հրամայեցի ծառային ընդունել նորան. նախասենյակի և առանձնարանիս դուռները բացվեցան և փակվեցան և ներս մտավ պ. Բնգզադեն[11] թրջված միանգամայն մինչև ոսկրը։ Ջուրը թափվում էր զգեստներից աղբյուրի նման, նա հանեց բոլորովին ջուր կորած գլխարկը և ամենայն քաղաքավարությամբ սկսեց թոթափել նորան առանձնարանիս մեջ. ես նայում եմ նորա վերա, նա երկար ժամանակ չէր եկած իմ մոտ և այդ էր պատճառը, որ ծառաս չէր ճանաչում, որովհետև նոր էի բռնել սորան։ Ողջույն ևս չտված դրեց նա թաց գլխարկը աթոռի վերա, հանեց վերարկուն, որից ամենայն առատությամբ թափվում էր ջուրը, նույնպես թոթափեց և գուցե կծգեր ևս աթոռի վերա, եթե ծառաս հառաջամատույց չլիներ և չխնդրեր ինքյան տալ։

Երբ որ բավական սրսկել էր առանձնարանս անձրևի ջրով, ձեռքերը տրորելով մոտեցավ ինձ և մեր մեջ բացվեցավ մի այսպիսի խոսակցություն առանց ողջույնի.

— Մեր տղա, ոչինչ բանից տեղեկություն չունիս, դուրսը բոլորովին չրհեղեղ է, իսկ դու հանգիստ նստել ես տանդ։

«Է՛հ, քեզ ո՛վ է ասել, որ այսպիսի անախորժ եղանակում ոտքդ դուրս դնես տանից. ես, ահա ինչպես տեսանում ես, երեք օր է, որ փակվել եմ տանս, որովհետև ոչինչ հնար չկա դուրս գնալուս»։

— Ո՛վ գիտե դարձյալ ինչ բանով ես պարապած. դու զուր տեղը երեք օր տանը չես նստում. երևի թե հարստացնում ես հիշատակարանդ։ Լա՛վ նայիր հա՛, չլինի՛ թե այս իմ օտարոտի այցելությունը ևս նյութ

դառնա քո Հիշատակարանիդ. ես գիտե՞ս ինչպես մարդ եմ... ես ուրիշների նման չեմ... երբեք հազար մանեմի ջուրը կդնեմ, որ քո Հիշատակարանդ արև չտեսանեն... ինձ Բնգզդած են ասում։

«Քոզ և շահզադն լինեիր դու, այնուամենայնիվ այդ քո մակնունը ոչինչ բան չունի իմ Հիշատակարանի հետ. ոչինչ մարդու ծառա չէ իմ Հիշատակարանը. ես նորան չեմ տպում, օտարի չեմ ցույց տալիս, ունիմ երկու հարյուր ութսուն բարնկամ[12]. միայն նորա են տեսանում։ Եվ այն մարդը կամ այն անցքը կընկնի Հիշատակարանիս մեջ, որ արժանի էր հատուկ ուշադրության լավ կամ վատ կողմից. և քո պես մարդը պետք է ուրախանա և շնորհակալություն մատուցանի ինձ, երբ արժանացել էր մի երկու բերքի տեղ տատանելու Հիշատակարանիս մեջ։ Երբ դու ավելորդ արծաթ ունիս, քեզ մի բարի խորհուրդ տամ. մեր գեղի մեջ չկա աղջիկների ուսումնարան, դու այդ քո ավելորդ արծաթը գործ դիր, գոնե առ ժամս, մի փոքրիկ ուսումնարան բաց, ուր քոզ ուսանին աղջիկ զավակները մեր աղգի, կրթված և դաստիարակված մայր դառնալու համար ապագայումը. այդ շատ օգտակար գործ է, և ես այն ժամանակ կփառաւորեմ քո անունը Հիշատակարանիս մեջ, հավատա՛ ինձ, պարսից շահի հրովարտակի նման, ոսկի տառերով կգրեմ անունդ»։

— Ինչե՞ր ես խոսում. ի՞նչ բանի համար ջուրը ձգեմ այդքան արծաթի, ես դուստր չունիմ, իսկ օտարի զավակների վերա ես հոգաբարձո՞ւ եմ, ի՞նչ եմ։ Ի՞նչ պարտական եմ ես աղգին, ամենայն ծնող քոզ հոգս առնի, երբ կամի, յուր զավակի դաստիարակության վերա. դու կամիս, որ ծիծաղեն իմ վերա և ասեն դևուս հասարակաց առածը, թե «խելագարի հացը խելոքի փորը». շատ շնորհակալ եմ խրատիդդ։

«Ընդհակառակն, երբ դու ավելորդ կարողություն ունիս, որ քո ապրուստի համար հարկավոր չէր, և երբ մի այդպիսի արծաթագլուխ հոժարում ես դուր տեղը չբացնել Հիշատակարանիս արև ցույց չտալու համար, մի՞թե պարծանք չէր քեզ և քո բոլոր գերդաստանին, այլ ուսումնարանը որ միշտ և հանապազ կրնկալու էր քո անունը, և ապագայումը շատ մայրեր աղոթք կառնեին քո հոգու համար, շատ երեխայք, առաջին անգամ խոսել սկսանելով, սիրով կսովորեին արտասանել քո անունը։ Դու ասում ես թե դուստր չունիս, և թե ոչինչ պարտական չէիր աղգին, թե դու ուրիշի զավակների հոգաբարձուն չէիր։ Մի՞թե մի մարդ մի բարի գործ կատարում է նորա համար, որ պարտական էր և՛ ի՞նչպես կարելի էր այնուհետև բարեգործություն անվանել այդ, երբ նա կատարելով որևիցե գործողություն, վճարել էր յուր պարտքը. երբ ասված օրհնել է քեզ հարըստությամբ, ինչու դու մասնակից չառնես այդ բարության մի ուրիշը, որ զուրկ էր նորանից. մի՞թե Քրիստոսը պարտական էր մարդկությանը յուր անմեղ արյունը, որ քամեց Գողգոթայի վերա, մարդկության կեղտը լվանալու համար։ Դու ասում ես թե չունիեր դուստր. մի՞թե մարդը պիտո է այն բանը առնե միայն, որից օգուտ էր հատաջանում յուր ընտանիքի և յուր համար հատկապես. երբ դու ստացած լինեիր աստուծուց դուստր և

դասախարակած նորան, նա պիտո է ապագայումը օրհներ քո հիշատակը և աղոթեր քո գերեզմանի վերա, իսկ եթե դու խնամ տաննիր և դասախարակներ ուրիշ մարդերի դասերքը, որ աղքատ ծնողներե զավակ լինելով մնալու էին կոպիտ հասկացողությյան մեջ, մի՞թե այդ կրթված և դասախարակված օրիորդքը հայհոյելու էին քո անունը, ո՞չ ապաքեն ամեն մինը նոցանից երախտագիտական արտասուրով պատվելու էին քո գերեզմանի հանգիստը։ Դու ասում ես թե «հոգաբարձու չէիր ուրիշի զավակներին». մի՞թե դատապարտվելու չէր մի մարդ, որ թեև հոգաբարձու չէր մի այլ մարդու վերա, այնուամենայնիվ տեսանելով որ մի այդպիսի մարդ մոտենում է մի անգունդի բերանի և պիտո է կործանվի նորա մեջ և նա տեսանելով և հնարաւորությունեալով փրկել նորան, գործ չէր դնում յուր հնարքը, և այն խնդիրը կորչում էր այնպես զուր տեղը։ Մեք ամենքս մի ազգի որդիք ենք, մեր հայրը Հայկն է, և մեք բոլորս մի գերդաստանի անդամ, ամո՞թ չէ այդպիսի գերդաստանի որևիցե անդամին, պաշտելով յուր անփութական անձնասիրությունը անհոգանալ ընտանիքի լավության մասին, ամոթ չէ՞ ասում եմ միևնույն ընտանիքի մեջ որոշել իմ և քոնս։ Դու լսի՛ր ինձ, պ. Բեզդեդե, եթե ունիս կարողություն, արի գործ դիր նորան, բարի օրինակ դարձիր մեր մյուս կարող հզրայրակիցներին, չերմացո՛ւր քո կրակով և նոցա սիրտը մեր անանց ազգի վերա և հավատա՛, որ շնորհակալ կլինիս հետո ինձանից մինչ կվայելես պտուղը այն ծառի, որ իմ խորհրդով տնկել էիր»։

— Քո քարոզը մեծ պատից նրկայն էր, ես արծաթ եմ վաստակել քրտինք թափելով, և կծախեմ նորան իմ բավականության համար միայն և եթե սիրաս տա, նրանք հազար մանեթ նրանք կոպեկի նման կչքացնեմ քո Հիշատակարանդ չքացնելու համար. ինձ Բեզդեդե են ասում...

«Եթե այդպես է, եթե բարի խորհրդի ընդդեմ ականջդ խցում ես իժ օձի նման, եթե այդ քո հարստությունը պահում ես ձեռքումդ, որ շաբաթությունք հատաջացնես նորանով, ուրեմն գնա, այդ երեք հազար մանեթը մածունի տուր երեսդ քսիր, գո՛նե այդ օգտակար ես կլինի, որովհետև ի քեն շատ սպիտակ չես, բայց երբ այս ամառնային չերմուկքերը սկսանում են, ասես թե, եթովպացի ես դառնում։ Ո՞վ է թքում քո հարստության վերա, և ապագուցանելու համար թե դու ոչինչ վնաս չէիր կարող տալ ինձ քո արծաթովը, անպատճառ կընկնենս Հիշատակարանիս մեջ»։

— Մենծ մենծ մի՛ խոսիր... ինձ Բեզդեդե են ասում...

«Ասացի քեզ միանգամ, թե կամիս շահդեդե ասեն, ինձ ինչ փույթ»։

Իմ Հիշատակարանիս ընթերցող երկու հարյուր ութսուն բարեկամքս կարող են զարմանալ, թե այս ի՛նչ տեսակ խոսակցություն է։ Պատճառն այն է, որ վազուց ճանաչում ենք միմյանց, և պ. Բեզդեդեն այնքան վատ մարդ չէ, թեև մի փոքր հիմար է. նա այսպես խոսում է այն ժամանակ միայն, եթե մի փոքր ավելի փախել էր անիծած արաղը։

— Կատակը մյուս կողմ դնենք,— ասաց պ. Բեզդատեն (որպես թե իմ մինչև այժմ խոսածը կատակ էր),— ես գործի եմ եկել, և շատ հարկավոր գործի։ Տեսանո՞ւմ ես, այս սատանի անձրևը ես արդելարիի չէ եղել իմ գալուն...

«Ասա՛, ես լսում եմ քեզ»։

— Լսելով բան չէ դառնում, դու մի էֆիմերդեն առնուս ձեռդ, մի սարսափելի երազ եմ տեսել...

«Ես էֆիմերդեն չունեմ, ա՛յդ է քո շատ հարկավոր գործը, խելքիդ աղ առնեմ. ո՛վ մարդ, տարիքդ բառասունից անցել են, քո խելքդ ե՞րբ է գալու. դիցուք թե փորդ պատառներ, միջումդ այլ չկա, բայց և խելապատակիդ մեջ հավի խելք չկա. ի՛նչ հիմար բաներ ես ասում, էֆիմերդեն ո՞րն է...»

— Նոր նոր հավեր են դուրս եկել,. երկաթի ձվեր են ածում. մինչև այժմ խելոքները, պիտակավորները, կարդացողները, քահանա ասես, վարդապետ ասես, եպիսկոպոս ասես հավաստացել են և գործ են ածել էֆիմերդեն, սա չէ հավատում և չէ ընդունում. տե՛ր ասումած. հետո ասում ենք, թե ասումած բարկանում է մեր վերա. ինչպե՛ս չբարկանա երբ աշխարհը տակ ու վերև են բերում այսպիսի թերահավատ մարդիկ։ Դուք բոլորովին գործել եք լոմիա[13] ասեմ, ֆարմասոն[14] ասեմ, չիք հարությյուն դավանող ասեմ, ասումած աղատե։

«Մեկ օրինակ չեն քո հիշած մարդիկը, որ էֆիմերդեն բան ու գործ էին շինել յուրյանց համար։ Ասումած մեզ խելք ու բանականություն է տվել, մենք քո հետ ոչ երեխա ենք և ո՛չ խելացնոր պատառ, որ ամոթ չլիներ հավատալ այդպիսի բաներին։ Եվ եթե ասումած բարկանում է, դուրս պատճառը մենք չենք, էֆիմերդեն չընդունողներս, այլ նորա, որ ընդունում են, ինքյանք յուրյանց ոգիությամբ մոլորվում են, հետո պատճառ են դառնում և ուրիշների մոլորությանը։ Էֆիմերդեն ասած բանը սուրբ գի՞րք է, ի՞նչ է, որ եթե մի մարդ չհավատար դրան, ասումած պիտու է բարկանար մի այդպիսի մարդու վերա. ձեր փույթը չէ ամենևին, եթե մի մարդ չէր պահում աստուծո պատվիրանները, որ Ավետարանի մեջ քարոզվում են Քրիստոսի բերանով, և կամիք մտածել, թե այդ բանի համար իսկապես կարող էր ասումած բարկանալ, որովհետև դուք ձեր հիմար ավանդություններին համար անուս էիք առնում աստուծո բանը։ Ձեղանից շատերի տանը գտանվում է էֆիմերդեն, բայց Սուրբ գիրք շատ սակավ. աչքերդ ձգեցեք, չասեմ այլ քրիստոնյաների, այլ անքրիստոնյա ազգերի վերա, մի մարդ կգտանե՞ս հրեաներից, որ չունենա յուր տանը Հին Կտակարանը, կամ մի մոհամմեդական, որ չունենա Կուրանը. ինչո՞ւ համար. նորա համար, որ նոցա կրոնի ազդյուրքը գտանվում են այդ գրքերի մեջ, իսկ մեր պ. Բեզդատենները էֆիմերդեն են որոնում։ Դու ասում ես, թե մենք թերահավատ էինք. ողորմելի մարդ, ի՞նչ է մեր թերահավատությունը, արդյոք ա՞յն, որ Հիշդ ընդունելով Սուրբ գիրքը չէինք ընդունում էֆիմերդեն, կամ ուրիշ այդպիսի հիմարաբանություններ, և ա՞յդ էր

պատճառը, որ ձեր պես խելոքների բերանով անվանվում էինք լոլիևո ու ֆարմասոն, գիտե՞ս դու, թե ի՛նչ ասել է լոլիևո կամ ֆարմասոն...»։

— Կարծում ես թե երևույթի հե՞տ ես խոսում, որ հարցանում ես, թե ի՛նչ ասել է լոլիևո կամ ֆարմասոն...

«Ուրեմն գիտե՛ս»։

— Անտարակո՛յս։

«Ապա ասա՛, ի՛նչ ասել է»։

— Անհավատ, հերետիկոս, հերձվածող, անաստված, աժոխքի բաժին, շիք հարություն դավանող, մոտ և տես...

«Հերիք է, հերիք է. ցույց ավելցիր խելքիդ տակը, հասկացա և ժամանակ չունիմ քո հետ պլուխ գնելու, պլուխս ցավում է։ Դու խնդրում ես, որ ես էֆիմերզն բանամ քո համար և այդ պատճառով ես նկած ես իմ մոտ, այնպես չէ՞»։

— Ամենևին այդպես։

«Ես էֆիմերզն չունիմ, ուրեմն և չեմ կարող կատարել քո փափագը, երկու խոսք պակաս խոսելու համար, վատ չէր լինելու նրա քո-ղուխր ինձ միայն»։

— Ի՛նչ է ասում այս մարդը. է՛յ բարկացար, ի՛նչ է, մեր տղա. և նրա բարկացար, ո՛վ է վախենում քեզանից, ես դեռ երազս պիտի պատմեմ քեզ... ինձ Բեզպազին են ասում... լավ նայիր հա՛...

— «Գլխիդ դիպչի քո բեզպազնությունը. ի սեր աստուծո ձեռք վեր առ ինձանից. ականջներս ցավում են, չեմ կարող լսել...»

— Նրա միայն լսելով քո ականջն է ցավում, ի՛նչ առնե տպա այն մարդը, որի փորի մեջ մտել է...

«Ախլորդ գլխո՞ղ է, թե ոչ. ի՛նչ մարդ, ի՛նչ փորս»։

— Խմարկն չդիտես, բայց դու հարցուր մի ինձանից. աստված հետ արասցե. խեղճ մարդը կարո՞ղ է միրքն մարսել. ընկել է վերին աստիճանի կատաղության մեջ։ Հետո ասում են թե մարդ կատաղում է, ակամա կկատաղես, նրա այդպիսի կրակ ունենաս փորիդ մեջ։

«Ես չեմ հասկանում քեզ. կարծեմ դու խելքդ թողել ես։ Նվ հիթավի մեծ երկյուղի մեջ էի, թե մի՛ գուցե պ. Բեզպազնն խելագարված լինի. մի այնպիսի ջերմությամբ խոսում էր նա իմ հետ, որպես թե ես էի այն մարդու փորը կրակ ձգողը։

— Լսի՛ր,— աղաղակեց պ. Բեզպազնն, աչ ձեռքը դեպի հառաջ պարզելով օդի մեջ,— այսօր քնած էի ճաշից հետո, բայց երկյուղ կրելով որ մի՛ գուցե անծրևային եղանակի խոնավությունից ոսկրացավս նորոգվի, կրկնապատակնցի արագով շինած գնդրքարիս չափը հառաջ քան թե քնել էի, և ահա քունս տարավ։ Տեսանում եմ երազիս մեջ, որ աշխարհի ժամանակը կը հետ է գնացել քանի հազար տարիներով. թվում է ինձ թե գտանվում եմ Հունաստանի մեջ... մի տարի վերա... հետո ինքս ինձ գտա Հունական Հունաստանի մեջ... մի տարի վերա... հետո ինքս ինձ գտա Հունական Հունաստանի մեջ... մի տարի վերա... Մի փոքր ժամանակից հետո լսում եմ աստվածների Ոլիմպոսի վերա։

ապիայլ ամպերի քամակից: Ամպերը կամաց կամաց ցրվեցան և տեսանում եմ դարձյալ Արամազդը. բայց մարդու միաը վերան փուշ փուշ է լինում, Արամազդի երեսը տեսանելով: Գոռում է, ազազակում է նա, բայց ինչպես տեսանում եմ, կռիվը Ամենասի հետ է:

«Իմ շանթե՛րը»,— գոռում է Արամազդը,— «ո՛ւր են իմ շանթերը»:

Ամենասը շնորհալի կերպով, քաղցր ժպիտը շրթունքների վերա պատասխանում է.— «Հայրի՛կ...»

«Իմ շանթե՛րը»,— որոտում է Արամազդը:

— Քո շանթերը, հասած են յուրյանց նպատակին,— ասում է Ամենասը:

«Ի՛նչպես»:

— Ի՛նչ բանի համար պահում ես դու այդ շանթերը, ո՛չ ապաքեն չարագործ մարդիկ պատժելու համար:

«Այո՛»:

— Ես պատահեցա մի չարագործի, որ վերատեսուչ էր հնդկական բրամինների, որ անարգում էր հրապարակով քո դուստրը, որ մահու շափ հալածում էր ինձ: Ես գործ դրեցի այն բոլոր շնորհքը, որ քո ուղեղից ծնանելով ստացել էի, բայց երբ տեսա, որ կամակոր է դարձյալ և կամի իմ հետ պատերազմ բանալ, նկա-Ոլիմպոս: Դուք լսում էիք այն միջոցին Աատղկի հանդյախոսությունքը: Հանկարծ ականջիս հասավ սուրա բարեխոսությունը այն սևահոդի, սևագլուխ և սևադեմ չարագործի մասին, որ միշտ զոհ էր բերում Աատղկին և բուրվառ էր ձգում նորա որդուն... շղիմացա այս անարգությանը և խլելով այն բոլոր շանթերը, որ կիկլոպները պատրաստել էին մի ամբողջ ամի համար, հասա այն չարագործ բրամինապետին, մինչ նա մի հարուստ և ազնվական հնդկացու մոտ հյուր էր գնացած: Ներս մտա այնտեղ իմ սպասավորի կերպարանքով, շանթերդ պահել էի վահանիս տակ, որ անտեսանելի էր նորան, և դարձյալ լսելով նորա հիմար ընդդիմախոսությունքը, արձակեցի, հա՛յր, քո շանթերը, որ այժմ նորա փորի մեջ պատճառում են այնպիսի հրայրյացք, որպիսի չէր պատճառել հունական բանակի հուրը Ագամեմնոնի կառավարությամբ բացված Տրոյայի վերա:

«Ի՛նչ մարդ է այդ, Ճակատագիր» — որոտաց աստվածների հայրը,— «Հանգես ևկ և համար տուր ինձ, ո՛վ է այդ մարդը, և ի՛նչ ես գրել դորա «Ճակատի վերա»:

«Երևեցավ Ճակատագիրը և գլուխ տալով Արամազդին, սկսեց յուր հայտարարությունը այսպես.

— «Գիրասա է այդ բրամինապետի անունը[15], ճանաչում եմ մարդը, բայց հոր անունը չկա մեր մատյաններուն մեջ. այդ մասին այիտու է հարցանել փրփրածին Աատղկից... Մի մարդ տիրություն էր առնում նորան երեխա ժամանակին. կարծիք կար այդ մարդու և երեխայի վերա, որ դոքա ունեններին մի հայր որպիսական առնչություն, թեև այդ մարդը ցույց էր տալիս յուրյան որպես լոկ բարեբար.... Այդ բարեբար անվանվածը

աշակերտ ավելց Գիրսասը մի բրամինի մոտ. երկար ժամանակ մնաց այնտեղ մի մեհենում, որ ոչ շատ հեռի մի կաստազի գետից գտանվում է մի ձորի մեջ։ Մի փորր յուր անունը ազգի մեջ տարածելու համար, և հիմար ու կարճատես մարդերի աչքը ներկելու համար, աշակերտներ հավաքեց այստեղից և այնտեղից. բայց որովհետև ինքը ոչինչ չգիտեր, վասնորո և աշակերտքը ևս կատարելապես նմանեցան յուրյանց վարդապետին։ Շատ հրաշագործություններ պատմում էին նորա կողմնակիցքը, որպես թե խոր գիշերի մեջ, նորա մեհենի մոտ կամ դպրոցի մեջ Աստղիկ էր ծագում... թեև երկինքը պատած էին թանձր ամպերով։

— «Մնանելու ժամանակ այդ բոլորը գրել էի ես նորա ճակատին։ նա բրամինապետ դարձավ իմ ազդեցությամբ։ Գրել էի նույնպես, որ նա առանալու էր ձեր շանթերը Արենասի ձեռքով, և այդ շանթերը, լափելով նորա փորոտիքը, պիտու է վախճան դնեին նորա անարժան բրամինապետության կյանքին։ Անշափ են դորա շարագործությունքը. մի խոսքով այդ մարդը մի շարժական գահ է սատանայի և բոլոր դժոխքի դորության. նորերումս ձեռքերը ներկեց մի ծերունու արյունով...»

— Արամազդը կարելով ճակատագրի հայտարարությունը, գովեց Արենասի գործողությունը, և հրամայեց կիկլոպներին մի մեծ շանթ պատրաստել այդ իշվառականի օրը խավարեցնելու և Պլուտոնի թագավորությունը ուղարկելու համար։

— Այս միջոցին ամենայն բան անեղևուրացավ, մինչդեռ երկինքը, և ես, այս գրչությունից զարթնելով, գտա ինձ մշհնձիա մեջ հանգստացած. կայծակը ջարդել էր այն մեծ գոմը, որ մեծ հայրս շինել էր, անտառի մոտ, լճի առաջև, մեծ արծաթ վատնելով։ Քրտինքս թափվել էր գետի նըման, մահիճ, վերմակ, սփռոց, ամենայն ինչ ջուր էր դարձած։ Շատ մտածեցի այս երազի վերա, բայց խելքս բանի չհասավ։ Էֆիմերդեն չունեի որ նայեի։ Օրացույց ունեի, բայց երազի մասին բարի ու շար օրերը չկային նշանակած, երևի թե դորա շինողը ևս մի թերահավատ մարդ էր։ Միայն մի խաչ է դրել հունիսի 27-ի առաջև, բայց այդ խաչը ցույց է տալիս արյուն թողնելու համար օրի լավությունը։ Ճարս կտրվեցավ, վերկացա, և չնայելով նշանակի այսպիսի անհարմարությանը, ահա գտանվում եմ քո մոտ։— Աստուծո սիրուն, նայի՛ր մի էֆիմերդեն, տես, ի՞նչ է ասում։

— «Ես արդեն ասացի քեզ, թե էֆիմերդեն չունիմ, այդ պատճառով ևս չեմ կարող լցուցանել քո ցանկությունը։ Միայն այսքան կարող եմ ասել քեզ, որ երազ ասացյալը հավատալու բան չէ. դու, ինչպես ասում ես, կրկնապատկել ես արտղով շինած դեքորտի չափը, արյունը թանձրացել է գլխիդ մեջ, իսկ ջլերդ հատուցանելով դրան որոտմունքը և մնդլունը ցել է գլխիդ մեջ, իսկ ջլերդ հատուցանելով դրան որոտմունքը և մնդլունը ուղեղիդ, սա գտանվել է մի ավելորդ ջերմության մեջ և պատճառել է այդ ցնորքը։ Հանգստացի՛ր, դա մի վնասակար բան չէ»։

Պ. Բնգզագեն ասատիկ հուսահատված իմ սառնությենից, վեր

առավ գլխարկը և վերարկուն, և անձրևի գետորեն թափվելուն ուշադիր չինելով, գնաց։

Հիշատակարանիս ընթերցողներին թողում եմ իմաստասիրել, թե անկրթությունը մինչև ո՞ր աստիճան մոլորեցնում է մի մարդ։ Դիցուք թե նրան էր անել, դարանից մի օգուտ կամ վնաս չկար յուրյան. շանթը ինքը չէր ուտողը, թող բրամինապետը հոգս առներ, մանավանդ անձրևի առիթ ընկնելով կարող էր ակարանալ ու կարոտել այնուհետև Հիպոկրատի շաքիներին, որ փարատեին նորա ցավը։

Այսպիսի բաներ տեսանել կամ լսել շատ ցավելի է ինձ. արդյոք կատ՞ աստված մի օր, որ ես իմ սիրական ազգը տեսանեի նանրահավատության, անպատշաճության և անկրթության բարբարոսական լծի տակից կատարելապես ազատված։

* * *

Նույն օրին երբ որ պատահել էր իմ և պ. Բնգլագնի հետ այսոնդ հիշած խոսակցությունս, բարեկամիս մինը քաղաքական փոստայով ուղարկեց իմ մոտ մի ոտանավորի պատճեն, որ առանց ստորագրության ստացել էր Թիֆլիսից և որի բնագիրը մայիսի 15-ից ուղարկել էին մի լրագիր հրատարակողի։ Կարդացի այդ ոտանավորը և երբ կամեի արտագրել նորան Հիշատակարանիս մեջ, հորնգրայրս ներս մտավ։ Իմ հորնգրայրը իմ գլխին ցնդորդի նման մի բան է, շատ խիստ բարոյականության տեր մարդ է, ամենայն օր նայում է Հիշատակարանիս, որ մի անպատշաճ բան չգրեմ։ Թևալետ այդ ոտանավորը ուներ յուր մեջ անպատշաճություններ, բայց այնուամենայնիվ նորա հիմքը շնորհաբանություն էր։ Ափսո՛ս, որ չգիտեմ այդ ոտանավորի հեղինակը, եթե այդ պարոնը հնար տար ինձ, ես նորան կուղարկեի մի նամակ, որ հորնգրորիցա[16] ծածուկ շարագրել էի և շատ հավատացած եմ, որ կուրախանար այդ նամակի վերա։

Ե

Ճշմարիտը պիտո է ասել, սիրում եմ հին բաներ. ինչ պիտո է առնել, ամենայն մարդ ունի յուր համար մի սիրական բան. իմ սիրականը է հնություն խուզարկությունքը, մանավանդ թե այդ բանը ունենա պատմական արժանավորություն։ Այսօր ձեռս ընկավ նորին կայսերական մեծության նկատելինա երկրորդ ռուսաց կայսերուհու բարձրագույն հրովարտակի պատճենը, այն հրովարտակի, որ տրված է 1779 թվականի նոյեմբերի 14-ին արժանապատիվ Գեորգս Մարկոսյան արքիմանդրիտի*

* Մի բնթանացի ավանդություն, որ հասել է ինձ, և որի ստուգությանը չեմ կարող երաշխավոր լինել, ասում է, թե մի հայկական արձակ, նախանձելով Գեորգս վարդապետի շնորհին, որ գտել էր նկատելինա կայսերուհու առաջև բարձրագույն հրովարտակ առնելով նորանից, այլև առաչնորդ կարգվելով գաղթական հայերի վերա, գնդ է ավել և

անունով, որ առաջնորդում էր դրիմեցի հայերին, երբ սոքա գաղթեցին Ղրիմից դեպի Դոն գետի ափը, ազատվից ա՛չ շատ հեռի և նոր քաղաք շինելով անվանեցին նորան Նախիջևան: Այդ բարձրագույն հրովարտակով մեծ կայսրուհին բարեհաճել է ցուցանել նոր Նախիջևանու հայոց ազգին պանագան առանձնաշնորհություններ: Շատերը նախիջևանցի հայերից անունով միայն գիտեն այդ հրովարտակը, ուստի կարծում եմ, որ կցանկանային կարդալ որպես բնագրի հավատարիմ պատճենը, նույնպես և նորա ճիշտ թարգմանությունը մայրենի լեզվով: Այս խորհրդով ամենահարկավոր բաներից մինը համարեցի արձանագրել այդ հրովարտակի բուն պատճենը թարգմանությամբ հանդերձ, և հավատացած եմ, որ մեր ազգը Նախիջևանու մեջ, որին այս բոպեիս հիշեցնում եմ այն ամենայն մայրական գթասրտությունը ի մեր հանգուցյալ Եկատերինա երկրորդ կայսրուհվուն, և ուսաց կայսրների ողորմությունքը ժամանակ առ ժամանակ առատացած Նախիջևանու վերա, վերատին օրհնելու է յուր հովանավորների հիշատակը, և, ամենայն երջանկությամբ լրացյալ, երկայն օրեր բարեմաղթելու է մեր ամենագթած Աւետարանդր Նիկոլաևիչ կայսեր, որովհետև սոցա շնորհով ապրում է այսօր մեզ մոր — Ռուսիայի հողի վերա, որպես յուր սեփական տան մեջ, ազատ ամենայն նեղություններից: Ահա այդ հրովարտակի հավատարիմ պատճենը և նորա հարազատ թարգմանությունը:

Божіею поспѣшествующею Милостію *Мы, ЕКАТЕРИНА ВТОРАЯ,* Императрица и Самодержица Всероссійская:

Московская, Кіевская, Владимірская, Новгородская, Царица Казанская, Царица Астраханская, Царица Сибирская, Государыня Псковская и Великая Княгиня Смоленская, Княгиня Эстляндская, Лифляндская, Корельская, Тверская, Югорская, Пермская, Вятская, Болгарская, и иныхъ, Государыня и Великая Княгиня Нов-Города Низовскія земли, Черниговская, Рязанская, Ростовская, Ярославская, Бѣлозерская, Удорская, Обдорская, Кондійская и всея Сѣверныя страны, Повелительница и Государыня Иверскія земли, Карталинскихъ и Грузинскихъ

Աստուծո հաջողեցուցիչ ողորմությամբ ՄԵՔ, ԵԿԱՏԵՐԻՆԱ ԵՐԿՐՈՐԴ Կայսերուհի և Ինքնակալուհի ամենայն Ռուսաց,

Մոսկվայի, Կիևի, Վլադիմիրու, Նովգորոդի, Արքայուհի Ղազանու, Արքայուհի Հաշտարխանու, Արքայուհի Սիբիրիայի, Թագուհի Պսկովյան և Մեծ Իշխանուհի Սմոլենսկյան, Իշխանուհի էստլանդիու, Լիֆլյանդիու, Կարելիայի, Տվերի, Յուգորի, Պերմի, Վյատակի, Բոլգարիայի և այլոց. Թագուհի և Մեծ Իշխանուհի Նիզովյան նավա-Գորոդի, Չերնիգովի, Բյազանու, Բոստովի, Յարոսլավի, Բելոզերսկի, Ուդորսկի, Օբդորսկի, Կոնդիսկի և բոլոր Հյուսիսային աշխարհի Հրամայող և Թագուհի Իբերական, Կարթալինյան և Վրաց Թագավորների և Կաբարդինյան աշխարհի վերա, այլև Չերքասյան և Լեռնաբնակ

պահանջ է եորան Շնորհակալ կլիներնք, եթե մեր Նախիջևանցի բարեկամքը, ծնրադրելով Եորան մարդկերից հարց ու խնդիր առնելով, մի սուղ տեղեկություն հասուցաներին մեզ այս իրողության մասին: Կ. Է.

Царей и Кабардинскія земли Черкасскихъ и Горскихъ Князей и иныхъ Наслѣдная Государыня и Обладательница.

Вѣрнѣйшему Нашему Архимандриту Петру Маркосову и всему обществу Крымскихъ Христіанъ Армянскаго закона всякаго званія всѣмъ вообще и каждому особо *Наше Императорское* милостивое слово.

Благонамѣренное всеобщее предпріятіе ваше да благословитъ десница Вышняго. Мы разсмотрѣвъ посланное къ Намъ отъ васъ изъ Бахчисарая отъ 16 Іюля прошедшаго года, общее и на доброй волѣ основанное прошеніе о избавленіи всѣхъ васъ отъ угрожаемаго ига и бѣдствія, принятіемъ въ вѣчное подданство Всероссійской Имперіи, соизволяемъ Мы не токмо принять всѣхъ васъ подъ Всемилостивѣйшій Нашъ покровъ и яко любезнѣйшихъ чадъ успокоивъ подъ онымъ доставить жизнь толико благоденственную, колико желаніе смертныхъ и безпрестанное Наше о томъ попеченіе простираться могутъ; слѣдуя сему соизволяемъ пользоваться вамъ въ Государствѣ Нашемъ не токмо всѣми тѣми правами и преимуществами, каковыми все подданные Наши отъ Насъ и Предковъ Нашихъ издревлѣ наслаждаются, но сверьхъ того указали Мы:

Первое. При настоящемъ переселеніи вашемъ въ Азовскую Губернію перевесть изъ Крыма на иждивеніи Нашемъ все то имущество ваше, которое только перевезено быть можетъ; что изъ опредѣленной отъ Насъ суммы уже и исполнено.

Второе. Для удобнѣйшаго поселенія вашего отвесть въ Азовской Губ-

Իշխաններէն և այլոց Ժառանգութիւնեամբ Թագուհի և Տիրակալ։

Մեր ամենահարազատ Արքիմանդրիտ Գեորգ Մարկոսեանին և բոլոր Հայազգեաց հաւատակիցներուն Ղրիմի Քրիստոնեաներէն օրինեցն կոչմամբ, ամենեցուն միասին և ամեն մինին առանձին Յոգ հասանի մեր կայսերական ողորմած ողջոյնը։

Ձեր բարեխորհուրդ ընդհանուր ձեռնարկութիւնը Յոգ օրհնեն Բարձրեալ աչք։ Մենք իմանալով ձեզմանից Մեզ ուղարկած ընդհանուր և համարակաւ խնդիրը անցյալ ամսու Հուլիսի 16 թվականից Բաղչիսարայ քաղաքէն, ձեզ վերահաս ասատպանի չծից և իշվառութենից ազատելու մասին, ընդունելով ձեզ համայն ուսուց տերութեան ժշտնչենաւոր հպատակութեան մէջ, բարեհաճում ենք Մենք ո՛չ քիչ միայն ընդունել ձեզ ամենեցյանց Մեր ամենագթած հովանաւորութեան տակ, և որպես ամենասիրելի զաւակներ հանգստացնելով ձեզ նորա ներքո այնպիսի չափով երջանկացնել ձեր կյանքը քիչքան հասանելու էին մարդկանացուներէն ցանկութիւնը և Մեր անքնին հոգատարութիւնը այդ մասին, այլ և քուլլ ենք տալիս ձեզ Մեր քաղաքացութեան մէջ վայելել ո՛չ քիչ միայն բոլոր իրաւունքը և առանձնաշնորհութիւնքը, որ Մեր համարեն հպատակը Մեզանից և Մեր նախնիքից հնուց վայելում են, այլև բացի դրանից հրամայեցինք Մենք.

Առաջին. Ձեր ներկա տեղափոխութեան միջոցին դեպի Ազովյան գաւառը, փոխադրել Ղրիմից մեր ծախքով այն ձեր բոլոր գույքը, որ միայն փոխադրելի էր, որ և Մեզանից սահմանյալ արծաթագլխով արդեն հնարաւոր է կատարուած։

Երկրորդ. Ձեր առաւել հարմարաւոր բնակութեան համար տալ ձեզ Ազովյան

берніи особенную отъ прочихъ селеній округу крѣпости Святаго Димитрія Ростовскаго, какъ границы оной съ Донскимъ войскомъ утверждены, оставляя изъ нея на крѣпостной выгонъ земли три тысячи десятинъ, да для рыбныхъ ловель тамошнимъ обывателямъ четвертую часть рѣки Дона, изъ того, сколько оной рѣки въ дачѣ той округи состоитъ, въ верьхъ отъ устья рѣки Темерника, а въ случаѣ недостатка для селеній ваших тамъ земли, и въ Округѣ крепости Азовской, гдѣ противъ техъ дачь вашихъ рыбныя ловли Всемилостивѣйше жалуемъ вѣчно въ пользу и выгоды всего общества безъ всякихъ въ казну Нашу податей.

Третіе. По раздѣленіи на классы Государственныхъ жителей Всемилостивѣйше увольняемъ всехъ отъ Государственныхъ податей и службъ какого бы званія оные ни были, на десять лѣтъ, а по прошествіи онаго времяни имѣютъ платить въ казну Нашу сежегодно купечество, с капиталовъ съ рубля по одному проценту, цеховые, также и мѣщанство съ двора по два рубли, а уѣздные поселяне, и именно земледельцы, коимъ полагается для каждаго до тридцати десятинъ, будутъ взносить съ каждой десятины въ годъ по пяти копѣекъ; не имущіе же снабдѣны будутъ изъ казны Нашей не только продовольствіем на первой, годъ, но и на посѣвъ земли всякаго званія хлѣбными сѣменами, скотомъ и всѣмъ къ заведенію домоводственному принадлежащимъ, съ возвратомъ за все оное въ казну чрезъ десять лѣтъ, на построеніе имъ домовъ, лѣсъ и прочіе припасы отпустятся изъ казны безденежно; имущественные же на отведенныхъ

գավառի մեջ այն, մյուս բնակութենեներից առանձնացած հոգարաժինը սուրբ Դիմիտրիյ Բոստովսկու ամրոցին, ինչպես դորա սահմանքը գնպի Դոնու գորբի բնակատեղին որոշված են. քողնելով դորանից ամրոցի համար, որպես արոտի դաշտ, երեք հազար դեսյատին հոգալլև ձկնորսութեան համար տեղացի բնակիչներին, բաւորդ մասը Դոն գետի, այն բաժնից, ինչքան որ այն գետի սահմանից ընկնում էր այդ հոգարաժնի մեջ, գնպի վեր Թեմերնիկ գետի բերանից. Բայց եթե ձեր բնակութենեների համար այնտեղ պակաս էր հողը, և Ազովյան ամրոցի սահմանում, ուր ձեր շենքերի հանգիստ կային ձկնորսութեան տեղեր, ամենողորմ գթութեամբ պարգևում ենք մշանգենաւոր ժամանակով բոլոր հասարակութեան օգտի և շահի համար առանց որևիցե հարկատվութեան գնպի Մեր գանձատուներ.

Третіе. По раздѣленіи на классы Государственныхъ жителей Всемилостивѣйше увольняемъ всехъ отъ Государственныхъ податей и службъ какого бы званія оные ни были, на десять лѣтъ, а по прошествіи онаго времяни имѣютъ платить въ казну Нашу сежегодно купечество, с капиталовъ съ рубля по одному проценту, цеховые, также и мѣщанство съ двора по два рубли, а уѣздные поселяне, и именно земледельцы, коимъ полагается для каждаго до тридцати десятинъ, будутъ взносить съ каждой десятины въ годъ по пяти копѣекъ; не имущіе же снабдѣны будутъ изъ казны Нашей не только продовольствіем на первой, годъ, но и на посѣвъ земли всякаго званія хлѣбными сѣменами, скотомъ и всѣмъ къ заведенію домоводственному принадлежащимъ, съ возвратомъ за все оное въ казну чрезъ десять лѣтъ, на построеніе имъ домовъ, лѣсъ и прочіе припасы отпустятся изъ казны безденежно; имущественные же на отведенныхъ

Երեքերդ. Բազավորութեան բնակիչները կարգերի վերա բաժանելուց հետո ամենողորմ գթութեամբ ազատում ենք ամենեքյանդ բոլոր Տնրութենական հարկերից և պաշտոններից, որպիսի և լինեն ձեր կոչումը, տասն տարի ժամանակով. բայց այդ ժամանակի անցանելուց հետո, դուք պարտական եք վճարել Մեր գանձարանին տարուց տարի վաճառականը յուրյանց արժանագրից, ուրյուց մի պրոցենտ, պատկանավորը արվեստավորների ընկերութեանը, որպես և բաղարացիքը. ամենայն անից երկու ուրլի, բայց նահանգական բնակիչը, հատկապես շինականը, որոնց մարզելուս սահմանված է երեսուն դեսյատին հող, վճարելու են ամենայն տարի յուրաքանչյուր դեսյատինի համար հինգ հինգ կոպեկ. բայց չունեորը կստանան Մեր գանձատնից ո՛չ մի միայն պարտաւոր առաջին տարու համար, այլև սերմացանութեան համար, ամենայն տեսակ հացեղեն սերմեր, անասուն և ամենայն բան, որ հարկավոր է տնտեսութեան համար և որ պարտական լինի գործուղանել գանձատանը տասն տարուց հետո. բայց տների շինութեան համար,

имъ земляхъ имеютъ строить домы лавки, анбары, фабрики и все, что сами пожелаютъ, изъ собственнаго своего иждивенія, пользуясь всѣ обще навсегда отъ всякихъ постоевъ свободою, кромѣ тѣхъ случаевъ, когда воинскія команды мимо селеній вашихъ проходить должны; отъ отдачи же на войска рекрутъ увольняетесь вы вѣчно, развѣ кто самъ въ службу Нашу пожелаетъ.

Четвертое. Архимандриту Петру Маркосову по смерть его Всемилостивѣйше препоручаемъ паству всѣхъ сихъ вышедшихъ съ нимъ изъ Крыма Армянъ. и позволяемъ имъ строить церкви и колокольни съ вольнымъ отправленіемъ во онихъ по законамъ ихъ всѣхъ церковныхъ чиноположеній, и состоять Архимандриту и Армянскимъ Священникамъ въ единственной власти Армянскаго Патріарха, находящагося въ Араратскомъ Патріаршемъ монастырѣ.

Пятое. По заселеніи вами особаго города при урочищѣ Полуденки съ названіемъ Нахичевана и съ дачею на выгонъ онаго двѣнадцати тысячь десятинъ, повелѣваемъ учредить Магистрат и въ немъ производить судъ и расправу по ва-

ֆայլս և այլ հարկավորութիւնս կորցրվին զանձարանից առանց վճարի. իսկ ովձորդը կարող են նոցա տրված հոգերի վերա չինել տներ, խանութներ, չամարաններ, գործարաններ և ամենայն բան, որ ցանկալի էր նոցա, յորչաց ժամերով, ամենեքեան առհասարակ ազատ մնալով ամենայն իշխանատուութենից աստիճանավորների համար, բացի այն գիպվածներից, երբ որ գորքերի գումարք անցանելու էին ձեր բնակութիւնների մոտից, իսկ գորք տալուց Տերութեան ազատում ենք ձեզ միշտ ընդհանուր ժամանակով, բացի ով որ ինքը կամք ունեն մտանել Մեր ծառայութեան մեջ։

Четверто. Архимандриту Петру Маркосову по смерть его Всемилостивѣйше препоручаемъ паству всѣхъ сихъ вышедшихъ съ нимъ изъ Крыма Армянъ. и позволяемъ имъ строить церкви и колокольни съ вольнымъ отправленіемъ во онихъ по законамъ ихъ всѣхъ церковныхъ чиноположеній, и состоять Архимандриту и Армянскимъ Священникамъ въ единственной власти Армянскаго Патріарха, находящагося въ Араратскомъ Патріаршемъ монастырѣ.

Զորրորդ. Արքիմանդրիտ Գևորգ Մարկոսյանին մինչև նորա մահը Գերագույն ողորմութեամբ հանձնում ենք Մեր այս բոլոր, Ղրիմից նորա հետ գուրս եկած հայերի հոգևոր հոտը, և թույլ ենք տալիս նոցա եկեղեցիք ու զանգակատուն շինել, ազատութեամբ կատարելով նոցա մեջ յուրյանց օրէնքի պես բոլոր եկեղեցական կարգերը, և Արքիմանդրիտը և Հայոց քահանայքը պիտի ստորագրվին մխայնակ իշխանութեան Հայոց Պատրիարքին, որ գտանվում է Արարատյան Պատրիարքական վանքումը։

Пятое. По заселеніи вами особаго города при урочищѣ Полуденки съ названіемъ Нахичевана и съ дачею на выгонъ онаго двѣнадцати тысячь десятинъ, повелѣваемъ учредить Магистрат и въ немъ производить судъ и расправу по ва-

Հինգերորդ. Երբ որ դուք արդեն բնակութիւններ էիք հաստատել մի ուսանձին քաղաքում Պոլուդենկա տասդյալ ասՀմանի մոտ, նախիջևան անունով և ստացել էիք գորա հետ 12,000 դեսյատին հող, որպես արդեն դաշն, հրամայում ենք ձեզ հաստատել Մագիս-

---

• *Նախիջևանի Մագիստրատը, ստրջ բաղարական գործերում, որպիսիր էին առևտրական, ժառանգական, վարվում է այդ օրինագրքով, որի բովանդակ և պատմական մասները անհամաձայն լինելով Տերութենական օրէնքներին մնացած են առանց ներգործութեան։*

Ներքում ենք մեր գիտնական բարեկամ Գևորգոս Ալայան հետաքրքիրից հարցնել մեզ ուսումնական ժանրաբանութեամբ այդ օրինագրքի մասին, որպես վայել էր նորա նման ուսումնական հայ պարսնի, որովհետև մեր բան տարի հետաքրքիր ենք այդ օրինագիրքը, և այն վայր ի վերս։

Կամս էմմ.

шимъ правамъ и обыкновеніямъ выбираемыми изъ васъ же по жребію начальниками, коимъ и пользоваться чинами и жалованьемъ по штату Азовской Губерніи и быть подъ апелляціею Намѣстническаго Правленія, въ городѣ же и въ деревнях для защиты во всѣхъ нужных случаяхъ опредѣлятся особые начальники изъ Россійскихъ, коимъ въ судопроизводство сихъ поселянъ не мѣшаясь, быть токмо охранителями и ихъ заступать.

Впрочемъ по вступленіи каждаго въ избираемый имъ родъ Государственныхъ жителей позволяемъ пользоваться вѣчно и потомственно всѣмъ тѣмъ, чѣмъ по общимъ Нашимъ узаконеніямъ каждой родъ Государственчыхъ жителей пользуется, какъ-то: свободною торговлею внѣ и внутрь Государства, и для внящшей выгоды оныя позволяется строить изъ собственнаго вашего иждивенія купеческія мореходныя суда, разводить нужныя и полезныя фабрики, заводы и фруктовые сады, по разведеніи которыхъ всякія виноградныя вина въ селеніяхъ вашихъ малыми мѣрами, вывозимыя жъ во внутренніе Россіи города бочками продавать можете. Французскую же водку дѣлать каждому, но не вывозить внутрь Россіи, словомъ: всякаго званія промыслы распространять по собственной волѣ и достатку каждаго и всѣмъ тѣмъ подъ Самодержавнымъ Нашим Скипетромъ и защитою законовъ наслаждаться.

Всѣ сіи преимущества жалуя Мы торжественно и потомственно сему обществу на вѣчныя времена, для внящшей силы своеручно подписали и Государственною Нашею печатью укрѣпить повелѣли. Дана въ Престольном Нашем градѣ Санктпетербургѣ лѣта отъ Рождества Христова

տրատ և այնուհետ դատ ու վէճ կատարել ՚ի ձեր կանոնների և սովորութեան պես վիճակով ընտրված ՚ի ձեզանից մեծաւորներով, որ պիտո է վայելելին արժանաւորութեան և ոչնչ Ազովյան գաւառի սահմանագրութեան վերա, և գտանել Տեղակալական կառավարութեան բողոքարկութեան (ՙի խնդառնութեան) տակ։ Իսկ բազարումը և գյուղերումը պաշտպանութեան համար կարգվելու են առանձին մեծաւորներ Ռուսաց ազգից, որ չխառնվելով այս գործակալների դատաստանական գործողութեանների մէջ, ունեին միայն լինել նոցա պաշտպանքը և հովանավորքը։

Բայց երբ որ այս կամ այն անձը մտած էր յուրյանց ընտրած կարգը քաղաքորութեան մէջ բնակողների, նույն ենք տալիս նորան վայելել մշտնջենաւոր ժամանակով և ժառանգարար այն ամենայն իրավունքը, որ Մեր ընդհանուր կարգադրութիւնների հիման վերա վայելում է ամենայն կարգ քաղաքորութեան մէջ բնակողների, որպես ազատ վաճառականութեան քաղաքորութիւնից դուրս և նորա մէջ, և նորա առավել օգտի համար նույն է որվում կառուցանել ձեր հասուկ ծախքով վաճառական ծովագնաց նաւեր, հիմնարկել հարկաւոր և օգտակար ֆարբրիկայք, գործատներ և պտղաբեր այգիներ, որոնց հասուքանալուց հետո կարող եր ամենայն տեսակ խաղողի գինիք վաճառել փորրիկ չափերով ձեր բնակութեան հաստատած տեղերում, բայց դեպի Ռուսիայի ներքին բաղաքներ դուրս հանելով, կարող էիր տակառներով վաճառել. նույն որված է ամենայն մարդու պատրաստել ֆրանսիական արագ, բայց ոչ դուրս տանել Ռուսիայի ներս, մի խոսքով ամենայն տեսակ վաստակասիրութիւնք տարածել ամեն մեծի կամքի և կարողութեան համեմատ, և այս բոլորը ունիր վայելելու Մեր ընդհանուր գայիսանի և օրենքների հովանավորութեան տակ։

Այս բոլոր առանձնաշնորհութիւնքը տալով Մեք հանդիսաբար և ժառանգաբար բոլոր հաստատակութեանը մշտնջենաւոր ժամանակով, առավել հաստատու-

1779 Ноября 14 дня, Государствованія Нашего осьмаго надесять года.

На подлинной подписано собственною Ея Императорскаго Величества рукою тако:

ЕКАТЕРИНА

Контрасигнировалъ Вице-Канцлеръ Графъ Иванъ

ОСТЕРМАНЪ

Բնագրի վերա նորին Կայսերական Մեծութեան սեպհական ձեռով ստորագրած է այսպես,

«ԵԿԱՏԵՐԻՆԱ»

Հանդերձ նշանագրեց Վիցե-Կանցլեր Կոմս Իվան

ՕՍՏԵՐՄԱՆ.

Այս առանձնաշնորհութիւնքը վերատին հաստատուած են այլ բարձրագոյն հրովարտակներով, որ պատշաճ համարելով արձանագրեցի Հիշատակարանիս մէջ։

УКАЗЪ НАШЕМУ СЕНАТУ

Права и преимущества Нахичеванскому Армянскому обществу, Нашею Любезнѣйшею Родительницею, блаженной памяти, Императрицею *ЕКАТЕРИНОЮ II*, въ 1779 году дарованныя и въ грамотѣ изображенныя Всемилостивѣйше всему Нахичеванскому Армянскому обществу на вѣчныя времена утверждаемъ. Данъ 4 Генваря 1799 года.

На подлинномъ.

ПАВЕЛЪ

ՀՐՈՎԱՐՏԱԿ ՄԵՐ ՍԵՆԱՏԻՆ

Իրաւունքներդ և առանձնաշնորհութիւնդ նախիջեանի Հայոց հասարակութեան, Մեր Ամենասիրելի ծնողի, երանելի հիշատակի Կայսրուհի ՅԿԱՏԵՐԻՆԱ Բ-ի ձեռով, 1779 թուականի տրուածդ և պարգեւաթղթի մէջ նշանակուածդ, Գերագոյն ողորմութեամբ բոլոր նախիջեանի Հայոց հասարակութեան վերա մշտնջենաւոր ժամանակով հաստատում ենք։ Տրուած է, Հունվարի 4-ին 1799 թուականին։

Բնագրի վերա

«ՊԱՒԼՈՍ»։

Божіею поспѣшествующею милостію, Мы, *АЛЕКСАНДРЪ* Первый, Императоръ и Самодержецъ Всероссійскій: Московскій, Кіевскій, Владимірскій, Новгородскій, Царь Казанскій, Царь Астраханскій, Царь Сибирскій, Царь Херсониса-Таврическаго, Государь Псковскій и Великій Князь Смоленскій, Литовскій, Волынскій и Подольскій, Князь Эстляндскій, Лифляндскій, Курлянд-

Աստուծո հաջողեցուցիչ ողորմութեամբ Մենք, Ալեքսանդր Առաջին, Կայսր և Ինքնակալ ամենայն Ռուսաց: Մոսկվայի, Կիևվի, Վլադիմիրու, Նովգորոդի, Արքա Զազանու, Արքա Հաշտարխանու, Արքա Սիբիրիայի, Արքա Խերսոնեսա-Տաւրիկա, Թագաւոր Պսկովի և Մեծ Իշխան Սմոլենսկեան, Լիտվեան, Վոլինեան և Պոդոլեան, Իշխան Էստլանդու, Լիֆլանդու, Կուրլանդու և Սեմիգալիու, Սամոգիտու, Կոր-

ской, и Семигальскій, Самогицкій Корельскій, Тверскій, Югорскій, Пермскій, Вятскій, Болгарскій и иных; Государь и Великій Князь Нова-города Низовскія земли, Черниговскій, Рязанскій, Полоцкій, Ростовскій, Ярославскій, Белозерскій, Удорскій, Обдорскій, Кондійскій, Витебскій, Мстиславскій, и всея Сѣверныя страны Повелитель и Государь Иверскія Карталинскія Грузинскія и Кабардинскія земли; Черкасскихъ и Горскихъ Князей и иных наслѣдный Государь и Обладатель; Наслѣдникъ Норвежскій, Герцогъ Шлезвигъ-Голстинскій, Стормарнскій, Дидмарсенскій и Ольденбургскій и Государь Еверскій, и прочая, и прочая, и прочая.

Новороссійской Губерніи города Нахичевана Армянское общество въ лицѣ Депутатовъ своихъ, Каравета Сагакова и Магардича Назырова принесло Намъ Всеподданнѣйшее прошеніе, о подтвержденіи ихъ правъ и преимуществъ, дарованныхъ въ Бозе почивающими Великими Государями, Предками Нашими, и Мы Всемилостивѣйше снисходя на сіе прошеніе, и въ ознаменованіе всегдашняго благоволенія Нашего, къ непоколебимой вѣрности и усердію Нахичеванскаго Армянскаго общества, всѣ права и преимущества оному присвоенныя и дослѣ безъ отмѣны существующія поколику они сходны съ общими Государственными узаконеніями, признали за благо утвердить и навсегда удостоверить; яко же симъ утверждаемъ, и удостовѣряемъ во всей ихъ силѣ и неприкосновенности; во увѣреніе чего и сію Нашу подтвердительную жалованную грамоту, собственною рукою подписали, и укрепить ее Государственною печатью повелѣли. Дана въ Санктпетербургѣ тысяча восемь сотъ втораго года Декабря двадесять

լիայի, Տվերի, Յուգորի, Պերմի, Վյատսկի, Բոլգարիայի և այլոց, Թագավոր և Մեծ Իշխան Նիզովյան Նովա-Գորոդի, Չերնիգովի, Ռյազանու, Պոլոցկի, Ռոստովի, Յարոսլավլի, Բելոզերսկի, Ուդորսկի, Օբդորսկի, Կոնդիսկի, Վիտեբսկի, Մստիսլավու և բոլոր Հյուսիսային աշխարհի Հրամայող և Թագավոր Իբերական, Կարթալինյան, Վրացի և Կաբարդինյան երկիրներին, Չերքասյան և Լեռնարնակ Իշխանների և այլոց ժառանգությամբ Թագավոր և Տեր Ժառանգ Նորվեգիու, Դուքս Շլեզվիգ-Հոլստինյան, Ստորմանյան, Դիդմարսենյան և Օլդենբուրգյան և Թագավոր Սվերյան, և այլոց, և այլոց, և այլոց:

Նոր Ռուսիահայոց գավառի Նախիջևանի քաղաքի Հայոց հասարակութիւնը յուր Գահագամավոր Կարապետ Սահակյանի և Մկրտիչ Նազիրյանի ձեռքով ամէն Մեզ ամենահպատակագոյն խընդիր, նոցա իրավունքները և առանձնաշնորհութիւնները, պարգևած ի Տեր հանգուցեալ Մեծ Թագավորներէն, Մեր Նախնիներէն ձեռքով հաստատելու համար, և Մեր Գերագույն ողորմութեամբ ընդունելով այդ խնդիրը, և ցույց տալու համար Մեր մշտական բարեհաճութիւնը դեպի Նախիջևանի Հայոց հասարակութեան անհոգդոգդ հավատարմութիւնը և ջերմեռանդութիւնը, որ անպակասված կին այդ հասարակութեան և մինչև այժմ պահպանվում : Ինչ անփոփոխ, որքան ժամանակ դորա համաձայն են Թագավորութեան ընդհանուր օրինագրութիւններէն հետ, բարի ճանաչեցինք հաստատել և մշտնջենավոր ժամանակով հավատարմացնել. որպես և այս Հրովարտակով հաստատում ենք, և հավատարմացնում ենք այդ իրավունքներուն և առանձնաշնորհութիւններուն գորութիւնը և անձեռնամխելի լինելը. որի հավատարմութեան համար Մեր այս վերստին շնորհած պարգևագիրը անպակասի ձեռքով ստորագրեցինք, և ամրացնել նորան Թագավորական կնքով հրամայեցինք: Տրված ի Սանկտպետերբուրգ քաղաքում հազար ութը հարյուր երկու թվականին դեկտեմբերի քսան և մի ևր-

перваго дня, Государствованія Нашего лѣто вторсе.

На подлинной собственною Его Императорскаго Величества рукою подписано тако:

АЛЕКСАНДРЪ.

Государственный Канцлеръ Графъ Александръ

ВОРОНЦОВЪ

րորդ օրում, Մեր Թագավորության երկրորդ տարում։

Բնագրի վերա նորին Կայսերական Մեծության սեպհական ձեռքով ստորագրված է այսպես,

«ԱԼԵՔՍԱՆԴՐ»

Թագավորական Կանցլեր

Կոմս Ալեքսանդր

ՎՈՐՈՆՑՈՎ։

Նախիջևան քաղաքը մինչև այսօր վայելում է այս իրավունքները և առանձնաշնորհությունքը. մինչև այսօր քաղաքական կառավարությունը գտանվում է հայ քաղաքագլխի և հայ դատավորների ձեռքում, որ վիճակով ընտրվում են հասարակության կամեցողությամբ, երեք տարի ժամանակով։ Ոչինչ ավելի լավ կառավարություն չէր պիտո ցանկանալ հայերի համար, եթե այդ ընտրությունքը միշտ հառաջանային ուշ դնելով քաղաքի և հասարակության պիտույքին, եթե մասնավոր և անձնական բաները խափանարկու չլինեին ընդհանուր օգտին։ Նախիջևանը գտանվում է Դոն գետի աջակողմյան ափում, մի բավական բարձր տարի վերա. ափսո՛ս որ քաղաքի շինվածքը չեն սկսանվում խակուզն գետի ափից, դրա հակառակ գետեղրից կես վերստ հանապարհ պիտո է կատարել մինչև քաղաքի սկիզբը։ Պատմում են, թե կամեցած էին սկզբումը գետի ափից սկսանել քաղաքաշինությունը, և որպես թե փորձ արած էին մի քանի մարդիկ բնակություն հաստատելու գետի մոտ, բայց ավազակներից երկյուղը ստիպել էր նորանց հեռանալ այդ տեղից։ Պիտո է կարծել, որ անհիմն է այդ պատճառը, որովհետև քաղաքի կենտրոնը, ուր գտանվում է Ավազ եկեղեցին, և գլխավոր հրապարակը, այլև մյուս եկեղեցիների համարյա թե միաչափ հեռավորությունը կենտրոնից, սորա շուրս կողմով, ցույց են տալիս, որ քաղաքի հիմնարկությունը եղած է առանց ուշադիր լինելու այն օգուտներին, որ հառաջանալու էին գետի մոտավորությենից։ Ինչպես և եղած լիներ այս, միայն քաղաքը բավական գեղեցկաշեն է, տուները եվրոպական ճարտարապետությամբ, մանավանդ որ գտանվում էին քաղաքի կենտրոնում, համարյա՛ թե բոլորը քարից ու աղյուսից շինած։ Եկեղեցիքը, որ վեց հատ են թվով, հոյակապ և ամենևին նոր ճարտարապետության կանոններով, որոնցից Ավազը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով, գտանվում է քաղաքի մեջ տեղը մի մեծ հրապարակի վերա։ Մոտ տեղեր Նախիջևանի շրջակայքում չկան այդպիսի հոյակապ տաճարներ։

Մի ցավալի բան է, որ ոչ մի հոյակապ շինվածք չկա այդ քաղաքի մեջ, որ պատկաներ հասարակության և շինված լիներ մի բարոյական նպատակով, զորօրինակ թեատրոն, մատենադարան, ժողովարան և կլուբ։

Ամենայն շինվածք մեծ թե փոքր, անփականութիւն են մասնավոր մարդերի։ Քաղաքը ունի մի քանի խանութներ հին ժամանակներից շինած, որ վարձու է տալիս և որոնք բոլորովին ծերացած լինելով, այսօր, վաղը հույս ունին հանգստանալ բնութեան գոգումը։ Գետի ափը մինչև նոր ժամանակներս չուներ մի հարմարավոր նավահանգիստ. մի քանի տարի է, որ քանի մի հարուստ մարդիկ շինելով այնտեղ գեղեցիկ ամբարներ և այլ շինվածք, այլև բավական մեծ ծախքով տարի հետնակողմը փորելով և նորա քար ու հողը շինութիւնների առաջևներումը լցնելով բավական խոր մտան գետի մեջ, և այս լցված հող ու քարը ջրի երեսից երկաթեակապ հաստ գերաններով և փայտերով պատելով հառաջացուցին զանազան նավահանգիստ, որ մի գծի վերա լինելով այլև միմյանց մոտ, կազմում են այս րոպեիս մի բավական տարածուն նավահանգիստ։ Սոցանից ամենափառավորը, թե՛ աղյուսակերտ շտեմարաններով և թե՛ այլ հոյակապ շինութեամբ, պատկանում է ժառանգական պատվամեծար քաղաքացի և առաջին կարգի վաճառական Հայրապետյան եղբարց։ Ցավելի է նույնպես գետի սակավաջուր լինելը հուլիս և օգոստոս ամիսների մեջ, կամ երբ երկար ժամանակ փչում էին արևելյան քամիները, որովհետև խափան է լինում մինչև անգամ միջակ նավերի ընթացքին։

Օդը այդ քաղաքի բավական լավ է և բավական մաքուր և շոր. չկան նորա մեջ այն անմաքրութիւնքը, որ երևում են մոտակա քաղաքների մեջ, որպիսի է Ռուստովը։ Ջուրը նույնպես քաղցրահամ և մաքուր, որ հոսում է մի ապատաժից, ոչ շատ հեռի գետի ափից քաղաքի հարավային արևելյան կողմից։

Քաղաքը մերկ է ծառաստանից. ոչ թե միայն չկան հրապարակական ճեմելիք կամ պարտեզք, այլև շատ սակավ կգտանվի այնպիսի տուն, ճեմելիք կամ պարտեզք, որ ունենար յուր բակում։ Թեև բոլոր բնակիչքը մեծ նեղութեամբ մի երկու ծառ ունենար յուր բակում։ Թեև բոլոր բնակիչքը մեծ նեղութեամբ մի երկու ծառ ունենար յուր բակում։ Թեև բոլոր բնակիչքը մեծ նեղութեամբ որ

ոաք է հաստատակ Նախիջևանի մոտ, որի խորհուրդը է զանազան մանրուն պաշարներ պատրաստել Եվրոպա ուղարկելու համար։

Քաղաքի բնակիչքը բոլորը հայք են, բուն հայկական ուղղափառ դավանությամբ, որոնց մեջ գտանվում է միայն մի հատ պապական հայ, որ հանգուցյալ Ներսես կաթողիկոսը 1845 թվականի նոյեմբերի մեջ, կարգել էր առորին եկեղեցական պաշտոնյաների և նորընծա քահանաների վերա վարժապետ, որ բարձր սրբազան Մատթեոս վիճակավոր արքեպիսկոպոսի ձեռքով 1849 թվականին բոլորովին հեռացվեցավ այդ պաշտոնից, որպես զգուշալի մարդ[17]։

Նախիջևանի բնակիչների թիվը, բացի հինգ հայարնակ շրջակա գեղերից, հասանում է մինչև 12.000։ Կյանքը այդ քաղաքի մեջ միօրինակ է և ձանձրալի. կանայք և աղջիկները վարում են մի վնասակար և նսեմոտական կյանք. դոցանից շատը գոհ է լինում բարակացավ ասացյալ տկարությանը։ Զարմանք չէ, Նախիջևանում, ինչպես նաև առհասարակ Ախալցի մեջ, քան մեծի մասին գործածական կերակուրքը են համարնդեն, որ մեծապես դորացնելով զոլոտուխա ասացյալ տկարությունը մանուկ մարդկերի մեջ, ոտքա պատանեկության հասակում, մինչ կերպարանագործվում էին կուրծքի և սնոտական գործարանքը, մինչ արյունը առատությամբ վազում էր մարմնի դնդի այն սահմանքը, որդեն մեծ հաջողությամբ ձևնտու են լինում, որ բարակացավական բլրակներըը բաժանվելին արյունից և նսեմին թորների կազմվածքի վերա։ Բավական հաճախ երևում է այդտեղ պատանի աղջիկների և կին մարդկերի մեջ orիորդական ասացյալ տկարությունը (chlorosis), և դորա հառաջանալու պատճառը ճանաչվում է նոցա նսեմոտական կյանքը, որից պատճառվում է և արյունի անկարգ շրջանառությունը, և սա առիթ է լինում նույնպես բարակացավի երևելուն։ Եվ մի օրիորդ, որ հալումաշ էր լինում, որ դնդնում էր և բավական հաճախ կանաչում, մի՞թե ընկնում է բժշկի ձեռք, որ նայելով տկարությանը մատակարարեր նորան երկաթ և յոդ և այդ կերպով ազատեր ողորմելի աղջիկը ուտող և մաշող ցավից։ Մի այդպիսի աղջկա բժշկություն, ո՛հ ցավում ենք խոստովանել, նախ և հառաջ կայանում է նորանում, որ խաշածև ճեղքում են մի գլուխ սոխ, և յոթը կոտոր ապ դրած ճեղքվածքի մեջ դնում են դիշերը հիվանդի գլխի տակ, իսկ մյուս օրը ստիպելով հիվանդին մի կոտոր շաքար ծամել և երեք անգամ թքել այդ սոխի վերա, փաթաթում են սորան հիվանդի մի զգեստի կոտորով և ձգում են կամ խաչ ճանապարհի, կամ ավեր ջրաղացի, կամ բաղանիքի վերա, և կամ մի ջրի մոտ կամ մի քանի ծառ գտանվածծ ձորի մեջ։ Արդեն մեծ և հառաջադեմ հոգաբարձություն է մի այդպիսի աղջկա մոր կողմից, եթե սա հրավիրում էր մի խաբերա պառավ և թեթև էր թափել տալիս արճճով* հիվանդի վերա, կամ կանչում էր մի խաբերա և շարչարանք մարդ ախտարբ բանալու կամ ուրթաթափերը կարդալու համար։

* Նախիջևան և Ղրիմի թաթարներումը «թեթև թափել» ասում են այն բանին, որ Հայաստանումը անվանվում է «վախ թափել»։ Այս բանի մանրամասն նկարագրու-

Բժշկականությունը շատ տխուր բաներ ունի պատմելու այդ քաղաքի մասին։ Ինչպես ասիացի ազգերի մեջ, նույնպես և Նախիջևանի մեջ, բժշկությունը մինչև այժմ չէ ստացել յուր արժանավոր հարգը և կշիռը ժողովրդի աչքումը։ Մի հիվանդ մարդ շուտով կհոժարի մի խարեբայի, մի պատավի, կամ մի տգետ վարսավիրայի (բերբերի) ձեռքից ընդունել այնպիսի ճարներ, որ մահացնող էին և ամենևին կորստաբեր, քան թե օրինավոր բժշկի հիմնավոր և խելացի առողջարար դեղերը։ Քաղաքի բնակիչների մեծ մասը, իսկ գյուղացիք բոլորովին, հիվանդանալով, հանձնված են միմիայն բնության բժշկարար ներգործությանը. եթե այսպես և լիներ, ճշմարիտ, մահացությունը չէր կարող այնքան շատ զայրանալ, բայց արի տես որ մի տգետ ռամիկ, կամ հիմարությամբ, կամ յուր արծաթասիրության քաղցը լցուցանելու համար, օդուտ քաղելով առաջնի մարդու առավել, քան թե ինքը հիմար լինելուց, մեռուցանում է խղճմտանքը և համարձակվում է ցնծուտ կոշիկներով ոտք կոխել բժշկականության արքայական սահմանի վերա, մի այդպիսի մարդ տալիս է հիվանդին այնպիսի դեղեր և այնպիսի չափերով, որ առողջ մարդը ևս մեծապես վտանգվելու էր, թող թե հիվանդը։

Եվ այդ քաղաքի մեջ, անդից վեր կացող մարդը բժիշկ է. դոցանից ոմանք թուղթ նայող են (գիր բացող, черокнижник), ոմանք կարդալով բժշկող, ոմանք թևքև թափելով բժշկող, ոմանք դեքթըռ խմեցնող, և ոմանք, որ մի բավական պաշտոնական բան է յուրյանց կարծիքով—վարսավիրայք, ունդի անտնդի արյուն թողնելով և տզրուկներ դնելով։ Այդ քաղաքում երկար ժամանակ բժշկագործող բժշկականության վարդապետ Եղոր Իվանովիչ Տկաչով, մեր գիտնական բարեկամը, պատմած է, թե ամենայն մայիս ամսում վարսավիրա Հովհաննեսի խանութի քամակում դասնվածած ահագին փոսը լցվում է մարդու արյունով. այդպիսի փոսեր շատ կան, որ նույնպես դատարկ չէին մնում մարդկային արյունից։ Ճըշմարիտ. մայիսը որ եկավ, արդեն մի հարկավորություն է ճանաչվում մարիտ. մայիսը որ եկավ, արդեն մի հարկավորություն է ճանաչվում արյուն թողուլ։ Հիվանդը թողնում է առողջանալու հուսով, իսկ առողջը գործ է դնում այդ, որպես առողջապահական հնար։ Եվ մի մարդ առողջ թե հիվանդ, որ գնացել էր վարսավիրայի մոտ խորհուրդ հարցանելու, սորա նախկին առաջարկությունն է արյուն թողուլ, որովհետև այդ դիպվածում առանալու էր քան կամ քանևհինգ կոպեկ արծաթ։ Վարսավիրա ասած առանալու էր քան կամ քանևհինգ կոպեկ արծաթ։ Վարսավիրա ասած մարդը, մի տգետ ռամիկ է, անուս և անկիրթ, նա ոչինչ չգիտե, բայց հասարակ ժողովրդի աչքում լինում են վարսավիրայք, ո՛րտեղ է մնում բժիշկը, շատ մեծ հարգ ու արժանավորություն ունին։ Վարսավիրայի փուլթը չէ, թող հիվանդը քարակացավ ունենա, թող միջոցական տենդ (lebris intermittens) ունենա, նա կզարկե նշարակը և այն ժամանակ միայն յուղոտ բամբակը կդնե վիրաբերանի վերա, երբ պղնձի թաս

Թյունը կգտանե ընթերցողը պ. Նալբանդյանցի «ՄԻՆՉԻՆ ԼՈՍՔ, ՄՅՈՒՍԻՍԻՆ ՀԱՐՍՆ» աշխատության մեջ[18]։

Կոմս Էմմ.

մեջ հավաքվել էր մի երկու ֆունտ արյուն, երբ արյունի գույնը սկսել էր սպիտակիլ. նորա հոգը չէ, նա ամենևին տգետ է, որ արյունը առանց դրան ևս ջրացած լինելով, հասարակ տենդը փոխելու էր դեպի ջլային (feb. nervosa)։ Ո՛վ կարող է երաշխավոր լինել, որ մի փորր սուլեմա ևս տալու չէր առավել շուտով բժշկելու համար....

Ասիացիք առհասարակ սովորություն ունին յուրյանց հոգաբարձության վերաբերյալ բանները երկար տարիների մեջ ամենայն դանդաղությամբ դյուխ բերել, իսկ այլ մարդերից պահանջել, որ ամենայն բան կատարվեր իսկույն, որպես մի կախարդական գավազանի զարկվածով։ Եվ սասանիկ արտնեղում են, նիմն մի այդպիսի մարդ մի փորր ուշացնում էր յուր կատարելի գործը, այսինքն ո՛չ թե իրողապես ուշացնում էր, այլ հանգարտությամբ կատարելով յուր գործը, ամենայն ապահովությամբ աշխատում էր հասանել նպատակին։ Նախիջևանցիք սովոր են բժիշկ մարդերից պահանջել այսպիսի շուտափույթ գործողություն. նորա անհաման են նույնպես, որ ամած դեղերը հիվանդի ստողջ մնրձավորների ղպայիքի վերա չունին մի որոշ ազդեցություն. զոր օրինակ հոտ, համ, և այլն, և այլն կամ երբեմն նկատում են, որ մի սև շիշի միջից լցված սպիտակ ջուրը ծիրանագույն ներկում է արծաթի դրգալը կամ հետո սևացնում է ևս. այդպիսի դիպվածում, մանավանդ թե հիվանդը վախճանի, ի՛նչքան ծակ մարդարեություններ են լինում,— «բժիշկը դատապարտելի է, անխղճմտանք է, նորա համար թե մի մարդ մնռած, թե մի հավ սատակած. այդ ի՞նչ դեղ է, մի՛թե կարելի՞ է այդպես կրակի նման սասսիկ դեղ տալ, նիմն արծաթը չէ դիմանում, սևանում է, ողորմած հոգու փորը և աղիքը ի՛նչպես կարող էին շայրվիլ։ Չկամի ամենևին մտածել, որ այդ ողորմած հոգու փորը և աղիքը արծաթ չէին, չկամի՛ փորձել, որ փայտյա դրգալի մեջ տևսանելու չէր այդ գունափոխությունը»։ Իսկ երբեմն, որովհետև դեղերը շատ անգամ արվում են մի, երկու կամ երեք ժամը մի անգամ մի սենյակի դրգալ,— ա՛ինչ պիտո է օգնե — ասում է — հիվանդին այդ աննշան քանակությունը կամ նիմն ամբողջ օրի մեջ նշանակած է մի հատոդեղ (pilula)։ Ասիացու հատկական բնավորություններից մինն է չափազանց լինել ամենայն բանի մեջ, մինչև անգամ և դեղերի մեջ. նա չկամի հասկանալ, թե դեղերի օգտակարությունը և վնասակարությունը մեծ մասնով կախված է չափերից միայն։ Մի դեղի մի երկու գորնեակշիռը փրկարար է մի հիվանդության մեջ, իսկ երեք կամ չորը մահաբեր։ Այսպիսի ասիական և անտեղի պատճառաբանությամբ բամբասում է այդ քաղաքի մեջ մեր պետնական բարեկամ, խոհեմ և մարդասեր բժիշկ Ջրանց Իվանովիչ Գեոռեվիևը։ Ի՛նչ օգուտ, որ չէ ճանաչում ժողովուրդը նորա հարդը, ի՛նչ օգուտ, որ չկիան ժողովուրդը, թե խնայելով պիտո էր նորա բերել կազմվածքի մեջ օտար մարմիններ. չկիան, թե ամենայն դեղ որքան ևս օգտակար լիներ դա մի ակարություն բժշկելու մեջ, այնուամենայնիվ վնասակար էր կազմվածքին ընդհանրապես. չկիան որ մի գորնեակշիռ ավելորդ դեղը խլում է կազմվածքի կյանքի գումարից սորա

տասը ֆունտը։ Եվ ավելի լավ է, ուղիղ ճանապարհով, երկու օր, երկու շաբաթ, կամ երկու ամիս հետո առողջանալ, քան թե վտանգավոր կերպով այդքան հառաջ։ Պիտու էր իմանալ, որ ամենայն ցավի բժշկութեան մեջ, բնութիւնը գործակատար է շատ կերպով, և թե բնութիւնը երբեք չէ կարող ննջարկվիլ որևիցե սոխպանքի։

Նախիջևանի ժողովուրդը երկար ժամանակ Ղրիմում կենակից լինելով թաթարների հետ, վեր է առել նոցա շատ սովորութիւնքը, որ մինչև այսօր ևս պաշտում է որպես բուն ազգային սովորութիւնք։ Բնակիչների զգեստը, որ սկզբումը բոլորովին համաձայն էր թաթարի ձևերին, այժմ ննջարկված է մեծ փոփոխութեան։ Այլ մարդիկ զգեստավորվում են համարյա՛ թե եվրոպական ձևով, բայց կին մարդերի մեջ, մանավանդ պառաւների մեջ, կան դեռևս բավական թաթարի ձևեր։ Ամենագնեցիկը և ամենալավը այդ սովորութիւններից է այն, որ օրիորդքը ծածկում են յուրյանց գլխին բարխատյա կամ աղլաստյա ոսկեղեն կամ արծաթեղեն ժապավենով շրջակարած և նույնպիսի փունջ կախած մի կողմից ֆնս. ափսո՛ս, որ այդ բանը վերջացնում են օր ըստ օրե։ Հոգով չափ ցանկալի էր, որ այդ գեղեցիկ սովորութիւնը այնքան երկար մնար, որքան կարելի էր։

Ժողովրդի կենակցութիւնը թաթարի հետ, որպես և նորա ձևերը ընդունելը մեծ ազդեցութիւն է ունեցել և հայկական լեզվի վերա. Նախիջևանի լեզուն պատկանում է Տաճկաստանի բարբառին, թեև չունի մի քանի բառեր և մասնիկներ, որ գործածութեան մեջ էին Տաճկաստանի մեջ։ Նախիջևանի լեզուն, որպես և ղրիմեցոց լեզուն, ունի յուր մեջ շատ և շատ թուրքի և թաթարի բառեր ու ոճեր, այնպես, որ այդ լեզուքը չիմացողը կդժվարանա հասկանալ նախիջևանցուն, և այդ բառերը գործ են ածվում անխտիր որպես բուն ազգային բառեր։ Նախիջևանի լեզուն — մանավանդ այս վերջին տասն տարու մեջ — ընկել է և այժմ ևս գտանվում է մի նոր ավերանքի տակ. նմին հառաջ հարյուր բառի մեջ երեսունը թուրքի ու թաթարի էր և մնացած յոթանասունը բուն հայկական, այժմ այդ յոթանասունից երեսունը կամ քառասունը փոխանակում են ռուսի բառերով, այնպես, որ ներկա ժամանակումս նախիջևանցին խոսում է ռուսերեն և թաթարերեն, քան թե հայերեն, որովհետև հարյուր բառի մեջ հազիվ մնացել է երեսուն կամ քառասուն հայկական բառ։ Ողբալի և հազիվ մնացել է երեսուն կամ քառասուն հայկական բառ։ Ողբալի և արտասվելի բան, այն երիտասարդ մարդիկը, որ հարակցութիւն ունեին ռուսերի հետ, ամենայն կերպ աշխատում են յուրյանց հայերեն խոսակցութեան մեջ որքան կարելի է շատ գործ ածել ռուսի բառեր։

Նորա մտածում են, թե որքան այլանդակեն յուրյանց լեզուն օտարի բառերով, այնքան ֆեղացի և բան հասկացող էին համարվելու, և այս պատճառով ամբողջ նախադասութիւնք շատ անգամ ռուսի անդնի բառերից, տառնիկ վերջավորութիւններով կամ թաթարի բառեր հայկական յներից, տառնիկ վերջավորութիւններով ծառայում են նախիջևանի ժողովրդին որպես վերջավորութիւններով ծառայում են նախիջևանի ժողովրդին որպես միտք բացահայտելու հնար։ Այդ բարբառը մինչև այն աստիճան այ-

յանդգնված է, որ ոչինչ ապնիվ մտածումիյունք չէ կարելի դորանով բացատրել, որովհետև ժողովրդի կյանքը ամենևին նյութական և ամենևին գործնական չինելով, հետևաբար և նորա բարքառը չունի այն ձևերը, որովհետև չկային այն մտածումիյունքը, որոնց համար հարկավոր լիներ ձև ու ոճ որոնել։ Մի դիրք վեր առնուլ և մտածումիյամբ կարդալ և աշխատել օր ըստ օրե մարդել լեզվաբեռնումիյունը, չլսված բան է նախիջևանցու համար, և մի հասակ խոսող մարդ յուր մարդաբեռնումիյամբը կարող էր ազնաններին համար լինել ծաղրածուիյան առարկա։ Դևևս չգիտեն մտածել, որ մի ազգ բաժանվում է մյուսից յուր լեզվով, և լեզուն է, որ պլեսավորապես պահպանում է ազգումիյունը։

Նախիջևանի կյանքը ոգևորված է առհասարակ ասիական բնավորութիյամբ։ Ընկերական կյանք չէ երևում այդտեղ։ Միմիայն ազգականը գնում է յուր ազգականի տունն։ Դևև ևս այր մարդիկը պատահում են միմյանց փողոցի մեջ, վաճառանոցում կամ դահլիճում. իսկ կանայք պիտո է տեսանեն միմյանց կամ եկեղեցու մեջ և կամ բաղանիքում։ Օրիորդների վերա խոսք ևս չկա, նորա տարին մի անգամ ծաղկազարդի օրը գնում են եկեղեցի. իսկ այլ ժամանակ աստուծո տուն գնալը համարվում է կամ մեղք կամ ամոթ և կամ դոնե ընդդեմ բաների կարգին։

Նախիջևանցիք տարին մի անգամ ապրիլի 23-ին տեսանում են յուրյանց բաղաքի բազմումիյունը Սուրբ Գևորգ եկեղեցու մոտ. այդ օրը, Թաթարի բառով անվանում են Խդրելեզ։ Խդրելեզին, եկեղեցու պարրապի մոտումը շինվում են դանագան խանութիներ և ժողովուրդը ամբողջ երեք օր ման է գալիս այդտեղ։ Շատ երիտասարդք ամբողջ ամիսներ սպասում են, որ խդրելեզը գա, որպեսզի կարողանան հարսն որոնել յուրյանց համար։ Այստեղից ջոկ մնում է մի այլ ևս հազորդակցումիյան տեղ,— այդ Սուրբ Խաչն է։

Սուրբ Խաչի անունով վանքը գտանվում է Նախիջևանից յոթն վերստ դեպի հյուսիս հեռավորութիյամբ, մի բավական բարձր սպառաժյա սարի վերա։ Վանքը հիմնված է հիշատակի արժանի Հովսեփ Արղութիյանց իշխանազն արքեպիսկոպոսի ձեռքով։ Նա հաստատած է այդտեղ երբեմն ուսումնարան և տպարան, որ կառավարվել են բավական երկար ժամանակ մի Թադեոս վարդապետի ձեռքով, որ անուն էր առացել Փիրաքեուրան (գիրք կուլ ուտող)։ Մոտ իրր վաթսուն տարա Հովսեփ արքազանը գաղթեցնելով Բեսարաբիայից, Մոլդավիայից և Վալախիայից բերել է Սուրբ Խաչ վանքը և դրել է այնտեղ դպրոցի մեջ։ Թե ո՞րքան ժամանակ հարատևել է այդ դպրոցը, չկա այդ մասին մի գրավոր հիշատակարան. միայն այսքան հայտնի է, որ աշակերտներից ոչ մինը մի բան ուսած չեն այդ տեղ, որոնցից ամենք քահանայացած են, և Հիշատակարանիս գրողը շատ անգամ խոսած է նոցա հետ։ Այժմ գուցե մի կամ երկու մարդ ծերունիք, մնացած լինին այդ աշակերտներից։ Տպարանը պիտո է մտածել, որ բավական օրինավոր բան եղած լինի, որովհետև մինչև այսօր ևս կան միքանի գրյանք, որ բավական մաքուր դուրս են եկած այդ տպարանից,

որպիսիք են — Յիսուս որդի, Ժամագիրճ, Սաղմոս, Աղօթամատոյց, Ողբ և հատաչաճճ էջմիածնի և որիշք. Բնակտ և Տէլնմաճի անդրանիկ թարգմանութիւնը տպված է շատ անպիտան։

Վանքը ունի շատ պատմական տպրյուր և մի քանի ծառատունկ, որոնց տակ էն վանքների տակ օդ վայելելու համար նստում են նախիջևանից եկավորքը։

Վանքի համեմատաբար մեծ տարեկան օրը է վարդավառի կյուրակեն և երկուշաբթին. հարյուրավոր գերդաստան գնում են քաղաքից և գեղերից, ոմանք վանքի պարսպի մեջ, ոմանք պարտեզումը նստում են յուրյանց շինած կտավներն տաղավարների տակ։ Վանքը, ինչպես ասացինք, գտանվում է սարի վերա, իսկ պարտեզը այդ սարի ոտքում մի տափարակ տեղի վերա, որ բաժանվում է սարից վանքի աղբյուրի առատ վտակով։ Վանքից մինչև ջրի ափը շինած է մի քարյա սանդուղք, որի վերա վարդավառի առնին երևում են այր և կին մարդերի, զանազան հասակի բազմութիւն, յուրյանց խայտաբղետ զգեստներով, ասիական գնացքով և օտարաճաոս ձայներով։ Բացի վարդավառից, ամառները, ամենայն կյուրակե, պատահում են այդպես տասն, քսան գերդաստան, որ գնում են, ծառերի տակին կանաչ արտի վերա ինչ խմելու կամ խորոված ուտելու համար։ Վանքի սարից որ ցած ես գնում դեպի աջ, վանքից կես վերստ հեռավորութիւնով, կամ ավելի ես պակաս հանդիպում ես մի փոքրիկ աղբյուրի, որ ժողովրդից անվանվում է Սաղլըգ սու[19] (առողջարար ջուր), այդ ջրով լվացվում են ամենայն ջերմնախտ ունեցող մարդ և յուրյանց այդ ջրով լվացվում են ամենայն ջերմնախտ ունեցող մարդ և յուրյանց հանդերձներն կոտորից մի քան կապելով մոտակա ծառերի ճյուղերին հավատում են, բժշկվում էին։ Աղբյուրը ստացել է առողջարար անունը այն պատճառով, որ տեսած էին նորա վերա լույս իջանելը. շատ կարելի բան։

Աղբյուրը գտանվում է վտակի մոտ, ամենևին ճախճխի մեջ, ուր բուսանում է եղեգն և ապրում են զանազան զեռուններ և սողուններ. այս շրջակա ճահճավորների մեռած մարմինների քիմիական վերլուծութիւնը, այլև ճախճխը ինքն ըստ ինքյան կարող է պատճառել այն լույսը, որ հայտնի է անուն նրա նախնյաին գազ, կամ գետեզմանական մոլաճուռ, որ շատ անգամ նույն եղանակին, երբ քամին չէր ցրվում այն գազը, որ բաժանվելով մեռած մարմնից նստում էր գերեզմանի հողաբլուրի վերա։

Այն մարդուն կամ այն ժողովրդին, որին անհատկանալի են բնութիւյան օրենքները, առցա բնական և աստվածագիր պաշտոնակատարութիւյունքը անտարակույս պիտո է հրաշք թվին։

Նախիջևանի բնակիչքը մեծ մասնով վաճառականք են. արհեստասիրութիւյունը շատ փոքր հանդես ունի այդ քաղաքի մեջ. պատճառ, երբ կար ևս մի որևիցե արհեստ, և այն ասիական և անընդունելի մերձակա քաղաքների բնակիչներին, որ օտարազգի են և որ գնողք պիտի լինեին այդ արհեստավորների աշխատութիւններին։ Մշակութիւյունը, չքավոր մարդերի համար բավական օգտակար բան դարձավ վերջին ժամանակներում, երբ

գետի ափում ամբարներ ու նավահանգիստ շինվեցան, որովհետև մշակների ձեռքով լցվում էին ցորյան, ունդեղենք այն նավերի մեջ, որ մոտենում էին Նախիջևանին։ Այս ևս հարկավոր է առանց հիշատակության չթողուլ, որ օրական մշակությունը երևում է միայն այլ մարդերի մեջ. իսկ աղքատ կանայք, առավել լավ կհամարեն մուրացկանությամբ ապրել, քան թե ծառայել մի մարդու տան մեջ որպես աղախին, և այս է պատճառը, որ Նախիջևանի մեջ ամենայն տեսակ ծառայություններ կատարվում են ռուս ծառաների և աղախինների ձեռքով։ Ի՛նչպես կարելի է, որ հայ կինը, թեև հաց չուներ ուտելու, գնա և յուր երեսի ջրով ծառայե մի մարդու մոտ. առավածն նորան երեք ավուր մահ տա, այդ բանը չտա։

Վաճառականությունը Նախիջևանի մեջ, որպես և ամենայն տեղ հայերի մեջ, չունի եվրոպական բնավորություն։ Ամենայն մարդ յուր համար առանձին, մինչև անգամ միևնույն գերդաստանների անդամք աշխատում են առանձին կերպով վարել յուրյանց առուտուրքը, և առանձնապես վայելել յուրյանց հարստությունը։ Չկան այդտեղ վաճառական ընկերություններ, մանավանդ հացեղեն ապրանքի, որով պարապողքը մեծ մասնով երևելի արծաթագլխի տեր են։ Այդ վաճառականներից ոչ մինը չունի եվրոպայում յուր համար մի գործակալ, և այդ պատճառով ապրանքի դինը Նախիջևանի մեջ բարձրանում է և ցածրանում է նայելով եվրոպական վաճառական ընկերություններին և հաշվատներին, որ գտանվում են Նախիջևանից կես ժամ հեռավորությամբ Ռոստով քաղաքի մեջ։ Պիտո է ասել, որ Նախիջևանը, յուր աշխարհագրական դրությամբ, արևմտյան եվրոպայի և հացարեր Ռուսիայի մեջ, կենտրոնական տեղերից մինն է. և այդ քաղաքի ամբարներից կշտանում են շատ եվրոպական նավեր։ Եթե այդքան մեծագումար հացեղենքը անմիջապես ուղարկվելին եվրոպա, եթե մեր սիրելի ազգակիցքը Նախիջևանի մեջ, հաշվատուն կամ գործակալ մարդ պահելին գո՛նե միմիայն Ծրանոխայի Մարսելլ քաղաքի մեջ, այն ժամանակ նոցա շահաստացությունը կրկնապատկվելու էր անշուշտ։ Եվ միմիայն հացը չէր, որ գնում էր եվրոպա, այլև երկաթ, յուղ և կաշի, որոնց առ ու տուրքին ծանոթ են նախիջևանցիքը։

Մի մարդ չէ կարող այս բաները առնել, բայց եթե հինգ տասն երեվելի հարուստք միանային և միարան ուժով սկսեին գործ կատարել, այն ժամանակ նոցա հաշվատունքը Նախիջևանի և Մարսելլի մեջ, առանց ամենայն տարակուսի, ոչ թե միայն պակաս լինելու չէին եվրոպական հաշվատներից, այլ մի փոքր ավելի ևս, որովհետև եվրոպական ընկերությունքը երկրորդ և երրորդ ձեռքից առանում էին ապրանքը, մինչդեռ հայը անմիջական միջնորդ էր լինելու ռուսաց երկրագործի և եվրոպայի մեջ։ Եթե եվրոպացին, երրորդ ձեռքից առանալով մի ապրանք, որից արդեն քանի մարդիկ շահվել էին, ուրեմն հետևաբար և թանգացած էր ապրանքը, եթե սորան վաճառում է նա եվրոպայի մեջ և գործակալ միլիոններ է վաստակում կարճ ժամանակի մեջ, ի՛նչ պատճառով դորա անմիջական վաճառատունը չէ շահվելու կրկին անգամ ավելի։

Երկրագործություն ասացյալը, ամենևին եվրոպական կերպով, որ ավելի ճիշդ խոսելով, պիտու էր ոսկու հանք անվաննել, անտես է արած բոլորովին այդ քաղաքի մեջ։ Երկրագործության զանազան ճյուղերը, որպիսի են մեղվաղարմանություն (пчеловодство) և շերամաղարմանություն (шелководство) նույնպես բարձի թողի են արած։ Ի՛նչ գնդեցիկ և պաղաբեր դաշտեր կան Նախիջևանի շրջակայքում, ուր կարելի էր միլիոնավոր փեթակներ պահել, ո՛րքան պարապ և ամայի թողած դաշտեր, որոնց վերա շատ փոքր արծաթով կարելի էր թուխի անտառներ գոյացնել շերամաղարմանության համար, բայց ոչ ով սիրտ չունի մոտենալ բնության և փորելով նորա արգանդը հանել և ստանալ նորա անապառելի գանձատնից ոսկին և արծաթը։ Ըրանի՛ էր, երեն գո՛նե արվեստներ ծաղկեցուցած լիներին բնութենից հեռանալով, բայց և այդ չկա մեջ տեղում։ Նախիջևանի մեջ չկա ո՛չ մի բանի գործարան, բացի աղյուս և կղմինդր շինելու ախոռներից և փոսերից, բացի կիր շինելու հնոցներից, որոնք, անհրաժեշտ բաներ լինելով շինվածքի համար երևում են հարկավորապար հառաջացուցած։

Զարմանալի՛ բան. Մոսկվայի և Պետերբուրգի կամ այլ քաղաքների մեջ, Ռուսիայում, տավարի կամ ոչխարի ճարպը, մշակները, ապրուստը, բնակության վարձը, մի խոսքով ամենայն բան թանկ է քան թե Նախիջևանի մեջ. բայց այդ քաղաքներում պատրաստում են ստեարինյան հրագներ և ուղարկելով, չասեմ ուրիշ տեղեր, այլ միայն հարավային և Փոքր Ռուսիա, շինում են միլիոններ. ինքը Նախիջևանցին գնում է այդ հրագը Նախիջևանի մեջ վճարելով յուրաքանչյուր ֆունտի համար 28, 29 կամ 30 կոպ. արծաթ։ Բայց չկան մարդիկ, որ ընկերություն կազմելով բանային մի օրինավոր գործարան այդ բանի համար։ Ամենայն ինչ ձեռնհասու էր դյուրագին պատրաստությանը, և երեն ընկերությունը ամեն մի ֆունտը քանահինգ կոպեկով կա արծակեր, այնուամենայնիվ ստանալու էր մեծ օգուտ. մանավանդ գրավելով բոլոր հարավային Ռուսիայի մեջ այդ հրագի վաճառականությունը ավելի դյուրագին վաճառելով, և ավելի մոտ լինելով այդ սահմանին։

Ի՛նչ է պատճառը, որ չկա այս բաներից ոչ մինը, ի՛նչ է պատճառը, որ ժողովուրդը միմյանցից քաժանված, փեռեկոված չկամի ամենևին ունենալ մի որևիցե ընկերություն. ինչո՛ւ այդպես հալածված է այդ քաղաքից ընկերակցության հոգին, ինչո՛ւ նորա բնակիչներից շատերը պարապում են մի մենքենական վաճառականությամբ, որի հիմքը էր փոխառություն և փոխատվություն։ Հարստությո՛ւն չկա այդ քաղաքի մեջ,— ո՛չ. որովհետև Նախիջևանի ժողովուրդը համեմատելով Ռուսիայի եղնարական քաղաքացիների հետ, միջին ձևով, շատ վեր է և ճոխ յուր հարբուսությամբ։ Գլխավոր պատճառը քաղաքի հետ մնալուն է ժողովրդի անդաստիարակությունը և անկրթությունը, որոնից հառաջանում է անմիաբանությունը և այն պատերազմը, որ լույսը և ճշմարտությունը պիտու է ունեննային խավարի և ստության հետ։

Փառք աստուծո, Նախիջևանը ունի այսօր ևս ոչ շատ, գոնե մի քանի ընտիր որդիք, որ վազուց ահա ազատված լինելով ասիական պղտոր տեսութիւններից, և ամենայն կերպով ամենայն ջանք գործ դնելով քաղաքի և հասարակութեան օգտի համար, աշխատում էին մի փոքր բան հասկացնել այն, մինչև այժմ ասիական հոգու վայրենի և բարբարոս ազդեցութեան տակ մնացած պարոններին, որոնց անձնասիրութիւնը, շահասիրութիւնը, փառասիրութիւնը և խավարասիրութիւնը մեծ էր, քան թե նոցա հայութիւնը և ազգասիրութիւնը: Պարզ երևում է ահա սորանից, որ Նախիջևանի այդ ընտիր որդիքը պիտի մի բարոյական պատերազմ կատարեին խավարի, տգիտութեան, աստուածային և բարբարոսական կամակորութեան հետ: Հայտնի է և այն, որ աստուածքունը, ինչպես եղած է միշտ և կա այժմուս աշխարհի երեսին, պիտու է շատ հետևողներ ունենար, քան թե կարող էր ճշմարտութիւնը գտանել, որովհետև աստուածքունը, խարեբայութիւնը արծաթի ունի, նա կաշառքը ձեռքին նստած է պատրաստ, նա կարող է դորանով հաճոյանալ մարդկերին և մի անցավոր և ունայն փառ հարել, իսկ ճշմարտութիւնը չունի այդ նյութական նախամեծարութիւնները, նա մի վերին և գերամեծար առաքինութիւն է, նորա հանապարհը նեղ է և միշտ, նորա դրոշակը կրողի վերա արձակում են մանավանդ աստուածային խավարասեր գինվորքը յուրյանց նետերը և քարերը:

Մի անպատմելի ուրախութիւն է գալիս իմ վերա տեսանելով, որ ճշմարտութիւնը ու ազգասիրութիւնը և Նախիջևանի մեջ ունին յուրյանց նահատակները, և այսուհետև աստուածքունը և ազգատեցութիւնը հաղթվելու վերա են, և այս տեղ պիտու է խորտակվի խավարի ամբարտավանութեան եղջյուրը: Փուշի չէ՛, որ այս բոպերս վատամարդիկ են դարձած այդ նահատակները խաժամուժ ամբոխի աչքում. փուշի չէ՛, որ մի տեսարանական խաբեութեամբ (оптическим обманом) մի քանի կարճատես մարդիկ կարծում էին տեսանել հաղթութեան պսակը խավարի ճակատի վերա. այդ երևակայական խաբեութիւնքը (иллюзии) կցրվին և կփարատվին, և այդ կարծեցած հաղթութեան պսակը խավարի ճակատի վերա, կդառնա հավիտենական խայտառակութեան և արհամարհանքի դրոշմը (клеймо):

Թո՛ղ աստուածքունը հազարներով գնե յուր կարծիքական և սուտ պարծանքը. ճշմարտութիւնը կնա կոպնկի դրշով և կնա կոպնկի թանաքով կգիծուռ ապագայի դատաստարութեան և արհամարհանքին նորա եղկելի և թշվառ հիշատակը: Դորա հակառակ ճշմարտութեան գինվորների և նոցա առաջնորդի անունները, վառվռուն աստղերի նման փայլելու են միշտնջենավոր ժամանակով, գալոց հայկական սերունդի աչքի առաջև, նորա ժամանակակից պատմութեան հորիզոնի վերա:

Չկա մարդկութեան պատմութեան մեջ ժամանակ, որ ճշմարտութեան պաշտոնյայքը հանդիպած չլինեին բազմագլխի տհաճութիւնների և անախորժութիւնների. այս հիման վերա, չէ պիտու ամենևին զարմանալ, որ մինուկն բանը կրկնվում է և այսօր. բայց այն մարդը, որ անվանում

էր յուրյան քրիստոնյա, պարտական է հետևել Քրիստոսի ճշմարտությանը, և նա՛ է մարդը, որ արհամարհելով ամենայն ունայնություն, կարիճի պես կանցանե այն նեղ և փշոտ ճանապարհից, դիմելու համար դեպի ճշմարտության կենդանարար աղբյուրը — Հիսուսի Քրիստոսի գոգը։

Աշխարհի երևելին, ճշմարտության պաշտոնյան միշտ հանդիպել է և հանդիպում է գանազան անախորժ և վշտացուցիչ բանների, բայց մանավանդ ողբալի է մի այդպիսի պաշտոնեի վիճակը մեր ազգի մեջ։ Մեր սիրելի հայերը, որպես նաև ամենայնիք այն խոսքը ընդունում են, որ դուրս էր գալիս բարեկամի կամ համախոհի բերանից։ Մի հայ, որ չէր սիրում ինձ,— իմ անձնավորությունը,— չկամի ընդունել և իմ բերանով քարոզված ճշմարտությունը առանց մտածելու, թե ես, և իմ քարոզած ճշմարտությունը ջոկ ջոկ բաներ են, թե ճշմարտություն ասացյալը սեփականություն չէ Մարկոսի, Կիրակոսի, այլ աստուծո, որին մասնակից կարող ենք լինել Հիսուսի Քրիստոսի ձեռքով։ Այս շատ սխալ բան է, աստուծո ճշմարտությունը հայտնվում է իմ թշնամիների ձեռքով, որովհետև իմ բերանով քարոզվել էր նա։ Ահա այն մեծախորհուրդ, և որքան մեծախորհուրդ, նույնքան չարախորհուրդ պատճառը մի ազգի, մի քաղաքի, որպես և Նախիջևանի հետ մնալու։— Այս բանը քանդել է մեր ազգի տունը, դա այն մորիկն է, որ ցրվել է հայոց ազգը աշխարհի չորս կողմը։ Այս սխալը մի անբարոյականություն է, և բնական հետևանք անդաստիարակության և անկրթության։ Եթե ունեցած էր Նախիջևանը մի ազգային, կամ եվրոպական բազմակողմանի ուսումնարան, որի խորհուրդը եղած լիներ պատրաստել կրթյալ և խելացի քաղաքացիք, գիտուն և լուսավոր վաճառականք, բանագետ երկրագործք, հմուտ բնագետք և այլն և այլն, այն ժամանակ ա՛յլ կլիներ ճշմարտության և նորա պաշտոնյանների վիճակը Նախիջևանի մեջ։ Միայն մի այդպիսի ուսումնարան է, որ կարող էր հաշտեցնել երկու հակառակող բաժինները, ճշմարտությունն քարոզելով նոցա, որ նվիրելով յուրյանց անձը աստուծյան և խավարի սպասավորությանը, քարաձիգ և նետաձիգ էին լինում դեպի մյուս բաժինը, որի պրոշակի վերա լուսեղեն տառերով գրած էր — «Ճշմարտություն»։

Այդ ուսումնարանի չլինելն է պատճառը, որ Նախիջևանի մեջ (ինչպես նաև ուրիշ տեղերում հայերի մեջ) մի զավակ, թող լինի նա ամենահարուստի որդի, աճում է և զարգանում է առանց ամենայն դաստիարակության և կրթության, աշխարհի լուսավորություններից միանգամայն օտար։ Մի այդպիսի զավակի բուսական և կենդանական կյանքերը կերպարանվում են, իսկ ոգեղավորը՝ բանական կյանքը, որով միայն սիրտ նապրծվում են, զանազանվեր նա բուսականներից և շնչականներից, մնում է անկերպարան խավարի բարեկենյան գերության մեջ, յուր ծնողքի հավիտենական դաստիարակության համար։ Այնտեղ, ուր չկա լուսավորության մի աղբյուր, ուր չկա տղաների և աղջիկների դաստիարակություն, ուր նյութապաշտությունը և ժանգը հաղթահարել են անմահականը, ուր չէ բանականը և ժանգը հաղթահարել են անմահականը, ուր չէ բա-

բոզվում ուսումնարանի ամբիոնից սեր, ընկերասիրություն, աղգասիրություն, մարդասիրություն, առաքինություն, աշխատասիրություն, արիություն և այլն և այլն, ի՛նչպես կարող են հառաջանալ այն բարի բարի բաները, որոնց չլինելու վերա մորմոքվելով հառաջ եմ տանում իմ տխուր Հիշատակարանը, և որոնց միայնակ ծնողը ճանաչվում էր բարեկարգ, և ճշմարտությամբ ոգևորյալ մի ուսումնարան։

Քանի որ այդ քաղաքի պատվելի և մեր սիրական հասարակությունը շինելու չէ մի հոյակապ բան ազգային դպրոց եվրոպական կարգերով, անմիջապես ինքը հասարակությունը լինելով տեր և հոգաբարձու այդ աշխարհական դպրոցին, առանց մեջ բերելու հոգևոր մարդերի գործակցությունը, քանի որ կանգնեցնելու չէ մի այդպիսի աշտանակ լուսավորության, քանի որ դոցա երեխայքը, յորոյանց անուններ հազիվ հազ դրել ուսանելով, պիտի գան ու գնան աշխարհից, քանի որ եվրոպական մեծավայել հոգևոր սեղանը պատրաստ դրած ու հայոց գավակը, հոգևոր սովից և քաղցից միանգամայն կիսամեռ ընկած, յուր խավար շրջակայքից պիտի նայի այդ լուսավոր և առատ սեղանին, առանց վայելելու նորան, Նախիջևանի դրությունը կմնա այնպես, ինչպես որ կաւ բայց եթե ճիշտ խոսանք, այդպես ևս չէ կարող մնալ, որովհետև բնությունը դադար չունի, նա գտանվում է անդադար շարժողության մեջ, որ է նորա կյանքը. աշխարհի երեսին երկու բան կա,— այո՛, կամ ոչ.— հառաջ, կամ հետ.— լինել կամ չլինել։ Այս հիմքերի վերա հարկավորապես պիտո է մտածել, որ եթե Նախիջևանը հոգևորապես չլինի հառաջ գնալու համար, ուրեմն անտարակույս պիտի հետ գնա, և պիտի չքանան այնուհետև մեր բարի բարի հույսերը, որ ունեինք այդ քաղաքից։

Իհարկե լսելու եմ այն սովորական պատասխանը, թե մի այդպիսի ուսումնարան մշանջենավորապես պահպանելու համար, հարկավոր է մեծ արծաթագլուխ, թե քաղաքի գանձարանը չունի այնքան արծաթ, որ կարողանար դիմանալ այդ ծախքին։ Գիտեմ, և ընդունում եմ, այդ ճշմարիտ է. բայց դորա ընդդեմ կա և ասելիք։ Եթե կամենա քաղաքը, եթե հոժարի ճանաչել ճշմարտությունը, և հետ դնելով ամենայն կույր կամակորություն սրբե յուր վերայից անմիաբանության և գժտության արատը, եթե նույն ճանապարհով ընթանա, որով գնում են նորա ընտիր որդիքը, ճշմարտության և ազգասիրության քաջ նահատակները, այն ժամանակ կգոյանա և այդ արծաթագլուխը։

Քաղաքը յոթանասուն և հինգ տարի է, որ կա, դիցուք առաջին քսան և հինգ տարումը գժվար էր, բայց գոնե այս դարու սկզբից, եթե հոգաբարձություն արած լիներին մի արծաթագլուխ գոյացնելու համար, արդյոք, հիսուն տարու մեջ, մի բան հառաջացած կլինե՞ր թե ո՛չ։ Բայց այսպիսի հոգաբարձությունք ևս բոլորովին անտես արած եմ տեսանում. և ո՛չ միայն այսչափ, այլև մինչև այսօր դեռ ևս հոգաբարձու չեն, Նախիջևանի լինելոց ուսումնարանի անունով, Հնդկաստանի մեջ թողած արծաթը ձեռք բերելու մասին, թեև հրատարակություն ևս եղավ դորա հա-

մար կալիֆայի Ազգասեր օրագրի միջնորդությամբ[20]։ Ապա այս իրողությունը ի՞նչպես պիտո է համաձայնեցնել այն պատասխանի հետ, թե ուսումնարանի չլինելը հետևանք էր արծաթագլխի չլինելուն։

Առողջ բանականությունը թույլ չէ տալիս ընդունել Նախիջևանի այն գանգատը, թե չունի արծաթագլուխ, քաղաքի և ազգի այս և այն օգտակար գործը հաստաջացնելու համար, որովհետև եղածների մասին անհոգ մնալով կորուսանում է յուր ձեռքից. նա մինչև այժմ չգիտե յուր ոչ հարստությունը և ո՛չ աղքատությունը, ոչ արդյունքը և ո՛չ ծախքը, որովհետև չկա միասյան գործակցություն մի ազգային բանի մեջ. ամենայն մարդ համարում է յուրյան մասնավոր,— նա ասում է,— իմ ի՞նչ գործն է, ինչ ինչ կամին առնեն. առանց մտածելու թե — ո՛վ են այդ կամեցողքը և առնողքը, ո՞չ ապաքեն յուր նման անդամք հասարակության։ Ահա այս կերպով, հասարակությունը կորուսանելով յուր ամբողջությունը, նորա միասյան ուժը բաժանվում է նախ և հառաջ երկու կամ երեք մեծ հատված. հետո, այդ հատվածի պատկանողքը ևս յուրյանց մասնավորի տեղ դնելով, թողնում են քաղաքի և հասարակության օգուտը երեսի վերա։ Ամենայն անդամ հասարակության յուր տեղումը ունի յուր ձայնը և իրավունքը. արտոնություններ և առանձնաշնորհություններ չեն տրված միմիայն մարկոսին, կիրակոսին, որ ուրիշները չկարողանային մասնակից լինել. նախ-չևանի ամեն մի անդամը հավասարաչափ վայելում է այդ իրավունքները և արտոնությունքը և իրավունք ունի բողոքելու, եթե մի քանի մարդիկ հարստահարելով նորան կամեին ինքյանց միայն սեփականել նորանց։ Ազգի և հասարակության գործի մեջ, նորա անդամքը մասնավոր մարդիկ չեն, եթե դոցա մասնավորք են, եթե դոցա չէ վերաբերում այդ գործը, ազգի և հասարակության անունով, ուրեմն ո՞վ է հասարակությունը, ո՞վ ազգը։ Դորա հակառակ ամեն մի բարոյական մարդու վերա պարտականություն կա, ազգային գործի անունը լսածի պես խնդություն մեջ մտնել և յուր կարողության և զորության չափ օգնական լինել այդ գործի հառաջադիմության, խոսքով և գործով, ամենևին այն սրտով և այն ջերմեռանդությամբ, ինչպես կընթանար այն դիպվածում, եթե այդ գործը վերաբերվեր մասնավորապես յուրյան։ Բայց եթե ճշմարիտը պիտո է խոստովանել, ուրեմն հասարակության և ընդհանուր բարու համար ավելի հարկավոր է քրտնել և աշխատել, քան թե յուր սեփականի, որովհետև մի անհիմն բան է մասնավորի երջանկությունը առանց ընդհանուրի և հասարակաց բարօրության։

Նախիջևանը, մեր սիրելի Նախիջևանը, ամենայն կարեկցության արժանի Նախիջևանը տեսանելով այս րոպեիս յուր վիճակը, գո՛նե պիտի բարվոքեր ներկան գալոց ժամանակները ապահովելու համար. գո՛նե այժմ պիտո է հոգաբարձու լիներ մի արծաթագլուխ կանաչացնելու համար, մի լինելոց ուսումնարանի մասին, եթե ոչ այժմ, գոնե ապագայում. և մի՞թե չէ կարելի սկսանել այժմ մի հիմնավոր հոգաբարձություն այդ բանի համար։ Ինչո՞ւ պիտի հրաժարվին երևելի հարուստները հիմ-

սուն մանկի, միշտ հարուստները բանտնհինգ մանկի, իսկ հասարակ ժողովուրդը տասներկու մանկի ամենայն տարի աղգային գանձանակը ձգելուց: Տարակույս չկա, որ հարուստ մարդը հարյուր արծաթի կամ կիսամաձայնի ձգել. և դյուղացիք անդամ կարող են մասնակից լինել դրան: Մի՞թե քաղաքը չէ կարող դոյացնել յուր լինելուց ուսումնարանի անունով արդյունքի աղբյուրներ, մի՞թե յուր անշարժ կալքերից և բան հազար դնալատին հողի արդյունքից չէ կարող հինդ հազար մանկի հնար ձգել տարին ուսումնարանի անունով, եթե այդ կալքերի և հողերի կառավարությունը անօրինվեր հասարակության կամքով և դիտությամբ, այլև նորա օգտի համար: Մի՞թե մի խմաստուն և ազգասեր քաղաքագլուխ խորհուրդ կատարելով քաղաքի դլխավորների և ամբողջ հասարակության հետ սահմանե այս կարդերը, ժողովուրդը պիտու է ընդդեմ դառնա: Ի՞նչ է ժողովրդի բնաը ազգի և հասարակության համար, որի ծանրության տակ հարատահարված լինելով, չկարողանար այս քաղցր լուծը հանձն առնուլ: Ի՞նչ է պատճառը, որ Կոստանդնուպոլսի մեջ, և այն մարդիկը, որ վանա կողմերից եկած էին բնակություն անելու համար, յուրաքանչյուրը այդ պանդխտական և մշակ մարդերից վճարում է ազգային դպրոցների, հիվանդանոցի, աղքատանոցի, անկելանոցի օգտի և պահպանության համար տարին հինդ տասն մանկի, չնայելով, որ մյուս կողմից նաստի-Հյումայունի դուռ գալուց հետո, Տաճկաստանի լուծը ծանրացած էր նորա քրիստոնյա հպատակների վերա: Մի՞թե նախիջևանցու սրտից այնքան ջնել է աստուծո երկյուղը և ահը, ազգասիրությունը և վերջապես գավակասիրությունը (որ ամենայն անասունք ևս ունին), որ յուր քաղաքի մեջ նստած, վայելելով ամենայն ազատություն ամենայն նեղություններից, վայելելով, փառք աստուծո, ուսաց մարդասեր և օգոստափառ կայսրների շնորհքը, չէ պիտու հոժարի յուր գավակների կրթության և ապագա բարօրության համար, տարեկան մի բան վճարել ազգային գանձարանին ուսումնարանի անունով: Ոչ ոք այդպես վատ կարծիք չունի Նախիջևանի մասին, մանավանդ տեսանելով որ լուսավորության սերը օր ըստ օրե արմատ արձակելու վերա է, թեև սակավ մարդերի մեջ: Ի՞նչ պիտու է առնել. պիտու է հուսալ, որ այդ սակավքը շատանան, միայն հարկավոր էր խոսքն սկսանել մի բարի գործի հիմնարկության, շինել մի առարկա, որ մոտ լիներ ժողովրդի հոգուն և սրտին, այնուհետև ամենայն կարող մարդ գանագան դիպվածներում չէր խնայելու յուր օգնությունը: Այն արծաթը, որ մի հայ մարդ պիտի ներա բերեր ազգային գանձարանը ուսումնարանի անունով, կորած չէր. նա տալիս է այդ գումարը յուր գավակին և նորա ժառանգներին մշտնջենավոր ժամանակով, դրանով ապահովում էր նա յուր գավակի կրթությունը և լուսավորությունը, ապա ուրեմն և նորա երջանկությունը աշխարհի երեսին:

Բայց.... ափսո՛ս և հազար ափսոս, որ այս ասածներս մնալու են Հիշատակարանիս մեջ, առանց մասնակցություն գտանելու ընդհանուրի սրտի մեջ. ափսո՛ս, որ սրտիս ցավը և կսկիծը, պատճառված իմ սիրելի

ազգակիցների լուսավորության մասին անհոգությունից, պիտի գերեզման իջուցանեն ինձ։ Ո՛ղ այսօր լիներ այդ ուսումնարանը ոտքի վերա, էգուց գնայի ես գերեզման, գո՛նե փարատված կլիներ սրտիս կսկիծը և խաղաղ հոգով, ուրախագնամ կհանդիպեի հրեշտակին, որ գալու էր, ինձ, իմ արարչի առյանը տանելու համար։

Այստեղ շատ անգամ կրկնելով «ազգային ուսումնարան» խոսքը, քեև իսկույն վերաբերած ենք եվրոպական և բազմակողմանի որպիսության հայտնող բառերը, այնուամենայնիվ ավելորդ չէր մի փոքր պարզ խոսել։

Ազգային ուսումնարան ասելով, չեմ հասկանում այնպիսի ուսումնարանք, որոնց մասին հրատարակում էր Մեղուն ուրախացած. այդպիսի բաները արժանի չեն և ուսումնարան անունը յուրյանց վերա կրելու։ Օրսկուրանտների (խավարապաշտների) կարծիքով արդեն մի մեծ բան էր եթե մի աբեղա կամ մի եպիսկոպոս, մի տիրացու նշանակում էր մի գյուղում վարժապետ, և հավաքում էր նորա մոտ մի քանի աշակերտք. ապա պատրաստ էին այդ օրսկուրանտները մինչև երկինք բարձրացնել մի այդպիսի գործողություն, առանց մտածելու թե ինքը այդ ողորմելի տիպացուն բացի գիշեր ցերեկ խոնարհեցո՛-ապրեցո՛ ասելով փրփրելուց այլ բան չիտեր. ազգի համար եղած թե չեղած այդպիսի չնչին բաներ միքան չիտեր. ազգի համար եղած թե չեղած այդպիսի չնչին բաներ միանուշն են։ Ամենայն ողջամիտ հայի հայտնի է, որ կամին ներկել խաժամուժ ամբոխի աչքը, թե ահա այս ինչ աբեղա կամ այս ինչ եպիսկոպոս ազգասեր է, գպրոցներ է բաց անում,— ինչ ուշալ մարդ է,— ապա նորա քարոզը, այնպես հրաշալի քարոզ ասաց ուսումնարանի և ազգասիրության վերա, որ ոչինչ չհասկացա, փառավորի նա, իհարկե այդպես է հարկավոր, վաղուց այդպիսի մարդիկ պետք էին մեր ազգին....

Մեր ազգին հարկավոր են ճշմարտապես ազգի վերա մտածողք և ո՛չ թե այդպիսի սուտ ազգասերք, որոնք ազգասիրության դիմակ ծածկելով իրենի վերա, երկաթի կոշիկները հագած, մաշել են Հայաստանի քաղաքներն և գյուղերի շեմքերը, սորան վատաբանելու, նորան պարսավելու, յուրյանց սուտ արժանավորությունը սուրբ քարգմանիչների, Սահակի, Մեսրովբի և Խորենացու արժանավորություններին նման ցույց տալու համար։ Տեսած ենք այդպիսի սուտ ազգասերներից և այնպիսիքը, որ Մեսրովբի և Խորենացու արժանավորություններին նման ցույց տալու համար։ Տեսած ենք այդպիսի սուտ ազգասերներից և այնպիսիքը, որ յուրյանց լեզվի քերականությունը անգամ չգիտեին, որ ծնած էին միայն խաբեբայության համար, և համարձակվում էին բազմության մեջ, ազգային ամենամեծ ու պատկառանք հետ դրած, մեծ մեծ խոսել, թե հատուցած էին 400 աշակերտք[21]։

Ոչին են խաբում, Ո՛ղ գնան յուրյանց գյուղերումը պարծենան շինականների առաջև, բայց մի օրինավոր ընկերություն այդպիսի անամոթ լրբությունը կարող էր միայն լրացյալ արհամարհանքով վարձատրել։

Մեր ասած ուսումնարանը, նման չէ այդ օրսկուրանտների ուսումնարանին. դոցա վարժապետքը, այն ողորմելի և ինչվառ էակները աշխարհի երեսին, արժանի չէին ամենևին առանց պատրաստության ոտք կոխել

մեր խնդրած ուսումնարանի շեմքի վերա։ Այն ուսումնարանը, որ կարող էր իսկապես ավազան դառնալ մեր ազգի համար, պիտո է ուսուցաններ լույս աշակերտաններին, հայերեն, հունարեն, լատիներեն, ֆրանսիարեն, գերմաներեն և ռուսերեն, ընդհանուր պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, հայոց պատմություն, ռուսաց պատմություն, հնախոսություն, օրենսդիտություն, վաճառականության ուսմունք, վաճառականության պատմություն, վիճակագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, ընդհանուր բնական պատմություն, դյուղական տնտեսություն, մեքենականություն, կրոնագիտություն, վայելչագրություն և նկարչություն։ Ահա՛ այն ուսումնարանը, որի լինելը ցանկալի և հոգով չափ փափագելի էր մեր ամեններիս սրտի համար։

Մի անփարատելի տխրություն է գալիս իմ վերա, երբ մտածում եմ, թե իմ սիրական հայը առաջնորդված լինելով մինչև այժմ օրակուրանների ձևերով, կարդալով Հիշատակարանս — իմ միայնության և տխրության զավակը — ծիծաղելու էր իմ վերա, ծաղր առնելու ինձ, և դեռևս մի կարեկցություն ցույց տալով ասելու էր, «խեղճ մարդ, ինչ բաներ է խոսում, ի՛նչ քարոզներ է տալիս, չգիտե որ մեր ականջը ընդունակ է լսելու միայն ոսկու և արծաթի ձայն, չէ իմանում որ մեր համար նա է օրհնավոր ազգասերը, որ առանց մեզանից արծաթ խնդրելու բացում էր ուսումնարաններ և դեռևս դովում էր մեզ, մեր ազգը, մեր նախնական ավանդությունները, չգիտե որ մեր համար միևնույն է ուսումնարանի լինելը, կամ չլինելը, բայց թե առանց մեր ձեռնտվության, մի գյուղում, մի գոմի մեջ, երևում էր մի տրտում ահագին գավազանը ձեռքին յուր աշակերտների ոսկերքը չարդելու համար, և այդ տրտացուի առաջև կային նստած մի քանի երևելագք այրերնաթաններըը ձեռքերին, շատ ուրախ նայ և շատ շնորհակալ այն մարդուց, որ այդպիսի մեծ և երևելի հոգաբարձություն էր ցույց տվել մեր ազգին»։

Ո՛վ նախախնամություն, եթե արդարև այսպես պիտի խոսի Հիշատակարանիս կարդացող հայը, ինչո՞ւ ապա վառեցիր, բորբոքեցիր իմ մեջ մի ազգասիրության անշիջանելի կրակ, ինչո՞ւ այդպես անգթաբար պատժեցիր ինձ բորբոքելով այդ կրակը, մինչ նա, փոխանակ ջերմացնելու իմ սիրելի ազգակիցների պաղած սիրտը, խորովելու էր իմ ներքս։ Նախախնամություն, խնայե՛ ինձ.... Նախախնամություն, խնայե՛ իմ սիրական ազգին. նախախնամություն....

ջ

Օգոստոսի 23. *Ոչինչ արժանի ուշադրության նորություն չեմ կարող արձանագրել Հիշատակարանիս մեջ, որովհետև չկան։ Ասացի արժանի ուշադրության, ապա թե ոչ այնպիսի շնչին գործողություններ, որպիսիք հրատարակվում են Հայաստանի Մեղուի մեջ, շատ անգամ խելացնոր*

մարդու արժանի լոգիկայով, ես անարժան եմ համարում ներս բերել Հիշատակարանիս մեջ, որովհետև ափսոսում եմ ժամանակիս, որ պիտի կորուսանեմ, ափսոսում եմ ընթերցողներիս ուշադրությանը, որ դուր տեղը պիտի լարեին։ Մինչև այժմ սուտ ազգասերների մեջ տիրած է մի ուղղություն, ամենայն բան որ վերաբերում էր ազգին, համարել գովելի և արժանի ուշադրության և այդ ճանապարհով որսալ ազգի բարյացակամությունը։ Դորա հակառակ, իմ ուղղությունը ա՛յլ է բոլորովին — նշմարիտը ասել և կանգնիլ մեջ տեղումը։ Ազգը, եթե ունի բանականություն և հասկացողություն, ուրեմն կճանաչե ճշմարտությունը, ուրեմն և երկբայություն չկա նորա դեպի ինձ բարեկամության մասին, իսկ եթե չէ հասկանալու և առանց յուր օգուտը ճանաչելու պիտի բամբասե մի մարդ, որ ազգի համար ճշմարտություն էր քարոզում և այնուհետև դառնալու էր ինձ թշնամի, այդ ևս իմ փուլիը չէ. պատճառ, այն փառք ու պատիվը և այն անարգանքն ու նախատինքը համարվում են վավերական և ուշադրության արժանի, որ հետևանք էին գիտակցության և ուղղախոհության։ Իմ համար միևնույն է մի հիմար մարդու ինձ պատվելը կամ անպատվելը, որովհետև նա հիմար է. և ամոթ էր ինձ սպասել նորա գատաստանին։

Սորան և նորան սուտ սուտ գովաբանություններ և տաղեր գրելով չկամիմ պղծել իմ գրիչը և այդ անպարծանք հանդնած եմ սուտ ազգասերների, օրսկուրանտների, նզվիտների և Մաքիավելու հոգով տոգորված մարդերի գործակատարության։ Թող նոքա, ինչպես մինչև այժմ և այսուհետև ևս, աշխատեն խարել մեր ազգը և սուտ ու չնչին գովաբանություններով նենգելով նորա աչքը, նորա հանցանքը դնեն նորա առաջև նենգավորելով նորա սիրտը, որ հետևանքն ժողովուրդը ամենայն օր ճշմարիտ որպես առաքինություն և հետացնեն ժողովուրդը ամենայն օր ճշմարիտ լուսավորություններից, և մինչև անգամ սորա վերա մտածելուց ևս, որ ավելի հեշտությամբ և հաջողությամբ կարողանան հաստատ պահել խավարի գժոխային իշխանությունը մեր ցավելի և արտասվելի ազգի վերա։ Ի՞նչ է այդ մարդերի այսպիսի ուղղության շարժառիթը, ի՛նչ է, որ այդպես հաստատ պահում է դոցա յուրյանց կամակորության մեջ։ Բայց այս որպես առաքինություն և հետացնեն ժողովուրդը ամենայն օր ճշմարիտ հարցմունքին ամենայն ստուգությամբ պատասխանելով, արդյոք բորոտելու չէ՞ինք նոցա դեպի մեզ ատելության փայլակները. ի՛նչ փույթ. մի անգամ ասացինք, որ հիմարի դատաստանը անվավեր է, իսկ եթե այդ հիմարության հետ միավորված էր մի կազմվածքի մեջ և խաբեբայություն, տարակույս չկա, որ այդպիսիների խոսքը, կարծիքը, ցնորաբանությունը, նենգությունքը իմ համար մի ժանգոտ կոպեկի արժանավորություն չունին, ուրեմն պատասխանանք այդ հարցմունքին, որ շատ մարդ մեր ազգից կարող էր առաջարկել ինձ։

Այն շարժառիթը, որ ստիպում է սուտ ազգասերներին, նվիրելով յուրյանց անձը ստության սպասավորությանը, ամուր պահել խավարի թագավորությունը մեր ազգի վերա, է դուն այդ օրսկուրանտների անձնասպահության, փառասիրության և շահասիրության։

Անձնապաշտություն։ Եթե այդ օրսկուրանտները մի տղայական, կամ

ավելի լավ՝ պատասխանատվությամբ համարում են յուրյանց անձը մի բանի կարգում մեր ողբալի ազգի մեջ, և եթե մեր ազգը կամ գոնե նորա մեծ մասը անդատողական երևույթ պես կարծում է թե այդ սուտ ազգասերքը, օրսկուրանտները, նզվիտները և Մաքիավելու հոգով տոգորված մարդիկը մի բան են, մի նշանակություն ունին որպես մարդ, մարդկնդեն աշխարհի մեջ, դորա պատճառը է, մեր ազգի անկրթությունը և լուսավորություններից զուրկ լինելը։ Ազգը մնալով այս սարսափելի դրության մեջ, վերևում հիշված սուտ ազգասերքը և մյուսները մնալու են նույն հարաբերության մեջ դեպի մեր ազգը, որպիսում գտանվում են այժմ։ Ապա եթե ազգը լուսավորվի, նայի հետ և հառաջ, թննե յուր անցածը, ներկայն և գուշակե ապագան, այլ և հոգեպարծու լինի սորան բարվոքելու համար, իսկույն այդ րոպեին, որպես մի էլեկտրական հարվածով վերջանալու են մարդ լինելուց նորա խարդախ, առաջնորդ ձևացած սուտ ազգասերքը և մյուսները։

Խավարի զավակները լավ գիտեն յուրյանց գլխին գալիքը, այդ պատճառով, միմիայն յուրյանց անձը պահպանելու համար, ստիպում են որքան կարող էին թանձր ամպերով պատել ժողովրդի տեսությունը, չզարթնցնել նորան այդ մահանման քնից, որով քնում է նա հազար տարիներով. դորա հակառակ, սուտ սուտ գովասանությունները օրորոցի երդի տեղ երգելով քնած ազգի ականջին, թանձրացնել նորա սարսափելի քունը։

Փառասիրությունը։ Այժմ հասարակ ժողովուրդը մատով ցույց է տալիս այդ պարոնների վերա, որպես մի երևելի ուսումնականների վերապատճառ, զուրկ լինելով լուսավորություններից չէ կարող զանազանել սևը և ճերմակը, իսկ եթե վաղվի ազգի առաջև պրոմեթեոսյան լուսավորության կրակը, այն ժամանակ անտարակույս տեսանելու է ազգը, թե այն մարդիկը, որոնց վերա նայելով զարմանում էր երբեմն, ոչ այլ ինչ են, եթե ոչ կամակոր ագեսներ, գիշերի զավակներ և աստիյան սպասավորք. այդպիսի դիպվածում ոչ թե միայն ազգը ուրանալու էր նոցանից յուր հարգությունը, այլև անարգելու, և խայտառակելով նոցա խարդախությունը հալածելու ևս։ Սուտ ազգասերքը, օրսկուրանտները, նզվիտները և Մաքիավելու հոգով խմորված մարդիկը լավ վերահասու են այս բանին, ուստի և ստիպված են, յուրյանց փառասիրության հարկը ազգից անընդհատ ստանալու համար, որքան կարելի է աշխատել հուս հպատակ պահել ազգը խավարի բարեկենյան գերության մեջ։

Շահասիրությունը։ Սուտ ազգասերքը և մյուս նոցա ընկերքը, որոնց անունները քանի անգամ կրկնեցի, լավ գիտեն, որ ազգը ավելի շուտով կստանա մի գիրք, մի լրագիր, որ գովում էր նորան. փույթ չէ, որ այդ սուտ, խարդախ և երևակայական գովասանությունը մահադեղ էր ազգին. փույթ չէ, որ նա լսելով այդպիսի գովասանություններ, համարելու էր յուրյան կատարյալ և անկարոտ ազգ, և հետևաբար անհոգ մնալու վերացնել յուր թերությունները և լցուցանել յուր բազմազիմի կարոտությունքը։ Ապա

ինն ազգը լուսավորվի և ինքը այնուհետև սկսի քերել յուր վերայից այն ինքնությունքը որպես դատապարտելի բաներ, որ մինչև այժմ սուտ ազգասերքը և մյուսքը դուն այդ պակասությունքը գովել էին ազգային որպես կատարելություն, հանցանքը ձևացուցել էին առաքինություն, այն ժամանակ, առանց ամենայն տարակուսի, այդ տեսակ առասպել գրքերը և լրագիրքը ո՛չ ինն միայն ընդունելություն գտանելու չէին ազգի կողմից, այլև գատապարտվելու, որ հրապարակում այրվին դահճի ձեռքով, որպես հոգեապան գործիք խավարի բանակալության։

Մեր ազգը երկար ժամանակ, կամ ավելի ճիշտ և լավ ասելով սկզբից մինչև այսօր, դատեփարակվելով սուտ ազգասերների ուղղությամբ, առաջնորդվելով նոցա ձեռքով, արդարև այս բոպեիս բացարձակում է յուր խարդախ ազգասերների ձայնի արձագանքը։ Նա սովորել է լսել ամենայն օր գովաբանություն, և այդ պատճառով այժմյան ժամանակում ճշմարտության ձայնը թվում է նորան որպես մի օտար աշխարհից եկած ձայն։ Այդ ձայնը հասանելով նորա ականջին վշտացնում է նորան, նա ասում է,— այս ի՛նչ բան է, մեզ մինչև այժմ գովել են, պատվել են, այժմ մի քանի պարոններ բոլորովին այլ ուղղությամբ վարվում են մեր հետ. ինչո՞ւ բացում են մեր պակասությունքը, ինչո՞ւ հրապարակում են մեր վերքերը.... մենք առողջ ենք, հիվանդ չենք, մեզ դեղ չէ հարկավոր, ունինք զՄովսէս և զՄարգարէս, և կարօտ չենք այն պարոններին, որ ամենայն րոպե ծակում են մեր սիրտը... Այս պատճառով, ճշմարտությունը հընչում է հայոց ազգի ականջին որպես ձայն բարբառո հանապատի, որպես մի քամի, որի ուստի գալը և ուր գնալը չկամի նա հասկանալ։ Մյուս կողմից սուտ ազգասերք և մյուսները, արդարացնելով ազգի գանգատը, հավիցացնում են դեռևս,— դուք ի՛նչ զարմանալի մարդիկ եք, ինչո՞ւ ձեր վնասաբեր անարգանք գնում եք ձեր համար, նկեք մեր մոտ.... ձեզ հարկավոր չէ նոցա դեղը.... բանկագին է, մեք ավելի՛ դյուրին գնով մկնդեղ կտանք ձեզ, այդ շատ լավ է, և ի՛նչ հարկավոր է ձեզ կյանք և շարժողություն, դուք մեր ձեռքումը պիտո է լինիք որպես մի լոկ մեխենա, որպես մեռյալ դիակ. դուք կամք չունիք... ձեզ և հարկավոր չէ լեզու և բանականություն, մտածեցեք մեր խելքով....

Ահա՛ մեր բոլորի ներկա դրությունը. այն սարսափելի խոցը, որ դարերով ճարակելով մեր ազգի հոգին և մարմինը աշխատում է վերջապես բոլորովին մեռուցանել նորան։ Եվ այդպիսի անկարգություն նկել են և լինելու են միշտ անկիրթ ազգերի մեջ, որպես նաև մեր ազգի մեջ։ Ամեն ժամանակ բաների նոր կարգը պատերազմ ունի հին կարգի հետ, լույսը խավարի հետ, առաքինությունը մոլության հետ, ճշմարտությունը սուության հետ. այսպես է աշխարհի կարգը, այո՛, և նախախնամության կամքը, որ ընտրյալքը երևին։

Ճշմարիտ և սուտ մատենագրությունը մի հայելի է, որի մեջ ցոլանում է ազգի կյանքը։ Եվ որպես հարգի է այն հայելին, որ ճիշտ ցոլացնում է յուր առաջև դրած առարկայի պատկերը, նույն չափով մի մատենագիր էր յուր առաջև դրած առարկայի պատկերը,

նպատակ, որի մեջ առաջադրված երևում էր ազգի կյանքը և պահանջները. սորա հակառակ, անպիտան է՝ նրին հայելին ուղիղ չէ և չէ ցուցանում առաջադրված այն բանի պահանջները, որ ցույց էիր ավել, այսպես և մասնագրություններ: Այդպիսի մի մասնագրություն, որի մեջ այրը քո է երևում, իսկ քոնը այր, շինովի և խարդախ մի մասնագրություն է, առուվյան վարպետով պիտակավորված մի անձնավորություն: Ահա՛ այդ մասնագրության մեջ վառտակում են հայոց ազգի առաջադրքը և մյուս նոցա ընկերքը, փառք և պարծանք դոցա:

Եվ մասնագրությունը, որ հարազատ մնալով ազգի կյանքին հառաջ է շարժվում այժմ մի քանի հշմարտասեր և հնառատես պարոնների ձեռքով, հալածանքի տակ է ներկայումս. և այդ մասնագրության աշխատավորների վերա արձակվում են խավարի պինդորների խնդնդեն նետերը—լարակուռ աղեղնեներից: Հառաջադիմության հետևանքը խելագարություն է, իսկ խելագարի համար չկա կանոն, կամ պատշաճ, որովհետև խելք, բանականություն չկա: Այս դրության մեջ են այժմ առաջադրքը անառանելով, որ բուն ազգային հարազատ մասնագրություն հառաջ է շարժվում, առանելով, որ նորա անհոնջ գործակատարքը արհամարհելով ամենայն արգելք և խափան, աշխատում են բանալ ազգի աչքը և դորանով հոգի հետ հավատարեցնել առաջադրների և մյուսների անունը և անպարծանք հիշատակը: Հառաջադիմությունը կատաղեցնում է հշմարտության հակառակորդը, որովհետև ոչինչ արգել չէ հշմարտության խորտակելու գլուխը խավար վիշապի, որ դարերով ծծել է մեր խղճալի ազգի արյունը, բամել է նորա վերջին ուժը և շինելով նորան մի մեռյալ դիակ, մի անշարժ և անկենդան էակ, զվարճանում է յուր հաղթությամբ:

Այդ խավարասեր դիշերի զավակները, կամելով վնասել հշմարտության հրաշագործական թարոյիշներին, դայթակղության որոգայթներ լարեցին ազգին. առաջին գրով և բանիվ, «Հեռի մնալ հշմարտության թարոյիշներից, որպես ազգի անարդողներից և չընդունել նոցա գիրը կամ բանը», բայց ազգի մեջ, փառք աստուծո, գտանվեցան մարդիկ, որ սիրեցին հշմարտությունը և ընդունեցին նորան, թեև փոքր էր այդ մարդերի թիվը, այնուամենայնիվ հշմարտության թարոյիշքը հնրիքացան և յուրյանց գիրը կամ բանը չուղարկեցին այնպիսի մարդերի որ ամենևին խնդրած չէին, հիշտ պահելով մեր սիրուշ Քրիստոսի խրատը թե, «Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի առ ոտն կոխեսցեն». և այս պատճառով ևս ազատ մնացին այն ծանր և անպատիվ աշխատություններից, որ օրհուրանոների լրագիրը հանձնառու լինելով կատարել էր—լրագիր ուղարկել դանազան մարդերի որ խնդրած չէին, և մի քանի ամսից հետո հրապարակով, դուն այդ լրագրի միջնորդությամբ արծաթ պահանջել: Առաջին — «հշմարտության թարոյիշների լեզուն, որով խոսում են կամ գրում են, անպիտան է և անհասկանալի», բայց ամենայն մարդ հասկացավ որ ընդունակություն և դործարան ուներ հասկանալու և մտա-

ծելու, և այդ չարախոսությունը արգել չեղավ, որ մի քանի պարոններ յուրյանց լեզուն մաքրեին և կանոնի տակ դնեին հետևելով ճշմարտության քարոզիչների ոճին։

Խավարասերքը, թեև ոչինչ չեն տեսանում, բայց շոշափելով հասկացան, որ ճշմարտության քարոզիչքը չեն մոռացել Կեսարի խոսքը age quod agis*, որ դադարելու չեն ներգործելուց, մինչև որ բարձրանա հայկական մտայղոտ հորիզոնի վերա լուսավորության արևը։

Եվ այս իրողությունը հեռի չէ այժմուս. սիրով բարյավ մնա՛ արեցեք ձեր ծնող խավարի հետ, մտայղապատիվ օրսկուրանտներ, շուտով ահա արևի ճառագայթքը ննջացնելու են ձեր աչքի լայնացած բբերը, որ զուր տեղը բանալով մեծ մակերևույթ, աշխատում էին այդ թանձր խավարի մեջ լույսի շատ ճառագայթներ հավաքելով բան տեսանել։ Գիտեմ, ծանր բան է զավակի և ծնողի միմյանցից բաժանվելը, բայց ինչ պիտո է առնել, բնության կանոնն է, որ զավակները թողեն յուրյանց ծնողքը։

Սուտ ազգասերների սրտի մեծ ցավի համար հարկավոր եմ համարում ևս բերել Հիշատակարանիս մեջ այն գրյանքը, որ տպվեցան և որ տպվում են ժողովրդական ընտիր լեզվով.

1) Հոգեղեն կերակուր հայոց երեխաների համար։
2) Վարդապետարան կրոնի։
3) Հանդես նոր հայախոսության, երկու մեծ հատոր։
4) Թափառական հրեա *(առաջին մեծ հատոր)*։
5) Դխուռի դը Շեվրեոզ։
6) Պավլոս և Վիրգինիա։
7) Մինին խոսմ, մյուսին հարսն։
8) Այբբենարան հայկական լեզվի։

Այս բոլոր գրյանքը, որոնցից շատերը դուրս եկած են և միայն երկուքը (Պավլոս և Վիրգինիա և Մինին խոսմ, մյուսին հարսն) գտանվում են տպագրական մամուլի տակ,— կարող են հավատարիմ առհավատչյա լինել ճշմարտության քարոզիչների տպագրության ևս անդուլ գործունեության մասին։ Եվ այսպես հայտնում եմ ահա հրապարակով, որ ճշմարտության քարոզիչքը գործելու են անդադար, և չնայելով սուտ ազգասերների, օրսկուրանտների և մյուսների դարանագործության, ո՛չ թե միայն ների, օրսկուրանտների և մյուսների դարանագործության, ո՛չ թե միայն շարունակելու են Հյուսիսափայլ օրագիրը, այլև նոր նոր գրքեր ևս դուրս տալու։ Եվ այս գործունեությունը մի ժամանակավոր բան չէ, այսօր մենք ենք դուրս հանդիսագիրքը, էգուց մեր աշակերտքը, ճշմարտության դրոշակի տակ նահատակվիլ հանձնառու կորիճ զինվորքը, որոնց թիվը աճում է ու զորանում է օրն օր։

Ցնծացե՛ք, սուտ ազգասերք, օրսկուրանտներ, նզմիտներ և մտացնծացե՛ք, սուտ ազգասերք, օրսկուրանտներ, նզմիտներ և մտածողներ, կատաղեցեք և փրփրացեք, և ձեր քիսվելու հոգով խմորված պարոններ, կատաղեցեք և փրփրացեք, և ձեր քիսվելու հոգով խմորված պարոններ, կատաղեցեք և փրփրացեք, և ձեր պարսավները որ գրում եք, որքան առանց լոգիկայի գրեք, այնքան փառք պարսավները որ գրում եք, որքան առանց լոգիկայի գրեք, այնքան փառք

* Արա՛, ինչ անում ես, այսինքն քո գործով գրազիր։ ԽՄԲ.։

ու պատիվ է ձեզ, բայց ազատություն մի՛ արեք այդ պատվի մեջ, մի փորր բաժին տվեցեք նորանից և ձեր միականի նախադահերին.... Նորա ևս թող մասնակից լինին այդ հերոսատրատոսյան պարծանքին, որովհետև մասնակից էին ձեր գործին, և դուք աշխատում էիք ամրացնելով ձեր ոտքերը նոցա ձյութապատ ուսերի վերա։

Իսկ մենք կփառավորենք Հշմարտությունը, մինչև ի մահ կաշխատինք դուրս վանել ստության և խաբեբայության դևը Հայաստանի նվիրական ավերակներից և կհասանենք մեր հոգով չափ ցանկալի նպատակին, որ է կանգնեցնել այդ նվիրական ավերակների մեջ դրոշակ, որի վերա ոսկեղեն տառերով գրած էր Ճշմարտություն, իսկ Ճշմարտությունը էր ինքն Հիսուս Քրիստոս, մեր փրկության միայնակ և անփոխանակելի միջնորդը, որի բարեխոսությունը անպակաս լինի Ճշմարտասերների վերայից։

Ի

Սեպտեմբերի 30։ Ահա սկսանում է հոկտեմբերը. ցուրտ և խոնավ եղանակները յուրյանց անախորժ բամիներով սկսեցին մոայլել սիրտը. երկինքը ասես ինչ լաց է լինում մարդու գլխին։ Շատ անգամ դուրս եմ գալիս դաշտ, բայց չկա այն անխորժ բնակրությունը, որ զգում է մարդ ամառնային ժամանակ, ծառերը յուրյանց խշխշոցով, կարծես լաց են լինում յուրյանց տերևաթափությունը. այն կանաչ ու թարմ տերևները, որ մի երկու ամիս հառաջ քաղցր հովանի էին մեր համար այրող արևի երեսից, այժմ դեղնած ու թառամած թափվել են գետնի վերա ծառերի տակին, և շինականների անգործ, ոտաբոբիկ և քաղ մնծի մասին մերկ աղայքը որոնում են նոցա մեջ կաղին, որ դեռևս ընկած չէին հավաքողի ձեռքը։ Աշունը, մանավանդ ինչ հյուսիսայինը, մի շատ տխուր ժամանակ է. մարդը, նայելով բնության վերա և տեսանելով, երբ որ սա փորր առ փորր հետ էր քաշում յուր կենսական զորությունը և պատրաստվում էր մտանել քնի մեջ, տխրում է, մահու պատկերը կամ ինչ մարդկային կյանքի օրինակը որպես հայելու մեջ նկատելով թառամած տերևների վերա։ Մարդ դառնվելով այնպիսի աշխարհում, ուր շրջապատող բնությունը տրամադրում էր սիրտը և հոգին դնալի մելամաղձություն, առավել կարոտ է մխիթարության, քան ինչ այն մարդը, որի բնակության աշխարհում մշտական գարունը ուրախություն էր ցողում երկնքից։

Պիտի իմանալ որ իմ կյանքը մի հյուսիսային գյուղի մեջ շատ միօրինակ է և միայն մխիթարություն մնացել է ինձ մատենագրությունը, ես շատ ուրախանում եմ, երբ մի նշանավոր հյուր գալիս է իմ մոտ, որովհետև նորա դնալուց հետո իսկույն հարստանում է Հիշատակարանս, նույնպես ուրախանում եմ, երբ առանում եմ իմ բարեկամներից նամակ և ծանոթություն, որ ղրկեցնելով ինձ, կարող էին ցրվել իմ տխրության ամպերը։

Բայց այս ևս կա, որ ես միայնակ չեմ վայելում իմ կյանքը բացի ձանձրույթից և տխրություններից, որին չեմ ցանկանում հաղորդել իմ ընթերցողը կամ բարեկամքը, և եթե մի նշանավոր բան տեսանեմ կամ լսեմ, իսկույն ձգում եմ Հիշատակարանիս մեջ, որ ուրիշները ևս կարդան ու տեղեկանան դորան։

Մոտ ժամանակներումս առացած նամակներից կամ լուրերից, հետևյալ բաները կարող եմ մեջ բերել։

Համար 1

Սեպտեմբերի 18, 1858, Բեդուակյէ։

Ողորմած պատռն ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԵԼ,

*Քո երկարաժամանակյա լռությունը, կարող էր ինձ առիթ տալ մտածելու թե տկարացած էիր, եթե մ ե ր Հյուսիսափայլի մեջ չտեսանեի անդադար քո օրագրության թերթերի հատվածները։ Ինչպես երևում է, շատ պարապած ես և ժամանակ չունիս. փույթ չէ, թող սրտերս մոտ լինին միմյանց։ Ես ինքս նույնպես Սամսոն գնացել էի մի ամիս ժամանակով իմ առևտրական գործերի համար. այդ էր ահա և իմ լռության պատճառը։ Հույս ունիմ, որ այսուհետև կենդանանա մեր նամակակցությունը, որ

բումը, ուր նորա ամուսինը ուղարկված է, անգլիական զորքի հետ միասին որպես քաջ երկրաշափ։ Գերմանիայի հանքային ջրերի բժշկական և բնագիտական ժողովը արքունի ծախքով ուղարկած է Լինդմանին Տաճկաստանի Բրուսա քաղաքը, բննելու այնտեղի ջրերը. բայց ինչպես պատմեց նա, փորձերի հետևանքը շատ անմխիթար են, վերաբերութեամբ դեպի նոցա գործադրութեյունը որոշյալ ցավերի մեջ. Լինդմանը հանգստանում է այժմ Տրապիզոնտում յուր երկար և ձանձրալի ճանապարհորդութեններից, ասիական Տաճկաստանի մեջ. նա մտածում է գարնան բացվելուվը Բուսիա մտանել, կամի տեսանել և էջմիածինը, և խնդրեց ինձանից, որ ես ուղևիից լինիմ նորան այս ճանապարհորդութեյան մեջ։ Տեսանեմ, ինչպես հարմար կգա գործս, գուցե գնամ ես, մեր Հայաստանի մոխրացած ավերակներին մի համբույր տալու։ Առայժմս ուրիշ արժանի ուշադրութեյան բան չունիմ գրելու. սաստիկ վաստակած եմ. մնաս բարով։ Խնդրեմ նամակդ չպակասեցնես ինձանից. ողջ եղիր։

Քո եղբայր Ս. Խ. ՇԱՀԲԵԳ

Համար 2

Գ. Շաբրեգի մի քանի նկատողութեյունք. Խաճակյանցի պատասխանու վերա։
(Տե՛ս Մեղու Հայաստանի, համար 37, երես 291)։

Զարմանալի՜ բան. այնպիսի ժամանակի ենք հասել, որ գարի խորհուրդը ես, որ տալիս էինք մի մարդու, ամենևին դեպի շարը գործ դրվելով չեն հասանում յուրյանց բուն նպատակին։ Ներկա տարու ապրիլի 14 թվականից ուղարկել էի պ. Կ. Էմմանուելին մի հոդված, ընկատողութեյունք պ. Խահակյանցի Հրավիրակ հայրենասիրութեյան մակագրով հոդվածի վերա», որ տպած էր Մեղուի 14 համարում, և այդ հոդվածի վերջումը (Հյուսիսափ[այլ], մայիս. երես 385), եղբայրական խորհուրդ էի տվել պ. Խահակյանցին, զրան գրելու ժամանակ չպատկանել այս և այն հակառակող բաժիններին. խոսել սառն հոգով, և հավատարիմ մնալով ճշմարտութեյան կանոններին։ Պ. Խահակյանցը կարդալով իմ հոդվածը, փոխանակ շնորհակալութեյուն մատուցանելու ինձ, որ հանձն առնելով կարդալ նորա գրածը Մեղուի մեջ և ցույց տալով այդ գրվածքի թերութեյունքը, ամենայն քաղաքավարութեյամբ աշխատել էի օգտակար լինել նորան, փոխանակ խոստովանելու յուր սրտաբավիլ գրութեյունը ուսման հանդիսում, հրաշք էր գործել գարձյալ Մեղուի 37 համարում։ Բայց այդ հոդվածը գրելուց հառաջ, զրականապես բարյալ մնաց է ասել լոգիկային, որ առանց դրան ես շատ սիրելի չէ օբսկուրանտներին։ Ճշմարիտը պիտո է ասել, ես Մեղուի վերա չկամիմ ուշադրութեյուն դարձուցանել, չկամիմ երբեք քննութեյան տակ ձգել նորա թերթերը, որովհետև նա ցած է ամենայն կրիտիկայից, բայց պ. Խահակյանցին առաջին անգամից շատ սիրեցի, և այժմ ես սիրում եմ, ի՛նչ պիտո է առնել, մարդ ենք, ունինք շատ թուլութեյունք. երբեմն սիրում ենք մի մարդ, առանց կարողանալու հաշիվ

ու համար տալ մեզ, թե ինչո՞ւ համար սիրում էինք Պ. Խահակյանցին այդպես սիրելուցս մի քանի մարդիկ, չգիտեմ ինչ հիման վերա մինչև անգամ ասել էին, թե Շահրիզը կամի պ. Խահակյանցին կնքահայր շինել յուր երեխան մկրտելու ժամանակ. զարմանալի մտածություն, Ղղլարից Բեզուտկային կնքահայր խնդրել։ Բայց սորա երկրորդական բաներ են, մանավանդ թե ընտանեկան. այժմ հարկավոր չէ դորա վերա խոսիլ. նկատենք պ. Խահակյանցի հրաշագործությունը։

Նախ և առաջ պ. Խահակյանցը յուր հոդվածի ներածության մեջ խրախուսյա և քաջալերություն է տալիս Մեղուի հրատարակողին, որ նա աշխատի և նրին կարելի է ընդդեմ դառնա ճակատագրի ձեռքով Մեղուի համար պատրաստած օրհասին. բայց դուր է այս խրախուսյը և քաջալերությունը. պատճառ, արդեն ամենայն մարդ, որ հազիվ հազ թե իմանում էր գրել, կարդալ, նայում է Մեղուի վերա, որպես մի ողորմելի և թշվառ գործի վերա մատենագրության ասպարիզում։ Երկրորդ, պիտի ասել, որ պ. Խահակյանցը վախչում է իմ առաջարկած հարցմունքին ուղղակի պատասխանելուց, երևի թե ձեռք չէ տալիս նորան և խառնափնթորելով խնդիրները, կարծում է յուր անձը արդարացուցած։ Այդպես չէ. ես պահանջում եմ իմ հարցմունքի ճիշտ և որոշ պատասխանը, իսկ նորա ասածներին կպատասխանեմ մեծ ուրախությամբ։ Սորա են իմ խնդիրները, որ հրատարակվեցան Հյուսիսափայլի հինգերորդ ամսատետրակում.

1) Ցույց տալ հայոց ազգի գիտության և հառաջադիմության աուսը... ցույց տալ երկու հայ, որ ազգի օգտի և հառաջադիմության մասին, խորհուրդ կատարած լինեին միասին։

2) Հայտնել այն պարոնների անվանքը, որ անարգելով և անպատվելով հայոց ազգը, վրդովել էին պ. Խահակյանցի հոգու խաղաղությունը, և պատճառ էին տվել նորան այնքան խոսելու, մինչև որ Մուշան Մասյաց դարևանդիցը հարկադրվեր դադարեցնել նորա գոչյունը։

Ես խնդրում եմ նորանից ցույց տալ ինձ ազգի գիտության և հառաջադիմության աուսը. պատասխանի եմ սառնում, թե հայտնեղ ազգի անցյալ և ներկա բարօրության և լուսավորության պատմությունը գրելու տեղը չէ, և թե առանձին պիտի գրեմ։ Ի՛նչպես է, սիրելի ընթերցող, պ. Խահակյանցի պատասխանը, հարցմունքին հարմար չէ՞, կամ, օրինավոր չէ՞. ասա, թե դանակով կտրել-ձգել է տնաքանդը։ Իմ պ. Խահակյանցի սիրելու մի պատճառը, նորա այս սրամտությունն է — զարմանալի՛ սրամտություն։ Պարոն ընթերցող, այստուհետև եթե պատահի որ ասեմ, թե հայերը մի հոյակապ համալսարան ունին. և եթե դուք պահանջեք ինձանից ցույց տալ այդ համալսարանը, իմացած եղեք, որ պիտի կրկնեմ պ. Խահակյանցի պատասխանը,— թե այստեղ այդ բանի վերա գրելու տեղը չէ. բացի սորանից կըսղոքեմ ես ձեր վերա, որ դուք նորություն կամիք ներս բերել մեր ազգի մեջ, եվրոպացոց պես ամենայն բանի համար ցույց տալ ապացույցներ և փաստեր։ Ի՛նչ սովորություն է...

մի բան էր, ասացի, գնաց, ի՛նչ եր վզիս նստել, անհավատ մարդերի պես ապացույց պահանջելով. տեսած բա՞ն է հայերի մեջ օրինավոր, կապակից, հիմնավոր ապացույցներով և փաստերով խոսել, այսօր բանը կասեմ, և դուք պարտական եք հավատալ և ընդունել, ապացույցը հետո մեջ կրերեմ, ուրիշները միլիոններ հավատում են միմյանց, դուք ինձ մի շոր ապացույց չե՞ք հավատում.... Մեղուն ձեզ երաշխավոր.... Գ. Խահակյանցը Մեղուի 14 համարում ասել էր, թե ցայն ժամանակ ազգը արժանի էր մեղադրության, նրա գիտության և հառաջադիմության տունը ավազակների այր շինած լիներ. նշանակում է, թե ազգի մեջ կա գիտության և հառաջադիմության տուն, և ազգը ավազակների այր չշինելով, արժանի չէ մեղադրության: Բայց ես չտեսանելով մի այդպիսի տուն հայկական անշեն անապատի մեջ, հարց արեցի պ. Խահակյանցից, թե ո՞ւր էր այդ տունը, որին պատասխանում է նա, թե ցայժմ ժամանակ չէ խոսելու, հետո կգրեմ: Ի՛նչ պիտի գրե. ազգի անցյալ և ներկա բարօրության և լուսավորության պատմությունը, հետո նորա գործ է գրել այդպիսի բան. սխալվում է, նրա հույս ունի Մասյաց գարնանդի Մուրայի վերա: Թող հայտնի լինի պ. Խահակյանցին, որ ազգը մեղադրվում է ոչ թե եղած տունը ավազակների այր շինելու համար, այլ մի այդպիսի տուն մինչև այժմ ամենևին չշինելու համար:

Գ. Խահակյանցը թույլ է տալիս ինձ Անգլիա գնալ, հարուստ ընկերությունների անդամ դառնալ, թուշնավաճառությամբ պարապիլ և օգուտների մի բաժինը ստանալ: Տեսանո՞ւմ եք, սիրելի ընթերցողք, ինչպես բարի սիրտ ունի պարոնը. ամենևին խափան չէ իմ Անգլիա գնալուն: Հավատալով նորա բարեսրտության վերա կարծում եմ, որ նրա Ջրանախտ և Ալսարիա ևս գնալու լինիմ, նույնպես կարող եմ երթալու հրամանագիր ստանալ պ. Խահակյանցից: Ցնծա՛ Շահրեդ, աշխարհի ամենայն կողմը ճանապարհդ բաց է, պասպորտ տվողդ պատրաստ, ո՛ր օրիդ ես ապատում, ի՛նչ ես փոտում Բնդուսկալեում: Աստուծո սիրուն ասացեք, ի՛նչպես չսիրես այդպիսի մի մարդ. ճշմարիտ, նրա Ղզլարից դեպի Բնդուսկալե երկաթի ճանապարհ լիներ, անպատճառ կնքահայր ես կշինեի նորան, մանավանդ բամբասողների սրտերը պատառելու համար: Բայց պ. Խահակյանցի այս մեծահոգության առաջև սևերես չնայելու համար, պիտո է նորան մի քարի խորհուրդ տալ. արդյոք ավելի օգտակար չէ՞ր պ. Խահակյանցին և հայոց ազգին, նրա առաջինը թողնելով Ղզլարի մանկավարժությունը եվրոպա գնար, և մտաներ այն տեղի դպրոցների մինի մեջ (տարակույս չկա որ աշակերտի պես) և գո՛նե այնքան բան ուսաներ, որ նորա մտածությունքը մարդավայել դառնային, և խոսելու ժամանակ դահճի պես չվարվեր լոդիկայի հետ: Տեսաննենք այս բարի խորհուրդը ի՛նչ ազդեցություն կգործե մուզաների բարեկամի վերա:

Ես ասել էի, թե ցազգը էապես անարգողը չեն նորա, որոնցից գանգատ ունի պ. Խահակյանցը, որովհետև մերկացնում էին ազգի ծածուկ պահած վերքերը, վիրաբուժական դարմաններ մատուցանելով, այո՛, և

բարոյական երկաթի ու կրակ գործ դնելով, այլ, այն սուտ ազգասերքը, որ խնդճ ազգմեզի Մեղուին լծել են մի սայլի և ինքյանք լցվելով մեջը հարկադրում են նորան ավելի մեծ ապարեզ կատարել աշխարհի երեսին, հայկական լուսավորության մեջ, քան թե բնությունը կարողություն էր տվել Մեղուին: Այդ սուտ ազգասերքը անարգում են ազգի անուր ամենայն ելբոպացի մարդու առաջև, որովհետև այն մարդը, որ չէր խոստովանում յուր պակասությունքը, չուներ ուրեմն և սեփական արժանավորություն և այլն»:

Գ. Խահակյանցը գրում է. «Պարոն, խելացի և գիտուն մարդը կդատան յուր ազգը, բայց չի դատապարտիլ. նորա վերքները կտեսնի փաթաթելու, չէ թե արևուն ցույց տալու համար, թե որ ազգը պակասավոր լինելու համար անարգում են, թող նորա որոնեն յուրյանց համար մի այլ անբիծ աշխարհ և այլն և այլն»:

Ես ասել էի, վերքերը բացում են վիրաբուժական դարմաններ մատուցանելով, այո՛, և բարոյական երկաթ ու կրակ գործ դնելով, բայց պ. Խահակյանցին թվել է, որ ազգի վերքերը արևին են ցույց տալիս: Խիրուրգիայի մեջ այդպիսի բան չկա, բայց գուցե պ. Խահակյանցը վիրաբուժություն բառը փոխանակ խիրուրգիա հասկանալու կարծում է թե գաստրոնոմիա է. արդարև այդ արվեստի մեջ շատ բան ցույց են տալիս արևին չորացնելու և ապուխտ չինելու համար. բայց դարձյալ վերքեր չէին, որ չորացնում են. գաստրոնոմիան գործ ունի առողջ անասունների հետ, ցավագար և վիրավոր անասունքը գաստրոնոմիային ևս հարկավոր չեն, մանավանդ որ բժշկական պոլիցիան սաստիկ արգելում է այդպիսի շարագործություն: Ես ասել էի, որ պ. Խահակյանցի աչքումը միևնույն հարգ ու արժանավորություն ունին, թե ազգը և թե նորա պակասությունքը. սասծս դարձյալ ապացուցանում է այդ պարոնը ասելով, թե ազգը պակասավոր լինելու համար անարգում են և այլն: Դու հազար անգամ ասա՛ մի այդպիսի պարոնի, թե ազգը չեն անարգում, այլ դատապարտում են ազգի պակասությունքը. ազգը ինքը պակասություն չէ. ա՛յլ է ազգը, և ա՛յլ է ազգի պակասությունքը: Անարգելով ազգի պակասությունքը, ոչ թե միայն չես անարգում ազգը, ոչ թե դառնում ես նորան թշնամի, այլ բուն բարեկամ, քան որում ցանկացել էիր ազատված տեսնել նորան ամենայն պակասություններից: Եվ այդ պակասությունքը արժանի էին որ դատապարտվինն. այդ արատները կարող են սրբվելու:

Բայց ի՛նչ ասեմ ես այն մարդուն, որ չկամի հասկանալ թե Հայաստան բառը մի վերացականություն է ներկայացնում, և կանացի մեզապրանքատան բառը մի վերացականություն է ներկայացնում, և կանացի մեզապրանքներով ապաթրեզ է մտանում, թեև Հայաստանը չէ տվել ինձ կրթություն և դաստիարակություն, բայց իրավունք ունի մեր կողմից պահանջելու պիտույի և խնամք յուր վերա՝ — Հայաստանը ոչինչ իրավունք չունի մեզանից բան պահանջելու, ասում եմ շեշտելով. ի՛նչ նա հատաջ սերմանեց, հնաոռ հնձելու դուրս գար: Բայց մենք ինքներս, որպես մարդ, պարտական ենք ոգնական գտանվիլ մարդկությանը, և որովհետև քրիստոնյա մարդկության

մենք մտանում ենք մեր հայ մարդկությամբ, որովհետև հայ մարդկությունը առավել մոտ է մեզ, այս պատճառով պարտականություն համարում ենք մեզ անփույթ չթվենել հայոց ազգի հառաջադիմության և լուսավորության մասին։ Բայց որպես մարդ և որպես քրիստոնյա, մենք ենք, որ համարում ենք մեզ պարտական. իսկ այլ որ չունի համարձակություն պարտական թարմոզել մեր ազատ անձը։ Եվ այս է մանավանդ բանը, որ մենք մեր ազատ կամքովը, հանկանալով մարդու և մարդկության խորհուրդը, առանց բռնադատվելու մի հարկադրական պահանջողութենից, ինքներն աշխատում ենք օրնական գտանվիլ հայ մարդկությանը որպես և ինչ չափով կարող էինք։

Ես երբեք չեմ անպատվել Հայաստանը ասելով, թե նա չունի այն, ինչ որ առուգապես չունի, և միտք չեմ ունեցել համազգինների սիրտը վիրավորելու, այլ մանավանդ, հանդես տալով այդ խնդրին, ցանկացել եմ դդալի կացուցանել մեր ազգին այդ նորա տարապայման կարոտությունը և հետ մնալը լուսավորության գործի մեջ։

Պ. Խահակյանցը իմ միտքն է ձգում հինգերորդ դարը և ասում է, թե ինորենացիների նման մտավարժ և լիահանճար մանուկները անհագ փափագով դիմեցին Աթենք, Ալեքսանդրիա, Բյուզանդիա, դեպի հունական դպրոցները, և թե այդ երանելիքը չեն ասել, որ պարտական չէին Հայաստանին, այլ շտապել են գալ Հայաստան* լուսավորել և այլն և այլնա։ Ճանկալի էր լսել պ. Խահակյանցից, թե այդ բարի և օրհնյալ հիշատակի արժանի մարդիկը ինքյա՞նք դիմեցին, թե ուրիշի ձեռքով և հոգաբարձությամբ ուղարկվեցան, և այդ հոգաբարձությունը, որ կատարեց այն ժամանակ Հայաստանը Սահակի և Մեսրոպի ձեռքով, իբր 60 աշակերտ եվրոպա կամ Ալեքսանդրիա ուղարկելով, կարելի է որ մոռանային այդ աշակերտքը և ասեին — թե Հայաստանը չէր, որ դպրակ վարձեց մեր համար։

Ինչպես կարող էին նորա պատճառ դնելով Հայաստանում համալսարան չթվենլը ուրանալ Հայաստանի իրավունքը յուրյանց վերա, մինչ այդպիսի դպրոցի չթվենլը ստիպել էր սուրբ թարգմանիչներին աշակերտներ ուղարկել դեպի հունական դպրոցները, որ ՝ի լեզու պանծալի և ստոյգ յօդանալով ճեմարանին վերաբանութեան[23], վերադառնային Հայաստան և կանգնեցնեին ընդհանուր ազգի լուսավորության ամազան։ Բայց թե ո՛րչափ հաջողեցավ նորա իրագործել յուրյանց դաղափարը, թե ի՛նչ հանգամանքների մեջ ոտք կոխեցին Հայաստան, թե ի՛նչ ընդունելության պատահեցան և ի՛նչպես կատարեցին յուրյանց առաքելքը, իմ սիրտը չէ դիմանում մի առ մի նկարագրելու։ Ես տեսանում եմ, որ պ. Խահակյանցը ամենևին անտեղյակ է մեր մատենագրության պատմության։ Խորհուրդ ենք տալիս օրինավոր կերպով կարդալ և հասկանալ Խորենացին, և թե բնագիրը անհասկանալի է, փառք աստուծո, շատով աւտերենը ևս դուրս կգա, պ. Էմինի աշխատությամբ թարգմանվածո։ Այդ թարգմանությունը կարող է պ. Խահակյանցին և ուրիշներին հասկացուցանել Խորենացու

հայոց պատմությունը, քան որում ներկայումս հայոց լուսավորությունը այն ինչման դրության մեջ է, որ ազգը ավելի շուտով կհասկանա խոթենացին ուսանելն, քան թե հայերենն։ Խորհուրդ ենք տալիս նույնպես կարդալ Ղազար Փարպեցու նամակը գրած Մամիկոնյանց տիրոջ Վահանին, որովհետև այդ տեղից շատ բան է երևում։

Երբ հինգերորդ դարումը Սահակ և Մեսրոպ Խնկելի թարգմանիչքը հոգաբարձու եղած չլինեին, և նոցա աշակերտքը ինքյանք գնացած լինեին Եվրոպա և Ալեքսանդրիա ուսանելու, այն ժամանակ նոքա ևս կարող էին ասել այն, ինչ որ ասում ենք այժմ մենք, ազգի հոգաբարձությամբ ոչ երբեք դիտությյան կամքն, այլև ո՛չ մի բաժակ լոկ ջուր խմած չլինելով։

Պ. Խաչակյանցը ասում է, թե ես մեր մենծատուններին և հոգևոր իշխաններին տիրոջ կարևեր խոցելուց հետո, ասում եմ,— թե նորա հետ խոսելու վերա ևս կասկած ունինքն։ Զարմանք, որ պ. Խաչակյանցը խառնափնթորում է և չէ հայտնում, թե — ո՞վի ում հետ խոսելու վերա է իմ կասկածը, և այդ բանի հետ ի՛նչ հարաբերություն ունի մենծատուններին և հոգևոր իշխաններին վիրավորությունը։ Ես ասել էի և ասում եմ այժմ ևս, որ մենծ կասկած և երկբայություն ունիմ մուշանների խոսելու մասին պ. Խաչակյանցի հետ։ Բայց նա, առանց լուծանելու իմ երկբայությունը, մեջ է բերում մենծատունների և հոգևոր իշխանների վիրավորությունը, ըստ ամենայնի անտեղի։ Շատ հին, մաշված ու արդարված խորամանկություն է, որ գործ է դնում պ. Խաչակյանցը, կամենալով հաճոյանալ մենծատուններին և մյուսներին, և մեզ որպես թե վատամարդիկ շինելով. բայց զուր է անհանգիստ լինում, իմ համար միևնույն է ազգությաց մենծատունների և իշխանների բարեկամությունը կամ թշնամությունը դեպի ինձ. ոչինչ հարաբերություն չունիմ նոցա հետ, և երբ ինքը պ. Խաչակյանցը, որպես մանկավարժ, ստիպված է ասխարան հին սովորությամբ յ

ասել էր պ. Կոմս Էմմանուելը։ Եվ պ. Խահակյանցը ի՞նչ տեղից իմանում է պ. Կոմս Էմմանուելի կարծիքը, մինչև անգամ նորա մտքից չանցած բաների մեջ. ուստի՞ գիտե, որ նա չէր նկարագրելու կասկածավոր մարդերի վիճակը, նրան ևս առակվելու լինեին դրանով, մի՞թե այս ևս Մուշան է ասել պ. Խահակյանցին։

Ես հավատացած եմ, որ նրան պ. Կ. Էմմանուելը մի պակասություն տեսանել իմ վերա, այնքան ազնիվ կլինի, որ նախ և հառաջ ինքը կհրապարակի նորան, ցանկանալով ավելի կատարելության մեջ տեսանել իմ արժանավորությունը. ևս ևս անխնա կպատժեմ պ. Կոմս Էմմանուելի պակասությունքը, նրան տեսանելիս, և հավատամ եմ, որ շնորհակալություն կստանամ նորանից։

Պ. Խահակյանցը ասում է, թե չգիտե մի այնպիսի ազգային ավանդություն, որ պատմեր մեզ, թե Մասյաց ոտքումը կա մի փոս ղժոխք անվանված հնումը. դորա մեղավորը ևս չեմ, ինչու չէ ուսանում, և նորենացու ասածի նման լինում է — աշակերտ հեղգ առ ուսումն և փուլի առ ի վարդապետել, նախ քան զոհասությունն ասուվածարան։ Պարոնը ասում է, «նրան կա ևս մի այդպիսի փոս, ապա ուրեմն Հայաստանը պատրաստել է նորան, յուր վանքերը և պարծանքը ուրացող մուրացկան որդոց համար». ևս հավելացնում եմ դորա վերա և ասս, թե — սուտ պարծեցող, աղքատ հպարտ, ոգևոր և կամակոր որդոց համար, որ միտ չդնելով յուրյանց հոգևկան չքավորության վերա, հրաժարակում են յուրյանց անձի առաստացած ամենայն բանով, տղայական մեծամտությամբ ոգիտանալով յուրյանց անանկությունը։ Այդ փոսը յուր խավարովը, որ քագավորում է նորա մեջ, կարող է լավ ապարանքի տեղ ծառայել օրսկուրանտների համար, կարծեմ, որ պ. Խահակյանցը ևս որպես օրսկուրանտների նիզակակից, կարողանա մի մութն անկյուն գտանել այդ տարտարոսի մեջ։

Զարմանք է, ինչպես չէ վախեցել պ. Խահակյանցը, թե մի գուցե պ. Կ. Էմմանուելի նկարագրած կասկածավոր մարդերի կարգը ընկնի, որովհետև երկբայությամբ խոսում էր նախաստացյալ փոսի վերա։ Պ. Խահակյանցը ասում է, թէ չէ ասել, որ Մասիսը բնակարան է մուշանների. ասելը ի՛նչպես կլինի, կոստղներ՞վ, մինչ խոստովանում է, թե Մասյաց դարևանդից Մուշան կանչել է և դադարեցուցել է նորա դպշանը,— նշանակում է, թե մուշայը կան Մասյաց դարևանդի վերա։ Իսկ այն բանը, թե «Հայաստանը ունի յուր ծոցումը քնքուշ մուշայը, որոց անմահ հիշատակները անդադար ողբում են և կոծում են աղգիս փառք և պարծանքը ուրացող մարդկանց գլուխը». ևս ամենևին չեմ հասկանում, թե ի՛նչ կամի ասել, որովհետև նայելով քերականական կանոններին, ուրիշ խոսքերով մինչև այն միտքը այսպես է դուրս գալիս, թե անմահ հիշատակները մուշաների, որ Հայաստանը ունի յուր ծոցումը, անդադար ողբում են և կոծում են ազգիս փառք և պարծանքը ուրացող մարդկանց գլուխը».— նշանակում է, Հայաստանի մուշաները չեն, որ ողբում

են, այլ նոցա անմահ հիշատակները։ Այսպես չէ կարելի խոսել, որովհետև բան անմտություն է։ Բայց արի տես, որ ես և իմ նման մարդիկ շատ, ինչ ասել և Հյուսիսափայլ կորիճ և անխարդախ օրագիրը, առանց կարոտելու վերացական անուններին գործակցությանը, առանց կարոտելու քրնքրուշ մուղանների գործակցությանը, ողորմ ենք անդադար օբսկուրանտների ինչվան գլուխը, և շատ կարելի է, որ մեր արտասուքից մի քանի կաթիլ բաժին հասած լինի և պ. Խահակյանցի գլխին։

Ինչ որ վերաբերում է պ. Խահակյանցի պեդագոգիայի մեջ ամենավերջին նոլությանը, ավելորդ է խոսել, որովհետև այդ պարոնը մի ասիական անմխիթար գպրոցում այբուբենը միայն ուսանելով կարող էր դուցե այբուբենը ևս ուսուցանել, բայց պեդագոգիան շատ կարծր բան է նորա դյուրափխրելի առաջների համար։

Գ. Խահակյանցը ասելով «երանի՛ կլիներ, որ և իմ բախտը հաջողեր այդ համալսարաններումը մի հիմնավոր կրթություն առնելու». համաձայնում է իմ խտակ սրտից ուված խորհրդին — մի բարեկարգ դպրոցում ստանալ մի հիմնավոր կրթություն, բայց երանի տալուց հետո խոկուն աշխատելով ծածկել յուր անկրթության մեղքը, շարունակում է ասիական կամակորությամբ.— «բայց մի մեծ կորուստ չունիմ». հառաչ երանի տվեց, հետո, կորուստ չունի. որի՞ն հավատանք։ Թեղճ մարդ. ինձ արելդ է կարծում, որովհետև անոնցի մեջ բերելով Առաքելու ասածը. «ինձ պլեղուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև զպղինձ, որ հնչէ, կամ իբրև զծնծղայս որ ղօղանջեն և այլն». և ինչ «մի՛ յուսամուն օտարոտիս և պէսպէս դանդաչիք», կամենում է խելքիս նստեցնել, որ լուռ մնամ նորա անկրթության և տեսութենից հառաչ աստվածաբանության վերա։ Ո՛վ է ասել նորան, որ կրթություն ստանալով պիտու էր անպատճառ սերը կորուսանել, մի՞թե կրթության հետևանքը անխուսելության է. ամենայն մարդ կարող է պահպանել յուր մեջ այդ աստվածային մասնը, ինչ ուներ, կրթությունը և լուսավորությունը աստվածային մասնը ավելի աճեցնում են և կերպարանագործում են սերը։ Բայց ես տեսանելով, որ պ. Խահակյանցը հոժարամիտ է շատ... մարդկերի հետ շարաշար գործ ունել սուրբ գիրքը, ըոլորովին հրաժարվում եմ նորան իմ զավակի կնքահայր շինելու մտքից, որովհետև կնքահայր ասացյալը պիտի լավ իմանա և ողջամտությամբ վարդապետ սուրբ գիրքը. պատճառ մկրտության ժամանակ, նա խոսում է և խոստանում է անբարբառ երեխայի փոխանակ. իսկ այն խոստումները, որ չէին հառաչեցնում գիտակցություններից, և նակ. իսկ այն խոստումները, որ չէին հառաչեցնում գիտակցություններից, և սուրբ գիրքը, աստվածային բանը ողջամտությամբ հասկանալուց, ընդունելի չէ մկրտության ժամանակ, որովհետև եկեղեցական խորհուրդներից ոչ մինը չէ կատարվում մեքենաբար միայն։

Մի զարմանալի բան ևս ասում է պ. Խահակյանցը, թե իմ քարոզությունը և նպատակը ամենևին համաձայն չէ իմ խոսքերին, ուրեմն իմ քարոզությունը և նպատակը այլ բան են, և խոսքերս այլ, շատ բարի. ինչ քարոզություն և նպատակ այդ պ. Խահակյանցը իմ քարոզությունը և նպատակը, ոչ ոքից իմացավ պ. Խահակյանցը իմ քարոզությունը և նպատակը, ոչ ոքից իմացավ

ոչ իմ խոսքերից, և ո՞չ ապաքեն այդ իմ խոսքերից բաղկանում էր իմ քարոզությունը և նպատակը. այլապես չէ կարելի. պատճառ, ի՛նչ խոսքեր կարող էր գործ դնել մի մարդ, ամեններին թարմատար նշանակությամբ, որ դուրս լիներին նորա միտք հասկացնող բառերից և որ չէին բացահայտում այդ մարդու նպատակը: Մի՞գուցե պ. Խահակյանցը պ. Դյումայլի կամ Յեններքի նման ամենայն բան գուշակում է գործ դնելով Մեսմերի արվեստը: Մեղա, մեղա, պ. Խահակյանցը խոսում է Մասյաց քնքուշ մուղաների հետ, որոնց համար պատմում են, թե շատ անգամ դյորվելով Մասիսի ձյունապատ գագաթից և լանջից, սառույցի տեղ ծառայում են ծարավի մարդու համար, որովհետև սառում են, թե այդ քնքուշ մարմինները ձգվելով որևիցե ջրի մեջ սառնիկ սառուցանում են նորան. երևի թե պ. Խահակյանցը փոստով սառնում է Մասյաց դարևանդից այդպիսի մուղայը և նոցանից իմանում է ամենայն բան....

Պ. Խահակյանցը անգիտանում է, թե ո՛րպիսի դպրոցներ կամին, որ լիներին Հայաստանում, նմին Ներսիսյան ազգային փորձիկ ուսումնարանը հավատարիմ չէ իմ սրտին ո՛վ գիտե ինչ պատճառով և այլն: Ինչ որ վերաբերվում է իմ ցանկությանը և դպրոցների որպիսությանը, պ. Խահակյանցը կարող է կարդալ Հյուսիսափայլի 8-երորդ համարում տպած պ. Կոմս Էմմանուելի Հիշատակարանի մեջ, որովհետև այն պարունի խնդրած դպրոցները նույնպես ցանկալի են ինձ, որպես և ամենայն հշմարիտ ազգասիրի: Իսկ Թիֆլիզի հոգևոր դպրոցը, որ Հայանի է անուանում Ներսիսյան (պտուղ արտասվաց Սիրիա կաթողիկոսի ի Հաղպատ), չէ կարող երբեք մի որևիցե դեպ ցույց տալ իմ մեջ, մինչև դա օրինավոր կերպով և իրավունքով արժանի լիներ դպրոց անունը յուր վերա կրելու: Այժմյան ժամանակումս, ըո՛զ նորա ուրիշ բազմամասնյա հնարքները, միմիայն այն ուղղությունը — ամենայն բան ուսուցանել օտարի լեզվով, հերիք պատճառ է, որ ամենայն հայի սիրտ օտարանա այդ դպրոցից և նայի նորա վերա, որպես մի խրտվիլակի վերա: Կարծեմ որ այժմ կհասկանաս պ. Խահակյանցը, թե որպիսի դպրոց կամեի ես իմ ազգի համար:

Պ. Խահակյանցը վիրավորվել է իմ ասելուցս մեծատուններին մասին, թե մարմին էին գործած, և մեղադրում է թե ինչո՛ւ համար շատ լավերի միջից, միմիայն մարմին գործողների վերա մատով շեմ ցույց տվել. պատճառն այն է եղել, որ մեր մեծատուններից մարմին չգործողները այնքան փոքր են և աննշան, որ չեն մտանում ընդհանուրի կարգը, իսկ մյուսները ընդհանրապես մարմին գործած ենք ճանաչում, որովհետև հոգու համար ոչինչ հոգաբարձություն չենք տեսանում նոցա կողմից: Եվ պ. Խահակյանցից ջատագոված գործերը այդ մեծատուններին, որ մեզ հայանի չեն, այն ժամանակ միայն կընդունենք, երբ պ. Խահակյանցը օրինավոր վկայությամբ կապացուցանե, ըստ որում երեխայական օգտաբախությունը բանականության դատաստանի առաջև հարգ չունի: Պարոնը ասում է. «ի՛նչպես կարելի է անմիջապես և անտարբեր պախարակել և այլն». չգիտեմ ի՛նչ է հասկանում — անմիջապես ասելով. ես, որ

պես և ուրիշները, հասկանում եմ այդ խոսքով այն իդեան, որ հասկացվում է լատինական immediate կամ ռուսաց непосредственно խոսքերով, որեմն մեծատուններին մասին միջապե՞ս հարկավոր էր խոսել, через г. Исаакяна, что ли? չեմ հասկանում։ Ամենևին վատ չէր լինելու պ. Խահակյանցին, խոսելուց հառաջ մի փոքր մտածել ուսանել, որովհետև ամենևին անգետ լինելով մտածության, կարելի չէ խոսել և ոչ իսկ բան հասկացնել։

Պ. Խահակյանցը հարցանում է. «Միթեպի, այդ ինչ ճշմարտություն է, որ ձեզ համար խաղալիք եր չինել անպատվելով դորա սուրբ անունը»։ Զարմանք չէ, որ չէ ճանաչում ճշմարտությունը, որովհետև սկզբից մինչև այսօր սուտը հաղորդություն չունի ճշմարտության հետ, խավարը լուսո հետ. բայց ես ավելորդ չեմ համարում հայտնել, թե ճշմարտությունը, որի դրոշակի տակ պինվորված է և իմ նվաստությունը է աստուծո ճշմարտությունը, անմահան ամենայն սուտքենից, խարդախություններից, կեղծավորություններից և այլ այսպիսի արատներից. է այն ճշմարտությունը, որ Հիսուսի քենից և այլ այսպիսի արատներից. է այն ճշմարտությունը, Քրիստոսի արյունով կնքվեցավ Գողգոթայի վերա, այն ճշմարտությունը, որ հաճո չէ աշխարհին, այն ճշմարտությունը, որին ատում են սուտ ազատ պատերը և օրսկուրանտները, որոնց մեջ մի չար բախտով տեսանում եմ նաև պ. Խահակյանցը։ Դա է այն ապառաժը, որի վերա ընկայս բոպեիս և պ. Խահակյանցը։ Դա է այն ապառաժը, որի վերա ընկնողը կփշրվի և քե ինքը մի բանի վերա ընկնի կհոսան։ Կարծեմ որ բավականո որոշ նկարագրեցի խնդրած ճշմարտության ինչությունը և բնավորությունը։

Նույնպես թող հայտնի լինի պ. Խահակյանցին, որ ես նորա բուն հայազեան ասած մարդերից չեմ կրած ո՛չ իրավացի և ո՛չ անիրավ նախատինք. գուցե այդ ես Մասյաց մուզանները պատմել են պ. Խահակյանցին, չգիտեմ. միայն եթե նորա քարոզած բուն հայազեանը,— մեր կարծիքով խավարի կուռքի չերմեռանդն դաբիրայրը, փորձ փորձեն այդպիսի մարդերից, այլ Բիդուտկալեից — Պոնտոսի եզերքից, ոչ եթե Մասյաց դարեվանդից, որ ես կփորձեմ դեռևս, եթե մինչև պ. Խահակյանցը փորձում է և կփորձե դեռևս, եթե մինչև ինքը պ. Խահակյանցը փորձում է և կփորձե դեռևս, եթե մինչև ուսանա յուր չափը։

Լևմոնտովի մարգարեին չեմ նմանեցուցել ես իմ անձը, այլ մեջ բերելով այդ ուսանավորի հատվածը, կամեցել եմ միայն ցույց տալ պ. Խահակյանցին, թե ճշմարտությունը հալածվում է աստուածային, բայց ցավելին այս է, որ այդ օրինակը ես հերիք եղած չէ պ. Խահակյանցին։

Պ. Խահակյանցը ասում է, թե մի քանի իմ նման, գուցե ևս առավել դիտուն անձինք կարողացել էին իմ մարդկորեն սխալանքը լուսաբանել և աղգի վերաբերյալ իյուր կարծյաց և վրիպակաց ճյուղերը խմասուեմք հատավել։ Գարձյալ մի նոր զարմանք. պատճառ, առաջին անգամ իյամբ հատավել։ Գարձյալ մի նոր զարմանք. պատճառ, առաջին անգամ հրապարակեցի իմ գրավոր վաստակը պ. Խահակյանցի հոգվածի տպատհրապարակեցի իմ գրավոր վաստակը պ. Խահակյանցի հոգվածի տպագրության ժամանակ, որ ես հրապարակած չունեի, դորանից հառաջ և ո՛չ մի տող բան տպած ու

նեի, որ պ. Խահակյանցի խելոքները կարողանային իմ սխալանքը լուսարանել. չգիտեմ ինչպես պիտո է հասկանալ այս բանը։ Երևի թե պ. Խահակյանցը երազում կատարված տեսել է այս իրողությունը, կամ, Մուշան ասել է Մասյաց դաբևանդից Ղզլար վազելով։ Ինչպես մեծ խորհուրդ և ազդեցություն ունի շրջակայքը մարդու վերա. լսելով պ. Խահակյանցի խոսքերը, «Իյուր կարծյաց և վրիպակաց ճյուղերը իմաստությամբ հապալվել», իսկույն երևում է, որ այդ պարոնը բնակվում է այդիների մոտ և անդադար տեսանում է ճյուղերի կտրատվիլը։ Բայց մի խորհուրդ ասեմ պ. Խահակյանցին, ես և իմ նման մարդիկ շատ հավատացած լինելով, որ չէ վերջանում շարը կտրատելով միայն նորա ճյուղերը, աշխատում ենք արմատը կտրել այդ շարին, որ իսպառ չորանա։ Բայց որովհետև պ. Խահակյանցը յուր իդեաները առնում էր այդիներից, ուստի չէր կարող այնտեղ այսպիսի գործողություն տեսանել։

Շատ մեծահոգի մարդ է պ. Խահակյանցը, մեծ շնորհ է ցույց տալիս ինձ «առանց դիտողության Թողնելով իմ անվերջանալի վեճը աբեղաների հետ»։ Մինը հարցանեմ թե ե՞րբ վեճ է բացել Շահրնդը աբեղաների հետ, չգիտեմ ինչ ունի պատասխանելու Ղզլարի մանկավարժը։ Ես հերքելով նորա այն երեխայամիտ խոսքը, թե «Հանգամանքը բոնի խլել են Խորենացու բերանից նորա ողբը», կցուրդել էի, թե ամենայն արդարությամբ արժա՛ն էր, որ Խորենացին գրեր, որովհետև վերագառնալով Ալեքսանդրիայից տեսել էր Հայաստանի ամենայն բանը գլխիվայր, և, ապացուցանելու համար, թե Խորենացու այդ ողբը գրելը պատուղ չէր մի բոպեական նեղսրտության, մեջ էի բերել նորա նզովքը կաթողիկոսների վերա և Շարք կաթողիկոսաց[24] անունով աշխատությունը, որ ոչնչացուցած է երևում աբեղաների ձեռքով։ Բայց թե լավը կամի պ. Խահակյանցը, Ղազար Փարպեցու Մամիկոնյանց տիրոջ Վահանին գրած նամակի երկու թերթերը ևս, վասն ի վերուստ են եղած դուն այդ աբեղաների ձեռքով, որովհետև նոցա մասին, բայց ոչ նոցա օգտի համար խոսում էր այնտեղ Ղազարը, ինչպես երևում է նախընթաց և հետևյալ բաններից։ Ես պատմել էի պ. Խահակյանցին աբեղաների անքրիստոնյա ընթացքը Մովսես Խորենացու խնկելի ոսկրների հետ, իսկ այժմ շոշափելի կերպով ցույց տալու համար, թե այդպիսի բան շատ մոտ էր աբեղաների հասկացողությանը, Թող պատմեմ այստեղ, որ երկու տարի առաջ առիական Տաճկաստանի մեջ, մի հայոց եպիսկոպոս գերեզմանից փորել ու հանել է մի հայ քրիստոնեի ննջեցյալ մարմինն և ձգել է շուներին առաջև, պատճառելով թե այն մարդը ավետարանական էր եղած։ Այս գործողությունը այնպիսի վատ տպավորություն գործել էր մինչև անգամ առաքինների վերա, որ փաշան պայծառապայլ Դուռնից հրաման խնդրելով առանձին գերեզմանատուն նշանակեց ավետարանական հայերի համար, որ չէ ենթարկվում հայոց առաջնորդի իշխանությանը։ Այս բանի մասին շատ խոսք և պրպտություն հառաջացավ այն ժամանակ եվրոպական և ուրս օրագիրների և լրագիրների մեջ. Թողում եմ այն մեծ գայթակղու-

Թյունը մատակա հայ ժողովրդին, որին մի շար բախտով անձամբ ան-ծին վկա եմ դառնվածե Գ. Խահակյանցը, այս տեսակ աբեղաներին անվանում է երանաշնորհ, բազմերախտ և արբազնագործ, և նոցա գործը, հիշատակ ճշմարիտ ազգասիրութեյան։ Իմ աչքումը այն մարդիկը, որ պարապում էին այսպիսի գործերով, ոչ թե միայն քրիստոնեյա չեն, ոչ թե միայն քահանա, կամ եպիսկոպոս չեն, այլև, մարդ չեն։ Վա՜յ և դառապարտութեյուն դոցա հավիտենական։ Եթե պ. Խահակյանցի համար այդ, քաղաքական և եկեղեցական օրենքներով, որպես առակալի արբազնգործութեյուն, դառապարտված գործերը են հիշատակ ճշմարիտ ազգասիրութեյան, եթե այդ գործակատարքը են բազմերախտ, երանաշնորհ և արբազնագործ, Ո՛ղ նոցա բարեխոսութեյունը անպակաս լինի պարոն Խահակյանցի գլխից. հետի՜ մեղանից. քա՛վ լիցի. անա՛թեմա։

Գ. Խահակյանցը Խորենացու 4,000 տարեկան շինելու մեղքը ձգում է յուր վզից գրաշարի վիզը. խեղճ ողորմելի գրաշար, քանի՛ քանի հեղինակի և գրողների մեղքը հանձն ես առնում և քավում ես դու, ի՛նչ պիտո է առնել. երևի այդպես նախասահմանված է նոցա վիճակը։ Պարոնը յուր ներկա հոդվածի վերջումը կամելով ցույց տալ յուր արատեսութեյունը և մի մասնով արդարացնել 2,600 տարու փոքրիկ և աննշան սխալը, հրավիրում է ինձ կարդալ Հյուսիսափայլի 4 ամսատետրակի 338 երեսը, ուր, նորա ասելով, պ. Կոմս Էմմանուելը Մեղուի ապրիլի 19-ին դուրս եկած թերթը, կարդում է Մոսկվայի մեջ ապրիլի 20-ին։ Ես բացի Հյուսիսափայլի վերոհիշյալ երեսը և տեսա, որ Կոմս Էմմանուելը ոչ թե չէ կարդացել Մեղու լրագիրը, այլ ամենևին կամք ես չունի կարդալու, որովհետև պատասխանում է, պարոն Խ....ին, թե հիմարութեննների կարդացող չէր, ընդելով, որ պ. Խ. գովում էր Մեղուն և նորա հրատարակող երևելի ուսումնականը (?). բայց թե պ. Խահակյանցը, ինչպես է կարդացել, որ տեսել է այնպիսի բան և ուսո՞ւ գիտե, որ պ. Կոմս Էմմանուելը բնակվում է Մոսկվայում. ճշմարիտ, արժանի է զարմանալու։ Մի՞թե այդ ես Մասյաց դարևանդից Մուշան է ասել պ. Խահակյանցին։ Ճըշմարիտ, երջանիկ մարդ է պ. Խահակյանցը, որ այդպիսի բարեկամութեյուն ունի Մասյաց դարևանդի մուշանների հետ. բայց ավելի երջանիկ լինելու չէ՞ր արդյոք նա, եթե լռիկան լիներ բարեկամ, քան թե մի վնասակար էակ։

Թող բարյա՛վ մնա պ. Խահակյանցը, բայց մինչև ցվերստին տեսութեյուն, որովհետև ես չեմ կարող բաժանվիլ նորանից. միանգամ սիրել եմ։ Եվ ես մի վատ սովորութեյուն ունիմ, որ եթե միանգամ սիրեմ, ասես մյուս անգամ բաժանվել լինո՞ւմ է. ինչ պիտո է առնել, գիտեմ, վատ սովորութեյուն է, բայց միանգամ ևեթարկվել եմ դորան, ճար չկա։

Ցավելին այս է, որ պարոն Խահակյանցը յուր շրջանառութեյունը հինգ ամիսը միանգամ կատարող մոլորակներից է. շուտ շուտ չէ երևում, ապա եթե սխալվել եմ և կոմետը ընդունել եմ մոլորակի տեղ, որ եթե այս

անգամ ցած գնա հորիզոնից, ու մյուս անգամ չերևի, այն ժամանակ վա՛յ քեզ Շահրեզ. շատ ցավերիդ վերա մի մեծ ցավ ևս պիտի հավելանա։

Ս. Խ. ՇԱՀԲԵԳ

Հատոր 3

Սեպտեմբերի 13, 1858, Գոլոտվա։

Պարոն ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԵԼ.

Ինձ վաղուց հայտնի է, որ Հիշատակարան ևս գրում և կցանկանայիր իմանալ որևիցե անսովոր բան։ Այս երկու ամսումը պատահելով մի քանի վաճառահանգեստների մեջ, տեսա մի թափառական գազանանոց, որի մուտքը արժեր կես մանեթ։ Շուտով հատուցի և մտա, բայց ի՛նչպես զարմացա վերահասու լինելով նորա տիրոջ խարեբայությանը. դորա գազանանոցի կենդանիքը շինովի էին, որ շատ քիչ փորը հայտնի են առաջին անգամ աչք ձգելու ժամանակ։

Սառափիկ խայտառակություններից մինը այն էր, որ ցույց տվեց մի թռչուն կազվարի անունով, բայց ի՛նչ կազվար, մի մեծ թռչունի վերա, որ ես որոշ չկատեցի, որի մասին ոմանք արագիլ և ոմանք մարահավ ասացին, գրել է թաղիքից (քնչայից) շինած վահանի նման բան, այլև շրջապատելով փետուրներով և ներկելով ոտքերը, հավատացնում է, թե մանուկ կազվար է։ Ինչպես կարելի է, որ արագիլը կամ մարահավը թևև ծածկված էին վահանի տակ, չհայտնեին յուրյանց ինչ լինելը։ Կառավարությունը իմանալով այս խարդախությունը, դուրս վանեց վաճառահանդիսից։ Լսած էի, թե կենագրիայում էշ ներկում են, բայց արագիլից և մարահավից կազվար շինել, ծածկելով մի կտպիտ վահանի տակ, ճշմարիտ լսած չէի։

ՁԵՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ ԿԱՐԴԱՑՈՂՆԵՐԻՑ ՄԻՆԸ

Ահա իմ ստացած ծանոթությունքս և նամակներս, բացի սորանից պիտի ասել, որ նորերումս հանդիպեցա պ. Բեզպագինին, որ նոր էր եկել մի այլ քաղաքից, բայց ի՛նչպես վշտահար, վատած և ցավագարշած։ Հարցանում եմ.— Պարոն, ի՛նչ է պատահել քեզ, մի գուցե հիվանդ էիր, որ ննջարկվել ես այդպիսի փոփոխության։ Ինձ պատասխանում է. «Ես անհավատ մարդերի հետ գործ չունիմ. դու ծիծաղում ես իմ վերա»։

— Ինչ ծիծաղելու բան կա. ես քեզանից հարցանում եմ քո այդպիսի փոփոխության պատճառը...

«Մի՞թե մոռացել ես իմ տնտած երազը»,— պատասխանեց պ. Բեզպագինն։

— Չեմ մոռացել, բայց ի՛նչ հարակցություն կա քո տկարանալու և այդ ցնորքի հետ։

«Ցնորք... ցնորք. բայց այդ բանը մաշում է իմ հոգին։ Դորա հետ միացավ և այժմյան պոչավոր աստղի երևիլը. այդ ևս վատ բան է նշանակում, այնպես չէ՞»։

— Այնքան վատ, որքան քո տանից դուրս գնալով երևելը փողոցի մեջ։

«Աղի քո հետ խոսիր. ի՛նչ մարդ ես. ինձ և այդ աստղը մի շինեցիր. խղճմտանք չունի՞ս, աստուծուց չե՞ս վախենում. ես մի մեղավոր մարդ. բայց նա սուրբ...»

— Ինչի՞ գիտես դու նորա սրբությունը։

«Մեր սուրբ չլիներ, ի՛նչ է շինում երկնքումը»։

— Քեզ ո՛վ է ասել, որ նա երկնքումն է. նա մեղանից շատ հեռի չէ, մեր համեմատանք միեզերքի անչափելի տարածության հետ։

«Դու ինչ կամիս ասա՛, ես էֆիմերդն գուա և նայեցի, շատ վատ վատ բան է խոստում այս և գալոց տարու համար»։

— Եվ այդ բաները, ամենայն տասնյորկու տարու մեջ միանգամ պիտի կրկնվին, այնպես չէ՞։

«Ի՛նչպես»։

— Ինչ որ 1858-ի մասին գրում է, նույն բանը գրում է և 1870 թվականի համար, որովհետև ընդամենը 12 գլուխ է այդ ծակ մարգարեությունը։

«Թերահավատություն... թերահավատություն... աստված քավյա՛ զիս զմեզաւորս... աստված քավյա՛»...

Այսպիսի աղոթքներով հեռացավ ինձանից պ. Բեզդադեն. բայց այս անգամ, ինչպես տեսանում եք, շատ կակուղ վարվեցավ. բերան չբերեց յուր բեզդադեությունը կամ 3,000 մանեթի բանը։

Ես այդպես ևս ապատում էի. այն մարդը, որ մի բանից այրվում է, վեր է թռչում, բայց չէ մնում վերևումը, իսկույն ցած է գալիս. այդպես ևս բարիացող բեզդադենները, որոնք կամաց կամաց տեսանելով յուրյանց ընդդիմության ունայնությունը, քարշում են պոչերը։

Ը

Նոր տարի—Բեզդադեի նամակը—Տոփատարի բավանդակությունը—Բեզդադեի ազգականությունը—Հայկական բնատուռ Մոսկվայի մեջ—Սուրբ Մեսրոպի գերեզմանի այցելուի նամակը—Գամառ-Քաթիպայի պահանջողության պատասխանը։

Անցավ տարին... անցավ, և մենք քո հետ, պատվելի ընթերցող, մի տարով ևս ծերացանք... Նոր տարու առավոտը հազիվ լուսացած, և ահա նոր տարի շնորհավորողը գլուխ գոտրելով շափում են փողոցները... Ես սկսար կազմվածքի տեր մարդ լինելով, չեմ կարող մասնակից լինել այդ անխորհուրդ այցելություններին, վասնորո, տանը նստած, առավել լավ եմ համարում մի փոքր մտածել քո հետ, պատվելի ընթերցող,—

մտածել նոր տարու վերա։ Պիտի ասես, ի՛նչ մտածելու բան կա. նոր տարին, նոր տարի է, դա մի այնպիսի օր է, որ ուրախացնում է ամենքիս սիրտը։ Այդպես չէ, այդ արտաքին ուրախության տակ, արդյոք ո՛րքան տրտմություններ և վշտեր կան թաքնված։

Նոր տարին ինքնըստինքյան ուրախություն չէ և չէ կարող մեզ ուրախություն պատճառել, եթե չկային մեր մեջ ուրախացուցիչ նյութեր— մեր բարի գործերը։ Անհատական տոները բերում են յուրյանց հետ մի պայմանավոր ուրախություն. այդ օրերում շատ վշտակիր մարդիկ հարկադրվում են պատշաճից, ուրախության քող ձգել յուրյանց դառն կամ թեթև երեսի վերա. այդ օրերում ուրախ է ցույց տալիս յուրյան մեծատունը, որի լեզին պատռատվում էր նեղսրտից, թե ինչո՛ւ համար ձեռքից վախուցել է այս կամ այն օգտաբեր գործը. այդ օրերում ուրախանում է և աղքատը, յուր վերջին գահնկանը դնելով սեղանի վերա յուր ընտանիքի և զավակների առաջև, առանց մտածելու, որ գալոց օրի համար չուներ հացի գին անգամ։ Բայց մի ուրախություն, որի որպիսության և պատճառի մասին չէինք կարող հաշիվ-ու համար տալ մեզ, որ և ֆոսֆորի նման մի բոպե, մի ակնթարթ վառվելով, մյուս րոպեում թողնելու էր այրվածքը յուր անպիտան հոտով — տխրություն և վիշտ, այդպիսի ուրախությունը երեխայական է և անեծք։ Մենք երբեք իրավունք չունինք ուրախանալու առանց օրինավոր պատճառների, և այդ պատճառքը էին մեր գործերը։ Մինչև գործած չէինք այնպիսի գործեր, որոնց վերա արժան էր ուրախանալ, մի սուտ և երեխայական ուրախություն, որով պիտի ուրախանայինք, մեզ շատ վնասակար կարող էր լինել, որովհետև մեր ձգտողությունը թուլանում է ուրախության ժամանակ. պատճառ, ուրախությունը հետևում է լրութիններից, իսկ լրությունը մահ է գործության և ձգտողության համար։ Դորա հակառակ, մեր գործունեությունը, ձգտողությունը, ուժը և զորությունը այնքան շատանում է, այնքան սաստկանում է, որքան շատանում են և սաստկանում են կարիքը և հարկավորությունքը։ Այս սահմաններից երևում է ահա, որ նոր տարում ևս, ինչպես մյուս այլ հանդիսավոր օրերում, իրավունք ունի ուրախանալու այն մարդը, որ ուներ ստուգապես ուրախացուցիչ գործեր։ Ուրեմն, սիրելի ընթերցող, մենք քո հետ սահենք միմյանց եղբայրաբար, թե ի՛նչպես էին մեր գործերը անցյալ տարում. արդյոք ա՞յնպես, որ հանդիստ խղճմտանքով և պայծառ ճակատով կարող էինք ձեռքերս տրտերիս վերա դրած վկայել, թե ինչ որ մեր խելքը կտրում էր, թե բարի՛ է, կատարել ենք ինչքան մեր կարողությունը կտաներ, մի բարի գործի մասնակից լինելու, եղել ենք, թե տրա հակառակ, մեր սրտի և հոգու դատավորը, այս հանդիսավոր րոպեում, մի քանի դատապարտող խոսքեր ուներ մեզ ասելու։ Արդյոք անցյալ տարում ճանաչե՞լ ենք մեզ, թե մարդ ենք, ուրեմն և արժան էր ապրել և մարդկության համար, հրաժարվելով եսական անձնասիրություններից։

Առանց այս բաները քննելու, նոր տարին նույնպիսի օր է, ինչպես

մեծ պահքի երկուշաբթին. օրի կանաչը և կարմիրը ո՛չ ոք չէ տեսել մինչև այժմ։ Եթե իմ մասին հարցանեք, ես կասեմ ձեզ, որ իմ կյանքը, սկսած այն օրից, երբ հիշում եմ ինձ, մինչև ներկա րոպես, գտանվում է միօրինակ տխրության մեջ։ Ինձ ո՛չ մի բան չէ կարող ուրախություն պատճառել բացի նորանից, որ եղած էր կամ լինում էր մեր տարաբախտ ազգի օգուտ համար. իմ անձնականը և առօրյականը այն օրից եմ ես ուրացել, երբ աչքս բանալով, բարոյապես նայել եմ մարդկության վերա։ Այս պատճառով, որպես իմ մասնավոր, ինձ միայն վերաբերելի վիշտը չէ կարող ավերել այն ուրախությունը, որ ուրախացել էի մի ազգային ուրախության գործի վերա, նույնպես և անձնական ուրախությունը չէ կարող փարատել այն ազգային տխրության խավարատեսիլ քանձր ամպերը, որ շատ անգամ նստելով ծանրանում են սրտիս վերա։

Ո՛հ, ահա երեսուն նոր տարիք անցուցել եմ ես. նոցանից մինչև քսանը նույնպես ուրախացուցել են ինձ ինչպես այժմ շատ մարդերի. բայց այս վերջին տասն նոր տարիքը, ի՛նչ բաների վկա են եղել իմ հետ միասին, ի՛նչ ողբալի և արտասվելի գործերի ականատես, որ գործվել էին մեր խնայելի ազգի մեջ։ Ո՛րքան մարդիկ, մեզ ծանոթ ու անծանոթ ավարտել են յուրյանց երկրավոր կյանքը, քանի՛ բարեկամք սուգ և արտասուք կտակել են մեզ։ Քանի՛ քանի անգամ, ցավելու համար պատահել է մեզ տեսանել այնպիսի մարդիկ, որ անարգանք էին մարդկության, որ ցանկանում էին հասանել հերոստրատյան պարծանքի և հիշատակի, որ մտածում էին խայտառակության սանդուղների վերայով բարձրանալ մինչև անմահ փառքի սահմանքը։ Տխո՛ւր տեսարաններ. այստեղ կեղծավորը, թափելով յուր մարդահաճության թմրեցուցիչ թույնը, մտածում է երես գտանել, անուն ժառանգել. այնտեղ, գողը և ավազակը սորան նորան ճաշերով և ընթրիքներով յուր մոտ քարշելով կազմում է մի ընկերություն յուր հետ, որպեսզի դուրս չմնա մարդկային ընկերութենից, որպեսզի այդ միայնությունը չդառնա նորան հանցանքի ցուցակ ամեն մի աչք ունեցող մարդու համար։ Այլ տեղ, մարդիկ, վաղուց ահա հոգիքը գրավ դրած սատանայի մոտ, մեռանելու ժամանակին յուրյանց անունը կտակում են աստղերին. զո՛ւր աշխատանք։ Մյուս տեղ, խելակորույս և խավարապաշտ մարդիկ փախչում են ճշմարտություններից, այնպիսի կամակոր և անձնաբռնադատ զորությամբ, որպես կփախչեր մի ավազակ յուր մուժն և խոնավ բանտից. այլ տեղ, լուսավորության և մարդկային ազատ մտածության թշնամիք, դարերի գործարանք են բացում անտանելի ծանր շղթաներ պատրաստելու և, եթե կարելի է, բոլորովին ֆանդեզլու մարդկային բանականության օրինավոր ազատ հոսանքը։ Տեղ տեղ, բայց շատ փոքր, երևում են այլ մարդիկ, որ հոգիացած աստուծո շնչով և արձակած յուրյանց ձյունի պես սպիտակ թևերը, թռչում են դեպի անմահության տաճարը... Թռչում են վերևից, բարձրից, ատքի տակ տեսանելով այն բոլորը, որոնք յուրյանց նյութական ծանրության պատճառով, արդեն նյութոնի օրենքով կապված էին երկրագնդի կենտրոնի հետ...

Այսպիսի բաներ պատահում են տարու սկզբից մինչև նորա վերջը: Շատ անգամ լսվում են օդի մեջ, հարատահարված մարդերի ողբերը և հառաչանքը, նույն միջոցին և օդը հնչեցնում է հարատահարող բռնակալների ուրախական բացականչությունքը: Հավիտենակա՞ն ամոթի ժառանգ նորա, որ ընդում են անզորի աչքերից մի քանի արտասուքի կաթիլներ:

Ասես ին այս նոր տարում ես առավել ուրախ եմ, քան ին անցած նոր տարիներում. պատճառ. նախընթաց տարին անխորհուրդ անցած չլինելով մեր սիրական ազգի համար, նորը բարի բարի հույսեր խոստանում է մեզ: Անցյալ տարում դուրս ցայտեց առաջին անգամ հայերի համար Հյուսիսայինն փայլողությունը յուր պայծառ ճառագայթքը, անցյալ տարում լայնարձակ ասպարեզ ստացավ ժողովրդական կենդանի խոսքը, որ է ազգի բարոյական կյանքը և հոգին: Անցյալ տարում երևնցավ մեր ազգի մեջ մի բանակատուիյան դատաստան. փա՛ռք և պարծանք նորա պաշտոնյաներին. այդ տարում խլրտվեցան մի քանի մտքեր, որոնք մեծ հույսեր տալիս են հայերի հառաջադիմության մասին:

Այն բանձր և խավարատեսիլ ամպերը, որ դարերով ահա հավաքվելով և լեռնանալով պատել էին հայկական բարոյականության հորիզոնը, այսօր, Հյուսիսափայլի ճառագայթների տակ, նկատում ենք փարատվածանցան գիշերային մրրիկները, և փիլիսոփայական ծանրաչափը (բարոմետրը) դուշակում է մի գեղեցիկ առավոտ: Այս բոլոր բաները վառում են սրտիս մեջ մի փոքրիկ լապտեր ուրախության, որ անշիջանելի կմնա և լույս կտա ինձ մինչև անգամ և այն խավար օթևանի մեջ, ուր նախախնամության անտեսության համար պիտո է մնանք ապաստելով հրնշուակապատ որսորդության փոդահարության:

Պատվելի ընթերցող, ես քո մոտ չեկա նոր տարին շնորհավորելու, դորա փոխանակ մտածելով այս բաների վերա և ձգելով Հիշատակարանիս մեջ, ահա քեզ ես պատճառ եմ տալիս մտածելու, որ առավել օգտակա՛ր է քեզ, քան ին իմ երեկոպակիչյան այցելատոմսակը, որ, անտարակույս քեզ տանը չգտանելով, ինդնելու էի քո նախասենյակում: Այս կարճ հառաջաբանությամբ սկսանում եմ ահա իմ Հիշատակարանի տարեկան շրջանառությունը, որ հիվանդության պատճառով քանի ամիս արդեն մնացած էր բարձի ինդի:

Առաջին մարդու անունը, որին պիտի պատահենք Հիշատակարանիս մեջ, Բեզդատեն է: Բեզդատն չդարձավ, գլխներս փորձանք դարձավ, կարող եք ասել. ի՛նչ պիտո է առնել, այսպիսի Բեզդատենների պարտական ենք ցույց տալ ամենայն մարդկային կարեկցություն, առանց զղվելու և հետ քաշվելու: Անցյալները գրում է ինձ մի այսպիսի նամակ:

ՓԱՌՈՆ ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԻԼ,

«Շնորհավորեմ քո անբախտությունը, որի վերա ուրախացել եմ խիստ աշատ. աստված կյանք տա դորա պատճառին: Փառք աստուծո, ազատվե-

«ցա քո ձեռքից, ազատվեցա քո Հիշատակարանից. մնաս բարով հավիտ-
«յան. աստված քեզ դատավոր։

ԲԵԳԶԱԴԵ»։

Ոչինչ բան իհարկե չեք կարող հասկանալ սորանից, պատվելի ընթերցող, որովհետև ես ևս չհասկացա. պատճառ, ո՛չ մի անբախտություն չէր պատահել, որ ինձ վիշտ պատճառելով կարողանար ուրախացնել այդ մարդկային նախատիճը (այս է Բեգզադեի ճիշտ սահմանը)։ Բայց մի փոքր համբերություն. կհասկանաք կարդալով Հիշատակարանիս հետևյալ տողերը, որովհետև ես ևս հասկացա։

Մի քանի օր սորանից հառաջ, գալիս է իմ մոտ ծանոթներիցս մինը, որին դուք չեք ճանաչում,— վաստորս ձեր համար միևնույն է, թեև ես այդ իմ ծանոթը անվանեմ Գուլի-Շամամամ,— և այսպես գալով իմ մոտ պատմում է ինձ Գուլի-Շամամամն, թե պ. Բեգզադեն, անշափ ուրախացել է լսելով, իբր թե հորնղբայրս պատվիրել է ինձ ներս չբերել Հիշատակարանիս մեջ պ. Բեգզադեն, կամ նորա գործերը[25]։ Այդ իրողությունը ահա, պ. Բեգզադեն համարել է ինձ մի մեծ վատաբախտություն, իսկ յուր համար մի ծայրագյալ երջանկություն։

Այսքան պիտի իմանալ, որ հորնղբայրս ինձ ոչինչ չէ ասել, որովհետև երբեք չեմ ներգործել նորա կամքին ընդդեմ. բայց պ. Բեգզադեն, իմանալով որ ես տկար մարդերի կողմից բամբասանքի տակ եմ ձգել իմ անձը, եզրակացուցել է թե հա՛, այս է որ կա, կոմս էմմանուելի հորեղբայրը կկապե նորա բերանը։— Հրամերես, միայն քո ցանկությունն էր պակաս այդ բանի համար։

Սպասի՛ր, պ. Բեգզադե, ես քո դրանը կչորեմ մի օր, և ինչպես նախ և հառաջ գորգս (խալիչա) կփռեմ և լվադեղ (персидская ромашка) կցանեմ նորա չորս կողմը, որ միջատները չհամարձակվին կենդանի մնալ գորգերի վերա, թո՛ղ թե անհանգիստ առնել ինձ յուրյանց եղջերային դարանակալ խայթոցներով...

Բայց Գուլի-Շամամամն չէր եկած իմ մոտ քսուքյան համար, չէր եկած, որ պատմե պ. Բեգզադեի հիմարաբանությունքը, նա մի բարի տղա է և բարի սրտով. նա եկել էր հարցանել ինձանից, թե ի՞նչ բան է Տրավատոր ողբերգությունը, որի մասին կարդացել էր մի լրագրում, թե անդադար ձևացնում են թեատրոնական բեմի վերա։ Զեզ հայտնի կլինի պ. Շահբեգի ինձ գրած նամակից, որ ես շատ սիրում եմ այդ ողբերգությունը, վաստորս մեծ ուրախությամբ պատասխանեցի Գուլի-Շամամամային, թե այդ ողբերգությունը պ. Վերդի երաժշտի բոլոր երաժշտական գործերից պատվականն է։

— Բայց միտքը ի՛նչ է,— հարցանում է Գուլի-Շամամամն։

«Մի կոմս,— պատասխանում եմ,— խարույկի վերա այրում է մի ժամանակ մի ցիգան կին, որպես կախարդ և գող. այս կինը ունենում է մի դուստր Ազուչենա անունով։ Մայրը կրակի մեջ այրվելուս ժամանակ, մահ-

վան դռնում կանշում է և կտակում է Ազուշենային, վրեժխնդիր լինել յուր մոր մահի համար. ողորմելի կնոջ վերջին խոսքերը լինում են վրեժ, վրեժ. ուռող և մաշող կրակը կապում է նորա լեզուն...

Դուստրը կամենալով կատարել յուր մոր կտակը, գնում է մի օր կոմսի տուն և գողանում է օրորոցից նորա որդին, որ տանի այրն կրակում և դրանով հանե մոր վրեժը: Բայց այդ միջոցին Ազուշենայի գրկում լինում է յուր որդին, և այսպես, երկու երեխայքը գրկի մեջ գնում է և մոտենում խարույկին. կամենում է ահա ձգել կոմսի զավակը կրակի մեջ, բայց նայելով անմեղ երեխայի վերա, խղճահարվում է. գութը հաղթահարում է վրիժական հոգին: Հանկարծ պատկերանում է նորա աչքի առաջև նորա մայրը, որ խորովվելով կրակի վերա, բոցերով ամենևին շրջապատված մեռանում է ահա, և կյանքի վերջին շնչումը, այն սոսկալի մահու տառապանքի միջոցին, ողորմելի ձայնով բողոքում է դեպի յուր դուստրը, հանձնում է նորան յուր մահու վրիժառությունը... Ազուշենայի ականջին դարձյալ լսվում են մոր վերջին խոսքերը վրեժ, վրեժ: Խեղճ Ազուշենան համարյա թե խելակորույս շտապում է այրել կրակի մեջ կոմսի որդին... մանուկը մի րոպեում չքանում է բոցերի մեջ: Բայց ի՛նչ հուսահատություն, ի՛նչ ողբալի բան, երբ Ազուշենան . զգաստանալով տեսանում է յուր մոտ դրած կոմսի զավակը ողջ և առողջ: Ազուշենան խելագարությյան մեջ այրեց յուր սեփական որդին: Ինչ պիտո է առներ, թշվառ Ազուշենան անուցանում է կոմսի որդին յուր զավակի պես, անվանելով նորան Մանրիկո, և ոչ ոքի չէ հայտնում յուր գաղտնիքը:

Երիտասարդ տղա դառնալով Մանրիկոն, սիրահարվում է մի Լեոնորա անունով օրիորդի վերա, որի վերա սիրահարված էր և կոմսի մյուս որդին: Երկու հակառակորդքը միանգամ հանդիպում են միմյանց Լեոնորայի ներկայությամբ, կոմսի որդին ահ է տալիս, թե կսպանե Մանրիկոյին, այն պատճառով, որ համարձակվել էր սիրահարվիլ մի օրիորդի վերա, որի հետ ինքը, երիտասարդ կոմսը միտք ուներ ամուսնանալու: Այս խոսքերը սեղիք են տալիս մենամարտության. քաջ և հաջողաշարժ Մանրիկոն բարձրացնում է սուրը, որ սպանե յուր հակառակորդը, բայց մի ձայն վերևից կանչում է նորան. «խնայիր, խնայիր»:

Այդ րոպեից կոմսի որդին և Մանրիկոն դառնում են միմյանց թշնամի: Կոմսի որդին հրատարակում է մի սուտ համբավ, որպես թե մեռած էր Մանրիկոն, որ Լեոնորան հարկադրվի ամուսնանալ յուր հետ: Բայց օրիորդը ընտրում է կուսանաց վանք գնալ. այս բանը Մանրիկոյին հայտնում է մի նամակով նորա բարեկամներից մինը, նամակը առանում է նա այն ժամանակ, երբ մայրը առաջին անգամ յուր կյանքումը պատմում էր Մանրիկոյին յուր և մոր դժխեմ անցքը: Մանրիկոն գնում է դեպի վանքը և տեսանում, որ երիտասարդ կոմսը խոսում է Լեոնորայի հետ. այստեղ Մանրիկոն յուր բարեկամների օգնությամբ ցանուցիր է առնում կոմսի զինվորքը և ձերբ է բերում Լեոնորան: Կոմսը հավաքելով յուր բա-

նակը, մտածում է պաշարել բոլորովին Մանրիկոյի բնակութիւնը և, խլելով Լեոնորան, սպանել Մանրիկոն։

Այս միջոցին Ազուչենան ընկնում է կոմսի գինվորների ձեռքը և հարց ու փորձի ենթարկվելով, որպես կասկածավոր ցիգան կին, կապվում է շղթաներով. կոմսը շատ ուրախանում է իմանալով, որ Ազուչենան յուր հակառակորդի մայրն է։ Երբ Ազուչենային շղթաներով կապած տանում են Մանրիկոյի տան առաջից գնալի բանտ, որդին տեսանում է նորան և վազում է փրկել. բայց և ինքը ընկնում է թշնամու ձեռք և բանտ է դըրվում մոր հետ միասին։ Կոմսը վճռում է որդին գլխատել, իսկ մայրը այրել կրակի մէջ։

Լեոնորան իմանալով այս մոտակա մահու վտանգը, գնում է բանտի մոտ և ողորում է յուր սիրականի տարաբախտութիւնը։ Մանրիկոն բանտի աշտարակից հայտնում է նորան, թե ոչինչ մյուս փափագ չուներ, բայց միայն յուր սիրականին մի հրաժարական ողջույն տալ։ Հանկարծ բանտի մոտ գալիս է կոմսը. Լեոնորան խնդրում է ողորմութիւն, կոմսը հրաժարվում է փրկել որպես Մանրիկոն, նույնպես և նորա մայրը։ Բայց երբ որ շատ աղաչում է Լեոնորան, կոմսը ասում է, թե միայն սիրու գնով կարող էր Լեոնորան ստանալ նոցա փրկութիւնը։ Լեոնորան երկբայում է... բայց մտածելով, թե յուր պատճառով պիտի մեռանին անբախտ բանտարկվածքը, հոժարում է։

Իսկույն գնում է նա բանտ և հայտնում է Մանրիկոյի նոցա ազատութիւնը. Մանրիկոն իմանալով ազատութեան պայմանը, մերժում է որպես այդ առաջարկութիւնը, նույնպես և Լեոնորան, լավ համարելով մեռանել, քան թե տեսանել յուր սիրականը երիտասարդ կոմսի գրկում։ Լեոնորան աղաչում է շատել յուրյան։ Այս բոլորը լսում է կոմսը բանտի մյուս սենեկից, և, նորա մտանելով այն սենյակը, ուր էին մայր ու որդի բանտարկվածքը, հրամայում է դահճին գլխատել Մանրիկոն։

Ազուչենան, ջլախտական ամբոխմունքից հետո թուլացած լինելով, քնած է այդ միջոցին. Մանրիկոն տանում են գլխատելու... Զարթնում է Ազուչենան և չտեսանելով յուր որդին, աղաղակում է... Նորան ասում են, թե տարան Մանրիկոն գլխատելու. նա կանչում է կոմսին, դադարեցնել պատիժը, բայց կոմսը հայտնում է, թե ամենայն բան վերջացրած էր արդեն։

Այնուհետև ձայն է տալիս Ազուչենան, «իմացիր, կոմս, որ դա քո եղբայրն էր... իմ մոր վրեժը դուրս է եկած արդեն...»

Մինչդեռ ես պատմում էի այս բանները, Գուլի-Շամաման աչքերը անկած նայում էր երեսիս, ժամանակ առ ժամանակ բացականչելով։ Երբ ավարտեցի ես իմ պատմութիւնը, ասաց.— Զարմանք բան, ինչպես կարողացել է Ազուչենան օտարի զավակը, մայրական գիով և խնամքով սնուցանել յուր որդու պես. բայց ինչ... պատահում են այդպիսի բաներ...

« Ինչպես թե պատահում են. դա շատ հազվագյուտ կանացի սիրտ

է, որ կարողացել է այդպիսի քնքշությամբ խնամարկել յուր թշնամու որդին», ասում եմ ես։

— Իսկ ես ասում եմ, որ կան այդպիսի օրինակներ, և չէ պիտո հեռո տեղերում որոնել. մեր մեջ ևս կա մի դորա նման բան։

«Ինչպե՞ս»։

— Դու գիտես պ. Բեգզադեի ազգաբանությունը։

«Ո՛ր տեղից պիտի իմանամ»։

— Լսիր ուրեմն. Բեգզադեի մոր հղության ժամանակ, նորա հայրը ութ ամսական հղի թողնում է յուր կինը և գնում է օտար աշխարհ, խիստ պատուիրներ տալով յուր կնոջը զգուշանալ յուր առողջությանը, որ անփորձ ծնանի մանուկը։ Որովհետև աշխարհի երեսին ամենայն բան լինում է մեր ցանկության հակառակ, և ինչ բան ավելի պահպանես, այն բանը ավելի վտանգների տակ է ընկնում, այս օրենքի հիման վրա ևս տիկին Բեգզադեն մի որդի ծնանելով, երկու օրից հետո խեղդում է նորան, անզգուշությամբ քնելով նորա վերա մահճի մեջ։ Ողբ, լաց, աղաղակ, բայց այդ բոլորը չէին կարող հարության տալ մեռած մանուկին։ Մարդ ուղարկելով մանկաբարձի քամակից, հրավիրում է յուր մոտ և հայտնելով հասած թշվառությունը, աղաչում է նորան մի հնար գտանել, որով կարողանա ազատվիլ յուր ազամարդի հանդիմանություններից։ Մանկաբարձը խոստանում է գտանել այս բանի ճարը, և փաթաթելով մի կտավի մեջ մեռած մանուկը դեպ ուրիշ գնում է մի ազբատ թուրք կնոջ տուն, որ նույն օրին ազատվել էր ծննդական ցավից, երբ ծնել էր և տիկին Բեգզադեն։ Մանկաբարձը տալիս է նորան մեռած մանուկը և բավական շատ արծաթ, և առնելով նորա կենդանի զավակը տանում է տալիս է տիկին Բեգզադեին, մեծ վարձ ստանալով այս հնարագիտության համար։ Ոչ ոք չէ իմանում այս գաղտնիքը և տիկին Բեգզադեն դարմանում է թուրքի զավակը, որպես յուր որդին, անուն տալով նորան Բեգզադե։

Լսելով այս պատմությունը, ասում եմ Գուլի-Շամամային. «Ի՛նչ լավ պատահեց քո իմ մոտ գալը։ Բեգզադեի ինձ նամակ գրելը, խոկ իմ նորա ազգաբանությունը իմանալը...»։

Խոսկից, ուրիշ շատ խոսակցություններից հետո, որ առ այժմ անպատշաճ եմ համարում ներս բերել Հիշատակարանիս մեջ, գնաց Գուլի-Շամաման։

Այժմ արձանագրեմ մի քանի նամակներ, որ ստացել եմ զանազան տեղերից և զանազան պարոններից։

Պարոն ԿՈՄՍ. ԷՄՄԱՆՈՒԵԼ,

«Սրտի մեծ ուրախությամբ հայտնում եմ ձեզ Մոսկվայի նորութիններից ամենապատվականը։ Համալսարանի հայ ուսանողքը, առաջին անգամ Մոսկվայի մեջ առանին թեատրոնական բեմի վերա կատարեցին մի եղերերգական և մի կատակերգական խաղարկություն։ Այս բանը

պատահեցավ հունվարի 27-ին հայկազն Միքայել Հարությունյան Ստեփանյանց մեծարգո պարոնի տանը: Մոսկվայի և նկավոր հայերից մոտ իրր երկու հարյուր մարդ, այր և կին, ներկա էին այդ հանդեսին, որոնցից ոմանք նկած էին մեքենաբար, լոկ հետաքրքրության համար, ոմանք հատուցուց նախապաշարված... և ոմանք մի ֆանատիկոսական անխորհուրդ ազգասիրությամբ, գնում մտածելով թե մեծ շնորհ էր, մեծ բարեբարություն էր ազգի համար, որ այդ պարոնը կամեցել էր ներկա գտնվիլ այդ հանդիսին... Այնտեղ էր և ձեր բարեկամ պ. Բեզդադեն, որ քիթը բերանը բթվեցուցած, նստել էր ուրիշ շատերի կարգում: Երևնած էր դահլըճի հակատում մի փորթրիկ, բայց նայելով հանգամանքներին, հնարներին և այլն և այլն, բավական հարմարավոր բեմ: Ութն կամ տասն հոգի երաժիշտը, թնաարոնական գործողություններից հատաջ, հնչեցուցին մեր ականջին «Պորտիչիու համար կամ Ֆեննելլա» ողբերգության գեղեցիկ նեթածություններ, որ Օրնո երևելի երաժշտի գործն է. և ճշմարիտն ասեմ, երանի թե այդ նեթածություններից հետո դուրս գնացած լինեի դահլճից. որովհետև վերջին բաները, ոչ միայն շարունակեցին այն ազնիվ տպավորությունների կարգը իմ հոգու վերա, այլ բոլորովին տակ ու վերև բերեցին իմ հոգին...

Պատմաբանական, չորս հատվածով եղերերգությունը Արիստակես[26] անվանված, ձևացնում էր ներսես Մեծը (Պարթևը), որ գնացած Կոստանդնուպոլիս հունաց Թեոդոս կայսրի մոտ խնդրում է ողորմիլ Հայաստանին և թագավոր դնել Արշակի որդի Պապը: Թեոդոսը թագ է կապում Պապին և յուր զորքով հանդերձ ուղարկում է Հայաստան. պատերազմ է լինում պարսիկների հետ. հաղթվում են սորա և Պապը և Հայաստանը հանդստանալով, հետ են դառնում հունաց զորքը: Պապը նմանելով յուր հորը, սկսում է անպիտանություններ գործել. Սուրբ Ներսեսը հանդիմանում է նորան: Պապը բարկացած, բայց սուտ բարեկամ կեղծավորվելով, ճաշի հրավիրում է յուր մոտ Սուրբը և դեղում է նորան: Այս էր եղերերգության բովանդակությունը: Առհասարակ շատ քիչ բան և զուրկ ամենայն բանաստեղծական ճարտարություններից. տես թե դորա հեղինակը հարկադրանքով գրել է այդ գործը: Նա ամենայն տեղ, ամենայն րոպե զանազան ազգասիրական խոսքերով աշխատում է վարագուրել դրամատիկական գործողության պակասությունը և չքավորությունը: Այս ևս պիտի ասել, որ եղերերգական խաղարկությունը կատարվեցավ ոչ այնպես, ինչպես գրած էր հեղինակը, այլ թնաարոնական հայտարարության մեջ ասվում է, թե մշակվել է այդ բանը պ. Փուղինյանցի ձեռքով. այս պատճառով չենք կարող որոշակի գաղափար տալ, թե ում պատկանում են այդ անկատարությունը, հեղինակի՞ն, թե մշակողին: Թնաարոնական բանախոսության լեզուն չէր այնքան ազնիվ և մշակված, ինչպես պիտո է և արժան է լիներ, որ ունենայ գաղափարակից ազդեցություն ժողովրդի վերա:

Ո՛չ մի կին չերևեցավ բեմի վերա. այս ասելով չեմ մեղադրում եղերերգության հեղինակը կամ մշակողը, այլ կամիմ մատով ցույց տալ ազ-

գի կյանքի վերա, մանավանդ ին ասիական աշխարհի մեջ, ուր կին մարդը զուրկ լինելով ամենայն իրավունքից ընկերական կենցաղավարության մեջ, իհարկե կարող չէր և թեատրոնի մեջ հանդես գալ իբրև գործ ու պաշտոն կատարող անձն։ Անարդարություն կլիներ պահանջել այստեղ հայերից այն բանը, որի համար Ասիայի մեջ բուսանելու հողը ևս չէ եղած, այսինքն մարդկային ազատ գործակատարության հանդեսը։ Երկար ու ձիգ քննության արժանի խնդիր է այս, բայց թողնելով այլ ժամանակի, հառաջ տանեմ խոսակցությանս թելը։

Եթե քաջ վարժ լինեին ներգործող պարոնները, զուցե յուրյանց խաղարկությամբ մի փոքր կենդանացնեին այդ եղերերգությունը. բայց ինչ օգուտ, երբ ունին յուրյանց պատճառները,— առաջին անդամն է, անփորձ են... Բայց համեմատաբար և ներող աչքով նայելով, մանավանդ ուշադրություն դարձուցանելով հավաքված բազմության մեծ մասի հասկացողության չափի ու աստիճանի վերա, կարելի է ասել, որ վատ չէր։

Եղերերգության մեջ, հայոց զորքը, պարսից պատերազմից հետ դառնալով, երգեց գիտնական Թևոդորոս Եսայան Խատամյանցի «Ենդա՛ այսօր Հայաստան» երգը, որ մի ժամանակ երգված էր Նոր-Նախիջևանում, մինչդեռ քաղաքական վարժատան մեջ պ. Խատամյանցը և պ. Տիգրանյանցը քանի անգամ պատճառ տվեցին հայերին, մի բան տեսանելու կամ լսելու թեատրոնական բեմից մայրենի լեզվով. բայց Մոսկվայում այդ երգը չերգվեցավ այնպես, ինչպես երբա եղանակն էր, այլ պ. Վերտովկու „Ах, подруженки, как грустно!“ երգի եղանակով։ Մի բան ևս չէ պիտո թողուլ առանց ուշադրության. պ. Չիքվայիծն վրացի ուսանողը մասնակից լինելով թեատրոնական գործողություններ հայերեն երգելու ժամանակ, յուր վերա դարձուց մեր մասնավոր ուշադրությունը։

Կատակերգությունը «Վա՛յ իմ կոտած հիսուն ռսկի» անունով, մի բանի նկարագիրք մեր Թիֆլիզցի ժողովրդի կյանքից, պ. Ալոգաթյանցի գործը, բավական կենդանություն ավեց հայկական բնավորություններին։ Շնորհակալություն գորա հեղինակին։ Թեև մի նպատակ կամ մի վճռողական կետ չուներ այդ գործը, ուսաի և մեր ավելի հարմար ենք տեսանում նկարագիր անվանել նորան — картина քան թե водевиль։ Այդ բանի մեջ ներգործողը շատ գեղեցիկ ներգործեցին, մանավանդ ինքը հեղինակը, սակս թե ծնած կարապետ լիներ... Մյուսերը ևս խիստ լավ, բայց պետերբուրգեցի աստիճանավորի պաշտոնը չափից դուրս անպիտանացուց պ. Խատիսյանցը, որ եթե ներգործեր չափի ու սահմանի մեջ, մի փոքր ավելի գեղեցիկ տպավորություն կթողուր մեր վերա։

Առհասարակ շնորհակալություն այդ ուսանողներին, նոցա գովանի ցանկության համար և թեատրոնական բեմից դաստիարակել ազգը։ Երանի կլիներ, որ Թիֆլիզի հայերը օրինավոր թեատրոնի մեջ ցանկանային տեսանել յուրյանց մայրենի լեզվով խաղարկություններ, մանավանդ ոչ մի տեղ այնպես հարմար չէ հայկական թեատրոնի համար, որպես Թիֆլիզը։

ԹԵԱՏՐՈՆԻՆ ՆԵՐԿԱ ԳՏՆՎՈՂՆԵՐԻՑ ՄԻՆԸ։

Ես շատ ուրախացա կարդալով այս նամակը. փուլի չէ, որ առաջին անգամ մի փորր անհարթ է գնացել գործը, ուրիշ անգամ գուցե լավ լինի, և պարոն ուսանողը ավելի կրթվեն և վարժվեն յուրյանց անձը այդ հանդիսի մեջ։

Եվ այսպես, սիրելի հայր, հառա՛ջ. դեպի հառա՛ջ. և մի հատ ավազը կորած չէ սարի ահագին կազմվածքի մեջ, ամենայն կայծ կարող է բորբոքել մի կրակ, եթե ձեռնտու լինին հանգամանքները հարմարությունքը։ Շատ գեղեցիկ կլիներ, որ մեր ազգակիցքը Մոսկվայի պես տեղում ցանկանային տարին մի քանի անգամ քանի մի բան տեսանել և լսել թեատրոնական բեմից, այդ կլիներ նոցա համար մի նոր զարկ, մի նոր շարժառիթ հառաջադիմության։

Մի այլ նամակից, որ առացել եմ Օշականից, գրած դեկտեմբ. 27-ից «Սուրբ Մեսրոպի գերեզմանին այցելու» առորագրությամբ, դնում եմ այստեղ մի քանի պարբերություններ։

«Պարոն ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԵԼ.

....Ով որ ազգի համար չէ ծներ, ազգի և եկեղեցու անգամ չէ. ազգին անգամ եղողը ազգի կենդանության համար պիտի գործե, ինչպես մարմնո անդամք. միայն աշխարհականք չեն ազգի անդամք, այլև հոգևորականք. ուստի և նոքա ևս ազգին համար գործելու պարտական։ Բայց այսպես չէ. ազգի ուսումնական զգացմանը համար նոքա չեն գործում. ազգային մարմնո բարոյական կենդանությունը պահելու նոքա գործակից չեն լինում. Մաշտոցի գուբդանները այս մարմնույն կենդանություն չեն տալ. կա՞ ուրեմն ազգին մեկ հատարակաց տուն, որ ազգի զգացմանը գործակից եղող հոգևորականք այնտեղ ապատանին բացի վանքերեն, որպեսզի Հյուսիսափայլի մեղադրանաց տակ չի ընկնին և ընդհանուր հոգևորականության մեջ չբամբասվին. եթե կա, վանքերը միայն են, ուր թեև անգործակից ազգային մարմնո կենդանության, բայց ըստ որում այնտեղ կգտնեն սնունդ, վասն այսորիկ և գուբդաների մեջ պիտի մեռանին։ «Թե որ այս փաստով չի արդարանան, ինչպես որ չի պիտի արդարանան, այն ժամանակը, պիտի ասենք, որ վիճակները եղած հոգևորականք, գործակից են ազգային լուսավորության*, իսկ վանքերինը հազիվ հազ աս ձևն արդյամբ զիրենք կկատարեն և հոգևորականության շարունակությունը կպահեն, և եկեղեցվո կառավարության զեկը ձեռքերնին ունին։

* Թե ի՛նչ վիճակներում գտանված հոգևորականներ ազգային լուսավորությանը գործակից են, այդ մեզ հայտնի չէ. կցանկանայինք լսել, թեև շատ սխուր գիմագրությունը այդ խոսքին վաղուց արդեն չեռմարանված կան հին տարիների Հիշատակարաններու մեջ։

Տաճ. Կ. Էմմանուելի

«Մ՛ը իշխանը քանի մի վաստակասեր հոգևորական իր հարստության մեկի տակն առավ պահեց, որ նա այն ժամանակ, իր անձնական հոգսից ազատ լինելով ազգային բարոյական դգացմանը և մտավորական զարգացման հառաջ գնալուն գործակից չեղավ։ Մեր ազգը այսպես է, տալ չգիտեն, պահանջել սորված է. չի ցաներ, հնձելը արդարությամբ պահանջեն. ուրիշ տեղ ասածս այստեղ էլ կրկնեմ, ո՛րտեղ մեր ազգի մեջ Մեսրովբ մի դուրս եկավ, որ գոած լիներ յուր համար մի վանշապուհ. մեր հարուստ իշխաններին ոչ միևը վանշապուհ դառնալ չի ուզեր, բայց կուզեն որ ամեն հոգևորականք էլ Մեսրովբ դառնան։ Չէ սեղբայր. առանց վանշապուհներ ունենալու Մեսրովբներ չի ունենար մեր ազգը. թե որ իրանք առանց վանշապուհ դառնալու կուզեն որ մենք Մեսրովբ դառնանք, քարեքար ընկնենք ազգը լուսավորելու, վերջապես «Փարպեցու և Խորենացու նման մատենագրության պարկը ուսերնիս ձգած Հայաստանեն պիտի փախչենք.— այս խոսքերը չեմ ասեր հոգևորականները պաշտպանելու, այլ կուզեմ, որ Ձեր Հիշատակարանի մեջ գրվին։

«Ես կցանկանայի որ ամեն հոգևորականք, որոնք որ արեզակ-չկան բառին տակ կպախարակվին, պատասխան տային ամեն իրենց վերա եղած գրավոր բամբասանքներին, ո՛չ որպես վիճարանասեր կամ խռովահույզ ոգվով, այլ իրենց փաստերը հառաջ բերելին արդարապես, եթե ունենին, թեև սորա էլ շատ քիչ են, կամ թե երբեք չկան։ Բայց լռությունն պահեն և լռությունն պահելով իրը թե կարհամարհեն իրենց վերա եղած խոսքերը. բայց շատ կխայտին և ապագային այս լռությունը իրենց շատ թանկ կնստի։

«Ավելի լավ էր պատասխան տալ և բամբասանքի առիթները իրենց վերայից վերցնել, քան թե լռությունն պահելով ազգի մեծի և փոքու ախորը առհասարակ իրենցից կտրել, որ ապագայի մեջը կնշմարվի։ «Վասնզի հիմա մեր ժողովուրդն էլ իննևտասներորդ դարու մեջ կերթա, բայց մեր հոգևորականաց դատողությունը դեռևս յոթնևտասներորդ դարու ազգային հառաջադիմության վարդապետությունը կընդունի, որով ազգը հոգևորականներեն երկու դար հառաջ անցած կերթան. այսքան անկարության մեջ արշավել, ազգի հետևեն հասնիլ չի՛ կարելի, թե որ «հոգևորականք իրենց անգործությունը և դատողությունը չի փոխեն.— «ինչպես որ քաջափորձ եմ, Տաճկաստանի մեր հոգևորականներն էլ այս «գրության մեջն են։

«Արդո՛ բարեկամ, այս գրածներս կամ այսպիսի բաներ, անպակաս «արեք Ձեր Հիշատակարանից, մինչև որ ազգերնուս աչքը բացվի. և ես «պիտի ուղարկեմ Ձեզ հետզհետե ազգային հանգամանաց շատ նյու-«թեր...»

Սուրբ Մեսրոպի գերեզմանի այցելուի նամակը ձգելով Հիշատակարանիս մեջ, կատարում եմ իմ պարտականությունը։ Ինչպես երևում է,

այդ անունի տակ վարագուրվում է մեզ անծանոթ մի հոգևոր անձն, ով կամի Յող լինի նա, ևս կատարեցի ահա նորա սրտի ցանկությունը, ըստ որում նորա խոսքերից երևում է որ մի բարեհոգի, ազգասեր, այլև ճըշմարտապես ազգի վերա սիրտ ցավեցնող մարդ է։ Աստված տա, որ շատանան այդպիսի հոգևոր անձինք և ինչ ու ինկունք գառնան մեզ, որպես և մենք նոցա։

Դարձյալ մի այլ նամակ ստացա պ. Գամառ-Քաթիպայից (Ս. Պետերբուրգից) որ մեղադրում է ինձ, թե ինչո՛ւ համար նորա ուղարկած մի ոտանավորը չէ բնկել Հյուսիսափայլի մեջ, և թե ինչո՛ւ մի գրավոր տեղեկություն չեմ տվել նորան չտպվելու պատճառի մասին։ Պիտի իմանալ, որ ես Հյուսիսափայլի հրատարակողը չեմ, և ոչ նորա գլխավոր աշխատակիցը. ես պատասխանատու եմ այն բաների մասին, որ պիտի բնկնեին Հիշատակարանիս մեջ։ Իսկ Հիշատակարան ձգել ամենայն բան, նույնպես չեմ կարող, ըստ որում, ինչպես վաղուց հայտնել եմ ձեզ, պատվելի ընթերցողք, մի հոբելեպայր ունիմ, որ միշտ քննում է իմ բոլոր առանձնական գրվածքս անգամ։

Իմ անունով ուղարկված, բայց անմիջապես Հյուսիսափայլի մեջ տպվելու գրվածները ես ուղարկում եմ պ. Հրատարակողին, ինչպես պ. Գամառ-Քաթիպայի և մի քանի նոր ոտանավորը, որ վերոհիշյալ նամակով ուղարկել էր ինձ. ավելի ոչինչ չեմ կարող առնել, իմ ձեռքում ոչինչ չկա։ Իսկ ինչ որ վերաբերվում է Հիշատակարանիս, այո՛, այդ այլ բան է, այդտեղ ես իմ Հիշատակարանի անմիջական տերն եմ. միայն խնդրում եմ ամեն մի մարդուց, որ խնայեն իմ Հիշատակարանը և բան ուղարկելու ժամանակ, աշխատեն այնպիսի բան ուղարկել, որ և յուրյանց, և ինձ և պատվելի ընթերցողներին ժամանակի զուր կորուստ չլինի։

ԼԹ

Հյուսիս—Շաբնկի գերությունը—Շամիլի խոսակցությունը—Շաբնկի երազը—Արևմուտք օրագիրք։

Հյուսիս... մի ցուրտ և անհամբույր աշխարհ. այդտեղ բնությունը զրկված է այն բոլոր վայելչություններից, որով փայլում են բարեխառն գոտիների տակ գտանված աշխարհները։ Բոլոր արարածք, որոնց վիճակվել էր երևել աշխարհի երեսին, այդ ցուրտ աշխարհի պայմաններին տակ գոյանալով, կրում են յուրյանց ձակատի վերա աշխարհի որպիսության կնիքը։ Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսը յուր խիստ շունչը փչում է մինչև շատ հեռի տեղեր և ամենայն արարած ենթարկվելով նորա ազդեցությանը, բնական օրենքներով ինքը յուր մեջ կենտրոնացած, ցուցակ է

լինում մի ողորմելի վիճակի։ Ի՛նչ ասել է կենարոնանալ յուր մեջ։ Կարել ամենայն հաղորդակցություն այն առարկաների հետ, որ շրջապատում էին մի արարած։ Ինչո՛ւ համար կտրել։ Եթե չկտրվի այդ հարաբերությունը, այնուհետև այդ արարածը պիտի խաղալիք լինի շրջապատող բնության ձեռքում. իսկ եթե մի արարած կենդանանա յուր մեջ, ասել է թե, մատնում է յուր անձը մի հավիտենական բանտարգելության։

Լա՛վ է բանտում կենդանի մնալ, քան թե բանտից դուրս մեռանել։

Սխալ է. լա՛վ է ազատության մեջ մեռանել, քան թե բանտում ապրել։

Ինչո՛ւ համար։

Նորա համար, որ եթե գրկված էր մարդա ընկերություններից, եթե կորցրվում է այն շղթայակապը, որ նախախնամությունը կազմել էր մարդու և նորա կազմվածքից դուրս գտանված առարկաների, մարդերի և նույնիսկ բնության հետ, մարդը վերջանում է մարդությունից։

Հյուսիսը մի սխալ աշխարհ է. նույն ինքը արեգակը, տեսանելով այդ աշխարհի անհամբույր բնավորությունը, տեսանելով նորա փոթորիկներից խռովված թանձր և մառախլապատ ամպերը, հետ է քարշում յուր ոգևորիչ ճառագայթը այդ աշխարհի վերայից երբեմն երբեմն հետաքրքրության համար նայելով նորա վերա։ Բայց... ավա՛ղ... այդ ի՛նչ մեռելատիպ գունաթափություն է, որ բռնել է արևի երեսը. ինչո՛ւ սխալ է նա. նա, որ ուրիշ աշխարհներում փեսայի պես դուրս է գալիս ծովերի ծայրերից, յուր ոսկեղեն ճառագայթները ցոլացնելով կապույտ ալիքների վերա։

Հյուսիսում, դաշտերը ծածկված են հավիտենական ձյուներով. ծովերը գտանվում են սառցապատ բանտերի մեջ։ Հյուսիսում, արջային շրջանակի տակ, բնակվում է ցրտաշունչ և դաժան Բորեասը, որ խլում է աղքատ շինականների տան ծածքը, որի զորությանը չեն կարող դիմանալ շատ անգամ հարյուրամյա կաղնիքը։ Հյուսիսում, եթե հունիսի և հուլիսի մեջ, երկրի մակերևույթը թեթևանալով յուր սառն ծանրություններից, բուսուցանում է մի պարզ ծաղիկ, մյուս օր ահա Բորեասը յուր մահաշունչ բևեռային սառնությամբ կտրում է այդ ողորմելի բուսականի կյանքը։

Այդ ի՛նչ ողբալի և սխալ աշխարհ է. մի՞թե նախախնամությունը հավիտենական դատապարտություն է դրել դորա վերա։

Չէ. և նշանակները փոխվում են և ինքը երկրագունդը ենթարկվում է հեղափոխություններին, որի հետ անտարակույս կապակից էին նորա շրջապատի հեղափոխությունքը։ Զարմանալի ժամանակ է մեր ժամանակը. ասես թե այս փոփոխությունքը սկսված են արդեն, ասես թե մեզ էր պահված վկա գտանվիլ դորա սկզբին, ասես թե արևը մի փոքր փոքրացել է այս աշխարհի վերա. մի փոքր մեղմացած են երևում կործանական փոթորիկների գնացքը և հարձակմունքը։

Ինչպես հայտնի է մեր ընթերցողներին, բախտը վիճակել էր իմ համար հյուսիսում հաստատուն մի բնակություն. և ահա գտանվում եմ ես

մի հյուսիսային գյուղում, ուր ամիս ձմեռը փակված միայնակ և անմխիթար ողորմելի բնակության մեջ, իմ կոմսության ողբալի ավերակների վերա։ Այդ տունը, ուր այժմ բնակվում եմ ես, և որ երբեմն եղած է իմ պապերի բնակարանը, տեսել է շատ ցրտաշունչ փոթորիկներ. բայց այս րոպեիս նորա ճակատը փորձում է արևմտյան խոնավ և խառնափնթոր քամիների հարձակմունքը։

Մի քանի տարի է, որ ձմեռը այս կողմերում փոխել է յուր բնավորությունը. այսօրնյ ներկայումս փոխանակ շոր ցրտի ինագավորում է մի խոնավ եղանակ, մարդու կազմվածքը տրամադրող դեպի մի անսահմանելի ռևմատիսմուս։ Ճշմարիտը պիտո է ասել, մեր համար, ըստ որում սովորած ենք, հյուսիսայինն րորեսեից շատ վատ են արևմտյան խոնավությունքը. անսահմանելի էր մեր վիճակը ներկայումս, եթե չմխիթարվեինք հուսալով, որ բնության համար այդ մի փոխանցական միջոց էր կոշտ խառնվածներից դեպի քաղցր մեղմության։

Բայց այս մխիթարությունը հիմնված է շոր հույսի վերա. նա չէ՛ կարող փարատել իսկույն այն խավար և տխուր տպավորությունը, որ մի անպիտան եղանակ կարող էր հառաջացնել մի մելամաղձության անձնասուր հոգու մեջ։

Ի՛նչ անսրբելի ներդաշնակություն. եղանակի անախորժություն, ֆիզիկական տկարություն, սան անպիտանություն, մելամաղձություն, հաջ վելացուր սորա վերա և մի տաղտկալի միայնություն, և ահա կտեսանես ամենայն, որի մեջ, կամ որպես ապրում եմ ես։

Ահա այս վիճակի մեջ անցուցանելով օրերս, ամենայն օր մի քայլ մոտենալով դերեզմանի բերանին, աչքս դուռը նստած եմ, թե ով արդյոք շնորհ կբերե իմ մոտ, կամ ո՛ր բարեկամս կշտապե մխիթարել ինձ յուր նամակով։

Բարեկամ շատ ունիմ, որոնք միշտ պատրաստ են ինձ նամակ գրել, եթե ես ևս հանձն առնում նույնպես նոցա գրել, բայց արի տե՛ս որ նորա շատ են, իսկ ես միայն. ժամանակը փոքր, ո՛ր մինին գրեսւ Դարձյալ աստված կյանք տա պ. Շահրենին, որ չէ մոռանում ինձ։ Երեք ամիս է ոչինչ լուր չունեի նորանից, երեկ ստացա մի նամակ, որի բովանդակությունը արժանի լինելով հարցասիրության, արտագրում եմ բառ առ բառ։

Բեզուտկալե, 14 փետրվ., 1859 թ.

Ողորմած պարոն ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԻԼ,

Խորհուրդ մարդկան, կամք աստուծո—ասում է առածը. սորա ճշմարտությունը ինձ ևս պատահեցավ փորձել, ինչպես շատերը փորձել են։

Վերջին նամակովս խոստացել էի քեզ, ցնծացնել քո Հիշատակարանը հունվարի մեջ, զանազան ուշադրության արժանի լուրեր և ծանոթություններ հաղորդանելով քեզ. բայց, արի տե՛ս, որ այլապես է եղած նախախնամության կամքը, և ես այս րոպեիս, երեք ամսական լռություններից

հետո, հարկադրված եմ, փոխանակ զվարճալի բաներիւ, տառապագին քեզ այն ախտը անցքը, որ անցավ իմ գլխից։ Այսպես ահա սկսանում եմ իմ պատմութիւնը, առանց հարատար ներածութիւնների, և խոնարհաբար խնդրում եմ, որ դու և քո Հիշատակարանիդ սիրողը առանձին ուշադրութիւնով և մանավանդ համբերութիւնով կարդան այս տողերը։

Երբ Սև ծովի նավարկութիւնը կապվեցավ, երբ ես մի փոքր թևաթափեցա իմ առևտրական անվերջանալի գործերից, մտածեցի ընթերցանութեան և մատենագրութեան պարապել, բայց նրանի ինձ կատարել էի որոնս ցանկութիւնը։ Մինչ այս խորհրդի վերա էի, չգիտեմ ի՛նչ շարժ հղի դրեց ինձ գուցս գալ Բեսարաբիայից գնալի Կովկասու սարերը... ի՛նչ ծածկեմ պատճառը, մի փոքր արծաթի հաշիվ ունեի մի նայիբի հետ, որ ամենայն կամակորութիւնով հետացնում էր, որպես հաշվառնութիւնը, նույնպես և պարտքը վճարելը։ Ի՛նչ պիտո է առնել, վաճառականութիւն է.... ասացի, այս պարապութեան միջոցին գնամ նայիբի մոտ, գուցե մի բան կարողանամ շինել, գուցե մի բան ընկնի ձեռքս. և ճշմարիտն ասեմ, ինձ հասանելի նպատակիս, так и быть, была ни была, ինչպես ասում է ռուսը, այդ կորած ու գտանված արծաթի հաշվից պիտի բաժանորդ գրվեի Մասյաց աղավնուն[27], Մեղուին[28] և Ճռաքաղին[29]։

Մինչդեռ Ճանապարհում անցանում էի մի նեղ կիրճից, վերաս հարձակվեցան չորս զրահավորված արյուն-կզակ լեզգիներ. տեսանելով, որ ինձ կողմից ամենայն որևիցե ընդդիմութիւն կարո՛ղ է ինձ մահ պատրաստել, իսկույն զինաթափ լինելով անձնատուր եղա... Լեզգիները կապեցին ձեռքս մի մազեղեն պարանով և սկսեցին հառաջ վարել։ Երկար մտածութիւնից հետո, որոշեցի նայիբի անունը տալ, հուսալով, որ ինձ այդպիսի մարդու հետ բարեկամ լինելը կարող է մի փոքր կշիռ տալ իմ անձին, որ կարող է մի փոքր մեղմել գերի վարողների կոշտ ընթացքը իմ հետ. բայց մի՛ ասա, այդտեղ է եղած իմ մեծ տարաբախտութեան սկիզբը։

— Նայիբ՞ ըս,— աղաղակեցին լեզգիները միաձայն,— նա, որ կամենը գավազանել մեծ մարդարեի փոխանորդի կյանքը, և որ քանի ամիս առաջ անարգ մահ ատացավ գահճի ձեռքից։ Լավ ծանոթ ես ունեցել, վատ չէ, վատ չէ, մինչև այն աստիճան, որ այժմ առանց Շամիլի[30] հրամանին չենք կարող քեզ արձակել, բեև մի մարդ քո կշռով ազատ տալու լիներ մեզ։

«Ուրեմն ինձ պիտի տանեք...»

— Դեպուտիդ Շամիլի մոտ,— խոսքս կտրեցին լեզգիները։

Երկու օր երկու գիշեր Ճանապարհ կատարելով, վերջապես մի ուրբաթ առավոտ, մինչդեռ նոր բաժանվում էր մութը լուսից, մտանք Շամիլի աթոռանիստ քաղաքը։ Ինձ հանդստացուցին լեզգիները մի գոմի մեջ, փոխանակ մազեղեն պարանին, ձեռքս անցուցին մի ծանր երկաթի շղթա և երկու զրահավորված մարդիկ վերաս պահապան կարգելով, ինքյանք ևս գնացին հանգստանալու։

Հնչվափսուիյունը շատ լավ բան է. ապա ի՛նչ կլիներ իմ վիճակը, եթե ես չիմանայի նոցա լեզուն, եթե հարկադրված լինեի միմիայն կովի նման նայել նոցա երեսին։

Այսպես ութ ժամը կլիներ, մի պատառի գեղեցկագեմ և գեղեցկազգեստ մոտ եկավ գոմի դուռին և կանչեց ինձ հալիլ նայիբի բարեկամի անունով։ Երբ մոտեցա պատառնուն, հրամայեց պահապաններին արձակել ձեռքիս շղթաները, ասելով, թե անարժան է, որ մարգարեի փոխանորդի աչքերը կապանք տեսանեն. հետո ասաց ինձ, որ հետևեմ յուրյան։

Նա տարավ ինձ Շամխիլի բնակութիյունը։

Ի՛նչ ամենորդ զբոսացավ պատճառեմ նկարագրելով նորա քաղաքը կամ տունը, այլ ցանկ զորութիյունը միայն հասկացնելու համար կարճ ասեմ, որ ներա մոտ մի բավական ընդարձակ սենյակ, մաքուր և զարդարած պարսից գորգերով և այլ ասիական կարասիքներով։

Սենեկի հյուսիսային պատի մոտ մի գեղեցիկ առջայի վերա նստած էր Շամխիլը. նորա երկու կողմում նստած էին նույնպես երկու ծերունի նայիրներ։ Պատանին, որ առաջնորդեց ինձ, ցույց տվեց աչքով երկու ծերունու մեջ տեղը նստած մարդու վերա, առանց ձայնի հասկացնելով, թե նա է ահա Շամխիլը։

Ես ոչընանցի խոնարհաբար և կանգնեցա նորա առաջև. երկու ծերունիքը ոտքից մինչև գլուխս շափեցին յուրյանց աչքերով։

«Ով ես դու», հարց արեց Շամխիլը բավական քաղաքավարութիյամբ։

— Հայ եմ,— պատասխանեցի ես։

«Ինչո՞ւ համար ներկայացած ես ինձ»։

— Ես չգիտեմ պատճառը. ձեր մարդիկը բռնեցին ինձ ճանապարհի վերա և բերեցին այստեղ։

«Ո՞ր տեղից, ո՞ւր էիր գնում»։

— Գալիս էի Ռուսիայից, Բեդուտկալենից, գնալի ձեր իշխանութիյան սահմանը։ Գուցե ձեզ հայտնի չլինի, բայց վկա է աստված խոսքիս ճշմարտութիյանը, որ ձեր հալիլ նայիբը երկար ժամանակ յուր պարտքը չվճարելով, այլև ամենայն կամակորութիյամբ իմ հետ օրինավոր և հիմնավոր հաշիվ տեսանելուց փախչելով, պատճառ է եղել այս իմ վատաբախտութիյանս։

«Վատաբախտութիյա՞ն. մի՞թե քո ներկայանալը ինձ, մեծ մարգարեի փոխանորդիս, վատաբախտութիյո՞ւն է. և դու, այս բոպեիս գտանվելով իմ ձեռքում, հանդգնո՞ւմ ես այդ խոսքը ասել»։

— Խնդրում եմ չբարկանալ իմ վերա, եթե ես չկամենայա կնզծավորվիլ ձեր առաջև. մեր կրոնը ասատիկ արգելում է այդ մեղքը։ Ես միշտ վատաբախտութիյուն կհամարեմ ինձ, եթե ո՛րևիցե գնով խլված էր իմ ազատութիյունը։ Մեր կրոնի արդյունքը — ազատութիյունն է. և մենք պարծանքով նայելով այդ բանի վերա, չենք կարող ո՛չ մի բանի հետ փոխադեակել նորան։ Եթե թուլ կտաք մի փոքր համարձակախոսել, ես տեսանում եմ, որ ազատութիյունը գրկված է յուր սենեկան քաղաքացու

իրավունքից ձեր սահմաններում... Անտարակույս, դեռևս վաղ էր պահանջել... Բայց դուք, որ համարվում եք ձեր ազգի մեջ, ձեր մարզպանի միջոցով, առաջին պարտական եք ընծայք տալ օրինապատշաճ ազատության:

«Մեղա, մեղա», ձայն տվեցին նայիրները քիների տակից:

Ես կարծեցի, թե ահա լարեցի Արամազդի շանթը դեպուղիղ գլխիս վերա:

— Հը՛մ....— արեց Շամիլը,— ձեր կրոնը կորստական լինելով, պիտի է անտարակույս և ձեր վարդապետության սկզբունք տնկեր ձեր մեջ: Ազատությունը առեղծել է աստված միմիայն հզոր մարդերի համար. մյուս անզոր մարդիկ զրկված են նորանից: Եվ այդ է պատճառը, որ միններդ տիրողք են, իշխող և հրամայող, իսկ մյուսները ծառա, սարուկ և հրամանակատար: Ամենայն գործողություն, հասարակ և անզոր մարդերի կողմից ազատությամբ հառաջացուցած, մեք ճանաչում ենք ապրատամբություն, իսկ ապստամբությունը — պատժի արժանի հանցանք: Դու այնքան երկար կմնաս այդ մոլորական հավատացողության մեջ, որքան ժամանակ հաստատ էիր քո քրիստոնեական կրոնի վերա. իսկ եթե կամենաս ընդունել, մեծ մարգարեի ձեռքով քարոզված ճշմարիտ հավատը, եթե հոժարիս մեր պես թլփատել քո մարմնի անթլփատությունը, այն ժամանակ իսկույն կլուսավորվիս և կճոռանաս այն ազատությունը, որ սկզբից մինչև այսօր պատճառ է եղել արյունահեղության, բանտի, հալածանքի, կապանքի, նոցա համար, որ ընկել էին այդ յուրյանց շպատկանած իրավունքը ձեռք բերելու քամակից:

«Ո՛ղջ լինիս», պատասխանեցի ես. «եթե կարելի է, խնդրում եմ չխոսել կրոնի վերա. պատճառ, այդ բանը, շատ մոտ լինելով ամեն մի մարդու սրտի և հոգու, կարող է շատ անախորժ բաներն տեղիք տալ: Ես խոսիլ նայիրի պատճառով ընկնելով քո մարդերի ձեռքը, երբեք հույս չունեի ձեզ տեսանել. քայց մանավանդ չէի կարծում, որ տեսանելով ձեզ կարող էի այդպիսի տհաս խոսքեր լսել ձեզանից: Ես ունիմ բանականություն, ունիմ դիտակցություն, և ճանաչում եմ սեր և սպիտակը: Կրոնափոխությունը իմ ախորժակի հարմար բան չէ. և մանավանդ ներեցե՛ք տարապայման համարձակախոսությանս, ի՛նչ կարիք ունիմ ընդունելու ձեր կրոնը, որի կտակը գրված է մեր շիք նզովյալ Մարգիս Բուխարացու ձեռքով: Ես ունիմ և պաշտում եմ մի այնպիսի կրոն, որ լույս է և լույս է տալիս յուրյան պաշտողներին, որի հիմքը գրված է ազատության ապառաժի վերա, որ ուռզված է Հիսուսի Քրիստոսի արյունով: Ձեր կրոնի վարդապետությունը ազատության մասին, որ այժմ հայտնեցիք ինձ, ես ճանաչում եմ իշխանության չարաչար գործադրություն, այն անզոր մարդերի վերա, որ նախախնամությունը հանձնել էր մի հզորի, սորա սիրտը և խղճմտանքը փորձելու համար»:

— Եկե՛ղ մարդ,— ասաց Շամիլը կարեկցությամբ գլուխը շարժելով,— վկա է մարգարեի մոլուքը, որ մոլորված ես դու: Այն, որ լերդա-

պատառ որոնում եք և պաշտպանում եք դուք ազատության անունով, ձեր դատակնիքն է. պատճառ, ով չունի յուր ձեռքում մի իշխանության գավազան, նա չունի և ազատություն, և ազատությունը չափակից է գավազանին, որքան մեծ և անխորտակելի է գավազանը, նույնքան մեծ է և իշխանությունը։ Դու լինելով խեղճ և անզոր մարդ, միմիայն ազատություն որոնելով արդեն, մեղանչում ես ընդդեմ այն հզորին, որի իշխանության տակ կայիր դու, և մեղանչելով այդպես գտանվում ես մահու պարտական։

«Ամենայն օրինավոր իշխանություն, որ աստուծուց է կարգված, ընդունում է և ծույլ է տալիս օրինապատշաճ ազատություն. ձեր տեսությունը սխալ է»։

— Դու այժմ ամենայն բան տեսանում ես որպես հայելու մեջ, իսկ քո ընդունիս մեր կրոնը, այն ժամանակ դեմ հանդիման տեսանելով ամենայն բան, կճանաչես իմ թարուցության ճշմարտությունը։

«Ես արդեն ասացի ձեզ, որ ախորժակ չունեմ կրոնափոխ լինելու»։

— Կրոնափոխությունը մի պարարտ խորոված չէ, որ կուշտ փորով դժվար լիներ ուտել. դա ոչինչ բան չունի ախորժակի հետ, կամեցար և կատարեցիր. մի րոպեի գործ է։

«Մենք այնպես դատոհարակված չենք, որ կարողանայինք մի րոպեում փոխել մեր սրտի և հոգու վկայությունը. մեր համար շատ վատ է մահից, ճանաչելով և հասկանալով խավարը լույս ասել, իսկ լույսը խավար»։

— Նշանակում է, շատ անօգուտ դատոհարակություն է ձեր ստացածը, որ չէ ծույլ տալիս ձեզ օգտի և վնասի բանի մեջ ազատորեն փոխել ձեր սրտի և հոգու վկայությունը։ Եվ դորանից հետո ասում եք, թե ազատություն եք ճանաչում, մինչդեռ չեք կարող ազատություն գործ դնել ձեր հասկացողության և վկայության վերա։

«Հասկացողությունը և սրտի վկայությունը խաղալիք բաներ չեն, և մեր ազատությունը լավ ճանաչելուցն է, որ չենք ծառայացնում մեր հոգին այս և այն հարկադրող հանգամանքների, որ պաշտելով մեր անձին իրավացի ազատությունը չենք փոխում մեր ուղիղ կարծիքը»։

— Ուղիղ է թվում, որքան ժամանակ ունես նորան, իսկ թե փոխես, իսկույն կտեսանես նորա թերությունը։ Մի կարճ բան իմ կյանքից պատմեմ քեզ օրինակի համար։ Ես ծնած էի սուննաթի, բայց երեխայությենից դատոհարակվելով շիաների մոտ, սրտի վկայությամբ ընդունել էի այդ վարդապետությունը։ Ինձ թվում էր այն ժամանակ, թե դորանից ճշմարիտ, դորանից ուղիղ կրոն չկա աշխարհի երեսին։ Ո՛րքան վնճ ունեցել եմ կրոնի մասին, ո՛րքան բան գրել եմ այդ առարկայի վերա, բայց ե՛րբ.... (քեզ հարկավոր չէ իմանալ այդ բանի մանրամասն հանգամանքը) վերատին ընդունեցի սուննաթի դավանությունը, անդեն առ նմին հասկացա, որ սխալված էի շիաների կրոնը պաշտպանելով։

Այս միջոցին նայիբներից առավել ծերունին ասաց յուր ընկերին ցած ձայնով, որ ես, թեպետ մոտ էի կանգնած, բայց հազիվ լսեցի, թե

«Սորան նայի՛ր, ինչևր է խոսում. անծանոթ մարդ է պահլ, բամիններ է պշում։ Դա ո՛չ մի ժամանակ որդի չէ մոսուլման ծնողներին, դա հրեի ազա է, և բախտի բերելով ընկել է մեր կրոնի մեջ։ Եհամիների դավանությունը ուրացավ ոչ այն պատճառով, որ ճանաչեց նորա մոլորականությունը, այլ պաշտելով այդ կրոնը, երբեք կարողանալու չէր սիրապանծել այդ դահին, որի վրա նստել էին երբեմն մեծ մարգարեի հավատարիմքը։ Այս պատվելու կրոնափոխությունը հետևանք է քաղաքական գաղափարների, և ո՛չ բուն կրոնական խորհրդով։ Ովի՞ն է խաբում սա»։

— Ուրեմն,— պատասխանեցի ես Շամիլին,— եթե ձեր համար այդպես հեշտ է կրոնափոխությունը, էդուց կարող էիք ընդունել և բուդդականությունն. ինչպես տեսանում եմ ես (ներեցեք, որ համարձակվում եմ տեսանել, քանի որում անդոր մարդ լինելով, դուք ասում եք, թե չունեի ոչինչ իրավունք), շատ թույլ է ձեր բարոյականությունը. և այդ վիճակում գտանվելով դուք, ընդունակ եք մինչև ձեր կյանքի վերջը փորձել աշխարհի երեսի բոլոր կրոնքը և դավանությունքը։ Ասել է մի խոսքով, թե ոչինչ սուրբ բան չկա ձեր համար աշխարհի երեսին, այլ ամենայն ինչ խաղալիք է ձեր հույզ ձեռքում։

Ցրտապնդելով ասացի այս խոսքերը բռնակալին, մտածելով, եթե կվնասե ինձ, գլուխը քարը, թո՛ղ վնասե, ո՛չ ապաքեն միանգամ պիտի մեռանիմ, դեռև մինչդեռ ժամանակ ունիմ ձեռքումս ճշմարտության մուրճի հարվածը հասուցանեմ դորա ճակատին։ Բայց Շամիլը այդ մտքի վերա չէր. նա իմ հետ վարվում էր ամենևին այնպես, որպես մի որսորդ յուր որսի հետ, որի մասին հավատացած էր, թե ո՛չ մի կերպով չէր կարող ձեռքից դուրս գալ, և այս կերպով ապահոված լինելով իմ ներկայությունը, թույլ չտվեց յուր բարկությանը վառվիլ, բորբոքվիլ, թեև մի ահաճույքյան ամպ, ասես թե փոթորիկից հալածված, անցավ նորա երեսի վերայով։

Ճշմարիտը պիտո է ասել, ես խիստ վարվեցա հանդիմանելով նորա անհատատությունը կրոնի, կամ սրտի վկայության մեջ։ Ինձ, որպես քրիստոնեի, պարտականություն էր ներողապես նայել նորա հանցանքի վերա. թողուլ նորա մեղքը, քանի որում երեխայությենից ուսել էի խնդրել աստուծուց թողուլ իմ մեղքը, խոստանալով իմ կողմից թողուլ ուրիշներին։ Բայց ավա՛ղ... մարդկային թուլությունը շատ անգամ սիրապատում է նորա բանականության վերա. շատ անգամ պատահում է մեզ արտասուքի հեղեղներով լվանալ և անհետացնել մի ամբարտակի մնացորդք, որի կազմվելու ժամանակ դուրս էին թռել մեր աչքից ուրախության արտասուք. մոռանալ մի գործ, իհարկե զղվելով նորա անպիտանություններից, որի գործելու ժամանակը համարել էինք մեր կյանքի ամենաերջանիկ րոպեներից մինը։

Բայց ո՛ւր էին այս մտածությունքը այն ժամանակ, երբ երես առ երես կանգնած էի Շամիլի առաջև, ո՛ր տեղ մնացել էր իմ առնարյուն պատրաստությունը, այն չափը, որով միայն ճշտապես կարելի է չափել որ-

պես մի մարդու, նույնպես մի ազգի և ամբողջ մարդկության գործը։ Կես մի Շամիլի անարդ կարծիքը ազատության և մեր կրոնի վերա, կես մի իմ առնելությունը դեպի նորա ստրկական կրոնը, դեպի նորա անձը, որպես դեպի մի բռնակալ և թշնամի Ռուսիայի, որի խաղաղ քաղաքացիներից մինը լինել վաղուց վճռակել էր ինձ նախախնամությունը — այս բոլորը միասին դղրդեցին իմ հոգին և պատճառ տվեցին այդ խոսքերը խոսելու։

Շամիլը պատասխանեց ինձ.— Ուստ չէ՛ քո կարծիքը իմ հայացքի մասին կրոնի վերա, ես այնքան լայն հոգի և լայն միտք ունիմ, և այնպիսի բազմակողմանի մարդ եմ, որ կարող եմ ամենայն կրոն բովանդակել իմ մեջ։

«Ախտա՛ս որ կես դար հառաջ չենք ծնած, ապա ին՛չ, գուցե դուք ևս ընկնեիք ֆրանսիական էնցիկլոպեդիստների կարգը, որոնք յուրյանց լայն հոգով, լայն սրտով և բազմակողմանի հայացքով վերջապես աստուծո անվանի վերա դրեցին մի.... և պաշտեցին, այս է բանականության աստվածը ասելով։ Բայց մեք այսպես շարունակելով մեր խոսակցությունը չմոռեցանք քոն խնդրին, որի մասին ինձ ներեցին ձեր առաջև, ես այնքան միայն ասում եմ, որ եթե դուք փորձիշատ հարգում եք ձեր անձը, ապա ուրեմն առանց ամենայն վնասի ինձ պիտու է արձակեք դեպի իմ աշխարհը, որովհետև ամենայն իշխանություն չարաչար գործ դրված արժանի է դատապարտության։ Դուք, որպես իշխան մի աշխարհի, ուր ամենայն բան խառնիխուռն, անարգ և անկանոն, ուր խավարասեր մարքեր ամենայն օր գտանում եք, ձեր անբրիտոնյա գործերին և խորհուրդներին օգնական, կարող եք, իհարկե, պատրաստել ինձ շատ անախորժություններ, բայց այն ժամանակ աշխարհը կնայի ձեր վերա, որպես մի խայտառակության դրոշմը ճակատին ամաչակի վերա, որ նստելով մի անցքում ձեռք է ձգում մարդիկ և վարվում է նոցա հետ, ինչպես հրամայում էր նորա թշվառ հոգին և ամայացած սիրտը, որ անիրավաբար օգտուքաղելով յուր պատահական դրություններից չարաչար գործ էր դնում յուր ուժը ձեռք ձգած մարդու վերա, որ կանգնած էր նորա առաջև։

— Հը՛մ,— արեց Շամիլը — դու ուրախ կլինեիր, որ ես իմ ձեռքով առնեի քո գատաստանը, բայց ի՛նչ հարկավորություն ունիմ անհավատի արյունով պղծել իմ ձեռքը։ Տարակույս չկա, որ դու հանցավոր ես և մահու պարտական, որովհետև այս ծերունիների առաջև հանդուգն խոսքերով անարգեցիր ինձ, բայց ես քո գատաստանը կհանձնեմ այն աշխարհի կառավարությանը, որին հպատակ ես դու։

«Միայն թե արձակեցե՛ք ինձ այստեղից, այնուհետև ինչպես կամիք, և ես անշափ շնորհակալ կլինիմ ձեզանից, եթե առիթ տաք ինձ գործ ունենալ իմ աշխարհի կառավարության հետ, որ անտարակույս բյուր անգամ լավ հասկանում է մարդկությունը քան թե դուք»։

— Բայց մի մոռանար, որ ես մի մեծ մարդ եմ, և այնքան մեծ, որ ձեր կայսրը արժան է համարում իմ հետ պատերազմել։ Իմ որդին Պետերբուրգում կրթված լինելով, ունի շատ մեծատուն բարեկամք. ինձ

արժե միայն մի նամակ արձակել դեպի Պետերբուրգ, այնուհետև ավարտված էր քո ասպարեզը։

«Ենդրեմ, որ դուք ևս չմոռանաք, որ մեր կայսրը վարվում է ձեր հետ, որպես մի բռնակալի հետ, որ տիրապետելով մի աշխարհի խռովում էր դրացի ազգերի խաղաղությունը։ Նա ո՛չ միջև հաղթություն կամի առանալ ձեր վերա, այլ պատուհասել ձեզ, քանի որում ձեր ժողովրդի անօրենությունքը հասած են մինչև երկինք։ Դուք պարծենում եք կամ մեծ հույս ունիք ձեր որդու մեծասուն բարեկամների վերա, բայց ես այդպիսի բարեկամների լինելությունը ևս ձգում եմ երկրայության տակ։ Ձեր որդին գտել է յուր հետ խոսողք միայն, որ քաղաքագետ մարդիկ լինելով մի կերպ վարվել են նորա հետ, բայց ներկա ժամանակումս բարեկամ գտանել Պետերբուրգի մեջ, շատ կարծիքական մի բան է։ Այս խոսքերը չեմ ասում ես այն պատճառով, որ արգելում ձեր գրությունը, ամենևին ո՛չ։ դուք կարող եք գրել իմ մասին ում կամիք, բայց այն մարդը, որին գրելու էիք, ձեր օրենքի ընդդեմ պահանջողություններին լռությամբ միայն պատասխանելով, կանարգև ձեր կոչումը և անձը։ Մեր կայսրը, որին հասուցել ենք մեր հպատակական երդումը, այնպիսի իշխան չէ, ինչպես դուք, որ միմիայն բարբարոսությամբ կամիք ցույց տալ ձեր մեծությունը, դորա հակառակ, նա հայր է այն ազգերին, որոնց կառավարության գլուխը նախախնամությունը հավատացել էր նորան։ Նորա սիրտը միշտ պատրաստ է կարևիից լինել յուր մի որևիցե անբախտացած հպատակին, վասնորո բարի խորհուրդ տալիս եմ ձեզ արձակել ինձ առանց հրատարակելու մեր խոսակցությունը մեր կառավարությանը, որովհետև դորա հետևանքը միմիայն խայտառակություն էր ձեր համար։

Դուք կարո՛ղ եք հասկանալ իմ ասածների ճշմարտությունը եթե փոքր մտածեք միայն։ Ի՛նչ կասե ձեր ազգը, ձեր ժողովուրդը, եթե տեսանե, որ ձեր գանգատը մի անզոր մարդու վերա մնում է առանց մի չար հետևանքի նորա համար. ո՛չ ապաքեն ձեր ուժը զորությունը, որի մասին մեծ կարծիք ունին տգետ մարդիկ, կերևի յուր վերին աստիճանի թուլությամբ և ոչնչությամբ։

Ո՛չ ապաքեն մեր աշխարհի կառավարության մեջ գտանված մեծամեծքը, որ գուցե մի փոքր լավ կարծիք ունեին ձեր գլխի վերա, պիտի այժմ հասկանան ձեր անխելությունը, նայելով եթե մինչև ո՛ր աստիճան հիմար և բարբարոսական են ձեր պահանջողությունքը։ Դուք տեսանում եք, որ ձեր ներկայությունը խափան չէ ինձ առանց վարագուրելու խոսել ճշմարտությունը, բայց ո՛րշափ խոսք և գրույց կրաթնրանա մի այլ աշխարհում, ուր, ո՛չ դուք, ո՛չ մինը և ո՛չ մյուսը կարող չէին փակել խոսողի բերանը. ուր խոսք ասացյալը համազոր է կրակի և սուրի։ Այո՛, ձեր անունը այդ աշխարհի մեջ կդառնա մի անարգության ցուցակ. և եթե կամենան մի առելի և անպիտան մարդ անարգել, կանվանեն նորան ձեր անունով»։

Այս խոսքերի վերա Շամիլը ընկավ մի փոքր մտածության մեջ. երե-

վում է, որ ասածներս նստում էին նորա խելքին։ Նայիրները, որ նստած էին նորա մոտ, լսելով իմ խիստ խոսքերը, երբեմն երբեմն զարմացական «ախեղաներով» շփում էին յուրյանց սպիտակ մորուքը։ Խոսակցությունը կտրվեցան, և ես կանգնած սպասում էի լսել իմ դատակնիքը։ Մոքսում դրել էի, թե անտարակույս մահը սպասում է ինձ Շամխլի շրթունքի տակ։

Բայց և այնտեղ սխալվեցա. չգիտեմ ի՛նչ էր պատահել այդ մարդուն, երևի թե իմ հաստատ և խիստ խոսակցությունը հոգեբանաբար ներգործելով, թուլացուց նորա հոգին և մոռանալ տվեց մի ժամ յուր զորությունը և իշխանությունը։ Պատահում են րոպեներ, երբ և բարբարոսը և ավազակը թուլանում է, նրեն հանկարծ և մեծ ուժով ներգործես նորա հոգու վերա։ Այդպիսի դիպվածում ազդու հոգու խոսքերը, մինը մյուսի քամակից, կայծակի նման թափվելով դիմացը կանգնած մարդու վերա, ձգում են նորան մի կաշկանդված վիճակի մեջ։ Ավազակի հոգին մոռանում է մի րոպե յուր պատահական դրությունը, մոռանում է օգուտ քաղել նորանից, որպես թե հաղթահարվելով այն ազդու հոգուց, որից դողում է և սարսափում է. և ինքը, չնայելով որ մարդերի որսորդ էր, պակաս ուրախանալու չէր, նրեն ազատվեր այդ հոգու ներկայությունից։ Շատ անգամ մի մարդու միայն լոկ կերպարանքը մեծ ազդեցություն է գործում նորա առաջև կանգնած մարդու վերա. մի հայացք կայծակի պես թռչում է, մտանում է նորա մեջ և, ասես թե, տեսանելով նորա հոգու ամենածածուկը, ինամքով է առնում նորան։

Խարերա մարդիկ այս հոգեբանական երևույթը մեկնում են շնչական մագնիսականությամբ, որի լինելությունը և ազդեցությունը դեռևս չէ ապացուցված և ընդդեմ է մինչև այժմ հայտնի բնական օրենքներին։

Ինչպես և եղած լիներ, միայն բանը այս է, որ Շամխլը մի թրջված կատվի նման վեր կացավ ոտքայի վերայից և դուրս գնաց նայիրների հետ, հրամայելով ինձ ևս ելանել նորա քամակից։

Երբ ոտքս դուրս կոխեցի շեմքից, երկու զրահավորված մարդիկ բռնեցին ինձ և դարձյալ տարան և փակեցին գոմի մեջ։

Այսպես անցավ իմ առաջին տեսությունը։

Առանց ամենայն այցելության, երկու շաբաթ մնացի գոմի մեջ։ Տանում էի մի շատ պարզ կերակուր. խմելիքս էր կորեկաջուր։ Այդ երկու շաբաթական բանտարգելությունը, առաջին անգամ փորձական կերպով շոշափելի կացուց ինձ արգելական մարդու թշվառությունը. ազատության արժեքը ավելի վեր բարձրացավ իմ աչքում, և այդ օրից ուխտեցի վերջին արյունս թափել ազատության անունի վերա։

Այդ միջոցը դարձավ իմ համար մի գեղեցիկ ուսման ժամանակ, այդտեղ ավելի հիմնավոր կերպով սկսեցի մտածել մի քանի փիլիսոփայական խնդիրների վերա։ Այդտեղ վերստին նվիրեցի իմ անձը, իմ կյանքը մարդկության օգտին. այդ միջոցին մանավանդ վեր բարձրացան դե-

պի երկինք իմ ջերմեռանդ աղոթքի խունկերը, և ամենաբարձյալը գթացավ իմ վերա։

Մի երեկո, երկար մտածություններից հետո քնեցա.... ի՛նչ տեսակ երազներ, ի՛նչ պատկերներ ներկայացան իմ հոգու առաջև։ Բայց հարկավոր չէ այդ բաները գրել այստեղ, ով գիտե, մի՛ գուցե Հիշատակարանիդ ընթերցողը ասէն, թե մենք Շահրենցին մի մարդ էինք կարծում, բայց նա ևս շատախոս պառավի նման երազներով է լցրել յուր նամակը։

Բայց գիտեմ, որ դու այնտեղ բարկանաս ինձ չգրեմ, որովհետև կատարյալ գաղափար առանալու չէիր այն տպավորություններին մասին, որ գործվել էին իմ վերա։ Այս պատճառով իմ երազներից գլխավորը ստորագրում եմ այստեղ, բայց այն պայմանով, որ դու միայն կարդաս և Հիշատակարանիդ մեջ չերևի. բարեկամության անունով հարկադրվում ես կատարել այս իմ ցանկությունը, իմ պատիվը ժողովրդի աչքումը պահելու համար*։

Եվ այսպես, երկար և տևական տևական մտածողություններից հետո քնեցա։

Ինձ թվեցավ, թե գտանվում եմ մի գեղնցիկ դաշտում, կանաչ արոտի վերա ինչ-ինչ ծառի տակ. առաջներս վաղում էր մի քաղցր և պայծառ վտակ։ Տեսա, որ գալիս է հեռվից մի երիտասարդ մարդ, երկարահասակ և նիհար. տեսա, որ շատ վատասկած հագուիվ հազ փոխում էր քայլերը. նա չնկատեց ինձ, որովհետև ծառը խափանարկու էր նորան ինձ տեսանելու։ Ուրուրվեններից համարյա թե վայրը ընկնելով նստավ արոտի վերա։ Նորա կերպարանքը ախուր, և, չնայելով նորա երիտասարդությանը, արդեն խորշոմը գրել էր նորա ճակատի վերա յուր կնիքը։

Հարցասիրությունը բռնադատեց ինձ մոտենալ այդ մարդուն. նորա մելամազձոտ կերպարանքի մեջ գտա ևս մի համակրություն։ Ինձ թվեցավ, թե այդ մարդը շատ վշտերի ենթարկվելով, իրավունք էր ստացել որ ամենևին մարդ կարծվից լինի նորան։

Մոտեցա և ողջունում եմ։ Նա փոխանակ իմ ողջույնը ընդունելու, ցնցվի երկինք վեր բարձրացրեց յուր նիհար ձեռքերը և վշտահար աչքերը, և ասաց.

«Ա՛ստված իմ, ա՛ստված իմ, այստեղ ևս հանգիստ չկա մարդկերից. այստեղ ևս չեմ կարող մոռանալ ինձ շրջապատող բնությունը և վեր բարձրանալ մարքով դեպի քեզ»։

Այս խոսքերը ասաց, առանց ուշադրություն դարձուցանելու իմ վերա, հետո, որպես թե կերպարանափոխ լինելով, շատ սառնությամբ ոգ-

* Այն բանը, որ ընդդեմ չէ հոբելյարս հաշակին և հասկացողությանը, անտարակույս ընդունելի է ժողովրդին, քան որում հոբելյարս ունի լավ հաշակ և տեր է խիստ բարոյականության։ Բայց սորանից զ. Շահրենցի պարկեշտություններից հատուցյալ արգելանքը զրկանք ճանաչելով Հիշատակարանիս ընթերցողներին, արժան համարեցի ներբերել Հիշատակարանիս մեջ նորա խորհրդավոր տեսիլը, հուսալով մեր բարեկամի ներողամտության վերա։

Թան. Ղուկ. Իմմանուելի

ջունեց ինձ: Սա ի՛նչ օտարոտի մի մարդ է, մտածեցի ես. արդյոք ի՛նչ է պատճառը, որ աշխարհից բոլորովին հուսահատվելով մխիթարություն է որոնում անապատում, միայնության մեջ:

— Խնդրեմ ներողությո՛ւն,— ասացի ես,— ինձ անպարկեշտությամբ վրդովեցի քո առանձնական ժամերի խորհրդականությունը. բայց ես չեմ մեղավոր, որ շտապեցի քո մոտ, դեռ նոր էի տեսել քեզ հեռվից և ահա սիրտս սաստիկ սկսեց բաբախել կուրծքիս մեջ: Քո բանաստեղծական կերպարանքը, քո տխուր հայացքը մոռ քարշեցին ինձ քեզ. իսկ ինձ ի՛նչ է քո մեջ այն, որ այդպես ներգործեց իմ վերա, չեմ կարող հաշիվ ու համար տալ ինձ:

Մի պարկեշտ ժպիտ խաղաց իմ անծանոթ հանդիպակացի շրթունքի վերա:

«Ես մի խեղճ մարդ եմ», ասաց նա, «և իմ մեջ բացի հիվանդություններից ոչինչ չկա: Դու զարմացնում ես ինձ պատմելով, որպես թե իմ ներկայությունը այդպիսի տպավորություն էր գործել քո վերա: Առաջին անգամ տեսանում եմ ես մի մարդ, որ այդպես քնքշությամբ խոսում էր իմ հետ: Մինչև այժմ բացի բամբասանքից, քսութիւններից, առելութիւններից և անիրավ հալածանքից ուրիշ ոչինչ չեմ տեսել ես մարդկերից: Տե՛ր աստված, մի՛թե վերջապես ծագել է գթության օրը»:

Վերջին խոսքերը ասելու ժամանակ գարձյալ վեր բարձրացրեց ձեռքերը և աչքերը, բայց սոքա արտասուքով փակլում էին այս անգամ:

— Մի՛թե մարդկերի անարդարությունը պատճառ է եղել, որ այդպես զզվել ես մարդկերից. չէ՛ պիտո հուսահատվիլ, ինձ մի բարի խորհրդի վերա ես, ո՛ր ամենակալ տերը լինի քեզ օգնական:

«Ամենակալ տերը, նա, որ քննում է մեր բոլորի գաղտնիքը, որի աչքը համարում է մեր սրտի խորհուրդները, գիտե, որ ես լավություն և բարի՛ եմ ցանկացել ամեն մի մարդու, գիտե, որ այդ իմ սուրբ և մաքուր ցանկությունը պատճառ է եղել իմ հալածանքին անիրավ և բռնակալ մարդկերի կողմից»:

Վերջին խոսքերը, ինչ «անիրավ և բռնակալ մարդիկ հարստահարել են նորան», զղրդեցին իմ հոգին, ինձ երազում չէի զգում, որ գտանվում եմ գերության մեջ, այլ այդ ինչ-որ վիճակի դառն տպավորությունը մի մասնով դեռևս անհետացած չէր իմ ուղեղից:

— Անիրավ և բռնակալ մարդկերի կողմի՞ց — կանչեցի ես և արյունը զլխիս զարկեց.— ես քեզ ընկեր մինչև ի մահ. ե՛կ խնդրենք այդ բոլոր անիրավություններին վրեժը:

«Ես քրիստոնյա եմ». կտրեց խոսքս իմ անծանոթ սիրելին. «ես չէ պիտո մտածեմ վրիժառության վերա: Մի՛թե նա, որ մարդկության համար մեռավ խաչի վերա, վրեժխնդի՞ր եղավ նոցանից, որ հասուցել էին նորան այդ անարգ մահը: Նա չէ՞ր, որ դեռևս հորից ներողություն էր խընդրում յուր չարչարողներին»:

Մի ատրուճ զգացի ես լսելով այս խոսքերը, հետո, որպես թե մի

նահացուցյալ ջուր թափեցին գլխիս վերա։ Ինչպա այրվում էին ամոթից, որպես կրակից։

«Ես ուխտավոր եմ Թողուլ բոլորի մեղքը, և այդ ուխտը ամրացած է մի սարսափելի կնիքով — Քրիստոսի անպարտ արյունով», շարունակեց նա։ «Ես կարող եմ կարեկցության, ես հիվանդ եմ, և իմ հիվանդության պատճառը դուրս է իմ կազմվածքի միջից։ Ցավը, որ տանջում է ինձ, դեռևս չէ ընկել և չէ՛ ևս ընկնելու ոչ մի պատուղիայի մեջ. բժշկությունը ճար չունի ընդդեմ այդ ցավին. նորան կարող է բժշկել միմիայն նա, որ ասաց, Թե յուր անունով մահ չկա։ Ես ունեի նորա կտակը, և ամեն օր և ամեն ժամ կարդալով նորան, տես Թե մոռանում էի իմ ցավերը, տես Թե, մի զովացուցիչ բալասան Թափվում էր այդ կտակից իմ Թարախոտ և փտած վերքերի վերա։ Բայց նախանձոտ մարդիկ, այստեղից ոչ շատ հեռի, ահա այնտեղ (այս խոսքերը ասելով ցույց տվեց մատով մոտակա ուռիների անտառը), խլեցին իմ ձեռքից այդ կտակը...»

Այստեղ հևկհևանքը և արտասուքը Թույլ չտվեցին շարունակել նորան յուր խոսքերը։ Մի փորրից հետո, մի սպիտակ թաշկինակով սրբելով արտասուքը, փոխված և ողբալի ձայնով հառաջ տարավ յուր պատմությունը.

«Ինձ ասացին այդ խլողքը, Թե մահարեր կլինի իմ համար այդ կտակը. ինձ ասացին, Թե ես չեմ կարող հասկանալ նորան ինքս ինձանով, Թե կարող է նա մեկնության, Թե առանց առաջնորդի կգայթակղվիմ և կկորչիմ... ավա՜ղ, որպես Թե եգիպտական առեղծվածք կտակել էր մեզ նա, որ հերքելով ամենայն փարիսեականության, ամենայն խաբեպաշտությունը, արևի լույսի տակ ցույց էր տվել Թշխի երեսը։ Ասացին, Թե ինձ հարկավոր է այլ ճար... «Ո՛չ, ո՛չ», աղաղակում եմ ես։— Դու չգիտես,— պատասխանում են սրբապիղծքը,— դու մեր հոգաբարձության տակ լինելով պիտի լսես մեզ։

«Չկամիմ լսել, և ո՛վ դրել է ձեզ հոգաբարձու իմ վերա. մի՛Թե նախախնամությունը գալլին հոգաբարձո՞ւ կկարգե հեղ և անմեղ գառնիկների վերա, կամ բրնտը տակատով մեղքի վերա.... հեռի՛ ինձանից, դուք, գիշերագեմ մարդիկ։ Բայց ականջ դնող չեղավ իմ բողոքին. նոցանից մինը, համարյա Թե բռնությամբ հափշտակելով իմ մոտ գտանված բոլոր արծաթը, տվեց ինձ ահա այս կապոցը ասելով, Թե դորա մեջ կարող եմ գտանել իմ ցավի ճարը։ Ո՜հ, Թեև շատ արտասուք Թափեցի բաժանվելով այն կտակից, բայց այնուամենայնիվ փորր էր. նորա գրողը իմ արտասուքից շատ արյուն էր Թափել այդ կտակը վավերացնելու համար։»

— Ի՞նչ կա այդ կապոցի մեջ,— հարց արեցի ես։

«Չգիտեմ», պատասխանեց խորհրդական ծանորմս և նետեց կապոցը իմ առաջև, նշանացի առնելով որ բանամ նորան։ Երբ բացեցի, ո՛վ խայտառակություն, գտա կապոցի մեջ հին և պատառոտուն հանդերձներ հարյուր, հազար կարկատաններով. բացի նոցանից ուրիշ այլ ոչինչ։

— Տեսանո՛ւմ ես,— ասաց իմ հետ խոսողը Թույլ ձայնով,— այդ

հազար կարկատաններով կցկցած պատռվածքը ուվեցին ինձ այն կտակի փոխանակ, որի գրողը և հեղինակը էր և այդ պատռվների արտրիչը։

Այստեղ չկարողացա դիմանալ, որ չարտասվեմ։ Մյուս կողմից մի զմայլանք եկավ իմ սրտի վերա, տեսանելով, որ այդպիսի քնքուշ սրտի տեր էր այդ մարդը։ Հետո խոսելով մի քանի մխիթարական խոսքեր, ասում եմ.

«Մեծ երջանկություն կհամարեմ ինձ, եթե կարողանամ իմանալ, ովի՞ հետ շնորհել է ինձ բախտը խոսակից լինելու։

— Ես հայ եմ,— պատասխանեց,— և ավելի ոչինչ։ Եթե իմ մարդկությունը բավական չէ քո համար, որ կարենկից լինիս ինձ, ի՛ղ գոնե իմ հայությունը շարժե քո սիրտը և հոգին։ Ես որդի եմ մի անբախտ ազգի, որ երբեմն ունեցել է յուր քաղաքականությունը, յուր հողը, օրենքը, սուրը և դրոշակը։ Որ այս րոպեիս բևեռից մինչև բևեռ ցրված աշխարհի երեսին գտանվում է խղճալի վիճակի մեջ, գերի և ստրուկ խավար նախապաշարմունքների և ամենեքին անհոգ լուսավորության մասին։ Զգիտեմ, թե ի՛նչ ազգից ես դու, բայց ով և լինեիր, մի՛ արհամարհիր իմ անձը, մի՛ անարգիր իմ ազգը այդ պակասությունների պատճառով, որովհետև նա է այն միակ առարկան, որ մոտ է իմ սրտին և հոգուն, որովհետև նորա արյունը շրջանառություն է կատարում իմ երակների մեջ, որովհետև դիշեր ցերեկ նորանով զբաղված է հոգիս։ Ցավի՛ր և ողբա՛ այդ ազգը, աղաչի՛ր գիշած ատելածը նորա համար, և այդ քո բարեմտության փոխարեն կվարձատրե քեզ նա, որ խոստացավ յուր անունով մի բաժակ ջուր մի աշակերտի տվողի վարձը ևս չմոռանալ։

Չկարողացա դիմանալ, որ այլևս խոսեր նա, արյունը ապստամբվեցավ երակներիս մեջ. փոթորիկեցա նորա վրին աղաղակելով, «Ով ես հա՛յ եմ, և ես հայ, մեր սիրական հայերին առ ի սրտե բարի կամեցող»։

Բայց այնպիսի կրքով և ատելությամբ փոթորիկեցա նորա վրին և այնպես աղաղակեցի, որ իմ նույնիսկ ձայնից զարհուրելով քնից, չէի կարող հավատալ, թե գտանվում եմ բանտում գոմի մեջ, մի ապականյալ մսուրի մոտ։

Ձեռքիս շղթաները մերկացուցին աչքիս առաջև կախարդական վարագույրը, և այդ շղթաների սխուր և միօրինակ ձայները զգացուցին ինձ, թե երազում էի տեսել այս վերևում պատմած բաները։ Առավոտը վեր կացա տեղից հոգու մեծ զորությամբ, ինչ բավական թույլ մարմնով։

Նույն օրը հրաման առացա ներկայանալ Շամիլին։

Ինձ գարձյալ ընդունեց նույն սենեկի մեջ և մի քանի բառ խոսելուց հետո, ասաց.

«Անցյալ օրվա խոսքերիցդ տեսա, որ մոլորված ես դու. ցավում եմ քո վերա, դու կարող էիր ավելի պիտանի մարդ լինել և քեզ և քո ազգին, եթե ծառայեիր իմ մոտ»։

— Իմ ձեր մոտ ծառայությունը ի՞նչ հարակցություն կարող էր ունենալ իմ ազգի օգտի հետ։

«Հը՛մ... ես քեզ հնարներ կասչի, որ ինձանից ուսած գաղափարդդ տարածենիր ձեր ազգի մեջ մեր լեզվով»։

— Ձեր լեզվո՞վ. հայերի համար ձեր լեզվո՞վ։ Այդ ի՞նչ խելացնոր բան է. մի՞թե հայը լեզու չունին։

«Անպիտան է նոցա լեզուն, անկիրթ և անճշակ. բայց մեր լեզուն կոկ և կանոնավոր, և ամենայն լուսավոր միտք և գաղափար հասկացնելու հարմարավոր։ Ի՛նչ ասեմ, հայերը մինչև այժմ դեռ կռիվ ունին յուրյանց մեջ, հին, եթե նոր ոամկական (jargon!) լեզվով պիտու էր գիրք շարադրել կամ օրագիր տպել։ Եվ ո՛վքեր են կռվողքը, չկարծես հասարակ մարդիկ, այլ ուսումնականքը։

— Դուք ի՞նչ տեղից գիտեք այդ բաներքը։

«Ես ամենայն բան գիտեմ»։

— Այդ գրողներից մինը ևս ես եմ, որ կանգնած եմ ձեր առաջև։

«Ուրեմն դու ևս պատերազմի մեջ ես այդ խնդիրների վերա»։

— Անտարակույս։

«Մոլորության մոլորության վերա։ Դուք որ ուսումնականքդ, որ կարելի է ասել, երկու և կես մարդ եք, եթե հաշտ չեք միմյանց հետ, դուք, որ պիտի օրինակ լիննիք ձեր ազգին, քարոզում եք բարոյականության ընդդեմը...»

— Ո՛վ է ասել ձեզ, թե մենք քարոզում ենք ընդդեմ բարոյականության, այդ մի ցած դրպարտություն է,— վեր առեցի ես։

«Ձեր վեճ ու կռիվը, որպես մի դալթակղեցուցիչ գործ, պատճառ է լինում անբարոյականության, թեև հատկապես քարոզած չլինիք անբարոյականություն. դուք պիտի հաշվեիք նախ և հառաջ, որ ազգը ևս բաժին բաժին չլիններ»։

— Լույսը չէ կարող հաշտվիլ խավարի հետ, ճշմարտությունը ստության հետ, այդ վեճը և պատերազմը հարկավոր էր, որ մի օր հառաջանային մեր ազգի մեջ. հարկավոր էր, որ լույսը և ճշմարտությունը ոտարորիկ քշեին Հայաստանի ծխյալ ավերակներից խավարի և ստության շար դևը։ Մենք, բուն այդ վեճի մեջ տեսանում ենք լուսավորության և խիստ բարոյականության սկիզբը։ Մի՛թե մի քայլափոխ չէ՞ դեպի լուսավորություն, եթե սուրա պաշտպանքը հրատարակեն սուրա իրավունքը յուրյանց ազգի այն բաժնի մեջ, որոնց առավել սիրելի էր խավարը։ Հաշտվելով մենք, պիտի վերջանար այդ քարոզությունը, պիտի խավարը դարձյալ տարածեր յուր մառախլապատ և մահադեմ վարագույրը մեր ազգի վերա. մի՛թե սուտ է խոսածս։

«Ձեր ամենայն բանը հակառակ է. ես տեսանում եմ, որ քեզանից մարդ գարձողը չկա. տեսանում եմ, որ քեզանից օգուտ չկա ո՛չ Մոհամմեդին, ո՛չ Ալիուն և ո՛չ նաև Այիշա—Ջաթիմային, անհետացի՛ր իմ աչ-

խարհից ինչ ձանապարհով որ նկար, միայն մի՛ մոռանար Շամիլի մեծահոգությունը»։

Դուրս նկա նորա սենեկից, արձակեցին ձեռքին շղթաները. երկու օրից հետո հասա Բեզուտկային, բոլորովին հիվանդ։ Մոտ իբր քսան օր ընկած էի մահճի մեջ, և բանագնաց բժիշկների հոգաբարձությունը կարողացան այնքան ինձ ինձանացնել, որ հնար ստացա այս նամակը քեզ գրելու։

Ուրիշ ոչինչ նորություն չունիմ քեզ հայտնելու. լավում է միայն, որ մեր նորընտիր վեհափառ հայրապետը ապրիլի մեջ գալու է մեր կողմերը և գնալու Էջմիածին։

Ողջ եղիր ամենայն հաջողությամբ, ամենակալ տերը թող առաջնորդն ձեզ ձեր վտանգավոր ճանապարհորդության մեջ։ Մնաս բարով մինչև ցմյուս նամակս։

Քո անխարդախ բարյացակամ Ս. Խ. ՇԱՀԲԱԳ

P. S. *Լսում եմ, որ Փարիզում հրատարակվում է մի նոր ազգային օրագիր բն լրագիր «Ավետարան»*[31], *և թե Մոսկվայի մեջ, կամ գուցե բոլոր Ռուսաստանի մեջ, այդ օրագրի գործակալ պիտի անվանվի պ. Նալբանդյանցը։ Ի՛նչ լավ կլիներ, գո՛նե հնար կունենայի ես ևս առանալու, ուրիշները ևս նույնպես. քանզի որում մոռածում եմ, որ այդ գործը բավական արժանավոր բան լինի։ Հրատարակողներից մինը պ. Յ. Ռոկան, ունի բանաստեղծական ճոխ քանքար։*

ՇԱՀԲԱԳ

Այս նամակով կնքում եմ այս անգամի Հիշատակարանս, քանզի որում բավական երկարացավ. մի գուցե ձանձրացնեմ ընթերցողքս, որ մինչև այժմ սիրել են իմ Հիշատակարանը, ուստի թողնում եմ այլ բաների մասին խոսել մինչև մի այլ հաջող րոպե։

Ժ.

18/30 Հունիսի 1859, Հոմբուրգ, Հնսանե-Հոմբուրգյան կոմսությյան նոր մայրաքաղաքը։

Հիշատակարանի խոսակցությունքը.—Շանքնգի ճամակը.—Թիֆլիզու առաչնորդի ճանապարհորդության երկրորդ ճառարը.—Փարիզյան ազգային դպրոցը.—Հրնշատակ Հայաստանի նոր օրագիրը.—Մուրադյան վարժարանի աղօթքը։

Այն օրից, երբ գրեցի երկրորդ Հիշատակարանիս վերջին տողերը (Հյուսիսափ[այլ] փետրվար. 1859), որքա՛ն ժամանակ անցավ և այդքան ժամանակում ո՛րքան երես գատարկ մնաց Հիշատակարանումս։

«Ո՛վ Հիշատակարան, դու, իմ առաջին և վերջին մխիթարություն,

արդարամիտ և բարեգործ մարդկերի սիրելի, իսկ հիվանդամիտների և չարագործների մահու չափ ատելի, դեպի քեզ եմ դառնում և խնդրում եմ քո մեծահոգի ներողամտությունը, որ ինձ ես չձգես քո մեջ, և, առանց վերահասու լինելու իմ դրությանը, ծուլությանդ դրոշմ չդնես իմ վերա։ Ես քո համար երբեք ծուլացած չեմ. միթե մոռացա՞ր, որ քո մի հատվածը (տպած Հյուսիսափ[այլ]. հուլիս, 1858) դրեի մի ամառանոցում, ուր մի քանի բարեկամով գնացել էինք օդ վայելելու։ Գնացի՞ ես նոցա հետ մանգալու և բնության գեղեցիկ տեսարանը վայելելու։ ես չէ՞ի, որ այն ջերմ եղանակում, ծառի տակ, մի փայտյա, շինականի սրճոի վերա նստած լցնում էի քո էջերը։ Շատ հետի հարկավոր չէ գնալ, քո վերջին հատվածը չգրեցի՞, մինչ գնում էի շոգեշարժ կառքով.... նրա մոտածում ես, թե կոմս Էմմանուելը երբևիցե կարող էր ատել քեզանից, շատ սխալվում ես»։

— Ի՛նչ պատճառով դու այդպես սիրում ես ինձ,— հարցանում է Հիշատակարանը։

«Նորա համար, որ բովանդակում ես քո մեջ, ամեն մի հայ մարդու սրտի և հոգու մոտ բաներ, խնդիրներ, որ հարաբերություն և ազդեցություն ունեին մեր ազգի կյանքի վերա։

— Իմ համար ասում են, թե շատ բաներ ունիմ առակի ձևերով, և թե իմ բովանդակած բաների մասին նախընթաց տեղեկություն չունեցողը, կդժվարանա շատ անգամ հասկանալ բանի դորությունը. ճշմարի՞տ է այս։ Ճշմարի՞տ է, որ ասում են, թե ես ներկարարի կարաս ունիմ և թե կենդանիք որ ընկել էին այդ կարասի մեջ, երևում են այնուհետև հատարակությանը ներկված և դժվարաճանաչելի դրդով։

«Այո, կա այդ բանի մեջ ճշմարտություն. բայց դու զուգահեռաբար հառաջ գնալով ազգի կյանքի հետ, ամենայն առողջամտությամբ հարկավորված ես այդպես ընթանալ։ Ճշմարտությունը, ավելի շուտով ըմբռնելի է լինում անգաստիարակ և ասիացի ազգերին. այդ վնաս չունի, միայն դու հառա՛ջ գնա։ Կգա օրը, կծագե քո համար այն արշալույսը, երբ քո ընթերցողքը կարող կլինին նայել եգիպտական առասվածուհու երեսը առանց քողով ծածկելու նորան։

— Այդ ե՞րբ է լինելու։

«Ինձ չէ տված գիտենալ ժամը և ժամանակը. ինձ տված է միայն դուշակել....

— Դու մարգարե՞ ես, ի՛նչ ես, որ դուշակում ես։

«Ո՛չ, ես մարգարե չեմ և իմ ապագայի մասին դուշակությունը հիմնվում է անցած և ներկա իրողություններն և հանգամանքների վերա։

Ահա այսպես. այնքան ձեռնհաս չեղա հառաջ վարել Հիշատակարանս, մինչև որ հանդիպեցա նորա մեղադրությանը։

Զարմանալին այս է, որ Բնգղադեն ևս ձանձրացել է Հիշատակարանիս չերևելուց։

Երկար և անդադար ճանապարհորդությունքը Եվրոպայում, ամսօրյա ժամանակով դեպերվիլը հանքային ջրերում, տկարության կատաղաբար

զայրանալը և սորանից պատճառված աննկարագրելի ֆիզիկական թուլութիւնը համարյա՛ թե զրկել էին ինձ կարողութիւնից գրիչ ձեռք վեր առնուլ։ Մյուս կողմից բյուր նորանոր տպավորութիւնք պատերազմ բանալով ուղեղիս մեջ աշխատում էին յուրաքանչյուրը առաջին տեղը բռնել Հիշատակարանումս. բայց ես թողնում եմ նորանց, մինչև որ մի փոքր նստի նոցա ջերմութիւնը, որպեսզի սառն աչքով կարողանամ նկատել նորանց. մանավանդ որ այդ բաները համարյա թե հարակցութիւն չունին իմ նվիրական ազգային խնդիրների հետ։ Ի՛նչ օգուտ ինձ Լոնդոնի հակայական կերպարանքից, ի՛նչ օգուտ Փարիզի փառավոր և գեխ գեմքից, Բեռլինի և Գերմանիայի մտածող և փիլիսոփայական պատկերից, մինչ նոցա հետ միասին աչքիս առաջև են գալիս ավերակ Հայաստանը, ցիրուցան ժողովուրդը, անդաստիարակ և նյութապաշտութեան հոգով գործականապես տարված ազգի զավակները, անխորհուրդ և տղայական փառասիրութեամբ հիվանդ, միակողմանի, ուսումնական անվանված պարոնները, որ բիբիճռնակի պես թռթռում են ճրագի չորս կողմով, երբ սա ներսում էր հայկական բանձր խաւարով պատած խոնավ գետնափորի մեջ...

Ամեն մի զվարճալի տեսարան, ամեն մի կրթված ու բարեկարգ ազգ պատճառում էր իմ մեջ մի տրտում մտածութիւն, որ սիրելի չէ հայերին, քանի որում ծա՛նր բան է անձնաքննութիւնը.... մտածութիւն, դարձյալ մտածութիւն, անվե՛րջ մտածութիւն....

Այս և այն տեղից առացած նամակներս ընկած են ցիր ու ցան, որոնց շատերը մինչև այսօր անպատասխանի, որովհետև չկար գրելու համար հարկավոր ուժ։

Զանձրուկիը մյուս կողմից, խնդրում էր. չկար մի մարդ, որ մոտ լիներ սրտիս, որի հետ ունենայի մի հաստատակաց զազափար։ Շատ պատահեցա գեղեցիկ և պատվական հոգու տեր մարդերի, որոնք գարձան ինձ շատ նալ ծանոթք, բայց նորա պարապում էին կամ յուրյանց ազգային գործերով կամ ընդհանուր մարդկութեան գործերով։ Օրերը և շաբաթները վազում էին ջրի պես , բայց և ո՛չ մի խոսք այն բաների համար, որոնց մասին խոսելու ծարավը խնդրում էր ինձ. խոսք, որ մոտ էր իմ սրտին և հոգուն, որ վաղուց արդեն գարձել էր իմ կյանքը, իմ հոգին, իմ արյունը և ուղեղը։

Վերջապես բարոյական ուժը հաղթահարեց ֆիզիկական թուլութիւնը, զորացուց իմ ջղերը և ահա ձեռքիս մատները կարողանում են գրիչ սեղմել յուրյանց մեջ։

Դադարեցավ կարմրագույն և ջերմ հեղանյութի շատրվանը, որ այնպիսի հորդութիւնամբ դուրս էր զարկում թոքերիցս. և ես սկսեցի ազատ շունչ առնուլ։

Շո՛ւտ գրիչ, թանաք, թուղթ, և ահա ա. Շահբեգի նամակով բացում եմ Հիշատակարանիս դուռը։

16/28 մայիսի, 1859, Բեդուակալե

Պատվական եղբայրս ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԻԼ

«Բեռլինից ապրիլի 12-ից գրած նամակդ, որով Քրիստոսի հարությունը շնորհավորելուց հետո պատմում էիր ինձ քո ճանապարհորդության մասին պատճառը, ստացա ամսուս 14-ին, և ահա գրում եմ պատասխանը, առանց դիտելու թե ուր էիր այժմ, միմիայն հուսալով վիեբրադենի Բաուն անունով բժշկի շնորհի վրա, որին ուղարկում եմ այս նամակը քեզ հասուցանելու համար, աշխարհի մոռացված ծայրից, մի փոքր տեղից, ինչպես է Բեդուակալեն։ Վաղուց լուր չունեի քեզանից, վաղուց կամեի գրել քեզ, բայց որ և ինչպես, այս բանը փակում էր ճանապարհս. այժմ քո նամակը հայտնեց ինձ հաղորդակցության հնարը և դու կարող ես մի քանի ձայներ լսել մեր կողմից։

«Չկամիմ նամակս սկսանել նորանով, թե ողջ և առողջ էի. մաշված ձև է, և նամակը բավակա՛ն է գրողի կենդանությունը ապացուցանելու համար։ Չկամիմ դարձյալ մեջ բերել իմ առ ու տրական գործերիս ընթացքը, որովհետև նորա ոչինչ հարկություն չունին այն բանի հետ, որ վաղուց արբացած է իմ և քո համար։

«Սկսանում եմ նորանից, որ այս օրերումս ձեռքս հասավ Թիֆլիզի առաջնորդի Ճանապարհորդության երկրորդ հատորը, տպած Թիֆլիզում 1858-ին[32]։

«Դորա առաջին հատորը տեսած ես. ուստի ավելորդ է տեղեկություն առալ քեզ նորա մասին, թեև նորա արբագրության պատմությունը բավական ծիծաղաշարժ բան է, մանավանդ նորանով, որ արբագրությամբ ես չէ մաքրվել սխալներից։ Կամ բնագիրը մինչև այն աստիճան ազճատ էր, որ օրինավոր արբագրությունը նորից գրելու աշխատության հետ հավասար լինելով, թեթև աչքով և առանց կատարյալ ուշադրության նայել է արբագրողը, կամ սա՛ ես արժանի հեղինակին արժանի արբագրող է եղած. ինչևիցե։ Այս երկրորդ հատորը, որ անտարակույս տեսած չես, «Հարկագրում է մի քանի բառ խոսել, մինչև որ դու ինքդ տեսանես և դրես ամի օրինավոր քննության*»։

«Ավելորդ է մի խոսք ևս ասել տպագրության անպիտանության մասին Թիֆլիզը, որ այսօր Ռուսիայի առաջնակարգ քաղաքներից մինն է, դեռևս տպում է այնպես, ինչպես Գուտենբերգը փորձնց տպագրությունը առաջին անգամ, կամ, գուցե, ավելի տգեղ։ Բայց այս նոր բան չէ. ինչպես մինչև այսօր Թիֆլիզում տպված գրքերը, նույնպես և պատվելի «Մեղուի տպագրությունը կարող են առուգել ասածս։

«Քեզ քաջ հայտնի լինելով, թե մինչև ո՛րքան տարածվում էր հեղինակի դիտությունը ոչ միայն մարդկային ընդհանուր, այլև հայկական

* Այնքան գրչիք կան, այնքան խոսելիք կան, որ ժամանակ կորուսանել մի այդպիսի գիրք քննելով, ամենևին կամք չունիմ. հայտնում եմ հրապարակով։
Մաս. Կամս էմմաև.

«լեզվի մեջ, զարմանալու չես իհարկե, եթե ասեմ, թե այդ բավական հաս-«տափոր գիրքը շռնմարան է զանազան սխալների։

«Այնտեղ, որքան կամիս կարելի է գտանել ոճերի սխալ, հայկարա-«ժության սխալ, բառերի գործադրության սխալ և վերջապես ուղղախո-«սության և բնրակականական սխալ։ Լեզուն բավական մոտ է մինչեն դարե-«րի վերջերում գրված հայկական գրքերին, երբ որ հայոց լեզուն սկսա-«ծում էր ընկնել այն մեծ քնի մեջ, որ սիրտ ընդհատվեր Սերաստացի «Մխիթարի ձեռքով։ Մի քանի բան եթե այլապես է գրված, ուրեմն ոչ «գրուն հայարար, այլ օտարի հետևելով, որպես «ի հետևումն հրամանի» և այլն։

«Ժամանակ չունեի բոլոր գիրքը կարդալու. մոտ իբր 60 երես կար-«դացի շարունակ, մնացածը տեղ տեղ, ինչպես պատահեցավ։ Բայց ինչ «որ կարդացի, կարդացի կատարյալ ուշադրությամբ, այնպես, որ կարող «եմ մարդու խղճմտանքով հայտնել իմ կարծիքը։

«Գրքի բովանդակությունը և բնավորությունը նույն է, ինչ որ առա-«ջին հատորի, ժողով մակագրերի, որ կարելի է ասել, միմիայն անախալ «աման է այդ աշխատության, քան որում հեղինակը ոչինչ չէ հավելացու-«ցել յուրյանից։ Բայց այն տեղերում, ուր հեղինակը յուր գտած արձա-«նագրությունքը և մակագիրքը մեջ բերելուց հետո սկսանում է ծանոթու-«թյուն տալ որևիցե տեղի կամ քաղաքի պատմական, տեղագրական և «բնական մասների վերա, կամեցել է ավելի որոշ ցույց տալ յուր անկա-«խությունը, և այն բանի մեջ է նորա առաջին և գլխավոր սխալը։

«Չէ կարելի առանց ծիծաղելու կարդալ, մինչ հարգի հեղինակը յուր «կցկտուր հիշատակարանքը, որ բոլորովին խորհուրդ չունեն պատմու-«թյան համար, շփոթում է պատմական հնախոսության հետ. երևի մտա-«ծում է, թե յուր գործը պատկանում էր հնախոսության։ Այդ կողմից «հնշտությամբ կարելի է հանդգնացնել նորան, որ ոչինչ հարակցություն «չկա յուր աշխատության և պատմական հնախոսության մեջ, որ մի քար «գտանելով, ոչ եթե ողջում է հիշելով շինվածքի ամբողջությունը, որի «կազմությանը պատկանում էր գտած քարը, այլ քննելով նորա վերայի «և աննշմարելի գծերը, մեկնում է այդ ժամանակի ճարտարագիտության «և գեղեցկագիտության հոգին և այլն։

«Բայց արդ հեղինակը, ամենևին ուշ չդարձուցանելով այս բաների «վերա, շտեսանելով յուր աշխատության ընթացքը, դեռ նվիրաբերու-«թյան մեջ գրքի ճակատում գրում է «Զի եթէ ի սակաւատոհ հնամաշ «պրամաց և ի կնդակարծ նոցունց գրոշմատիպ պատկերաց իմաստունք «շահս մեծ քաղեն ի լոյս աղօտալոյս մտաց պատմութեան, ապա որքան «աւելի և առատաձեռն նիւթ մատակարարեսցի մերոյ պատմութեան, եթէ «ոք աշխատութիւն յանձն առեալ անդուլ հետամուտ եղիցի ամենայն «հանգամանօք ուշադրութեամբ անցուցանել ի գիր զամենայն դեռ կան-«գուն շինուածս նախնեաց և զաւերակս տաճարաց, վանօրէից, քաղա-«քաց, շինից, ամրոցաց, կամրջաց, բրգանց, աշտարակաց և նմանեանց»։

«Անխորհուրդ և սերտած բառերը, որ շարել է միմյանց քամակից. «մինը հարցանեն թե հայոց պատմութեյան ո՞ր խնդիրը պիտի պարզեր այդ գրուածքի մակագիրը կամ ովի՛ն քանի պատարագ տրվելու հիշատակագրանը: Հայոց պատմութեյան թերութեյունքը գտանվել են նորա կյանքի մնջ և պատմութեյան բաց մնացած երեսները, ուր պիտի գրվին ազգի ընտանեկան կյանքը, թագավորների, նախարարների ընտանեկան կյանքերը, պարզվելու չեն երբեք իմանալով թե ո՛վ որքան գնեին կամ կալվածք գընծայել է այս կամ այն վանքին և թե վանքերի միաբանքը քանի՞ պատարագ խոստացել են նորան:

«Հնախոսութեյունը մի առանձին և հոյակապ գիտութեյուն է. և հնախոս լինել կարող է միայն այն մարդը, որ քաջ տեղյակ էր ընդհանուր պատմութեյան, ընդհանուր օրենսգիտութեյան, հին և նոր քաղաքական աշխարհագրութեյան: Գավառներ և աշխարհներ ստորագրող մարդը բացի այս գիտութիւններից պիտի քաջ ուսած լինի բոլոր բնական գիտութեյունքը, բնական և մաթեմատիկական աշխարհագրութեյուն: Նա յուր անկատողութեյունքը պիտի արձանագրե, ծանրաչափը, չերմաչափը և էլեկտրաչափը ձեռքին, ամենայն բան փորձելով և ննջելով: Այս ասածներից և ոչ մինը օգնական և ձեռնտու չլինելով մեր կարգացած գրքի հեղինակին, հարկավ նորա աշխատութեյունը պիտի նմաներ մի առասպելի, որ մի պատառ կարող էր պատմել յուր թոռներին ձմեռնամային երեկար երեկոներում, առանց փաստերի և ապացուցների, միմիայն կույր հավատ պահանջելով լսողների կողմից:

«Ով մի՞թե սորանից ավելի է այն առասպելը, որ հեղինակը տալիս է ազգին համարյա՛ թե հայած յուղի տեղ, պատմելով թե մոնգոլները, ներաշտութեյան ժամանակ, նրա կամենան, կարող են անձրև բերել: Հեղինակը վկա է բերում այս բնութեյան ընդդեմ գործին յուր ղզլարեցի հայ եպարգմանը և այլ արժանավոր անձինք: Ծող բյուր անկիրթ և անգրագետ մարդիկ վկայեն, բայց մի օրինավոր մարդու անվայել է այդպիսի անալի և անհամ սուտեր ոչ թե տպագրութեյամբ հրատարակել, այլև բերանից անգամ հանել: Ահա հեղինակի բուն խոսքերը (տես երես 438): «Մերկանան գհանդերձս իւրեանց և տպիտակ կտաւ արկնել գանձամբ կանգնին յեղը միոյ վտակի, այնուհետև ի գուշս անկանին և բարձրանան և աղօթեն. ապա յետ կիսոյ կամ միոյ ժամու արշաւեն ի բարձունս ի չորից կողմանց սևաթոյր ամպք, զօրէն զօրաց հապճեպ ժողովելոց, և սկսանի տեղալ յորդահոս անձրևս:

«Ազգերի և ժողովրդների բարոյական կյանքի վերա ասած նկատողութեյունքը ևս ուղիղ չեն. պատճառ, այդ բանների աղբյուրը ամենայն ևնամոլ պիտո է որոնել ազգային կյանքի հետ հարակից հանգամանքների մեջ: Պախարակել մի սովորութեյուն, որպես ազգային ախտ, իրավունք չէ, եթե այդ սովորութեյունը մտել է ազգի մնջ օտարից, որի հետ սկզնակից էր մեր ազգը, կամ որի կապանքի տակ գտանվում էր ընդմիշտ և՛ բարոյապես և՛ քաղաքականապես: Այդպիսի սովորութեյունքը որպես

«ընդհանրապես վնասակար, կարելի է միայն խայտառակել, բայց ոչ որ«պես մի ախտ, որ երևել էր որպես հետևանք ազգի սեփական կյանքի և «արյունի։

«Այսպիսի անտեղի զրպարտությունն մեր աստրախանեցի հայերի «վերա գրած նշմարում ենք հեղինակի կողմից, կարդալով հետևյալ տո«ղերը (տես երես 443)։ «Մինն ի գլխաւոր շռայլութեանց է ամուսնակո«չական տոնախմբութիւնն, զոր մեծածախ կատարեն յամի ամի, նուի«րելով և հոգևորականաց զառատ աջահամբոյր. ես բազմից ջանացայ «ի խափանել զայն վնասակար սովորութիւն և կարէի ի սպառ խափանել, «եթէ ներդործութիւն իմ լինէր ձեռնտու առաջնորդաց։ Սերոբէ Արքեպիս«կոպոսն կամեցեալ էր խափանել զայն սովորութիւն, բայց վերջացեալ «էր յիրոց նպատակաց, ըստ որում կատարեալ է ինքն յամի ամի զիւր «տոնախմբութիւն, շարունակ կարգաւ ստանալով ի ժողովրդոց զառատ «աջահամբոյրս, ուստի լոկ հրամանն նորա առանց օրինակի եղեալ է ան«պատուղ»։

«Այստեղ բամբասվում է Սերովբե արքեպիսկոպոսը, որպես թե նա «միայն էր հայոց հոգևորների մեջ, այսպես ընթացող. ինքը հեղինակը «նա ուրիշ գաղափար չէ թողել մեզ յուր ընթացքով զանազան հայաբնակ «տեղերում, ուր և մեք պատահած ենք երբեմն երբեմն.... բանը միայն «տոն կատարելու վերա չէ.... և այդ հանցանքի կարգում չէ որևիցե վի«ճակից մարդու համար։ Սովորության չխափանվելու պատճառ բերվում «է Սերոբեն. ինձ թվում է, որ արդո հեղինակը խառնափնթորում է բա«ների ժամանակը։ Երբ հեղինակը, լրացյալ իրավունքներով, քննչի պաշ«տոնով գտանվում էր Աստրախան, Սերոբեն վախճանած էր արդեն։ «Եվ չգիտենք, թե ո՛ր առաջնորդին է վերաբերում, որ ընդդիմություն է «ցույց տվել, կամ թե գոնյա որին ձեռնտու է եղել հարգի հեղինակի չա«նադրությունը խափանելու տոն կատարելը Աստրախանում։ Այն ժամա«նակ, ինչքան ես հիշում եմ, առաջնորդ չուներ Աստրախանը, պաշտոնը «վարում էր Բարսեղ եպիսկոպոսը Տեր Մարտիրոսյան, որ և շուտով «զրկվեցավ յուր պաշտոնից հեղինակի առաջարկությամբ և գնաց էջ«միածին։ Ո՛հ, ի՛նչքան նյութեր մեր ժամանակակից պատմության հա«մար։ Կո՛րմ, հույս ունիմ, որ կգա մի օր, երբ այդ բոլորը կերևին Հի«շատակարանիդ մեջ ապիտակի վերա սևով դրոշմած։

«Հեղինակի անփորձությունը բնագիտության մեջ շատ պարզ երևում «է, մինչ խոսելով Բաքուի հրաբուխների մասին (տես երես 407), հա«մարում է, թե մի ծծմբային օդ է վառվողը, կարծելով թե ամենայն օդ, «որ վառվում է, հարկավ պիտի ծծումբ ունենա յուր մեջ. ինքը արդո հե«ղինակը վկայում է, թե հրաբուխների մոտակա տեղերում կան նավ«թի հանքեր. եթե փորձառու ծանոթ լինեին նորան հանքաբանությու«նը և քիմիան, այն ժամանակ, գուցե առանց փորձի, անալոգիայով «միայն կարող էր իմանալ, որ այդ վառվող օդը է ածխային բաղադրու«թյուն, որպիսի գազով լուսավորվում են այժմ եվրոպական քաղաքնե-

գրը։ Հեղինակից ծծմբային օդ կարծածը նավթի շոգիք են, իսկ նավթը ապատկանում է ածխային մարմիններին։ Քարյա ածուխը, որ բավական մեծ էր ընկած գետնի կեղևապատի մեջ, և հետևաբար ենթարկված է մեծ բարձրաստիճան ջերմության, լուծանվում է դեպի զանազան բրաղագրություններ, որոնցից մինը է նավթը։ Սա, յուր բաժանված տեղից բարձրանում է որպես շոգի, և պատահելով ջրերի (ուրեմն ավելի սյած աստիճանի ջերմության, որովհետև ավելի մոտ է երկրի մակերևութին), բնական օրենքներով ստանում է հեղուկ հատկություն և մասնավոր կշռով (удельным весом) թեթև լինելով քան թե ջուրը, հավաքվում է ջրերի երեսին, որից հառաջանում են նավթի հորերը և լճերը։ Բայց այն շոգիքը, որ ճանապարհ ստացել էին դեպի երկրի մակերևութիը մի ավուլկանական ճեղքվածքի միջով, չհանդիպելով ջրի կամ մի ավելի սառն շրջակայքի, հասնում են դեպի վեր շոգու հատկությամբ, և հեշտիք է մի լուցկի մոտեցնել այդ շոգուն, որ պայծառ վառվիր։ Իսկ թե այդ շոգիքը հավաքվին մի անոթի մեջ, որ դրվիր ավելի ցած ջերմության շրջակայքում, եթե այդ անոթը շրջապատող օդը ավելի ճնշեր այդ անոթը, քան թե նորա մեջ գտանված օդի ձգական ուժը, այն ժամանակ, անտարակույս, շոգին կլուծանվիր դարձյալ դեպի հեղուկ մարմին— նավթ։ Այս համառոտ ծանոթագրանութիյունը ավելորդ չեմ համարում ես, հավատացնելու համար արդո հեղինակին, թե ոչ ամենայն բան ծծումբ է, որ վառվում է, մանավանդ այն մեհենների միջի վառվածը։ Արդյոք գիտե՞ արդո հեղինակը (ի՛նչ տեղից պիտի իմանա), թե ածուխը վառվելու ժամանակ խլելով օդից երկու չափ թթվածին, բաղադնացնում է ծծմբաթթու (SO₂ сернистая кислота), որ սաստիկ վնասակար լինելով շնչառության, կարող է խեղդամահ սպանել և քուրմերը և առհասարակ։

«Հեղինակը շատ տեղ օդերի մասին ևս հայտնում է յուր կարծիքը, երբեմն լավ, երբեմն վատ և վնասաբեր ասելով այս կամ այն տեղի օդը։ «Այդպես կարելի չէ օդ քննել և այդպիսի անհիմն խոսքերը ոչինչ գին և արժեք չունին գիտության մեջ, որ պահանջում է փորձական ստուգագործություն։ Օդի օգտակարությունը և վնասակարությունը քննվում է և սահմանվում է նախ և հառաջ, տարու զանազան եղանակների մեջ քանի օրերով ծանրաչափի և ջերմաչափի գործադրությամբ, որպեսզի կարելի լինի սահմանել օդի ճնշողության և ջերմության ընդհանուր և միջակ աթիվը։ Երկրորդ, էլեկտրաչափով քննելով օդի էլեկտրականության չափը կամ որպիսությունը, որ մեծ ազդեցություն ունենալով ջրերի վերա, հետևաբար մեծ խորհուրդ ունի մարմնի շնչական կյանքի վերա, հատկապես ներգործելով շնչառության վերա և թոքերի միջնորդությամբ հարաբերություն ունենալով նույնիսկ արյունի հետ, որ է ազբյուր կենդանության։ Երրորդ, քիմիաբար լուծանելով օդը, հասկանալու համար, թե ի՛նչ գազերից էին բաղկացած, արդյոք բնական կերպով ազոտից և թթվածիններից, և սոցա հարաբերությունը էր որպես 21:79, թե այլապես, կամ

«Մի կային ուրիշ գազանման մարմիններ։ Արդյոք գիտե՞ արդո Հեղինա-«կը, որ մի 100 չափ օդի մեջ ավելի լինի թթվածինը քան մի 21, նույնպես «վնասակար էր առողջության, չափազանց միանալով ածխածինը արյու-«նի հետ, որպես և պակաս լինելով և թողնելով չայրված ածխածին «արյունի մեջ, դորանից պիտի հառաջանար արյան թանձրություն, շըն-«չառության ատիպանք և կարճություն։ Չորրորդ, քննվում է օդը, քննելով «մի որոշած տեղի շրջակայքը և նոցա հատկություններք և որակություններք, որ «անմիջապես ազդեցություն ունեին օդի վերա. դորօրինակ անասունները, «բուսականքը, լիճերը, ճահիճները և առհասարակ այն բաները, որոն-«ցից ննջադրվում էր մի լինում է շատ արտաշնչություն, քիմիաբար լու-«ծանելով այդ արտաշնչությունքը և քննելով նորա բաղկացական տա-«րրերքը։

«Մի մարդ, որ չգիտեր Ֆիզիոլոգիա, որ չգիտեր մի ի՛նչ պաշտոն «ունի կատարելու օդը մեր շնչական կյանքի հարաառության մեջ, այն «վերոգրյալ բոլոր բաները ևս օրինավոր քննելով, չէ կարող, սահմանել «օդի օգտակարությունը և վնասակարությունը դրականապես։ Հարկավո՛ր «է, որ այդ մարդը իմանա հառաջուց, մի ինչ տեսակ օդ ինչ բաղադրու-«թյամբ և ինչ չափով տարերքի հարկավոր էր, առողջ մարմնի առողջու-«թյունը շարունակ պահելու համար, որպեսզի յուր կատարած փորձերի «արդյունքը համեմատելով այս գազափարի հետ, կարողանա դատել և «վճռել օդի վնասակարությունը կամ օգտակարությունը։

«Հեղինակը, յուր գործի մեջ նոր ապացույց է տալիս մեզ յուր ան-«սահման իրավունքներին, որից օգուտ էր քաղում։ Խոսելով Նոր-Նախի-«ջևանի վերա, խոսելով եկեղեցիներում գտանված գրչագիրների մասին, «ասում է (տե՛ս երես 460)։ «Ի բազմաթիւ աւետարանաց գմինն առի ընդ «իս, ըստ որում արտագրեալ էր յիսկական ձեռագրէ Սրբոյն Սահակայ «մերոյ Թարգմանչի»։ Սուրբ Սահակի ձեռագրից օրինակված լինելը ար-«դարություն և իրավունք է համարվել, որ բոլորովին, մի այլ վիճակի «եկեղեցու գույք սեփականվի հեղինակին։ Եթե հեղինակը ժառանգական «ազգակցություն ևս ուներ Սուրբ Սահակի հետ, այնուամենայնիվ այդ «գրչագիրը չէր պատկանում նորան, ըստ որում ուրիշի աշխատությամբ «էր օրինակված, ո՛ւր մնաց որ հեղինակի և Սուրբ Սահակի մեջ կան 1400 «տարի, արևելք ու արևմուտք, երկինք ու երկիր, սար ու ձոր... Այս նո-«րանշան իրավունքի օրինակը չենք տեսանում ոչ մի ներկա տերության «օրինադրություններների մեջ, և ոչ իսկ հռոմեական օրենսդրության մեջ։ «Հարցասիրության արժանի մի խնդիր է այս, ուստի պիտի խնդրեմ եվ-«րոպական իրավաբաններից, որ տեղեկություն տան ինձ մի այսպիսի «ամարդկային օրենքի մասին, մի գիտեն։

«Անշան և միանգամայն անխորհուրդ բաներ շատ մեծ բան են «երևում հեղինակին, և այս հետևում է նորանից, որ նեղ հայացք ունե-«նալով և ամենափոքրը հակա է թվում։ Խոսքս Նախիջևանի ուսումնարա-«նի վերա է. ահա հեղինակի բառերը (տե՛ս երես 462)։

«Ուսումնարանն Հայոց ի նորոյ կառուցաւ աղիւսակներա, նոյարկ և զրազմասենեակ, արդեամբք աղայ Մկրտչի՝ արդեն հանգուցելոյ, և ջանասիրութեամբ աղայ Խաչատուրի Ղոմաճեանց (որ գրել է Ղամզեանց), յորում ուսանին բազմաթիւ աշակերտք զհայերէն և զռուսերէն»:

«Հեղինակը գրում է այս խոսքերը, մինչդեռ բոլոր նախիջևանը դանգատում է դպրոցի անպիտանութիւններից և մի օրինավոր մարդ չէ տալիս «յուր որդին այդ դպրոցը: Աշակերտքը, որոնց ընծայվում է դիտութիւն «հայերենի և ռուսերենի, ոչինչ չգիտեն, հազիվ հազ կարդալ այդ լեզուներով և յուրյանց անունը գրել առաւախալ անգամ: Նախիջևանի մեծ «անբախտութիւնը է այդ ուսումնարանը, որի մասին դովութեամբ խոսում է հեղինակը:

«Սենեակք լայնանիստք, որմունք բարձրաբերձ, այլ բարեկարգութեամբ ի նմին և ոչինչ», գրում էր քսան տարի հառաջ մի ուսումնական տաղտային, որ կարդալով այս տողերը, անտարակուսս պիտի հիշն յուր «վհատական և ողբալի դրութիւնը Նախիջևանի մեջ, ուր գտանվում էր «դաստիարակական պաշտոնով»[33]:

«Արդո հեղինակը ողբում է վանքերի կործանութիւնը և ամայութիւնը, բայց չենք լսում թե նոցա շինութիւնը, այժմյան ժամանակումս ինչ խորհուրդ ուներ մարդկային հառաջադիմութեան համար: Կար ժամանակ, երբ մարդիկ ոգևորվում էին վանքերով և հոգևոր ասպետութիւններով. բայց շատ հինդ հարյուր տարի անցան նորանից հետո, և նոր դարաշրջութիւնը (16 դարուց) պատնէշ է քաշել հին և նոր մարդկութեան մեջ: Մի՛թե հեղինակը կցանկանա, որ մեր ազգը դուրս մնա այդ պատնէշից....

«Հայերը ունին ավելի հիմնավոր և խորհրդավոր ողբալիք, քան դպրոցների չինելը կամ չինելութեան չինելու հավասար վիճակը նյութ «լինի նոցա ողբերին և լացին: Թո՛ղ աշխատին դպրոց շինել, աշակերտ «հասուցանել, ազգը լուսավորել: Վանքերի աղմոսերգութիւնքը հանգիստ «չունին ազգային լուսավորութեան մեջ:

«Արդո հեղինակը, ինչպես յուր բոլոր գրվածներում, նույնպես և մատնավանդ գրքի վերջաբանի մեջ, շատ որոշ և շոշափելի կերպով ցույց է տալիս, թե ազգը, ազգի կյանքը, ազգի անցածը, ազգի ներկան, և այսպիսի ներկայի հետևելու ապագան, երբեք չէ եղած նորա համար ուսումնասիրութեան և փիլիսոփայական մտածութեան առարկա: Ինպետ և այսպիսի արդարութեամբ խոստովանել, որ մի այսպիսի հիմնավոր քննութեան և հասկացողութեան դժվար էր նորան առանց ձեռքում ունենալու «բաղդատող կշիռը և չափը:

«Վերջաբանի մեջ (տե՛ս երես 503), խոսում է հեղինակը Հայաստանի բնթանից: «Աւ այժմ լիովին սփոփիմ և զովարար ցօղ հիւսիսոյ խառնեսցի ընդ հարաւային ջերմութեան՝ կամի զիս ծաղկազարդել, պտղաբերս առնել և օր աւուր վերածել ի լաւ անդր վիճակ»:

«Ի՛նչ կամի ասել սորանով, անհասկանալի է. հիմք և լոգիկա չկա...

«Այս ուրախական խոսքերը խոսելով մխիթարվելուց հետո, իսկույն փախում է բերանը (տե՛ս երես 504), և ահա նորա խոսքերը։

«Ի վերջոյ, եթէ Խորենացին Մովսէս ողբոց իւրոց պհակաւակն դառնալ գրնաց է, յայնժամ դոյ յոյս կենդանութենան մօրս ինձ շուտասացելոյ, ապա թէ ո՛չ ընկղմնալ եմ և ընկղմիմ ի ինքնասպանութիւն և ի վշտաց ի վիշտս, և ապա անվրէպ համբուրել ունիմ զմահ.— ասաց զայս ողբալին Հայաստան և իսկոյն լռեաց, քամելով յաչաց իւրոց զշիթս արտասուաց»։

«Այս հակառակաբանութիւնքը ծագում են նորանից, որ հեղինակի գրվածքը խակ մտածութեան արդիւնք լինելով, չունին գաղափարների ընդհանուր միութիւն։ Հառաջ ասում է, թե Հայաստանը մխիթարվում է, արտասուքը սրբելու վերա է, հետո հուսահատվելով խոսքն խնդրում է դադարելը այն բանների, որ կային Մովսես Խորենացու ողբի մեջ, և որ ազգը մի չար բախտով հարյուրին երեսուն աճեցուցած է մինչև մեր օրերը։

«Ահա, եղբայր, մի նոր երևույթ, բուն հայկական, ասիական և անմխիթար դարուիթյան մեջ. ահա այսպիսի գրվածք պիտի առաջնորդեն ազգին դեպի լուսավորութիւն։ Բյուր անգամ ցավելի երևույթ։

«Ես ժամանակ չունեմ կարդալ բոլոր գիրքը, ահա այստեղ նշանակած երեսներս միայն կարդացի, մնացածը հարևանցի թերթելով։

«Այժմ խոսեմ ուրիշ բաների մասին։

«Փարիզից ստացած նամակներս միմյանց քամակից հավաստում են, թե հարցի Ամբրոսիոս և Խորեն Գալֆայան վարդապետքը կամենում են մի նոր օրագիր հրատարակել, «Հրեշտակն Հայաստանի» անունով[34]։

«Փարիզի հայկական դպրոցի մասին ստացած լուրերս շատ անմխիթար են, և ինչպես պատմում են, վերատեսուչ վարդապետքը գտանվում են մեծ նեղութեան մեջ։ Ասում են, թե դպրոցը ունի մոտ իբր քսան աշակերտ ընդամենը, որոնցից երկուքը ֆրանսիական ազգից։ Ձայներ կան, թե ազգը Կոստանդնուպոլսի մեջ կամի շուտով բարվոքել Փարիզու մեր ազգային դպրոցի վիճակը, և թե վեհապատիվ նորընտիր հայրապետ— «մեծ քահանա Մատթեոսը, Պոլսից գնանելու ժամանակ, երդմամբ շափ պատուվեր է տվել ազգին անօգնական չթողուլ դպրոցը, մինչև ինքը կարողանա օգնութիւն հասուցանել էջմիածնից։

«Եվ ահա, Փարիզի հայկական դպրոցը կապվեցավ էջմիածնյան աթոռի հետ։

«Կարծում եմ, որ դու ավելի հիմնավոր տեղեկութիւններ ունենաս այս բաների մասին և հույս ունեմ երբեմն կարդալ քո Հիշատակարանի մեջ այս բոլորի մանրամասն նկարագրութիւնը։ Ու այժմ ուրիշ ո՛չինչ գրելիք, ապաստում եմ նամակիդ։ Ողջ եղի՛ր»։

Քո Ս. ՇԱՀԲԵԳ

Այո՛, ես պատահեցա Փարիզում և հայկական Մուրադյան վարժարանին, և նոցա մասին միտք ունիմ առանձնապես խոսել, մանավանդ այն

խնդրի վերա, թե արժանահիշատակ Մուրադը նվիրած լինելով մի ժառանգութիւն ընդհանուր հայոց ազգի զավակների կրթութեան և դաստիարակութեան համար, ինչու միայն որպես մի մասնավոր առանձնաշնորհութիւն հասանում է այդ բոլորը պապական հայերին: Ինչո՛ւ համար ազգը լուռ ու մունջ նստած, սառն հանդիսատես է այդ անիրավութեանը և այն, ծայրացյալ անիրավութեան: Ազգի արծաթը ծախվում է, որ պապականութիւնը առավել խոր տարրանա ազգի անմեղ զավակների սրտի մեջ, որոնց առավոտ և երեկո ազոթք են կարդացնում, որ հայերը դարձ գան և դուրս գալով հերետիկոսութիւններից ժառանգեն պապի գիրկը և արժանի լինեն փրկութեան: Այս ազոթքը գրված է վեհափիկան Մխիթարյանց ձեռքով և որպես մի նոր և հավատարի նշան միաբանութեան հարազատ պապականութեան, ներկայացուցած է վատիկանին և արժանի է եղած առանձին ինդուլգենցիայի: Ազգը այսքան տարիներով լուում է և յուր լռութեամբ շատացնում է ազգի զավակներից պապականութեան գնացած զոհը Հյուրմյուզների ձեռքով, որ սոքա կարողանան այդպիսի ծանր գնով գնել կարդինալական գլխարկը:

Մենք հույս ունինք վեհափառ Մատթեոս նորընտիր ծայրագույն պատրիարք կաթողիկոսից, որ նա յուր հայրապետութեան սկզբումը գնահա առաջը փակե այս բանիս, որ մեծ և մեծ վնասակարներից մինն է:

ԺԱ.

Վերապլ — Փարիզի Մուրադյան Նվ ազգային վարժարանը — Ամբոսիոս Նվ Տոռնե վարդապետ — Համարիկի Ներդաշնակությունը հայերեն — ուրիշ գրեթե ձեռնարկություններ — Ն. Ալվոնդ Ալիշանյանց (Նահապետ) — Տոռա Եվագելը (Հայրունի) — Գրիգոր վարդապետ Կապարաճի Պատապետյան — Ընծա — Ընծայի ընդունելությունը — Ընդունելության ընդդեմ մի բերք — Պատապետ վարդապետ Շահնազարյանց — Հին հայ ճեղինակների տպագրությունը «Շար հայ մատենագրաց» անունով — Աբամյան տպարան — Փելիքս և Պավլինե — Ազգային հիմնադիրք Փարիզի մեջ — Արևմուտք կիսամտագիրը — Թյուրքիայում, հայ օրագրերի օրն որ շատանալու հայտարարությունը — Ցնծուր Թյուրքիայում տպելի գրեթե Նվ օրագրերի վերա:

Մի նոր քաղաք մտանելով ես ոչ միայն անարժան, այլև ամոթ եմ համարում փողոցներ չափել դասարկ նորաստիրության պատճառով: Ես չտնտած համոզում եմ, որ կայսրների, թագավորների և դուքսերի պատրանքները բոլոր մահկանացուների բնակարաններից ամենափառավորքն են: Այո՛, ես գնացի Բեռլինի մուզեոնը, Լոնդոնի կենդանաբանական պարտեզը, բրիտանական հռչակավոր մուզեոնը, Լոնդոնի համաշխարհական հանդիսարանը, բայց այդ դիպվածներում, գնալու խորհուրդս եղած է մի բան ուսանել:

Շեքսպիրը, անգլիական թեատրոնի պարծանքը և բանաստեղծական մեծ կախարդը, վաղուց դրել էր իմ մեջ մի ցանկություն Դուվերը և Վինդ-

պորը անհանգիստ, իսկ առաջնց անհանգիստ հետո չէր կարելի չգնալ Վերսալ, ուր դարերով դարձրել է Թրանսիայի վիճակը։ Վերսալ... այժմ հիշատակարանի բառ. բայց Լուդովիկոս առանձնատեղին ժամանա՞կ... Վերսալը էր բոլոր եվրոպական թագավորների նախանձելու առարկան։ Վերսալի ճոխությունը, նորա ֆանտաստիկական շռայլությունը, նորա պատշաճի գաղափարը երկար ժամանակ ազդեցություն են գործել եվրոպական պալատների վրա։

Ես տեսա այն ապարանքը, այն տները, ուր ապրում էր Թրանսիան. այո՛, Թրանսիան, որովհետև Վերսալը էր այս գործարան, բայց ինչպես միաժամ, ազգի պարծանքը։ Թրանսիացին մի նվիրական հպարտությամբ ցույց էր տալիս Վերսալը օտարներին, կամենալով ասել, ին ահա՛ այն գոգավոր հայելին, որի կենտրոնում հավաքված են Ֆրանսիական փառքի, պարծանքի, հասկացողության և կրթության ճառագայթքը։ Թևև դույն այդ պարծանքի առարկան, ժամանակներից հետո, դարձավ Ֆրանսիացոց համար մի խայտառակիչ վկայություն թագավորների ազգամնաս շռայլությանը. և հայտնի է, որ Թրանսիայի դրամական խնդիրները կարգի դնելու համար կազմած ժողովից դուրս ցայտած ռևոլյուցիայի բոցը։

Պալատի զարդարանքի, շռայլության և մյուս բոլորի արժեքը լիապես գնահատելու համար պիտոյ է հարյուր տարիներով հետ նրևակայել յուր անձը, երբ ոչ այլևայլ, ինչպես այժմ, ծաղկած էին գիտությունքը և արվեստքը։ Այսպիսի դատաստանով մոնամոնդ կնրևի Վերսալի մնծությունը, չնայելով, որ այժմյան եվրոպական լուսի տակ քննելով ամենանյն մարդ խաստովանում է զարմանալի։ Վերսալի պարտեզը զարդարած է հարյուրավոր գնդերիկ մարմարիոնյա արձաններով, այնտեղ են բոլոր մարդերի և աստվածների արձանքը, որ պատկանում են հունական և հռովմեական հնություններին։ Ժամանակը, անձրևի կաթիլները սևացրել են և մաշել են այդ հոյակապ արձանների վերին մակերևույթքը, այնպես որ այժմ կորուստանելով յուրյանց փայլը և ծաղկավեր դառնալով շարժում են տեսանողի կարեկցությունը։ Մարմարիոնը չէ դիմանում ժամանակին.... ժամանակը թագավորում է տիեզերքի վերա. նա և՛ անցողական է և՛ հավիտենական, նորա առաջնները պիտի մաշեն մեզ ամենևին.... միայն մի բան, որ դիմանում էր ժամանակի հոսանքին, որի վերա չէր կարող ժամանակը նույն ազդեցությունը գործել, ինչ որ ուրիշ բաների վերա, այդ բանը... էր Ճշմարտություն։

Այս, ժամանակի ազդեցություն ենթարկված, արձանների մնջ կանգնած էր և մեր Արշակունի Տիգրանի արձանը[35], մնծ հմտությամբ կատարված քանդակագործություն։ Սաոն մարմարիոնը հոգի է առացել Տարատրագնա քանդակագործի ձևերի տակ. և արձանի յուրաքանչյուր գծերից դուրս է երևում բուն հայության տիպը։ Նորանից ոչ շատ հեռի կանգնած էր Միհրդատի արձանը։

Ես նորա մտա Վերսալի այն բնակարանքը, ուր երբեմն ևս էր գալիս մի կյանք, բռնավորված բյուր հրապույրներով.... Վերսալը, որ-

դարև մնծապես զանազանվում է վիճդզորից։ Սա բողեց մեզ մի սարսափելի հիշատակ, յուր մեջ պատահած զարհուրելի գործերի, որոնց ամեն մինը յոթն հոգի է սասցել Շնքսպիրի արարչագործ գրչի տակ. բայց վերսայլի հետ կապած է մի վերին աստիճանի շռայլության հիշատակ։ Շռայլությունն նյութական կողմից, շռայլություն հոգու, սիրու և այլ սխատերի, վերսայլի օդը միշտ վարակված է եղած սիրու սխատով, վերսայլի քնակիչքը և այցելուքը միշտ վիրավորվել են դնպի սիրաը Աստղկի որդու նետերից...

Այն ամայացած տները, որոնց մեջ մնացել են այժմ նոցա նախկին քնակիչների պատկերքը և կամ կարասիքը, այն կանացի և խորհրդական առանձնարանքը.... խուռն հոթձանքով հիշեցնում են Լուդովիկոսներքը, Դյուբարրի, Մենթենոն և Փոմպադուր սիրուհիքը։

Ամեն մի սենյակ, ամեն մի հիշատակարան զարթնեցնում էր իմ մտքի մեջ Ֆրանսիական մրրկալից պատմությունը, սկսած Լուդովիկոս տասնեչորսերորդից մինչև պոլիտիկական մեծ ավազակը[36]։ Ամբողջ վեց ժամ ման գալուց հետո երևկոյացավ, բայց ես որոշեցի գիշերել այնտեղ և նայել վերսայլի վերա գիշերի խար և խորհրդական լուսիյան մեջ։

Կես գիշերն անցել էր։ Մինչ ամենայն ոք կտրվեցավ, մինչ ամենքին ցերեկի ջերմուքենից հուլացած անկողին մտան քնով զորացնելու համար յուրյանց ուժը, ես մտա Վերսայլի ծառաստանը։ Գայծառ էր գիշերը. զովարար քամին մխիթարում էր արևից տանջված ծառերի տերևքը, որ այժմ ավելի ուրախ և զվարթ խշխշում էին։ Լուսինը ամենայն փառահեղությամբ լողում էր կապույտ երկնքի վերա։ Գեղեցմանակա՜ն լուսիյան.... Բնակիչներից ամայացած պալատը, սարի վերայից, սխուր ճակատով նայում էր յուր ոտքում դտանված լճերի և այժմ անջուր ավազանների վերա։ Այդ ժամերում բյուրավոր Հրաշտներով լուսավորված ապարանքը խավար էր այժմ...

Շաղար հիշատակներ և բյուր մտածություններ, ասես թե, պատերազմ ունեին ուղեղիս մեջ։ Ես կոխում էի գետինը այն ծառերի տակ, ուր պալատական տիկիններքը ժողովում էին ծնկաչոք ասպետների սիրու հավատքը։ Ես կանգնած էի մի այնպիսի տեղում, ուստի երևում էին գլխավոր պալատը և մեծ ու փոքր Տրիանոնքը։ Եվ եթե այն բոպեին, հարյուրավոր տարիներով հետ գնար ժամանակը, եթե մարքիս և հիշատակիս մեջ կենդանացած մարդերի մարմինքը ևս կենդանանային, ապա ուրեմն պիտի տեսանեի անշուշտ թե ինչպես անբախտ պոլենիացի Մարիա Լեշչինսկին, դուրս էր գալիս մեծ Տրիանոնից տատառի և գիշերի առանձնության մեջ ողբալու յուր թշվառությունը, գիշերին, ծառերին և հովերին բանալու յուր սիրաը։ Պիտի տեսանեի անշուշտ, թե ինչպես փոքր Տրիանոնի պատուհանում դրվում էր Բագավորի սիրականի ձեռքով խորհրդավոր Հրաշք, և թե ինչպես Լույս և մեղկ և կարդինալի տարկացած Լուդովիկոս տասնեհինգերորդը դուրս էր գալիս պալատից, ոգևորված միմիայն այդ խորհրդական Հրաշքի լուսով...

«Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ», ընդհատեց լուսիյունը ավերակների ժառանգը։ Ես հետևեցա ձայնին, տեսանելու Աթենասի նվիրականը։ Նա թռել էր մի հոյակապ արձանի վերա, որ կանգնեցուցած էր քարաժայռի տակ, մի բոլորակաձև հրապարակում։ Նայեցա չորս կողմս, կամելով հասկանալ, թե ի՛նչ տեղ էր այդ և ահա հիշեցի ցերեկը ինձ առաջնորդող սպասավորի պատմածը։ Այդտեղ լինում էին երբեմն երաժշտական նվագածուիյունք, որ կարգում էր Ֆրանսիական թագուհիներից ամենաշքվառը— Մարիա Անտուանետտան.... Հիշատակը այս անունի, մի կախարդական զավազանի զարկվածքի պես դղրդեց ուղեղս։ Աչքիս երևեցան իսկույն Ֆրանսիական պուպլիցիստները, Մարաթը, յուր սպիտակ կեղծամով, որ խոստանում էր փրկել թագուհու կյանքը։ Մի փոքրից հետո, ասես թե, տեսանում էի խուռն բազմուիյուն կատաղիների, ձայն, աղաղակ, խռովուիյուն, էշաֆոտ, դահիճ և երկու կտրված ու արյունով շաղախված գլուխներ։ Ես ճանաչեցի Լուդովիկոս տասնևվեցերորդը և Մարիա Անտուանետտան... նոցա կտրված գլուխների հար և նման մոմերը տեսած էի Լոնդոնում մագամ Տյուսսոյի մոտ։

Չէ պիտո մոռանալ, որ վերապրյալ փայլողուիյունը սկսեց շիկանալ այն ժամանակից, երբ ֆրանսիական ազգի սիրտը ցրտացավ դեպի Լուդովիկոս տասնևչորսերորդը։ Այս ցրտուիյունը հավասար չափով աճում էր, որքան հ. Լաշեզ, թագավորի խոստովանահոր ազդեցուիյունը Լուդովիկոսի վերա։ Ասես թե ազգը զգում էր դորա հետևանքը և արդարև Լուդովիկոսը մեռավ հիսուսյան (եզվիտ, Ճիզվիթ) դարձած։

Առավոտը վաղ վերադարձա Փարիզ։

Փարիզի մեջ կան երկու ազգային վարժարանք, մինը Մուրադյան, իսկ մյուսը Հայկական։ Առաջինը գտանվում է մխիթարյան միաբանուիյան իշխանուիյան տակ, և վարժարանի ներկա կառավարիչը է հ. Ղևոնդ Ալիշանյանը։ Վարժարանը գտանվում է Սեյնի մյուս կողմում, քաղաքի ծայրում. բավական դեղեցիկ շինվածք, երկու հարկով, որի վերա կարելի է ժամանակով հավելացնել և երրորդ հարկ, եթե միայն հիմքը կարող էր երաշխավոր լինել հավելվածի և ամբողջ շինվածքի ապահովուիյանը։ Գլխավոր շինուիյան մեջ բավանդակվում են մատենադարանը և մի փոքրիկ հավաքուիյ ֆիզիկական գործիքների, և հանքաբանական և կենդանաբանական օրինակներու։ Այն տեղ են դարձյալ հյուրընդունարանը և կառավարչի և վերակացու կամ դասախարակ կրոնավորների բնակարանքը։ Գլխավոր շինուիյան աջ ու ձախ կողմից շինած են նույնպես բնակուիյունք, որոնցից մինի մեջ բավանդակվում են աշակերտների ննջարանքը, ամենայն աշակերտի համար առանձին, իսկ մյուսի մեջ դասատունքը, երկք կարգ բաժանված։ Վարժարանը ունի և մի բավական գեղեցիկ և բավական ընդարձակ մատուռ։

Աշակերտքը այդ դպրոցի որդիք են հռոմեական գավանուիյան հավերի. և բուն հայկական կամ ավետարանական հայերի զավակները տեղ չեն կարող գտանել այդ դպրոցի մեջ։ Ավելորդ է մի խոսք ևս ասել դրպ-

թոցի ուղղության բնավորությունը սահմանելու համար, քան որում աշխարհին հայտնի է այսօր, թե ի՛նչ ասել է աբեղայական դաստիարակություն. վարժապետը մնծ մասնով են մխիթարյան աբեղայք, մնացածքը մի երկու ֆրանսիացիք: Արժանահավատ անձինք, որ շատ տարիներով բնակվում են Փարիզում, վկայեցին մնզ, թե ոչ մի աշակերտ, մինչև այժմ, Մուրադյան վարժարանի մնջ ստացած կրթությամբ չէ կարողացել մտանել որևէցն ֆրանսիական բարձրագույն ուսումնարան: Եվ այսպես՝ Սամվել Մուրադի բարի խորհուրդը չէ կատարված և չէ կատարվում էապես. սորա պատճառը դրած էր նորա նույնիսկ կտակի մնջ, որով նա լինելոց դպրոցի կառավարությունը հանձնում էր մխիթարյան աբեղաների սրբոտեսությանը: Եվ չգիտենք, թե ինչ է մխիթարյանց իրավունքը, որի վերա հիմնվելով ընդունում են միմիայն հռոմեական հայերի որդիքը, չնայելով կտակդի վերջին, ուրեմն և նվիրական կամքին, որով ավանդում էր կտակը համորեն ազգի օգտի համար: Ինձ պատահեցավ խոսք բանալ պատվելի կառավարչի հետ, թե կարո՞ղ էին արդյոք բուն հայոց որդիքը մասնակից լինել Մուրադյան շնորհին. ինձ պատասխանեց, թե այն պատահած անախորժություններից հետո, որով կասկածելի էին երևել մխիթարյանք, որպես ստիպողք աշակերտներին ուրանալ յուրյանց բուն ևկեղեցին, հարկ են համարել, խույս տալով հառաջանալու անախորժություններից, չընդունել այլևս բուն հայոց որդիքը: Մեր կարծիքով, թեև մարդ էր մխիթարյանց խոհեմատեսը (կա՞), չէ պիտու ապերախտ գտանվելին ընդդեմ բարերարին, չէ պիտու պապականությունը որպես մի պատնեշ կանգնեցնելին աղբատ հայերի որդերի և հանդուցյալ Մուրադի շնորհի մնջ. նորա պիտու է կամակատ հրամիրելին, որ բուն հայոց կողմից դասավի վարժարանի մնջ կրոնական դաստիարակ: Նորա չեն ուզել այս և չեն առնելու. ապա թե հայոց ազգը հայտնի յուր իրավունքը մասնակից լինելու կտակին, օրենքը պիտի ստորագրեր պատասխանել հայերի օգտի համար: Եվ մնզ այնպես է թվում, որ մեր նորընտիր հայրապետը չկարող այս խնդիրը առանց ուշադրության:

Ինձ պատմեցին Փարիզում, թե Մխիթարյան միաբանությունը, առանից մի քանի տարի հառաջ, շինել է մի աղոթք, որ Մուրադյան տղայքը երգեն երեկո առավոտ: Աղոթքի բովանդակությունը է մի խնդիր առ աստված, որ բոլոր հայերը պապական դառնալով միանան պապական փարախի մնջ: Այդ աղոթքը ներկայացուցված է պապին և արժանացած է ինդուլգենցիայի: Շատ և շատ ցավեցա լսելով այս ոչ միայն տխուր այլ և դժվելի բանը, ոչ այն պատճառով, որ այս անբնական աղոթքով կարող էին նորա բարեկացնել անհիշաչար աստվածը, այլ նորա համար, որ անմեղ աշակերտների սիրտքը կարող էին վարակվել ֆանատիկոսական կույր ախտով, որի հետևանքը, ցավելի է ասել, եղած է և է համակոր եղբայրասպանցությունն:

Ինձ շատ հարգելի է հայր Ղևոնդի անձը, այս պատճառով ևս թախանձելով խնդրեցի դադարեցնել այդ անբնական աղոթքը. բայց վերա-

պատվելի Հայրը ուրացավ և աղոթքի դռյուիյունը անգամ։ Նա ասաց ինձ թե դուցե որևիցե աղոթք եղած լինի դպրոցում Հ. Թափայել Թրյանցի կառավարության ժամանակ, բայց յուր օրում երբեք ոչ, և թե որոշ տեղեկություն ևս չունի Թրյանցի օրով եղած աղոթքի մասին։ Մյուս կողմից այլ մարդիկ և երբեմն Մուրադյան վարժարանում գտանված աղգային պատանիք, ինձնա հռոմեական դավանությենից, հաստատեցին մեզ, թե արդարև եղած է մի այդպիսի աղոթք Թրյանցի ժամանակ և թե մինչև այժմ ևս շարունակվում է։ Ես չկարողացա այս երկու տեսակ խոսքերը հաշտեցնել միմյանց հետ, մնաց որ վերատին (Հիշատակարանիս միջնորդությամբ) խնդրեմ վերապատվելի Հ. Ղևոնդից, շնորհ առնել դպրոցնեցն այդ վնասակար աղոթքը, եթե չկամին առիթ տալ գայթակղության, եթե չկամին բորբոքել մի մեծ տարաձայնություն։ Ազգի միությունը և ազգային անդամների դեպի իրար ունենալու եղբայրական և հարազատ սիրենակցության սերը այնքան ծանր կշիռ, այնքան մեծ արժեք ունի իմ աչքում, որ այդ բանի համար, ես ինչի ասես պատրաստ եմ...

Չկարծեմ, որ անհայտ լինի Մխիթարյանց, թե պապականության ուշացած է հայերի համար, և այդ խորհրդով կատարված աղոթքները չեն անցանում մթնոլորտից դեպի վեր։

Բուն ազգային անվանված վարժարանը գտանվում է քաղաքից դուրս, Գըրընեկ ասացյալ արվարձանի վիրջն փողոցում։ Վարձով բռնած տունը վարժարանի համար, անտարակույս, չունի այն հարմարությունքը որ ունի Մուրադյան վարժարանը, թեև միևնույն անհարմարության ենթարկված են երկուքը ևս, այն է քաղաքից հեռավորությունը, որ ծանրացնելու էր անտարակույս օրինավոր վարժապետների այցելության և ուսուցչության դինը, և այս է միանգամայնդ պատճառը, որ շատ հասարակ մարդիկ դասատու են այդ դպրոցներում։ Ազգային վարժարանը բաղկանում է մի բավական գեղեցիկ տնից, ուր գտանվում են արդո կառավարիչների բնակարանքը, հյուրընդունարանը և մի սենյակ, ուր կատարվում է աստվածային պաշտոնը։ Տունը ունի մի բավական ընդարձակ պարտեզ աշակերտների և կառավարիչների հանգստության համար, պարապ ժամերում։ Բացի ասացյալ տնից, նորա մոտ գտանվում են երկու փոքրիկ շինություն, ուր բովանդակվում են դասատունքը և աշակերտների ննջարանքը։

Ընդամենն ասան և յոթն աշակերտ գտա ես ազգային վարժարանում, որ պարապում էին նախակրթական պարզ առարկաներով, ինչպես նաև Մուրադյան վարժարանի մեջ։ Դպրոցը գտանվում է Ամբրոսիոս և Նորեն Հարգելի վարդապետների անմիջական տնօրենության տակ, որոնց յուրաքանչյուրքը դասատու են նույնպես մի քանի առարկայից։ Դպրոցը բացված է Մարդիս, Գաբրիել և Ամբրոսիոս վարդապետների ձեռքով, երբ սորա կորվեցան պապականության հետ հաղորդակցությունից. դպրոցի ծանրությունը գտանվում է Կոստանդնուպոլսի հայերի ուսերի վերա։ Որովհետև ընդհանուր բանականության որևիցե գործ

ակսանել առանց մի հաստատ հիմք ունենալու, այս պատճառով ևս ազգային դպրոցը, որպես արդյունք մի պատահական կայծի, առանց որևէ ապահովության, այս րոպեում գտանվում է նեղության մեջ դրամական մասին։ Մենք Ռուսիայի հայերս սովոր չենք այսպիսի գործ կատարել, բայց փորձերը, որ կատարվեցան քանի և քանի անգամ Տաճկաստանի, Կոստանդնուպոլսի մեջ, հաստատում են, թե մեր այնտեղ գտանված ազգայինքը շատ դյուրավար են դնալի այսպիսի գործեր, որ հետ շիջանում են շատով չլինելով հնարք պահպանության։ Պետք էր մի փոքր ավելի շրջանկատ լինել այսպիսի ծանրակշիռ գործերում. պատճառ, մի քանի տարի ոտքի վերա պահել մի դպրոց և այնուհետև խափանել արդեն, հայտնի և բավական զգալի վնաս է։ Բայց մարը արծաթի, որ գործ էր դրված այդ քանի տարու համար, կարելի էր, ավելի շատ օգտի հետով, հիմնավորապես գործ դնել, մանավանդ որ դպրոցի պետը գոնե վեց յոթն տարի ժամանակի է կարող, որ կարողանա ցույց տալ մի արդյունք, մի պտուղ. իսկ եթե նա փակվում էր դեռևս մի անգամ շահարած յուր ուսման շրջանը, ի՛նչ օգուտ ազգին։

Փարիզյան ազգային վարժարանի պահպանելը կամ փակելը ներկայումս համարյա թե հասարակաց խոսակցության նյութ է Տաճկաստանում։ Ոմանք համարում են օգտակար, իսկ ոմանք ուրանում են դրականապես այդ դպրոցի օգուտը. երկու կողմը ևս հառաջ են բերում զանազան համոզիչ և ճշմարտանման փաստեր։ Մեր դրությունը այսպես է. ա) Դպրոց հարկավոր է հիմնել և պահպանել այնտեղ ուր է ազգը. բ) Դպրոցը հիմնելուց հառաջ ապահովել նորա միջնեննավորությունը, որ ազատ մնա ամենայն պատահարների երեսից. գ) Դպրոցից հառաջ հոգարարձություն գործել օրինավոր ազգային դաստիարակներ պատրաստելու համար. դ) Ազգային դպրոցը, աշխարհական լուսավորություն չփոթել կրոնի կամ կրոնավորների հետ. ե) Դպրոցի կառավարությունը հանձնել ուսումնական աշխարհական անձերի. զ) Մերժել հոգևոր վիճակից մարդերի իրավասությունը որևէ ազգային աշխարհական դպրոցի վերայից. է) Դպրոցը վարել ճիշտ եվրոպական ուղղությամբ. ը) Դպրոցի մեջ ավանդվելու ուսումները և դիտությունը հառաջ վարել եվրոպական երկրորդ դասակարգի վարժարանների ընթացակցությամբ։

Օգուտը մի վարժարանի, որ հիմնված էր այլ կանոնների վերա, մենք ուրանում ենք դրականապես և ցավելով ազգի կողմից զուր տեղը դրված արծաթի վերա, բողոքում ենք այն մարդերի ընդդեմ, որ զանազան առիթներից և պատերից ստիպված համոզում էին ազգին ձեռք զարկել մի անհիմն գործի։

Արժանապատիվ Ամբրոսիոս և Տորեն Գալֆայան վարդապետքը աշխատում են յուրյանց կարողության շափ դպրոցի վերա, ինքյանք մանավանդ ենթարկվելով նեղություններին և ծանր ծանր պատասխանատվություններ, որ հառաջացան կամ հառաջանալու էին դպրոցի տնտեսական մասնում գտանված անկարգության պատճառով։ Շատ և շատ ցավելի է

նոցա վիճակը և ցանկալի էր, որ ազգը մի փոքր կարևկից լիներ նոցա, վճռելով նոցա ապագան և կորզելով այն վհատական դրության միջից, որի հորիզոնում արդեն իսկ երևում են հուսահատության անմխիթար ամպերը։ Գործ կատարել, ուսուցանել, հնդինակություն կամ թարգմանություն առնել առանց հոգու և սրտի անդորրության, անհնարին բան է, և նրա վերջին գործերը գործ դրված ինչևս հնարավորվի, այնուամենայնիվ կարելի չէ հուսալ մի միրապես պատարերություն։

Արժանապատիվ Խորէն վարդապետը այս օրերումս դուրս տվեց Լամարթինի ֆրանսիական բանաստեղծի Les Harmonies մակագրով տաղերգությունների հայ թարգմանությունը հին լեզվով։ Ազգային բանաստերը, մինչև այժմ չկարողացան հասկացնել մեր բոլոր հնդինակներին թե մի հին և մեռած լեզու, որ կորուսել էր յուր իրավունքը ընկերական կյանքում, չէ կարող միջնորդ լինել կենդանի ժողովրդի մեջ գաղափարք ներս բերելու համար։ Անտարակույս ավելի հեշտ է հին լեզվով թարգմանել, մանավանդ, ոտանավորը, բայց մի՞թե հնդինակի նպատակը պիտի լինի հեշտ կերպով կատարել մի գործ, երբ այդ եղանակը անօգուտ էր ժողովրդին։ Արդարև մեծ աշխատություն է հարկևի վարդապետի կողմից, ոտանավորով թարգմանել ոտանավորը, որ գրված էր օտար լեզվով և ցավում ենք, որ այդքան ջրանքով հատաջ ևկած գործը մեռած է ազգի համար։

Մենք ցավում ենք մանավանդ արդո վարդապետի աշխատության քան թե այդ գործը մեր ազգին անհասկանալի մնալու վերա. հայր Խորենին չէ հաջողվել ընտրությունը թարգմանելու գործի մեջ։ Ավելորդ չէ մի քանի բառ խոսել այս մասին և ավելի բացահայտ կերպով ասել մեր կարծիքը։

Ոչ ոք չէ տարակուսում, որ պ. Լամարթինը մինն է արժանավոր բանաստեղծներից և թե նորա գործերը արժանացած են լուսավորյալ աշխարհի համակրությանը, բայց Լամարթինի գործերը առաջին հարկավոր բաները չեն մի ազգի համար, որի մասնավորական չքավորությունը բարձրացած է մինչև ի կոկորատն հայոց։ Որևիցե անդաստիարակ ժողովուրդ միշտ անձնատուր է գտանվում միստիկականության, այսպես և հայոց ազգի մեջ, որքան մինչև այժմ հաջողել է մեզ քննել նորա հոգեբանական կողմերը, շատ առատացած է միստիկականությունը, որ միշտ խափան և արգելք է լինում ճշգրիտ լուսավորության, վերացնելով, կորզելով մաքերը այս աշխարհից, ուր պահանջվում է գործունեություն և շարժողություն և ձգելով մի գաղտնածածուկ վերացականության մեջ, ուր դադարած էր ամենայն կյանք և շարժողություն, և ուր խոստովանված կյանքը էր մի անշարժություն և անգործություն։

Լամարթինի Les Harmonies տաղերգություններուն յուրաքանչյուր տողերից փշում է միստիկականություն, որ ոչ միայն օգտակար չէ, այլ շատ և շատ վնասակար է, նրա առողջ բանականությամբ աչքի առկ ձգենք մեր ազգի վիճակը։ Մեզ հարկավոր է կյանք և շարժողություն, հարկավոր է հույս ունենալ մեր անձին և մեր ընկերի վերա, և առանց լքանելու

և վերացական բաներն իմանալու մեր մասին հոգատարձուխյունը, մեր ձեռքով վարել մեր հողը։ Միասիկականուխյունը անհատականուխյան է հուսահատ մարդերի. շատ անգամ նրանցի մարդին անհաջող գաղանվելով որևիցե նշանավոր գործերում, փոխում են յուրյանց մարքերի արամադրուխյունը ամեններին անդիմադրելի, բնական ազդեցուխյամբ և ընկնում են որոնել յուրյանց ցավի հարը վերացականուխյան մեջ։ Այս մի հոգու բարոյական հիվանդուխյուն է, որով վարակվելով կորուսանում են այնուհետև հույս և հավատը յուրյանց վրա, հանդիսացնում են մի ողորմելի պատկեր մասավորական մեևնուխյան, մինչև դադարել մարդերի արտադրուխյունը շարժել.... Լամարխինի կյանքը անցած է և անցնում է այնպես, որ դժվար էր նորան չընկնել միասիկականուխյան մեջ։ Չարաչար խաբված է նա յուր կյանքում, խաղաղը բնակվում է Տուխլերիու, Լուվրի և Սեն-Կլու պալատներում, իսկ Լամարխինի համար պիտա է ողորմուխյուն հավաքին, որ ապրեր։ Մի՞թե ծանր չէր նորան ընդունել ապերախտ բանակալից 14000 ֆրանկ որպես ողորմուխյուն[37]։ Մեր ընթերցողներին կմատուցանենք շատով Լամարխինի գանգատանքի թարգմանուխյունը, որով բողոքում է նա...[38]

Այսպիսի հեղինակի գործը լինում է միշտ միասիկական, բայց մեր ազգին հարկավոր է հետ մնալ։ Մեզ օրինակ չէ այս դիպվածում եվրոպացին, նորա բարոյական և լուսավորուխյան ոտքերը ամրամանիկ են շինված և միասիկականուխյունը տեղ չէ գտանելու հասարակաց արտի մեջ, իսկ մեր ազգը կավկուն ոտքերով թավալկլոր ընկած չարաչար կործանուխյան անդունդի մեջ, արդեն իսկ լցրել է խելապատակը այդպիսի գազափարներով. կրակի վերա կրակ հավելացնելը մոռանում է Հոմեոպատների խելագար առածին similia similibus curantur։*

*Լամարխինի գործի հայ թարգմանուխյան ճակատը զարդարած է մի այսպիսի փորրիկ պատկերով։ Երեսում է Արարատը, երկնքի վերա ծիածան և աղավնին թռչում է դեպի տապանը։ Երկու հրեշտակ, որոնցից մինի գլխի վերա ասող և ձեռքում քնար ցույց է տալիս բանաստեղծուխյան ոգին, իսկ մյուսի գլխի վերա հրեղեն լեզու և աջո ձեռքում բռնած մի ջահ լուսավորում է Արարատը։ Սորա տակ մի գափնյա պատկի մեջ գրած են հետևյալ տառերը Ս. Գ. Ա. Խ.։ Այս բոլորը (պատկերը և տառերը) նշանակում են, թե Սարգիս, Գաբրիել, Ամբրոսիոս և Խորեն վարդապետը, յուրյանց մեջ կենտրոնացնելով լուսավորուխյունը, եկեղեցուխյունը և բանաստեղծուխյունը լուսավորում են խավարած Հայաստանը։ Մեր համար ոչինչ ավելի դժվար բան չկա, ոչինչ ավելի ծանր չգիտենք քան թե հետ պահել մեր ծիծաղը մի այսպիսի ողբալական և պատվամոլ գործից։ Ցանկալի էր իմանալ, թե ինչ է դրցա արածը, որ ապրիլոս են պահանջում մեզանից, գեռևս չորս միլիոն ազգի նրնաչոխան քարոզելով յուրյանց**, մենք բողոքում ենք։*

* (Լատ.)։ Նմանը նմանին բուժում է։ Խմբ.։

** Տե՛ս Հավելված ի պատմագիրն վերադարձի, երես 86, տպած Փարիզ. 1858։

Ամբրոսիոս և Խորէն վարդապետքը պարապում են այժմ Ֆրանսիա-բենից հայերեն, հայերենից Ֆրանսիարէն ընդարձակ բառարանների վերա, թարգմանել են ժողովրդական լեզվով Ցննդոնի Տիլեմաքը, որի կեսը արդէն տպած պատկերազարդ և հրատարակ ապ. Աբրամի տպարանում թողնում են կիսատկատար և այլ տպարանում նորուց պիտի սկսանեն տպել։ Այս անբնական գործողութեան առուիթ պատճառը մենք չկարողացանք հասկանալ։ Գաղվելի թարգմանիչքը ասացին, թե ավելի դյուրագին կլինի այլ տպարանում նորուց տպել, քան թե ապ. Աբրամի տպարանում սկսվածը շարունակել։ Երբ պատահեցավ ինձ հարցանել ապ. Աբրամից այդպիսի թանկութեան պատճառը, նա պատասխանեց, թե բոլորովին այլ պատճառով հրաժարվեցան շարունակել սկսվածը, և այս է պատճառը, որ պատվելի թարգմանիչքը հատաջ էին բերել տպագրապետին. թե նամակ են ստացած Հնդկաստանից, որով գրում էին թե ամոթ է վերապատվելի թարգմանիչներին բան տպել մի այնպիսի տպարանում, ուր տպվում էր Արեմուտքը։ Ահա մի նոր գաղափար հայերի ազգական թանձր պղտորամտութեան. մինչև այս աստիճան մտքի և գաղափարի այլանդակութե՞ւն. չգիտենք ինչ մատնել։ Մնում է մեզ միայն զարմանալ թե ի՛նչպես այդ այլանդակ և ամարգի գաղափար հղացողը կամ այդ խրատատարանութեան հետևողքը ապրում են միևնույն արևի լուսի տակ, ինչպես բնակվում են միևնույն մոլորակի վերա. անդուռնելի կիրք։

Մուրադյան վարժարանի վերա խոսելով ասացինք, թե վերապատվելի հայր Ղևոնդ Ալիշանյանց վարդապետը գտանվում է Փարիզում, որպես կառավարիչ Մուրադյան վարժարանին։ Այս արժանապատիվ անձը ծանոթ է հայոց ազգին մանավանդ Նահապետի անունով։ Նորա Ավագ և փոքր Մասիս, Հայոց աշխարհիկ, Պլպուլն Ավարայրի տաղերգութիւնքը ջերմացուցել են շատ սրտեր Նահապետի անունի վերա։ Հ. Ղևոնդ Ալիշանյանցը յուր անունով և Նահապետ ստորագրութեամբ հրատարակած կամ մինչև այժմ գնահատ չտպված տաղերգութիւնքը տպել է առանձին, որպես Նվագք, Հայրունի մականվամբ։ Հին լեզվով գրվածների մեջ տեսանում ենք գործ գրված ամենայն ջանք և ճիգն միմեանց լինելու, իսկ Նահապետի անունով գրվածքը մեկ աշխարհաբար, բայց շատ հաղթահարված հին լեզվից, և նմանել ցանկանալով մեծ Հայաստանի լեզվին, շատ անգամ մեջ խառնած այնպիսի տեղական բառեր, որ շատ տակավ էին գործ ածվում։ Հ. Ղևոնդ Ալիշանյանցը ունի բանաստեղծական քանքար և այդ քանքարը կարող էր ավելի պարզ և վառ երևել, եթե աբեղայական սևաթույր վերարկուն չլիներ խափանարար։ Միևնույն կերպով ցավում ենք և Խորէն վարդապետի վերա, քանզի գիտելով նորա գրութիւնը և հայացքի, շատ անգամ գուցն ակամա, սահմանքը։ Շատ և շատ

---

*) Մեկն գուշակացյալը ասանը, բայց այս օրվան օրս չորս միլիոն ազգի մը երեսփոխանք են ճանչցված Գաղղիո կայսրութեան մայրաքաղաքին մեջ։ Մինչ խոպան բոլորում ենք այս ներկայիս երեսփոխանութեան ընդդեմ, Աբեմուտի հետ միասին։

Ղ. Էմմանուել

նրախառապարտ կկացուցանեն մեզ ծերունի Նահապետը, և խոստանում ենք, որ Հայաստանի յուանակը յուր շողը կկսին նորա գերեզմանաքարի վերա, եթե յուր այսուհետև երդելիքը երդն ավելի հանկանալի (հաստատակ ժողովրդի համար) լեզվով։ Արժանապատիվ Խարեն վարդապետը խոստացել է մեզ այս, յուր կողմից, ուստի և ավելորդ ենք համարում վերստին խնդրելով ձանձրութիւն պատճառել։

Չէ կարելի մի երկու խոսք չասել Փարիզում գտանված մի ծերունի պապական հոր մասին։ Նորա վերաստուիլյանը այսպես է. Դրիգոր վարդապետ Կապարտճի Կարապետյան, համախոհ Մխիթարյանց Վենետկու։ Այս վերջին բացահայտիչ խոսքերը, ինչպես դրվում են այն մտքով, որ ընթերցողը իսկույն հասկանա, որ նա, ինչպես արդեն քառատուն տարու շուրջ բաժանված Մխիթարյան միաբանութիւններից, գտանվում է Փարիզում, որպես ֆրանսիական քահանա, բայց այնուամենայնիվ միևնույն ուղղութեան և սկզբունքի տեր է, ինչպես Մխիթարյանք։ Ուշ է գարթնել այս ծերունու մեջ գրելու ցանկութիւնը և նշիշեն յուր խորին ծերութեան մեջ ֆրանսիարեն տպելով, ձեռք է գարկել հրատարակելու մի այլ գիրք։ Բայց այս գիրքը մինչև այժմ հայերի մեջ տպված գրքերին չէ նմանում, նախ յուր բովանդակութեամբ և երկրորդ հրատարակելու կերպով, որից առված է և գրքի մակագիրը Ընծա։

Շնորհակալ ենք պատվելի ծերունուց, որ պատվասիրեց մեզ ընծաներով, բայց ճշմարտութեան հարգը չենք կարող ուրանալ, մեզ ոչինչ ընծայով չէ կարելի կաշառել։ Ընծա անունով գիրքը, ինչ որ երկու հատաչափան և մի վերջաբան ունի, սակայն շատ աղքատ է յուր բովանդակութեամբ։ Գլխավոր խորհուրդը Ընծայի է հորդորել հայերը դեպի միաբանութիւն. բայց այս միաբանութիւնը արդո ծերունու գրչի տակից երբեմն երևում է կրոնական մտքով, որ հայերը ընդունեն պապականութիւն, իսկ երբեմն քաղաքական մտքով, որ հայերը.... և այլն և այլն։ Արդո հեղինակը նույն հորդորը տալիս է և հույներին և հրեաներին և վերջապես պատվիրում է հայերին ամենևին չխոսել այդ մասին։ Եթե վտանգավոր չէ տպագրութեան միջնորդութեամբ տարածել մի գաղափար, մի՞թե նորա մասին խոսելը է ավելի վտանգավոր, և այդպիսի դիպվածում ո՛ր կողմից է վտանգը։ Ո՜հ, մենք երբեք վախենալու չէինք այդ վտանգից, եթե... եթե... վերջապես եթե գրված լիներիք այլ հանգամանքի մեջ քան թե գտանվում ենք։

Սորանից քանի տարիներով հառաջ բարձրացած կրոնական-ախտչաստիկյան վեճերի պատճառով, Մխիթարյան միաբանութիւնը ուղղակի կամ անմիջապես հրատարակեց քանի մի տետրակներ և հոդվածներ, որոնց թեպետ և պատասխանվեցավ, բայց Ընծայի վիճակը այլապես էր վճռել ճակատագիրը։ Շնորհակալ ենք Ընծայից, որ առիթ տվեց կարդալու «Ընդունելութիւն Ընծայի» անունով գիրքը, որի յուրաքանչյուր տողերից գուրս է նայում մի ճոխ կատակերգական քանքար։ Այդ գրքի հեղինակը որպես շատերին, նույնպես և մեզ անհայտ է, քան որում թա-

գուցել է յուր անձը Թոռնակ Կրկռիկյան շինովի անունի տակ[39]։ Գրքի բովանդակութիւնը, ինչո՛ւ գիրքն եմ ասում, հառաջաբանը, կամ ավելի յաւէ, գրքի ճակատում դրած պատկերը «ակիզբն և վերջ ընդունելութեան» առորագրով շարժում են մի անզովանալի ծիծաղ։

Այդ գրքի մեջ երևում է Ընծան որպես մի անօրինակ բան. նա գործում է հրաշքներ, նորան ցանկանում են ստանալ, ամենայն տեղից հառաջանում են թղթակցութիւններ, որոնց մեջ երևում է և ճիշտ նկարագրվում է Ընծայի հոգին։ Շատ և շատ անցքերից և նեղութիւններից հետո, որ կրել էր հեղինակը, գաբրիելում է քնից յուր մոր ձեռքով, քան որում այդ բոլոր անցքերը պատահած էին երազում։ Ընծայի ընդունելութեան վերջին երևոյթները արժանի են ուշադրութեան, քան որում ցան ու ցիր բոլոր գրքի մեջ տարածված մտքերը ամփոփված են աչքանոց, վատորո ավելորդ չեմ համարում ներս բերել Հիշատակարանիս մեջ։

«...Վերջապես առինք ու կարդացինք», գրում է հեղինակը (Ընդունելութիւն Ընծայի, երես 123)։

«Երկու Հառաջաբան, յորոց հոդված, Վերջաբան մըն ալ եռևին. որը «1812-ին տպված, որը 1840-ին, որ մեկն ալ օրագրաց ու ժողովոց մեջ տարեկն կարդացված, ուրիշ բան չկա... Ասոնց ամենուն տակը Համախոհն Վխիթարեանց Վիենեկոյ առորագրված, հեղինակին ունեցած և չունեցած առևուններն ալ եռևին կարգավ շարված։ Այսպիսի նորակերպ տողի մը «նշանակութիւնն ի միտ առնելը մեր կարողութենեն վեր ըլլալը կխոստովանինք. վասն զի, երբ Մխիթարյանց միաբը գրքին պատասխանատվութիւնն իրենց վրան առնելով քան սովորութեան (յուսիյամբ) ա՛ս ալ ասեցավ ըսել էր, և կամ թե այս անունը փոխ տալով հեղինակը պատասխանատու կեցընելեն և հարկ եղած առևնն անոր վրա ցրնդած ածականները դնելեն եռև, անիկա մեզեն շատոնց ի վեր զատված է ըսելով, «զարձյալ նույն ա՛ս ալ ասեցավն ըսել էր նե, ինչո՞ւ համար կխոզուն զհեղինակ, որ անհամածայն և անխոհեմ կերպիվ կելնեն՝ քսի, կբսեմ և քսելեն չեմ դադարիր, ուրիշ տեղ մ՚ալ՝ գրեցի և կգրեմ կ՚ըսե։ Իսկ երբ մինակ «հեղինեակն էր պատասխանատուն, ի՞նչ հարկավորութիւն կար այդ «Մխիթարյան պատկառելի անունը հանդգնութեամբ մեջ բերել ու անոր արարոյական պատիվն ազտեղել։ Մխիթարյանց ու համախոհ ընկերին ասնել և պատուավոր ճամբուն երբ քիչ մը մոտենանք դառնալու համար, «մենք ալ սիրտ կորսվինք. թո՛ղ որ հեղինակը կամ վախեն և կամ տկարութիւնեն առջի քաջութիւնը մոռնալով իրեր զինքը Մխիթարյանց զորավոր անվամբը պատապարեր ու պատասխանատվութեան հրաժարականն ձեներ ի սկզբան սվերը է. տար ի՞նչ ըսենք, ի՞նչպես հասկնանք, հասկընանք ալ նե, որի՞ պոչեն ըմբռնենք. այսպիսի գրքի մը կատակեն*

* *Չգիտենք, թե պ. Բ. Կրկռիկյանը, ինչ խորհրդով Մխիթարյան անունի վերա դնում է պատկառելի ածականը «պատկառելի» Մխիթարյանց»։ Ը գործի համար վերագրվում է նոցա անունին այդ ծանրակշիռ խոսքը։*

Կ. Կամսարական

ուրիշ ի՞նչ պատասխան կրնայինք տալ։ Դո՛ւք, որ այդ գիրքը կարդացիք ու հնդինակին ըսածին համամատ՝ անշուշտ ամեն տողերուն մեջը մեյմեկ հիմաստ գտաք ու գտանցիք, մենք ատոնց վրա ծաղրեն ուրիշ ի՞նչ կրնայինք ավելցնել։ Գիրք մը, որ հայ, հուն, հրեա ազգ չմոզուր՝ ամենուն ալ սրինց կ՚ուտա հատա նստած, այդ կուժը ձգե՛ մյուսա առ, և ատոր նման հազար ու մեկ խրատներ և ապառնալիք՝ հայերեն գրավ հայերեն գլխովով խոսկեն ատե՝ Հետ բանիցս ըսելով հայոց բերնին կդպանք մը կգնա, որ այս բանին վրա օտար ազգաց հետ ամենևին չխոսին. այսպիսի համախոհական գիրք մը՝ կատակեն ուրիշ ինչի՞ արժան էր։

«Մխիթարյան համախոհ մը կնկեն հռովմեականության հրավիրող գրուիչ մը կհրատարակե և պոչը նեղի մտած ատենը՝ ես հռովմեական հայոց համար գրեցի կրսե։ Հռովմեական հայերը հռովմեականության հրավիրող ծաղրալի գրուիչ մը՝ կատակեն ուրիշ ի՞նչ բանի արժան էր։ Մխիթարյան համախոհը հայոց վրա ամեն չարիք կգնե, ու գրիչը «Փարիզի հայոց վրա կդարձնե և առակ չմոզուր իրենց կանչելեն ատե, ատոր ալ գոհ չ՚ըլլար կնկեն (իբրև կարևկից) էջմիածնա վարդապետի մը «խնդրո մեջը կմտնե ու գայթակղություն բառը վերջապես կարտասանե, «բանի մը կնա ատեն գնելե ալ շմոռանալով, Մուրադին կհասնի։ Պատասխանիս ատոր իրավ կամ սուտ ըլլալուն վրա չէ՛, այլ այնչափը լավ գիտենք, որ ժողովուրդը ամեն ատեն պատրաստ են գայթակղելու, և ատոր համար իրենց արգելք մը չէ՛ դրված. բայց վարդապետին պարտքն էչ չգայթակղեցնել զժողովուրդս, և իրեն այնպես հրամայեն եղած է։ Իսկ մեզ մեք զՄխիթարյան համախոհը դատելու միտք ունենայինք, պիտի «հարցնեինք իրեն։

«Նախ, մեր ընտանի խնդիրներուն մեջ մտնելու արտոնությունը ուստե՞ր առած է։

«Երկրորդ, նույն արտոնությունը մեզ ալ կտա՞, որ Մխիթարյան համախոհի մը վենետիկեն փախուցած աղջկանը պատմությունը ընենք։

«Երրորդ, արտոնություն կտա՞, որ այն աղջկանը համար վանքի ատպարանին մեջը (մեծավորին և մյուս անդամներեն ծածուկ) տպված «շինծու անցագրին պատմությունն ընենք։

«Չորրորդ, արտոնություն կտա՞, որ ատեն անցնելեն ետև, աղջկան ատեքը Լոմպարտիա դպածին պես կառավարությենեն բռնվելուն, և անոր «անցագրին ինչ կերպիվ տպվիլը հատատավելեն ետև... Մխիթարյանց «չփոթ ատենին վճարած տուրանաց հաշվուն հետը անուրանալի պատմություն ընենք։

«Հինգերորդ, արտոնություն կտա՞, որ դատարկաշրջիկ և ծուռթայլ «Մխիթարյան համախոհի մը տարինեռով Փարիզի մեջ ըրած անառակությունները տեղերովն ու վկայություններովը ցույց ատենք ու մոխրած ատակին հաշիվն ու պատմությունը ընենք։

«Վեցերորդ, արտոնություն կտա՞, որ Մխիթարյան համախոհի մը «երիտասարդությանը ատենին երկու տնսակ հանդերձից նկարագրությու-

մեր ընկերն եաև, մնկովը Ֆոպլասին, մյուսովն ալ Թարդյուֆին ունեցած ճամանուխյան պատմուխյունն ընենք, ու այս օրվան ունեցած իր պատուվավոր և Առաջակա վիճակովը մերկանգամ ազգին առջևը խայտառակվենք...

«Յորինեցորդ, արատնուխյուն կատ՞, որ Գոլխի Մխիթարյան համախոհաց վրա քիչ մը խոսինք ու ազգայնոց կամացը գնմ և մեր աչաց առջևը անարուն մնջ եղնել մանելով իրենց ըրած անզգամուխյանց մանրամասն նկարագրուխյունն ընենք։

«Բայց մենք այսպիսի խնդիրներու մեջ մտնելու և Մխիթարյան համախոհին օրինակավը ժողովրդյան մեջ գայթակղուխյուն ձգելու միտք չունինք. միայն ին այս վերջիններուն համար գերապայծառ Հասունին* պետատ կատանք, (ան ալ իրեն կրոնակցաց օգտին համար) ին կա՛մ յուր պիրավատուխյան տակը գտնվող քահանայքն (ըստ արևելյան սովորուխյան) ամուսնացնեն, կա՛մ անոնց համար վանք շինեն ու երկաթյա պատուհաններուն առջևն ալ մեկմեկ պինվոր կայնեցընեն, և կամ ամենքը «ժողովն վեհանիկ դրկեն....

«Բայց ինչո՞ւ մեր նպատակեն շեղելով ուխտերնուս դեմ ըրինք, մեր պրուխյան հիմը և միտքը գատել կամ պատասխան տալ չէր, այլ միայն «կատակել գհամախոհս Մխիթարյանց. ուրեմն շարունակենք մեր խոսքը։

«Անանուն Փեխն Մարիձայի մը գավակ եւալ տեսրակ մը հանեց, «որով անուն և ածականաղարդ չարիք շինողաց ազգին վրա գրավ, մենք «ալ գհամախոհս մարդիկ կարծելով, եւանք ինք գինքնիս (ին ոչ անուշխուխյամբ, գնի իրավամբ) բանավոր կերպիվ պաշտպանեցինք և բացն «ի բաց մերժեցինք այն անարժան հայհոյուխյունքը որ իրենց սքեմին «և տպարանի մամուլներուն տակեն եւած էին. հիմա նույնը նորոգող և «Ընծայի հագուստով գոնեորնիս նորեն շալող կաշի-երես համախոհը կատակեն ուրիշ ի՛նչ պատվո արժանի էր։

«Ահաւնց ամենը մեկ գի։

«Համախոհաց ծիծաղելի աստվածաբանուխյան առանց մատչելու «(որն որ արհետանիս չէ՛, մտանեալու միտք ալ չունինք) լուսավորչական «հայերս բյուր անգամ ըսինք, ին մենք գԲարկեն անմեղ անձ, մանավանդ «հայրենասեր մարդ մը կճանաչենք, ա՛ն էր, որ իր ազգային ազատուխյունը պահել ուզեց, անոր ուզելուն և ի գործ գնելուն պատճառավն է, «որ մինչև հիմա հայոց ազգը կանգուն կեցած աշխարհիս մեջ, գո՛նե ընկերական ազգաց իրավ կհամարվի. ըսինք նաև, ին մենք, լուսավորչականք, ոչ միայն հռոմեականուխյան պատրաստ չենք, այլ և պապին

* Գերապայծառ Հասուն ասելով, հասկանում է պապական հայերի պատրիարքը Կոստանդնուպոլսի մեջ։ Սա որպես փրոփականդացի բշնամի է մխիթարյանց, և մխիթարյանք փոքր ինչ ընդդիմուխյուն ցույց տալուց հետո, խնամարհական և մեզայական նամականիներով, թերևս ընծաներով ստիպվեցան նորա սիրտը առնուլ։

Կ. Էմմ.

ազանունը մեզի հիշած առենիդ վրանիս այնպիսի սարսափ մը կգա, որ, շատ անգամ, ամիսներով ալ հիվանդ կ'ըլլանք... Մեր բռածները չլսելու զարնող Համախոհին Ընծան, ի՞նչպես կրնայինք ընդունել եթե ոչ կատակավ։

«Գիտենք, որ Հանուն Բարկենի վերի գրած հիշատակութիւններս, «Մխիթարյան Համախոհաց իրավունք պիտի տա ափեղ ցինդ աստվածաբանութեանց թերթերը նորեն դարձնելու և մեր մոլորութեան տարեգրացը վերջի հատորներն ընդարձակելու. բայց մենք ո՛չ այն կողմերն ենք և ոչ իրենց տրամաբանութեանցը մարիկ ընելու գլուխ ունինք։ Մեզի պետք ելաձն ու ազգային իրավունքներս այն է, որ Բարկենն իր առենին երեսի հայրապետան էր և տասնը հինգ միլիոն ժողովուրդի կաթոլիկ, այնպես ժողովուրդի մը, որ սրտերնին իրենց հայրապետին ափը, միշտ արյունեին թափելու պատրաստ էին։ Այսպիսի հայրապետ մը, երբ որ իմացավ թե հայոց եկեղեցին ուրիշներեն կ'արհամարհվի, լուսավորչաց ավանդութիւնքն աղեկ մը բռնելուն ու իրենց կոխվներով քվե ձգած Սահմանադրութիւնը չընդունելուն համար, ա՛ն ալ, իր նախորդաց ճամբուն ամեչը դառնելուն իրավամբ, ելավ բանադրեց զարհամարհողս. և աղեկ ըրավ, իրավամբ ըրավ. այն առենին համար իր պարտքն էր. չ'ըներ նե, շատերուն պես ազգասյաց կ'ըլլար և դժոխքը կ'երթար։...

«Մխիթարյան համախոհք ասոր ըսելիք ունի՞ն. իրենց պապը, սա ժամանակիս, միլիոն մը հավատարիմ ժողովուրդ ունի նե, ի՞ղ հասատատանն, որ գրիչնիս կոտրտենք ու մեկ դի ձգենք.... Երկայն բարակ ամաածել պետք չէ. համախո՛հք, դրե՛ք, քահանաներն ալ մեջը դրեք.... չը ելեցա՞վ.... կես միլիոն ա՛լ չեզավ... վա՛յ ձեր ինվաստութեանը... այդպես ըլլալը շատոնց գիտենք. այսու ամենայնիվ այս օրվան օրս կդնե «կվերցնե Հայաստանեայց հայրապետ մը անկեց ի՞նչ վար տեղ ուներ։ «Արդարև, կատակեն ուրիշ բանի արժանավորութիւն մը չո՛ւնիք եղեր։

«Հայոց եկեղեցին Բարկենին ըրածը տարվն տարի նորոգելեն շատոնց դադրեցավ, իսկ Մխիթարյան Համախոհաց անանկ վարդուրը տասրին տասներկու ամիս քաշված, մարիկ ընելով գլուխնիս դդում դարձավ.... քաջութիւնը Մխիթարյան Համախոհացը չէ, բայց հանցանքը հայոցն է, որ քանի մը Տիրայրական տրամաբանութենեն վախնալով, «կապված մնացին ու հերձված անունը միշտ մերժեցին. ի՞նչ կա այդ «հերձված անունին վրա, և ի՞նչ ըսել է, որ այդ շատ խըրտեր են ու չկրցին օր մը ատոքի վրա ելնելով ըսել ին, այո՛, հերձված եմ ասոնցմե, որ «ենկեղեցիներս կ'արհամարհեն, ի՞նչ անպատվություն կա այդ անվանը մեջ.... եթե այսպես ըսեին, դուցե իրենց պարծանք մըն ալ կ'ըլլար այն տասնը, որով ոչ միայն զՄխիթարյան Համախոհս թավալգլոր բերած ու տանել անդնդոց մեջը ձգած և ի թշնամյաց անդառնալի կերպիվ հեռացած «կ'ըլլային, այլ և Եվրոպան ալ առավել որոշ կերպիվ և ըստ ամենայնի ազատ ու առանձին ազգ մը կճանչնար զիրենք։

«Հիմա դո՛ւն ըսե, սրամիտ ընթերցող, այս մարդով շաղկալ ազգդ,

«Հռովմեականութեան հրամիրող անձանց սկավառակներուն մէջ պէտք մը պակաս կա՞...

«Կատակն ալ ուրիշ արժէք ունի՞ն։

«Մխիթարեան Համախոհաց հազար անգամ գործքով ալ ցույց տված ենք, որ մենք, թէ՛ լուսավորչական, թէ՛ հռովմեական և թէ՛ ավետարանական հայքս մեկ սերունդ, մեկ ընտանիքն և եղբայր ենք, մեր երակներուն արյունը մեկ տեղն կրնան և անոր անվամբը կկանչվինք, միասին ծախելու և միասին առնելու միայն չ'ունեցանք, դեռ քանի շորս ժամ չեղավ որ հրատարակեցինք և ըսինք, թե մեք ձեզի գործիք ըլլալեն և եղբայրենիս ուրանալեն կամ ստանալեն զատ ուրիշ բանով մը պատվել։ «ձեր ծիծաղելի վեճերուն դոհ չ'ըլլալու, վասնորո չենք ուզեր, որ «Մխիթարյանց Համախոհներն ելնեն ո՛ր և իցե կերպիվ մեր ազգայնոց «ներքին սերն առնելու թյան, կապակցությունը բաժանման և խաղաղություն խռովության փոխելու պատճառ ըլլան. այսպիսի բանավոր և «պատկառելի բողոքնուս ընդդիմության ընդդ Մխիթարյան Համախոհը «կրնայի՞նք կատակեն զատ ուրիշ բանով մը պատվել։

«Թո՛ղ ընթերցողը Ընծայի հոգվածներն իրարու վրա դիզն ու խալ«ակինի մը մեջ դնե և ամենավարպետ քիմիագետի մը ձեռնտվությամբ «զրոե, թե որ երիտասարդ բանասիրի մը ներքին համոզմամբը մերժված «հռովմեական պարգևը չելնե նե, կատակնիս ևս կառնենք.... գնա՛, «Մխիթարյան Համախոհ, գնա, ներիին նամոզման 29 երրորդ երեսի «վերջին հինգ տողերը կարդա՛....» ա՛ն թող ըլլա բնդի պատասխան, եթե զոչ այսուհետև քո արժեքդ կատակ է։

«Մխիթարյան Համախոհք.

«Ընծային չէ՛, վասն զի այն պատիվն անոր բնելու միտք «չունինք, և ոևմտիվք կխնդրենք, որ անոր նման քանի մը հատ գրքեր «զրկեր հանեք, որպես զի ձեր ծիծաղելի գրությունը բոլոր ազգն աղեկ մը «իմանա և արժեքնիդ ճանչնա։ Բայց ձեզի վերջին խրատ ըլլա ըսելիքնիս, «և երանի՛ թե կարենայինք օգտել։ Մենք Հայկա զավակներս համոզված և «համբերնիս հաստատ դրած ենք, թե մեր ամեն թշվառությանցը միակ և «առաջին և վերջին պատճառ դուք (և ձեզի նման ազգատյաց, թե՛ լուսա«վորչական, թե՛ հռովմեական և թե՛ հունական քահանայքդ) եղած եք, «դուք եք Հայաստանն ավերակ դարձնողը, դո՛ւք եք միլիոնավոր ժողո«վրդոց անհետ ըլլալուն պատճառը, դուք եք Հայկա անմեղ զավակներուն նաևեն ու աւրեեն ընկնողը; որ գետերուն, ատերուն և գայլերուն

* Ներիին նամոզումն, տպած 1853. Նոյնան ազգովնու տպարանում, երես 29. «Ու տպած գրքերդ, թող թող ըլլա, վերջիդ մեջ պահե զանոնք որ ուրիշի մը ընծա ընես Գապին Խոզմեն, մենք ընդմեն շնորհակալ ենք, ու հռովմեական պարգևի կարող չենք։ Արդարև այս խոսքերը լսելուց հետո Մխիթարյան Համախոհի վերտին ընծա առնելը մենք ևս համաձայնում ենք վերին աստիճանի անհամարությունն եվ այսպիսի ընծան, համաձայն ենք ոչ. Կըհոխկյանցին, որ կատակից ավելի ուրիշ բանի արժանի չէ։

Ն. Խմ.

զրևրանը բյուր հազարներով ձգնվեն նաև, մնացածներն ալ իրենց մարզը գրվին հափշտակեցիք ու անոնց արտասվալից և արտասուառատ ազաչանացը ձայներուն ականջնիդ ու սրտերնիդ խիղալով, տարիք ձեր փառասեր ակնկալութեանց իրրև փոխարեն, դժոխավտղվոց ձևոքը գրավ ձգեցիք....

«Դո՛ւք եք, որ Երևելի և Անհրեսյր ծագրալի խնդիրներով ազգը ձգաբախտոր հանեցիք ու ընտանեաց մեջ հուր, սուր, բաժանում և տանկութիւն ձգեցեն նաև ազգութիւնները մահվան և գերեզմանաց դռները հասուցիք։ «Դո՛ւք եր նաև, որ մինչև ցայսօր չիշատացաք մեր արյունը ծծելեն....

«Ձեզ ասեմ, ո՛վ Համամատեր և գիշատիչդ Հոսիկյան սեռին. անհմեղաց արյան շռոին աստուծո կենդանավուլն առջև եյած, բնակութիւն ձեր ավերակ լիցի ըսելու վրա է.... Բայց մինչև այն ատենը, կատակեն ոգաս ուրիշ բանի մի՛ ապատեք. վասն զի անկնց ալ ուրիշ արժեք մը չունի՛ք։

Շնորհակալ ենք պ. Կրկոռիկյանից և մանավանդ ուրախ ենք նորա կատակերգական բանքարի վերա, բայց չենք կարող շատել, թե այն շքեղանակը, որի մեջ երևեցնում է նա ընթերցողներին յուր տաղանդը, ամենևին անարժան է նորան։ Հոգով շափ ցանկանում ենք, որ արգո հեղինակը յուր մարի ծնունդը ավելի. պատշաճավոր դիտատով հանդես հանի երբեմն մեր ընթերցասերներիս առաջև։

Ընծայի հեղինակը, ասատիկ արտևեցած պ. Կրկոռիկյանի ընդունելութեյան վերա, հրատարակել է մի փոքրիկ թերթ, որպես մնարժոզական պատասխանի. բայց այդ թերթի յուրաքանչյուր տողերից դուրս է նայում մի ծերացած դորութեյուն, որ յուր մանկութեյան ժամանակ ևս չէ հատկացած մի պնդութեյամբ. ամենազորավոր պատասխանին, որ լսում ենք ծերունի հոր բերանից, այս է, պապյան եղիր, որ խալսիս։ Լսեցինք, թե այս թերթը ևս ընդունել է յուր արժանի պատասխանը, բայց մեզ չհաջողեցավ անսանել և ընթևնուլ։

Խոսելով այսքան հոգևոր վիճակից մարդկերի վերա, հարկ համարում ենք հանդես հանել Հիշատակարանիս մեջ արգո Շահնազարյանց Կարապետ վարդապետը, Թիֆլիսի թեմական ատենի երբեմնական նախագահ ատենակալը, որ գտանվում է այժմ Փարիզում։ Քանի մի տարի առաջից հետաջ բարձրացած մրրիկը խլեց նորան յուր տնից և բավական միջոց պատուհալով ձգնց վերջապես Ֆրանսիայի մայրաքաղաքի մեջ։

Արգո վարդապետը ձեռք է զարկած, մինչև այժմ չտպված Հայոց հին հեղինակների գործերը յուր ծանոթութեյամբ և մեկնաբանութեյամբ տպելու։ Այս գործերը տպվում են Շար Հայ մատենագրաց մակագրութեյամբ և բաժանվում են նոցա, որոնք հատաջուց գրված էին այս հրատարակութեյան բաժանորդ։ Լսում ենք, թե տասն և չորս հատոր պիտի լինի բոլոր հրատարակութեյունը։

Որպես հնութեյան հիշատակարան պատվելի է մեզ այս հրատարակութեյունը և այն ազգային գործութեյամբ պարապողների համար. Թող

արդո տպագրողը հաճի ընդունել մեր շնորհակալությունը։ Ինչ որ վերաբերվում է տպագրողի անփական ծանոթություններին, մենք գտանվում ենք մեծ տարակուսի մեջ, և անտարակույս մի օր ազգային կրիտիկոսը կդատեն այդ բաները, ավելի զտելով և մաքրելով, ինչ որ դեռևս մնացած էր խառն և շփոթ։ Արդո վարդապետը, այս բաները տպում է յուր առանձին տպարանում։ Խոսելով տպարանի վերա, պարտականություն ենք համարում մեզ լուռ չմնալ պ. Ճանիկ Արամյանի տպարանի մասին։

Պ. Ճանիկ Արամյանը, Նիկոմիդիա քաղաքից, երկար ժամանակ Փարիզ բնակվելով և տպագրական արվեստին հմտանալով, բավական հարըստացուցել է յուր հայկական տպարանը բազմատեսակ տառերով։ Այդ տպարանի մեջ գործածական տառերը սովորաբար են նոր ոճով շինվածք. բնպետ և ոչ բոլորովին կատարյալ, ճարտարության մասին։ Բայց պ. Արամյանի փութը և ջանքը, այլև պատրաստականությունը ընդունելու ամեն մի բարեմիտ խորհուրդ, յուր տպարանից այս կամ այն ներությունը վերացուցանելու համար, արդարև վկայում է, թե մինչև ո՛ր աստիճան աշխատում է նա ծաղկեցնել հայկական գրատպությունը Եվրոպայի խորհրդավոր մայրաքաղաքներից մինի մեջ։

Պ. Արամյանը վաճառում է յուր տպարանից թե՛ մայրեր և թե՛ ձուլյալ տառեր և ցուցակը այդպիսի տառերի վաղուց հրատարակած է մի առանձին մեծ թերթի վերա։ Մեծ համբույրամբ հաջողեցավ մեզ լսել պ. Արամյանից, թե նա շուտով պատրաստվում է առնել մի հրատարակություն, թե ամենայն ուղարկված ձեռագիր կարելի է տպել նորա տպարանում և այդ կարելությունը հիմնված է միայն մի պայմանի վերա. ինչ պայման է այդ. որ ընդդեմ չլինի տպելի բանը ֆրանսիական քաղաքականությանը։ Այս պայմանը շատ հեշտ հանձնառական է, մանավանդ որ հայը հարաբերություն չունենալով ֆրանսիականի հետ, ինչպես ուրիշ կառավարություններուն հետ, ուրեմն և նորա օգուտը կապված չէ մի վնասի հետ, որ պիտի վերաբերվեր ֆրանսիական կառավարության։ Շնորհակալություն պ. Արամյանին, և առավել շնորհակալ կլինինք, եթե բոլորովին ազատորեն և անկախաբար լցուցանե յուր խոստումները։ Ազատ գրատպությունը մեծ քայլափոխ է դեպի հառաջադիմություն. և ամենայն մարդ, որ կարող էր որևիցե կերպով, ընթացք տալ ազատության, արժանի՛ և արժանի՛ է մեծ շնորհակալության։

Մեր ներկայությամբ դուրս եկավ այդ տպարանից մի գիրք Փելիմս և Պավլինե պ. Թորոսյանի ձեռքով իտալական բնագրից թարգմանված։ Բացի շնորհակալություններից ուրիշ բան չունինք ասելու պարոն թարգմանողին. ներողամիտ աչքով նայում ենք թե՛ լեզվի և թե՛ թարգմանության բերությունների վերա, հարգելով նորա աղնիվ ձգտողությունը, յուր ձեռքից եկածի չափ հարստացնելու մեր ժողովրդական աղքատին գրությունը։ Բայց չէ կարելի մի քանի խոսք շատել այն մասին, թե հեղինակը այդ գործի, զուր տեղը աշխատել է մի քանի բան այլայլես փոխելով. ավելի

լավ էր բան առ բան օրինակել Բեռնարդեն դը Սան-Պիեռի Պավլոս և Վիրգինեն, քան թե նույն բանը բայց ավելի անշուք կերպարանքով հանդես հանել որպես մի նորութիւն. գոնե ավելի հաճութիւնամբ կկարդայինք դրան։ Ամենայն մարդ, որ կարդացած էր Պավլոս և Վիրգինե անունով Բեռնարդեն դը Սան-Պիեռի գործը, Փելիքս և Պավլինեի մեջ պիտի տեսանեն մի կույր նմանողական ձգտողութիւն. ոչ թե միայն գաղափարքը միևնույն, այլ և շատ անգամ խոսակցութեան նյութը ևս։ Այստեղ ևս երևում են երկու անբախտ դերդաստանք, երկու աղքատ ու անմեղ սիրահարք և վախճան գործի, մի փոքր այլապես ընթացք տալու համար, կատարված ավելի կոպիտ և անբնական կերպով։

Այդ գործը (բնագիրը) չունի ոչինչ մատենագրական արժանավորութիւն։ Աղաչում ենք մեր եղբայրակիցքը, թարգմանութեան ժամանակ ուշ դարձուցանել այն բանի վերա, որ բնագիրը ունենա մի հաստատհիմն արժանավորութիւն։

Մենք ուրախ ենք, որ ամենայն տեղ հայերի մեջ երևում է այժմ փոքրիշատե շարժողութիւն, ազգը և ազգութիւնը ասես թե կամաց կամաց դառնալու են հասարակաց խոսակցութեան նյութ. բայց մեր ցանկութիւնը այն է, որ այդ առարկայի վերա ամուլ շատախոսութեամբ չհերիքանան։

Շատ փոքր է Փարիզում գտանված հայերի թիվը, բայց այս փոքրի մեջ երևում է ազգայնութիւնը ավելի շատ, քան թե այլ բազմահայ քաղաքներում, ուր շատ անգամ ձգել է մեզ բախտը։ Փարիզում գտանվում է քանքարավոր պ. Ս. Ոսկանյան ուսումնական ազգայինը, որ քանի մի ժամանակ առաջ հրատարակելով Աբելի անուն օրագիր (խափանված մի հայ ճիզվիթի դարանագործութեամբ, ամո՛թ և խայտառակութիւն այդ սևահոգի անպիտանին) այժմ հրատարակում է Արևմուտք անունով կիսամսագիրը։

Ազգային արգո և պատվելի եղբայրակիցք պ. Թյուլսուլյան, պ. Քյաթիպյան և այլք հոգաբարձու լինելով բոլոր տպագրութեան ծանրութեանը, հրավիրած են պ. Ոսկանյանին հանձն առնուլ միայն շարադրելը։ Ազնիվ հայը ղոհելով յուր ժամանակը կամակար ընդունում է այս հրավերը և ահա Արևմուտքը երևում է հայերի աչքին։ Մենք գիտենք մի ազատախոս հեղինակի վիճակը անկիրթ ազգի մեջ. այդպիսի հեղինակը ոչ թե միայն պիտի կուրծք մաշե, աշքի լույսը թափե ազգին նոր գաղափարք տալու համար, այլև պիտի տանի այն սև սև բամբասանքներին, որ անխորհուրդ խավարասերքը անշուշտ ուղղելու էին մի այդպիսի հեղինակի վերա։ Ասիացին չէ կարող մերկանդամ տեսանել ճշմարտութիւնը. Իրիսը պիտի քողով ծածկվի միշտ եգիպտացու աչքից. այս պատճառով ևս տեսանում ենք զանազան խլրտումնք և ինչնամական հարձակմունք Արևմուտքի թե՛ հիմնադրերի և թե՛ շարադրողի ջանքը և աշխատանքը ունայնացնելու համար։ Գիտենք, թե մինչև ե՞րբ պիտի հարատևե հայ-ճիզվիթների ազդե-

ցուիյունը մեր ազգի վերա... Ո՛հ, օրերով, ամիսներով և տարիներով ոգբալու նյութ։

Մենք մի առանձին հոդվածով մասնավորապես կխոսանք Արևմուտքի վերա և մի երկու բան մեջ կբերենք Արևմուտքից այդ հոդվածի մեջ, մեր ընթերցողներին մի փոքր ճաշակ տալու համար։ Այժմ այսքան թող հերիք լինի ծանուցանել, որ այդ օրագիրը հրատարակվում է ամիսը երկու անգամ, յուրաքանչյուր համարը բաղկանում է մի քառածալ թերթից, տարեկան գինը Փարիզում է հինգ մանեթ, Մոսկվայի մեջ վեց մանեթ, իսկ Ռուսիայի այլ քաղաքների համար յոթն և կես մանեթ։ Ցանկացողքը առանալ այս օրագիրը կարող են յուրյանց խնդիրը պատկանյալ արծաթով հանդերձ հասուցանել կամ պ. Նազարյանցին կամ պ. Նալբանդյանցին։ Հյուսիսափայլը հանձնառու է Արևմուտքի գործակալությանը Ռուսիայի մեջ։

Արևմուտքի ազնիվ հրատարակողը և հիմնադիրքը թող հաճին ընդունել մեր առ ի սրտե հրապարակական շնորհակալությունը, որոնց ցանկանում ենք նույնպես ամենայն հաջողություն և հառաջադիմություն։

Հիմնադրներից մինը, ինչպես ասացի, պ. Թույսուզյան արգո երիտասարդը Փարիզում վաճառականության և երկրագործության գպրոցների մեջ ավարտելով յուր ուսման ընթացքը, պարապում է ներկայումս առևտրական գործողությամբ։ Այս պարոնը ընկերանալով պ. Գռեյլ (Gréle) ֆրանսիացու հետ կատարում է վաճառական աշխարհում մեծագույն գործեր։ Այս երկու ընկերակիցքը ունին վաճառական տներ Փարիզում և Կոստանդնուպոլսում։ Քառասուն տարուց ավելի տևում է Գռեյլի վաճառական տունը և շահած է բոլոր Եվրոպայի և Ամերիկայի վաճառական տների հավատը։

Ազգային վաճառականք ուրևիցե կարող են ամենայն ապահովությամբ գործ կատարել այս տան հետ. մանավանդ նախիջևանցոց օգտակար էր այս տունը, որին գործակից էր մի ազգասեր հայ։ Եթե շատ ցրյան կամ այլ ապրանք ուղարկվելու լինի Եվրոպա Մարսելլի վերայով, այդպիսի դիպվածում պ. Թույսուզյանը և պ. Գռեյլը պատրաստ են մի առանձին տուն բանալ Մարսելլում։ Ահավասիկ պ. Թույսուզյանի հասցեն։

№ 56, Boulevard de Sébastopol, Paris, M. Tuysuzian.

Ամենայն հոգով ցանկանում ենք, որ մեր ազգային եղբայրակիցների մեջ բացվին զանազան կապակցություններ։ Մի բարոյական կապակցություն, մի բարոյական ընկերություն ավելի հիմնավոր է և հաստատուն, եթե հարակից լինին նորան այնպիսի հանգամանք, որ ազգայր տատ, եթե հարակից լինին նորան այնպիսի հանգամանք, որ ազգայրս էին և նյութական շահատատացության. այս խնդրին կարող է կատարելապես պատասխանել առևտրական կապակցությունը։ Ես միանգամ Հիւսիսափայլ շատակարանիս մեջ (1858 օգոստոս Հյուս[իսափայլ] հ.[ամար] 8) խոսելով Նախիջևանի հացի, յուղի և երկաթի վաճառականության մասին, հայտնել էի իմ խորին ցավակցությունը այն բանի վերա, որ Նախիջևանե-

ցի արդո վաճառականք անմիջական հարաբերություն չունենալով Եվրոպայի հետ հարկադրված են հնազանդվիլ եվրոպական վաճառական տներին, որ գտանվում են Ռոստով և Նախիջևան քաղաքների մեջ։ Ինչպես մեզ քաջ հայտնի է, պ. Թյուլպուդյան ազգային պատրաստ է բանալու ամենայն տեսակ հարաբերություններ և յուր հետ գործ կատարել կամեցողներին միշտ հայտնել ապրանքի գները և հարկավորություններ քանակությունը։ Մանավանդ հարմարություն կա մեր հայ վաճառականներին, որ կարող են հայ լեզվով բոլոր տներ հետ գործ ունենալու ժամանակ պիտի նեղություն կրեին լեզվի կողմից։

Այդպիսի վաճառականքը պ. Թյուլպուդյանցի հետ առաջին անգամ ծանոթացնելու և ավելի մանրամասն լուրեր և ծանոթություններ առևտրական գործողություններ վերաբերյալ, տալու համար պատրաստ է կոմս Լամանուելը, եթե խնդրեն նորա միջնորդությունը։

Ազգային խնդիրներով պարապող և ազգի վիճակին ուշադիր նղող մարդը չէ կարող չտեսանել, որ հայերի մեջ ևս օրե օր առավել շատ դուրս երևելու վերա են օրագիրը, լրագիրը կամ այլ բանասիրական հանդես։ Թյուրքիայի հայ օրագիրը և լրագիրը համարյա թե ամենայն ամիս հրատարակում են այս կամ այն, հրատարակվելու նոր օրագրի հայտարարություն։ Այո, ցավելով խոստովանում ենք, որ շատ անգամ այդպիսի օրագիրը հազիվ թե տեսած հրապարակի լույսը և ահա շիջանում են աստղների նման, մի տխուր հիշատակ թողնելով մեզ յուրյանց մի քանի համարը։ Օրագրերի այսպիսի անհաստատությունը չէ պիտո հանցանք համարել հրատարակողներին. մեր ազգի մեջ, ինչպես վերևում ասացինք, օրինավոր մատենագիրը կամ օրագրի հեղինակը պատերազմ ունի ոչ միայն ազգի դարերով կարծրացած նախապաշարմունքի հետ, այլ և խավարապաշտների հետ և ոչ միայն այլազգի, փա՞ռք և պարծա՞նք մեզ հայերիս, նաև հայկական ճիզվիթների հետ, որոնց պոլիտիկային ընդդեմ է ամենայն ճշմարտություն, որի հետևանքը լինելու չէր մի օգուտ ճիզվիթներին։

Թյուրքիայում մինչև այժմ ազատ էր գրատպությունը, բայց այժմ լսում ենք, որ ամենայն ազգից կարգված են ցենզորք (քննիչք) և, ինչպես պատմում են, մեր ազգից կարգված պարոնը առավել խիստ վարվում է հեղինակների հետ, քան թե պահանջում էր Թյուրքիայի խաբխալյալ կառավարությունը։ Այստեղ երևում է մոլի եռանդը.... մենք բողոքում ենք այդպիսի քննիչների ընդդեմ, և խնդրում ենք, ուշադիր լինելով մեր անբախտացած ազգի վիճակին, տեղիք չտալ անձնական կրքերի և ախտերի, երբ որ պիտո էր կատարել յուր պաշտոնը։

Ուր չկա մտքի և բանականության ազատություն, այնտեղ կա հոգու սարկություն, իսկ ուր սարկություն, այնտեղ չկա կյանք։ Հայոց ազգը առանց նորան ևս քաղաքականապես մեռած է ներկայումս. մի վերանորոգություն, մի քաղաքական վերածննդություն եթե կարելի էր երբևիցե հուսալ, ապա ուրեմն պիտի լինի այն ճշգրիտ և ստույգ լուսավորության

միշնորդությամբ։ Լուսավորությունն է միակ հնարը միմյանցից բաժանված և շատ անգամ, կրքերն և ախտերի խաղալիք դառնալով, իրյար հետ թշնամացած ազգային անգամը միմյանց հետ անքակտելի կապակցելու և ազգային մարմնի ամբողջությունը դուրս երևցնելու համար։ Լուսավորությունն է այն աստվածային շունչը, որ աշտարակի օրերից բաժանվածը միավորում է դնելի մի կապ եղբայրակցության և սրտակցության. նա է այն աստվածային հուրը, որ ջերմացնում է ամենայն սառն սիրտ և պաղարեր է դարձնում ամենայն ամուլ և անծին հոգի։

Բայց լուսավորություն ստուգապես, չավ միտք առնելով այս մեծախորհուրդ բառիս նշանակությունը, առանց ինչ տալու յուրաքանչյուր մարդու ազատորեն խոստովանել յուր սրտի վկայությունը, մենք ճանաչում ենք կորստարեր խմաստակություն, առաջնորդված ճիզվիթական հոգով։— Կենցե՛ ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ։

Ազատ ստուվածն այն օրից,
Երբ հանեցավ շունչ փչել,
Իմ հողանյութ շինվածիս
Կենդաներություն պարգևել.
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռս պարզեցի,
Եվ իմ անզոր բևեռով
Ազատություն գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ
Օրորոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մորս ինը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ոխտեցի
Ազատությունը սիրել։

Թոքով լեզվիս մինչ կապերը
Արձակվեցան, բացվեցան,
Մինչ ծնողս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խոսքն որ ասացի,
Ջէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ.
Ազատությո՛ւն դուրս թռավ
Իմ մանկական բերանից։

«Ազատությո՛ւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից.

«Ազատությա՞ն դու զինվոր
Կամիս գրվիլ այս օրից:
Ո՛ճ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կսպասե.
Ազատություն սիրողին
Այս աշխարհը խիստ ճեղ է»:

— Ազատությո՞ւն,— գոչեցի,—
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե բշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար. ազատությո՞ւն:

ԺՌ

Ներածություն — Բեգզադեի յոթն երաշխիքը — Նաոն լուրեր — Մի արնգույն ֆանատիկոսություն:

Թող ինչ կամին խոսեն, բայց Բեգզադեն համը տաբավ: Հիշատակարանս պարտակա՛ն է նորա հրաշագործությունքը պատմել: Այնպիսի գործեր, որպիսիք օր ու ցերեկով գործվում են Բեգզադեի ձեռով, նմին նյութ չլինին հրապարակախոսության, նմին այդպիսի անբրիտոնյա և անբարոյական մարդիկ դպրության ձեռով չպատուհասվին, բանականությունը, արդարությունը մեզ — դրողներիս — կդատապարտեն:

Մենք հրավիրում ենք բոլոր հայոց վաճառականքը ուշադրությամբ կարդալ այս տողերը և ամենայն արդարությամբ դատաստան կատարել: Եթե այդ դատաստանի մեջ լինի այնքան բարեխղճություն, այնքան արդարամտություն, որքան կա մեր առնելու պատմության մեջ, ապա ուրեմն Հիշատակարանս կհասանի յուր նպատակին և ես կատարած կլինիմ իմ խորհրդավոր պարտականությունը:

Թող չարանեղին տղայքար այն մարդիկը, որոնց ծանր է տեսանել բաց աչքով որևիցե պակասություն մեր ազգի անդամներէն վերա. առողջ բանականությունը պահանջում է հանդես հանել դորանց և ֆայտառակել և դատապարտել, որպեսզի օրեօր վերանան և անհետանան այդպիսի բարբարոս գործողություններ:

Թո՛ղ, նույնպես, Բեգզադեի նման մարդիկ չուրախանան, մեր ինքյանք—ազատ մնալով, առիթ ունենին զվարճանալու, տեսանելով Բեգզադեի բրդգզությունը, այլ դորա փոխանակ թող մարքեն խղճմտանքները և մի փոքր մտածեն, լա՛վ են արդյոք այն գործերը, որոնց մասին դատա-

պարտվում է Բնդդադեն. արդյոք չունե՞ին ինքյանք ևս այդպիսի գործեր, արդյոք ապականված չէ՞ին նույնպիսի կամ ևս ավելի վատթար կեղտերով։ Հիշատակարանիս աչքերը բա՛ց են և ականջները սուր... Բարվոք է յուր անձը մաքրել, քան թե բարկանալ այն մարդու վերա, որ տեսանելով ապականությունը, ասում է հայտնի թե ապականված ես։

Տարակույս չկա, մեր ազգի հիվանդությունը դարավոր է. այն ապականությունքը, որով նա պղծել է յուր հայության անունը, մեծ հրնարանների են կարող, որ սրբվելին, բայց մենք մեր կարողության չափ պարտական ենք ապաստավորել այս սուրբ պաշտոնին։ Մեր համար ազգությունը և ամբողջ ազգի կատարելության գաղափարը այնքան ծանր կշիռ ունի, որ դորան պահպանելու և օգնելու մտքով պատրաստ ենք ամենայն զոհաբերության, ինչ որ միայն կարող էր մի մատենագիր մարդ։ Այս բաների մեջ ոչինչ են մեր աչքում մի քանի կռապաշտ հայերի պատվասիրությունը և անձնասիրությունը, ուստի մաքուր խղճմտանքով և ձեռքերս սրտերիս վերա դրած, ոչ միայն զոհում ենք նորանց, այլ որպես քաղդեական սերմից հառաչացած ծնունդներ քարին ենք զարկում։

Շատ լավ գիտենք, որ մենք այս ճանապարհով առելի ենք կացուցանում մեր անձը, և այս է պատճառը, որ Հյուսիսափայլը փուշ է շատերի աչքին, բայց միշտ մտածում ենք, թե պատասխանատու ենք աստուծո առաջև, պատասխանատու խղճմտանքի և առողջ դատողության առաջև։

Եթե մեր խորհուրդը լիներ գնալ օգտի և շահասացության քամակից, եթե մեր ցանկությունը լիներ սուրբ համարել ամենայն հնար, որ ձեռնտու էր թե մեզ սիրելի կացուցանելու ազգին և թե Հյուսիսափայլի ճանապարհը հարթելու, այն ժամանակ, իհարկե մենք ևս կզոհեինք ազգի օգուտը մեր շահին, մենք ևս կեղծավորությունը կշինեինք մի հաղթական գործիք։ Բայց թող հեռի մնան այդ դժոխային հնարքը, նորա սեփական են օրակուրանտներին և Ճիզվիթներին, որոնց հետ չունինք մասն և բաժին։ Եվ ոչ միայն այսչափ, այլև չենք ցանկանում, որ այդ դիվախորհուրդ մարդիկը գովեին մեզ, մեր գործը, մեր ուղղությունը, ըստ որում մենք ինքներին պիտի կասկածելի երևեինք մեր աչքին։

Ազգի անդաստանի մեջ հինդ ցորենաբույս չկա, բայց փուշ և որում բյուրավոր. աղաչում ենք ամենակալ տերը սրտացավ գործավորներ ուղարկել, որ խնամով խլեին այդ փուշերը, որպեսզի ազնիվ բույսերը հնար առնային աճելու և զորանալու։ Ժամանակ է, որ հայերը դուրս գան երեխայությենից և մի փոքր այրություն առնան, սովորեն դատել և ճանաչել սեր և սպիտակը. մինչև այժմ նորա դատել են միայն գինու և պանրի արժանավորությունը։ Ժամանակ է որ մի փոքր մտածել ուսանին, որովհետև մինչև այժմ գտանվել են նույն դրության մեջ, ինչ վիճակում էր Նաբուգոդոնոսորը երազից հետո. «և բանն վերացաւ ինէն», ասում էր նա մարգարեին։

Ամաչում ենք, մի օտար մարդու առաջև, երբ պատմելով մեզ մեր ազգի անսրտությունը, նյութականությունը և երեխայական դատողու-

Իյուները, խնդրում են պատասխանել ին ինչ աղբյուրից հառաջանում էին դոքա և ին կարելի՞ է արդյոր մինչև այդ ատաիճան անարգել յուր անձը։ Մենք շատ անգամ բռնադատում են կամքրել և ամաչել, բայց մեր հոգով շատ սիրելի հայերը չկամին, նորայրաբար խոսելով նոցա հետ, խնդրեինք վերացնել այն տգեղութիւնները, որոնց համար ամոթապարտվում էինք օտարների առաջև։

Մեր ազգի խոցերը և ցավերը քաջ հայտնի են մեզ, բայց ինքը ազգը չկամի խոստովանել յուր հիվանդութիւնը, նա փախչում է բժշկից, նա կարծում է, ին ծագուցանելով փտած և ապականված վերքերը ընկերի աչքից, կարող էր պարտակել յուր ողորմելի դրութիւնը. այդ վերքերը ճարակում են նորա հոգին, և այս պատճառով ևս հայը մարմնով միայն ապրում է առողջ։

Մի քանի ին ինամիտ օրագրերի և լրագրերի խելացնոր կարծիքներ և գաղափարք հասանում են մեր ականջին, բայց դոքա կտրած զանգակի ձայնից ավելի չունին ուրիշ արժանավորութիւն։ Մենք ծիծաղում ենք դոցա վերա, բայց այդ ծիծաղը արտասուքից դառն է մեր համար, քան որում այդ բաները գործվում են մեր ազգի մեջ։

Այդ երևելացամիտ օրագիրքը և լրագիրքը մինչև այժմ ուխտ են դրել բամբասել մեզ և մեր ատաձի հակառակը պնդել, մինչև այն ատաիճան մոլորութիւն հասանելով, որ նմին Հյուսիսափայլի մեջ գրվի, ին ատաված կա, նորա պատրաստ են և այդ ուրանալ։ Մի քանի հոգևորներնի կողմից նղուվրի շանթներ ևս տեսանում ենք դեպի մեզ արձակվածք, բայց այդպիսի շանթները փուճով շիջանողք են և վաղուց արդեն կորուսել են մարդկեղեն աշխարհում յուրյանց գաղտնածածուկ խորհուրդը։

Մեր սիրտը լցված է արյունով. մենք այստեղ չենք ծառայում մեր ախտերին, ինչպես մի քանի դիշերադեմ մարդիկ հայհոյեցին մեզ, այլ ապաստավորում ենք ազգի օգտին. դուցե մեղավոր ենք նորանով, որ մեր աչքի առաջև են հայոց ազգի համար, սորանից հարյուր տարի հետո գալոց օրերը...

Հրավիրում ենք կենդավորները լարել յուրյանց գործարանքը և արդարացնել Բեզջազեի գործերը, որ պիտի նկարագրենք և որոնց համար ուրիշ հարմարավոր անուն չգտանելով անվանեցինք «Բեզջազեի յոթն հրաշալիքը»։

Առաջին, Բեզջազեն, մի մեծ քաղաքում ունենալով մի վաճառանոց, առել էր յուր մոտ մի պատվական երիտասարդ, տարեկան վարձ տալով նորան և խանութի բոլոր ապրանքը հաշվով հանձնելով։ Երիտասարդը, ինչպես վերևում դրածներիցս պարզ երևում է, ընկեր չէր, ուրեմն և ոչ բաժանորդ Բեզջազեի շահին կամ վնասին, նա պարտակա՛ն էր վաճառած ապրանքի արծաթը և մնացած ապրանքը ցույց տալ Բեզջազեին նույն հաշվով, ինչ հաշվով ստացել էր։

Մի քանի տարի ծառայում է այս երիտասարդը, խանութի ապրանքները օրն օր սկսանում են հատանիլ, այս պատճառով ևս տեսակի պա-

կատուիներից առուտուրը սկսանում է ծուլանալ։ Արի երիտասարդը նկատում է այս բանը և վճռած Ճանապարհը փակելու համար գրում է Բեգզադեին նոր ապրանք ուղարկել։ Բեգզադեն, սկզբումը այսօր էգուց ասելով, վերջապես բոլորովին լուռ է մնում։ Երիտասարդը գրում է, աղաչում է, սարիններով, բայց լսող չկա. գրում է նա և շատ անգամ, երբ չէ կամենում Բեգզադեն նոր ապրանք հասուցանել, որպեսզի կամ ինքը գնա այդ քաղաքը կամ մի այլ մարդու հանձնեն հաշիվը և ապրանքը առանալ յուրյանից և գործը ավարտել։

Բեգզադեն, երկար ժամանակ այս աղաչանքին ևս ականջ չդնելով, հողնում է երիտասարդը վերջին հուսահատության մեջ։ Մի օր, երբ սովորական գալրացել էր Բեգզադեի մարդ գրկելու ծարավը (տարու մեջ 365 անգամ գարձնում է նորանում այս կիրքը) 1118 վերստ Ճանապարհ կատարելով հանկարծ երևում է այն քաղաքի մեջ, ուր էր նորա վաճառանոցը կամ գանգատավոր գործակատար երիտասարդը։ Սա սկսում է խնդուն հաշիվ տալ։ Օրինակի համար ասենք թե երիտասարդի ձեռքը հանձնել էր Բեգզադեն 30,000 մանեթի ապրանք. գործակատարը ժամանակ առ ժամանակ հասուցել է Բեգզադեին 25,000 մանեթ։ Ներկա ցույց է տալիս 10,000 մանեթի ապրանք, հաշվելով այն գնով, ինչ գնով Բեգզադեն հանձնել էր երիտասարդին։ Բայց Բեգզադեն մի մանեթով երիտասարդին տված ապրանքը հետ չէ ընդունում մի մանեթի տեղ, այլ հաշվում է 75 կոպեկով, պատճառելով թե հնացած էին։ Երիտասարդը պատասխանում է. «պարոն, թե նոր է թե հին է, ահա քո ինձ տված ապրանքը, ես չեմ կընդունել. չեմ վատնել, այլ որքան վաճառել եմ, նոցա բոլորի արծաթը քեզ հասուցանելով և այն քսան հազարին հինգ հազար ևս շահ հանելով, ուստի արժա՛ն է որ մնացած ապրանքը հետ առնուս նույն գնով, ինչ գնով ես քեզանից առացել էի։ Եթե մի մանեթի բանը պիտո է 75 կոպեկով հետ տալ, պակաս մնացած 25 կոպեկը ո՞րտեղից պիտի դուրս գա։

— Քո վարձից,— շուռով պատասխանում է Բեգզադեն։

«Իմ ռոճիկը հերիք չէ այդ պակասը լցուցանելու համար», կցորդում է երիտասարդը հեգնությամբ։

— Մնացածի համար մուրհակ կտաս,— ասում է Բեգզադեն։

«Ես այսքան տարի ծառայեմ, քեզ այնքան շահ ցույց տամ, հերիք չէր այս, ոչինչ վարձ չառնում, այլև պարտակա՞ն մնամ, այս ո՛ր աշխարհի կամ ինչ կրոնից թույլ տրված գործ է», հարցանում է երիտասարդը։

— Ես փիլիսոփա չեմ,— պատասխանում է Բեգզադեն թարակը քաշելուց հետո առուին կողքին զարկելով։— Ապրանքը հնացած է և այժմ չէ արժում մի մանեթ։

Այս կերպով ևս վերջացնում է Բեգզադեն յուր հաշիվը. մնացորդ ապրանքը հետ է ընդունում ցած գնով, չէ տալիս երիտասարդի վարձը և պակաս մնացած արծաթի փոխարեն առնում է մուրհակ։ Երիտասարդը չէ կամենում դատաստան մտանել, քաջ իմացած լինելով Բեգզադեի տվողությունը, որ ծառայողի 100 մանեթ վարձը կտրելու և յուր անխիղճ

կամքը առաջ տանելու համար, պատրաստ է 1000 մանեթի կաշառք տալով, գատաստանը թյուրել։

Այս գործողութենից հետո, մի քանի մարդիկ տեսանում են Բեգզադեին, որ նա, քաղաքի նշանավոր փողոցի մեջ, յուր վաճառանոցի առաջև, օր ու ցերեկով, գիշերազգեստը հագած մանե է գալիս մի հրեայի հետ, աշխատելով խաբել, կամենալով մի մուշտակ գնել նորանից։

Երկրորդ, Բեգզադեն սովորություն ուներ ապրանք ուղարկել մի մեծ քաղաք, երբ վաճառի հանդես էր լինում այնտեղ։ Մի այլ վաճառական պարոն, որ նույնպես պարապում էր այդ առուտուրով, գնում է Բեգզադեի մոտ և ասում է, որ եթե այդ անգամը Բեգզադեն հոժարի մարդ և ապրանք չուղարկել այդ վաճառահանդեսը, ինքը, պարոնը պատրաստ է մի քանի ամիս ժամանակով գնել Բեգզադեից մոտ իբր 15,000 մանեթի ապրանք, հարյուրին 10 շահով։ Բեգզադեն համաձայնում է, տալիս է ապրանքը և առանում է պարոնից կանոնավոր մուրհակ։ Երբ գնող պարոնը յուր ապրանքի հետ միասին հեռացած էր քաղաքից, դնալի վաճառահանդեսը, Բեգզադեն մյուս օրը գնում է վաճառափողոցը (биржа) և այնտեղ խոսում է այսպես.

— Մի մարդ, որ ինձ հիմար անվանեն, իրավունք ունի։

«Ինչ պատճառով», հարցանում են վաճառականք։

— Այս ինչ պարոնի այսքան արծաթի ապրանք հավատացի. բայց, քեն նորան վաճառած, քեն ծովը ձգած միևնույն է։ Ո՛վ մի կոպեկ կտա այժմ նորա մուրհակներին։

«Ինչու այդպես կոտրում եք այն պարոնի անունը, նա ոչ ոքի արծաթի կերած չէ, ոչինչ խարդախություն արած չէ», ասում են մարդիկ։

— Խոսքս այն չէ,— պատասխանում է Բեգզադեն,— ասել է կամ չէ ասել. այլ այսքան միայն գիտեմ, որ արծաթս կորած է։

Այս բանի մեջ Բեգզադեի խորհուրդը այն էր, որ այն պարոնի անունը կոտրվի վաճառանոցում, որ հավատարմությունը կորուսանելով չկարողանա շարունակել յուր առևտրական գործողությունքը, որպեսզի ապարեզը մնա միմիայն Բեգզադեին։

Մի փոքր ժամանակից հետո վերադառնում է վաճառահանդեսից պարտական պարոնը և իմանալով Բեգզադեի արած ամարդությունը, իսկույն ժամանակից հառաջ վճարում է յուր պարտքը Բեգզադեին, մտածելով թե այսպիսի աղնվությամբ կարող էր հանել յուր վրեժը և խայտառակել Բեգզադեի ստախոսությունը և անբարոյականությունը։

Բայց ի՛նչ բանով արդյոք կարելի է ամաչեցնել Բեգզադեին. աստուծո ստեղծած նյութական և իմացական բաների մեջ չկա մի այնպիսի բան, որ կարողանար նորան ամաչեցնել։ Բեգզադեի երեսը վաղուց դարձել է շինականի տրեխ։

Երրորդ, Բեգզադեն ուներ մի սիրական գործակատար, որ վերջին ժամանակներում շինել էր յուր հետ մանավոր ընկեր։ (Այս գործակատարի և Բեգզադեի շատ վաղ ժամանակներից սկսած, իրարու մեջ ունե-

ցած հարաբերության մասին, շար լեզուներ խոսած են շատ կեղտոտ բաներ...)։ Ինչևիցե։ Ահա այդ գործակատարին նշանում է մի օրիորդի հետ։ Մարդիկ, տեսանելով, որ Բեգզադեն մեծ ուշադրություն և խնամք է ցույց տալիս հարսնացու օրիորդի վերա, զարմանում են։ Բայց այդ զարմանքը հասանում է մինչև ի սարսափ, երբ մի անգամ մի պատվավոր մարդ, տեսանելով հարսնացու օրիորդը, մինչդեռ ման էր գալիս Բեգզադեի կառքով, ասում է Բեգզադենին։

«Այս ի՛նչ պատիվ է, որ ցույց ես տալիս գործակատարիդ հարսնացուին. կառքերով բաներով...»

— Հը՛մ, գո՞ւ ես չես հասկացել,— պատասխանում է Բեգզադեն,— գիտե՞ս քե ինչ խորհրդով առնում եմ ես այդ բաները։

«Ո՛րտեղից պիտի իմանամ»։

— Քեզ քաջ հայտնի է իմ գործակատարի նյութական կարողությունը,— շարունակում է Բեգզադեն։— Լավ գիտես, որ նա կարողանալու չէ կառք պահել յուր կնոջ համար, այս պատճառով ես սովորեցնում եմ հարսնացուն կառքերի և այլ այսպիսի շռայլություններ, որ ամուսնությունից հետո նույն բանը պահանջե յուր ամուսնուց։ Տարակույս չկա, որ նորա ամուսինը կարողանալու չէ առնել այդ բաները, ուստի պիտի բորբոքվի նոցա մեջ անմիաբանության և գժտության բոցը... այդտեղ ունիմ ես իմ խորհուրդը... Ամուսինը չկարողանալով կատարել յուր կնոջ կամքը, անշուշտ կորուսանելու է յուր հարգը նորա աչքում... Ինձ հարկավոր է այդ, ես... դեռևս կծիծաղեմ նոցա երկուքի վերա ես։

Չորրորդ, Բեգզադեն, բարերարության անունով, յուր մնացորդ և փոած ապրանքը, որ նրա վաճառելու լիներ, անշուշտ յուրաքանչյուր մաններից 40 կոպեկ պիտի վնասվեր, տալիս է յուր սիրական գործակատարին, որի մասին վերևում հիշեցինք, անվաննելով նորան անկախ վաճառական։ Եվ այսպես, 60 կոպեկանոց բանը մի մաններ տեղ տալով առնում է խեղճ մարդուց 33,000 մաններ մուրհակ, որի զորությամբ պարտական է մնում հատուցանել այդ գումարը։

Գտանվում են մարդիկ, որ հարցանում են Բեգզադենից, քե ի՛նչպես այդքան արծաթ հավատացիր, մինչդեռ խանութը ես քո անունով չէր։ Ծիծաղում է Բեգզադեն և ասում է, դուք գաղափար ես չունիք վաճառականության վերա. նրա ես խանութը նորա անունով չդինեի, նա երբեք կարողանալու չէր վճարել ինձ պայմանյալ արծաթը։

— Այդ ի՛նչպես,— հարցանում են մարդիկ։

«Շատ հասարակ կերպով», պատասխանում է Բեգզադեն։

«Ես որպես անկախ մարդ և այդքան ապրանքի տեր երևնելով վաճառականների մեջ, կարո՛ղ է հավատարմություն առանալ։ Այս հավատարմությամբ գնելով նա օտարազգիներից հետզհետե զանազան ապրանք և վաճառելով նորանց, կարողություն կատանա վճարել ինձ իմ 33,000 մաններ, օտարներին մնալով 55,000 մաններ պարտական»։

— Բայց այդ օտարքը, ի՛նչպես ասում պիտի ասանան յուրյանցը, քո մարդ շինած գործակատարից։

«Բանտը ունի շատ անելյակներ»...

— Բայց այդ անխղճություն է քո կողմից. այդքան տարի ծառայելու վարձը...

«Ինձա ծնունդը չորանա, նորա իմ տունն են քանդել, ասելով լցնում է քիթը թարակով և գլխին քարշելով գլխարկը հեռանում է խոսողներից, որ մի այլ անօրենություն հղանա։

Հինգերորդ, Բեգզադեն մի անգամ հրավիրում է մի մարդ անգամ շինել մի ընկերություն, որ կազմել էին Բեգզադեն և այլ նորա համախոհ մարդիկ։ Պարոնը հարցանում է,— ի՛նչ ընկերություն է այդ, աղզային քանների վերա խորհելո՞ւ, թե...

«Չէ՛», ընդհատում է խոսքը Բեգզադեն, «մեր ընկերությունը բամբասանքի ընկերություն է։ Մենք հավաքվում ենք, որ սորան բամբասենք, նորան հայհոյենք, մյուսին դավ դնենք, սորա տունը քանդենք, մյուսին գլխակոր վայր ձգենք»...

— Ասում ազատ այդպիսի դիվական ընկերություններից,— ասելով հեռանում է բարեպաշտ հայը։

Վեցերորդ, Բեգզադեն պատմիրում է յուր մի գործակատարին, որ նույնպես շատ տարիներով ծառայում էր, բերել տալ յուր քեռորդին Բեգզադեի խանութի մեջ ծառայելու համար։ Գործակատարը գրում է և պատասխան հայտնվում է Նիժնի-Նովգորոդի վաճառահանդեսը։ Մի փոքր ժամանակից տղան հիվանդանում է և այդ պատճառով ևս Բեգզադեն սկսում է ծուռ աչքով նայել ողորմելու վերա։

Հայհոյանք, թուք ու մուր և այլ անասելի և անխելք խոսքեր թափվում են Բեգզադեի կողմից աղքատ պատանու վերա։ Բանը այնտեղ է հասնում, որ Բեգզադեն ասում է, թե չկամեր ունենալ նորան յուր խանութի մեջ։ Տղան աղաղակում է, երբ չկամիս իմ ծառայությունը, ուրեմն իմ տեղը ուղարկիր ինձ։ Այս խոսքերի վերա Բեգզադեն ևս առավել բարկանում է։ Այս միջոցին տղայի մայրը ուղարկում է յուր որդուն Բեգզադեի անունի վերա 30 մանեթ արծաթ, մի վերարկու գնելու համար։ Բայց Բեգզադեն պահում է արծաթը յուր մոտ։ Երբ որ դրակատապես ասել էր պատանուն թե չկամեր ունենալ նորան յուր խանութի մեջ, այլև հրաժարվում էր հետ յուր տեղը ուղարկելուց, տղան բոլորովին անօգնական մնալով կամենում է գնալ պոլիցմեյստերի մոտ գանգատելու (Բեգզադեն բնակվում էր պոլիցմեյստերի տան դեմ ու դեմ)։ Բեգզադեն լսելով տղայի պատրաստությունը, սկսում է ջարդել ողորմելի տղայի քիթը բերանը, դժոխային խոսքեր դուրս ժայթքելով բերանից. պոլիցմեյստերը պատուհանից տեսանում է այս հանդեսը։ Տղան գնում է գանգատու։ Պոլիցմեյստերը կանչում է Բեգզադեն և ասում է, թե կամ հետդ տար քո ծառան, կամ յուր տեղը ուղարկիր նորան։ Բեգզադեն պատասխանում է, թե չէր կարող գողը և ավազակը ընդունել յուր մոտ ծառայության համար, և թե այդ

տղայի ցնդը տանով տեղով գող են։ Այս տեսով հանում է ծոցից մի նամակ տղայի մոր բերանից յուր որդու վերա, որով, որպես թե ուղարկում էր վերահիշյալ 30 մանեթը և ասում էր թե գողացած արծաթ էր։

Տղան հերթում է բոլորովին այս զրպարտությունը և քննությունը սուտում է, որ այդ նամակը շինովի էր և խարդախած Բեգզադեի ձեռքով։ Գոլիցմեյստերը ասում է Բեգզադեին, թե լավ չէ նորա ընթացքը ծառայի հետ և թե այդպիսի խարդախություններ կարող են մեծ անպատվություններ ծնուցանել։ Այսպիսի խոսքերով համոզում է Բեգզադեին, որ կամ հետը տանի տղան կամ ճանապարհի արծաթը տա մինչև Կովկաս։ Բեգզադեն խոստանում է հետը տանել։

Տղան ընկնում է հիվանդանոց, աղքատությունը հասանում է մինչև ի կատաղություն։ Մի քանի օրից հետո գալիս է Բեգզադեն տղայի մոտ և տալով նորան 5 մանեթ ասում է, թե կարգադրություն էր արել նորա մասին։ Երբ տղան մի փոքր հանդարտել էր, Բեգզադեն տալիս է ուրիշներին հետևյալ պատվերները։

Կանչում է յուր գործակատարը, այսինքն տղայի քեռին, և ասում է, որ չհամարձակվի ուղարկել տղան դեպի յուր վաճառանոցը, կամ դեպի յուր աշխարհը։ Եթե որևիցե կարեկցություն ցույց տալով, գործակատարը խնամ տաներ տղային, այնուհետև Բեգզադեն տալու չէր գործակատարին պատկանած 2000 մանեթը, որ գտանվում էր Բեգզադեի մոտ։ Կանչում է յուր ապրանքի համար վարձված սայլորդները, նոցա ևս պատվիրում է, որ չհամարձակվին ապրանքների հետ վերառնուլ տղան և հետը տալ Մ.... քաղաքը հասանելու։ Իսկ եթե սայլորդը համարձակվելին կարեկցել ողորմելի տղային, Բեգզադեն սպառնում է ոչ մի կոպեկ վարձ չտալ սայլորդներին ապրանքը բերելու համար։

Այս բաներից հետո գնում է Բեգզադեն։

Տղան հավատացած է, թե շուտով ինքը ևս գնալու էր դեպի այնտեղ, ուր գտանվելու էր յուր պարոնը։

Բեգզադեի գնալուց մի երկու օր հետո, գալիս է տղայի մոտ նորա քեռին (այսինքն Բեգզադեի գործակատարը), և հայտնելով, թե երկու օրից հետո պիտո է միասին ճանապարհ ընկնեին դեպի Մ... հարցանում է տղայից, թե չունե՞ր արդյոք երկու մանեթի մանր արծաթ։ Տղան ասում է թե ունի միայն մի հինգ մանեթանոց թղթադրամ, որ ստացել է պարոնից։

— Փուլի չէ,— պատասխանում է գործակատարը,— միևնույն է, էգուց կտամ։ Այժմ ինձ հարկավոր է այս շնչին արծաթը այն պատճառով, որ բնակարանս հեռի է և չկամենի մյուս անգամ գնալ այնտեղ այդքան արծաթի քամակից։

Տղան հանում է և տալիս է յուր բոլոր ունեցածը։ Գործակատարը ստանում է և դեպուղիղ գնալով յուր բնակարանը, ուր պատրաստ սպասում էր նորան սուրհանդակի կառքը, նստում է... և կառքը հառաչ է շարժվում ամենայն զորությամբ։

Երկու օրից հետո իմանում է խեղճ պատանին թե խաբվել էր յուր քեռուց։ Լաց է լինում, ողբում է, բայց ինչ ճար, մնում է միայն այս գազանական անգթության ընդդեմ դեպի երկինք բողոքել։

Մի քանի բարեսիրտ հայեր խղճալով այս անօգնական տղայի վերա, ժողովում են մի քանի մանեթ և ճանապարհ են ձգում նորան դեպի այն քաղաքը, ուր էր Բեգզադեն։

Յոթներորդ, Բեգզադեն Մ... հասանելուց հետո, մի քանի օրից հայտնվում է հաճոյակատար գործակատարը և խնդրում է տալ ինքյան յուր 2000 մանեթը։ Բեգզադեն, որ ինքը խոստովանել էր թե գործակատարը ուներ 2000 մանեթ, այժմ սկսում է քրքրել յուր սատանայի պոչով գրված մատյանները, երբեմն գլուխը քորելով, և երբեմն մի պտղունց թարախ քիթը լցնելով, ասում է թե գործակատարը ոչ թե միայն 2000 մանեթ, այլ 2076 մանեթ է ստացել, ուրեմն դեռ նա պարտական էր Բեգզադենին 76 մանեթ։ Գործակատարը աղաղակում է այս անիրավության ընդդեմ, բայց լսող չկար։ Բեգզադենի սովորական կանոնն է այս։ Երկար ու ձիգ խոսակցություններից հետո, գործակատարը տեսանելով, որ ավելորդ էր վիճել Բեգզադենի հետ, հանձն է առնում վճարել 76 մանեթը, ուստի և խնդրում է յուր անցաթուղթը։ Բեգզադեն պատասխանում է,— մինչև 76 մանեթը չբերես, քեզ անցաթուղթ չկա։

Ինչ երկար դիմացավություն առնենք ընթերցողներին, գործակատարը գնում է, մուշտակը և այլ բաները գրավ դնելով ճարում է 76 մանեթ արծաթ։ Եվ սևցնելով Բեգզադենին ստանում է անցաթուղթը։ Այսպես վարձատրվում է գործակատարի ոչ միայն այնքան տարիների ծառայությունը, այլև այն գազանական անգթությունը, որ Բեգզադենին հաճոյանալու համար, ցույց տվեց յուր քեռորդուն խլելով նորա ձեռքից Բեգզադենի տված 5 մանեթը։

Եթե, ինչպես հույս ունինք, մի տեսակ մարդերի օրագիրքը կամ լրագիրքը արդարացնեն Բեգզադենի յոթն հրաշալիքը, այն ժամանակ մենք պարտականություն կհամարենք դնել նոցա առաջև Բեգզադենի ամբողջ և լիակատար վարքագրությունը (биография) նորա գործած քառասուն հրաշքների պատմությամբ հանդերձ, որոնց յուրաքանչյուրը յուր ժամանակին ընկած են օրագրությանս մեջ։ Հիշատակարանք հատված են այդ ընդհանուր և մանրամասն օրագրություններից, ուր ամենայն օր թվով և համարով գրում եմ տեսածս և լսածս։

Բայց հերիք է առ այժմ, շրջենք մեր երեսը այդպիսի մառախլապատ կերպարանքից և աղաչենք ամենակալ տերը, որ մաքրե հայկական մոլախոտյալ անդաստանը։

Արդյոք առանց մեր կողմից ջանքի և հոգաբարձության, առանց զոհաբերության և անդուլ աշխատության, տերը կառնե՞ր այդ գործը անմիջապես։

Տիրոջ առաջև գատապարտված է ծուլությունը և անհոգությունը։

մեք ինքներին պարտական ենք նախ գործ սկսանել և ապա խնդրել տիրոջ հաջողութիւնը։

Առաջին գործը է դպրոցների հիմնարկութիւնը, այս է մեր առաջին և վերջին հանապարհը փրկութեան։

Էջմիածնի մեջ պիտի հիմնվի՞ արդյոք մի օրինավոր դպրոց, մինչև այժմ լուր չունինք։

Թիֆլիսի հոգևոր դպրոցը պիտի բարեկարգվի՞ արդյոք, նույնպես չգիտենք։

Աստրախանի, նոր բացված հոգևոր դպրոցը, որքան մեզ հայտնի եղավ դորա ուսման առաջարկութիւնը, շատ աննշան է. հարկավոր է զոբացնել, բայց ասում են թե առաջնորդը չունի այն ազատութիւնը գերագույն իշխանութիւններից, որից օգուտ են քաղում ուրիշները թերևս չարաչար գործ դնելով յուրյանց իշխանութիւնը։ Աստրախանի առաջնորդ սրբազան Մատթեոս թեմակալ արքեպիսկոպոսի բարեմտութիւնը և ազգասիրութիւնը հայտնի է ոչ միայն մեզ, այլև բոլոր ժողովուրդներին, որոնց առաջնորդած է. ուստի և ստիպված ենք դպրոցի աննշանավորութեան պատճառը վերագրել հնարների և կարողութեան սակավութեանը, քան թե մեծապատիվ սրբազան արքեպիսկոպոսի զանցառութեանը։ Երանի թե մեր բոլոր հոգևորների սիրտը այնքան ցավեր ազգի վերա, որքան Մատթեոս սրբազանի սիրտը։

Մի քանի օր սորանից հառաջ ստացած նամակը մի նոր ապացույց տալիս է մեզ մեր արեղաների ֆանատիկոսութեան մասին։

«Քահանայի միներ», գրում էր բարեկամս, «չգիտեմ ինչ կերպով «առանում է եղած Փարիզի Աբեմուտ օրագիրը։ Մի անգամ ներս է «մտանում նորա տուն մի արեղա։ Հառաջուց պիտի ծանոթացանել, որ «արեղա ասածդ միշտ վեր է համարում յուրյան քան թե աշխարհական «քահանան և այս պատճառով շատ կոշտ են վարվում քահանաների հետ, «ամենայն բոպե իշխանութիւն գործ դնելով նոցա վերա։ A propos. մի «անգամ հարցուցին մի արեղայից թե ի՛նչ է նոցա իրավասութիւնը քա«հանաների վերա, ինչո՞վ բարձր են քան թե քահանայքը, և ինչո՞ւ հա«մար շատ անգամ անգթաբար վարվում են քահանաների հետ։ Արեղան «պատասխանեց, թե ինքյանք վանքի մեջ չլրուր ուսելով և սաղմոս ասե«լով հոգեմաշ են լինում, իսկ քահանայք միշտ ժողովրդի մեջ, ամուսինի «և ընտանիքի տեր, վայելում են աշխարհի վայելչութիւնը։

«Արեղան տեսանելով, որ քահանան կարդում է մի բան, հարցանում «է թե ինչ էր կարդացածը։ Քահանան պատասխանում է «Աբեմուտ «օրագիր»։

«— Դու ինչպես համարձակվում ես կարդալ այն բանը, որ ես նզո«վել եմ։

«Ի՛նչ նզովելու բան կա այստեղ. ճշմարտութիւն, մի՞թե դուք նզո«վում եք ճշմարտու...

«— Զայնդ կտրիր,— ասելով դուրս է գնում արեղան և պաշտոնա-

ական ինքով գրկում է նորան յուր ծուխից և ուղարկում է մի այլ քաղաք, որի ժողովուրդի ԲՒ՛ սակավությունը և ԲՒ՛ աղքատությունը պատիժ պիտի համարվեր քահանային։

«Հանդէ քահանան հոգուց և նեղություններից հիվանդանալով մնոանում է գյուր աքսորի մեջ»։

Մենք շուտով մանրամասն կխոսենք Ա.ևմուտի մասին։

ԺԳ

Հասարակարար խոսվածի ազգին վերաբերյալ—պ. Շանբեգի և պ. Տիրատուրյանի նամակները—վենետիկ կաթողիկոսի պատկերը։

Ազգության հաստատությունը և լծակը է հասարակ ժողովուրդը։ Մի ազգ, ՈՒ՛ր որքան կամի հարուստ լինի նրանի մարդկերով, այնուամենայնիվ այդ ազգի ազգության մեքենան շարժվում է հասարակ ժողովրդի վերա. սա է այդ մեքենայի առանցքը, լծակը և հաստատությունը։

Ազգի մեջ նրանցած մեծատուններին, իշխանավորներին բարօրությունը չեն կարող ամենևին ազգային երջանկություն, նրանք մասնակից չէ դորան հասարակ ժողովուրդը։ Հասարակ ժողովրդի երջանկությունը պիտի նրանի նորա ընտանեկան և տնտեսական ապահովության մեջ, նորա խղճմտանքի և բանականության ազատության մեջ։ Մասնավոր մարդիկ, շատ անգամ, ոչ ԲՒ՛ միայն չեն կորուսել յուրյանց բարօրությունը, երբ նոցա ազգը ենթարկվել է մի ինչ-ինա հեղափոխության, այլ մանավանդ օգուտ են քաղել դորանից և առավել ապահովել են յուրյանց բարեկեցությունը։

Երբեմն խոսելով ազգի վերա, մենք մեր աչքի առաջև ունենք հայոց հասարակ ժողովուրդը, և ազգ ասելով չենք իմանում այն մի քանի մարդիկը, որ արծաթի սանդուղով վեր էին բարձրացել ազգի մակերևույթից, այլ այն խեղճ և կարեկցության արժանի ժողովուրդը, որի վերա ծանրացել է ազգային ապարտախտության հետևանքը։ Անմխիթար տխրություն է ձգել միշտ իմ սրտի վերա մտածությունը, ԹՒ՛ աշխարհի երեսին գտանված ամենայն ազգի մեջ հասարակ ժողովուրդը ենթարկվում է ավելի ծանր զրկությունների և տառապանքի, մինչ խորտակված էր նորա ազգության մեքենան, քան ԹՒ՛ մասնավոր մարդիկ, այո՛, մեծատունք և մտաւորչք. սորա հակառակ, ամենափոքր երջանկությունը վայելում է հասարակ ժողովուրդը, մինչև անգամ, երբ ներգործում էր ազգության մեքենան, քան ԹՒ՛ մասնավոր մարդիկ, որ դուրս գալով հասարակաց շրջանից, բարձրացել էին սորա հորիզոնից։

Այս քանի պատճառները քննել և բերել Հիշատակարանիս մեջ, չունենք համարձակություն։ Հարկագրվում ենք այսքան միայն ասել, որ հին բարոյական աշխարհի և հին խնդրների դրությունքը չէին կարող այլ հնարավոր դուրս գնել։

Ազգային շինություններ, բնական կերպով, պիտի հառաջանա ցածից — հիմքից. այդ հիմքը է հասարակ ժողովուրդը: Այն մարդը, որ սիրում է ազգը, որ նվիրում է իւր անձը ազգի բարոյական ապաւաւորության, պարտական է ծառայել ոչ ազգի կուռքերին, այլ, հասարակ ժողովրդի օգտին: Հասարակ ժողովրդից կազմվում է ազգության մնքննան. լուսաւորը մարդիկ կարող են, և պարտական են միայն ուղղություն, գարկ և ընթացք տալ այդ մնքննային:

Մեր ազգության մնքննան ջարդված է:

Անմտություն էր, եթե մտածելիք գարկ տալ մնքննային, մինչ նա խորտակված, և նորա գործարանքը ցիրուցան և ժանգոտած, չուներ այն ամրողջությունը և կազմությունը, որ կարողանար շարժվիլ և գործ կատարել: Ազգության մնքննայի — հասարակ ժողովրդի վերանորոգությունը հնարավոր է միայն, գիտակցություն տնկելով նորա մեջ: Իսկ գիտակցությունը բխում է լուսաւորութիւնից:

Լուսաւորություն. ահա՛ մի մեծ և հոյակապ խնդիր, որ ազգի կարողը և ուսումնականքը պարտական են լուծանել. չկա աշխարհի երեսին մի այնպիսի բան, որ ահարկու չիներ խաւարից. սա մի զարհուրելի վարագույր է, որի տակ իրավունք ունին մարդիկ և մահ ենթադրել: Ազգը լուսաւորելու գաղափարը այն ժամանակ միայն կարող է իրագործվիլ, երբ հիմնած ու պահպանված էին բուն ազգային դպրոցներ, որոնց մեջ պիտի լսվեր հայկական խոսքը, ուր հայոց բառերով պիտի ներս մտանեին ազգի զաւակների մեջ գանազան լուսաւոր գաղափարք: Ազգային չենք ճանաչում այն դպրոցը, ուր հրամայվում է խոսել ուսերեն, ֆրանսերեն, սակաւ երբեմն հայերեն:

Թող շարժվին գերեզմանի մեջ մեր Արամ Նահապետի ոսկերքը...

Իրավունք ունի եղած հայ բանաստերը, մինչ սորանից քանի տարի հառաջ գրում էր հետևյալ տողերը, նվիրված Արամ Նահապետի սուրբ հիշատակին:

«Քեզ ո՛ սիրական հայրենի բարբառ
Զգում է անուշ այս խնկի բուրվառ:
Հավիտենական ո՛ օրևանից
Այս խնկի բուրումը ընկալ նորանից,
Մաղթե՛ նորան կյանք որպես նահապետ,
Սիրական լեզվիդ իբրև արհուն տեր:

Նա նոր է զարթել
Դարավոր ննից,
Հին փոշին նոր է
Թափել վերայից:

Քո օրից այսօր հանի՞ դար անցավ,
Սիրական լեզուդ ի՜նչ օրեր տեսավ,
Քանի՞ հալածանք, հանի՞ նեղություն.
Եթե օտարից, դեռ այնհան ցավ չէր...
Նույնիսկ մեր եղբարք թշնամի էին
Այն նվիրական Ո՛ սուրբ ավանդին:

Բայց արդ բարձրացավ
Հնության փոշուց,
Հաղթանակ կանգնեց
Սիրական լեզուդ:

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Օրհնի՛ր, նահապետ, օրհնի՛ր, սիրական,
Քո սուրբ այս լեզու, ազգասեր Աւամ:

Թող ծաղկի, աճե,
Թող պտուղ բերե,
Սուրբ հիշատակիդ
Նոր փառք պատրաստե[40]:

Դպրոցի ազգայնությունը կախված չէ աշակերտների և վարժապետների լոկ հայությենից. լեզուն է, որ միմիայն կարող է այդ վերնագիրը դնել դպրոցի ճակատին: Անհիմն և ամենայն ընդունելության անարժան պատճառ է, թե օտար լեզուներ խոսեցնելով ազգի զավակներին, պիտի վարժեցնենին նորանց այդ լեզուների մեջ. առաջին հարկավոր բանը չէ, որ ազգի զավակը ուսանի օտար լեզուներ. դորա հակառակ, պարտական է նա քաշանալ յուր լեզվի մեջ: Հայերը դեռ խոսել չգիտեն, թո՛ղ ուրեմն հայ մանուկը, նախ և հառաջ որպես հայի զավակ, ուսանի յուր սեփական լեզուն և ապա օտարինը:

Ազգությունը հառաջ է, քան թե ընդհանուր մարդկությունը, և ամենայն մարդ յուր ազգությամբ մտանում է ընդհանուր մարդկության մեջ: Սուտ է այն լուսավորությունը, որ պիտի լինի օտարի լեզվով. որա վկայող դառն փորձեր շատ անգամ կատարել է մարդկությունը: Ազգի հոգին և ազգի սիրտը կարող են յուրյանց հատկությունը և որակությունը մարքուր պահել միմիայն կերպարանագործվելով ազգային լեզվի ազդեցության տակ. այս ճշմարտությունս ուրացողը, ուրացող է ազգությանն:

Դպրոցի օգուտը պիտի հետևի նորա ուղղություններից. առանց խղճի և մաքի ազատության չկա լուսավորություն:

Ազգի դպրոցը է այն գործարանը, այն արգանդը, որ հղանում է ազգի գալոց սերունդը. ինչպես բնական աշխարհի մեջ ծնածը պահում է յուր ծնողի տիպը և բնական որակութիւնները, այնպես և աշակերտը կրում է յուր վերա դպրոցի դրոշմը։ Կառավարիչքը կամ դաստիարակքը դպրոցների, որ, շահպանելով ազգի օգուտը, շարաշար էին գործ դնում յուրյանց պաշտոնատարութիւնը, հանցավոր են լինում ազգի առաջև, և այս հանցանքի գաղափարը միմիայն կարող է բացատրել այս զարհուրելի բառը ազգասպանութիւն։ Եթե դպրոցի խորհուրդը և նպատակը համաձայն չէ ազգի էական օգուտներին, եթե նա մի մեքենա է, հայի զավակի մեջ օտարութիւն պատրաստելու, լավ է մանուկներին տգետ հայ մնալ, քան թե դառնալ թերակիրթ չհայ։

Բայց մեր ազգի դրութիւնը այնպես է, որ նա չէ կարող յուր ներկա ավերանքի մեջ պատրաստել այնպիսի դպրոցք, որ կարող էին տիեզերական կրթութիւն տալ ազգի զավակներին. տոքա հարկ և հարկ պիտի դիմեն օտարի դպրոցը և այնտեղ ուսանին։ Այո՛, այս իրողութիւն է, բայց ազգային դպրոցները պարտական են բանալ մանուկների միտքը, պինդ տնկել նոցա մեջ ազգութեան սերմը, վառել նոցա սրտում հայութեան կրակը. մի խոսքով, կատարել այն ընտանեկան պարտականութիւնը, որ ծնողք պիտի կատարեն յուրյանց ազգի օգտի համար, և որ մնացած է երեսի վերա ընտանեկան դաստիարակութիւն չլինելուց մեր մեջ։

Ընտանեկան կամ մայրենի դաստիարակութեան մեջ է ազգի ապագայի սերմը. բայց մեր ազգի մայրերը տալիս են ազգին կեղծով միայն հայ զավակներ։

Հայ կանա՛յք, ձեր պես չէին ձեր մայրերը, նոցա սիրտը զարկում էր ազգութեան համար. ազգին հասած հարվածներին քաջութեամբ մասնակից եղան նոքա, յուրյանց ամուսիններուի հետ միասին։ Նոքա չուրացան ազգի օգուտները, նոքա այրութեան ցույց տվեցին յուրյանց կանացի կերպարանքի տակ և երբեք չկամեցան, որ նայեին նոցա վերա, որպես մի խաղալիքի, կամ որպես մի հագնված, զուգված պաճուճապատանքի վերա։ Հինգերորդ դարում, երբ հայոց ընտիր որդիքը զոհ գնացին պարսկական վիշապին, նոցա մայրերը, կանայքը, քույրերը և դստերքը պարկաս չերևեցան այն քաջերից, որ ազգի պահպանութեան համար քաջութեամբ ընկան պատերազմի դաշտումը։ Նոքա մոռացան յուրյանց կանացի տկարութեունը, յուրյանց փափկասնունդ կյանքը, դուրս նկան յուրյանց փառահեղ բնակարաններից և պարզ երկնքի տակ, գետնի վերա տարածվելով շարշարակից գտանվեցան առաքինի պինվորներին։ Ինքյանք հոգացին յուրյանց պիտույքը և ազատխիններից չպաշտվեցան. մարդ չկար նոցա ձեռքին ջուր ածող կամ այն պարզ կերակուրը եփող, որով ապրում էին։ Յուրյանց ձեռքի արվեստով կերակրվեցան նոքա և ներութիւններից նշանակված ռոճիկը ամբողջ հասուցին յուրյանց կորիշ տղամարդկերին։ Փշոտվեցան և ծխոտվեցան սենյակները և առագաստանները նորահարսների, և սարդի ոստայն պատեց նոցա նախկին շքեղութեան

վերա։ Շատ ձմեռներ անցան, շատ գարուններ եկան, նոցա հետ միասին և գարնան ծիծեռնակներ, բայց նոցա աղամարդիկը հետ չդարձան. նոքա յուրյանց այրիուհիները նախատինք չհամարեցին ինքեանց, այլ մանավանդ պարծանք, առաքինի ժուժկալութիւնամբ հարանանալով երկնավոր անմահ փեսային։ Այսպես էին մեր հին մայրերը և քույրերը, այսպես էին մեր կանայքը, բայց ի՛նչ մնաց այն օրից...։

Հայ կանա՛յք, ձեր հետ է այսօր իմ խոսքը. ազգի վերանորոգութիւնը և փրկութիւնը լոկ երազ է, եթե փոած էր այդ ազգի ընտանեկան կյանքը։ Տերութիւնը բազկանում է ընտանիքներից և նոցա որակութիւնը ոչ թե միայն ցոլանում է կառավարութեան վերա, այլ մեծապես պատճառ է նորա ապահովութեան կամ կործանութեան։

Մեր ընտանեկան կյանքը նման է մի կյանքի, որ միմիայն կարելի էր անցուցանել պանդոկներում։ Մեր ընտանիքների մեջ լսած խոսքերը են հերակրի, հանգերձի, զրոսանքի և այլ զվարճութիւնների խոսքեր, և շատ անգամ այս տղայական բաները հերիք պատճառ են լինում ընտանիքների կործնցյալ երջանկութիւնը ևս խանգարելու։ Ո՛ր է այն ընտանիքը, կամ ավելի լավ, այն մայրը, որ մոր պես խոսում էր յուր զավակների հետ. մեր չենանք դեռևս, և չենանելու պատճառն այն է, որ մեր կանայք կորուսել են յուրյանց խորհուրդը։ Մայրը պիտի ուսուցանե յուր զավակներին ազգային լեզուն, մայրը պիտի անկե տղայական սրտաների մեջ ազգութեան սերմը այնպիսի խնամով և հոգաբարձութեամբ, որ հյուսիսի ցրտաբեր մրրիկը կամ հարավի այրող տոթը չկարողանային չորացնել նորանից ծլելու բույսը։ Զավակների մայրը է գերդաստանի մայր, իսկ գերդաստանների մայրերը ազգի մայրն են։ Բայց ի՛նչպես են մեր ազգի մայրերը ներկայումս, արդյոք յուրյանց կյանքի մեջ մի օր, մի ժամ, մի վայրկյան մոռածում են յուրյանց զավակների մասին բարոյապես, մեք պատասխանում ենք, ո՛չ։

Նոքա դեռ նոր աշխարհ բերած մանուկը, ըստ մեծի մասին, հանձնում են օտարազգի դայակների, հայի զավակը ծնում է օտարի կաթով. օտարի լեզուն և հոգին ներս է մտանում նորա մեջ այն կաթի հետ, որ սուրբ չէ մեզ։ Հայ տիկինը ամոթ է համարում ինքյան ծիծ տալ յուր զավակին. ի՛նչպես կարելի է, որ նա երեխայի պատճառով հետ մնա խրախճանքներից, պարահանդեսներից և դիմակահանդեսներից. թող երեխան ամեն ուրիշի հոգաբարձութեամբ, եթե հայ չլինի, գոնե մարդ կլինի, եթե հայի կրոնը չիմանա, գոնե ուրիշինը կիմանա։ Մեր շրթունքը այրվում են այս խոսքերը կրկնելու ժամանակ, և զայրացած ամոթապարուսում ենք մեր խղճմտանքի առաջև, մոռածելով, թե մինչև ո՛ր աստիճան ավերանքի և բարոյական զեխութեան ընդունակ են դարձել մեր կանայքը։

Ավելորդ էր մի խոսք ևս ասել մայրաքաղաքներում գտանված հայ կանանց մասին. նոքա վաղ ուրեմն կորա՛ծ են մեր համար, կորա՛ծ են և նոցա զավակները։ Նոցա հայութիւնը գուցե երևում է նորանից, որ տարին մի քանի անգամ գնում են հայոց եկեղեցի և մինչև անգամ խոստո-

վանութիւնը ևս կատարում են օտարի լեզուով։ Մենք վերջացրել ենք մեր հաշիւը նոցա հետ. թողնում ենք, որ նոքա լոզան յուրյանց քրինոլինների մեջ, մոլորութիւնն մի վհմից, մյուս ապառաժին զարկվելով, այլ իրավունք չենք համարում ևս թևքել բոլոր հայոց ազգի կին մարդերից, որոնցից դեռևս հույս ունինք, և ոտքա վերա առաստիկ զարկում է մեր սիրտը։

Հայ կանա՛յք, անցան այն ժամանակները, երբ մարդիկ նայում էին կանանց վերա, որպես ստրուկների վերա։ Անցան այն ժամանակները, երբ կանայք համարվում էին որպես մի ապրանք, ինչ, կահ, կարասիք, գնելու կամ վաճառելու բան. անցան և հետ գալու չեն մյուս անգամ այն ժամանակները, երբ օրենք ասվողները նայում էին կանանց վերա, որպես մի ծննդարար գործարանի վերա, որ զինվոր էր պատրաստում հայրենիքի համար։ Անցան այն ժամանակները, երբ կանայք համարվում էին երբեմն սատանա և երբեմն հրեշտակ. այժմ, այս մարդասեր դարում, լուսավորյալ աշխարհը նայում է կանանց վերա, որպես մարդու վերա։ Նա ճանաչել է այժմ այն մեծ և խորախորհուրդ պաշտոնը, որ վիճակել էր աստված կանանց ազգին լցուցանելու։

Հայ կանա՛յք, դուք որչափ ևս նոր ժամանակների ծնունդ, այնուամենայնիվ դուստր կամ թոռներ եք այն մեծահոգի և խնկելի քաջ արմենուհիների, որոնց մասին մի փոքր վերևում խոսեցինք. մեծ և անմերժելի պարտականութիւն կա ձեր վերա նմանել նոցա և հասկանալ ձեր խորհուրդը։ Դուք առանձնված չեք, որ միմիայն հագվիք, ուտեք, խմեք և քնեք, այլ պարտական եք մայրութիւն առնել և ձեր հայութիւնը երևեցնել ձեր զավակների մեջ. մեք անմահ ենք մեր զավակներով, ինչպես մեր նախնիքը կենդանի են մեզանով։ Հիշեցե՛ք ձեր ազգութիւնը, ձեր զավակների գալոց օրերը, հիշեցե՛ք ձեր հին մայրերի քաշածները և աշխատեցեք հայեր տալ մեզ, ինչպես ձեր նախնի մայրերը աշխատում էին։ Ձեր ցանկութիւններից և աշխատութիւններից կախվում է ծաղկեցնել և փառավորել այն, որ հազարների արյունով և բյուրերի արտասուքով պահվել է մինչև այժմ. նույնպես ձեր ծուլութիւնից, անհոգութիւնից և չհայութիւնից է կախվում, որ ունայնանան մեր հորերի և մորերի քաշածները և մեք բոլորքյան անհայտանանք, որպես մի կաթիլ ջուր ահագին ծովի մեջ։

Հայ կանա՛յք, մեր ազգը ավերվել է այժմ, նորան պիտո է վերանորոգել. նա թմրել է մի խոր քնով, նորան պիտո է զարթեցնել. քայց այս երկու դիպվածում ևս ամենայն ջանք և աշխատութիւնք զուր կերթան, եթե դուք չմերկանաք ձեր վերայից անհոգության դատապարտելի քողը, եթե դուք չհագնեք հայութիւնը, ոչ որպես քրինոլին, այլ որպես գույն ձեր մարմնին, որ ոչինչ բան չէր կարող քնքել հանել ձեր վերայից։

Ամենայն ուսումն և գիտութիւն, դպրոցներում ավանդված, ուշացած են և դժվարավ կներգործեն ձեր զավակների վերա, եթե նոքա ատացած չէին ձեղանից մի ընդունական դաստիարակութիւն։

Ձենք պահանջում ձեղանից այն ընտանեկան դաստիարակութիւնը,

որ պահանջելի էր եվրոպացի կանանցից. առ ժամս, մինչև մեր աղջի նոր մայրերը, հերիք է մեզ և շատ շնորհակալ կլինինք, եթե դուք ձեր հայկական իստակ կաթի հետ տաք ձեր զավակներին նախ, մեր լեզուն, երկրորդ, հոգով և սրտով հայություն, և երրորդ, անձնազոհ սեր դեպի ազգությունը, դեպի մեր ազատ կրոնը։

Աշխարհը հառաջ է գնում, վերատին ծաղկում են բառնամած ազգությունքը, և մեզ արժան է անհոգ չլինել այն պարծանքի մասին, որ սահմանված է հայությանը, մարդկության մեջ։ Հայերը պարտական են լուսավորվիլ և գործիք լինել նախախնամության ձեռքում, ասիական ազգերի մեջ լուսավորություն տարածելու։

Հայ կանա՛յք, մինչև այժմ ձեր աղջիկների մասին ձեր հոգաբարձությունը այն է եղել միայն, որ պահեք, մեծացնեք, պայծառ և փառավոր զգեստներով զարդարեք և կորսետի և քրինոլինի հարուստ պաշարներով, օր հառաջ ամուսնացնեք նորանց որքան կարելի է մի հարուստ մարդու հետ։ Շատ այն է եղել, որ ուշադրություն դարձուցած չեք փնտայացուի հատակի, բարոյականության, խելքի և բանականության վերա, Թողունք, որ շատ անգամ ձեր աղջիկը ոչ թե միայն չէ սիրել յուր փնտայացուն, այլև տեսանել չէ կամեցել այն հարուստ, բայց անհավանելի փնտայացուի երեսը։ Այս չէր ձեր-մայրենի պարտականությունը. դուք ձեր աղջիկներից պիտի նոր մայրեր պատրաստեք գալոց սերունդի համար. դուք ձեր աղջիկների մեջ պարտական եք սնուել և սնուցանել ազգության տունկը և ծնողական սուրբ իրավունքներով պարտք դնել նորա վերա նույնը ավելի ամեցուցած տալ յուրյանց զավակներին։ Տղաների մասին ևս ավելի լավ չէ եղել ձեր հոգաբարձությունը. նորա ազգի և ազգության անունը անգամ չլսած ձեզանից, դուրս են եկել նյութականության ծառայելու։ Դուք պարտակա՛ն եք նոր հայրեր պատրաստել նորանից և ազգությունը, լեզուն և կրոնը հանձնել նորա, որպես մի սրբազան և անկողոպտելի ավանդ, կատակելով, որ տասնապատիկ շահեցուցած հետ տան այդ նվիրական ավանդը յուրյանց զավակներին։

Հայ կանա՛յք, մեր ազգը մինչև այժմ ապրել է ողորմելի խեղճության մեջ. նա մոխիր է կերել հացի տեղ և նորա խմելիքը խառնված է եղած արտասուքով։ Բռնակալության մուրճերը այնպես սաստիկ ջարդել են մեր ազգը, որ մինչև այսօր չէ կարողանում զգաստանալ յուր ուշաթափ վիճակից, քննել յուր անձը, քննել յուր անցածը, յուր ներկան և հոգալ ապագայի մասին։ Այս է գլխավոր պատճառը, որ ամենայն ինչում վիճակ տանելի է եղել մեր խեղճ և թշուառանդ ազգին. նա երկար ժամանակ սովորելով այդպիսի դառն բաժակների, մոռացել է ավելի լավը որոնելու դաղափարը։ Ներկայումս, աշխարհի լուսավորությունը օրն օր ինչացնում է սորուկ ազգերի կերած ծնծների սաստկությունը. այս պարու մարդասեր հոգին դարմանում է նորա վերքերը և բռնելով ցանկացողի ձեռքից հանում է ցեխից և ապականությունից դեպի վեր, դեպի մի երջանիկ կյանք։

Մեր ազգը վաղուց մոռացել է ցանկանալ. այո, նա ունեցել է և ունի այս զգացողությունը, բայց միմիայն արծաթի և ոսկու վերաբերությամբ. դորա հակառակ մի բարոյական պարծանքի գաղափար, մի ընդհանուր ազգային շինության գաղափար նորա մտքով ևս չէ անցել: Մեզ մնում է ցանկանալ այդ աստվածատուր գաղափարին. իսկ քն չհաջողի մեզ իրագործել, այն ժամանակ մեզ հաջորդը պատրաստել և ուխտելով նզով առնել, որ նորա աշխատանն իրագործել ա՛յն, անդրդվելի հոգով և ցանկությամբ, ինչպես երբեմն Մովսես ցանկանում էր հանել աստուծո ժողովուրդը ավետյաց երկիրը:

Հայ կանա՛յք, դուք, ինչպես և բոլոր արարածք, մահկանացու եք, ձեզ հիշատակ չեն, ձեզ փառք չեն ձեր փայլուն գոհարները կամ ոսկած քրիստիննները. ձեր պարծանքը և հիշատակը են ձեր զավակները: Նոցա ձեռքով և նոցա արժանավորությամբ պետի փառավորվին և անմահանան ձեր անուննները. սորա հակառակ, նոցա անարժանությամբ պետի մեռանին և ոչնչանան:

Երանի՜ քն լսելի լիներ ձեզ իմ ձայնը, երանի՜ քն մի քանի գոհ փրկվին իմ այս արտասովոտուն խոսքերը. ո՜րքան պետի մխիթարվի ես. հյուսիս արևը մի գրկաչափ ավելի պետի բարձրանար ազգային փրկության հորիզոնի վերա:

Բայց ներկայումս, կրկնում ենք, մինչդեռ չկա դեռևս մեջտեղում ընտանեկան կամ մայրենի դաստիարակություն, այս պատճառով ազգային դպրոցք պարտական են կատարել այս պաշտոնը քնքուշ խնամով:

Մեր ազգին հարկավոր է ընդհանուր լուսավորություն, որպեսզի ազգը գիտակցություն ստանա. այս կամ այն մասնավոր գիտություն չունին այն խորհուրդը, ինչպես մտածում են ոմանք: Հայոց ազգը շատ անգ գրել կարդալ չգիտե, շատ սեղ կորած է մինչև անգամ և լեզուն. այս պատճառների հիման վերա, առաջին փույթը պետի լինի նախ և հառաջ կենդանացնել մայրենի լեզուն, ազգի զավակների սրտի, հոգու և բերանի մեջ, անհետացնել մեր միջից թուրքերենը, մոլդովաներենը կամ ուրիշները, որ բռնել են ազգային լեզվի տեղը: Հայաստանի բոլոր գյուղերում և քաղաքներում հաստատել պարզ դպրոցներ, որոնց պաշտոնը էր լեզու և գիր ուսուցանել ազգի զավակներին: Այնպիսի գեղեցում, ուր ժողովրդի չքավորությունը արգելափակի է այս գաղափարի իրագործությանը: . . . . . .

. . . . . .

Անգլիայի պես հզոր և լուսավոր տերության մեջ, գյուղական քահանան գրկվում է յուր ծուխից, նրա հանկարծ մի տղա կամ աղջիկ երևեր նորա ժողովրդի մեջ, որ գրել կարդալ չգիտեր: Քահանան ունի յուր ծուխը ցուցակը, նա գիտե, քն ո՜ր գերդաստանի մեջ քանի զավակ կա, և նրա ծնողք չկամենան յուր ժամանակին ուղարկել յուրյանց զավակը քահանային, սա իրավունք ունի դատավորի ձեռքով պահանջել:

Անտարակույս, միմիայն հայոց լեզու ուսանելը մի մեծ բան չէ, և դորանով դեռ ազգը չյուսավորեցինք, նմին հասանելիք ևս այդ նպատակին, բայց դա այն առաջին աստիճանն է լուսավորության սանդուղքի, որի վերա չկոխած, չէ կարելի հետևյալները կոխել։ Մեր ազգի մեջ ոչինչ չկա, ամենայն բան հարկավոր է նորից սկսանել. բայց ինչ չվհատվինք փորրոգի մարդիկ. ին բան չլինելով, այժմեն իսկ կորած էին հայերը, ո՛չ նորա կորած չեն, այլ միայն գտանվում են մի այնպիսի չար ճանապարհի վերա, որի վերջը կորուստ է։

Մարդկությունը մի խճորված վիճակի մեջ գտանվում է ներկայումս, մարդկության մեջ երևում է մեծ գործունեություն, մեծ շարժողություն. և այն ազգը, որ չկամներ ինքնուրույնաբար շարժվիլ և գործ կատարել կոյ կերթա մի ուրիշ ավելի գործունյա և խելացի ազգության. ասացինք, ով ականջ ունի, ինդ լսե։

Մի կողմից քահանաներից պահանջելով ազգի զավակներին գրել կարդալ ուսուցանել, մյուս կողմից անհրաժեշտ են ազգային օրինավոր դպրոցների հիմնարկություններ։ Բայց այս բոլոնիս ի՛նչպես կարող են հիմնվիլ այդ դպրոցքը, մինչ ոչ արծաթապետություն կա և ոչ վարժապետներ։ Այս ևս մի ահավոր խնդիր է, որի լուծումը որքան դժվարին և անհնարին է երևում շատերին, դորա հակառակ մեղ շատ հեշտ։ Այստեղ հարկավոր է ազգի կամքը. նմին սա չէ մեռել կամ չէ դադարել ներգործելուց, և արծաթը կկանաչի և դասախոսարաններ կհիմնեն։ Տարակույս չկա, որ այսպիսի դիպվածներում հարկավոր են վճռական հնարներ. կիսակատար հնարները ոչ ին միայն չեն հասուցանում այս նպատակին, այլ մեծապես վնասակար են և՛ նյութական և՛ բարոյական կողմից։

Շատ անգամ բերանացի և նամակներով խոսած ենք զանազան մարդերի հետ մի ընդհանուր ազգային արծաթապետություն գոյացնելու գազափարի մասին. բայց մի այլ բան մեջ ընկնելով խափանատիրի է եղել այս խնդրի մշակությանը։ Ինչ էր այդ այլ բանը. այն, որ մեք չգիտենք դեռևս մեր ազգի քանակությունը ստուգապես։ Այս բանի մասին ևս խոսքեր կան մեր մեջ և ճաշակ տալու համար մեր ընթերցողներին, ին ինչ բարեխղճությամբ աշխատում էին մի քանի երիտասարդք այս խնդրի վերա, մեջ եմ բերում մեր բարեկամներից մինի նամակը, որի բովանդակությունը հարգելի է մեղ, ին խնդրի վսեմության և ին այդ խնդիրը լուծանելու մասին դյուրին ճանապարհներ մեջ բերելու համար։ Ահա՛ այդ նամակի բառացի պատճենը։

$\frac{30}{18}$ մարտի 1860, Բևդուտկալե

Սիրելի եղբայրս ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԻԼ,

Քո վերջին նամակը, փետրվ. 1/13-ից, ինձ ավելի զարմացրեց, քան ին համոզեց։ Դու իմ առաջարկությունների ընդդեմ գրում ես ինձ, ին անհնար է այժմ գլուխ բերել իմ խնդրած բանը, այսինքն կազմել մի

մատյան, ուր պիտի երևնը երկրիս վերա եղած հայերի ստույգ թիվը ներկայումս, և ին որքան ո՛ր աշխարհում բնակվում է։ Ես չգիտեմ, ինչ բան կար սորանից ինին։ Քո ասածը, ին հարկավոր է, որ մի քանի մարդիկ դուրս գային ու ճանապարհորդեին ամեն աշխարհ, ուր գտանվում էր հայոց ազգ և այնտեղ ամենայն ճշտությամբ արձանագրեին, ոչ միայն բնակիչների թիվը, այլև մի քանի վիճակագրական և տեղագրական ծանոթություններ. ես ընդունում եմ այս, և սրտով հավատում եմ, որ անարդյուն լինելու չէր մեր ուսումնական ազգայիններին, մինչև հայոց մոռացված դեղերի և քաղաքների մեջ ներս մտանելը, բայց առանց այդ ճանապարհորդության ևս կարող ենք մեր ներկա խնդիրը լուծանել, այսինքն իմանալ ազգի ստույգ քանակությունը։

Կատարյալ իրավունք եմ տալիս քո դաղափարին, ին թվի հետ հարկավոր էին և մի քանի վիճակագրական և տեղագրական ծանոթություններ, որպեսզի, երբ ժամանակով հոգ տարվելու լինի ազգին, իմանան հոգացողը, ին ո՛րտեղ ինչ էր պակաս կամ ավելորդ. տեղագրությունը նույնպես հարկավոր է, որ հոգացողը կարողանան բնության երևույթներին հարմարել յուրյանց գաղափարը, որ պիտի ծառայեր ժողովրդին որպես աղբյուր նյութական շահատացության։ Ըստ որում մեր ազգին, ուսման և լուսավորության հետքից հարկավոր է տալ և կանոնավոր տնտեսական, գյուղական և վաճառական գիտություններ, որպեսզի հաստատ հիմքերի վերա կանգնի նորա ին երկրագործությունը և ին վաճառականությունը։ Բայց արի՛ տես, որ մեծի քամակից գնալով, կարող ենք և փորրը կորուսանել։ Ո՛վ է մեզանից ճանապարհ ընկնողը սարից սար և քարից քար, ին ինչ է, պիտի օգնեն այս խնդրի լուծմանը, ո՛ր ուսումնականը մեր մեջ վիճակված է այնպիսի նյութական ապահովության, որ կարողանար այսպիսի գոհ բերել ազգին։ Հայը չունին ակադեմիա, ուսումնական ճանապարհորդք դուրս ուղարկելու համար։ Ավելորդ է ասելը, որ ներկայումս ազգի կարողքը լսել ևս չկամին մի այդպիսի բան, ուստի մտածում եմ, ին առայժմս պիտու էր ազգի թվովը միայն շատանալ, որ հեշտ, գրավոր ճանապարհով միայն, կարելի է հոգալ։

Տարակույս չկա, որ կղզրմանաս և ինինամտություն կհամարես, երբ որ կկարդաս հետ ճանապարհով խոսքը, բայց այն ժամանակ հիշիր, որ հայերը ունին և պահպանում են դեռևս մի կրոնական միություն, հիշիր, որ ամենայն տեղ կան քահանայք և պատկանում են մի վիճակի, մի իշխանության, այսինքն ենթադրյալ են մի եպիսկոպոսի. եպիսկոպոսքը գտանվում են մատնավոր պատրիարքների, կամ Սսու և Աղթամարի կաթողիկոսների իրավասության տակ. իսկ բոլորը միասին ունին և ճանաչում են մի հոգևոր գլուխ, որի օրինավոր հրամանները միշտ ընդունելի եղած են, ընդունելի են, և պիտի լինեն հոգևոր դասուն։ Կարծեմ, որ այժմ հասկացար միտքս։

Գո՛նե մի անգամ կվերանային տարակուսությունքը և կարող մնայինք այնուհետև օտարների վկայությանը։

Ո՛րքան մեծ ամոթ է մեզ, մեր ազգին ընդհանրապես, որ մենք չգիտենք մեր թիվը, որքանությունը և վիճակը և հարկադրված ենք սուտ ու մուտ ծանոթություններ մուրալ այս կամ այն օտար հեղինակից կամ ճանապարհորդից, մանավանդ երբ այդ վկայությունքը, լինելով շատ անհամեմատ միմյանց հետ, չունին իրավունք մեզանից կատարյալ հավատ պահանջելու։

Այս վերջին օրերումս, մի քանի մարդ, չգիտեմ ինչ նպատակով, աշխատում են փորր ցույց տալ հայերի թիվը. այսինքն 3—4 միլիոն, մինչ մեր կարծիքով պիտի լինի 4—5 կամ հինգ միլիոնից փորր պակաս։ Հայոնի բան է մեծ բազմությունը գոհանում է Տաճկաստան։ Մինչ Սամսոն գնալու համար անցանում էի Սինոպից, պատահեցա մի տաճկաց պաշտոնեի, որ ծառայում էր ռեզական փաշայի մոտ, և որ պատմեց ինձ, թե տաճկի կառավարությունը դիվանական կերպով համարում է յուր հպատակ հայերը 3,800,000։ Սորա վերա շատ չանցավ, ձեռքս ընկավ էդմոն Շերթին ֆրանսիացու գիրքը, ուր հայոց թիվը բարձրանում է մինչև 3,900,000, որոնցից, ասում է հեղինակը, 400,000 բնակվում են եվրոպական Տաճկաստանում, իսկ մնացյալ երեք միլիոն հինգ հարյուր հազարը ասիական Տաճկաստանի մեջ։*

Համաձայնի՛ր ինքդ, թե ի՛նչպես կարելի է ազգի հառաջադիմության վերա խոսել, ազգի վերանորոգության վերա մտածել, առանց ճիշտ տեղեկության ունենալու ազգի վերա, նորա որքանության և վիճակի մասին։ Մինչև այժմ, մենք, խոսելով այս բաների վերա, համարյա՛ թե խարխափել ենք մի խավար գետնափորի մեջ, իսկ երբ երևան հանվին վերոգրյալ տեղեկությունքը, այն ժամանակ կարելի է ավելի դրական կերպով խոսել, հարմարվելով ազգի քանակության հետ, նորա նյութական և բարոյական կարողության հետ։

Մնաս բարով, մինչև ցմյուս նամակս,

Քո ՍԵՐՈՎԲԵ ՇԱՀԲԵԳ

Բերելով այս նամակը Հիշատակարանիս մեջ, կատարում եմ այն բարոյական պարտականությունը, որ մեր պատվելի թղթակիցը դնում էր մեր վերա, և հոգվով շատ ցանկանում եմ, որ մի բարի հետևանք ունենա այս հրատարակությունը, մեր ազգի վերաբերությամբ։

Այս միջոցներում ստացած նամակներիս մեջ նույնպես նշանավոր է մի նամակ, որ ստացա պ. Մեսրոպ Տիրատուրյանի ստորագրությամբ[41]։ Այս արդի անձը մեզ անծանոթ է գլխովին, և դուցե թե ստորագրությունը ևս լինի մի շինովի անուն, ըստ որում նամակի մեջ չէր գրում ամսաթիվը կամ քաղաքի տեղը։ Նամակի պահպանի վերա երևում էր. 17 փետր. 1860, Թիֆլիս։

Մենք շատ ուրախ ենք այսպիսի թղթակիցների վերա և եթե կամե-

* Réformes en Turquie par Edmond Ghertier. Paris, 1858.

նան, կարող են ծածկած մնալ հասարակութիւններից, երևելով բոլորովին այլ դիտաւով, միայն խնդրում ենք, որ մեզ հասուցած տպելիքը համաբնոյացած լինին ազգի էական օգուտների հետ։ Ահավասիկ վերոգրեալ նամակի բառացի պատճենը։

Արդո պարոն, ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԵԼ,

Տարակուսս չկա, որ մարդկութեան պատմութեան մէջ, ոչ մի ժամանակ, այնպես սաստիկ և որոշակի երևեցած չեն ազգութիւնքը, ինչպես ներկայումս։ Ազգութիւնը տես թե դարձել է մի ամենօրեայ հաց, առանց որին չէր կարելի ապրել. մի էլեկտրականութեան պես բան, որ փայլակի շուտութեամբ տարածվում է զանազան ազգութեան անդամների մէջ։ Այս բանի խմորը ընկնում է և մեր ազգի մէջ և մեզանում լսվում են ձայներ և մեր մէջ սկսում է բարբախել մի կենդանի սիրտ։

Արդարև, հայոց ազգը, այնքան բարոյական և նիւթական դարավոր ավերածքից հետո, չէր կարող իսկույն հասկանալ ազգութիւնը և պղտոքեր շինել նորան, այս մեր հասարակաց վատաբախտութիւնն է, բայց դորան նայելով հրաժարվիլ գործունեութիւններից, մեր կարծիքով սխալ է անձնասպան լինել։

Ահա այս պատճառներից ստիպված և ես իջանում եմ հայկական դպրութեան ասպարեզ, և ես կամիմ մի երկու քար դնել այնտեղ, որի վերա գուցե թե բարձրանա մի օր հայ ազգութեան շինվածը։

Ներս մտանելով այս գործի մէջ գուցե շարժում էի ձեր հարցասիրութիւնը, թե արդյոք ի՛նչ դպրոցի և ի՛նչ փիլիսոփայութեան հետևող եմ։ Առանց դատողութեան չեմ ընդունում ոչ Քանթը և ոչ Հեգելը. նախ, որ իմ մտածութիւնքը և խորհելու ազատութիւնը չկամիմ երբեք ստրկացնել այդ փիլիսոփաների իշխանութեանը, առողջ փիլիսոփայութեան առաջին ընդդիմ գործ համարելով ազատութեան կորուստը. երկրորդ, փիլիսոփայութիւնը մի կենդանի, շարժուն և համորեն մարդկութեան սեփական բան լինելով, ուսանում եմ ներկայումս, ազգերի ժամանակակից պատմութիւններից և երևույթներից։ Այսքան ծանոթութիւնը հերիք համարելով իմ հայացքի և սկզբունքի մասին, շարունակում եմ խոսքս, թե մեր ազգութիւնը զորացնելու և ազգութեան գաղափարը հասարակաց դարձնելու համար, ամենամեծ և զորավոր հնարներից միևն է նաև ազգային պատմութեան ուսումը։

Մինչև այժմ մեր ազգը չունի մի օրինավոր պատմութիւն, մի այնպիսի գործ, որ արժանի լիներ և դիմանար եվրոպական քննութեան հրա-
փորձութեանը։ Ջանց եմ առնում հիշել այստեղ, պատմութեան անունով, մեր մէջ մանկած գրքերի թերութիւնքը և խակութիւնքը, զանց եմ առնում նույնպես հռչակել հասուցանելի օգուտը մի օրինավոր պատմութեան երևելուց. այս վերջինս շատ հասկանալի լինելով, գուր տեղը պիտի ժամանակ կորուսած լիննի. այլ հարկավոր եմ համարում մի երկու խոսք

ասել այն մասին, թե ինչ բաներ հարկավոր էին ազգին նախ և առաջ, որ հետո ազգի ուսումնականները կարող լիներին ազգային պատմություն գրելու ձեռք զարկել։

1. Մեր ազգային մատենագրության վերաբերյալ գրվածք, որ ցնցուկներ և հարյուրավոր տարեկան մագաղաթներ մեջ փռում են վանքերի կամ այս ու այն մատենարանի անկյուններում, ձգել տպագրական մամուլի տակ և այս ճանապարհով գործածության նորանց հասարակաց ժառանգության։

2. Այն գործերը, որոնց անուններդ միայն հասել են մեզ, իսկ իրբյանք կամ ստուգիվ կորած են ձախողակի, կամ թաղված փոշիների և ջլատակների տակ, պատշաճավոր հոգությամբ որոնել։ Անտարակույս, նրա տանից հինգը դուրս գա, այն ևս մեծ բան է։

3. Հավաքել և տպել այն բոլոր կցկտուր հիշատակարանդը, որ արդյոք կամ այլ մարդիկ սովոր էին գրքերի քամակներում գրել. և մեք կարծում ենք, թե էջմիածնի, Աղթամարի և Սուրբ կաթողիկոսական մատենադարանների գրքերդ հարուստ լինին այսպիսի հիշատակարաններով։ Սորա պատճառդ պատմության մեջ այն է, որ շատ անգամ կարող են վկա լինել ժամանակագրության մի երևելի անցքի, որ անցել էր ազգի մեջ և որի թվականը գուցե թե կորած էր կամ ճիշտ չէր։

Մինչև որ այս բաներդ նզած չէին, հայոց ուսումնականի գրած պատմությունդ նույն բանը կլինի, ինչ որ մինչև այժմ եղած է և ինչ որ մի օտար եվրոպացի գրել է, կամ կարող էր գրել, քանի որում չկային պարզ և նոր աղբյուրդ։

Լուռ մնալ մի այլ հարկավոր բանի մասին ևս չենք կարող։ Մեր ազգի ուսումնականներին հայտնի է, որ մեր գպրությունդ և լեզվի հիշատակարանդը սկսանում են չորրորդ դարուց, այսինքն Լուսավորչից, որի հանախապատում գիրդ սկիզբն դնում է քրիստոնեական հայոց մատենագրության։

Բայց հայոց տերությունդ Հայկի ձեռքով հիմնվեցավ Քրիստոսից 2107 տարի հառաջ, ուրեմն 2428 տարի նախքան Լուսավորիչը։ Նորանից հետո Պարույր նահապետի թագ կապելով Քրիստոսից 749, ուրեմն Լուսավորչից 1070 տարի հառաջ անցավ օրինավոր թագավորության կարգ։ Քրիստոսից 149, ուրեմն Լուսավորչից 470 տարի հառաջ վերանորոգվեցավ հայոց տերությունդ և այնուհետև սկսավ Հայաստանդ ծաղկել և բարեկարգվիլ։ Այո, մինչև վաղարշակդ չեն եղել հիշատակարանդ կամ գրվածք, նրա լինելին, նա կարոտանալ չէր նինվեի դիվանին, բայց Վաղարշակի հիմք դնելով և նորա օրինակով պիտո է մտածել, որ մեր ազգի մեջ ևս մի բան մտած էր պարսիկ, ասորի կամ հույն գրերով։

Ինչ որ կար չկար, թե արքունական և թե մեհենական գրվածք կամ մատյանք, որ պատկանում էին հայոց ազգի հեթանոսական կյանքին, Լուսավորչի ձեռքով գաստապարտվեցան գնալ կորուստ, գնալ կրակ առանց ամենևին խնայելու, կորան կործանվեցան և այն գեղեցիկ ար-

ձաններըը, որ այսօր կարող էին հասկացնել մեզ հայոց ազգի եղած ճարտարապետության չափ ու կշիռը, և քրիստոնեությունը մի անհայության պարիսպ քաշեց մեր քրիստոնեական և անցած հեթանոսական կյանքերի մեջ։

Այս պատճառներով ահա, մեզ հայտնի չեն շատ բաներ, չգիտենք մինչև անգամ թե ինչպես էր մեր հայկաբանության ձև ու ոճը քրիստոնեությունից հառաջ, որովհետև քրիստոնեական ժամանակների հայկաբանությունը սարկացած է հունականին ոչ բառացի, այլ տառացի մարդով, եթե կարելի է այսպես ասել, և այս բանը կերևի պարզ, եթե օրինավոր կերպով քննության տակ դրվի մեր Աստվածաշնչի թարգմանությունը։

Անմահ և երկնային հիշատակի արժանավոր Խորենացին տալիս է մեզ մի քանի հիշատակարանք. այդ խնկելի ծերունին լանցնում է մեզ մի քանի տող բան Գողթան երգիչներից, նա ցույց է տալիս մեզ փոքր թե շատ այն տեղերը, ուր պիտո էր մտածել, թե կենդանացած էին մեր դպրությունը և կրոնը, կամիմ ասել, այն մեհյաններըը, որ գտանվում էին Աշտիշատ, Արտաշատ, Տարոն և այլ տեղեր։

Շատ ազգեր, յուրյանց հեթանոսության ժամանակ, սովոր էին յուրյանց մեռելների հետ թաղել զանազան հիշատակարանք, գրամներ, ոսկեղեն և արծաթեղեն զարդեր, կամ թե ուրիշ այնպիսի բաներ, որ գալոց օրերում լույս կարող էին տալ պատմության. մի՞թե չէ կարելի մտածել, որ հայք ևս ունեցած լինեին այս սովորությունը։ Գուցե թե եղած ևս լինի այս հայերի մեջ, բայց սոցա անուսումնասիրությունը, որի մասին ինքը Խորենացին բողոքում է, հառաջ է քան թե այլ ամենայն սովորություն։ Լուսավորչից հարյուրավոր տարիներ հետո կանգնեցան Բագրատունյաց և Ռուբենյաց թագավորությունքը, շեմ ասում Արշակունյաց թագավորության շարունակությունը Լուսավորչից հետո, բայց և այս պայծառ օրերը հայերի անցել են առանց մի ծառայություն ցույց տալու ազգին, քրքրելով և մշակելով հեթանոսական հնությունը կամ նորա մնացած և կամ կորած հիշատակարանքը։

Այո՛, հնախոս գիտությունը ավելի ծաղկած է այսօր և ավելի շատ գործեր է կատարում, քան թե սորանից հինգ հարյուր տարի հառաջ, և արծաթը, ոսկին կամ, այլ անփուտ բաներ, եթե կային մեր մեռելների վերա, գուցե մնացին և մինչև այժմ, բայց բանը այս է, որ մեր մեջ ուժ չմնաց ներկայումս այդ բաները փորելու և քրքրելու, չնայելով այն վերին ասպրճանի կարատության, որ զգում է մեր պատմությունը, որի շատ երեսները դատարկ են, եթե եվրոպականի ակնոցով նայենք այդ պատմության վերա։

Նամակիս խորհուրդը այն է, որ խնդրեմ Ձեզանից, Հիշատակարանիդ միջնորդությամբ, առաջարկել մի խնդիր — մի՞թե չէ կարելի մի ընկերություն կազմել մեր ազգի անդամների մեջ, այսպիսի անունով. «Հայոց պատմության և հնության ընկերություն» այնպես, որ անդամ լինելու ցանկություն ունեցող հայը վճարե ամենայն տարի երեք մանեթ արծաթ.

մինչև որ ընկերության գանձարանը ուժ առնու և կարողանա ինքնուրեն գործ կատարել, առանց վերստին ծանրաբեռնելու յուր պատվելի անդամքը։ Ես մտածում եմ, որ Տաճկաստանի հայերի մեջ ևս կլինին հազարավոր մարդիկ, որ ուրախությամբ սրտի կցանկանային մասնակից լինել մի այդպիսի ընկերության։ Իմ կարծիքը այնպես է, որ և Ռուսիայի հայը հետ մնալու չէին այս բանից, քան որում պատմության չլինելը արգելն զգում են շատերը։

Եվ ի՛նչ ծանրություն էր հայոց ազգի անդամների համար տարին երեք արծաթի վճարել, որ ներկայումս Տաճկաստանի հաշվով անել է 54 դուռուշ. մի՛թե սակա՞վ են այն մարդիկը, որ ուժ ունեին ամենայն թեթևությամբ վճարել այս քանակությունը արծաթի։ Ես դարձյալ չեմ տատակուսում, եթե միայն ընկերությունը հաստատվեր անխարդախ հիմքերի վերա։

Ընկերության խորհուրդը կլիներ յուր գոյացուցած արծաթով ամենայն խնամով և հոգարարձությամբ հոգալ այն բոլորը, ինչ որ պատմության համար անհրաժեշտ էին, որպես աղբյուրներ կամ նյութեր, օրինակի համար.

1. Ընկերությունը կհոգար հին ձեռագրերների տպագրությունը, հայոնի բան է, հանձնելով բանագետ և ուսումնական մարդկերի քննել և համեմատել այդ ձեռագիրքը ուրիշ օրինակների հետ և այլն և այլն։

2. Կորոներ ամենայն տեղ ազգի մեջ, թե յուր անդամների և թե հատուկ այս բանին նվիրված առաքյալների ձեռքով, այն բոլոր գործերը, որոնց անունը միայն մեզ հասած լինելով գիտենք։

3. Կհավաքեր զանազան տեղերից ազգային պատմության, կամ ժամանակագրության վերաբերյալ հիշատակներ և լույս կհաներ նորանց տպագրությամբ։

4. Կփորեր և կքրքրեր այն տեղերը, ուր կարծիք կային, թե պիտի լինին հնություններ հայերի մեռածների մնացորդքը։

5. Գտանված հնություններ, օրինավոր և ուսումնական քննությամբ կհրատարակեր համարեն ազգի պետության համար։

6. Բոլոր, կամ, կարելի եղածի չափ նյութեր պատրաստելուց հետո մարդիկ կընտրեր ազգային և եկեղեցական պատմությունքը գրելու։

7. Բոլոր ուսումնական անդամների հաճությամբ և հավանությամբ ընդունված և քննության դիմացած, նոր գրված պատմությունը հայոց կտպեր երկու գլխավոր հայերեն բարբառներով— Ռուսիայի և Թյուրքիայի։

8. Այս տպված պատմությունքը պատշաճավոր խնամով, հազարավոր օրինակներով ձրի կբաժաներ ազգի ազքատ և չքավոր մարդկերին, հարուստ մարդկերից միայն ստանալով գրքի նյութական արժեքը, որ ընկերության կարողությունը չվնասեր ուրիշ այլ ազգային գործերի համար։

Եվ այլ այսպիսի բաններ, որ չգրեցի և որ առողջ գատողությունը ինքնին հասկացնում է։ Հայտնի բան է, որ ընկերությունը կազմվի, նա պիտի ունենա մի կանոն, որով պիտի առաջնորդվի յուր բոլոր գործողության մեջ։

Ո՛ւմ, խնդրեմ, այս նամակը հրատարակելով Հիշատակարանիդ մեջ, մոռանալի կացուցանել նորան մեր ազգի անդամներին, որոնց չեմ կարող ամեն մինին առանձին առանձին նամակ գրել, մոզ որ շատերի հետ ծանոթություն ևս չունիմ, բայ որում ընկերական հոգին վաղուց թռած է մեր աշքից։

Ասուածո մի նոր շնորհը կլինի մեր վերա, եթե այսուհետև գնի, աշխարհի լուսավորությունը մի փոքր ազդեցություն գործելով միաբանեցնե հայերը մի ազգօգուտ ամենահարկավոր գործի մեջ։

Համառարիմ առնելով Ձեզ իմ անգրժելի բարեկամությունը, մնամ և այլն։

ՄԵՍՐՈՊ ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ։

Շնորհակալ ենք մեր անծանոթ բարեկամից, նորա այս գովելի գաղափարի մասին, և չենք կարող չուրախանալ հայ մարդու բերանից լսելով այսպիսի խոսքեր։ Օրհնյա՛լ է ասուածո։

Պարոն Տիրատուրյանի առաջարկած խնդիրը շատ մեծ հարգ ունի մեր աչքում. համաձայն ենք նորա թե գաղափարին և թե այդ գաղափարը իրագործելու կերպերին և հնարներին։

Պարոն Տիրատուրյանի նամակով կամեի այս անգամ վերջացնել Հիշատակարանս, բայց մի այլ նամակ, մի բարեկամից, տալիս է մեզ հետևյալ լուրը, որի մասին չենք կարող զանց առնել։

«Պարոն Հովհաննես Տեր Գարրիելյան Պատկանյանցը, վիմագրությամբ տպելով մեր վեհափառ կաթողիկոսի պատկերը, համեմատ լուսաւանկար օրինակին, որ ստացվել էր Կոստանդնուպոլսից, շնորհ է գտել ամատուցանելու նոցին կայսերական մեծութիւններին, թագավոր կայսեր և թագուհի կայսրուհուն, այլև նորին կայսերական բարձրության, «թագավոր ժառանգի տերության։

«Թագավոր կայսրը շատ հաճությամբ ընդունելով այս ընծան, պարգևել է Տաթեւատացի պ. Պատկանյանցին մի գեղեցիկ բոխչիանայա ամատանի, իսկ թագավոր ժառանգը շնորհել է դրամական վարձատրություն»։

Պատկանություն համարելով մեզ հրատարակել այս իրողությունը, չենք կարող չհավելացնել, որ այս կայսերական պարգևը և հաճությունը, եթե մի մասնով պիտի վերաբերվին Տաթեւատացի վիմագրողին, մյուս և ավելի մեծ մասնով այն հարգությանը, որ ունեցաց թագավոր կայսրը ունի դեպի ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսը։

ԺԴ

Գ. Չերքեզյանցի հայհոյությունները.—Գ. Խուդաբաշյանի գիրքը.—Գ. Բարխենյանցի նամակը.—Սկայորդու տարածած լուրերը.—Հյուսիսափայլը և Հիշատակարանս.—Կ. Գոլսի հայոց և հունաց պատրիարքների փոփոխությունները:

§ 1. Մեզ գրում են, թե ինչո՞ւ համար լուռ մնացինք կարդալով տեր Մանդինյանցի Մեղուի մեջ (համար 13) պ. Չերքեզյանցի հայհոյությունները[42], որ ամենայն առատությամբ թափում էր Հյուսիսափայլի թե հրատարակողի և թե նորա գործակիցների վերայ:

§ 2. Մեզ գրում են, թե ի՛նչ պատճառով մինչև այժմ մի քանի բառ չխոսացինք պ. Խուդաբաշևի „Обозрение Армении"[43] մակագրով գործի վերայ, մինչդեռ շատ նյութ կար այնտեղ Հիշատակարանիս համար:

§ 3. Մեզ գրում են, թե ո՛ր զանցառությյան պատճառով չմերժեցինք լուրերը, որ Ճռաքաղից հետո (հոկտեմբերի 17-ին) ծնած Սկայորդին քանի մի անգամ հրատարակեց տեր Մանդինյանցի Մեղուի մեջ, որպես թե Հյուսիսափայլը խափանվելու էր, որպես թե մեր հետանալով հրատարակողի գործակցություններից, դադարել էինք աշխատելուց. և թե ինչու մինչև այժմ չհայտնեցինք մեր երկարատև լռության պատճառը:

§ 4. Մեզ գրում են, թե ինչու համար Հիշատակարանս կամ Հյուսիսափայլը, չէ նվիրում այնքան ուշադրություն բուն ազգային խնդիրներին, որքան լցնում է յուր էջերը կամ ընդհանուր լուսավորության վերաբերյալ բաներով, կամ շատ և շատ հարևանցի քերվելով ազգային խնդիրների մոտից[44]:

Այս չորս խնդիրքը հասել են մեզ բազմաթիվ նամակներով. թևակոտ ատ ի սրտե պատրաստ էինք հարգել մեր աշխատիաց ընդակիցքը, պատասխանելով նոցա հարցմունքին, բայց ֆիզիկական անկարելություն, առանձին պատասխանել այդ բոլորին, հաղթահարում է մեզ և հարկադրում է դիմել դեպի մամուլի օգնությունը: Այս պատճառով ևս որոշեցինք Հիշատակարանիս միջնորդությամբ խոսել, ուր մարդու խղճմտանքով կաշխատանք հանդես հանել մեր պատճառները և կերպարանագործել մեր հայացքը, որ ունենանք այս առաջարկած խնդիրների մասին:

§ 1. Գ. Չերքեզյանցին հարցություն ցույց տված պիտի լիներինք, պատասխանելով նորա գրվածին, բայց մենք կարող չէինք հարգել մի մարդ, որ պարապում էր գրում փոխանակ կրիտիկայի և մի գործ քննելու տեղ անդուռն բերանով հայհոյում էր այդ գործի հեղինակը: Եթե նորա գրածը լիներ մի այնպիսի բան, որի օրինակը տեսված լիներ որևիցե քաղաքակրթյալ ազգի գրության մեջ, անշուշտ կհարկադրվեինք պատասխանել, բայց պ. Չերքեզյանցի գրվածի մեջ բացի անամոթ հայհոյություններից բան չգտանք, ուստի և հարկ եղավ լռությամբ մերժել, որ պատասխանելով, մի գուցե մենք ևս ընկերանայինք արժանի գրվածի արժանի հեղինակին:

Նվ ինչ հարկ կար պատասխանելու մի գրվածի, մինչդեռ հասարակաց կարծիքը դատապարտեց նորա հեղինակը: Ճշմարիտը խոսելով, մեք անչափ ուրախացանք տեսանելով մի այդպիսի քիչ գրողին և քիչ հրատարակողին արժանի հոդված: Պարոնը, շատ ժամանակից սկսած, լրացյալ և անթերի իմաստասիրյուն վաճառելով մի տեսակ մարդերի, մանավանդ պանդոկներին անկյուններում, կարծիք էր տարածել ամբոխի մեջ, յուր գերազանցյալ լուսավորության մասին: Հնարը, որով պ. Չերքեզյանցը կարողացել էր ներկել անդաստիարակ և անկիրթ պարոնների աչքեր, եղած էին նորա անհաղ չարախոսությունքը, այս կամ այն պարոնի վերա, հրատարակելով սորանց տգետ և տառապուր կոխելիք յուր բարձրագույն դիտության ոտքի տակ:

Այս բանին մեծապես օգնել էր նաև այն սոփեստական քննությունը ուսւաց լեզվով հայ Քերականության վերա, որ պ. Չերքեզյանցը հրատարակել էր, ցույց տալու համար յուր դիտությունը հայկական լեզվի մեջ: Մի քանի բառմաղեմ, կամ, ավելի լավ է ասել, անդեմ մարդիկ, փորր էր մնացել, որ կիսատասովածների կարգը դասեին այդ քննության հեղինակը*: Դուցա մեջ էր գտանվել և մեր բարեկամներից մինը, որ 1853 թվականից սկսած, շատ անգամ գովելով մեզ այդ անզուգական դիտնականը, հորդորում էր մեզ մոտենալ դորան. բայց մեք, վաղուց արդեն հանկցած լինելով մեր բարեկամի գովաստանած մարդու որպիսությունը, հրաժարվելով հրաժարվել էինք այդ բարեկամի առաջարկութիւններից, միևնույն ժամանակ, չկարողանալով թաքուցանել մեր սրտի ցավը, մեր սիրելի բարեկամի պարզամտության և անփորձության մասին[45]:

Մեչևիցն. պ. Չերքեզյանցը ահա այսպիսի կերպերով, հիմնելով յուր փառքի կոթողը վերոհիշյալ մարդերի ուսերի վերա, ավելի քան քիչ քանի տարու մեջ չէր դադարում հոգմ արածելուց: Պ. Չերքեզյանցը յուր բոլոր կյանքում միշտ գտանվել է վարագույրի քամակում և յուր հայկական դիտության ապացույցքը գրավորական կերպով բերած դրած չէ հանդիսի մեջ, որ հասարակությունը կարող լիներ բան հասկանալ և չհավատալ

* Գ. Էմինի Քերականությունը, որի վերա գրված էր վերևում ասված քննությունը, այնպիսի մի գործ չէր, որի քննությունքը ցույց տալու համար հարկ լիներ քննություն դրելու: Մեք պ. Էմինը երբեք չէ համարել այդ գործը սխալներից ազատ: Գլխավոր ուշադրության արժանին այն է (ինարկե, նրա հավատանք չար լեզուների խոսածին), որ այդ քննության հեղինակը եղել է ո՞չ պ. Չերքեզյանցը, այլ Մալխասեանցի Միքայել եպիսկոպոսը, որ, անձնական թշնամության պատճառով պ. Էմինի հետ, շարադրել է այդ քննությունը և ավել է պ. Չերքեզյանցին ուսուերեն թարգմանելու, ընդհնելով նորան գրվածքի տակ. Астраханский армянин* առորագրելու իրավունքը, որպես վարձ աշխատության:

Մեր համար, ով և լիներ գործ հեղինակը, այդ քննության մեջ տեսանում ենք միայն միակողմանի իմաստակություն — педантизм, զուրկ, կրնիկայի վերաբերյալ, ամենայն արժանավորություններից: Զուրկ ենք տառից ուշադրության այն անպատշաճությունը, որ հայերեն գործի վերա գրել են ուսահրեն. ինչպես և իցե, մեր կողմից արդեյր չկա այդ գործի պ. Չերքեզյանցին անփոխան համարվելուն, որովհետև շատ մտամոմություն կա ուղղության մասին, որ վերևում հատկացուցինք է՛հ, ինչ հարկավոր է հին բաները բրբրել....

այնուհետև չար լեզուների խոսածին, թե գրատարի տակառը մնծ ձայն է տալիս»։

Պարոնը մինչև այժմ երկու տող բան գրած մարդ չէ. համբերում էր...

Վերջապես «հատել է նորա համբերության», պիտո էր տպատրությամբ հայհոյել. եթե այդպիսի ծայրագույն խնամատարության համար արծաթ ևս վճարող չլինի.... գո՛նե, մի քանի տարի ժամանակով, դարձյալ կապահովե յուր գիտության համբավը, որ սկսել էր արդեն դունատվափվիլ։

— Ի՛նչ կըլլա եղեր։

«Բայց, արդյոք, այդ գրվածովը հասա՞վ գրողը յուր նպատակին, կարողացա՞վ բժշկել մի քանի սրտի խոցվածք»։

— Արհնատավորը, կատարելով յուրյան ապսպարված գործը, կարողություն չունի մտանել այն խնդրի մեջ, թե ի՛նչ չափով պիտանի էր այդ գործը ապսպարողին։ Նորանից խնդրում են կոշիկ, նա կարում է. մանավանդ եթե ապսպարողը ևս, յուր կողմից, երբեք մտածել չէ այն բաների արժանավորության վերա, որ գործակատարը հանձն էր առել պատրաստել։

«Ուրեմն, уплата той же монетой».

— Անտարակո՛յս։

«Արժանավոր հատուցումն»։

Մենք կարում ենք այս մասնավոր խոսակցության թելը, որ, մի տան անկյունում, երկու մարդու մեջ կար։ Մենք գտնում ենք դեպի հասարակության, որի համար, գոնե արտաքին ձևով, տպվել էր այդ գործը. մենք կամինք այստեղ նկատել դորա հնտևանքը վերաբերությամբ դեպի հեղինակը։

Հասարակությունը միաբերան մերժեց այդ հայհոյությունքը, այլև հալածեց հեղինակի գլխից այն կախարդական լուսակամարը երևույթը, որի մեջ մի քանի մարդկերի աչքում պատկերանում էր պարոնը։ Հասարակությունը իրավունք տվեց այն բոլոր մարդկերին, որ երբևիցե բամբասված էին պ. Ջերքեզյանից. հասարակությունը ստուգապես ճանաչեց այժմ նորան յուր գրվածից։ Վարագույրը հետ քաշվեցավ և հերոսը գըտանվում է թատրոնաբեմի վերա. ո՛վ կհամարձակվի բերան բանալ. խոստովանիմ և հավատամ։

Չենք կարող ուրանալ, որ այդ գրվածը հավանելի էր եղել մի քնքնամիտ պատանվի, որ երբեմն մի քանի կեղծավոր մարդկերի բերանով համեմատվել էր Համլերտոի և Միլտոնի հետ. (ո՛րպիսի սրբապղծություն). բայց մի՞թե սաուդ չէ առածը «նման զնմանն սիրէ»։ Գարձյալ պիտո է ասենք, Ճշմարտության պարծանքի համար, որ այդ պատանվը, յուր վայր ի վերո խոսակցության պատուհասը ընդունելց մի կորիճ բանասերից, մի բազմության մեջ, մինչև որ անվանված Համլերտոը ինքը ուրախությամբ բնարեց Ջաքարիայի իննամյա լուսիյնը։

Չենք ուրանում, նույնպես, որ պ. Ջերքեզյանի գործը շատ և շատ

հաճելի էր եղել մի այլ երկակենցաղ պարոնի, որ թեև առում էր գործի հեղինակը, բայց ավելի մեծ առելություն ունենալով դեպի Հյուսիսափայլի գործակատարքը, այնքան ուրախացել էր, որ մինչև անգամ ոգևորվել էր... Բայց զարմանում ենք, թե ինչպես «Ոտքած ոտքով կովի» անմահ տաղերգուն[46], մի տող չէ ասել պ. Չերքեզյանցի հիշյալ հակայական քաջագործության վերա։

Մեղուի 13-երորդ թերթը հրատարակվելուց հետո, մենք բավական միջոց քննեցինք այն տպավորությունքը, որ այդ գրվածը արեց հասարակության վերա. և տեսանելով, որ ժողովուրդը զզվելով մերժեց և դատապարտեց, մենք հասանք մեր վճռական նպատակին։

Մեր սիրտը և հոգին վկայում է մեզ մեր գործի արդարությունը։ Այս վկայությունը հերիք մխիթարություն է մեզ և անապառելի ապրյուր մինչև ի մահ գործականության։

Մինչև այսօր չենք նայած ուշադրության անարժան արգելափթիների վերա. այսուհետև ևս նայողը չենք, կարելով մեր ճանապարհը հայկական քարերի և փուշերի մեջ։

Նախատինք համարելու էինք մեզ Մեղուի և նորա համախոհների գովեստը, եթե դոքա մի օր սխալվելով տալու լինեին մեզ, նախատինք համարում ենք ներկայումս և պիտի՛ համարենք ապագայում, քան որում չենք կարող մեր անձը չանարգել, փուչ տալով մեզ ընդունել այդպիսի գովեստներ։ Մեծ ուրախություն է, որ այդպիսի մարդիկ հայհոյում են մեզ. և ներկայումս շատերը բացերև տեսանում են Հյուսիսափայլի և Մեղուի ուղղություններ։

Տհաճ չենք, տեսանելով սև բամբասանքի գունդերը մեր վերա հարձակվածե։ Հայհոյությունքը, որ բխում են հայ սրտերից և դուրս են երևում հայ մամուլներից, մենք համեմատում ենք այն նեխած շարավի հետ, որ այսքան դարերով հավաքվել է հայկական հիվանդ կազմվածքի մեջ։ Մարդասեր վիրաբույժը տեղիք չունի բարկանալու, եթե մի մահառիթ խոց կամ ուռույց կտրելու ժամանակ, արյուն ու թարախ էր գարկում այնտեղից նորա երեսին։ Վիրաբուժի խորհուրդն է դուրս բերել հիվանդի կազմվածքից այդ ապականություններ։

Իշանելով հայ դպրության ասպարեզը, մենք գիտենք, որ դարավոր տգիտությունը պատերազմ պիտի հայտնի գիտությանը, որին լինելով մի լոկ սպասավոր, օրհնեցինք և ընդունեցինք այդ պատերազմը։

Անհնարին էր, որ ուրիշ աղգերի մեջ պատահածը չպատահեր և մեր մեջ. այս բոպեում անչափելի է մեր ուրախությունը, քան որում հայությունը մի քայլափոխ արել է արդեն։

Թշնամությունքը չունին այն զորությունը, որ կարողանային մոլորեցնել մեզ, մեր ուխտյալ ճանապարհից. մեր աստղը քարշում է մեզ դեպի այդ խորհրդական ճանապարհի ելքը և մենք հետևում ենք այդ հակապատրաստական ձգտողությանը։

Երանի՛ էր մեզ, եթե ունենայինք խելացի հակառակորդը, բայց, որպես հայ, զրկված ենք, ներկայումս, այդ պարծանքից։

Չկամինք առավել խոսել պ. Չերքեզյանի գրվածի պատճառով. այլապես, դեպի շարը պիտի գործ դրած լինեինք ընթերցող հասարակության համբերությունը, ձանձրացնելով նորա սիրտը մեր ավելի երկար դադարելովը մի անխորհուրդ ունայնաբանության վերա, որ չուր տրոի հավելվածից, բաշխել էր պարոնը Մեղուի *հասարակությանը։*

Հաջողություն մաղթելով Չերքեզյանցին, պ. Նազարյանցի պատճառով գրելու գրքի մեջ[17], դառնում ենք դեպի երկրորդ խնդիրը, որ արել էին մեզանից։

§ 2. Երբ առաջին անգամ դուրս եկեցավ պ. Խուդաբաշևի գիրքը, մեք հարկադրվեցանք կարդալ նորան ակամա. ակամա կարդում էինք, հառաջուց ճանաչած լինելով պարոնի ինքնասիրության և ինքնագոհության մասին ունեցած տեղեկության չափը։ Եվ մեր ընթերցանության հետևանքը հաստատեց մեզ, որ իրավունք ունեինք չհարգելու հոժարությամբ և ախորժանքով մի այդպիսի գրված։ Մի փորր ներքև, կհայտնվի ընթերցողներին մեր իրավունքը։

Մեր դավանությունը, հայոց ազգի ամբողջական ապահովության վերաբերությամբ, այսպես է, որ ազգը պիտի չուր գոյությունը պահպանե չուր նկեղեցու միջնորդությամբ։ Համաշխարհական հեղափոխությունների մեջ, նկեղեցու ինքնուրույնությունը եղել է և մեր ազգի ապահովության գրավականը։ Մեք միշտ ուրախությամբ ենք հիշել, որ հայոց ազգը չուր հիշատակի արժանավոր Բարկեն, Աբրահամ և այլ կաթողիկոսների ձեռքով, մերժել է մի այլ նկեղեցու իրավասություն չուր վերա, քանզի որում դրա բարոյական ազդեցությունը պիտի վտանգեր ազգությունը։ Հայոց ազգի ներկա սերունդը (բացի մի քանի ախտացած մարդկերից), կատարյալ իրավունք է տալիս այդ մարդկերին, որ պահպանելով չուրյանց նկեղեցու անկախությունը, պահպանեցին ազգի գոյությունը, և մեր համար սուրբ են նորա հիշատակքը։ Այս երախտագիտական զգացմունքի չափով, որ ցույց էր տալիս չուր խնկելի և տոնելի բարերարներին, հայոց ազգը արհամարհություն ունի դեպի այն մարդիկը, որ կամ անձնական օգտի, կամ երկյուղի, կամ այլ հարակցության պատճառով օտարի հետ խախտեցին երանելի նախնյաց սխալը, ննջեցին մեր ազգի և նորա նկեղեցու ինքնուրույն գործակատարությունը։ Դպր[18] անունի սկզբնատառը դարավոր ժամանակներից սկսած գլխիվայր է գրում ազգը և այդ հերոսատառային պարծանքը սխատագրուժների մեք պիտի կատակենք մեր դավակներին։

Գ. Գուդարաշևի գրվածի հոգին հարկադրում էր մեզ պաշտել մի ամենևին յոսություն, թույլ տալով, որ ինքնասիրության թանձրանա գրա վերա ժամանակի հավիտենական գատապարտությունը։ Ավելորդ էր նաև բնդհմ պինդրվիլ մի աշխատության, որ չուր շնչին կարծիքները ևս, կամ այս ու այն տեղից (օրագրներից և լրագրներից) մուրացած տեղեկությու-

քը և հայացքը հառատատելու համար, ազնատում էր պատմական իրողությունը և դրպարտում էր այնպիսի մարդիկ մեր երանելի հայրապետներից, որոց և ոչ կոշիկների խարազը արժանի էր լուծանել։ Այդպիսի աշխատության հառուցումը է մի սառն արհամարհություն, որ լիամասն կերպով ընդունենց ազգից։

Շատ ժամանակ է, որ մենք ստացել էինք մեր ընկերներից մի քանի արդարացի նկատողություններ այդ գործի վերա. չապեցինք նոցանից և ոչ մինը և ապելու ևս չէինք, եթե, ինչպես Հիշատակարանիս սկզբումը ասացինք, բազմաթիվ նամակներ անհանգիստ արած չլինեին մեզ։ Մի քանի տողից հետո կդնենք այդ նկատողություններից մինը, որ ստացել ենք նամակի ձևով և որ ուներ այսպիսի ստորագրություն «Աբրահամ Դիսակորոսյան Բարկենյանց»[19]։

Պ. Բարկենյանցի նամակը, կարող է մի փոքր ճաշակ տալ մեր ընթերցողներին, թե որպիսի բան էր պ. Խուդաբաշևի գիրքը։

Մենք կողմից (բացի ծանոթություններից), ուրիշ բան չենք հավելացնում այդ նամակի վերա, այլ միայն խնդրում ենք արդո ժողովագրից, որ խնայելով յուր ուշադրությունից հատակին, հանգիստ ատ յուր անձին և ազատ թողու բոնարարություններից հայոց ընկերացին, որ երբեք չէ խնդրել պարոնի փաստաբանություն և այսուհետև ևս կամք չունի խնդրել։

Չենք կարծում թե պ. Խուդաբաշևի ցանկությունը եղած լինի ընկնել հայ մատենագրերի կարգը. եթե այդպես լիներ, ապա նորա աշխատությունքը պիտի լիներին հայերեն և հարկավորապես այլ կերպարանքով և այլ հոգով. թողնում ենք, որ ներկայացնա, մի փոքր ավելի բան հարկավոր է հայ մատենագրին, քան թե ուներ պ. Խուդաբաշևը։

Հույս ունինք, որ խաղաղ հոգով կլսե մեր գրածը պ. Խուդաբաշևը, քան որում, ինչպես մի ժամանակ առակ էին արել Թյուրքիայի հայերը, զարտարին թշնամանք չէ, այլ ներքին համաձայնություն։ Հույս ունինք, թե և դպրության Դոն Քիշոդները կդադարեն մի օր յուրյանց ասպետական քարոզություններից, ինչպես Սերվանտեսի հերոսը դադարեցավ, և այս մեր ակնկալությունը, անշուշտ, հատաջանում է և ֆիզիկական և բարոյական պատճառներից։

Մեհեկի 16, հայոց 1309 թ., Դվինի ավերակներում։

Արզո պարոն, ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԵԼ

ընթէ գանարժանն ըստ պիտոյից ոչ յանդիմանես, մի՛ լինիր վարդապետ։
ՅՋՆԻԿ

Երկար ժամանակ մտատանջությամբ չարչարվելուց հետո, որոշեցի գրել Ձեզ այս նամակը, և արտես ցավը թեթևելով մի փոքր ազատ շունչ առնուլ։

Իհարկե պիտի հարցանես, թե այս ինչ մարդ է, որ բոլորովին անծանոթ լինելով ինձ, արդեն նամակի սկզբիցը վարվում է որպես մի մոտ բարեկամ, որպես մի վաղեմի ծանոթ։ Այո՛, եվրոպացի՛ք, ինքյանք ավելի քաղաքավարի լինելով, իրավունք ունին ուրիշներից ևս ճիշտ քաղաքավարություն պահանջելու, բայց մեք, ասիացիքս, դուրկ ենք այդպիսի բարակ բաներից. մեր մեջ ասիական կոպտությունն հետ թագավորում է հին նահապետական հոգին — պարզությամբ դիմել դեպի մի մարդ և առանց վարագույրների հայտնել սրտի խորհուրդը։

Բողոքեք այս ևս, ես հայ եմ, Դուք ևս հայ եք, մի՞թե այս անունը չունի յուր մեջ այն ուժը, որ երկու այդպիսի անունով մարդիկ, թեև հազարավոր մղոններով միմյանցից հեռի, մոտեցներ միմյանց դեպ սրտով և հոգով. մի՞թե իմ և Ձեր հայությունը դրամական չեն մեր մտերմության, ինչ եմ ասում ևս, մեք պիտի ավելի լինենք, քան թե մտերիմ, քան որում մեք եղբարք ենք, քան որում մեր երկուքի արյունը ևս մի աղբյուրից է։ Ես կարծում եմ, որ այս բոլորը իրավունք են տալիս ինձ ընտանեբար վարվիլ Ձեր հետ, գրելով մի, դուցե երկարախոս, նամակ։ Ես հույս ունիմ, որ Դուք բաց գրկով կընդունիք Ձեր հետևյալ եղբայրը և մտանակից կլինիք այն տխրության, որով շրջապատված է հոգիս ներկա րոպեում։

Չկարծեք, թե իմ տխրությունը հառաջանում էր մի մտանավոր, կամ, անձնական ցավի, կամ վոտանդի պատճառով. քա՛վ լիցի. ես մի անհամ մարդ պիտի լինեի, որ սեփական ինձ վերաբերյալ բանի համար անհանգիստ առնեի մի ուրիշ եղբայր. տխրությանս աղբյուրն է մեր արատավեալ ազգը։

Ո՛հ, որքան ինչվատություններ, որ մինը մյուսի քամակից հաջորդում են, մեր անմիաբանություններից և միմյանց դավաճանելուց. այո՛, մի մտանով այս ևս կարելի է ասել, որ ամեր հայրերը ապուռ կերան, իսկ մեր առամները հարվեցան։ Բայց այսպիսի վատնդավոր դրության մեջ, մինչ մեր անիվը կանգնած է յուր դարձակետի վերա, որ վազն կամ դեպի փրկություն, կամ դեպի հավիտենական կորուստ, այսպիսի մի խորհրդավոր ժամանակամիջոցում, երբ նախախնամությունը կշռում է և չափում է ազգերը, կվայելե՞ մեզ նոր ի նորո քրքրել հին կրոնական վեճերի քուրան, որին այնքան զոհ տվեց Հայաստանը մինչև այսօր։ Մեր աչքով տեսանում ենք ուրիշ թառամած ազգերի վերատին ծաղկիլը, ընդլայնված և շուրանկ սրտերի նոր զորությամբ զվարթանալը և բնդարձակվիլը, այդ բաները լինում են մեր քթի տակ, բայց մեք կրոնական վեճերը քրքրելուց ավելի բան չունինք։ Այդ քուրայի մոխիրը և դազախը հերիք է որքան կուրացուցել է մեզ, լվանանք մի փորր մեր աչքերը և դադարենք գեթ այսուհետև կուրության գազանին զոհ գնալուց։

Աղետալի անցքեր, որ պատահում են ամենայն օր մեր կողմերում, հատկապես այս կրոնական վեճերի պատճառով, շատ մեծ շարժառիթք են որ նատիս ու լաս, մինչև որ Յաղթան գերեզմանիդ լցվի աչքիդ արտասուքով. իհարկե ազգային օրագրերից, դոնե հարյուրից մինը, իմանում

նք և գիտենք, խոսք չկա, որ մի ինչուառ բան է այս, բայց մենք, այս կողմնրում, խաւար ժողովրդի բնակակից, գուցե մի փոքր ներողութեան ևս հանդիպինք, հայտնի բան է, շատ չնչին ներողութեան, քան աչքի տակ ձգվին բոլոր մեզ շրջապատող պայմանքը։

Իսկ ի՛նչ ասենք, մինչդեռ Դուք ևս լինելով Եվրոպայի մեջ, ազատ չնք այս ինչուառութիններից. ի՞նչպես ներենք Ձեր աշխարհում բնակվող մեր նաղբայրներին, որոնք այսպիսի լուսավորյալ ժամանակում, բան ու գործ թողած, ընկնում են այդ վհձերի քամակից։ Օտարոտի են Ձեզ իմ խոսքերը, այնպես չէ՞. պարզեմ, որ հասկանաք։

Այս միջոցներումս ձեռքս ընկավ մի ռուսաց լեզվով գիրք, այսպիսի մակագրով „Обозрение Армении“ А. Худабашева. Մեծ հաճուքյամբ նայեցա վերնագրին, բայց երբ սկսեցի կարդալ, արդեն հառաջաբանը, ասես ինձ, ապտակ իջեցուց երեսիս. հարկ չկա ասել, որ բոլոր գիրքը կարդալը հավասար էր կից ընդունելու։

Թողունք առանց ուշադրության այլ սխալները, որովք շատ փարթամ է պ. Խուդաբաշևի գիրքը. պատճառ, ուղղել այդ բոլորը, մեջ բերելով նորա աղճատարանությունքը և օրինավոր կարգով հերքելով նորա բոլոր սխալական գաղափարքը, պիտի հարկադրվեինք մի նոր գիրք գրել, երկու անգամ մեծ պ. Խուդաբաշևի գրքից (պարոնի գործը չարժե այսպիսի աշխատություն). Թողունք որ պարոնը նվիժեն Բոռնի աշխարհագրություններից օգուտ եմ քաղել ասելով, հասկանում է նրանց յուր բան առ բան թարգմանելը. Թողունք պ. Խուդաբաշևի ծուռ և սխալական հայացքը ազգային պատմության մեջ երևեցած իրողությունների վերա, բայց ի՛նչպես լուռ մնանք, համր դևի պես պապանձված, կամ ի՛նչպես չերողքենք այն զրպարտություններուն ընդդեմ, որ պարոնը ժողովում է մեր երանելի և սուրբ նախահարց գլխին, որպիսիք էին սուրբ Գարբիկը, սուրբ Մովսես Խորենացին և սուրբ Ներսես Շնորհալին, որոնց անունը խնկվում է հայկական եկեղեցու մեջ, և որոնց գերեզմանի հողը համբուրելի են մեզ։

Ի՛նչպես չհարցանենք պ. Խուդաբաշևից, թե Խորենացու ո՞ր բանը իրավունք է տվել նորան, որ նա Խորենացին անվանե բերեվամիա*: Խորենացին, մեր պատմության հայրը, յուր ժամանակի անզուգական փիլիսոփան, ազգի համար մինչև ի մահ աշխատողը և այն խո՛հեմ, ծա՛նր, խելացի և իմաստուն ծերունին, մի թերևամիա հռչակել, և այն օտար լեզվով, մինչ եվրոպական գիտությունը ընդունել է նորան և օրինավոր քննություն առնելով հատուցել է արժանի վարձը։ Ո՞չ ապարեն առավել, քան թե թերևամի՛ա է նա, որ այսպիսի անհիմն և անտեղի կարծիք ունի այն երկնաբաղաքացի ծերունու վերա։

Առաջին անգամ լսելով այս բանը պ. Խուդաբաշևից, բնավ չտարակուսեցանք կարծել, որ պարոնը, կամ, ամենևին չէ կարդացել Խորենացին, կամ թե չէ հասկանում նորա գրվածքը։ Մի փոքր ավելի ընթերցա-

* Նրան 18։

նուիրուներ. պ. Խուդարաշեվի գրքի, հավատանք մեզ և երկրորդ կարծիքը:

Առաջին կարծիքը, նորանով, որ պարոնը ապացուցանել կամենալով, Հայաստանում, մոգական կրոնի, այսինքն կրակապաշտության, բազմաստվածության կրոն լինելը, իրրև վկայություն մեջ է բերում Խորենացու հազարաթվությամբ մեզ հասած ազգային նրդի կրոնը, Վահագնի մասին, և հայոց լեզվի մեջ զննդական խոսքերի նրևելը: Խորենացին կարդացողը, նրե օրինավոր կարդացել էր, պիտի անշուշտ տեսաներ, որ հայերը միթրապես կռապաշտ են եղած և Վահագնի նրդը ցույց է տալիս, ինչպես այդ պատմությունը ևս վկայում է, որ ազգը Վահագնին ևս անցուցել է յուր դյուցազների կարգը և պաշտել է: Բացի սորանից, պ. Խուդարաշեվը զննդական խոսքերի անունը հիշելով և նորանց ապացույց բերելով հայոց կրակապաշտության, ապացուցանում է լուսավորյալ աշխարհի առաջև, որ բնավ իսկ գաղափար չունի, թե ի՛նչ ասել է հնդկա-եվրոպական լեզուներ. կատարելապես ապացուցանում է, որ անտեղյակ է այդ լեզուների ծագման և կերպարանափոխության ընդհանուր պատմությանը:

Երկրորդ կարծիքը, այսինքն Խորենացու գրվածքը չհասկանալը (Բնական հարկավոր ևս չէր այս բանի համար ապացույց ներս բերել), նորանով, որ նույն այդ հատած բերած «երկնէր երկին և երկիր» ամենին հայտնի երգը թարգմանում է այսպես:

„Зачинало небо, зачинала земля, так же точно
как и море пурпуровое.
„Терзали муки зачатия и красный тростник;
„Из вершинок его вырывался дым и вскоре показывалось
пламя.
„Из пламени этого исходил юноша с русыми власами.
„Пламя обняло кудри его и прядало около его бороды;
„Очи его и веки были два солнца**

(Երես 87.)

---

1 Փ. Էմինի թարգմանությունը մեզ ավելի մոտ է թվում բնագրին, ուստի և ինում ենք այստեղ, որ բնագրողը համեմատեն նորան պ. Խուդարաշեվի թարգմանության հետ:

„В муках рождения находилась небо и земля;
В муках рождения лежало и пурпуровое море;
Море разрешилось красненьким тростником;
Из горлышка тростника выходил дым,
Из горлышка тростника выходило пламя;
Из пламени выбегал юноша,
У него были огонь-волосы,
Борода была из пламени,
А очи словно два солнышка*.

См. *Ист. Арм.* Моисея Хоренского,
перевод г. Эмина, стр. 70.

Թե պ. Խուդարաշեվը ինչպես է հասկանում Խորենացուն և ատհատարակ նորա հա-

Այսպիսի բաներ հաղարավոր ունինք նկատած այդ գրքի մեջ, որ ինքնըստինքյան ոչ այլ ինչ է, բայց միայն ժողովածու տեղի և անտեղի, հում և խակ նյութերի, որ առանց ընտրության, առանց կարգի, այս ու այն տեղից հավաքել է և տպելով խոշոր տառերով, այլև ցանցառ տողերով, կազմել է մի հաստիկ գիրք, որպեսզի անանունը գոնե երևույթին նայելով, հոժարի վճարել որոշած գինը։

Բայց մենք այդ բաների վերա խոսելու միտք չունինք, լուռ թյունը համարելով ամենաարդար դատապարտություն այդպիսի պակաս և անկազմ ծնունդների համար... Բայց ասուածո սիրու համար ասացնք, թ'նշգան թողուն հետևյալ տողերը. «Ներսեսի մահուց հետո գրված է հայոց եկեղեցու ընդհանրականից բաժանվելու կորստական սկիզբը. Ներսեսի հաջորդ Սահակը, ջերմեռանդությամբ պաշտպանելով ոչ այնքան եկեղեցու օգուտը, որքան յուր անձնական արտոնությունքը և իրավունքը, չկամենալով այլևս կենտրիա գիմել, յուր կաթողիկոսական իշխանության չհատատուցություն ստանալու համար, և այլն և այլն» (երես 105)։

Այստեղ հիշված Ներսեսը և Սահակը են մեծ Պարթևները, բուն լուսավորչի ցեղից, որոնց հիշատակը հանդիսավ հանելուց առնում է մեր եկեղեցին, որոնցից սուրբ Սահակին հանաշում է հայոց ազգը մեծ պատճառ յուր լուսավորության, այլև հիմնադիր թարգմանության սուրբ գրքի։ Չգիտենք թ'նչ մտածել պ. Խուդարաշվի խղճմտանքի մասին, որ չէ երկբայում մուր քանչ այսպիսի անմերձենալի մարդու վերա, կարծիք տա-

---

յագիտությունը ցույց տալու համար, գնում ենք այստեղ մի պարբերություն, մեր բանկամներից մինի գրած նամակից։

«Գ. Խուդարաշվը բերում է պ. Էմինի հորինացու թարգմանությունը և յուր կարծիքով մի աններելի սխալ է գտել «осконить скопцов» հայերենում գրած է «խզել զներքինիս»։ Գ. Խուդարաշվը հանդիպողին ցույց է տալիս այս բանը, նորա հետ միասին և մի կատր թուղթ — այդ նորա կարծիքն է։ Ինչ է պ. Խուդարաշվի կարծիքը. թե «խզել զներքինիս յագգէն յայնմանէ», նշանակում է հեռացնել ներքինիքը այն ազգից. ահա նորա բուն խոսքերը, որ ասում է բանկամական ոճով։

„Как же, братец, оскопить скопцов, человек после известной операции становится скопцом, ведь нельзя повторить этой операции; здесь г. Эмин не только не понял оригинала, но даже согрешил против логики. «Խզել զներքինիս յագգէն յայնմանէ» նշանակում է удалить скопцов от этого народа".

«Գ. Խուդարաշվին պատասխանում ենք, թե հայոց լեզվով «խզել զներքինիս» նշանակում է ներքինացուցանել. ցույց են տալիս այդ ոճի գործածությունը և Հովհաննես «կաթողիկոսի մեջ, վերլուծիս ցույց են տալիս բառարանի մեջ։ Գ. Խուդարաշվը այս երկուքը քուլլ ապացույցը է համարում յուր կարծիքը հերքելու համար, մանավանդ յուր բառարանը ապած օրից գործարկ է բառարանի հավատալուցս։ Դենք թե պ. Խուդարաշվը հատարյալ իրավունք ունի յուր բառարանին չհավատալու, բայց մի՞թե նրա հետևորդ Հայկազյան բառարանը ևս արժեք չունի նորա աչքում։ Որքան ևս բամբասիր ասյց վիճելիքի բառարանը, այնուամենայնիվ գիտ նորա մեջ չտեսանք «Ճչալ». տես Ծշակ. «Ծշակ» տես «Ճչալ» և այլն, և այլն, և այլն, ինչպես անհատում ենք ասս Ծշակ. «Ծշակ» տես «Ճչալ» և այլն, և այլն, և այլն, ինչպես անհատում ենք պ. Խուդարաշվի բառարանում»։

Տաճ. Կ. Էմինի.

բածելով մեծ սուրբի մասին, որպես թե նա, ոչ այնքան եկեղեցու օգուտը, որքան յուր անձնականը պաշտպանելու մարթով չէ դիմել դեպի Կեսարիա։

Եթե, արդարև, սուրբ Սահակի օրով չիներ դադարեցուցած մեր կաթողիկոսների ձեռնադրությունը Կեսարիայում, այն ժամանակ ևս, սուրբ Սահակի վարքը, որքան մեզ հայտնի է, տեղիք չէր տալիս մտածելու, թե այդ առաքինի հոգին, եկեղեցու և ազգի համար կենդանի նահատակը, երբեմն կարող էր յուր անձնականը գերազատ համարել ե՛կեղեցական օգուտից։

Այդ երանելի և սուրբ կաթողիկոսները ե՞րբ և ո՞ւր ցույց են տվել անձնական օգտի կամ փառասիրության ծարավ. խնդիրը ազգի օգտի համար անդադար ներքին պատերազմներով, հալածանքի մեջ տարուբերվելով, մինչև անգամ յուրյանց մարմնավոր պիտույքի մասին նեղություն կրելով, նեղություն և ցավ հալածանքից, արտորից, սովից, նեղություն և ցավ սուր բարեկամներից և դրուժաններից. այդ հոգիացած առաքինի մարգերից ոմանք ծեծի տակ հոգին փչելով (մի խրատվիլակ թագավորի հրամանով) ոմանք մի պիղծ թագավորի ձեռքով ընտավորվելով, ոմանք կապած ձեռք ու ոտով այս կամ այն բանակալի դուռը տանվելով, բերվելով և շղթաների մեջ յուրյանց անարատ հոգիները արձակելով, և այս բոլոր տառապանքը, վիշտները և վերջապես մահու բաժակը ազգի անունով, ազգի յավուրյան և եկեղեցու հաստատուրյան համար, մինչև տակը խմելով, պիտի՞ համարվին յուրյանց օգուտը, անձնական իրավունքը գերազատո՞ղը։ Համարեն հայոց ազգի անունով բողոքում ենք պ. Խուդաբաշևի ընդդեմ։

Ուշադրության արժանի է և այն, որ պ. Խուդաբաշևը մեղանչելով սուրբ Սահակի անձին ընդդեմ, ինչպես վերևում տեսանիք, մեծապես մեղանչում է և պատմության ընդդեմ, յուր կամեցածի պես աղճատելով իրողությունքը։

Լսենք մի փոքր մեր Հովհաննես պատմաբան կաթողիկոսի խոսքերը, որ պատմելով արևելքի առանձին առանձին պատրիարքությունների հիմնարկությունքը և հաստատությունքը, շարունակում է. «Սոցա նման և մեր «Աբշակ թագավորը և հայոց նախարարությունքը, համաձայնակցություն ստանալով, պատրիարք կացուցին հայոց ազգի վերա մեծ Ներսեսը. «ինչպես արժան էր, իրավամբ պատճառ մեջ բերելով մեր Բարթողիմեոս «և Թադեոս սուրբ առաքյալքը, որ տիրոջից վիճակվեցան հայերին, «որպես քարոզք և ավետարանիչք, որոնց և նշխարված ոսկերքը կան «մեր մեջ և որոնց աթոռը ստացավ կենդանի մարտիրոս Գրիգորիոսը «և այլն և այլն»։

---

* «Ըստ սմին սակի ապա և մեզն թագաւոր Արշակ և նախարարութիւնք Հայոց հաստատեցին պատրիարգութիւն տանս Թորգոմայ զմեծն Ներսէս, «վասն իրաւամբորէ քան արժանին ի մէջ առեալ զսուրբ առաքեալսն մեր. զԲարթուղիմէոս և զԹադէոս, որ ազգանազեանս տգին վիճակեցան ի Տեառնէ քարոզք և աւետա-

Այս ծանրակշիռ վկայությունը հերիք է ապացուցանելու համար, ազգային և եկեղեցական պատմության անսեղյակ պ. Խուդաբաշևին, թե հայոց ազգի ինքնուրույն կաթողիկոսությունը սուրբ Սահակից շատ հառաջ, դեռ մեծ Ներսես Պարթևի կաթողիկոսության սկզբումը հաստատված լինելով, և մինչև սուրբ Սահակը, Շահակ, Զավեն, Ասպուրակես առաքինի կաթողիկոսքը, ինքնուրույնաբար կաթողիկոսություն արած լինելով, սուրբ Սահակը պատճառ չուներ Կեսարիա դիմելու, թեև պարոնը չէ ուղարկում նորան Կեսարիա, հրատարակելով նորան անձնական շահասիրությամբ վարակված մարդ։

Սկզբից թողունք պ. Խուդաբաշևին ասել, թե «հայոց եկեղեցու ընդհանրականի հաղորդությեննից բաժանմանը հարակից եղան կորստական հետևանք ազգի բարօրության վերաբերությամբ։ Բաժանվելով ասորոց եկեղեցուց*, որպեսզի կախողություն չունենա նորա հոգևոր իշխանություններից, իսկ այժմ կտրելով յուր հաղորդությունը հույներից և բոլոր «Արևմտյան եկեղեցիներից, որ այն ժամանակ ընդհանրական եկեղեցու հետ մի էին, հայերը զրկվեցան օգնականներից և պաշտպաններից, որ «միմիայն կարող էին պաշտպանել նորանց կրակապաշտ պարսկի նեղություններից» (Տե՛ս երես 110)։

Գ. Խուդաբաշևը, այս տողերը գրելով, ապացուցանում է մեզ, թե ազգի հոգին և հասկացողությունը քաղաքականության կամ կրոնի մասին, երբեք նյութ չէ եղել նորա մտածության։ Բոլոր հայոց պատմության մեջ, պ. Խուդաբաշևը, ոչ մի տեղում, չէ կարող ցույց տալ մեզ, որ հայերը յուրյանց կրոնը, կամ, դավանության զոհ բերած լինեին յուրյանց քաղաքականության կամ մի այլ ապահովության։

երանիչը. և նշխարնալ ոսկերք նոցա կան ի միչի մերում, զորոց և զաթոռն իսկ ընկալաւ եկեղեցիսն մարտիրոսն Գրիգորիոս» (Տես. Հովե. կաթ. տպ. ի Մոսկվա, երես 28—29)։

* Ջգիտանք, թե հայոց եկեղեցին ե՛րբ կախումն է ունեցել ասորոց եկեղեցուց, որ զորանից ազատվելու համար հարկ լիներ բաժանվիլ ասորիներից։ Բացի սորանից պ. Խուդաբաշևի ասածից դուրս է գալիս, թե հայերը հառաջ ասորոց եկեղեցուց են բաժանվել և հետո հունաց եկեղեցուց։ Արդյոք այս բանը դիմանո՞ւմ է կրիտիկական պատմությանը, կտեսանենք խոսելու։

ա. Հայոց եկեղեցին, կամ նորա հոգևոր դասը, երբեք կախողություն ունեցած չէ ասորոց եկեղեցուց կամ նորա հոգևոր իրավասություններից, ուստի և ոչ երբեք ազատամրած և հեռացած, ինչպես կամի ցույց տալ մեզ պ. Խուդաբաշևը։

բ. Բուն ասորիք, այսինքն նորա, որ մեր հետ միասին երեք ժողովք ընդունելով մնացին (և ոչ նորա որք սահմանի դեպի նեստորականություն) մինչև այժմ ընդունում են հայոց եկեղեցու հաղորդությունը. սորան իրրև կենդանի ապացույց կարող է լինել այն, որ շատ անգամ նոցա բահանայք կամ եպիսկոպոսները բուն իսկ էջմիածնի մեջ պատարագած են, որպես նաև մեր օրերում Թիֆլիզի մեջ հանգուցյալ Ներսես կաթողիկոսի ներկայությամբ։

Գ. Խուդաբաշևը չէ կարող ապացուցանել մեզ սոցա ընդդեմ։

Դիտելի է գարձյալ, որ հայերը բաժանվեցան հույներից Քաղկեդոնյան ժողովի ժամանակ և դուրս այդ ժողովի պատճառով. արդյոք իրավունք ունե՞ինք, կամ ո՛ր շափով, թող պատասխանեն մեզ ազգային ուսումնականք։

Նորա լավ էին հասկանում, որ կրոն ասացյալը, դավանություն ասացյալը, խղճմտանքի բան լինելով, բնավ վերաբերություն չուներ օտար կամ դրացի ազգերի։ Հայերը խիստ լավ գիտեին, որ յուրյանց կրոնը կամ դավանությունը վնասակար չէր նոցա, որ կամ դրացի էին Հայաստանին, կամ տիրապետել էին նորան։ Հայերը գիտեին, որ այդ օտար դրացու կամ հարստահարողի փուլքը այն չէր, որ հայերը հասանելու չէին փրկության, պատկանելով մի ինքնուրույն ազատ և անկախ եկեղեցու. հայերը գիտեին, որ այդ օտար պետությունքը, ձեռք տալով նորա կրոնին կամ դավանությանը, կամենում էին վեր առնուլ այն որոշող պատը, որ բաժանում էր միմյանցից այդ ազգերը, որպեսզի հեշտ լինի նոցա այնուհետև կուլ տալ խե՞ղճ Հայաստանի որդիքը։ Այս բանների գիտությենից հետևում է մեր պատմության մեջ այն իրողությունը, որ հայերը սուր են ցույց տալիս կրոնի կամ դավանության դաշինքներին փոփոխություն առաջարկողին. այս պատճառով մեծ խորհուրդ է ունեցել եկեղեցին հայոց անցած գնացած կյանքի մեջ։

Ավելորդ մի բան էր ասել և հաստատել, որ Բյուզանդական կայսերությունը, յուր փտած սկզբունքով, երբեք չէ կարողացել, այլև չէ կամեցել մի հիմնավոր և շարունակ գաշնակցություն պահպանել Հայաստանի հետ։ Կատր փշուր եղած դեպքերը ևս ապացուցել են, արդեն վաղուց, որ Հայաստանին օգնելու մտքով չէր, այլ, իբրև մի որոգայթ խորամանկ քաղաքական խորհրդով։

Ո՛ր միևը կարդաս. «Հայոց հոգևորականությունը, որ հասկացել էր այս բաժանման (հայոց և հունաց) կորստական մի բան լինելը, յուր

Քաղկեդոնի ժողովից հառաջ, եղած էր Եփեսոսի ժողովը, ուր դատապարտվեցավ Նեստորը 431—432 թվականների մեջ։ Նա ուներ շատ կողմնակից եպիսկոպոսներ, որպես Թեոդորետ, Իբաս և Հովհան եպիսկոպոս Անտիոքի։ Այս Հովհանը, որ Եփեսոսի ժողովի ընդդեմ մի փոքրիկ ժողով կազմելով, արդարացուցել էր Նեստորը և նզովել էր Կյուրեղ Աղեքսանդրիու պատրիարքը, յուր համախոհ ընկերներով, հունական հոգևոր և բազաքական իշխանության ձեռքով դատապարտվելով, դուրս ձգվեցավ հունական եկեղեցու հաղորդությենից։ Բայց երբ այս դատապարտյալքը տեսան, որ Նեստորը ընկավ անկանգնելի և նորա թշնամիք զորացան, ինքյանք ևս հարկադրվեցան արտաքին ձևով հաշտվիլ Կյուրեղի հետ և հաղորդվիլ հունական եկեղեցուն։ Հունական եկեղեցին ներեց նորանց և ընդունեց։

Երբ 451 թվականին, Եփեսոսի ժողովից քսան տարի հետո, սկսվեցավ Քաղկեդոնի ժողովը, որի մեջ նորին գատնվողների թիվը երկու, երեք անգամ շատ էր, քան թե առաջին, երկրորդ և երրորդ ժողովներում վերոգրյալ Հովհան Անտիոքացին, Թեոդորետը և Իբասը յուր մյուս ընկերներով նույնպես հրավիրվեցան նստելու այդ ժողովի մեջ։ Բայց որովհետև այն բոլոր աշխարհների բնակիչներին հայտնի էին այս մարդիկը, որպես աշակերտք և հետևողք Նեստորի, որովհետև գիտեին սոցա կյուրեղի նզովելը և Նեստորի արդարացնելը, յուրյանց մասնավոր ժողովով, որ կազմել էին մի պանդոկի մեջ, որովհետև գիտեին, որ այս մարդիկը քերևս վախից, կամ, հացից չզրկվելու խորհրդով հաշտվել էին հունական եկեղեցու հետ, այս պատճառով հայք, վրացիք, ասորիք, և հապեշք յողոքեցին, որ այդ մարդիկը աթոռ չստացան Քաղկեդոնի ժողովի մեջ։ Հռովմի Լևոն առաջին պապը չընդունեց այս բողոքը և հուսալով յուր անմեղանչական իշխանության

«Հոգու մեջ սաստիկ ցանկանում էր միավորվիլ և խաղաղություն առնել «(Հունաց հետ), ծածուկ արտասվելով սխալական վարդապետության և ապիտակոր ձգտողության այսքան դառն պտուղները» (Տես 114, բառական թարգմանություն):

Այս բաները վերաբերվում են Ներսես երրորդի ժամանակակից անցքերին: Ո՛ր հայը, որ փոքր ի շատե կարդալ գիտեր, չէ տեսանելու պ. Խուդաբաշեվի սխալանքը պատմության ընդդեմ: Ներսես երրորդի օրով, բոլոր ազգը պահանջեց կաթողիկոսից, որ սա անխախտելի պահե ազգային եկեղեցու անկախությունը և ինքնուրույնությունը, երբ Հունաց Կոստանդին կայսրը դրգռվելով յուր, հայոց մեջ գտանված զորքերից, պահանջեց, որ հայոց եկեղեցին միանա Հունաց եկեղեցու հետ: Հայք, յուրյանց կաթողիկոսով և ազգային եպիսկոպոսների ժողովով, նամակ գրեցին կայսրին և հայտնելով, թե հայերը շատ և անտանելի նեղությունների համբերելով, մեռանելով, նահատակվելով պարսից ձեռքով և իվերա այնր ամենայնի անխախտ պահելով յուրյանց կրոնը և դավանությունը, չեն կարող ընդունել կայսրի առաջարկությունը: Այս բանի մասին

վերա, այլև համախոհ գտանվելով Հունաց եպիսկոպոսների հետ, հաստատեց, որ այդ մարդիկը սիրտ առնան Քաղկեդոնյան ժողովում: Երբ բոլորը ազգերը տեսան, որ յուրյանց արդարացի առաջարկությունը մերժվեցավ, պատասխանեցին թե ինքյան չկամին մասնակից լինել մի այնպիսի ժողովի, ուր պիտի դատավոր նստին դատապարտվածը, և այս պատճառով ևս ոչ գնացին, ոչ տեսան:

Մենք անհիմն կարծիք ենք համարում այն, որ Ներսեսիս տարածվում է, թե Հայք, վարդանանց պատերազմի պատճառով, չկարողանալով անձամբ անձին գնալ այդ ժողովը, հետևաբար ևս, անտեղյակ լինելով ժողովի խնդիրն և էական գրությիններին, հրաժարվիլ են ընդունելուց: Մեզ երևում է, որ այս կարծիքը հաստատված է շատ խախուտ հիմքերի վերա, մանավանդ պարծանք չէ մեզ չքմեղ լինել ժողովը չգնալու համար: Ավելորդ է մեզ հիշել այստեղ ժողովի անցքերը, Դիոսկորոսի ժանդարմներից պաշարվիլը, այն բարձրաձայն բողոքները և աղմուկները, որ տերության քաղաքապահ զորքի օգնությամբ շիջուցին: Ավելորդ է հիշել հունաց կայսրների այս ժողովը անվավեր համարելը, չընդունելը և նզովելը ինչպես նաև վկայում է մեր Հովհաննես կաթողիկոսը: Ավելորդ համարում ենք նույնպես Հռոմի Փելիքս երկրորդ պապի Բյուզանդիան Զենոն կայսրը և նորա հրովարտակը նզովելը, որ գրված էր Քաղկեդոնյան ժողովը անվավեր համարելու համար, բայց այս միայն հարկավոր ենք համարում հիշատակել, որ հայք, վերոգրյալ պատճառներից և անցքերից հետո, չէին կարող, առանց յուրյանց անձը, յուրյանց ազգը և յուրյանց եկեղեցին անարգելու, ընդունել Քաղկեդոնյան ժողովը: Մենք խնդրում ենք պ. Խուդաբաշեվից կարդալ և ուսումնասիրել ընդհանուր եկեղեցական պատմությունը. այս մասին կարող է նորան մեծապես օգտակար լինել ուրիշ հեղինակների հետ և Բարոնիոս, եկեղեցական պատմության հեղինակը (բնագիրը լատիներեն է, բայց կա նորա և ֆրանսիական թարգմանությունը):

Այո՛, գնում շատ բաներ կարող էինք հանդես հանել պ. Խուդաբաշեվի ընդդեմ և նորա գազափարների սխալականությունը ավելի մերկանգամ ցուցանել, բայց հուսանինք, որ ընթերցողը կհերիքանան այս փոքրով ևս, մանավանդ թե հիշեն, որ մեր գրությունը հրաժարական է և պաշտպանողական միայն, հարձակողական գրությունը ինքյան է գրավել պ. Խուդաբաշեվը...

Տաճ. Բարկենյանցի

բամասն պատմությունը գտանում ենք Սերեոս եպիսկոպոսի Պատմության մեջ, ուր պահված է և վերևում հիշված նամակի պատճենը։

Բայց երբ Կոստանդին կայսրը բազմաթիվ զորքով խաղաց Հայաստանի վերա, որ հպատակեցնե յուրյան, և երբ Դվին քաղաքում բնակվեցավ կաթողիկոսի տանը, հրամայեց յուր հոգևոր դասուն քարոզել հայոց եկեղեցու մեջ Քաղկեդոնյան ժողովը և պատարագել, ուր Ներսեսը յուր եպիսկոպոսներով հանդերձ ատիպվեցավ հաղորդվիլ։

Սակայն պիտո է ասել, որ դույն այդ հաղորդության օրում, մի եպիսկոպոս չհաղորդվեցավ և դուրս գնալով բնիից ծածկվեցավ ամբոխի մեջ. և երբ կայսրը կանչեց նորան և հանդիմանեց, նա ուրիշ այլ բաների մեջ պատասխանեց և այս, թե իրը Ներսեսը հակառակ է հունական հաղորդության։ Կայսրից փորը հանդիմանություն չլսեց Ներսեսը այս բանի մասին։ Իսկ երբ, թեև ակամա կաթողիկոսը հաղորդվեցավ հունական խորհրդին, այն ժամանակ մեծ շշունջ ընկավ ազգի մեջ, մինչև որ Ներսեսը հարկադրվեցավ փախչել գնալ յուր հայրենի գավառը։ Այն ժամանակ ազգը Հովհաննես Մանանակերտցի վարդապետին հանձնեց աթոռի տեղապահությունը, որ ազգային հոգևորների ժողովով 651 թվականին, եղավնց Մանանակերտի մեջ Քաղկեդոնյան ժողովը։

Ազգային պատմիչների վկայելով այսպես է եղել բանի ընթացքը. իսկ այսպիսի, երկյուղի համար, բոպեական ընդունելություն մի՛ թե նամա՞ն չէ Վարդանանց մոգության ընդունելուն և միթե կարելի է մտածել, և արդյոք ով՞ւր է տալիս լոգիկան եղրակացնել, թե հայք, վերստին (իսկույն) մերժելով այդ հաղորդությունը, ցավեին յուրյանց բաժանվելու վերա։ Եթե պիտի ցավեին, նշանակում է հոգով և սրտով ընդունել էին, իսկ թե ընդունել էին, ի՛նչ հարկ կար վերստին բաժանվելու։

Չգիտենք, թե ի՛նչ աղբյուրից գիտե պ. Խուդաբաշևը, որպես թե հոգևորականությունը ծարավում էր միաբանության, և սրտի խորքում արտասվում էր հերձվածի դառն պտուղների վերա։ Իրըև վկայություն, այս բանին, կարո՞ղ է արդյոք պարոնը հառաջ բերել մեզ մի պատմական իրողություն։ Բայց մինչև նորա այս առաջարկությունը ընդունելը կամ մերժելը, թող ներվի մեզ կարծել, թե պ. Խուդաբաշևը ուրիշ տեսակ չէ խմանում այս բաներս, այլ միայն յուր երևակայական զորությամբ, որ ինչքան և հանդես ունենա բանաստեղծության մեջ, պատմական գործերում գրկված է ամենայն արժեքից։

Գարձյալ պ. Խուդաբաշևը գրում է, «Թեև կարելի էր, հետո, մոտից ճանաչելով Հշմարտությունը, ընդունել Քաղկեդոնյան ժողովի սահմանադրությունքը, ինչպես վրացիք ընդունեցին, բայց, ձախողակի, հայերը մնացին միևնույն սխալ դաւտողության մեջ» (երես 184), այսինքն մերժեցին Քաղկեդոնյան ժողովը։

Պարտականություն համարում ենք հրապարակով հայտնել անարժան կոմպիլատորին, թե մեք, քննելով և քրքրելով հայոց պատմության թերթերը, ո՛չ մի տեղում չենք գտանում բուն ազգի կամ նորա հոգևորա-

կանության մեջ միավորության ձգտողություն, իսկ դորան հակառակ միտումն, ամենայն քայլափոխում, մինչև որ Համբրոնացին հարկագրվեցավ շափավորություն քարոզել, որովհետև նկնղեցու անկախությունը պաշտպանելու և օտարից հեռանալու զգացողությունը բարձրացել էր մինչև ինքնամոլության աստիճան։

Որքան խոսք ու ժողովք նված են միավորության խնդրի մասին, այդ բոլորը միշտ պատահել են նախ, հույների առաջարկությամբ և երկրորդ, ազգի անիշխանության կամ մի այնպիսի ժամանակ, երբ Բյուզանդիոնը մեծ ազդեցություն ուներ Հայաստանի վերա։ Իրև ապացույցք մեր այս մասին ասածներին, դնում ենք պ. Խուդաբաշևի առաջև մեր ազգային հեղինակների գործերը և խորհուրդ ենք տալիս նորան մի փոքր ուսումնասիրել, այդ հեղինակությունները։ Հույս ունիք, որ այդպիսի ուսումնասիրությունը ավելի՛ մխիթարական կլինի նորան յուր նկնղեցական հատակում, քան թե նոր տված գործի պես աշխատությունների հրատարակելը, որ բանի տեղ չանցանելուց հետո, անվանական մեղադրության պատճառ են լինում, քանի որ հայոց տառը պիտի կարդացվի։

Անհայտ չէ հայերից, որ տերը Ներսես Շնորհալու ժամանակ, ինչպես նաև նորա եղբոր Գրիգոր կաթողիկոսի ժամանակ, հունաց Մանվել կայսրը, շատ և շատ ցանկանալով հայոց նկնղեցու հունաց հետ միավորության, բացել էր մի շարունակ դավանաբանական գրագրություն այս առարկայի վերա, ուղարկելով ուրիշների հետ Թեորիանոս անունով իմաստասիրությամբ հռչակված հույն արեղան, որ սա բերանացի խոսեն Շնորհալու հետ և կարգի դնեն միավորության խնդիրը։

Այս բանների մասին, որպես պատմական գրավոր հիշատակարան մենք միմիայն Ընդհանրական գիրքը ունինք, իսկ նորանից ավելի ոչինչ. այս պատճառով ևս այդ անցքերի պատմության վերա նայում ենք այն չափով և այն հայացքով, ինչ չափով և ինչ հայացքով ավանդվում են այնտեղ։

Պ. Խուդաբաշևը, որպես ստույգ պատմություն ընդունելով մի հունական գիրք, նորա առա բարդմանութենից, որ ուներ ինքը, և ուր որպես թե գրված էին Շնորհալու և Թեորիանոս արեղայի խոսակցությունքը. յուր ներկա աշխատության մեջ նկարագրում է Ներսես Շնորհալին, որպես մի երկդիմի մարդ, յուր ազգը խարող, հունական օգուտը պաշտող և ավելի հույն քան թե հայ։ Բացի սորանից, մի քանի բաններ, որ վերաբերվում էին մեր նկնղեցու հատկական բնավորության, որ մինչև այսօր պաշտվում են, և որ պ. Խուդաբաշևի սրտի մեծ ցավի համար պիտի մինչև վերջը պաշտվին, պարոնը ճանաչում է «կարոտ ուղղության»։

Ահա նորա խոսքերը. «Որովհետև այն բաները, որ մեղադրանք էին «համարվել հայերին, ոչ բոլորը միօրինակ նշանավոր էին. և մի քանի մե«ղադրության պատճառներ Ներսեսը յուր նամակների մեջ հրատարակել «էր բոլորովին սուտ, այն ժամանակ Թեորիանոսը ուշադրություն դար«ձուց այն բաների վերա, որ ավելի մեծ էին նորա աչքում և որ ինրավի

վարոտ Լին ուղղության, որպես ա. Հիսուսի Քրիստոսի բնության, կամքի եւ ներգործության վարդապետությունը. բ. Քրիստոսի ծննդյան և մկրտության մի օր տոնելը. գ. Սուրբ սաղմոսի մեջ խաչեցար վասն մեր «Հավելացնելը և դ. Դրոշմի խորհրդի մեջ մղյալ յուղերի գործադրություն»ը. Երես 222:

Ահա այս չորս բաններըդ պ. Խուզաբաշևմի հա Բնորիանոսի հետ համաձայն կարող է Ճանաչում ուղղության:

Փորր է այս, լսեցե՛ք և հետևյալը:

«Երբ, այս կերպով, քննվեցան անհամաձայնության նշանավոր կետերը, և ոգջից գլխավորը, որ բովանդակում էր յուր մեջ Քրիստոսի երկու բնության կամքերի և ներգործություններուն վարդապետությունը, ընդունեց կաթողիկոսը (Ներսես Շնորհալին), իսկ ծնաների զանազանությունը մեծ մասով Ճանաչվեցան հեշտությամբ ուղղվելիք: Ներսես խոստացավ, ուղղափառ եկեղեցու հետ միանալու համար, ամենայն հնար գործ դնել: Այս օրից, ասում էր նա, կսկսեմ գրել բոլոր հայոց եպիսկոպոսներին և դեպի ժողովը կհրավիրեմ նորանց այս գործի համար եւ, երբ նոքա հավաքվին, կառաջարկեմ նոցա այն բոլոր վկայությունները, որոնց վերա մտածում են հայերը հաստատել յուրյանց վարդապետությունը, նույնպես, և ես ցույց տված եմ իմ ցույց տված հայոց կողմում, հետո, փոխ առ փոխ, ստիպեան առ ստիպեան, և զգուշությամբ կսկսեմ բանալ նոցա յուրյանց մոլորությունը, մեղադրելով նորանց և Հովհաննես կաթողիկոսի գրվածներով: Մի խոսքով. ես հույն կլինիմ և հույների համար, կամ ավելի լավ, կաշխատեմ երշմարտության համար, հայերի բնդդեմ, և հույս ունիմ, որ իմ ոչխարը վկսան իմ ձայնին և այլն և այլն և այլն», երես 232:

«Այս բոլորը ավարտելուց հետո», շարունակում է պ. Խուզաբաշևվը, «Ներսեսը միայն մնալով Բնորիանոսի հետ, արտասուքը աչքերում, հանձնեց նորան խնդրել Թագավորից, որ Կոնստանդնուպոլսի մեջ, յուրյանց «խոստովանությունը հաստատելուց հետո, հրամայն պատրիարքին... «իսկույն ձևին օրհնել հայոց ազգը, որ այսքան ժամանակ դուրս էր մնացել եկեղեցուց, և հետո ազոթք առնել «մոլորության մեջ (այսինքն հետևոց գավանությունը չընդունելով) «մեռածների համար, որ աստված ներե նոցա անցիտության մեղքը:

«Հրաժարական ոգջույն տալով Բնորիանոսին (1170 թվականի դեկտեմբերի մեջ), Ներսեսը հանձնեց նորան երկու նամակ կայսեր անուշնով, մինը ծածուկ, իսկ մյուսը հայտնի: Առաջին (այսինքն ծածուկ) «նամակի մեջ նա ուղղակի ցույց էր տալիս յուր առ ի սրտե ցանկությունը ուղղափառ եկեղեցու հետ միավորվելու, և վկայում էր, թե, հավատար*

---

* *Այդ ծածուկ նամակը մենք մերժում ենք և չենք սխալվում ազգը մեզ հետ կարծելով:*

Տաճ. Թոքնեն.

առաջին նրանք ընդհանրական ժողովների, ընդունում է Քաղկեդոնյան ժողովը։ Իսկ մյուս նամակում (Հայոնի նամակում) նա աշխատում էր ամիայն մի փոքր մեղմել զանազանությունը հայերի և հույների մեջ, թե «ծնանելի և թե հավատի վարդապետության» տես 233—234։

Կո՛մս, չափենցնք այս անիրավությունը, որ չափով և կամիք, բայց մենք ընդունել այսպիսի բաներ չենք կարող։ Այս բոլորը հրատարակում ենք աճարգ զրպարտություն ներսես Շնորհալու վերա, և ոչ մի վկայությամբ չհաստատվելիք։

Թևորիանոսի Շնորհալու հետ խոսակցությունը բովանդակող գիրքը, որ պ. Խուդաբաշևը ընդունում է որպես պատգամ սրբության, և որի վրա հիմնվելով հայերի և օտարների առաջև, սևացնում է Ներսես Շնորհալին, դիտությունը չէ կարող ընդունել։ Այդ դեռ ապացույց չէ, եթե ոչ մի տեղում չնշած և ոչ մի ուրիշի վկայությամբ հաստատված բանը, երևում է Թևորիանոսի գրքի մեջ։ Ի՞նչպես կարելի է ընդունել այն խոսքերը, որպես անփոփական խոսքեր Շնորհալու, որի հոգին և ուղղությունը քաջ հայտնի են մեզ բոլորովին այլ կողմից, նույնիսկ Շնորհալու ընդհանրական թղթերից, հոգեշարժ շարականներից կամ այլ աշխատություններից։

Մենք բողոքում ենք այն խոսքերի ընդդեմ, որ Թևորիանոսը կամայապար դնում է Շնորհալու բերանը, մերժում ենք, որպես մերկ ստուր, նորա արտաքսվելի պատճառները Թևորիանոսին և հայերը մոլորված համարելը, մերժում ենք ստատկությամբ նորան վերագրված երկդիմի բնավորությունը, մերժում ենք և ծածուկ նամակի գոյությունը կամ գոյությունը։

Ազգի և ազգային եկեղեցու անունով խնդրում ենք բոլոր հայկական օրագրերից և լրագրերից, բոլոր գրչավոր և բանագնա մարդկերից, հրապարակով հայտնել յուրյանց կարծիքը այս մասին, որպեսզի այսպիսի այլանդակ դպրությունը չհամարձակվին մյուս անգամ մարմին առնուլ և երևել ազգի մեջ։

Կո՛մս, Դուք պարտական՛ն եք ազգի բողոքը ընդդեմ այս բաների հրատարակել, եթե այդպիսիք Ձեր անունով ուղարկվին։*

Հյուսիսափայլը, որպես մի բարոյական գործարան, պարտական՛ է պաշտպանել յուր ազգը և եկեղեցին։

Հերի՛ք է, արտասուքը խնդրում են խոսքերս կոկորդիս մեջ. աչքերս ընդունակ են այժմ առավել լալու, քան թե գիր գրելու. վերջացնում եմ նամակս և ցանկություն չունիմ մյուս անգամ ձեռք առնուլ այդ գիրքը։ Ես այս օրից մոռանում եմ Հավիտյան որպես գիրքը նույնպես և նորա հեղինակը։

Փոքրիշատե տեղեկություն տալ ազգին այդ գրքի վնասակար ուղղու-

---

* Ինչ չափով, կամ ինչքան հնարավոր էր մեզ հանգես տալ ազգի օգտի կամ նորա պաշտպանության համար եղած բողոքներին, միշտ պատրաստ ենք և պիտի լինինք։
Խմբ. Կ. Էմմ.

Բյան մասին, անմնդրժելի պարտականություն համարեցինք մեզ, առավելը Թողնելով ուրիշներին։

Հույս ունիմ, որ այս նամակս տեղ կգտանեն Ձեր Հիշատակարանի մեջ, իսկ ես մնամ և այլն...

ԱԲՐԱՀԱՄ ԴՈՄՍԿՈՐՈՍՅԱՆ ԲԱԲԿԵՆՅԱՆՑ

Տարակույս չկա, որ կարդալով այս նամակը կհասկանան ընթերցողը մեր դրության, թե ինչո՛ւ մինչև այժմ լռեցինք և լռել ենք պ. Խուդաբաշևի չնաշխարհիկ ժողովածուի ընդդեմ։ Ինչ խոսեինք դրա վերաբերյալ թե պ. Խուդաբաշևը ձանձրույթից ստիպված, ձեռք է զարկում այդպիսի բաների, կամ ավելի ճիշտ խոսելով, ուրիշներին աշխատեցնում է այդպիսի եգիպտական գործի վերա, բայց մենք ինչպես կարողանանք կարգավոր քննության տակ ձգել մի գործ, որ հառաջաբանից մինչև վերջը պատկերացնում է մի անկարգություն, մի զարհուրելի խառն, որպիսի հազիվ թե եղած է տիեզերքի արարչագործություններից հառաջ։

Լսվում է, թե պ. Խուդաբաշևը ձեռք է զարկել այժմ պատմություն գրելու. բարի ճանապարհ. նրա կամի, այդ գործը ավարտելուց հետո, թող պարապի Բուխայի ընտանեկան կյանքի նկարագրությամբ... միայն թե հետի պահե յուր հեղինակական քանքարը հայոց աղգից։

Աղգը կարոտ չէ նորան և երբեք խնդրած չէ նորա փառաբանությունը. պարոնը, ինքնակամ, յուր սեռնկի անկյուններում աստվածաբան դառնալով, մեջ է մտանում կրոնական խնդիրների և ծիծաղելի է կացուցանում որպես հայոց աղգը, նույնպես յուր տաժանելի աշխատության արդյունքը։

Սորանից ավելի բան չունինք ասելու. և ցավում ենք շատ, որ իրրև հիշատակագիր, մի փոքր մերկանգամ հարկադրվեցանք ցույց տալ պ. Խուդաբաշևին ճշմարտության երևը, գուցե ինքնա դղրդելով նորա անփական կարծիքը յուր (օգտակար անվանած) գործի մասին։

Այժմ դառնանք դեպի երրորդ խնդիրը։

§ 3. Սկայորդու տարածած լուրերը[50] ավելորդ էինք համարել մերժել. պատճառ, մեզ քաջ հայտնի էր նորա հրատարակած համբավների աստիճանը. գիտեինք, որ Հյուսիսափայլը գազարելու չէր ներգործելուց. գիտեինք, որ մենք ինչպես հառաջ, այժմ ևս գործակից էինք այս հրատարակության։ Ընթերցող հասարակությունը տեսանելով Հյուսիսափայլը, տեսանելով մեր գործակցությունը, կարո՛ղ է վկայել մեր ասածի ստուգության։

Բշնամությունը և կատաղի նախանձը հարկադրել էին Սկայորդուն ցանկանալ թե՛ Հյուսիսափայլի վերջանալուն և թե՛ մեր հրաժարվելուն այդ օրագրի գործակցություններից։ Շատ անգամ ստատիկ ցանկությունքը ձգում են մարդս մի ջրային հուլության մեջ, շատ անգամ զառանցանքը, մանավանդ մի այդպիսի խե՛ղճ վիճակում, պատկերացնում է մի վայր-

կյան հիվանդի աչքին այն ամենայն բանը կատարված, որոնց փափագով ցանկանում էր նա։

Մենք գիտենինք, որ մի այդպիսի ողբալի վիճակում գրել է Սկայորդին յուր վանական նամակները դեպի Մեղուն, այս պատճառով ևս ավելորդ համարեցինք մի երկու բառ խոսել, մանավանդ ցանկանում էինք, որ մի փոքր հարատևե նորա ուրախությունը, ըստ որում եսականությունն համարում էի՛նք լուծանել նորան։ Թող եթե կամի այսուհետև ևս հրապարակեն այդպիսի լուրեր, մենք արգելք չենք. և հիրավի ի՛նչ այլ պաշտոն ուներ նա, բացի սորանից, կատարելու։

Մեղա, մեղա. նա ինքը յուր անձը ձգել է այժմ կրիտիկոսների կարգը, քննելով Գամառ-Քաթիպայի Եզովպոսի առակները։ Այս բանում ևս չէ կարելի չտեսանել նորա պարկեշտությունը, յուր ասպարեզը սկսանելով կես մատնաչափ մի գրքից, մանավանդ քննության արժանի առաջին բանը համարելով հանդես հանել տպագրության սխալները։

Ամենայն հաջողություն ցանկանում ենք պարոնին, այս նոր ասպարեզի մեջ, և հավատում ենք, որ նորա ջանքը կպսակվի, կատարելագործելով, եթե ոչ հայ հեղինակների աշխատությունքը, գոնե հայատիպ մամուլների գրաշարությունը։

Մեր երկարատև լռության մասին, այսքան միայն արժան ենք համարում ասել, որ դա մի կամայական բան չէր։

Մենք միշտ Հյուսիսափայլի հետ ենք եղել և կմնանք. Հյուսիսափայլի դավանությունը է՛ և մեր սրտի խոստովանությունը։ Եվ եթե պատահի մեզ, ո՛վ գիտե, Հանապարհորդությամբ, կամ այլ զանազան մեզանից չկախված պատճառներով ավելի երկար լուռ մնալ, այնուամենայնիվ անբաժան ենք Հյուսիսափայլից, և Հիշատակարանը պիտի երևի նորա մեջ։ Բացակայության ժամանակ, Հանապարհորդության փոշիների միջից ևս կաշխատենք լսելի կացուցանել մեր ձայնը ընթերցող հասարակության, որքան և որչափ հնարավոր կլինի, մի այդպիսի վիճակի մեջ գտանվող մարդու, գործ կատարել։

Աշխատենք պատասխան տալ և հետևյալ խնդրին։

§ 4. Հյուսիսափայլը, կամ, Հիշատակարանս, կարելի եղածի չափ պարապում են ազգային բաներով և միշտ պիտի պարապին, այն չափով, ինչ չափով կարող է մի փոքրիկ հասարակություն գործակատար գտանվիլ։ Մենք խնդրում ենք այն մարդկերից, որ թևերև աչքով նայում են մի շարունակ հրատարակության վերա, իջանել հայկական դպրության ասպարեզը և գործնով ոչ միայն լցուցանել մեր պակաս թողածքը, այլև փորձել աշխատությունը։ Պահանջել շատ հեշտ է, բայց ամենայն պահանջողություն պիտի լինի բանական դատողությամբ։

Ավելորդ ենք համարում ասել թե ոչ ոք իրավունք չունի բռնադատել սրտի վկայությունը. Հյուսիսափայլի ուղղությունը հայտնի է արդեն, նա մինչև վերջը հաստատ պիտի մնա յուր ուղղության մեջ, պար-

տական չհամարելով յուր անձը ուշադրության դարձուցանելու անկյունաքար հարուստաններուն իմաստակության վերա։

Ազգի էական օգուտներին զոհել ենք և պիտի զոհենք ամենայն բան. պատասխանելու չենք արտոնջանքին, որ ժամանակ առ ժամանակ բարձրանում են այսպիսի շնչին զոհերի պատճառով։ Դորա հակառակ շնորհակալ կլինինք, եթե մի բանասեր ցույց տա մեր վնասը ազգի ընդհանրության և նորա ապագա ճակատագրին։

Ազգի լուսավորության և հասկացողության աստիճանը, այլև այն շրջապատը, որի մեջ կանք մենք, վաղուց արդեն հարկադրել են մեզ հայկական դպրության տալ այն ակնարկական ուղղությունը, որ երբեմն հայտնի էր Ֆրանսիայում անունով, Littérature allusionelle*.

Շատ ժամանակ չէ, որ ասել էինք, թե ազգության առանձին, ինքնուրույն գործակատարության ապրյուրը է գիտակցությունը, իսկ գիտակցությունը գուրս է բղխում լուսավորություններից։ Եթե օրագիրքը մի կողմից պարտական են պահել յուրյանց ազգայնության նեղ շրջանակը, մյուս կողմից չէ պիտու նոցա ձեռքից ինդուլ ընդհանուր լուսավորության լայն ասպարեզը։ Մեր կարծիքով, առաջինը առանց երկրորդին երբեք հաջողություն չէ գտանելու և քաղաքակրթության պաղավետ սկզբունքը մենք պարտական ենք որոնել երկրորդի մեջ։

Ճշմարի՛տ է և այն, որ շատ բան ևս չէ կախվում օրագրի հրատարակողից կամ նորա գործակիցներից. երկիրը շատ անգամ բուսուցանում է դալար ծիլեր, բայց և շատ անգամ հյուսիսի ցուրտը պաղեցնում է նրանց արևագալիյ հառաջ...

Նայելով մեր ներկա վիճակին, մեր մխիթարությունը պիտի որոնենք անդադար գործակատարության մեջ. շարժողությունը, ինչ կերպով ևս հայանվի մարդկության մեջ, օրհնած է, որովհետև հոգի կա նորանում, որովհետև կյանք ունի։

Ավարտելով մեր խոսքը, այն շորս խնդիրների մասին, որ նպած էին մեղանից, չենք կարող չհայտնել մեր ցավը, այն պատճառով, որ չենք կարող այս անգամս ուրիշ բաների վերա խոսել, քան որում առանց նոցա ևս բավական ձգվեցավ բանի ընթացքը։ Բայց և այնպես կարելի չէր զանց առնել և չհայտնել Կոստանդնուպոլսի ամենապատիվ արքեպիսկոպոսի Գևորգ արքեպիսկոպոսի պատրիարքական աթոռից իջանելը և նորա փոխանակ Բրուսայի առաջնորդ ամենապատիվ արքեպիսկոպոսի պատրիարքական գավազան ընդունելը։

Սորանից մի քանի շաբաթ հառաջ, մասնավոր նամակներ տեղեկություն էին տալիս մեզ, թե պատրիարքական գավազանը երրորդ անգամ պիտի հանձնի ամենապատիվ Հակոբոս արքեպիսկոպոսին, բայց ազգի բևեռակությունը չշմարտանց մեր թղթակցի կարծիքը։ Հանաց պատրիարքը նույնպես փոխված է։

---

* Անեկդոտ, անեկդոտ (անեկ) անող գրականություն, խմբ.։

Հ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱ»-Ի

Մեր պատվելի հայրենակիցքը շատ անգամ լսելով ազնվամիտ հեղինակների առ ի սրտե հշմարտասեր ու ցավակցական խոսքերը, ազգի անուսումնասիրության և անգրասիրության մասին, վիրավորվում են, ցույց տալով յուրյանց, ինչպես երևում է, արդարացի պատճառները. առաջին, թե նոցա գրածները հին և մեկալ լեզվով լինելով, անմատենալի էին ազգին. երկրորդ, թե մեծ մասով գրվածքը լինում են փիլիսոփայական կամ հնասիրական խնդիրների վերա, որ ժամանակի որպիսությանը անհարմար լինելով, չեն զարթնեցնում ազգի հոգու մեջ նոանդ պնպի զրասիրություն, վասնորո և մնում են սորա և նորա տանը ընկած առանց անգամ և բացվելու, կամ, քանի մի հին լեզու իմացողների ձեռքում:

Այդ խոսքերի վերա ինձ թազդր եղավ դուրս տալ եվժեն Սյու պարոնի «Թափառական Հրեա» անունով վիպասանության հայ թարգմանությունը այն լեզվով, որ ժողովրդին հասկանալի էր: Եթե փորձով երևի, որ ժողովրդի գանգատին արժան է իրավունք տալ, իհարկե մեր պատվելի հեղինակքը յուրյանց ընթացքը կհարմարեն ժամանակի որպիսությանը, և կաշխատին այնպիսի բաներով պարապեցուցանել ընթերցողները որ և հասկանալի լինեին նոցա և ազդեցություն ունենային նոցա հոգեղեն զարգացման վերա. իսկ թե ազգայինքը այդ խոսքերը բերան առել են միայն այն մարթով, որ բամբասեն հեղինակների արդարաբանությունը և պոռնոով ծածկեն յուրյանց անուսումնասիրության մեղքը, այն ժամանակ այդ ևս հայտնի կլինի և կհատկացնեն բանի զորությունը: Այս խոսքերը ևս ասում եմ ընդհանրապես, իսկ, իմ կարծիքով, մինչև մեջտեղությը չկային դպրոցներ, հասարակություններ, և այլ շատ պարագաներ, որ կարո՛ղ էին ազգի հոգու մեջ բուսուցանել և զարգացնել լուսավորության սերմը, մինչև օրինավոր գործիք չկար խոպանացած երկիրը վարելու և հերկելու, զուր տեղը սերմ ցանել չոր ու մացառոտ երկրի վերա, կամ ապառաժների և ճանապարհի վերա, օգուտ ամենևին ունենալու չէր:

Այն ազգը, որ չուներ դպրոցներ, ուսումնական ընկերութիւններ, գանազան լուսաւոր գաղափարներով հարուստ շարունակ օրագրութիւններ, այն ազգը, որի համար ուսումը և դիտութիւնը մի երկրորդական երրորդական բան էր, որ յուր հոգու բոլոր զորութիւնը յարել և տրամադրել էր միայն նիւթական բաների համար, նորան ի՞նչ կենդրոնն երիս տարին մի անգամ կամ տարին մի անգամ մի գրքի աշխարհ հայտնվիլը. և խեղճ հեղինակը տարիներով շարշարվում է մինչև յուր աշխատութիւնը գլուխ կրնայ, բայց այդ աշխատութիւնը ազգին մի բանի տեղ անց կկենա՞, գո՛նե մինչև այժմ չէ երևում դորա մի գրական ապացույցը։

Բանը այստեղ հասած լինելով, հարկավոր էր հեղինակներին մի հնար գտանել ժողովրդի սիրտը մի կերպով ջերմացնելու, մի կերպով զարթնեցնելու նորա մեջ այն ազնիվ եռանդը լուսաւորութեան, որ մարդկութեան պարծանքն էր. ուրեմն, նախ պիտոյ էր այն լեզվով խոսել, որ ժողովրդի ականջը ներգործեր սրտի վերա և այն ապաւորութիւնը, որ լսողութիւնը առանում էր, բացարձակեր սրտի վերա։ Այս, գիտակցութիւնով և հասկացողութիւնով կլինի. նմին մեջ լսենք մի անհասկանալի բառ, մեր համար միևնույն էր լսել մի ջիբուկի ձայն. այսպիսի ձայները լսողութեան վերա ներգործելուց առավել, այլ ազդեցութիւն չունին։ Այս պատճառով ժողովրդի սրտի վերա ներգործելու համար պիտոյ է այնպիսի ձայնով ներգործել նորա լսողութեան վերա, որ գիտակցութիւնը, ըմբռնելով այս ձայնի խորհուրդը և ապաւորութիւնը, անմիջապես հասուցանեն նորա սրտին. և հեղինակը պարտական է գործ ունենալ ժողովրդի սրտի և հոգու հետ, և ո՛չ նորա ականջի հետ, որ ինքնասիրութեան առաջնորդ էր միմիայն արտարին աշխարհի տպաւորութիւններին, սրտի և հոգու մեջ մտանելու երկրորդ, մի այնպիսի ժողովրդի, ինչպես մեր հայոցն է, նայելով նորա այժմյան վիճակին, պիտոյ է քնդհանուր և հասարակ կրթութիւն, որպես պատրաստութեան հնար դնալի առավել բարձր և հիմնավոր կրթութիւն, և ո՛չ բարձր և վերին կրթութիւն մի որպիսի և իցն մասնավոր առարկայի կամ լավ ասել ուսման ճյուղի։ Այժմյան դրութեան մեջ հայոց ազգը կարո՛ղ է հասանել բարձր կամ վերին կրթութեան մասնավոր առարկայի մեջ, միայն այն ժամանակ, եթե այդ առարկան, այդ ուսման ճյուղը, հնար էր նորա նյութական բարեկենդանութեանը։

Այս պատճառների հիման վերա, հեղինակի գրելիքը առաջինը պիտոյ է լինելին նոր հայախոսութիւնով, երկրորդ, հեղինակութիւնը պիտոյ է վերաբերվեր քնդհանուր կրթութեան, և այնպես, որ առանց նախընթաց կարոտութեան օրինավոր դպրոցների և համապատրաստի, հասկանալի լիներ ընթերցողներին և միևնույն ժամանակը գրավող և գաստիարակող քնդհանրապես։

Շատ օրինակներ ունինք մեր աշքի առաջն, որ մեծամեծ աշխատութիւններ, այո՛, գրքերով գլուխ բերած, ազգին ամենևին օգուտ չեն բերել։

ինչպես են բարձրագույն ուսումնների հրահանգությունքը. հանկարծ, մինչ ո՛չ դպրոցներ, ո՛չ ճեմարան և ո՛չ համալսարան ունեինք, թարգմանել և տպել «Ուսումն նավուղղության»[1]. այս ասելով, միտք չունիմ միայն այս գործը պախարակել կամ սորա անտեղի լինելը հայտնել, այլ այսպես շատերը կան, և ո՛չ միայն շատ կան, այլ կարելի է ասել, թե մեր մատենագրության մեծ մասը, այսպիսի բաներից է բաղկացած: Ո՞վ է դոցա կարգացողը և հասկացողը, և ո՞ւր է այդ գրքերի հանդեսը: Այո՛, եթե ունենալ էինք պատշաճավոր ուսումնարաններ, եթե գիտության սանգուղքի համար ունեցել էինք մի ամուր քարից պատվանդան, որի վերա աներկյուղ կարելի էր սանդուղքը ամրացնել, այն ժամանակ կարելի էր և ավելի վեր բարձրանալ, իսկ մեք ո՛չ եթե օրինավոր պատվանդան, այլև առանց մի ուրք կոխելու տեղ ունենալու, կամենում ենք օդի վերա սանդուղքը ամրացնել և նորա վերայով բարձրանալ: Այդպիսի բաներ երազում միայն կարո՛ղ են կատարվիլ, իսկ արթնության մեջ, ո՛չ երբեք:

Քանի որ մեր մատենագրական գործունեությունը փակված է այն նեղսիրտ և դարավոր հնության սահմանի մեջ, քանի որ առաջ և ինն դարու հեղինակքը չորրորդ և հինգերորդ դարու լեզվով խոսելով, սահմում են ժողովրդին ևս մոռանալ XIX-երորդ դարը, մոռանալ շրջապատող հանգամանքները և ևս գնալ հետանալ մինչև V դարը, ևս իմ կողմից կարելի է մեղանչում եմ... կատարյալ իրավունք կտամ ժողովրդի անգրագիտությանը. պատճառ, թեև հեղինակները ինքյանք գրելու ժամանակ վերանում են մինչև V դարը, բայց ժողովուրդը չէ կարող նույնպես գնալ V դարը, մեր պատվելի XIX-երորդ դարու հեղինակությունքը կարդալու: Նա պինդ կապած է ժամանակի շղթաներով. ժամանակը վազում է հառաջ. ուրեմն և ժողովուրդը պիտո է վազե. այստեղ նա միջոց չունի, թեև ցանկանար, ևս դառնալ այնքան հետ, որան և չորս դարու ճանապարհ. ժողովուրդը ուղեկից է ժամանակին և մնացել է և մնում է նորա ազդեցության տակ. պատվելի հեղինակները բացառություն կամենալով լինել հասարակաց օրենքից մնացել են և այժմ ևս ամենայն ջանք գործ են դնում մնալ V-երորդ դարումը և ամենևին ցած չգալ այս դարուցը, ուրեմն ի՞նչպես պիտո է սորա միմյանց հասկանան: Զգիտեմ, ի՞նչ գերբնական զորություն է հարկավոր, որ առաջ և չորս դարու խորոցը, որ այնքան մեծամարմին ընկած էր V և XIX դարերի մեջ, հեղքեր և հասաններ ժողովրդին:

Տեղիք չունինք ամենևին մեր ժողովրդի անգրագիտության վերա զարմանալու. պատճառ, մեր մատենագրությունը մինչև այսօր արեգակյան մատենագրություն է, միջին դարերի դպրոցական մատենագրություն, եթե այս անունը ևս կարելի էր տալ. չկա նորա մեջ կյանք և կենդանություն, այլ սկզբից մինչև այսօր մի վհատեցուցիչ միօրինակություն: Եվ գիտենք թե մի հայ մարդ առնուր յուր ձեռքը հին լեզվով շարադրած մի գիրք (իհարկե հայերեն) և սկսեր չոր չոր կարդալ այնքան, մին-

չև որ անդիր ուսաներ միանգամայն կարդացածը, ինչպես այս մի մեքենական սարսափելի առանջանք է, բայց ի՞նչ օգուտ կարո՛ղ էր քաղել դրանից. ոչի՛նչ, և աստված վկա է ոչի՛նչ. մարդկային մարմինը երբեք չէ կարող անանվիլ այնպիսի կերակրից, որ ինչ հատկութիւններով մատանում է բերանը, նույն հատկութիւններով դուրս գար որովայնից առանց մարսվելու և արյուն դառնալու. պատճառ, մարմինը յուր շինվածքի համար նյութ չստանալով այնպիսի կերակրից, անատարակույս կմուլանար և հետո կքանդվեր ևս. հոգու համար մի այսպիսի կերակուր է չհատակացած բան կարդալը։

Թուլլ տանք, ին կարդացածի լեզուն ևս հասկանար, բայց մի բան կարդալու ժամանակ բառերի լոկ նշանակութիւնը հասկանալ, չէ իմացվում բանի զորութիւնը հասկանալ, ուրեմն ի՞նչ կարող էր գտանել այնտեղ, որ և մարքի կողմից հասկանալի լիներ նորան և դրամիչ։ Աստուածական բաններըչ հասարակ ժողովրդի համար չեն. նա չէ կարող տանել նոցա ճշտութիւնը, նա չէ ուսել այդ առարկաները, իսկ մեր միջումը կին կան ևս նորախոս մատյանք, նոցա բովանդակութիւնըը մեծ մասով ուսումնական են, չեմ ասում այստեղ նոցա պակասութիւնըը, ին լեզվի և ին կարծիքների կողմից. վերջիններըը շատ տեղ դարերով ետ են մնացած այժմյան ժամանակներից։

Եվ առհասարակ մեր մատենագրութիւյան մեջ ի՞նչ գրքեր կան. Սուրբ գիրք, որ դժբախտարար հասկանում ևս չէ ժողովուրդը, Յարգմանչաց յուրյանց անփոխան գրվածքը, զորօրինակ Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի և որ ասցա կարգումը են, բայց բանի մարդիկ կային որ համ էին տեսանում սորանցից. ասածիս անհակառակելի վկա այն տխուր ճշմարտութիւնն է, որ հայերը օտարի լեզվով կարդում են յուրյանց անփոխան հեղինակի գործը[2]։ Բացի սորանցից ի՞նչ ունինք ժողովրդի մեջ. միթանի աննպատակ և անտեղի գրքեր գերապատիվ միսիոներյանց շնորհքով լույս հանած. հետո, Հրահանգ քրիստոնեական վարդապետութեյան. հետո, դարձյալ Հրահանգ, դարձյալ Հրահանգ, տասը քան անգամ, միևնույն բանը զանազան կերպարանափոխութիւններով։ Ի՞նչի եմ մոռանում քերականութիւնները, որ զանազանվում են մինը մյուսից շատ անգամ նորանով, որ մինը տասը հոլով է ընդունում, մյուսը ինը, մյուսը վեց, իսկ մյուսի հոլովների կարգը այլ է բոլորովին։

Այսպես ահա՛ մեր դպրութեյան մեջ չկա ոչինչ նորութեյուն. միևնույն բաններըը կրկնվում են ամենայն օր, չեմ ասում օրացույցների համար, որ միշտ նոր են տպվում զանազան տեղերում, որոնց մի քանիըը նզանակներն են գուշակում, մյուսը արյուն թողնելու համար չար ու բարի օրերն է ցույց տալիս. ճշմարիտ է՛ և չեմ ուրանում, որ էֆիմերան ևս պակաս չէ, այն հրաշալի գիրըը, որ մեր ժողովուրդը սիրում է, որի մեջ գրված են ամենայն տարի աշխարհի երևին պատահելու գործերը, արեգակի և լուսնի խավարումը յուրյանց գուշակութիւններով, արագիլի գնալը և այլն և

այլն։ Տխուր մատենագրություն! Եվ ի՞նչպես կարելի է պահանջել, որ ժողովուրդը ընթացք տա այսպիսի մատենագրության, ընդունի նորան սիրով սեղանով։

Բնական աշխարհի մեջ ոչինչ բան չկա, ոչինչ բան չէ՛ կատարվում առանց խորհրդի. հեղինակները ևս, մնալով այս հասարակաց բնության օրենքի տակ, ամենայն բան գրելու ժամանակ պիտո է յուրյանց խորհուրդը ունենան, և այս խորհուրդը պիտո է կարելի բան լինի, այսինքն ժամանակի հանգամանքներին հարմար։ Բայց ցավելով եմ խոստովանում, որ մեր հին լեզվով խոսող հեղինակները պակաս են այս խորհրդից. մի այդպիսի հեղինակի սիրտ տվել է շարադրել կամ թարգմանել մի գիրք, նա կատարում է յուր սրտի ցանկությունը, բայց ի՞նչ խորհրդով, օգուտը ի՞նչ է, ո՞վ է կարդացողը կամ հասկացողը, նա չէ մտածում. նա ցանկանում է միայն, որ գրքի ճակատումը տպած լինի յուր անունը. և թե փորր ինչ ուսել է հնախոսել, եղիշեի հետ հավասար է յուր մտքումը։ Փարպեցին, շատ ցած է նորանից. և հետևում է, որ ոճերի ամփոփության կողմից խորենացուց ևս պակաս չմնա, բայց ևս կարծեմ ավելորդ տացի. նմին լատիններեն գրելու ժամանակ աշխատում են ամենայն բան այնպես գործ ածել ինչպես Կիկերոնն է գործածել. ի՞նչ պատճառով հայերս ամբողջ ոճեր և գործվածներ չէ պիտո դնենք մեր շարադրություններին մեջ խորենացուց և Հովհաննես Կաթողիկոսից... ի՞նչ պատճառով հին լեզվի անգործածական բառերը և ոճերը անտես առնենք, որոնք հին ժամանակներումը տեղ տեղ երևում են գործածված. առավել անհասկանալի կլինի մեր գրածը և կփառավորվի մեր անունը, կասեն ա՛ռ երևելի հայկաբան է...

Ջեմ խղճահարվում այս խոսքերը ասելու ժամանակ. պատճառ, կենդանի հշմարտություն է, մեև դժբախտաբար ձայն բարբառոյ յանապատի։

Դպրոցական աշխատություններով, որ մեր պատվելի հնասեր հեղինակքը համարում են, մե կարելի էր մեծ ազդեցություն ունենալ ժողովրդի լուսավորության վերա, ահա հազար երեք հարյուր տարին լրացած, հազար չորս հարյուրն է գնում, որ ոչինչ չհառաջացավ. և մե հայերի մեջ կան մարդիկ, այդ օտար դպրոցներուն շնորհն է. նմին պատվելի հեղինակների ընթացքը այսպես շարունակվի միշտ, ապա և հայերի հոդնեղեն կյանքը կշարունակվի միօրինակ, ինչպես եղել է և կա և կմնա այնպես, այսինքն հասարակ ժողովուրդը զուրկ լուսավորություններից, իսկ բան ուսանել կամեցողը կարող օտարների շնորհին։

Այս ոչխարի բանի պատճառը պարզ տեսանելի է ամենայն մարդու, նմին միջին դարերի արհեստական ակնոցները աչքերի վերայից հանած, նային ամենայն բանի վերա Հերշելի հնարագիտակով, այն ժամանակ կտեսանեն անտարակույս, որ հայերը մինչև այժմ աշխարհական դպրություն չեն ունեցել. լավ ու վատ եղել է և կա արհեստական դպրություն, ինչպես վերևումը հիշեցինք. կտեսանեն, որ սա մի կողմից յուր

լեզվի հնությունը չփոխելով, մյուս կողմից միևնույն բանը հարյուր անգամ գրելով օտարացուցել է ժողովուրդը յուրյանից այնպես, որ այժմ հին լեզուն մեր ժողովրդի համար եղել է Եգիպտոսի մեհենական անմատչելի լեզու։ Անցան այն ժամանակները. գեղեցիկ խոսում է պարոն Պետարևակին* երբ համարում էին մարդիկ, թե միմիայն քուրմի հանդերձով կարելի է մոտենալ գիտությունների աշտանակին. անցան այն ժամանակները, կրկնում եմ, երբ շափով ու կշռով տալիս էին ազգին իմաստության լույսը և այն, ինչ ուղղություններով որ կամենում էին. զարմանալի է աշխարհիս փոփոխությունը, բայց առավել զարմանալին այս է, որ այժմ ևս կան շատ մարդիկ, որ չեն հավատում, թե այս փոփոխությունը իրագործված է արդեն աշխարհի երեսին։

Ես ամենևին երկբայություն չունիմ այս փոփոխության վերա. միայն այս եմ մտածում, թե հազարավոր տարիներով քննուց հետո ո՞րքան աշխատություն պիտի մեր ազգին հայկական խոսքը վերակենդանացնելու, քանի՞ սիրտ ու ձեռք նոր հայախոսության ամրարտակ հարուցանելու հնության ավերակների վերա։ Այո՛, մեծ հանգիստ կա բանիմաց հայերի առաջև, եթե դրա, հավկանալով իրաց կարգի փոփոխությունը, ցանկանային մշակել հայկական անշեն անապատը և անմահացուցանեին յուրյանց անունը մշտնջենական արձաններով— աննախանձ աշխատություններով։

Բայց իմ այս ասելովը թող մեր սիրելի ազգը չիմանա թե ազգի համար կա չկա, միայն ուսումնականքն են պարտական գործ կատարել, ո՛չ. ազգային խոսքի անհատության մեջ ամենայն մարդ յուր վիճակի և կարողության համար պիտո է գործակատար գտանվի. միմիայն հեղինակները ո՛չինչ չեն կարող առնել։ Գիտենք թե գրենքն շատ բաներ. գրվածքը կարող են տպվելու. հեղինակը, տարիներով կյանք մաշելուց հետո յուր աշխատության վերա, պարտական չէ հոգալ և նորա տպագրությունը, նա հանգամանք չունի, որ աշխատանց. նորա աշխատությունը պիտո է դառնա հասարակաց ժառանգություն, թեև գժբախտաբար այսպես է եղել մեր հեղինակների գործակատարությունը մինչև այսօր։ Ազգային եղբարք պարտական են նույնպես քաջալերել յուրյանց համար աշխատողքը, սրբել նոցա ճակատի քրտինքը և բարի և ազգաշեն գործերով օրինակ դառնալ նույնպես յուրյանց ընկերներին։

Ես ազգային խոսքի շինության մասին խոսակցություն կենթում եմ տրտնով, թե մինչև նոր լեզուն չլինի առհասարակ մատենագրական լեզու, մինչև գրվածների իմաստը բմբռնելի և հասկանալի չլինի ժողովրդին, մինչև ազգը խոհեմ ճանապարհներով հոգս չառնի անհրաժեշտ ազգային դպրոցների մասին և վերջապես, որ ամենից հարկավորն է, մինչև մեր պատվելի հեղինակները դպրոցական փոքր հետ գնալով ազգի համար չաշխատեին առողջամիտ կերպով, և

* *Общепонятная физика*, изд. второе, 1854 г., СПБ. стр. IV.

մյուս կողմից ազգի կարողքը օգնություն չառնեին նորանց, սո՛ւտ է ամենայն լուսավորություն. և առանց ամենայն գործունեության սպասելը մի լուսավորող ժամանակի, ոչ այլ ինչ է, եթե ո՛չ, անձնախաբեություն։

Կնքելով իմ խոսակցությունը հայկական մատենագրության վերա, արժան եմ համարում ծանոթություն տալ այստեղ մի քանի բաների մասին, որ վերաբերվում էին նմանկա աշխատության։

Մեր ազգայիններից, որ ծանոթ էին ֆրանսիարեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներին, արդեն կարդացած կլինեին «Պափառական Հրեաց» վիպասանությունը և ճանաչած նորա ազնիվ և սուրբ խորհուրդը, ուրեմն և արժանավորությունը. վասնորո ավելորդ համարելով այս մասին երկար բարակ քարոզ կարդալ, պարտականություն եմ համարում միայն այսքան ասել, որ, եթե մեր մխիթարյան գերապատիվ հարք չեն կամեցել այս բանը հայերեն թարգմանել և տպել, պատճառը կարտաուղություն չունի մեկնության։ Եվժինն Սյու, մարդկության բարեկամ պարոնը, այս աշխատության մեջ նկարագրում է հիսուսյան արեղաների անքրիստոնյա և բարբարոս վարքը ու. բարքը. մխիթարյան գերապատիվ հարք ինքյանք ևս կրոնակից և ջատագով լինելով հիսուսյաններին* հավանական և շատ բնական է, որ նոցա ձեռքը չէր համարձակվելու այսպիսի գործ կատարել, մանավանդ որ ւեներ պապը նզովել է այս աշխատության հեղինակը և կարգացողը, ուրեմն, և թարգմանողը։ Եվ ճշմարիտը պիտո է խոստովանել. ի՞նչպես կարելի է, որ մի պապական արեղա հակառակվի այնպիսի մի մարդու, որ աստուծո փոխանորդ էր, արքայության դուռը բացող և փակող... (մի՞թե)։ Գո՛հ եմ աստուծուց, որ պապական չլինելով ունիմ ազատություն գրել և թարգմանել այն բանը, որ ջատագով էր ճշմարտության, որ պախարակում էր Քրիստոսի օրևներին ընդդիմ գործերը և նկարագրում էր ամենայն ինչ մարդու խղճմտանքով. և այս եղկար աշխատության մեջ, ամենայն քայլս փոխումս նոր քաջալերություն եմ զգացել, որովհետև պիտո է բարեբարացնեի ճշմարտության դրոշակը։

Իմաստուն և բանագետ մարդերի համար, բացատրության կարոտ չէ՛ իմ նպատակը, իսկ մեր մյուս եղբայրակիցներին, որ կես մի բախտի անգթանալովը, կես մի յուրյանց մեղքովը հեռի են մնացել լուսավորության ճրագից, պիտո է ասել, թե այս վիպասանությունը, այս հրաշալի գործը, առանց ամենևին կողմնապահության նկարագրելով հիսուսյանների ընթացքը դեպի Բենեդիկտոնի ժառանգները. կարո՛ղ էր ըմբռնելի կերպով հասկացուցանել մեր հայերին, թե ի՞նչպես էր հիսուսյան կարգի ուղղությունը, որ պապականության հարատևության զավակներն էին։ Այսքան ևս ավելորդ էր ասել, եթե մեր ազգի բա-

* Տե՛ս Փափազյանի նկնդեցական պատմության (տպած 1848, Վենետ.) 923 երեսից մինչև 932 երեսը։

յոր որդիքը ձեռնհաս լիններին քննել իմաստասիրաբար, թե ի՞նչ է պապականութիւնը առհասարակ. քննել նորա պատմութիւնը, և նրանից կարողանալ դուրս բերել մի անկողմնապահ և ճշմարիտ եզրակացութիւն։ Բայց ափսո՛ս, որ այս չկայ ընդհանուրի մէջ. թնպետև մասնաւոր մարդիկ Քրիստոսի կենսատու ավետարանը, ուսուցանելով անհակառակելի ճշմարտութիւնը, տնկելով աստուածային հոգու խաղաղութիւնը, ներգործել է, և բերել է այն պտուղը, որի մասին ինքը Քրիստոս ազաչում էր «Ո՛չ երբ սրա դնուսա ճշմարտութեամբ քով, դի քո բանդ ճշմարտութիւն է»*։

Այո՛, եթե այսպես լիներ և ընդհանուրի համար, մենք երանելի մարդիկ էինք. բայց ի՞նչպես լիներ, կայի՞ն արդյոք լինելութեան պատճառները, ո՞ւր են ազգային գործոնները, ո՞ւր են ազգի իշխանների այս մասին հոգաբարձութիւնքը։ Եվ այս է պատճառը, որ պարոն Փափազյանի նման մարդիկ աշխատութիւն են կրում մեր համար ևկեղեցական պատմութիւն գրելու. հայոց ազգը «չեն տուն Հարս կունա» Փափազյանից ուսանելով յուր եկեղեցու պատմութիւնը։ Չեմ ասում դնուս այն, որ արեւելական խոսքը, չէ՛ և չէ՛ այն դիտաւորը, որտեղից կարելի լիներ ազատ տեսողութեամբ նկատել աշխարհի իրողութիւնքը, և նկարագրել այնպես, ինչպես որ կային։

Պարոն Փափազյանը, յուր 1848 թվականում տպած եկեղեցական պատմության մէջ, սկսած 923 երեսից մինչև 932 երեսը, ախոյան դուրս գալով հիսուսյան կարգի հակառակորդների ընդդեմ, ամենայն ջանք գործ է դնում, հիսուսյանների խավարը, լույս ապացուցանել, իսկ հակառակորդների լույսը, խավար։ Ցավում եմ, որ պատվելի հեղինակը, չէ՛ կարողացել գո՛նէ մասնավորապես ծածկել յուր համակրութիւնը հիսուսյանց հետ, և համարելով, թե աշխարքումը բացի մխիթարյան միաբանութիւններից այլ մարդիկ չկային, շատ դրական և վճռական կերպով հանդես է դուրս եկել հայերի մեջ։ Այս բանը ինձ պատճառ տվեց, կերպասաւիլ Սեվենն Սյու հեղինակի վիպասանութեան սկզբումը դնել հիսուսյան կարգի պատմութիւնը, քաղելով արդարամիտ և ճշմարտասեր հեղինակների գործերից. և այս նախ, որ իմ ընթերցողքը չհամարեն, թե պարոն Սյուն ուժ տալով յուր մտքի թևերին, և ունենալով զանազան հարաբերութիւններ դեպի հիսուսյանները, կերպարանագործել է Բոդենի, դ՝Էքրինեի, Դյուբուայի, և այլ մարդերի մեջ զանազան բնավորութիւններ, այլ ուսանելով հիսուսյան կարգի պատմութիւնը, գրվեն ամենայն ստորագրել կարծիք Սեվենն Սյու պարոնի մասին։ Երկրորդ, պարոն Փափազյանը կամ, թե նա ինքը կենդանի չէ, նորա եղբայրակիցքը կարդալով այս գրվածքս այսքան միայն հասկանան, թե ինչ որ յուրյանք գրած են այն դիտաւորութեամբ, որ հայոց ազգը յուրյանց գրածը ընդունի հաւատ յուղի տեղ, ազգը ունի կարողութիւն, ո՛չ թե միայն ճանաչել այս խարդա-

* Յովհ. ԺԷ գլ. 17 համար։

խումբյունը, որ գիտենք, թե ի՛նչ աղբյուրից է... այլև քննել, և քննելուց հետո անաչառ հոգով դատել և դատապարտել սուրբ, և առաքելական հնդինակը:

Անցան այն ժամանակները, երբ պապական իշխանությունը կարգում էր խուզարկու առյան (inquisitio), կատարում էր զարհուրելի տոներ (auto-da-fe) դոհելով մարդկության անբասիր անդամները: Ժամանակը, աշխարհի լուսավորությունը, ինքյանք կարգել են այժմ պապական գործերի վերա քննության առյան. այն մարդիկը, որ երբեմն ինկվիզիտորների ձեռքով դատապարտվում էին դեպի բանտ, դեպի հուր, դեպի սուր, նույն մարդիկը կրկնում եմ, մի անփախչելի մտավորական ինկվիզիցիո են կարգել, և դեպի հավիտենական ամոթ դատապարտում են պապականության անբրիստոնյա գործերը: Զարմանալին այս է, որ մխիթարյան գերապատիվ հարք ինքյանք միշտ նստելով կանգնելով մի քանի անուսումն և ռամիկ հայերի հետ, և շոշափելով նոցա տգիտությունը, կարծում են, թե մեր բոլոր ազգը առանց բացառության այդպիսի մարդերից է բաղկացած. և թե, ինչպես այն խեղճ մարդիկը չեն որոշում թուլը, որ խառնում են մխիթարյանք յուրյանց դրվածների մեջ, նույնպես բոլոր ազգը թուլը կընդունեն շաքարի տեղ. խնդրենք ներողություն. այդպես չէ, հայերի համար ևս մի փոքր փոխվել է աշխարհը:

Ընշմարիտ է՛. և ո՛վ կարող էր ուրանալ, մեր ազգի մեջ, կան շատ և շատ անուսումն մարդիկ, ինչպես նաև պատվելի մխիթարյանց մեջ, որոնց շատերին ես ինքս պատահել եմ, որոնք բացի Rosarium և Pater noster աղոթելուց այլ բան չգիտեին, բայց մի՞թե չկան մեր ազգի մեջ նաև լուսավոր մարդիկ, որոնց դատաստանի առաջը պատճառ ունեին կարմրիլ և ամաչել հրապարակական ատյանքը... այո՛ կան, և շատ կան այժմ կրկնում եմ, և սրտիս երախտագիտությունից դեպի աստված, աղաչում եմ ասել հանապազ. «Փառք քեզ տեր աստված, որ խնայելով մարդկության տկարությունը, ստեղծել ես նույնպես հնարներ, որոնցով կարելի էր դարման տանել ախտացածներին»:

Իմ աշխատության բովանդակության մասին ես այսքան ծանոթություն տալուց հետո, մի երկու խոսք պատշաճ եմ համարում ասել այն մասին, թե ես իմ այս աշխատության մեջ գործ դրել եմ ամենայն ջանք, որ իմ գրածը պարզ լինի և հասկանալի և որքան կարելի է մոտ ժողովրդի կենդանի լեզվին. բայց արդյոք հասե՞լ եմ նպատակիս, այդ խնդիրը իմ գործ չէ լուծանելու:

Նոր լեզուն դեռևս մանուկ է. դեռ շատ և շատ դժվարություններ կան այս լեզվով դեղեցիկ և հաջող խոսելու. այդ կհոգա ժամանակը, երբ նոր լեզուն հեղինակների գրչի տակ ճախարակվելով, կատանա յուր այրական հասակը, մանավանդ որ այժմ դեռ շատ բաներ կան, որոնց մասին հայերը ամենևին գաղափար ևս չունենալով, չունին հետևաբար և այն անունները, այսինքն այն ոճերը և դարձվածները, այո՛ շատ անգամ և

բառերը, որոնց մեջ կարելի էր պարունակել նոր մտքերը, որ մինչև այժմ չկային հայերի մեջ։

Ես շատ լավ գիտեմ, որ իմ խոսակցության ձևը, ունի պակասություններ, բայց ի՞նչ առնես, ամենայն մարդ չուր պես կխոսի, անհատություն չէ կարելի ուշնշացուցանել։ Իմ խորհուրդը այն չէ եղել, որ իմ գրածը ուրիշին օրինակ դառնա. ես միմիայն ցանկացել եմ, որ այս վիպասանություններ և հիսուսյան կարգի պատմություններ հայերի համար ևս կենդանի լինի աշխարհի երեսին.— ես հասած եմ իմ նպատակիս։

Կ Ր Ի Տ Ի Կ Ա.

ՀԱՆԴԵՍ ՆՈՐ ՀԱՅԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Գործ Սուխիանոս վարդապետի Նազարյանց.
Ա. Հատոր, Մոսկվա, 1857:

Մեր «Միևին խոսք, մյուսին հարց» անունով այժմյան տպի տակ եղած գործի հատաջարանության մեջ, ուր խոսք է լինում բավական երկար հին և նոր հայկական բարբառի վերա, ասած ենք, «Թե շատ չէ անցցանելու, որ ժողովուրդը աչքը այս և այն կողմը ձգածի պես պիտո է առնանել նոր մատենագրության պատկանած մի գիրք և այլն»[1]:

Այս բոպեիս մեր սիրտը լցված է մի հոգեպայծառ ուրախությամբ, որ ասածներիս ճշմարտության նշանները սկսում են իրագործվիլ: Բուն այս պատճառը հարկադիր է լինում մեզ բարձրացնել մեր ձայնը և արձակ համարձակ քարոզել մեր շատ սիրելի եղբայրակիցներին, Թե ահա, մեր նոր մատենագրությունը խլելով մի հնացած ու վատատակած ծերունու ձեռքից դուրս կարգից դուրս երկարատև քաղաքական իրավունքը, որպես ժամանակի հարազատ որդի, հառաջ է խաղում մեծ մեծ քայլերով և տանում է յուր հետ միասին և մեր ընթերցող ազգը:

Մեր խոսքը գերապատիվ Նազարյանցի «Հանդես նոր Հայախոսության» անունով աշխատության առաջին հատորի վերա է, որ անցյալ 1857 թ. Մոսկվայի մեջ տպվեցավ և որի երկրորդ հատորը շատ շուտով հրատարակվելու է նույնպես ազգի մեջ: Մենք, մեր կողմից, ընթերցասիրելով այդ գործի առաջին հատորը, արժան ենք համարում մասնակից առնել ընթերցող ազգը այն տպավորությանը, որ գործել էր մեր վերա այն գիրքը. մի խոսքով հրապարակավ հայտնել մեր կարծիքը այդ աշխատության մասին:

Բայց հառաջ, քան Թե ծանոթացուցել էինք ժողովուրդը այդ պատվական աշխատությանը, պատշաճ ենք համարում փոքր ինչ խոսել մեր ազգի հետ, Թե ի՞նչ է կրիտիկա ասած բանը ընդհանրապես, և Թե ի՞նչ ծանր պարտականություն կար մի մարդու վերա, որ կամեր կատարել կրիտիկոսի (ուսումնական դատավորի) պարտականություն, ամենևին

ազատ պահելով յուր անձը կանխակալ սովորութիւններից և կարծիքներից։

Թե ի՞նչ պատճառով տալիս ենք մեր հոդվածին մի այսպիսի հատաջաբան, պատվելի ընթերցողը կիմանան, սկզբից մինչև վերջը կարդալով այս հոդվածը։

Մեր ազգի մեջ մի սխալ կարծիք է տարածված, թե կրիտիկան վատ բան է, թե նա մարդ է խայտառակում, թե նա հեղինակի պակասութիւնները երեսին դարկելով ծիծաղում է նորա վերա և ցույց է տալիս հասարակութիւնը մի այսպիսի հեղինակի տգիտութիւնը որևիցե բանի մեջ։ Այս կարծիքով մոլորված են մինչև անգամ և շատերը այն հայազգի սխոլաստիկ (դպրոցական) ուսումնականներից, որոնք մի երկու բառ ուսանելով ծուռ ու սխալ միմյանց մոտ շարել, համարում էին յուրյանց անձը Խորենացի ու Եղիշե։

Մեր այսպես խոսածը առանց հիմքի չէ։ 1853 թվակ. մի հայ սխոլաստիկ Թիֆլիզ քաղաքից ուղարկել էր յուր մոսկվացի համախոհ սխոլաստիկին*, որպես կրիտիկա մի Թիֆլիզարնակ գաղթական... պատռնի գործի վերա, այն խորհրդով, որ մոսկվացի հայ սխոլաստիկը այդ բանը արտատպել տա աշակերտներին, և ցրվի ազգի մեջ այդ անճոռնի փիլիսոփայության օրինակները, որպեսզի դորանով խայտառակվի այն պատռնի գործը։

Մոսկվացի հայ սխոլաստիկը, մի առանձին հաճութիւնամբ կատարեց այդ հանձնարարութիւնը և դնեց մեղադրելով Թիֆլիզեցի հայ սխոլաստիկին, թե սա շատապել է այդ բանը գրելու. մի ասա՛ որ մոսկվացի հայ սխոլաստիկը, ինքը ևս պատրաստել էր մի այդպիսի ծակ մարգարեութիւն։ Սա հանդիպողին ցույց էր տալիս այդ անհամ, տգեղ, անհիմնի, ծուլի և ամենացած գործը. պատահեցավ ինձ ևս ընթերնուլ, որի բովանդակութիւնը այս էր, թե այսինչ պատռն Թիֆլիզումը շինել է մի գիրք, որ 1840 թանի թվականներին տպվել է Մոսկվայում. այս գրքի մեջ գտել է այդ Թիֆլիզեցի հայ սխոլաստիկը, սխալներ**, և թե դորա հեղինակը պախարակելի էր, քան որում հատաջ փակեղ է կրել, իսկ այժմ բոլորշի գլխարկ կամ երբեմն լայն վարտիք է հագել և այժմ նեղ և այլ այսպիսի չնպաստաւորութիւններ։

Այժմ հարցանում ենք. մեղավո՞ր է մեր ժողովուրդը, նիհ մեր պատվելի սխոլաստիկները հասկացրել են նորան, թե կրիտիկան բամբասանք է կամ նախատինք (пасквиль). գրել են մի այսպիսի հիմար բան և ասել

---

* Պարկեշտութիւնը թույլ չէ տալիս մեզ հայտնել այստեղ այս սխոլաստիկների անունները և տարակուսս չունինք, որ այդ պատռնները ինքյանք, յուրյանց գործից չհանաչեն այստեղ յուրյանց անձը և գուցե կհրաժարվին ապագայումը այդպիսի երեխայական գործերից։

** Մոսկվացի հայ սխոլաստիկը ևս խոսում էր ամենայն տեղ այս սխալների վերա և պարծենում էր, թե այսինչ պատռնի աշխատութիւնի մեջ այսքան սխալ գտաւ նա ինքն էր խոսում, բայց ևս մոռացել եմ թիվը։

են ժողովրդին, թե ահա այս է կրիտիկան. մի՞թե կարելի՞ է դատապարտել մի մարդ, նրա սրտան, որ յուր օրումը չէր տեսած ոչ սիրամարգ և ոչ արագիլ, շարամիտ մարդիկ ցույց տալով մի արագիլ, հավատացրած լինելին նորան, թե այս է ահա սիրամարգը. այսպիսի վատաբախտ դիպվածում մենք չենք դատապարտում այն մարդը, որ յուր խղճմտանքը ուրիշի խղճմտանքի վերա դնելով խաբվել էր յուր տգիտությամբը, որովհետև նորա հավատը դնողի մյուսը, չարաշար գործ էր դրել յուր ընկերը: Իհարկե նրա մի կենդանաբանի ցույց տար մի սիրամարգ ու արագիլ, թե սա թաքցնե յուր կարմիր կտուցն ու ոտքերը, այնուամենայնիվ այն բնագետը իսկույն կորոշե միմյանցից այդ երկու թռչունքը և կասե. այս սիրամարգ է և այն, արագիլ:

Այսպես ահա մեր ժողովուրդը յուր կորիֆեյ ճանաչված սխոլաստիկների շնորհքով մնալով է կրիտիկայի առաջև, որովհետև սխալ կարծիք ունի նորա վերա, թևպես նա մի սուրբ բան է:

Այո՛, կրիտիկան մի սուրբ և անկողմնապահ դատաստան է, մի այնպիսի դատաստան, որի առաջև մինևնույն են, բարեկամ և թշնամի, որ և մի անաչառ դատավորի նման քննում է մի գործի արժանավորություն և պակասություն: Նա վերահասու է լինում գործին ամենայն հիմնավորություններով, տեղեկանում է նորա խորհրդին, և վճռում է, թե ի՞նչ չափով ու չահմանով կատարել էր հեղինակը յուր պարտականությունը:

Այսպիսի խելացի և բազմակողմանի վերահասություն առնելուց հետո, տալիս է կրիտիկան յուր արդարացի հարկը մի այդպիսի աշխատության, միտ դնելով դորա օրպիսությանը միայն, և ուղիղ պահելով արդարության կշիռը դնող որևիցե հեղինակ, թե բարեկամ և թե թշնամի. այո՛ նա դիտուն պատվել և թշնամու արժանավորություններ:

Ի՞նչ հարկավոր է կրիտիկա. ամենայն մարդ կարդալով մի շարադրություն, տեսնե կհասկանա բանի զորությունը, մանավանդ որ կրիտիկան չատրածելով մի ընդհանուր տպավորություն բոլոր ընթերցողների հոգու վերա, պատա է թողնում նորանց, որ յուրաքանչյուրը անձամբ անձին կարդալով, զգան դանազան տպավորություն, յուրյանց ճաշակին և հասկացողությանը համեմատ:

Այդպես չէ. ո՛չ ամենայն ընթերցող մարդ ազգի մեջ ունի այնքան դիտություն, հասկացողություն, որ կարողանա դատավոր լինել. շատ բան, որ մի հեղինակ դիտությամբ թե անգիտությամբ դնի չարն է գործ դրել, որ շատ հեշտ կարող էր հալած յուղի տեղ ընդունվիլ, բարեխիղճ կրիտիկոսը քննելով բացահայտ է կացուցանում և ցույց է տալիս այդ թերությունքը, բացում է ընթերցող հասարակության աչքը և դարձնացանելով նորա ուշադրությունը այս թերութիւնների վերա, իսկույն փակում է մոլորության ճանապարհը: Միևնույն կերպով շատ մեծամեծ արդյունք, որ շատ անգամ չունեին յուրյանց վերա փայլուն զարդարանք, անհայտ են մնում հասարակությանը, որ միշտ որոնում է զանազան նորություններ և առհասարակ այնպիսի բաներ, որ զգալի ազդեցություն կարող էին

գործել ընթերցողների վերաբ։ Հասարակությունը շատ անգամ ձևերի բամակից վազելով, հագուստ և զարդարանք որոնելով, յուր հոգու բոլոր կարողությունքը յարելով, որ գտանն և տեսանն հրաշալի, ազգու, և այլ սոցա նման ուղեղ գրգռող բաներ. սառնասիրտ է մնում դեպի գործի գըլխավոր արժանավորությունը, որ ճշմարտապես ասելով, շատ անգամ հայտնվում է մարդկեղեն աշխարհի մեջ պարկեշտ կերպարանքով և այս պատճառով ևս չէ ընկնում ընթերցողների ուշադրության տակ։

Այսպիսի դիպվածներում է ահա կրիտիկայի հանդեսը, այստեղ նրանում է նա յուր մեծ վաստկության մեջ. նա ցույց է տալիս բացերև կերպով այն արժանավորությունքը պարկեշտ հագուստի տակ, որ անտես էին մնացած ընթերցողներից, և ցույց տալով այս արժանավորությունքը, գարթուցանում է ընթերցողների հոգին, գրգռում է և ջերմացնում է նոցա սիրտը դեպի այդ գործի ընդունելությունը. երկրորդ, արժանապես գնահատելով այդ գործը, բարոյապես սրբում է աշխատողի ճակատի քրտինքը և քաջալերություն է տալիս նորան հառաջ խաղալ այդ ասպարիզի մեջ։

Սույնպես բարեմտարար մատնացույց առնելով աշխատության մեջ գտանված պակասությունքը կամ անհիմն կարծիքները, լինում է զգուշացուցիչ առաջնորդ հասարակության համար և նույն ժամանակին առիթ է տալիս հեղինակին ուղղելու և կատարելություն տալու յուր գործին, որով անտարակույս օգտակար է լինում և՛ հասարակությանը և՛ հեղինակին։

Առողջ բանականությունը ցանկանալով մարդկային ազգի օրեօր ավելի հառաջադիմության, խորհրդով ցույց է տալիս ներությունները մի աշխատության. քավ լիցի նորան, պախարակելու համար միայն հանդես հանել մի հեղինակի պակասությունք. այդ կլիներ մի չար, սևահոգի մարդու գործ և անարժան էր ասվելու կրիտիկա, որ մի սուրբ և զգուշալի պաշտոնակատարություն է, ճշմարտությունը գիտության մեջ հառաջ տանելու համար։

Խոսելով ընդհանրապես կրիտիկայի վերաբ, այս ևս պիտի ասել, թե նա մի չափ է, մի նշանացույց է, մի այնպիսի կշիռ, որով իսկ և իսկ հասկացվում է որևիցե ազգի լուսավորության աստիճանը, ուրևմն յուրաքանչյուր ազգի կրիտիկա հայտնում է մեզ նույն ազգի տեսության և հայացքի պարզությունը կամ պղտորությունը։ Եվ այժմյան լուսավորյալ ազգերի մեջ այնքան ծաղկած է կրիտիկան, որ համարձակ կարելի է ասել, թե այդ բանը գարձած է մի մեծ ճյուղ մատենագրության և այն, շատ օգտակար ճյուղ։

Քանի՞ քանի ճշմարտություններ հանդես է բերում կրիտիկան. որքա՜ն անտես արած իրողություններ, որ մի հեղինակ խորհրդով կամ պատահմամբ զանց էր արել. և արդյոք այդպիսի իրողությունների հանդես գալը կրիտիկայի ձևերով ազդեցություն ունե՞ր, կամ թե ո՞րքան ազդեցություն ուներ նույնիսկ քննության տակ ընկած առարկայի հառաջադիմության վերաբ, այդ ապացուցանում է ամենօրյա փորձը։

Շատ անգամ մի այսպիսի իրողություն բոլորովին փոխում է բանի ընթացքը, այլ ուղղություն է տալիս գործին, որով, որպես մի կախարդական ուժով, մերկացնում է գործի շապիկը և տալիս է նորան այլ կերպարանք, երբեմն այնքան տարբեր առաջին կերպարանքից, որ հեղինակը, գործի արարիչը, ստեղծողը դժվարանում է ճանաչել յուր գործը, յուր մտքի և աշխատության զավակը...:

Մի ազգի մատենագրության մեջ երևում է նորա հոգին, նորա հայացքը, նորա ընկերական կյանքը, բայց կրիտիկայի մեջ երևում է այս բոլորի չափը և աստիճանը, սորա գործն է սահմանել և գնահատել նորանց:

Այն ազգը, որ չունի կրիտիկա, չունի և մատենագրություն. պատճառ, մատենագրություն առանց կրիտիկայի, միևնույն է, ինչպես մարմին առանց հոգու. իսկ այն ազգը, որ չունի մատենագրություն, ասել է թե չունի և բանականություն, որովհետև մատենագրությունը այլ բան չէ, եթե ո՛չ բանականության արձանագրություն: Մատենագրությունը մի հիշատակարան է, մի պահարան, ուր ամփոփվում են մարդկային բանականության վաստակը, մարդկային հոգու բղխվածքը. և կարելի՞ է իմայլ տալ, որ մի ազգ մատենագրություն չունենալով, համարձակվի մտածել թե ինքը ևս լուսավոր ազգերի կարգումն էր աշխարհի երեսին, կամ թե նորա գոյությունը մի խորհուրդ ուներ, համեմատելով ընդհանուր մարդկության հետ:

Մեր սիրտը արյունով է լցվում այս ճշմարտությունքը ասելու ժամանակ, որովհետև մի չար բախտով այս րոպեիս այնտեղ ենք հասած, որ չենք կարող առանց մեր խղճմտանքը արատավորելու ասել, թե մեր ազգը ունի մատենագրություն: Ի՞նչպես թե չունի մատենագրություն. վիճենացին այնտեղ, յուր կարծեցյալ իրավասությունը հայերի վերա հաստատելու համար, բարձրաձայն գոռում է, «չվախենանք, չվախենանք, աչքերս մատենագրության վերա դարձնելու», որպես թե կար մատենագրություն և այն շատ ծաղկած, մխիթարյանց շնորհքով*:

Այդ վիճենացու քարոզած մատենագրությունը դանակով կտրած բաժանած է ժողովրդից. դա ազգի հոգու բղխվածքը չէ, այլ մի դիմակավորված անձնավորություն, իսկ այն մատենագրությունը, որ անբաժանելի կապված չէ մի ազգի հոգու հետ, այն մատենագրությունը, որի մեջ իրրև հայելու մեջ չէ երևում ազգի կյանքը, նորա և ամենանուրբ գծագրությունքը, այդպիսի մի մատենագրություն, թո՛ղ ներեն մեզ այսպես ասել ճշմարտությունը, նման է ճենվիթների կրոնավորությանը... այդպիսի մատենագրությունը այնքան դաստիարակիչ կլինի ազգին, որքան մի խորթ մայր օտարի զավակներին:

---

* Հյուսիսափայլի հետևյալ համարների մեջ կհրատարակենք մեր հայացքը մխիթարյանց վերա, կքննենք նոցա գործունեությունը և օտար շարժառիթքը. հետո ցույց կտանք այդ միաբանության հարաբերությունը դեպի մեր ազգը:

Արդյոք մեր կողմից հանցանք չէ՞ր այսպես ձայն տալ մեր հին մատենագրության վերա. այս խնդիրը վճռելու համար կրկնում ենք սորանից հառաջ ասածներս, թե մատենագրությունը բանակաոնության պահարանն է. եթե հայոց ազգի անդամքը յուրյանց բանակաոնության բղխվածքը կարող են մատնավորել միմյանց այն լեզվով, որով հառաջ է գնացել մինչև այժմ մեր արևելյական մատենագրությունը, ապա մենք դատապարտության արժանի ենք. իսկ եթե դորա հակառակ, ժողովրդին անմոռանալի է այդ պահարանը, եթե նա չունի բանալիք այդ փակած պահարանի համար և չէ կարող հասկանալ թե ի՞նչպես էր յուրյանից հառաջ ազգի բանակաոնությունը, եթե նա մի հոգևոր շինություն չէ կարող առանալ նորանից, ի՞նչ հանցանք է ասել, թե մատենագրություններ դանակով կտրած բաժանած է ժողովրդի կյանքից, ուրեմն ի՞նչ հանցանք է ասել, թե ժողովուրդը չունի մատենագրություն, որի մեջ երևեր նորա կյանքը, նորա երևան և ամենանուրբ գծագրությունքը. ի՞նչ հանցանք է ձայն տալ մեր հեղինակներին, թե պիտու էր հրաժարվելով հնախոս հայկարանի ունայն փառասիրություններից, աշխատել կենդանի ժողովրդի կենդանի բարբառը մշակելու, որով անտարակույս հառաջ կերթար մեր ազգի յուսավորությունը, և թե վերջ ի վերջո պիտու էր հասկանալ, թե մատենագիր հեղինակը գործ ունի ոչ թե մեռած գնացածների հետ, այլ այժմյան կենդանի ազգի հետ, որի կյանքի պայմանները լինելով ամենևին այլայլված ու փոփոխված, ուրեմն և դորա հայտարար ձևերը, որոնց միջը և առավել գլխավորը լեզուն է, որ պիտի հարմարվի կյանքի պահանջության:

Ամեն մարդ գիտե, որ Լուդովիկոս տասն և չորսերորդի օրերում գործածական դրնատները և հագուստները այժմ ոչ ոք չէ կրում, քանի որում հնացած ու անպատշաճ էր երևում. ի՛նչ ենք ասում Լուդովիկոս տասն և չորսերորդի օրերում. տարուց տարի նորածևություն հարկադրում է մեզ բաց ձգել այն դգեստը, որ մի, երկու տարի հառաջ հագած էինք, և պատրաստել տալ մեր համար այնպիսի դգեստ, որ առհասարակ կրում էին մեր ժամանակակիցքը. եթե նյութական դգեստը այսպես, ապա ի՞նչ զարմանք, որ մտքի դգեստը, որ լեզուն է, այդքան դարավոր ժամանակների մեջ պիտու է փոփոխված լինի. լեզուն ենք ասում, որ մի կենդանի, հասանուստ բան լինելով, համարյա թե ամենայն րոպե փոփոխության և նորոգության տակ է:

Մեր խոշմտանքը մարուր է. և մեր հետևելով մեր խոշի ու բանականության առողջ բնությունին, պարտականություն ենք համարում մեր վերա հրապարակով քարոզել, թե նոր ահա բացվում է կենդանի ժողովրդի կենդանի բարբառի արշալույսը:

Այժմ ծանոթացնենք մեր ազգը գերապատիվ Նազարյանցի նոր հայտնության հանգամանի հետ, որի առաջին հատորը, ինչպես վերևումը ասացինք, բավական վաղուց արդեն դուրս եկած լինելով, երկրորդը ևս

այս օրներում դուրս կգա, մեր ժողովրդական ազգասիրին, բայց հարատարած և բուն մատենագրությունը ճոխացնելու համար։

Առաջին հատորը, որի վերա է այժմ մեր խոսքը, ազգի փորը ի շահ դրագետ բազմության և զարդացած մանուկների համար, է մի ընտիր, պատվական գիրք ընթերցանության։ Նորա միջի հոդվածքը բազմօրինակ և զանազան նյութերի վերա լինելով, տարակույս չկա, որ ամենայն ընթերցող կարող էր քաղել նոցանից օգտավետ ուսումն և քաղցր, ազնիվ զբաստանք։ Այդ խորհրդով տպած եվրոպական գրքերից ոչ միևնի մեջ չեն գտանվում այդպես մի տեղ ամփոփված այդքան ընտիր և գեղեցիկ նյութեր ընթերցանության համար, որքան այդ գրքի մեջ. պատճառ, աշխատասեր և բազմահմուտ հեղինակը ամենայն տեսակ եվրոպական ծաղիկներից, ճաշակագետ մեղվի նման, հավաքել է յուր գրքի մեջ առավել ընտիր, առավել պատվական հյութերը։

Ով հայոց մանուկը, կամ ինչ ասել հայոց ազգը, ի՞նչ գրքի մեջ կարող էր տեսանել մի այդպիսի տեսակ տեսակ վայելչքներով ճոխացած զարդարած հոգևոր տեղան. քանի՞ քանի իմաստունների հանճարեղ, զբաղավոր, քաջասիրտ ասացվածք և խոսք. համեմատելի զվարճություն, սրամիտ, ազատաբեն և իմաստալից խոսվածք. քանի՞ զվարճալի զրույցներ, հիշատակի արժանի փոքրիկ պատմություն, բարք ու վարք պատկերացնող կարճ պատմություն, ապա զանազան խորհրդավոր բանահյուսություն, որ պարունակում էին յուրյանց մեջ ամենայն տեսակ իմաստալից և գրավիչ և դաստիարակիչ նյութեր, նմանախոսական խրատներ, զգուշացուցիչ և ահավոր այլաբանական ակնարկություններ, զորօրինակ բնության խրատը, սերմի հատիկները, կրկոդիլոսը, բրամինների ձորը, անապատ կղզին, կրկնապատիկ երդումը յուր անձը ուղղելու մասին, իշվառական մարդու տարեմուտը և այլն և այլն։

Սոցանով հերիքացել չէ հեղինակը. նա հանձն է առել հայոց խնկացի մանուկներին և ազգին պատմել մատաղության արժանի դիտելիքը, որ պատկանում էին արդեն ուսումնական հանդեսին, այսինքն, աշխարհի կազմածի, երկրի բնըրների, շնչական, տնկական, և հանքական դասակարգերի մասին. այլև հիշյալ գրքի մեջ գտանում ենք մեք բավական երկար ու պարունակ թվին ոճով գրած հառներ այն բանի վերա, թե ինչ է մարդը, նմին քննում ենք նորա մարմնի, կազմածը, փորը ի շահս հոգեբանական տեղեկության. վերջապես մի բավական մանրամասն հառ բնության և նորա մեջ եղած երևույթների վերա. հետո բարոյական առածք, ակզբնական հիմունք, բարոյական խրատք և նկատողություն։

Այդ մեծ աշխատության և բանագետ գործակատարության վաստակը վերջավորվում է երկու գեղեցիկ հառով, որոնց միևը է Սոկրատեսի վարքը և մյուսը Քրիստափոր Կոլումբոս, կամ հայտնագործության Ամերիկայի. հառներ, որ գրած էին բավական վերին և ուսումնական ոճով. և ո՞ր փորը ի շահս հասկացող ու զգացող հայը կարող էր առանց հո-

գիանալու և չերմանալու և սիրտը շարժելու կարդալ Ամերիկայի հայտնագործության նախերգանքը և վերջարանը։

Գիտենք, Եվրոպայի կրիտիկոսքը սովորություն ունին մի գործի արժանավորության ապացույցներով հաստատելու համար, գանազան հատվածներ դուրս գրել գործից և դնել կրիտիկայի մեջ, բայց մենք հերիքանում ենք ասելով, Թող բանիմաց հայերը ձեռք առնուն գերապատիվ Նազարյանցի գիրքը, և խոսքն համաձայնելով հաստատելու են մեր փոքր ի շատե ասածները։

Այժմ հայոց մանուկը Ռուսաստանի մեջ կարող է առնուլ յուր ձեռքը մի գիրք և հոգևոգես զվարճանալ. և գերապատիվ հեղինակը, շատ հաջողությամբ հատած լինելով յուր նպատակին, կարո՞ղ է մխիթարվիլ, որ յուր աշխատությունը, յուր տարիներով շարչարանքի վաստակը դարձած է այս րոպեիս մի հավիտենական գեղեցիկ արձան, որով պիտու է անմահանա նորա միշտ գեղեցիկ անունը։

Լեզուն, որով գրված է այդ գիրքը առավել ճոխ է, առավել հարուստ և առավել մոտ կենդանի ժողովրդի բարբառին, քան թե հեղինակի այլ գրվածքը մինչև այսօր. և այս լեզվի օրըստօրե ավելի մեծ քայլերովը առաջ գնալը բացահայտ է արդեն, եթե համեմատենք միմյանց հետ նույն մատենագրի «Առաջին Հոգևոգեն կերակուր Հայոց երեխաների համար», «Վարդապետարանը Կրոնի»[4], և այժմյան Նոր Հայախոսության հանդեսը։ Այո՛, ցանկանում ենք առավել ժողովրդացած տեսանել նորա լեզուն. պատճառ, տեղ տեղ ավելի մոտ է հին լեզվին, քան թե ժողովրդական բարբառին։ Բայց այստեղ բառերը չեն միայն դժվարացուցիչքը, այլև մտքերը և հեղինակի անձնավորությունը. չէ կարելի պահանջել, որ ամենայն մարդ մի կերպ խոսի, կամ թե վերին կամ գեղեցիկ մտքեր բացատարվին փաժումուժ ամբոխի անկապ ու կցկտուր լեզվի ձևերովը։

Ամենայն որևիցե լուսավորյալ ազգերի մեջ, չնայելով, որ մատենագրությունը ժողովրդական է, այնուամենայնիվ հեղինակի գրածը, ավելի բարձր է, ավելի գերազանց է, քան թե այն լեզուն, որ ժողովուրդը խոսում էր հասարակ կենցաղության մեջ։

Չէ. լինինք խելացի մեր պահանջողություններուն մեջ, չպահանջենք հեղինակիցը մի անկարելի բան. Թող որ նա այնքան մեծ աշխատություն հանձն առած ու գլուխ բերած, այնքան հատակ և գեղեցիկ ոճով խոսելով յուր գրքի մեջ, այնուամենայնիվ, այնքան համեստ է և բարեհոգի, որ չկամի երբեք համարել յուր խոսելու ոճը ամեն տեղ դուռ ոսկի, այլ հոգով շատ պատրաստ էր ուսանել յուրյանից լավ խոսողներից[5], միայն թե օր մի հառաջ, եթե կան, հանդես գալանին այդ ավելի գեղեցիկ հայախոսքը, մեր ամեններիս մխիթարության ու դաստիարակության համար։

Առհասարակ մեծ շնորհակալության արժանի բան է, որ գերապատիվ հեղինակը, յուր բազմապարունակ գրքի մեջ, այդքան հանդես է բացել ժողովրդական լեզվին, խակ թե երբեմն ո՛չ հայաբար, այլ եվրոպեա-

բար բացատրել է յուր միտքը, դորա պատճառը կարծում ենք այն, որ Հայոց ազգի ժողովրդական լեզուն մի անմշակ և անմարդացած լեզու լինելով, չունի դեռևս այն բոլոր ձևերը, այն լոգիկաբար կապակից պարբերությունքը, որոնցով հարուստատորեն կարելի էր ամենայն եվրոպական դաղափար թափել հայերենի մեջ։

Այո՛, կարծում ենք, և այն հաստատապես, որ մեր գարու հայ մարդը շատ և շատ բաների մասին գաղափարք չունենալով յուր մեջ, իհարկե չունի և դոցա հայոտարար բառերը և ձևերը. և այդ պատճառով երբեմն նա լսում է անծանոթ գաղափարներ հայոց աշխարհաբար լեզվով և եվրոպական լոգիկայի ազդեցության տակ լուսաբանած, սկզբումը իհարկե պիտու է նորան օտար թվին դորա, որովհետև հայը ո՛չ գաղափարներին է տեղյակ և ո՛չ ևս ձևերին, այսինքն դեռևս չգիտե նա խոսել, ուրեմն և չգիտե մտածել։ Բայց այդ բանի մեջ մեղավոր է միայն ազգի անկրթությունը, և ո՛չ հեղինակը, որ արդարև ունենալով յուր մեջ գաղափարներ, ունի դոցա համար և ձևեր, առած նույնիսկ ազգային լեզվի աղբյուրից և ո՛չ թուրքից ու թաթարից, ինչպես ըստ մեծի մասին ժողովրդի բարբառն է։

Մեր հույսը հաստա՛տ է, որ այսպիսի հեղինակի գրչի տակ մեր ժողովրդական լեզուն կստանա առավել բազաքացություն և օրըստօրե կմոտենա յուր նպատակին— գեղեցիկ և ընտիր գործիք դառնալու ժողովրդի գաստիարակության համար։

Խոբված չե՛նք, որ ազգը սիրով կընդունե այսպիսի մի գիրք, որ ընծայել է հեղինակը յուր ազգի զավակների գաստիարակությանը, որ և պիտու է շատ ձեռնտու լիներ դորան։

Մենք մեր կողմից, որպես ազգի օգտին ճշմարտապես ցանկացող, անպատմելի ուրախ ենք, որ ժողովրդական լեզուն ձեռք ու ոտք է ստացել և մեր նոր մատենագրության աղբատին գանձարանի մեջ երևում է մտավորական և կենսական շարժողություն։

Մեր առ ի սրտե երախտագիտական շնորհակալությունը թող հաճի ընդունել գերապատիվ հեղինակը, որին հոգով շատ ցանկանում ենք կարողություն և հաջողություն ապագա աշխատություններնի մեջ։

Քաղդր պարտականություն կհամարինք մեզ Հյուսիսափայլի գալոց ամսատետրակներից մինի մեջ խոսել այս պատվական աշխատության երկրորդ ավելի ճոխ հատորի վերա, որ այս օրերումը դուրս է եկած տպագրական մամուլի տակից[6]։

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Մինչդեռ մեր ազգային օրագիրները և լրագիրները, ամենևին ուշ չդարձուցանելով այս խնդրի վերա, մի՛նչ էր յուրյանց խորհուրդը մատենագրական ասպարիզում, լցուցանում են էջերը այնպիսի բաներով, որ կապակցություն չունեին մեր ազգի ներկա հարկավորություններին և օգուտների հետ. մինչդեռ այս լրագիրքը և օրագիրքը չէին մոտենում այն խնդիրներին, որոնց բարձրանալու հետ կապակից էր ազգի կարճատես անգամների պատվասիրության վշտանալը, յուր բոլոր ազիատություններից հառաջացած հետևանքներով, նախախնամության կամքն էր, որ հայկական անմխիթար անապատի մեջ Հյուսիսափայլը երևներ որպես ձայն բարբառո... Նախախնամության կամքն էր, որ Հյուսիսափայլը կրե այդ ներկա իրողություններին մեջ ծանր, բայց փիլիսոփայական աչքով նայելով քաղցր լուծը: Այո՛ նախախնամության կամքն էր, որ Հյուսիսափայլի հառաջադիմները տեսանելի կացուցանեին շատ բաներ, որոնց վերա հիմնավորապես խոսելը այնքան շատ ձեռնտու չէր օրագիր կամ լրագիր հրատարակող պարոններին, որովհետև ազգի պակասամիտ անդամքը, ամենևին անխելարար վշտանալով, կարող էին հետի մնալ մի այդպիսի մատենագրական գործի մասնակից լինելուց:

Ամենայն մարդ, որ զուրկ էր կատարյալ լուսավորություններից, հետանում է և փախչում է այն խոսակցություններից, որ դիպչում էր այդ մարդու պակասություններին. թեպետև մի մասնով զգում է այդ մարդը յուր պակասությունքը, բայց որպես խոստովանել այդ պակասությունքը, նույնպես մի ուրիշի դորա վերա խոսելը, ավելի ծանր է այդ մարդու համար, քան թե բուն այդ պակասություններին յուր վերա զգալը: Կան մարդիկ, որ անձնախաբեության համար, որպեսզի մի փորը մխիթարվին, շատ անգամ անձնատուր են լինում ինքնամոռացության, և մոլավորապես դուրս գալով, հետանալով այն շրջապատից, որի մեջ իրողապես գտանվում էին, աշխատում են զվարճանալ գաղափարական կատարելություններով: Այդպիսի մարդիկ շատ անգամ ցանկանում են, որ ուրիշները, կամ գիտությամբ և կամ անգիտությամբ զովեն նորանց, առանց ձեռնամերձ լինե-

յու նոցա պահպանութիւններին. այդպիսի մարդիկը ուրիշի առաջ գովնատները ծառայեցնում են իւրեանց համար որպես անձնախաբեութեան գըլխաւոր հաստատութիւն: Ահա այս դրութեան մէջ է մեր ազգը: Նա ընկել է ժամանակի հոսանքի մէջ և ժամանակը քշում է նորան, բայց պահաս լինելով նորան անձնզգայութեան դիտութիւնը, ամենևին մեքենաբար, ամենևին կրաւորականաբար անձնատուր լինելով ինքնամոռացութեան, հառաջ է գնում, որ բաղմի ժամանակի հավիտենական անդունդքի մէջ: Տխուր և արտասուելի տեսարան այն մարդու համար, որ աչք ունէր տեսանելու, բայց ազգի՞ վերա, Նորա այս ընդհանուր ավերանքի և ապազգամահութի՞ն վերա իջուցանես արտասուքի հեղեղներ, թե տեսանելով մէյոս կողմից ազատվելի պես օրսկուրանտների սև խումբը, որ նախապատիվ համարելով իւրեանց անձնական օգուտը և ազգի հետ այնպես վարվելով, որպես կվարվեր մի կեղծավոր և անհաւատացած դրացի, որ ազգի հետ ոչինչ ունէր հաստատակաց, փակում էին ազգի լուսավորութեան ճանապարհը, ուրտես ոտքա մշվառ և եղկելի անձը: Ա՛հ, դառն բաներ: Այդ խեղճ ողորմելիքը, իւրեանց բոլոր զորութիւնը գործ գնելով, ազգի գարավոր անձնախաբեութեան շինվածքը հաստատ պահելու համար, ինքեանք ևս կամա ակամա ընկնում են մի անձնախաբեութեան մէջ,— մեր նպատակն է ազգին ծառայել, իսկ ազգը, այսպես կամի. մենք կատարելով ազգի կամքը հասած էինք մեր նպատակին, ծառայած էինք ազգին, ուրեմն իրավունք ևս ունէինք գեռ վարձ և երախտագիտութիւն պահանջելու մեր ազգից:

Շատ խնդաք, պ. օրսկուրանտներ, փառավորվիք, այդ ի՛նչ գեղեցիկ և ազնիվ մտածութիւններ են, որ ունիք ձեր խելապատակի մէջ, բայց նկեք ճշմարիտը խոստովանեցեք. ձեր սեփակա՞ն խելքի վաստակ են այդ մտածութիւնքը, թե ուրիշը նստեցուցել է ձեր մէջ... ինչպես ևս եղած լինեը, նայեցեք զգուշացեք, կեսը ուրիշի չտաք, դա մի անօրինակ դանձ է. bravissimo!

Օրսկուրանտների այսպիսի ողորմելի և ինվառ փիլիսոփայութիւնը երևում է նոցա ամենօրյա ընթացքից: Եվ նորա չեն խաբված իւրեանց հաշվում, ինչ որ վերաբերում է նոցա անձնական օգտին, բայց այլապես էր ուրիշ մարդկի փիլիսոփայութիւնը, որ երևում է Հյուսիսափայլի մէջ. նորա բարձրացնում են ճշմարտութեան դրոշակը և մատնելով մխիթարվոր քնած մարդկի մէջ, անխնա զարթնեցնում են նորանց մի վնասակար և թուլացուցիչ քնից, հրավիրելով գնալի արթնութիւն, հակոդութիւն և գործունեութիւն: Այս մարդիկը կորած համարում են այն բոլոնները, որ չէին ծառայել մեր ազգին մի ճշմարտութիւն հայտնագործելով կամ նորա իրավունքը հաստատելով հայկական մարդկութեան մէջ: Հյուսիսափայլը — համարձակ Հյուսիսափայլը, անմասն անոտի երկյուղից, անմասն կեղծավորութիւններից, երևակայութիւններից, անբաժին գժտոխային եղվիտատական հոգուց, Հյուսիսափայլը ամենայն հարազատութեամբ ապատավորելով աստվածային ճշմարտութեանը, յուր գործակատարների հաս-

առաուն ձևորով ճեղքում է, պատառում է մի հազար կարկատաններով ծանձրացուցած վառագույր, որի տակ ամենայն խնամքով թաքուցած էին խավարապաշտները, մեր ազգի բարոյական խոցերը և վերքերը։ Հյուսիսափայլը կենտրոնացնելով յուր մեջ մի ամենազան գործունեություն, մեր ազգի բարոյական արատները դատապարտելու և ջնջելու, անուտրակուլա պիտի հանդիսեր նեղումիններին, որովհետև ազգի մի քանի խելակորույս անդամքը, չկարողանալով դանազանել իրարից ազգը և նորա պակասությունքը կարծում էին, թե միևնույն չափով արժան էր պաշտպանել, որպես ազգը նույնպես և նորա պակասությունքը։ Բայց այդ նեղությունքը, այդ որոգայթները և սև սև բամբասանքները ի՞նչ կարող են ներգործել ընդդեմ մի ընկերության, որ կազմված է ճշմարտությամբ, որի հոգին է ճշմարտություն, որի խորհուրդը և նպատակը է ճշմարտություն, որի պարծանքը է Քրիստոսի խաչը։

Հյուսիսափայլը արդեն բարձրացուցել է, և դեռևս պիտի բարձրացնե խնդիրներ, առանց նայելու շրջակայքում գտանվածո առօրյա արգելափակիններին. խնդիրներ, որոնց խորհուրդը մեծ էր մեր ազգի հառաջադիմության համար։ Առանց այսպիսի խնդիրների մոտենալու օրագիրը կյանք չունի, այս կենդանի և շարժուն խնդիրները հոգի են մի օրագիր ասացյալ մատենագրական գործունեության։ Եվ օրագրի դործակատարքը, այն ժամանակ միայն ազատ են առողջ բանականության դատապարտություններից և արժանի բարոյական վարձատրության, երբ ամենայն բան զոհ բերելով ճշմարտության, ընթացք էին տալիս այս խնդիրներին։ Ներկա ժամանակումս, մանավանդ այս դարու վերջին կեսի հատկական բնավորությունն է բարձրացնել այդպիսի խնդիրներ մարդկանն աշխարհի ամենամում, և վճռելով նորանց, բարվոքել մարդկության դրությունը աշխարհի երեսին. այս ճանապարհով հառաջանում են ավելի մեծ հաղթություններ, քան թե պատերազմի դաշտումը, և խորհրդածության դահլիճները առավել լավ ապարեզ են մարդկային բանականության համար, քան թե արյունոտ դաշտերը։ Ահա մի նոր կերակուր խավարապաշտների բամբասանքին... դարձյալ պիտի պար գա Հերոդիադան...

Մի ազգ, որ խորտակվել էր ժամանակի հարվածի տակ, չէ երևում այլևս մարդկության մեջ, որպես մի ամբողջ, որպես մի գերդաստան, որի անդամքը կապված լինելով միմյանց հետ ճգնելին ընդհանուրի օգտի համար։ Մրրիկը, որ խլել էր մի այդպիսի գերդաստան ընդհանուր մարդկության քաղաքական շրջանից, ցրվում է այդ գերդաստանի անդամքը և հեռացնում է, բաժանում է միմյանցից։ Այնուհետև այդ անդամների համար իրական աշխարհում չկա միավորություն, նորա չեն կազմում այլևս մի գերդաստան, որի անդամքը ծառայեին մի ընդհանուր և հաստատակաց դաղափարի, այդ բոլորը դառնում է մի վերացականություն. անուն, առանց իրի։ Անգույն բախտը կամ ավելի արդարությամբ խոսելով, մեր ազգի մեղքը հասուցել է մեր ազգը այս ցավալի վիճակին։ Մեր ազգի ան-

դամբը, ամեններյան համարում են յուրյանց անձը մասնավոր, ազգը դարձել է մի վերացականություն. և այդ է պատճառը, որ ազգի հառաջադիմության սայլը ընկած մնում է ճանապարհի վերա, որովհետև ամեններն մարդ, մասնավոր համարելով յուրյան, սիրտ չունի մտահոգել և ձգել տանել սայլը։ Աշխարհի երեսին վերացական ազգ չկա, եթե կա ազգ, ուրեմն իրականապես, ապա ըե ո՛չ ամեններին չկա։ Ի՞նչ ասել է վերացական ազգ. ես, դու, նա, մյուսը անվանում ենք մեզ մասնավոր, առանց մտածելու թե ո՛վ է ապա ազգը, և եթե մի բան պատահի, ազգի ամեն մի անդամը ասում է «Ինչ ազգը հոգս առնե», այս ասելով ինքը յուր անձը որոշում է, հանում է միջից և համարում է մասնավոր. եթե մի ազգի բոլոր անդամքը այսպիսի մտածությամբ հրաժարվում են, ապա ո՞վքեր են, որ կազմում էին ազգը. ոչ ոք. ահա մի վերացական ազգ և մենք ենք այդ ազգը։ Բայց որովհետև ասացինք, թե վերացական ազգ չկա, ապա ուրեմն մենք ազգ չունինք։ Մինը կարող է մեզ ասել, «դու ի՛նչ հանդուգն մարդ ես, ի՞նչպես համարձակվում ես ասել, թե ազգ չկա, մինչդեռ աշխարհագիրքը մոտ իրր հինգ միլիոն համարում են հայոց ազգը»։— Մի՛ բարկանար սիրելիս, հանդարտ, հանդարտ, այդ հինգ միլիոնը ազգ չէ, այլ մասնավոր մարդիկ, և մինը այդ հինգ միլիոն կազմող մարդկերից դու ես, որ անվանում ես քեզ մասնավոր. և ինչպես դու որոշում ես, հանում ես քեզ և անվանվում ես մասնավոր, մնացած չորս միլիոն իննը հարյուր իննսուն իննը հազար իննը հարյուր իննսուն և ինքը նույնպես մի մի դուրս գալով որպես մասնավոր, մեջտեղումը թողնում է ոչինչ։ Ահա մեր ցավը, մեր խոցը, մեր վիշտը։

Ազգ ասացյալը է այն մեծ ուժը, այն կենդանի կապակցությունը մարդկերի, որ առանց նորան, կամ նորանից դուրս, մասնավոր մարդը կլիներ մի անօգուտ անձնասեր—ЭГОИСТ, իսկ բոլոր մարդկությունը մի անպատուղ վերացականություն։ Մի անձնավորության միմյանցից բաժանող նասկան սկզբունքը չափավորվում են ազգի կենդանի կապակցության վերին սկզբունքով, ուրիշ խոսքերով ասեմ, հասարակական մեծահոգի սկզբունքով։ Հասարակական կապակցության մեջ, չեն ոչնչանում անձնավորությունքը, այլ միայն հրաժարվում են յուրյանց մասնավորություններից, մի համաձայն ամրողջ կազմելու համար, բոլորի ցանկալի միավորությունը դուրս բերելնելու համար։ Անձնավորությունքը հնչում են հասարակության մեջ, ոչ որպես առանձին առանձին, այլ որպես նվագաշնակ, ամրողջ երաժշտության։ Ընկերությունը, մարդկության վերին բարոյականության պատկերը անկասկած կերպով հայտնվում է աշխարհի երեսին։ Քրիստոնեությունը սրբեց և յուսավորեց ընկերությունը, որ ազգերը մինչև այն ժամանակ կամ պղտոր կերպով ճանաչում էին կամ դուշակում էին միայն։ Եվ ընկերությունը դարձավ այնուհետև մի անհասանելի գաղափար, դևպի որը հավիտյանս հավիտենից մնում է հառաջ վազել։ Այդպեն հառաջադիմության մեծ քայլ էր մի ազգի համար, մեծ շնորհ էր, ասում ենք, եթե դրված էր մի այդպիսի գաղափար, և դևպի նա ձգտում էին շատ

մարդիկ։ Այն կապը, որ մասնավոր մարդերից կազմում է մի ամբողջ ազգ, է այս ձգտողությունը։ Ընկերական գաղափարի կատարելապես իրագործության անհնարավորությունը այս աշխարհի մեջ, երբեք չէ պիտո դադարեցնել ձգտող մարդերի գործունեությունը. ամենայն արգելարիի, ամենայն խափանարիու պատճառ պիտի ազգությո և շարժարիի լինի գործունեության — մի նոր զորության։ Չէ կարելի լինել կատարյալ քրիստոնյա, բայց մարդու պարտականությունն է միշտ վազել դեպի այդ դադափարը։ Ազգին անհրաժեշտ է ինքնուրույն գործակալություն, և ազգի բարոյական հաղթությունը կատարվում է ամբողջ ազգի ձեռքով։

Մի ուսարատի բան էր բաժանել ազգը գիտուն և տգետ բաժիններով։ Արդարև, սրանց տրվում է հասկացնելու զորություն, իսկ ուրիշներին ականջ դնելու և հասկանալու զորություն, բայց մարդիկ չէին, որ կարգադրում էին այսպես, այլ, նախախնամության։ Բացի սորանից, ազգի ականջ դնող բաժինը, մի սպիտակ թուղթ չէ, որ չգիտեր և չէր կարող դատել, թե ի՛նչ էին գրում յուր վերա։ Ականջ դնողը շատ բան տալիս է հասկացնողին, նա շատ անգամ ոգևորում է սորան։ Եվ խոսողը և լսողը կատարում են մի հասարակաց գործ, մինը — խելացի կերպով տալով, իսկ մյուսը — խելացի կերպով ընդունելով. նորանց կապում է մի հասարակաց գաղափար, որ գուրս գալով մինից մտնում է մյուսի մեջ և հավասարեցնում է բնական անհարթությունը. այս հարաբերությունը, բայց ավելի ճշտությամբ, կա հնղինակի և ընթերցողի մեջ։ Նախախնամության շնորհը չէ կարող տրվիլ մարդու ձեռքով լոկ և միայն, բայց ճշմարտությունը հասարակաց սեփականություն է. իսկ այն շնորհները նախախնամության, որ մի ժամանակ ծածկված էին սորա կամ նորա մեջ, կարող են երբեմն բացվիլ, հայտնագործվիլ։ Խելացի լսողը, երբ որ գարթնել էր նորա մեջ խելացի խոսելու շնորհը, դառնում է հասկացնող։ Այսպես, մարքերի անխափան փոխադարձից — տալուց և ընդունելուց կանգնում է ազգի ընդհանուր բարոյական հաղթությունը։ Նույնպես սխալ է միշտ այն կարծիքը, թե ազգն է միայն հարուստը կամ փառավոր կոչումն ունեցողը. պատճառ, հասարակ ժողովուրդը է մի ազգի հասարակական շինվածքի հիմքը։ Մասնավոր անձինք բարձրանալով նորա միջից, յուրյանց մասնավոր գործունեությամբ, մասնավոր գիտակցությամբ կարող են շատ կուզից ծառայել լուսավորության մեծ գործին և մարդկության հառաջադիմության, բայց այն ժամանակ միայն կարող են նորա մի բան հառաջացնել, երբ հարմատանան հասարակ ժողովրդի մեջ, երբ նորա անձնավորության և հասարակ ժողովրդի մեջ լինի մի անընդհատ և կենդանի կապակցություն, այլև միմյանց հասկանալ։

Հասարակաև ժողովուրդը ոչինչ առանձին հատկություն և անուն չունի, բացի մարդու և քրիստոնեի անունից։ Ո՛հ, ո՛րքան հարուստ է այս աղբյուրությունը և գտանվելով ցած աստիճանի վերա, ի՛նչպես բարձր կանգնած է նա։ Նա մարդ է և քրիստոնյա. ոչինչ ունի բացի Քրիստոսից,

բայց Քրիստոս ունենալով, ամենայն ինչ ունի։ Նա յուր վերա կրելով մարդու և քրիստոնեի անուն, արդեն գաղափար է ամբողջ մարդկային և քրիստոնեական ընկերության։ Եվ այն մարդիկը, որ պատահարար առաջացած էին աշխարհի երեսին փայլուն կոչումն, հարստության և առանձնաշնորհության, երբ նայում են այս յուրյանց հատկություններին վերա, ոչ որպես հպարտանալու շարժառիթի և ուրիշներից գերազանցության վերա, այլ որպես ժամանակի պահանջողության վերա, հառաջացած աշխարհի անկատարություններից, այն ժամանակ առուպագործում են, որ ինքյանք ևս նույն մարդն են և նույն քրիստոնյան, ամենևին անխտիր։

Ազգը պիտո է ունենա ազգություն, այդ ազգի անձնավորությունն է. ինչպես մարդը չէ կարող լինել առանց անձնավորության, նույնպես ազգը չէ կարող լինել առանց ազգության։ Եվ երբ պատահում է տեսանել մի մարդ առանց անձնավորության կամ ազգ առանց ազգության, այդ մի ողորմելի և ֆշվառ երևույթ է անօգուտ յուրյան և ուրիշներին։ Անձնավորությունը ոչ թե միայն խափան չէ, այլ դորա հակառակ, նա միայն հնար է տալիս ազատ և կատարելապես հասկանալ մյուս մարդը, ուրիշ անձնավորություններ։ Այսպես ևս մի ազգի սեփական ազգությունը, հնար է տալիս նորան հասկանալ ուրիշ ազգություններ. և ուրիշ ազգությունները հասկանալով և գնահատելով, չքանում է մի ազգության եսական, ֆանատիկոս և անմարդի բնավորությունը։ Որ տեղում չքանում է ազգությունը, այնտեղ չքանում է նյութապես կամ բարոյապես և ինքը ազգը։ Ազգությունը է մի կենդանի և ամբողջ զորություն, որ ունի յուր մեջ մի կյանքի պես անբռնելի բան. և հոգին, և հարստարտադեստական արարչությունը, և մարդկային բնությունը և մինչև անգամ տեղի (աշխարհի) բնությունը, մասնակից են այս զորությանը։ Կարելի է հակառակախոսել ազգության ընդդեմ, թե սահմանավորված է, թե նորա մեջ կարող են լինել մասնավորություններ, բայց այդպիսի դիպվածում մասնավորությունը է չարաչար գործադրություն։ Մի ազգություն մասնավորություններից և եսականություններից ազատվելու համար, չէ պիտո ջնջե յուր ազգությունը. դորա հակառակ, հարկավոր է խոստովանել ամենայն ազգություն։ Ոչ մի ազգություն իրավունք չունի կուլ տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազգություն, բայց այս բանը ամենայ կրկնվում է մարդկության պատմության մեջ։ Այստեղ է ահա մասնավորության չարաչար գործադրությունը, այս բանի մեջ է եսականության անսուրբ տարրը։ Արդարությունը պահանջում է խոստովանել ամենայն ազգություն, այո՛, ամենայն ազգություն, որովհետև նորա միավորություններից բազկանում է ընդհանուր մարդկության կազմվածքը։ Մի ազգ, որ կորուսանում է յուր ազգությունը, դուրս է ընկնում այն կազմվածքից որպես մի փտած անդամ, և հավիտենական կոկորդը անխնա կուլ է տալիս այդպիսի ազգություն։ Այս պատճառով մարդկային սրտի համար մի ավելի տխուր բան չկա, քան թե տեսանել, որ մի ազգություն ընկնում էր և կործանվում էր ծանր հանգամանքների հարստահարության տակ — մի այլ ազգության ճնշողություններից։ Բայց մի աննկարա-

գրելի վաստաքախտուիյուն, մի սարսափելի անսարան է, երե մի ազգի անդամք ինքեանք հրաժարվում են յուրեանց ազգութենից, և մասնավորութեան կորստական դրոշակի տակ, ընդհանուր մարդկային հարգ ու արժանավորութիւն անսանել համարում են մի մեծ, բայց օտար ազգի ազգութեան մեջ։ Ի՛նչ ողորմելի փիլիսոփայութիւն, ի՛նչ արտասվելի վարդապետութիւն։ Ո՛ր ամենայն ազգ պահպանե իւր ազգութեան կերպարանքը, ո՛ր ազատ և պայծառ ծաղկի ամենայն ազգութիւն մարդկեղեն աշխարհի մեջ. դրա միայն զորութիւն և հոգի են տալիս ազգերի ընդհանուր աշխատութեանը։

Բայց... մեր ազգի համար... ձայն բարբառոյ յանապատի — մեր ասածները. ի՛նչ է ազգը, ի՛նչ է ազգութիւնը, ո՛վ կամի լսել ու հասկանալ, ո՛վ կամի վեր բարձրացնել ցեխի միջից իւր մինչ իսպառ անարգված ազգը և ազգութիւնը. մասնավորութեան կորստական հոգին վաղուց ահա թագավորել է մեր ազգի անդամների վերա։ Եվ մի՞թե այդ հոգին չէ պատճառը, այդ դատապարտելի մասնավորութիւնը, որ մեր ազգը դուրս է ընկել մարդկութեան պատմագրքի տախտակներից. գո՛նե մենք այլ պատճառ չգիտենք։

«Մի՞թե մեր ազգը պատմական ազգ չէ»։— Այո՛, պատմական ազգ չէ ներկայումս, և չէ եղած երբևիցե։ Նորա քաղաքական կյանքը կցկտուր և տարրական, օտար դայիսոնների և օտար դրոշակների տակ. նորա կառավարութեան կերպը ամենևին նման է անքաղաքացի ազգերի կառավարութեան կերպին։ Ո՛հ, ախո՛ւր ճշմարտութիւն, ավելի լավ է և ախորժելի մի բաժակ լեղի խմել, քան թե հրապարակել և խոստովանել այս ճշմարտութիւնը, որովհետև դա մեր բոլորի դատակնիքն է։ Մենք կարճատես և կիսագրագետ մարդկերին թողնում ենք զվարճանալ և ցնծալ, մինչդեռ քրքրելով ազգային պատմութեան փլատակները, գտանում էին մի ո՛րևիցե նշխարված բեկոր. մեզ միայն պահում ենք ողբալ և մորմոքվիլ դոցա վերա և խրատ և խելք ուսանելով չարաբախտ անցածից, աշխատել, բարվոքել ներկան ապագայի լավութեան համար։ Մեր պատմութեան միջից ոչ մի բան չէ մխիթարում մեզ, որովհետև սովորած ենք հիմնավոր կերպով քննել որևիցե ազգի պատմական արժանավորութիւնը։ Բայց ինչևիցե, թե պատմութիւն էր, թե կցկտուր ավանդութիւնք էին, պատմական արժանավորութիւններից զրկված, արժան էր օր մի հառաջ այդ բոլորը դնել մեր ազգի առաջև, բայց ո՛չ հում և խակ, ինչպես մինչև այժմ կատարված է այդ գործողութիւնը, այլ, եփած կրիտիկայի կրակով։ Մենք մեր կողմից խոստանում ենք, երե ամենակալ տերը շատ չհամարե այս խոստումնները և ժամանակ տա մեզ, դնել մի օր մեր ազգի առաջև նորա հինգերորդ դարու հեղինակների գործերը, զրօրինակ, Խորենացին, Եղիշեն, Ղազարը և այլն և այլն — նոր, ժողովրդական կենդանի և հասկանալի լեզվով։

Մեր ազգի դեպի ազգութիւնը և լուսավորութիւնը ունեցած դարավոր սառնութիւնը սահմանելու համար անպետ է Թեոմյուսի ջերմաչա-

փը, որովհետև մեր ազգի սառնության աստիճանը ցույց տալուց հառաջ, ինքը ժխտակը կպատի փողովակի մեջ, չդիմանալով ցրտի ազդեցությանը։ Հայերը չկամին այս բանի վերա մտածել. նորանց գովում են խարեբա մարդիկ և նորա ինքնամոռացության մեջ քնում են խորը, լսելով օբսկուրանտների օրորոցի երգը։ Ոչինչ գործ չէ կատարվում առանց շարժողության. ինքը կյանքը երևում է անդադար շարժողության մեջ, բայց ասիացին չէ սիրում շարժողություն. նա երջանիկ է այն ժամանակ միայն, երբ անշարժ ընկած էր մահճի վերա։ Մեր ազգի մեջ գործ չկատարվելու պատճառը այն է, որ չկա միաբան և խելացի շարժողություն։ Մի մարդ, որի կերպարանքը այլանդակված էր, վախենում է նայել հայելու մեջ, որովհետև զարհուրում էր տեսանելով այդ այլանդակությունը. նա բարկանում է հայելու վերա, ինչո՞վ մեղավոր է հայելին։ Թող նա աշխատի յուր այլանդակությունը հալածել, այն ժամանակ հայելու միջից ևս կհալածվի այդ այլանդակության պատկերը։ Մեր հայերից ոմանք բարկանում են ճշմարտախոս մարդերի վերա — հայելու վերա. եղբա՛յր, դու քեզ նայիր, հայելին կցուցանե քո պատկերը ինչպես իսկությամբ կաս դու, դեղնցիկ թե ագեղ, ուրեմն աշխատի՛ր գեղեցկանալ։

Այս ասած բաներիս ընդդեմ, ազգի կողմից դուրս դրած կամ դնելու պատճառներից ոչ մինը չենք ընդունում, այլ այս է միայն ճշմարտությունը, որ մեր ազգի բարոյականության ոտքերը կավեղեն են։

Ազատ կամքը, որ աստված տվել է մարդուն, է սորա հատկացուցիչ բնավորությունը, որով բաժանվում է անշունչ բնություններից, այդ կամքը ահա՛ շինում է նորան մի բարոյական էակ։ Բնության համար չկա ոչ մի բարոյական խնդիր, բայց մարդու համար կա, և այդ հետևանք է նորա ազատ կամքին, որ կարող է լինել բարի և շար, բարձրացնել և կործանել։ Այստեղից է բղխում մարդկային հոգու անվախճան գործունեությունը, նորա մշտնջենական ձգտողությունը դեպի հառաջ, սորանից են հառաջանում այն լուսավոր և խավար կողմերը մարդկության և մարդու մեջ։ Մի մարդ, որքան ևս ցած կործանված լիներ, այնուամենայնիվ մի այդպիսի մարդու համար միշտ հնար կա բարձրանալու, միայն թե նորա ազատ կամքը դադարած չլիներ ներգործելուց։ Ողջից վատ է կամքի մեռանելը, քնելը և վհատելը կամ ամենևին չլինելը. այդպիսի դիպվածում մարդը կորուսանում է յուր խորհուրդը և արժանավորությունը։ Թող մեր ազգի անդամքը բարվոք գործ դնելով յուրյանց մասնավորությունը կամենային միայն, և ահա կենդանանալու էր ազգությունը։

Կյանքի բարոյական հաղորդությունը պատկանում է ո՛չ թե միայն մի մարդու, այլև ազգերին, և ամենայն մարդ, ամենայն ազգ կատարում են նորան ինքնուրույն կերպով (самостоятельно), այլապես ամենևին չեն կատարում։ Յուրաքանչյուրի ինքնուրույն ներգործությունը չէ ոչընչացնում փոխադարձ համաձայնության կարելությունը, բայց հայտնի է, որ այդ համաձայնությունը պիտի լինի ազատ և անկախ։ Ուր որ չկա հոգու ինքնուրույն ներգործություն, այնտեղ կա հոգու սպկություն և նմա-

նողական ձգտողություն (подражательность), այդպիսի տեղում չկա գործունեություն, այլ միայն անոտի ամբոխամունք (суетливость, фальшивая тревога).

Բարոյական գործը, պիտո է և բարոյական ճանապարհով կատարվի, առանց արտաքին հարկադրական զորության և ուժի օգնության. ոչինչ այնպես վնասակար չէ կարող լինել, որպես կոպիտ ուժի և զորության ներս մտանելը բարոյական խնդիրների մեջ։ Այնտեղ, ուր կոպիտ ուժը մտածում է ամրացնել մի ճշմարտություն, խորտակում է նորան, որովհետև կասկածելի է կացուցանում ճշմարտության անփոփոխական և նորին զորությունը, այնպես, որ ճշմարտության համար ավելի լավ է կոպիտ ուժը յուր թշնամի ունենալ, քան թե օգնական և գործակից։ Բարոյական ճշմարտությունը ունի մի ղեկը միայն, դա է սրտի ազատ վկայությունը—խոսքը, բանը։ Ահա հոգու միայնակ աուրը, և նա է մարդու դրշակը աշխարհի երեսին։ Խոսքը, մարդու միջնորդությամբ կտրվված ձայներից և և տոգորված գիտակցությամբ, հոգևորում է տեսանելի աշխարհը, մարմնավորում է անտեսանելի աշխարհը։ Այստեղ, այս խոսքի և բանականության սահմանի մեջ արժանապես կատարվում է, կամ մարդկության միարան ձգտողությունը, կամ պատերազմ մարդոց, այն դիպվածներում, երբ ճշմարտության որոնողքը վիճում էին և հակառակախոսում էին միմյանց հետ։

Վեճը և պատերազմը, դրա անհոգոպտելի անփոխանություններ են իրը յուրյան շինող մարդկության։ Մարդիկ որոնում են ճշմարտությունը, և որոնում են յուրաքանչյուրը առանձին առանձին։ Ոչ ամենայն հայացք միօրինակ պայծառ է. ոչ ամենայն աչք ուղղացուցած է դեպի մի կողմ, շատ կան և բարեխիղճ մոլորություններ, սուտ մեկնություններ և զանազան աղճատանք։ Նույնիսկ քրիստոնեության լույսը, նույնիսկ աստվածային ճշմարտությունը, երբեմն խառն և մոայլ ցոլանում են ախտերով ամբոխված ու պղտորված խելքի հասկացողության ամպերի վերա։ Այս բանից հառաջանում է մարդկության մեջ պատերազմ, բայց այս մտավորական պատերազմը, կրկնում ենք խի՛ստ շեշտելով, պիտի կատարվի սրտի ազատ վկայության սահմանում, խոսքի և բանականության սահմանում։ Ոչինչ արտաքին և կոպիտ զորություն հանդես չունի այս պատերազմի մեջ. կարող սուրերը երկաթ չեն, այլ խոսք. կշիռ ունի այստեղ ոչ թե փառավոր կոչումը կամ մի պատահական զորություն աշխարհի մեջ, այլ միտքը և փիլիսոփայությունը։ Բանագատություն հարկավոր չէ. ինկվիզիցիան անփոխանություն է պապականության։ Այս բոլորիս և մեր ազգի մեջ երևում է մի մտավորական պատերազմ, նույնպես միմյանց զարկվում են մտքեր։

Դուրս գալով դեպի հասարակաց խոսակցության ասպարեզ, մենք արդեն պարտականություն ենք հանձն առնում ասել մեր սրտի վկայությունը, հայտնի և ուղղակի, և աշխատել, որ նորա երևեին ամենակարելի կատարելությամբ և պարզությամբ։

Դեռևս մեր ազգի մեջ չէ գնահատվում խոսքի արժանավորությունը, և ամենապայ քայլափոխում տեսանում ենք այնպիսի վարեցողության օրինակներ, որ անվայել էին բանականության։ Մեր մեջ դեռ ամենքին չեն հասկանում, թե բարեխիղճ և արժի խորին վկայությունը, արդեն միայն այս հատկություններուն պատճառով միշտ արժանի է հարգության։ Երբ այս վկայությունը սխալ էր, այն ժամանակ պահանջում է նա բարեխիղճ հերքողություն, պահանջում է օրինավոր վնաս, բայց ոչ հարձակումներ, որ հատկանում էին յուրյանց անպատշաճ ձևերով, արժանապին և խոշոր կատակներով, որոնք շատ անգամ լցված են լինում զանազան աղճատանքներով և բամբասանքներով յուր հակառակորդի վերա։ Հալածանքը և ատելությունը կարող է միայն ծնուցանել տուռ, անբարեխիղճություն և ամենայն տեսակ վատ պահանջողություններ։ Ցանկանում ենք և ուխտելով խնդրում ենք աստուծուց, որ մեր հասարակական պատերազմը, որ կատարվում է խոսքի սահմանում, ամենայն տեղ բնդունի վայելուչ ձև, արժանի մարդկային մտքի բարոյական խորհրդին։ Մենք չենք հերքում կատակը, չենք հերքում մինչև անգամ ծաղրը, հեգնությունը, բայց այդ բոլորը կարող են լինել պատշաճի շրջանակի մեջ, իսկ գլխավորը, ամենայն տեղ պիտո է լինի բարեխղճություն. հակառակորդների կարծիքը չէ պիտո աղճատել։ Ուստ և սխալ կարծիք հերքել և դատապարտել, ուրը պարտականություն է ամեն մի բարոյական մարդու համար, բայց այդ ուստ կարծիքը, ավելի հեշտությամբ դատապարտության տակ ձգելու համար, աղճատել նորանց, մարդու գործ չէ։

Մեր ազգի մեջ այժմ կան հայացքներ, կան ուղղություններ, կան ուրնմն և դրոշակներ, կա պատերազմ։ Օտարոտի մի բան էր հերքել այս. նույնպես օտարոտի էր ցանկանալ մի տեսակ միավորություն հակառակող բաժիններուն։ Այդ վնասակար էր մեր ազգին։ Պատերազմը հետևանք է շարժողության, իսկ շարժողությունը կյանք է։ Երբ երկու հակառակող բաժինները, ամենևին ազատությամբ, համաձայնել էին յուրյանց կարծիքների մեջ, այն ժամանակ կհաշտվին և կմոռանան միմյանց. առանց կարծիքների հիմնավոր համաձայնության՝ ուստ է ամենայն հաշտություն և միավորություն. բնև լրագրների մեջ ևս հրատարակիր, թե բազավորել էր մեծ խաղաղություն...

Եվ հակառակող բաժինները, մոտավորության համար չէ պիտո զոհ բերեն յուրյանց սրտի վկայությունը, այդ կհառաջացնե մի բարեկրության խառնակություն և ցույց կտա երկու կողմի ևս թուլությունը, մի բարոյական անզգայության և մտավորական ծուլության օգտի համար։ Ո՛չ. Բո՛ղ յուրաքանչյուր կողմը առանց բռնադատական զոհաբերության, և առանց ամենայն բռնադատական համակրության գործ դնե յուր բոլոր զորությունը, յուր մտքերի բոլոր խորությունը, այդ ժամանակ միայն կարող է հայտնվիլ կատարյալ և վճռական հաղթությունը. պատերազմը այն ժամանակ կարող է հասանել յուր պայծառ և պտղավետ նպատակին։ Օրհնյա՜լ է պատերազմը. Բո՛ղ լինի նա հզոր, անխնա, ազնիվ և բարե-

խիղճ։ Նա, որ փախչում է ազնիվ պատերազմից, մարդ չէ բարոյապես, այլ մի ֆշվառ արարած կնամարդի բնավորությամբ։ Սուտ խաղաղասիրությունը, որի տակ, որպես գայլ ոչխարի զգեստով, թաքնված է անձնական օգուտ ու փառք, մենք մնծարում ենք եզվիտ պատվանունով։ Ճշմարտության բուն հետևանքը բաժինը է. պիտո է լինին հերձվածներ, որ ընտրվածքը երևին։ Եվ գինին մինչև չխմորվի և չպղտորվի, չէ պարզվում։ Մծոմբի ազդեցությամբ կտրված քաղցուն, որ չէր խմորվում ավելի, նույն պատիվը ունի գինիքի մեջ, ինչ պատիվ ներքինին մարդերի մեջ. ոչ ականջ ունի լսելու, ֆող լսե։

Լուսավորությունը — ահա՛ մարդու խորհուրդը։ Ինքը բառը լուսավորություն մեկնում է յուր միտքը։ Եթավարից դնպի լույս վերին ձգտողությունը սեփական է մարդկային բարոյական բնությանը, նա է անմահ հոգու ծարավը։ Ո՛վ կցանկանա տգիտության, ո՛վ կցանկանա խավարի.... որպես արեգակը ամենների համար է, նույնպես և լուսավորությունը բոլոր մարդերի համար։ Անհասկանալի է երկյուղը լուսավորություններից. այդ միևնույն է, ինչ որ երկյուղը լուսից։ Իսկ լուսից չէ վախենում ճշմարտությունը, միմիայն սուտը որոնում է խավար։ Նա է ֆույլ հավատացողը, որ մտածում է, ֆե հավատը ամուր է տգիտությամբ։ Անհատատ է այն սրտի վկայությունը, որ վախենում է հրապարակություններից, որ յուր համար նեցուկ և ապահովություն կարծում է գտանել, հետացնելով ընդդիմախոսությունքը։ Ճշմարտությունը ինքը լույս է. նա, որպես և արեգակը, լույս չէ պահանջում յուր համար։ Թո՛ղ միայն նորան ծածկող ու վարագուրող ամպերը ցրվին, փարատվին, և ահա ճշմարտության արևը կփայլի յուր բոլոր պայծառ ճառագայթներով։

Ի՛նչ ասել է լուսավորություն, ճիշտ խոսելով։ Լուսավորությունը չէ միայն ստանալ և սեփականել ուրիշներից գտած և հայտնագործած տեղեկությունքը և գիտությունքը։ Միթե կարելի՞ է լուսավոր ասել այն մարդուն, որ յուր գլուխը լցրել էր միմիայն տեղեկություններով։ Ո՛չ, այդ դեռևս փոքր բր. այդ դեռ լուսավորություն չէ։ Այդպիսի դիպվածում, մարդը նման է մի գրքերով լցած պահարանի, իսկ պահարանին ի՛նչ օգուտ, որ ունի յուր մեջ ուսումնական և ճշմարտությամբ ճոխ գրքանք, կարելի՞ է արդյոք այդ պահարանը լուսավոր անվանել։ Այսպես ահա, փոքր է լոկ և միայն ստանալը և սեփականելը դանազան գիտություններ և տեղեկություններ, որ հայտնագործել էին ուրիշները։ Հարկավոր է, որ այդ ստանալուց և սեփականելուց նույնիսկ մարդու մեջ կատարվի մի հոգեփոխություն— վերածննդություն. նորան անհրաժեշտ հարկավոր է սեփական գործունեություն, ընդունող, գնահատող և իշխող այդ գիտություններն վերա. հարկավոր է մտքի արարչական, ստեղծագործական զորություն. հարկավոր է, որ այդ տեղեկությունքը դրվին ոչ որպես սերմեր ավազի վերա, այլ շարժողություն պատճառեին հողի մեջ և պտուղ տային։

Այս ստեղծագործական զորությունը մտքի է նորա գլխավոր զորու-

թյունը, առանց նորան միայնը միայն մի շահեմարան է գիտութիւնների, որ կարելի է ցույց տալ որպես մատենադարան, բայց ոչ ավելի։ Այսպիսի լուսավորութիւնը անզոր է. միջին դարերի սխոլաստիկական լուսավորութեան բորբոսած հոտը ասատիկ գալիս է այդպիսի լուսավորութեան վերայից։ Մի ազգի լուսավորութիւն պիտո է կատարվի նորա սեփականն, մայրենի լեզվով։ Լուսավորութեան տաճարը պիտի կառուցանվի ամբողջ ազգի ձեռքով. լուսավորութեան հանդիսում շատ նեղ է հոգևոր մարդերի ասպարեզը. ոչինչ ազգ չէ հասել լուսավորութեան վերին աստիճանին, հոգևոր դասուիարակների ձեռքով։ Ո՛չ հոգևորը պարապեն աստվածային բանի ողջամիտ վարդապետութեամբ, բայց ազգի լուսավորութիւնը պիտո է հառաջանա բուն ազգի հոգաբարձութեամբ։ Լուսավորութիւնը այնքան հիմնավոր է, որքան ազատ է և անկախ. սարկութեան մեջ չէ կարող լուսավորութեան ծիլը կանաչիլ։

Սխալ դատողութիւն է, վաղուց արմատացած մեր ազգի մեջ, թե հայոց կաթողիկոսը կամ առաջնորդքը պիտո է լինեին լուսավորութեան տնտեսք և ապաստավորք. ոչ Մարկոսը և ոչ Կիրակոսը, այլ ինքը ազգը յուր ձեռքով պարտական է սերմանել, եթե կամենում է մի օրհնյալ և սուրբ հունձ հնձել։ Հերիք պատճառ ունեինք շնորհակալ լինելու մեր հոգևորներից, եթե միայն հոգաբարձու լինեին դորա հոգևոր դպրոցներ շինելու, արժանավոր քահանայք պատրաստելու ազգի համար, բայց ոչ այնպիսի դպրոցներ, որ կային այժմուս զանազան տեղերում, այլ օրինավոր, մեր ժամանակի կարոտանքը լցուցանող։ Հերիք երախտապարտվելու էինք, եթե հոգևոր իշխանութիւնը հոգս առներ օրինավոր քահանայք պատրաստելու համար, քահանա ասում ենք, հասկանալով մի այնպիսի պաշտոնյա, որ օրըստօրե աստուծո բանին ապաստավորելով, պիտի մխիթարեր և շիներ մեր սիրտը և հոգին։ Մեր կարծիքով մեծ բան է քահանան. կցանկանայինք, որ ինքյանք քահանայք այնչափ հասկանային յուրյանց արժանավորութիւնը և խորհուրդը մարդկեղեն աշխարհի մեջ, որչափ մենք ճանաչում էինք նորան։ Քահանան պիտի վարդապետե ժողովրդին աստուծո բանը. առանց քրիստոնեական կրոնի ուսման անհիմն է ամենայն լուսավորութիւն։ Եվ քրիստոնեական կրոնի ուսումը պիտո է քաղի Հիսուսի Քրիստոսի աստվածային և կենդանարար աղբյուրից՝ Ավետարանից։ Առանց Նոր կտակարանի սուտ է ամենայն քրիստոնեութիւն. և մեր ազգին բարոյապես ամրանալու համար հարկավոր էր կարդալ Սուրբ գիրքը, ուրեմն հարկավոր էր և թարգմանել նորան ժողովրդական, նոր և կենդանի հայախոսութեամբ։

ՀՐԱՇԱՓԱՌ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ*

«Հաւատամք յարութիւնս Քրիստոսի, միջնորդութեամբ կախարդութեանս։ Հաւատամք ի փրկութիւն հոգւոց, հաղորդակցութեամբ դիւաց։ Իսկ որպատճառն, թէ չի՛ր կախարդութիւն, կամ, թէ ո՛չ դուն դիւք, զայնպիսին նզովէ մեծ տրամաբան և աստուածաբան, տնօրինող և յօրինող Տեառն Հանդիպի, պ. Յովհաննէս Տէր Կարապետեան Տէրոյենց Ջամուռճեան Պրուսացիւ[2]։

Ի՞նչ օրհնութիւն, կամ ի՞նչ գոհութիւն մատուցանենք պ. Ջամուռճեանին, որ քրիստոնեական կրոնի հանգանակները, ասան և հինգ դար գրվելուց և խոստովանվելուց հետո, յուր ներկա տարու 1 Հուլիս 30 նոյեմբեր[3] թվ. 85 Տեառնի մեջ, նկատ արդարոց ու հավատի մատնքները հավելացուց, մի նոր և պայծառ լուս ծավալելով աստվածաբանական գիտութեան վերա։

Թող պապանձվին շար լեզուները, որ երբեմն շարժված են այս չնաշխարհիկ պարոնի ընդդեմ։ Նորա այսքան տարու խորամուխ քննութեան հետևանքն է, որ այսօր ընթերցող աշխարհի առաջև բացահայտվեցավ, թե Քրիստոսի արդյունքը չուրանալու համար, անշուշտ պիտի հավատալ և խոստովանել կախարդութեան գոյութիւնը։

Պարոն Ջամուռճյանի անժխտելի տրամաբանութիւնն է, որ այսօր ապացուցեց մեզ, թե դևերի գոյութիւնը, կամ կախարդութեան լինելութիւնը մերժելը, համազոր է Քրիստոսի փրկագործ տնօրինութիւնը մերժելուն։

Քրիստոսի փրկագործ տնօրինութեան հավատալ պարտական՝ն է ամենայն քրիստոնյա. պատճառ՝ քրիստոնեական եկեղեցու հիմքը դրված է այս հավատալիքի վերա. Քրիստոսի փրկագործ տնօրինութիւնը հավատի մասն է։

Բայց եթե մի մարդ չհավատա կախարդութեան, կամ դևերին, ուրացած կլինի Քրիստոսի արդյունքը և այս պատճառով հավատը միմիայն, զեպի Քրիստոսի փրկարար տնօրինութիւնը, առանց կախարդութեան, որ ենթադրվում է, թե լինում է դևերի հաղորդութեամբ, թերի է։

---

* Կախարդութիւնը, չատերը, որ հրաշից չեն հավատար և այլն։

Ուրեմն կախաբդուխյունը և դևերը հավատի մասունք են և Քրիստոսի փրկագործ անօրինուխյուններից գերազանցելիք, որովհետև Քրիստոսի անօրինուխյունը չե՛ն կարող ընդունվել առանց կախաբդուխյան և դևերի գոյուխյունը ընդունելու, դորա հակառակ հիմք լինելով Քրիստոսի արդյունքին հավատացող դավանուխյան։

Որպես հայ, ամոթահար զայրանում ենք, որ այս ժամանակում, հայ մամուլից արձակվում են այսպիսի ցնորաբանուխյուններ։ Մինչև ե՞րբ պիտի խայտառակվին և յուրյանց հետ միասին պիտի խայտառակեն հայ մամուլը, մեր այս դևընկալ իմաստունքը. կարծենք թե ժամանակ էր արդեն սթափելու միջին դարերի արբեցուխյուններից։

Այո՛, պ. Չամուռճյանի աստվածարան և տրամաբան լինելու այս նոր ապացույցը, վերին աստիճանի տխուր տպավորուխյուն թողեց մեր վերա։ Այս րոպեից մեր բոլոր կիրքերը լռված ու կապված են ընդդեմ պ. Չամուռճյանի, բացի կարեկցուխյուններից։ Առանց դևերի միջնորդուխյան, միմիայն Քրիստոսի արդյունքին հավատացող քրիստոնեուխյունը, հարկադրում է մեզ կարեկից լինել հիվանդներին կամ ախտացածներին։

Տարակույս չկա, որ պ. Չամուռճյանը ենթակա է մի հոգեկան հիվանդուխյան. այս խնդիրը չէ՛ ընկնում երկրաբուխյան տակ, սակայն հոգեկան տկարուխյունների ֆիզիապիան* շատ հարուստ չէ՛ և մանավանդ առաջարկված հնարները շատ պարզ բաներ լինելով, օրինակ սառն ջրով լվացվիլ, զրոսանուլ, ճանապարհորդել, ոգիավոր հեղանյութերից հեռի մնալ և այլն և այլն. այս պատճառով ևս չե՛նք կարծում, որ այս մարդկային հնարները հարգ սատանան մի պարոնի աչքում, որի հիվանդուխյունն էր սիլլաների, քաչերի, դևերի և կախարդուխյան հավատալ։

Այսպիսի մի պարոն, ավելի շուտով կհոժարի դիմել դեպի գերբնական ուժերի ազդեցուխյունքը, քորով հարայ նովին և բժշկեցայց» ասելով։

Այժմ միայն կարող եղանք կատարելապես հասկանալ Չալալյան Սարգիս եպիսկոպոսի մինչև այսօր մեր կողմից ժխտված իրավունքը, մինչ նա յուր հրաշալի քարոզների մեջ բոլոր մարդկեղեն դիտուխյունը բաժանում էր երեք տեսակ, օդական, շնչական և դիվական . . . . .

. . . . . .

Մեր գրուխյունը ընդհատվեցավ մի պարոնի ներս մտանելով մեր սենյակը. այդ պարոնը տեղյակ էր մեր տհաճուխյան, պ. Չամուռճյանի այս գրվածքի վերա, այլև գիտեր որ լռելու չե՛նք, բարեմտուխիններից շարժված եկել էր մեզ մոտ, աղաչելու որ բան չգրենք այդ հատվածի վերա, տհացուցանելով և սպառնալով մեզ բոլոր դժոխքի արհավիրքը։ Երբ, կատակ համարելով, մեր բարեկամի խոսքը մերժեցինք, այն ժամանակ ցույց տվեց նա մեզ մի պաշտոնական թղթի պատճեն, որի բնագիրը ուղղվել է պ. Չամուռճյանի վերա.

Ահավասիկ պատճենի պատճենը։

* Բժշկական մասնավոր գրուխյան անուն։

Ոստիկանություն
Արտաքին գործոց
Բաժին հայկական

Հուլիս 2
——— 1880
դեկտեմբեր 1

Համար 86

Ամենահպատակ Տեր

Ձեր, անզուգական երևակ Հանդիսի 85 համարի՝ երես 7, ծանոթության մեջ, ցույց տված հոյակապ ծառայությունը ժխտել՝ ընդդեմ էր նորին Մեծության Տեր Բնհնդրերուդի քաղաքական սկզբունքներին, որով նորա թագավորությունը ամենափառավոր և անսայթաք կերպով կառավարվում է աշխարհի առևտրագործություններից հառաջ։

Երբ Ձեր հոդվածը, Մոլորության Ոստիկանի ձևերով՝ Հանդիման եղավ Տեր Անդնդապետին, նորին Մեծությունը ուշադրություն դարձնելով, որ այս ներկայումս տարածված տգետ փիլիսոփաների քարոզության մեջ, Դուք միայն, որպես «ձայն բարբառոյ յանապատի» երևեցաք մեր իշխանության դորավիդ, ուստի մի կողմից Ձեզ վարձատրելու, իսկ մյուս կողմից ուրիշներին խրախուսելու համար, որ հետևին Ձեր ամենահպատակ օրինակին, հավիտենական կամոք հաճեցավ շնորհել Ձեզ՝ Արուսյակի առաջին կարգի ասպետությունը, որի նշանը պիտի գտանեք այս ծրարի մեջ։

Այո, ամենահպատակ Տե՛ր, մեր իշխանությունը, շատ անգամ, պաշտոնական շրջաբերականներով քարոզած էր աշխարհին, թե առանց մեր իշխանությունը խոստովանելու, առանց մեր զորության և ազդեցության հավատալու, ընդունայն է հավատը դեպի մեր Քենամին՝ Քրիստոսը, բայց Դուք առավել քաջ հանդիսացաք այս վանմակա՜ն ասպարիզի մեջ, վկա բռնելով Ձեզ նույնիսկ Գործ Առաքելոցը, որին մոռնալու մեր չունեինք իշխանություն։

Ընդունեցեք, խնդրեմ, իմ անկեղծ հարգության հավաստիքը, որով ցանկամ մնալ

. . . . . ամենահպատակ Տևառնդ
հրամայող ծառա
(բնագրի վերա ստորագրած է) «ԱՄՄՈԴԵՅ»

(ամբացուցյալ է հանգնքը նշանագրելով) «Արտավազդ»

Երբ այս պաշտոնական թղթի պատճենը կարդացինք, անդեն առնեին համոզվեցանք, որ այսուհետև ասելիք չկա, ամենայն պակաս կատարելագործեց սա։ Մնում է միայն մեզ հրավիրել երևակի բաժանորդքը, որ յուրյանց շնորհավորությունքը փութացնեն...։

ՇԱՀՐԵԳ

[ՆԱՄԱԿ «ՄԵՂՈՒ»-Ի ԽՄԲԱԳՐԻՆ]

Ազգս հայրենակից Պ. ՍՐՎԱՃՅԱՆ

Մեղուն մի նոր քայլ կատարեց ազգային հառաջադիմության հանդիսում, — հրապարակով հայտնեց յուր վճիռը մի Պողոսի մասին, որ հայոց ազգի և եկեղեցու նախանձնդիր համար, գուցե ինչ, դեռևս յուր վերա կրեր հայկական արեղայի անունը, եթե հին խելքերի դրութիւնքը չխորտակվեին Մեղուի զարկվածքից[1]։

Հայոց ազգի մեջ դեռ առաջին անգամն է, որ մի օրագիր, յուր վճիռը հրապարակելով, ծանրանում է շանավոր հասարակութեան կարծիքը։ Անպատմելի ուրախ ենք այս բանի վերա. մենք այստեղ տեսանում ենք մի փրկարար սկզբունք, այն է հանդես տալ ազգի կարծիքին, որեմն հրապարակ կանչել խելքերը, խոստովանել նորա իրավունքը և այս կերպով ուսուցանել, որ ազգի մեջ երևնցած ամեն մի երևույթ, ամեն մի իրողութիւն վերաբերութիւն ունի ազգին, և ազգի անդամքը, այսինքն անխտիր այն անհատները, որոնցից կազմված է ազգը, ամենայն մարդկային իրավունքով ազատ են այդ բանը ընդունել կամ մերժել, արդարացնել կամ պարտավորել։

Բուռ ապրի՛ հրապարակախոսութիւնը։

Ինձ, որպես հայի, ցավելի է տեսանել որևէ արատ կամ ապականութիւն մեր ազգի անդամներից մինի վերա, մանավանդ մի այնպիսի անդամի, որ յուր անձը նվիրած լինելով եկեղեցու սպասավորութեան, հետևաբար, մեծապես պարտական էր անարատ պահել յուրյան։ Բայց, մի այսպիսի ցավից արտիս մեջ հառաջացած վերքը բժշկվում է իսկույն, երբ տեսանում եմ, որ ազգը դատապարտում է վնասի պարտավորը, երբ ազգը, խոստովանելով այդպիսու անարժանութիւնը, կտրում է, բաժանում է նորան յուր հետ հաղորդութիւններից, երբ ազգը, զգվելով այդպիսու գործերից և պարտավորելով նորան, իրավունք է առանում, որ լուսավորյալ աշխարհը պատվե յուրյան, որովհետև չէր կամենում յուր մեջ պահպանել մի գայթակղութեան խմոր։

Առույգ արժանավորութեան վկայութիւնը, եթե կա, այդ է միայն՝

պակասության խոստովանելը։ Ազգի պակասությունը խոստովանել կամ դատապարտել ոչ թե միայն հանցանք չէ, այլ առաքինություն։ Ամենայն ազգային անդամ ինչ չափով պարտական էր սիրել յուր ազգը, նույն չափով պարտակա՞ն է նշավակել և ապտանել նորա պակասությունքը, որպեսզի ազգությունը, ավելի մաքուր շրջանակի մեջ հանդիսանա ընդհանուր մարդկության առաջև։ Թե՞ մի մարդ վախենում է կամ չկամի լվանալ յուր աղտերը, ի՛նչպես ուրեմն պիտի իրագործե մարդության գաղափարը։ Այն մարդիկը, որ անդադաստան երևիայի պես, գայրանում են՝ տեսանելով ազգային ո՛րևէ ամաթի հրապարակությունը, մի համարձակ գրչի ներգործելով, այդ մարդիկը իրողապես ապացուցանում են, որ դեռևս չեն հասկանում, թե ալլ է ազգությունը կամ ազգության գաղափարը և ալլ է հանցանքը և անօրենությունը։

Ամենայն իրավունք և օրենսդրություն դատապարտում են հանցանքը և ոճիրը, դատապարտում են այդ հանցանքի գործողը, գործողության կցորդը կամ որոնց արդարադատության աչքից վարագուրողը, բայց ոչ երբեք մի ամբողջ ազգ, որի անդամներից մինը գործել էր այդ հանցանքը. ոչ երբեք մի ամբողջ ազգ, որ դատապարտելով հանցավորը ապացուցանում էր աշխարհին, թե ինքը չէ կարող սուն աչքով հանդիսատես լինել այդպիսի ոճիրների. ոչ երբեք մի ամբողջ ազգ, որ չէր կարող յուր լռությամբ կամ չտեսանելու դնելով լռելյայն քաջալերել հանցավորը։

Բնական օրենքը, վանմակա՞ն օրենք — դերագույն բոլոր մարդկային օրենքներից, վաղուց արդեն հասկացուցել է աշխարհին, թե մարդիկ հավասար իրավունքներով դուրս եկան արարչագործ աստուծո ձեռքից։ Մարդկային օրենքը դրվեցավ, թեպետ և շատ անգամ և շատ դիպվածում շեղվելով բնական օրենքից, ի վերա այսր ամենայնի, բնականական կամ բնկերական կյանքի պայմանները սուրբ պահելու համար. այդ օրից սկսած, դատապարտության տակ բնկավ նա, որ հանդգնեցավ մոռանալ ուրիշի իրավունքին, կամ դրժել բնկերական կամ բնականական նվիրական պայմաններին։

Իրավագատության մեջ է ազգի կյանքը և այս օրենքի վերա միայն կարող է մի ազգ հառաջանալ։ Մենք ուսանում ենք ազգերի պատմությունը, բայց շատ անգամ անհասկանալի կմնա մեզ որևէ ազգի պատմության մի երևույթ, եթե ուսած չէինք այդ ազգի օրենսդրությունը, որովհետև օրենսդրության առանցքի վերա կատարում է յուր շրջադարձը մարդկային բարոյական կյանքը։ Ինչպես օրենքը, այնպես և կյանքը, ինչպես կյանքը, այնպես և պատմությունը։ Եթե մի ազգի մեջ չկա օրենք, չկա իրավագատություն՝ համարձակ քարոզում ենք այդ ազգի կյանքը բարբարոսական։

Թող սարսափին պարկեշտ ականջները մի տեսակ մարդերի, որ նվիրած են յուրյանց անձը, խոսքը և գրիչը սորա կամ նորա պակասությունը ծածկելու։

Ոչ երբեք պիտի հաւաչանա ազգը, հետևելով հին խելքերի դրութեան։ Ոչ երբեք պիտի հաւաչանա ազգը, հետևելով մի տևական մարդերի վարդապետութեան, որ ինքն զգում էին անցածի և հնի ամլութիւնը, բայց, արտի և հոգու քաջութեան պակասութիւններից, վախենում են միանգամայն կտրել բաժանել յուրյանց անձը ախտը անցածից և ուռը կտրել վճռաբար նոր սահմանագլխի վերա, ուր մանուկ առուգութիւնքը ծածանում է հաւաչջնթացների դրոշակը։ Չէ կարելի միևնույն ժամանակ երկու ճանապարհ գնալ, միմյանց հակառակ ուղղութեամբ՝ իսկ երկուսի մեջը մեզ երևում է մի անթափանցելի մոլորութիւն։

Այո՛, պատմութիւնը վկայում է մեզ, թէ վճռական հնարները բերում են առժամանակեայ անախորժութիւնք, բայց նույն պատմութեան մյուս երեսի վերա տեսանում ենք, որ այդ, առժամանակեայ անախորժութիւնների գնով գնվում է ապագան։ Կեսկատուր հնարները միշտ վնասացին մարդկութեան, հեռացան հին դրութիւններից, բայց և նորին չհասանելով պատկերացուցին մի խղճալի վիճակ վնհերոտութեան, մի անմերժելի ապացույց այն բանին, թէ այդ հնարների գործ դնողը ազատված չէին դեռևս անցածի ազդեցութիւններից։

Բոլոր բնական և մարդկային օրենքների մեջ գտանում ենք միայն այո՛, կամ, ո՛չ։ երբորդը չկա։ Չմոռանան այս խոսքը այն ազգասերքը, որ յուրյանց սերը դեպի ազգը հայտնում են նորա պակասութիւնքը քողարկելով, որով անուղղակի կերպով մեղանչում են ազգութեան ընդդեմ, ապա ուրեմն արժանի յուրյանց պաշտպանած հանցավորի հետ պատժակից լինելու։

Չէ կարելի իրավազրկութիւն քարոզել և անիրավութիւնը պաշտպանել։

Չէ կարելի հաւաչգիմութիւն քարոզել և անգամալուծի պես բևեռացած մնալ մի կետի վերա։

Չէ կարելի լուսավորութիւն քարոզել և ամենայն ջերմեռանդութեամբ խաւարի մեջ թաղթափել։

Չէ կարելի մաքրութիւն քարոզել և ապականութեան ծովի մեջ լողալ։

Չէ կարելի նորի շինութիւնը սկսանել և անցածի հիվանդանոցից օգնականք առնուլ։

Չէ կարելի ազատութիւն քարոզել և խղճմտանք բռնաբարել։

Այսպիսի «չէ կարելիներ» հազարավոր կան. խնդրում ենք այս բաների վերա մի փոքր մտածել։

Եթե մենք ատուգապես ցանկանում ենք ազգի հաւաչգիմութեան, ապա ուրեմն պիտի քննենք և ըրբրենք ազգի բարոյական տարրերը. նորի շինութեան պիտանին պիտի առնունք, իսկ փտածները, որ մինչև այժմ ևս արգելք են եղած ազգի ընթացքին, պիտի մերժենք և դատապարտենք։

Օրենքը պատժում է հանցավորը. ասիացին տևանում է այստեղ մի

լոկ վրնժխնդրութիւն, բայց մենք այդ արդարացի հատուցումի մէջ տեսանում ենք հասարակաց իրաւունքի պաշտպանութիւն։ Ոչ ոք չէ կարող հանցանք գործել առանց ուրիշի իրաւունքը հափշտակելու. ոչ ոք չէ կարող հանցանքը պաշտպանել առանց զրկուածի իրաւունքը խնդրելու։ Բնական օրէնքով, իրաւունքների հավասարութիւնը պահանջում է, մարդկային օրէնքի միջնորդութեամբ, ընկերական կամ ընտանեկան պայմանների և արատնութիւնների պաշտպանութիւնը։ Եվ նա, որ պարծենում է յուր մարդ լինելով, պիտի պաշտպանի իրաւազատութիւնը, որովհետև առանց նորան ինքը այդ մարդը չէ կարող երևիլ և ապրիլ մի ընկերութեան մէջ։

Այն հանցանքի ցուցակը, որ Մեղուն հրատարակեց, որ վերագրվում են երբեմն կրոնավոր Պողոսին, և որ մի սարսափելի զղվանք պատճառեց մեզ դևի խայտառակված չարագործի անձը, հերիք է, որ բորբոքեն նորա վերա արդարադատութեան փայլակները, ո՛չ միայն ժամանակավոր կերպով քահանայութիւնը լռեցնելու, ինչպես արել է կրոնական ժողովը, ոչ միայն քահանայութիւնից խլացու զրկելու, որ չէր արել հիշյալ ժողովը, և որի ծոցածը կատարեց Մեղուն, գոբա բարոյականը են. այլև բազաբանականապես ենթարկելու նորա անձը այն պատիժներին, որ սահմանվում են քրեական ոճրագործութիւնների փոխարեն։

Այն մարդիկը, որ պաշտպանութիւն էին ցույց տվել չարագործին, կարծեմ թե բնավ չեն ախորժում, եթե ցնծասովի յուրյանց հանդերձը, կամ ապականվի յուրյանց տունը, որի մեջ բնակվում են. ի՛նչ խըղճմըտանքով ուրեմն աշխատում են մի այդպիսի ապականութիւն պահել նկեղեցու մեջ, որ մի նվիրական արքութիւն է, ուր հավատում ենք, թե սերովբեներ ապաստավորում են ահավոր աստուծո, որի առաջև սոսկալի հանցանքներով պրոշմված մի անձն պիտի հանդիպեր Քրիստոս պատասխանել յուր և ներկա ժողովրդի դատապարտութեան համար։

Զարհուրելի՜ արբաշխութիւն։

Հոգևոր անձինք, եթե մինչև այժմ յուրյանց անձը համարել են ազգին անպատասխանատու, քող այժմ սովորին համոզվիլ, թե պատասխանատու են. քող սովորին այս գազափարին, թե հոգևորականք են ազգի համար և ոչ ազգը հոգևորականների համար. ազգը ժառանգութիւն տրված չէ Պողոսին կամ Նիկողոսին, որ ինչպես կամենան այնպես խաղան ազգի հետ։

Հոգևոր անձինք, որ արժանի էին դատապարտութեան, շատ անգամ, անպատիժ են մնացել, որովհետև յուրյանց դատը վարում էին յուրյանց նմանների ձեռքով։ Այդ շատ սխալ դրութիւն է, ամենևին հակառակ նվիրելու ձեռնադրութեան պայմանին։

Այո՛, կարգը տալիս է եպիսկոպոսը, բայց ի՛նչպես։ Եպիսկոպոսը այդ բանում մի անանձն է, մի մատակարար շնորհքի, որ ուրիշ կերպով չէ կարող տալ, եթե եկեղեցին չնդրկե և չվկայե նվիրելու արժանավորութեանը, իսկ արդ, ո՛վ է եկեղեցին, ո՞չ ապաքեն հավատացյալների բազ-

մութիւնը անխափար։ «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լինու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական եկեղեցւոյ, կոչէ (զայս անուն) սարկաւագս ի սարկաւագութենէ ի քահանայութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն, ըստ վկայութեան աննիի իւրոյ և ամենայն ժողովրդեանս»[2], քարոզում է խարտաւիլակ[3] երէց անգամ, և ժողովուրդը կրկնում է երէց անգամ «արժանի է»։ Հերիք չէր այս, ինքը նախկոպոսը ձեռք դնելուց հառաջ վերստին կրկնում է «Աստուածային և երկնաւոր շնորհը», և վկա բռնելով նվիրելու և ամենայն ժողովրդյան վկայությունը, դնում է ձեռքը նվիրելու գլխին։

Նվ ի՛նչպես, մի՛թե ձեռնադրությանը գործակից չէ՞ եկեղեցին՝ ժողովուրդը. նա չէ՞ աղոթում։ Լսենք նախկոպոսին։ «Ես դնեմ ձեռս ի վերայ սորա և դուք ամենեքին աղօթս առարէք, որպես զի արժանի լինիցի սա զսպասիճան քահանայութեան անարատ պահել և այլն»[4]։

Ահա այն պայմանքը, որի վերա նվիրյալը առանում է քահանայության աստիճանը. և եթե մի սոսկական անձն քահանա է դառնում, «ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեան», նույն քահանան, հարցանում ենք, անարատ շպահելով յուր քահանայությունը, յուր դասապարտելի գործերի վկայելով և այդ գործերից հարատահարված և բռնաբարված ժողովրդի վկայելով չէ՞ լուծվում քահանայություններից։ Եթե այսպես չէ, ապա ուրեմն խարեբայություն է ձեռնադրության ժամանակ ժողովրդի վկայությունը պահանջելը։ Ո՛ր այս խնդիրը գեթ լուծանեն մեզ Կրոնական ժողովը, եթե չէ լուծանում Սողոսի քահանայությունը[5]։

Եթե ժողովուրդը դասապարտելով մի քահանա, համարում է նորան քահանայություններից լուծված, եթե ժողովուրդը ամենայն իրավունքով խզճահարվում է օրենք ասանալ անօրենից, ինչո՛վ ուրեմն պիտի երևի այդպիսու քահանայությունը, ստորագրությունների՞ց թե վեղարից, դորա արտաքինք են, և Կրոնական ժողովը, ոչ երբեք համարձակություն ունի բրոնաբարել կամ դասապարտել խղճմտանքը ազատ հոգիների, որոնց ազատությունը գնված է Քրիստոսի արյունով. եթե գիտեն դասապարտել, թող ուրեմն դասապարտեն հանցավորը և մաքրեն եկեղեցին, վերացնեն անմեղ ժողովրդի գայթակղությունը և անդորրացնեն խղճերը։

Քրիստոս հրամայում է, եթե քո եղբայրը մեղանչե քո ընդդեմ՝ խրատիր նորան առանձին. եթե լսե՝ մի երկու վկայի առաջև. եթե դարձյալ լսե՝ «ասասջիր եկեղեցւոյն և եթէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև գհեթանոս»[6]։

Երբեմնական կրոնավորը լսե՞ց եկեղեցուն. առյանը կազմվեցավ, բայց նա չկամելով լսել չքացավ Կաստանդնուպոլսից. եթե Կրոնական ժողովը այսուհետև պիտի ճանաչե նորան քահանա, ապա ուրեմն պիտի հակառակի Քրիստոսի հրամանին։

Մեղուն խնդրում էր ազգի անգամների կարծիքը, յուր վճռի մասին, որպեսզի իմանա, թե ո՛րչափ հառաջացել է ազգը. նա իմ կողմից, որպես անդամ հայկական ազգի և եկեղեցու, ո՛չ միայն համաձայն եմ Մեղուի

վճռին, այլ ավելի ևս։ Մեղուն հրաժարակեց նորա անձը մխիթարյան քահանայութիւնից զրկված, իսկ ես ասում եմ, որ կրոնավոր, իսկ այժմ սոսկական Պողոսը մինչև ապաշխարութիւնամբ չքավէ յուր մեղքերը, չեմ կարող հաղորդութիւն ունենալ նորա հետ որ հոգևորաց, որպես լոկ քրիստոնյա եղբոր հետ։ Ո՛ւր մնաց նորա քահանայութիւնը։

Պողոսի պես հոգևորք, եթե կան, թո՛ղ այս օրից հոգան յուրյանց գլխի ճարը, կամ ուղղեն յուրյանց անձը, վարքը և բարքը կամ դուրս գնան մեր եկեղեցուց։

Ո՞ւր գնան, հռովմեականա՞ն դառնան, բողոքակա՞ն դառնան։

Այդ խնդիրը մեզ չէ վերաբերվում. այդ մասին թող մտածեն հռովմեական և բողոքական եկեղեցիների առաջնորդքը. եթե կարող են առանց յուրյանց եկեղեցին անաբգելու ընդունել մի այդպիսի մարդ և հաղորդութիւն ունենալ հետը եկեղեցաբար, թող ընդունին, այդ նոցա գործն է։

Խնդրեմ ընդունել իմ անկեղծ հարգութեան հավաստիքը, որով ցանկամ մնալ

Արդո պարոնիդ խ. ծ. Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

19 դեկտ. 1860
Գևրա-Կոստանդնուպոլիս

ՄԻՔԱՅԵԼԻ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ԵՐԿՈՒ ՏՈՂ

Ջրմարտութիւնը կրօնք է,
Ճարտ միայն խնդրիցք է,
Խոհ ճարտից ոչինչ :

ROBERT OWEN.

ՓԱՐԻԶ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1861

Միխայել Նալբանդյանի «Երկու տող» ազատատության առաջին հրատարակության անվանաթերթը

ԵՐԿՈՒ ՏՈՂ

Ազատությո՞ւն, գալնցի բո՛ղ ուռտա իմ գլխին,
Փայլակ, կայծակ, ճուր, երկաթ, բող դավ գնի բշնամին.
Ես մինչ ի մահ, կախաղան, մինչև անարգ մահու ոյուճ,
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ, անդադար, ազատությո՞ւն:

Կոմս ԷՄՄԱՆՈՒԵԼ

Հայկական դպրության ասպարեզը իջանելուց հետո, քանի մի անգամ հանդիպանցավ մեզ, երես առ երես պատահել անամոթ վատության: Ձվ ո՛չ անգամ վշտացանք և ո՛չ անգամ վիրավորվեցանք այդ հարձակմունքներից, այլ մանավանդ ցավեցանք հարձակվողների վերա, որովհետև բարոյական հիվանդությունը մինչև ի մահ տիրելով նոցա վերա, պատճառ էր եղել այդ ցնցողական և անգիտակից շարժողություններին:

Մենք, վաղ ուրեմն, գոյցն շատ հառաջ, քան թե գրիչ առինք ու հրապարակ իջանք, գիտեինք, որ խավար շրջապատի մեջ բանտարկվածների համար շատ ցավեցուցիչ է ազատ լույսը, թերևս աչքերի նկատմամբ, գիտեինք, որ հին խելքերը նորնք համաձայնելու չէին խաղաղությամբ տեղի տալ նոր գաղափարներին, գիտեինք, որ նորը պատերազմով-պիտի կանգնեցներ իր դրոշակը հնության ավերակների վերա:

Այս գիտություններից հետևեցավ այն, որ այդ հարձակմունքը, թերևս շատ անգամ մեր անձին վերա, փոխանակ մեր գաղափարների, ո՛չ երբեք կարողացան, և ո՛չ նաև մի մազի չափ, խոտորեցնել մեզ մեր ուխտյալ ճանապարհից:

*Այսօր, վերստին հանգնակ է լինում մեզ խավար տգիտությունը, յուր տոհմատական մեծ վայելչությամբ: Նա զարդարված է այսօր փիլիսոփայի և ատովածարանի անուններով. այս անգամ երևում է նա պ. Ջամուռճյանի կերպարանքով...**

**Տե՛ս երևակ. թիվ 87, $\frac{1860, 1\ \text{օգոստոսի}}{1861, 1\ \text{հունվարի}}$ հին ոճով, զոր անօրինն և հորինն պ. Հովհաննես Տեր-Կարապետյան Տերոյենց Ջամուռճյան Գրուացի:*

Եթե վատութիւնը, ձեռնածուների արկղի նման, երկու հատակ չունի, ապա ուրեմն պ. Զամուռճյանը հասել է մինչև վատութեան հատակը։

Երևակի վերոգրյալ տեսարակը մեզ ուղարկողը գրում էր, թե Պոլիս ամեն տեսակ մարդկերից ցուրտ ընդունելութիւն է գտել այդ գրվածքը, իսկ մեր վերաբ այդչափ ևս տպավորութիւն չգործեց, և եթե այսօր, այդ մասին մի երկու տող գրելու պիտանք, այդ պ. Զամուռճյանին պատասխանելու համար չէ, այլ ընթերցող հասարակութիւնը հարգելու Պարոնի վայր ի վեր ազնաատարանութիւնները տուր են ամենայն տեսակ քննութիւններից և Մեղութին և պ. Այվազյանին[1] մեր շնորհակալութիւնը հայտնելով, չենք կարող, միևնույն ժամանակ, չհայտնել մեր ատ ի սրտե կարեկցութիւնը պ. Զամուռճյանի գրվածքին պատասխանելու խորհրդով կորուսած ժամանակի վերաբ։

Ինքնակոչ փիլիսոփայի գրվածքը ծայր ի ծայր կարդալով, երկու շարժառիթ տեսանք, որ կարապետել են պարոնին դեպի այդ վիհը։

Առաջին, երբ մեր փոքրութիւնը ուռ կոխեց Պոլիս, ազգային լրագիրները մի երկու տող գրեցին մեր մասին, մանավանդ արևելյան միանգամայն և նահապետական հյուրասիրութիւններից շարժված, քան թե պարտականութիւններից դեպի մեր արժանավորութիւնը, որ բնավ պահանջողութեան հանդգնութիւն չունի։*

Այդ հրատարակութիւնները, անշուշտ, ազգի մեծագույն մասին վերաբ բնավ ազդեցութիւն չգործելով, երևում է թե նեսի նման ծակել են չխոտովանված փիլիսոփայի անձնասիրութիւնը։

Մեր սրտի խորքից ցավում ենք, որ մեր անունը, թերևս առանց մեր կամքի և գիտութեան, մի այդպիսի վիշտ է պատճառել պարոնին. մյուս կողմից չափավորվում է մեր սրտի ցավը, տեսանելով որ պարոնը փարատել է, կամ գեթ աշխատել է փարատել, յուր սրտի ցավը խոշոր և գեղջուկ հայհոյութիւնքամբ։

Ուշ որ մեզ է վերաբերվում, այդ հայհոյութիւններն ընդդեմ, ուրիշ բան չունինք ասելու, քացի այն խոսքերից, որ հռչակավոր Ցոքսը գրեց մի անգլիական լորդի, որ գրել էր նորան հայհոյութիւնքամբ լցված մի նամակ։

«Sir, ձեր նամակը, այսինչ քվականից, ստացա։ Այդ նամակը տառաջնա է այժմ, քառորդ ժամից հետո կլինի քամակուամս, որի մասին շնորհ ունիմ տեղեկութիւն տալ ձեզ. անձնանվեր Ջ. ՅՈՔՍ»։

---

* *Մենք չենք կարող բան գտանել, Պոլսի ազգայիններին մեզ ցույց տված համակրութեան մասին, մեր ատ ի սրտե անկեղծ շնորհակալութիւնը հայտնելու համար ենք, որ մեր սիրտը զգա և յուր լեզվով խոսի. այսպիսի դիպվածներում նորա խոսքը թեև ուրիշին անուշի, բայց, քաղցրյան ավելի վտեմ է քան թե մարդկեղեն բարբառը։ Մեզ եղած հյուրասիրութիւնքամբ մեր ավելի երդանիկ ենք, քան թե այն արկածախնդիր կրանավորը երբ Բոսֆորի վերաբ գտնված մի տան գտտիկանից, հավաքում էր չոգենավի մեջ. գնալու միջոցին, Արմենուհու հրաժարական ժպիտները և օդաթին համբույրները և սիրու քաղցը հիշատակներով ամրապնդված ուղղվում էր դեպի Տավրիկ...*[2]։

Երկրորդ և ավելի բծամիտ շարժառիթը, պաշտպանել չարագործ Պողոսը և պահպանել նորա խայտառակված ճակատի վերա եկեղեցական անունը։ Որչափ ևս գրվածքի սկզբում գործ դնեն պ. Ջամուռճյանը յուր նվիրական վերացյալ և բանձրացյալ բառերը, անշուշտ, կամելով վարագուրել գրելու շարժառիթը, այնուամենայնիվ, այսօր արևի պես հայտնի է, որ գրվածքի հոգին, բոլորովին քննականից դուրս, պատկերացնում է մի կատաղի ինքնասիրություն, երկրորդ, որ գրվածքի հետևությունն է Պողոսը պաշտպանել։

Ինչ որ մեր ամբաստանված նամակի մեջ ասել ենք[3], նույնը կրկնում ենք այսօր և վճռաբար հայտնում ենք, որ մի քայլափոխ ևս հետ կոխելու կամք չունինք, ոչ միայն պ. Ջամուռճյանի շաղփաղփելուց և յուր խորին փիլիսոփայության շռայփելի չքավորությունը հայտնելուց, այլև նրա նորանից հրավիրված կրոնական ժողովը դիմի դնպի նզովքը, այդ խավար դարերի խավար մնացորդը, ջաղջախ եղեգը, որ շատ անգամ գազազան են կարծում ողորմելի՛ մարդիկ։

Սկզբունքների համար մեզ արված սոցիալիստ, կարմիր հասարապետական, ժ. ժ. Ռուսոյի դրուիյունքը ընդունող, և այլն և այլն և այլն ածականների վերա միօրինակ ժպտում ենք և շտապում ենք հայտնել, որ չենք ընդունում ոչինչ հեղինակություն (autorité) և մեր ամբաստանված նամակի մեջ և ոչ անգամ մի բառ կա ժ. ժ. Ռուսոյից։ Բայց թե երկու անգամ երկուքը շորս է ինչպես ժ. ժ. Ռուսոյի համար, նույնպես և իմ համար, այդպիսի դիպվածում ժ. ժ. Ռուսոյի դրուիյան հետևող չեղանք, այլ ճշմարտության, իսկ ճշմարտությունը մի մարդու սեփականություն չէ, թեև պ. Ջամուռճյանը այդ մասին ևս հայտնե յուր երեխայամիտ, անզսատատան պահանջողությունքը։

Հարգել և պատվել հանճարը և բանականությունը ուսած լինելով վաղուց, անունից երկյուղ չունինք, ո՛չ Ռուսոյի և ոչ Վոլթերի, այո՛, պարտական իսկ ենք մեծարել և հարգել հանճարը և բանականությունը, այն ասուվածային թուրանները, որոնցից առաջին անգամ դուրս թռան ազատության կայծերը։

Այո՛, գիտենք հարգել ոչ միայն Օուենը, Պրուդոնը, Ֆուրիեն և Ֆոհրը, այլև Շիլլերը, Գյոթեն, Ֆիհտեն, Քանթը և Հեգելը, ճնշված մարդկության այն անմահ բարեկամքը և անտարակույս, պ. Ջամուռճյանի աչքում հերետիկոսները և հերձվածողները։ Բայց երջանկություն և փառք կհամարինք մեզ, միասին մնալ այդ բոլորի հետ և միասին անհավատ և հերետիկոս կոչվիլ, քան թե բաց աչքով մեր մարդկությունը, մեր մարդկային ազատությունը և իրավունքը ուրանալով, պ. Ջամուռճյանի հետ բռնվիլ բարոյական հարիներից և ճռճալ մի տղայամտություններից դնպի մյուս տափեստություններ, մի սխոլաստիկականություններից դնպի մյուս սխոլաստիկականություններ։

Երջանիկ կհամարինք մեզ, հռչակելով մարդկային ազատությունը, իրավունքների հավասարությունը, որոնք ստրկացած են կամ բռնա-

կայների կամ դարավոր ավանդությունների (tradition) որևէ խաժամուժ ամբոխի (և այս կերպով մարդագիր օրենքը շեղված բնականից, ոչ միմիայն տախտակներից[4], այլ այն շավղից, որ բացում էր մարդկային բնականությունը) բամբասվիլ և հայհոյվիլ, քան թե կրոնական ժողովի օրհնությունը վայելել ապ. Չամուռճյանի շնորհակալության հետ, Պողոս շարագործը եկեղեցական ճանաչելով, հարատահարության կողմնակից լինելու վնասիցեմք։

Քա՛վ լիցի մեզ. ո՛չ երբեք։ Պարտավորվածը քահանա ճանաչելով պիտի արհամարհենք քահանայությունը, կամք չունինք. մատնելով շարագործը քաղաքական կառավարության ձեռքը, միմիայն պաշտպանում ենք հասարակաց իրավունքը։

Եթե ապ. Չամուռճյանը երկար տարիներով, հարակցություն ունենալով եզվիտների հետ և շատ անգամ գործիք լինելով նոցա ձեռքում, ամենայն քաղաքական իրավադատության մեջ տեսանում է ինկվիզիցիո, հանցանքը մերը չէ, այլ յուր տգիտությանը, որ չէ կարողացել մինչև այժմ ուսանել եվրոպացիների փորը ի շատ ազատ օրենսդրություններ։

Անգլիական պառլամենտները խավար դոմինիկյանների[5] ժողովները չեն, անգլիական օրենսդրությամբ մարդու անձնավորությունը պաշտպանված է ամենայն կերպ, առավել քան թե բոլոր Եվրոպայի մեջ, բայց կան հանցանքներ, որ մահով է պատժում այդ ազատ կառավարությունը։

Իսկ մեք Պողոսի համար մահապարտության խոսք արած չէինք, և վատությունը միայն հարկադրել էր ապ. Չամուռճյանին քաշքաշելով մեր ասածը, ինկվիզիցիոն հանդես հանելու։

Թող ընթերցող հասարակությունը վերատին կարդա Պողոսի շարագործությունքը Մեղուի մեջ և թող կարդա ոչ որպես ասակ լուր, որ վերաբերություն չուներ ընթերցողներին, այլ որպես մարդ և մարդկային զգացողությամբ։

Աղչկա կատարյալ խախտել, հետո ամուսնացնել նորան յուր մանուկ փոքրահորի հետ, հետո սպիտվելով առևանգյալ կնոջ բողոքելուց, ամուսնությունը լուծել և վերատին պսակ դնել մի այլ մարդու հետ։

Մի ուրիշի ամուսնություն հինգ հարյուր ղուռուշի համար լուծել և վերատին այլ մարդու հետ ամուսնացնել։

Հղի կինը կապել և այնքան ծեծել, որ հղացած զավակը վիժե և այլն և այլն և այլն։

Մեք սարսափում ենք այս տողերը գրելով, որովհետև արյամբ չափ հարգում ենք մարդկային ազատությունը և իրավունքը, իսկ ապ. Չամուռճյանը, այս հանցանքների մոտից բնթևությամբ քերվելով, ինկվիզիցիոնական է համարում Պողոսը դատաստանի մատնելը և մտածում է թե այդ անունի և դեղջուկ բացատրությամբ պիտի կարողանա բռնաբարել ազատությունը. խե՜ղճ մարդ։

Մեք, մեր ամբաստանված նամակով, այդ չարագործությունների համար, մեր կարծիքը Պողոսի մասին հայտնեցինք այնպես, որ ավելի

ասելու չէինք, եթե այն բռնաբարված աղջիկը լիներ մեր քույրը, եթե այն ծեծված կինը լիներ մեր ամուսինը, բայց կարծում ենք, թե պ. Չամուռճյանը այնպես խոսելու չէր, ինչպես այժմ խոսեցավ, եթե Պողոսի չարագործության ենթակա եղած լիներ յուր քույրը կամ կինը։

Ինչի՞ համար է այս խորությունը, ի՞նչ բանով ավելի իրավունք ունի պ. Չամուռճյանի պատվելի դուստրը կամ ամուսինը, քան թե մի վանցի լլկված և բռնաբարված անմեղ աղջիկ, քան թե մի նահատակված կին, քան թե մի զավակ, որ, դեռ հրապարակի լույսը չտեսած, սպանվում է պ. Չամուռճյանի վարդապետի ձեռքով և մոր արգանդից տեղափոխվում է դեպի դերեզման։

Եվ այս տեսակ անասելի և անլսելի ոճիրների համար, չարագործը եկեղեցական կամ քրիստոնյա չճանաչելը հանցա՞նք է կամ անօրենություն՞ն, ինչպես կամի հավատացնել մեզ պարոնը յուր տիտղոսական փիլիսոփայությամբ։

Եվ ո՛վ է այն մարդը, որ պիտի փակե մեր բերանը, այս անօրենությունների ընդդեմ բողոքելուց, ո՛վ պիտի համարձակի բռնանալ մեր ազատ խղճմտանքի վերա և հարկադրել եկեղեցական ճանաչել մի պիղծ էակ, որ կորուսանում է յուր սոսկ մարդ կոչվելու իրավունքը անգամ. պ. Չամուռճյա՞նը, յուր փտած ու վաճառված գրիչով, թե՞ կրոնական ժողովը յուր մտացածին իրավասությամբ։

Ի՞նչ ունի մեզ ասելու կրոնական ժողովը, եթե ասենք նորան, թե կրոնական ժողովի գործը և պաշտոնը է քննել և դատել հոգևորների այն գործերը միայն, որ ուղղակի վերաբերություն ունին դավանաբանական խնդիրների։

Ո՞ր աշխարհի մեջ տեսված է, որ եկեղեցականը, քաղաքական կամ քրեական հանցանքների համար դատվի կրոնական ատենի առաջև։

Մենք բողոքում ենք, մինչև այժմ հայոց մեջ եղած այս անկարգության ընդդեմ։ Մեր հոգը չէ, եթե այդ կարգը սխալմամբ անցած ևս է Սահմանադրության մեջ*. դրա հակառակ դարձուցանում ենք ազգի ուշադրությունը այս բանի վերա և խնդրում ենք սրբագրել, եթե հիրավի առանց բացատրության տված է, թե եկեղեցականների դատը պատկանում է Կրոնական ժողովի տեսչության։ Եկեղեցականը, քաղաքական և քրեական գործերի պատճառով պիտի դատվի քաղաքական և քրեական ատյանների առաջև, միայն կրոնական ժողովի կողմից մի պատգամավորի ներկայությամբ, որ հարկ դիպվածում պաշտպանե պարտավորվածի իրավունքը, եթե քաղաքական կամ քրեական ատյանները հակին դեպի անարդարություն։

Եվ մի՞թե եկեղեցականը, դողության, անառակության և սպանության համար պիտի հանդիման լինի կրոնական ատենի առաջև, մի՞թե այդ կրո-

* Այս տողերը գրելու ժամանակ մեր ձեռքում չունեինք Սահմանադրությունը և մեր հիշողությունը զլացավ մեզ օգնել, ըստ որում Պոլիս, համապարհի վերա, մի անդամ դեռ կարգացինք այդ փրկաբար կանոնադրությունը։

նական առյանը գողությունը, անառակությունը և սպանությունը պիտի համարե կրոնական խնդիրներ, ուրեմն և կրոնական ժողովի դատաստանին ենթակա. մի՞թե այդ հանցանքները գործող եկեղեցականը նույն պատիժը կրելու չէ, ինչ որ պիտի կրեր մի աշխարհական։ Այդպիսի դիպվածում, եկեղեցականությունը չէ՞ դառնում արդյոք մի ապաստանարան, ուր կարելի էր ամենայն անօրենություն գործել անպատիժ։ Եվ եթե այդպես պատահի, ձախողակի, այնուհետև այդ եկեղեցականությունը պիտի դատավո՞ր նատի ուրիշի խղճմտանքին, պիտի հանդգնի բերա՞ն բանալ, մա՞րդ խրատել, իրավասությո՞ւն բանեցնել։ Ողորմելի՜ է այն մարդը, որ պիտի ընդունե այդպիսի եկեղեցականությունը։

Մեր համար, օրենքի և իրավունքի առաջև, ոչ եկեղեցական կա, ծայրացյալ իրավունքներով և ոչ անհագագ ստրուկ զրկված ամենայն իրավունքից և արտոնություններից. երկու դիպվածում էս տեսանում ենք լոկ մարդ, բոլոր մարդկային կատարելություններով և թերություններով։ Ուստի, մինի միստիկական իրավունքը և պատիվը երկրորդի ստրուկ համարվելու սուտ փաստի հետ միասին մեր կողմից պ. Ջամուռճյանին ընծայելով, շտապում ենք ասել, որ օրենքի և իրավունքի առաջև քննվում է և դատվում է նախ գործը և ապա գործողը։ Գործը գնահատելով կարելի է վարձատրել մի առաքինություն և դարձյալ. պատժել և պատուհասել մի չարագործություն։ Բայց չարագործը եկեղեցական է, մեր փույթը չէ. մենք կդատապարտենք նորան պատմության առաջև, իսկ պ. Ջամուռճյանը եթե կամի խունկ և զմուռս ծխել այնպիսուն, ազա՞տ է։

Մի գործ կամ մի մարդ պաշտպանելու կամ դատապարտելու ժամանակ մենք հիմնվում ենք միմիայն այն անխախտելի հիմքերի վերա, որ ազատ իրավունքը և առողջ բանականությունը թելադրում է. հետևաբար ոչինչ կանխակալ կարծիք, ոչինչ սրբացուցած ավանդություն չէ կարող արգելք լինել մեզ։

Աշխարհի պատահական կոչումները և պատվանունները չեն կարող օրենքի և իրավունքի առաջև միջնորմն լինել հանցանքի և հատուցումի մեջ, որովհետև այս հատուցումը, վերստին կրկնում ենք, մի լոկ վրեժխնդրություն չէ, այլ հասարակաց իրավունքի պաշտպանություն։

Հոգևորականությունը, օրենքի և իրավագատության առաջև չունի այն միստիկական խորհուրդը, ինչ որ ունեցած տեսանում ենք պ. Ջամուռճյանի համար։

Հոգևորականք նախ և առաջ քաղաքացի են և ապա հոգևորական, ուրեմն, որպես կցորդ քաղաքական իրավունքների, պատասխանատու հասարակաց օրենքի առաջև։

Մարդկության գլխից անցածը ըստացել է մեզ, որ ամենայն յուր մեջ միայն փակված և կենտրոնացած կացություն, սկսած Եգիպտոսի քուրմերից մինչև Պիոս յոթերորդի ձեռքով վերականգնյալ պ. Ջամուռճյանի հոգեհարազատքը[6] վնաս տվեցին մարդկությանն։ Այդ կացությունքը, կտրված բաժանված հասարակաց մարմնից, ոգևորված դժոխային նա-

կանութիւամբ, բռնաբարեցին ուրիշները և հափշտակելով նոցա ազատութիւնը զրաց ուցին յուրյանց չարաչար գործադրութիւնը ազատութեան։

Այնուհետև մարդիկ ընկան բարոյական գերութեան մեջ, այն է, մտքի և բանականութեան գերութեան մեջ, ուր մարդը համարձակութիւն չունի ինքնուրուեսնաբար մտածելու, այլ դատապարտված է հետևիլ յուր գահիճների թելադրութեան. նա ստիպված է գնալ այն ճանապարհը, որ օգտակար է միմիայն այդ կացութեններին։

Այո՛, շատ դարեր գնացին մարդիկ այդ ճանապարհը, բայց ի վերջո, երբ երես առ երես հանդիպեցան և զարկվեցան անանցանելի պատին, որ խաչաձև կտրում էր նոցա ճանապարհը, կանգ առին և սկսան մտածել։ Թե ո՛րչափ փոխված է այժմ այդ խավար ճանապարհը, կամ թե ո՛րչափ մարդիկ դեռևս առ թարթափ գնում են նորանով, շատ անգամ առաջնորդված պ. Ջամուռճյանի նման մի աղոտ լուսով լապտերի, այդ խնդիրը այս տեղիս վերաբերութիւնը չունի։

Բայց այս է բանը, թե պ. Ջամուռճյանը, ի՛նչ նկատմամբ արդյոք եկեղեցականների դասը աշխարհականներին անմերձենալի քարոզելով, բարձրացնում է մինչև քուրմերի և եզվիտների կացութիւնքը։

Ոչ բնավ պիտի ընդունինք այս դրութիւնը, քանի որ մեր եկեղեցականք ժողովրդի ընտրութիւամբ և համաձայնութիւամբ չինում են եկեղեցական, քանի որ մեր եկեղեցու կառավարութիւնը սահմանադրական է, քանի որ մեր եկեղեցականներին դեռևս շատ բան պակաս է եպիսկոպական քուրմ կամ եզվիտ լինելու համար։

Այս դրութիւնը մերժելով վերստին կրկնում ենք, թե եկեղեցին ազգն է, իսկ հոգևորականութիւնը սպասավոր այդ եկեղեցուն։ Ազգը, ամենայն օր իրավունք ունի, այդ հոգևորներից մինը յուր լավութեան համար պատվելու և սիրելու, իսկ մյուսը, յուր վատթարութեան համար, դատապարտելու և պատժելու։

Մեր փուլիը չէ, եթե, ոտքից մինչև գլուխ միստիկականութեամբ խմորված, պ. Ջամուռճյանը նայում է հոգևորների վերա, որպես անմերձենալի մարդերի վերա. մեր փուլիը չէ, եթե մյուս կողմից կրոնական ժողովը յուր տեսչութեան սեփական համարում է հոգևորների դատաստանը, մենք կրկնում ենք, թե հոգևոր անձինք, որպես մարդ և որպես անդամ եկեղեցու ազատ չեն հասարակաց ազգի անկողոպտելի իրավասութեններից և հասարակաց ձայնը, հասարակաց բողոքը, մի հոգևորի անօրենք գործերից, լիակատար զորութիւն ունի մարդասպանը, գողը, պոռնիկը, շունը, հարստահարողը, վնասը, ամբարտավանը, ազգատյացը և այլն և այլն եկեղեցու քեմի վերայից չքացնելու համար։

Թող չվախենա պ. Ջամուռճյանը, այս դատապարտութեան հետ ոչ երբեք հարակից է այն թատրոնական գործողութիւնը, զգեստավորելով և մերկացնելով յուր քահանայական զգեստներից պարտավորվածը։

Այդ դատապարտութեան մեջ, որպես նաև դատավճիռը գործ դնելու մեջ, պաշտոնակատար է միմիայն խղճմտանքը և իրավագատութիւնը։

Այս խոսքերը ասելուց հետո ամենայն իրավունք տալիս ենք պ. Ջամուռճյանին, կամեցածի չափ, մաշտոցի կամ Սուրբ գրքի խոսքերը քաշքաշելու։

Մյուս կողմից, Կրոնական ժողովը, եթե ստուգիվ, և ոչ որպես խռովիլակ կամ մի այլպիսի ժողով, ապա ուրեմն կազմված չէ հոգևորների անարժանությունքը քողարկելով ժողովրդի գայթակղությունը զորացնելու համար, նա կազմված չէ անիրավությունը պաշտպանելով, հարստահարված ազգին թշվառության մրուրը մինչև տակը խմեցնելու համար, այլ այդի ապականող աղվեսները բռնելու և հոտը գիշատող գայլերը ջնջելու համար։*

Ազգը չէ հոգևորների համար, ուրեմն և ոչ Կրոնական ժողովի համար, այլ գաղափարը ինչ հանեն միանգամ յուրյանց մտքից, այլ հոգևորը և Կրոնական ժողովը նզած են և կան ազգի համար, և նոցա հարուցանողը, պահողը և գործանողը ազգն է գործ։

Անցան այն ժամանակները, երբ մարդիկ ոգևորվում էին վերացական և միստիկական բաներով, անօգտակար իրական աշխարհը, երկաթի գավազանը ձեռքում, պահանջում է յուր արդարացի հարկը։ Մարդկությունը կապված է երկրագունդի հետ. փորձերը ուսուցին նորան, յուր երջանկության և թշվառության պատճառները գտանել երկրագունդի վերա։

Անցան և անդառնալի անցան այն խավար օրերը, երբ մարդիկ երջանիկ էին համբուրելով մի սևագլխի քղանց կամ շատ անգամ զրշաքաղությամբ և պոռնկությամբ ապականված մի ձեռք։

Ո՛հ, ինչ սարսափելի վիհ կա այն անցած օրերի և այժմուս մեջ։ Այս րոպեիս այդ մարդիկը քաջ գիտենալով, որ արժանավորությամբ չեն կարող շահիլ ազգի համակրությունը, փորձ են փորձում բռնանալու նոցա վերա, կոպիտ ուժի օգնությամբ, կամ յուրյանց խավար առմոսֆերի մեջ նզովքի փայլակներ փայլատակեցնելով։

Երանի՛ այն մարդուն, որ յուր անձը և գրիչը կնվիրե գոցա անբնական իշխանությունը ազգի վերա պահելու համար, երանի՛, որ կաշխատի ճնշյալ ժողովրդի իրավունքը խապտո ոտի տակ առնելու համար։

Վա՛յ մեզ, որ ոչ երբեք պիտի արժանանանք այս երանության։

Փա՛ռք, ի խոնարհ, հՅուսկյուտար՝, պ. Ջամուռճյանին...

Պ. Ջամուռճյանի և մեր գրվածներից պարզ երևում է, որ մեր երկուքի ճանապարհը այլ է բոլորովին, և սորա այնպիսի ճանապարհներ են, որ ոչ բնավ հանդիպում են միմյանց։

Մեր նվիրական պարտականությունն է, որչափ մեր ուժը կտանի, ապատավորել մարդկության, քանի որ միասին ապրում ենք երկրագունդի վերա. խոստովանում ենք մեր տկարությունը, որ չենք կարող բաժանվիլ երկրագունդի մակերևույթից։

---

* *Այս խոսքի վերա գարձնում ենք պ. Ջամուռճյանի մասնավոր ուշագրությունը և շատում ենք ասել, որ չկամենինք խռովավիլակ ասել, որպես առաջին անգամ չկամեինք խռովիլակ ասել, քանի պարտքը այն ապագրական սխալը մատին փաթիթ էր չենք։*

Պ. Ջամուռճյանը, գտանվելով երկրագունդի վերա, ապրում է շատ հեռի նորա մակերևույթից. երկիրը փոքր է նորա մեծությունը տանելու համար։ Շեկսպիրը, Համլետի բերանով, բանտ է անվանում երկիրը և մնում է դարձյալ երկրի վերա, իսկ պ. Ջամուռճյանը թռչում է նաև Օրիոնից բարձր...

Գիտենք, դարձյալ պիտի պար գա Հերոդիադան*, դարձյալ պիտի աշխատություն հանձն առնու պ. Ջամուռճյանը յուր պատավական հերետիկոս և աննյավատ խոսքերը մեր համար գրելու. այդ նորա միակ ազգու, ղենդն է, հաստարակաց խոստովանությամբ սեփականված։

Այդ ղենդը, մինչև մեզ հասանելը փշրվող է, ուստի և կարող միմիայն մեր հեգնական ժպիտը շարժելու. մյուս կողմից շատ ավելորդ չէ հայտնել, թե կուրության և բռնակալության մեջ, այո՛, հավատ չունինք, հավատալով, որ աստված ազատ է և առաջին լույս. ուստի և ամենայն հավատ դեպի նա ազատ խղճմտանքով և գիտակից ազատությամբ։

Կարկատած արևելյական խոսքեր, հավատացնում ենք, որ ժանդատ փարայի արժեք չունին մեր աչքում։

Ահավասիկ մեք կանգնած ենք այժմ, բաց հրապարակի վերա և, ինամիների ղենքերից անխոցելի մնալու ակնկալությամբ, պատնեշ չենք կանգնեցնում մեր առաջև զանազան սուտ սկզբունքներ, սոփեստական գաղափարներ, որոնց չենք հավատում, որ չենք ընդունում և որ մերժում ենք միահամուռ։ Մեք խոսում ենք պարզ, այնպես, ինչպես առանց կարմրելու կարող էինք մեր բանականության հաշիվ ու համար տալ մեր ասածների համար։ Բայց և այսպես ոչ երբեք արգելարիթ ենք պ. Ջամուռճյանին, օրը յոթը ճանապարհ կատարել Բիլուարտի աստվածաբանություններից դեպի Թևսավրոսի փիլիսոփայությունը, և այս վերջինից դեպի առաջինը։

Մեք ազատական նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու։ Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին, նորա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ։

Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից և, կիսագրագետ, ուսումնական կամ փիլիսոփա աստվածներից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով դրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական երկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը։

Պաշտպանել այն հայի առաքինի կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը։ Եվ այս նպատակին հասանելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ սրտորի առաջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև ղենքով և արյունով, նիհն մի օր արժանի լինինք ղենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով։

Ահավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսանում ենք ազգի փրկությունը։

Քրքրելով մեր անբախտացած ազգի ինչվառությունների տարեգիրքը, ինչ ենք տեսանում։

Ո՛րտեղ մի գայթակղություն, որի պատճառը չէր եկեղեցական, ո՛րտեղ հարստահարություն, որի հերոսը չէր եկեղեցական, ո՛րտեղ խռովություն, որի խմորը չէր եկեղեցականն։

Այո՛, ժամանակը լցված է, ուստի և հրապարակի առաջև ասում ենք. տերությենական լրտես՝ եկեղեցական, ազգը մատնող և դավաճանող՝ եկեղեցական, փառքի և պատվանշանի համար, ինքնակալ կոզոպուսը...կաթողիկոս ինքնավորող՝ եկեղեցական, եկեղեցի կողոպտող՝ եկեղեցական, չարաչար արբենցության համար պատուհասավելուց փախչելով, յուր եկեղեցուն դրժող և դեպի պապականության դիմող՝ եկեղեցական, կաթողիկոս չընտրվելու համար հավատն ուրացող՝ եկեղեցական, հրապարակյալ ճակատանության մասին պատասխանից խիթալով վեղարը գետնին զարկող, կրոնավարական կարգը ուրացող և մինչև յուր անասնական կյանքի վերջը բոզի հետ կենակից՝ եկեղեցական, դպրոցների գումարը անհետացնող՝ եկեղեցական, ի վերջո ամեն բան, եկեղեցական. վասն զի ձանձրալի է մի քսո միոջե թվել։

Իրավունք չունե՞ր արդյոք Հյուսիսափայլը հայոց եկեղեցու ոտքից մինչև գլուխ ռեֆորմը պահանջելու։

Այո՛, մի տեսակ մարդիկ, կարծելով, թե Հյուսիսափայլի խնդրած վերանորոգությունը վերաբերվում է դավանաբանության, թև առին ու թռան, ո՛հ, ո՛հ, Հյուսիսափայլը բողոքականություն է խնդրում գոչելով։

Հյուսիսափայլը կրոնական օրագիր չէ և դավանաբանության հետ քնավ վերաբերություն չունի։ Նորան հերի՛ք է, և յուր պարտքը լի կշռով կատարած պիտի համարի, եթե կարողանա երկրայինը միայն բարոգել, աստղերից վեր չկա Հյուսիսափայլ։ Ուր թողունք, որ Հյուսիսափայլը ասած էր, թե հարկավոր է այս ռեֆորմը կատարվի ինքնուրույնաբար, հեռի մնալով պապական և բողոքական եկեղեցիներից։

Կրոնական հավատալիքը, վերացական բաներ լինելով, այլև խրշճմբատների սահմանի մեջ ամփոփված, պիտի վերանորոգվին կամ հեռանան յուրաքանչյուր անձին սրտի և հոգու մեջ լրացյալ ազատությամբ։ Ոչ ոք իրավունք չունի բռնաբարել ուրիշի խղճմտանքը և սրտի ազատ խոստովանությունը և Հյուսիսափայլը, համաձայնվում ենք այսօր ասել, ազատամտության կողմից վերջին օրագիրը չլինելով, ոչ երբեք նեղած է ինքյան և ոչ քնավ պիտի նեղն ուղղել յուր հայացքը մի այնպիսի կետի վերա, ուր մի ուրիշի ազատությունը բռնաբարել կամ դեմ սահմանադրել կենթադրվիր։

Հյուսիսափայլի խնդրած ռեֆորմը վերաբերվում էր եկեղեցական կառավարչության, ռեֆորմ, որով պիտի սանձահարվիներ ոչ միայն Գո-

զոսը և Նիկողոսը, որոնց մասին Հյուսիսափայլը բողոքած է ժամանակ առ ժամանակ, այլև շատերը.... այլև Երուսաղեմի միաբանությունը[9]։

Գ. Չամուռճյանի կարկատած աւետվածաբանությամբ եկեղեցականների գործերը պահվում են Կրոնական ժողովին, այսինքն, նույնիսկ եկեղեցականներին, և ազգը իրավունք չունի այդ բաների մեջ խառնվելու, որովհետև եկեղեցին կազմողը է ազգը, որովհետև եկեղեցին ազգինն է. հրաշալի լոգիկա։

Ո՛չ երբեք, ո՛չ բնավ։

Մինչ խաղաղ բողոքելով, մինչև այժմ եղած հոգևորական շարաշար կառավարութիւններից և Հյուսիսափայլի խնդրած ռեֆորմը հետ չառնելով կրկնում ենք այսօր նույն պահանջողութիւնքը[12]։

Այո՛, ռեֆորմ խնդրում ենք այն սկզբունքների մեջ, որոնցից կախված են հոգևոր մարդկերի որևէ պաշտոն ստանալը։

Ռեֆորմ պահանջում ենք եկեղեցու անտեսական կառավարության մեջ, որպեսզի այսուհետև գեղ եկեղեցական գանձերը չհափշտակվին, չդողացվին և եկեղեցական ոսկի և արծաթի սպասքը հրեա ոսկերիչների բուրանների մեջ չհալվին...

Ռեֆորմ պահանջում ենք հոգևոր իշխանների և առհասարակ եկեղեցականների դեպի ազգը ունեցած հարաբերության մեջ։ Պատառակա՛ն են նորա ուղղել յուրյանց ընթացքը. մինչև այժմ, վարձկան պորտաբույծ և ոչ հովիվ հոտաբույծ, մինչև այժմ նոցա համար բողոքել է մարգարեն. «Ո՛հ հովիւք, որք զանձինս արածէք և ոչ զխաշինսն»։

Ռեֆորմ պահանջում ենք եկեղեցականների կրթության և դաստիարակության մեջ։ Քահանա ունինք, որ կարդալ չգիտե. քահանա ունինք, որ հայերեն չէ կարող խոսել։

*Ռեֆորմ պահանջում ենք եկեղեցականների ձեռնադրության պայմանների մեջ, մինչև այժմ «ԵՒս մեզ անպէտ առ ամենայն կացութիւն մարդ, սիրահարացու դասի առ հոգևորականութիւնն»**, մինչև այժմ սիմոնականությունը վերջին սեղը չունի...*

Ռեֆորմ պահանջում ենք առհասարակ եկեղեցական կառավարության մեջ, որ խառն ի խուռն և անկարգությամբ հառաջանալով, մեծ մասով պատճառ է եղել ազգի դարավոր իշխանության։

Այս վերջին պարբերության ընդդեմ, մանավանդ, պիտի նա զան

---

* *Լաւ ենք, թե երուսաղեմի միաբանությունը մի անօրակ է հրատարակել Մեղուի (Զոլոթ) և Մյուճատիի ընդդեմ։ Դուցե այսուհետև դժվար լինի այդ օրագրերի արտոն հրատարակողներին, յուրյանց օրագրի մեջ, պաշտպանել յուրյանց սրտի վկայությունը, խիթարով Կրոնական ժողովի հարձակմունքից։ Այդպիսի վատաբախտ դիպվածում Հյուսիսափայլի էջերը բաց են նոցա համար. ո՛ւր մնաց, որ Լոնդոնում ևս գրված է արդեն հայկական ազատ մամուլի հաստատության համար մի մաղուլ։ Լաւ ենք, թե Փասիֆ*[10] *յուրդիր մանրամասն տեղեկություն պիտի աս այդ ապարանի մասին, որ մի նոր առհասարակ է ազգի հառաջադիմության ինքնա անդլիացոց ձեռքով*[11]։

** *Ի նամակէ մերմէ առ Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց, որ ի 11-էն փետր. 1860 ամի, ի Մ. Պետերբուրգ բազարէ։*

դարձյալ ախտերը, պիտի դարձյալ կրկնեն նույն բանը, ինչ որ վաղուց արդեն լսում ենք զանազան հոգևորներից, թե նոցա արգյունքն է, որ հայոց ազգը ապրում է մինչև այժմ աշխարհի երեսին։

Եթե կան մի տեսակ մարդիկ, որ ընդունում են այս անուսի պարծանքը ակնդետականների, ոչ միայն չկատարած այլև երազում անգամ չտեսած գործի մասին, մեր փուլիը չէ. մենք մեր կողմից հոգու ամենայն զորությամբ մերժում ենք ակնդետականների այդ մտացածին արդյունքը և խնդրում ենք գործ ցուցանել մեզ։

Ի՞նչով պահեցին ազգը, դպրոցներո՞վ, մատենագրությա՞մբ, քարոզությամբ, ընկերություններո՞վ, ո՞ւր են ապա այդ բանները, ուրման ի՞նչով... և վերստին, ի՞նչով։

Այս բոլորի հակառակը ապացուցանելու համար փաստերը մեր ձեռքում կանգնած ենք և այսուհետև հայի պարտականությունն է անխնա հանդիպել հոգևորներին, որովհետև հետախաղացության և ռեակցիոյի անպարծանք դրոշները նոցա գլխի վերա են փողփողում մանավորապես։

Մեր դրոշը հայտնի է արդեն...

Եթե հայոց ազգը յուր կրոնը պահելով մնաց աշխարհի երեսին, այդ մասին շնորհակալությունն մահմեդականության. սա բացառապես պահպանեց հայերի կրոնը։ Ազգը որչափ ևս թագված լիներ խավար ոգիության մեջ, այնուամենայնիվ, եթե մի մասը գիտակցությամբ, մյուս և ավելի մեծ մասը, ֆանատիկոսությամբ հետի մնալով մահմեդականությունից, պահեց յուր կրոնը, հետևաբար և ազգությունը։

Թո՛ղ հայոց ազգը, իր թագավորության կործանման օրից, ստրկանար որևէ քրիստոնյա կառավարության, այն ժամանակ կտեսանեինք... բայց ի՞նչպես պիտի տեսանեինք. վասնզի մենք ևս ծնելու չէինք որպես հայ։

Անի քաղաքի կործանվելուց հետո հայերը լեհաստան գաղթեցին ահագին բազմությամբ. եթե նոցանից մի մասը փրկվեցավ և այսօր հայության անունը կրում է յուր հակառի վերա, շնորհակալություն Ղրիմի թաթարներին։ Իսկ մյուս և ավելի մեծ մասը, որ մնաց լեհաստանում, ո՛ւր է, յուրյան եպիսկոպոսներով և քահանաներով։ Լեհաստանի մեջ մեր ճանապարհորդության միջոցին (1859) շատ անգամ պատահեցավ մեզ տեսանել հոյակապ, բայց այժմ ամայի, հայկական ակնդետիք, իսկ հայ և ո՛չ մի հատ, ի՞նչ եղան, ո՞ւր գնացին։

Հոգևորականությունը յուր ազգային խնդիրներով, եպիսկոպոսների ձեռքում գործիք դառնալով, ընդհատոր հանեց ազգը, անդարձ կորուց նորան, հետևաբար և ամենայն արդարությամբ ինքը ևս կորավ ու չքացավ լեհաստանից։

Եթե հոգևորք ընդունակ էին ազգը պահելու, ի՞նչու չպահեցին այս դպրոցականությունը Եվրոպայի մեջ, ուր ավելի հնար կար լուսավորության։ Ո՞վ հանեց այն ազգակործան կռիվները, Մեղո՞ւն, Մյունսատի՞ն, Նալբանդյանցը, Մոլսեա, Մելխբանի և եղեռնագործ կաթոլիկոսների կամ

կիսատիրա կամ թե ասել երկդիմի գործերը և ընթացքը, մյուս հոգևորների վատակությունը, որոնց մեջ մեհրուժանյան պատկով փայլում է Նիկոլ, չիք եպիսկոպոսը, սոքա ամենը միասին, ոմանք կամքով և գիտությամբ, իսկ ոմանք ակամա և տգիտությամբ գործակից եղան չվառ գաղթականությունը կորուստի անդունդը գլորելու։

Ո՛վ հայոց ազգը յուր շահատացության և պատվամոլության համար երկրից երկիր գաղթեցնելով մի կեսին պատճառ եղավ մահի, օդի և կլանքի հանգամանքներին անսովորությիններից, իսկ մյուս կեսին աղքատության և սարկության սանդուղքի ամենաբարձր աստիճանին վերա ոտք կոխելու....

Այս բոլորը պատմական ֆակտեր լինելուց հետո, դեռևս հոգևորականությունը պիտի պարծի թե ա՞զգ պահեց։

Մենք այս խոսքերը, հոգևորների ընդդեմ, չէ վերաբերվում մեր առնելի թարգմանիչներին կամ նոցա հետևող փոքրագույն մասին։

Ինքյանք, այդ սուրբ թարգմանիչքը, աքսորվեցան և հալածվեցան մինչև ի մահ ընդհանուր հոգևորականության ձեռքով։

Խենկլի Խորենացին, այն հրնշամակ ծերունին շարաշար հալածվեցավ, որին ի վերջո Բագրևանդի եպիսկոպոսությունը, որպես մահադիզ տալով, անհանգիստ հալածանքով վախճանեցուցին և որ, յուր վախճանի ժամանակ, ահավոր նզովք գրեց հայոց կաթողիկոսի վերա։

Հայոց եկեղեցականությունը և մահով չհաշտվեցավ այն պատկառելի ծերունու հետ. նորա ոսկերքը փորեց հանեց գերեզմանից ու գետը թափեց։

Ղազար Փարպեցուն ոտքը բորիկ քշեցին վանքից, որ, Մամիկոնյանց Տիրոջ Վահանի հանձնարարությամբ բարեկարգել էր, յուր սեփական ունեցած չունեցածը ծախելով։ Վանքից հալածելու ժամանակ, նորա բոլոր ինչքը հափշտակեցին, նաև հունարեն գիրքերը, թևև մարդ չկար վանքում հունարեն կարդացող։

Խոսրովիկը, դեռևս Հայաստան չմտած, երբ լսեցին թե գալիս է, փրփրեցան նախանձով և վառեցին բորբոքեցին յուրյանց հալածանքը, մինչև որ հայրենիքի անձուկով այրված, տոչորված երիտասարդը, որ աշխարհից աշխարհ գնացել էր բան ուսանելու, ազգը լուսավորելու համար, լսելով այս մահաձայն աղեղների դռնչյունքը, աղոթենց առ աեր և վճարեց յուր կլանքը, որի և ոսկերքը օտարք և ոչ մեք արժանի եղանք ընդունելու։

Խորենացու տգիտահալած մատյաններքը փարաղիկես անունով հռչակեցին, իսկ Ղազար Փարպեցին աղանդավոր։

Փարպեցին, այս բոլորը մանրամասն պատմելուց հետո* գեղեցիկ

* Թուղթ Ղազարայ Փարպեցւոյ, առ Վահան Տէրն Մամիկոնէից, տպեալ ի Մոսկուա, 1853. աշխատությամբ և ջանությամբ պ. Էմինի։ Ցավում ենք, որ մեր հետ չունինք այդ գիրքը, որպեսզի մի երկու էջ կարող լինինք արտագրել այստեղ պ. Ջամուռճյանի և եկեղեցականների հոգևոր միխիթարության համար։

նկարագրում է հայոց եկեղեցականությունը, նաև հինգերորդ դարում, երբ բան է լուսավորության մասին։

«Ահ դառնաշունչ նախանձու իրեանց, որ բունեալ է ի նոսա... պատատառեալ և քոչարկեալ երեսաք նաեին, որպէս առ հոտեալ դիակաս, պապանձեալ իրրև զհամբ դևս։

Այս սխուր պատմություններից հետո, մեր գնդքը դարձնում ենք դեպի կրոնական ժողովը և իրրև անդամ ազգի և եկեղեցու առաջարկում ենք նախ, հասկանալ և ընդունիլ, որ հոգևորականությունը մի տեսակ արհեստ չէ նյութական կյանքի պիտույքը հայթայթելու համար և թե կամ նա խորհուրդ ունենալ, ապա ուրեմն պարտական՛ն է ապաստավորել ազգի հառաջադիմության։

Երկրորդ, նույնը հասկացնել յուր իրավասության տակ եղած եկեղեցականներին, որպեսզի յուրյանց ընթացքը հարմարեցնեն այս գաղափարին։

Երրորդ, տաստիկ պատվեր տալ բոլոր եկեղեցականներին, առանց տասիճանի և պաշտոնի խտրության, չհամարձակվիլ ձեռք վնասելու կամ գավազան բարձրացնել հայոց ազգի գավակները գանակոծելու և գիշատելու համար (տես Մեղու p. 127) այդ հոգևորականության չէ այլ անարգ գործություն*։

Այս առաջարկությունը առնելուց հետո, կապասանք կրոնական ժողովի շրջաբերական հրամանին, հատկապես այս բովանդակությամբ, որ եկեղեցականք չհամարձակվին որևիցե դիպվածում, մարմնավոր պատիժ գործ դնել ազգի անդամների վերայ։

Սին այս շրջաբերականը դուրս չգա, այն ժամանակ (այժմեն հայտնում ենք հրապարակով), որ մենք կհանենք մի շրջաբերական, բայց բոլորովին հակառակ բովանդակությամբ։ Նորանից ծագելու հետևանքը,

---

* Մեք այդ ժպրհ ընթացքը հոգևորներն նկատեցինք նաև էջմիածնի մեջ (1860. հոկտեմբեր)։ Մի առավոտ, ութնկես առաջը բարձրացած սաստիկ աղմուկից և ազդակից տեղեկված դուրս նկա պատճառը իմանալու համար։ Ծավելով տեսա, որ երկու ծախսարար արնագալ ծեծել են տալիս մի քանի հոլ մշակներ, այն պատճառով, որ այդ մարդիկը առանց կծրակերի մնալու պայմանով չկամենին աշխատիլ Եե՛ղ և անպաշտպան հայերի մեջերին բավական փայտ իջուցանելուց հետո, երկի թե այս հայկական ինքվիզիտորների կիրքը չէր նասել, որովհետև նոցանից մինը կարագեա անուն, անպատկառաբես և մեանգամայն կատաղած ինքը սկսեց արագի և բռնի չարդել, արդեն գիշատվածներից, մի խնձոր պատառեր։ Քիթը բերանը արյունաթաթախ, մազապուր փախով գահավեժ ձորից ոտքումնի պատառին և վազելով այսուհետև անցավ, սրբազան Եզիազար եպիսկոպոսի մոտ բողոքց եղած անիրավություններիցն։ Եպիսկոպոսը, անձամբ անձին տեսանելով ոտքումնու վիրավոր կծրպտրանքը, յուր հետ առավ այս արյունով մկրտվածը (որին, Կարապետը եղել էր և մկրտիչ) և գնաց վնհափառ կաթողիկոսի առաջև վկայելու այս անօրենությանն։ Ջանգազկի, նորին վնհափառությունը հիվանդ լինելով, հնարավոր չկարողանալով մարդ ընդունել, եպիսկոպոսը հարկադրվեցավ որպես այսուհետև անգամ, պարտականի քղմով պրոկուրորին բողոքել և խնդրել արժանի անօրենության, որ վանականը չհամարձակվին դիմել գնդի այսպիսի հնարներ։ Թե ինչ հետևանք ունեցավ այդ բողոքը, գեռևս չունինք անդնկություն։

հանցանքը և մեղքը, այս օրից, դնելով կրոնական ժողովի զանցառությանվերա։

Այս խոսքերը ասում ենք ամենայն լրջությամբ և ծանրությամբ։ Կրոնական ժողովը լոկ սպառնալիք չհամարեն կամ բռպեական վազանցուկ կրքի ծնունդ, ո՛չ, ո՛չ։ Այժմ և միշտ մեր գերեզմանի ափը վրեժխնդիր և նախանձավոր ենք հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու և այս խորհրդով ամենայն բանի ընդունակ։

Կրոնական ժողովը կկարդա մեր շրջաբերականը, եթե զանցառության դժբախտությանհանդիպի. մենք, յուր ժամանակին, առանձին ծրարի մեջ կուղարկենք նորան մի օրինակ։

Ո՛հ, ի՜նչ ցավալի պաշտոններ, ի՜նչ տխուր առարկաներ նյութ են այսօր մեր խոսքին։

Ա՞յս էր մեր գործը։

Արյուն է կաթում մեր սրտից, երբ նայում ենք ազգի ամայի և ամուլ կյանքի վերա. աղեխարշ սրտմտում ենք զարձյալ, տեսանելով, որ այս անգործության, ծայրացյալ թշվառության և կարելի եղածի չափ սորրկության մեջ, հայերը դատապարտված են օտարի դավաղանի հետ, ենթարկվիլ նաև յուր եկեղեցականների հարստահարության։

Բայց մինչև ո՛ր աստիճան բարձրանում է այս անախորժ զգացողությունը, մինչ հայ մարդիկ, զարձյալ, հանդես են գալիս եկեղեցականների մտացածին իրավունքը ջատագովելու և ազգի սորկության ժամանակը հարատևել տալու համար. մինչև ո՛ր աստիճան... մենք հրաժարվում ենք սահմանել։

Ազատությունը, այն վսեմակա՜ն աքսորականը, վերստին և վերստին սրբված արյունով, հրաբորբոք տառերով գրվում է պայծառ ճակատների վերա, իսկ հայը և այսօր չէ կարող կատարելապես դուրս հանել յուր ճակատը սև վերարկուի տակից, ուր դարերով ահա որջացել են պարկյանք, ազատության բողբոջները մկրատելու համար։

Մինչև այժմ վերացականությամբ ապրեցանք, որ, ուրիշ խոսքերով, ասել է մեռանք, մի՞թե պետք չէր մի փոքր կյանքի վերա ևս մտածել...

Տարիները վազում են փայլակի շուտությամբ, օրերը թռչում են, որպես մի վայրկյան։ Վախենում ենք և իրավունք ունինք վախենալու, թե մի՛ գուցե, մինչև հայը կշտանա յուր մահանման քնից, լուսինը անդնդասույզ գնա հորիզոնից ներքև...

Շատ ազգեր պատահեցան անբախտության, բայց այդ չեղավ նոցա համար հավիտենական մեռելության։

Աքսորվեցան, կախվեցան, գլխատվեցան և այրվեցան, բայց նոցա հոգին կենդանի մնաց, յուրյանց ամայացած հայրենիքի փլատակների մեջ։

Հայրենիքի օդը, ասրերը և անտառները, խոր գիշերի լռության մեջ, դարերով շշնջացին այդ նահատակների վերջին բռպեում արած բողոքների արձագանքը։

Ելո՜ւկ ձեզ, Հայաստանի սարեր, Հայաստանի ձորեր և Հայաստանի նվիրակա՜ն անտառներ։ Այբարատից մինչև Տորոս, սոխակված եք դուք հնչեցնել միայն, հեկեկանքը և հոնդյունքը Հայաստանի որբ զավակների, հարատահարողների և եկեղեցականների գավազանի տակից։

Ուրիշ ազգերի նահատակների ուրվականքը հալածեցին հարատահարողների կյանքը, մինչև մի ժամանակ, իսկ երբ մինչև բնրանը լցված էր փորձության բաժակը, այնուհետև նոցա ազատգնաց ժառանգների վերարկուների տակից դուրս շողացին պողովատիկները։

Նոքա ապրեցան և բրոնեցան ընդհանուրի օգտի համար, լավ հասկացած լինելով, թե ստ՜ատ է մասնավորի բաջարախտությունը, առանց ընդհանուրի երջանկության։

Նոքա չկաշառվեցան օտարներից... նոքա չնենգեցին յուրյանց ազգին, նոքա չվաճառեցին յուրյանց գրիչը.... նոքա արհամարհեցին օտարի տված պատիվը և աշխատեցան դժպհի պատվանշանների տեղ կրել յուրյանց ազգության անունը, այլև վերքերի սպիք, որոնց արժանացել էին մարտիրոսաբար, ազգի ազատության անունով։

Ի՜նչ մնաց մեզ մեր անցած օրերից, ի՜նչ վիճակի մեջ ենք ներկայումս, ի՜նչ ճանապարհ է մեր գնացածը և ո՜ւր է դորա եզրը։

Սոքա են ահա խնդիրքը, որ ամենայն բանական հայ պարտական՜ն է լուսավիայլ կացուցանել ազգի ընդհանրության առաջև։

Լռություն... Պատվելի Այվազովսքին մեր մինչև այժմ գրածների համար ևս պատրաստվում է հերետիկոս անունով մեզ վերստին մկրտելու։

Բայց որովհետև, մեք երկյուղ չունինք անունից, ուստի և ընդունում ենք նաև պ. Այվազովսքիի սպառնալիքը, Մասյաց Աղավնու մեջ, քննության տակ ձգել Հյուսիսապիայլը, սկզբից մինչև նորա վերջը և հանդիմանել նորա հերետիկոսականությունը։*

*Հրավիրում ենք, որ ստպարեզ իջանե**, բայց եթե բանը կրոնի և սրտի վկայության վերա անհաստատության գա, կարծում ենք թե ավելի*

---

* Հյուսիսապիայլը, գուցե պ. Այվազովսքիի երեակայության մեջ խափանված, շարունակվում է այսօր։

** Այս հրավերը առնում ենք պ. Այվազովսքիին, մինչ արդեն նախընթաց տարիներում բանի անգամ ամբաստանվեցանք նորանից Ռուսիո ներքին գործոց մինիստրի առաջև, որպես անկրոն, որպես անբարոյական, որպես ազատամտ և խռովեցուցիչ ժողովրդյան։ Պ. Այվազովսքին առաջարկում էր քաջափայլ մինիստրին, Հյուսիսապիայլ վնասակար օրագիրը դադարեցնել և մեզ ձգել սահմանի պատժի տակ, օրենքի բովանդակ խստությամբ։ Գուցե պ. Այվազովսքին, հայրական հոգոդությամբ պատրաստել էր մեզ անդի բնակության նեղբինակ կամ կրասնոյարսկ... Մեր չերմությունը մի փոքր բարեխառնելու համար Սիբիրի սառնամանիքը... (բուն առդեղագահական խորհրդով)։ Պ. Այվազովսքին չէ կարող ուրանալ այս իրողությունքը, քան որում երկար քննությունք և գրագրություններ եղան մինիստրների և ցենզուրյան ժողովի մեջ, այլև առաջարկվեցան հարցմունքներ...

Չնայելով այս տխուր անցածի վերա, չնայելով, որ պ. Այվազովսքին յուր Մասյաց Աղավնու մեջ ազատ է ամենայն բան գրելու, նաև գրպարտելու... նաև հայհոյելու, քան որում նորա գրվածքը չեն բննվում ցենզուրյան ժողովի մեջ[13], մյուս կողմից մեր

ժամեր լինին յուր պատասխանատուվությունը, մանավանդ եթե գտանվին մարդիկ, որ հանձն առնուն հրատարակել պ. Այվազովսքիի ընթացքի և գործերի պատմությունը* այն բոպենից, ուր դադարում է Վ. Հայր Սարգսի Մուրադյան վարժարանի պատմության երկրորդ հատորը, որ գուցե մինչև այս տարու վերջը հրատարակվիր Ո՛հ, ինչ պատմություն...

Ավելի դյուրին պիտի լիներ պ. Այվազովսքիին Հյուսիսափայլի մի

բոլոր գրվածքը բննվում են և մանավանդ խնամ, եթե հարաբերություն ունին պ. Այվազովսքիին (ապացույցները մեր ձեռքում պակաս չեն), շնայելով ասում ենք այս բոլորի վերա հրավիրում ենք, որ պ. Այվազովսքին խոսքը բռնե ու հրապարակ իջանե։

* Այդ հրապարակվելու պատմությենից, առայժմ, մի փոքր ճաշակ տալու համար բնթերցող հասարակության, գիտեմ ենք այստեղ պ. Այվազովսքիի վեց նամակների պատճենը, որոնց բնագիրը գտանվում է Վենետիկ, Ղազարու վանքը[14]։

Անշուշտ, այս նամակները մի նոր լույս պիտի ծավալեն պ. Այվազովսքիի խոսք բարոյականության վերա, մանավանդ եթե հիշենք յուր ասածները, ի Հայաբարության անցից Մուրադյան վարժարանին[15] թե Հ. Սարգիսը յուր վերա շարժից վանքի բարկությունը, պ. Այվազովսքին պաշտպան կայով, Հռոմի և վանքին ընդդեմ։ Գ. Այվազովսքիի ազգասիրությամբ անբասականելի հռչակված Հ. Սարգիսը, մինչդեռ պատրաստվում էր պ. Այվազովսքիի օգտի համար, սա գրում էր Աբբայինն հետևյալ նամակները, որոնց մեջ բացի բրիստոնեականից, բարոյականից և մարդասիրականից ուրիշ սկզբունք չգտանք։

ԱՌ ԱԲԲԱՅՆ ՄԻԻԹԱՐՆԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ի ՎԵՆԵՏԻԿ

Փարիզ, 18 Նոյեմբեր, 1848

Աստուածապատիւ Հոգևոր Տէր.

...Վ. Մանգիանոս արդ հասնելէ իսկ իջէ այդր, զի քան գրելոյ իւրոյ առ Հ. Յովհաննէս չՁ սորին ամսոյ մեկնելոյց էր նա ի Լիվոռնոյէ։ Ի նմանէ տեղեկացեալ իջէ տէրդ և քաղցած ինչ իրաց Վարժարանիս և խնդամուտ լեալ, թէ ո՞րչափ վայրապար գանգիտանաց ժողովս մեր երկիցս անգամ լրնդունելոյ զեռաժնչս քարճառաբ տեսչին (Հ. Սարգսին Քեռագործեան) և ո՛րպես յանգուցաս, մանաւանդ թէ իվնաս ևս իրաց վարժարանիս, յանձն արար ի նա ընդ տեսչութենանն և զանուն մատակարարութենան գրամոցս։ Եւ արդ նթէ զնդնալսն չիցէ խոհեմութիւն փոփոխել, առանց կարևոր ինչ պատճառաց, սակայն թուի ինձ, թէ գարժանն պատասխանի առ գրելսն ի նմանէ (զորս ընթերցաւ ինձ) ազարտ է կշռել անկրկիտ և անդատարտակ բանիւք և անժխտելի փաստիւք...

Ն. Տ. Հ. ԳԱԼՈՒՏԻՆ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ

Փարիզ, 17 Դեկտեմբ. 1848.

...Մի ինչ միայն Գեր. Տէր, որ փորր մի տագնապէ զմիտս իմ, այն է, զի առ Հարկի այժմու հանգամանաց Վարժարանիս, ինձ անկ է ուղղակի պատասխանատու լինել առաջի միաբանութենան ոչ միայն զգաստութենէն և գհրահանգաց մանկատուն, այլ գբնւ՛ թէ և զընթացից վարժարանիս առհասարակ. ուր եթէ կայր որ Տեառչ արդեամբ և ոչ անուամբ լռիցէ որպես գարգիսն (Հ. Սարգիսն) իմ պատասխանատուքիւն ընդ նորա ձեռն լինէր և գհանրական տնօրէնութենէ Վարժարանիս նա տայր պատասխանի... Սմին իրի և գամենայն հոգս պիտոյից մանկատուն, գծիրակրոց ասեմ և գգեստուց և գգրոց և որ այլն ևս, իմ յանձին կալեալ է, թէպէտ և գրամոց մատակարարութենէն չի բովանդակ ի ձեռս Վ. Հ. Յովհաննու կայ։ Զայսոսիկ հարկ համարիցայ գնուցանել Վեհիդ, զի ի փորձոյ ուսեալ կարծեմ, թէ ոչ անուանել անատչ է վարժարանիս պատճառաս խնգրել անմեղադիր առնելոյ զիւրն անգործարիւն, և զանհարգուս-

ուրիշ բանի վերա հարձակվիլ, քան թե պատասպարտել նորան որպես կրոնագրուժ։

Եվ ո՛վ է այս պատասպարտողը, որ արդեն երկու անգամ փոխել է յուր կրո՞նը, ո՛ր տպագրությամբ հրատարակել է «Կաթոլիկի ծնած եմ և կաթոլիկ պիտի մնանիմ», որ Տատյան Պողոս բնչին համար տեսրակ

բիւն գիւօր արդիօր և գՁեօր մանաւանդ արկանելով զամենայն զինաս տակաւ զարգացման վարժարանիս (ըստ իւրոցն խնդից)։

Ն. Ս. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ

Փարիզ, 19 Յունուարի, 1849

Վ. Հ. Սարգիս մեծաւ անհամբերութենամբ քուկ սպասել այսի քղթոյ, յորմէ իմանամք, թէ աւուրբք յառաջ գրեալ է առ Ձեզ անշուշտ նամակ ըստ ոմոյ առաքեաց նամակացն իցէ և այդ, որպէս գուշակեմ, իմ ամենէ այն է, զի մի բնաւ խռովեսջիք այլ խոհական խորհրդով և ազգիս պատճառաբանութենամբ կշռեսջիք նմա զպատասխանին, ըստ իմաստութեան Ձերում։

Ն. Ս. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ

Յ. Գ. Արդ իսկ կոչեցայ ի Վ. Հ. Յովհաննէ ի սենեակ Վ. Հ. Սարգսի և տարեալ և ցուցեալ էր սորա նմա գմանրամասն հաշիւ ամենայն ելից և մտից վարժարանիս, հանգերձ առանձին բովանդակութենամբն և կշռով և ընդունելութենան մուրհակաց, Վ. Հ. Յովհաննէս բնդերցաւ և բացատրեաց մի առ մի զկարեորագոյնս ի հատուածոցն, և ապա առէր — Ահա և հաշուեմատեանս ոզջոյն, տեսէք, քննեցէք և ըստ այնմ գրեցէք առ ԳերԱբր. և յղեցէք զրովանդակութիւնքեզ։ Վ. Հ. Սարգիս հարեւանցի և եթ ակն արկեալ ի մատեանն առէ, զայդ առ քեզ կոչիր և գհամառօտութիւնն տուր ինձ զի յղեցից ի Վանս Յաւել Վ. Հ. Յովհաննէս. բայց կամիմ գիտել, թէ ո՛ կայցի գհաշիւս այսր նորոյ տարւոյս. զի նա ոչ ևս կարեմ վարել զպաշտօն, զոր հասարակութենին առեալ է յինէն. իմ պաշտօն այսուհետև խոստովանահայրութիւն և եթ է։ Ասէ Վ. Հ. Սարգիսն, ո՛չ, ո՛չ. կալ դու գհաշիւն դարձեալ, որպէս յառաջ, մինչև տեսից թէ զինչ պատասխանի եկեալ ի վանաց առ քուգիսն իմ։ Եւ Վ. Հ. Յովհաննէս ել ընդ իս ի սենեկէն ենդաարտեալ ընդ մեղմիւ գեացքս առնել։ Իսկ հաշուեմատեանն զոր տեսի, ամենայն մանր մանր տեղեկութենամբ հանգերձ գրեալ է, որպիսի ոչ զվանացն տեսեալ է իմ և ոչ Թաֆայէլեան վարժարանին, զի օրինակ իմն և անուանք իւրաքանչիւր մատենից գնելոց, մի առ մի գրօշմեալ են ի նմա, որպէս և այլ պաշարք և նիւթք չիպրէիթն և չափովք և բնութ ըստ մուրհակացն ընդունելութենան նշանակեալ մի ըստ միոջէ։ Տեսցուք երէ Վ. Հ. Սարգիս առասցէ՝ եղեկէս (երէ ի տես ետրա մեռացէ հաշուեմատեանն) առպէս յոխորտալ ի լինել խօսից...

Ն. Ս. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ

Փարիզ, 29 Յունուարի, 1849.

Ջղնորհնայն ի վեհէդ ի 18 ամսոյս՝ ընկալաք յերկեն հանգերձ օրինակաւ քղթոյն (Հ. Սարգսին), որոյ իմաստք ոչինչ անծանօթ էին մեզ... Գոնալ զայն աննեակաւ և աեարժան կրիւ աեիմաեալի խառնախօսութիւնք և յանդուգն ասացուածովք։ Ջոմանս յառաջարկութենանց նորա, որ իրաւացի մուխն և մեզ գիտեմք, զի և միարանութիւնս ձգնի տակաւ արգիւնացուցանել ըստ կարի և ըստ ներելոյ ժամանակիս, և զոմանս, յորոց մի է և յանձն առնել զտեսչութիւն վարժարանիս ի ձեռս գազգիացւոյ ուրուք, ոչ միայն համարիմք ի նախատինս ոխակիս, որպէս ասէ նա, այլև ի վնաս մեծ վարժարանիս և ազգային կրթութենան, զորոյ զօրինակն ունիմք և ի վերայ գպրոցին Հազարեանց, ամեն իրի և անգործագրելի ամենևին— Իսկ թէ զի՛նչ պատասխանի արժան իցէ գրել առ նա, մեր կարծիքն այս են... խայտառակիլ միանգամայն զգնացս նորա չիտս վարժարանիս, ոչ միայն յներկուց ամաց ևնոյ, այլև անդստին յաւէն, յորում կարգեցաւ ևս ուղղիչ Թա-

դրելով ներկայացնել է Փարիզի արքեպիսկոպոսին, հայոց եկեղեցին հռովմեական խոստովանելու համա՞ր, որ հանգամանքներից և հույսերից բռնադատված վազել է դեպի հայոց եկեղեցու, ոչ երբեք փակված, դիրկը՞ և որ, ավելին ասեմ, լուսավորչական հայերի առաջնորդ կարգվելուց հետո հրատարակել է, հայոց եկեղեցու հակառակ Վարդապետարա՞ն քրիստոնեական հավատո՞։

ֆայլելեան վարժարանին և ապա այսմ ի Գատաիօճ։ Բայց ճանգի այր է սա անխիղճ և կատաղի. լաւ ևս բուի գրել Ձեզ առ նա պատասխանի զգուշաւոր բանիւ.... (բէ) բարւոյ բուեցաւ մեզ և ժողովոյս զի որովհետև ինձ անժարթի է վասն հանգամանաց ժամանակիս գալ այդր՝ վերապատուութիւնդ ի մեզմանալ օգոց փութացի անյապաղ գալ այսր ի վէնետիկ... եթէ յանձն առնուցու նա գալ, բարւո՛ր է, զի և վարժարանս գերծանի միանգամ ի տարաւամ տեսչութենէ ասոի տրով սա զանուն և նր տեսչի ունելով զամենայն պատասխանատուութիւն յանձնէ ի բաց թերէ, որպէս միշտ և միանգամայն բջեջամուրեան աշօք հայկով միտ և յանպարտս ընթացս վարժարանիս, և անդադար նախանձուրեամբ ընդ վանացն ջլատէ գձնոս վաստակաւորացս։ Իսկ եթէ յապաղելով ղշուն (որպէս հաւանական թուի) չկամիցի նչանել ատոի, գէթ չկարէ այլևս յայտնապէս հրթմնել ոչ առ մեզ և ոչ առ Ձեզ...

Ն. Ծ. Հ. ԳԱԼՓՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Փարիզ, 19 Մարտի, 1849.

...Ջաղդնցուիւն գրոյն Ձերոյ առ նա չկարեմք հաւաստեալ գուշակել, զայս տեսանեմք և իմանամք, զի ուրա՛խ է նա և ավելի ևս քան զսովորականն, և պատրաստ դարձեալ պատասխանի, որպէս ինքնս գուշակէիցեն ընդ մեզ. ոչինչ անգիտանալով զանհանգարտ և զկռուասէր բարս նորա և զդատարկապորտ չատախօսութիւն։ Բարւոր յոյժ և իմաստութեամբ գրեալ էր Ձեր զիուղին ըստ ամենայն մասանցն, բայց զարմացար յոյժ, թէ ընդէ՞ր ոչ իշխեցաք և ոչ կամեցաք արգոյ ժողովն ներկող ինչ լիշատակ առնել ի թղթին գյանձնելոյ նորին դարձեալ զամենայն զգործ և զմատակարարութիւն վարժարանիս ի ձեռս Վ. Հ. Յովհաննու, և զհրաժարական բանիցն զորս սակաւ կրկնէ նա ի թուղթս իւր։ Դիտեմք իսկ զի վրիպակ մեծ էր զոր գործեաց ժողովն մեր, տալովն ի ձեռս Հայր Սարգսի զամենայն իշխանութիւն տեսչութեան և գործակալութեան, ընդդէմ խղճի իւրոյ և ճանաչման իւրոց, գիտելով չափ զորաւորվի անկարողութիւն և զխռովարար բարս անձն գործ առնե, բայց բանզի նա հրաժարեաց կամակար ի յանձառութենէ գործոյն, ժողովք լի՛մ լոյնք.... Յաւժ ամենայնի մխիթարութիւն մեծ է ինձ զի այս կոիւ և խռովութիւնք (որ թուի թէ ոչ գաղարեացին իսկ մինչև իսպառ այսպիսի հնարիւք) ոչինչ բնաւ ամենևին խափան չինին ներքին բարեկարգութեան և յառաչագիմութեան վարժարանիս գլխովին...

Ն. Ծ. Հ. ԳԱԼՓՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

...Հ. Հ. Սարգիս թուի թէ չև նա աւարտեալ է զերկոսին թուղթս իւր բազմիչեանս, զոր անձանձրոյթ համբերութենէդ գրէ, որպէս կարծեմ, յայգուէ մինչև ցընդերկայն. զի նա վերածնութեան լրացրոց, զուարճութիւն մեծ թուի նմա և գործ կարևոր վիճաբանել ընդ մեծի և ընդ փոքու զճնոսի խնդրոց և զանցնելոց սուտ կամ սճոսի վարկածից. բայց ընդ մեզ (գէթ առ ներս) բարւոր վարի...

Ն. Ծ. Հ. ԳԱԼՓՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

* Ահա վարդապետարանը, ինչպես վկայում է պ. Այվազովսկին, Գույսի նախկին պատրիարք սրբազան Հակոբոս արքեպիսկոպոսի և Կրոնական ժողովի հրամանով է տպված։ Եթե սուտ է այս, ապա ուրեմն Կրոնական ժողովն անընդունակ է նաև գաղափարական խնդիրները վճռելու, որ մի փոքր հառաջ նորան էինք վճռարտում։ Բայց մի բան ապրակուանցնում է մեզ. Պ. Այվազովսկին հրատարակից յուր շրջաբերականին

Այս Վարդապետարանի վերա էր գրել պ. Էմինը յուր առաքելն քննութիւնը, որ պ. Այվազովքին Մասյաց Աղավնու մեջ հիշատակում է, թե մի առաքելն ձեռագիր տետրակ, յուր ընդդեմ գրված, ման է գալիս ժողովրդի մեջ։

Այս Վարդապետարանն էր, որ Թուխո ներքին գործոց քաջափայլ մինիստրի ձեռքով դատապարտվեցավ։ Պ. Այվազովքին չէ կարող հակառակը պնդել, քան որում յուր սեփական ձեռնագրով, պ. մինիստրի հրամանին համաձայն, առաջարկութիւն գրեց թեմական ատեններին, որ սա շրջաբերական հրամաններ տարածեն բոլոր վանաւոված վարդապետարանքը հետ առնելու և յուրյան հասուցանելու համար, քան որում այսպես էր քաջափայլ մինիստրի հրամանը։

Այս Վարդապետարանն էր, որի վերա մեր գրած բազմիցյան քննութիւնը ընդհանուր հայոց վեհափառ կաթողիկոսը ընդունելով, շնորհեց մեզ յուր օրհնութիւնի կոնդակը, որի մեջ «խարդախամիտ գրուած, մոլորական բան է և յաւէտ գայթակղեցուցիչ պարզամտաց» անվանում է պ. Այվազովքիի Վարդապետարանը*։

Այս Վարդապետարանն էր դարձյալ, որ, առանց նորա դատապարտութիւնը, քաջափայլ մինիստրի կողմից, հիշելու, պ. Այվազովքին, աղավնենական պարզամտութիւնամբ, ուղարկեց վեհափառ կաթողիկոսին, վերատին տպելու հրաման խնդրելով։ Պատճառում էր յուր նամակի մեջ, թե բոլոր տպվածքը վաճառված լինելով կարոտութիւն կա վերատին տպելու։ Հույս ուներ նա, որ վեհափառ կաթողիկոսը, թերևս առանց կարդալու, հրաման կտա և ինքը հետո, կաթողիկոսական ատորագրութիւնամբ,

---

մեջ, թե հայոց եկեղեցու ընդդեմ տպված բոլոր կտորները տպագրութիւնն օրհասներ են. ասել է թե պ. Ճանիկ Արամյանը յուրյանից է շարադրել այն բոլորը։ Պատճառ, տպագրութիւնն օրհաս կարող է լինել տասի կամ շատ-շատ մի բառի մեջ, իսկ գրուածքը, որչափ ևս անփորձ լինի յուր գործին, այնուամենայնիվ, չէ կարող յուրյանից շարադրել էջեր, շարել և տպել։ Այս նմին մի մեղկ զրպարտութիւն է, թո՛ղ պ. Ճանիկ Արամյանը հոգա և բողոքե, մեք այս մասին փուչի չունինք, բայց այսչափ միայն պարտական ենք ասել հշմարտութիւնի համար, որ նմին գիրքը գատապարտվելուց հետո խոստովանեցավ նորա օհասականութիւնը, ո՛ւր էր նորա ուշը, երբ տպված տառեում էր Փարիզից և տալիս էր գպրոցի աշակերտների ձեռքը. չկարգա՞ց, չտեսա՞վ, մի հայոց եկեղեցու հրապարակյալ անհարազատը Հյուսիսափայլի գրիչները պիտի կրոնագրո՞վ բարոզեն Հիրավի, մինչև ի կատակ բարձրանում է սորա ծայրը։

* Երբ 1860 թվականի հոկտեմբերի մեջ, ազգային գործերով գտնվում էինք էջմիածին, վեհափառ հայրապետը, վերատին շնորհելով մեզ յուր օրհնութիւնը, հայտնեց, թե պ. Այվազովքին, յուր Վարք Յիսուսի տտված գրքի թարգմանութիւնի մեջ, հակառակ է խոսում հայոց եկեղեցու վարդապետութիւնի, ուստի և նորին վեհափառութիւնը քննում է և նշանակում է ասացյալ գրքի այն տեղերը։

Գ. Այվազովսքիի գնդի հայոց եկեղեցին ունեցած հարաբերութիւնը, վեհափառ կաթողիկոսը, պաշտաւնական թղթով հայտնած է Թուխո տերութիւնն։ Թե պ. Այվազովսքիի գրելիք քննութիւնի պատասխանելու հարկին հանդիպինք, գնի առիթ կունենանք այդ թղթերը և այլ կոնդակներ հանելս հանելու...

կարող կլինի պատասպարտվածը որպես արդարացած վերստին հրատարակելու։

Բայց այլապես եղավ բանի վախճանը։ Վեհափառ կաթողիկոսը ընթերցավ, քննեց և, գտանելով սխալական և հայոց եկեղեցու վարդապետության հակառակ, արգելեց։ Այս իրողության մասին մեզ պատմել է նույն ինքը ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսը։

Ահավասիկ մեր լինելոց քննիչը, ահավասիկ պ. Այվազովսքին, ըստ մասին։ Եվ մի՞թե այս անարատ մարդը (որի բարոյականության և մինչև այժմ ունեցած ընթացքի վերա ոչ ոք համարձակություն չունի արատ շփել), իրավունք չունի, յուր անսխալական քննությամբ, յուր հակառակորդը դատապարտել, մանավանդ երբ նորա հայացքը օգտակար չէին ինքյան։ Թող Հ. Սարգսի համար Աբրային գրած նամակները վկայեն....

Թեև մարգարե չենք, բայց ընթերցող հասարակության, այժմեն գուշակում ենք պ. Այվազովսքիի ասելիքը այս նամակների մասին։ Այն ժամանակ նա չէ ճանաչում եղած Հ. Սարգսին և հետո, ճանաչելով, ի Յայտարարութեան ածցից Մուրադեան վարժարանին, հռչակել է նորա իրավունքը։

— Եվ այսպես.

Պ. Այվազովսքին Օսմանյան պատմության[16] մեջ հայոց ազգը հերձվածող է կանչում»։

— Այդտեղ նա մեղավոր չէ. առանց նորա կամքին, վանքը հավելացուցել է այդ էջերը*։

«Պ. Այվազովսքին ինչի՞ համար ընդունեց»։

— Ո՛վ է այդ հարցանողը։

(Պ. Այվազովսքին պատասխանում է) «Մի հերետիկոս»։

— Քրիստոնեական հավատո վարդապետարանի մեջ, պ. Այվազովսքին հակառակում է բուն հայոց եկեղեցու վարդապետության։

«Տպագրության սխալանք են. գրաշարը շարադրել է այն բոլոր կատրնները»**։

— Ո՛չ, պարոն, հեղինակի ձեռագիրը, որ կա տպարանի մեջ, վկայում է, թե գրաշարը և ոչ անգամ մի տառ փոխած է. ուստի տպագրության վերա հանցանք դնելը զրպարտություն է։

«Ո՛վ է այդ հետախույզը»։

(Պ. Այվազովսքին պատասխանում է) — Մի անհավատ։

«Վ. Հ. Սարգիսը յուր պաշտոնից ձգելու համար, պ. Այվազովսքին գրում է Աբրային լրտեսական նամակներ»։

— Այդ նամակները գրելու ժամանակ նա չէր ճանաչում Հ. Սարգսի արժանավորությունը***։

---

* Պատմության վերջաբանի երից վարդապետաց։

** Պ. Այվազովսքին շրջաբերականի մեջ։

*** Պ. Այվազովսքիի առյու պատասխանը։

«Անարժանութիւնը ի՛նչպես էր ճանաչել»։

— Ո՛վ է այդ քննիչը։

(Պ. Այվազովսքին պատասխանում է) «Մի պերպերյական մարդ»։

— Պ. Այվազովսքին յուր դպրոցի կանոնների մեջ (§ 34)[17] դնում է, «Թե որ մեկը պատիժ կընդունի, առաջ պիտի կատարե զայն և հետո, թե որ ասելիք մը ունի, անոչին հասկցնե»։

«Պատիժը կրելուց հետո արդարանալու օգուտը ի՛նչ է»։

— Այդ կանոնը կատարվելու համար գրված չէ, ուստի և ոչ կիրառական*։

«Չկատարվելու կանոնը ի՛նչ պատճառով է տպվում»։

— Ո՛վ է այդ իրավաբանը։

(Պ. Այվազովսքին պատասխանում է) «Մի ապաշամը մարդ»։

«Իրավունք թողո՞ւց պ. Այվազովսքին ապաւինելու յուր գործերին կամ գրածին հավատալու...»

— Անտարակո՛յս։

«Ի՞նչպես թե անտարակույս. հունվարի ասածից հրաժարվում է փետրվարին, մի տարի հառաջ գրված բանից հրաժարվում է ներկայումս»։

— Եվ՛ղճ մարդ, որ դեռ չգիտես, թե ճշմարտությունը օրացույցի պես, տարին մի անգամ փոխվում է. հարկ դիպվածներում և ամիսը մի անգամ։

«Հասկացա, և օրը քանի մի անգամ»։

— Այո՛, ո՛րքան շատ, ա՛յնքան լավ. նորա բարոյապես աճեցնում են մարդու հասկացողությունը...

(Աներևույթ ատտանան) «Կեցցե՛ հոգևոր վարժությունը[18]. կեցցե՛ Լոյոլան»։

Առայժմ միջոց չունինք ուրիշ բան ասելու. առայժմ հերիքանում ենք երկու տողով։ Բայց մեր տեսածը և լսածը մեր հետ գերեզման չտանելու խոստումը առնում ենք հրապարակով։ Ընթերցող հասարակությունը կարող է հավատալ ընծայել մեր խոստումներին, մանավանդ եթե հիշե, որ ոչ երբեք զանցառու եղանք մինչև այժմ կարելի հրապարակությունների մասին։

Թող պ. Չամուռճյանը քարոզե, թե հոգևորներից դուրս փրկություն չկա, թող պ. Այվազովսքին յուր ապաոնացած քննությունը սկսանի (ո՛հ, ի՛նչ սարսափ մեր համար), Հյուսիսափայլը կկշռե նոցա արժանի պատասխանը (sic!)**։

---

* Պ. Այվազովսքիի բանկամների մի նամակից, ուր նամակագիրը գնում է պ. Այվազովսքիի բուն խոսքերը։

** (Խմբ.) Այսպես եմք։

ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ ՊՈԼՍԻ ՄԵՋ

Հառաջաբաններով չենք սկսանում այս գրվածքը. ազգային թատրոնին է ընծայված նորա բովանդակությունը և ազգային այս նոր երևույթի վերա պատշաճ չենք դատում մաշված ձևերով խոսք բանալ:

Հայոց ազգը, զանազան աշխարհներում, յուր տարագրության և ցիվահասության մեջ, յուր բազմաթիվ հոգսերի և տառապանքների մեջ, այո՛, վաղուց արդեն զգացել էր ազգային թատրոնի գարոտությունը, բայց և վաղ ժամանակներից արգելք և խափան պակաս չէին եղած այդ մեծամարտուրդ գործի սկզբնավորության:

Հին խելքերը, որոնց գլացել էր գարը յուր ազդեցությունը, որոնք և գործարան չունեին յուրյանց խելապատակի մեջ հասկանալու և կշռելու ազգային կարոտությունների ծանրությունը, որոնք, ասիական գանդագկատությամբ գրեթե կաթվածահար, շատանում էին յուրյանց շնչական բարեկեցությամբ և ի վերջո, որոնց ականջին ազգի անունը, ազգի բարոյական գաստիարակությունը հնչում էին որպես «ձայն բարբառոյ յանապատի», այս հին խելքերն ևնք ասում, չէին կարող և չէ պիտո պատճառ և հիմն լիներին մի այսպիսի գործի, հավատարիմ մնալով յուրյանց սկզբունքին:

Բայց այն վառ երիտասարդությունը, որոնց վերա են մատծող մարդկերի հույսերը, ժամանակի և գարու այն հարազատ որդիքը, յուրյանց կամ ուսումնական և կամ փորձնական կրթությամբ, ա՛յլ հարաբերության մեջ լինելով դեպի ազգը, քան թե նոցա ամուլ նախնիքը, հղացան այս մեծ խորհուրդը, ձգնեցան, թրռնեցան և դեկտեմբեր 14-ի երեկոյան խումն հայկազանց ներկայությամբ առաջին անգամ բացին ազգի առաջև ապագա հայելու հրապարակական վարագույրը:

Կենցե՛ երիտասարդություն: Եվ հայկական հառաջադիմության տարեգիրը ոսկեղեն տառերով պիտի ավանդե գալոց սերունդին թատրոնի սկզբնապատճառների անունները:

Հայկական թատրոնի պատճառքը, շատ դժվարություններով տանելուց հետո պիտի պատերազմներին և մի հինցած նախապաշարմունքի ընդդեմ և այս նախապաշարմունքը էր դերասանների և դերասանուհյաց մասին հասարակության թյուր և սխալ կարծիք ունենալը:

Այն մա՛րդը միայն կարող է նախապաշարյալ հայացք ունենալ

Թատրոնականաց վերա, որ կարծում է, թե թատրոնը մի տեղ է, ուր զվարճանալու համար միայն երթում են մարդիկ, բայց մինչև այդ է. թատրոնի բուն և էական խորհուրդը։

Թատրոնի բնիկը ասոր չէ ուսումնական ամբիոնից. թատրոնի բնին է այն աթոռը, ուր նստում է փիլիսոփայությունը և մարմնավորելով բանը կենդանի, գործնական գաղափարներով և օրինակներով, ազատում է հասարակությունը այդ գաղափարքը, երևակայությամբ միայն, ըմբռնելու աշխատութենից. թատրոնի բնին է այն բարոյական ահեղ դատաստանը, ուր արդարությունը և հանցանքը, առանց աչառության ստանում են յուրյանց արժանի հատուցումը։ Մարդկային բանականություն, միայն այդ բնին է տվել այն կախարդական մեծ զորությունը, որ մի ակնթարթում ցոլացնում է բոլոր հանդիսականների սրտի մեջ ուրախություն, տրտմություն, զարմանք, զմայլանք, ցավ և կարեկցություն։ Մի խոսքով այդ բնիկը տիրում է մարդու բոլոր հոգեբանական կարողություններին։

Չկա մարդ, որի վերա ազդեցություն չգործե թատրոնը, չկա մարդ, որ չկարողանա մի օգուտ քաղել այն օրինակներից, որ մարդկային կյանքի փորձերի որպես հետևանք դրված էին թատրոնաբեմի վերա։ Նա մի նոր տեսակ դպրոց է, ուր ուսանում են ամեն հասակի մարդիկ։ Նա ուսուցանում է գեղեցիկ հայախոսություն, նա մշակում է լեզուն և աննկատելի կերպով ներս է բերում ազգի մեջ ընտիր ոճեր և ազգու դարձվածներ։ Նա չէ միայն ազնվացնում հասարակության գաղափարքը, այլև ցույց է տալիս առաքինության վսեմությունը, մոլության վատթարությունը. առաջինին խրախուսելով և երկրորդից զգուշացնելով և ոչ միայն այսչափ, նա քրքրում է ընտանեկան կյանքը, քննում է նորա և ամենանուրբ կողմերը և մերկապարանոց դնում է հասարակության դատաստանի առաջև։

Բայց այն րոպեին, հասարակությունը մնում է միայն ընդունել միները և մերժել մյուսը. քանզի արդեն համոզված է, քանզի քվեն ձգված է։ Հասարակության սիրտը և զգացմունքը, ախտակից լինելով անցքին, զուգահեռաբար երթում էին գործողության հետ. դերասանների ցույց տված ախտերը և կիրքերը արդեն բացատրված էին հասարակության ջիղերի վերա։

Հասարակությունը գիտե այս, քանզի զգում է, քանզի մարդ է։ Եվ թատրոնի մեջ նա մտանում է յուր նախապաշարմունքը դերասանների և դերասանուհյաց ընդդեմ, նա շատ անգամ պատրաստ է գոփինիներով պատկել այնտեղ այդ նվիրական տաճարի քուրմերը և քրմուհիքը. այո՛, և պատկում է իսկ, այո՛, և չէ խնայում յուր կոկորդը կեցցեներ գոռալով, չէ խնայում յուր ձեռքերը և ձեռնոցները, որ շատ անգամ մի երեկոյի մեջ պատառատռվելով անպիտանանում են կատարի ծափահարություններից։ Ի՞նչ է սորա պատճառը։

Թատրոնի մեջ անկեղծ է հասարակությունը։ Թատրոնի գուռի մոտ ցած է դնում դեմքից այն դիմակը, որ աշխարհի առաջ դասակարգությունքը դրել են նորա երեսի վերա. նա որպես մի օտարաշխարհ մտանում է

թատրոնի մեջ վկա լինելու միայն մի անցքի, մի գործողության, որից մի վնաս գալու չէր նորա անձնական շահին։

Բայց թատրոնից դուրս գնալու ժամանակ, երբ պիտի մտանե դարձյալ յուր առմոսֆերի մեջ, չէ մոռանում յուր հետ առնուլ յուր դիմակը. դարձյալ դնում է աչքին տեսությունը խարդախող ակնոցները և ահա դերասանը և դերասանուհին փոքրանում են, ստորանում են նորա աչքի առաջև։

Ամենափո՛քր է նա, որ ուրիշին համարում է փոքր և ամենաստոր, որ յուրյան համարում է բարձր ուրիշ մարդերից։

Այսպես լինելով բաների կարգը, ի հարկե ոչ ոք չէ ցանկանում հանդես գալ թատրոնարեմի վերա, քանի որ այնտեղ ոտք կոխողը գրեթե հասարակաց անարգության պիտի հանդիպի։ Եվ միթե պակա՞ս քաջություն հարկավոր է, հասարակաց մի սխալ կարծիքը ոտքի տակ կոխելով, նույն այդ հասարակության էական օգտին ապատավորելու համար. միթե հաջողության մեծությունը նորա արգելքների և խափանների մեծությամբ չէ՞ չափվում։ Միթե շա՞տ մարդիկ կան, որ, հասարակաց սխալ կարծիքը արհամարհելով, պիտի կարողանային ցույց տալ յուրյանց մեջ այս բարոյական ուժը, որ հետո նույնը քնքուշ սևոից հուսալու իրավունք ստանային։

Ո՛հ, դեռ շատ ժամանակ հարկավո՛ր է, որ պարզվի մարդու պղտոր տեսությունը։ Քրիստոնեական, կատարյալ հավատարություն քարոզող վարդապետությունը, որ մեծ լինել ցանկացողին խրատում է ամենից փոքր լինել, այն վարդապետությունը, որի հեղինակը յուր աշակերտների ոտքը լվանալով մերժում է և հիմն ի վեր տապալում է ամենայն իշխանական և ծառայական առնչության սկզբունք, հանապազօրյա փորձերից և էական պիտույքներից հետևեցած փիլիսոփայությունը, որ անկանգնելի կործանում է ամենայն անհատական նախապատվություն, այս բոլորը, ասում ենք, մարդը դեռ չէ կարողացել մարսել և փոխանակ հասարակաց հավատարության մեջ, լոկ յուր անհատական առաքինությամբ նշանավոր դառնալու, ամենայն օր մեղանչում է այս սրբազան օրենքի ընդդեմ և կամենում է արժանավոր կացուցանել յուր անձը բռնաբարելով և ուրանալով ուրիշի, յուր հավասար, ազատ իրավունքը։

Եվ մինչև ո՞ր աստիճան, մինչև ո՞ւր. մինչև ամոթ համարել յուրյան ձևոք պարզել մի ուրիշին, մինչև զոհ համարել խոսակից և հանդիսակից լինել մի ուրիշին...։

Այո՛, մի կողմից տրամելով այս բոլորի վերա, մյուս կողմից չենք կարող առնձ դնել մեր ուրախության, տեսանելով հայկական դերասանք և ոչ միայն այլազգի, փա՛ռք և պարծանք երիտասարդության հառաջադեմ քայլափոխին, և դերասանուհիք։

Հայկական թատրոնի պատմությունը չէ պիտու մոռանա Արուսյակ և Աղավնի Փափազյանց արդո օրիորդների անունները, որոնք առաջինն են, որ քաջությամբ ոտք կոխեցին թատրոնարեմի վերա։ Քաջությամբ պա-

ներքոյմնեցան հասարակաց նախապաշարմունքի յուրյանց վերա արած ազդեցութեան հետ, և հաղթելով նորանց հրապարակ իջան։ Կեցցե՛ն։

Մինչև այժմ ներկայացուցված թատերգութեանց մեջ բավական հաջողեցան նորա. ո՛չ միայն գովում ենք, այլև աղոթում ենք նոցա վերա, մոռանալով մի քանի թերութիւնք, որ գրեթե անհրաժեշտ են ամեն մարդու մի նոր պաշտոն կատարելու ժամանակ։

Հույս ունինք, որ նորա հասարակութեան կողմից պատահելով մի վարդապետ ընդունելութեան, ո՛չ միայն ամենայն ջանք և աշխատութիւն գործ դնեն յուրյանց կատարելագործութեան համար (մանավանդ շարժողութեանց մեջ), այլև յուրյանց խիստ բարոյականութեամբ, որ անփոխան է բոլոր հայասեր կանանց և օրիորդներէ, պատվեն յուրյանց կոչումը և աշնպես մի կողմից բարի օրինակ հանդիսանալով յուրյանց հաջորդներին, մյուս կողմից յուրյանց անձը իրրև վկայութիւն դնելով հասարակութեան առաջև, ապացուցանելու համար, թև թատրոնաբեմը չէ՛, որ կողապատում է բարոյականը, նեթև մարդը բարոյական էր հառաջուց։

Հույս ունինք և կցանկանք նույնպես, որ հասարակութեան քաջալերական ընդունելութիւնքը չզլորեն նորանց հայրասիրության վիհը, ուր պահվեժ անհետացել են շատ եվրոպական դերասանուհիք։

Հայրասիրենից ավելի մեծ թշնամի չունի դերասանուհին, որպես նաև դերասանը։ Հայրասիրության երևեցած օրից կզգացուի դերասանի մեջ հառաջադիմութեան ձգտողութիւնը այն կետի վերա, ուր հասած էր. մինչդեռ դերասանը և դերասանուհին, մինչև յուրյանց աստղերնի կատարածը պիտի որ հառաջ դիմեն, պիտի որ կատարելագործվին։

Քաղցր է մեզ հուսալ, որ արդի դերասանք, նույնպես, օգուտ քաղեն հասարակութեան ընդունելութիւններից և աշխատին անարատ պահպանել յուրյանց կոչումը վերոգրյալ պատճառներէ համար։ Մենք մեր գոհունյունը և շնորհակալութեունը միահամուռ հայտնում ենք բովանդակ խումբին, որի մեջ տեսանում ենք քանքար խոստացող հույսեր։

Հույս ունինք թատրոնական վերատեսչութեան կողմից, որ նա մասնավոր ուշադրութեուն դարձնե ա) թատերգութեանց լեզվի մաքրութեան, հասակութեան և միութեան վերա և բ) ներկայացնելի թատերգութեանց ընտրութեան և թարգմանութեան վերա։ Ոչ ամենայն թատերգ, որ կարող է երևել օրինեցն եվրոպական քաղաքներում, հարմար է հայկական բեմին, ոչ ամենայն եվրոպական դարձված հում հում թարգմանելով կարող է հայանալ։

Հայոց ազգի ընտանեկան կյանքը խնդճ է ինչպես մի ասիական ազգի կյանք, բայց խնդճութիւնը դեպի թշվառութեուն կփոխվի, եթե եվրոպական ընտանեկան բարքի զնդխութիւնքը և ավելութքը, որպես քաղաքակրթութեան հատկութիւնք, պատվաստվին հայկական ընտանիքի վերա։

Վերջին ատեճանի քնքուշ է թատերգութեանց ընտրութիւնը. վերջին ատեճանի զգուշութեան կարող. մանավանդ անցանելու ժամանակ այն

ժայռերի մոտից, ուր գահավիժ ընկավ ֆրանսիական ընտանեկան կյանքը:

Հույս ունինք նույնպես, որ ազգային թատրոնի սկզբնապատճառը մանավոր ուշադրություն դարձնեն և աշխատին վերցնել այն բաները ևս, որ կարող էին կամ առիթ լինել որևէ անկարգության կամ վայրապար վատահնեցնել հանդիսականքը, ինչպես պատահեցավ «Երկու մոռացկոտներ» ժամանակ և այն, դերասանների յուրյանց պաշտոնը տարապայման դանդաղկոտությամբ կատարելուց, որով արարվածը չվերջացած դրվին բազմության մի մասը գնաց. քանդի կես գիշեր էր: Այսպիսի գործեր կարո՞ղ էին մեծապես վնասել նոր հիմնված թատրոնին:

Եվ մանավանդ թե անդիք տալ ակարամիտ մարդկերի. փոխանակ յուրյանց դժգոհությունը նույնիսկ կարծեցյալ անկարգության ընդդեմ ուղղելու, փոխանակ յուրյանց մի վիշտ հասուցանողից բողոքելու (երբ կար), ինամանք տեղալ բովանդակ թատրոնի վերա, նախատել մարդիկ, որոնց կոշիկների խրացը արժանի չէր լուծանել, հայհոյել նաև հանդիսականքը և անդուռն բերանով և վատակյան ճամարտակությամբ զրպարտել բոլոր ազգը և կատաղի ճիվաղի պես, փողոցից փողոց և տունից տուն վազելով դիմել մինչև ուսուիկանությունը...

Սորա հակառակ, դերասանների և դերասանուհյաց ջանքը, արգո հաստարակության ընդունելության հետ, կարո՞ղ են մեծ ընթացք տալ թատրոնին:

Հույս ունինք, որ ազգը չզլանա յուր ձեռնավությունը, օրըստօրե թատրոն հաճախելով և այս ոչ միայն թատրոնի նյութական կյանքը ապահովելու, այլև բարոյական քաջալերություն տալու համար:

Այն մարդը, որ մի բարի գործի չէ օգնում, լռելյայն թարոզում է յուր անձի համար, թե այո՛, անարժան էր այն բարի գործին:

Եվ ի՞նչպես պիտի մխիթարվինք մեք, երբ մեր ժամանակից լսինք, որ հայոց ազգը Պոլսի մեջ կազմել է մի ընկերություն, մի փառավոր թատրոն կանգնելու համար, որի շքեղությունը, հարմարությունը և այլ հաջողեցուցիչ որպիսությունքը պիտի նպաստավոր լինեին նորա մեծ հառաջադիմության: Եվ այդ թատրոնը, ներկա սերունդի համար կլիներ մի հոյակապ հիշատակի արձան, որի վերա պարծանքով պիտի նայեին հայերը և որ պատկառելի պիտի կացուցաներ ազգը, ուրիշների առաջև ցույց տալով նորա, ազգի բարոյական գորության և մի ապացույցը:

Պակաս ուրախություն չզգացինք մեք, տեսանելով Զմյուռնիո մեջ վաստակավոր անձնուրաց ընկերության հայախոս թատրոնը. այսուհետև հաջող ենք համարում և դեպի նորա ուղղել մեր աո ի սրտե շնորհակալությունը և ընթացք ու հաջողություն մաղթել յուրյանց չնաշխարհիկ ասպարեզի մեջ:

Կեցցե՛ն բոլոր հայ թատրոնք.
Կեցցե՛ն և դերասանք.
Կեցցե՛ն դերասանուհիք,
Պարկեշտ և ժրաջանք:

Պերա, 17 դեկտեմբ. 1861

ՊՈԼՍԱՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Հայերի վրա վաղուց ի վեր Թյուրքիայում ծանրացած ազազակող անկարգութիւնները Արեւելյան պատերազմից հետո ծայրահեղութիւյան հասան։ Սրա գլխավոր սկզբնապատճառը նրան ազգային-կրոնական վարչութիյան մի քանի անձինք, որոնք անուն են հանել միայն շնորհիվ իրենց հարստութիյան։

Այս մարդիկ, հասնելով պետական պաշտոնների և հետևաբար մոտիկ հարաբերութիյուններ ունենալով Թյուրք կառավարութիյան ազդեցիկ գեմքերի հետ, յուրացրել են իրավունք՝ խառնվելու հայկական բոլոր գործերին, վարելու այդ գործերն ուղղակի, կամ Կ. Պոլսի հայ պատրիարքների միջոցով և վերջապես՝ Դռան առաջ իսկ խաղաղու հայ ժողովուրդը ներկայացնողների դեր։

Կասկած չկա, որ իրենի այս վիճակում, վերջին տեղը չէր բռնում ինքնիշխանութիյունը, այս բառի լիակատար արևելյան իմաստով։

Եկեղեցական և վանական եկամուտները, կամավոր նվիրատվութիյունները, նամանավանդ և ազգային հիմնարկութիյունների վրա արվող ծախսերը ենթակա չէին որևէ վերահսկման։ Դպրոցները, հիվանդանոցները և ասոլվածահաճո մյուս ձեռնարկութիյունները, չնայած հետզհետե ու աստիճանաբար աճող ծախսերին, դիմում էին անկման։

Բայց ի՞նչ էին գնում այդ փողերը և ինչի՞ վրա գործադրվում,— վերին աստիճանի փափուկ մի խնդիր էր այդ. ուղղակի պատասխան տալ այդ հարցին չէր կարելի. վերոհիշյալ անձնավորութիյունների խորին գաղտնիքն էր այդ, և ազգը չէր համարձակվում անդամ մտածելու հաշվետվութիյան մասին։

Վերջապես ազգի ազնաւալի վիճակը գրավեց հայերի ընդհանուր ուշադրութիյունը և հարկադրեց նրանց հետ փնտրելու նամանորինակ գրութիյունից դուրս գալու համար։ Այդ նպատակին հասնելու միակ միջոցը համարվեց այն կանոնադրութիյան իրագործումը, որի մասին վաղուց էր երազել հասարակութիյունը։ Այդ կանոնադրութիյան միջոցով հայերը հույս ունեին վերջ դնելու մեկընդմիշտ ազգային-կրոնական վարչութիյան մեջ տեղի ունեցող ամեն տեսակի շարաշար գործողութիյուններին, վերացնե-

լով միաժամանակ մի շարք անձանց կողմից գործադրվող ինքնիշխանությունը։

Կանոնադրությունը կազմելուց հետո, Կ. Պոլսի նախկին պատրիարքը, ազգի կողմից «Սահմանադրություն» անունը տվեց նրան, անուն, որ կազմված է հայերեն «սահման» և «դրություն» բառերից։ Հետագայում առաջացած հայկական հարցի շնորհիվ, եվրոպական պարբերականները, հայոց լեզվին անտեղյակ, «Կոնստիտուցիա» կոչեցին այդ Կանոնադրությունը, մի անուն, որ անիմաստ է թե հայ ազգի և թե այս Կանոնադրության իսկ վերաբերմամբ։

Հայոց պատրիարքարանում նրա հրատարակման առաջին օրը Կանոնադրության ներկա հակառակորդներից գլխավորները նպատակահարմար էին համարում «Սահմանադրություն» անունը և հավանություն տվին նրան իրենց ստորագրությամբ. կոնստիտուցիայի մասին հիշատակություն անգամ չկար։

Այսպես թե այնպես վարչական այս Կանոնադրությունը, որպես մի միջոց, որ պիտի պաշտպաներ ազգը հայտնի անձնավորությունների ազդեցությունից և որպես դարավոր, ազգի համար ազնտավոր փորձի արդյունք, չէր կարող տալ վարչական հիմնարկություններին այլ ձև՝ քան ընտրովի պատգամավորական ժողովի կերպարանք։ Ըստ Կանոնադրության, պատգամավորներն ընտրվում էին ազգի կողմից գաղտնի քվեարկությամբ և պատգամավորների ընդհանուր ժողովը ներկայացնում էր ազգը։ Պատգամավորական ընդհանուր ժողովն էր ընտրում քաղաքական և մյուս քիչ թե շատ նշանավոր ժողովների անդամներին։ Քաղաքական ժողովը Կ. Պոլսի պատրիարքի նախագահությամբ, որպես ազգային կենտրոնական ժողով, վարում էր ազգային բոլոր հիմնարկությունները, նկեղեցիները, դպրոցները, հիվանդանոցները և աստվածահաճո մյուս ձեռնարկությունները։ Նրան էր պատկանում նաև մյուս երկրորդական ժողովների բարձր հսկողությունը։

Հոգևոր գործերի վերաբերմամբ առաջինին համազոր մյուս ժողովը, դարձյալ պատրիարքի նախագահությամբ պարտավորված էր վարելու կրոնական գործերը։

Այս ժողովները պատասխանատու էին ազգի առաջ՝ ի դեմս նրա պատգամավորների։ Մյուս ժողովները — ուսումնական, տնտեսական և այլն ուղղակի կախում ունեին կենտրոնական վարչությունից և չէին կարող ձեռնարկել կարևոր որևէ բան՝ առանց սրա թույլտվության։ Ազգը, որ վաղուց էր կամենում ունենալ այդպիսի մի Կանոնադրություն, լիովին բավարարված էր, և Կանոնադրության գրեթե երկամյա գոյությունը արդարացրեց նրա հույսերը։

Իրերի այս վիճակը չէր կարող դուրեկան լինել մի քանի անձանց։ Բայց նրանք չէին կորցնում դեմ քաղաքական ժողովի անգամ լինելու հույսը, իսկ մյուս կողմից, աչքի առաջ ունենալով իրենց սահմանափակ թիվը, չէին կարող որևէ միջոցի դիմել հակառակելով ընդհանուր ձգտման։

Մինչդեռ ազգը, որ բացառապես վատթար վարչությունից ազատվելու համար էր սահմանել այդ կարգը, պատգամավոր չընտրեց հիշյալ անձերին, որով ոչ միայն թալաքական ժողովի անգամ լինելու միջոցից զրկվեցան սրանք, այլև վիրավորված զգացին իրենց՝ նկատելով ազգի ակընբախ արհամարհանքը և նույնիսկ՝ատելությունը։

Երկու տարվա ընթացքում Կանոնադրության բնական հաջողությունը, սրա շնորհիվ ասպարեզից հեռացված անձնավորությունների ամենօրյա դատապարտելի ներշնչումները վերջիվերջո կնճռ դրության մեջ դրին Դուռը՝ թե Կանոնադրության և թե հայ ազգի վերաբերմամբ։ Բայց Կանոնադրության մեջ չկար որևէ բան, որ կարող լիներ փոխանց հայերի առ Դուռն ունեցած հպատակությունը, քանի որ այն վերաբերում էր միայն հայ ազգի ներքին ու կրոնական գործերին։ Ուստի և Դուռն հնարավորություն չուներ ձեռնարկելու սահմանված կարգի բացահայտ ոչնչացմանը, որ իսկապես անվնաս մի բան էր անգամ իր համար։ Նա սպասում էր միայն մի առիթի, երբ որ կարելի կդառնար՝ միջամտելու հայերի ներքին գործերին, ոչնչացնելու Կանոնադրությունը և հայկական բոլոր գործերը ձգելու նախնական այն քաոսի մեջ, երբ հարուստների ձեռքով բռնանված ու ճնշված ազգը միջոց չէր ունենա ոչ բարոյական, ոչ մատավոր զարգացման։

Այս ծրագրի իրագործման առիթ գտնված ատրում մնացած Երուսաղեմի հայոց պատրիարքի տեղը հայոց նոր պատրիարք ընտրելու հարցը։ Հայ ժողովուրդը պատրիարք էր ընտրում Բյուրքիայի վանական հոգևորականության միջից, բայց ահա Երուսաղեմի վանականները, Դուռն ներշնչումով, խռովություն առաջացրին ազգի մեջ, պահանջելով, որ ապագա պատրիարքն ընտրվի բացառապես Երուսաղեմի միաբանների միջից։

Այդ պահանջը հիմնում էին նրանք ինչ որ մի կարծիքի, բացարձակապես վտանգավոր մի ավանդության վրա, որին ինչ որ նշանակություն էին տալիս նրանք։ Այդ ավանդությունը եկեղեցական մի կանոնադրություն չէ. այն սկիզբ չէ առնում որևէ ժողովից, այլ Երուսաղեմի վանականների մի մտահղացում է, և իբր հավանություն է գտել Էջմիածնի ծայրագույն պատրիարք Կարապետ Ուլնեցու կողմից։ Այդ ավանդության ծագման և հանգամանքների մասին խոսք կա միայն XVIII դարի Երուսաղեմի վանականներից մեկի, Հաննայի տարեգրության մեջ։ Այդ տարեգրությունը հրատարակվել է Երուսաղեմի վանականների ձեռքով 1779 թվին. այդ հրատարակության մեջ նրանք ավելացրել են ավանդությանը մի նոր, որ չի եղել նույնիսկ Հաննայի քով ձեռագրում։ Բացահայտ մի կեղծիք էր այս, որ չի կարելի արդարացնել ոչնչով։

Կ. Պոլսի հայոց նախկին Մարգիս պատրիարքը սկզբում, հաշվի առնելով ազգի ընդհանուր ցանկությունը և աչքի առաջ ունենալով Երուսաղեմի ավանդության խախտում լինելու հանգամանքը, երկու արքեպիսկոպոսի ու կրոնական ժողովի հետ միասին ազգապարանց բարձրաբարբառ

թե՝ այդ ավանդությունը ուշադրության արժանի բան չէ և թե՝ կարելի է պատրիարք ընտրել դրսեցիներից։

Այն ժամանակ վերոհիշյալ մի քանի անձերը, նկատելով որ զինաթափ են լինում, գործ դրին ամեն տեսակի ջանքեր, Սարգիս պատրիարքին հակառակ համոզմունքի բերելու համար, և այդ նրանց հաջողվեց միանգամայն։ Նրանք հրավիրեցին պատրիարքի ուշադրությունը Դուռն ունեցած շահագրգռության վրա, այլև հայտնեցին, որ սպասվում է ավանդության վերահաստատումը ծայրագույն պատրիարքի կողմից, որի մոտ այդ նպատակով հատուկ սուրհանդակ էր ուղարկվել Երուսաղեմի նույն այն խահակ վարդապետը, որին վանականները կամենում էին պատրիարք ընտրել։ Իսկ Սարգիս պատրիարքը, հակառակ կուսակցության կողմն անցնելով, պաշտոնապես վավերական հայտարարեց ավանդությունը և սկսեց քարոզել, թե ապագա պատրիարքը պետք է ընտրվի բացառապես Երուսաղեմի վանականների միջից։

Դուռը ակնբախ շահ ուներ պաշտպանելու ավանդությունը. լավագույն միջոցն էր այդ, որպեսզի թուլլ չտրվի հայերին՝ պատրիարք ընտրելու Թուրաստանում գտնված հայ հոգևորականության միջից։ Որպեսզի կարողանար հարկադրել ազգին վավերական ճանաչելու ավանդությունը, նա կարողացավ Մատթեոս կաթողիկոսի մերձավորների օժանդակությամբ հավաստել տալ ավանդությունը։ Հայտնի է բոլորին, թե որպիսի դայրույթով դիմավորեց ազգը կաթողիկոսի թուղթը։ Ազգն արգելեց նույնիսկ թղթի ընթերցումը եկեղեցում, և երբ անխոհեմ հոգևորականությունը, ազգի կամքին հակառակ, կամեցավ կարդալ թուղթը, ժողովուրդը աղմուկ բարձրացրեց եկեղեցում. քահանային բռնեցին, կաթողիկոսի թուղթը պատառ-պատառ արին և ծայր առավ արյունահեղ մի կռիվ ժողովրդի և վերոհիշյալ անձերի վարձած հրդեհաշեջների ու բեռնակիրների միջև։

Անկեղծորեն ցավալի է, որ էջմիածնի ծայրագույն պատրիարքը, կամենալով վարձահատույց լինել նրանց, ովքեր որ կաթողիկոս էին ընտրել իրեն, աչքաթող արեց ազգի և ռուս կառավարության ընդհանուր շահը. նա պետք է իմանար, որ Երուսաղեմի վանքը պատկանում է բովանդակ հայ ազգին և ոչ թե միայն թյուրքահայերին և կամ որ ավելի վատ է— Երուսաղեմի ինչ որ երեսուն վանականներին։

Սրա հետ մեկտեղ հարկավոր է առանձին ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ հիշված ավանդությունը, անգամ եթե այդպիսին գոյություն է ունեցել, այնուամենայնիվ երբեք ճշտությամբ չի գործադրվել։ Կան բազմաթիվ օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե Երուսաղեմի պատրիարքներն ընտրվում էին Երուսաղեմի վանականությունից դուրս։ Դրա առաջին օրինակը Հակոբ Նալյան պատրիարքն է, որ ընտրությամբ կոչվեց այդ պաշտոնին ավանդության սկզբնավորությունից 15 տարի հետո։

Տեղի ունեցած անկարգությունների հետևանքով Դուռը փութաց

կարգադրելու Սարգիս պատրիարքին՝ ժողով հրավիրել, բայց ոչ թե կանոնագրության կետերի, կամ 18 տարի առաջ տրված ֆերմանի հիման վրա, այլ ըստ իրա, պատրիարքի բարեհաճողության, և դիմել առանց այլևայլության՝ Բռուսաղեմի պատրիարքի ընտրության։ Հենց որ լուր տարածվեց այդ կարգադրության մասին, զայրացած ժողովուրդը խռնեբամ դիմեց պատրիարքարան, շրջապատեց այն, և, չնայած զորքի դիմադրությանը, ցրեց այն ժողովը, որ ընտրություն էր կատարում Սարգիս պատրիարքի նախագահությամբ։ Զրավականանալով սրանով և գանելով, որ Սարգիս պատրիարքի երկդիմի վարքագիծն այս խնդրում արժանի չէ նրա կոչման՝ հայ ժողովուրդը պահանջում է նրա հրաժարականը։ Պատրիարքը չէր համաձայնվում։ Այն ժամանակ ժողովուրդը դիմեց դեպի Դուռը և այնտեղ պնդեց դարձյալ իր պահանջի վրա։ Նախկին մեծ վեզիր Ալի փաշան խոստացավ բավարարել ժողովրդի պահանջը և միաժամանակ գործ դնել բոլոր միջոցները՝ իրր թե հայկական գործերը կարգի բերելու համար։ Հետևանքը եղավ այն, որ իր անձնական բարեհաճությամբ կազմեց հատուկ հանձնաժողով հայկական կանոնագրությունը վերաքննելու համար։ Ալի փաշայի ասելով, վերաքննությունը պետք է սահմանափակվեր ուղղումներ մտցնելու այն հոդվածների մեջ, որոնք հակառակ կերևային բյուրք կառավարության ընդհանուր ոգուն։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ նա հանձնաժողովին գաղտնի ցուցում տվեց՝ զանազան հապավումներով ու հավելումներով փոփոխելու ըստ կարելույն Կանոնագրությունը և ի վերջո մուծելու նրա մեջ այնպիսի բաներ, որոնց դեմ վերջին դեպքերի ընթացքում շարունակում էր բողոքել ազգը։

Այս կարծիքը հավաստվում է նաև նրանով, որ հանձնաժողովը, հավատարիմ մնալով Դռան ցուցումներին, գրեթե լիովին ոչնչացրեց Կանոնագրության էական մասերը, այնպես որ իր ներկա կերպարանքով Կանոնագրությունը ոչ միայն նո՛ր է վերցնում Խաթթի-Հյումայունով շնորհված իրավունքները, այլև այն իրավունքները, որ վայելում էին հայերը նախքան այդ մանիֆեստը։ Հանձնաժողովը ավարտել է հիմա իր նիստերը, և նրա կազմած նոր Կանոնագրությունը թարգմանվում է ֆրանսերեն՝ հաստատման համար Դռան ներկայացնելու համար։

Հետագա կետերը դիմադրելի են անում հանձնաժողովի բռնած վարքագիծը։

1. Կենտրոնական քաղաքական ժողովը վաղուց ի վեր բաղկանում էր բան անգամից, մի բան, որ ոչ միայն սահմանված էր Կանոնագրությամբ, այլև հաստատված Դռան կողմից, ինչպես այդ տեղի ունեցավ նաև վերջին անգամ, երբ Կանոնագրության հիման վրա քաղաքական ժողովի անդամների ընտրություն կատարվեր։ Այժմ, ըստ նոր Կանոնագրության, նույն ժողովը պետք է բաղկանա տասներկու անդամից, որոնցից չորը որպես մեծամասնություն կարող են բաց անել նիստերը և շրջի համաձայնության դնարում վճռել հարցերը։

2. Նախքան Կանոնադրությունը և Կանոնադրությունից հետո, հայ ժողովուրդը Դանից անկախ, ընտրում էր Կ. Պոլսի պատրիարք, բայց հիմա, ըստ նոր Կանոնադրության, կենտրոնական քաղաքական ժողովը պարտավորվում է ուղարկել Դանը բոլոր եպիսկոպոսների ցուցակը, և Դուռը, նշելով դրանց մեջ քաղաքականապես կասկածելի անձնավորություններին, ուղղակի հանում է նրանց ընտրելի եպիսկոպոսների ցուցակից։ Պատրիարք ընտրվելու իրավունքից զրկող խիստ կասկածանքի տակ են տալիս նրանք, ովքեր որ հարում են Ռուսաստանի կողմը։ Այս մասին պարզ խոսում են Դանի պաշտոնյանները, ինչպես նաև Երուսաղեմի վանականները։ Այդպիսի կասկածանքի տակ են արդեն Գևորգը (Կ. Պոլսի նախկին պատրիարքը, որը Բրուսայումն է հիմա) և Արիստակեսը (Ադրիանապոլսում). մինչդեռ հայ ազգը ներկայիս հազիվ թե ուրիշ թեկնածուներ ունենա, որոնք որ արժանի լինեին այդ կոչումին։

Եվ 3. Հայ ազգը պարտավորեցվում է Երուսաղեմի պատրիարք ընտրել բացառապես Երուսաղեմի վանականների միջից։ Ընտրության այս եղանակը տարածվելու է նաև բոլոր հայ վանքերի վրա, վանահայրերի ընտրության ժամանակ, մի բան որ չէր եղել երբեք։

Կան նաև բազմաթիվ այդպիսի որոշումներ, որոնց հազիվ թե ընդունի ազգը. այսպես թե այնպես ընդհանուր կարծիքը ուղղված է դրանց դեմ, և մտքերի ընթացքը խոստանում է նոր արհավիրք։ Համենայն դեպս, եթե որ հայերը ստիպված լինեն զրկվելու իրենց առաջին Կանոնադրությունից, ապա ազգի նշանավոր մասը անցնելու է կաթոլիկության և բողոքականության, որպեսզի անջատվելով լուսավորչական պատրիարքությունից, ազատվի վերը հիշված անձերի ձեռքից (որոնք հակված են կաթոլիկության կողմը) և միաժամանակ հարելու նրանց, որոնց հովանավորում են Ֆրանսիան և Անգլիան։ Հայ-կաթոլիկ հովվապետ Հասունյանը, որը հայտնի է բուլղարական գործերում ունեցած իր միջամտությամբ, վաղուց ի վեր գավթ է լարում գավառներում, խոստանալով հայերին Ֆրանսիական կառավարության զորեղ հովանավորությունը. նվազ եռանդով չեն գործում նաև ամերիկյան միսիոնարները։

Այս օրերը Կեսարիայից տեղեկություն ստացվեց, թե 300 ընտանիք կաթոլիկություն են ընդունում։ Նրանց այստեղի համերկրացիները կարողացան նա պահել նրանց այդ քայլից՝ մինչև որ վերջնականապես կտրուշվի Կանոնադրության խնդիրը։

Հայ ազգը, դուրկ արտաքին ամեն մի պաշտպանությունից, ենթարկված Դռան կամայականությանը, փոքր առ փոքր կանցնի (և արդեն անցնում է) մասամբ կաթոլիկության, մասամբ՝ բողոքականության և դրա հետ մեկտեղ կտարածվի Ֆրանսիայի և Անգլիայի բարոյական ազդեցությունը Թյուրքիայում։ Մինչդեռ հայերը ամբողջ Թյուրքիայում արտամղված են Ռուսաստանի օգտին, և եթե ռուս կառավարության կողմից ցույց տրվի նրանց ինքուզ և ամենափոքր օգնությունը, այն ժամանակ Ֆրանսիական և անգլիական կառավարությունները կզրկվեն նրանց վրա

ներգործելու հնարավորությունից, հնտևաբար և կանգ կառնի նրանց կրոնի և ազգեցության պրոպագանդը։

Ինչ վերաբերում է Ներսաղեմի հարցին, Թուրը ոչ միայն խախտում է Խաչի-Հյուսայումը, այլև մասնատում հայ հոգևորականության միասնությունը։ Նա զրկում է Ռուսաստանում գտնված հայ եպիսկոպոսներին Ներսաղեմի պատրիարք ընտրվելու իրավունքից և հատկացնում Ներսաղեմի հայ վանքը միայն Թյուրքահայերին, իսկ վերջիններից՝ միայն տեղի վանականներին։ Բայց Ներսաղեմի հայ վանքը բովանդակ հայ ազգի սեփականությունն է, որտեղ էլ նա գտնվի, հինշտ նույն հիմքերով ու իրավունքներով, ինչպես և Էջմիածնի վանքը. և որ Ռուսաստանում գտնվում է կես միլիոն հայ, ապա ուրեմն Թյուրքիան իր որոշումով խախտում է նրանց անհերքելի իրավունքը։

Ի լրումն ամենայնի,— նրա անհարմար է պահանջել, որ Ռուսաստանի հայերը մասնակցություն ունենան Ներսաղեմի պատրիարքի ընտրության, ինչպես որ Թյուրքիայի հայերն են մասնակցում Էջմիածնի ծայրագույն պատրիարքի ընտրությանը, ապա տեղին չէ՞ այժմյանից իսկ միջոցներ ձեռք առնել՝ ոչնչացնելու Ներսաղեմի պատրիարքությունը։ Այդ դեպքում մեր եպիսկոպոսների առաջ կբացվի հանապարհ դեպի Թյուրքիա։ Ուզղակի կախում ունենալով ռուս կառավարությունից և գտնվելով սրա հովանավորության տակ, նրանք կարող են օգտակար գործիք լինել— Ռուսաստանի բարոյական ազդեցությունը Թյուրքիայում տարածելու և հայ ազգը Թյուրք փաշաների կամայականությունից ազատելու համար։

Կ. Պոլիս, 22 դեկտեմբերի 1861 թ.
(3 հունվարի 1862 թ.)



Միքայել Նալբանդեանի «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ» աշխատութեան առաջին հրատարակութեան անվանաթերթը։

Հայկական երիտասարդության

Ջերմ սիրով

Նվիրում է

ՀԵՂԻՆԱԿԸ

ԻՄ ՔԱՂՑՐ ԵՂԲԱՐՔ

Կենդանության նվիրված այս փոքրիկ գործի ճակատը կենդանի մարդերի անունով ցանկացա պսակել, և այս խորհուրդով ձեզ ընծայեցի։

Մեր ազգի անցածը ախուր է, այն օրերի պատմական հիշատակարանները արտասուք է հոսում։ Մեր ազգի ներկան թշվառ է, տարկուիյունը և աղքատությունը բարձրաձայն խոսում են այստեղ։ Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան և ձեր վերա է միակ հույսը։ Ի՛նչ չափով պիտի արդարացնեք այդ հույսը, դորա վկան և չափողը պիտի լինի ձեր գործը։

Մի՛ մոռնաք, որ ձեր ապագան պիտի դատաստան կատարե ձեր գործունեության վերա, ինչպես դուք դատում եք այսօր ձեր նախահարց ասկերքը։ Բայց, այն օրերից բոնած որչափ հառաջ, այնքան ծանր պիտի լինի այդ դատաստանը. աշխատեցե՛ք պայծառ հիշատակներ կտակել ձեր ժառանգներին։

Կանխակալ կարծիքները, որպեսզի ավելի չաաենք, պիտի պատերազմին ձեզ հետ. այս բնական է, բայց առիթ կա և նոցանից օգուտ քաղելու. ուժը չէ կարելի զգալ, եթե չկա դիմադրություն, և մրցանակը, դժվարության չափով հարգ ունի։

Թողե՛ք մեռելներին թաղել յուրյանց մեռելները, նոցա արևը մաած է, իսկ դուք կենդանի եք և ապագայի արշալույսը ձեր գլխի վերա է բացվում։ Ձեր առակավաթիվ լինելը, համեմատելով պետքերի շատության, թո՛ղ չվհատեցնեն ձեզ. այն մարդը, որ զգում է յուր անձը կենդանի, պիտի հարի ձեզ, որովհետև կյանքի հոսանքը միայն մի ընթացք ունի — դեպի հառաջ։

Հառա՛ջ... այնտեղ միայն կարող ենք հանդիպել մեր ազգի կենսանորոգ և որոշընդոստ հարության....

Կենդանություն։

Ձերա՝ ՍԻՄԵՈՆ ՄԱՆԻԿՅԱՆ

26 մարտի, 1862

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒԼԻՂ ՁԱՆԱՊԱՐՀ

Աշխատասիրեց ՍԻՄԵՈՆ ՄԱՆԻԿՅԱՆ

> «Իմ աշխատության գաղափարը միայն եզրակացությունի են, փաստերի հետևանի, ևոևա ըստիճիյան գաղափար չեն, այլ կերպարանված, կենդանի կամ պատմական իրողությունի»:
>
> (ՏԵՅԵՐԲԱՆ)

Հյուսիսային Ամերիկան Հարավային Ամերիկայի միջից սերկուիյունը վերցնելու համար, ուրեմն ազատության անունով, պատերազմ բացեց Հարավային մասի դեմ. քանզի այս մասը չէ հաժարում վերցնել յուր միջից մարդկուիյան նախասահմանքը, մարդավաճառ սերկուիյունը: Այն ո՛ր սիրտն է, որ համակրուիյուն չունի դեպի Հյուսիսային Ամերիկայի այս դյուցազնական անձնազոհուիյունը, ո՛ր խղճմտանքն է, որ հաշտ կարող է մնալ Հարավային Ամերիկայի մինչև այժմ բռնած ընթացքի հետ:

Բայց, չնայելով այս բոլորի վերա, քիչ մնաց, որ Անգլիան պատերազմ հայտնեն Հյուսիսային Ամերիկային. և թե չհայտնեց ապա ուրեմն ակամա, քանզի հաղթուիյունքը, որ տանում են այժմ հյուսիսայինք հարավայնոց վերա, շատ և շատ ծանրանում են Անգլիո սրտին:

Անգլիան ուրախ էր, մինչ, սորանից մի քանի ամիս հառաջ, հարված հարվածի քամակից ընդունում էր Հյուսիսային Ամերիկան:

Այս ի՛նչ բարեկենդան խառնակուիյուն է, կարող է մտածել մի մարդ: Անգլիան, այն ազատ երկիրը, որի և պատկյալ գլուխը չէ կարող ժխտել վերջին սոսկականին, նորա անձնական ազատուիյունը և իրավունքը, կարելի՞ բան է, որ համակրուիյուն ունենա դեպի Հարավային Ամերիկան, ուրախանա նորա հաղթուիւններով և սրտմի, երբ հաղթահարված էր սերկուիյուն քարոզողը, մարդը իրրև անասուն գործածողը:

«Այո՛, այո՛, այդ ազատ Անգլիան: Բայց այս չէ բղխում կառավարուիյան հաճույքից. նա ստիպված է...»

Ամերիկան պատերազմ ունի յուր մեջ, չէ կարող բամբակ տալ Անգլիային, նորա բամբակեղեն ապրանքի գործարանքը փակվում են, գործարանատերքը անանկանում և անգործ մնացած բյուրավոր գործավոր-

քը օրական հացի կարոտ և վերջին հուսահատության մեջ։ Այսքան վնաս հասաջացավ միմիայն պատերազմի պատճառով, ժամանակավորապես բամբակ չգալուց, ապա եթե Հարավային Ամերիկայի միջից ստրկությունը վերնա և բամբակի, և այլ բուսականների մշակությունը ընկնի, այն ժամանակ ի՞նչ պիտի լինին անգլիական գործարաններն և գործավորների վիճակը։ Իրավո՞ւնք է այս, կամ ստրկությունը վերնալով, հիրավի պիտի ընկնին այդ մշակությո՞ւնքը, ինչպես կամին հավատացնել հարավայինք, այդտեղ չէ մեր խնդիրը։ Ներկա պատերազմի այսօրվա հետևանքը, մենք ընդունում ենք որպես իրողություն։

Մեր աչքի առջև են բյուրավոր անգործ գործավորք, որ տանջվում են սովից և վերջին հիվն են թափում, պատերազմելով մի ծայրացյալ ազգասության հետ։

Երևակայեցե՛ք բյուրավոր ընտանիք, որոնց մի անդամը գործելով մի գործարանի մեջ և ստանալով շաբաթը միքանի շիլլինգ, ապրում էին որպես և իցե. այժմ այն գործավորը զրկած յուր չքավոր ընտանյաց մեջ չէ կարող և այն միքանի շիլլինգը ճարել ընտանիքը ապրեցնելու համար։

Անգլիո մեջ որևիցե մի ձևագործի ընկնելու կամ ընթացքից զրկվելու հետ կապակից է բյուրավոր անհատների ըշվառությունը։ Մի տեսակ ժապավեն, որ առաջ գործածական էր, դուրս ընկավ սովորություններից և ժողովուրդը դադարեցավ գնելուց. որոնից ավելի ի՛նչ հասարակ բան կարող է լինել։ Բայց եկեք նայի՛նք այս հասարակ բանի հետևանքին։ Հազարավոր խանութներ, հարյուրավոր գործարանք և բյուրավոր գործավորք մնացին զարձյալ անգործ, անհաց, անտուն և անտեր։

Բողոք բողոքի քամակից, որի՞ ընդդեմ, ո՛վ ինչ կարող է առնել։ Ժողովքներով վճռվեցավ, որ յուրաքանչյուր պատվավոր կին հոժարակամ գնե այդ ժապավենից մի քանի գազ ամենևին պիտակարար, միմիայն ըշվառ գործավորներին օգնելու խորհրդով։ Մատրագրություններ բացվեցան, այո՛, և շատ գումար հավաքվեցավ, բայց այդ շատը, համեմատելով աղքատ և սոված բազմության հետ, շատ աննշան էր և չնչին. թերևս եթե հնար լիներ յուրաքանչյուրին տալ ոչ միայն միքանի շիլլինգ, այլ տասնավոր լիրբեններ, այսուամենայնիվ, փրկություն չէր։

Մառի տերևի վերա ջուր թափելը արմատի չորության չէ օգնում. տերևքը ստանում են մի բուսական զովություն և այլևայլ միայն։

Այսպես և այն խեղճ գործավորքը, իրրև շնորհք, ստանալով միքանի շիլլինգ մի անգամ, մինչդեռ հացը և ապրուստը հարկավոր է ամեն անգամ։

Ֆրանսիայի մեջ, Լիոն քաղաքում, նույնպես փակվեցան միքանի գործարանք. գործավորներին հանդիպեցավ գրեթե նույն ճակատագիրը, ինչ որ Լոնդոնում. ամենայն տեղ ստորագրություն ստորագրության քամակից, այդ աղքատներուն օգնելու համար. նույնիսկ Գաուիբալդին առաջարկից Իտալիո մեջ մի հանգանակություն։

Այս տեսակ աղքատություն, որ ուրիշ աշխարհի մեջ թերևս այնքան զարմանալի չէ, բաների վերա վեր ի վերո նայողների և միայն արտաքին կեղևը քննողների համար, իսկ Անգլիո և Ֆրանսիո մեջ զարմանալի է: Բայց ով սովորել է խնդիրը քննել, քրքրելով նորա բոլոր ծնուցիչ պատճառքը, նա տեսնում է, որ միմիայն Անգլիո մեջ և ըստ մասին Ֆրանսիո մեջ կարելի է այդպիսի աղքատություն:

«Անգլիան հարուստ է, ոչինչ տերություն այնքան արծաթի և ոսկի չունի, ամենին փոխ է տալիս, ինքը բնավ նեղություն չունի, և այլն, և այլն»: Հազարավոր գովեստներ, բյուրավոր երանիներ լսած ենք հարյուրավոր անգամ. նույնը գրվի և Ֆրանսիո վերաբերությամբ: Բայց հարկավոր է իմանալ, որ տերությունքը ազգ չեն, և տերությանց շահը, ազգի շահի հետ բնավ վերաբերություն չունի, քանի որ տերությանց կազմությունը այնպես է, ինչպես որ կան այսօր:

Թե ի՛նչ է տերությունը, այդ մասին մի ուրիշ ժամանակ. առայժմ այսչափ միայն, որ անգլիական ազգը ամեն ազգից աղքատ է և ամեն ազգից ավելի վտանգի ենթակա:

— Ի՛նչպես,— կհարցնեն մեզ ընթերցողքը: «Ճա՛ռ հասարակ կերպով», կպատասխանենք մեք: «Ազգ ասելով պիտի իմանալ հասարակ ժողովուրդը և ո՛չ նորա միջից, նորա քրտինքով և նորա արյունով հատաջացած մի քանի մեծատուներ: Բրիտանիո, Իռլանդիո և Սկովտիո մեջ գտնվում է 29,307,199 հոգի բնակիչ, որոնց մեջ հարյուր հիսունի չէ հասնում հին ազնվական, այսպես անվանված, անգլո-սաքսական տուների թիվը, միլիոնավոր չեն վաճառական տուների թիվը. ասել է թե այն միլիոնները բաղկացնողը է հասարակ ժողովուրդը, ուրմէն և ազգի թե բարոյական և թե նյութական կարողության երևելությիչը: Եթե ասենք, թե Անգլիան հարուստ է, և Անգլիա ասելով հասկնանք կառավարությունը և ազնվականությունը, այդ մի այլ խնդիր է և այն ժամանակ վերագրյալ հարստությունը չէ վերաբերվում անգլիական ազգին, այլ կառավարության և ազնվականության, որ Անգլիա չեն, որովհետև մինը անգլիական կառավարություն է, իսկ մյուսը անգլիական ազնվականություն: Այն ժամանակ միայն, ստուգապես, կարող ենք ասել, թե Անգլիան հարուստ է, երբ այն միլիոններ բաղկացնող անհատների մոտ տեսնենք որևիցե նյութական կարողության նշմարանք: Ի՛նչ աղբյուրներից կարող է հանել հասարակ ժողովուրդը յուր, շատենք հարստությունը, այլ ապրուստը. և ապրուստ հավաստի, մշտնջենական և ոչ ստորյա: Հասարակ ժողովրդի համար, անուղղակի, և մնացած մասին համար անուղղակի, բայց և այնպես անհրաժեշտ, ինչպես ջուրը ձուկի համար, միակ աղբյուր ապրուստի և հարստության է երկրագործությունը: Երբ որ մի ազգ կազմող անհատների մեծագույն մասը պարապի երկրագործությամբ և առհասարակ գյուղական տնտեսությամբ, այն ժամանակ, այդ ազգի բնդհանրությունը հարուստ է և ապահովյալ, որովհետև նորա հիմքը դրված է բնականապես և բնության վերա: Եվ այս պատճառով, փոքրագույն մասը, որ չէ պարա-

պում երկրագործությամբ, կարող է հավասար լինել, որ հազիվ պիտի կարողանա մշակել, շինել, գործել և վաճառել այն, ինչ որ դուրս է բերում դեռևից նորա մեծագույն մասը։ Ազգի մեծագույն մասը երկրագործությամբ ապահովյալ է և անհնար է մի նեղության պատահի, ապրուստի կողմից։ Փոքրագույն մասը, որ բաղկանում է վաճառականներից, չէ կարող անգործ մնալ, քանի որ մեծագույն մասի արդյունքը ապառում է նորա կամ մշակության, կամ վաճառականության, և որևէցն մի գժբախտ դիպվածում այդ փոքրագույն մասից ամենափոքրագույն մի մասը միայն կարող է ենթարկվիլ առօրյա և անցողական նեղության, քանզի ազգի հիմքը դրված է երկրի մակերևույթի վերա և կախված չէ օդի մեջ։ Չկա մարդ, որ չխոստովանի այս ճշմարտությունը և նույնիսկ Անգլիո մեջ, բայց այստեղ է խնդիրը, երկրագործի համար երկիր է հարկավոր գործելու, որ Անգլիո մեջ շունի հասարակ ժողովուրդը։

Անգլիական երկիրները ազնվականների մասնավոր սեփականություն են. հասարակ ժողովուրդը մի հատ ցից զարկելու հող չունի։ Լոնդոնի, այն հսկա քաղաք-աշխարհի հողը յոթին ազնվական տան սեփականություն է, որոնց առաջինն է Բեդֆորդական տունը։ Հասարակ ժողովուրդը յուր երկու ձեռքից ավելի բան չունի. նա բնակվում է ազնվականների հողի վերա և վարձ է վճարում հողի տիրոջ։ Հասարակ ժողովուրդը հող չունենալով չէ կարող երկրագործությամբ պարապել. այն միլիոնները, որ բնակվում են Անգլիո մեջ, օրական աշխատող, վարձական մշակներ են, ծառա և գործավոր։ Այդ միլիոնավոր բազմության միջից այն մարդիկը, որ դրամագլուխ ունին, վարձում են մի որևէցն ազնվականի հողը, վարձում են հազարավոր մշակներ և գործում են երկիրը. սորա են **ֆերմեր** ասացյալքը։ Վարձական-երկրագործ մշակները կախված են յուրյանց ֆերմերից, քանզի եթե սա ոչնահս գործ տալ նոցա, մշակը պիտի սովամահ մեռնի. ո՞ւր գնա և ի՞նչ գործն. իսկ ֆերմերքը յուրյանց կարգով, կախված են այն ազնվականներից, որոնց հողը ունին յուրյանց ձեռքում, եթե վարձուս Անգլիական, այսօր եթե կամենա, կարող է ասել ֆերմերին, ազատ ժամանակ գործեցիր և մշակեցիր իմ հողը, ինձ հասուցիր այսքան վարձ, շնորհակալ եմ, այսուհետև չեմ կարող իմ հողը տալ քեզ, ինձ հարկավոր է, մի ուրիշ տեղ հարիր քո համար։ Եվ ֆերմերը և նորա հազարավոր մշակները, որ այնչափ տարի ապրում էին այն հողի վերա, ոչինչ ունին ասելու ազնվական պարոնին. բնաւրություն չկա, պիտի հնազանդվիլ ճակատագրին։ Այս պատճառով, շատ հող ունեցող ազնվականը ունի յուր քամակում շատ ֆերմեր, հետևաբար և շատ ժողովուրդ։ Ո՛վ չգիտե հողի մեծ պաշտոնը նաև մինիստրների բնաւրության ժամանակ։ Այսինչ ազնվականի հողի վերա բնակվում է այսքան մարդ, և մինիստրի բնաւրություն կա մեջտեղում. այդ ազնվականի հողը մշակող բազմությունը եթե այն ազնվականի անունը չդառա, վաղը հող չունի, որ հավասար է ասելու, վաղը հաց չունի։ Անգլիո անտեսական գերությունը, մանավանդ

բաղդատելով նորա, այլ ճյուղերում ունեցած, ազատ օրենսդրությանց հետ, զարհուրելի է։

Երբ սեռությունը պետք ունի, երբ պատերազմ ունի, շատ անգամ յուր մասնավոր հաճույքի կամ մինիստրի անձնական հարաբերության պատճառով հառաջացուցած, որից հասարակ ժողովրդի՝ ազգի համար չկա ոչ ջերմություն և ոչ սառնություն, սեռությունը դառնում է դեպի ազգը, ազնվականը դիմում է դեպի յուր հողի վերա բնակողները, կարդում է ճառեր, բորբոքեցուցիչ հորդորներ, ա՛զգ, դինվոր տո՛ւր, ա՛զգ, դրամ տո՛ւր, ա՛զգ, կյանքդ տո՛ւր քո հայրենիքը պահպանելու և նորա պատիվը տանը բերելու կամ առավել փառավորելու համար[1]։ Եվ խեղճ ազգը կրում է ծանր հարկեր, զոհում է յուր առույգ զավակները իշնամին վանելու համար, ոգևորվում է հաղթությամբը, տաղեր է երգում, և գործը ավարտելուց հետո ուրախ-ուրախ վերադառնում է յուր տեղը, կարծելով և հավատալով, թե մեծ գործ կատարեց, հայրենիքը փրկեց, հողը փրկեց և պատիվը պահեց։ Սրանից ավելի կոպիտ և խոշոր հեգնություն մեք չենք կարող երևակայել։ Հասարակ ժողովուրդը դառնում է յուր բնակարանը և դարձյալ պիտի հարկ տա ազնվականին այն հողի համար, որ գործում է և որ ազատելու համար գնաց արյուն թափեց, խեղացավ, ջարդվեցավ, որդին, եղբայրը կամ հայրը զոհեց։ Ազնվականը հայրենիքի հողից բաժին ունի բյուրավոր մղոններ, իսկ հասարակ ժողովուրդը չունի մի ոտնաչափ տեղ։ Այս պայմանների վերա կարելի՞ է, որ երկրագործությունը դառնա անգլիական կյանքի հիմքը։

Անգլիական ազգի այդչափ սարսափելի մեծությամբ վաճառականությունը, ձեռագործությունը, մեքենաները, որ այսօր գրեթե դարձել են նորա բնավորության հատկությունը, ամենևին պատահական չեն, այլ հառաջանում են նորանից, որ հասարակ ժողովուրդը հող չունի։ Որովհետև բնականը չկա, հարկը ստիպում է արհեստականով լցնել նորա պակասը։ Անգլիական ազգի այն ահավոր գաղթականությունը, Ամերիկա, Ավստրալիա, Հնդկաստան, զանազան կղզիներ, բնականապես և գլխավորապես, հառաջանում են դարձյալ Բրիտանիո մեջ հասարակ ժողովրդի հող չունենալուց։

Բայց այժմ, բյուրավոր գործավորների այս ներկա թշվառության մեջ, ավելի սաստկանում է գաղթելու կարողությունը. և պիտի գաղթեն նա, որ չկամի սովամահ մնռնել և մնացնել յուր բնատնիքը։ Մի գործունյա մարդ, անդամ որևիցե սարկացած ազգի, թող այսօր առաջարկե Անգլիո մեջ անգործ և հուսահատ գործավորներին և ասե, «ընդա՛ք, ահավասիկ երկրագունդի այսինչ կետի վերա ես ունեի երբեմն հող և ազատություն, որ հնտո ավազակները կողոպտեցին ինձանից, եկե՛ք գնանք այնտեղ հետևյալ պայմանով։ Ձեզանից յուրաքանչյուր գնացող պիտի զենք ունենա յուր ձեռքում և հարկ դիպվածում պատերազմ պիտի մղեն, իմ հետ հավատար, երկիրը ավազակի ձեռքից ազատելու համար. այս պահանջում եմ ձեզանից։ Իսկ որա փոխանակ, ես իմ ազգի անունով խոստանում եմ

ձեզանից յուրաքանչյուր դեմքով գնացող անհատին այնչափ հող, որչափ որ ինձ կամ իմ ազգի յուրաքանչյուր անհատին պիտի բաժին ընկնի։ Խոստանում եմ ձեզ, որ դուք հավիտյանս հավիտենից կարո՛ղ եք մշակել և գործել ձեր բաժին ընկած հողը, առանց վաճառելու կամ գրավ դնելու իրավունք ունենալու. քանզի ես և իմ ազգի յուրաքանչյուր անհատը նույնպես չպիտի ունենա գրավ դնելու կամ վաճառելու իրավունքը։ Մի այսպիսի գործունյա մարդ, այսպիսի առաջարկությամբ, կարող է հազարավոր կամավոր դինվորք գտնել Անգլիա մեջ, և այն ինչպե՛ս դինվորք։ Դինվորք, որ քաջ տեղյակ են երկրագործության, գյուղական տնտեսության և այլ ամենայն տնտակ ձեռագործական արվեստների, որչափ որ մինչև այժմ մարդկային բանականությունը հառաջացուցել է Եվրոպիո մեջ։ Այս լոկ խոսք չէ, այլ ամենայն ուշադրության և ընդունելության արժանի։

Եվ վաճառելու կամ գրավ դնելու իրավունք չունենալը բնավ չէ կարող վշտացնել նորան կամ հետ կացնել գործից, եթե կերպարանագործես նորան պայմանիդ խորհուրդը։ Եվ այսպես, դիմենք մեր խոսում ենք մի այդպիսի դժբախտ գործավորի կամ անհող երկրագործի հետ։

— Ոգամ,— ասում է նա,— և դեն ի ձեռին, քեզ հետ, քո թշնամու ընդդեմ կպատերազմիմ...

«Եվ իմ հավատար իրավունք և արտոնություն կունենաս այն հողի վերա, որ պիտի ազատենք», ընդհատում եմ ես նորա խոսքը։

— Բայց դու պայման դրեցիր, որ գրավ դնելու կամ վաճառելու իրավունք չպիտի ունենանք։

«Այո՛, մեր օգուտը պահանջում է այդ»։

— Ի՞նչպես։

«Լսի՛ր. եթե կամենում ես դեղի մեջ բնակվիլ, ապա ուրեմն մյուս դեղացիների չափով կստանաս քո բնակության, առանին պարտիզի, անասնոց դոմի և այլ կարևոր բաների հարկավոր եղածի չափ հողի քանակություն, որի վերա կշինես քո բնակությունը, վերաբաց պարտպանեքով։ Իսկ եթե քաղաքում կամենում ես բնակվիլ, նույնպես, մյուս բոլոր քաղաքացիների չափով հող կստանաս տուն և բնակության հատատանելու համար։ Եվ այս երկու դիպվածում, այսինքն, եթե դեղում և եթե քաղաքում, քեզ տրված հողը, որի վերա շինություն եթե արել ես և եթե ոչ, ազատ ես, կամեցածիդ պես, գրավ դնել, վաճառել, ընծայել, ի վերջո, դու նորա անպատման տերն ես, և դորա վերա խոսելիք չկա։ Իսկ խոսելիքը վերաբերվում է դաշտային հողին, ուր պիտի ընթանա երկրագործությունը։ Պիտի իմանաս, որ դեղի և քաղաքի յուրաքանչյուր անդամը հավասար չափով իրավունք պիտի ունենա մի որոշյալ քանակության հողի մշակելու և գործելու։ Եվ այս իրավունքը պիտի տևե այնքան, որքան նա, կամ նորա սերունդը պիտի բնակվի այն հողի վերա։ Յուրաքանչյուր քաղաք, յուրաքանչյուր դեղ պիտի ունենա յուր հատուկ հողը, որ պիտի անփոփական

մնա քաղաքի կամ գեղի հասարակության։ Քաղաքի կամ գեղի բնակիչքը հավասար իրավունքով ազատ են յուրյանց բաժինը գործել և մշակել, քանի որ գտնվում են այն գեղում կամ այն քաղաքում։ Եվ եթե դու, լինելով քաղաքացի, զրաղված լինելով վաճառականությամբ կամ այլ գործերով, չկամիս կամ ձեռնհաս չես քո բաժին ընկած հողը մշակելու, կամ մարդիկ վարձելով մշակել տալու, այդպիսի դիպվածում կարող ես վարձու տալ և այդ կերպով օգուտ քաղել քո հողից։ Եթե հող վաճառելու սկզբունքը լիուլի տրվի, այն ժամանակ աղքատության և թշվառության սկզբունքը կընդունվի։

Կարող է պատահել, որ ոմանք մարդիկ կամ ժառանգաբար, կամ յուրյանց աշխատությամբ, ավելի հարուստ լինելով, իսկ ոմանք մարդիկ կամ յուրյանց ծուլության պատճառով կամ մի գժբախտությամբ, աղքատ լինելով, աղքատը կվաճառե հարուստին յուր հողը, կմնա անհող և կզրկե յուր սեռունդը ևս այն հողի վերա իրավունք ունենալուց։ Ապա եթե մի գեղի մեջ, 100 տարու միջոցում, հողերը, աղքատից հարուստին վաճառվելով, գեղի հասարակության սահմանական նշանակված հողի քանակությունը անցնի քան մարդու ձեռք, ասել է մի բովանդակ գեղացիք պիտի վարձ վճարեն այն քանին, հողը մշակելու և գործելու իրավունքը ձեռք բերելու համար, քանզի ինքյանք վաճառած լինելով, հարկ է որ և գնեն։ Իսկ եթե 200 տարու միջոցում այդ քան տերը դառնա երկու կամ մի, այդպիսի դիպվածում դարձյալ նույն թշվառությունը չէ՞, ինչ որ այժմ ունինք Անգլիո մեջ, նույն մանոպոլիոնը չէ՞ և հետևանքը հողատիրոջ տարապայմանհարստություն, իսկ անհող շինականաց տարապայմանաղքատություն չէ՞ լինելու։ Այո՛, փորձերը ուսուցին ի վերջո, և առօրյա ապրուստի կարոտությունը ստիպում է մի փոքր խելացի լինել։ Հողը պատկանում է հասարակության, որի ամեն մի անդամ հավասար իրավունք ունի հավասար քանակության վերա, հավիտյանս ժամանակների. և մի կողմից վաճառելու իրավունք չունենալով, իսկ, մյուս կողմից, առանց արգելքի հողը գործելու և արդյունավորելու իրավունքը անկողոպտելի պահելով, այդ հասարակության անդամը և նորա սեռունդը հաստատում է յուր կյանքը մի տարածության և ապահով հիմքի վերա. և անհնա՛ր է, որ նա կամ աղքատության հանդիպի կամ խապտռ կարոտ մնաս։

Մենք վկայում ենք, որ այս պայմանը ծնորգրությամբ կընդունին, քանզի ո՛ւրր է, քանզի մարդկայի՛ն է, քանզի արդա՛ր է։

Այժմ հարցնում ենք, հարո՞ստ է անգլիական ազգը, եթե միքանի գործարան փակվելով, կամ մի ժապավենն գործածությունենից դուրս ընկնելով բյուրավոր մարդիկ և բյուրավոր գերդաստանք, դառն աղքատության հետ պատերազմելով, կարող են տովամահ կորսվիլ։ Հարո՞ստ է ֆրանսիական ժողովուրդը, եթե մի քաղաքում միքանի գործարանք փակվելով, մի ահագին բազմություն գործավորների կդատապարտվի գեղի մուրացկանության.... Չէ՛, հարուստ չէ, ասում ենք, և այն, դրականապես։ Որևիցե աղքատ համարված ազգ, եթե ունի մի կտոր հող, ապահովվել է

յուր կյանքը. մինչդեռ անգլիական գործավորը, որ ապրում է այսօր, չգիտե թե վաղը պիտի հնար ունենա՞ ապրելու թե ոչ. քանդի չգիտե, թե պիտի շարունակե՞ գործարանը յուր գործը, որ և նա աշխատելով առանց միքանի շիլլինգ և հոգս յուր ընտանիքը:

Ի՞նչ հարկավոր է մեզ ազնվականների անհուն հարստության տեր լինելը, ի՞նչ հարկավոր է մեզ անգլիական դրամանոցի հսկայությունը, ի՞նչ հարկավոր է անգլիական կառավարության դրամի կարող չլինելը, կամ ուրիշներին փոխ տալը*, մինչդեռ միլիոնավոր ժողովրդի կյանքը կախվում է բամբակից և ժապավեններ: Համաձայնեցե՛ք, որ այդ երկուքը ևս չունին այն հարատև ուժը, որ կարողանան պահել և դիմանալ միլիոնավոր գերդաստանների ծանրության: Եվ մինչ, բնականաբար կորվում են, և ահա ոգի, աղաղակ, տառապանք, սով և մահ: Վաճառականությունը և արվեստը անհրաժեշտ է և մեծապես պատճառ ազգի հարստության, բարօրության և երջանկության, նրա ազգի փոքրագույն մասը պարապում է նորանով, նրա մյուս մեծագույն մասը ամուր նստած է հողի վերա և գործում է նորան:

Այն ազգը, որ չունի հող և երկիր, երբեք չհուսա, որ պիտի հարստանա. այդ անբնական մի բան է և դրան հուսալը խելագարություն: Թո՛ղ բնավ չհուսա, որ առաջ հարստանա և հետո երկիր ձեռք բերե. այդ լինելու չէ: Նախ, որ հարստությունը, որ նրա կա այդ ազգի մասնավորների ձեռքում, կամ վաճառականությունը, որ նրա վաճառականություն է... հիմք չունի, այլ, իրրև պատահական մի բան, ենթակա է պատահարների ազդեցության: Երկրորդ, որ հող և երկիր տիրաբար ձեռք բերելու նպատակը և խորհուրդը փառք չէ, պատիվ չէ, դրա նրնթայական գաղափարներ են, այլ հնար գտնել յուր կյանքը և գոյությունը ապահովելու համար: Եվ հավատացե՛ք, որ վաճառականությունը և արվեստը որչափ որ ծաղկին, բնև առանց երկրագործության չկա և վաճառականություն**, որչափ որ մասնավոր մարդիկ միլիոններ դիզեն, այսուամենայնիվ ենթակա են բամբակի և ժապավենի ազդեցության: Մի մրրիկ, մի փոթորիկ, և.... գնա՛ տխրադեմ ցնցել գատարի քաղկները, որոնց մեջ լցված էին երբեմն ոսկին և արծաթը:

Տնտեսական խնդիրը միակ խնդիր է մարդու կյանքը և գոյությունը ապահովելու համար. և որչափ ծանր արժեք ունի այս խնդիրը, որչափ մարդը անբակտելի կապված է նորա հետ, այնքան դժբախտ է եղել այդ խնդրի հակառակորդը: Նա դարձել է մի քար, որի վերա մարդը քանի՛ և քանի՛ անգամ գայթակղեցավ:

---

* Անգլիական կառավարության պարտքը, Եվրոպական Անգլիա անունով, գումարված ֆրիներով, մինչև 1860, մարտի 1.—802,190,295 լիրրն առերկինգ: Հնդկաստանի պարտքը նույնպիսի ֆրիներով, Հնդկաստանի և Անգլիա մեջ 80,453,765 լ. ս.:

** «Եվ առանց ազատ հոգի չկա երկրագործություն» (Հեղինակին ախանդն ի վայր անկուսիր առաջանան):

Վերջին անգամ գոռաց նա, «կեցցե՛ ազատություն, կեցցե՛ հավասարություն, կեցցե՛ եղբայրություն»։

— Կեցցե՛, կեցցե՛,— Հնչեցին ամեն կողմից բյուրավոր արձագանք։

Պատնեշներ շինեցին, փողոցների սալահատակները կողոպտեցին, աղաղակ, խռովություն։

«Ի՛նչ բանի վերա ևք»։

— Չե՞ս տեսնում. ազատություն, հավասարություն, եղբայրություն կեցցե՛։

«Կեցցե՛, կեցցե՛»։

— Ո՛ղ կենան, ո՛ղ ապրին օդի մեջ,— ասաց մինը, որի աչքերը ավելի հեռատես էին։

«Ի՞նչպես, ինչվառական դու... վայրկյանի մի... և շան սատակ կլինես հարվածիս տակ, եթե կեցցեներ չգոռաս»։

— Կեցցե՛, կեցցե՛։

«Այո, այդպես. կոպիտ... անկիրթ... Մինչև այժմ չե՞ս հասկցել, որ աշխարհը լուսավորվել է և չէ կարող այլևս բռնության տանել...»

— Մի՛ բարկանար, աղաչում եմ, մի հարցմունք...

«Այժմ կեցցեից ավելի ուրիշ բան չէ կարելի խոսել. կեցցե՛»։

— Կեցցե՛— ասաց խեղճ մարդը և հեռացավ հրապարակից։

Տարին չորս եղանակ ունի, իսկ մարդկային կյանքը բյուրավոր չորսեր։ Այն օրերը լոկ կեցցեի եղանակ էր և ուրիշ բանի վերա խոսողը մահի պարտավոր։

Մի քանի օրից հետո, երբ արդեն ազատությունը, հավասարությունը և եղբայրությունը նստել էին արքայական գահի վերա, երբ բոլոր փողոցները և տուները, մինչև անգամ այս անբան գոյությունքը, կարմիր ներկերով և խոշոր տառերով, անթարթառ, գոռացել էին բյուրավոր կեցցեներ, երկու մարդ հանդիպեցան միմյանց մի անկյունում։

«Ողջույն»։

— Ողջույն։

«Քանի ժամանակ է, ինչ տեսած չէի, բայց ասես թե խելք կա՞ր գլուխներս, որ միմյանց պատահենք, քանի որ երևսի վերա մնացած ազգը փրկելու և գերությենից ազատելու հետ էինք զբաղած։ Բայց— ինքնաբավական կերպով հառաջ տարավ խոսքը,— պիտի իրավունք տալ մեզ, որ կարիճի պես գործ կատարեցինք և մեր գործավոր ցանկության, վերջապես, հասանք»։

— Ի՛նչ շինեցինք։

«Ավելի ի՛նչ կամիս», և տհաճությամբ կրկնեց այն ճակատագրական երեք խոսքերը։

— Ա՛յդչափ միայն։

Խոսակիցը զարմանում էր սորա բթամտության վերա, և գրեթե ատելության աչքով նայում էր դեպ ուղիղ նորա աչքերի մեջ։

«Ինչո՞ւ այդպես շփոթում է և խոսում ։ քո խաղաղությունը իմ պարզ հարցմունքս և կամենում ես բռնակալ հայացքով պատասխանեցնել ինձուս, մինչդեռ ասում ես, թե ձեռք բնաջնջիս մինը ևս ազատություն է։ Ո՛չ, գնի խոսքով օգուտ քաղեմ այդ արատնութենից»։

Խոսակիցը վայրկյան մի շփոթեցավ և, իրավը պետք է ասել, խղճի խայթ ևս զգաց, ազնվաբար, որ հին ժամանակների վերա գնալով և մոռնալով ազատության բազավոր նատելը, կամեցավ մի ակնթարթ, բռնանալ խոսողի կարծիքի վերա։

— Ասա՛, եղբայր, ասա՛, ինչու չէ. ես պատրաստ եմ քեզ լսելու։

«Ուրեմն, ազատություն, հավասարություն և եղբայրություն, այնպես չէ՞, բուն իսկ բարոյական և բնական սկզբունք»։

— Ճիշտ այդպես, ինչպես երկու անգամ երկուքը չորս։

«Շատ բարի. բայց, ասա՛ խնդրեմ, ազա՞տ եմ ես, միմիայն օրենքով, քաղաքականապես ազատ կոչվելով, ազա՞տ եմ ես, քանի որ նյութական կարողությունը ստիպում է ինձ, կամա ակամա, մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայությամբ հաց ճարել իմ ընտանիքի համար։ Ազա՞տ եմ ես, եթե տեր ունիմ, որին եթե իմ ազատությունը հայտնեմ բացարձակապես, պիտի զրկեմ ապրուստից և ինձ և իմ ընտանիքս, ծառա լինելուց դադարելով, և այս բոլորից հետո ազա՞տ եմ ես... երևակայությա՞ն մեջ, թե՞ օրի մեջ»։

— Այդ ի՛նչ խոսք է, աշխարհը ինչպես կարող է կառավարվիլ, եթե չլինի նյութի և աշխատության փոխադարձ հատուցում։

«Բայց ես մտածում եմ, որ կարող է և մանավանդ երջանիկ, եթե աշխատությունը բռնագատական չէ, այլ կամայական, եթե նա աշխատություն է և ոչ ծառայություն, եթե մարդկային իրավունքները անխտիր հավասարազափ են և ոչ մինինը ավելի, իսկ մյուսինը պակաս»։

— Պարոն, հավասարությո՞ւն, մոռցա՞ր...

«Չեմ մոռցել, բայց չկա»։

— Ինչպես թե չկա։

«Շատ հասարակ կերպով։ Ես և դու հավասար իրավունք ունինք, իբրև հայրենիքի հավասար որդիք, այնպես չէ՞»։

— Այո՛, ամենևին այդպես։

«Ուրեմն արդարություն չկա։ Եվ դուք պիտի համաձայնիք, որ կա՛մ հավասարություն չկա, կա՛մ արդարություն, որ իրավունք առնե մեր հավասարության իրականապես, քանի որ հավասարությունը, իբրև լոկ խոսք, հնչում է միայն օդի մեջ և քանի որ իրական անհավասարության հետևանքը շինում է ինձ ազատ-ստրուկ»։

— Չեմ հասկանում։

«Կհասկանաս, և, այս րոպեիս ո՛րքան հոգ ունիս դու»։

— Հարյուր հազար թառակուսի գազ...

«Ե՞ս որչափ ունիմ»։

— Չգիտե՞ս որ չունիս։

«Հըմ. դու հայրենիքի որդի՞ ես»։

— Այո՛։

«Ե՞ս»։

— Նույնպես։

«Հայրենիքի բարիքը և ծանրությունը հավասարաչա՞փ պատկանում են մեզ»։

— Այո՛։

«Լուրեմն, ի՛նչպես հավասարություն է այս. դու ունիս այսչափ հող, իսկ ես ոչինչ, քո բաժին միայնակ վայելում ես հայրենիքի բարին, իսկ ես քո հավասար կրում եմ միայն ծանրությունը։ Բաժի՛ն տուր ինձ քո հողից, մենք մի հայրենիքի որդիք ենք, եղբայր ենք։ Ինչպես քեզ հարկավոր է ապրուստ, նույնպես և ինձ, ինչպես դու կրում ես հայրենիքի բեռը, նույնպես կրում եմ ես։ Բաժի՛ն տուր ինձ քո հողից, այն ժամանակ ես չեմ աշխատելու բանի. ես կդառ ինձ ազատ, մեր իրավունքները կհավասարվին, և ճշգրիտ եղբայրությունը երևան կելնե»[2]։

— Հողը իմ սեփականությունս է...

Խոսքը բերանը մնաց։ Այն կողմից կտրիճի միջը, երկաթի տրամաբանությամբ, հարվածը իջեցուց նորա գլխին։

«Սեփականությունը գողությո՛ւն է»[3], ասաց նա այրական ծանրությամբ և կանգնեցավ։

Սեփականությունը այն բանի, որ, առանց մեր աշխատության, բնությունը դնում է մեր առջև, գողություն է, ավազակություն և հափշտակություն, նիհն մինը առնու հարյուրավոր, հազարավոր, իսկ մյուսը ամենևին ոչինչ։ Այլ խնդիր է աշխատությամբ ձեռք բերված այն բանը, որ բնությունը չէ պահում յուր գոգում, որ բնությունը չէ պատրաստում, անմիջապես, որ մարդը արվեստական ճանապարհով է պատրաստել և ի վերջո որի արժեքը պայմանական է, մի խոսքով դրամը, որ մարդը վաստկել է։ Բայց հողը նա չէ վաստկել, հողը նա չէ շինել, հողը բնությանն է։

— Պարոն, չափդ ճանչցիր, ես գող չեմ, ես հողը չեմ հափշտակել, ես ձրի չեմ առել, դրամով է գնել իմ հայրս, իմ պապս։

«Ինձ ի՛նչ փույթ։ Բանակալությունը, որ նույնն է քեզ ավազակություն, վաճառել է քեզ հասարակաց ազգի սեփականությունը։ Ոչ նա իրավունք ուներ վաճառելու և ոչ դու իրավունք ունեիր գնելու. նա՛ գող է և դու գողակից, որովհետև երկրագունդը անհատի սեփականություն չէ, նորա վերա ապրում են և պիտի ապրին բոլոր նորա որդիքը անխտիր»։

— Բայց, եթե ես իմ հողը կիսեմ քո հետ, ես կքաղցվիմ, ես մինչ ցարդ ապրում եմ նորանով. ի՛նչ կլինի հետո իմ ժառանգների և իմ սերունդի վիճակը, երբ իմ հողի քանակությունը փոքրացրել էի։

«Դու մտածում ես քո ապրուստի համար, աչքիդ առջև ունիս քո ժառանգների և քո սերունդի ապագան, իսկ ես, որ ոչինչ ունիմ, ինձ ապրուստ պետք չէ՞. իմ ժառանգները և իմ սերունդը, որ ինձանից հետո

ոչինչ ստանալու չեն ինձանից, ապրելու չե՞ն: Բայց դու կքանդվիս, այսինքքն, քո ավելորդը կչափավորվի, որի հաշվով իմ պահպանողը կկցվի, սակայն մի՛ մոռնար, որ քո ցեղը մինչ ցարդ վայելել է այդ հողը, իսկ իմ ցեղը միշտ դուրկ է մնացել նորանից: Այսօր դու կքանդվիս, բայց վաղը մեր երկուքի սերունդը կհավասարվին. այսօր քո կարողությունը կչափավորվի, բայց, դորա փոխանակ, իմ ամբողջ սերունդը չէ պիտո այլևս մահու և կյանքի մեջ տատանի, մի ոտնաչափ հող չունենալով:

Մարդը հառաչեցավ մինչև այստեղ և կարծում էիր, թե ահա շոշափում է նա յուրյան հարկավոր առարկան.... կատանա նորան.... բայց չէ. առանձինը այնպես դյուրին չէ, որովհետև մարդը դնում ուղա է: Դադարեցավ նա այս գայթակղության քարի վերա և դեպի ձախ, շրջան հառաջ, ծռեց պատմությունը յուր ուղիղ ճանապարհից:

Ազատությունը, հավասարությունը և եղբայրությունը յուրյանց հիշատակը թողնելին միքանի ոսկիների վերա. պատերի վերայի կարմիր գրերը դատապարտվեցան մնալ մի սպիտակ ներկի տակ:

— Կեցցե՛ մահ:

Այս էր վերջին խոսքը, որ լսվեցավ: Եվ խեղճ մարդը, վարատական և անհոգ, հարկադրվեցավ դարձյալ յուր օրական հացը ճարել սարկանալով ուրիշին:

Բռնակալությունը, եթե նորա երևեցուցիչը մի անհատ է, թո՛ղ լինի այն անհատը Ներոն, Կալիգուլա կամ նոցա աշակերտ մի պոլիտիկական ավազակ[4], բնավ սարսափելի չէ. քանզի այն անհատի հետ գերեզման կիջնեն: Բռնությունը, եթե նորա երևեցուցիչը մի ժողով է, մի ծերակույտ, մի հրեական սինեդրիոն, նույնպես, զարհուրելի չէ. ցրվեցիր ժողովը, կործանեցիր նորա տաճարը, և ահա ամենայն բան կընթանա, ինչպես յուզած ճախարակ: Բռնությունը աննկարագրելի և անթարգմանելի կերպով կատարի է, կամակոր և երկարատև, եթե ազգերանում է հասարակ ժողովրդի ընդունած սկզբունքից: Մի հարատև բռնակալ կառավարություն, մի ազգի մեջ, ուրիշ բան չէ, եթե ոչ այդ ազգի հոգու երևեցուցիչը: Շատ անգամ ինքը ազգը զգում է բռնության ծանրությունը և առանց արմատը քննելու, այսինքն, առանց յուր անձը քննելու, ապստրնդ է դուրս գալիս այն շարչարող բռնության ընդդեմ, գլխատում է, աքսորում է, ի վերջո, շրջացնում է բռնության երևեցուցիչը:

Ուրախացավ, կարծեց, թե ազատվեցավ բռնությունից, չգիտե, թե ինքն է, յուր մեջ է այն բռնության և անօրենության սաղմը: Կարծեց, որ նեթե մի մարդու տեղ քսան հոգի նստի, բոլոր բանը կփոխվի. մոռցավ, որ քանի յուր հասկացողությունը նույնն է, ինչպես էր հառաջ այն մինի ժամանակ, այն քսանը պիտի գնա նույն ճանապարհը, որով գնում էր պատրժված մինը: Մանավոր ուշադրության արժանի է մարդկային կյանքի և այս երևույթը, որ երբ մի արտաքին ուժ դադարում է ճնշել որևիցե մի հասարակություն, ինքը այդ հասարակությունը սկսում է բռնանալ յուր վերա և նորա բռնակալական ձգտողությունքը բնավ իսկ պակաս չեն

արտաքին բռնության ձգտողություններից։ Սորա չոշափելի օրինակը տեսանելի է Անգլիո մեջ։

Ամեն մարդ գիտե, որ դրատպությունը ազատ է այնտեղ, և կառավարության և օրենքի կողմից ամենայն հարձակմունք անհնարին։ Բայց, չնայելով սորա վերա, Սայուարտ Միլը հարկազրվեցավ հրատարակել յուր գիրքը՝ «On liberty»*։ Սայուարտ Միլը այս գրքի մեջ բնական պատճառներով աշխատում է համոզել, որ տպագրությունը ազատ մնա ամենայն հարձակմունքից։ Հարձակմո՞ւնք, տպագրության ընդդե՞մ, և մի աշխարհում, ուր ամենայն բան տպվում է առանց արգելքի, որի՞ կողմից արդյոք, մինչ կառավարությունը և օրենքը ազդեցություն չունեն այս խնդրի վերա։ Սայուարտ Միլը խոսում է հասարակության հետ, նա բողոքում է նորա ընդդեմ, և նորա ընդդեմ գործ դնել պաշտպանում է և քարոզում է տպագրության անպատման ազատությունը։ Հասարակությունը, նորա կանխակալ կարծիքները, նորա ավանդությունքը, որ դարերով նստել են նորա ուղեղի վերա, արմատացել են նորա ոսկերքի մեջ, շատ անգամ չէ կարող հաշտ աչքով նայել ազատ հրատարակախոսության երևանին։ Նա հալածում է նորան ոչ թե օրենքով կամ որևիցե կառավարչական ուժով կամ արգելքով, ո՛չ, նա լավ գիտե, որ սորա անհնարին բաներ են Անգլիո մեջ, նա հալածում է մանր հնարներով և ազատատ ճանապարհներով, որոնց մեջ վերջին տեղը չունին, անձնական վնաս հասցնել, վատաբանել, կասկածներ հարուցանել հեղինակի վերա, պարզամիտների միաքը և առելությունը գրգռել նորա ընդդեմ։ Այս բոլորը ատրատվանքով տեսավ Սայուարտ Միլը, տեսավ և գոչեց. «Մենք սուգաեում ենք»։

Կեմբրիջի համալսարանի երկրագիտության վարդապետների գրվածքը, մի պարզ բնագիտական և երկրագիտական տեսություն, ահ ու սարսափ բերեց հասարակության վերա։ Հասարակությունը տեսավ, որ այդ գրվածքը հիմն ի վեր տապալում է այնպիսի հասկացողություններ, այնպիսի սկզբունք, որ վազուց արդեն սրբազանել է ինքը, հասարակությունը, որ դարձել է նորա հոգին, նորա պաշտպական գազափարը. տեսավ այս և խաչակիր արշավանք քարոզեց այն իմաստուն ուսուցիչների ընդդեմ։ Բանական հնարքները, հերքողությունքը, վեճը և ի վերջո անբարոյական պատասխանքը մուտ երևեցան նորա աչքում. նորա վշտացած հասկացողությունը թնդացրում էր նորան վրեժ, նորա միակ ցանկությունը էր, որ ուսուցիչը կորուսաներն յուրյանց ամբիոնը։

Վա՛յ այն ծառին, վա՛յ այն բուսականին, որի արմատը անբնդունակ է յուր հատակից ընդունելու և պատրաստելու յուր հյութը, յուրյան թարմությունը պահող կենսական ուժը և զորությունը։ Վա՛յ այն ծառին և բուսականին, որի հույսը դրված է միմիայն, գիշերային և առավոտյան, բարձրից գալու ցողի վերա։ Ցողը դեռ հազիվ հազ նստում է նորա տերևների վերա, հազիվ հազ սկսանում է զովացնել նորա ծարավը, գալա-

* (Անգլ.) «Ազատության մասին» եմբ.։

բացնել նորա խորշակահար տեսիլը և ահա... արևը ծագեցավ։ Ծողի կաթիլները, հետզհետե գոլորշանալով ցնդեցան, գնացին, իսկ տերևքը մնացին այրող ճառագայթների ազդեցության ենթակա։

Մարդուն համար վերևից եկած ազատությունը այն ցողից ավելի չէ, եթե մարդը նախ ինքը յուր մեջ ազատ չէ, և երկրորդ, եթե ինքը այնուհետև պիտի բռնանա յուր ընկերի վերա։ Եվ քանի որ տնտեսական խընդիրը — այն բազմակնճիռ Գորդիասի կապը լուծված չէ, հասարակությունը յուր ընկերական և ընտանեական հարաբերությանց մեջ ազատ չէ, ծող քառասուն անգամ, եթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետել է հողին, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագավորում է բռնությունը։

Նույն այս տնտեսական խնդրի առաջև կանգնած է այսօր ռուսական կառավարությունը և ազնվականը։ Այս խնդիրը մահու և կյանքի խնդիր է. «to be, or, not to be»!* Քսան երեք միլիոն** ստրուկ, որ մինչև ցարդ նստած հայրենիքի հողի վերա ծառայում էր և հարկ էր տալիս յուր պարոնին, վաղո՞ւց և վազուց ազատված կլիներ ստրկությենից, եթե կարելի լիներ կառավարության, կամ ազնվականին, ասել ստրուկներին.— Մանկո՛ւնք, այս օրից հետո ազատ եք կատարելապես և ձեր ստրկական հարաբերությունը, դեպի ձեր պարոնները, վերջացած է. գնացե՛ք ուր կամիք և ապրեցե՛ք, ինչպես կամիք։

Բայց կառավարությունը և ազնվականությունը պարզ տեսնում էին այս տեսակ ազատության անհնարավորությունը։ Ո՛ւր երթա 23 միլիոն ժողովուրդ անհող և անկայան, ի՛նչ գործե, ի՛նչպես ապրի։ Նույն հողը, որի վերա բնակվում էր և որ գործում էր, այժմ, ազատվելուց հետո, պիտի վարձու առնուր յուր պարոնից. ի՛նչ ազատություն էր այս, ո՞չ ապաքեն և առաջ նույնն էր գործում, միայն այս տարբերությամբ, որ ուժած դրամը կամ անձնական աշխատությունը փոխանակ դրամի՝ համարվում էր հարկ, իսկ այժմ նույնը պիտի անվաներ վճար։ Բայց շինականին ի՛նչ մխիթարություն անվանափոխության մեջ, քանի որ գործը նույնն է։ Պիտի ասեն, որ այդ տեսակ ազատություններից շինականը եթե տնտեսական մասնում ավելի վնաս ունի քան թե օգուտ, գո՛նե կազատվի ստրկություններից և պարոնի իշխանության և լուծի տակից։ Այստեղ ևս մխիթարական բան չկար շինականին. այո՛, պիտի ազատվեր պարոնից, բայց դորա փոխանակ պիտի ընկներ կառավարության աստիճանավորների ձեռքը, այսինքն, անձրևի երեսից ծովը։

Տեսավ կառավարությունը, որ այս տեսակ ազատություն չէ կարելի տալ. գուշակեց նա գալոց փոթորիկը։ Տեսավ ազնվականը և համոզվեցավ, որ այս տեսակ ազատություն տալը, ազնվականության մահու դա-

---

* Համլետի հայտնի խոսքը՝ «լինել, թե չլինել» նշմ.։

** 1858—59 թվականների աշխարհագրության նայելով, Ռուսիո մեջ եղած ստրուկների թիվը հասանում էր մինչև 23,069,631, որոնցից 11,244,913 արու, իսկ մնացած 11,824,718՝ էգ։ Ս. Հ.

տակնիքը ստորագրել էր։ Ոտի՛ և՛ կառավարությունը, և՛ ազնվականը, վախենալով բարձրացնել այս ճակատագրական վարագույրը, որի քամակում կանգնած է Ռուսիո սոսկալիքիար ապագան, լուռ կացին և առանց միմյանց հետ խոսելու, միմյանց միտքը և դրությունը լավ հասկընալով, որոշեցին լուռ մնալ և քարշ ածել այս գործը, որչափ որ կարելի է դիմանալ։

Եկավ Արևելյան պատերազմը[5], կառավարությունը ընկավ պարտքի մեջ, ժողովուրդը կրեց անտանելի ծանրություն և, ի վերա այսր ամենայնի, երբ Սեբաստուպոլսի պարիսպը խոնարհեցան դաշնակից զինվորության առջև, Նիկոդայոսը մնռավ։ Մնռավ նորա հետ և նորա համակարգության։ Ինչ կամիս, արա՛, բայց ժամանակը յուրյանը կառնու։ Նոր կառավարությունը տեսավ այս բոլորը, հասկցավ, որ անցյալը չէ կարելի շարունակել, լարերը շատ ձգված են, ուստի մի փոքր թուլացրեց ժողովրդյան սանձը։ Մինչ այս մինչ այն, տնտեսական խնդիրը, մի աներևույթ զորությամբ, ընկավ մեջտեղը. հարկը ստիպում էր լուծել նորան այս անգամ։

Եվ ահա ժողով ժողովի քամակից, խորհուրդ խորհուրդի քամակից, ինչպե՛ս լուծել, որ ազնվականությունը զոհ չըերե երկիրը, բայց ի՛նչպես լուծել, առանց հող տալու շինականին։ Երկիր չտալ նոցա, ասել է 23 միլիոն ժողովուրդ օրական հացի կարոտ ձգել, ասել է, այդ ազատության մյուս օրը պատերազմ ունենալ 23 միլիոն բազմության հետ, որ սովամահ լինելու երկյուղից և հուսահատությունից, ստիպ պատերազմի սարսափելի զորությամբ։ Երկիր տալ նոցա, ասել է բովանդակ ազնվականությունը հարուցանել կառավարության ընդդեմ, բայց չտալ չէ կարելի։ Վերջ-իվերջո, որոշվեցավ չափավոր քանակություն հող տալ ստրուկներին, այսինքն, յուրաքանչյուր գյուղական հասարակության և ընկերության համեմատ նոցա թվին. այնպես, որ այդ հասարակությունքը, մինչև մի նշանակյալ ժամանակ, ամ ըստ ամե վճարեն յուրյանց պարոններին այն հողի գինը, մինչև վճարը ավարտվի։

Բայց երբ 1861, փետրվարի 19-ի հրովարտակը դուրս եկավ, որի մեջ կայսրը ասում էր, թե ստրուկները ազատ են և յուրյանց հողը պիտի ստանան հրովարտակի թվյալ օրից երկու տարուց հետո, իսկ մինչև այն երկու տարու վերջը պիտի մնան նույն հարաբերության մեջ դեպի յուրյանց պարոնները, ինչպես հառաջ, ստրուկները և լսել չկամեցան։

— Հրատարակեցիր մեզ ազատ, հանդերձ մեր հողով, և ահա վերջացած է ամեն բան։ Մենք չկամինք մնալ այսուհետև այն հարաբերության մեջ, ուր մաշեցան մեր նախնյայց և մեր ոսկերքը։ Դարավոր սպիներով ծածկված է մեր մեջքը, անդուլ բարբարոսությունը յուր ուժը մաշեց մեր կուրծքի վերա։ Մեր մատաղահաս դաստերքը զոհ գնացին անխնա մեր պարոնների բռնաբարության. կանանց մասին այլ խոսք չէ մնում։ Մեր որդիքը նոցա փոխեցին շունի հետ։ Չէ՛, անհնար է, որ այլևս մնանք նույն դիրքը նոցա փոխեցին շունի հետ։ Չէ՛, անհնար է, որ այլևս մնանք նույն հարաբերության մեջ։

Զանազան դավառներում դուրս երևեցան զանազան ընդդիմություններ և ապստամբություններ, նրա իրավունք պահանջելը, վասն ոմով, կարելի է ապստամբություն անվանել։ Կառավարությունը զենք գործ դրեց նոցա վերա, բայց ապստամբների արյունը ոռոգեց և աճեցուց ընդդիմության ոստնկը։ Եվ այսօր, ամենայն բոպե, հետանում են միմյանցից ազգը և կառավարությունը։ Ազնվականությունը երևեցնում է երկու միմյանց ներհակ կուսակցություններ, հառաջընթաց և հետընթաց։ Հառաջընթաց կուսակցությունը միացած է ազգի էական օգտի, այսինքն ստրուկների հետ։ Նա ներգործում է և հետընթաց կուսակցության և կառավարության հակառակ։ Եվ այս, հայտնի, դրավոր և օր ու ցերեկով։ Իշարկե շատերը ըռան դնալի Սիբիր, շատերը մաշվում են բանտերի և ամրոցների մեջ։ Այս ոռզերը գրելու միջոցին հասած պաշտոնական լուրը խոսց ավեց, թե Տվերի հառաջընթաց կուսակցութենից ոտան և երեք հոգի մատնվել են ծերակուտի հինգերորդ բաժնի ձեռք, այսինքն, քրեական ատենի ձեռք, որովհետև ստորագրությամբ գրած են գավառական ատենին, թե չեն կարող և չպիտի ներգործեն 1861 փետրվար 19 հրովարտակի համեմատ, քանզի ընդդեմ է այն հրովարտակը ազգի էական շահին։ Այսքանով չէ դադարել ազնվականությունը և փետրվար 2-ից ավել է կայսեր մի մեծախորհուրդ խնդիր։*

Հետընթաց կուսակցությունը մնացել է ազգի և կառավարության մեջտեղը, երկու կողմից ևս դժգոհ, երկու կողմին և թշնամի. և ընդդեմ կամելով ներգործել ազգին, ներգործում է ընդդեմ հառաջընթաց կուսակցության և վատորեն միանում է կառավարության հետընթաց մասին հետ։

Ռուսական ազգը, որի աչքի առջև հանդիսանում է այս դրամատիկա-

---

* Դնում ենք այստեղ այն խնդրի հարազատ պատճենը և մեքանի պարբերության, մեր նամակագրի մեզ աված տեղեկություններից, պահելով նորա թե ոճը և թե ուղղագրությունը։

Ձեր Կայսերական Մեծություն

Ամենահնազանդ Բազավոր

1861 փետրվարի 19-ի օրենագրությունը հրատարակվելեն ետքը, Թվերի ազնվականությունը, առջի անգամ գումարվելով, կրթրնե Ռուսաց Թագավորը, որ ձեռք գթալով ստրուկները ազատելու և Ռուսիո հոգի վրա եղած ամեն անիրավություն արմատախիլ ընելու Թվերի ազնվականությունը կհայտնե հրապարակավ, որ ինքը սրտանց զգայակից է Ձ. Կ. Մեծության բարի սկզբնավորությանց և պատրաստ է հետևելու Ձեզ այն նամբով, որ կտանի ի բարօրություն Ռուսաց ազգին։ Մեր պատրաստակամությունը և Ձ. Կ. Մեծության անձին վրա ունեցած կատարյալ հավատը ապացուցանելու համար, մենք կհամարձակինք առաջարկել, Ձեր բարի դիտողության, մեր մտածությանց անկեղծ գծագրությունը, առանց ամենևին ստուգյան, կամ բան մը ծածկելու։

Փետրվար 19-ի հրովարտակը, ազգին ազատություն հայտնելով, բարվոքեց բիչ մը ստրուկներուն նյութական բարեկեցությունը, բայց չազատեց զանոնք ստրկական կախողություններեն, և ստրկական իրավունքեն ծնած բոլոր անօրենությունները չդադարացուց։ Ազգի առաջ բանակությունը չկրնար համաձայնեցնել Ձ. Մեծության հայտնած ազատությունը, նկրկա, առ իրենց պարոնները, հարկագրական հարաբերությանց հետ և կացությանց արվեստական բաժանարարության հետ։

Ազգը կտեսնե, որ ինքը, երբեմն ժամանակի, պիտի կրնա ազատել միմիայն

կան թատրերգը, կուսակից է սորուկներին և հառաջընթաց ազնիվ կուսակցութիւնն։ Նորա մէջ նուիրական համորվում է մի ոգի, և այսօր երկու երեք միմեանց հակառակ տարերք գնում են միևնոյն ճանապարհը։

Եվ կառավարութիւնը, յուր կարգով, մնացել է այս բոլորի մեջտեղը։

Բայց այս ջերմախտական և լարյալ վիճակը անհնար է, որ լինի երկարատև։ Ութն, վաղօրօք, խելք գործ չդրվի, սորուկը յուր հողով հանդերձ կատարելապես ազատ չքարոզվի, և այս կերպով այն կնճիռը չլուծվի, սորուկը կացինով կվճռե գործը[8]։

Ժամանակը շատ մոտեցած է և կարծվածից ավելի մոտեցած...

Ազատութիւնը ըստ ինքյան լոկ խոսք է և իրողապես չէ կարող մարմնանալ, առանց անհատական խնդրի լուծվելուն։ Ոչ մի ազատ կառավարութիւն, ոչ մի ազատ օրենսդրութիւն չէ կարող փրկել մարդը սորկութիւնից մինչև որ այդ մարդը հողի վերա իրավունք ունեցող չհռոստովանվի։ Եվ մինչև այս, ընդհանրական աղքատութիւնը երթալով պիտի զորանա և հասնի հակայական աստիճաններին։

Թողունք պղինձը, այլչափ ոսկու և արծաթի հանք, որ ամենայն տարի անդադար ոսկի և արծաթ են թափում զանազան տերութիւնց գանձարանների մեջ, գրեթե ազդեցութիւն չունին դրամական խնդրի վերա։ Եվ հասարակ ժողովուրդը այնչափ ավելի կարոտում է դրամի, այնչափ սաստկանում է դրամի պակասութիւնը, որչափ որ ամեն կողմից ոսկի և արծաթ է դուրս բերվում երկրագունդից։ Անտարակույս է, որ մեսայլյան դրամը ամենայն տարի շատանում է, ի՛նչ է ուրեմն պատճառը, որ ժողովուրդը չէ տեսնում նորա երեսը, և ո՞ւր են այն ոսկիքը։ Մի՞թե տերութիւնց մոտ։ Մեր առջև դրած է բոլոր տերութիւնց եկամուտի և ծախքի ցուցակները։ Ահավասիկ ամենահարուստ համարված Անգլիո 1860 թվականի եկամուտի և ծախքի ցուցակը։

Հարկագրական աշխատութենն, բայց հավիտյան հարկատու պիտի մնա, հանձնված նույն պարոններուն իշխանութիւնը, որոնք այժմ խազազութիւնը միշտորդ կանվանին։

Թագավո՛ր, հայտնի կխոստովանինք, որ մեք ալ չենք հասկնար այս դրութիւնը։ Ասանկ ահագին անհատացողութիւնը զրոյր հասարակութիւնը կդեն անկանելի և տերութիւնն կորուստ սպառնացող վիճակի մը մեջ։

Ի՛նչ բան արգելք կըլլա զանի հետացնելու։

Հողը, պարտավորապես, սորուկներուն սեփականութիւնը դարձնելու մեջ, մեք ոչ միայն չենք տեսներ մեր իրավանց ավերում մը, այլ, միակ միջոց կճանչնենք զանի, մեր աշխարհի խազազութիւնը և մեր սեփական նյութական օգուտները ապահովելու համար։

Մեք կխնդրենք, որ այս միջոցը ի գործ դրվի և տերութիւնն զորութիւնը մեզ ի կատար հանվի, առանց բոլոր ծանրութիւնը միմիայն սորուկներու վրան դնելու, որոնք ամեն ուրիշեն բիչ մեզ ունին, սորկական իրավունքի գոյութիւնն մեջ։

Ազնվականութիւնը, իբրև կացութիւնն արտոնութիւնն զորութիւնը, մեզնե ցայտոր

Ազնվականութիւնը, իբրև կացութիւնն արտոնութիւնն զորութիւնը, մեզնե ցայտոր ազատ էր հասարակաց գլխավոր պարտքերը կատարելնե։ Թագավո՛ր, մենք արյան մեզ

Եկամուտ	70,283,674	լիրան ստերլինգ
Ծախք	72,842,059	
Պակասորդ	2,540,385	

Ո՞րտեղ ուրեմն հարկավոր է որոնել ոսկին և արծաթը։ Նախ, մի քանի երևելի մոնոպոլիստ անդանավորների մոտ, որ աշխարհը խեղդում են պարարի մեջ, և երկրորդ, հողատերերի մոտ։ Ոսկին և արծաթը չէ մնում առևտրության և հասարակության մոտ և չէ կարող մնալ, քանի որ առևտրության ծախքերը, օրըստօրե բարձրանալով, լեռնանում են, և քանի որ ժողովուրդը հող չունի և ուր որ ունի, չկամի գործել։ Նա թողում է դաշտը և գնում է քաղաք կամ մայրաքաղաք, նշանակում է, թե օրըստօրե պակասում է երկրագործների թիվը, հետևաբար բնկնում է դուգակշիռը։ Դիցուք հազար հոգի շինական երկիր էին գործում, որոնք երկրագործութենից հատաջացած արդյունքը վաճառելով, անշուշտ, պիտի ներա բերեին դուրսից յուրյանց մեջ որևիցե քանակութիւն ոսկու և արծաթի։ Այժմ այդ հազար հոգին, թողնելով երկրագործութիւնը, թե կամա և թե ակամա, և երթալով և բնակվելով քաղաքի մեջ, ոչ միայն փոքրացնում է երկրագործների թիվը, այլևայնքան, դուրսից հատարակ ժողովուրդի մեջ ոսկի և արծաթ բերողի թիվը, այլև շատացնում է երկրագործության արդյունքի կարոտողների թիվը։ Եվ փոխանակ որ ինքը պիտի դրամ ստանար դուրսից, այժմ ինքը պիտի տար։ Այո՛, այն մարդը որ թողնց երկրա-

բույց այժմ, անի՝ օտարականներու և իր հայրենիքին բոլորովին անօգուտ մարդոց կարգը կդնեն գմեզ։

Մենք չենք ցանկար օգուտ քաղել ասանկ անարդ արտոնութենե մը, և անոր առհապա հարատևությունը չենք առներ մեր պատասխանատվությանը տակ։ Մենք ամենահզաւտակորեն կխնդրենք Ձ. Մեծութենեն հրաման տալ մեզ, մեզ վրա ընդունիլ առևտրության հարկերուն և պարտքերուն մեկ մասը, ամեն մեկին կարողության համեմատ։

Նյութական արտոնութիւններն զատ, մեզ միայն տված է նաև զազգը կառավարելու, մարդիկը ընտրելու և կարգելու իրավունքը։ Այս օրվան օրս, անօրենութիւն կհամարինք մենք, այն իրավունքը բացարձակապես մեզ պահել, և կազաչենք, որ անի ուրիշ կացութեանց վրա ալ տարածվի։

Ամենողորմ Թագավոր, մենք հաստատ համատացած ենք, որ Դուք որատանց կցանկաք Ձեռնհաս ազնվության, այս պատճառով սույրը պարտ կհամարինք հայտնի ընել, որ մեր և Ձ. Մեծութեան կառավարութեանը մեջ տարաձայնութիւն մը կա, որ արդեյք կըլլա Ձեր բարի դիտավորութիւնները կատարել։ Ձերութեան պաշտոնյայքը, փոխանակ խոստացված ազատութիւնը առաջապես ի գործ դնելու, առ ժամանակյա հարկադրական դրութիւն մը հնարեցին, որ թե տարեկներուն և թե պարտներուն համար անտանելի է։ Փոխանակ մեկ անգամ տարեկները ազատ և պարտավորապես հողի տեր ընելու, անոնք՝ հոժարակամ համաձայնութեան ոյնպիսի կարգ մը հնարեցին, որ թե տարեկները և թե պարտները վերջին աստիճան ազքատութեան հասցնել կպատանար։ Այժմ, անոնք դարձյալ հարկավոր կգտան ազնվական արտոնութենց պահպանութիւնը, մինչդեռ մենք, որ ամենեն ավելի այս գործին մեջ օգուտ ունինք, անոնց վերնալուն կցանկանք։

Այս ընդհանուր անհամաձայնութիւնը, իրև ազեկ ազացույց կծառայե անոր, թե անհրաժեշտ հարկ եղած փոփոխութիւնները գրագրական (bureaucratique) համբով չպիտի կրնան կատարվիլ։ Մենք այ՝ հանձնառու չենք բոլոր ազգի փոխանակ խոսել, չնա-

գործությունը և գնաց քաղաք, վաստակ է առնում դարձյալ, բայց երկրագործության և այն վաստակի մեջ կա մեծ տարբերություն: Երկրագործը ունի հիմք, նա ունի հող, նորա ձեռքում կա նյութ, որ ասել է ուժ և կարողություն դրամի համազոր, բայց երբ նա թողնց երկիրը և գնաց քաղաք, այնտեղ ոչ հողը կա և ոչ նյութը. նա տարավ յուր հետ միմիայն աշխատությունը, այսինքն, յուր երկու ձեռքը: Աշխատությունը առանց նյութի և առանց հիմքի, հասարակաց վերաբերությամբ, չունի՛ այն ուժը և զորությունը, ինչ որ ունի աշխատությունը, երբ նորա հետ զուգընթաց է նյութը, երբ այդ բոլորը հաստատած է հիմքի վերա: Հավելացո՛ւր նորա վերա և քաղաքային ծախքը, որ ուտում է և մաշում է բոլոր, ինչ որ մարդը յուր աշխատությամբ վաստակել էր. Նա հաղիվ հազ ծայրը ծայրին է հասուցանում յուր եկամուտը և ծախքը. նա վարձկան է, իսկ վարձկանի աշխատությունը յուր համար չէ, վարձկանի հառաջ բերած արդյունքը վայելում է նորա տերը: Ո՞վ է նորա տերը: Վաճառականը կամ գործարանատերը: Ուրեմն, շահը վաճառականի կամ գործարանատիրոջ մո՞ւտ է: Վաճառականների մի մասը ուղղակի վարձկան է գործարանատերերին, իսկ մյուս մասը գործարանատերերի հետ միասին, վարձկան այն վերաստած մոնոպոլիաների, որոնց մուտ կենտրոնացած է դրամական ուժը: Ուր որ է դրական զորությունը, այնտեղ է և դրական շահը: Մյուս բոլորը, որ ինքյանք զորություն չունենալով պիտի ուրիշ զորությամբ

յնելով, որ ամենի մուտ կանգնած ենք անոր. և հաստատ հավատացած ենք, թե միմիայն բարեմասնությունը բավական չէ ոչ միայն գոհացնելու, այլ մինչև անգամ և ազգային կարիքը ցցունելու համար:

Մենք հավատացած ենք, թե բոլոր փոփոխությունները հառաջ չերթալուն պատճառը այն է, որ առանց ազգի կամքը հարցնելու կըլլան: Բոլոր ռուսական հողն ընտրված երեսփոխաններ գումարելը միակ միջոց կերևա գոհացուցիչ կերպով այն խնդիրները լուծելու, որ գարթնցան, բայց չվճռվեցան փետրվար 19-ի դրությամբ:

Ձեր Մեծություն դիտողությանը ներկայացնելով երկրական ժողով գումարելու ամենահպատակական աղաչանքը, մենք կհուսանք, որ ընդհանուրի ազնվության արտանց ամենահպատակական աղաչանքը, մենք կհուսանք, որ ընդհանուրի ազնվության արտանց փափաքը, որով ոգևորված է Քվների ազնվականությունը, հակառակ մեկնաբանությանց ենթակա չըլլար:

Նորին երկյուղածության զգացմունքով, երչանկություն կհամարինք անվանվիլ

Ձ. Կ. ՄԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՀՊԱՏԱԿՔ

2 փետրվարի 1862. Քվներ:

(112 ստորագրություններ)

«...Ազնվականներուն այս ազնիվ խնդիրը տեղը հասնելեն ետքը (շարունակում է նամակագիրը) զորապետ Անենեռոֆը բանի մը գնդապետներով և խումբ մը ժանտարմով Քվեր կերթկվի. Կառավարությունը մինչև այսօր կկարծեր, թե ստորագրները կճակատար ազատելով գործը պիտի լմնար: Անդին, ազնվականությունը, իր ստոնեությունեն, հրաժարվելով, հավատարմություն կպահանջե, երեսփոխանական ժողով կպահանջե, ուրիշ խոսքով, սահմանադրություն կպահա: Միայն Քվների ազնվականությունը չէ, այլ շատ գավառներ նույն ճամբուն կբռնեին և փետրվարի 19-ի օրենքը կատարելի կավ կհրաժարին: Քանզի գավառի ազնվականությունը միևնույն բովանդակությամբ խնդիր մը ազնի է կապահ. միայն սա՝ տարբերությամբ, որ հոն ազնվականաց հետ

շարժին, վարձկան են այդ դորուիյան։ Նոցա շահը այն է, որ հազիվ հազ ապրում են, բայց նոցա կյանքը զոհված է դորուիյան շահին։

— Կա՛ց,— ասում է մինը, որ չէ սիրում ուրիշի, մանաւանդ մի նոր կարծիքի հաւանուիյուն տալ։— Եվ դու կարծեցիր թե խնչքիս նատեցուցի՞ր ասածներդ...

Ա՛նչ կաս։

— Դու ասացիր, որ դրամի պակասուիյունը հնռևանք է երկրագործուիյան ընկնելուն, որից դուրս նա բերում զուգակշռի ընկնելը և դրամական կենտրոնացուիյունը (centralisation)։ Այդ սխալ տեսուիյուն է. քանզի դրամի պակասուիյունը երևուիյական է, որովհետև այսօր ամեն մարդու մոտ ավելի դրամ կա, քան թե սորանից տասն տարի առաջ։ Դրամը պակասել չէ, այլ դորուիյուն չունի, որովհետև թանկուիյունը երթալով դորանում է։ Մի մարդ, որ սորանից տասն տարի առաջ հարյուր ռսկի

ասորացրնը են բոլոր վաճառականք և սորսիները։ Օրինակը տակավին ձնորս չհասավ, որ բնչ իրնկնի)։

«Կառավարուիյունը Թվերի գործեն սարսափ մը կզգա և ուզելով խորամանկուիյուն բանեցնել, հասարակ ժողովրդի մեջ ձայն կտարածե, թե ազնվականուիյունը՝ Կայսեր տված խնդիրքին մեջ՝ գեմ է սորսիններու ազատուիյան, որպեսզի սորսիները այն ազնիվ կացուիյան գեմ հարուցանե, որմե ինքը կվախնա։ Ազնվականուիյունը կիմանա այս գավաճանուիյունը և իր տված խնդիրը, ամեն քաշտ, ամեն գնե հասարակ ժողովուրդի մեջ՝ խոսք կարդալ և հասկցնել, որով ո՛չ միայն հասարակ ժողովուրդին միտքը կրժշկվի, ո՛չ միայն կառավարուիյան խարդախուիյունը երևան կելլե, հապա՛, ժողովուրդը, կկարդի ազնվականուիյան հետ և սահմանադրուիյուն քաշը կարտասանե։

«Տասնիրնք հոգի ազնվական երիտասարդք, որ իրրև ազատուիյան առաքյալք, իրենց վրա առած վերոգրյալ ուրը և վտանգական պաշտոնը, ժողովուրդին՝ Հիմարուիյունը կբարոզնին և կառավարուիյան մոլորեցուցիչ խարդախուիյունը երևան կհանեին, կառավարուիյան պաշտոնյաներնին ձերբակալ կըլլան և կրտնատրիվին։

«Ասոնց մեջնե երնք հոգի իրրև գլխավորք, երկու եղբարը Նիքոլա և Ալեքսեյ Պարսնին (ասոնք այն երևելի Մ. Ա. Պարսնինին եղբայրներն են, որ իրրև առաջնորդ գերմանական ազատամարտուիյան (1848) բռնվեցավ Տրեզդենի մեջ և ութը տարի բանտ մնալնե և չորս տարի Սիբերիա աքսոր կրելնե ետրը, հրաշքով մը ազատուիյուն գտնելով, Ճարտնի և Ամերիկայի վրայով Լոնդրա հասավ) և Լազարեֆ անվամբ ռուս ազնվական մը, Բեզնբազուրկի Մուրը Գնարոսի և Գոդոսի ամրոցը կխրկվին։ Բայց ո՛չ, ազնվականը և ժողովուրդը կապկնցան իրարու հետ...

«Հյուսիսային կոիոզը կշարժի՞...

«Ես ինչպես մեծ շինվածը մը կանգնելու համար, շատ նյութեր կմանեն անոր կազմվածքի մեջ, այնպես ալ անոր կործանումեն ետրը՝ շատ նյութեր կասացվին զատ շինվածներու համար։ Ռուսիա մեջ խմորված ազատուիյունը համարձակ կարելի է մարդկային ազատուիյուն անվանել, վասնզի ազատուիյունը հոգի վրա կհիմնվի, քանզի ոչ միայն ինքը ռուսը կուզե իր ազատուիյունը, այլ՝ կրարոզե թե Լեհաստան, Ֆինլանտիա, Փոքր Ռուսիա (15 միլիոն ժողովուրդ), Կովկաս, Վրաստան և Հայաստանի պետք է, որ ազատ և անկախ ըլլան Մեծ Ռուսիայեն, որպեսզի ինքը 43 միլիոն զուտ ռուսական ազգը, առուգապես ազատվի, ամեն սորկուիյան և ամեն բռնաբարուիյան սկզբունը մերժելով և իր բարոյական ու նյութական ուժը և զորուիյունը միմիայն իր մեջը ամփոփելով, որպեսզի երբեմնի Հաշակի, հազարամյա գերուիյենն ետրը և հառաջանա քաղաքակրթուիյան մեջ։ Ռուսիո ազատուիյունը, ընդհանուր մարդկուիյան ազատուիյան վերարերուիյամբ, մե՞ծ խորհուրդ ունի... և այլն։ Ս. Հ.։

ունենալով. հանգիստ կարող էր ապրիլ մի տարի, այժմ նույն ժարգը երկու հարյուր ունի, բայց ապրում է նեղությամբ, քանզի այժմյան երկու հարյուրը անցած ժամանակների հարյուրի զորությունը չունի, որովհետև ապրուստը թանկ է։

«Ի՛նչ է այդ թանկության պատճառը և ի՛նչ ասել է թանկություն»։

— Եթե մինչև այժմ չդիտես թե ինչ է թանկությունը, ինչ ասացիր ու պրիչ տուր ձևորդ։ Թանկության պատճառն ես հարցանում ինձանից, պատճառը ո՞րն է։ Ապրանքը իմը չէ՞, երեկ վաճառում էի տասնի, այսօր քսանից պակաս չեմ տալիս, կարո՞ղ ես բանի հավիշտակել։ Այն տունը ուր ես բնակվում եմ, սորանից տասն տարի հառաջ վարձում էի հիսուն ոսկու, այժմ տան տերը չկամի տալ հիսունի և պահանջում է հարյուր, ի՛նչ կարող ես ասել։— Եթե դու շատ հարյուր, ուրիշ տվող կա,— առում է նա, և եթե ես նորան չտամ հարյուր, ուրիշ տեղ ես պակաս գնով չէ պիտու գտանեմ, ուստի և հարկադրված վճարում եմ այժմ հարյուր։ Ի՛նչ հարկավոր է տան վերա խոսիլ, ո՞ր բանը այսպես չէ։ Այսքան տարի ապրել եմ և միշտ կոշիկ եմ հագել, և միշտ մի զույգ կոշիկի համար վճարել եմ կես ոսկի, այժմ, այն նզովից արմատ կոշկակարը առում է, թե չէ կարող մի ոսկուց պակաս կարել։ Խոսելիք ունի՞ս, եթե չվճարես ոսկին, առանց կոշիկի կմնաս։ Կարո՞ղ ես բանի կարել տալ։ Ո՞ր մինը ասեմ, դերձակը ես նույն երգն է երգում, մինչև անգամ ջրկիրը կրկնապատկել է դույլ ջրի գինը։

«Ճշմարիտ է այդ բոլորը, բայց ի՞նչ է պատճառը, որ բոլորը ես միացել են և կրկնապատկել են յուրյանց ապրանքի գինը»։

— Ների՛ր, պարո՛ն, հաստատությա ես եղած, որ մինչև այժմ չհասկըցար։ Ապրանքը նոցա ապրանքը չէ՞...

«Հներիք է. լսիր։ Քո բոլոր ասածներից մի բան միայն ուղիղ է, այսինքն, զրամի զորություն չունենալը, իսկ պատճառը, որ կարծում ես թե հառաջանում է տանը տիրոջ, կոշկակարի, դերձակի ու ջրկիրի կամքեն հառաջանում է տանը տիրոջ, կոշկակարի, դերձակի ու ջրկիրի կամքից կամ դավաղրություններից, բոլորովին անխելք և տղայական։ Դրամի արժեքը պայմանական մի բան է, նորա զորությունը, կամ անզորությունը, նորա բարձրանալը կամ ցածնալը կապված է այն նյութերի շատության կամ սակավության, որոնց հետ կենթադրվեր փոխանակել դրամը։ Թանկությունը և դրամի արժեքի ընկնելը համարձակ կարելի է բացատրել պակասությունն և կարոտությունն այն նյութերի, որոնց հետ պիտի փոխվի դրամը. այսոհետ կամքը կամ հաճույքը հանդես չունի։ Երբ որ երկրագործությունը, դրամի հետ փոխվելու նյութերի մշակությունը ընկնի, երբ այդ նյութերը սակավանան, այն ժամանակ, նախ, դրամի արժեքն է ընկնում, երկրորդ՝ դրամը կենտրոնանում է, որովհետև հասարակ ժողովուրդը չունի այն բանը, որ փոխանակել կարող էր դրամի հետ, ուրեմն և դրամի շրջանառությունը դարձնել յուր մեջ։ Եվ այսպիսի դիպվածում ավելի դառն է հասարակ ժողովուրդի վիճակը. դրամը կենտրոնացած է, և ժողովուրդը պիտի քարշն նորան այդ կենտրոնից, ինչո՞վ, միմիայն յուր

աշխատությամբ և այդ մեքենական աշխատությամբ ստացած դրամը չունի գործություն։ Ապա եթե երկրագործությունը ծաղկի, դրամի հետ փոխվելու նյութերը առատանան, դրամը չէ կարող կենտրոնանալ զանազան ձեռքերում, հասարակ ժողովուրդը, յուր պատրաստած նյութերի գործությամբ, կգրվի նորան, որով ոչ միայն դրամի շրջանառությունը կմատանե ժողովրդի մեջ, այլ դրամի արժեքը ևս կբարձրանա նյութերի շատության չափով։

Այս աշխարհներում, ուր հասարակ ժողովուրդը հող չունի, ուր չէ կարող երկրագործությամբ ապրիլ, նա կենտրոնանում է քաղաքներում և մայրաքաղաքներում, և այս կենտրոնացության չափով ստատկանում է և թանկությունը, ուրեմն և աղքատությունը։ Անգլիո մեջ, Լոնդոնի և այլ գավառական քաղաքներում բնակիչը գրեթե հարյուրին տասն և հինգ շատանում են ամենայն տարի։ Թողո՛ւնք ուրիշ քաղաքները, միմիայն Լոնդոնի մեջ տասն տարու միջոցում հավելացել է գրեթե հինգ հարյուր հազար հոգի։ 1851 թվականում Լոնդոնը ուներ բնակիչ 2,362,236, իսկ 1861-ին՝ 2,803,034։ Տարակույս չկա, որ Ամերիկայի պատերազմի պատճառով այսօր Լոնդոնի մեջ կա 3 միլիոն բնակիչ։ Այսպիսի վիճակում, մինչ միլիոնավոր հոգի պիտի ապրի յուր մեքենական աշխատության վարձով, մինչև այն ամեն ժամանակ չէ կարող դառնալ, կարե՞լի է հարատություն, հնարավո՞ր է ապրուստ*։ Եվ եթե այսպես է հասարակ ժողովուրդի վիճակը մի այնպիսի աշխարհում, որ բոլոր երկրագունդին բաժանում է յուր ձեռագործը, որ պետք ունի միլիոնավոր ձեռքերի, ի՛նչպես ուրեմն կլինի այն աշխարհների վիճակը, ուր անգլիական արվեստի և ձեռագործության և հազարերորդ մասը չկա, և եթե այն աշխարհների հասարակ ժողովուրդը ինու յուր հողը և երթա մայրաքաղաք կամ այլ գավառական քաղաքներ։ Ասել հարկավոր չէ, թանզի մինչև այստեղ ասածներիցս հետևցնելը շատ հեշտ է։

Բայց մինչև այստեղ մենք մեր առջև դրած բուն խնդրին չդպանք. մինչև այստեղ աշխատեցանք միմիայն մերկացնել նորան։ Ի՞նչ է մեր խնդիրը։ Ո՛չ Ամերիկայի պատերազմը, ո՛չ Անգլիո անփականության օրենքը, ո՛չ օդային ազատությունը, ո՛չ Ռուսիո ներկա վիճակը, ո՛չ մինը և ո՛չ մյուսը։ Ի՞նչ է ուրեմն։ Մեր խնդիրը...ինչ որ ավելի իրավունք ունի գրավելու մեր ուշադրությունը, ինչ որ մոտ է մեզ, որի հետ անքակտելի կապերով կապված ենք,— մեր խնդիրը է մեր խե՛ղճ ազգի թշվառությունը։ Այս տողերից սկսած մեր ընթերցողների ուշադրությունը հրավիրում ենք դեպի Թյուրքիա, որի կազմության մեջ մտնում է Հայաստանի և հայոց ազգի մեծագույն մասը։ Բայց և այնտեղ տնտեսական խնդրի սահմանից չէ պիտո դուրս գանք այս անգամ։

Ամեն մարդ կարող է վկայել, որ 1860-ին ավելի լավ էր Թյուրքիայի

* Վերջին վիճակագրական տեղեկությանց նայելով, Լոնդոնի մեջ, ուրիշի օդնությամբ, այսինքն ողորմությամբ ապրող աղքատների թիվը հասանում է մինչև 800.000 հոգի։

դրամական վիճակը, քան թե 1861—62-ին. տարակույս չկա, ժողովուրդի վերաբերութիւնամբ, քանզի ինքը կառավարութիւնը մինչև այժմ ապրել է արտաքին և ներքին պարտքերով։ Ահա՛ այդ համեմատական լավ տարու, Թյուրքիայի եկամուտի և ծախքի ցուցակը.

Եկամուտ	286,100,615	ֆրանկ։
Ծախք	335,225,300	
Պակասորդ	49,124,685	

Ահավասիկ Թյուրքիայի և, թե արտաքին և թե ներքին, պարտքի հաշիվը... 32,849,220 լիբրեն ստերլինգ կամ 828,810,344 ֆրանկ կամ, ավելյի պարզ, յուրյան իսկ առատ հաշվով 4,106,152,500 դուրուշ։ Տարակույս չկա, Թյուրքիա ոսկին հարյուր դուրուշ հաշվելով։ Մինչև 1861, արտաքին և ներքին,— Պոլսի մեջ պարտքերով,— այստեղ է հասած։ Այժմ կամենում է բարվոքել յուր դրամական վիճակը. ի՛նչպես. մի կողմից արտաքին նոր պարտքով (նթե տան), իսկ մյուս կողմից, Պոլսի պարտքը տեղափոխելով գավառների մեջ, այսինքն, յուր անվանարկ Քայիմանն, յուր անանկուիյան դրոշակը տարածելով գավառական քաղաքներում և գեղերում (նթե ընդունին) և այն տեղերի նշխարյալ ոսկին և արծաթը բերելով Պոլիս։ Այս է նորա միակ հնարը, որով կամենում է դեմ դնել Պոլսի դրամական հոգնվարութիւնն։ Թյուրքիո կառավարութիւնը ձեռք զարկելով այս հնարին, մոռանում է յուրյան պաշտպան և, յուր անփոփական շահին համար, Թյուրքիո բարեկամ՝ անգլիական տերութիւնյան մինիստրի ասած խրատը, ուր ասում էր նա, թե «պարտքով ապրիլը նմանում է ծակ տակառի մեջ ջուր լցնելու»*։ Մոռանում է, դարձյալ, որ գավառները կրնասի առաստպելյալ գանձարանքը չենն։ Ջուր տեղը որոնում է նա յուր արծաթը և ոսկին յուր գավառներում. ի՞նչ զորութիւն ունենին այդ գավառները, որ կարողացած լինեին նորանով յուրյանց մեջ գարձնել դրամի շրջանառութիւնը։ Գավառներից գալու մեծապյա գրամը չպիտի կարողանա, մի տարի միայն, ծածկել Թյուրքիո պարտքերի շահը և տարեկան ծախքի պակասորդը։ Ի՛նչ պիտի լինի ուրեմն այս հնարների ուշդակի հետևանքը։ Այն, որ պարտքը պիտի կրկնապատկվի. այն, որ գավառները նա պիտի հասանեն Պոլսի օրը, այն, որ մի գեղեցիկ առավոտ թե Պոլսի և թե գավառների մեջ մարդիկ չպիտի կարողանան հաց ճարել, աղքատութիւնը և սովը պիտի հարկադրե նորանց դեպի հափշտակութիւն և կողոպուտ, մի խոսքով, բարելոնյան խառնակութիւն։ Բայց չէ՞ պիտո մոռանալ, որ մի այսպիսի վատաբախտ դիպվածում առաջ քրիստոնյա ազգերը կարող են ազնիվ չորեք այս խրատը տալու ժամանակ

* Մենք չենք կարող հավատալ, թե ազնիվ չորեք այս խրատը տալու ժամանակ ուրիշ կարծիք ունեցած լինի Թյուրքիայի վերա դրամական խնդրի վերաբերութիւնամբ, քան այն կարծիքից և ավանդութենից, որ ուներ դյուցազնական աշխարհը Դանայիդի բոցի այն կարծիքից և ավանդութենից, որ ուներ դյուցազնական աշխարհը Դանայիդի ծակ կարասի վերաձ։

տունայք կկողոպտվին, կմերկանան և կմնասանին, իսկ հետո Թյուրքը, կառավարչական ուժը, դոնե, այդտեղ դեմ պիտի երևի, որ յուր ողորմելի տարուկներից ավելի ապրի միքանի օր և այն, ապանվածներն հաշվով։ Այս ապագայի տավերական և ուրիշ օրինակը Պոլսի մեջ երևնցավ 1861 Թվականի վերջերում, բայց կգա օր, երբ այն տավերականը ի լույս կհրշմարտվի, և Բուլղեր առպետը, հինգ հարյուր հաց բաժանելով, չէ կարողանալու զարման տանել վերահաս վտանգին։

Բայց Թյուրքիո կառավարությունը չէ տոկում յուր պարտքերից։ Նա մխիթարվում է տեսանելով, որ ավելի շատ են այլ տերությանց պարտքերը։ Նա զարմանում է միայն, թե ինչպես այն ավելի շատ պարտական տերությունքը, որ պետք է և ավելի շատ նեղության մեջ լինեին, քան թե ինքը, ծիծաղում են Թյուրքիո դուրուշների երեսն ի վեր և երկու երեք անգամ կարող են բարձրացնել յուրյանց ոսկինների գինը։ Մեղքը Մոհամմեդի վիզը, որ տոքա պատճառը չէ գրել Կուրանի մեջ։ Ուրիշ տերությանց պարտքը անհատուցանելի չէ, պարտքի գումարը վատնված չէ, պարտքի հանգեպ, և շատ տեղ, կրկին անգամ ավելի արժողությամբ, կա գործ. և պարտը այսպիսի դիպվածում անանկություն չէ։ Նորա ունին երկաթուղիք, ունին հոկա նավատորմ, դինարան, զորք, բանակ և այլ հազար ու մի քաղաքական կամ դինվորական պատրաստություններ։ Իսկ Թյուրքիան յուր պարտքերի հանգեպ ոչինչ ունի ցույց տալու։ Երեք ու կես նավ, բացի ծովագնացությենից ուրիշ ամեն բանի պիտանի, մի քանի հազար քաղցած և մերկ դինվոր, որ տարիներով չեն տեսնում ռոճկի երես, ներս մտանող ապրանքների մաքսը աննշան, յուր մեջ պատրաստված ապրանքի վերա ավելի ծանր հարկ, ո՛չ երկրագործություն, ո՛չ ճանապարհ, ո՛չ հաղորդակցություն, ո՛չ գիտություն և ո՛չ արվեստ։ Տերության կառավարիչքը յուրյանց անձնական շահին պաշտոնյա, տերության գանձը հասարակ ժողովրդի արյունի և քրտինքի հետ միասին լափիզող։ Այստեղ անհատուցանելի է պարտքը, այստեղ բարձրաձայն խոստում է անանկությունը։ Ա՛խ, ոսկին, իբրև մի աղնիվ մետալ, չէ կարող մնալ մի այնպիսի խառնակ տեղում,— նա բարձրանում է։ Մնում է անարդ թուղթը և չէ վախենում։ Նա վստահ է, որ մարդիկ նեղ դադարին նորան իբրև դրամ գործ դնելուց, մեր չէ պիտու իսպառ մերժվի, հարմար լինելով այլ պիտառության։ Բարի ճանապա՛րհ։

Եթե կառավարության կողմից չկա մի խելացի, մի արմատական հնարի գործադրություն, քաղաքական անանսություն կարգի դնելու և դուրս տված և ներս ընդունած ապրանքի կամ դրամի մեջ զուգակշիռը պահելու ձգտողություն, երբ հասարակաց ծանրաչափը ակնարկ գուշակում է նորա կյանքի համար մի մահաբեր մրրիկ, այն ժամանակ ինքը, այդ հասարակությունը պարտական է կողմնակի և յուր ձեռքից եկած հնարները գործ դնելով աշխատիլ, ազատվելու համար այն տոկալի պատահարից, որին անտարակույս, եթե ոչ այսօր, վաղը կամ մյուս օր պիտի հանդիպի երես առ երես։

Ի՛նչ հնար կարող է գործ դնել հասարակությունը այդ վտանգից ազատվելու համար։ Նա ինքը ևս ազքատ է և ոչինչ ունի, ի՛նչպես ուրեմն կարող է օգնել ուրիշին։

Խնդիրը նույնիսկ այնտեղ է, որ նա ազքատ է և պիտի առավել ազքատանա, եթե ձգնի յուր մինչև այժմ բռնած ճանապարհը շարունակելու։ Նա ազքատ է, բայց այդ ազքատությունը միայն կարող է լարել նորա ջլերը, նորա գործունեությունը, ազքատությունը միայն կարող է սթափեցնել նորան յուր թմրություններից, որպեսզի նշմարե յուր մինչև այժմ բռնած ճանապարհի ուղղությունը և փոխե նորան, հասաջ քան թե հասել էր մինչև նորա կորստական ելքը։ Եթե հարուստ լիներ հասարակությունը, կարոտություն չկար հնար մտածելու, ճանապարհ փոխելու նորա ազքատ լինելը, միևնույն ժամանակ, կարող է լինել նորա փրկությունը։

Պոլսի մեջ, նորա շրջակայքում կամ այլ քաղաքներում բնակվելու և ձուկի նման տապակ տապակ լինելու ախորժակը անհասկանալի է մեզ։ Վաճառականություն առնել մի աշխարհում, ուր դրամի գինը մի օրվա մեջ այնքան անգամ փոխվում է, որ ո՛չ առնողը գիտե նորա բուսնական արժեքը և ո՛չ ծախողը, վաճառականություն առնել մի տեղում, ուր ոչինչ հաստատ բան չկա, ուր շատ անգամ կհարկադրվիս այսօրվա հազար դուրուշ պարտքիդ փոխանակ վաղը երկու հազար կամ ավելի վճարել, վաճառականություն առնել մի տեղում, ուր գործի սկսված օրից երևում է անանկության դալուկը, այսպիսի մի վաճառականություն մեզ միշտ անհասկանալի կմնա։ Հայոց ազգը Պոլսի մեջ կամ այլ դավառական քաղաքներում, եթե դուրս հանենք արհեստավորը և հայաստանցի բնակիչը, մնացածը առհասարակ վաճառական է. ի՛նչ վաճառական, կարելի է ասել յուր անունով, ուրիշի գործակատար։ Մեծագույն մասը այս տեսակ վաճառականների հազիվ հազ կարողանում են ապրիլ, բավական բազմաթիվ մասը զոհ գնաց Թյուրքիայի դրամական անկարգության։ Ամենափոքրագույն և շատ ամենափոքրագույն մասը գուցե տևում է դիարդ և իցե, բայց ոչ ավելի, քան թե դիարդ և իցե, որովհետև այն պայմանների առակ անհնար է ուրիշ կերպ։ Արհեստավորը և բնակիչը, որ չունի և այս վաճառականների ունեցած շատ կամ սակավ նյութական ուժը, ապահատան է յուր երկու ձեռքի աշխատությանը։

Բայց, ընդելով այս բոլորի վերա, ազգը օրըստօրե թողնում է յուր երկիրները և կենտրոնանում է քաղաքներում։ Ազքատությունը ստիպում է նորան թողուլ յուր տունը, յուր ընտանիքը, յուր ամուսինը, յուր զավակները և գնալ Պոլիս կամ այլ քաղաք, ազքատություններից ազատվելու համար։ Բայց այդ տեղերում ևս նորան հանդիպ է դուրս գալիս էապես նույն ազքատությունը, գուցե մի փոքր քաղաքային ամոք կերպարանքով։ Դիցուք գնդում ատանում էր նա օրական հինգ դուրուշ, իսկ քաղաքում ատանում է ութն կամ տասն, բայց ինչ օգուտ այն երեք կամ հինգ դուրուշ հավելվածից, մինչ չէ մնում նորա ձեռքում։ Քաղաքի մեջ, համեմատությամբ շինական կյանքին եթե ոչ ավելի, գեթ հարյուրին քառասուն առաջ

վել է և ծախքը։ Եթե մարդը հինգ ստանալով աղքատ էր գնդում, աղքատ կլինի Պոլսի մեջ կամ այլ քաղաքներում, ուրեմն կամ տասն ստանալով։

Բացի սորանից, ընտանեկան կյանքից դրկվիլը, դժոխային աշխատությունը, որով պիտի շահի նա այն միքանի հավելյալ դուրուշները, անտուն, վարատական և անմաքուր կյանքը, որ պիտի անցուցանե նա զանազան իջևաններում։ Երեկոյան պիտի գա վատատկյալ ուժաթափ, շատ անգամ և վնասված անդամներով, իսկ լուսաբացին, նույն եղիպտական ծառայությունը, որ սպասում է նորան։ Չկա այն ընտանեկան մխիթարությունը, ամուսնու և զավակների մաերմական, գողտրիկ և անմեղ հայացքը, որ առանց ձայնի, առանց խոսելու, կարող են ամոքել ճակատագրի դառնությունը, և այս բոլորը անխորհուրդ, առանց հիմնական հաշվի և չկամելուց, արմատական կերպով դարման տանել յուր աղքատության։ Եվ այսպես, իբրև գրաստ, իբրև մեքենա ծառայելով արտասվելի օտարության մեջ տասն-քսան տարի, կամ մեռանում է այնտեղ, թողնելով յուր ընտանիքը ծայրացյալ թշվառության մեջ, կամ վերադառնում է դնալի յուր երկիրը։ Վերադառնո՞ւմ է... բայց ոչ այնպես առույգ և զվարթ, ինչպես դուրս էր եկել այնտեղից, այլ հասակն առած, ուժաթափ և թոշնած։ Վերադառնում է յուր տունը... բայց ի՞նչ եղավ արդյոք այն լքյալ տունի և ընտանիքի վիճակը նորա բացակայության ժամանակ։ Վերադառնում է յուր տունը, երբ կորուսել էր աշխատելու ընդունակությունը և հարմարությունը։ Ուրեմն, վերադառնում է նա միմիայն յուր ներկայությամբ, յուր աղքատ և կարոտ ընտանյաց թիվը հավելցնելու համար։

Եվ ահա նորա տասն և ութն կամ քսան տարեկան որդին, որ աճել և զորացել էր իբրև մի ծաղիկ յուր սեփական հողի վերա, առնում է ձեռքը յուր հոր պանդխտական գավազանը և գնում է...

— Ո՞ւր բարով։

— «Պոլիս, Տրապիզոն, և այլն և այլն»։

— Ինչի՞ համար։

— «Աշխատելու և ընտանյաց օգնելու»։

— Աշխատելու և ընտանյաց օգնելու — կրկնում է խոսակիցը անհնարին սխրությամբ։

Անցնում է սորա վերայով միքանի տարի, հանկարծ այս նորեկը լուր է առնում, որ յուր ծերունի հայրը վախճանել է, մայրը հիվանդ է։ Մի փոքր ժամանակից և մայրը մեռնում է։

— Լաց, պանդուխտ, բնական զգացողությամբ չե՞ս կարող լաց չլինել, բայց ոչ ոք մեղավոր չէ,— բացի քո հորից, բացի քեզանից, բացի այն սխալ և վնասակար ավանդություններից, որ քեզ այդ օրը ձգեց։

Պանդխտակիցդը գալիս են նորան մխիթարելու։

Մի երկու բաժակ գինի... մի քահանա, մի «Հոգվոց» և պանդուխտի սիրտը պաղում է։ Բայց, նորա սիրտը պաղում է և այն աշխարհից, ուր Ծնել էր նա... ի՞նչ բանի համար վերադառնա։ Նա գտանելու չէ յուր

տունը, յուր ծնողքը, նորա աչքին պիտի հանդիպին երկու գերեզման և մի ամայի բնակարան, եթե և այն չէ անցել օտարի ձեռք։ Նա որոշում է մնալ պանդխտության մեջ և այս որոշմամով հոժարում է մինչև տակը խմել թշվառության բաժակը։ Այո, մնում է նա, բայց տունը մարեցավ։ Մի գերդաստան ընկավ հասարակաց խումբից։

Արդյոք ո՞րքան գերդաստաններ ընկնում են այսպես։

Սոցա վիճակից ավելի քաղցր չէ այն մանր վաճառականների վիճակը, որ նույնպես, լքանելով յուրյանց երկիրը, ձեռք են զարկում վաճառականության, պանդխտանալով օտար աշխարհում։ Նոցա կյանքի շավիղի վերա ևս չկան ծաղիկներ և վարդեր, ամենայն քայլափոխ փո՛շ և տատա՛սկ։ Եվ այնտեղ, ուր մարդը պատերազմ ունի չքավորության հետ, որ չգիտե ինչո՛վ պիտի կերակրվի կամ ի՛նչպես պիտի զարմանան յուր ընտանիքը, ո՛ւր կմնա վերհամբարձ հասկացողության և բարոյական կատարելության հասնելու ձգտողությունը։

Նա բոլորովին մեքենայացած, մանում է յուր կյանքի թելը, նորան չէ գալիս մի հրապուրիչ հույս, նա չէ տեսնում յուր ապագայի հորիզոնի վերա մի երջանկության աստղ, նորա ներկան և ապագան խավար է։ Նա տանում է յուր կյանքի ծանր խաչը, մինչև որ մի նյութեղեն խաչ տնկվի նորա գերեզմանի վերա։

— Իսկ նորա ընտանի՞քը։

«Այժմ կենդանի մարդիկ չկամին հոգալ և արմատականապես բարվոքել յուրյանց կյանքը, յուրյանց ընտանիքի ապագան, մեռա՞ծը պիտի հոգա»։

Նորա ընտանիքին սպասում է նույն թշվառությունը, ինչ որ վերևում ասացինք։ Նորա պատանի կամ մանուկ որդին, շատ անգամ տասներկու տասնհինգ տարեկան, հարկադրվում է թողուլ դպրոցը և գնալ ծառայության, որ մի քանի ժամանակից հետո օգնություն կարողանա հասուցանել յուր մորը կամ յուր քույրերին։

— Քույրե՞ր ևս ունի։

«Այո՛, երկու կամ երեք հատ»։

Մենք հրաժարվում ենք այս թշվառությանց պատկերները նկարագրելուց։ Նոցա ահարկու կերպարանքը սարսափ են բերում մեր վերա։ Այն մարդը, որի մեջ կա մի թարմ սիրտ, մի մարդկային կենդանի զգացողություն, ինքը կարող է զգալ մնացածը, իսկ չորարեկ և քարացած սրտերի համար բանականության ձայնը՝ հոդմոց հնչյունք։ Ահա և այս տունը մարեցավ, սա ևս դուրս ընկավ հասարակաց շինվածքից։

Ի՞նչ կլինի այն շինվածքի վիճակը, եթե նորան կազմող մասերը օրըստօրե ընկնին, և մնացողը ևս առ վաղիվ հարատևելու չկարողանա երաշխավորել։

Այն, ինչ որ պատկերացնում է այժմ մեր խեղճ ազգի վիճակը։ Ի՞նչ տեղ, ուրեմն, որոնենք փրկության հնարը, ո՞րն է այս ցավերից ազատվելու ճանապարհը, որպեսզի ազգը չմեռանի և մանավանդ ազատվելու ճանապարհը, որպեսզի ազգը չմեռանի և մանավանդ

ազատվի, երբ հասանն Թյուրքիայի դրամական կյանքի վճռական վայրկեանը։

Այդը, լավ ու վատ, փորձնց մինչև այժմ վաճառականութիւնը, նա փորձնց և վարձկանութիւնը և մշակութիւնը. ասոնցմից հետևցավ նորա կյանքի ամբողջը, որի տակ այսօր ճնշվում է միջաբնակ։

Հիմնական և խնդացի հնարը փրկութեան, ուրիշ բան չէ կարող լինել, եթե ոչ դառնալ յուր նախկին կացութիւնը։ Հողը և երկրագործութիւնը կարող է նորան փրկել։

— Ուրեմն բոլոր ազգը երթա երկրագո՞ծ դառնա, այդ անհնարին մի բան է և չկատարվելու ցանկութիւն։

«Ջնոք ասում բոլորը, բայց պիտի որ ազգի մեծագույն մասը երկրագործ լինի, իսկ փոքրագույնը՝ երկրագործի դուռս բերած արդյունքը մշակող և վաճառող, որ զուգակշիռը պահվի և աղբատութիւնը տարագիր գնա»։

— Բայց, դուք մոռանում եք, որ Թյուրքիան Եվրոպա չէ։ Նա չունի ոչինչ ճանապարհ, ոչինչ հաղորդակցութիւնք, որ անհրաժեշտ են թե երկրագործին յուր բերքը տանելու մի տեղ, և թե վաճառականին յուր վաճառքը դուռս տրամակելու համար։

«Այո՛, ընդունում ենք այդ, բայց դարձյալ կարելի է գործ կատարել։ Մի՛թե տակա՞վ տեղեր կան մեծ և փոքր Հայաստանի մեջ, որ մոտ են Սև ծովին և Միջերկրականին երկու, երեք, չորս կամ հինգ օրվա ճանապարհով»։

Մենք չենք ասում, թե հայը երթա սկսանի յուր երկրագործութիւնը Բաբելոնի ամայութեանում։

Այն ժողովուրդը, որ դուռս չէ եկել յուր պատմական աշխարհից, թող և չշարժի, մենք ընդդեմ ենք գաղթականութեան և գաղթականութիւն չէ մեր քարոզածը, իսկ այն մասը, որ դուռս է յուր աշխարհից, ասել է թե գտնվում է գաղթականութեան և պանդխտութեան մեջ, նորան հրավիրում ենք վերադառնալ, մանավանդ Փոքր Ասիա, որ ավելի հրապուրիչ է յուր ծովեզրյա դրութեամբ։

Հնարիք է, որ մի երկու դյխավոր և հարմարավոր տեղերում սկսանի երկրագործութիւնը. միւս մասերում, որ թևրնա հեռի են ծովից, նույնպես կզարթի։

Վաճառականութիւնը կլրացնե պակասը։

Ո՞վ արգելարիի է հայոց ժողովրդին, որ նա չրնակի վերասաց տեղերում. և ի՞նչ տեղեր, ուր պարարտ հողը բուսուցանում է գրեթե ինքնըստինքյան, քանդի երկրագործական գիտութիւնքը դեռ ոտք չեն կոխել այն կողմերում։

Եվ ա՞րդ գործ կարելի է տեսնել մի հողի վերա, ուր աճում է և բազմանում է ամենայն ընտանի անասուն և գրաստ, ուր բուսանում է բամբակ, ցորյան, բրինձ, վարսակ, գարի, տորոն, տուտամ, շաքարնդեղն,

ճակնդեղ և այլ, հազար բուսական և ընդեղեն և ուր շնթամազարմանութիւնը և մեսաքաղործութիւնը կարող են ծաղկիլ ու բարգավաճիլ։

Այս անվանված բերքերից գէթ երկուքը կամ երեքը բավական են հարստացնել մի բազմութիւն, որ արհաշան փութով պարապում էր այն նվիրական գործով։ Ո՞ւր արդյոք կարող են անվաճառ մնալ և վնաս տալ երկրագործին բամբակը, մեսաքաղը, շաքարը, ցորյանը և այլն։ Մենք չենք կարող ասել, թե հայոց ազգը չգիտե այս։ Բայց, միանգամ սովորութիւն է եղել նորան այն ճանապարհը, որով գնում է և այժմ ծանր է շարժում դնալի մի այլ ուղղութիւն։ Ահագին տխրութիւնն ամայ ծանրանում է մեր սրտի վերա, երբ մտածում ենք, թե անգլիացին գնում է Կանադա, Ավստրալիա, Հնդկաստան. ֆրանսիացին թողնում է յուր միշտ անհոգ, միշտ ուրախ և միշտ զվարթ Փարիզը և գնում է Ափրիկեի ժժոխային գոռիների տակ մի կտոր հող ճանկելու և նորա մշակութիւնեմբ յուր ապագան ապահովելու, մեր սիրելի հայը և ոչ անգամ կամի մտածել յուր ապագայի վերա, նա թողնում է յուր երկիրները և կեսորնանում է քաղաքներում։ Գուցե մանր մունր վաճառականութիւնը, միջնորդութիւնը, բնեռակրութիւնը ավելի արժեք ունին Նորա աչքում։ Շատ դառն է մեզ ասել այս խոսքը, բայց ծածկել այն, ինչ որ զգում ենք, համարում ենք ոչ միայն կեղծավորութիւն, այլև վատութիւն։

Մի բանի տարի կա, որ լսում ենք հանապազ մեր վաճառականներից մի կարծիք, թե հարկավոր է աշխատիլ վաճառականութեան վերա, որպեսզի ազգը հարստանա։

Երանի՜ թե, ասում ենք մենք. քանզի այն տեսակ վաճառականութեան մեջ չենք տեսնում ազգային հարստութեան սերմը։ Եվ մի՞թե կարծում են մեր պատվելի վաճառականք, թե Մեսիչեսարի, Մարսելլի կամ այլ եվրոպական քաղաքների հետ առուտուր ունենալը կարելի է անվանել ազգային վաճառականութիւն միմիայն այն պատճառով, որ ինքյանք հայ էին։ Նոցա վաճառականութիւնը ազգային չէ և ազգի ընդհանուրի շահի հետ չունի որևիցե վերաբերութիւն։ Այն ժամանակ միայն կարող է երևել ազգային վաճառականութիւնը, երբ նա, գլխավորապես, հայի առաջ բերած նյութը և արդյունքը վաճառե, այն ժամանակ միայն ազգը օգուտ կքաղե մեր վաճառականների գործառնութիւններից, երբ սորա միջնորդ լինին հայոց ընդհանրութեան և Եվրոպիո մեջ, այն ժամանակ ազգային է վաճառականութիւնը, երբ նորա խարիսխը դրված է ազգի հիմքի վերա։

Եվ մինչև այս թող հայ վաճառականը հազար տարի ապրանք բերե Եվրոպայից ու վաճառե, կամ որ նույն է, օտարի ապրանքը ուղարկե Եվրոպա, ազգին ո՛չ շահ կա և ո՛չ վնաս, որպես նաև ո՛չ ազգային վաճառականութիւն. վաճառականը բերևս ինքը շահվի, դարձյալ ազգին բան չկա։ Ի՞նչ կօգնե սորա անհատական հարստութիւնը միլիոնավոր ազգատների ընդհանուր կարոտութեան։

Կանգնեցուր, նրա կամիա նոր սյուներ, բայց նրա հիմքը ուժ չունի, շինվածքը ի՞նչպես կարող է կանգուն մնալ։

Հարկավոր է հիմքը նորոգել, կենդանություն տալ նորան, ուժ և զորություն դնել նորա մեջ, որպեսզի կարողանա հաստատ պահել յուր վերա լինելոց շինությունը։

Ինչո՛վ պիտի նորոգենք այս հիմքը. լուսավորությո՞ւն տարածելով։ Ո՞ւր են մեր հնարքը, որ կարողանայինք գործ դնել այս խորհրդով։

Հինգ, տասն հոգի աղգասեր, ինչպես կարողության տեր մարդիկ, դիտենք իրենց կամենային գոհել յուրյանց առացվածքը աղգի օգտին, բայց հինգ, տասն ուժը ի՞նչ կարող է օգնել, ի՞նչպես կարող է գնել միլիոնավոր ժողովրդի կարուստության։ Եվ մի՞թե կարող է արտաքին հոգաբարձությունը լուսավորել և կրթել մի ահագին բազմություն, երբ այդ բազմությունը ինքը չէր դիմում դնալի լուսավորության արևը։ Եվ այդ ահագին բազմությունը, որ առավոտը զարթնելով պիտի մտածե, թե ի՞նչպես անանի կամ ի՞նչպես անուցանե յուր ընտանիքը, որպես թե կարող էր մտածել լուսի կամ խավարի վերա։

Մենք չենք հավատում։ Սարկության մեջ, աղքատության մեջ չկա և չէ կարող լինել լուսավորություն։

Թողունք այս, մտահայաց փիլիսոփայությունը արժեք չունի մեր օրներում։ Այն փիլիսոփայությունը, որ անմիջապես չէ բղխում մարդկային կյանքից և որ չէ դադարում դարձյալ մարդկային կյանքի վերա, քանի որ մարդը ապրում է և օդ է շնչում, մենք հրաժարակում ենք նորան իմաստասիրություն և խարեություն։ Մարդն է փիլիսոփայության և՛ հնձինակը, և՛ առարկան։ Անցան այն ժամանակները, երբ մի տնասեր երկաբաթզանցը, խորամանկությամբ տիրելով մարդկային բանականության, եգիպտական առեղծվածներով պատգամ էին տալիս նորան, անցան այն ժամանակները, երբ մտածում էին պարզամիտ մարդիկ, թե օդի անշափելի բարձրության մեջ դրած է փիլիսոփայության աթոռը։ Սո՛ւտ. փիլիսոփայությունը երկրագունդի վերա է, մարդն է նորա աթոռը, մարդն է նորա և՛ քննողը, և՛ քննելին։ Բայց մարդը, հառաջ քան թե պիտի գոյանար, հառաջ քան թե գոյանալուց հետո պիտի ապրի, հառաջ, քան թե պիտի քննե և իմաստասիրե յուր անձը, յուր կյանքը, յուր անցածը, յուր ներկան, և հառաջ քան թե պիտի մտածե և հոգաբարձու լինի յուր ապագայի մասին, այս բոլորից առաջ մարդը կարուստ է նյութիւ։ Անցա՛ն այն ժամանակները, երբ մշուշով պատած մարդկային երևակայությունը ոչնչից տիեզերք էր ստեղծում։ «Ex nihilo, nihil fit!» վերջին մանուկը կրկնում է այսօր մեր հետ։*

«Ոչի, մարմին և ոսկերս ոչ ունի» — ասում է աստվածամարդը, իսկ մարդը մարմին և ոսկերք ունի, և այս բանձրությունը վկա է բնության նա։ Առանց մարմնի չկա շոշափելի կենդանություն, իսկ մարմինը նյութ է և մարմնի և մարդու կյանքը նյութերի անդադար փոխանակություն։ Այսպես խոսելով, չենք մերժում մարդկային կյանքի բարոյական կողմը, թեև մեր ճանաչած բարոյականությունը մարդկային համերաշխություններից

* (Լատ.) Ոչնչից ոչինչ կառնվի։ Խմբ.։

կրղխի և Մինայի հետ վերաբերություն չունի, այլ, կամենում ենք ասել, թե մարդը նախ և առաջ կենդանի է և ապա բարոյական էակ։ Նորածին մանուկի համար, ինչ հարկավոր է նորածին մանուկը առնուլ մեզ օրինակ, պատանու համար մինչև նորա խելահասությունը չկա բարոյական խնդիր, բայց մարդը մինչև այդ աստիճան հասանելը, կարող է նյութից։ Նյութական խնդիրը միշտ կա։ Առաջին շունչի հետ մարդը առնում է օդի թթվածինը. և երբ վերջին անգամ դուրս արձակում է յուր թոքերից ածխաթթուն, առանց վերսին թթվածինը ներս ընդունելու, նա կենդանի չէ այլևս։

Տնտեսական խնդիրը մահու և կյանքի խնդիր է, կրկնում ենք դարձյալ։ Եվ անկարելի է հայոց ազգի հիմքը նորոգել, ուժ և զորություն դնել նորա մեջ, քանի որ ազգը, հասարակ ժողովուրդը, կարող է օրական հացի, քանի որ նորա տնտեսական խնդիրը կարգի չէ դրվում։

Հայոց հասարակ ժողովուրդը ազքատ է և չունենալով ոչինչ կարողություն հագիվ հազ սերմանում է և հնձում է այնքան, որքան նորա տարեկան ապրուստը, զիարդ և իցե, պիտի կարողանար ապահովել։ Նա չէ կարող ավելի ցանել, որովհետև ուժ չունի, և թեև ունենար ևս, դարձյալ ընդունայն, քանզի բնակակից լինելով մի կաթվածահար ժողովրդի, որպիսի է իյուրքը, որի մեջ չկա և հավիտյան չպիտի լինի ոչինչ գործունեություն, երկրագործի ապրանքը կարող էր մնալ նորա ձեռքում, որովհետև չկա այդ ապրանքի վաճառականություն, չկա մինը, որ ապրանք հետև չկա այդ ապրանքի վաճառականությունը, չկա մինը, որ ապրանք խնդրե նորանից, ապրանք ապազարե նորան և եղածը առնու արծաթ վճարելով փոխարենը։ Ապա եթե հայ շինականի ձեռքը մի փոքր դրամ անցանեն, եթե նա հույս ունենա, որ յուր աշխատությունը պիտի գնահատվի, եթե նա տեսնե յուր մշակության պտուղը, ո՞չ ապաքեն կրկնահատվի, եթե նա տեսնե յուր մշակության պտուղը, ո՞չ ապաքեն կրկնապատիկ կսկսի ցանել, կրկնապատիկ հնձել։ Ո՞չ ապաքեն դաշտերը կմշակվին և ժողովուրդը մի փոքր ազատ շունչ կառնու։

Բայց խնդիրը այստեղ է, թե ո՞վ տա երկրագործին այն դրամը, որ հարկավոր է նորա լքյալ բազուկները զորացնելու համար։

Վաճառականը կամ փոքրիշատե կարողության տեր մարդը, պատրաստահարների ձեռքում խաղալիք դառնալու, կարող է ամենայն վստահությամբ հում նյութեր առնուլ հայ երկրագործից, ապրանք ապազարել նորան, մանր մունր գումարներ տալ հառաջուց այս և այն շինականին և հունձից հետո, ապրանք առանալ փոխարենը։ Կարողության տեր մարդը նույն այս ճանապարհով կարող է աճեցնել յուր գումարը։ Եվ եթե չկամի նա ապրանքը պահել յուր ձեռքում, մի րոպեի մեջ կամեցավ և տհա պատրաստ են վաճառականք գնել նորա ապրանքը։

Այս հանապարհով միայն դրամի շրջանառութիւնը կրնան ազգի մէջ, այս հանապարհով միայն ազգը կարող է բարվոքել իւր անառնական վիճակը, այս հանապարհով նիւթական ուժը կանցնան ազգի ձեռքը. ազգը կզորանա, և երկրագո՛րծը և վաճառակա՛նը և կարողութիւն ան ալ մա՛րդը օրըստօրէ կհարստանան։ Զուգահեռաբար սորա հետ կլայնանա և նոցա գործունեութիւնն ասպարէզը։ Եվ որքան ասպարէզը լայնանա, այնքան շահը և հարստութիւնը կլայնանա, և որքան շահը և գործունեութիւնը աճի, այնքան և ասպարէզը կտարածվի։

Մինչև այժմ հայոց ազգի մէջ խախուտ և անհիմն վաճառականութեան խորհրդով հիմնվեցան մեծ կամ փոքր ընկերութիւններ, նորանցից ոմանք ընկան դնպքերի հարվածի տակ, ոմանք տևում են կիսամեռ, բայց մինչև այժմ չներևեցավ և ո՛չ մի ընկերութիւն, որ պարապեր երկրագործութեան և երկրագործական բերքերի մշակութեան, մինչև այժմ չներևեցավ մի ընկերութիւն ազգային վաճառականութեան։ Հնչութիւո՛ն համարեցան ինքյանց, բայց մեղ թվում է միայն մի լոկ սովորութիւն, որ հայկական վաճառականք մշակ դարձան եվրոպացոց։

Որևէցն ձեռագործ ապրանքով վաճառականութիւն առնողի շահին հակառակ է, նմին նույն ապրանքով վաճառականք բազմանան նորա չորս կողմում, իսկ բնական բերքերի համար այս վտանգը ևս չկա, ո՛րքան կամիս, այնքան կարնաս։ Ձեռագործ ապրանքների մնծագույն մասը կյանքի էական պիտույքներ չեն և նորա մանր վաճառականը պիտի վաճառե յուր ապրանքը հասարակ ժողովրդին։ Ժողովուրդը շատ անգամ շռայլանում է, այո՛, բայց և շատ անգամ նորա մնծագույն մասը հարկադրվում է միմիայն կյանքի էական պիտույքը հոգալ, կարնալի եղածին չափ անանութիւն գործ դնելով ձեռագործ բանների մեջ։

Բացի սորանից, մեր հայ վաճառականների համար, սակայն տարբերութիւն կա ձեռագործ ապրանքով և երկրագործութեան բերքերով վաճառականութիւն առնելու մեջ։ Թողնենք սակավին այն, որ ձեռագործի վաճառականութիւնը չէ դարձնում դեպի մեր ազգը դրամի շրջանառութիւնը, հերի՛ք է միայն ցույց տալ, որ ձեռագործի վաճառականը առողջ դրամ պիտի վճարե Եվրոպայից առացած ապրանքի փոխարեն, իսկ ինքը պիտի վաճառե Թյուրքիո մեջ ո՛վ գիտե քե ինչ կերպ կամ ինչ դրամով։

Սորա հակառակ, հում նյութերի, երկրագործութեան բերքերի վաճառականը պիտի գնե յուր ապրանքը Թյուրքիո մեջ և պիտի վաճառե Եվրոպացոց, ասել է քե, փոխանակ տալու ինքը, պիտի առանա առողջ դրամը։

Ձեռագործի վաճառականը յուր սովորական չափից ավելի (քնե ունենար ավելի դրամական ուժ) չէ կարող ապրանք բերել Եվրոպայից, որովհետև սովորական չափով բերածը ևս ապաստան է հանգամանքներին և շատ անգամ մնում է անվաճառ, կամ, սովորութենից դուրս նկած լինելով կամ մի այլ պատճառով, մինչդեռ հում նյութերի համար չկա որևէցն սահման Եվրոպան, յուր ներկա վիճակի մեջ, նայելով նորա երկրագործութեան պայմաններին, նայելով նորա ձեռագործութեան առ-

ախճանին, նայելով միլիոնավոր բազմությանց անհող վարձկանությանը, միշտ և միշտ կարտա է ին էական ապրուստի վերաբերյալ հում նյութերի և ին գործելի կամ մշակելի նյութերի, որոնց վերա հիմնվում են նորա ձեռագործությունը, նորա գործարանքը և նորա մեքենաները։

Ասացինք վերևում, թե մեր վաճառականք եվրոպական ձեռագործի առևտուրը սովորություն են արել ինքյանց։ Այո՛, սովորություն է այս, բայց այն ատիճանի կամակոր, որ գրեթե դառնում է այսօր մի ազգային ավանդություն։ Եթե քննության առակ դնենք այն սովորությունը, անհնարին է լինում չափել այն սարսափելի վիհի խորությունը, որ բացվում է մեր առջև։ Գրեթե ազգովին սովորություն առնել ապրանք գնել եվրոպայից, մինչ ինքյանք կրկին անգամ ավելի պիտի կարողանային վաճառել նորան, դրամ ուղարկել եվրոպա մի այնպիսի տեղից, ուր ապկին և արծաթը դարձել է մի առատապել, և ուր ինքը տերությունը չգիտե թե ինչ ճանապարհով առնու եվրոպայից, մեր կարողություններից վե՛ր է այս սովորության հետ հաշտվիլ։

Երբ վաճառականը, մի շփոթյալ և աղմկյալ տեղում, կյանքի հոսանքի մեջ ընկած, նայում է մասնավորապես յուր գործին, և երբ ժամանակ չունի կամ չկամի քննել յուր գործը, յուր ընթացքի ուղղությունը, այնտեղ չէ երևում այն վիհը, որի մասին խոսեցանք։ Իսկ երբ ամենայն առնությամբ քննեն յուրյանց բռնած ճանապարհը և այս քննությունը հառաջ տանին մինչև գործի տարրական պարզությունը, այնտեղ ձեղքվում է վարագույրը, և ահա վիհը տեսնողի առջև է։ Կամայական անձնախաբեությամբ վիհը չքննելով, արդյոք փրկվա՞ծ է ձեռագործի վաճառականը։ Մենք ծողնում ենք համեմատական բազդատությունը վաճառականի և երկրագործական նույնան երկու մեծ ճյուղերի, այսինքն, ձեռագործի և երկրագործական քերքերի. հետևինք միայն ձեռագործի վաճառականին, ըստինքյան։

Ձեռագործ ապրանքի մանր վաճառականը ուժ չունի, նա խաղալիք է յուրյան ապրանք տվող մեծ վաճառականի, կամ գործարանատիրոջ և կամ միջնորդի ձեռքում։ Զորությունը նոցա մոտ է, որովհետև նոցա մոտ է վաճառականի պարտքի մատյանը կամ մուրհակը։ Մյուս կողմից խաղալիք է բյուր հանգամանքների ձեռքում։ Նորա ապրանքը, ինչպես ասացինք, չունի այն ուժը, այն կարևորությունը, որ մարդը առանց նորան չկարողանա ապրել։ Ապրանքը մնում է անվաճառ, կամ վաճառվածի դրամը անհնար է ձեռք բերել, գնողը չէ վճարում, մյուս կողմից վաճառականի հաստատումի եղելյալ ժամանակը մոտենում է և մոտենում է անխնա։ Վաճառականը շվարել է, շատերն են շվարել նորա նման. մնում է առանց վաստակի վաճառել ապրանքը, որպեսզի պարտքը կարողանա վճարել։ Եթե գործ չդնեն այս հնարը, հարկավորապես, պիտի շահով պարտք առնու և այնպես վճարե. չվճարել յուր ժամանակին պիտի վճարե յուր նոր պարտքի համար, կտանի նորա ապրանքի վաստակը, բնև սկզբում ծանր թվեցավ նորան ապրանքը առանց վաստակի գը, բնև սկզբում ծանր թվեցավ նորան ապրանքը առանց վաստակի

վաճառել և պարտքը վճարել։ Ուստի իջեցնում է նա ապրանքի գինը հարյուրին միքանի տասանորդ։ Մյուս վաճառականը ի՛նչպես կարող է պահել նույն ապրանքի նախկին արժեքը, իջեցնում է և նա։ Կես-մեռ, կես-կենդան անցնում են միքանի օր։ Բայց վճարի ժամանակը ավելի մոտեցավ, ի՛նչ ճար։ «Այս առաջին հաստուցումը ձեռք բերելու համար», վճռում է նա յուր մեջ, «հարկավոր է վնասով ևս վաճառել այս անգամ, հետո, կրարձրացնեմ գինը, և կլրանա պակասորդը»։

Կլրանա... Մյուս կողմից այն մարդիկը, որ պարտական էին նորան, չեն վճարում յուրյանց պարտքը, առևտուրը ընկած է, ոսկին կրկին արժեքի բարձրացած, և ահա երկրորդ, երրորդ և մյուս վճարները հետզհետե, մահի պես։ Ի՛նչ եղավ հետևանքը։ Մանր վաճառականը բոլոր ժամանակ աշխատեցավ յուրյան ապրանք ավոթի օգոի համար. և ոչ միայն այշաւոի, այլ առևտուր սկսելու ժամանակ նորա մեջ բերած դումարը ևս հալեցավ, բոլոր ձեռքի ապրանքը պարտքի փոխանակ տալուց հետո, գեռևս պարտական մնաց. և առանց ամենամեծ հնարքի, որ անհրաժեշտ է ապրուստի համար։

Ո՛ւր գնա այժմ այն վաճառականը, ի՛նչ գործեւ Հավատարմություն ընկած է, ոչ ոք ապրանք կամ դրամ չէ տալիս նորան, և եթե տալին ևս, հարյուրին իննսուն անօգուտ. քանզի նույն գործողությունը, ինչ որ անցավ առաջին անգամ, պիտի կրկնվի անշուշտ, որովհետև նույն հանգամանքների աղղեցության տակ է նա, և գործը հիմը չունի։ Ի՛նչ գործեւ, ուրեմն, այդ վաճառականը։ Մնում է նորան իրեև վարձկան ծառայել ուրիշի մոտ, բայց այս հնշտ բան չէ, նա ևս մարդ է, զգացմունք ունի։ Նա, մինչդեռ ինքը ուներ մի փոքր գործ, յուր անձը զգում էր ազատ, գո՛նե որևիցե պարոնի անմիջական հրամաններից, թեև կատարելապես անկախ չէր, և նա երբեք չէ մտածել այդ մասին, որովհետև գիտեր, թե որոնց որ պարտք ունի, կախվում է նոցանից, և թե մի անհաջող վայրկենում կարող են նորա ձեռքել նորան։ Բայց, չնայելով այս բոլորի վերա, կախողությունը ամենայն ժամանակ զգալի չէր, մանավանդ, եթե գործերը մի փոքր հաջող էին. իսկ այժմ, զրամական կամ առևտրական նավաբեկությունենից հետո, հարկը ստիպում է նորան երթալ ենթակայանալ մի կոպիտ հարաբերության, որ լինում է պարոնի և ծառայի մեջ, տանել այն բոլոր անախորժությանց և հանդիմանությանց, արհամարհոտ և խեթ հայացքների, որոնցով առատորեն վարձատրվում է մի խեղճ ծառա մի անտաշ և տմարդի պարոնի մոտ։

Թերևս, եթե վաճառականին հանդիպեցավ այս կատաստրոֆը երիտասարդության ժամանակ, դեռևս թե առամները սկզմելով, սև ճակատագրին հետզհետե ընդունեց այս խաչը, բայց այն հիսուն-վաթսուն տարեկան մարդը, ընտանիքի և զավակների տեր, որոնց դարմանելու համար ոչ մի պարոն չէ կարող տալ նորան բավական վարձ, ծողունք և այս, ի՛նչպես երթա նորինորո ծառա դառնա այդ հասակում։

Բայց այստեղ ընտրություն չկա և հրաժեշտ չէ կարելի տալ, քան-

դի աղքատութիւն կա մեջտեղում, քանդի պետք կա, քանդի հացի խընդիրը ամեն րոպե բաղխում է նորա դուռը: Եվ մի այդպիսի վատաբախտ մարդու համար հնշա չէ նաև գտնել մի պարոն, որ հոժարեր ընդունել նորան յուր մոտ: Հիսուն-վեցհատն տարեկան մարդու առաջարկյալ ծառայութիւնը պարոնների համար չէ կարող լինել մի հրապուրիչ բան:

Մենք կարող են ասել, թե մենք նկարագրում ենք այս կացութիւնների միայն սխուր և սև կողմերը:

Որովհետև, պատասխանում ենք, այն միխիթարիչ և լուսափայլ կողմերը, որ այդպես հրապուրում են և յուրյանց են քաշում հետզհետե գրեթե բոլոր հայոց ազգը, որի համար դարձել են նորա կատարելութիւն— idéal, ոչ միայն լոկ բացատութիւնք են, այլև տեսարանական խաբեութիւն,— illusion optique! Բացատութիւնը չէ կարող իրրև օրենք քննվիլ, ուրեմն և չէ կարող օրինակ դառնալ ընդհանուրին:

Այսօր ամեն մարդ աշխատում է վաճառական դառնալ, նա հավատում է, թե վաճառականութիւնը կարող է նորան փրկել, բայց չգիտի մտածել, թե ունե՞ր արդյոք յուր ձեռքում այն պայմանները, որոնցով միայն հնարավոր է վաճառականութիւնը: Այն, ինչ որ նորա անվանում են վաճառականութիւն, ո՛ղ ներվի մեզ հրատարակել, լոկ միջնորդութիւն, ուրիշի ծառայութիւն և առավել ուրիշին հան թե յուրյան օգտակար: Վաճառականութեան մեջ շահը և օգուտը, ո՛րքան ընթացք ևս կատարե, ո՛րքան զանազան շրջաններ առնու, խվերջո, էականապես, կենտրոնանում է այնտեղ, որտեղից դուրս ելավ այն ապրանքը կամ գումարը: Զորութիւնը և ուժը այնտեղ է, կրկնում ենք, ուր որ գրամագլուխը կամ ապրանքը կա: Առևտրը տկար է, քան թե ավոգը, առևտրը կարող է, քանզի ոչինչ ունի: Նա միայն հույս ունի, թե ահա կառնու ապրանքը, կվաճառե, նորանից կվճարե ապրանքի տիրոջ յուր պարտքը և ավելորդ շահով ինքը կապրի կամ գոնե կդիզե: Եվ այս տեսակ վաճառականութեամբ թերևս, եթե հայը միջնորդ կամ գործակատար լիներ երկու հարմարավոր աշխարհների մեջ, գուցե կարողանար ապահով եղանակով ապրիլ, թեև միմիայն յուր համար, այսինքն առանց ազգի ընդհանրութեան մի օգուտ բերելու, բայց, Եվրոպիո և Թյուրքիո մեջ և ոչ անգամ երաշխավորելի է այն ապահովութիւնը, քանի որ Թյուրքիան հարաբերում է Եվրոպային, իրրև բացատական մեծութիւն, դրական մեծութեան: Մեզ ուրիշ վկայութիւն հարկավոր չէ, մեր ասածը ապացուցանելու համար, ազգի վիճակը առնում ենք իրրև իրողութիւն, և նորան գործյալ իրրև վկա դնում ենք ազգի առջև: Այսքան տարիներ գնում է ազգը այս ճանապարհը և այս վերջին օրերում, խուռն հոծանքով, բայց այս վաճառականների ընդհանրութիւնը — միջին թիվը, հազիվ հազ ապրում է, և աղքատութիւնը օրեօր տարածում է յուր սև վարագույրը ազգի վերա: Զարհուրելի է մեզ երևակայել միլիոնավոր մարդիկ (հարկավոր ևս չէ նրանց կյանքը: Նորա գալիս են և գնում են, «որպէս հոգմ որ չընչէ, վակայել, որովհետև իրականապես կան), օդին ապատան արած

որ ոչ գիտէ ուսոի՛ գայ կամ, յո երթայ[10], Չէ՛, այս անբնական մի գործ է, և ազգի կաթվածահարութեան աղբյուրը բղխում է այսաեղից։ Մինչև ազգը չկատարն այս ուղղութիւնը, մինչև որ նա չկատարն մի անհնազանդական հեղափոխութիւն, յուր մինչև այսօր բռնած ընթացքի մեջ, և մինչև չդիմն դեպի բնութեան դռները, հառաջադիմութիւնը անհնարելի է։ Թո՛ղ հազարավոր գառնա հարուստ անհատների թիվը, թո՛ղ հարյուրավոր լինի եվրոպական գաղութների մեջ կրթութեան ատացողների թիվը, ի վերա այսր ամենայնի, ազգի ընդհանրութիւնը կմնա անշարժ և անգամալուծյալ։ Այն օրից պիտի թվենք ազգային նորոգութեան գարագլուխը, երբ ազգը դիմն դեպի բնութիւնը, որ ոչ միայն կարող է փրկել և ազատել ազգը աղքատութիւններից, այլև, մեծ գարկ տալ նորան հառաջագնաց ուղղութեան մեջ։

Բնութեան մեջ չկան այն վտանգները, ինչ որ կան մեքենական վաճառականութեան մեջ. այնտեղ մարդը ապահովյալ է բնութեան օրենքներով։ Այն մարդը, որ բնութեան հետ գործ ունի, որ անմիջապես հոգի՛ց առնում է բնութեան բերքերը, և նորա են նորա նյութական ուժը և կարողութիւնը, հասատատ է յուր ոտքի վերա. նա կարող չէ ուրիշին, գորա փոխանակ, ուրիշը կարող է նորան։ Մանր վաճառականը, յուր ընթացքի մեջ, կարող է մեծ վաճառականին, զանազան միջնորդական առևտրի, գործարանների և ի վերջո դրամագլխի տեր մարդոց, իսկ այն օրից, երբ նա թողից նորանց և դիմքը գարձուց դեպի բնութեան հյուրընկալ գիրկը, հարաբերութիւնքը փոխվում են, և՛ միջնորդը, և՛ մեծ վաճառականը, և՛ գործարանը, և՛ մյուսը, և՛ մյուսը կարող կլինին նորան։ Ուժը կանցնի նորա ձեռք, թո՛ղ որչափ կամի, փորը լինի նորա ապրանքը — ուժը, այնուամենայնիվ դրական գործություն է, քանզի ապրանքի փոխարեն պիտի առանա գուտ արծաթ։

— Մի՛թե այս վաճառականութիւն չէ, մի՛թե այդտեղ չէ կարելի վնասի հանդիպել, և այլ հարյուրավոր հարցական միքներ լսվում են այստեղ։

«Վնաս, վնասից տարբեր է։ Անհիմն վաճառականութեան մեջ հարյուրին իննսուն հավանականութիւն կա վնասի հանդիպելու, իսկ բնականի մեջ, նույնքան հավանականութիւն նորան չհանդիպելու։ Այլ խնդիր է ջուրը մանել, թույլ տալով խեղդվելու կարելութիւն, և այլ խնդիր է մոնել, հաստատ գիտելով, որ պիտի խեղդվի»։

Հայոց ազգը, քանի որ չունի յուր սեփական երկրագործութիւնը, բոլոր նորա ճյուղերով, նորա վաճառականութիւնը է՛ և կլինի եվրոպացոց համար ծառայութիւն։ Իսկ այն օրից, երբ ազգը կսկսի մշակել հողը, երբ մարդիկ կգառնան յուրյանց հայրենի, բարերար երկիրները, որ այսօր գրեթե ամայի և խոպան է, այն օրից կկենդանանա և հայոց վաճառականութիւնը։

Եվ այն օրի վաճառականը ոչ միայն կազատվի եվրոպացոց համար ախ ու վախով և բյուր նեղութիւնքով գործ կատարելուց, ոչ միայն

ինքնուրույնաբար կկանգնի յուր ոտքի վերա, այլև եվրոպական արծաթը և ոսկին ներս կհոսեցնեն ազգի մեջ, և ինքը կշահվի առանձապատիկ ավելի և մեծ ու մեծ շահ կբերեն ազգի ընդհանրության, որ է ազգի հիմքը, լծակը, շարժարանը։ Ընդհանրությունը կապահովվի, քանզի դրությունը կդրավի յուր կողմը, քանզի եվրոպան կարոտ է նորան, քանզի, երկրի բերքերը դուրս տալով, յուր մեջ պիտի դարձնեն դրամի շրջանառություններ։

Եվ միայն հում բերքերը չեն, որ կարող են գրավել հայ վաճառականի գործունեությունը. այդ բերքերի մշակությունը մի լա՞յն հանդես, մի բնակա՞ն ասպարեզ այն ժրաջան և գործունյա մարդերի համար, որ առուգապես կամին պարապել վաճառականությամբ։ Նույն այն գործարանքը, նույն այն մեքենաները, որ կարող են ներգործել եվրոպայի մեջ, ծանր պայմաններով տակ, կարող են ներգործել և Ասիո մեջ, ուր կյանքի պիտույքը, պարզությունը և այլ բնական հանգամանքները ավելի դյուրություն կարող են տալ այսպիսի ձեռնարկությանց։

Շատ մեքենայք, որ եվրոպայի մեջ ներգործում են կրակի և շոգու զորությամբ, Ասիո պարզության մեջ կարո՞ղ են ներգործել սարերից կատաղաբար վազած ջրերով, որի համար հարկավոր չէ վատնել այն դրամը, ինչ որ եվրոպացին վատնում է ածուխի կամ փայտի համար։ Եվ այն ապրանքը, որի հում նյութը, շատ անգամ Ասիայից երթալով Եվրոպա և պատրաստվելով այնտեղ, հատնում է դարձյալ Ասիա, անցնելով միքանի ձեռքերից, նույնը, ավելի արժան, և նույն որակությամբ, կարող է պատրաստվիլ Ասիո մեջ։ Աշխարհագրական անվանակոչությունքը չեն պատճառ, որ Եվրոպան, Եվրոպա է դարձել, իսկ Ասիան, Ասիա ու հետ է մնացել։ Այո՛, կլիմաները կարող են շատ բան պատճառել, բայց Եվրոպայի և փոքր Ասիո եղանակները գրեթե մեծ տարբերություն չունին, և ասիականը, եթե ավելի հարմար, ավելի ձեռնտու և ավելի ախորժելի չէ, գո՞նե բնավ պակաս չէ Եվրոպայից։

Նորա կախարդական թովչությունը ոչ նորա աշխարհագրական առնչության մեջ է և ոչ նորա կլիմայի մեջ։ Նորա գործունեությունն է, որ այսօր պատգամ է տալիս բոլոր երկրագունդին։ Ովեցիայի առանձանձայց մեջ, նա, արվեստով և բյուր հոգաբարձությամբ հատաջ է բերում այն, ինչ որ առանց աշխատության բնությունը ինքը կարող է մեզ տալ Ասիայում, եթե միայն լինի մեր մեջ առանձնաշնորհություն։ Եվրոպական հողը, անդադար ներգործելով, կարոտ է այժմ արվեստական հնարների, բուսաբեր և արգավանդ լինելու համար, մինչդեռ ասիական հողը մնացել է մինչև այժմ յուր կուսական վիճակի մեջ անձեռնամերձ, անարատ։ Ո՛ւր թողունք այն բերքերը, որ ոչ արվեստը և ոչ գիտությունը կարող են հատաջ բերել Եվրոպիո մեջ, և որ այնպես առատորեն պարգևել է բնությունը Ասիային։

Անգլիո երկրագործքը և տնտեսականքը, հաշվի տակ դնելով յուրյանց հողի մեջ եղած բոլոր ածուխի հանքերը, նոցանից դուրս եկած

ածուխը, և Անգլիո տարեկան ածուխի պետքը և գտանելով, որ Հարյուր երեսուն տարուց հետո Անգլիան չպիտի ածուխ գտնի յուր հողի մեջ, ահա այս երկու տարի է, որ «ներմիայի ողբ» են կարդում յուրյանց գլխին, իսկ Ասիան մոռանում է միշտ երկիը. այսօրը է նորա աստվածը, որ պաշտում է, վաղը ի՛նչ կամի թող լինի, ո՛վի բան ու գործը կտրվել է, որ վաղվա համար մտածե: Մենք կարծում ենք թե, ավելի շուտով, այս բնավորութիյանց մեջ է Եվրոպիո և Ասիո տարբերութիյունքը: Այո՛, գործունեութիյունը, շարժողութիյան հետևանք է, և առանց շարժողութիյան չկա գործունեութիյուն: Ուր չկա գործունեութիյուն, ասել է չկա շարժողութիյուն, իսկ ուր շարժողութիյուն չկա, այնտեղ կյանք չկա, այնտեղ թագավորում է մահը: Այսպիսի դիպվածում անունը հանցանք չունի: Եվրոպայի մի ռանդաշատ հողը ևս հաշված է, իսկ Ասիո մեջ կարծեմ գտնվին տեղեր, ուր տասն տարին մի անգամ, և այն դիպվածով, հապիվ ոտք է կոխում մի մարդ:

Եվրոպան ուշ ծնեցավ, բայց շատ արագ ծերանում է: Մի քանի դարու մեջ նա անցավ պատմութիյան շատ կերպարանքներ՝ phase, փոփոխեց և փոփոխում է դեռևս կառավարութիյանց ձևերը, բայց ցարդ չհասավ յուր նպատակին, որովհետև միշտ աշխատեցավ հանապարհը լայնացնել, ուղղել, հարթել, մոռնալով, որ յուր նեղութիյունը հանապարհից չէ այնքան, որքան ոտքի կոշկից, որ սեղմում է և չէ թողնում մաև գալու: Այսպիսի դժբախտութիյան մեջ ի՛նչ կօգնե հանապարհի լայնութիյունը, քանի որ կոշիկը նեղ է: Այո՛, Եվրոպան կանգնած է այսօր մի դժվար լուծանելի խնդրի առջև, այդ անտեսական խնդիրն է, մարդը և հացը: Եվ այդ խնդիրը, կասես թե ուշ, բևե առակալի փորձիկներով, պիտի լուծվի: Ոչինչ քոնութիյուն, ոչինչ պահպանողական համակարգութիյուն, ոչինչ ընդդիմադրութիյուն, որևիցե կողմից, չէ պիտո կարողանա փակել նորա առաջը, բևե այսօր հալածակա՞ն և աքսորակա՞ն են այդ ապագայի մարգարեքը և առաքյալքը:

Եվ ինչպես միջին դարերում, Ասիո անկյուններից խումն խումբ բարբարոսներ իջան ու հեղեղեցին Եվրոպա, այնպես ևս մարդու և հացի խնդիրը լուծվելուց հետո, Եվրոպական մարդը պիտի իջանե Ասիա: Պիտի գա օր, երբ այն պատռավ Ասիան պիտի մանկանա, և ասիական ազգերը այն վայրկենից պիտի սկսանին յուրյանց պատմութիյունը, նրբե ընդունակ լինին իրրև ազգ ապրելու. իսկ նրբե ոչ, օրըստօրե կանհետանան, որպես մի կաթիլ համատարած ծովի մեջ: Ամերիկան, Ավստրալիան, այլ երկիրներ և կղզիք կենդանի վկայք են մեր խոսքին: Ասիո ապագան ավելի մեծ է, ավելի լայն է տնտեսական խնդրի վերաբերութիյամբ, քան թե Եվրոպիո ապագան: Հայերին մնում է վաղօրոք օգուտ քաղել յուրյանց դրութիւններից:

Կարող են, դարձյալ, դիմադրել, որ նրբե մեր հայացքով, միայն մարդ ու հաց կա աշխարհի երեսին, նրբե մենք մի կատր հողի վերա քաղաքում ենք հավասար իրավունք, ուրեմն, ազգութիյան խնդիրը և ուշա-

դրությյան արժանի բան չէ, մարդը, ապրել է հայի անունով, թե մի այլ անունով, դարձյալ միևնույն մարդն է, և այլն։

Այո՛, եթե հավասար իրավունքը այսօր խոստովանվի բոլոր երկրագունդի վերա, եթե ներկա եղած պետական համակարգությունքը այսօր ոչնչանան, վաղը ոչ միայն չէ մնում ազգության խնդիրը, այլ հարկավոր ևս չէ։ Բայց այս է բանը, որ դորան հասնելը ժամանակի է կարոտ. և մինչև այն ժամանակ «արքայության Աստուծոյ բանաբարի, և բռունք յափշտակեն զնա». մինչև այն ժամանակ, «սահմանք քաջաց, զէնք իւրեանց»— ասում է մեր իմաստուն Սերունին[11]։

Մենք ուրախ չենք, որ այսպես է լինում, մենք ուրախ չենք, որ մի ազգ ճնշում է, հարստահարում է մյուս ազգը, և յուր զենքով սահման է դնում նորա հողի վերա, բայց որովհետև մեր տրամաբանությունը ոչինչ է համեմատելով այն մինչև այժմ եղած կարգի հետ, ուստի մեր կարողությունքը ուղղում ենք մեր ազգությունը պաշտպանելու համար։ Եվ մեր ամենից պարտքն է մինչև այն ժամանակ մնալ ազգության դրոշի տակ, որքան ուրիշը կրում է յուր սեփական ազգության դրոշը։ Բայց, այս ասելով, կամք չունինք ազգությունը կույր ֆանատիկոսության դարձնել։ Հերիք է, որշափ կույր և ֆանատիկական ազգությունը ունի յուր նսեմական կողմները. հերի՛ք է, ասում ենք, որ մի ազգություն յուր մի շամփուր խորովածի համար մորթում է մյուս ազգության եզը...

— Այս ինչ հակառակախոս դրություններ են,— մտածում է մեր ընթերցողներից մեկը,— նախ ասում է, որ մարդը։— Երկու տող հառաջ ազգություն է քարոզում, հետո ազգության մեջ նշմարում է նսեմականություն և թուլացնում է առաջին տպավորությունը։

Մեր պարտքն է, ուրեմն, հառաջուց պարզել մեր հայացքը, և այս ծանրակշիռ խնդրի համար մի երկու քայլ խոստորիլ մեր ուղիղ ճանապարհից։ Այս պատճառով մեջտեղ գնում ենք խնդիրը — ի՛նչ է ազգությունը։

Ազգությունը իբրև պատմական իրողություն, իբրև հավաստի երևույթ, ընդհանուր մարդկության կյանքի մեջ, չէ կարելի մերժել, թեև բանականությունը երբեք չէ կարող արդարացնել նորան։ Մարդը մինչև այժմ չէ հասել այնտեղ, որ առանց երկրորդական և պաշտոնական անունի հանդես գա, միայն մարդու բնական անունով. մինչև այժմ մարդը չկա աշխարհի երեսին, մինչև այժմ ազգեր կան։

— Խայտառակ դրություն,— շարունակում է մտածել մեր ներսիրտը։— Ազգերը մարդերից չե՞ն բազկանում. և ինչպես կարելի է բազկացյալը ընդունել, իսկ բազկացնողը մերժել և ուրանալ։

«Երբ մարդը, երևելով այս կամ այն ազգության մեջ, այլևս չէ կոչում ինքը յուրյան մարդու անունով, երբ նա անվանվում է անգլիացի, գերմանացի և այլն, և այլն, և ընդհանուր մարդկության շահը ուրիշ տակ կոխելով, անքուն հսկում է միայն յուր ազգի շահի համար, երբ մարդիկ հասանում են մինչև այնտեղ, որ ոչ միայն մարդը չեն հա-

նաշում մարդու անունով, այլ շատ անգամ միլիոնավոր բազմությունց գոյությունը ուրանում են, չնայելով որ այդ բազմությունը ներկա են. երբ թթվածինը և ջրածինը միանալով, կորուսանում են յուրյանց տարրական հատկությունը և խլուում են որպես ջուր, որի հատկությունը տարբեր է և՛ թթվածնի և՛ ջրածնի հատկություններից, մեզ մնում է ընդունել այս երևույթը որպես իրողություն։

Մարդերի բազմությունը ազգ ճանաչելով, շատ անգամ ուրանում են նոցա անբունդի գոյությունը։ Փյունիկեցիք չկան, կամ այնինչ հին ազգը մեռավ։ Միթե այդ ազգերը բաղկացնող անհատները ամենքի՞ն մեռան, ամենքի՞ն կոտորվեցան, և ընա՞լ անբունդ չմողեցին, որ այսօր երևեր և կենդանի մարդերի միլիոնավոր բազմությունը մեռելոց կարգը չանցներ։ Ամաղնկացոց համար միայն վկայում է Սուրբ գիրքը, թե Եհովան կոտորել տվեց և չմողեց և ոչ մի ամաղնկացի, իսկ մյուս ազգերի համար խոսք չկա, ոչ սուրբ և ոչ անսուրբ գրքերում։ Դեևնք, թե հին ազգերը մեռան և հաջորդք չմողեցին, բայց նոր ազգերը, որ հինների օրերում չկային, նո՞ր առեղծվեցան, միթե՞ դեռևից բուսան։ Մին մարդը կա, մին մեք տեսնում ենք նորան, մին շատ անգամ գիտենք նաև նորա ծագումը, ի՛նչպես ապա ուրանում ենք նորա լիևելությունը։

— Մենք ուրանում ենք ազգի լիևելությունը. մարդը կա, բայց ազգը չկա։

«Ազգը եղած ժամանակ, դարձյալ այդպիսի մարդերից չէ՞ր բաղկացած։ Այս ի՛նչ բարելոնյան խառնակություն է»։

Բայց չէ՛. սխալը այստեղ չէ։ Սխալը փորձական սխալ չէ, սխալը սկզբունքի մեջ է։ Երբ տեսական ըմբռնումը սխալ է, իսկ կլինի նորա փորձական հետևությունը և կերևեցնե մի բարելոնյան խառնակություն։ Մին փյունիկեցիք յուրյանց վերա կրած չլիևելին փյունիկեցի հատուկ անունը, մին նորա ապրած լիևելին մարդու անունով, նորա չպիտի վերջանային, որովհետև մարդը կա։ Բայց, որովհետև նորա իրրև փյունիկեցի երևեցան, ուստի և իրրև փյունիկեցի վերջացան։ «Ազգ գայ և ազգ երթայ» — ասում է բանաստեղծ-քաղաքորը[12]։ «Իսկ մարդը հավիտյան կա» — կցորդում ենք մեք։

Չքացած ազգը ապրում է յուր ժառանգների մեջ, հառաջացած նոր ազգը, վաղո՛ւց ապրում էր յուր նախահարց մեջ։ Ազգի մահը անհատի մահի պես չէ, ազգը չէ մեռնում ֆիզիկապես։ Ազգը մեռնում է, բայց նորան կազմող անհատները կենդանի են, նորա չեն կորչում, չեն չքանում և մարդերի թիվը չէ ակամավանում, թեև մեռներ մի ահագին ազգ։ Ի՛նչ է ուրեմն չքացողը, մեռնողը. ի՛նչ է հառաջացողը, և ի՛նչ գորությունն է այն, որ երբ չքանում է, կենդանի մարդերի միլիոնավոր բազմություն օր ու ցերեկով համարվում է չքացած, և երբ հառաջանում է, վաղուց արդեն ապրող մի բազմություն կազմում է նոր գարագլուխ գյուղերի և գյուղերան։

Ազգությունը միայն, կարող է պատասխանել սորան։

Ազգությունը է ազգի անձնավորությունը, ազգի դեմքը։ Միլիոնավոր մարդիկ կորցնում են յուրյանց անհատական ինքնուրույնությունը, այդ անձնավորության օգտի համար. նորա չեն երևում որպես *մարդ, այլ* որպես *անդամ այս կամ այն հավաքական անձնավորության։ Նվ այդ անձնավորությունը բարոյապես ապրում է և ինքնուրույնաբար. ունի յուր սեփական կյանքը, յուր լեզուն, յուր սովորությունքը, յուր ավանդությունքը...*

Նորա ամեն մի սեփականը սուրբ է նորան, և վա՛յ մյուսին, որ ձեռք բարձրացնի նորա, այս կամ այն, սեփական սրբության վերա։ Նվ ինչպես, սովորական կյանքի մեջ, մասնավոր մարդը աշխատում է յուր անձնական օգտին և յուր անձնական ապահովության համար, ինչպես շատ տեղ վնասում է նա մի ուրիշ անհատի անձին և օգտին, այնպես էս մարդկերի հավաքական անձնավորությունը,— ազգությունը, պահում է և պաշտպանում է յուր օգուտը և ոտքի տակ է կոխում ուրիշ յուր պես անձնավորության շահը։ Ազգը, այսինքն, կենդանի մարդկերի մի ահագին բազմություն, համարվում է կենդանի, նրին կա և չէ մեռած նորա հավաքական անձնավորությունը — նորա ազգությունը. համարվում է դարձյալ մեռած, դատապարտված և իրավունքից զրկված, նրին չկա այլևս նորա ազգությունը։

Վերևում ասացինք, որ ազգի մահը անհատի մահի պես չէ՛. ասացինք, որ ազգը չէ մեռնում ֆիզիկապես. ի՛նչպես, ուրեմն, մեռնում է ազգությունը։ Մահը անհատականալի է, նրին չգիտենք կյանքը, ուրեմն հառաջ կյանքը։

Ի՛նչ է կյանքը։

Կյանքը է անդադար շարժողություն, նյութերի անդադար փոխանակություն և անձնապահություն։ Արտաքին ուժերը ներգործում են էակի վերա (սովորական ոճով խոսելով) ավերողապես, էակը անդադար շարժում է, ընդունում է նյութեր, դուրս է տալիս նյութեր և քանի որ կարող է շարժիլ և այս գործողությունը կատարել, նա ունի յուր ներսում ուժ և զորություն, որ դեմ է գնում արտաքին ավերիչ ուժերի ազդեցության և քանի որ կարողանում է նոցա դեմ դնել, պահպանում է յուր անձը,— ապրում է։ Բայց երբ էակի ներքին և արտաքին ավերիչ ուժերի մեջ ընկնում է հավասարակշիռը, երբ էակը չէ կարող յուր ուժով դեմ դնել արտաքին ազդեցությանց, նա չէ կարող պահպանել յուր անձը և այն րոպեին մեռնում է։ Արտաքին ուժերը հաղթահարում են նորան և լուծում են նորա կազմվածքը։

Ազգությունը ապրում է, նրին նորա մեջ կա, արտաքին, ավերիչ ուժերի հավասարակշիռ զորություն. քե ի՛նչ է այդ զորությունը, մենք հետո կխոսինք, այժմ այսչափ միայն հարկավոր է ասել, որ նրին չկա այդ զորությունը, արտաքին ուժերը հաղթահարելով ազգությունը, լուծում են նորա կազմվածքը։ Նվ ինչպես բնական էակները կորուսանելով յուրյանց ուժը, հաղթահարվելով արտաքին ուժերից մեռնում են, և

ինչպես նոցա կազմվածքի մեջ մտած նյութերը, լուծվելով կազմվածքից, շարունակում են յուրյանց կյանքը, կազմելով մի այլ էակ, կամ իբրև նյութ, պիտոյանալով այլ կազմվածքի, այնպես և ազգությունը մեռնելուց հետո նորան բաղկացնող անհատները ընդունում են այլ բարոյական կերպարանք, կազմելով մի առանձին ազգություն, ա՛յլ պայմանների տակ. կամ մտանում են ուրիշ ազգությանց կազմվածքի մեջ։

Բնությունը կորուստ չունի։

Մարդիկ յուրյանց գոյությունը և ներկայությունը ապացուցանում են յուրյանց ազգությամբ։ Կենդանի եմ ես և խոսում եմ առջևս կանգնած մարդու հետ, բայց նա չէ ընդունում, թե ես կենդանի եմ։ Նա ասում է ինձ, որովհետև քո ազգությունը մեռած է, ուստի և դու կենդանի չես, որպես հայ։

— Եղբայր, ի՞նչպես կենդանի չեմ. ես խոսում եմ քո հետ. մեռելները վաղուց արդեն թողել են խոսելու սովորությունը։

«Ինձ ի՛նչ փույթ, դու կենդանի չես»— կրկնում է նա ամենայն սառնությամբ։

Եվ ոչ միայն այսչափ. ուրանալով իմ կենդանությունը, ժխտում է ինձ իմ կենդանությունը պահելու համար պետք եղած կարիքը կամ նորանց լցնելու հնարները։

— Եվ այստե՞ղ հանեցիր տնտեսական խնդիրը...

«Եվ չկամենալով բռնաբարությամբ կերպարանք տալ այս ժխտողությանն, տակավին իրավունքի անունով խոսում է իմ հետ.— ի՛նչ ես արել, որ ես համակրություն ցույց տամ քեզ, որ ես խոստովանիմ քեզ կենդանի։

Այս կոպիտ հեգնություն է և ստրկության շղթայի ամենածանր օղի մինը։ Հերիք չէ նորան իմ կենդանությունը, նա չկամի նորան ընդունել որպես իրողություն. նա ակնամա պիտի հոժարի ընդունել այն ժամանակ, երբ ցույց տամ իմ իրավունքը։ Ա՛յս ևս հերիք չէ. նա իմ կենդանությունը պիտի խոստովանի միայն այն ժամանակ, երբ ստուգեմ, թե զորություն ունիմ իմ իրավունքը պաշտպանելու։

Այս տողերը գրելու միջոցին Թեյմսը հրատարակեց Լինհաստանի ընդդեմ, մեր նորա գրով տպածը, գրքին բուռ առ բուռ եվ մի՛թե շա՞տ ժամանակ անցավ այն օրից, երբ ընդհանրական և մասնավորապես ամարիկական բռնակալության չեմմոնտ թույնը հրատարակեց, թե «Իսալիան լոկ աշխարհագրական անուն է»[13]։

Պարզամիտ մարդիկ կարող են հավատալ այս կամ այն կառավա-

---

* *Իսկ Ամարիան, այդ պոլիթիկական ուրվականը, դյուցազնական առասպել է, ասում ենք մենք. ազատ սիրամարդի փետուրներով զարդարված, Այն հողերի վերա, որ անգնահատիչ ձեռով անկված է ամարիկան անպարծանք գրոշը, 1857, հունվ. 1-ի տեղեկությանց նայելով, բնակվում է 35,019,056 հոգի ժողովուրդ։ Սոցանից (գորքով հանդերձ) ամարիացի է միմիայն 7,889,925 հոգին, մնացածը օտար ազգեր, որ գոն.*

բուիյան... կարող են հավատալ, որ նրա հիրավի՛, Լհհաստանը արժանի լիներ անգլիական համակրության՝ և ահա լրացած էր ամենայն բան։

— Այսօր չէ, վաղը— ասում ենք մենք։

To-morrow morning!** *ասում է հեգնող անգլիացին։ Քանի որ իմ կյանքի խոստովանելը կապված չէ նորա շահի հետ, նա խոստովանելու չէ։ Ուր մնաց, որ մի ազգության դիտությամբ սպանում է մյուս ազգությունը յուր անփական շահի համար. ճնշվածի իրավունքը խոստովանե՞լն է մնացած։*

Անհնարին ոհաձությամբ լսեցինք մենք անգլիական պառլամենտի մեջ լորդ Ջոհն Ռըսսելի խոսքերը ամերիկյան խնդրի վերաբերությամբ. «Չէ կարելի բուռն զորությամբ վերացնել ստրկությունը Հարավային Ամերիկայի միջից։ (Այսինքն հյուսիսայնոց պահանջողությունը և պատատրազմը, ըստ է). Հարավայնոց առելությունը դեպի հյուսիսայինները, աննկարագրելի խոր է և սաստիկ։ Հաղագությունը չէ պիտո տիրն տալնտով, մինչև այդ երկու կողմերը չհաղմեն առանձին առանձին տեսրությունը։ Եվ այն ժամանակ միայն Անգլիան կհասնի յուր դարավոր ճնպատակին, որի մեջ է նորա էական շահը»։

սկլավոն 14,927,325 հոգի, ոսմանն 5,632,089 հոգի, մաճառ 4,947,134 հոգի, հայ 13,256 հոգի, իսկ մնացո՛րդը այլ և այլը։

Առել է քե մոսավորապես 8 միլիոն հոգին բռնացել է 27 միլիոն օտար ժողովրդի վերա և ապրում է ծծելով նորա արյունը, նորա կենսական ուժը և զորությունը։ Ակամա կհիշես հռչակավոր Ջոհնի խոսքերը՝ Autriche c'est la damnation éternelle***.

Հերի՛ր չէ այսրանը, գեռևս Բոսնիան լոկ այխարհագրական անուն էր։ Հրամեր նա խաղաղական ժողովուրդը, վճենիկը, մինչև անգամ և Հոսմը, այն ստրկության համիտենական օրորոցը ձի՛շտ քեզ պես են մատծում... խոսք չկա։ Սուրբ Մածծինների և սուրբ Գարիբալդիի բարեխոսությունը անպակաս լինին Հարթուրգյան տունի գլխից...

Արդյոք բավարանի մեջ Մետերնիխը կրկնում է՞ ցմա Քավուտին յուր խոսքը։ Գիտ ինձորդին կմնա պատասխանել։

* *Ի՛նչ ասել է համակրություն. ուրիշը իրավունք ունի երկրագունդի վերա ապրելու, լհհացին չունի՞։ Սա իրրև ազորմությո՞ւն պիտի սառնա ուրիշից այն, ինչ որ ուրիշը ունի, նույն իրավունքներով, որ ամեն մարդու պիտի տրվի, որ ամեն մարդու հավասա՛ր է։ Եվ մեկին անգլիական մա՛րդը պիտի ապրի, ուրիշը թող մեռնի՞։ Բացի ստրանից, ի՛նչ պիտի արած լիներ Լհհաստանը, որ արժանի լիներ, հարցնում ենք մենք, Անգլիո Համակրության։ 12 միլիոն ժողովրդի կենդանությունը բավական իրավունք և բավական արժանավորություն չէ՞։ 12 միլիոն ժողովրդի երանամայա բողոքը և արյունաթաթավ մարտիրոսությունը բավական չէ՞ մի սիրտ ունեցող ազնատանի համակրությունը շարժելու։ Բայց սիրտ.... ո՛ր ենք մենք։ Անգլիո մեջ միայն գնալուն մեքենաներ կան, և քեռնս ուրիշ ամենայն բան գտանվի այնտեղ, մարդկային սիրտ... շատ հազիվ։ Վկա՛ ենք կանչում լորդ Բայրընի տավերը։ Նրբ Ջրիդրիխոս Մեծի առաջարկությամբ Լհհաստանը հռչտվնցավ Ռուսիս, Պրուսիս և Ավստրիս մեջ, Անգլիան յուր մնաց և ընդունելը։ Այսօր, յուր հին լուսիյան մեկրը ծածկելու համար, իրավունք և արժանավորությունն հարցնում է նա արյունլվա նահատակից։*

** *(Անգլ.) վաղը՝ առավոտ։ Խմբ.։*

*** *(Ֆր.) Ավստրիան հավիտենական նզովք (գհհենապարտություն) է։ Խմբ.։*

Այսպես է եղել ազգությանց ընթացքը մարդկության ասպարիզում։ Մինչև այժմ այն ազգությունը, որ ուժ ունի, որ ինքը սպրելով չկամի ուրիշի կյանքի վերա մտածել, ավելի կամ պակաս չէ մասնավոր անձնասպաշտից, որի փույթը չէ, եթե նորա ընկերը նորա աչքի առջև ընկնում է սովամահ։

Բայց մասնավոր ուշադրության արժանին ի՛նչ է. նույն ինքը այդ հզոր ազգությունը օգուտ չունի յուր անունին վնրագրված շահերից։ Այդ ազգությունը յուր կառավարության հետ դրե՛թե նույն հարաբերության մեջ է, ինչ հարաբերության մեջ են դեպի ինքը չխառնվանված ազգությունքը։ Տարբերությունը էական խնդրի մեջ չէ. անհատական խնդրի դուռը և նորա համար փակված է։ Նորա ազատությունը անվանական է, նա չէ կերակրվում նյութով, նորա կառավարությունը ներկում է նորա աչքը յուր դրոշի փառքով, յուր զենքի հաղթությամբ, յուր սահմանների օրըստօրե լայնությամբ։ Դեռևս թե այն մարդիկը, որոնց ազգությունը խառնվանված չէ, պաշտոնական կերպով չեն համարվում կենդանի. այո՛, նորա ստրուկ են ուրիշներին, բայց և այն մարդիկը, որոնց ազգությունը դադարցնում է երկրագունդը բնևոից մինչև բնևո, ստրուկ են յուրյանց կառավարության ձեռքում։ Կառավարությունքը նկատելով, որ այդ ազգերը ինքյանք յուրյանց մեջ ազատ չեն տակավին, նկատելով որ անոտի նախապաշարմունքներ, փտած սկզբունքներ և առհասարակ գլխիվայր հասկացողություն պաշտելի են նոցա, խորամանկությամբ օգուտ են քաղում նոցա թուլություններից, տիրում են նոցա վերա և նոցա անունով ներգործում են, միմիայն յուրյանց անձնասպահության համար։

Մարդը դեռևս թովված է, կառավարությանց բժժանքը դեռևս ազդում են նորա վերա։ Նա տանում է ազատության ծանր լուծը, առանց հաշիվ տալու ինքը ինքյան, թե ի՛նչ բանի համար են այն պրկանքը, որ հանձն է առնում։ Ի՛նչ կառնու յուր դրոշի փառքից, եթե այդ փառքը չէ բերում նորան երջանկություն և հանգիստ կյանք, եթե ամեն մինը այդ եղերելարաշ փառքերից դնվում են սոսկալի հարկերի և տառապելի պատերքերի ծանրության տակ, որոնց էականապես ժողովուրդն է ենթակա։ Կառավարության դրամ է հարկավոր յուր որևիցե խորհուրդը հասուց քշելու համար, ներքին պատրաստ է հրատարակում նա և ամեն մարդ առանց երկրայության, իբրև մի ապահով անդ դնում է և յուր ունեցածը։ Եվ ինչի՞ պիտի վախենա, քանի որ կառավարությունը երաշխավոր է։

— Կառավարությո՞ւնը... ո՛վ է կառավարությունը, ազգը չէ՞։

«Չէ՛, կառավարությունը կառավարություն է, ազգը ա՛յլ, կառավարությունը ա՛յլ»։

— Ուրեմն կառավարություն ասելով պիտի իմանալ որևէ աշխարհի պաշտոնյա՞յքը կամ նոցա պահեստը։

«Ճի՛շտ»։

— Ինչո՞վ ապահովում է կառավարությունը այն պարտքը, որ առնում է ժողովուրդից։

«Ի՛նչպես քեզ ինչով, տերության հողով, գանձով և այլն և այլն»։

— Տերության հողը, գանձը, և այլն և այլն կառավարության սեփականությո՞ւնն է, որ դրամ է դնում։

«Տարակույս չկա, դրքա պատկանելիք են կառավարության»։

— Ապա ազգը՞։

«Ազգը ինչ վերաբերություն ունի տերության հողին կամ գանձին հետ։ Ազգը ազգ է, ինչպես կառավարությունը կառավարություն է։ Ազգը ա՛յլ, կառավարությունը ա՛յլ»։

— Դրոշի փառքը՞...

«Ազգի՛նն է»։

— Ցնծա՛, ազգ։ Բերանդ հովին բացած, նայի՛ր այն կողը լալին, որ կախված է ձողի վերա։

«Բայց նա ինձ կերակուր չէ տալիս»— ասում է ազգը։

— Եվ ի՛նչ հարկավոր է քեզ կերակուր, երբ դու ապրում ես այդ փառքով։

Չնայելով այս բոլորի վերա, այդ ազգությունքը հետևում են տակավին յուրյանց կառավարության, ուրիշ աշխարհների տիրելու, ուրիշ ազգություններ ստրկելու և յուրյանց դրոշի փառքին նորանց ևս մասնակից առնելու։

Մինչև այժմ բռնակալ աշխարհակալությունքը մի սուտ փաստ ունեին յուրյանց ձեռքում, որ այսօր չէ կարող արդարանալ և մարդկային բռնականության դիմանալ։ Ի՛նչ էր այդ փաստը։ Այն, թե հզոր կառավարությունքը տիրում են զանազան աշխարհների, զանազան ազգերի, միմիայն վայրենության քաղաքակրթելու համար։ Անձնական շահը չէ, ո՛չ քա՛զ լիցի, մարդկության սերն է, որ ստիպում է նորանց ստրկացնել զանազան ազգեր, որովհետև այդ ազգերը հետ են մնում և չեն քաղաքակրթվում։

— Ա՛յսպես, ուրեմն, Անգլիան Հնդկաստանի մեջ մի որոշյալ կշիռ ավելու գնում է ժողովրդից 25 լիբրեն ստերլինգի, իսկ ինքը նույն կշիռը վաճառում է 250 լիբրեի, և կառավարությունից ավելի ո՛չ ո՛ք իրավունք ունի շինականից գնելու, նույնպես և շինականը իրավունք չունի ուրիշի վաճառելու։

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Անգլիան ամիսը երեք շոգենավ ափիոն բանուքյամբ ներս է տանում Չինաստան, քունավորում է մարդկությունը և այդ թույնի փոխարեն ամիսը երեք շոգենավ արծաթ է առանում. այս անբարոյականություն է։

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Իսլանդիան, յուր աշխարհագրական դրությամբ, յուր բնական սահմաններով, յուր կրոնքով, սովորությամբ և ավանդությամբ բոլո-

րովին հեռի է Անգլիայից, քանքարավոր մարդերով ավելի ճո՛խ է, քան ին ինքը Անգլիան, բայց Անգլիան հակառակ նորա կամքին, պահում է նորան յուր ձեռքի մեջ, և Թեյմսը շատ ժամանակ չէ որ հրատարակեց, թե Իռլանդիո անկախության աշխատողը իրեև տերության ընդդեմ ապստամբը, կարո՛ղ են դատապարտվիլ դեպի քիարան...

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Պապը փո՞ւ բազավորությունը այս աշխարհից չէ՞» ասողին երեսփոխան բարոզելով յուր անձը, հակառակ յուր վարդապետի հրամանին, բռնացել է այս աշխարհի վերաբերյալ հողի վերա, որ պատկանում է Իտալիային, և երբ խնդիրները սկսում են ասատիկ հուզվիլ, երբ առաջարկություններ առաջարկությանց քամակից հասնում են նորան, թողուլ այս աշխարհի բազավորությունը, նա չէ հոժարում և հիվանդանալով մահիճ է ընկնում....

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Ավստրիան, յուր 8 միլիոն ձկնարյուն ավստրիացիներով բռնացել է Լոմբարդիո վերա և չէ կամենում վենետիկը ձեռքից թողուլ։

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Մորթել է Հունգարիան, խեղդել է Գալիցիան, Դալմատիան, Բոհեմիան և այլ գավառներ ու ազգեր։

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Պրուսիան, Լհհաստանի մահվան առաջին պատճառը, հափշտակել է նորա Պոզնայնի գքսությունը և խեղդում է...

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Ռուսական բանտերը լցվեցան լհհացիներով. կարծեմ շուտով Սիբիրի մեջ ավելի շատ պիտի լինի լհհացի, քան թե լհհաստան. վարշավի հրապարակների վերա արյունը մինչև ծունկն է հասնում, պինվորները անգեն մարդոց վերա հարձակվելով սպանում են առանց խնայելու հասակի և սեռի, Ռուսիո գերմանաթափար կառավարությունը իրեև մի վամպիր ծծում է լհհաստանի արյունը, փակում է նորա եկեղեցիքը, դպրոցները, և հրամայում է քար կամ փայտ պառնալ։

«Քաղաքակրթություն է տարածում»։

Փոքր Ռուսիան, (15 միլիոն ժողովուրդ) յուր լեզվով, յուր պատմական ավանդություններով, յուր կյանքի կերպերով և սովորություններով, ոչինչ հարաբերություն չունի Մեծ Ռուսիային, և ոչ միայն այսչափ, այլև ատատիկ թշնամի է նորան, խեղդում է յուր անկախությունը, բայց Ռուսիո կառավարությունը շղթաներով կապում է նորան և ազատության մարդարեներին պատասխանում է բանտով, կնուտով և աքսորով։

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Համշատակել է և սարկացրել է Յինլանդիան։

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Խաբանոք ճանկել է վրաստանը և Հայաստանի մի մասը և ճնշում է նորանց յուր ծանրության տակ։

«Քաղաքակրթություն է տարածում»[14]։

— Եվրոպական տերությունքը անդադար օգնություն են տալիս Թյուրքիային, որ նա դիմանա և չկործանվի։

«Որպեսզի Թյուրքիո տարկացած հայ, սկլավոն և հույն ժողովուրդը քաղաքակրթիչ հոգարարձվից չզրկվի»։

— Կուրանով Ավետարանի որդի՞ք քաղաքակրթել։

«Այդ քաղքակրթությունը ավելի փրկարար է։ Ավետարանից թերևս ազատություն կարող է ծագել, իսկ Կուրանից և այդ երկյուղը չկա։

Սոքա ամենքը, իբրև բանի վարժապետ, քաղաքակրթություն են տարածում, և ոչ ոք չէ հարցնում աշակերտի կամքը, կամի՞ արդյոք ուսանել թե ոչ։ Սակայն չէ պիտու աչքից հեռացնել նոցա քաղաքակրթության տարբերությունը մեր հասկացած քաղաքակրթութենից։ Բանաները են նոցա դպրոցները, պոլիցականք և ժանդարմը՝ դաստիարակները, շղթան՝ հրահանգիչ, դիրքը, աքսորը՝ բարոյականություն վերին աստիճանի կազդուրելու մարզարան, կախաղանը և գլխապարտության խայտառակ սյունը՝ «Ղուռն ճշմարիտ որ տանի ի կեանս յաւիտենականս»[15]...

Կեցցե՛ կատուն, որ յուր փորի համար մուկ է բռնում։

Երբ ինքյանք կառավարությունքը տեսան այս, երբ նշմարեցին յուրյանց փառատի ոչնչությունը, եվրոպական հավասարակշիռը հանեցին մեջտեղ։ Եվ այսօր ամեն կառավարություն յուր կշռով կշռում է այս հավասարությունը։ Մարդկությունը, այո՛, ավելի չէ, քան թե ոչխարը, որ ապանդապետի գանակին և կշեռքին է հանձնված։ Մինչև այսօր ամեն հարձակում և ամեն պաշտպանություն այս հավասարակշռի անունով հառաջացավ։

— Բայց կշռի արդարության քննի՞չը։

«Քեզ ի՞նչ փույթ»։

Եվ այն օրից, երբ կառավարությունքը յուրյանց ընթացքը արդարացնելու համար և յուրյանց բռնած ճանապարհը ամբոխի աչքից ծածկելու խորամանկությամբ, գրեցին յուրյանց դրոշակի վերա հավասարակշիռը և իրավունքը, այն րոպեից, ասում ենք, աղգությունը դարձավ կառավարության հալածող ուրվականը։ Թեև հավասարակշիռ և իրավունք կա տերությանց մեջ, ուրեմն նույն կշիռը և նույն իրավունքը վունք կա տերությանց մեջ, ուրեմն նույն կշիռը և նույն իրավունքը պիտի լինի տերությանց և նոցա տարկացած ազգերի մեջ։ Դու կամես նուամ ես քո հավասարակշիռը պահել, և այն, իրավունքի անունով, բայց ինձ, որ բնավին օտար եմ քեզ և ամենևին վերաբերություն չունիմ քո հետ, ի՛նչ պատճառով, հակառակ իմ կամքին, առնում ես և բռնությամբ վունքի անունով, իսկ իմ վերաբերությամբ ինչի՞ համար ոտքի տակ ես կոխում նորան և անիրավում ես չարաչար։

Այսօր, ճնշված մարդերի համար, ազգությունն է նոցա միակ դրոշը, որ կարող է բացվիլ բռնակալության ընդդեմ։ Ազգությունն է միակ ճնարը դեմ դնելու նաև լուսավոր բռնակալության, երե միայն բռնակալությունը կարող է լուսավորվիլ կամ լուսավորվելուց հետո հարատևել իբրև բռնակալություն,— *կրկնում ենք, մեր գարու երևելի մտածողներից մինի հետ։*

Գանք այժմ պարզելու մեր ունեցած հայացքը ազգության վերա, որպեսզի հակառակախոս չերևինք մեր նեղսիրտ առջև։

Վնասակար և անիրավ է այնպիսի ազգությունը, որ ամեն ուրիշ գոհում է յուր կյանքին. ազգություն չէ այն, այլ կույր ֆանատիկոսություն, որ հիմք չունի և կիրքի բնավորությամբ երևում է մարդու մեջ։

Այդպիսի ազգությունը որշափ ևս կատաղի լինի, որշափ ևս մոլեգնի, ի վերա այսր ամենայն ժամանակը կմաշվի նորան, որովհետև մի կիրք կարող է տեղի տալ մյուս կիրքերին, որ հանգամանքը կարող են ծնուցանել։ Ազգությունը հարկավոր է և օգտակար այն ժամանակ, երբ նա չէ բորբոքվում իբրև մի բռնական կայծ, իբրև պատահական և հանգամանքներից կախված մի բան, այլ, երբ որպես հետևանք հասուն գիտակցության, հանդես է գալիս այրական հաստատամտությամբ, պահանջում է ուրիշների հավասար իրավունք և ոչինչ չէ խնդրում ավելի։ Ազգությունը օգտակար է և հարկավոր այն ժամանակ, երբ զգալի է ոչ որպես մի բարոյական շռայլություն, այլ որպես կարիք, որպես իրավունք, որպես բողոք երկրագունդի վերա մի կատր հող ձեռք բերելու համար, որպեսզի այդ ազգության անդամքը ապահովեն յուրյանց ապրուստը, որպեսզի դերի և ստրուկ չլինեն ուրիշին։ Ազգությունը անմեղադրելի է և ամենայն ընդունելության արժանի, եթե նա խաղաղական միջոց ազգությունքը անխախտ, նույնպիսի իրավանց ժառանգ, որպիսի ստացել է ինքը։ Ազգությունը անմեղադրելի է և ամենայն խոհ, եթե նա ընդհանուր մարդկության գործը թեթևացնել աշխատի յուր հավաքական անձնավորության անունով իրավունք ձեռք բերելով և նույն իրավունքը և պատասխանությունքը, հավասարապես, յուր անդամներին բաշխելով։

Եթե ազգության ներքին և էական խորհուրդը չէ անհնական խընդիրը, անհիմն է այդ ազգությունը, ասՙա է այդ ազգությունը, և նա կկործանվի։ Տնտեսական խնդիրն է այն զորությունը, որ մի միջոց հասարք խաղաղացանք անվանել, նա է այն միակ և հաստատ ուժը, որ ազգի անձնավորության մեջ ներգործելով, հավասարակշիռ է պահում պատարքին ուժերի ընդդեմ, որով և ազգությունը ապրում է։ Դու հազար տարի քարոզն ինձ քո վերացական ազգությունը, ես միշտ չպիտի հավկնամ։ Դու ինձ ասում ես, պահենք մեր ազգությունը, մեր լեզուն, մեր ավանդությունքը և այլն, և այլն, շա՛տ բարի, պատասխանում եմ ես, բայց, ասա՛ խնդրեմ, ի՛նչ բանի համար պահենք, ի՛նչ է պահելու օգուտը և ի՛նչ է կորուսանելու վնասը։ Վերացական ազգությունը, որ մինչև այժմ

փոքր ի շատե քարոզվել է հայոց ազգի մեջ, չէ կարող պատասխանել սորան։ Նվ այս է պատճառը, որ ծանր է այդ առաքելության ընթացքը։ Զոր-չոր ազգություն քարոզել առանց մեկնելու քո քարոզության պատճառները, ոչ այլ ինչ է, եթե ոչ ֆանատիկոսություն, և այդ տեսակ քարոզությունը երբեք չէ կարող արմատ արձակել մի ժողովուրդի մեջ, որ վերացականից հառաջ, ամենայն բոպե զարկվում է իրական կարիքների հետ։ Իսկ երբ դու ասես ինձ, պահի՛ր քո ազգությունը, հասատա՛ց կացիր քո սիրու մեջ գնալի քո աշխարհը, սիրի՛ր քո եղբարքը, պահի՛ր քո լեզուն, որ է քո ազգության դրոշը և այդ բոլորը քեզ իրավունք կտա մի կտոր հող ձեռք բերելու, որով կազատվիս սարկութենից և ազքատութենից, այն ժամանակ ես կհասկնամ քո խոսքը, և ընդհանուրի շահի մեջ թեներից, այն ժամանակ ես կհասկնամ քո խոսքը, և ընդհանուրի շահի մեջ թեներից, այն ժամանակ ես կհասկնամ քո խոսքը, և ընդհանուրի շահի մեջ մ

Չէ՛, այս ողբերգություն է. այս տեսակ ուղղագրություններ և վերանորոգություններ հեշտ բաներ չեն, և, համաձայն կարելի է ասել, նոր ի նորո ձևով բերելուց ավելի դժվար՝ Ուրիշների փորձերից, որ փորձողներին արժան են արյան ծովեր և որ բոլորովին ձրի ներկայանում են մեզ, իրրև օրինակ, հարկ է որ խրատվինք և չերթանք այն ծուռ ճանապարհը, որից և գնացողը կամի հետ դառնալ, բայց ասքը սայթաքում է։ Եվ ի՛նչ խելք է, կառուցելուց անմիջապես հետո, անկառուցին հեռանիլ, միմիայն այն պատճառով, որ անկառուցը ժամանակով հառաջ է, քան թե կառուցյալը։

Այս օրենքը չունի ոչինչ ամրություն, չունի հետևականություն։ Այս օրենքով, մի մարդ, որ կամեր պարապիլ որևիցե արվեստի, չպիտի ուղղակի գործեր այն, ուր հասած էր արվեստի ներկա վիճակը, այլ, ինչ որ դարերով հառաջ։ Նոր դիր ուսանող մարդը թո՛ղ չհամարձակի ուրեմն թղթի վերա գրել, այլ թո՛ղ գրե ծառի տերևի կամ կեղևի վերա, հետո, անասնոց մորթի վերա, հետո, չգիտեմ ինչի վերա, որ կարգը հասնի թղթին, քան որում նոր է սկսանում և հարկ է, որ հառաջ անկառուցը ձևոք բերե։

Եթե մինչև այժմ մեր խոսածներից հասկացավ մեր ներողիրտ ընթերցողը ազգության վերա մեր ունեցած դաղափարը, եթե համոզվեցավ կամ գոհացավ, մենք մեր շնորհակալությունը կանխիկ հայտնում ենք նորան։ Իսկ ընդհակառակը, եթե ավելի նեղսրտեցավ, չենք վհատում։ Մենք, ուրիշ անգամ, դարձյալ կխոսանք նորա հետ այս խնդիրների վերա և մեր ամեն ճիգը կթափենք ավելի մշակել և ավելի կերպարանագործել մեր դաղափարը։

Այժմ դառնում ենք դեպի այն կետը, որտեղից խոտորեցանք և դեպի այնտեղ հրավիրում ենք դարձյալ մեր ընթերցողների ուշադրությունը։

Որչափ շոշափելի և հասկնալի է անտեսական խնդրի հշմարտությունը, որ մենք, այս նեղ սահմանի մեջ, աշխատեցանք կերպարանագործել, ի վերա այսր ամենայնի, անհուսալի չէ, թե գտանվին մարդիկ, որ ասեն մեր համար. «Այս ի՛նչ Մովսես է, որ ճանապարհ է ցույց տալիս ազգին դեպի մի երկիր»։

— Մովսես չենք, և Մովսեսի խոսամունքը չենք խոսանում հայոց ազգին։ Մովսեսը իսրայելյան ազգին խոստանում էր մի երկիր, որ պիտի բղխեր կաթն և մեղր. մեր քարոզությունը ավելի պարկեշտ է։ Մենք ցույց ենք տալիս մի երկիր, որ բուսուցանում է բամբակ, մետաքս, շաքար, ցորյան, բրինձ, ստամ, տորոն և այլ ընդեղենք։ Մենք ցույց ենք տալիս մի երկիր, ուր ամենայն ընտանի գրաստ աճում է, ապրում է և բազմանում է, հետևապես նոցա բերքը ևս, այսինքն բուրդը, մորթը, միսը, կաթը և այլն, որ նույնպես արժանի են ուշադրության և մշակության։ Մենք ցույց ենք տալիս մի երկիր, որի հանքերը մեծապես կարող են մշակության և որոնք, մինչև այսօր, մնացած են մարդկության համար «որպէս ագռիւք փակեալ և դուռն կնքեալ, ընդ որ ոչ ոք էանց»[16]։

Հողդհողդ Իսրայելը, մարդով եգիպտոս դարձող Իսրայելը, միայն մի կույր հավատով կարող էր հետևել Մովսիսին, դեպի կամքն և մեղր բղխող երկիրը, ըստ որում անծանոթ էր նորան ավետյաց աշխարհը. մենք ընթերցողներից և առհասարակ հայոց ազգից չենք պահանջում և այն կույր հավատը դեպի մեր քարոզություններ։ Երկիրը և բերքերը քաջ ծանոթ են նոցա, և անծանոթների համար պատրաստ են յուրյանց գոյությամբ վկայելու մեր ասածին։

Մեր քարոզության նպատակը և մեր աշխատության խորհուրդը այն է միայն, որ ազգը մոռածե յուր ապագան և ազատե յուր անձը սարսափելի նեղություններից և աղքատություններից, որ նրան ոչ այսօր, վաղը պիտի թագավորեն բոլոր Ֆյուրքիո մեջ, չնայելով այն նոր պարագին, որ առնում է նա Անգլիայից։ Այդ լիրբեները շատ կարճ ժամանակի մեջ կցնդին, մեջտեղում կմնա պարտքի մուրհակը և նորանից հետո գալու հոգևարքի ժամանակ, օսմանյան լիրբեն կբարձրանա մինչև 1000 դուրոչ։

Մեր բարձրացուցած խնդիրը մի վերացական և անբնական փիլիսոփայություն չէ, որ ազգը նեղության հանդիպի հասկնալու համար։ Աշխարհիս երեսին մարդ չկա, որ յուր ապրուստի համար կարող չլինի նյութի և չհասկնա հացի խնդիրը. և մենք խոսեցանք միայն այն խնդրի վերա, քանզի նորանով միայն կարող է պահպանել մարդը յուր նյութական գոյությունը։

Բայց այն փորթիշատ կարողության տեր մարդը, որ ունի արդեն բավական ապրուստ, որ կազմել է յուրյան մի ճանապարհ, որով ապրել է և կապրի դեռևս, այդպիսի մարդը, բնականապես և ծանր նստած յուր տեղում, կես մի ըմբվեցնում է դեմքը, տհաճություն զգալով մեր խոսքերի մոայլոտ կերպարանքից, կես մի այլապես է մտածում, քան թե մտածում մոայլոտ կերպարանքից, կես մի այլապես է մտածում, քան թե մտածում ենք մենք, քան թե աշխատեցանք մենք նորա առջև կերպարանել մեր միտքը։

Ի՛նչ է արդյոք նորա մտածությունը։ Ամենուրդ հարցմունք է այս։ Նա մտածում է, «թե նա վաճառականությամբ, անդանավորությամբ, մինչևորդությամբ կամ մի այլ ճանապարհով վաստակեցա այսչափ դրամ։ Մեղնելուց հետո թողնում եմ իմ ընտանիքին նույնը, այլև մի քանի տուն և այլն և այլն, ուրեմն, ինչպես իմ կյանքը ապահով էր, նույնպես և իմ ժառանգների ապահովված են»։

Նորա մտածությունը ավելի չէ տարածվում, քան թե յուր անմիջականն զավակները։ Մենք այդ փորթիշատ կարողության տեր մարդուն ասում ենք.— Շատ լավ, դու ունես բավական դրամ, ունես տուներ և այլն և նորանով կարծում ես թե քո ժառանգները ապահով են, իսկ մենք ասում ենք, որ այդ կարծեցյալ ապահովությունը անհիմն է։

— Ի՛նչպես,— հարցնում է նա մեզ։

«Այսօր դու ես քո բոլոր ստացվածքի տերը, որպես նաև քո բոլոր ընտանիքի տերը և այս պատճառով քո ունեցած կարողությունը հերի՛ք է այսօր մի ընտանիքի. բայց, վաղը քո ստացվածքը պիտի բաժնվին

քո զավակների մեջ, որոնց յուրաքանչյուրին բաժին պիտի հասնի քո ունեցածի կեսը, կամ հառորդը, կամ ավելի մի փոքր մասը, նրա շատ են քո զավակները։ Եվ ահա կարողությունը, ուժը դեռևս առաջին ազգում (սերում) կիավելցավ, քառորդվելցավ, կամ ավելի փոքր մասերի բաժնվելցավ. բայց մի մոռնար, որ այն յուրաքանչյուր մասերի տերերը առանձին-առանձին պիտի կազմեն քո նման գերդաստան։ Յուր կարգով, նոցա քեզնից ստացած բաժինքը պիտի բաժնվին նոցա զավակների մեջ, որ ասել է թե քո թոռներին, քո ունեցածից հազիվ պիտի հասնի հարյուրին 5—6 տասնորդ։ Իսկ թոռներիդ որդիքը գարձյալ պիտի մտանեն այն ազգատ ընդհանրության մեջ, որից դուրս նկար դու, և ազատ կարծեցիր այնուհետև նրա վիճակակցություններից քո ազատվելը, քանի որ ինքնիշխան տեր էիր քո բոլոր ստացվածքին։ Այն մարդը, որ յուր հարստությամբ կամ որևիցե առիթով դուրս կդարձրնես հասարակաց ազգի մակերևույթից, բոլոր նորա ազատվելը չէ կարող մնալ այն բարձրության մեջ։ Կանուխ թե ուշ, նա պիտի դառնա գարձյալ դեպի այն ընկերության, որից կյանք էր ստացել ազատվելի նահապետը։ Մոմի ջուրը գոլորշանալով բարձրանում է մինչև ամպերը, բայց երկար չէ մնում այնտեղ։ Մի փոքր սառնություն, մի փոքր օդի ճնշողություն և, ահա այն թուղթի շոգիները, որ վոգով էին ծովի հորիզոնական մակերևույթը, իրրև անձրև կամ իրրև կարկուտ անհնարին բռնությամբ դահավիժում են, յուրյանց հայրոց բարձրությունից, գարձյալ դեպի ծով։ Այս, բնության օրենք է, օրենք, որ մի մազի չափ չէ շեղում յուր ուղակշիռը»։

Փորրիշատե կարողության տեր մարդը, մեր ասածին, պատասխանում է այսպես։— Ես իմ հորից ոչինչ ստացա, ինքնին, առանց մի բան ունենալու այլազգի վաստակեցա միմիայն իմ աշխատությամբ։ Իմ որդիքը ավելի լավ վիճակի մեջ պիտի սկսանեն յուրյանց ապագաները, քան թե ես. քանզի ես ոչինչ ունեի, իսկ որդոց յուրաքանչյուրը պիտի ստանա իմ կայքի կեսը, կամ քառորդը, կամ, ի վերջո, մի մաս։ Ո՛ր նորա այն հիմքի վերա աշխատին, և նոցանից յուրաքանչյուրը կհասնի իմ կարողության չափին. այնպես և նոցա որդիքը և այլն և այլն։

«Քեզ հանդամանքները մեզ հնազանդվելին, նրա մեք ամեն բան մեր կամեցածի պես կարողանայինք շինել, նրա առանական հաշիվը միշտ ուղիղ գար կյանքի գործնական կոզմերի հետ, այն ժամանակ գուցե ուղիղ լիներ քո ասածը, գուցե քո որդիքը կամ նոցա սերունդը ապահով լինեին բացի սրտանից, ուր չկա գուրս արտագրող զորություն, որ յուր կարգով դեպի ներս պիտի գրավիր գուրսի հարստությունը, այնտեղ մի ընկերության անդամ ուրիշ կերով չէ կարող հարստանալ, նրա ոչ նույն ընկերության մյուս անդամների հաշվով։ Եվ այդ հարստություն չէ, այլ պատահական հակում հարստության կշռի նրբանման դեպի այս և նրբանման դեպի այն կողմը։ Այսօր դու ես հարուստ, վաղը ես կլինիմ, և այն ժամանակ քո հարստությունը անպատճառ պիտի նվազի»։

— Ինչպես,— բացականչում է նա։

«Ավելի հասկանալի շինելու համար առարկան, բացատրենք քեզ մեծը և ընդհանուրը փորրի և մասնավորի կերպարանքով։ Դիտենք, թե քսան հոգի, մեր ապրում ենք մի տեղում և վաճառականություն ենք առնում մեր մեջ։ Մենք ամենքս գործում ենք առանձին-առանձին, յուրաքանչյուր մարդ յուր օգտի համար, և մեզնից յուրաքանչյուրը տարբեր կարողություն ունի, մինը շատ, մյուսը փորր և այլն, և մեր բոլորի ունեցած կարողությունքը իրար վերա բարդելով, դիտենք թե ստանում ենք հազար ոսկու մի գրամագլուխ։ Արդ, հարցնում ենք, երբ որ մեր բոլորի գործողությունը այն հազար ոսկու վրա է, երբ մեր ձեռքում չկա մի ուժ, որ կարող լիներ մեր, քսանից դուրս եղած արծաթը ներս բերել մեր մեջ, մեզնից մինը կարո՞ղ է հարստանալ, առանց քսանի շահին դպչելու։ Ո՞չ ապաքեն եթե մեզնից մինը յուր ունեցածից ավելի մի հարյուր ստանա, մեզնից մյուս մինը պիտի տուժե այդ հարյուրը։ Եվ այս հարյուր ոսկին երևութական և առժամանակյա մի վաստակ է, քանզի ընդհանրությունը չունի հարստություն և շահվողը ընդհանուրի հաշվով շահվեցավ, քանզի, նոր արծաթի չմտավ ընդհանրության մեջ, այլ մինից անցավ դեպի մյուսը, որ վաղը կանցանե դարձյալ դեպի մի այլ մյուսը»։

Եթե այսպես չլիներ բանի զորությունը, եթե փորրիշատե կարողության տեր մարդու ժառանգները նույնպես հարստանային, ինչպես հարստացել էր նոցա հայրը, այն ժամանակ բյուրավոր պիտի լիներն հարուստների թիվը, փո՛ր է այս, աղքատ ասած բանը բնավ չպիտի լիներ աշխարհի վերա։ Բայց ավա՛ղ, հարստությունը ոչ թե չէ հարատևում ժառանգների մեջ, այլ շատ անգամ նույն ինքը, երբեմն հարյուր հազարներ յուր ձեռքի մեջ շարժողը, դառն աղքատությամբ կնքում է յուր կյանքը, ո՛ւր մնացին նորա ժառանգները։

— Բայց, դորա փոխանակ, և աղքատների ժառանգներ հարստանում են։

«Այնպես, ինչպես ընկնող հարուստը, և նույն պայմաններով, ուրեմն և նույն հանապարհի վերա և նա յուր կարգով պիտի հավասարի ընդհանուր մակերևույթին։ Եվ եթե մի ընկած հարուստի փոխանակ հարստանա մի աղքատ, հետևանքը հասարակական չէ, քանզի գրամագլուխը բացասականին վերա, տալիս է գրո։ Այո՛, բնության օրենքները կանոն բացասականին վերա, տալիս է գրո։ Այո՛, բնության օրենքները կատարվում են ճիշտ մաթեմատիկական հաշվով, և մարդը, որպես անգամ բնության, և մարդկային կյանքը, որպես երևույթ բնության, ենթակա են այս օրենքին և այս հաշվին։

Կարող են ասել, որ եթե մարդը և նորա կյանքը դրվի ճիշտ մաթեմատիկական հաշվի տակ, մարդը կդառնա մի մեքենա և նորա կյանքը մի ձանձրալի ժամանակամիջոց։ Այն ժամանակ նա կկորուսանե այն բանաստեղծական (poétique) դույնը, առանց որի անպատճառ է մարդու կյանքը։

Մի՞թե մեր հակառակն ենք կարծում։ Բնության պարզության մեջ

միայն կարող է փայլիլ մարդու բանաստեղծական գույնը, և ճիշտ մաթեմատիկական հաշիվը, տանելով մարդկային ընկերությունը դեպի համերաշխություն, կարող է ազատել նորան մեքենա դառնալուց: Մարդը առուգապես մեքենա է այն ժամանակ, երբ հաշիվ չկա, այսինքն գիտակցություն չկա: Հույսը ուրիշ բան չէ, եթե ոչ առույգ հաշվից բղխելու հետևանք: Քանի որ հույսը չէ հիմնվում առույգ հաշվի վերա, հույս չէ, այլ անձնախաբեություն: Առանց սերմանելու հունձ չկա:

— Գուցե՛ լինի, շատ կարելի է որ լինի. ի վերջո մեզ սիրելի է լինելը:

«Ա՛յս է հույսը»:

Բայց մարդը, այս բոլորը քննելու ժամանակ, անշուշտ պիտի լեզի խառնեն յուր կյանքի մեջ, նորան սիրելի չէ այս, նա չէ քննում, նա ծողնում է և առօրյա տեսածով ապրում է այսօր, վաղը ինչ կամի ծող լինի: Նորան ավելի հեշտ է թվում վաղվա գալիքը, քան թե այսօրվա քննությունը, քանզի ապագան ծածկված է վարագույրով, որի վերա մարդը խոշոր տառերով գրել է նույա: Ապագան ծածկված է լոկ կարճատես աչքերի համար: Ապագան ներկայի ժառանգն է և եթե մարդը քնեն ներկան, այն ժամանակ իսկույն կճնդրվի նորա առջև ապագայի կարծեցյալ վարագույրը:

— Չէ՛, փորթիշատն կարողության տեր մարդ, չէ՛, իմ պարոն, համաձայնիր, որ առանց հաշվի է քո հույսը, թե քո որդիքը նույնպես պիտի սիրասնան այն կարողության, որին հաջողել է քեզ հասնել: Թարձար աչքդ դեպի այն օրերը, երբ դու մանուկ էիր, կենդանացար քո հիշողության առջև այն շրջապատը, որի մեջ ապրեցար. ի՞նչպես են, կա՞ն այն հարուստները, որ տեսել էիր: Այնպես չէ՞, որ այն տասն քսան տուներից, որ դու ճանաչում էիր, այսօր կան և տևում են միայն երկու տուն: Հավատա, որ այսօրվա մանուկը, երբ յուր կարդով հասնի քո հասակին և քո պես աչքը հետ դարձնե դեպի յուր անցած ճանապարհը, պիտի տեսանե նո՛ւյնպիսի ավերակներ, նո՛ւյնպիսի նավաբեկության մնացորդք, որ այսօր երևում են քեզ: Մինչդեռ ընդհանուրը ապահովված չէ, մասնավորի երջանկությունը մի վազանցուկ երա՛գ է: Այսօր երևում է նա, այո՛, բայց վաղը կցնդի. քանզի լոկ տեսարանական խաբեություն է, կրկնում ենք վերատին:

Մեր մինչև այստեղ խոսածից երևում է, որ մենք, մարդուն համար, իբրև առաջին խնդիր առնում ենք տեսանական խնդիրը և անվանում ենք նորան «մանու և կյանքի խնդիր»: Այս բավական է, որ մի տեսակ մարդիկ, որոնց բոլոր հասկացողությունը հիմնվում է երկվությանն վերա—dualisme, պարզմտությամբ կամ հավատարիմ մնալով յուրյանց երկնքի սկզբունքին, մեր քարոզությունը անվանեն նյութականություն, կամ, ո՛վ գիտե, դեռևս ինչ ուրյուն:

Մենք չենք կարող նոցանից ամեն մինին պատասխան տալ. ոչ թե ասելիք չունինք, այլ որովհետև շատ ականջներ մարմաջում են, և իրա-

կան հշմարտությունը, ո՜հ, շատ մերկ է։ Եվ ավելորդ է պատասխան տալ այնտեղ, ուր խոսում են հեղինակության անունով, որ մենք չենք ընդունում։ Մենք նորա առջև պիտի դիմենք գործ, նա մեր առջև պիտի դնե հրամաններ։ Գործը ցույց տալով պիտի խոսինք համոզման անունով, նա հրամանը մեջ բերելով պիտի պահանջե հնազանդություն։

Հնազանդությո՜ւն.... որի մեջ խորամանկությամբ դրված է բռնակալության սերմը։ Ուրացի՛ր, ասում է նա, քո դատողությունը, քո բանականությունը, քո խելքը և հնազանդվի՛ր ինձ։ Դու մեքենա ես, և ես եմ քեզ շարժող զորությունը։ Մեր բառարանի մեջ հնազանդություն խոսքը չկա, որովհետև հրամայական և հնազանդական առնչության մեջ ազատություն չկա։ Մենք համոզում գիտենք, որ հնազանդության պես կույր չէ, որ հրամանի պես չէ բռնաբարում քո հասկացողությունը, այլ աղբերանում է փաստերը և պատճառները գիտակցությամբ քննելուց։

Այո՛, մարդն է մեր կատարելությունը՝ idéal և նորա էական և իրական պետքերից ավելի, ուրիշ բանի հետ վերաբերություն չունինք։ Էական և իրական պետքերի մեջ տեսնում ենք նորա կյանքը, կյանքի պայմանները։ Պայմանների մեջ տեսնում ենք տնտեսական խնդիրը, տեսնում ենք մարդկային համերաշխությունը, որ գավառում ենք աղբյուր, անկնդհ և հաշվառու բարոյականության և որի առջև միայն խոնարհեցնում ենք մեր ծունրը։

Մարդը չէ գողանում, բայց եթե նա չէ գողանում նորա համար, որ օրենքը արգելում է գողանալ, նա գո՛ղ է և ավազակ։ Մարդը չէ սպանում, եթե այն պատճառով միայն, որ սպանությունը արգելված է, ի վերջո, այն բոլոր հանցանքները, որ նա չէ գործում, եթե չէ գործում իբրև ստրուկ, հնազանդվելով մի գերագույն հեղինակության հրամանի, մարդը սպանող է և անբարոյական։

Մարդը բարոյական է այն ժամանակ, եթե այդ հանցանքները չէ գործում ոչ թե յուր վերա եղած հեղինակություններից վախենալով, այլ եթե գիտակցությունը և համերաշխությունը դրել է նորան այն կետի վերա, որ նա և հղանալ չէ կարող այդ հանցանքները։ Որը հանցանքը հղանում է մարդը, գործել է այնուհետև, թե չէ գործել, մեր համար անբարոյական է, որովհետև եթե օրենքը չարգելուր, պիտի գործեր։ Եվ չգործեց կան է, որովհետև եթե օրենքը չարգելուր, պիտի գործեր։ Եվ չգործեց ոչ թե հասկանալով, որ եթե գործեր, յուր նման մի ուրիշին պիտի զրկանք, վիշտ կամ մահ պատճառեր, այլ որովհետև մեղք է, որովհետև հանցանքի փոխարեն պատիժ կա։ Ասել է, այնպիսին եթե յուր անձը վտանգելու չլիներ, ինքը ուրիշի անձերը պիտի վտանգեր։ Այստեղ բարոյականություն չկա, այս բարոյականությունը պաշտոնական է։ Եթե այս կետից նայելու լինինք բարոյականության վերա, վանդակի մեջ փակված վագրը բարոյական է, որովհետև մարդ չի փաստաւում։ Եվ ի՞նչ տարբերություն կա, մինը (վագրը) ստիպված է չգործել, ևր-

կամն վանդակից, իսկ մյուսը (մարդը) ստիպված է հեղինակության հրամանից:

«Որ հայիցի ի կին մարդ, առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա, ի սրտի իւրում»— ասում է Քրիստոսը[17] մեզ հասկանալի է այս:

Սոցա հակառակ, մարդը ողորմություն է տալիս, այսինքն, օգնում է կարոտելոց, նրան նա գործում է այն միմիայն այն պատճառով, որ հավատում է Ին փոխարեն պիտի առանա.... մենք չենք ընդունում նորան որպես բարոյական, որովհետև նրն չհավատար, Ին փոխարեն պիտի առանա, չպիտի գործեր: Մարդը ուխտում է, նրն ես այս-ինչ բան առանամ, կամ այն-ինչ բանի հասնիմ, այս-ինչ բարեգործությունը գործեմ. բարոյականության և հո՛ւր անգամ չկա այստեղ, որովհետև նրն յուր ցանկացածին չհասնի, չպիտի գործեր: Այս առևտուր է, պիտի աստ առանալու ակնկալությամբ, բարի պիտի գործեն առանալուց հետո: Եվ այս բոլորը, հնթանոսական և հրեական առմամբ, զոհի անունով: Մարդկային համերաշխությունը զոհ չդիտեն, այնտեղ յուրաքանչյուր անհատ միայն պարտ ունի: Մեր քահանն է, որ անշունչ բնությունը մարդ չէ, ապա Ին ոչ, ի՛նչ փոխարեն պիտի տալինք արևին, որ մեզ չտաներ:

Զոհի սկզբունքը անարգում է մարդկային արժանավորությունը: Այստեղ գործյալ երևում է բռնակալական ոգին, այստեղ գործյալ կոպիտ կերպով նշանվում է մինի ուժը, իսկ մյուսի տկարությունը: Մի մարդ, տեսանելով որ մյուսը մնռնում է սովից, որպես Ին ասեր նորան.— Տե՛ս, ահա մնռնում ես, քո կյանքը կախվում է այժմ ինձանից, այսինքն իմ քեզ հաց տալուց կամ չտալուց, բայց ես զոհում եմ քեզ այս կտոր հացը, քո կյանքը հարատևել տալու համար: Դորա փոխանակ դու պիտի գնաս, որ ես եմ քո ազատիչը....

Թշվա՛ռ.... հառաջ քան Ին փրկեցիր նորա կյանքը ոգիդ տակ կսխեցիր նորա իրավունքը և նորա մարդկային արժանավորությունը: Դո՛ւ գազարնցար մարդ լինելուց, որովհետև ինչ որ ուզղակի քո մարդկային պարտքն էր, այն զոհի անունով գործեցիր, վշտացուցիր քո ընկերի ամենասուրբ և նվիրական զգացողությունը, որովհետև քո անձը տեր քարոզեցիր նորա կյանքին:

Հայտար կյանք փրկի դու այդ ճանապարհով, Ին պաշտոնական բարոյականի կնդրուկ ծխեն քեզ, մեր աչքում դու ամբարիշտ ես:

Եվ ի՞նչպես չդատապարտես դարձյալ դևքի տեսեսական խնդիրը, որ Ին կարդի զրված լիներ, այս խեղճ մարդը յուր կյանքը իրրև շնորհք չպիտի առանար բռնակալ-բարերարից:

Միտքինները չկամին այս տեսնել, նորա վերացականության են խնդրում, նորա այնքան բարձր կանգնած են, որ մարդը հող և մախիր է նոցա առջև*:

---

* Արդյոք մարդուններից նյութ չե՞ն Ծ. Հ.

Բռնակալները սեփականություն են պահանջում, նոքա կենտրոնացած են յուրյանց մեջ. յուրյանց գոյությունը քարոզում են ուրիշներին իբրև հավատալիք, իսկ այդ ուրիշների գոյության վերա թքում են լրբաբարբար։

— Ի՞նչ է մնում այն մարդերին, որ ոչ միաոիկ են և ոչ բռնակալ։ Ի՞նչ է մնում մեզ։

Քարոզել տնտեսական խնդիրը, *քարոզել* մարդը, *քարոզել* ազգությունը, *միաոիկներին գայթակղություն և բռնակալներին սահմանադրություն, իսկ հասարակ ժողովրդին փրկություն։*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ՄԵՐ ՀԱՅԱՑՔԸ ՄԻ ՕՐԱԳՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անշուշտ, մեր խոսքը վերաբերում է այնպիսի օրագիրների, որ մաս նավորապես նվիրված չեն իրենց գործունեությունը այս կամ այն հատուկ առարկի կամ դիտության, այլ գնում են կամ ուզում են գնալ միջին ճամփով, ընդհանրապես։ Եվ հարկավ թե մեր ազգի մեջ կարող էր գոյանալ կամ շարունակվիլ մի այնպիսի օրագիր, կամ պարբերական հրատարակություն, որ նվիրված լիներ մասնավորապես այս կամ այն նյութին։ Այս խոսքը ասում ենք մենք, նայելով մեր ազգի ներկա վիճակին ընդհանրապես և անխտիր ամեն բանի հետ գործ ունեցող օրագիրը բնականաբար պիտի և ավելի շատ ընթերցողք ունենա, մինչդեռ այս կամ այն մասնավոր նյութին նվիրված օրագիրը կարող է միայն աչքի տակ ունենալ մի փոքր հասարակություն, որ պարապում էր մասնավորապես այն նյութով կամ առարկայով, որին նվիրել էր օրագիրը իր գործունեությունը։ Եվ որովհետև հասարակ օրագիրների տարածվելու վիճակը և չափը շատ լավ հայտնի է մեզ թե այստեղ Ռուսիո մեջ և թե Տաճկաստանում, այս պատճառով էլ ասացինք, թե մասնավոր խորհրդի նվիրված օրագիր չէ կարող գոյանալ կամ շարունակվիլ մեր մեջ ներկայումս։

Մենք չենք ելած քննելու այն պատճառները, որից առաջանում են մեր օրագիրների տարածության սահմանափակությունը. այդ բանը պիտի ձգեր մեզ ոչ միայն մետաֆիզիկական քննողության, այլև միքանի անտանելական խնդիրների քննողության մեջ, որ մեր ներկա խորհրդին բնավ վերաբերություն չունի։ Մեր դիտավորությունը է միայն հայտնել մեր կարծիքը մի օրագրի մասին, թե նա ինչպես պիտի լիներ ինքը իրեն։ Այս մասին, եթե ոչ գրով, գոնե բերանացի շատ լսած ենք բազմաթիվ կարծիքներ, այսինքն թե ինչպես չպիտի լիներ. առույգ է, որ շատ պարոններ ուրիշ օրագիրներըը իրենց բազմաթիվ գործերի ժամ ձգելուց հետո, երբ իրենք սկսեցին հրատարակել իրենց անվանական օրագիրը կամ ինքիքը, աչքի հայտնի կերպով ցույց տվին, որ ուրիշ օրագիրների վերաբերությամբ այսպես կամ այնպես պետք

չէր, այս անօգուտ է, մյուսը զուր է և այլն և այլն խոսքերը, լոկ խոսքեր էին, խոսքեր, խոսքեր և էլի խոսքեր. պատճառ, իրենց հրատարակութիւնը այս պետք չեղած, կամ անօգուտ, կամ զուր բաները ավելի մեծ չափով և դրականապես վնասակար կերպով պաշտոնց, քան թե նրանից ունեցած էին այն պարոնից դատապարտված օրագիրը։

Այս խոսքերը ասելով չենք ակնարկում մի որևիսի և իցե պարոնի վերա, այլ մանավանդ այդպես շատերի վրա և թող չկարծվի թե նոցա կարծիքները ինչպես այժմ, նույնպես և առաջ կշիռ ունեին մեր աչքում. չէ՛, առաջ էլ նայել էինք նոցա վրա որպես դատարկ հողմաբաժութեան վրա։

Որքան մեզ պատահել է լսել այսպիսի կարծիքներ, դորա, մեծ մասով մեր Հյուսիսափայլի վրա էին, և մանավանդ ինձ էին ասվում այդ կարծիքները, որովհետև ես Հյուսիսափայլի հետ էի։ Այս պատճառով Հյուսիսափայլի հրատարակողի և իմ հանցանքները, որ լսում էի, գրում եմ այստեղ, որ հետո մի քանի խոսք ասեմ դորա մասին։

Առաջին հանցանք. Հյուսիսափայլի լեզուն ծանր է, արվեստական է, անհասկանալի է։ Շատերն էլ որ իրենց բուն մայրենի լեզվի գիտութեան մեջ անհնարին խեղճ էին և հայ լեզվի ոգուն և որամաբանութեան բնավ իսկ տեղեկութիւն չունեին և հայերեն խոսելու ժամանակ — ամաշում եմ ասել — ռուսերեն մտածելով, ռուսի բառերը, նախադասութիւնները, և ռուս որամաբանութեամբ և ռուս բաղդատութեամբ լոկ հայ ձայնով էին խոսում, այդպիսի սքանչելի պարոններն էլ իրենց չգիտութիւնը արդարացնելու համար, Հյուսիսափայլի լեզուն գերմանական բաղդատութեան և գերմանիկ որամաբանութեան ստրկացած էին քարոզում, թեև այդ տեսակ պարոններից 99 հարյուրից գերմաներեն էլ չգիտեին. բայց ինչ անես, առածը ասում է. «լեզուն ոսկոր չունի», ուստի և նորա էլ օգուտ քաղելով իրենց մարմնեղեն լեզվի ճկունութենից, բլբլացնում էին այն, ինչ որ ուրիշից էին լսել կամ գեթ ինչևիցե մի բան ասելու համար, որ իրենք էլ բան հասկացող երևին. տաճկի ասածին պես. իշ օլսուն*։

Երկրորդ հանցանք. Հյուսիսափայլը նյութերի բնտրութեան չգիտեր, շատ անգամ տպում է եվրոպական վնասներ, որ բնավ մեզ, մեր ազգին վերաբերութեան չունին։ Հյուսիսափայլը աստեղաբաշխութեան վրա է խոսում, ֆիզիոլոգիայի վրա, կամ ուրիշ այս ու այն գիտութեանց վրա, որ մեր ազգին անհասկանալի է։

Երրորդ հանցանք. Հյուսիսափայլը ազգային նյութեր չունի իր մեջ, այլ ինչ կա չկա եվրոպական լեզուներից [է] առնված։

Այս հանցանքները հրապարակում էին և իրենց դատապարտութեան վճիռն էլ քամակիցը տալիս, որ ունայնացնում էր Հյուսիսափայլի խորհուրդը։ Ես այդ ունայն հռչակված աշխատութեան մասնակից էի. հայտ-

* Գործ լինի, մի բան արած լինենք։

նի է, թե մեր սրանչելի պարոններն կշտամբանքի մի բաժինն էլ ուղղակի ինձ էր հասնում։

Ամեն այսպիսի դիպվածներում (երբեմն պատահում էր որ հինգ տասը հոգի միասին էին գալիս վրաս), ես խնդրում էի նոցանից ցույց տալ ուղիղ համփան, ինձ մերը մոլորական էր. բայց և ոչ մի անգամ լսում էի այդ ուղիղ համփի մասին, որովհետև մեր ընդդիմախոսքը ասում էին թե իրենք էլ չգիտեն. միայն մերի մոլորականությունը և մեր աշխատության անայնությունը գիտեին!!!

Կանոնավոր կերպով վեճ բռնալ այդպիսիների հետ անհնար էր, որովհետև կանոնավոր խոսակցությունը երկու կողմից էլ տրամաբանություն է պահանջում, բայց և այնպես առանց ճշմարտությունը բարբնելու ցույց էի տալիս Հյուսիսափայլի իրավունքները, որ կամքի կամ հաշակի վրա ոչ, այլ էական հիմքերի վրա էին ամրացած. մինչդեռ ժամանակ խոսակցելով լեզվի անկատարելությունը, թե Հյուսիսափայլի բամբասված լեզուն, նորա հրատարակողի և գործակցի բամբասված ձև ու ոճերը սկսում էին աննկատելի կերպով ազդել նաև մեր ընդդիմախոսների լեզվի վրա, մերթ նոցա կողմից բոլորովին ակամա և առանց գիտնալու։

Հյուսիսափայլի լեզվի թերությունքը, այդ լեզվով գրողների անձնական պակասությունը չէր, այլ մանավանդ նոր լեզվի մանկության պակասությունը։ Եվ երբ նոր լեզուն, տակավին անմշակ, չուներ այն հատկությունքը, որ անշուշտ պետք էին հիմնավոր և կանոնավոր կերպով ամեն բանի վրա խոսելու համար, երբ Հյուսիսափայլի գրիչքը այժմ կամ այն դպրափարի հայտարար ձևը ժողովրդի մեջ չգտնելով և ժողովրդին հայտնի բառերով գործ էին դնում մի ձև բուն հին լեզվի ոգուն համաձայնեցնելով,— Հյուսիսափայլը գերմանախոս էր դառնում!! Հին և նոր լեզվի ընդդիմ մեր սրանչելի հայկաբաններին անխտիր գործ դրած բառերը և ոճերը, երբ մենք գործ չէինք դնում, Հյուսիսափայլը գերմանախոս էր դառնում։

Երբ ֆրանկի moyen, ռուսի средство և տաճկի վաճրր բառերը մեր սրանչելի հայկաբանքը ընդհանրապես և սովորաբար միջոց էին թարգմանում հին ու նոր լեզվի ոգուն ընդդիմ, երբ մենք հայկական ոգուն համաձայնելով նույն բառերը թարգմանում էինք ճնար, ինչպես մեր նախնիք գործ էին ածել և ինչպես այժմյան սերունդը գործ է ածում, Հյուսիսափայլը գերմանախոս էր դառնում!!

Երբ ֆրանկի partager, ռուսի разделять բայերը վերացական դատարկների վերաբերությամբ բաժանել էին թարգմանում— օրինակ je partage votre opinion[1], я разделю ваше мнение, ես բաժանում եմ ձեր կարծիքը և այլն, այսպիսիք անխտիր և մինչ մենք հարատած մնալով մայրենի լեզվի ոգուն, գրում էինք կամ՝ ես բնդունում եմ ձեր կարծիքը, կամ համամիտ եմ ձեզ, կամ մասնակից եմ ձեր ուրախությանը, ցավին և այլն և այլն, Հյուսիսափայլը գերմանախոս էր դառնում!!

Երբ ֆրանկի communiquer, *ռուսի* сообщать *բայերը անխտիր և ընդհանրապես թարգմանվում էին հաղորդել, հայկական ոգուն ընդդեմ բազդասելով, ինչպես լուր հաղորդել, նամակ հաղորդել և այլն և այլն, և երբ մենք հավատարիմ մնալով լեզվի ոգուն չէինք գործածում այս օտար ձևը, այլ դորա փոխանակ տեղին հարմար գրում էինք, լուր տալ, իմաց տալ, տեղեկություն տալ, մասնակից անել այս ինչ բանի և այլն և այլն, Հյուսիսափայլը զերմանախոս էր դառնում!!*

Երբ ֆրանկի curieux, *ռուսի* любопытный *բառերը անխտիր հետաքրքիր թարգմանելով գրվում էին հետաքրքիր բան, հետաքրքիր գիտություն և այլն, և երբ մենք հարազատ մնալով մայրենի լեզվին, հետաքիր ածականը տալիս էինք մարդուն, իսկ անշունչ առարկաներին վերաբերությամբ գրում էինք՝ արժանի հարցասիրության, Հյուսիսափայլը զերմանախոս էր դառնում!!!*

Հյուսիսափայլը հարյուրներով ունի այս տեսակ զերմանախոսություններ, խոստովանում ենք. և ոչ միայն այսքան, այլև հայտնում ենք, որ բնավ չենք ցանկանում այն տեսակ սքանչելի հայկաբանության, որի մի քանի օրինակը ցույց տվինք, որովհետև Ճշմարիտը խոսելով. մենք այդ հայկաբանության վրա նայում ենք— ինչ ևք կարծում,— ոչ ավելի և ոչ պակաս, որպես բարելաբանության վրա, եթե միայն նեղրելի է ex uso in abuso գործ դնել այս բառը:

Մենք չենք ուզում կողմնապահ լինել նաև դեպի մեզ. այս պատճառով ինչպես առաջ, այնպես և այս գրության մեջ ասացինք և խոստովանեցանք, որ Հյուսիսափայլը լեզվի կողմից ուներ, ունի, և պիտի ունենա թերություններ: Մեր ընդդիմախոսքը իրենց վայրիվերո հայկաբանությունը, որի մեջ ոչ համակարգություն կա և ոչ ոճ, գործ են դրել միայն փողոցի խոսակցության մեջ. պարծանք չէ, եթե ժողովուրդը ավելի հասկացել է նոցա գռեհիկ լեզուն, որովհետև այն բոլոր բաները, որի վրա խոսել էին և խոսում էին դոքա, ծանոթ էին ժողովրդին, բայց խնդրում ենք փորձ փորձել գիտությունք ավանդել, մարդու վայելուչ կերպով խոսք բանալ և ոճով կարգով բան առաջացնել այդ իրենց սքանչելի լեզվով, կտեսնենք այն ժամանակ նոցա ուժը և կարողությունը: Լեզու հասկանալը բառ հասկանալով միայն չէ լինում. գաղափարների նորությունը և անծանոթությունը մեծ արգելք է ժողովրդին հասկանալ մի գիտական կամ կանոնավոր կերպով գրած բան. սորա ապացույցը տեսնում ենք մենք և կարող ենք ցույց տալ մեր ընդդիմախոսներին նաև նոցա անոճ և խեղճուկ գրության մեջ, երբ նոքա թարգմանում էին մի որևիսի և իցն ֆրանկի կամ ռուսի աշխատություն:

Հյուսիսափայլի միակ հանցանքը, եթե հանցանք էր այդ, այն էր որ նա կամենալով ուժ և զորություն դնել մայրենի նորահաս լեզվի մեջ, ղրել էր այդ լեզուն մի ճիշտ համակարգության տակ. այլև մանավանդ 1862 թվականում ժողովրդական լեզվի բազդասությունը սարել դրել էր

բուն հին լեզվի բազդատության տակ։ Ահա այն միակ և, կրկին ասում ենք, միակ սխալը Հյուսիսափայլի լեզվախոսության։ Սխալ ասում ենք նորա համար, որ նեղիկ սերնդի իրավունքը նույնպես անբռնաբարելի է, ինչպես հին հայոց իրավունքը։ Ով ինչ իրավունքով հին հայը խոսում էր այնպես և ոչ այլպես, նույն իրավունքով այժմյան հայը կարող է խոսել այսպես և ոչ այլպես։ Բանադատել նոր լեզուն և մինչև այն աստիճան ստրկացնել հին լեզվի ձևերին, որ ազգը դժվարությամբ հասկանա, անխորհուրդ մարդասիրություն է և մենք մեր կողմից չենք ընդունում այդ։ Մյուս կողմից հարգելով ժողովրդի իրավունքը, պաշտպանելով նոր լեզվի իրավունքը, այնուամենայնիվ հարկ կա մատենագրի վրա խնամով և կամաց կամաց ազնվացնել ամբոխի ձև ու ոճը, որչափ կարելի է միշտ զգուշանալով, որ տարապայման ազնվասիրությամբ բուն լեզուն անհասկանալի չդառնա ազգին, որովհետև այսպիսի դիպվածում բոլորովին ոչնչանում է լեզվի խորհուրդը։ Հյուսիսափայլը շատից դուրս հայկաբան էր, մանավանդ 1862-ին. այդ ատոհմանը ատելի չէ ժողովրդին. հազարամյա ավերանքը մեկ օրում չէ շինվում. մնա որ այդ ավերանք էլ չէ, այլ ժամանակի և պատմության ազդեցության տակ առաջ գնացած բնական աճելություն։

Եթե նոր լեզուն չունի հին լեզվի ոլորուն ոճերը, եթե չէ կարելի նորում միմյանց քամակից շարել ասիական փքուռույց հանդորության նույնանշան բառեր, եթե նոր լեզուն ավելի պարզ և անպարզ է իր ձևերով, այդ չէ նշանակում, թե նա ավերվել է, այլ մանավանդ թե առաջ է գնացել։ Բայց Հյուսիսափայլի 1862-ի նոր համակարգությունը (նոր ասում ենք տարբերելու համար 1858—1861 թվականների հրատարակվածից) գլխավորապես պատերազմում է նոր լեզվի այն ոճերի և ձևերի հետ, որ ընդհանրապես նույնում են որպես առհասիկ լեզվի ազդեցություն. օրինակ, շատ նախադրությանց վերջացած դրվիլը, հատկացուցչի նախադաս դրվիլը և այլն և այլն. բայց մենք կարծում ենք թե իրավունք չէ, անհնար է թերևս բռնաբարել բովանդակ ազգի արտաբանությունը, եթե նաև չինեականի տակ լիներ աճած։ Թե առհասիկ է, թե սատանայի, խնդիրը այդ չէ, այլ այն թե այսօր նաև հայի սեփականն է և հայը չնայելով շատ գավառական տարբեր բարբառներին, այնուամենայնիվ միևնույն արտաբանության տակ է խոսում. այդ արտաբանության ընդդեմ անկարելի է ուղղակի պատերազմ հայտնել. մեռած կենդանու մորթը առողջ կենդանու վրա չէ կպչում. չորացած ծառի ճյուղը կենդանի և թարմ ծառի վրա չէ ծաղկում, կենդանի մարդը մեռելի հետ չեն պատանքում. ամենը ունի իր իրավունքը և սուրբ է։

Որքան նեղանում ենք, որ ամեն թայլափոխ ատիպված ենք ծանոթաբանել, որպես և այստեղ, թե վերի խոսքերով չենք ուզում որ լեզուն մնա եղեսի վրա կամ աճե օտար արտաբանության տակ. չէ՛, այլ թե օրագրի և մատենագրի պարտականությունն է մշակել այդ լեզուն, համեմելով համարեն ազգի դործ դրած արտաբանությունը լեզվի. այս պատա-

վանդանի վրա կամաց կամաց մաքրել, մշակել և կոկել մայրենի նորաբոսուիյունը. մեր կարծիքով ուրիշ տեսակ անհնար է։ Անհնար է, որ, ինչպես ասացինք, տարապայման մաքրաբիրուիյամբ ստրկացնենք նորան հին լեզուին. անհնար է որ աննկարելի անհոգուիյամբ, այո՛, շատ անգամ և ապիտաբար առանց բնավ հայ լեզուն ուսած լինելու, անկարգ, անկանոն, ինչ որ մեր բերնին գալիս է, գրենք թղթի վրա, ինչպես մեր սրանչելի ընդդիմախոսանների գրուիյունքն են, որոնք, համարձակվում ենք կարծել, հազիվ թե իրենց բոլոր կյանքի մեջ մեկ վայրկյան մտածել էին նոր լեզուի օրենքների և պայմանների վրա, հազիվ թե կարող էին իրենք իրենց կամ ուրիշին հաշիվ ու համար տալ, թե ինչ հիմքի վրա գործ են դնում այս կամ այն ձևը կամ միևնույն գաղափարը տալու համար անխիտիր զանազան ձևեր, որ ոչ մի կանոնավոր լեզու չէ կարող տանել։ Չկա մեկ տող, չկա մեկ խոսք, որ Հյուսիսափայլի գրիչը գրած լիներին առանց շափելու և կշռելու. ուրիշ խնդիր է թե ինչպես էր այդ շափը, բայց և այնպես կարծում ենք որ շափը, գիտակցուիյան արդյունք լիներով, կարող է ուղղագործվել. եթե անհաջող էր, մինչդեռ առանց շափի, առանց մի որոշյալ համաձայնուիյան, այսպես ասած, կենդանական-բնական ազդեցուիյամբ գրված կամ մայրենի լեզուի գիտուիյան մեջ հաստատ լինելով անկարգ, անկանոն աղճատուիյունքը երբեք չեն կարող հասցնել նոր լեզուի մշակուիյունը տարաբնուիյունքը երբեք չեն կարող հասցնել նոր լեզուի մշակուիյունը դնալի նորա ցանկալի նպատակը։

Մեր ընդդիմախոսքը օրագիր հրատարակելով կամ գիրք թարգմանելով, երբեք ուշադիր չեն եղած լեզուի մշակուիյան, որպես թե այդ կամ հարկավոր չէր, կամ թե կատարյալ լինելով մշակուիյան կարոտ չէր։ Ասացինք որպես թե, որովհետև իրողապես այդ բոլորը նոցա վերջին ուսումնական մայրենի լեզուի մեջ խնդճուիյան արդյունք էր. հայտնի է թե տալուց առաջ պիտի ունենալ, իսկ այն գրիչը, որ տակավին իր լեզուի ուղղագրուիյունը չգիտե, որ անխտիր նշի առել է, ոայի տեղ րե և այլն գործ է ածում, այդպիսի պարոնից ինչ պահանջես։ Թող չկարծեն թե մենք չենք ուզում կամ ծուռ աչքով նայում ենք նոցա գրքին կամ օրագրին, քա՛վ. Մովսիսի հետ ենք ասում, ո՛ տայր ինձ զամենայն Իսրայէլ ի մարգարէս, բայց մարգարեք լինին մարգարեի նման. Բահագի մարգարեն-երի եղեռն էլ կիսոնի հեղեղատում կատարեց։

Եթե Հյուսիսափայլը չէ կարողացել մայրենի լեզուի մշակուիյունը հասցնել իր մոտավորապես կատարելուիյան ասպիճանին, գոնե նա միշտ աշխատանք է այդ խորհրդով։ Եվ ոչ ոք չէ կարող ասել, թե բոլորովին կորած է նորա աշխատուիյունը։ Հյուսիսափայլի գրիչը Հյուսիսափայլի առաջին անգամ երևցած օրից ուշ գնելով մայրենի նորաբոսուիյան, միշտ շափի ու կշռի տակ առաջ տանելով սորան, գիտցել են, այո՛, շինել և կշռել ուրիշների գլխով առաջացած նորաբոսուիյունն էլ և այս վերջինի քննուիյունը վաղուց ցույց է տվել մեզ, թե Հյուսիսափայլի նորաբոսուիյունը ոչ միայն չէր կորած համիտենական անգունդի մեջ, այլ

նաև ազդեցություն էր անում մինչև անգամ այն մարդոց լեզվի վրա, որ դրիչ էին առնում միմիայն մեզ հայհոյելու։

Մենք նույն այդ հայհոյությանց մեջ, խեղճ հեղինակներից գաղտնի, նկատ մատած մեր ձևերը և ոճերը տեսնում էինք միշտ և այդ բանը առիթում էր մեզ ավելի ողորմել այդ տեսակ հեղինակներին, որոնք մինչև անգամ մեզ հայհոյելու համար կարտա էին Հյուսիսափայլի լեզվին։ Մենք ծողում ենք այն անհաջող կապկությունները, որ միքանի անարվեստ խեղճեր Հյուսիսափայլի այս կամ այն հատվածի բովանդակության նմանելու համար գործ դրին։ Տակավին երևում են [մի]քանի պարբերականք, որ Հյուսիսափայլում երևան եկած մակդիրքը պահում են. ուրա՞խ ենք, նմին այդ կերպով ևս օգուտ է բերում նոցա մեր բամբասված Հյուսիսափայլը։

Հյուսիսափայլի հրատարակությունը, թե լեզվի և թե բովանդակության կողմից դիտակցության արդյունք լինելով, երբեք մեր խղճը չէ տանջել մեզ, երբեք չենք ցաված, երբ ցախավելով հավաքած իմաստակները հետ հարցից Հյուսիսափայլը կրիտիքելու* — քննադատելու էին դուրս գալիս և աջ ու ձախ բղխում։ Մեր ամենամեծ ցանկությունը այն է միայն, որ մյուս օրագիրքը, հեղինակքը կամ թարգմանիչքը նույնպես դիտակից հաշվեմտությամբ աշխատեին նոր լեզվի վրա և ոչ լոկ բնական ազդեցությամբ, այն ժամանակ, ոչ միայն ժամանակ կորցնելու չէին անխորհուրդ դևզեկությամբ, այլև օգտակար կլինեին նոցա աշխատությունը լեզվի մշակության. մինչև այժմ նորա լեզու չեն մշակած և նոր լեզուն ոչ համ է տևնել նոցանից և ոչ հոտ։

Եվ այս է մանավանդ պատճառը, որ Հյուսիսափայլը լեզվի կողմից այնքան բամբասանքների տակ էր ընկնում, որովհետև նորա մեջ կար համակարգություն, իսկ մեր ընդդիմախոսքը սիրող չէին համակարգության, բայց մեր կարծիքը և սրտի հաստատ վկայությունը այսպես է, թե մի օրագիր երևելով մեր ազգի մեջ, պարտական է ոչ թե ձախ ու ծուռ թարգմանություն, դարերով հետ մնացած գաղափարք և խամրած ֆանտազիկություն տալ նորան, այլ մշակել նորա լեզուն, գնալ ժամանակի հետ, փարատել կույր և մարդատյաց ֆանատիկության խավարը և դրա տեղ քարոզել, սեր, խղճի ազատություն, մարդկային բանական արժանավորություն։

Ինչպես այժմ, առաջ էլ այս սկզբունքի տեր էինք, ուստի և զարմանք չէ, այլ շատ բնական, որ Հյուսիսափայլի մեջ երևում էին ևվրոպական այլ և այլ լեզուներից թարգմանած աշխատություններ, որոնց մի լավ բաժինը հատնում էր ընտիր վեպերին։ Բայց ինչպես առաջ էլ ասացինք, մեր ողորմելիքը ատում էին թե այդ վեպերը մեր ազգին վնասաբերություն չունին։ Մենք հավատացած ենք, որ ընտիր մի գրվածք, ազատ

* Այս իրենց բառն է, և վերտին իրենց հետ տալու համար միայն գործ դրինք։ ապա թե [ոչ] հայախոսության մեջ այսպիսի բայ տեղի չունի։

հայեցվածներով, ընտիր ճաշակով, գեղեցիկ բարոյականությամբ, ինչ լեզվից և թարգմանված լինի, այնուամենայնիվ մեծ և մեծ խորհուրդ ունի նորոգելու և կենդանացնելու թե ճաշակը, թե քաղաքային կամ ընկերական հարաբերությունքը մի ազգի, որ միջնադարյան մշուշով պատած կամ ոչինչ չէ կարդում կամ թե ժողովածու և Պղնձե հաղարի պատմություններ: Լավ որ այս վերջին ժամանակներում հայերը երկու օրինավոր վիպասանություն ստացան — Վերք Հայաստանի և Սոս և Վարդիթեր, բայց դոքա, սրտանց խոստովանելով նոցա արժանավորությունը, ասում ենք, ոչ միայն ինչ որ մարդկության հարկավոր էր բոլորը չասացին չպրծան, այլ երկուքն էլ մասնավոր խորհրդով գրված լինելով բնավ իսկ ընդհանուր հասկացողությանց կամ ընկերական հարաբերությանց չմոտեցան:

Այս օրվա օրս Եվրոպայի մեջ գրեթե թագավորյալ մատենագրությունը վիպագրություն է. ինչ օրագիր, ինչ լրագիր կամ ինչ թերթ ասես, որ առանց վեպի օր անցնե, թողում ենք այն բազմահատոր վիպասանությունքը զանազան հեղինակներէ և զանազան ազգերէ: Ամեն մի ընտիր վաստակ, ինչ լեզվով ևս լինի գրված, այնուամենայնիվ միշտ օգտակար է բոլոր մարդկության. մանավանդ եթե նեղսիրտ ազգական հասկացողությունքը հանդես չունենան այդպիսիների մեջ, մանավանդ եթե աշխատության խորհուրդը է գեղեցիկ մի պատմություն կարդացողների ճաշակը և հասկացողությունքը ազնվացնել:

ԱՍՎՈՒՄ Է ԼԻՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մի մարդ ուներ մի կին, որ միշտ կռվում էր դրացիների հետ. տեսավ մարդը՝ որ հնար չկա այս դալմաղալիցն ազատվելու՝ մի ուրիշ առուն շինեց, և այնտեղ բնակվում էր:

Արդեն շատերին հայտնի կլինի, որ մենք Հշմարիտ և անխարդախ սրտով սիրելով մեր ազգը, ցույց ավելցինք որ ազգային մասնաւորութիւնը պիտոյ է լինիր նորա և կենդանի լեզուով, որ կարողանար կամուրջ բանալ ազգի բանակաւորութեան և գիտութեան գազափարների մէջ: Բայց խոստովանում ենք ցավելով, որ մեր կողմից Հշմարտութեան դրոշակը բարձրացնելը շարժառիթ եղավ մեր վերա քանի մի կամակոր մարդկերից բամբասանք Հավաքելու. սորանով երևում է, որ այդ պարոններդ, դեռևս յուրյանց ազնտ և անտեղի գաղտագրութեանը ատրիացած, չեն կարողացել Հասկանալ այն հիանալի խորհուրդը, որ ծածկած կա այս գործի մէջ: Այդ պարոններդ վշում են յուրյանց փողը՝ թե կա չկա հին լեզուն էր, որ պիտոյ է յուսաւորութեան սերմանքը Հայոց ազգի անգաստանի մէջ ցանելու գործի գառնար. պատճառ, որ մշակված լեզու էր: Այս ազնտ և միանգամայն խավար գաղտագրութիւնը այնքան մի ծիծաղելի բան էր, որ նմին մի եվրոպացի բանասէր մարդ Հանդիպելր այն գրվածին, որ այս մոլորական կարծիքն հերքում էր, պիտոյ է չափեր և կշռեր ազգի խորին ազիտութեան վիճակը, մինչև որ նորա անունով միայն ուսումնականներին մի պարզ և Հայտնի Հշմարտութիւն ապացուցանելու համար պիտոյ էին այդքան խոսք, վկայութիւնք և օրինակներ:

Շատ և շատ զարմանալի է, որ այդ Հնամոլ պարոնները խոսելու ժամանակին ինչ ազամազ, այնուամենայնիվ նոր լեզվով Հայտնում են յուրյանց միտքը: Սորանով իրանք իրանց ապացուցանում են, որ նոր լեզուն ուներ կյանք և գործածութեան ընկերութեան մէջ: Եթե պատահում էր Հարցանել դոցա, թե ինչո՞ւ համար հին լեզվով չեն խոսում ընդհանրապես, այլ նոր լեզվով, կչաներ պատասխան, թե սովորական լեզուն ազգի բնականում այս է, և նմին կամենային հին լեզվով խոսել, այդ անհասկանալի էր ժողովրդին: Այս պատասխանը արդար էր և Հշմարիտ,

բայց արի քննենք, Բն ինչ է պատճառը, որ այդ պատվելի պարոնները ինչ ժամանակ կամենում էին յուրյանց միտքը գրի միջնորդությունով հայտնել, խնդուն այն ժամ հասաջ սովորական խոստովանյալ լեզուն կպղծվեր և անհասկանալի նոր ժողովրդին հին լեզուն կգար հանդես, մինչև որ կամենում էին մինչև հետին շունչը պատերազմիլ և ճշմարտությունը չխոստովանել: Սորա պատճառը մեզ քաջ հայտնի է և այդ պարոնները իրանք ևս գիտեին, որ գիտենք, բայց որովհետև մինչև այժմ հանդես չէինք բերած, այժմ պիտու էր հանդեսով ցույց տալ, որ հասատատվելին յուրյանց կարծիքի միջում, Բն յուրյանց կամակորության ապրյուրը մեզ քաջ հայտնի է:

Այդ պարոնները անուսումն մնալով և ամենևին ծանոթություն չունենալով եվրոպական բազմաճյուղ լուսավորության մասին, յուրյանց անունը մի անուսումն ազգի մեջ՝ ինչպես հայոցն է՝ հանդես հանելու համար խոսկել են յուրյանց ուղեղի մեջ քանի մի հին լեզվի մնոյալ բառեր և այս դարձել էր նոցա համար մի այուն (Բնև շատ խախուտ), որից Բիկն առլով կամենում են յուրյանց կանգնելը շինեն հաստատուն և անդրդվական. այժմ այդ պարոնները Բրե խոստովանեին ճշմարտությունը, և համաձայնեին, որ հին լեզուն մնալով լինելով՝ ազգի լուսավորության հանապարհ չէր, այլ պիտու էր նոր լեզվով գործ կատարել, անտարակույս այն այուն ցած կգլորվեր, յուրյանց կանգնելը այուն նման կլիներ գետնի երեսին Բավալ գալ: Ահա այս անձնապահության էր, որ հարկադրում էր նոցա պարբերապ քաշել ճշմարտության չրի ընթացքի հանդեսը, ապա Բն ոչ՝ ամենևին հակառակելու տեղիք չկար այն բանի միջում, որ պիտու էր ազգի հետ մտածել և խոսել այն լեզվով, որ նորան հասկանալի էր: Մենք երկար ժամանակ փորձելով ճանաչեցինք այդ հնամոլների ցանկությունը, որ կամենում են Բն մենք նորանց արհամարհենք: Ահա սորանով հասած Բոզ ճանաչեն յուրյանց այդ ցանկությունը, և Բրե ազգյուրը պիղծ էր մեր աչքումը, ո՞րպափ ևս այն ջուրը, որ նորանից բխում էր. ուրեմն նույն արհամարհանքը ամենայն բոլոր հասանում է և պիտու է հասանի և դնդի նոցա անհիմն բամբասանքը և երևեյական պատասխանը: Իսկ մենք անխարոպես սրտով սիրելով ազգը, երբեք հետ չենք կենա՝ որչափ ամենակալ սերը կշնորհե մեզ կարողություն, նոր լեզվով ավանդել ազգին ինչ որ վայելում էին և հարմար էին ժամանակի հարկադրություններին:

Առաջին անգամ պատշաճ համարեցանք փորր ի շատե հանդես հանել Հայոց մանուկների առաջև Հունասատանի հին կրոնագիտությունը, նևլ

ճշտած էին չափով և քանակով կրոնի վերաբերյալները. ընդհակառակն մենք տեսանում ենք, որ մեր անպիտան և խավար ազգի կրոն լցված է լինում ազատ և խավարային խորհուրդներով ևս և խոկված ավելորդապաշտություններով։ Կրոնի ներգործությունը ազգի վերա շատ անչափելի մեծ է, համարյա՛ թե ամբողջ ազգի հոգին կրթվում է և դաստիարակվում է նորա կրոնի ուսման առաջնորդությամբը, բայց կրոնի վարդապետությունը տարածելու մասին ժողովրդի մեջ անպատճառ պիտու էր ազգային մատենագրություն. սա էր առաջին և վերջին հնարը, որ կարող էր տնկել յուրաքանչյուր մարդի մեջ կրոնի արժանավորությունը և հատկությունը։ Մենք տեսնում ենք գոնե Հունաստանի կրոնի մեջ, որ նա ինչ ժամանակ յուր ազգային ավանդություններով առացած կրոնը ուներ, շատ անծուծ և ազնիվ բաներ էին. այս ազնվությունը գնդեցկացավ և միանգամայն նոր կերպ առացավ, ինչ ժամանակ հույները փոխ առին կրոնական գիտություններ Եգիպտոսից և Փյունիկիայից. մինչև Տրոյացվոց պատերազմը կամ 300 տարի նորանից հետո մինչև Հոմերոսի ժամանակը կրոնը բավական միջակ ճանապարհով հառաջ էր խաղում, իսկ երբ ընկավ սա Հոմերոսի բանաստեղծական ճարտար մտքերի տակ, այն ժամանակ հոգևորվեցավ նոր ի նորո խմաստասիրական գաղափարներով։ Սրանում կարելի էր տեսանել վարդապետարան բարոյականության, ահա՛ թե մատենագրությունը ինչ ներգործություն ունի կրոնի վերա։ Ուրեմն կրոնի ուսումը պիտու էր սերմանել ազգի մեջ մատենագրության միջնորդությունով և այս երկուսը ձեռքն ձեռք բռնած պիտու է մշակեին ազգի բարեկանությունը։ Բայց այն մատենագրությունը, որ անհատկանալի էր ժողովրդին՝ ոչինչ մի բան էր. սա այն մատենագրությունը չէ, որ թևակից էր կրոնի և այլ լուսավորությանց ազգի մեջ տարածվելուն, սա մեոյալ և անպիտանացյալ մի լեզու է, բոլորովին անհատկանալի նոր և կենդանի ազգին։ Մատենագրությունը ամենայն ազգերի մեջ միշտ համեմատվել է նոցա դրությանը և նոցա յուրաքանչյուր դարու լեզվի խոսվածքին, այո՛, միայն հայոց խելոք պարոններն են, որ XIX դարու մարդիրը կամենում են լուսավորել V դարու լեզվով։ Ուրեմն մատենագրությունն ասելով պիտու էր իմանալ այն մարդու նոր հայախոսությունը, որ ծանոթ էր և հասկանալի համարյա թե մեր ամբողջ ազգին ուր և գտանվին տեղք, տեղ թե ոչ գուր էր ամենայն ջանք և մտածություն ազգի լուսավորության մասին։

Եթե հին լեզվով մատենագրությունը, անհատկանալի լինելով միանգամայն նոր ժողովրդին, կարող էր կամուրջ լինել լուսավորության, տեղ ուրեմն մեր ժողովուրդը շատ ժամանակ է, որ լուսավորված է և մենք սխալ կարծիքի մեջ եմք, պատճառ, որ եվրոպացի լեզուներով, որ հայոց հին լեզվի նման անհատկանալի էր մեր ժողովրդին, կան ավանդված այնքան տեսություններ և նոր նոր գաղափարներ, որ հին լեզուն կարծեմ դեռ նոցա սովերի մին քառորդն ևս չունի յուր մեջ. ուրեմն ամենայն հայ այն դրությը առնելով և յուր տանը պահելով (ինչպես պիտու է

անն հին լեզվով հայ մատյանները) կարող էր լուսավորվիլ։ Այսպիսի խելացնոր պատասխան այն հնամոլ մարդերի դլխոմը մեք չենք գովիլ, այլ խնամատուն և բանագետ մարդերի և ամբողջ Եվրոպայի համաձայն ասում ենք, թե շատ հեշտ է գերնզմանից մեռելները հանել կենդանացնել, քան այդ ժանդոտյալ լեզվով նոր ժողովուրդ լուսավորել։ Խնդրում էինք՝ նրե միայն կպատասխաններն մեզ այդ պարոնները. ո՞րտեղ է տեսնված, որ մի ատած մարդ ջերմացնելու համար նորան դնեին ատուցի մեջ. այն ոդորմելին ի՞նչ ջերմություն կարող է ունենալ ատուցից։

Հայոց ոդորմելի ազգը երկար ժամանակ անուսում մնալով, բոլորովին ատած մարդու է նմանում այժմուս, և հին լեզուն 1300 տարվա ցրտերով արդեն ատուց է դարձել, պատճառ, որ նախ և հառաջ կյանք և գործադրություն չունի ընկերության մեջ. երկրորդ յուր մեջ չունի այն ջերմացուցիչ և անունդ տվող հյութը, որ նրե դներ այն ատուցյալ մարդին, նորան կենդանություն հաղորդեր։ Մեք այսքան ժամանակ քննելով այդ լեզվի ուղը և ծուծը, ոչինչ չգտանք, բացի քանի մի պատմական տեղեկություններից, երանի՜ նրե և այս բաները գրված լիներին ինչպես տեսանում ենք օտար լեզուների մեջ։

Նոր լեզվի միջում կա հիանալի խորհուրդ, երանի՜ նրե հնար լիներ ասել այդ հնամոլ պարոններին. հին լեզվի միջում ևս կա խորհուրդ, բայց ատել այդ հնամոլ պարոններին. հին լեզվի միջում ևս կա խորհուրդ, բայց կորստական և շատ տարբեր այն խորհրդից և միանգամայն հակառակ՝ ինչ որ կա նոր լեզվի մեջ։ Այդ պատվելի պարոնները նրե փորը ի շատ ուղիղ տեսություն ատացած լիներին, կտեսանեին այդ խորհուրդները, բայց ափսո՛ս որ միմիայն հայոց հին և մեռյալ լեզուն ուսանելով մնացել են դեպի ուրիշ գաղափարները անդգա։ Մին օրինակ. դու չենք տեսել, որ հացը՝ րնե միայն նյութական բան էր, մի մարդ ունենալով երեսուն տեսակ, մինն հին, քանի մի շաբաթվան, արդեն քարացած, իսկ մյուսը բարմ և տաք, բայց ծողներ այն բարմ և նոր եփած հացը, որ ավելի աննդարար էր և ձեռքը պարզեր դեպի քարացած հացը, որ հառաջ քան ատամոքսը գնալը բոլոր ատամները ևս կփշրեր։ Հայոց հին լեզուն հնացած հաց է արդեն, և 1300 տարի է որ թխված է, իսկ նոր լեզուն ամեն օր նիվում է, ջերմ է և աննդարար, ուստի սորանով շատ հեշտ կլինայն օր նիվում է, ջերմ է և աննդարար, ուստի սորանով շատ հեշտ կլինենք կերակրել հայոց ազգի սոված հոգին և սա ավելի հյութ և արյուն կդառնար նորա մեջ, քան րնե այն չորացածը և քարացածը, որ չունի յուր մեջ այն կենդանական մասները։ Ով որ ականջ ունի լսելու թող լսե, պատճառ, որ ասվում է լսելու համար։

Մինչև հայոց ազգի հեղինակքը յուրյանց նպատակը չդնեն ազգի օգուտը, մինչև նորա չմոռանան անապարծությունը և հին հեղինակի անունով փառավորվիլը, մինչև նոցա մատենագրությունը չլինի նոր լեզվով, սուտ է և զուր ամենայն ջանք և վաստակ ազգը լուսավորելու։ Հին լեզվով ոչինչ չի հառաջանա։ Րնե հառաջացող էր, մինչև հիմա կհասներ. կարծեմ 200 տարի ավելի է, որ Վենետիկում հազարավոր ռաջանար։

դրքեր տպվեցան, բայց ազգը միայն արտաքին աչքով տեսավ. այսպես կլինի և 200 տարի հետո և 1000 տարի հետո, և ինչպես մինչև այժմ, այնպես և միշտ հայոց մանուկը կլինի օտարի հացի մուրացկան, ամենայն օր դռնեդուռ ման դալով կհաղեցուցանեն սորանից և նորանից յուր իմացածքան առամոքը և այս կերպով անունդ առանալով՝ նորա ազգությունն ևս կլինի մին խայտառակության բան, անարժան ծառ...

Ամենայն մարդ պիտո է յուր անհատական կերակուրն ունենա, յուր անհատական կենդանություն ունենա: Ինձ ի՞նչ օգուտ է, եթե ես տեսանում էի մի հարուստ մարդ և մտանկից չէի նորա հարստությանը: Այսպես, ի՞նչ օգուտ է օտարի առողջություն և կենդանություն, եթե ես հիվանդ այսօր կամ վաղը ապատում եմ մահին: Հայոց ազգի անբախտ զավակները մինչև այսօր օտարի հացով են յուրյանց առամոքը հաղեցուցանում և օտարի կենդանությունով ապրում են, և սորանով հետզհետե օտարանում են, այնուամենայնիվ նորա չեն մեղավոր. ժամանակի հարկավորությունքը անխնա պահանջում են, նա յուր անհատները չունենալով, օտարի հացի և կյանքի միջնորդություններով գործ է կատարում:

Հայոց ազգի մեծատունքը առավել մեր կարծիքով պիտո է նախանձավոր լինին ազգի լուսավորության և պատշաճավոր խրախուսյա և քաջալերության տային այն մարդկերին, որոնք անդադար աշխատում են ինչպես հարմար էր ժամանակի հարկավորությանքը. ապա եթե այս չլինի, հեղինակը աշխատելով տիվ և գիշեր և վատահելով, չունի կարողություն յուր սղքատ բանակից բաշխել ազգի մանուկներին պարգև. հեղինակը յուր աշխատությամբը, իսկ ազգի մեծատունքը յուրյանց տուրքովը պիտո է գործ կատարեն, մինչ առանց մյուսին ոչինչ չեն կարող առնել, և եթե այդպիսի պատշաճավոր միաբանություններ չկային, եթե ամենի նպատակը ազգի լուսավորությունը չէր ուղիղ ճանապարհով, եթե հին ընդուն կենդանի աշխարհքիցը տարագիր չէր, ա՛ռա է ամենայն լուսավորություն, գո՛ւր շան և անօգուտ վաստակ:

Մենք դոնե լսում ենք բանագետ մարդկերի բնորանից, որոնք փոքր առած լինելով կարող էին փոքրածներին մեջ նպաստներին օգնական գտանվիլ, թե ո՛չինչ ազգ չի կորչի, եթե նորա ընդուն պատշաճավոր կերպով ճոխանա, արմատանա և հաստատվի ազգի հոգու և սրտի մեջ: Այսպես ոչինչ ազգ կարող չէ յուր գոյությունը և կյանքը հարատևել, կորսուանելով յուր պատշաճավոր մատնադրությունը և ընդուն: Ազգը ինքնատիպյան ազգ չէ, եթե չունի ընդուն: Մենք տեսանում ենք մարդուս բազկացություն երկու իրից, առանց որոց նա չէր մարդ, այսինքն հոգին և մարմինն երկուսը լծորդյալ լինելով, կատուցանում են այն արարածների մեջ շքեղագեղ և վսեմ առնջվածքը, որ միայն յուր արարչի պատկերն էր: Այսպես, ազգությունը ունի յուր հոգին, և այս հոգին ընդուն է: Առանց այս ընդվին չկա ազգ. սուտ բան է և առասպել առակ: Ոչինչ բան չէ կարող բնության մեջ լինել կենդանի, եթե չկային նորանում հոգի, այս հոգին ընդուն էր: Բայց հայոց ազգը յուր ընդուն թողել է անմշակ և նորա մասնագիր-

քը և հնդինակքը մինչև այսօր ասիացի դաստիարակութիւնով սնունդ առած լինելով, ավելի նախընտիր՝ են համարել, որ յունքանք փառավոր մարդերի կարգումը երևեին հին լեզվով գրողների միջին, քան թե նոցա գրածիցը ազգի անբախտ զավակները օգուտ առանային, թեև ցավելով հարկ է խոստովանել՝ ի՞նչ էր դոցա գրածը բաղդատելով եվրոպական բազմաճյուղ և բազմօրինակ լուսավորութիւնն հետ. քանի մի արեղայական մաքեր կամ ոտանավորներ, [որոնք] անօգուտ էին ազգին: Թող այդ պարոններն իմանան, որ հայոց ազգը հինգ դարուցը մինչև հիմա յուր մատենագրութիւնն մեջ մնացել է միշտ ոտանավոր և դորանից է, որ հասել է այս ողորմելի վիճակին: Այժմ հարկավոր էր ձիավորվիլ. ոտանավորով ոչինչ չի հասաջանա: Երանի՜ թե դորա գրողներն կենդանի և առողջ ականջ ունենային այս խոսքերը լսելու, որ ասվում է լսվելու համար: Պատճառ, ազգը լուսավորելու համար հարկավոր չէր ոտանավորներ և ոչ խրթին և հին հայախոսուվթյուն, որ XIX դարու ազգի մարդերի միմիայն պարծանքն էր. այլ պիտո է տալ ազգի մանուկներին և ընդհանրապես բովանդակ ազգին այնպիսի ուղիղ գաղափարներ գիտութիւնների վերա, որպիսի տեսողութիւնով լուսավոր էին Եվրոպայի բարեբախտ բնակիչքը: Միաբը, բանակաութիւնը տեսութենով և կենդանի գաղափարներով կլուսավորվի, այս էր նորա ներքին օգուտը, իսկ այդ մեքենապաշտութիւնքը, որ հասաջանում էին ազգի մարդերի մեջ, կապիկի նման աշխատ լինելով նմանեցնել յուրյանց գրածը նիշերին կամ հորենացիին. այդ մի այնպիսի խելագարութիւն էր, որ երբ յուրյանցից և հարցանեիր, չուներ պատասխան. թող որ մինչև հիմա իսկ այն հնդինակների գրածը ոչինչ արդյունք չունեին հասաջացուցած ազգի մեջ: Այդպիսի ձգտողութիւնքը ոչ այլ ինչ էին, բայց երբ մոլեռանդ թռիչք երևակայութեան, որ գիտեն ոչնչից գոյացնել հոյակապ ամբարտակներ մինչ իրողապես հորի միջում էր իրքը: Թող հայոց մանուկը սովորի յուր մայրենի լեզվով ազատական գիտութիւնները, թող նա այն աշխատութիւնը ինչ որ գործ է գնում հին և մեռյալ լեզուն սովորելու համար, գործ ածե հարկավոր գաղափարներ ստանալու մասին: Չէ պիտո նորա հինգ դարու հայախոսութիւնը, այդ նորան հաց ու ջուր չի տա, նոցա հարկավոր է գիտութիւնը, որը կարող է ստանալ նոր լեզվի միջնորդութիւնով, որ կյանք և կիրառութիւն ունենալով ընկերութեան մեջ, այլև ուղ և ծուծ ունենալով՝ կարող էր հյութ և արյուն դառնալ և սնունդ տալ հայոց ոտքար զավակներին:

Այս բաները խոսելուց հետո երբ պատահելու լինի մեզ տեսանել այդ հնամոլ պարոնների կողմից անդարձ կամակորութիւն, ուրիշ ոչ այլ ինչ կարող ենք եզրափակել, այլ այս միայն, որ այդ մարդիկը մեռուցանելով յուրյանց խիղճը, կամենում են պատճառ դառնալ, որ հայոց մանուկների տարաբախտ վիճակը, որ սկսած 1300 տարից տեսում է մինչև այսօր, շարունակվի հազարավոր տարիներ և սորանից հետո, սորա համար, որ միայն այս պարոնները յուրյանց աննշան կյանքի մեջ յուրյանց

անունը հին և մեռյալ լեզվի արձանի վերա կարողանան դրոշմել։ Բնև այս ողորմելիքը չգիտեն թե Ուռանոսի փոքր որդին Դիտաննեը նրդում է կերած ոչնչացնել այսպիսի անպիտան որդիները, բայց[1] կ ա ր ո ղ է այս որդիքը փրկելու ջանք դնելով նախ և առաջ այդպիսի հիշատակաց արձանները կատ կուլ տալու, բայի սորանից հույս ունինք, որ ազգը ինքը ևս այժմ, ինչպես մինչև այսօր, բնական ուղիղ դատողութենով բաց է թողել մեռածը և պահել է յուր մեջ կենդանի լեզուն, թե և անուսումն լինելով աղճատել է և խանգարել, այսուամենայնիվ շատ հավանական է, որ այսուհետև ևս միշտ աշխատություն գործ դնի գտանել և ընթերնուլ այն մատյանները, որ գրվում էին նոր հայախոսութենով, այլև ջանք անի փորր առ փորր մարրել յուր խոսվածքը, դուրս ձգելով այն բառերը, որոնք օտար ազգերից մտած էին, այսպես և գավառական մասնիկները կամ կոշտ ու կոպիտ ոճերը, որքան և որշափ կարելի էր։

Մենք որշափ կարողացել ենք քննել և ճանաչել, հասկացել ենք, որ մարդուս լեզուն այն ժամանակ կարող է խոսել, ինչ ժամանակ միտքը արդեն խոսելի բանը դասավորում է, պատճառ որ խոսքը, որ ձայնավորված լսվում էր օդի մեջ մեր բերանից, մեր իսկ մտքի ծնունդն էր։ Լեզվի պաշտոնը այստեղ այս էր, որ մեր մտքով հասկացածը նա լսելի շինե օդի միջնորդութենով ուրիշներին։ Շատ զարմանալի է, որ այդ պատոնները, որ հին լեզվի պոչը բռնած քշում են յուրյանց էշերը հառաջ, չեն կարողացել մինչև հիմա ճանաչել, թե լեզուն ևթե չունի յուր մեջ այն աննգարար ուղը և ծուծը, ևթե նա մշակված չէ ինչպես պահանջում էր հարկը, ոչ այլ ինչ է, բայց ևթե մին թարգման, որ մտքի ծնուցածը դուրս է հաղորդում ուրիշներին։ Տարակույս չկա հին լեզվի մեջ ուղ և ծուծ և անունդ չլինելուն, արդեն ցույց տվել ենք, որ նա չունի այդ բաները, մենք տեսանում ենք նորան միմիայն իբրև պահեստան հայոց հինգ դարու լեզվախոսության և քանի մի անցքերի։ Ուրեմն ևթե և շատ քաջ տվյալներ հայոց մանուկը այդ լեզուն, այսուամենայնիվ ոգետ էր և ոչի՛նչ չգիտեր. միմիայն մի չոր լեզու գիտենալը փոր չի կշտացնի, ևթե նորա հետ կապակից չէին այն հագեցուցիչ և աննդարար հյութերը, որ կարող էին արյուն դառնալ և հատատանել սիրտը։ Բացի սորանից, հայոց մանուկի հանդեսը կամ ասպարեզը ո՞րն էր արդյոք, յուր հին լեզուն հանդես հանելու ոտանավոր գրելն, ևթե քանի մի հատուկտոր տղայական ճառեր, և ո՞րոնք էին այդ հանդեսը բոլորողը, նա, որ հանդիսում երևում էր յուր հին լեզվովը, արդյոք կարո՞ղ էր յուր համար դասավոր դառնել հասարակության մեջ, արդյոք նորա գրածը հասկանալի՞ էր ժողովրդին. այն ձայները, ինչ որ նա հանում էր, արդյոք լսողների ուղեղին կհասնե՞ր իբրև նշանակական ձայներ, թե միայն ականջի թմբուկի արձագանքը կլսեր այն հասարակ մարդը՝ առանց ոչինչ հասկանալու։ Ի՞նչպես կարելի է խոսել մի մարդի հետ այնպիսի մի լեզվով, որ նա չէր ուսել, որ նրան անծանոթ էր։ Այսքան պարզ և լուսապայծառ ճշմարտությունը չեն կարողանում այդ պարոնները դեռ իսկակ աչքով անտանել, ուստի և ասում

են, որ պիտու է մարդ այնպիսի լեզվով խոսի, որ դիմացի մարդը նորան չհասկանա, և որչափ խրթին և մոլիը կխոսեր, այնչափ արժանավոր և քանքարավոր էր հեղինակը։ Սորա բնության կանոնին չհավանելով, որ դրել է մարդուս մեջ լեզու և բանականություն սրտի զգացմունքը բնկնրին հայտնելու մասին, յուրյանցից կանոն են հաստատել՝ թե պիտու էր խոսել այնպես, որ դժվար լիներ հասկանալ. ուրեմն նրե դժվար հասկանալի խոսելը գովելի մի բան էր, բնավ չխոսելը ո՞րչափ կաւ։ Սոցա մոտ այսքան իրավունք ունի ճշմարտությունը. կամավ և հոժարությենով միմիայն յուրյանց ինքածը չկամենալով լիզել, հանձներն են առնում համբանալ և ճշմարտությունը չխոստովանել։

Քանի մի խոսք ևս պատշաճ համարում եմ ասել այն մարդկրին, որոնք այնուամենայնիվ յուրյանց ոգրալի ոգիտությենովը համարձակվում են բնրան առնուլ գերապատիվ Մաշփաննոս վարդապետի գրվածքը, թե նորա լեզուն ոչինչ քաղաքի սեփական չէ, թե գրոց բառերով խառնըված է, և թե ազգը չի հասկանա։

Մենք խոսելով մի աշխարհարար և նորախոս լեզվի վերա, երբեք չենք մտածել, որ այդ լինի մի քաղաքի մասնավոր կամ մի երկրի հատկացյալ բարբառ, պատճառ, որ մենք նպատակին առաջին արգելքը կլիներ այդ. այլ միշտ իմացել ենք այն հատակ հայախոսությունը, որ կրնալի էր հասկացվել և ամենայն տեղ գտանվածի հայերից, թե նորա ծանոթ էին միայն մայրենի լեզվին, այսինքն թե նոր լեզուն չէին կորուսանել ինչպես Տաճկաստանցիները կամ Ռուսաստանցիները կան շատ օրինակներ։ Այն գավառական լեզուներն մեզ ամենեին անպիտան է, պատճառ, որ այն կոշտ ու կոպիտ լեզվովը ոչինչ մարդավայել ազնիվ միտք, մանավանդ ուսումնական խնդիրների վերա, չէ կարելի բացահայտել, իսկ թե ինչո՞ւ համար խառն եղել է գերապատիվ Նազարյանցի խոսվածքը գրոց լեզվի հետ, պատճառը շատ հեշտ էր ճանաչել, որ նոր լեզուն չուներ այնպիսի բառեր, որ կարողանային հայտարար լինել այն մաքրրին, ինչ որ հեղինակը կամենում էր ասել և գրել և սորա պատճառն այս էր, որ յուրաքանչյուր այդպիսի բառի փոխանակ հայոց հասարակ մարդը գործ է ածում զանազան օտար ազգերի բառեր կամ ռուսաց և կամ տաճկաց։ Ուստի բնական ուղիղ դատողությենով, քան թե օտարի լեզվով հայտնել այն միտքը, նա գրել է հին լեզվի բառերով. այս բանը ակնմիշտ տեսանում ենք եվրոպացոց մեջ, մանավանդ գաղղիացվոց, որոնց բառերի շատը դեռ պահում է յուր մեջ բնական լատին ձայնը։ Լեզուն մի այնպիսի բան չէ, որ ով կամենա և երբ՝ ուզածին պես չինն կերպավորն դրան. հարկավոր է ժամանակ, շատ անգամ հարյուրավոր տարիներ չեն բոզուլ փոփոխության կենք, թող որ մի մարդ, իսկ թե կային աշխարհարար լեզվի մեջ այն բառերը, որոնց փոխանակ պատվելի Նազարյանցը գործ է դրել հին բառեր, թող այդ պարոննները իրանք գրեն ավելի մաքուր և հատակ և օրինակ լինին մեզ յուրյանց մաքուր հայախոսությենովը, այնպես որ թե գերապատիվ Նազարյանցի գրածը կարող

էր լինել 10000 մարդի անհատականալի, իրանցը թող 1000 մարդի լինի միայն, բայց չլինի այնպես ինչպես եղել է մինչև հիմա, որ շորս և կես միլիոն ժողովուրդից հանկացել են հենց հարյուր կամ հազար մարդ։

Ազգը երբեք չի կարող ուրանա գերապատիվ Նազարյանցի աշխատությունը և անխարդախ դնալի ինքը սերը. նա ուղիղ և պարզ մարդ կտեսանեն այս չնաշխարհիկ և իմաստուն հեղինակի քնքուշ սիրտը, թող և մեր սիրելի բարեկամ պարոններն ևս անհոգս մնան, որ նոցա փառասիրության և հեղինակի անուն ժառանգելու հիմար ձգտողությունը ևս անծանոթ չի մնա ազգին գոնե այսուհետև, նրա ամենակալ աչերը կբացվեր մեզ կարողություն...

Աղնիվ մարդուն պանկալի է ընդհանուրի օգուտը, բացառությունը ընդհանուրի անպիտան անդամն է. սավոտ է լավելու համար։

Կ Ր Ի Տ Ի Կ Ա

ՍՈՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ

Ազգային վիպասանություն, պ. Գևրճի Գոռչյանց, 1860, Թիֆլիս

(Միտական եղբոր, ի. Գ. ՕՏ... ԻՆ ՆՎԵՐ)։

Միթէ որ նեղիցէն այլ ո՞չ ևս յաւելցու յառնել...
Սաղմոս Դաւթի, ի. համար 9.

Ազգային անփակաան դպրությունը էապես հիմնվում է ազգային բանասաեղծության վրա և այնպիսի աշխատությանց, որ հայկական հոգու բխվածք լինելով հայ ազգին էին վերաբերվում դարձյալ։ Ընդհանուր մարդկային գիտության վերաբերյալ գրքերը, թեև այո՛, մեծ պատիվ են բերում մի ազգի, բայց սա հարուստ էր այդպիսիներով, այնուամենայնիվ այդ գիտությունքը մի որևիցե ազգի անփակաանությունը չեն, այլ բովանդակ մարդկության, թեև նոցա մշակողքը միայն միքանի առաջադեմ ազգեր եղած լինեին։ Ազգերի անփակաան դպրության մեջ, այսինքն նոցա բանասաեղծական գործերի մեջ երևում է նոցա հոգին, նոցա վարք ու բարքը և այլ այնպիսի բարակ և քնքուշ բաներ, որի համար պատմությունը սակար է և կարող բանասաեղծության օգնության։

Թե ինչպես է եղել մեր ազգի շատ հին ժամանակների բանասաեղծությունը մենք բնև ոչինչ գիտենք գրական, բայց և այնպես ընդհանուր պատմության և ընդհանուր դպրության պատմության տված լուսով,— որովհևաև օրինավոր բանասաեղծությունը հետևանք է մի օրինավոր կապակից և պատմական կյանքի, իսկ մեր հայերիս կյանքը, ոչ թե առաուպելների ժամանակ, այլ նաև շատ հետո, երբեք չէ ունեցել մի կանոնավոր և լոգիկական աճելություն և կերպարա[նա]գործություն,— դժվար չէ հասկանալ, եթե միայն չհամեմատինք անձնախաբեությամբ և կամավոր կուրությամբ երևակայել երբեք չունեցած պարծանքներ, որ թե պատմության հայտնի ժամանակներում, երբ քիչ շատ ձևոք ու ոտք ուներ Հայաստանը, մենք չենք ունեցել մի օրինավոր, եվրոպական հասկացողությամբ, բանասաեղծություն, այն առաուպելական ժամանակների եղածները պիտի լինեին շատ հաստատակ և խնդճ բաներ։ Թողնելով այն պատոնեներին, որոնց սիրելի է այդպիսի բաների պատրաստումները, մեր հին,

որպիսի և իցն, կամ իբև բնաւ չնգած բանաստեղծութեանց ուսումնասիրութիւնը[2],— մենք պարտականութիւն ունինք հրատարակել, իբև պ. Արսէնեանցի «Վերք Հայաստանին» և «Սոս և Վարդիթերը» հիմք դրին ազգային վիպասանութեան*: Այո՛, արդարութիւնը նույնպես պարտք է դնում մեր վրա բարձրաձայն հռչակել պ. Գաբրիել Տեր-Հովհաննէսեանցի «Տեր Սարգիս» մակագրով վիպասանութիւնը, որ տպվում էր 1861 թվականի Հյուսիսափայլի մեջ, և որ ախո՜ւ և հազա՜ր ախո՜ւ, հեղինակից կամ Հյուսիսափայլից կախում չունեցող պատճառներով ընդհատվեցաւ: Մեր կարծիքով այդ գործին ավելի պատշաճ էր «Քաղցկեղ Հայաստանին» անուն ունենալ, քան իբև կապվիլ մի պարզապատավորի անունի հետ, որ շատ կարելի է իբև անաջողութեան էլ պատճառ դարձավ: Եթե նրբ և լինի այդ կիսատ մնացած գործը ավարտվի, միևնույն հոգով և համաւիլամբ շարունակվելով, այն ժամանակ մեր նոր դպրութեան մեջ այդ գործն այն տեղը կունենա, ինչ տեղ ուսս դպրութեան մեջ ստացել է «Մեռած անձինքը»: Բոզ կանխիկ ընդունի մեր սրտա՜նց շնորհակալութիւնը հայկական Գոգոլը, որին մաղթում ենք մի փայլուն գալոց:

Մենք մի ուրիշ աշխատութիւն էլ գիտենք. հայ հեղինակի, հայոց կյանքից բխած, մի շատ կենդանի և շատ արտաշարժ գործ, բայց, ձախողակի, հայ գրով իբև այլև և այնպես տաճկերեն գրած: Մենք խոսում ենք «Ագապի» մակագրով ազգային վիպասանութեան մասին*: Երբին տաճկարանութեամբ է գրած և մեր փորը ի շատն տաճկագիտութիւնը ակա՛ր է այդ գիրքը թարգմանելու համար (այնտեղ շատ արարական կամ պարսիկ բառեր կան, որ մենք չենք հասկանում), բայց և այնպես գործի սկզբից մինչև վերջը մեր զմայլանքը աճելով աճում էր, երբ կարդում էինք այն հոգեշարժ, արտաշարժ և ախուր անցքի պատմութիւնը, ուր ազնիվ օրիորդը Ագապին գոհ է գնում պիշերագո՜մ մարդոց գժոխային կրոնամոլութեան և դավաճանութեան, որին կարող էր նախանձել և ինքը Լոյոլան, ուր ազնիվ սիրահարը — Հակոբ աղան,— նույնպես գոհվում է մի չլսային տննդի, որ առաջացել էր Ագապի օրիորդի սպանի վախճանի պատճառած հարվածից: Բնականութիւնը և արվեստը իրար հետ լծորդված են այդ գործի մեջ: Վերք Հայաստանին չունի այնքան արվեստ. Սոս և Վարդիթերը Վերք Հայաստանցուն էլ քիչ ունի, իբև ունին բնականութիւն: Ագապին, արվեստի կողմից կարող է դիմանալ խիստ քննութեան: Բնականութեան կողմից և հոգեբանական հարազատութեան մասին շատ բարձր է եվրոպական ամենաավար վիպասանութիւններից:

---

* Ձենք մոռացած «նահապետ» առորագրութեամբ Հ. Ղևոնդ Ալիշանյանց արժանավոր վարդապետի հրատարակած հոյակապ քնքշմածը[3]— «Գլուխն Ավարայրի», «Հայոց աշխարհին» և մյուս բոլոր աշխարհաբար ասանավորը, բայց այստեղ չհիշեցինք, որովհետև արձակ բանաստեղծութեան վրա էր մեր խոսքը. ապա իբև ոչ, չափաբնական քնքշմածոց մեջ, արժանավոր վարդապետը ախոյան չունի. երբ մենք լսենք, Ավարայրի բլրուլը կիսոտ՝ ...«կանչե՛ պղպուկիկ, կանչե՛ հոգնձայն. արդյոր զսխամահան սուրբ հիշե՛ վարդան»...

Մենք ցավում ենք և ցավելով չենք կարող չմեղադրել մեր պոլսեցի եղբայրակիցը, որ մինչև այժմ հայերեն չթարգմանեցին այդ գործը*: Բն ի՞նչ պատճառով տառնկերեն է գրել գոթա հեղինակը, կամ թե ո՞վ է այդ ազնիվ հեղինակը, մեզ հայտնի չէ. գիրքը տպած է անանուն: Երանի՜ թե մեկ օր հայերեն կարդայինք այդ հոյակապ և ազնիվ գործը: Ավելորդ է ասել, որ միայն Տառնկաստանի ա ռ ա ջ ն ա կ ա ր գ հ ա յ գ ր ա գ ե տ ի բան է նորան թարգմանելը. չլինի թե ռուսիացի հայերը փորձ փորձենն:

Բայց մենք հեռացանք մեր ուղիղ ճանապարհից. մեր գրութեան խորհուրդը է Սոս և Վարդիթերի քննութիւնը: Մենք քանի՛ ու քանի՛ անգամ կարդացինք այս գործը և ուշադրութեամբ. գալիս ենք այժմ անաչառապես հրատարակելու մեր կարծիքը այդ աշխատութեան մասին: Եվ իրա՛վ որ, հարկ չկա կողմնապահութեան. այնքան զուտ և անհակասակելի արժանավորութիւն կա Սոս և Վարդիթերի մեջ, որի այս ու այն տեղ, այս ու այն կողմից երևցած թերութիւնքը, հեղինակի անուշադրութիւնքը մի փորր էլ հեղինակին շրջապատող աշխարհի ազդացքը, եթե նաև ամենայն խստութեամբ դրվին անգամահատական դանակի տակ, այնուամենայնիվ, գործի ընդհանրական ամբողջութիւնը և էական արժանավորութիւնը կմնա և կմնա: Եվ որովհետև այս կողմից երկյուղ չկա, որովհետև մեր անաչառ քննութիւնը բնավ երբեք չպիտի նսեմացնե նորա արժէքի և քանքարի փայլը, այս պատճառով մենք հաստատ որոշում ենք ամեն նորա արժանավորութիւնը խոստովանելով, տեղ տեղ երևցած անհարթութիւնքը չմոռնալ: Հաստատ համոզված ենք և հույս ունինք, որ մեր անկեղծ ու արդարադատ, թեև խիստ և անկաշառ քննութիւնը, եթե համբուրելի հեղինակին օգուտ չբերե, վնաս ոչ երբեք:

Համարձակ կարող ենք ասել, որ արդի հեղինակը իր նկարագրած կյանքի վերաբերութիւնքով, ոչ ավելի և ոչ պակաս, մի անխարդախ հայելի է, ուր ցոլանում են բնութեան ճառագայթքը: Մենք նայեցանք այդ հայելու մեջ և տեսանք ինչ որ ցույց էր տալիս նա. և ծանոթ լինելով մեզ նորա ցույց տված բնութիւնը, վկայում ենք հայելու արժանավորութիւնը: Գ. Զոհրապը պրծավ իր պարտքից. այժմ մերն է կարգը նորա համար հայելի դառնալ և ցոյացնել հեղինակին նորա սեփական գործը. այս իր տեսակի «ճառագայթների կրկին բեկբեկումն» է: Հույս ունինք, որ մեր ապակու երեսը նույնպես հարթ լինի և նորա թանձրութիւնը զուգահեռաբար հավասար. հույս ունինք, որ ոչինչ չկարողանա դավաճանել ճշմարտութեան: Մեր հաստատը նույնպես շատ չունի, ինչպես մեր քննութեան առարկան՝ Սոս և Վարդիթերը:

Շատ կարդալ հարկավոր չէ Սոս և Վարդիթերը, իմանալու համար, թե ի՛նչ տեսակ հեղինակի հետ է կարդացողի գործը. նորա հոգու ոսկե-

---

* Աչքս տանջը Գյումրի «Գոթական մատուռն» են թարգմանած. արդարև «Մարգարեն իր գավառի մեջ պատիվ չունի». ի՛նչ ասես:

գարյան անմեղությունը փայլում է ամեն տողի մեջ։ Այդ մի շատ բնական գործ է և իր պարզությամբ ավելի նմանում է այն փարելի բնական աղբյուրներին, որոնց ջուրը առանց մարդկային ճարտարության, առանց ջրմուղների, առանց մարմարոնյան շատրվանների և հռովմեական ագուգաների վազում է սարի լանջով և իր գնացքի մեջ, իր դիպած ամեն մի խոտի, ամեն մի թխի տերևները պաակում է ագամանդյա կաթիլներով. և առանց մի նեղ սահմանի մեջ փակվելու ազատորեն վազում է դեպի ուր որ քաշում է նորան բնության օրենքը, հովության և պղպաբերության տարածելու համար։

Սոս և Վարդիթերը գրած է մեր առջև նախ և առաջ որպես բանաստեղծություն, որպես վիպաստանություն. բայց, ոչ ձևի մտածությունը և ոչ դեպքերի դասակարգությունը կարող են, գոնե՛ մասնավորապես, համեմատվիլ նորա պարզ, անզարդ և բոլորովին անխարդախ և բնական նկարագրությանցը։ Խոսք չկա, որ այդ գործը բանաստեղծություն է, բայց բանաստեղծը որոնց ուղղակի խոսում է բնության լեզվով, ուր միայն լոկ թարգման է լինում բնության և ստորագրում է այն, ինչ որ այժմ ամեն մարդ կարող էր տեսնել և ստուգել, հոյակապ արժանավորություն ունի. իսկ ուր մեկ վայրկյան անգամ, արգո հեղինակը բնությունը թողնելով, օգնություն է խնդրում երևակայությունից և հնարաստեղծում է անբնական բաներ, այնտեղ գործի արժեքը թուլանում է և անհամեմատ՛ա թուլանում է։

Ընդհանրապես, նկարագրված բնավորությունքը ապշելի հարազատություն ունին, բայց երբեմն ավելի զորություն կամենալով դնել գլխավոր (համարված) ներգործողների մեջ և անդադար նոցա մոտ ուղևորվ պատառ գալ, հեղինակը ոչ միայն շատ տեղ հարևանցի և երկու խոսքով է անցնում երկրորդական ներգործողների մոտից, ինչպես են Անուշը, Աբշամը, որ Գևզամ էլ է ասվում, Գարեգնի մայրը և այլն և այլն, այլ շատ զգալի կերպով կնջջ վիճակի մեջ է դնում իր գլխավոր ներգործողներին, ինչպես են, Սոսի թագավոր-օձ (Շահ-մար) բռնելը, Սոսի քարափի գլխին ազոթելը և այլն։ Հայտնի է, թե գլխավոր ներգործողների վերաբերությամբ, մի առնված միջոցում, բնականի նկարագրությանց պահարը գործ գրվելուց հետո, նրա հեղինակը չպարապի երկրորդական բնավորությանց կերպարանագործությամբ և նոցանից նոր ուժ և նոր զորություն շառնու իր գլխավոր հերոսի համար, նախ որ այդ հերոսը սկարանում է, վրա երկու, որ երկրորդական ներգործողքը շատ շինում են. թեև հեղինակի նպատակը է ընդհանուրի վարքն ու բարքը ցույց տալ, բայց երբ այդ վարք ու բարքի այս կամ այն մոմենտի համար թանձրացնում է այս կամ այն գլխավոր բնավորությունը, հայտնի է թե պարտ կա նորա վրա՝ բնության սահմանից գուրս չթևրել նորան։

Նկարագրությունը կյանքի այնպիսի երևույթների և անցքերի, որին մասնակից է բազմությունը, որպիսի են Մոդեռ կամ վարդավառի ուխ-

տերը, վիճակը կամ «Հավկիթի շուռ տալը», հարսանիքը (թեև այս վերջինի մեջ, Սոսի և Թուրքի մենամարտության նկարագրությունում, Սոսը դարձյալ դուրս է գալիս իր բնական շրջապատից և բնությունը դառնում է առաստպել) շատ ընտիր են և վառ, իսկ այնտեղ, ուր բնավորությունը ներգործում են առանձին առանձին և ուր, նոցա ներգործություններից ավելի, ընթերցողը պիտի իր հայացքը ուղղե դեպի հեղինակի խոսքերը, որ առանց ուրիշի բերան տալու, ինքը հեղինակն է խոսում, այդ տեղերում բնությունը սկարաներում է և հեղինակի երևակայությունը և հնարագիտությունը օգնություն չեն տալիս նորան։

Գ. Գ. Տեր Հովհաննիսյանցի «Տեր Սարգիս» գործում, մի հոյակապ արժանավորություն էլ այն է, որ նա բացի միքանի անհրաժեշտ պատմական ծանոթություններից և արտաքին նկարագրություններից՝ իր ներգործողների հոգեբանական կամ բարոյական որպիսության մասին բնավ իր բերնից խոսելով հանդես չէ գալիս. ներգործողքը իրենց խոսքերով կամ գործերով ցույց են տալիս մեզ իրենց ո՛վ և ի՛նչ լինելը։ Մեծ տարբերություն կա տեսնելու և լսելու մեջ։ Այն հեղինակը, որ ինքը բան չէ ասում մեզ, այլ մարդիկ է հանում մեր առջև, ներգործել տալով նոցա,— նա ցույց է տալիս. էլ տեսնելուց հետո լսելու կարոտություն չկա։ Իսկ այն հեղինակը, որ ոչ ամեն բան ցույց է տալիս ներգործողների ձեռքով, այլ երբեմն իր բերնից է պատմում նոցա մասին, նա լսենում է, որի տպավորությունը ավելի թույլ է, քան թե տեսնելու և շոշափելու տպավորությունը։

Սոս և Վարդիթերը, եթե ուշիդն ասենք, պիտի նայվի որպես ամբողջ մի ընկերության, որպես ամբողջ մի գեղի նկարագիր. իրեն իսկ արգո հեղինակի խորհուրդն էլ այս է, ինչպես ծանոթանում է հառաջաբանի մեջ։ Եվ եթե լավ ուշադրությամբ նայենք այս գործին, կտեսնենք, որ նորա մեջ դյուցազուն և դյուցազնուհի առվածները իսկի մյուս ներգործողներից ավելի պաշտոն չունին, բացի նորանից, որ փոխորիկը նոցա գլխին ներից ավելի պաշտոն չունին, բացի նորանից, որ փոխորիկը նոցա գլխին է պայթում։ Սոս և Վարդիթերի մեջ կյանքը հաստատակաց է. ավելի խմբերը հանդես ունին, քան թե նորանց կազմող անհատքը։ Պաշտոն ունին սովորությունքը և ծեսերը, որպես բազմության հասկացողության արդյունք ավելի, քան թե այդ սովորությանց և ծեսերը կատարելում ներգործող այս կամ այն անձը։ Սոս և Վարդիթերը կարդալու ժամանակ, կարդացողի միտքը չի կապվիլ լոկ Սոսի կամ Վարդիթերի հետ, այլև շատ տեսակ բնավորությանց և անցքերի հետ, ուր, երբեմն, հազիվհազ մի անհատ պաշտոն են ստանում Սոսը կամ Վարդիթերը։ Այս գործի մեջ բանի բնությունը ասաջ է գնում առանց Սոսից և Վարդիթերից կախում ունենալու. այնպես հավասարապես հաստատակաց է ներգործության պաշտոնը։ Եթե Պռոշյանցի գործը համեմատենք նկարչության հետ, պիտի պնդած ասենք նորան։ Հեղինակի գլխավոր գաղափարը Սոսը և Վարդիթերը չէ, այլ ընդհանուրի կյանքը, ծեսերը, սովորությունքը, ավանդություններ և հասկացողությունը, իսկ Սոս և Վարդիթեր անձնավորությունքը առնված են

որպես օգնական։ Սոս և Վարդիթերը մենք չենք կարող ընդունել որպես մի սիրապատում վիպասանության։

Այս խոսքերը չեն ակարացնում Սոս և Վարդիթերի արժանավորությունը, այլ միայն ցույց են տալիս, և որ մենք նկատում ենք մեծ ուրախությամբ, թե պ. Պռոշյանցի բանաթերը ավելի զորություն և ավելի ուժ ունի ընդհանուրի կյանքի և բնականի ստորագրելում. մինչդեռ շատ ուրիշ բանաստեղծք բնականի պակասությունը աշխատում են երևակայության օգնությամբ, և ոչ միշտ աջողությամբ, ծածկել։ Պ. Պռոշյանցը երբեք կարոտ չէ այդ օգնության, նրա հավատարիմ մնա իր բանաթերի բնավորության. նորա ստորագրությունքը այն ասպիճանի ուղիղ, կենդանի և հարազատ են, որ թե մանր մունր երևակայության անաջող արդյունքները անհետանալու լինին, Սոս և Վարդիթերը կարելի է ընդունել որպես լոկ և պարզ նկարագիր բնության, ուր բնականապար և անբռնադատ միայլում են նկարագրված ընկերության կյանքը, հոգեբանական ունակությունքը, բարոյական և ընկերական հատկացողությունքը։

Անշուշտ, հեղինակի անփորձությունը և նորաթողրոջ երիտասարդությունը պիտի թողուին իրենց հետքը այդ գործի վրա, առանց դորան չէր լինիլ՝ բայց աջողակի, ինչպես արդե՛ն ասացինք, այդ թերությունքը և խորդուբորդքը հարթվում են, երբ արժանավորության բյուրները բարձրացնում են իրենց դլուխը։ Այսպիսի թերությանց և հակասությանց կարդ ենք դնում մենք, օրինակի համար, հետևյալ մի քանիքը։

Այն միջոցին, երբ Վարդիթերը վարում է մի էրված սիրուհու պաշտոն, և որի սերը արդեն երկու տարի է, որ մաշում է նորա սիրտը և հոգին, դեռ նոր է փոխել առաձնները, դեռ նոր է մտել տասնումի տարեկան հասության մեջ։ Սորանից նրա երկու տարին էլ հանենք, այն ժամանակ կտեսնենք, որ Վարդիթերը ութը լման ինն մեջ զգացել է սիրու կրակը։ Վարդիթերին վերագրված բոլոր ներգործությունքը, հոգեբանական ախտերը, ցանկականի և սիրու, գիտակցաբար մինչև անձնազոհության ասպիճան բարձրանալը, շատ խելացի դատողություններ, տեղ-տեղ էլ կանացի սեռին սեփական անձնագահ խորագիտություն, այս ամենը,— ասում ենք,— զարմանալի ներհակություն ունին այն հասակին, որ նա ունի։ Գիտե՛նք, որ կան աշխարհներ, ուր տասը տարեկան աղջիկը արդեն մայր է, բայց այդ աշխարհների սահմանքը փակված են հեղգնանի և Այծեղջյուրի մեջ։ Արարատյան գավառը, որի ցուրտը առակ է եղած Հին աշխարհում, չունի հիշված աշխարհների ազդեցությունը. այնտեղ տասանումի տարեկան աղջիկը դեռ ոտա է, ո՛ւր մնա ութը կամ ինը տասնումի տարեկան աղջիկը դեռ ոտա է, ո՛ւր մնա ութը կամ ինը տասնումի տարեկան։ Եվ այդ հասակում ո՛չ կազմվածքի բնական աճելություն, ո՛չ բնականը։ Եվ այդ հասակում ո՛չ կազմվածքի բնական աճելություն, ո՛չ իմացականի և զգայականի ախտերը կարող էին զուգապատշաճ լինել այն պաշտոններին, որ Վարդիթերը ունի այդ գործում։ Բացի սորանից, ուրիշ կողմից նայելով, դարձյալ հարկավոր էր, որ այն միջոցին ավելի հասակավոր եղած լիներ Վարդիթերը, նորա հայրը՝ Հնդումը անաստամ ծերունի է, իսկ նորա մայրը պառավ։ Եվ որպես թե հերիք չէր, որ այս

ծերունիները տասնամի տարեկան աղջիկ ունեին, դեռ նորանից հետո էլ ծնել են Փափակը, որ Գարեգնի մոտ է սորվում։ Եվ զարմանալի է, որ ինչպես մեզ է թվում, պ. Պառչյանցը առանց հարկի և ստիպողության ընկել է այս հակասությանց մեջ։ Երեք մտածենք, թե նորա դիտավորությունը եղել է պախարակել այդ կողմերի վաղ ամուսնությունը իգական սեռի, այդ բանում էլ անաջող է. պատճառ, երեք ուրը, ինը տարեկան աղջիկը սիրահարվում է և տասը կամ տասնամի տարեկանը պատրաստ է սիրու համար իր անձը զոհել, ուրեմն, վաղ ամուսնությունը բնականարար զգալի կարոտություն է, որը հիմնվում է նա իմացական և զգայական պահանջողությանց վրա։ Բայց մենք չենք տեսնում մի պախարակության նշմարը և համարում ենք այս մի ակամա սխալանք, երեք միայն մենք չենք սխալվում։ Գիտենք, հեղինակը կամ շատ ուրիշներ էլ, իրեն իրազություն կարող են իմ առջևը դնել այն բանը, թե Արարատյան աշխարհում շատ անգամ պսակել են 11—12 տարեկան աղջիկ, ուստի, որպես թե անբնական չէ վարդիթերի հասակը։ Պսակե՞լ։ Ինչի՞ չէ, կարելի է. մենք լսած ենք մեր պատասխաններից, որ տորանից 60—70 տարի առաջ, Նոր-Նախիջևանի մեջ էլ եղել են այդպիսի անճոռնի պսակներ, բնության տարաժամ բռնաբարություններ, բայց, այն ժամանակ, որ նեյնն մեզ, վարդիթերը չէ կարող ունենալ այն բնական և հոգեբանական հատկությունները, որ վերագրվում է նորան և որ անշուշտ հարկավոր էր տալ նորան, ամուսնների մեջ սիրո գործի զուգակշիռը պահելու համար։ Հատակի այս անաջող առը* խիստ անախորժ տպավորություն է անում կարդացողի վրա։ Ասես թե Հայաստանի աղջիկները հին կամ նոր Բաբելոնների** աղջիկներն են, ասես թե բորբորիտոն Շամիրամի թոռներն են։

Մարդու զնդչն է գալիս, երբ տեսնում է, թե տասնամի տարեկան աղջիկը ընկնելով իր սիրականի գիրկը և համբուրվելով նորանից զգում է, թե «օխտը թիզ եղ է կանդնում նորա արտին» (եր. 26)։ Պետք չէ նույնպես մոռնալ, որ եվրոպական մայրաքաղաքների մեջ անչափահաս աղջիկների ամերանքը*** բնավ երբեք ցանկականի կամ սիրու բնական

* Առնում բայի արմատը ա ռ, հոգն. ա ռ ք, որպես ա ռ ու ե մ, մենք այս ու ն մ ա ն հոլովումից փախչելու համար այս դիպվածում, ա ռ ք ը պիտի գործ դնենք որպես առուն. ազգը շատ անգ նույն նշանակությամբ գործ է ածում ա ռ ք ը։

** Նոր Բաբելոններ ասելով իմանում ենք եվրոպական մեծ քաղաքները։

*** Այս ամերանքի սարսափելի օրինակները կարելի է տեսնել Հանս Յոչն Ֆրանսիացու «Երկրագիծը Անգլիոյ» անունով գործի մեջ, ուր բաժանելի բաներ հանգես են տալիս։ Ըստ այնմ, ուր ամեն 100 աֆրտորիայան ցավով վարակված անձանց, Լիվերպուլ կան քաղաքներ, ուր ամեն 100 աֆրտորիայան ցավով վարակված անձանց, 6 հատը մինչև տասը տարեկան անչափահաս աղջիկներ են։ Նույն գրքի մեջ տեսնում ենք հետևյալ վկայությունը. Մեր հիվանդանոցներից մինի մեջ ևս ոտակ կանանց, 6 հատը մինչև տասը տարեկան անչափահաս աղջիկներ են։ Նույն գրքի մեջ տեսնում ենք հետևյալ վկայությունը. Մեր հիվանդանոցներից մինի մեջ ևս մանուկ աղջիկներ, որոնք հիվանդ էին ամոթալի ցավով։ Տեսա հինգ անչափահաս և մանուկ աղջիկներ, որոնք հիվանդ էին ամոթալի ցավով։ Տեսա հինգ անչափահաս և մանուկ աղջիկներ, որոնք հիվանդ էին ամոթալի ցավով։ Առաջինը 13 տարեկան էր, երկրորդը 12, երրորդը 11, չորրորդը 9 և հինգերորդը 8 տարեկան։ Երբոր այս աղջիկներից կորուցել էին իրենց անմեղությունը իրենց մոր ասնը և կորուցել ևս շափաւաս մարդոց ներգործությամբ։ An Exposure of Female

հետևանք չեն՝, այլ մեծ մասով արատասիրի աղքատության արդյունք։ Շատ, աղքատ կամ օրական հացի կարոտ ծնողք վաճառել են իրենց աղջիկները, նրին իողունք ոմանց մոտ շոայլության կամ ունայն պճնասիրության համար արծաթի ճարելու բարբարոս խորհուրդը**, նրին իողունք դժոխային պատասխանների դավաճանության զոհվածները։ Օ՜հ, այդ պատասխանները ամեն օր ևկեղեցի են գնում, և ի՜նչպես չեր մեռանդ աղոթում։

Այո՛, ստրատասիրի հանցանք է ծնողքի կողմից, երբ նորա անառակության են ծախում իրենց զավակը, բայց ավելի ինձի՞ է այն գազանական գործը, երբ ծնողքը նիում են և ուտում են իրենց զավակները։ Հայտնի է ինձ այս էլ պատահում է սովի կամ պաշարման ժամանակ։ Եվ մե՛ր ազգի պատմական հիշատակարանների մեջ տեսնում ենք այսպիսի զարհուրելի օրինակներ. «Ձևոք կանանց ողորմածաց եփեցին զմանկունս իւրեանց և եղեւ նոցա ի կերակուր», ասում է պատմիչը (Յովհ. կաթ., Պատմ. Հայ., Մոսկվա, եր. 143)։ Անճար աղքատությունը սովից ու պաշարումից պակաս չէ։ Արատասիրի պիտի, քան ինձ սրտնեղել այն դժբաղդ ծնողների և ավելի դժբաղդ աղջիկների վրա։

Մենք հերթ համարում ենք որքան խոսեցանք հասակի մասին, որովհետև Քանձրալի կարող էր լինել ընթերցողին, նրին մենք անդամազննարար, ֆիզիոլոգիկարար և հոգեբանարար քննեինք այսոեղ խզտական սեռի անհատների աճելության և սորա օրենքը, քայլ սա քայլ երթալով նորա յուրաքանչյուր գլխավոր մոմենտների քամակից մինչև այն կետը, ուր անհատի կազմվածքը ստանում էր իր տևական հարատևության պահպանելու բնական ունակություն։

Prostitution. By W. Lagan. City missionary: Ահավասիկ արդարև, «համբակը անբուսյալ և անազնի խակաւիլ պտղոյն խակութեան», նրին երանելի նաբեկացին Եվթոպոյի վոռգաններըն տեսներ, նզևկիների ստակավոր երկու բույրերը կմոռնար Եդիպտոսի մեջ. պատճառ, սորա ստակ չէին, այլ լույս ընթեկով գործված իրողություն Թ՛ե՛։

* Մենք խոսում ենք ընդհանրապես, ազա թե ոչ, կան բացառություններ, մանավանդ այն տեղերում, ուր անշափահաս ազգը երկու սեռերն էլ միասին, սկսած 5—6 և երբեմն ավելի մասաղ հասակից աշխատում են չեմ գործարաններում։ Մի կողմից բանի տարիներով անգործար և միապես ներգործող չեմուրյունը, մյուս կողմից պժգալի օրինակներ, որ նորա տեսնում են գործարաններում, գրգռեցուցիչ և անարժան խոսքեր, որ լսում են այնտեղ, ամերիկած չափահասներից, շատ անգամ, այո՛, առուգաղես զարթնեցնում են նոցա զգայական ցանկությունը, թեև տարաժամ և կազմվածքին մահարեր հարված պատրաստելու համար։ Անգլիա մեջ, այս վիճակին պատճանած երկու տևի երեխաքն էլ արդեն 11—12 տարեկան հասակում կորուցած են վաղուց իրենց անմեղությունը։

** Երանելի մեջ մի մայր վաճառեց իր տասներկու տարեկան աղջիկը անառակության. և երբ երեխան, բնական ազգեցությամբ պժգալով այս տեսնելությունից ընդդիմանում էր, տեսնելը մայրը այնպես զարկեց նորա քիթն բերնին, որ խեղճ երեխայի երկու տասամբ միասին գուրս թափեցան։ Այսպիսի օրինակներ խիստ շատ են Անգլիա մեջ, ուր երեխայք, կիրակի օրերը փողոցում խաղալու համար, բանտարկվում են, ուր քաղաքներ կան, որոնց մեջ կիրակի օրերը չէ կարելի անպատիժ սպանել! (Հևռն Յոչե)։ Հիանալի պարզ և անժխտելի օրինակներ են սորա, թե կրոնը երբեք չէ կարող, միայնակ, բարոյականություն արմատացնել մի ազգի մեջ։

Իրրև թերություն կարելի է տեսնել և Արշավիր բնավորությունը, կամ մանավանդ նորա պաշտոնը։ Գործի կատաստրոֆը, եթե ուշիզն ասենք, գլխավորապար հիմնված է Արշավիր դժոդության վրա։ (Արշավիրը եթե չդժեր, կարող էր Տիրանի մեքենայքը խափանակել)։ Եվ այդ մարդը, որ առաջ այնպես սիրով ընդունում էր Սոսի առաջարկությունը, սրտանց նրդնում էր, որ նորան տա իր քույրը, հանկարծ փոխվում է և դառնում է Սոսին մահարեր թշնամի։ Ին առուգապես Արշավիր միտքը իր քույրը Սոսին տալ էր և ոչ խարել, այդ պարզ երևում է Հեթումի և իր կնոջ խոսակցությունից (եր. 203), ուր Համասպյուռը մեղադրանքով խոսում է Արշավիր մասին, թե առաջ շատ հորդորել է, որ վարդիթերը Սոսին տան, իսկ այժմ հետ է կանգնել իր խոսքից և էլ չէ՛ ուզում։ Արշավիր խոսքը փոխելը և նորա դրժողությունը մեծ պաշտոն են վարում գործի մեջ և եղկելի վերջի թելերը մի մասնով լարվում են և կառավարվում են նորա ձեռքով, կամ, նորա ազդեցությամբ. բայց, չնայելով այս բոլոր բաներին վրա, մենք բան չգիտենք Արշավիր նենգության կամ դրժողության պատճառի մասին։ Գործի բովանդակության մեջ չկա տեղ, ուր հանգիս ունենար այս դավաճանությունը և կապված լիներ վիպասանության ընթացքի հետ որևէ կապով։ Փափակի հայտարարությունն է բոլորը, ինչ որ կա (եր. 125). «Գիտե՞ս, ինչ կա,— ասում է նա Գարեգնին,— բանը փոխվեց, ճար ունես տես. Արշավիր միտքը ընդնեք հիմի թե ծուռն ա էլել, թե դուզ ա էլել ձեր հետ, չեմ իմանում, համա հիմի իմացվեց. էրեկվանից դևը հարիր հետ կռիվ ա բռնել, թե կամ թուրը վեր կունիմ ինձ կսպանեմ, կամ թե չէ Սոսին աղջիկ չեմ տալ. ես պիտի տամ Զայրմայրի էշմիածնեցի քավորին»։ Համաձայն ենք, որ կոպիտ, կամ, նախնական և անբարոյական կյանքի մեջ բոպնական շնչին ախտերն անգամ կարող են շատ ավերություններ պատճառ դառնալ և Արշավիրը ընդունակ է, որ շնչին պատճառով կամենա վնասել Սոսին, կամ վրեժ առնուլ նորանից, բայց, բանը այս է, որ ընթերցողը նաև այն շնչին պատճառը, նաև ախտության մի լոկ նշմարը անգամ չէ տեսնում բանի ընթացքում։ Հանկարծ լսվում է Փափակի հայտարարությունը, որ ավելի հիշեցնում է մեզ ֆրանսիական «le roi le veut» խոսքը, քան թե մի բնական երևույթի պատճառ կյանքի կամ նորա նկարագրության մեջ։

Մենք չենք ուզում իրրև թերություն նայել վարդիթերի մոր անխնայ հոգեհոգությանց վրա։ Փարպի դնալու ժամանակ, Համասպյուռը հրապարակով հայտնում է իր ափսոսությունը Սոսի հետամտության վրա. «սրտիս տախտա՛կն են դաղել» ասում է նա (եր. 92) իր հետի ուխտավոր կին մարդոցը և սպառնում է, որ էլ Սոսին չտա աղջիկը։ Վարդավառին, ինքնամատույց կերպով, հրավիրում է Սոսին և ուխտի հրապարակում (Հանա-վանքում) համբուրել տալով վարդիթերին, նշան է դնում։ Աշնան Մողնու ուխտին, իր մոտ հյուր եկած կին մարդուն պատմում է ինչ, որ Սոսի դլխավն անց էր կացել, ավելացնելով, թե «էլ չենք տալի իմ աղջիկը»։ Թեև այս փոփոխամտությանց պատճառները դրած են անցքի

բովանդակության մեջ, բայց դրա համար են այս տեսակ կարուկ և որոշ հետևանքներ ունենալու համար. կամ պատճառը այնքան ավելի սաստիկ և ազդու լինելին, կամ հետևանքը մի փոքր մեղմ։ Բայց մենք ասացինք, որ չենք ուզում այս բաներին իրրև բնությանց վրա նայել, որովհետև այս բոլորը կարելի է վերագրել Համասփյուռի անկրքության, որից սովոր է ամեն բան առաջանալ, ուստի և այնքան անբնական չեն հակասությունքը, որքան այն, որ Համասփյուռը վերևում հիշած Փարպու ճանապարհին հրապարակով նախատում է իր դուստրը, խայտառակելով և ամենի առաջ հայհոյելով, թե երիտասարդ աղջիկ ձի խաղացնելը, տաղ ասելը և վարդիթներենց խմբից չհեռանալը բոլոր վարդիթների արածն է։ «...Չեք իմանում,— ասում է նա իր ոխատակից կին մարդացը,— էս մեր փշացածի (վարդիթների) արածն ա քոմմա... խաչն իմն ա, քյարամաթը (դորուքյունը) ես գիտեմ» Սորանից մի վայրկյան առաջ էլ, դարձյալ նույն տեղում վարդիթների վրա է թափում իր ժանգը։ «Ա՛խ, ծակծակոտված, սև սրտի աղջիկ. ի՛նչ անեմ, խավարեր էն օրը, որ դու լիս ընկար. էն քշերը հերդ ջաղացն էր գնացել ի՛նչ կլներ (?!) մեզ աշխարհքի միջին թուք ու բեղնամ արիր» (եր. 92)։ Նայելով Աշտարակի կյանքի ընդհանուր որպիսության (որպես նաև բովանդակ Հայոց աղգի կյանքի որպիսության և հայ կանանց բնաւորական և որդիական պատվասիրության), մենք չենք կարող թույլ տալ, որ մի մայր այդպես հրապարակով խայտառակե իր դուստրը, ուր ավելի շնչին բաները համարվում են խայտառակություն և թուք ու բեղնամ են լինում։ Մի մայր, հրապարակով այդպիսի խոսքեր իր աղջկա մասին ասելուց հետո, այնուհետև ի՛նչ աղջիկների կարգ է գնում նորան. սորա վրա հարկավոր էր մի փոքր մտածել։ Այն էլ Համասփյուռը, որ սովորաբար նկարագրվում է որպես մի խորագետ կին. «Սատանի հետ ոտն էր պատավը» ասում է հեղինակը (եր. 116)։

Հայի պատիվը, որևէ կերպով, նրան ոչ բոլորովին փրկելու, գեթ մի մասնով պաշտպանելու համար ստիպվում ենք կատարելության չգրտնել Սոսի փնասի կամ քրոջ դավաճանության նկարագրության մեջ։ Ասենք, որ Տիրանը որպես մի անարդ մարդ կարող էր ընդունակ լինել այդպիսի դաժանության, բայց Սոսի քույրը, որ ոչինչ բշնամություն չունեն իր եղբոր հետ, ի՛նչպես, միայն իր էրկա սադրելով, այն խաղը կխաղար եղբոր դեմին։ Ավելի հավանական է, որ քույրը իմանալով էրկա դավաճան խորհուրդը իր եղբոր ընդդեմ, նրան չկարողանար հայտնի դեմ դնել նորան, գեթ ծածուկ տեղեկություն կտար իր եղբորը, առանց ամենևին հոգով սրտով իր էրկա դավադրության հաղորդ լիննելու։ Աղգակցական և քույր-եղբայրական բնական կապերը այնքան ամուր, իսկ ատանալու կաշառքը մի քիչվա 15 մանեթ. մինչդեռ աղոը և դավաճանության ամոթը դրեթե եգիպտական բուրգերին հավասար։ Չգիտենք թե ի՛նչ մտածենք, մե՛թե հավատանք։ Բայց սորանից, ինչ խորհուրդ ունի դուստը կպղել և բանալիքն էլ հանել։ Սոսին իրենց տանը փակելով

ի՛նչ օգուտ կարող էին քաղել. մանավանդ, երբ նա բարկացած գոռում է ին գոռալը բաց արեք», Տիրանը, ահից, ծակերն է մանում: Մնում է տակավին Սոսի մոր, այդ բանում, պիտակարար հանդես գալը: Եվ զարմանալի է, որ Վարդիթերի մայրը Արշավիր ձեռքում Գարեգնի մատանու շատ թույլ և անխելք խաղի մեջ, հաշվե ին նույն պաշտոնն է վարում, ինչ որ Սոսի մայրը Տիրանի ձեռքում. երկուքն էլ ակամա դավաճանակից են լինում, մեկը իր որդուն, մյուսը իր փեսային: Ասենք, կյանքի պարզությունը կարող է օգնել, որ հեղինակը մեկ մատնով արդարանա, բայց այս բաները ավելի են քան ին պարզություն:

Այն մատանու խաղը, որ հիշեցինք, շատ անաչող գյուտերից մինն է, շատ անուղղի անցք և բոլորովին խելքի հակառակ, ելին աչքի տակ ենք առնում բոլոր հանգամանքը: Ի՛նչ երեխայություն է. «Ու այսպես ասա կամ այնպես ասա» և այն խրատողից ընկալված մորը կամ իրեն իսկ խրատողին, որպես ին աղջիկը ասալը կամ շտալը կախվում է լոկ Գարեգնի խոսքից:

Առաջ էլ ասացինք, որ հեղինակը անդադար պարապելով իր առաջնակարգ ներգործողների հետ մեզ զրկում է շատ հարցասիրության արժանի անդեմություններից: Շատ բան անց է կենում Գարեգնենց տանը, բայց Գարեգնի տան մասին գրելին մենք ոչինչ գիտենք: Երկու-երեք տեղ, իրրև մի անհագագ բան երևում է նորա մայրը. եղբոր անունն ենք միայն լսում, հարսի անունն անգամ չգիտենք: Հազիվ երկու-երեք անգամ տեսնում ենք Անուշին և լսում ենք նորա խոսքերը ծաղկազարդի օրը նկնկնում և տեսե ատրած ժամանակը — վարդիթերի հետ, որպես նաև Սոսի հետ ծաղկազարդի մանուշակների կամ դաֆնայի պատճառով: Ցավում ենք, որ ավելի ծանոթություն չունենք: Նույնպես Սոսի մեծ եղբայրը՝ Պարեղը հազիվ մի երկու անգամ հանդես է գալիս, նորա կինը բնավ չի երևում, իսկ փոքր եղբայրը՝ Արշամը կամ Գեղամը մի երկու անգամ պիտակարար երևելուց հետո, իր պաշտոնը ավարտում է այդտեղ, արագ քաշած երևկոյին: Մենք մանավանդ ցավում ենք սորա մասին, որ այսպես փոքր հանդես ունի սա. պատճառ, հեղինակը նորանով ցույց է տալ իմ նոր սերունդի սկեպտիկյան ուղղություն: Մեզ շատ ցանկալի էր ին մեզ նոր սերունդի սկեպտիկյան ուղղություն: Մենք շատ ցանկալի էր իմանալ, ին այդ երկնային և փրկարար ուղղության շրջանը արդյոք ո՞րքան տարածություն ունի այն անդերի հայ բնակերության մեջ: Մենք, ինչպես առաջ էլ ասացինք, բերության կարգ չենք գնում այն ընչին անուշադրությունը, որ Սոսի եղբայրը՝ երբեմն անվանվում է Գեղամ (եր. 48), իսկ երբեմն Արշամ (եր. 35, 166): Նույնպես, Հերմուր խոսելով Սոսենց վրա մի անգամ ասում է ին սորա երեք եղբայր են (եր. 98), իսկ ուրիշ անգամ ին չորս (եր. 172): Թերություններ չենք համարում այս հակասությունը (ին չինեին լա՛վ էր), որովհետև բանի ընթացքը վնաս չէ կրում: Գեղամ է եղել Սոսի եղբայրը ին Արշամ, երեք եղբայր են ին չորս, դորանով այլ ընթացք չէ առանում կյանքը, բայց մենք ախորժում ենք նայելով հեղինակի ժլատության վրա, երբ բանը գալիս է մեզ երկրորդա-

կան ներգործողների հետ ծանոթացնելու։ Վարդիթների եղբարքը, բացի Արշավիրից և Փափակից, մնում են բոլորովին մութի մեջ, իսկ նոցա կնանիքը հայտնի է, թե «չխոսքան» են։

Կուզենք, որ մի քանի թերություններ եղած չլինեին, որոնց կարգն ենք դնում. ա) Գարեգինի ձու նկարելը։ Մենք սահելիք ունենալու չէինք, նրա, գլուխը քարը, լոկ մի խոսք կամ մի նշան գրեր նա ձվի վրա, կամ շատ շատ որևիցե անցքի միայն մի մոմենտը նկարեր. բայց, դու կրա՛կը տես, որ պատկերների բովանդակությունը այնպիսի բազմապատկություն և այնպիսի փոփոխական և շարժուն տեսարաններ է առաջնում, որ տասը պատկերի նյութ կլինի, որոնց խոսքերով միայն ստորագրությունը ամբողջ երևից ավելի է։ Բողոքը դեռ այն, որ նկարի միջնորդությամբ և այդ ստորագրության համեմատ խոսել բնավ խակ մի որպիսի և է խեղճուկ սիրացվի գործ չէ. բ) Այն անտես երազները մենք առնում ենք ոչ միայն որպես ավելորդ ներմուծություն, այլ որպես շատ անաջող փոխանակություն բնական դեպքերի։ Ասես թե հեղինակի ուժը կտրվում է և գործ է դնում այդ հնարը մնացած պարապությունը լցնելու համար, որ իսպառ զանց առնելի էր, որպես նաև Սոսի, իր եղբոր Գաբրիելին, իր սիրահարվիլը պատմելը, ուր ասում է Սոսը, թե երազում է սիրահարվել Վարդիթների վրա և այնտեղ մեջ է բերում նա ծնրունու անունի և գաղտնախորհուրդ միջնորդությունը և այլն և այլն։ Այս էլ գործավ անկյուտ Աբովյանի Վերք Հայաստանի գործի մեջ Մուսայի մի Հռիփսիմեի վրա երազում սիրահարվիլը, որին ոչ տեսել է, ոչ ճանաչում է և ոչ գիտե։ Մենք չգիտենք, թե ինչ մտածենք այս երևույթների վրա, բայց և այնպես գրական թերություն և հնարների աղքատություն ենք համարում։ Բացի սորանից, դժար թե կարելի է ըսել տալ այն ատելության պարզամտություն լսողի կողմից (գուցե մենք սխալվում ենք այսպես կարծելով), որ հալած եղի տեղ ընդունի այս երազում ակամած, բայց լրջության մեջ իրագործված սերը։ Ուշեիցե. «աստուած Թողութիւն շնորհնաջէ»։

Գարեգինը շատ է գովված. նորա գործերը գովեստի շափով չեն։

Հեղինակը իր կողմից խոսելով հակամետ է պարծարել նորա գլուխը, բայց ինքը Գարեգինը իր ներգործությամբ դամահանում է հեղինակին և շատ տեղ երևում է ոչ ավելի, քան թե մի խեղճ սիրացու։

Մենք, վերևը, երկու խոսքով մեղադրեցինք Սոսի քարտեի գլխին աղոթելը և այն հերիք ենք համարում, որ վերստին չհիշենք ապաստաժի անհատաշելի լինելը, աղոթիկների նարեկը, Եփրեմ Սորինը, Սազմոսը, Սոսի ծնրադրություններից քարերի փոս ընկնելը, Գարեգնի սրտի զեղմունքը, Յուդարների մոմերը և այլն և այլն, բայց այսքան ատելված ենք ասել, որ Սոսը, որքան մենք այժմ նորան ճանաչում ենք, շատ հեռու է այդ տեսակ բաներից։ Եվ զարմանում ենք. ի՛նչ հարկ կա Սոսի սիրող, երգող, ուրախ և աշխատասեր բնավորությունը, որ ամեն տեղ երևում է, այդ մի դիպվածում բռնաբարելով կեղծ հատկություններ դնել նորա վրա։

*Սոս և Վարդիթերի մեջ կան տեղեր, ուր ֆատալիզմը (ճակատագրականություն) ազատ հանդես է տառնում։ Սոսին և Վարդիթերին, որ չպիտի հասնեին իրենց ցանկության, միևնույն վիճակախոսքն են դուրս գալիս, որ գուշակում է նոցա գլխի դալիքը։ Իհարկե կարելի է ասել, որ պատահմունք է այս. կհամաձայնեինք , եթե հեղինակը այդ վիճակները հանելով առաջուց չտեսներ Սոսի և Վարդիթերի գլխին պատրաստվող փոթորիկը։ Եվ այս դեռ բոլորը չէ. «...համա, խե՛ղճ աղա, զուր ես քեզ տրորում. ինչ կարծես կարծի էդ մի կարծիլ. ասված դրան քեզ համար չի ստեղծել... ինչ գրվել ա էն պտի ըլնիլ. ճակատի գրվածը ջնջվիլ չի. հարյուր տարեն մեռած մարդի գլուխն էլ հողի տակիցը դուրս ա գալի, ամեն բանը խարար էլած ա ըլնում, համա, էն դիրը մնում ա. արա՛ ինչ կուզես. լա՛վ, հետո կտեսնենք» (եր. 25)։ Հետո — «...համա, դարդակ ամբար, դարդակ չվալ. էնքան գնա արի, ոտներիդ տակին էլ կաշի չմնա, էնքան ճամփեքը չափի հոգիդ դուս գա» (եր. 66)։— «...քսենց խորհուրդ արին իրենց միջին, համա, ասված իր բանը գիտի...» (եր. 204)։

Այս խոսքերը վիպասանության մեջ ներգործող մարդոց բնությունը չէ դրված, որ ներելի էր, որովհետև ժողովրդի մեջ եթե կա այս վարդապետությունը, հեղինակը մեղավոր կամ պատասխանատու չէ. նա իր վիպը առել է ժողովրդի մեջ եղածը նկարագրել, բայց ցավն այս է, որ հեղինակը ինքը իր կողմից ասում է։ Հեղինակը, իբրև բանաստեղծ իրավունք չունի տարաժամ և այն իր բերնից խոսելով մերկացնել ապագայի վարագույրը։ Իբրև գրագետ, իբրև հեղինակ առավել ևս իրավունք չունի այսպիսի խոսքերի հանդես տալով դարավոր և խավար ժամանակներից սերմանված և ազգությանն հողի վրա բուսած փուշերին ջուր ցողել։ Մենք հավատում ենք, որ ոչ միայն աշտարակցիք, այլ և ուրիշ շատ հարգարժանք կարդալով պ. Պռոշյանցի խոսքերը ոչ միայն չեն երկբայիլ այդ վարդապետության վրա, այլ սովորական, արարատյան ոճով կասեն, թե այդ ռավնտարանի կողքին է գրած»։

Ինչպես հասկանանք Տիրանի տված թըլիսմը, նորա բովանդակությունը և գործի վերջը հա՛ր ու նման այդ բովանդակության։ Ասես թե մի իշխան պատվեր է տվել իր ծառային և ծառան, առանց տիրոջ մի խոսքը ևս մոռնալու, կատարում է պատվերը։ Մենք գիտենք, որ մեր ազգը ինչպես նաև ամեն ազգ, եթե հանենք նոցա միջից լուսավորյալ բաժինը, հավատում է կախարդության. խնդիրը այդ չէ, և մենք դրա վրա վեճ չունինք. այլ այն մանավանդ, թե հարկավո՞ր է պահպանել ժողովրդի վնասակար և մոլորական նախապաշարմունքները և նանրահավատությունքը. թե՛ դրա հակառակ, բնության օրենքներով հրաշ

է լինում նորան, բայց հասարակ ժողովուրդը, որ առանց նորան էլ սրամադրված է կախարդության և շար ոգիների հավատալու, ի՞նչպես բանի վերջը— կատաստրոֆը— չվերագրե Քըլիսամի գործության, երբ վարդիթների մահից հետո, դուրս է գալիս նորա ծոցից այն ծակ մարգարեությունը, և երբ նորա բովանդակությունը ուրիշ բան չէ, եթե ոչ ներկա անցքի նկարա տեսարանի առաջուց արած ճիշտ ստորագրությունը, որ առանց և մեկ մազի չափ վրիպելու կատարվել է: Ինչպես առաջ էլ ասացինք, մենք բան չէինք ունենալ արդո հեղինակին ասելու, եթե նա այս կամ այն անձը նկարագրեր կախարդության հավատացող. այդ բնական է, ոչ միայն մեզ հայերիս այլև եվրոպացոց և մինչև այն աստիճան բնական, որ ոչ միայն ինկվիզիցիանը այլև եվրոպական կառավարությունքը, որպես նաև բողոքական տերությանց մեջ, ստուգապես հավատացած լինելով կախարդության և կախարդների գործակցության շար ոգիների հետ, այնքան վախենում էին այդ կախարդ անվանված խաբեբաներից, կամ շատ անգամ կախարդ անունով ամբաստանված և զրպարտված խնդձերից, որ անողորմաբար դատապարտում էին նորանց դեպի մահ*: Բայց պ. Պռոշյանցը իր բերնից է խոսում այս բաների վրա և նորա նկարագրությունը, որ վերաբերվում էր մեր հիշած անցքին,

---

* «Կախարդ կնոջ վերջին անգամ դատապարտվով մահապարտվիլը Գերմանիա մեջ, 1782-ին եղավ, բայց 1793-ին Լեհաստանի, հարավային-պրուսիական, սահմանագլխում էրվեցան գործյալ երկու կախարդ: Իսկ քե ո՞րքան կախարդներ էրվել ու ապրվել են առաջին ժամանակներում, այդ մասին կարող են վկայել հետևյալ մի քանի իրողությունքը: Բրաունշվեյգի մեջ 1590 և 1600 թվականներում այնքան կախարդ էին էրում (ներքնմն օրը 10—12 հատ), որ դյուղապարտության հրապարակը նմանում էր կրակ ընկած անտառի: Ռեյսյան գրսությոն մեջ 1640-ից մինչև 1652 (12 տարում) հազար կախարդ էին գտապատարված են գնդի մահ. նոցա մեջ կային նաև երեխայի մինից մինչև վեց տասնյակ!!! Օանաբրյուկում, 1640-ին, մինչև 80 կախարդ էին խարույկի վրա մոխրացան: Վերջնենֆիլյան կոմսության մեջ, միայն մի շաբաթում կրակին գրվեցան հարյուր երեսուն երեք կախարդ կին: 1832-ին Գանցիգի մեջ, խաժամուժ ամբոխը ծովը նետեց մի ազգանվի կին, որի անունը կախարդ էր հռչակված և անազդարար խեղդեց նորան ծովում: 1854-ին Շլեզվիգյան գնդերից մեկի մեջ ամենքը հրամայվեցան գնդի գերեզման հուղարկավորելուց մի պառավի մարմին, որովհետև նորան կախարդ էին համարում» (ուսուցչապետ և վարչապետ բժշկության Բորլ, տե՛ս նորա գործը առա Вартманнъ — Будьте здоровы, in 8-0 1862 СПБ 13 և 14 երեսներում: Գիտի ցավել միայն, որ ուսումնական գերմանացին չէ ցույց տալիս աղբյուրները, որանցից հանել էր այս հարցասիրության արժանի տեղեկությունքը): Քե առաջին ժամանակներում մանավանդ, առաջապես հավատում էին կախարդության նաև հայական մարդիկ, կամ գոնե հարկադրված էին հավատացող ձևանալ, գորան վկայում է այն իրողությունը, որ Մեծ Կեպլեր անմահ աստեղագուշը, երբ 1584-ին շտապեց գնալ Տյուրինգեն իր մայրը խոշտանգից ազատելու համար, նա կարոդացավ հաջողել իր ջանքության միայն նորանով, որ ապացուցեց, քե իր մայրը բնավ կախարդության արվեստը չգիտե և քե կախարդական ոգին երբեք նորան հրացած չէ: Կեպլերը բնավ չաշխատեցավ մերժել կախարդության գոյությունը և պաշտպանելով իր մայրը չոկ որպես ազատ կախարդական արվեստին, լռելյայն խոստովանեցավ այդ սրանչելի արվեստի գոյությունը: Մենք է մեզ ընդունել, քե Կեպլերի պես մարդը կարող էր հավատալ այդպիսի բանի, բայց

այնպիսի կերպարանք ունի, որ կարծես թե բոլոր վիպասանության խորհուրդը ուրիշ բան չէ, եթե ոչ կախարդության էությունը և ներգործականությունը ապացուցանել։ Մենք թվում է թե այս ուղղությունը դատապարտելու մեծ իրավունք ունինք, մանավանդ եթե հիշենք թե պարզ և հասարակ ժողովրդի համար ո՞րքան վնասակար են այդպիսի բաները։ Լուսավորության, դպրության, բանասաղծի և հեղինակի պատասխանատվությունն է ժողովրդի հասկացողությունը մաքրել, նախապաշարմանց և նանրահավատության մառախուղները ցրվել։ Եվ ասես թե լուսավորության բռնաբարված իրավունքը, իր վրեժը հեղինակից հանելու համար, ձգել է նորան մի տրամաբանական հակասության մեջ։ Սուրբ Հաշի պատին էր, որ Սոսը հայտնի տեսավ իր փեսայի և միևնույն ատամ իր քույր դավաճանության։ Ի՞նչպես կարելի է թույլ տալ, որ Սոսը այդքան բանից հետո հավատար Տիրանին և միևնույն աստիճան, որ կապոց առնուր նորանից որպես Բրլիամ և Գարնգնից ծածուկ ուղարկեր վարդիթերին։

Արդեն ասած ենք, որ Սոս և վարդիթերի տիար կողմերը այն տողերումն են, ուր հեղինակը, դուրս գալով բնականի սահմանից, օգնություն է խնդրում երևակայությունից։ Սորա մի քանի օրինակը ցույց տվինք, բայց համեմատաբար ավելի թեթև հանգամանաց մեջ։ Անցքի

այսքանը հշմարիտ է, որ թե նա սկսեր բուն կախարդության գործիքը մերժել, մարդը կհրվեր։ Կնայների մոր մորաքույրը, արդեն բանի տարով գործանից առաջ որպես կախարդ մոխրացել էր խարույկի վրա (այս անցեկությունները առնում ենք Լիրիցից և Արագոյից)։

Անգլիա մեջ, կախարդի վերջին անգամ դատաստանով մահապարտվիլը, 1712-ին եղավ, ուր նորջեմպդեն քաղարում հինգ կին կախվեցան որպես կախարդ։ Տե՛ս Parrs Works, vol. IV. p. 182։

Սպանիա մեջ, վերջին անգամ, 1781-ին, գատաստանով էրվեցավ մեկ կախարդ։ Տե՛ս Ticknor's Hist. of Sp. lit., vol. III, p. 238 (այս երկու վկայությունը փոխ ենք առնում հռչակավոր Բոքլի անմահ գործից Buckle, His. of Civilisation in England)։

Այս վկայությամբ մենք ցույց տվինք կախարդի Սպանիա մեջ վերջին անգամ դատաստանով մահապարտվիլը, բայց չկրնար հետևցնել սորանից թե 1781-ից հետո խոպան ազատ մնացին կախարդները։ Սպանիան այն աշխարհը չէր, որ շուտով տեղի տար ազատ մնացին կախարդներու։ Ինկվիզիցիոնը շատ խոր մտել էր բանների կարգի մեջ և մարդասեր լուսավորության. ինկվիզիցիոնը շատ խոր մտել էր բանների կարգի մեջ և երկար ժամանակ կտրվեց ոչ նորա վնասակար ազդեցությունը։ Մեզ հավատանք մի բանի պատմաբաններին, ապա պիտի ասենք, որ սպանիացին, նույնիսկ ինկվիզիցիոնի կատաղության ժամանակ, շատ անգամ ազատականում էր, եթե սրբազան տանեցի Լուիս տոնեական աուտոդաֆեները մի փորր ուշանում էին։ Նորա քորերը սովորել էին նեղշնչել մարդկային մարմնի ծուխը և շոգին. նորա աչքերը չէին կախվում այն քանի ծուխերից, որ տարածվում էին անբախտ նահատակների բորբոքված խարույկներից. և այս էր պատճառը, որ կրոնական բարեբասության տեղատվության կատարելագործ. նորա էր։ Եվ արդ՛յոք, 1781-ից հետո էլ կախարդները շարունակեցան կատարելագործ. նորա դարձյալ դատապարտվում էին, թեև ոչ դեպի խարույկ, քեև լոկ դեպի մի հրապարակական խայտառակություն։ Հոյակապ Ջրանսուա Արագոն, Փարիզի գիտությանց ընդհանուր քարտուղարը, որ ամենայն ազատ և անփոխանակելի առնեղությամբ իր անփոխանակելի և հռչակավոր անգամ և անփոխանակելի առնեղությամբ իր անփոխանակելի և հռչակավոր անգամ և զարմանալի հարատև լեզվով կան վարքագրության մեջ (գլ. XV) իր առվորական և զարմանալի հարատև լեզվով պատմում է մեզ հետևյալը. «1807-ին, վայենցիո մեջ, դեռ կար ինկվիզիցիոնական

կատաստրոֆը, որ ամեն իրավունքով պահանջում է հեղինակից ավելի համառություն ու ճարտարություն, ուր պիտի որ գործի ամբողջ ընթացքի մեջ լարված ինքերը ավելի ճարտարությամբ, ավելի հնարագիտությամբ և որ գլխավորն է՝ ավելի բնականությամբ միանան, հավասարվին և կենտրոնանան, ինչպես արևի ճառագայթքը անցնելով մի ոսպնաձև ապակուց, որ իսկույն կրակին,— այդ կատաստրոֆը, ենթե համեմատենք գործի ընդհանուր արժանավորության հետ, շատ քիչ է կերպարանա. գործված. և ոչ միայն այսչափ, այլև անբնական: Այո՛, հեղինակի բուն խորհուրդը Սոսի կամ Վարդիթների պատմությունը չէ, ինչպես առաջ էլ ասած ենք, այլ Աշտարակի կյանքը. բայց և այնպես, երբ ինչ որպես օգնական, առել է Սոսը, Վարդիթները և սիրու կրակը, ցանկալի էր մեզ, որ ավելի բնական շրջանակի մեջ տեսնեինք ցավալի կատաստրոֆի պատկերը:

Անբնական՛ն է, երբ Վարդիթները որպես տատան և մեկ տարեկան աղջիկ, մի ջևերը սասանեցնող սխուր անցքից կաթվածահար է լինում: Անբնական՛ն է, երբ կաթվածից հոդեվարք մարդը ցույց է տալիս ուղեղի և ջևերի անխոտոր և առողջ պաշտոնակատարություն: Ենթե նորա ուղեղը և ջևերը այն վիճակում են, որ նա հանդիսա խոսում է, ուղիղ մտածում է, հիշողությունը չէ կորցնում, աչքը տեսնում է, և ականջը լսում, էլ

գաստրանը և ժամանակ ժամանակ ներգործում էր: Ստո՛ւգ է, պատվելի հայրերը մարդ չէին էրում, բայց հանում էին ծաղրալի և պժգալի վճիռներ: Իմ այդ բաղարի մեջ նոյն ժամանակ, արդարև գաստրանը պարապում էր մի կախարդ հնոջ գործով: Նորա տան ածելին նորան բոլոր քաղքում էշի վրա և երեսը դեպի պոչը նստեցուցած. հնոջ մարմնի վերին բաժինը—մինչև գոտին—մերկացուցած էր. պատշաճից ստիպվելով մի մածուցիկ նյութ էին քսել մերկ մարմնի վերա, ասում են թե մեղր էր բայց նորը և ծածկել էին թեթև և մանր փետուրներով, այնպես, որ խնդճ կինը, մարդու գլխով հավի էր նմանում: Հանդիսավոր թափորը, որի բամակից գնում էր մի բարմաթիվ ամբոխ, մի բանի ժամանակ կանգնեցավ մայր եկեղեցու հրապարակի վրա, ուր իմ իշեանն էլ ինձ տացին, ես հնոջը ծածկեցին, թիով զարկելով մեջքին, բայց ես չեմ կարող հաստատել այս պատմությունը, պատճառ, ես տանը չէի, երբ պժգալի թափորը անցնում էր իմ պատուհանների առաջից: Ահա, այսպիսի տեսարաններով XIX դարու սկզբում զվարճացնում էին բնակիչներին Սպանիո գլխավոր բազաքներից մինի մեջ, ուր հռչակավոր համալսարան կա և այլն:

Գևմանացի, հռչակավոր բիմիկոս, Հումաոս Լիբիգը, իր բիմիական նամակների մեջ (շորրորդ տպագրություն, 1858, Միւնխենն) այսպես է խոսում: «...Դժար չէ հասկանալ, ես այդ կերպով (տանջանքով) շատերը բանադատվեցան խոստովանիլ ես կախարդ էինս: Այժմ, կախարդների համար խորուկներ չկան, ո՛չ այն պատճառով, որ այժմ չեն հավատում կախարդների գոյության, այլ այն պատճառով, որ մենք, բնությունը ավելի լավ ճանաչելով, գիտենք, ես այն բոլորը, ինչ բանում հանցավոր էին համարվում այն անբախտներս, պիտի վերագրել տատանայի, ո՛չ, այլ միայն բնական պատճառներու: Հաշտարարվոր այսպիսի անբախտներ էշաքոտների վրա գլխապարտվեցան այն տեսակ մարդոց մեծով, որ պաշտպանում էին կախարդության գոյության վարդապետությունը, իսկ ժամանակներից հետո, երբ սկսվեցին պատճառները և իրողությունը քննել, որոնց վրա հիմնվում էին գաստրները, երբ աշխարհյամբ տատանեցին, այն ժամանակ գտան, որ այն բոլոր, գրանաց, կախարդության գոյությունը հաստատող կարծիքները հիմ-

ինչ պատճառից է մեռնում։ Ոտքե՞րն են կաթվածահարվել թե՞ ձեռքերը. այդպիսի դիպվածում նա կարող է շատ տաբիներ ապրիլ։ Թոքե՞րը կամ սի՞րտն է կաթվածահար եղել, այն ժամանակ պիտի որ իսկույն մեռներ, առանց շաբաթներով ապրելու։ Իսկ մյուս ներքին գործարանների կաթվածահարությունը, երբ ոչ պիտի ապահեին իսկույն, պիտի անշուշտ պատճառ դառնային ուղեղի և ջլերի ուժիդ պաշտոնատարության խանգարվելու։

Թե Սոսն ասես, շատ կեղծ վիճակում է։ Ցրտում, գիխարաց, ոտքը բորիկ ման է գալիս երեք գազ ձնի միջում և այն ցուրտ ձմեռ ու Արաբոտ

սառը ջրում լողանալով, սառույցի վրա ինք ընկնելով, սոված և ծարավ, բայց և այնպես նորա երեսի գույնը բնավ չէ փոչում, նորա առողջությունը չէ սասանում. իսկ նրբ տանը նստած լսում է վարպետների մահը, խո՛ր հոգոց է քաշում, մեջքի վրա հետ գնում, գլուխը Գարնգնի ձեռքի վրա դնելով խնդրում է, որ աշխատի երկուսին (իրեն և վարպետներին) իրար կշտի բաղել տա, իր մորը մխիթարե, եղբարցը մնաս բարով ասե, ինքն էլ ուրախ կենա (!), հետո, աչքերը վեր բե բարձրացնում ազոթք անում ու հոգին ավանդում: Իրար մոտ բաղնելու խնդիրը անում է նաև վարպետները, երբ դեռ Սոսը մեռած չէ: Արդո հեղինակը այստեղ մի վայրկյան ընծայում է վարպետներին Փանվելի աղջկա շնորհքը:

Մենք չենք ուզում այս բոլոր անբնական և շատ հույլ նկարագրված անցքերը քննության դնենալի տակ ձգել, այդ շատ երկար կլինի. առանց նորան էլ երկարում է մեր հատվածը: Գուցե ավելորդ էլ լիներ այս աշքի հայտնի թուլության վրա շատ խոսել, մանավանդ որ ինքը արդո հեղինակը կամ մեր ընթերցողքը, նրին ուշադրությամբ կարդան այս անցքերի նկարագրությունը, որ մենք հարազատությամբ, որպես քաղված, հանեցինք բնագրից (եր. 218—222) իրենք էլ կտեսնեն մեր տեսած անբնականությունը և հակասությունը: Այսչափ միայն ասում ենք, որ վիպասանության շինվածքին մեզ հարված է տվել կատասարոֆի այս անբնականությունը:

բանը: Ով գո՛ւր, պ. Զամուռճյանի աշակերտը, օգնեցեք նորան... Ծերունի է: Հատկանում ենք ձեր սրտի ցավը. և ինչպե՞ս չցավիր, ի՞նչպես չմորմոքվիր, «վարագույրը բացվեցավ», ձեր գալը անցնելու վրա, ձեր սկզբունքները և մե՛ր ազգի մեջ իր հոգին փչելու վրա: Գիտենք, ձեր սրտածը հոգնվարքի ցնցյումներ են. նաև արդը օրհասականը ընդ վախճանել շնչոյն հզորապոյն կռուհին», առում է մեր սուրբ վարդապետ Ներսես Բայց այսչափ առատույց իմացեք, որ ինն անհավատ, անկրոն, հերետիկոս, բողոքական, մոդորական և այլն և այլն ածականներով պիտի չլենք ձեր բերիների էջերը, մեր աչքում ոչինչ բան ատած չենք: Ինն բան ունիք, որ վայել էր մարդու, ասացեք. ապա ինչ այդ ածականները Իսար չեն ըննե՞ր. առնող ծախողը չկա՞. կրցա՞ել եսախցնել:

Գնացե՛ք, գնացեք ծո՛ւնկ չորեցեք «Մխիթարեանի՞ հերետիկոսարանի՞» առջեր. մի՛ վախնար համբուրել նորա շեմքը, սուրբ է, մարդկային արյունով պղծված չէ, ինչպես ձեր բարոգած ինկվիզիցիոնի շեմքը: Նորա մտի՛ր, այնտեղ մարդ էրնու խարույկ չկա, ուսաի և ոչ ձեզ երկյուղ: Թերևս Մեխիթարեան[8] բազաբավարությունն անելով խանվի մրճ ալ տա... ինքզինքին գտնար Բայց... Մեղա աստուծու... բուն նորա արյունով պղծված չեղածն է պատճառը, բուն այնտեղ մարդ չերևելն է պատճառը, բուն մարդկային, բրիատոնեական և ո՛չ գազանական սկզբունքներ կամ կրքեր պաշտվելն է պատճառը, որ պ. Զամուռճյանը Մխիթարեան հերետիկոսարան անելով տառեր անցեր է»:

№ Սուրբ Ներսես վարդապետի վերաբերությամբ ևմեր խոսքը նորա գրով տպեցինց, որպեսզի համար պ. Զամուռճյանի պարզապատվորներից որք են, Վանցի Գազարը[9], Տիրացու Հովհաննեի Տեր Գազարեն[10] և նոցա նմանները, որոնց անունները քաղցր չէ մեզ հիշել և որոնց հետ մասն ու բաժին չունինք: Մխիթարեան հերետիկոսարանը նորանց չէ ճանաչում. նշանակում է, նորա ուզղափառ են, ինն հերետիկոս չեն, ապա ուրեմն, և պ. Զամուռճյանի ուզածը... «Ըրոյդ գրեզ»:

Եվ որպես թե հերիք չէր ինչ եղել էր. այն պատմական տապանադրից հետո.—

«Անհա սիրո պատուհներ,
Մի ազահ մարդի զոհեր.
Ով ըստեղից անց կենա
Հիշի Սոսե ու վարդիքեր»,

որ շատ ընտիր է, կարճ և ազդու, դնում է այն Գարնգնի անտեր ողբը: Ամբողջ գործի մեջ, որ բոլոր ոտանավորը տակ ու վերն ես անում, մեկ հատ չկա այսպիսի անխորհուրդ անաջող և ցուրտ ոտանավոր: Պատճառը շատ բնական է: Գործը հեղինակի մտքում և սրտում արդեն վերջացած է. նորա ոգին էլ բան չունի այս գործի հետ, բայց երբ բանաստեղծում ես գրիչը ինչ որ լինի մի բան գրել, հայտնի բան է, որ Գարնգնի ողբի պես կլինի, որ ոչ բարով պիտի ասեր:

Աղգային ավանդությունքը որքան կարեկի է, անշուշտ, արժա՛ն է քրքրել և դուրս բերել գարավոր փոշիների տակից, բայց ավանդություն ևնք ասում, որ իբրև մի պատմական սերմ, միշտ կարող են ազգի կյանքի մեջ ծլել, ծաղկիլ և պտուղ բերել: Ազգային ավանդություն է դարբինների սալը ծեծելը, որ Արտավազդը դուրս չգա ու աշխարհը չքանդե. և մենք մեծ ուրախություն զգացինք, երբ տեսանք (եր. 42), որ տակավին պաշտվում է այդ անտիկյան ավանդությունը. թեև այդ էլ կրոնական գույն է առացել դարձյալ, որովհետև ավագ ուրբաթ գիշերն է միայն կատարվում: Բայց, ինչպես և է, այնուամենայնիվ ավանդություն ևնք կենդանի է և այն պատմական ավանդություն, որի լոկ հիշելը բերում է մարդու երևակայության առջև ամբողջ հայ աշխարհը, որի վրայից արդե՛ն գլորվել են շատ դարեր:

Բայց խոստովանում ևնք, որ Ականատեսի ավանդությունը (եր. 108) չունի մի դորա նման արժեք: Անշուշտ, հեղինակը չէ շարադրել նորան՝ նա առնում է ազգի հաճախացողությունից, բայց մենք մի փոքր առաջ ասածներս վերստին կրկնում ևնք, թե դպրության և լուսավորության խորհուրդը այն չէ, որ ամեն անցած խավար լույս քարոզե, այլ մեն դարերի ծանրության տակ ճնշվածին անխտիր ծունր դնե, այլ մեն դարերի ծանրության տակ ճնշվածին անխտիր ծունր դնե, այլ որպեսզի փարատե այդ խավարը: Այդ տեսակ բաները, մեր կարծիքով զգուշության պետք ունին. և հեղինակը հանդես հանելով մի նմանօրինակ բան, պարտական է այնպիսի ընթացք տալ բանին, որ տան և ինն դարու մեջ ուխերորդ ամենախավար դարին արձագանք եղած չլինի: Միջին դարերում, ջուրը կարող էր ուր ասես երթալ մի գավազանի դարկելով, թևևս, ձորից դեպի վեր, սարի գլուխը բարձրանալ, բայց այն օրից, երբ Գալիլևյը իր գեղակները ձգեց Փիզայի թևք զանգատնից դեպի վայր, այն օրից, երբ ծանրությունը որպես ընդհանուր հատկություն տրվեցավ մարմիններին, այն օրից, երբ գտան հեղուկ և օդանման թյուն տրվեցավ մարմիններին, ամեն կողմ հավասար մարմինների օրենքը— թե նոցա ճնշողությունը

է, երբ օդի ճնշողության ատոմները չափվեցավ և «բնությունը դարտակությունից վախում է»* առածը մերժվեցավ, այն օրից, երբ Նյուտոնը գտավ կենտրոնական առաձգության օրենքը, այդ օրերից բոնած էլ ջուրը չէ հնազանդվում գավազաններին կամ Ականատեներին։ Եվ այս է պատճառը, որ Երևանի Գալմի ջուրը, որի ճանապարհը բավական ատրածությամբ երբեմն փորած ու բացած էր գնալի էջմիածին, այսօր մի այգպիսի սքանչելի կերպով չէ կարող Ուշ-Քևիևների բարձրավանդակից անցնել, որ հետո վազեր գնալի էջմիածին, ու խե՛ղճ միաբանին ազատեր այն անմաքուր ջրից Սառը-Քանքանի, որի մեջ օձ ասես, գորտ ասես կամ ուրիշ մանր կենդանիք լիքն են։

Այսօր, երբ ատակավին գիտությունը ոտք չէ կոխել ազգի մեջ, գոնե լսվում է մի խուլ ազազակ այսքան դարերով անդործ և կաթվածահար թոքերի կիսակենդան ներգործությունից, որոնք զգում են առողջ օդի կարոտություն, որքան կարող էին զգալ։ Խորհրդավոր ժամանակում ենք ապրում մենք. և մեծ պարտականություն կա մեր վրա, գրգռել այդ թոքերի գործունեությունը առողջ օդ ներս շնչելով. հերիք է, որքան թմրեցուցիչ թույն մտել է նորա մեջ, մեզ մնում է այժմ դեղթափներ գործ դնել։

Մենք միջնադարյան ազգ չենք. միջին դարերում ենք ընկանք. միջին դարերում մեր հարատևությունը կորուցինք։ Չէ կարող լինել մի այնպիսի բան, միջին դարերի պատկանավոր, որ օգտակար և փրկարար խորհուրդ ունենա մեր համար։ Միջին դարերի ժանգը, որ նստել է մեր վրա, մենք պարտական չենք պահել։ Կան ազգեր, որ միջին դարերում ծնեցան, նորա ամուր կապված են այդ դարերի հետ և ոտքա ժանգը, երբ երևում է նոցա վրա, նորա դեռ կարող են պատմական իրավունքով արդարացնել. ժանգատ օրորոցի մեջ բացին նորա իրենց աչքերը։ Մեր հարաբերությունը միջին դարերի հետ այնպես չէ։ Իբրև ազգ անտիկյան ենք. իբրև քրիստոնյա, երբ ոչ նույնպես անտիկյան, քանի որում առաջին երեք դարերում քրիստոնեությունը քաղաքացու իրավունք չուներ Հայաստանում, դեռ անտիկյան դարերի վերջի և միջին դարերի սկզբին պատկանավոր։ Ի՞նչ կարող են մեզ հիշեցնել միջին դարերը. կոթողատում, դերություն, կոտորած, արյուն, կրակ, սով, խավար և մահ։ Սորա են մեզ համար միջին դարերի բնութը և նոցա բնոր ատակ ճնշված է այսօր Հայ մարդը։ Թափել այդ բնոր մեր վրայից,— ահա՛ մեր գործը։ Մեր ազգությունը, մեր կրոնը, ոչ թե վնաս կրելու չէ միջնադարյան ուղղություններ մերժելուց, այլ դորա հակառակ այդ մերժողությունը միակ պայման է նոցա առաջադիմության**։ Քաջ Լամբրոնացին մի ուրիշ

---

* „Natura horor vacui".

** Առհասարակ փորձական կամ բնական գիտությանց ընդամիքը իրենց անուսումնասիրությունը և նրա հայացքը հիմնում են այն սուտ վարդապետության վրա, թե այդ գիտությունքը վնասակար են կրոնին։ Այս անհիմնի սխալ է, քանի որ առարկայը քարոզում է տատանում անհիմնությունը նորա արարածներումն են խարգվում։ Ինչի՞ ուրեմն

դիպվածով ազազակում է. «Ջմանկունս ծննալ մեզ ի քաղդէացւոց սերմանէն զվիմի հարցուք»։ Մենք, մի փոքր փոփոխությամբ ձայնակից ենք լինում մեր երանաշնորհ վարդապետի բացականչության. «Ջմանկունս ծննալ մեզ ի միջին գարուց սերմանէն զվիմի՛ հարցուք»։ Թողունք արևմտյան նոր ազգերին, տեսնելով իրենց հին սազգական ամրոցների մնացորդքը, սասամնաժոր պարիսպները և գոթական տաճարները քաղցրությամբ հիշել միջին գարերը, երբ միայն կարող էին, որովհետև նոքա էլ, բնև Հռոմից ազատված, այնուամենայնիվ, ոչ միշտ վարդեր են քաղել իրենց այգիներից, իսկ մենք, որ դո՛հ գնացինք միջին դարերի խավարին, չենք կարող քաղցր հիշատակ ունենալ նոցա մասին նայելով մեր ամրոցների, քաղաքների և տաճարների ավերակներին։

Գիտենք զսր չեն անցնում դարերը. այժմեքն նոքա իրենց ազգեցությունը անում են ազգերի վրա. ընդունում ենք, բայց ինչ է մեր պաշտոնը։ Ի՞նչ է քաղաքակրթությունը. status quo? ամեն այդ ազգեցությունքը, որոնց հետևանքը և նշմարքը երևում է մինչև այսօր ազգի մեջ, այդ Դանիելի ասած «ասերածի պղծությիւնը» անխոնր սրբացնե՞լ, անխոնր նոցա առջև ծունկ չոքել ու խո՞նկ ծխել, որովհետև մենք անխոնր նոցա առջև ծունկ չոքել ու խո՞նկ ծխել, որովհետև մենք հազարամյա է, իսկ մյուսը հինգհարյուրամյա, ըե՞ չընդել այդ ազգեցությունց հետևանքն անգամ։ Նվ եթե պիտի կապենք մեզ այդ խավար անցածի հետ, եթե խոստովանելով մեր հիվանդությունը, այնուամենայնայնիվ պիտի ուզենք միջնադարյան թարախը պատվաստել մեր վրա որպես նախապահպանողական հնար (ինչի՞ց), եթե նույնիսկ մեր ցավի և հիվանդության պատճառը պիտի առնունք որպես ճար ու դեղ, է՛լ ո՞ւր ենք խոսում կրթության և լուսավորության վրա, ո՛ւր ենք առաջադիմության և քաղաքակրթություն բառերը բերան առնում։

Գեղեցիկ է խոսում հոյակապ Լիբիղը իր նամակների մեջ. «Ներկայությունը, հարյուր հազար դիպվածներում առեղծում է հարյուր հազար մոլորություն. և չկա ոչի՛նչ բան այնպես վնասակար գիտության առաջադիմության, ոչի՛նչ բան, այնպես, հասկացողությունքը խավարեցնող, քան եթե մի հին մոլորություն, որովհետև շատ գժվար է հերքել սուտ վարդապետությունը. պատճառ, նա հիմնված է այն հասկացողության վրա, եթե «ստուգը ճշմարիտ է»։ Միջնադարյան բոլոր համակարգությունքը հիմնված են այդ նոսր գիրքով ապած վարդապետության վրա։

Մենք փորձերով, և շատ տարրեր անգերում, տեսած ենք, որ մեր հասարակ ժողովուրդը շատ անգամ ավելի ազատ է միջնադարյան լուծից, քան եթե մեր պատվելի դրագետքը։ Միջին դարերից հետս մինչև

վախենում են այդ արաբածքը բննելուց։ Բնական գիտությունը առաջ է գնում մինչև բանների «ինդը», «եթե մենք ուզենք ավելի հետու նրթալ, այն ժամանակ մի հատ միայն կտնանենք պատճառ պատճառի, արարիչ աստվածը» (Կատեքիաժ, Ներածականփոխհարցություններ կենդանական աշխատեմժ. ան՛ս այդ պատվական աշխատության վերջին տողերը յ19։

այսօր մի քանի նոր դարեր էլ անցան. նրա դարերը զուր չեն անցնում, ապա ուրեմն այս նոր դարերը բնականաբար, քիչ շատ թուլացուցին միջին դարերի մեր ժողովուրդի վրա արած ազդեցությունը. այո՛, շատ բան էլ իսպառ մոռացուցին: Բայց մեր պարոնները անդադար այդ միջին դարերի կարեկարատում լողալով ազգության և լուսավորության անունով, աշխատում են նորոգել և հաստատել ազգի վրա այդ խավար ուղղության տիրապետությունը: Ի՞նչ է դրա խորհուրդը. ի՞նչ հույս ունին դրանից:

Խորհուրդ չկա. հույսն էլ թնճուկության արդյունք է: Թող այդպիսի պարոնները լավ տորմին ընդհանուր պատմությունը և նորա հետ կապակից մեր ազգի պատմությունը, Մխիթարյանց տպած գրքերովը ո՛չ, այլ բուն աղբյուրներից և վերլուծական ոճով: Թող քրքրեն ընդհանուր դպրության, նոր և լուսավոր ազգերի քաղաքակրթության պատմությունը, այդ քաղաքակրթության օրենքները և նոցա կերպարանագործության հարակից եղած հանգամանքները, այն ժամանակ իրենք էլ կտեսանեն միջնադարյան ուղղության ամլությունը և տարապայման չքավորությունը: Բայց այս ուսումնասիրությունը կարող է միայն նոր կամ ապագա սերունդին աջողիլ. ինչ որ վերաբերվում է մեր իմաստունները ին, նորա ինչպես նախկայի լուսին, այնպես և ապագայի հետ մասն ու բաժին չունին, և նոցա հետ չէ մեր խոսքը: Մենք և ոչ իսկ ուզում ենք վրդովել նոցա քունը, «ննջեցէք և հանգերուք», ասում ենք նոցա:

Միջնադարյան անշահ ուղղությունը իր ամլությամբ մաշում է կենդանի ազգի ուժը առանց ամենևին արդյունք տալու: Նա նմանում է այն քարն ձվին, որ իրեն բունկալ մնում է հավի ձու ածած տեղում, բոլորովին պիտակարար. և երբ թուխս նկած խեղճ հավը, իր անխոհեմ տիրոջ որկրամոլությամբ, զրկված լինելով իր ածած բոլոր ձվերից, և բնական ազդեցությամբ նստի իր ձու ածած տեղում (այն քարն ձուն էլ չինի կնաստ) խնդրդ ի՛նչ է կորում, այն քարից ձագ դուրս կգա՞: Չէ՞ որ զուր տեղը կվատնի ողորմելին իր ջերմությունը և շատ անգամ գործը կվերջանա հավի մահովը: Հարկ չկա, կարծում ենք, ասել, որ այս բոլոր խոսք ու դրույթը ոչ մի լոկ մեր հեղինակին չեն վերաբերվում, այլ մանավանդ ավելի փոքր բաժինը կարող է հասնիլ նորան, քանի որ նա ուրիշների պես իմաստական գոնկիխոտությանց չէ նվիրել իր անձը (և ուրա՛խ ենք, և փա՛ռք աստուծու) քանի որ կան մարդիկ, մեր արդարացի մեղադրության լիամասն կերպով արժանավոր, որոնց, այո՛, մենք մինչև այսօր պարտական ենք մնացել:

Երաշտության ընդդեմ Նուրբինի ավանդության, թեև իսպառ չգիտենք թե ինչ բան է այդ և ի՛նչ արարողության մնացորդ, բայց և այնպես, կարծում ենք թե հին բան լինի: Սաստիկ զրդռում է այդ բանը մեր հարցասիրությունը, մանավանդ երբ տեսնում ենք, որ շատ խոր արմատացած է նա ազգի հասկացողության մեջ և մեծ վարկ ունի ազգը նորա մասին: «Էս մեր կոտորված երեխեքն էլ— երաշտությունից

գանգատելով ասում են աշտարակցիք իրենց մէջ (եր. 66) — «Նուրին (Լազարե)* էլ չեն ման ածում, բալքի աստուծո սիրտը քաղցրանա վրըներս, մի լիս ու ճար անի»: Սորանից այսչափ միայն գուշակում ենք, ին այդ բանը ընդունվում է որպես մի հաշտեցուցիչ արարողություն և ին երեխայք միայն (որպես անմեղության երեսեցուցի՞չք) պիտի կատարեն:

«Երեխեքն էլ»— պատմում է հեղինակը (եր. 69)— «Նուրին շիններին ու ման ածեցին. երկուսը կռնից բռնեցին**, մինն էլ առպրակ ա վեր կալել, մեկելն էլ մի պատ բըժուլ ու ման են գալի տները, որ դրան առաջին կաննում են, ասում են.

«Նուրին Նուրին էկել ա
Աջրա նուրին*** էկել ա
Շիլա շապիկ հագել ա
Կարմիր գոտիկ կապել ա

Եղ բերեք պորտը խեճեք,
Ջուր բերեք գլխին ածեք
Մեր Նուրինի փայը տվեք,
Ուտենք խմենք բեֆ անենք»:

«Կնանիքը,— շարունակում է հեղինակը,— մի ման ջուր բերում են լցնում էդ Նուրինի գլխին, ու երեխեքանցը բրինձ, կամ եղ, կամ ձու տալի, որ տանեն քեֆ անենա:

Վերևը ասացինք, որ այս բանը հին է երևում մեզ. անշուշտ այս ըոկ ենթադրություն է, բայց մանավանդ ենթադրում ենք այն պատճառով, որ այդ ոտանավորի հետքը կա Նոր-Նախիջևանում. գո՛նե շատ տարի առաջ, ես լսել եմ պառավներից: Որքան միտքս գալիս է, այնտեղ մի փոքր այլայլած է այդ ոտանավորը և ասվում է բոլորովին պիտակատար, առանց որևէ արարողության կամ խորհրդի: Ջորս տող միայն հիշում եմ. ահավասիկ.

«Նուրին Նուրին Նազարեք****
Նուրինը բաղչաե էկիլ է
Շալե շապիկ հագիլ է
կարմիր գոտին կապիլ է»...

---

* Թե ի՛նչ ասել է Լազարե, մենք նույնպես չգիտենք, ինչպես Նուրինը:

** Սորանից ենթադրում ենք, ին ասող շինած Նուրինը մի մարդանման պատճառապատանք է կամ այդպես մի բան, երբ ասում է հեղինակը «կռնից բռնեցին»:

*** Աջրա նուրի խոսքը բնավ չենք հասկանում թե ինչ է ուզում ասել:

**** Արդյոք հարաբերություն կա՞ այս Նազարեքի և մեր շատ ծանոթ Լազարեի մեջ, թե՞ ըոկ նմանություն է:

Այլ ին սրանից հետո էլ ի՛նչ է արել, այդ միտքս չէ, միայն լավ գիտեմ, որ մի քանի տող էլ կար։ Նախիջևանի մեջ բնավ ավանդություն չկա այս Նուբինի մասին. լավ գիտեմ, որ տղայությանս ժամանակ, շատ եմ զրվեցուցել պառավներին, որ պատմեն ինձ, ին ո՛վ է այս Նուբինը կամ Նազարինը, բայց ոչինչ չեմ լսել նոցանից, որովհետև իրենք էլ չգիտեին։ Դեռ զարմանալի է, որ այսքան էլ մնացել է, մանավանդ եթե հիշենք, որ Նախիջևանցին աննցի է և տասն և չորրորդ դարում Հայաստանից դուրս եկած. հայտնի է, ին շատ ավանդություններ կամ ոտանավորք և այլ այսպիսիք, որ վերաբերություն չունեին կրոնի հետ, պիտի կորչեին։ Թևև խնդճ բաներ, բայց և այնպես կարելի է տակավին հավաքել բավական վիճակախաղեր և միքանի ոտանավորք աստվածածնի և ուրիշ սրբերի վրա։ Դեղացիք, որ առաջ ավելի ավանդապահ էին քան ին այժմ, ունին զանազան երգեր, մանավանդ հարսանիքի վերաբերյալ, որ հայտնի են անունով «պարս»։

Արդյոք, Աշտարակը, որ պահել է մինչև այժմ Նուբինի արարողության, պահե՞լ է նույնպես մի ավանդություն կամ հասկացողություն նույնիսկ Նուբինի անձնավորության կամ այդ օտարոտի արարողության մասին և ին պահե՞լ է, ի՞նչ ավանդություն է այդ. աշտարակցոց կարծիքով ո՛վ է կամ ի՛նչ է այդ Նուբինը. ցավում ենք, որ հեղինակը ոչինչ չէ ասում մեզ։ Անշուշտ, եթե ավանդությունը կորել է, հեղինակը պատասխանատու չէ, բայց այդպիսի դիպվածում էլ բնավ ավելորդ չէր գո՛նե մի բացատական ծանոթություն։ Մենք հույս ունինք, որ արդ Պռոշյանցը ուրիշ անգամ ավելի շատ հանդես կանե այդպիսի տեղեկություններ և ավելի կատարելությամբ առաջ տանի սկսածը։ Մենք բաց գիտենք, որ Սոս և Վարդիթերը չէ հատցրել նորա պաշարը. մանավանդ, որ դեռ շատ բան մնում է, որին բնավ չէ դիպել հեղինակի գրիչը։

Ապարան բառի ստուգաբանությունը, այսինքն պ. Պռոշյանցի կարծելը (եր. 7) ին գուցե ա ն պ ա ր ա ն բառի կրճատվածը լինի, կապելով նորան այն արանչելի կանթեղի հետ, մենք խոպան մնում ենք. նախ, որ ա ն պ ա ր ա ն խոսքը, այսինքն պ ա ր ա ն միացած բացատական ան մասնիկի հետ մենք հին հեղինակությանց մեջ ոչ մի տեղ չենք տեսնում գործածած և այդ բոլորովին նոր բարդություն է. հայտնի է ին Ապարանը անապարանից դուրս գալու համար հարկավոր էր, որ այս վերջինը եղած լիներ գպրության մեջ, մինչդեռ Ապարան խոսքը (հատուկ առթով) երևում է գործածված։ Երկրորդ, Ապարանը, որպես այժմ նույնպես և առաջ ապահովության տեղ եղած լիննլով, շատ հավանական է, ին ապարան հատարակ անունից լինի հատկացած։ Այլ ին ինչի՞ կարող էր մի իշխանի կամ բռնավորի ապարանը այնտեղ եղած լինել։ Բայց մենք այստեղ բառերի ծագումը քննելու համար չպատրաստանք. եթե այդ մասին խոսելու լինինք, այսինքն ընդհանրապես այն անունների մասին, որ այսօր խորհրդավոր նշանակություն են ստացել

Հայաստանի հողում, կարելի եղածի չափ հարմարվելով Աստվածաշնչի պատմությանը, ապա մեր ասելիքը պիտի հիմնենք մեր հին հեղինակների գործերի և անողոքելի երկրաբանության վրա։ Բռնելով այս ճանապարհը, շատերը այդ անուններից կկորցնեն իրենց ներկա խորհուրդը, բայց մենք բնավ վերաբերություն չունինք այդ բաների հետ. մեզ մանավանդ քաշում է այն սքանչելի կանթեղը Արագածի և նորա մասին ուզում ենք մի երկու խոսք ասել։

Մեզ մինչև այժմ հանդիպած չէ խոսք կամ գրույց մեր կլասիկական դպրության մեջ. խոստովանում ենք, որ նաև որպիսի և իցն հիշատակարան անգամ չենք տեսել, որ խոսեր մեզ այդ կանթեղի մասին։ Մի մութ ավանդություն միայն, այս կամ այն տիրացվի, այս կամ այն քահանայի բերանացի պատմությունից մեզ հասած, է բոլորը, ինչ որ գիտենք այդ մասին։ Էջմիածնի պատկերները, որ հայոց աղգի մեջ շատ տեղ կան, պահում են իրենց վրա նաև Մասիսի և Արագածի երևակայյալ պատկերները։ Այս խոսքը գործ դրինք այն պատճառով, որ ոչ Մասիսը նման է իր պատկերին և ոչ Արագածը։ Հայտնի է թե այդ պատկերների վրա Մասիսի գլխին միշտ նկարված է լինում մի անհնիթի շինվածք, առանց դորան չէր լինիլ,— այդ Նոյյան տապանն է։ Արագածի գլխին նկարված է լինում օդի մեջ կախված մի կանթեղ։ Երբ որպես 7—8 տարեկան տղա հարցնում էի «վարպետիցս» այդ բանի նշանակությունը, նա գրականապես և ինքնաբավական կերպով պատասխանում էր ինձ, թե «երբ աստը Գրիգոր Լուսավորիչը գնում էր այդ սարի գլուխը, գիշերային առանձնության մեջ Նարեկ բաղելու, այն ժամանակ հրամայում էր և իսկույն օդի մեջ երևում էր այդ կանթեղը և լույս տալիս, որով նա կարողանում էր գրերը ջոկել և կարդալ»։ Չգիտեմ ինչ էր տանջանքս, միայն երբ հարցուցի, «մայրիկ՛, ո՞ւմ էր հրամայում». ձիտանդամն եղավ պատասխանը, այնպես որ ցավիցը մղկտալով, վարպետիս էլ, կանթեղն էլ մոռացա միասին շուռ տվեցի։— Գուցե թե այլ տեղերում մի փոքր այլապես պահված լինի այս ավանդությունը, վեճ չունինք. մանավանդ մենք չենք կարծում այդ մասին մի գրավոր հիշատակարան։ Ինչ որ վարպետից լսել էի, այն, վերևը գրեցի, ինչպես ասածու առջև, ամենայն հարազատությամբ։

Որ աղգի մեջ կամենա թող լինի, բայց և այնպես չկա աշխարհիս երեսին մի ավանդություն, որ առանց ամենայն պատճառի առաջանար։ Այո՛, այդ ավանդությունքը, որքան հեռանում են իրենց ծագման ժամանակից, այնքան շատ կերպարանափոխ են լինում, ընկնելով ժամանակների և հասկացողության աղդեցության տակ, մինչև այն աստիճան, որ շատ անգամ դժար է լինում հասկանալ կամ մեկնել, բայց և այնպես անհնար է թե նոցա հիմքը եղած չլինի կամ մի առյուգ պատահած իրողություն (թեև այլապես) կամ մի գաղափար, որի այլաբանությունը վերջի աերունդը ընդունում է պատկերաբար, առանց նոցա մեջ թաքնված հշմարտության կամ փիլիսոփայության վերահասու լի-

նելու։ Սոցա օրինակները խիստ շատ կան Ասիայում, ուր այլաբանական խոսվածքը և ձևը սիրապես սովորական էր, մանավանդ հին ժամանակներում, բայց ասիական այլաբանությունը մի աննշան բաներ են համեմատելով հունական դյուցաբանության հետ։ «Բայց դի՞նչ արդեօք տարօրինակ բնչ, և Բիւրատպի Աժդահակայ փցուն և անճոռնի առասպելքն իցեն. և կամ է՞ր սակս զմեզ պարսից անյարմար և անոճ բանից, մանաւանդ թէ առաւել վասն ամբաստանութեան առնես աշխատս... դի՞նչ քեզ առ այսորիկ կարօտութիւն, առասպելք աստոք... Մի արդեօք յունական պերճ և ողո՛րկ առասպե՛լքն իցեն, հանդերձ պատճառաւ, որք զճշմարտութիւն իրաց այլաբանարար չինքնանս ունին թագուցեալ...» այսպես էր գրում մեր անզուգական Քերթողահայրը, Սահակ Բագրատունուն*։

Ավանդությանց մեջ, ամենից ավելի անհաստատը, փոփոխության և աղճատանքի ենթարկվողը է նոցա ժամանակը։ Շատ անգամ ավանդությունը գրեթե անարատ մնալով էապես, փոխվում է նորա ժամանակը. այսինքն մի անցք, կամ մի իրողություն, որ ստուգապես պատահած էր, դնենք, Թորոսի ժամանակ, այդ բանը համարվում է եղած կամ Մինասի ժամանակ, որ շատ առաջ էր ապրել Թորոսից կամ Նիկողոսից, որ Թորոսից շատ դարեր հետո էր ծնել։ Այդ ժամանակի առաջ ու հետ խառալը կախվում է Թորոսի, Մինասի և Նիկողոսի ազգի մեջ ունեցած խորհրդից, արժանավորությունից ու հատկությունից։ Հայտնի է թե մի պատերազմ, մի քաջագործություն չի վերապրվիլ մի սերբի, որպես նաև մի հրաշագործություն մի երևելի զորավարի։ Եթե ազգը Թորոսի օրով տեսել է մի խորհրդավոր անցք, բայց Թորոսի վրա բնավ համարում չունի, ազգի հետագա զավակները այդ անցքը անպատճառ կխլեն Թորոսից և կվերագրեն մի մարդու, որ կամ առաջ է ապրել Թորոսից կամ վերջը, որի վրա ազգը մեծ համարում ունի քաղաքականապես կամ կրոնապես, նայելով անցքի բնավորությանն։ Ավանդությունքը, զրկվելով այսպես ժամանակագրական ճշտությունից, շատ անգամ այնքան շատ հավաքվում են մի մարդու վրա, որ այդ մարդը շատ դարերից հետո դառնում է մի պահարան, մի շտեմարան սքանչելի անցքերի և գործերի, իսկ մյուս բոլոր մարդիկը, այն մեկ նշանավոր մարդու օգտի համար, զրկվում են իրենց ստուգապես ունեցածից։ «Ջի ամենայնի որ ունիցի տացի և յավելցի, և որ ոչն ունիցի, և զոր ունիցին յարձցի ի նմանէ»[12], ճիշտ այսպիսի դիպվածներում է կատարվում։

Հայոց ազգը, Արագածի վրա կրակ կամ լույս եթե շտեսներ, անհնար է, թե նա չեղած տեղից կանթեղ հնարեր և Լուսավորչին ուղարկեր այնտեղ նարեկ բաղելու։ Մենք այդ լույսը կամ կրակը Արագածի վրա ընդունում ենք որպես իրողություն։ Բայց սակայն, դժար է այժմ գտնել

* Մովս. Խորեն., Պատմ. հայ.։

Թե այդ լույսը կամ կրակը Լուսավորչից առա՞ջ էր տեսել ազգը, թե՞ հետո։ Լուսավորչի անունը այդ ավանդության հետ խառը տեսնելով չէ կարելի պնդել, թե ստուգապես չորրորդ դարումն է երևել այդ կրակը։ Այո՛, կարող էր և այն ժամանակ երևիլ. մեր խոսքը այդ չէ, այլ այն, թե չոկ անունը չէ կարող ընդունվիլ որպես ապացուցություն ժամանակի, ա վ ա ն դ ո ւ թ յ ա ն ց մ ե ջ։

Այդ լույսը կամ կրակը ընդունելով որպես իրողություն, բնականաբար խնդիր է առաջ գալիս, թե ի՞նչ լույս կամ ի՞նչ կրակ եղած պիտի լինի։ Հարկ չկա ասել, որ բնական երևույթը առասպելով մեկնաբանել մեր գործը չէ. դորա փոխանակ առասպելյալ բնական երևույթը իր մոգական քողերից ազատել և բնության լուսով հասկանալ և հասկացնել «ի մեծ շինություն ազգին», մենք սիրում ենք որպես Հշմարտություն։

Մարդը, ոչ միայն ֆիզիկապես, այլև բարոյապես ենթակա է բնության ազդեցության. բնության սրտի զարկը ցոլանում է անմիջապես մարդու սրտում։ Մարդը իր գաղափարքը առնում է բնությունից։ Ինչ չափով ճանաչել և ուսել է նա բնությունը, համեմատ այդ չափին կլինի նորա գաղափարների և հասկացողության ազնվությունը։ Ահա մի օրենք, որ բնավ բացառություն չունի։ Սարդի ուսուցնից բարակ մետաֆիզիկական համակարգությանց բովանդակ գաղափարքը կան բնության մեջ. իսկ ինչ որ չկա, այն ամենևին ո՛ւտ է։ Բնությունը մի գիրք է, որ պիտո է կարդալ և ուղիղ հասկանալ. սխալ ըմբռնողությունքը մեծ վնասներ են տալիս։ Բնական երևույթքը իրենց վսեմափառ կերպարանքով շատ անգամ սարսափեցնում են մարդուն. սա միանգամայն ոչընչանում է, երբ աչքի առջև տեսնում է մի այնպիսի ուժ, մի այնպիսի զորություն, այնպիսի տեսարան, որի առջև տկարանում է ոչ լոկ մի մարդու, այլև բովանդակ մարդկության ուժը։ Բնական երևույթքը թեև ոչ այնպես սասանեցուցիչ, ինչպես մի վուլկանի կատաղի արտահոսություն, կամ ինչպես մի թաթառ կամ փոթորիկ օվկիանի վրա, կամ Սարի անապատում. թեև ոչ այնպես ապշեցուցիչ, ինչպես մի Ամազոն, Միսիսիպի կամ Օրինոկո, կամ մի ամերիկյան կուսական անտառ. թեև ոչ այնպես կործանարար և մահաբեր, ինչպես մի կայծակ, մի սամում, մի հնդկ կամ հարյուրամյա ծառերը արմատից և տան ծածքը պատերից խլող մրրիկ, ո՛չ, այլ այնպիսի խաղաղ երևույթք, որ շեն պատճառում մի երկյուղ, մի վնաս, մի մահ կամ մի կործանում, այլ մանավանդ զարմանք և հոգեզմայլություն և որոնք մարդու կարծելովը չունեին մի Իշնամական բնավորություն, ինչպես մյուս վերևում հիշվածները,— նրանք հասկանալի չլինեին ժողովրդին և չբացատրվին նորան, կարող են, այո՛, շարաշար մոլորությանց պատճառ լինել։ Եվ այդ մոլորությունքը, երանի՛ թե, որպես մի տեսական գաղափար, մնային մարդու գլխում, ո՛չ. նորա շատ անգամ մարմին են առնում Շիվայի, Դուրգայի և վիշնուի[13] անհնիթ կերպարանքներով և այնուհետև խարազան են դառնում մարդկության։

Որքան մոլորություններ, որ կան աշխարհի երեսին, այդ բոլորը սկզբնաբար ծագել են կամ բնությունը իյուր հասկանալուց, կամ իսպառ չհասկանալուց։ Եվ այդ մոլորությունքը ոչինչ ուրիշ բանով չեն փարատվիլ, մերժվիլ, եթե ոչ բնությունը ուղիղ հասկանալով։ Ահա այս է պատճառը, որ ամեն բանական մարդ պիտի աշխատի ոչ միայն ինքը ուսանել բնության օրենքներքը, այլև ուրիշին օգնել, եթե ինքը ավելի փորձառած էր, քան թե այդ ուրիշը, որ կամենում էր բանալ բնության գիրքը։

Ուղղով հասկանալ այն կրակը, կամ լուսը, որ երբեմն երևել է Արագածի վրա և կամենալով փորր ի շատե տեղեկություն տալ ազգին նորա մասին, պետք էր, որ մենք աչքի տակ առնուինք բնության մեջ (բացի երկնքի լուսավորներից) եղած բոլոր կրակներքը կամ լուսներքը, քննեինք նորանց, համեմատեինք կանխիկի ավանդության և դորա պատահանների հետ և որը անհամաձայն կլիներ առաջ դատողության՝ մերժեինք, իսկ որի կողմում լիներ ավելի համանմանություն, ընդունեինք որպես բնական պատճառ կանխիկի ավանդության։ Մենք, թեև այդ վերլուծությունը մեր մտքում արդեն արել ենք, բայց այստեղ ավելորդ համարեցինք մեր ընթերցողների առջև էլ նույնը անել, պատճառ, խորհուրդ չտատանք դուր տեղը խնդիրներ առաջարկելու մեջ, միմիայն մերժելու և չէ ասելու համար։ Օրինակ, կրակ է և լուս ունի Գրամոնդի ասած կրակը (չրածինը վառված թթվածնի ներկայությամբ), բայց դա ինքն իրեն չէ առաջանում բնության մեջ. վրա երկու, որ այն ժամանակ բնավ հայտնի չէր։ Նույնպես և գալվանական լուսը, որ գրեթե մեր օրերի գյուտ է և այլ այսպիսիք։ Շատ ուրիշ կրակներ և լուսներ, որպես ճախնաչին գաղը կամ գնդեղմանական շրջմոլիկ կրակը, գնդաձև կամ կծկաձև* կայծակը, վուլկանական կրակը** և այլն և այլն իրենց գաղափար-

---

* Կծիկ բառից ենք առնում։ Այդ անասկ, որպես նաև առհասարակ կայծակի, որոտմունքի, մեկ խոսքով բոլոր օդային էլեկտրականության մասին, մանրամասն տեղեկություն ցանկացողը կարող է գտնել Արագո ֆրանսիացու ուսումնական աշխատությունի մեջ — կայծակի մասին։ Որանի՛ թե թարգմանեին հայերեն, որպես և նորա ասեղարաչքությունը. հասարակ ժողովրդի համար գրված։ Բայց այսպիսի գիտությանց վերաբերյալ գրքերը չէ պիտու և չէ կարող թարգմանել ամեն մարդ, որ գիտե լոկ ֆրանսիարեն. հարկավոր է, որ թարգմանիչը լավ ուսած լինի իր թարգմանած գրքի առարկան, ապա թե ոչ թարգմանությունը կգառնա մածնարբդոշ և գրականապես անօգուտ, հանդիսարան լինելով սխալ բմբռնողությանց, մթությանց, այո՛, շատ անգամ և հիմարության. թեև բնագրում իմաստություն էր այն։

** ԵՒս այժմ, թողնելով Արագածի վուլկանականության խնդիրը, մինչև մի ավելի հարմար և ազդ ժամանակ, գործնում եմ հայ բնագետների ուշադրությունը և ուսումնասիրությունը հետևյալ խնդրի վրա։ Ամենին հայտնի է, թե Արագածում ծծումբ կա. այս բանը ոչ միայն մենք հայերս գիտենք, այլ բիմիայի մասին գրված մի բանի ոուս գրքերում էլ խոսվում է. ավելցնենով, թե տակավին բնված չէ այդ հանքը և թե պետք է կասծել, ոչ ինչ ծծումբ լինի. բայց այս չէ իմ ասելիքը։ Շատ արժանահավատ մարդիկ, այո՛, և բուն աշտարակցիք, որոնց հետ ասրինքով բնակվիլ եմ եղած, շատ աշտարակցիք նույնիսկ Աշտարակում, օշականցիք և վաղարշապատցիք և այլն և այլն

ներով հակասություն ունեին կանխեղի գաղափարին։ Նույնպես և լուսատու միջատներից առաջացած կամ վերջապես մի մարդու ձեռքով վառված սովորական կրակի գաղափարը նույնպես համաձայն չէին կանխեղի ավանդությանն։

Հետո ի՞նչ դուրս եկավ. էլ ոչինչ մնաց, այս չէ, այն չէ։

Ո՛չ, մնաց և մեր կարծիքով ավելի հավանականը, որ կարող էր շատ անգամ երևցած լինել և այսօր էլ երևիլ որպես Արագածի գլխին այնպես և ուրիշ տեղերում։ Մեր բոլոր հետաքննությունները համոզեցին մեզ, որ այդ սքանչելի կանխեղը ուրիշ բան չէ, եթե ոչ *սուրբ Հելմոսի կրակը*, որ մի դիպվածում էլ անվանվում է *Կաստոր և Պոլլուկս*։

Այդ կրակի վրա էլ սուրբի անունը, որ կպել է մանավանդ ստիպում է մեզ մի փոքր տեղեկություն տալ նորա մասին, որպեսզի ընթերցողը մի գերբնական բան չհամարեն սորան և չասեն, որ եթե սուրբի միջնորդությամբ դարձյալ պիտի մեկնվի այդ կրակը, էլ ո՞ւր Լուսավորիչը թողած գնանք մի սուրբ Հելմոսի քամակից, որին բնավ մեր եկեղեցին չէ ճանաչում։ Սուրբ Հելմոս խոսքը, ինչպես կարծում են Հելենեի ավերանքից է առաջացել, որովհետև այդ կրակը քրիստոնեությունից առաջ էլ նշմարած են, և ինչպես առաջ, այնպես և քրիստոնեության ժամա-

---

միաբերան վկայած են ինձ, թե Արագածի վրա (չգիտեմ հավկապես ո՛ր տեղում) ծծումբը տան ծածկից վազած և սառած չրի պես ծուլ ծուլ կախ է ընկնում բարերից։ Կարիճները գնում են և հրացանի գնդակով տալով վայր են ձգում, հավաքում և տանը պետք ածում։ Այս բանը ինձ գայթակղության բար է դարձած և վազո՛ւց գրավել է իմ հարցասիրությունը։ Ձախոդակի, երբ 1860-ին էշմիածին էի, զրազված լինելով ազգային գործերով, չկարողացա ժամանակ գտնել, որ երթայի իմ աչքով ստուգելու այս ծուլ-ծուլ կախ ընկնող ծծումբի էությունը։ Մինչև այսօրվա խոսածիցս իհարկե ընթերցողը հավակացավ, որ իմ գայթակղությունը ծծումբի լինելությունից չէ, այլ նորա ծուլ-ծուլ բարերից կախ ընկնելուց։ Հայտնի է բնագիտաններին, որ ծծումբը հալվում է միայն մոտ $+80^{\circ}$ Ռեամյուր կամ ավելի հիշտ խոսելով $+101^{\circ}$ Ցելսիուս (սանտիգրատ), իսկ այն բանը, որ սառած չրի պես պիտի ծուլ-ծուլ կախ ընկնի, պետք է որ առաջ հալվի, եթե ասենք թե ծծումբը անմիջապես այդ բարերի մոտին է, այն ժամանակ նորան հնարավոր չեղնելու համար պիտի կարողանար վերոգրյալ աստիճանի ջերմության։ Ի՞նչ տեղից է Արագածի վրա այդ ջերմությունը։ Այս մեկ բան։ Երկրորդ, եթե ծծումբը անմիջապես այդ բարերի մոտ չէ, այլ նոցանից հեռու, այսինքն խորը, սարի մեջ, իսկ բարերի վրա նորա ընդլվածքներից կախվում են միայն ծուլերը, այդ ավելի ժանրացնում է բանը. պատճառ, այդպիսի դիպվածում ծծումբը պիտի որպես շոգի բարձրանա սարի խորերից մինչև այդ բարերը. ծծումբը շոգիանալու համար կարող է $+220^{\circ}$— Ռեամյուր ($+400^{\circ}$ սանտիգրատ). ի՞նչ տեղից է այս ջերմությունը։ Պետք չէ մոռանալ, որ այդ աստիճանը ջերմության հարկավոր է ոչ միայն նորան շոգիացնելու, այլև այդ վիճակի մեջ պահելու համար, որովհետև ջերմության աստիճանը իջածին պես, շոգին կփոխե իր վիճակը և որպես կարծր մարմին կնստի, այն համեմատաբար սառը տեղում։ Եվ որովհետև հետ հեղուկ կամ կարծր մարմինը չէ կարող բնավ իրեն ցածից դեպի վեր բարձրանալ, այլ պիտի որ այդ փոխանցումը լինի շոգու կերպարանքով, ուրեմն պիտի ենթագրել, թե ծծումբի համերից մինչև Արագածի այն տեղը, ուր երևում են այդ ծուլերը, կա մի անցք, մի ճանապարհ, որ ունի վերը գրած ջերմությունը։ Ծծումբի շոգին երբ ընկնում

նակ, նույն այդ կրակը, ինչպես ասացինք, անվանվում է մի դիպվածում կաստոր և Պոլլուկս, որի մասին կասենք մի երկու խոսք։ Իսկ ի՞նչ է այդ կրակը, ահա մեր ծանոթագրանության բուն խորհուրդը։

Ննջագրում ենք, թե ընթերցողը փոքր ի շատե գաղափար ունի էլեկտրականության վրա, ապա եթե այս չննջագրելով խոսելու լինինք, այն ժամանակ պիտի ստիպվինք ամբողջ էլեկտրականության համակարգությունը ավանդել, որ կամ ֆիզիկայի գործ է (այսինքն ֆիզիկայի մասին գրված գրքի) կամ մի առանձին հատվածի էլեկտրականության մասին և ոչ բնավ կարելի է թույլ տալ այս տեղում։ Ուստի, ննջագրում ենք, ինչպես ասացինք, մի փոքր գիտություն, մի գաղափար, էլեկտրականության մասին։

Երկրագունդի և ամպի մեջ առաջանում են էլեկտրական լարողություններ, որ առանձնանում են ամպի և երկրագունդի մեջ եղած օդով, որովհետև օդը վատ առաջնորդ է էլեկտրականության։ Երկրագունդի և ամպի մեջ առաջացած էլեկտրականությունները զանազան են, նոցանից մինը անվանվում է դրական, իսկ մյուսը բացասական։ Եվ որովհետև այս էլեկտրականությունները այլասեռ են, ուստի բնական օրենքով նորա ձգտվում են, որ միանան իրար հետ։ Եթե ամպի էլեկտրականությունը հանկարծապես միանա երկրագունդի էլեկտրականության հետ, այն

է, փոխվում է դեպի կարծր մարմին, դեպի փուչի, որ հայտնի է քիմիայի մեջ անունով ծծմբածաղիկ. flor. sulphuris որ ծուլ-ծուլ կախվելու ընդունակ չէ, և հալվելու և հեղուկ կերպարանք ստանալու համար, որ հետո ծորելով սառեր, կարող է վերը հիշված +101°—։ Բացի սոցանից կան և ուրիշ մանրամասնություններ, որ ավելորդ ենք համարում հիշել, հուսալով որ ընթերցողը կհասկանա մեր իրավունքը գայթակղելու։ Իրավ որ մինչև այս րոպես չեմ հասկանում այս բանը։ Այս բանի մեջ կամ սուտ կա, ինչպես այն սրանչելի ծծնեբեկի պես գեհենից բուսնող ոսկին և արծաթը. կամ գո՛նե մի չհասկացողություն, որ այսպես մթնացնում է բանը։ Եթե ասին, ջհին ժամանակներից կախ է ընկած և գնալով վնասում էր, այդ գեռ կարելի էր հասկանալ, բայց ներկա ժամանակով են խոսում։ Ուրիշ բան չէ մնում, եթե ոչ հիշա բննության տակ ձգել, պատճառ, եթե սուտպես կատարվում է Արագածի մեջ ծծմբի այդ չոգեցումը, կամ թե կախվածքը ցած են, քան թե հանքը (ես չգիտեմ), ապա, նորա հալվելը, ուրեմն Արագածի մեջ տակավին կա չերմություն։ Երանի՜ թե մեկ օր մեր բնագետ եղբայրներից մեկը ուրախացներ մեզ մի ուսումնական չրջանկատ քննությամբ Արագածի որպիսության, թե վուլկանականության, թե երկրաբանության, թե երկրագիտության և թե հանքարանության վերաբերությամբ։ Իսկ թե չէ անձնբրանա, բացի սոցանից, գործ դնել և չերմաչափ և ծանրաչափ և մագնիսյան սլար և մանրադուլց, եթե ուշագիր լինի Արագածի բուսներին, սունկներին և նորա վրա ապրող կենդանիներին, այն ժամանակ մեզ կմնա ոչ միայն շնորհակալ լինել նորանից, այլև պարծենալ նորանով Եվրոպայի առջև, թե ամենը ապերախտ չենք, ահավասիկ տալիս ենք քեզ ոսկորները քանքարին, որ դու մեզ տվիր, թեև կորած համարելով Ասիո անկյուններումն։ Արագածի վրա որ դու մեզ տվիր, թեև կորած համարելով Ասիո անկյուններումն։ Արագածի վրա եղնելը Չեմբորասոյի վրա եղնելը չէ, ուր մնաց որ, հոյակապ Հումբոլդի թեթև ոտքից հետո արդեն երկու անգամ կոխնցին Չեմբորասոյի գագաթը (մի բանի ոտնաչափ էլ ավելի բարձր. Հումբոլդը չէր հասել հիշյա գագաթին) Ալբինի հարցասեր զավակները։ Այս մարդիկը պարզ ուսումնական նանապարհորդք էին և ոչ թե կառավարության կողմից հանձնարարություն կամ բաջալերություն ստացած ստահանավորք։

ժամանակ այդ միավորությունը զգալի է լինում մեզ որպես կայծակ։ Երկու զանազան ամպերի մեջ էլ գոյանում են շատ անգամ այն վերը հիշված երկու այլասեռ էլեկտրականությունքը և երբ նոքա իրենց այդ օդնեղեն բարձրության մեջ միանում են իրար հետ, մենք տեսնում ենք նոցա լույսը՝ փայլակ, և լսում ենք նոցա միավորությունից առաջացած ձայնը՝ որոտ։ Բայց այժմ այս վերջինը մեզ պետք չէ. մեզ հարկավոր է միավորությունը ամպի և երկրագունդի էլեկտրականությանց, բայց ոչ մի կործանաբեր կայծակի կերպարանքով։ Երբ, ինչպես ասացինք, երկրագունդի և ամպի մեջ առաջացել են այն այլասեռ էլեկտրականությունքը և երբ յուրաքանչյուրը նոցանից օդի միջնորդությամբ առանձնացած լինելով գտնվում է լարված վիճակում, այն ժամանակ (նույնպես ասել ենք) ձգտում են չեզոքանալ—եթե կարելի է այսպես ասել— այսինքն միավորվիլ։ Երկու այլասեռ էլեկտրականությունքն էլ առանձին-առանձին կարող են իրենց ներկայությունը հայտնել քննողին և այն ժամանակ նոքա հայտնի են. իսկ երբ միացան, էլ չեն ընկնում զգացողության տակ և անհայտանում են։ Սոցա հանկարծականն միավորության մասին խոսեցանք — հայտնի է թե որպես ծովից մի կաթիլ ջուր առնելով — և ասացինք, որ այդ միավորությունը զգալի է լինում կամ որպես կայծակ, կամ որպես փայլակ ու որոտ։ Սորա հակառակ, այդ էլեկտրականությանց մեղմաբար, այսինքն աստիճանաստիճան միավորությունը, շատ անգամ խաղաղ անզգալի է լինում մեզ, իսկ երբեմն, մենք տեսնում ենք այն լույսը, որ սուրբ Հելմոսի կրակի անունով հայտնի է դիտության մեջ։

Հուլիոս Կեսարի, Տիտոս Լիվիոսի, Պլուտարքոսի, Պրոկոպիոսի, Սենեքայի և Պլինիոսի գրքերում շատ անգամ հիշվում է մի լույս, որ երևել է, կամ առանձին-առանձին զինվորներին, կամ նոցա ամբողջ լեգեոնի նիզակների ալաքներից. նույնպես խոսվում է և նավերի կայմերի լուսավորության մասին։ Այս բանի, այսինքն ասված գրքերում, շատ անգամ այս լուսերի հիշատակվելու վրա հիմնված է կարծիքը, թե հին ժամանակներում ավելի սակավ է պատահել այդ երևույթը, քան թե նոր ժամանակներում։ Բայց նույնպես, ենթադրվում է, որ հին ժամանակներում հմայողները և հավատացողները (aygur) օգուտ քաղելով ամեն կայծակից դուրս երևույթից, նոցա վրա իրենց գուշակությունքը հիմնելով և ժողովրդին խաբելով, ավելի խնամք են ունեցել այդպիսի բաները գրով մինչև մեզ հասցնելու։

Բայց, այժմ, կայծակից առաջ կամ շուտով կայծակից հետո, եթե մի նկատող մարդ ուշադրություն դարձնե բարձր աշտարակի կամ շաբաթգնի սուր ծայրին, միշտ կարող է տեսնել սուրբ Հելմոսի կրակը։ Նույնպես և բարձր սարերի վրա կարող է երևել այս կրակը, որպես շատ ճառագայթների խուրձ, երբեմն բոլորշի և երբեմն լեզվա՛մբ իր սուր ծայրով դնպի վեր, ինչպես ճրագի կամ կանթեղի լույսը, բայց մի առնաչափ կամ կես զազ երկայնությամբ։ Նավերի

կայմերի վրա, նույնպես հաճախ է պատահում այս. և եթե միայն մի լճզվաձև լույս է երևում, անապաշտ նավաստիքը շատ բարեկանում են, որովհետև նորա հավատում են թե մրրիկ կլինի այնուհետև, իսկ թե երկու հատ, այդ դիպվածում նորան սատկում են Կաստոր և Պոլլուկս,— նավաստիքը ուրախանում են, որովհետև աջող նավարկություն են բերում Կաստորը և Պոլլուկսը, հունական անտիկյան առասպելի հերոսքը։ Շատ անգամ պատահում է, որ եկեղեցիների գլխի խաչերը լուսավորվում են այսպիսի էլեկտրական լուսով. շատ անգամ ազգաբնակները թոչելով այն տափի մոտից, որի էլեկտրականությունը մեղմաբար միանում էր երկրագունդի էլեկտրականության հետ, երևել են զարմացած և ապշած ամբոխին լուսեղեն կատուով։ Նույն այս բնական երևույթը նկատված է շատ անգամ և ցած տեղերում. շատ անգամ ծառերի ճյուղերը լուսավորված են. շատ անգամ մարդիկ կարծել են, թե էրվում են կրակում, և սարսափել են իրենք իրենց տեսնելով «իբր հանդերձս լուսատարած»։

«Կայծակի ժամանակ, հունվարի 8-ին, 1839-ին,— ասում է հռչակավոր Արագոն, իր ուսումնական քննության մեջ՝ կայծակի մասին. (Notice Scientifique sur le Tonnere, հ. XXX) — երբ կայծակը զարկեց Հասսելտյան եկեղեցու աշտարակին, Ֆվոլլեյի և Հասսելտի միջտեղում (Հոլլանդիո մեջ, առաջինն ամբոխ է, այժմ գրեթե ավերակ, իսկ երկրորդը բազաք) գտնված դեղացիք նկատեցին մի օտարոտի երևույթ։ Վերը հիշված կայծակի զարկելուց մի քանի ակնթարթ առաջ, նորա տեսան, որ բոլոր նոցա հալավները (շորերը) կրակված են։ Այդ կրակը անցնելու (մարելու, հանգցնելու) համար զուր տեղը աշխատելու ժամանակ սարսափանքով նկատեցին, որ ծառերը և նավի կայմերը նույն բոցով էին փայլում։ Կայծակի զարկելն ու այդ սքանչելի կրակների անհայտանալը մի ակնթարթում կատարվեցավ»[14]։

Ո՞րքան ուրիշ այսպիսի դիպվածներ առաջ է բերում Արագոն, վերը հիշված հոյակապ աշխատությյան մեջ. ո՞րքան այսպիսիք հիշված են գերմանացի Ֆիմմերմանի ֆիզիկայի մեջ[15], մենք չենք ուզում ամենը այստեղ դնել։ Այլ այնչափ միայն հիշեցինք, որ տեսանեն և հավատան, թե այդ կրակները և լուսերը ոչ բարձր են ամպերից և ոչ առանց երկրի գործակցության [են] առաջանում։ Բնությունը, ինքը, ոչ թե մի լոկ հրաշք է, այլ բարձր քան թե հրաշքը և այս պիտի ստիպվի ընդունել ամեն մարդ, որ ուսումնասիրում է նորան։ Բնությունը միայն կարող է հասկացնել մեզ արարչի մեծությունը և փառքը. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն»[16]։ Արարիչը, մեկ անգամ ստեղծելով բնությունը ավել է նորան անխախտելի և սուրբ օրենքներ, որ բնավ և մեկ մազի չափ խոտորմանք չունին. «Մահման եդ և ոչ անցանեն»։ Այդ օրենքներով կատավարվում*

---

* «Եւ ամենայն արարածք անբասութիւնեամբ կատարեն զհրամանս պատուիրանի նորա, ոչ երբէք անցանեն քան եդեալ սահմանն իւրեանց». Եզեկիէլ մարգ. Վասն Վարդա-

է ամեն ինչ, որ մենք տեսնում ենք, կամ ինչ որ բնավ չենք տեսնում, տիեզերքի անչափելի տարածության մեջ։ «Ինչէ զձիւն որպէս զասր և զմէգ որպէս փոշի ցանեաց։ Արկանէ զսառն որպէս պատառս առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կալ»։ Ի՛նչ վսեմ նկարագրություն։ Բայց այս բոլորը լինում են այն մեկ անգամ դրված օրենքով, ինչպես մարդը ապրում է և բազմանում է, ինչ առաջին մարդը•միայն դուրս էր եկած բան աստուծու ձեռքից։ Ամեն հրաշք, որ ո՛վ և իցե կարող էր մտածել, շատ ատո՛ր, շատ սակա՛ր և շատ չնչի՛ն է, քան ինչ այն հրաշքը, որ արարիչը, բնության միջնորդությամբ ցույց է տալիս մեզ ամեն օր, ամեն րոպե, և ամեն վայրկյան։ Նա չէ հերետիկոսը, որ քննելով և ուսումնասիրելով բնությունը ամեն վայրկյան ստիպվում է ասել բնության ճարտարապետին, իր սրտի ազդմաբանից, «Ո՜րպէս դի մեծ են գործք քո Տէր». այլ նա, որ ոչ միայն ինքը չէ ուզում և չկամի իմաստասիրել բնությունը. «զերկինս և զերկիր զգործս մատանց նորա, զլուսին և զաստեղս զորս նա հաստատեաց», ո՛չ. հերիք չէ այս, այլև արգելում է, որ ուրիշն էլ նորա կամավոր կուրության հետևելով չտեսնե և չուսանի. «ինքն ոչ մտանէ և որոց մտանելն արգելու»[17]։ Նա, որ այս բոլորի մեջերը ծածկելու համար, ինքը իր ինչ գլխից տեսություններ և համակարգություններ է հնարում բնդդեմ բնության աստվածային սահմաններին, թաշքշելով այն օրենքները, որ մարդու կամքին բնավ չեն ենթարկվում, այո՛, այդպիսին աստուծու արտեսություն է հաճեշտակում երկրի երեսից։

Դու, որ Նեապոլի մեջ ցույց ես տալիս ինձ մի շիշ, ուր կա մի քանի կաթիլ արյուն և պատմելով, թե այդ արյունը այս կամ այն ժամանակ եռ է գալիս, ուզում ես դորանով քարոզել ինձ այլև աստվածը, որի գրած օրենքները, մի ակնթարթում, ինչպես Երեմիայի «Կաթսայ եռանդեան» եռացնում են ահագին օվկիանը, ես խելագա՞ր եմ, որ օվկիանի մեծագործ հրաշքը թողած, քո երկու կաթիլ չորցած արյունին նայիմ. և այն ժամանակ, երբ բյուրավոր այդպիսի կաթիլներ, բայց կենդանի արյունի, ամեն վայրկյան եռում են և շրջան են կատարում իմ երակներում։

Մենք հարտարապետը, որ քեզ ստեղծել է առանց քո օգնության կամ խորհրդին կարոտելու, մի՞թե կարոտ է այսօր քո սուտին։

«Զի՞նչ հաղորդութիւնն լուսոյ ընդ խաւարի»... «Սուտն ի հօրէն սատանայէ է»... «Հանէ՛ք զդա ի խաւարն արտաքինն»[18]։

Թե ո՛ւր է հասած այժմ բնական գիտությունը և ի՛նչ անհասկանալի թրմական գաղտնիքներ թակում է նա, ի՛նչ համարձակ թալլափոխներ է անում, այդ մասին հարյուրավոր են ապացույցերը։ Նույնիսկ մեր հիշած Յիմմերմանի ֆիզիկան,— ուր էլեկտրական մասին մեջ, առաջ բերելով Բեն Դավիթի Միխայելիսի և Լիհտենբերգի ուսումնական քննությունները

նայ և Հայոց պատեազմին. Մոսկվա, 1861, եր. 66. բաղված այն նամակից, որ Արատաշատի սուրբ ժողովը գրեց Հոգևորին։

(այս բաները հիշված են մասնավորապես և Արագոյի Կայծակի մասին աշխատության մեջ) զարմանալի պարզությամբ բացում է տապանակի և վկայության խորանի գաղտնիքը,— ինքն ապացույց չէ։

Հազով շատ ցանկալի էր, որ մեր բնագետ նորայրակիցը աշխատություն հանձն առներ այդ ֆիզիկան թարգմանելու։ Այդ գործը գրված է հասարակ ժողովրդի համար և կարող ենք հաստատապես վկայել, որ ամեն կարգի (անշուշտ, ուշադրությամբ կարդացող) ժողովրդին հասկանալի կլինի, ևթե արժանապես թարգմանվի։ Բնական գիտությանց բոլոր ճյուղերը կապված են ֆիզիկայի հետ. այնպես, որ դժվա՛ր է ձեռք զարկել բնագիտության մյուս ճյուղերը մշակելու կամ թարգմանելու մեր ազգի համար, մինչև որ չնախապրվի ևթե ֆիզիկան ծանոթ է նորան փոքր ի շատե։

Բայց, ինչպես մի անգամ արդեն ասացինք, այսպիսի գրքերը պիտի թարգմանվին լավ բնագետների ձեռքով. պատճառ, լոկ թարգմանությունը շատ անգամ ևթերի է լինում, ևթե թարգմանիչը քաջ գիտեր լեզուն։ Գիտությունը երբեք չէ կանգնում մի կետի վրա, այլ միշտ առաջ է գնում. ամեն օր լինում են նորանոր հայտնագործություններ և նորանոր պարզաբանություններ գիտության մութը և շատ անգամ անհասկանալի տեղերին։ Թարգմանիչը, մի այդպիսի գիրք թարգմանելու ժամանակ, պարտակա՛ն է նորա բոլոր գրությունքը համեմատել գիտության այն վիճակի հետ, ինչ վիճակում որ գտնվում է սա նորա թարգմանության միջոցին։ Մեր հիշած ֆիզիկայի բնագիրը կարո՛ղ է փոփոխությանց, ավելվածքների և ծանոթաբանությանց։ Նորա ոտա թարգմանիչը բավական չէ միայն մշակել է այդ գիրքը, բայց էլ մի քանի տեղ կան, որ պետք ունեին ավելի պարզաբանության և ծանոթաբանության։ Լոկ, խոսքով հանդես եկած չհամարվելու համար, մենք հրավիրում ենք մեր բնագետ նորայրակիցների ուշադրությունը մեամերականության վրա, որ Գերմանացի նատուր-ֆիլոսոֆների (բնափիլիսոփա) մեջ, մինչև այսօր էլ տեղիք ունի և գիտությունը բնա՛վ չէ կարող ընդունել։ Որպես ևթե արբնության ստեղծված «ինքնակիզության» խնդրի մեջ, Մունքեի և Բոիսիե սրանչելի կարծիքները ճշմարտանմանի կերպով առաջ են բերված, բավական քիմիական մանրամասնությամբ, մինչդեռ նոցա ընդդեմ մերժողությունքը առանց ցացատրության, լոկ Լավուազիեն, Դևիի և Լիբիգ հնդինակների անուններով, առանց ասում ենք, գոնե՛ մասնավորապես հիշելու ևթե ի՛նչ ճանապարհով հասել էին այս հնդինակները իրենց մերժողական դրության։ Այնուհետև հիշվում է Լիբիգի 1844-ի կատարած քննողությունը միայն անունով, մինչդեռ Լիբիգը իր նամակների չորրորդ տպագրության մեջ, ոչ միայն մանրամասն և հիմնավոր կերպով խոսում է ընդդեմ սրանչելի ինքնակիզության, 1850 թ. հետո կատարած քննողությամբ, այլև ավելվածի մեջ հանդես է հանել մի քանի հարցասիրության արժանի ցցիակցություններ։ Ցիմմերմանը, ասո՛ւ, չէ ընդունում մեամերականությունը, կամ «ինքնակիզությունը» և չէ բավ պաշտպա-

նում, բայց նոցա ընդդեմ կային բաներ, որ ուսումնական գերմանացին պանց է արել մեջ բերել և մի քանի բանի էլ զուր հանդես տվել։

Ահա այս տեսակ բաներ ամեն գիտութեանց վերաբերեալ առաջնորդական գրքերի մեջ կարող են պատահիլ, որպես և մեր հիշած գրքի մեջ էլ կան, որոնց հեղինակքը, եթե այսօր գրելու լինեին այդ բաները, անշուշտ, այնպես գրելու չէին. այս պատճառով, այդպիսի գրքերի թարգմանիչը պիտի լավ գիտենա իր առարկան և գիտութեան ներկա վիճակը, որպեսզի հնացած և արդեն մերժված մի դրութեան չդնեն ուսանել կամեցողի առջեւ որպես գիտութեան ներկա խոսքը։

Մեզ թվում է, թե մեծ ծառայութեան ցույց տված կլիներ ազգին, եթե պ. Խատիսյանցը, Ֆիֆլիսի մագնիսյան գիտանոցի արգո կառավարիչը, աշխատութեան հանձն առնուր մեր հիշած ֆիզիկան հայերեն մշակելու։ Անշուշտ, եթե միայն դպրոցներում, համակարգաբար դաս տալու կամ ուսանելու համար լիներ այդ մշակութեանը, այն ժամանակ, Յագեն և Ժամեն Ֆրանսիացի բնագետների հոյակապ ֆիզիկաները իրենց կքաշեին մեր ուշադրութեանը։ Բայց մեր խոսքը հասարակ ժողովրդի օգտին վրա է, ինչ, այո՛, Ցիմմերմանի ֆիզիկան ո՛չ բնավ անօգուտ է և ուսանողներին։

Համամետ եմ կարծել, որ մեր գրագետքը կարդալով, իմ մինչև այստեղ առաջ տարած խոսքերը, կասեն թե «այդ բոլորը մեզ մի անծանոթ կամ նոր բաներ չեն, մենք այդ ամենը գիտենք»։ Ես լավ գիտեմ, որ այն գուրը, որտեղից ես եմ մտնում, բաց է ամեն մարդու համար, և վկայում եմ, որ ինձանից լավ իմացողներ էլ կան, բայց այդ ավելի վատ է նոցա համար, որ ինձ պիտի ասեն, թե իրենք վաղուց գիտեն իմ ասածները։ «Եթէ կոյրք էիք ոչ էր ձեր մեղ, բայց արդ տեսանէք և մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են»[19]։

Լույսը և խավարը միմյանց այն աստիճանի ներհակ բաներ են, որ երկուքը միասին չեն կարող լինել մի տեղում. և եթե մեր գրագետքը, որպես սիրելի է մեզ կարծել, ուզում են փարատել և մեկ օր առաջ տեսնել ազգի ազատութեանը խավարից, ապա ուրեմն պիտի լույս գործ դնեն։ Խավարը, ո՛չ ինքն իրեն կփարատվի և ոչ խավարով կամ առասպելներով։

Մեղադրելի չէ ժողովուրդը,* եթե վաղում է դեպի գերբնականը,

* «Ասելի մեղքը չի՛, որ ճամփից դուս են ընկել, իրար մոռացել. մեզ նման կարգացողի ոտները պետք է ծառիցը կապած, ամսով տված պահած։ Ախր թե շատ առնողիցը շատ կպահանջեն, բան գաղտատանի օրը ի՞նչ չուզեր կասե ինձ նման գրի սևն ու սիպտակը իմացողները, որ էլ ուրիշ բան չենք ֆիքր անում, հենց ուզում ենք՝ լավ ուտենք, լավ խմենք, բյահչան ձիու վրա նստենք, շալ-շալ մանեքները չներներում չխկչխկացնելով, ձեռներիս գողդողալով, խազացնելով մեն գանք, քեֆ ու մորթալա անենք։ Երեսած արագ կռնդիլը, Կախինիս դիմին անուշ-անուշ խմիլը, կառնիով (կառք), դրոշկով, փաստոյր, ուռած-ուռած մեն գալը, գառ, գումաշ հագնիլը, մուշիլը, նորար բնարբի, ձեռին չուր ածելը, երեսին հով տալը, տաք յորդանի տակին, փափուկ դոշակի մեջում շնիռելն ու քաղցր տալը, ոտ ու գլուխ գարդարիլը՝ մեզ թե դժոխքը չասենն, դրախտը քսկի չեն տանիլ՝ հարկիզ։ Աստվածաշունչ, վերհ Հայաստանի, եր. 86։

մինչդեռ Արագածի վրա երևացած լույսը իրողություն է, իսկ նորա բնական պատճառը նորան անհայտ։ Սոսկալի վնասներ և ավերածություններ բերում են այս կանխամտած կարծիքները, որ առաջացած էին տգիտությունից։

Անի քաղաքի բնական երկրաշարժից* կործանումը միթե չէ՞ վերապրվել մի վարդապետի նզովքի և այդ ավանդությունը մինչև այսօր նստած չէ՞ ազգի մեջ։ Հայաստանից այնքան բազմության դուրս գնալն, նորա քաղաքական պանդխտությունը Արևմտյան Եվրոպայի մեջ, նորա քաշածները և այդ պատճառով Շիրակի գավառի ամայանալը, որպես նաև Անի քաղաքի ավերակ մնալը, այդ նզովքի պատճառով չէ՞։ «Անի քաղաքը անիծված է. ո՛վ որ այնտեղ բնակվի, նույնպես կանիծվի», այս չէ՞ մինչև այսօր ազգի ամենամեծ մասի գաղափարը։ Ահա միջնադարյան սքանչելի ուղղության մեկ արգյունքն էլ. այսպիսիներ ո՞րքան կան։ Մենք գրագետներ գիտենք (իրենք ասում են թե գրագետ են), որ ժողովրդի աչքը բանալը, հերետիկոսություն են համարում, հանդգնաբար հրատարակելով։ Կցանկանայինք իմանալ, թե ժողովրդի մոլորության պատճառ լինելը, երկրից երկիր տարագրելը և բախտի անդուռ հարվածներին մատնելը, յուր սարսռը ի՛նչ ուղղափառություն է։ Ո՛ղ դժոխքի գամվա մատնի մեջ գրե մեր անունը պարոն Բհհնդղևբուղը, միայն թե մենք բյուրավոր ժողովրդի մահին, տառապանքին պատճառ եղած չլինինք։ «Ոչխարք խնդրէի ես իսկ ի՛նքն նզով լինել ի Քրիստոսէ, վասն եղբարց եւ ազգականաց իմոց ըստ մարմնոյ, որ են իսրայէլացիք» (Թուղթ Պօղոսի առ Հռոմայեցիս, Գլ. Թ, համար 3)։

Ո՛ղ չկարծվի, թե մենք տգիտաբար զարմանում ենք այս նեղսիրտ և հալածասեր ուղղության վրա. քա՛վ լիցի՛։ Բոլոր Եվրոպան անցավ այդ կամուրջից. հայտնի է, թե կարգը, մեկ օր մեզ էլ պիտի հասնեն. և ուրա՛խ ենք, որ հասել է. պատճառ, դա ցույց է տալիս մեզ ազգի առաջադիմության։ Մանավանդ սրտաշարժ է անմահ Գալիլեյի գլխի անցքը, որ իր աստեղաբաշխական և բնագիտական հավիտենական գյուտերի պատճառով, այլև Կոպերնիկի տիեզերական համակարգությունը պաշտ-

---

* Մի քանի երես առաջ ասացինք, թե միջին դարերից հետո եկած նոր դարերը չանցան առանց ազդեցության. կարծում ենք, թե կարո՛ղ է օգնել մեզ այդ բանը որոշ կերպով ցույց տալու համար, եթե ասենք, որ ասան և՛ ուշ դարու սկզբում հայ վարդապետը, խոսելով երկրաշարժության վրա, հաստատապես վերագրում է նորան բնական պատճառ։ Զններ Գալիլեյի գիրքը, որ առաջին անգամ տպված է Կոստանդնուպոլիս 1713 թ. (Տումարի ՌՃԿԸ) ունի իր մեջ այդ գիրքը տպել ամոզ Հովհաննես վարդապետի պատմագրական հիշատակարանը, ուր այս վարդապետը, 1709 թ. (ՌՃՄԸ) Տարոնում պատահած մեծ երկրաշարժը այսպես է մեկնում. «Հողմոց ներհակաց պատահել ի ներքոյ երկրի, յանկարծ իսկ քեզմամբ շարժեցաւ երկիր ի հիմանէ անտի, ակամայիւ յինկնելոյց գաւառին և հաւանելով առ մեզ»20։ Ավելորդ է ասել, որ մենք այս կարծիքի աներբ չենք, բայց առաջ բերինք որպես վկայություն մեր խոսքին, որ թե հասկացողությունը նզովքից գեպի առաքինություն հոգմանն է անցել, արդեն հառաջադիմություն է

c'est déjà quelque chose!

պանելով, իր յոթանասուն տարեկան հասակում հալածվեցավ տմարդի ինկվիզիցիոնից և չարչարվեցավ նորա խավար բանտերում։ Այնտեղ տոիպեցին նորան գլխաբաց և ծնկաչոք կարդալ մի արհամարհելի և պժգալի երդմնագիր*,— բոլորովի՞ն արժանի նորա շարադրողներին,— և հրաժարվիլ իր սրտի վկայությունից և աշքի հայտնի ճշմարտությունից։ Բայց նրբ դեռ բանը չէր հասել այդտեղ նա ունի գրած մի պատվական նամակ առ Madama Christina Granduchessa madre, որից դնում ենք հետևյալ բաղվածը։ «Մենք մեր հայտնագործություններով չենք ուզում խաուճափնդորել բնությունը և մտքերը. չենք ուզում կործանել գիտությունը, այլ ուզում ենք լուսավորել նորանց և առույգ հիմք տալ նոցա։ Մեր հակառակորդը սուտ և անաստվածական են համարում այն բանը, որ իրենք չեն կարող հերքել։ Նորա պաշտպանվում են կրոնի կեղծավոր նախանձավորությամբ, բայց նվաստացնում են Սուրբ գիրքը, հնար շինելով նորան իրենց անձնական շահասիրությանն։ Բայց, առանց լսելու պետք չէ դատապարտել մի հեղինակ, որ չէ դիպչում եկեղեցական կա-

---

* 1637-ի հունիսի 20-ի հրովարտակով դատապարտվեցավ Գալիլեյը, Ուրբանոս ութերորդի (Հռովմի պապի) ժամանակ։ Ահա նորա հրաժարական երդմնագրի պատճենը։ «Ես Գալիլեո Գալիլեյ, 70 տարեկան, հանգուցյալ Վինչենտո Գալիլեո ֆլորենտացու որդի, անձամբ, անձին ներկա լինելով դատարանի առաջը և ծունկ չոքած ձեր առջև, ո՛վ, համաշխարհական քրիստոնեական հասարակապետության սրբազնագույն կարդինալ, հերետիկոսական չարության ընդդեմ ընդհանրական ինկվիզիտորը. և աչքիս առաջը ունենալով սուրբ Ավետարանը, որին հպավորվում եմ իմ սեփական ձեռքերով, երդնում եմ, թե միշտ հավատացել եմ, այժմ հավատում եմ և առաջիկա օգնությամբ, միշտ պիտի հավատամ այն ամեն բանին, ինչ որ պահում է, քարոզում է և վարդապետում է սուրբ, հռոմեական, առաքելական եկեղեցին։ Բայց որովհետև սրբազան դատաստանը իր դատակնքով հրամայեց ինձ բոլորովին թողուլ այն սուտ ուսումը, որ հաստատում էր, թե Արեգակը անշարժ կացած է տիեզերքի կենտրոնում, իսկ Երկիրը չէ դտնվում այդ կենտրոնում և շարժում է, և որովհետև ես պետք չէր, որ այդ վարդապետության հետևի, նորան պաշտպանեի, որևէցն կերպով ուսուցանեի, խոսքով թե գրով և նորանից հետո, երբ հայտնել էին ինձ, թե այդ վարդապետությունը ընդդեմ է Սուրբ և նորանից հետո, երբ հայտնել էին ինձ, թե այդ վարդապետությունը ընդդեմ է Սուրբ Գրքին, ես գրեցի և տպեցի մի գիրք, ուր խոսվում է հիշված դատապարտված վարդապետության մասին, ուր սորա պաշտպանության համար առաջ են բերված ամենևին պետության մասին, ուր սորա պաշտպանության համար առաջ են բերված ամենևին պետության համոզիչ փաստեր և առանց վճռական վերջաբանության այս պատճառով ասեմ կամ հաստատեմ, թե Արեգակը անշարժ կացած է տիեզերքի կենտրոնում Արեգակը և ոչ Երկիրը, որ շարժում է։ Այս պատճառով, ուզելով անհեռացնել ձեր սրբազնության և ամեն կաթոլիկի մտքերից իմ ընդդեմ, այդպիսի ասստիճ, բայց սրբագրած կասկածանքը, մաքուր սրտով, և չեմ ճառանգ հավատով, ես հրաժարվում եմ, նզովում եմ և ատում եմ վերը հիշված ազանգները և մոլորությունները, և առհասարակ ամեն ուրիշ մոլորություն, որ ընդդեմ է սուրբ հռոմեական եկեղեցուն. ես երդնում եմ, որ այսուհետև չպետք ասեմ, չգրեմ հաստատեմ ոչ բերանացի և ոչ գրավոր ոչ մի բան, որ կարող էր վերստին իմ ընդդեմ հանել այսպիսի կասկածանք, և թե իմանամ որևէցն հերետիկոսի կամ հերետիկոսության կասկած ովոզի մասին, այն ժամանակ պետք իմաց տամ և մատնեմ նորան ինկվիզիցիոնի սրբազան դատարանին, կամ ինկվիզիտորին այն տեղի, ուր ես գտնվիմ։ Բայց սորանից, ես երդնում եմ և խոստանում եմ, որ կատարելապես կկատարեմ և կպահեմ բոլոր ապաշխարանքը, որ դրված են այժմ իմ վրա, կամ որ այսուհետև

նոնագրությանց, այլ, բնության օրենքներին և որ մնկնում է այդ օրենքները աստեղաբաշխության և երկրաչափության կանոններով: Ով որ միշտ պատկերաբար հասկանում է ամեն բան, այնպիսին պիտի որ և Աստվածաշնչի մեջ հակասություններ և մինչև անգամ աստվածընդդեմ հայհոյություններ գտնեն, երբ խոսք է լինում աստուծու աչքի, ձեռքի, կամ բարկության մասին: Միևն ազգի խառնության պատճառով հնարավոր է այս, ապա ուրեմն է՛լ ավելի հարկավոր էր աչքի առնել այս խառնությունը այն դատողությանց մեջ, այնպիսի առարկաների մասին, որ բնավ չեն ենթարկվում ամբոխի նկատողությանց և չեն դիպչում հոգու բարօրության,— ինչպես են բնական գիտությունքը: Այս պատճառով խոսելով այդ գիտությանց վրա, չէ կարելի եզրակացություններ հանել բիբլիական աստվածներից, այլ, նկատողություններից և հարկավոր փաստերից,

---

տէ կղզիին սրբազան ինկվիզիցիոնի ձեռքով. և միևն ես հակառակ վարվիմ իմ այժմ ասած խոսքերից, որին և ինձ, հավատացնելուս, խոստանալուս և երդումիս, որից ասվածք ազատ այն ժամանակ ենթարկվում եմ պատիժներին, մահապարտության և տանջանքին, որ այս տեսակ հանցանքների համար դրված են սրբազան կանոններով և ուրիշ տիեզերական և տեղական ժողովների վճռագատությամբ: Բո՛ղ օգնե ինձ ասվածը և նորա սուրբ Ավետարանը, որին հպավորվում եմ սեփական ձեռքով...»:

1737-ին, գրվին մի գար հետո Գալիլեյի վրա հանած այս սժգալի գատավճռից, որ ինչպես մի անջնջելի սրատ մնում է ինկվիզիցիոնական գատարանի և գատակնիքը սատրագրող գատավորների վրա, Սանտա-Կրոչե եկեղեցու մեջ, տոսկանական հանճարեղ մարդկերից ամենամեծի հիշատակի համար կանգնեցուցին մի հոյակապ մարմարեայան արձան: Բենեդիկտոս տասնչորրորդը ոչնչացուց ինկվիզիցիոնի գատավճիռը Գալիլեյի շարագրության ընդդեմ, երկրի շարժողությունը,— աստղաբաշխության հիմնական օրենքը,— ընդունված է ամեն տեղ և ամեն մարդուց, որպես երկրագության տակ չընկնող էշմարտություն. և մինչև անգամ դաս է տրվում Հռոմի դպրոցում» (Տրանսուա Արագո, Աստղաբ., հատ. III, գիրք քսաներորդ, գլ. 3): Արդյոր սորան ի՛նչ կասե պ. Ջամուռէլլոյ. նորա ուղղափառությամբ, Ութրանոս VIII-ն էլ և Բենեդիկտոս XIV-ն էլ համա[հա]վատար սուրբ և համա[հա]վատար անմեղա[նչ]ականք են, բայց իրար բնդդեմ վճիռ հանած. սոցանից որի՞ անունը արդյոր պիտի գրե Միջնագարյան հերետիկոսաբանի մատյանում: Միևն Երևակը գանգագի, ըոզ նորա ճառը պատասխանե — սրանչելի ժամանակը21: Երդմնագրի պատճենը Արագոն առել է Գելամբերի Աստղաբաշխության պատմությունից. այս գիրքը մենք չենք տեսած, ուստի և չգիտենք թե այն հռչակավոր երկրաչափը ի՛նչ աղբյուրից է հանել: Այն պատճառով այս երկու խոսքը տասցինք, որ այդ երդմնագիրը մի փոքր այլայլությամբ (միևն ոչ էական բաներում) տեսնում ենք Լալանդի «Տիեզերական համակարգության» մեջ. բացի սորանից, միևն չէ խարում մեզ մեր հիշողությունը, նույնպես այլայլված տեսել ենք և Ֆոն-Քուզենդի ֆիզիկայի մեջ:

Թեպև տմանք ավելորդ համարին, թե ինչի՛ համար հանգես հանեցինք այս երդմնագիրը. մինչդեռ կարող էինք միայն տեսնել հիշելով հերիքանալ. պատասխանում ենք,— պատմության արդարության գործիք լինելու համար. թո՛ղ մի լեզվով ավելի բարզվի այս նախատինքը հալածանաց մարդերի և տերնկենի հազիվանակը գիտության: Արդարությունը պահանջում է այս. «Ես բացի լսելով զայլոցն զգործան, յատաչագոյն բարեացելոցն, տեսանի չիշատակ Քողցին զկնի խրճանց, տեմանց և տղգի: Իսկ ծայլըն և վատն հայհոյով յանդիմն, և լսելով զայլոց զգարասատս, ի բարի նախանձն կրթնալը, չտանասցին յատանալ»: Ղազար Փարպեցի, Պատմ. Հայ., Վիենն., 1793, եր. 14:

որովհետև և՛ բնությունը և՛ Աստվածաշունչը միօրինակ գոյացած են աստվածային խոսքով» (Հուստոս Լիբրիզ, նամակ 4. տե՛ս և նորա ավելվածը)։

Դառը բողոք. բայց որքան տող, այնքան ճշմարտություն։ Ո՛ղ, մի՞շտ օրհնվի դիտության նահատակների անմահ և նախանձելի հիշատակը։

Միայն Արտաշեսը չէ, որ ավել է իր հարկը միջին դարերին. մեր վեհափառ Ազատ Մասիսը նույնպես ձգել [է] այդ խավար դարերի գանձանակը իր լուման։ Ո՛վ չգիտե էջմիածնի «լուսավորչու» ասված քամին, որ ամառները ամեն իրիկուն արևը մտնելու ժամանակ բարձրանում է Մասիսի կողմից և զովացնում է էրված փոքրիկված Արարատյան դաշտը։ Արդա՛րև, նայելով ցերեկվա ջերմության աստիճանին, սուտպապես կարելի է ընդունել այդ քամին որպես երկնային պարգև։ Ես ինքս, էջմիածնի մեջ սեպտեմբերի սկզբում, սառած ձուկի պես բերանս բաց մնացած, անհամբեր սպասում էի, թե ե՞րբ արևը պիտի թևքվի, որ իմ ալևոր Մասիսի կենարար շունչը ինձ հասնի ու մի քիչ զովացնե։ Անշուշտ, մի վտանգ, մի մոլորություն չկա և չէ կարող լինել, եթե ժողովուրդը չգիտե այս բանի զորությունը, բայց և այնպես գիտենալը ավելի օգտակար համարելով, գրում ենք մի քանի տող, ներողություն խնդրելով ընթերցողից, որ մեր գրվածքը շատ ճյուղավորվում է այս անգամ։

Արևը սաստիկ տաքացնում է որպես Արարատյան դաշտը, որ ամեն կողմից գրեթե շրջապատված է սպառած և մերկ սարերով նույնպես և Արագածի վիթխարի քարակուռ մարմինը։ Բուդում եմ բոլոր դաշտի մեջ ցիր ու ցան ընկած, թե ավերակներից մնացած և թե սարերից ընկած անհամար քարերը։ Թեև, այո՛, ոչ փոքր բան են սոքա, որովհետև բովանդակ դաշտը լիքն է այսպիսի քարերով։ Այս սարերը, դաշտը և քարերը արևի ճառագայթներից սաստիկ տաքանալով, ջերմության բնական օրենքով, որ լայնացնում է ամենայն մարմին, լայնացնում և անոսրացնում են Արարատյան դաշտի օդը։ Հյուսկը այս օդի, որ անմիջապես շոշափում էին տաքացած մարմիններին, լայնանալով և մի որոշյալ տարածության մեջ ավելի տեղ բռնելով, քան թե սեղմ օդը, սկսում են կամաց-կամաց բարձրանալ դեպի վեր և այս է պատճառը, որ ջերմության ժամանակ անոսրանում է այդտեղի օդը և մի վաստակեցուցիչ և վհատեցուցիչ ազդեցություն է գործում կազմվածքի վրա։ Այս է պատճառը, որ Արարատի ձյունական գոտին, չնայելով նորա աշխարհագրական դրության, այսինքն հյուսիսային լայնության, ավելի բարձր է, քան թե նույն լայնության տակ եղած ուրիշ սարերի ձյունական գոտին։ Հաշվելով ծովի մակերևույթից, Արարատի ձյունական գոտու բարձրությունը հասնում է մինչև 13300 ոտնաչափ։ Նույն այս օրենքներով և պատճառներով Հիմալայան սարի ձյունական գոտին բարձր է, քան թե կարող էր լինել, եթե նորա շրջապատը ընդարձակ և արևակնդ կամ թե պիտի լիներ։ Ձյունական գոտին Մեքսիկայի Անապվակա սարերի, դաշտ եղած չլիներ։

որ 20° ավելի հարավային դրություն ունեին (Արարատը մոտավորապես գտնվում է հյուս. լայն. 40° տակ, իսկ Անագվական մոտավորապես 20°) մինչդեռ 800 ոտնաչափ ավելի ցած է, քան թե Արարատինը, լինելով 14100 ոտնաչափ։

Մարմիններդ ինչպես ջերմության լայնանում են, դորա հակառակ, ցրտից սեղմվում են։ Արարատի հավիտենական ձյուները և սառցանոցները շոշափող միջոցով միշտ սեղմված և ճնշված վիճակի մեջ է։ Ասել է, թե երբ արևի ջերմությունից Արարատյան դաշտի օդը լայնանալով անոսրանում է և բարձրանում է դեպի վեր, երբ մյուս կողմից Մասիսի օդը ցրտից ճնշված սեղմ է և ավելի խիտ, ուրեմն օդի բնական դուզակշիռը խանգարված է այդպես. պատճառ, բնական օրենքով, հեղուկ և օդանման մարմինները ամեն կողմ հավասարապես ճնշելով պիտի մի մակերևույթ և մի հավասարություն ունենան։ Ի՞նչ է սորա բնական հետևանքը. այն, որ Մասիսի ճնշված օդը պիտի վազե լցնել Արարատյան դաշտի օդի պակասությունը։ Բայց որովհետև ջերմության ժամերը այնքան երկար չեն, որովհետև օդը անոսրանալով ստանում է նույնպես ավելի ձգականություն, որ ինչպես վեր է բարձրանում, այնպես և ամեն կողմ, ուստի և ցերեկը չէ կատարվում օդերի դուզակշռությունը, այլ այն ժամանակ, երբ արևի ճառագայթքը էլ այնպես չէին տաքացնում դաշտը, երբ նորա օդը կամաց-կամաց կորցնելով իր ձգականությունը սկսում էր սեղմվիլ, այն ժամանակ, Մասիսի օդը, էլ դիմագրության չգտնելով լայնացած օդից, սկսում է վազել դեպի դաշտը, պատճառելով այն ախորժ քամին։ Այդ քամու ուժը միշտ համեմատ է ջերմության աստիճանին։ Որքան աստիճ լինի ջերմությունը ցերեկը, այնքան ուժով կլինի քամին իրիկնապահին։ Շատ ծովահայաց քաղաքներ ունին իրենց իրիկնապամին, որ ծովից է փչում. այն դիպվածներում ծովը կատարում է Մասիսի պաշտոնը, որովհետև ջուրը ավելի վատ առաջնորդ լինելով ջերմության, նորա օդը ավելի խիտ է, քան թե նավահանգստի կամ քաղաքի օդը, որ անմիջական հարակցություն ունի ջերմության լավ առաջնորդ մարմիններդ հետ։ Երկու անգամ կանգնելով հեղկական Մագրասի նավահանգստում և, մի քանի օր մնալով Սենյան կղզու Գալլ քաղաքում (point de Galle), ես նույնպես վայելած եմ այս բնության զվարթարար պարգևը, էշ նահատակ եղած լինելով ցերեկվա գժոխային ջերմությունից։ Պե՞տք էր ավելացնել, թե տրոպիկական աշխարհների մշտական պատասարը առաջանում էին հիմնված լինելով ճապես այն պայմանների վրա, որոնց մասին խոսեցանք. բայց մենք չենք ուզում ավելի ձգացնել բանը։ Մեր դիտավորությունը էր մի համառոտ տեղեկություն տալ միայն ճնշամավորու քամուն։ Մենք հասած ենք մեր նպատակին։

Առաջ ենք գնում։

Առհասարակ պ. Պուշչանցի ծանոթարանությունքը աջողակ չենն։ Խոսելով Հարսանիքի օրի և մեղամորության մասին (եր. 198) արդո

հեղինակը այսպես է ծանոթագրանում. «Էս որսի սովորությունը և մենամարտությունը կարծեմ մնացած պետք է լինի մեր նախնի թագավորների ժամանակից, որ առհասարակ երբեմն-երբեմն զվարճության համար անում էին»:

Ի՛նչ խոսք է այս: Նախ, որ մենամարտությունը և որսորդությունը թպի սևծխական մի բան չէ, որ ուր էլ տեսնվի, թագավորներից մնացած կարծվի: Երկրորդ, դիտենք թե մեր պատմության հիշատակարանքը տեղ-տեղ պահել են մեր թագավորների որսորդության հիշատակը. շատ անգամ գաղտագարտելով նոցա զբոսասիրությունը և ազգային կառավարությունը նրանի վրա ձգելը, բայց թե երբեմն երբեմն մենամարտո՞ւմ էին նոքա զվարճության համար. այդ, առաջին անգամ լսում ենք պ. Գոռշյանցից: Գո՞նե խոստովանում ենք մեր տգիտությունը, որ մենք չգիտենք, թե հայոց թագավորները ներոնի օրը ընկնելով զվարճության համար հրապարակ էին իջնում մենամարտելու: Չենք էլ տեսնում պատմության մեջ, որ մեր թագավորական պալատներում կամ քաղաքներում եղած լիներ այնպիսի սովորություն, ինչպես տեսնում ենք Հռոմի կրկեսում — գլադիատորներին (ըմբիշ), որ առաջ միայն սարուկների գործ լինելով, հետո հռոմեական բարքի ընդհանուր ապականության ժամանակ դարձավ ազնիվ երիտասարդների, պատրիկիոսների, ծերակուտ մարդերի, այո՛, և նույնիսկ ներոնի սիրական գործը:

Բայց, ասենք թե թագավորները որսորդության էին գնում, ասենք թե մենամարտում էին երբեմն-երբեմն զվարճության համար, ինչպես հավատացնում է մեզ մեր հեղինակը, բայց ի՛նչ հարաբերություն կա հարսանիքի սիմբոլական արարողության և թագավորական զբոսասիրության մեջ: Փեսայի թե թուր կապելը, թե որսի գնալը, թե մենամարտությունը, այս բոլորը իրենց սիմբոլական բնավորությամբ հարկադրում են մեզ կարծել, թե դորա շատ հին ժամանակներից, և թագավորներից առաջ ժամանակներից, մնացած արարողություններ են կամ այդ արարողության փշրանքը: Մի երիտասարդ ամուսնանալով մի աղջկա հետ, բարոյական պարտականություններ է առնում իր վրա մարդկային ընկերության առջև պաշտպանել իր ընտանիքը, կերակրել նորան և առհասարակ դեպ դնել մի կոպիտ ուժի, եթե սա որևիցե կերպով կամենար վրդովիլ նորա ընտանեկան խաղաղությունը: Եվ մեզ թվում է, թե թուր կապելը, որսի գնալը և մենամարտությունը ունին իրենց մեջ այս պայմանների սիմբոլական խորհուրդը, որ փեսան հրապարակով ցույց է տալիս և ապացուցանելով ընկերության իր այրությունը և արժանավորությունը իրավամբ առանում է իր կինը:

Թե ի՛նչ բանի նշան է թուրը, այդ մասին խոսիլն էլ ավելորդ ենք համարում*, իսկ որսի համար ասում ենք այսքան, որ ամեն ազգ իր

* Այստեղ մեր մեթոդը ընկավ շարադրանքի այն տեղը, որ ասում է «...գլխեն արքայական, սպանման գործի կենաց արբայրին 'ի կենաց գործոց նուիրեալ...»[38], եվ մենք

մանկության ժամանակ ապրել է և այժմ ևս վայրենիքը ապրում են որսորդությամբ։ Տարակույս չկա, որ և մեր ազգը անցել է մի անգամ պարապմունքի այդ աստիճանը, և մեր համար եղած է երբեմն ժամանակ, երբ ամեն հարստության հայտարարը էին գանազան կենդանիների մորթիներ և ոսկորներ (զենք շինելու համար)։ Արդեն քաղաքակրթության մեջ մեծ առաջադիմություն է, երբ մի վայրենի, թափառականն որսորդությամբ պարապող ազգ, սկսում է երկրագործության ձեռք զարկել, բայց այդ բանը կարճ ժամանակում չէ լինում, դարեր են անցնում, և ժողովուրդը արդեն ստացած է լինում շատ կանխամուտ կարծիքներ, բնական երևույթների իյուր ըմբռնողություն և այլ հազար ու մի բան, որ գալոց ավելի լուսավոր ժամանակը պիտի աշխատեր քերել այդ բոլորը։ Թե մինչև ո՞ր ժամանակ պարապել են հայք որսորդությամբ. կամ, ավելի լավ, ե՞րբ է մտել նոցա մեջ երկրագործությունը, որպես ընդհանուր ժողովրդի պարապմունք, այդ մասին պատմության էջերը դարատակ են մնացել։ Այսքանը հայտնի է, որ Հայաստանը երբեք դարավոր խաղաղության երես տեսած չլինելով, անդադար պատերազմների, հարձակողության կամ պաշտպանողության հանդիսարան եղած լինելով, չէ կարելի ենթադրել, մանավանդ հին ժամանակների վերաբերությամբ, թե երկրագործությունը եղած լինի ընդհանուր ժողովրդի ապրուստի չծակը։ Այն մարդը, որ կարող էր մաճ բռնել, նա ստիպված էր հետևիլ հայրենիքի դրոշակին։ Թողնելով այս բոլորը որպես լոկ ենթադրություն, ավելցնում ենք, թե Արտաշես Բ-ի օրով լսում ենք խոր. բենացու բերնից երկրագործության տարածումը Հայաստանում, մինչև որ այդ թագավորի օրով անգործ երկիր չկա եղած Հայաստան*։ Բայց չէ կարելի սորանից եզրակացնել, թե այդ օրից խափա ընկավ որսորդությունը։ Գրեթե երկու դար հետո ապրած Արշակ Գ-ի ժամանակի վերաբերությամբ, լսում ենք մեր երանելի Ղազար Փարպեցու բերանից այնպիսի պատմություն, ուր որսորդությունը ոչ վերջին տեղն ունի**։ Մենք, հատուկ այն դիտավորությամբ, թե ե՞րբ է սկսվել հայոց երկրա-

---

Հիշեցնենք այս տողերը, կարդալով պ. Գուշյանի ծանոթաբանությունը (եր. 189) թուրի դիվահալած զորության մասին։ Համեմատիր այս բոլորը շնաշխարհիկ Արովյանի հայկազ խոսքերի հետ (Վերք Հայաստանի, եր. 118—121), ուր ընդարձակած և կերպարանագործած է այս սքանչելի վարդապետությունը և ուր էրված հեղինակը չի դիմացել, որ մի բանի տող ծանոթություն չգնե։

* «Բայց ասի, Թե ժամանակս Արտաշիսի ո՛չ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լճանային և ոչ դաշտայինս. Խորեն., Պատմ. Հայ., գիրք Բ, Գլ. 45. NB Խորենացու պատմությունից վկայություն բերելով, ինչպես արդեն նկատած է ընթերցողը, ինքնահամարը չենք հիշում. պատճառը այն է, որ մեր ձեռքում եղած օրինակը, թեև խիստ ազավաղ, բայց և այնպես, հազվագյուտ լինելով նորա ինքնահամարը ցույց տալը խորհուրդ չունեցավ։ Շատ հարց ու խնդիր արինք, որ մի օրինավոր ազատության օրինակ գտնենք Պետերբուրգում, բայց և այնպես չգտանք։ Ուստի և գործ եմ գնում այս ազավաղ օրինակը։ Սա ազած է Ամստերդամ 1695-ին վանանդեցի Թովմաս նալեանոսի ազատանում,

** Ղազար Փարպ., Պատմ. Հայ., Վենետ., 1793, եր. 21։

գործուիլյունը, խուզարկուիլյուն արած չենք, այլ այս մի երկու բանը, որ վազուց հայտնի էր մեզ, հիշեցինք թողնելով մանրամասն քննուիլյունը ազգային պատմուիլյան, մեզանից առավել հմուտ և ավելի ժամանակ ունեցող մարդերի:

Այս արարողուիլյանց մասին մեր արած ենթադրուիլյունքը ավելի չեն, քան թե մեր անձնական կարծիք և հիմնված են միմիայն անալոգիայի վրա: Գ. Պողոսյանցը պատմելով, թե փեսան չէ կարող կերակուր ուտել մինչև որսի չգնա և որս չբերե, կարծում ենք, թե ավելի ուժ է տալիս մեր ենթադրուիլյան. պատճառ, ինչպես ասացինք, փեսան ապացուցանում է գորանով թե կարո՛ղ է հոգալ իր ընտանիքի ապրուստը: Մենք կարծում ենք, թե իրավունք չկա, առանց դրական ապացույցներ ունենալու, ամեն մի հին ավանդուիլյան մնացորդ տեսնելու ժամանակ վազել թագավորների քամակից. ազգը մինչև թագավորուիլյան հաստնելը, ստանում է և ստեղծում է իր ավանդուիլյունքը, ծեսերը և արարողուիլյունը, որոնք, այո՛, թե թագավորների ժամանակ և թե նոցանից հետո ընկնում են դարերի ազդեցուիլյան տակ: Հարկ չկա ասել, որ ամեն բան հնացնող և մաշող ժամանակը հնացնում է և մաշում է, այո՛, շատ անգամ և խափան չթողացնում է այս կամ այն ավանդուիլյունը, այս կամ այն ծեսը և սովորուիլյունը: Շատ անգամ թերևս այդ բոլորը մնալով գործադրուիլյան մեջ, այնուամենայնիվ տալիս են դարերի ազդեցուիլյան իրենց հարկը. նորա զրկվում են իրենց ներքին խորհրդից և դառնում են մի պիտակ բան, ինչպես այսօր դարձել են այն բոլոր արարողուիլյունքը, որոնց մասին եղավ մեր խոսքը. պատճառ կյանքի և ընկերական պայմանքը փոխված են:

Մենք չենք ուզում մեղադրել կատաղած շան ավանդուիլյան մասին հեղինակի հաստատողական ծանոթաբանուիլյունքը: Չենք մեղադրում այն պատճառով, որ նա հավատացած գրում է այդ բանը, ինչպես բոլ ավանդակ գավառը հավատում էր: Բայց մեր արդարացի մեղադրուիլյունը թո՛ղ հասնի մեր բժիշկ նորայրակիցներին, որ տասներով գտնվում են այսօր Արարատյան աշխարհում և որոնք ամեն օր լսելով այս սքանչելի բժշկուիլյան մասին մինչև այժմ չեն ձգել նորան ուսումնական քննուիլյան տակ. ստուգելու համար նախ, թե Փարպի գնացող ուխտավորքը իրավ, կատաղած շան խածած էին և ջրվախուիլյուն ունեի՞ն (Hydrofobia), թե՞ առողջ շան խածած, կամ Սոսի նման ջրվախ էին, որ իր Փարպի գնալը Գարեգնի առջև արդարացնելու համար ասում ու մուտ բաներ էր հնարում. երկրորդ, եթե, ստուգապես, կատաղած շան խածած էին և ջրվախուիլյուն ունենալով արդարև Փարպի գնալով բժշկվում էին, ապա ուրեմն նոցա բժշկուիլյան բնական պատճառը, որ անհնար է թե չլինի, նրա ջրվախը բժշկվում է*: Ինչ որ մեզ է վերաբերվում, մենք

* Ինձ կարող են ասել, թե որովհետև գիտուիլյունը չէ կարող թույլ տալ այդպիսի սքանչելի բժշկուիլյուն, ուստի և նորա առանց վերոտին քննելու մերժելով, չեն ընդունում: Բոլորովին համաձայն եմ. ուրեմն. թո՛ղ փարատեն մառախուղը, թո՛ղ հրապարակում:

խոստովանում ենք, որ մեզ շատ ենք լսած այդ սքանչելի բժշկության պատմությունը, աչուռամենայնիվ սաստիկ երկրայություն ունինք հիվանդ ուխտավորների ջրվախության մասին և կարծում ենք, թե դրա Մոսի նման ջրվախներ են։

Բայց մեզ ավանդություն կար, որ թե մորմը (սարդաձև կենդանի— Tarantula lycosa —тарантул, мизгир) մի մարդ կամ մանավանդ մի աղջիկ խայթե, դրա միակ ճարը պար գալն է. և պար գալ բազմությամբ, խմբովին, ոչ այնպես համբաշարժ, ինչպես մեր «կուռ բռնուկը» կամ ռուսաց хоровод-*ը (մոլդովականների մեջ էլ կա մի այդպիսի կուռ բռնուկ) այլ շատ արագությամբ, այնպես որ էլ ուժ չմնա պարը շարունակելու։ Երկրագործական աշխատությանց ժամանակ, երբ աղջիկը չէր ուզում բանել կամ թե ուզում էր իր սիրականին տեսնել, հերիք էր որ մի աղաղակ բարձրացներ, թե մորմը խայթեց։ Իսկույն, բոլոր բանվորները թե պատանիքը և թե աղջիկները թողում էին իրենց աշխատությունը։ Հարկավոր էր հոգի փրկել. ո՛վ կարող էր մեղադրել։ Ակընթարթի մեջ գլխում էր Տարանտելլան (tarantella պարի անուն է)։ Մուլլը պրոտնում էր, սիրահարքը հանդիպում էին միմյանց, պար գալիս իրար հետ, տեսություն էին նշանակում կամ մի նշանարան դնում։ Եվ երբ ամենքն էլ իրենց ցանկության հասած էին, մորմից խայթված աղջիկը առողջանում էր. արևն էլ մտնելու վրա. ուստի ամենքն էլ գոհանալով ուրախ-ուրախ գնում են իրենց տունը։ Ո՛վ կարող էր ասել թե Տարանտելլան (մորմապար ?) պատվական հնար չէ, կամ գորություն չունի մորմի խայթոցի ընդդեմ, երբ աշխարհ, արարած իր աչքով տեսնում է, որ նրանց մորմից չարաչար խայթված (?) աղջիկը, մյուս օր ողջ առողջ բանում է իր բանը։*

Հիվանդների լուռ ու անխոս գնալու մասին (Փարպի) կամ նոցա գլխին ձիու սանձ փաթաթելու վերաբերությամբ (արդյոք էշի սանձը ի՞նչպես է. բնա՞ւ գորություն չունի), չնայելով մեր հեղինակի արած ծանոթարանությանը, մենք ոչինչ դրական բան չենք կարող ասել, որովհետև այդ երկու արարողությանց կամ պայմանների մեջ մի ազդվություն չենք տեսնում, որ բնության մեջ տեղ ունենար և հակամետ ենք կարծել, թե դրա ուխտագնացության ավելորդությունը լինին։ Ախտացին, որի նրանկայությունը միշտ բորբոքված է (Ախտն առնում ենք միայն բարեխառն և ջերմ աշխարհների վերաբերությամբ) գաղտնախորհուրդ և սիմբոլական բաներով, շատ հաստատակ արարողություններ էլ գիտեն խաճողել գանազան նշանական ձևերով և պայմաններով,— զորդ խաթերաբյության,— որոնք թեև քան էության ոչինչ խորհուրդ կամ գորություն

կով հակացնեն ժողովրդին հշմարտությունը։ Բայց ապացուցանելու համար ժողովրդին գիտության հշմարտությունը հարկավոր են իրողություններ և ոչ լոկ խոսք. իսկ իրողությունները պիտի նկատվին, ուրեմն և քանն անդամ և ոչ հնությից. լոկ բորոտով ոչինչ չեն շինիր։

չունին, բայց և այնպես ամբոխի աչքին երևցող լինելով, ստիպում են բերանաբաց ժողովրդին խորհուրդ ենթադրել այդ բաների մեջ։ Հայտնի է թե հնարողը, կամ նորա քարոզը հռչակվում է խոր փիլիսոփա. պատճառ. նա միայն գիտե այդ բոլորի գաղտնիքը և նորա ձեռքին է խորհրդավոր և գերբնական գիտությանց բանալիքը։ Մի՞թե ավելի մեղավոր են Բուդդայի բանդերը և Բրահմայի բրամիններըն

Սոս և վարդիթների մեջ կարելի էր է՛լ մի քանի այսպիսի ցնդի ավանդություններ գտնել, բայց իրավն ասենք, ձանձրացանք այս հիմար բաններից. վերջին անգամ ասում ենք, թե այսպիսի բաները ներգործում են խելոք և պարզամիտ ժողովրդի վրա այնպես, ինչպես հաշիշը կազմվածքի վրա, ուստի պարտական ենք ամենայն խնամով արմատախիլ անել այդպիսիքը և մաքրել հայկական անդաստանը։ Ահա մեր վերջին խոսքը։

Գ. Գոռշյանցը, փոխարներաբար առնված ոճերի և ձևերի բուն նշանակությունը չէ բացատրում, թողնելով «հետախույզ բանագիտաց», ինչպես ասում է հառաջաբանի վերջին տողերում։ Այս շատ անգործածելի դաղափար է։ Մարդը մեղավո՞ր եղավ, որ հետախույզ բանասեր դարձավ, որ նստի ծանր ու բարակ ոճերի բառարան շինե։ Ասենք, թե գլուխը քարը տվեց ու շինեց. հետո այդ բառարանը պիտի տպե հրատարակե, որ Սոս և վարդիթների «հետախույզ բանասեր» չեղող կարդացողքը,— պարզ մահկանացուքը հասկանան այն փոխաբերական ձևերը և ոճերը, որ առաջ չէին հասկացել և որոնք, այո՛ շատ տեղ ու համ էին տալիս գործին։ Մի՞թե ավելի լավ և ավելի հարմար չէր, որ հեղինակը ինքը բացատրեր, քան թե թողում է «հետախույզ բանասիրաց»։

Եթե ասույդը ասենք, մեր քննության այն մասը, որ նվիրված էր թերություններին Սոս և վարդիթեր գործի, որպես վիպասանության, պրծավ։

Մենք չենք ուզում քննության տակ ձգել հեղինակի լեզուն և նորա շատ ձախ հառաջաբանությունը. վերջինս եթե չլիներ, առավել գոհ պիտի լինեինք։

Հեղինակի լեզու ասելով չենք խմանում Աշտարակի բարբառը, որով գրված է գործի բնագիրը, ուր կամ խոսա քիչ խառնել է հեղինակը Աշտարակի բարբառի մեջ օտար ձև, օտար ոճ, կամ, բնավ ոչ, այլ նորա հառաջաբանի լեզուն։ Նվ հեղինակը, ուզելով իր գործը այդ բարբառով գրել, որ կարդացողը ոչ միայն Աշտարակի վարքի բարքի, այլ նորա լեզվի վրա էլ տեղեկություն առանա, ոչ միայն մեղադրելի չէ, ոչ միայն ազատ է այդ լեզվի մասին պատասխանատվությունից, այլև մեծ շնորհակալության արժանի։ Մենք կարող ենք որևէցն գավառական բարբառ քննել, սորվել, տեսնել նորա արժանավորությունքը և թերությունքը, բայց, այսչափ միայն։ Ինչպես մի հեղինակի՝ կարող ենք ասել «թե ինչի այս ձևը այսպես ևս գործ գնում կամ այնպես». այդպես չենք կարող խոսել հազարների և բյուրերի հետ։ Հեղինակը շատ անգամ ազատ է այս ու

այն ձևը գործ դնել կամ չդնել, բայց մի գավառի բնակիչ (մեր խոսքը բուն հասարակ ժողովրդի վրա է) չունի այդ աղատությունը։ Նա այնպես միայն կարող է խոսել, ինչպես խոսում է ամբողջ ընկերությունը, որին անդամ է և ինքը խոսողը։ Իսկ այդ ընկերության բարբառը կերպարանագործվել է աշխարհագրական և բնության ազդեցությանց տակ. պատմական դեպքերը չեն անցել նորա վրայից, առանց իրենց հետքը խոր դրոշմելու, և բարբառները նորա անցուցած կյանքի բնական արդյունքն են։ Հայտնի է, թե ոչ մեկ մարդ պատասխանատու չէ, թե ինչի՞ մի որոշյալ տեղում այնպես է ազդել բնությունը և ոչ այլապես. թե ինչի՞ պատահել են այս կամ այն պատմական դեպքերը և ինչի՞ համար այնպիսի ուղղություն է տուացել հասարակաց կյանքը, որի արդյունքը, բնականաբար, եղել է այս կամ այն գավառական բարբառը։ Նմ որովհետև բնության և պատմության ազդեցությանց մասին պատասխանատու չէ մարդը, ուրեմն և պատասխանատու չէ և ոչ իսկ պախարակելի կամ ծաղրելի, եթե մի սորսափելի ավերանքի տակ է ընկել այդ լեզուն։ Սովորական ոճով խոսելով գործ դրինք ա վ ե ր ա ն ք բառը, ապա թե ոչ փիլիսոփայարար ուղիղ մտածությամբ ոչ դրական կատարելություն կա և ոչ դրական ավերանք մի լեզվի, որ ժամանակների պիտույքին հարմար լցնում էր իր պաշտոնը։ Նեղսրտություն և կատարելություն տեսնել, կատարելություն խոստովանիլ հին լեզուն տիրապես և աղճատանք համարել նորը դրականապես։ Ի՞նչ պիտի պատասխանեն մեզ, եթե հարցնենք, թե ինչ բանում է կատարելությունը «տուր ինձ զհաց» կամ ո՛ւր է աղճատանքը՝ եթե ասում ենք «հաց տուր ինձ»— երթալ ի տուն,— տուն երթալ. և այլն, և այլն։ Սորա բոլորը տղայական ընչին և խելացնոր բաներ են, ձգտողություն, բնության և անցած գնացած ժամանակի վրա բռնանալու։ Լեզվի խորհուրդը ձևի մեջ չէ, այլ իրի մեջ. եթե ես «հաց տուր ինձ» ասելով հասկանում եմ այն, ինչ որ 4.000 տարի առաջ հասկացնում էին «տո՛ւր ինձ զհաց» ասելով, լեզուն կատարում է իր պաշտոնը լիքը չափով։ Էլ այստեղ իրավունք չկա, բաղդատական դեղեցկություն կամ կատարելություն հանդես հանելու. ինչ իրավունք որ ուներ 4.000 տարի առաջ ապրած հայը այնպես խոսել, նույն իրավունքին համազոր իրավունք ունի այժմյան հայը այսպես խոսել. ո՛վ հավան չէ, գնա՛ դերնշմանները վիճարան 4.000 տարի առաջ մեռածներին և այդ մեռելների հետ խոսի։ Իսկ մենք, կենդանիքս, որ գիտենք խոստովանիլ ժամանակի և պատմության իրավունքը, չենք կարող կենդանիքը թողած մեռելների հետ խոսել։ Այս գրությունից պարզ երևում է, թե որ աստիճանի թեթևամտություն է այս կամ այն գավառական բարբառը ծաղրելը, և նորանով խոսողի վրա, որպես մի սորտ և խեղճ էակի վրա նայելը, որպես թե այն մարդը հանցանք է գործել։ Օ՜հ, եղբերամոր հիմարություն։ Ներկա և կենդանի սերունդը անցածի և մեռածի գերին չէ, իսկ ո՛վ որ ուզում է կամայարար իր կենդանությունը ուրանալով և իրավունքից հրաժարվելով, իր վիզը գնել անցածի լուծի տակ, այնպիսուն ասելիք չունենք։

Եթե ցանկալի և հոգով չափ ցանկալի է նոր լեզվի համազգային միությունը, ապա ուրեմն պիտի ուրախությամբ ողջունել մի ամբողջ գործ, որ կատարված էր որևիցե գավառական բարբառով. պատճառ, նոր լեզվի հիմնավոր գիտությունը, նորա մշակությունը և առաջատարությունը որպես նաև ապագա միության գաղափարը առանց այդ գավառական բարբառների օգնության աներևակայելի է անգամ: Մեր այստեղ քարոզած դրությունքը պաշտպանելու համար հավաքած ենք շատ փաստեր, բայց այստեղ, մեր հատվածի նեղ շրջանակը չէ ներում ազատ ընթացք տալ նոցա: Բայց այնուամենայնիվ անհրաժեշտ ենք համարում ասել, որ ստրկանալով հին լեզվին, առանց ժողովրդին ականջ դնելու, լեզվի նոր ծլած ձևերը, որ գեռ թարմ են և կերպարանագործվելու վրա, կտրելով և ճնշելով անցածի և մեռածի պատառների մեջ, նոր լեզվի մշակության գաղափարը ազգին համար դառնում է նույնպես ամուլ և անպտուղ, ինչպես հին և մեռած լեզվի գործադրության գաղափարը: Անշուշտ, այս խոսքերը չեն նշանակում, թե հին լեզվի լծից ազատելով նոր լեզվի մշակությունը պիտի դնել այս կամ այն գավառական բարբառի լծի տակ: Տեղական կամ գավառական բարբառը ազգի ընդհանուրի համար գործնական արժեք չունի և նոր լեզուն այս կամ այն գավառական բարբառի տակ, դրականապես մշակելու գաղափարը նո՛ւյնպես ամուլ և անգործադրելի է, ինչպես հին լեզվի գաղափարը, ինչպես ստրկության տակ ածած նոր լեզվի գաղափարը: Այս տեսակ մշակությունքը արդեն իրենց սկզբունքով հակասական են նոր լեզվի մշակության սկզբունքին, որ է որքան կարելի է առավել շատ և առավել մեծ բազմության հասկանալի կերպով խոսել: Այս պատճառով, նոր լեզուն պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խոսնելու, առանց գավառական բարբառների կամ օտար լեզուների ազդեցության ստրկանալու: Բոլոր գավառական բարբառների էական տարբերքը, որ իրենց ձևով և կազմությամբ ավելի ընդունակ են, կենդանի — ընդհանրության լեզվի վրա պատվաստվելու, պիտի ընկնին ճարտար հնդիսականների քուրայի մեջ և այնտեղ քիմիապար միանալով պիտի դուրս գան առ որպէս թէպատուիրեն կամ անթէպատուիրեն, այլ որպէս նոր արարած[22]: Մեզ խնդիր է այս և իր բնությամբ շատ ժամանակի կարոտ, բայց գո՛նե, այս է մեր ճանապարհը, այս է մեր պարտականությունը, որ ինչքան մեր ուժը կտանի ձգտինք այս խնդիրը լուծելու: Հարկ չկա ասել, որ այս բանի համար հարկավոր է շրջանկատ ուսումնասիրություն մշակող հնդիսակների կողմից: Այն նորելուկ պատանին, որ տակավին նոր իջած մի որպիսի և իցն խնդճ դպրոցի նստարանից գրիչ է առնում ձեռքը և ազգի գժբախտությունից լցնում է մի քանի վայրկվերս թերթեր հոդվածի և օրագրի անուններով, այդպիսիքը մտում ենք այնքան կարող են օգնել լեզվի մշակության, որքան մի որևիցե մարդ առնված մի որևիցե անկիրթ հասարակության,

Թյունից։ Այս խոսքերը թող չվհատեցնեն նորանց. մենք ոչ թե չենք ուզում, որ շատանան մեր հեղինակքը, այլ, գորա հակառակ Մովսիսի հետ ենք ասում. «Ո՛ տայր ինձ զամենայն Իսրայէլ ի մարգարէս», բայց մարգարեն լինին մարգարեի նման։

Ուզելով մշակել, կոկել և միութիւն տալ մեր նոր լեզվին չպիտի փոքրոգութիւնով արտևեղինք թե ինչի՛ մեկ կամ հինգ տարում չէ շինվում ինչ որ մենք ուզում ենք։ Այն որ հազար տարիներով տարբեր աշխարհների և տարբեր դևդքերի տակ գոյացել է և ամեն տեղ էլ այդ տարբեր ազդեցութիւնց կնիքը կրում է իր վրա. բացի սորանից, այդ հազար տարիների միջոցում ամեն մեր լեզվի մոտից անցնող թուրք, թաթար, պարսիկ, արաբացի, ռուս, Ս ա ր գ ի ս Բ ո ւ խ ա ր ա ց ո ւ գյորի[23] պես մի քար է ձգել, բնականաբար անհնար է, որ մի ակնթարթում շինվի, կոկվի և պայծառանա։ Այստեղ հարկավոր է համբերութիւն և հարատև արիաշան աշխատութիւն։

Մի փոքր առաջ պ. Պռոշյանցի հառաջաբանի անունը տալով ձախ ածականով մկրտեցինք նորան, բայց այդ ուղ երես հառաջաբանի մեջ կա մի առողջ կտոր, և այս է նորա միտքը, թե ցանկալի է, որ ամեն գրագետ, իր երկրում նշած, մեր ազգի վարքը, բարքը, սովորութիքը, ծեսերը, հասկացողութիւնքը, նոցա բարոյական և այլն և այլն վիճակը լույս հանե ու ազգի առջև դնե։ Այս խոսքերը և այս գաղափարը ամենայն ընդունելութեան արժանի բաներ են և սոցա ընդդեմ ոչ մեր և ոչ ուրիշի կողմից ասելիք կա։

Հեղինակը վերջացնելով իր հառաջաբանը, այսպես է ասում. «Մեծ հույս ունիմք, թե ազգը կընդունի Սոս և Վարդիթերը, որպես մի տկար պատանու նվաստ երկասիրութիւն»։

Ո՛հ, երանի՛ թե մեր ամեն պատանիքը այդպես լիներին. այն ժամանակ, կոմս Խմմանուէլի և Մնջուխանշայի արտասուքը վաղո՛ւց և վաղուց արբված կլիներին։

Սխալվում է պ. Պռոշյանցը. ազգը ընդունեց այդ գործը (և իրավունք չուներ չընդունելու) որպես ապագայում ավելի մեծ հույսեր տվող երիտասարդ բանաստեղծի մի աշխատութիւն, «նվ հայրարար ներողամիտ կլինի նա»—շարունակում է հեղինակը— ասորա միջի բազմապատիկ թերութիւններին»։

Պ. Պռոշյանցը շնորհակալութեան և հարգութեան է արժանի և ոչ ներողութեան. նա հանցանք չէ գործել, որ ներողութեան կարոտի. նորա աշխատութեան էական արժանավորութիւնքը շատ և շոշափելի են, մինչդեռ թերութիւնքը չնչին և աննշան։ Այո՛, կան մարդիկ, և մենք իսկ մի քանիսը նորանցից տեսել ենք, որ ուրիշի արժանավորութիւն խոստովանելուց այնպես են փախչում, ինչպես «սատանան խունկից». այդ մարդիկ իրենք չունենալով մի արժանավորութիւն համարում են ձենք բերել նորան ուրիշների արժանավորութիւնքը ուրանալով, այո՛, շատ անգամ արատավորելով ոչ միայն հեղինակի գործը, այլև նորա անձը։

Գ. Պողոսյանցը չէ կարող բացառություն լինելով չհանդիպած լինել այնպիսի դատողությանց, որ ավազակարար կամենում էին կողոպտել հնդինակից այն, ինչ որ անկողոպտելի է։ Մենք ասում ենք այս խոսքը, որովհետև մի քանի այդպիսի ինքնահավան և անգործ մարգերից լսել ենք զանազան խոսքեր Սոս և Վարդիթերի վրա։ Տակավին ներելով նորանց չենք ուզում վերագրել նոցա անհավանությունը մի կամավոր կուրության, վատ խորհրդով, այլ անգիտության և թյուր հասկացողության բանաստեղծության մասին։

Մենք հետևյալ խոսքերի մեջ վերստին կլսեն այդպիսի անձինքը այն, ինչ որ բերանացի արդեն ասել էինք. գուցե այս կրկնությամբ բժշկվի նոցա միտքը։

Եթե այն պատճառով պիտի մեղադրվի հեղինակը, որ նորա գործի մեջ անկատարություններ կան, հարցնում ենք. որի՞ գործն է կատարյալ։ Այսօր Միլտոնը և Շեքսպիրը, Հոմերոսը և Դանթեն ազատ չեն անկատարություններից. մեր պատվելի փիլիսոփայրը մի՞թե այս էլ դեռ չգիտեն։ Պետք չէ մոռնալ, որ այս մարդիկը, որոնց անունը տվինք, են ամենամեծ բանաստեղծքը, որ երբևիցե ծնել են լուսանի տակ։ Բնությունը երբեք չէ իրագործում կատարելության գաղափարը մեկ անհատի մեջ, հետևաբար և նորա գործի մեջ. բնության զուգակշռող հիմնական օրենքին դեմ է այդ։ Կատարելության գաղափարը այնպիսի մեծ բան է, որ մեկ առանձին առնված հոգի, թող լիներ նա ամենամեծը մահկանացուներից, այնուամենայնիվ բավական չէ տանել նորա մեծությունը. կատարելության բնակարանը է բովանդակ մարդկության հոգին։

Եթե պ. Պողոսյանցը չէ ստեղծել կամ չէ նկարագրում մեզ բնավորությունքը այնպես, որ աստիճան-աստիճան աճելին ու հասակ առնելին կարդացողի առջև, դորա փոխանակ հասարակաց կյանքի նկարագիրը շատ վառուն և կենդանի գույներ ունին. և այդ հասարակության մեջ ապրող բնավորությանց այս կամ այն մոմենտները հիանալու արժանի հարազատություն։ Բացի սորանից, պ. Պողոսյանցը արդյոք չպիտի՞ դուրս նկած լիներ բնականությունից, եթե հայկական կյանքի մեջ (բնդհանուր առմով) երևցներ մեզ այնպիսի բնավորություն, որ սկզբից մինչև վերջը աճում էին լոգիկարար։ Եվ հայոց կյանքը ա՞յն վիճակում է ներկայումս, ուր այդպիսի բնավորությունքը (բնդհանուր առմով) մատագածին չհամարվեին։ Ամեն բանից առաջ քննելիքը է ազգի կյանքը, որովհետև այդ կյանքն է բանաստեղծի հիմքը, որի վրա կառուցանում է նա իր շինվածքը։ Հայտնի է թե ազգն էլ մեղավոր չէ, եթե նորա կյանքը չէ երևնցնում այսօր այնպիսի բնավորություն և երևույթք, որ չկան Սոս և Վարդիթերի մեջ։ Նոցա աճելության համար հարկավոր է հող, հարկավոր են պայմաններ և հնարներ, որոնցից զուրկ ենք այսօր և որոնց ներկությունը գուցե թե լցնեն լուսավորությունը մի մասով, եթե գիտությունը ատ կոխե Հայաստան։

Բայց ինչ որ ներկայումս կա Աշտարակում, ինչ վիճակում որ է այդ

գեղի կյանքը, այդ բոլորը մեզ հասկացնելու համար իր բոլոր ջանքը գործ է դրել հեղինակը. ո՛չ միայն մաքուր խղճմտանքով, այլ և շատ լավ հասկացած լինելով և ըմբռնելով իր խնդիրը: Այնպիսի բարակ, հոգեբանական և շատերի աչքից անզգալի կերպով թռչող անցնող երևույթներ է բռնել և ամրացրել թղթի վրա, և այն, պարզ, բնական և անդարձ խոսքերի միջնորդությամբ. այնպիսի հարազատություն ունին այդ տեղերը, որ մենք չնայելով, որ մեր հասուվածը վաղուց անցել է սովորական չափից, չենք կարող մի քանիսը ցույց չտալ: Այո՛, պարտակա՛ն ենք ցույց տալ, որովհետև մինչև այժմ քերթությունքն ենք միայն ցույց տվել, որովհետև արժանավորության մասին ընդհանրապես ենք միայն խոսել: Բայց կատարել այս պարտականությունը, և այն բիչ քերթերի մեջ, հեշտ չէ, որովհետև բովանդակ գործը, բացի մեր հիշած քերթև անկատարություններից ոգևորված է մի բնական արժանավորությամբ, այնպես, որ մարդ չէ իմանում, թե որի՛ քամակից գնա և ո՛րը ցույց տա: Մենք կաշխատանք միքանի բան հանդես հանել, խորհուրդ տալով ամեն հայի, որ առնու այդ գիրքը և ինքը կարդա, որովհետև անհնար է նորա բովանդակ արժանավորությունը մի քանի երեսի մեջ տեղակել:

Արժանավորության կարգ ենք դնում, գործի սկզբից մինչև վերջը բնության նկարագրությունը: Այդ պարզ, միևնույն ժամանակ հոյակապ նկարագրության մեջ չկա և ոչ մի կեղծ գիծ: Սարերը, դաշտերը, այգիքը, տարու եղանակները, նոցա ազդեցությունքը լեղու են առել հեղինակի գրչի տակ:

Արժանավորության կարգ ենք դնում Անուշի նկարագրությունը (եր. 15) ուր զարմանալի հարազատությամբ երևում է Անուշի մեջ մի հայ աղջիկ: Սոսը խնդրում է նորանից ծաղկազարդ կիրակի օրը իր քաղած մանուշակները վարդիթերին տալ նկնկեցում: Անուշը արտով ուզում է կատարել իր ազգականի խնդիրը, բայց իր անոի անփորձանոթությունը սոխպում է նորան հոդհոդվել: «Լավ, տա՛ր տեսնեմ,— ասում է նա Սոսին,— վա՛յ ինչ ու բեզնամ ըլնիմ ես, տեսնեմ երևա կրնի՞, որ ասեմ Սոսն ա դրկել, համա թե որ խռովի, չի առնի, հետո որի էշը ցնծից դու հանա՛, փալանը դու դրի, նորտանն դու ղալմը տուր, էլ ինձանում մեղք չկա»:

Նկնկեցու մեջ, երկար բարակ վարդիթերի հետ մտերմաբար խոսելուց հետո, երբ Անուշը հայտնում է նորան մանուշակների մասին և ասում է, թե ինքը չէր հոժարում վիզ առնուլ այդ հանձնարարությունը, վախենալով, թե մի՛ գուցե վարդիթերի սիրտը ցավեցնեն, բայց հարկադրվելով իր եղբոր Գարեգնի խոսքերից կատարում է, վարդիթերը, թեև սասափիկ ուրախացել է և չէ իմանում թե ինչպես ձեռք ձգել մանուշակները, այնուամենայնիվ կանացի խորամանկությամբ նույն վայրկենին չէ բացում իր սիրտը Անուշի առջև. «Քա՛, ինձ տուր, ես քո աղջոր զարմացած եմ (ազախին),— ասում է նա,— նրա ապիղ խաթեր համար թե-

կուզ բարեփիցն էլ վեր կընկնիմ, ջուրն էլ կընկնիմ, հուրն էլ. նրա հրամանը կատարելու համար վեր կառնեմ ամեն թուք ու մուրն էլ»:

Տեղն է, որ մենք ասեն նորան, «քո հորն ողորմի, քեն դու Գարեգնի հրամանը կատարելու համար միայն ընդունում ես այդ մանուշակները»:

Բայց մի քանի վայրկեննից հետո, իր սիրտը կատարելապես բանալով Անուշի առջև և ապացրելով Սոսին հասցնել իր գաթան, ասում է, որ ինքը հաստատ է իր սիրու մեջ և խնդրում է, որ Սոսն էլ խոսքին հաստատ մնա. «համա, իմ աղլումը քու գլումը, ես տղա դու աղջիկ, քեն որ ինձանից հետ կաննանա»,— ասում է նա Սոսին, Անուշի բերնով:

Շատ քաղցր է գալիս մեր ականջին, երբ լսում ենք հայկական անբռնազբաս խոսքը, երբ այդ ձայնը դուրս է գալիս ուղղակի ազգի սրտից, ազգի հասկացողությունից, երբ նա ֆռնաավորված չէ արվեստական բարդոյականությունից, որ երևում է չինական պատշաճների մեջ և որի տակ անքոամ է այսօր նույնիսկ լուսավորյալ Եվրոպան:

Ծաղկազարդ կիրակին առհասարակ մեծ աջողություն է բերել. հեղինակի գրչին: Սկեղեցու մեջ ժողովրդի նկարագրությունը, Փառք ի բարձունսը, տղոց ճեռ* ու ճոճանակները** պատավների բարձրախոս աղաղակը, երիտասարդ տղոց աղջիկ տեսնելու համար ժամի դռանը հավաքվիլը, այս բոլորը շատ պատմական են: Իսկ ինչ որ վերաբերվում է քահանայի բարկության, տղոց ճեռների և ճոճանակների հանած աղաղակի համար, քահանայի բնավորության հարազատությանը մենք ուղում ենք լռել, որ հեղինակը խոսի: «Երեխաքը... ճոճանակներն ու ուղում ենք լռել, որ հեղինակը խոսի: «Երեխաքը... ճոճանակներն ու ճեռները ածեցին (եր.19). ըստոնց ձենը տերտերի ձենին կոխեց, ոշով բան չէր կարում իմանալ Փառք ի բարձումից. տերտերը շատ էլ բարկացավ, ո՛ր մինին ասես... մինը չի, տասը չի... չարեն կտրեց խնդճ երիցի, քո՛ւ փոշիման նկավ տեղը կաննանց, ու թո՛ւ, թո՛ւ, ասեց, կստորվիք դուք, ջըհջդի ժամ շիննցին էլի, է՞ս ինչ սովորություն ա առ՛ու:

Մենք շատ շարժել է Աշտարակի կանանց ջերմ կրոնասիրությունը,

---

* Այսպիսի մի խաղալիք Նոր-Նախիջևան էլ կա. այնտեղ ճըռ ճըռ է նորա անունը: Ապրիլի 23-ին սուրբ Գևորգի նկեղեցու կարգից դուրս ուխտն է լինում և այդ տոնը տեսում է երեք օր: Այդ օրերում բոլոր Նախիջևանի կնանիք, աղջիկ և երիտասարդ կամ նկեղեցու պարապի մեջ են, կամ պարսպից դուրը, ուր փոքրիկ վաճառատուն է լինում: Լոկ այդ օրերում ածում են երեխայը իրենց ճըռճըռները, բայց ոչ նկեղեցու մեջ: Երբ այդ տոնը անցավ էլ ճըռճըռ չէ երևում, մինչև առաջիկա տարին:

** Ծաղկազարդի ճոճանակի, այսօր, գոնե հազար տարեկանից ավելի լինելը երկրաչության տակ չէ ընկնում: Հովհաննես իմաստասեր կաթողիկոսը (Հովհ. պատմաբան կաթողիկոսը չէ. նորանից առաջ է ապրել իմաստասերը) իր առենարանությամբ վկայում է այս բանին: Ահավասիկ նորա խոսքերը. «Երբպէս և ի գալստեանն աւուր ասասան ամբառնալ և ճոճանակս ժարժիլ»: Մեզ հայտնի չէ, եղա՞ծ է արդյոք այս բանը հունական նկեղեցու մեջ, կամ կա՞ արդյոք այժմ: Թերև այդ բանը հույներից չէ մտել մեր մեջ, գուցե մեզ նրբվի ենթադրել, որ մեր հինից լինի նկած: Հայկազն. բառար. Վենետ. 1836-37. ճոճանակ բառին բոլոր նման մի բանի նշանակություն է տրված. կարելի է հուսալ, որ Աշտարակի ճոճանակը հասկացնե թե ծաղկազարդի ճոճանակը բոլորից տարբեր է:

ուր տեսնում ենք մանկական պարզամտություն, ներողամտություն, և ուր բարեպաշտ ու առաքինի հայ կինը խակուչն ճանաչվում է։ Փարպու Ճանապարհի բանն եմ ասում։ Երբ Համասփյուռը բարկացած Սոսենց խաղ ասելու վրա, անիծախառն խոսքեր է հանում բերնից և նախատում է Վարդիթերին, այն խեղճ կնանիքը մեղադրում են նորա բարկությունը և անպատշաճ են համարում. «Քա՞, ընչի՞ ես էս բարի լսի առաջին, սուրբ ըխտի ճամփին բերանդ փիս բաց անում...»։ Այս տողերը արտագրած ժամանակս, ասես թե կենդանի ձայնով լսում էի այս խոսքերը հայ կնոջ բերնից. այնչափ բնական և այնչափ հարազատ են նորա նորա հանգամանքին, մտքերին և արտահայտությանը։

97, 98, 99 և 100-րդ երեսներում, Վարդիթերի հոր և մոր խոսակցությունքը և սոցանից երեցած կյանքի պատկերը այն աստիճանի գեղեցկություն ունին, որ մենք չենք կարող մեր խոսքերով բացատրել։ Իսկ մեջ բերել հեղինակի գրվածը նույնպես չենք կարող, որովհետև ամբողջ այդ երեսները պիտի արտագրեինք, դուրս ձգելու ոչ թե բան, այլև բառ չկա։ Մենք հերիքանում ենք այդ երեսների թվանշանքը ցույց տալով։

Սոս և Վարդիթերի ընկերացողներին հայտնի է Վարդավառի անցքը, ուր Վարդիթերի մայրը նշանում է իր դուստրը Սոսի հետ և համբուրել տալիս։ Մենք ուզում ենք մեջ բերել պատառի այն խոսքերը միայն, որ նա Հանավանքից տուն դառնալուց և Հնթոսի առջև բոլոր անցքը արտահայտից հետո, չէ հերիքանում իր անձը միայն արդարացնելով, այլև դատապարտում է դրան-դուրս խոսողներին։ «Ո՛հ, հողս դրանց աստուած գլխին,— ասում է նա,— Քող էնքան հաչան, հոգիները դուրս գա. քա՛, նե՛չան, էս ի՛նչ կրակ ա, ամոթ չունի՞ն բառնք. ինչ բերաններից դուրս ա գալի քցում են, փառք աստծու, ոչ ով չի մեռել, երես երեսի կըլնինք էն վախտն ինչ կասենա։

Բանն այն է, որ դրան խոսքերը բոլորը ճշմարիտ են և նրեն բանը երես-երեսի գալու ընկնի, տարակույս չկա, որ իր աստիճանը պիտի բռնվի, բայց և այնպես խորամանկ պատառը օգուտ է քաղում այն աղգեցությունից, որ այս, դրականապես խոսելու ձևը անում է իր էրկա վրան։ Հեղինակը քաջ հասկացել է այդ տեսակ պատառների և ընդհանրապես կանացի բնության ձգականությունը։

Հայտնի է, թե այս մի քանի բանը մեջ բերելով, մենք ոչ միայն ինչ որ այս տեսակ ընտիր տեղեր կար չհատցրինք, այլ մեջ բերածն էլ սակար կտրտով ատորագրեցինք։ Այս տեսակ հոգեբանական երևույթքը պետք է, որ ամեն մարդ իր մտքով ու սրտով հասկանա. ուրիշի խոսքով արված նկարագրությունը թույլ է լինում, մանավանդ երբ ամբողջ բանի ընթացքից մի կտոր է դուրս բերվում։ Գո՛նե մենք ավելի աջողակություն չունինք այս բանում։

Նկարագրելով Աշտարակի, որով գրեթե և բյուրավոր ուրիշ հայերի բարոյական անմեղությունքը, հեղինակը չէ մոռանում տեղ-տեղ նոցա

բարոյական խոցերն էլ բանալ, չէ մոռանում խարազանել անբարոյականությունը։

Հնթումը, այնքան հասած որդոց տեր, այնքան այգիների տեր, ծեր ջացած և մի ոտքը գերեզմանի մեջ, այնուամենայնիվ (երես 86) կապում է ուրիշի այգու ջուրը և առու բացում դեպի իր այգին, «իմ ողորմածիկ հորիցը էս եմ տեսել ասելով», մինչդեռ ջրի հերթը իրենը չէ, այլ իր խեղճ հարևանին։ Հարևանը տեսնում է բանը և բողոքում է։ Հնթումը պատասխանում է. «որդի՛, քո արևը, ես խաբար չեմ, կըլնի որ ջուրն ինքն ա ծակել» և այլն։ Խեղճ հարևանը գիտե, որ Հնթումը սուտ է խոսում. ազաչում է նորան, «Հնթում ափեր,— ասում է ողորմելին,— քեզ արքայություն ըլնի, կտրե՛ս ոչ. ինչ ունինք լուծինք չորացել ա։ Բայց չնայելով այս բոլորի վրա, այն խեղճի հեռանալուց հետո, Հնթումը նորից քանդում է ջրի ճանապարհը և հարևանի ջուրը կտրում։ Պե՛տք էր որ Հնթումի պես մարդիկը խրատ առնուին այս բանից. մանավանդ հետ Հնթումի պես մարդիկը, Հնթումի այս անիրավ գործի միջոցին, Փափակին ուղարկում է, որ իմաց տա Հնթումին վաղարշակենց Արշակի մեռնիլը։ Պարզ է, թե արդո հեղինակը կրոնարար ուզում է ազդել այդպիսիների քարացած խղճմտանքի վրա, կամ գոնե բարոյապես, երբ հիշեցնում է նորան աշխարհի երևոյթի մահ լինիլը։ Ո՛հ, նրե կրոնը ազդեր բարոյականության վրա, երկիրը դրախտ եղած կլիներ. բայց ո՞ւր է։

Նույնպես Բագրատ աղան (եր. 139—140), Սոսի անունով երեք աշխար է առնում Թուրքից և Սոսին ոչ միայն մեկ հատ ցույց տալիս, այլ պահանջում է, որ նա այն մեկին էլ մենակ չուտե, այլ իրեն և տանուտերին (քյոխվա) էլ հրավիրե։ Ազնիվ երիտասարդը հասկանում է բանի զորությունը և շատ քնքուշ կերպով խայտառակում է Բագրատ աղայի խարեբայությունը և նենգությունը։ Նա այն մեկիկն էլ հրաժարվելով ասում է. «շնորհակալ եմ, աղա՛... էն մի ուշխարն էլ քեզ բաշխեցի. Թող ասեն ոչ, Սոսը իր օրումը կաշառք ա կերել»։

Պ. Արծվյանցը (Վերէ Հայաստանի, եր. 37) մեկ քանաքեռցու այսպես է ասել տալիս իր խնամի Հարությունին. «ասածս սարին, քարին պես է ասել տալիս իր խնամի Հարությունին. «ասածս սարին, քարին պիպլի, քամին տանի... քո գլուխը որ կա, սար ա, անձրև, ձին, կարկուտ, կայծակ Թող դիպլի էլ, գա՛ էլ, ի՞նչ վնաս ա»։

Բագրատ աղայի գլուխը խնամի Հարությունի գլխիցը շատ պինդ է։ Սոսի խոսքերը նորա պետին ի՞նչ կազդե։ Եվ իրավ, որ տեսնեք, թե «Ախպրի՛ս, որդի, խելոք ի՞նչ անամոթի լրբությամբ պատասխան է տալիս։ «Ա՛յ որդի, խելոք նա խոսում. օձի փուշը լակլակը (արագիլ) կմարսի...»։

Քնչ որ տեսնում եմ, դու ոչ միայն օձի փուշ, մասիսգոնի* ոլորն էլ կմարսես...

---

* Ջրհեղեղից առաջ ապրած մի ահագին խոտաճարակ է. պատկանում է հաստատորի կամ բազմահնգակ կենդանիներին։ Այժմյան փիղը, որ իր մեծությամբ մեզ զարմորի կամ բազմահնգակ կենդանիներին։ Այժմյան փիղը, որ իր մեծությամբ մեզ զարմացնում է, կարող է միայն մասիսգոնի ձագը լինել։ Այս կենդանու մասին այժմ հայանըմացնում է, կարող է միայն մասիսգոնի ձագը լինել։ Այս կենդանու մասին այժմ հայանը-

Մենք մեր կողմից շնորհակալություն ենք հայտնում արդի հեղինակին, որ բացում է ազգի այս տեսակ բարոյական խոցերը, որ ծածկված մնալով ոչ միայն կարող են փտել, այլև իրենց վարակիչ որակությամբ շատ կորստաբեր լինել։ Սորա ընդհանուր մարդկության խոցեր են և ոչ լոկ մեր ազգին սեփական. Թերևս շատ, ընդհանուրի, խոցերից ազատ է մեր ազգը։ Չկարծենն, թե այս խոսքերը ասելով խունկ ենք ծխում ազգին, ո՛չ. միայն հշմարտությունն ենք խոստովանում։ Կուզեի՞ն որ ավելի ասենք. ահավասիկ. ուրիշ, նաև լուսավոր ասված, ազգերի բարոյականությունը (ազգ ասելով հասկանում ենք հասարակ ժողովուրդը) շա՛տ ցած է հայոց ազգի բարոյականությունից։ Մենք կարդում ենք լուսավոր աշխարհներում գործված հանցանքների և ոճիրների վիճակագրությունը և տարեգիրքը. այս տողերը գրելու միջոցին, մեր առաջ այդպիսի գրքեր ընկած են պատուհանիս վրա, մեզ տարատևեցնելու համար։ Թեպետ մեր ազգի մասին չունինք այսպիսի գրքեր, բայց կենդանի ազգը, որի հետ փորը ի շատ ծանոթ ենք, առնում ենք որպես անխարդախ գիրք, և համեմատելով ուրիշների վիճակագրությանց հետ ասում ենք այն խոսքը, թե մեր ազգը շատ խոցերից ազատ է։

Բայց, շնայելով սորա վրա, նրանցած խոցերն էլ պիտի բանալ և բժշկել։ Թեև մի փորը հիվանդ լինելը մերձիմահ հիվանդությունից անհամեմա՛տ լավ է, սակայն, կատարյալ առողջությունը կամ առողջանալու համար աշխատելը ավելի լավ։

Աշխարհակ գեղի հասարակաց տնտեսության և հասարակաց տնտեսության մասին մենք լսում ենք մի շատ պարզ և սրտաշարժ խոսակցություն, երբ Սոսաննք, դիշերով, արտ են քաշում իրենց այգում։

Դառը բողոք լավում է վայրկենի բնությից. «ամեն գեղի ամեն բանն էլ լա՛վ ա, ափսո՛ս որ քեթիաուդեքն ու տանուտերը մի քիչ շահասեր են. էս ի՞նչ ա, հիմի խարջ են կիտում, ես մի խեղճ մարդ եմ, նրանք ինչ որ ինձ կհասաներ խարջը տալու, էրկու էնքան են առել. սաքի տալիս են, որ գեղի միջին տարեկան մասրաֆ ա էլել, փշացել ա, պտի լրացնենք. համա ո՞րտեղ, քանմա իրանք են ուտում, քյասիբ քյուսուրի տունը քանդում, իրանցը շինում. ես պրոլամնա մի հիբի ունիմ, ինձ տարել են գոռով կապել իրենք հիբատիրոջ հետ, թե արի՛ խարջ տո՛ւր, էլ չեն ասում թե աշառը դոշի հետ կարա՞ լուծ անիլ» (եր. 169)։

Տխրություն է գալիս մեր վրա, երբ հիշում ենք, թե հարստահարված երկրագործը կամ շինականը բռնագրավված է լուռ մնալ իր հարբուսահարողների ընդդեմ և միայն դիշերով, ծածուկ, խորհրդական առանձնության մեջ բողոքել, երբ ոչ ոք չէր լսում նորա բողոքը...

Սոսի կարծիքը այս տեսակ բամբասված ազգային կառավարիչների մասին, թեև մենք պատրաստ ենք ընդունել որպես մի շար երևիծարա-

---

ված նյութերից, ամենայնով կմտածը պահպանվում է Լանգոնի Բրիտանական մուզեոնի մեջ։ Ե ո շ ո ր Կ ե ն դ ա ն ի ն ե ր ի ակնոցը խոսի։

նուիրյուն, բայց խոստովանում ենք ցավելով, որ շատ մարդ ստուգապես այդ կարծիքի տեր է։ «Ա՛յ տղա, ի՞նչ ես խալխի տոքը քաշում, Վայկո՛ւն,— ասում է Սոսը,— էդ ո՞ր գեղոմը չի մասրաֆի ըլնիլ. մի մովրով (կառավարութիւնեան աստիճանաւոր) կամ նասվուլ, որ գալիս ա բա նրան հաց չի պետքը, պատիվ չի՞ պետքը, հավի միս չի՞ պետքը, գառը, գինի, արաղ չի՞ պետքը. դու քու երեխին, որ մի կապատ ես կարում, քե էրսի օրը խոսքիցդ դուս ա գալի, ասում ես, քե ա՛յ որդի, քեզ շոր կարնցի, որ ինձ անկաջ աննես, դու ջլիս (խոպան) քառանկաջ (խուլ) դառար։ Հիմի նա մեր վրա ինչքան ա մխոք անում. մեր աղեն ա, որ տեսութիւն գնանք, բա մի կարաս դինի, մի հինգ լիտր արաղ չպիտի տանի՞նք. հավոդի ժամանակ ա գալի, թաղա հավոդ, լավ դեղձը, չի՞ հարկավոր տանինք. էս հո մեննակ մեզ համար չի՞, սաղ աշխարհքի օրենքն ըտենց ա. դու քու բարութիւնից ես տանում, արարանցին էլ տանում ա նրա ձիանոնց տարեկան գարին, քուրդը՝ նրա գառն ու ոշխարը, թուրքը նրա եղն ու պանիրը, դաշտցին՝ յոնջեն, ցորենը. ամեն մարդ էլ իրան գեղի գոնվածից տանում ա նրանո։

— Սո՛ս ջան,— պատասխանում է Վայկունը,— էդ դրուստ ես ասում, համա ինչքան էլ որ ըլնի, էդքան շատ մասրաֆ խարջ չի ըլնիլ. սրա մշին մեր իշխաններն էլ են շահվում։

— Ես արմանում եմ քեզ վրա,— խոսքի մեջ է մտնում Սոսի մեծ եղբայրը Պարսեղը,— ա՛յ տղա, բաս իշխանները քու հետ մշա՞կն են, որ ամեն մովրով, վարդապետ, մենծ մարդ գալուս, տանում են իրանց տանը վեր բերում, իրանց երեխի բերնինը կտրում, նրանց ուտացնում. հալբաթ որ մի շահմունք չունենա, ընչի՞ կանի, նա էլ քեզ պես մի մարդ։

Բայց Վայկունը էլ առաջ է տանում իր բոզոքը,— ի՞նչ են խարջում, եղն էլ, հացն էլ, միսն էլ, ամեն բանն էլ գեղիցը գիխրը մինի տեղակ հնգաշեղն էլ, հացն էլ, միսն էլ, ամեն բանն էլ գեղիցը գիխրը մինի տեղակ հնգապատիկ հավաքում ա ու բերում. ո՞վ գիտի քե ընչանք կրում ա, որ մովրովը գնալուց հետո տասն օր ուտում են չի հատնում. մի տուննա նրանն ըլնում. ես էլ, որ բննց տուն ունենայի, էն աղեքանց տոր կպաշնի, իմ տանը վեր կբերնի, խոսքս կշտին կարուկ կըլներ, ո՛մ տունն ուզեի կքանդեի, ումն ուզեի կշինեի. ձիս որ գհովն ուզեի, գենը կքշեի. հիմի մովրովը գալուս, քեզով իշխանն ա գնում գլուխ տալի, բարովում, աղավար խոսում, հետը նստում վեր կենում. հետա ես, որ տեսնում եմ էկավ, գլուխս առնում եմ կորշում, քե հիմի գիխրը կբցի ճիպոտի տակը (!) քե արի ձին բռնի՛, տա՛ր գոմումդ պահի, խոտ, գարի տո՛ւր, մովրովի համար հետո տար. իշխանների տանն ա վեր գալի, աղբատների տունն ա քանդում, հո սուտ չի՞։ Հիմի տասնք քե դու ինձանից համբա ես, քու տանն էլ ոչով չի վեր գալի, համա ես իմ աղբատ տեղովս քեզանից շատ եմ խարջ տալի, կուռ քաշում, ձի տալի. քե ես ու դուն էլ մի կռիվ աննենք, քե էրկու մարդ իմ բարեկամներից իմ դիմը քաշի, տասը մարդ գեղիցը քու դիմը կպահեն, ընդուր որ գիտեն, քե դու ինձանից լավ ես. քեզնից խնդրվածից տանում ա նրանց։

ոչինչ չեն կարող գտնել. շատ էլ ասենք էն կռվումը ես արդար ըլնիմ. վա՛յ էկել ա ինձ տարել, թե կերթամ մովրովին կգանգատանամ, երբ որ քեզ կուզի նա, հետդ գնդիցը մի թուղթ կրերես, թե գանգատողն ինքն ա մեղավոր (!!), էն վախտը մովրովը քեզ բաց կթողա ինձ կծեծի (!!!), հետո, հայրա՛ք, դու էլ մի կարաս գինի կխոստանաս, կրարձնես ձիուդ ու կատնիս»։

— Վայկուն ափոր խոսքերն Ավետարանի կողքին գրված են,— ասում է Արշամը, Սոսի փորր եղբայրը, Սոսին ու Պարեսին,— սաքի ընչի՞ ես երկու երեսանոթյուն անում, կողմնապահ ըլնում. հիմի, էս հո մեր պապական հիքին ա, ուղեղնան կխլեն կտան ուրիշի (!!!). քանի՞, քանի՞ օրինակներ կան, որ ընչանք քեզնից մի օգուտ չեն ունեցել, բանըդ չեն շինել...»։

Արշամի բերնով խոսում է նոր ժամանակների որդին։ Պարեսը և Սոսը գուցե իրենց սրտում ընդունում են Վայկունի խոսքերի ճշմարտությունը, բայց վախենում են, հայտնի դավանել ճշմարտությունը։ Արշամը իր ասրունդի երևեցուցիչն է. նա ոչ միայն ընդունում է այդ դարը խոսքերի ճշմարտությունը, այլև դատապարտում է իր եղբարց երկու երեսանոթյունը։ Ինչպես առաջ էլ ասացինք, ափսո՛ս, որ շատ քիչ հանդես ունի [Սոս և] Վարդիթերի մեջ այն ուղղությունը, որ երևում է Արշամում, թեև այս շափից էլ տանում ենք կենարար սկեպտիցիզմի արած ազդեցությունը։ Մենք աջողությո՛ւն և ընթա՛ցք ենք մաղթում այդ երկնային դեսպանին։

Պ. Պռոշյանցը, Աշտարակի տնտեսական վիճակը և հասկացողությունը երևան հանելով, այնպիսի փափուկ և անզգալի կերպով մեղադրում է այդ հասկացողությանց սխալականությունը, որ ամեն կարգացողի համար, իսկի մեղադրանքի կարգում էլ չեն։ Սոս և Վարդիթերից գո՛նե, եթե ոչ ուրիշ աղբյուրից, շատերին հայտնի է, թե բոլոր աշտարակցիք այգեգործությամբ են պարապում. այդ է նոցա ապրուստի միակ ճանապարհը։ Տեսե՛ք այժմ, թե ինչ աջողականությամբ մեղադրում է հեղինակը։

Սոս և Վարդիթերը կարգացողի մտքին կլինին երևանցի ուխտավոր երիտասարդը, որ Հանա-վանք երթալու ժամանակ, ճանապարհի վրա, ընկան իրենց բարեկամ Գարեգնի ձևորը, որ մի փորր հանգստացնելու համար տարավ իր տունը (եր. 107—109)։ Նա, խաղող գնելով նոցա առջևը, ներողություն է խնդրում, որ մի ուրիշ բանով չէ կարում մեծարել, որովհետև տանը մարդ չկա, ամենքն էլ հիբումն են, աշտարակցյունն էլ էդ մի հիքին ա,— ասում է նա։ —Գարունք ծագում ա աշքերը տնկում են նրա վրեն։ Ընչակ մասիլը վեր են անում՝ իրանցն իրանց ա հասնում. ազպե՛ր, դուք, քաղքացիք եք, որդ աուտուրի եք, որդ փեշակի*, մեջներիդ պարապ մարդ չկա. ասնչպարն էլ (երկրագործ) իրա

* Հայոց արհեստագիտությունը շատ ողբալի վիճակում է այսօր, դորա վրա հարկավոր էր մի փորր մատծել ու աշխատել օրեօր արհեստագիտությունը ծաղկեցնել։ Մեր կարծիքով, կանութ թե ուշ, այս բանը ուրիշ կերպ չի լինիլ, եթե ոչ աշակերտներ ուզար-

ցանքս ու վարքին ա, աշխատում տարեկան հացը տուն լցնում. տավար, ոչխար, դոմեշ, ձի, գութան, շուք պահում. հացը, նղը, պանիրը, բուրդը, ամեն բանն էլ իրան իրան պակիս ա. մենք. երկուսիցն էլ զուրկ ենք, էս մի հինու նրնսին ենք մտիկ տալի. աստված մի՛ արատցն կամ կարկուտը տա, կամ թրթուրը փչացնի, կամ տարին չքեր ըլնի տված կոտորվիլ պտենք. մեր մասիլն էլ որ կա, ամեն բան նրան յաղի ա. եփած կերակուր ա, մարդ, շուն, կատու, զուրգ ու զուշ, ինչքան աշխարքումս ժժմունք կան քումմա էլ ուտում են, կեսը անփոդ հենց ճամփորդներին ենք տալի կամ աղքատներին. էս լավ ա հլա խեր ա ըլնում. քաղքումն ամեն բանն էլ փոդով ա, գնդըցուն էլ ունի ո՛չ. մերն ա որ մեջտեղը փշանում ա։ Մարդս մի երկու կով ենք պահում, թե երեխեքանց մածուն էլ ա ըլնի, էն էլ չենք կարում յոլա տանել, ամեն բան փոդով ենք առնում»։

կելով Մոսկվա և Պետերբուրգ, ոչ թե դպրոցներում, այլ գործակատարներ, վարպետների կամ գործարանների մեջ այս կամ այն արհեստը սորվելու համար։ Նրանց հայը, չնայելով արհեստագիտության թշվառ վիճակին մեր երկրում, այնուամենայնիվ տալիս է իր զավակը, որ այս կամ այն արհեստը սորվի, մեզ թվում է, թե նա պատճառ չունի այդ արհեստների ավելի կատարյալը ձեռք բերելու համար իր որդին չուղարկել այս կամ այն մայրաքաղաքը։ Ամեն անգ աշակերտը մի տարում է իր վարպետին 4—5 սարի. այս է և մայրաքաղաքների առավորությունը, ուրեմն այս կողմից էլ խափանարար պատճառ չկար, որ հայը նորանից ստիպվելով նախընտիր համարեր իր երկրի արհեստը, որով պարապողները միշտ աղքատ են։

Ստուգ է, այդ քաղաքներում պետք է բարեպաշտ հայեր ճանաչել, որ հայրաբար խնամք ունենային այն աշակերտաց վրա, հորդորելով, խրատելով, բարի օրինակ տալով, ժրաջանության, առաքինության, աշխատասիրության և չափավորության, որպեսզի աշակերտը արհեստից առաջ, ընդհանրապես արհեստավորների մոլորությանց մեջ չխեղդվելու։ Ստուգ է, հնում տեղերից Մոսկվա կամ Պետերբուրգ աշակերտ ուղարկելը, այլոներն ճանապարհի ծախքը, մի աղքատ հոր համար շատ ծանր խնդիր է, բայց մենք կարծում ենք, թե հայերը անգադար երթևեկությունն ունենալով մայրաքաղաքները, անհնար է թե չլինեին նոցա մեջ բարեպաշտ և առաքինի անձինք, որ ազգի առաջադիմության անունով իրենք վիզ առնուին անգ հասցնել պատանյակը և հայրական խնամարկության փոխարեն տալ նորան մի ընտիր վարպետի, այս կամ այն արհեստի, նայելով ազգային ընդունակության և հարմարության։ Մենք կարծում ենք, թե այս շատ մեծախորհուրդ խնդիր է մեր ազգի վերաբերությամբ։ Թե հոգով շատ ցանկալի է, որ կարելի եղածին չափ շատ աշակերտը ուղարկվին զանազան դպրոցներ այս կամ այն առնական գիտությունը սորվելու կամ ընդհանուր լուսավորությունից բաժին առանալու, մյուս կողմից հնար է թե չլինին նոցա մեջ բարեպաշտ և առաքինի անձինք, որ ազգի առաջադիմության անունով իրենք վիզ առնուին անգ հասցնել պատանյակը և հայրական խնամարկության

Ինչի պիտի այսպես լինի Աշտարակի վիճակը։ Եվ միայն Աշտարակը չէ. Աշտարակը երջանիկ գեղերից մինն է տակավին. նորանից անհամեմա՛տ աղքատները և խեղճերը կան։ Ահա, քե ինչ է պատմում մեզ արդո հեղինակը. «որ բնաւորը Մողնու գեղումն ա վեր եկած, իրանց բարեկամի կամ ճանաչի անեղումը, նրանց մատաղների էրին էլ, մորթին էլ, գմակի կես փայը, մատաղի կես փայը, ոտ ու գլուխն էլ տան տիրոջն ա։ Բոլոր գեղը տասնում տուն ա. ամեն մի տան տասը տասնհինգ տրնվոր կըլինին վեր եկած. ընենց տուն չի ըլնիլ որանցում որ էս իրենք օրը իրան տարեկան պավուրմեն անի ոչ, բրդին հո, էլ հնաբ չկատով էլ չեն կշտանում մողնեցիք, իրանց երեխեքն էլ քշերն ընշաք լիս, ցերեկն ընշաք իրիկուն մի մին քերեզաններ ձեռներին մատաղ են կիտում, իրանց աղքատ ու խեղճ ասելով. արտարաց բնաւորն էլ տուրը Գևորգի գուռն եկած աղքատին հո չի՞ կարող հետ դարձնիլ... Մողնեցիք անբան են.. քե որ նրանք ոնց որ էս մատաղ հավաքելու համար են աշխատում իրանց բան ու գործին կենային, հիմի ամեն մինը մի խան կըլիներ. ասաված ավել ա, ամեն բանները լավ, հանդները շատ, իրանք անբան» (եր. 157)։

Ճշմարիտն ասելով, մեզ անհասկանալի է այս երևույթը, որովհետև հեղինակը վկայում է քե մողնեցոց ամեն բաները լավ են և հանդները շատ։ Թևև արդո հեղինակը ցույց է տալիս մեզ նոցա ծուլության վրա, բայց մինչև այդ ատոիճանի ծուլությունը մեզ նույնպես անհասկանալի է։ Արդյոք մի ներքին վերք չկա՞ այդտեղ, որ խանգարում է անտեսական կյանքի բնական ընթացքը։ Քե այսպես և քե այնպես ողբալի բան։

Երևի՛ քե մողնեցոց վիճակից լավ չէ և կարբեցոց և հանա-վանքցոց վիճակը, երբ նորա այգեքաղի ժամանակ 5—6 հարյուր հոգի գալիս են Աշտարակ այգի քաղելու, երբ վարդիվերի հայրը տասն այգպիսի մշակ առաջն արած տանում է իր այգին ամեն մինին իր քաղլակովը մին հավոտ խաստանալով։

Մենք խոստովանում ենք, որ բնավ տեղեկություն չունինք, քե ի՛նչպես էին այն կողմերի մեր գեղացիների հարաբերությունը հողի հետ։ Այս պատճառով տանձում ենք մեր գրիչը, որ անգիտությամբ դատողություն չտանենք, այս շատ ցավելի բաների մասին։

Սակայն ինչպես ամենայն ճանապարհորդի ներելի է, առանց քերևս պանապան պատճառների խոր քննության, միմիայն իր վրա եղված տպավորությանը նայելով այս կամ այն տեղի մասին այսպես կամ այնպես կարծել, այնպես էլ մենք, որպես ճանապարհորդ, մի քանի շաբաթ մնալով էջմիածին և ընդունած լինելով մի քանի տպավորություններ, չենք կարող չասել այն, ինչ որ, այդ տպավորությանց հիմքի վրա, մեզ թվում է։ Աշնան Մողնու ուխտից էջմիածին ծուխվող ահագին բազմությունը մեր սիրելի աղգակցաց, շատ ցավելի տպավորություն է գործել մեր վրա։ Գոցանից մեծագույն մասի, Տաճկաստանից կամ Պարսկաստանից գաղ-

թած հայերի, այլակերպ և վերջին աստիճանի պատառոտուն հանդերձները. մի գրասեի վրա այր և կին իրենց մի քանի երեխաներով միասին նստելը, իրենց կեցուվիյունը երկու երեք օր Ղազարապատի դրսումը մնալ տեղիք է տալիս ենթադրել մի ողբալի աղքատություն, որից չէ փրկվել գավիաականությունը: Մենք այդ մարդոց ներքին կացուվիյունը չգիտանենք, այսինքն այն ընկերական պայմանները, որոնց մեջ էին նորա իրենց գնդում. ուստի, և, ինչպես առաջ ասացինք, այդ աղքատության պատճառը չենք կարող հաստատապես գիտենալ: Հավանական է միայն, որ անկրթությունը և իմացական խեղճությունը բնականաբար վնասակար հետևանքներ պիտի ունենային մանավանդ երբ դպրոց-մպրոց չիներկայ հետո բերանացի խրատներ էլ կամ չեն լսում իսպառ, կամ թե լսում են լոկ խավարի խոսքը: Վերջին աստիճանի բարբարոս ազգերի մեջ նշած կանացի սարկության նշանակը,— արջի նման, կանանց և աղջիկների քթից ահագին օղ անցնելը,— ազնկատուր լինելով տեսած ենք այն ուխտավորների մեջ: Թողում ենք եգիպտական ծարիրը (սյուրմե) և պարսկական խինան, որոնցից առաջնովը արտահանունքն են ներկում, իսկ երկրորդովը մատները: Ո՞վ քարոզեց ժողովրդին թողուլ այդ վնասակար բաները, ո՞վ փույթ տարավ այնքարի առողջության և ապահովության:

«Ազաչեցէ՛ք զՏէր հնձողդ հանել զմշակս ի հունձս իւր»[21].

Եթե մեր սրբասունդ և հրեշտակակրոն, երկնաքաղաքացի և ամպաշուն, եթերաճեմ և օդասլաց կղերը հոգ տաներ գո՛նե այսպիսի բաների, մի՞թե մինչև այսօր էլ պիտի երևեին դրքա: Բայց, այս է բանը, որ դոցա վերանալը կամ մնալը, որևիցե կապով կապված չէ նոցա էական խորհրդի հետ...

«Մեր տերտերներին էլ աստված բարի տա,— ասում է Գարեգնի բերնով անիրավ Պռոշյանցը (եր. 2),— բողոքներին հուպ տաս երկու այր չի վեր բնկնիլ, անջախ մաշտոցին են ջան տալի, էլ չեն ասում թե քարոզն բալթի էս սովորությիդը վերցվի»*:

Բայց մենք երթանք դարձյալ Աշտարակ:

Ասենք թե Աշտարակը այգնգործ է. բարի է, բայց այգին, տարին տասանևրկու ամիս չէ կապում երկրագործի ձեռքը, մնաց որ այգնգործությյան մեծ և ծանր պաշտոնները երիտասարդների վրա պիտի լինի բնականապես, բայց, մի՞թե չկան այնպիսի բնիկ աշխատություններ, որ առանց կանապես, բայց, մի՞թե չկան այնպիսի բնիկ աշխատություններ, որ առանց ծանր ուժ գործ դնելու առաջանում են, երե միայն աչքաբաց խնամատարություն լինի շինականի կողմից: Եթե միայն շերամաբուծությունը անվնաս լինենք, որ գրեթե լոկ մայիս ամսի գործ է, երե չասենք էլ, որ երիտասարդքը մայիսին գրեթե ազատ են, որովհետև ոչ թաղելու, ոչ էանասնել ասյուծի ավարի՛ն... անպատիժ: Սպանիական ոգին չունի այդպիսի չար թույլ-

* Եւ՛ գիտ Պռոշյանց չգիտան տակավին, որ պ. Ջամուռճյանը կարո՛ղ է նորան էլ անհավատ անուանել մկրտելով Մխիթարյան հնդնոիկոսարանի անդամ հրատարակելու Մոսենոս ասյուծի ավարի՛ն... անպատիժ: Սպանիական ոգին չունի այդպիսի չար թույլտվություն:

լու և ոչ այգնքաղի ժամանակ է, ին չասենք, որ նաև վար ու ցանքով պարապած երիտասարդքը ազատ են մայիսին, որովհետև ցանք վերջացած է, իսկ խոտհնձի ժամանակը հունիսի սկզբում, երբ շերամի բանը պրծած է, այլ ին ասենք, որ լոկ ծերերը, աղջիկները և պառավները պարապին այս բանով, որքա՞ն օգուտ կարող է առանալ Աշտարակը կամ ուրիշ գեղեր։

Բայց Սոս և Վարդիթերից մենք տեսնում ենք, ին ի՛նչ ազդմելի վիճակում է շերամարուծությունը Աշտարակում։

Վարդիթերը ծուխի տերեը այգուց առած գնում է տուն (եր. 71—72). Հայրը հանդիպում է նորան ճանապարհի վրա և այսպես է խոսում. «Էգ տերեը ո՞ր ծառիցն ա, էն կարմիր կորզավոր բիննուցը հո չի՞։

— Չէ՛,— ասում է աղջիկը,— սիպտակ բնդանա բիննուցն ա։

— Դե՛, տա՛ր, դե՛, տա՛ր,— շարունակում է Հնթուհը,— ճիճուները սռված կուտորվեցին, որպի. շաղ գնալու (բոժոժ գառնալու) վախտն ա, բալքի ուտեն ռադ ըլնին կորչին. ծառերս վերջ արին էլի. բարով էկող տարի հասեննք, ին մերըդ մին էլ բռնի՝ պարծենա»։

Այս խոսքերից պարզ երևում է, ին ի՛նչ սիրով պահվում է այնտեղ շերամը։ Մառի տերը խնայում է իր լավ բիննու տերեը. (ին նորա լավ կարծած կարմիր բիննին երկրորդական է շերամարուծության մեջ, որովհետև ճերմակ բիննին համարվում է նախընտիր. գիտությունը ասում է, ին նորանով կերակրված միջատները ավելի բարակ մետաքս են տալիս, բայց բանը նորա խնամելն է), և ուխտ է անում, որ հետևյալ տարին էլ շահե։

Պահվածի էլ մետաքսը, միայն տան մեջ գործածելու համար է. «Վառերը կեփենք կազ կշինենք, լավն էլ խիաթի կքաշենք, է՛հ, մի բանի պետք կգա էլի»,— ասում է Վարդիթերը Անուշին։

Իսկ ինչ որ վերաբերվում է շերամի խնամարկության, ասվա՛ծ ազատ, ին ի՛նչ վիճակում է։ Շերամի դեղնացավը պատճառվում է մարդինոսի շար աչքից. դորա համն էլ Պետրականնց Համապին երիտ «օխտը ձիու մունետի» անվն է, որ գա ազդմն ու բժշկվին։

Ուզարլուկ (յուզերլիք) ծխելու ընդդեմ մենք չենք ուզում գրական բան ասել, որովհետև եվրոպական շերամարուծության մեջ այդպիսի բան չկա և որովհետև գիտությունը մերժած է այժմ այն կանխամտած կարծիքը, ին ծուխը ընդհանրապես, (որպես Թարակի ծուխը և այլն) վնասակար էր։ Այդ դառը խոտը ծխելը գուցե մի տեղական պատճառ ունի, մի բնական հիմք, մենք չգիտենք։ Եվ որովհետև չգիտենք, ուստի և իրավունք չունինք նորա օգտի կամ նորա բնդդեմ բան խոսելու։ Իսկ ինչ որ վերաբերվում է Մարմնոսի աչքին և օխտը ձիու մունետի անելուն, ո՛հ, դորա բնդդեմ շատ բան կա ասելիք, որ թողում ենք մի ուրիշ ժամանակի։

Հայտնի է, ին մարդը ինչ բանից որ ուզում է օգուտ քաղել պետք է, որ այդ բանը լավ ուսումի. այլապես, շատ օգտակար բանն էլ կմնա անօգուտ։

Գիտենք, որ ասիացին դեռ երկա՛ր ժամանակ չպիտի կարողանա Եվրոպացու պես մեկ քաշել շերամի բոժոժից. նույնիսկ Հյուսիսային Եվրոպայի մեջ քաշված մեկը պակաս արժեք ունի, քան մեկ Հարավային Ֆրանսիայի կամ Իտալիո (Պիեմոնտ) մեջ քաշված մեկը, բայց այդպիսի դիպվածում կարելի է բոժոժը ծախել։ Իսկ մեծ գեղերում, ինչպես Աշտարակն է, եթե շատ շերամ պահողք լինին, հեշտ կարելի է ընկերովի բանալ մի փոքրիկ մեկքաշի գործարան, ուր ամենի մեկերն էլ քաշվեին։ Մեկ քաշելը մեծ ուշադրություն և մեծ զգուշություն է պահանջում քաշողի կողմից, մանավանդ անդադար ուշադրություն, հանգույցներ շինելու մեկերի մեջ, այնուամենայնիվ մենք վստահ ենք, հայ կանանց ձեռքի շնորհքի վրա, որ մեկ նորա ձեռքին օրինավոր գործիք լինի և մի քանի անգամ այդ բանը օրինավոր կերպով ցույց տվող, նա հետ չի մնալ եվրոպացի կնոջից։

Մենք միայն շերամարուծության մասին խոսեցանք, բայց միայն այդ չէ, որից կարող են օգուտ քաղել հայերը։ Կան այնտեղ շատ ուրիշ բաներ և շատ օգտակար բաներ, բայց այսօր ամենքն էլ երեսի վրա ընկած։ Ստույգ է, որ այդ բաների համար խոսող ասող էլ չկա, գիտությունը ոտք չէ կոխել Հայաստան, մեր գրագետքն էլ չրհենդեղից առաջ մնացած գաղափարների քարոզ։ Ո՛չ գիրք, ո՛չ կարդացող. գլխից էլ հարկավոր չէ։ Ո՛ղ կործանվի, բողոքականության և անհավատության օրորոցը։ Ո՛վ գիտե, մեկ ի՞նչպես անուշ է գալիս այս բացագանչությունը ս. Ջամուռճյանի ականջին...

Հասարակ ժողովուրդն էլ տեսած լսած չլինելով, հայտնի է մեկ երկնքից չէ կարող ուտանիլ. մարդը պետք է տեսնե լսե, և դոցա օգուտը ճանաչէ, որ հետո համոզվի և գնա՛ նոցա քամակից։ Առանց սոցա ոչ միայն չնչած օգտակարը չէ կարող ներս բերել ազգի մեջ, այլև եղածից էլ օգուտ չէ քաղում։

Ամենին հայտնի է էջմիածնի պարապի հարավային կողմում այն մեծ լիճը, որ հանգուցյալ Ներսես կաթողիկոսը շինեց։ Տոթահար միաբանը կես օրից հետո դուրս է գալիս երբեմն այդ լճի լայն շուրթի վրա ման գալու։ Բայց ո՛րշափ ավելի կգեղեցկանա այդ լիճը, ո՛րշափ ավելի զվարճալի կլինի նորա շրջանում ման գալը, ո՛րշափ կկենդանանա օդը, եթե մի քանի կարգ ծառ տնկվի այդ շուրթի վրա։ Բայց ոչ ծառ կա և ոչ տնկելու դիտավորություն։ Ի՞նչ է պատճառը. ինձ պատասխանեցին, թե առանց ծառի էլ մոծակի ձեռքից օր ու արև չունին. ծառն էլ որ տընկենք, էլ մատ գնալ չի լինիր։ Այսպես ահա, երկյուղը մոծակից զրկում է խեղճ միաբանին մի պատվական ծառաստանից, նորա զովարար շուքից և տերևների բաղդր խշխշոցից։

Բայց այդ ունա՞յն երկյուղ է. մոծակը ուրիշ շատ միջատների նման ծառերի վրա չէ ածում իր ձուն. նորա ձու ածելու տեղը ջուրն է և ջրոտ տեղերը, ուրեք են նորա օրորոցը, որ այնտեղ կա։ Մառը բնավ վերաբերություն չունի մոծակի բազմանալուն. մեկս կարելի է ենթադրել, թե

ծառը մի մասով պաշտպանում է մեզ մոծակից։ Այժմ այն շուրթի վրա հարձակվող մոծակներից անհնար է մեզ մի բաժինը չնստի ծառերի վրա, եթե տոքա լինեին, որով ճեմելիքի վրա մարդ եկողների համար ավելի քիչ կլինին քան մեզ այժմ։

Տարապայման բժամտություն պիտի լիներ մեր կողմից, եթե մեղադրել ուզենայինք մեր միաբանին, թե ինչի՞ չպիտի նա մոծակի կյանքը, նորա որպիսությունը, նորա օրենքները։ Մոծակն ի՞նչ է, որ մարդ նորա կյանքը սորվի։ Ընդունում ենք, մոծակը մի զզվեցուցիչ և խայթող միջատ է և մեր մասնավոր սիրտ անարժան, բայց ի՞նչ անես, երբ այդ չնչին միջատի որպիսությունը չիմանալը հարյուրավոր հոգիների պատճառ է լինում, որ զրկվեն մի պատվական ճեմելիքից։

Բնությունը այսպես է խոսում. «կամ ուսի՛ր իմ օրենքները, սիրե՛ ինձ, օգո՛ւտ քաղե ինձանից. կամ թե չէ ես քեզ կատրկացնեմ և ոչինչ օգուտ չտալուց հետո դեռ զրկանքներ էլ կպատճառեմ քեզ»։ Դարոց պե՞տք է, բնական գիտությունքը անհրաժե՞շտ են, վերացական գիտությունքը, միայն, չե՞ն կարող երջանկացնել մարդկային ազգը, դորա վրա թող խորհի ընթերցողը և առողջ դատաստան կատարե։

Աշտարակի անտեսական կյանքի մեջ եթե կան սխուր բաներ, գո՛նե կա մի շատ մխիթարական բան. փոխադարձ օգնությունը, որ գեղացիք անում են միմյանց։ Օրինակ Հեթումն ուզում է այգին բանալ (թաղը վեր տալ) նորան գնում են օգնելու առաջ-քան երիտասարդք և մի օրում ավարտում են գործը։ Դորա փոխանակ Հեթումի որդիքն էլ գնում են մյուս օր աշխատող երիտասարդներից մինի այգին բանալու, երրորդ օր մի ուրիշ և այլն։ Այս սկզբունքը մեծ խորհուրդ ունի ընկերական կյանքում, բայց մեր հասվածը Մաթուսաղայի կյանքից անց կացավ։ Մենք թողում ենք այն բանի վրա խոսելը մի ուրիշ ավելի հարմար ժամանակի։

Բայց մեզ մնում է տակավին մի քանի խոսք Սոս և վարդիթեր գործի վերաբերությամբ, որ դեռ չենք ասել։

Արդո հեղինակը հետևելով պ. Արուքյանի ուղղության, իր բովանդակ գործի մեջ միշտ աչքի առջև ունեցել է գործ դնել ազգային առածներ, ասացածներ։ Մենք լիապես շնորհակալություն ենք հայտնում մեր հեղինակին։ Բացի սորանից, Սոս և վարդիթերի մեջ շատ կան սիրուն ձևեր և ոճեր, որոնք գրեթե ամեն տեղ գործ են ածվում ազգի մեջ, թեև նոցանից մի քանիսը ոմանք բուրքից առնված համարելու միշտ հակառակ են։ Մենք այս բուրքից փոխառության պատճառով չենք կարող մեր կարծիքը չհայտնել։

Մենք գիտությամբ առնում ենք Սոս և վարդիթերից մի այնպիսի ոճ, որ իրա՛վ, կարելի է բուրքից առնված համարել, ինչպես. «Հլա էն գնալն ա, ինչ գնացել ա»,— օշականցի կնոջ համար է ասում հեղինակը (եր. 120)։ Բուրքը ունի սորա նման մի բան. «Ո գիդիլ գիդամ» կամ, «Ո գիդիշ գիդեյոր» (o կիտիշ կիտիմ, o կիտիշ կիդեյոր)։

Թուրքը և հայը գտնվում են այսօր գրեթե միևնույն աշխարհում. այդ ազգերը, միևնույն հողի, միևնույն կնքակրի, միևնույն բնության ազդեցության են ենթակա: Մինչև շատ մոտ ժամանակներս գրեթե և միևնույն կառավարության տակ էին քաղաքականապես: Երկուքն էլ ասիացիք, երկուքն էլ արևելքցի և խորհելու, խոսելու ձևերով բնականապես մոտ. պատճառ, ինչպես ասացինք, անխոհեր միևնույն պայմանների տակ են ապրում: Ոչ ոք միայն ազգ ազգից բաժնում է անունով և կրոնով, այնպիսին չէ կարող պատասխանել կամ մեկնել, թե ի՛նչ է այն երևույթի բնական և հոգեբանական պատճառը, որ թուրքը համ է առնում հայի վհատ և ապիրատ խաղերից տաղերից, ինչպես և հայը թուրքի խաղերից, բայց երկուքն էլ անզգա Բեթհովենի սիմֆոնիներին, երկուքի համար էլ Մոցարտի Դոն Ժուանը «ձայն բարբառոյ յանապատի»: Երկուքն էլ հազար փառքով նախընտիր են համարում երգել. «Ափսոս քեզ հայոց խնդճիկ ժողովուրդ», կամ «Կռունկ ուստի կուգասը» և Քյոռօղլուի «Այվազը դյումիշ բլաղը»: Քյարամի և Աշըգ-Կարիբի խաղերը: Ո՞րն է լավ, ո՞րն է վատ՝ դորա վրա չէ խնդիրը. երևույթը հարկավոր է առնուլ որպես իրողություն:

Բայց այնպիսին, երբ աշքի տակ առնու բնությունը, երկու ազգի կյանքերի միօրինակ և միաձև ճանելությունը, երկուքի էլ ընկճված և հարատահարված վիճակը, այն ժամանակ բանը աշկարա կլինի, որ հայը և թուրքը այս տեսակ կապերով միմյանց հետ կապված լինելով, անշուշտ, հոգեբանական երևույթներով իրարից չէին կարող հեռու լինել: Թող ինչ կամին խոսին, բայց մարդկային հոգին ցոլացնում է արտաքին բնությունը:

Այսօրվա օրս, մեր նոր լեզվի բաղդատությունը մեծ մասով թուրքի բաղդատության պես է. թուրքի՞ցն է մոտ, քե՞ ինչ բնական կամ ընկերական պայմանների տակ թուրքինը, որ կերպարանագործվել է նույն պայմանների տակ ինքնուրույնարար կերպարանվել է և հայինը՝ այդ մասին մեզ որշափ կամին լինին շատ կամ քիչ հավանական կարծիքները, բայց մենք այս երևույթը առնելով որպես իրողություն, տեսնում ենք, որ չնայելով մեր նոր լեզվի բարբառների տարբերության, նորա տրամաբանությունը, և բաղդատությունը ամեն տեղ մեկ է: Նպաստիր արշավանք քարոզել այդ բաղդատության ընդդեմ, հին լեզվի բաղդատութեան իրավունքը պաշտպանելով, համազոր է նոր լեզուն սպանելու և ժամանակի և պատմության արդեն արած պրծած ազդեցությունը ուրանալու: Մենք կարող ենք շատ բան ցույց տալ և հին լեզվից, որ նույն է այսօրվա աշխարհաբարի կամ տաճկի տված բաղդատության համարեն մարդկության:

Մեկ մարդ տասը տարի մնալով մի օտար ընկերության մեջ, քիչ շատ ընկնում է այդ օտար լեզվի, օտար ոգու ազդեցության տակ. հայը հազար տարի ընկած լինելով թուրքի, թաթարի և ուրիշների ազդեցու-

Թյան տակ, ի՞նչպես կարելի է պահանջել, որ պատմական իրողությունը իրենց կնիքը խոր չդրոշմեին ազգի սրտի և հոգու վրա. ի՞նչպես կարելի է, որ այդ դրոշմը չցոլանար նորա լեզվի և մտածելու ձևերի վրա։ Հայոց ազգը գեղեցկյան բո՛ւրդն էր, որ ցողի տակ մնալով չթրջվեր, քո՞ մովսիսյան մորենին, որ կրակից չէրվեր. հայտնի է, թե այս սքանչելի հատկությունը չէր կարող ազգը ունենալ, հայտնի է թե պիտի թրջվեր էլ, էրվեր էլ։ Բայց այդքան բան անցնելուց հետո երբ պատմաստը (լավ է թե վատ, այն չէ խնդիրը) բնիկ է դարձել, հնար կա՞ այդ բոլորը թերել հանել հինգ միլիոն ժողովրդի վրայից և նորա տեղ բան հայկական արտաքանությունը կամ բազդաստությունը դնել, որ այսօր անսովոր է ազգին։ Ի՞նչ էական խորհուրդ ունի կենդանի ժողովրդի իրավունքը ոտքի տակ կոխելը, քանի հազար տարի առաջ մեռած հայերի իրավունքի անունով։

Շատ ազգերի դաղթականք ուրիշ մեծ ազգերի մեջ մտնելով անհայտանում են կամաց-կամաց։ Հայոց ազգի մեջ մտած են հրեայք, ինչպես Բագրատունիք և ուրիշ շատ հաստարակ ցեղեր։ Հայոց ազգի մեջ մտած են հնդիկներ, որ Լուսավորչի ժամանակ էլ դեռ իրենց նախահարցը որպես աստված պաշտում էին Տարոնում։ Հայոց ազգի մեջ մտած են չինացիք, ինչպես Մամիկոնյանց ցեղը։ Գուցե այդ ցեղի նախահայրը, երբ փախչում էր Չինաստանից, իրբև երեսլի մարդ, ունեներ իր ծառայքը կամ բարեկամքը, որ նույնպես մտան հայոց ազգի մեջ. թողում ենք պատմության անհայտ խառնուրդները քիչ կամ շատ։ Այսօր, այս տղերի գրողը, կամ նոցա ամեն մի կարդացողը, չէ՞ որ հայ է։ Լավ որ հնար չկա իմանալու թե ո՛վ մեզանից ինչ ազգից է ծագում, ապա թե ոչ, բուն տոհմական հայերը, չնայելով որ այդ խառնված օտար տարրերդը հազարավոր տարիներով մասնակից էին եղել նորա ճակատագրին, նորա ցավին և ուրախության, և որոնք բացի հայից ուրիշ անուն չունեին այսօր, այդ տոհմական հայերը, ասում ենք նորանց էլ պիտի մերժեին որպես ոչ բնիկ հայեր։ Հազար տարի ազգի վրա եղված բնականն և պատմական ազդեցությունը ուրանալով, նորա հազար տարի որպես անփոփոխ գործ դրած բազդաստությունը մերժելը և նորա տեղ հինը դնելու փորձը ինչ զանազանություն ունի վերը դրված մաքրասիրությունից։

Ճշմարիտ է, երբ դպրությունը միայն դիտական առարկաների վրա խոսի այնտեղ այն աստիճանի կարող չէ այն գաղտագարծված ձևերին, թևև կարող միշտ բազդաստության. բայց երբ ուզե նա ազգի կյանքի մեջը մտնել, ապա ուրեմն այդ գաղտագարծված ձևերը են նորա ազատ հով անցագիրը և առանց նորա ազգի կյանքի դուռերը փակ են հնդինակի առջև։ Հայտնի է, թե ամեն դիտական առարկա իր լեզուն և իր ոճերը ունի, ազգի ամենօրվա և բնաստանական կյանքը կարո՞ղ է իր լեզուն չունենալ։ Այսպես լինելով բանը, կարելի՞ է խոր ներս մտնել ազգի կյանքի մեջ առանց այդ կյանքի անփոփոխ ձև ու ոճը գործ դնելու։ Մենք

չենք ուզում երկար խոսել այս մասին, որովհետև մեր համար աչքի հայտնի ճշմարտություն է այս։

Սակայն, չենք ասում, այլ մանավանդ ընդդեմ ենք, որ ազգի լեզուն էլ ավելի ստրկանա և ընկճվի թուրքի ազդեցության տակ։ Այս մասին շատ ցավալի երևույթ տեսնում ենք Տաճկաստանի հայոց մեջ, որոնք տաճիկ լեզվին ստրկանալու համը հոտը տարել են։ Ավելցուր սորա վրա և ֆրանսիական լեզվի բաղդատության և ձևերի ազդեցությունը, որոնցից ժողովուրդը խայտառ ազատ է, բայց պ. գրագետքը քաղաքակրթության անունով ներս են բերում ազգի մեջ և խանգարում են լեզուն։ Մենք, որ նոր լեզվի ինքնուրույն ազատությունն ենք քարոզում և հին լեզվի ձևերից անկախությունը, որպեսզի ազատորեն և ինքը իրեն աճե, ո՞ր ուշադրությամբ կարող էինք քարոզել, որ այդ լեզուն թուրքի կամ սատանայի ձևերին ստրկանա։ Բայց երբ այս կամ այն բանում այսօր միևնույն ձևն ենք տեսնում և հայի և թուրքի մեջ, դորանից խրտնելով, թե վայ, թուրքը որովհետև այսպես է ասում, ես նորան չնմանելու համար պետք է, որ գործ չդնեմ այդ ձևը, ասել մենք չենք կարող։ Այո, մի հնդիկ իր սեննկի մեջ նստած, կամեցածի պես կարող է դրել և խոսել, ինչ ձև ուզե գործ դնել, բայց բոլոր ազգը չունի այդ ազատությունը. նա չէ կարող ներկան ուրանալով անցածի անունով ապրիլ։ Այն ուղղությունը, որ առանց մի էական խորհրդի բռնաբարում է ներկայի իրավունքը կամ գեթ աշխատում է բռնաբարել, մենք հրատարակում ենք մաքուր և զուտ ֆանատիկոսություն։ Նոր լեզվի մեջ դրնին բոլոր հին լեզվի նախադրությունքը զարձել են վ ե ր ջ ա դ ր ու թ յ ու ն ք, ածականը անհոդով և թվով անհամաձայն, միշտ նախադաս գոյականից, հատկացուցիչը միշտ նախադաս և այլն և այլն, որ նույնն է և տաճկերենի մեջ, և որովհետև այդպես է, ուրեմն և պետք է հին ձևի տակ շարել և կապակցել, թեև նոր հոլովներով, այժմյան հայ խոսքը։ Բայց ժողովուրդի անկաջին ծանր է և անբնական.— ի՛նձ մի խոսքը։ Բայց ժողովուրդի անկաջին ծանր է և անբնական.— ի՛նձ մի խոսքը։ Բայց ժողովուրդը խանգարել է ինչ փույթ,— նա բուն հայերեն եմ խոսում. ժողովուրդը խանգարել է իր բաղդատությունը, նորա լեզուն ստրկացել է թուրքի բաղդատության... իր բաղդատությունը, նորա լեզուն ստրկացել է թուրքի բաղդատության... է՛, ինքը, ազգն էլ ստրկացել է թուրքին. և լեզվից առա՛ջ է միայն լեզուն չէ՛, ինքը, ազգն էլ ստրկացել է թուրքին. և լեզվից առա՛ջ է ստրկացել։ Բայց ի՛նչ խոսիս։

Մարդ խոցելու կամ վիրավորելու համար չէ մեր այս խոսք ու գրուցը. այս մեր հայացքն է, մեր կարծիքը։ Եվ ինչպես մենք ազատ ենք այսցը. այս մեր հայացքն է, մեր կարծիքը։ Եվ ինչպես մենք ազատ ենք այսցը, նույնպես ուրիշը ազատ է այլապես կարծել։ Եվ թե կարող պես կարծել, նույնպես ուրիշը ազատ է այլապես կարծել։ Եվ թե կարող է պատել մի ճանապարհ, որ և բուն հայկաբանությամբ խոսեր և ազգի մեծագույն մասին հասկանալի, խոսք ենք տալիս, որ մենք առաջինը վազենք նորա դրոշի տակ։

Բայց ցավալին այս է և մանավանդ ցավալի, որ անմեղժելի ճշմարտություն է, թե մենք իջնելով հասարակ ժողովրդի կյանքի մեջ պիտի տեսնենք բուն թուրքի բառեր էլ ներս առնուլ, ամենօրվա կյանքի,

առարկաներում ստիպված ենք նվիրապետական բառեր առնուլ: Մենք մի օր ցույց կտանք այնպիսի թուրքի բառեր, որ ընդհանուր ազգին դարձել են միօրինակ գործածական և որոնց գաղափարը մեկ բառով ասվող խոսքեր ոչ միայն նոր լեզվի մեջ, միայն մի որևիցե գավառական բարբառում, այլ նույնիսկ հին լեզվում էլ չկան: Բացի սոցանից կան թուրքի բառեր, ընդհանուր ազգին գործածական դարձած, որոնց հայերենը թեև կան հին լեզվի մեջ, բայց և այնպես այնքան խոր ներս են մտած նոքա ազգի մեջ, որ հայ գպրությունը մին 200 տարի էլ ներգործեն օրինավոր կերպով, այնուամենայնիվ չկիսի կարողանա այդ բառերը առնուլ ժողովրդի շրթունքից ու նոցա տեղը դնել թեև անփակաս, բայց ազգի համար մեռած բառեր:

Կարող ենք միխիթարվիլ միայն նորանով, որ շատ սահմանափակ են այդ տեսակ բառերի թիվը: Չկա աշխարհիս երեսին լեզու, որ օտար խառնուրդ չունենա. մեր նոր լեզուն չէ կարող բացառություն լինել բնական կանոնից:

Մենք, հերիք համարելով առժամս այսքան խոսքը, կտրում ենք մեր ճառի ընթացքը, ձնոք գարկած լինելով մի տեսության նոր լեզվի մշակության մասին ընդհանրապես, ուր մանրամասնաբար պիտի քննվին այն բոլոր խնդիրները, որ վերաբերություն ունին նոր լեզվի մշակության: Այդ աշխատության շուտով հրատարակիլը մենք չենք կարող խոստանալ սրդո ընթերցողներին, թեև այդ գործի վրա անձանձիր աշխատել ենք և աշխատում ենք, այս րոպեիս էլ:

Վերջացնենք մեր հատվածը:

Գ. Գուշյանցի ոտանավորը մեծ հարազատություն ունին Արարատյան աշխարհի և տեղ-տեղ էլ ամբողջ ազգի ոգու և ձևի հետ: Օրինակի համար դնում ենք այստեղ նորա «Ջան գյուղումը» (եր. 74).

«Եռնձոր ուռիմ կծած ա, ջան, գյուղում, ջան, ջան,
Զորեմ կողմն էրծարած ա, ջան, ծաղիկ, ջան, ջան,
Աղպերս ուզից չի տվի, ջան, գյուղում, ջան, ջան,
Ասի յարի ղրկած ա, ջան, ծաղիկ, ջան, ջան:

Ա՛յ տղա ինչ անիլ տուր,— մատնաչափ գիր անիլ տուր,
Ինձնից էլ ինձ ճար չի կա—համոզիլ վեր անիլ տուր:
Ես աղջիկ եմ ալ կուզեմ,—բարակ մեջքիս չալ կուզեմ,
Երբ ես նկա ձեր տունը—ոսկին սարեսար կուզեմ:

Սիրակի էլ պա՞ս կըլնի,—էրծարից լավ բա՞ս կըլնի,
Ոդիդ մեռնի վարդապետ,—սիրածը չհա՞ս կըլնի:
Աշտարակ բարձր տեղ ա,—ջուրը ինվանեին դեղ ա,
Սիրածը սիրածին չեն տալ—էս ի՛նչ անիրավ գեղ ա:

Էն սարը բարձր սար ա,—տակը գրնչլած քար ա.
Ես ինչ բախուն սիրեցի,—բա՛ս ո՞վ արավ աչկարա,
Իմ յարճ ինձ յար պրտի,— ձեռովը ֆանար պրտի:
Իմ յարի կանճած տեղրն,—մեկ չինարի ծառ պրտի,

Ա՛յ տղա, դու հազար ըլնիս,—իմ ախպար սատար ըլնիս,
Թե ինձնից չոկ յար բռնես,— դու սրտապատառ ըլնիս,
Քահուլիդ կալիճ մեռնիմ,—երեսիդ խալիճ մեռնիմ,
Լսել եմ, կարդացող ես,—սաղմոսիդ ծալիճ մեռնիմ:

Ամպել ես ամպի նման,—շամար ու դանդի նման,
Իմ նանն ինձ ո՞նց ա պահել,— ծալած գյուլբանդի նման,
Կանչել եմ ախա բախա,—չավաղուս տուտը կախ ա,
Շեկ տղա, կարմիր աղչիկ,—բո՛ղ բռնենք իրար չախա:

Ամպել ա ձուն չի գալիս,—մրընել ա տուն չի գալիս,
Էս աճառ բարձի վրա,—առանց յար հուն չի գալիս:
Ոչխարն արել եմ բակը,—դեմ ավել սելի ակը,
Ով իմ սիրածը առնի,— չի վնլի *(վայելի)* գլխի բազը:

Պահավը կանչել ա հարին,—կտուցը լիքը արին,
Մի աղլուխ վարդ եմ հադել,— դրկել իմ աղպար յարին»:

Շատերը կան հույնպես ազնիվ, հույնպես գեղեցիկ, բայց մենք ուզում ենք միայն նահիկը մեջ բերել (եր. 100), ուր Հայ պառավի ոգին և սիրտը ամեն հարազատությամբ թափել է հեղինակը.

Հնաոիկ արա մեծաճաս,
Հալիվորիս ծերաճաս,
Երբոր խելիդ տեր ըլնիս,
Գառավ տատիդ չմոռնաս:

Տատը գլխովդ պտիտ գա,
Ինչ խարա ունիս տատին գա,
Երեսիս մի բուռ հող ֆցես,
Իմ տեր ու տիրակաճ բալա:

Շնորհիով զոռով տղա դա՛ռ.
Սաղ աշխարհիը ձեռդ առ.
Էս մեր դուշման ազգերին,
Խեղճացրու հոգին առ:

Զենդ լսողը սասանի,
Մակը մտնի, տազ ասի,
Ասի, հրես, Գրիգորը,
Կը տա ինձ ու կըսպանի:

Գերի ա մեր հայ այգը,
Ղոչաղների բայ ազգը,
Էս անիրավ թուրքի ձեռին,
Փշացավ մեր կես փայ ազգը:

Իմ Գրիգորը մենծանա,
Դուշմանի աչքը հանա.
Հայի ազգին օգնելով,
Փառք ու պատվի տիրանա»:

Մենք ավարտեցինք մեր հատվածը, Սոս և Վարդիթեր ազնիվ և պատվական աշխատության մասին, որ մեզ շատ մտքերի պատճառ դարձավ, որպես և շատ էջեր լցնելու. մենք, հրապարակով, հանդիսաբար և կացրդապարար հայտնում ենք արդո հեղինակին մեր արտաՀոց շնորհակալությունը, ավելի ընդարձակության և ավելի կերպարանագործության մաղթելով նորա պայծառ բնդունակությանը:

Մեզ էլ շնորհավորում ենք, խանումի խոսքերով (եր. 76), թե «Աչքդ լիս. փառք աստուծու, անշուռ, անխաթա էս հավկիթին էլ շուռ տվինք»:

1/12 փետրվ[արի]. 1864.
Ս. Պետերբուրգ

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Կոստանդնուպոլսի մէջ հրատարակված Մեղուի *մի քանի համարներում, որ գոն 220—221 և 222 (176-րդ համարը, որպես նաև 222-ի շարունակությունը չենանք) Ա. Պ. Ա. տորրագրությամբ, մի պատմական աշխատություն տեսանք*[1]*, որ անախտակիր ոգով, ազատ և լուսավոր հայացքով հանդես է հանել մեզ անծանոթ հեղինակը՝ ամերիկյան միսիոնարների չարաչար ընթացքը Տաճկաստանի մէջ, մեր խեղճ ազգին միսիոնարների վերաբերությամբ, նոցա ասածների հարյուրերորդ մասը տակավին չէ ընկել գրչի տակ, բայց Հանինպալ փոորաս*[2]*. Հեռի չէ այն օրը, երբ հայ ազգության ոգին հաշիվ կպահանջե նոցանից լուսավոր աշխարհի առաջև։ Մենք հանդիսաբար հայտնում ենք արդո հեղինակին մեր առ ի սրտե շնորհակալությունը։*

Բայց ցավում ենք, որ արդո հեղինակը թյուր ըմբռնություն ունի քաղաքական եկեղեցու բռնակալ դրությանց մասին։ Հեղինակը կարծում է, թե այդ բոլոր պախարակելի գործերը և հալածասեր ուղղությունը Տաճկաստանի մէջ գտնված միսիոնարների ոգա անհատական հատկություններից է բխում և թե բուն միսիան, այսինքն կառավարող ընկերությունները ազատ է այդ դատապարտելի գործերից։

Մեղուի 223 համարում արդո հեղինակը հարցանելով, թե միսիոնարների վարմունքը ինկվիզիցիոնից ի՞նչ տարբերություն ունի, այնպես է պատասխանում. «Այո՛, կա մեկ մեծ տարբերություն մը ասոր կու կարգի անձանց մեջ. Լոյոլայի գործավորները (Ճիզվիթները) բուն պիտինք դրկող ընկերության հարազատ կամքը կկատարեն... իսկ անոնք (միսիոնարները) անատրակուլա են (՛), որ իրենց ընկերությենեն ո՛չ երբեք այսպիսի հրահանգություն մը առած են (՛՛), վասն որո ասոնք անոնցմե ավելի դատապարտելի վիճակի մը մեջ են.... Մանավանդ որ, Ամերիկայի պես բարեհռչակ և ազատ երկրի մեջ ծնած և երկար

առանձ ուսումնական (՞) և քրիստոնեական (մեղա՜ աստուծո) հրահանգություններ առած ըլլալովնին, ա՛չ երբեք նեռնելի կրնա համարվիլ այնպիսի նպերնելի վարմունք մը, որ խղճի, ազատության և բանականության դլխովին դեմ է»[1]։

Մենք ոչ միայն համաձայն չենք արդո հեղինակի կարծիքին, այլ մանավանդ դորան ներհակ կարծիք ունը ենք։

Արդո հեղինակը Մեղուի *221 համարում հանդես հանելով միսիոնարներուն շնչլորչյան կարգի անզանազանություններն վերաբերյալ մի գործը՝ առանձին ծանոթությամբ, նույն համարի նույն երեսում արգելն ասած էր. «Մի՛ թամահրեք ամերիկյան միսիոնարները, քանզի կղեր ըլլալովնին, պատրաստվոր են աշխարհիս կղերական ընդհանուր հոսանաց առջև ինենալ. այն է՝ քարոզել այլոց և ոչ իրենց անձին. աստվածային պարզ և մաքուր կրոնքը (խոով կենա գլխներիդ՜ն) իրենց եռապետական և միստիկական վարմունքովը ժողովրդյան զղվելի երևցունել, մեկ խոսքով, վատության և անառաքինության օրինակ մը ցույց տալ աշխարհի և վերջապես իրենց անարդ վարմունքնեն խրատվողներուն դեմ մարդկային ուժին փորձը փորձել ու զանոնք իրրև անկրոն դատապարտել.. բնև ոչ այլոց պես ամբիոններնեն, այլ միստիկականությամբ»։*

Եթե արդո հեղինակը այսքան պարզ հայացք ունի այս բաններն մասին, նշանակում է՝ հարկավոր է նորան միայն հիշեցնել, թե այդ միսիոնարների ուղարկող բուն միսիան նույնպես բաղկանալով կղերներից, ի՞նչ առիթ ունեին այդ կղերքը ուրանալ իրենց պարտքը որնիցե դիպվածում, որ է աշխարհիս կղերական ընդհանուր հոսանաց առջև իհնալ», այլովք հանդերձ։

Մնդ կմիվ, թե արդո հեղինակը «միստիկական» խոսքը «էիզվիմական»-ի տեղ է դործածում կամ միստիկականությունը՝ էիզվիմականության տեղ, որ նեռնելի չէ։

Կսխալի արդո հեղինակը, եթե միսիայի անդամոց կղերությունը մոռանալով, դուտ ավետարանական, աստվածային և մարդկային սկզբանց տեր Հանուչն Ամերիկայից Տաճկաստան միսիաներ ուղարկող բնկերությունը։

Կկամեննա՞ր պարոնը, որ ցույց տայինք բողոքական նկեղեցու առաջադիները, եթե առանց այս անունին, եթե ինկվիզիցիոնի, պապի և Հռովմի նկեղեցու անունը չէին կամենում լսել,— ազաչում ենք աշխատություն հանձն առնուլ և կարդալ Մակոլեյի Անգլիա պատմությունը[1]։ — Ազաչում ենք կարդալ Թովմաս Հենրիկոս Բոքլ անգլուզական հեղինակի աշխատությունը՝ «Քաղաքակրթության պատմությունը Անգլիա մեջ», մանավանդ այս անմահ աշխատության երկրորդ հատորը[2], որ հիանալի բաներ կան բողոքական նկեղեցու վերաբերությամբ։ Այս բաները մի երկու միսիոնարների դործերը չեն, այլ բողոքական նկեղեցու գործերը։ Այս նկեղեցին շինվելով Հռովմի նկեղեցու ավերակների վերա, ա՛յնքան ազատություն բերեց իր ժողովրդին, ո՛րքան այն տերությունքը

միջին դարերում, որ կազմվեցան նույն Հռոմմի կայսերության ավերակներում: Ազատությունը լոկ մի խայծ է բողոքական քարոզիչների կարթի ծայրում, վա՛յ միամտին, որ խաբվելով կբռնվի,— այնուհետև սերկուությունը նորա հավիտենական բաժինն է: Բողոքական եկեղեցին (թողնելով առաջին խռովությունքը և արյունահեղ պատերազմները, ուր բողոքականք չէին միայն մեղավոր, այլև պապականք), ի՞նչ խռովություններ, ի՞նչ քաղաքական երկպառակություն, ի՞նչ երկդիմի ընթացք և խարդախություն ցույց չի տվեց Անգլիո մեջ շարունակ կարլոս առաջինի գլխատվելուց մինչև Վիլհելմ Օրանժյանի թագավորելը, և տակավին նորա օրով, հրաժարվելով երդմնելուց (որովհետև այժմ հակամետ էր գործել պաշտպանելու Հակոբ Բ. Մայուարտի և նորա ժառանգի իրավունքը): Բայց այդ ամենը մի ըստ միոջէ պատմել մեր գործը չէ, վերը հիշված հոյակապ խմաստասեր պատմաբանքը արդեն դրել են այն մարդկության առաջև:

Ո՛վ չգիտե կամ չէ լսել Բոքերտ Օուենի և նրա նուալեներքյան դպրոցի[6] անունը. ո՛վ չգիտե այն աղնիվ մարդու սուրբ և նվիրական խորհուրդը—յուր հիմնած դպրոցով և գործարանով վերցնել սոսկալի աղքատությունը... բայց և ո՛վ չգիտե, թե ինչո՛ր չբերեց այն մարդու գլուխը բողոքական եկեղեցին: Ամերիկայի մեջ գործյալ՝ ինչո՛ր չքաշեց քվեքըրների[7] ձեռքի՛ց (թեև Մակոլեյը սոցա անվանում է անվնաս աղանդավորք, երևի յուր մայրը քվեքըրուհի լինելու պատճառով): Բոքերտ Օուենի գերեզմանի հողը տակավին թարմ է, այս իրողությունքը գրեթե մեր աչքի առաջև անցան: Որանի՞ թե միայն սոքա լինեին:

Ի՞նչ է կարծում պարոնը, ամերիկյան միահան լինելով Նյու-Յորքի մեջ, պաշտո՞ւմ է նո՛ւյն ազատությունը, որ ոգի է տալիս Միացած Նահանգներին: Կարծո՞ւմ է, թե միսիոնարները՝ Ամերիկայի մեջ կամ Անգլիա կամ ուր և իցե, մի կրոնական թշվառ դպրոցում սառնալով մի որվ

միմյանց, և ի՞նչպես «չուտելու և չխմելու» ուխտելով։ Այո՛, այսօր է՛լ չի պատահիլ, որ եպիսկոպոսականները Մարգարիտ Մեկլենէն և Մարգարիտ Ուելսեան երիցական կանանցը խեղդեն Սոլվեյ ծովածոցում, տեղատվության ժամանակ սյուներ դնելով ավազի վրա բարձր ու ցած տեղերում, որ մակընթացության առաջին պոհի կատաղած լինելը երկրորդը տեսանելով, հրաժարվի երիցական աղանդից և ընդունի եպիսկոպոսական երկնային ուղղափառությունը,— թեև երկու կանայքն էլ առոյիկյան քաջությամբ մնան, պաշտելով յուրյանց խղճի ազատությունը։ Այո՛, Ամերիկայի կամ Անգլիո մեջ այսօր կախաղան կամ խարույկ էլ չկա, բայց խարույկները Բարցելոնի մեջ մարած են. ո՛րքան վերջինը կարելի էր վերադրել պապական եկեղեցու ազատատիրության, նույնքան և առաջինը բողոքականներին, որը մերժելով պապի իրավասությունը, երբեք չմերժեցին խարույկը և կախաղանը «հերձվածողների» ընդդեմ, մինչև որ քաղաքակրթությունը զորանալով, այդ երկուսը միասին կործանեց՝ առանց բողոքական կամ պապական եկեղեցիների, ո՛չ թե ցանկության, այլ գեթ հնության. նորովք և մերժողությունք ծաղկում են ո՛չ միայն պապական եկեղեցու գոգում, այլև բողոքականում և այն՝ ո՛չ միայն կենդանիների, այլև մեռելների ընդդեմ։

Պե՞տք են ապացույցք.— ուրիշ ամենը թողած, այս միայն ենք հարցանում։ Ի՞նչ պատճառով Ուելսո-Մինստեր արքայության մեջ չենք տեսանում լորդ Բայրընի գերեզմանը, նա ամեն իրավունքով պիտի այնտեղ թաղվեր, որպես լորդ և հոյակապ բանաստեղծ։ Բայց նա այնտեղ թաղված չէ։ Երբ բանաստեղծի մարմինը բալասանած Հունաստանից Անգլիա բերին, բողոքական եկեղեցին և նորա փարիսեցի արքանյակները, տեսանելով այդ փոթաթված և բալասանված մարմինը, ծալի զարկեցին և կարծեցին թե մումիացու է, կարծեցին, թե՝ պաղատամենաների տեղ մի փարաւոն է թաղավորողը. ուստի և հական Թոմասին դիպաստության հին ասյանը նորոգեցին։ Այնտեղ հիշվեցան, որ հոյակապ բանաստեղծը ընդդեմ է եղած եկեղեցուն, որպես հանցավոր յուր ամուսնու ընդդեմ. այնինչ հանցանքը մինչև այսօր ևս տակավին ապացուցված չէ. (տե՛ս Մակուլեյի հատվածը Բայրընի մասին). այնտեղ հիշվեցան բանաստեղծի անառակությունները վենետիկի մեջ. որպե՞ս թե մինչև այսօր այդ արքայության դուռը փակվեցավ Բայրընի դագաղի առաջև։ Չկարողացան գուշակել, որ Բայրընը գերեզմանից փառք խնդրող չէր, այլ նորան փառք տվող։

Մենք չենք մերժում, թե որևիցե ընկերության մի գործակալի անհատական հատկությունքը չէին կարող հանդես ունենալ կամ պատասխանատու կացուցանել այդ ընկերության բոլոր պաշտոնակատարությունը, բայց նույնպես խնդրում ենք ընդունել, որ բոլոր այդ գործակալքը միասին առնված, այն ընկերության ոգու հայելարարն են։

Արդ հեղինակը ուսումնականության է ներկայում այդ «յուր անհատի» գիտության արհեստավորների մեջ. երանի՛, թե ավելի լավ

ծանոթանար նոցա կրոնական դպրոցների հետ, այն ժամանակ կփոխեր յուր կարծիքը և կնայեր նոցա վրա իբրև հասարակ և տգետ արհեստների, որ պիտին հարկավ անգլերեն և գուցե մի երկու ուրիշ լեզու ևս, այն էլ դժվարա՜վ։

Մենք հույս ունինք, որ մեր համազգի հոովմեական կամ բողոքական եղբայրքը չգայթակղեն մեր խոսքերից. մենք ոչ որի ներքին կրոնը կամ խիղճը դատելու, չասենք հանդգնությունը, այլ՝ գեթ աշխարհաբար խոսելով, հիմարություն վիզ առնող չենք. և մեր պատերազմը այս կամ այն հավատալիքի ընդդեմ չէ, այլ բռնության ընդդեմ, որ մենք տեսանում ենք այն նկղեցիներում, որք կամենում են մեզ ազատություն պարգևել։ Ո՜հ, մի ազատություն, որ բնավ տարբերություն չունի բռնությունից։ Ինչ որ վերաբերում է բուն ներքին կրոնին, ի՛ղ յուրաքանչյուր մարդ յուր խղճմտանքից հարցանե և պատասխան առ աստուծո. մենք ո՛չ ինկվիզիտոր ենք, ո՛չ միսիոնար։

Բայց երբ բռնությունը ազատությամբ շոլորվելով հանդես կգա, երբ նենգահրա խավերը խղճի ազատության և լուսեղեն գիմակներով կգարդարվի՝ և բուն ազատությունը կքարկոծվի, այն ժամանակ ամեն աստված ազատասիրի պարտքն է բանականության սրով ասպարեզ մտանել և կնզծավոր փարիսեցիների գլխից Մովսեսի քողը մերկացնել. այս վարդապետության հետևում ենք և մենք։

Մնաք բարյավ։

11 դեկտեմբերի, 1863.

միմյանց, և ի՞նչպես «չուտելու և չխմելու» ուխտելով։ Այո՛, այսօր է՛լ չի պատահիլ, որ եպիսկոպոսականները Մարգարիտ Մեկլեչլեն և Մարգարիտ Ուելսոն երիցական կոնդակը խեղդեն Սուվեյ ծովածոցում, տեղատվության ժամանակ այտուներ դնելով ավազի վրա բարձր ու ցած տեղերում, որ մակընթացության առաջին պահի կատարմամբ լինելը երկրորդը տեսանելով, հրաժարվի երիցական աղանդից և ընդունի եպիսկոպոսական երկնային ուղղափառությունը,— թեև երկու կանայքն էլ ստոյիկյան քաջությամբ մնան, պաշտելով յուրյանց խղճի ազատությունը։ Այո՛, Ամերիկայի կամ Անգլիո մեջ այսօր կախաղան կամ խարույկ էլ չկա, բայց խարույկները Բարցելոնի մեջ մարած են. ո՛րքան վերջինը կարելի էր վերադրել պապական եկեղեցու ազատասիրության, նույնքան և առաջինը բողոքականներին, որք մերժելով պապի իրավասությունը, երբեք չմերժեցին խարույկը և կախաղանը «հերձվածողների» ընդդեմ, մինչև որ քաղաքակրթությունը զորանալով, այդ երկուսը միասին կործանեց՝ առանց բողոքական կամ պապական եկեղեցիների, ո՛չ թե ցանկության, այլ դեթ ընդունակության. նեղվիք և մերժողություններ ծաղկում են ո՛չ միայն պապական եկեղեցու դռդում, այլև բողոքականում և այն՝ ո՛չ միայն կենդանիների, այլև մեռելների ընդդեմ։

Պե՞տք են ապացույցք.— ուրիշ ամենը թողած, այս միայն ենք հարցանում։ Ի՞նչ պատճառով Ուեստ-Մինստեր աբբայության մեջ չենք տեսանում լորդ Բայրընի գերեզմանը, նա ամեն իրավունքով պիտի այնտեղ թաղվեր, որպես լորդ և հոյակապ բանաստեղծ։ Բայց նա այնտեղ թաղված չէ։ Երբ բանաստեղծի մարմինը բալասանած Հունաստանից Անգլիա բերին, բողոքական եկեղեցին և նորա փարիսեցի արբանյակները, տեսնելով այդ փաթաթված և բալասանված մարմինը, ծափ զարկեցին և կարծեցին թե մումիացու է, կարծեցին, թե՝ պաղատմենտների տեղ մի փարավոն է թաղավորողը. ուստի և հական թոթափել դիագատության հին սոյանը նորոգեցին։ Այնտեղ հիշվեցան, որ հոյակապ բանաստեղծը ընդդեմ է եղած եկեղեցուն, որպես հանցավոր յուր ամուսնու ընդդեմ. այնինչ հանցանքը մինչև այսօր ևս տակավին ապացուցված չէ. (տե՛ս Մակոլեյի հատվածը Բայրընի մասին). այնտեղ հիշվեցան բանաստեղծի անառակությունքը Վենետիկի մեջ. որպե՞ս թե մինչև այսօր այդ աբբայության դուռը փակվեցավ Բայրընի դագաղի առաջև։ Չկարողացան գուշակել, որ Բայրընը գերեզմանից փառք խնդրող չէր, այլ նորան փառք տվող։

Մենք չենք մերժում, թե որևիցե ընկերության մի գործակալի անհատական հատկություններք չէին կարող հանդես ունենալ կամ պատասխանատու կացուցանել այդ ընկերության բոլոր պաշտոնակատարությունը, բայց նույնպես խնդրում ենք ընդունել, որ բոլոր այդ գործակալքը միասին առնված, այն ընկերության ոգու հայտարարն են։

Այդո հեղինակը ուսումնականության է ենթարկում այդ «յուր տանակի» դիտության արհեստավորների մեջ. երանի՛, թե ավելի լավ

Հեգելը անդրդվելի հետևելով իր դրույթան, մի ուրիշ տեղ (Փիլիսոփայության պատմության հառաջաբանի մեջ, երես 9) ասում է թե պատմության փորձերը անպատուղ են անց կենում, խրատական հետք շմոռնելով մարդկային հիշողության մեջ։ Ինձ թվում է թե այս անպատուությունը բնական է, որովհետև ապագա մարդը ննջարկվելով իր ժամանակի ազդեցության կրավորականապես պիտի ներգործե ժամանակի ոգուն համեմատ, այստեղ անցածի խրատը հազիվ թե կարող է նակի ոգուն համեմատ, այստեղ անցածի խրատը հազիվ թե կարող է արժեք ունենալ. Գրանովս[կին] խոստովանում է այս, բայց թույլ տալով պատմական խորհրդի ազդեցությունը, որ ամեն էր անցածի, մնացած ավանդությանց հիման վրա (տե՛ս Գրան[ովսկու] հառը, կարդացած Մոսկվայի համալսարանում 1852, հունվար 12, տարեգլխի հանդեսի պատճառով. Грановский, I, եր. 27)։

«Օրենքը պատմաբանաբար հասկանալը,— ասում է Հեգելը իր աշխատությունների մեկի մեջ,— որ (այսինքն հասկանալը) աշխատում է ցույց տալ նորա (այսինքն օրենքի) հիմքը մոռացված սովորությանց և պարզաբանում է, որ այդ օրենքն մարած կյանքի մեջ, դորանով իսկ պարզապես վկայում է, որ այդպիսի օրենքը կենդանի ներկա ժամանակի մեջ ոչ խորհուրդ ունի, ոչ արժեք»[2]։ Այս դրույթունը ավելի պարզ կերպով հասկացնում է և արդարացնում է իր (այս երեսի սկզբում) փիլիսոփայության մասին դրույթունը։ Ի՛նչպես հրճվանք է գալիս մարդու վրա, որ կենա դար առաջ միմիայն հոչակավոր փիլիսոփային հասկանալի և ըմբռնելի դրույթունը այսօր կարողություն չունի ապացուցանելու նաև շատ միջակ հասկացողությամբ մարդոց։

Բայց դու տե՛ս, որ Հեգելի դրույթունը ներգործում է և իր փիլիսոփայության վրա, որի ժամանակը անցած լինելով կարող է նայվել որպես անցած կյանքի առաջացուցած արդյունք, որպես հիշատակարան դեմոնական ոգու կերպարանագործության պատմության մեջ, և ոչ ավելի։ Փիլիսոփայական համակարգությանց ժամանակները անցան, այժմ կրիսիկի ժամանակ է. համակարգությանց կործանումը արդեն մի մեծ և հոյակապ համակարգություն է, բնև կործանվածների պես գլուխներ, պրակներ ու կատեգորիներ չունի։ Բարվոքել մարդկային կյանքը— ահա՛ փիլիսոփայությունը. ինչ համփով կուզես գնա, միայն թե խորհուրդը և նպատակը այն լինի։ Հայտնի է, թե ավելի կարճ, ավելի բնական և ավելի հաջող ճամփան ընտրելի է, քան թե այն բարակ և միգամած ճամփանները, որ ցույց էին տալիս այս ու այն փիլիսոփայական համակարգությունքը։

Հայմը Գ գլխի մեջ ասում է. «Հնական (մովսիսական) օրենսդրության ոգու մեջ, Հեգելի կործիքով, ցոլանում է քանիմի փիլիսոփայության «վերացական մոքսիլիզմը». սերը և կյանքը, ահա այն հասկացողությունքը, որ օգնում են Հեգելին ներս մտնել քրիստոնեական կրոնի և նորա արարողությանց խորունկ խորհրդի մեջ։ Հնական ոգու մեջ—ստրանով մոտածում է նա (Հեգելը) հասկանալ վերը հիշած

Հակադրությունը, այս պատճառով աշխատում է համեմատություն դնել քրիստոնեության գլխավոր հիմքերի և սիրու և կյանքի հասկացողության մեջ—հրեական հասկացողությամբ ներողության և հանցանքի մեջ անանցանելի վիհ կար, բայց օրենքով տրված պատիժը համարվում էր ամբողջ արդարադատություն. հանցանքի և պատիժի շաղկապը է լոկ հավասարությունը և ոչ կյանքը»։ Աչքի ատակ առնելով միմիայն այս հավասարությունը, անհնարին է խոսք ևս մեջ բերել հաշտության և ապրեցնելու մասին։ Բոլորովին ուրիշ բան է, երբ սերը կլինի կրոնի կենտրոնը, բարոյականության գլխավոր նշանաբանը։ Միմիայն նույնիսկ մարդուց, նորա ամբողջ գոյությունից է բխում և հանցանքը, և օրենքը և ճակատագրի իրավունքը։

Այսպես էին այն ժամանակ—ասում է Հայմը—Հեգելի հասկացողությունքը սիրու խակության մասին, որպես մարդու բոլոր բարոյական ձգտողությունքը կատավարող գործիքի մասին։

Հայտնի է, թե քրիստոնեության էական տարրը որն է. հայտնի է, թե մեծ հիմնադիրը իր վարդապետությամբ վեր ի վայր կործանեց «ակն ընդ ական և ատամն ընդ ատաման» վարդապետությունը. հայտնի է, թե քրիստոնեության նպատակն է ընկերական կյանքի բարվոքումը, մինչդեռ մովսիսական կրոնից եսական ոգին բխում է ամեն մի քայլափոխում։

Ուրեմն քրիստոնեությունը հիմնված լինելով սիրու վրա, ուրեմն և ներող և պիջանող տարրի վրա, որ լինելով միևնույն ժամանակ այդ վարդապետության տիրապետող ոգին, ընկերությունը բարվոքում ատած տեղը անարդարություն է անկում և միտում է կշռի թաթը դնալի անհավասարություն, ուրեմն քրիստոնեական կրոնը թշնամի է հավասարության։ Բոլոր այն «ուրեմն»-ները դուրս են գալիս դարձյալ այն մովսիսական եսական ոգու ազդեցուց. որպես թե այն ժամանակ է երևում ճիշտ հավասարությունը, եթե Մարկոսը Կիրակոսի որդին ապանն Կիրակոսը առյան քաշելով Մարկոսին մահի մատնե։ Եթե արյուն ընդ արյան, ակն ընդ ական սկզբունքը չլինի, ուրիշ աղբյուր չկա՞ հավասարության. մի՞թե վրեժխնդրությունն է հավասարության միակ աղբյուրը, սերը չունի՞ հավասարությունը։ Եթե Մարկոսն էլ իր կարգով ելնե Կիրակոսի որդին ապանե և Կիրակոսի այրին առնի ձեռքով Մարկոսին մահի մատնե. ի՞նչ եղավ այս սքանչելի հավասարության էական և շոշափելի արդյունքը։ Հանցանքը երկու մարդ ապանեց, Մարկոսի և Կիրակոսի որդիքը, հավասարության ոգին արդարադատության ձեռքով երկու մարդ էլ ջոկ ապանեց, այսինքն Մարկոսին և Կիրակոսին. մեջտեղում մնացին երկու այրի կնիկներ յուրյանց մնացած որբերով։ Կիրակոսի մահը կենդանության չրերեց Մարկոսի ապանված որդուն, նույնպես Մարկոսի մահը Կիրակոսի ապանված որդուն։ Եթե մարդու ձեռքում հնար չկա մնացածը ապրեցնել, արդարության և հավասարության անունով երկու նոր մարդ էլ ապանել ինչ խորհուրդ ունի ընկերական կյանքի մեջ. չէ՞

որ երկուքի տունն էլ կործանվեցավ։ Ասենք թե հանցանքը գործվել էր, բայց տակավին երկու տունն էլ հնար ունեին կենալու, բայց, հավասարության ոգին ունքը շինեմ ասելով աչքն էլ հանեց—երկու տունից էլ մի մի մարդ առավ սպանեց և մի նոր թևե սրբացուցած հանցանք էլ սա գործեց։ Ի՞նչ է այս հավասարության խորհուրդը։

Քրիստոնեությունը կործանեց և փշրեց այս վարդապետությունը, սերը դնելով ընկերական կյանքի հիմքը և բարոյականության նշանաբանը։ Մարկոսը ինչ ներեն Կիրակոսին, նույն նա սպանել է նորա որդին, որպեսզի Կիրակոսն էլ նորան ներե, նույն նա սպանե սորա որդին։ Բայց կարգ ու կանոն կմնա՞ մի ընկերության մեջ, նույն հանցանքը մնա անպատիժ. նույն բաց աչքով ներողության տրվի սպանությունը։ Զարմանք հանցանքի ընդդեմ պատիժ գնելով մի՞թե կարելի է հանցանքը սանձել։

Սպանության աղբյուրն ինչ է—առնչություն կամ հափշտակություն. ևս-ին ոգի, որ ամեն ուրիշ գոհում է իր գոյության։ Մովսեսը ինչնում է, որ մարդը սխտանա այս ոգով. հզանա հափշտակություն, առնչություն և սպանություն—բայց երբ կատարված էր վերջին գործողությունը, մահի է տալիս գործակատարին։ Հայտնի է, նույն մարդը պիտի չատե, հափշտակություն չհզանա, ևս-ին ոգին սանձե մխիթարն այտաքին աշխարհից — հասնելու պատիժից վախենալով. ուրեմն ընկերության սպառնալիքը էականապես հիմնված է երկյուղի վրա. ամեն մի անգամ հովության էականապես հիմնված է երկյուղի վրա. ամեն մի անգամ իրար վրա իրավունք ունի[ն] նայելու որպես սպանողի, առնողի, հափշտակողի վրա և իրար երեսից պիտի պաշտպանվին միմիայն երկյուղի միջնորդությամբ։ Երկյուղն է, որ հույս է տալիս մարդուն ապրել ուրիշ մարդու հետ, նկատելով, որ այդ ուրիշը պատժից վախենալով չպիտի հանցանք գործե։ Հայտնի է, նույն այս վարդապետությունը նույն հատուցումի երկյուղը չինի ուրիշ բան չկա նորան բռնող։ Հիմի տեսնենք, նույն երկյուղը բավակա՞ն է, կարո՞ղ է սանձ դնել մարդու կրքերին, մեղմել նորա ևսականությունը։ Մարդը հզացել է հանցանքը. նա նույն գիտե, որ հատուցում կա, բայց նույնպես զգուշություն է առնում, որ այդ հատուցումը իրեն չհասնի. այո, շատ անգամ զուր են գնում նորա հոգաբարձությունքը և մատնվում է, բայց շատ անգամ էլ փախչում է հատուցման երեսից։ Բացի սորանից ինչնամությամբ զրպարտված, սուտ վկաներով այդ զրպարտությունը հաստատված, արդյոք անմեղն էլ մահու պատիժ չէ՞ կրում. և այս հավասարության ոգուց բխած արդարությունը հրապարակային և օրինական սպառնություն չէ՞։

Քրիստոնեությունը սեր է քարոզում, այո՛, բայց նույն հավատարության ոգին բռնաբարվում է երբ հանցանքը նվիրում է, բայց նույն այդ նվիրությունը ընդհանուրի համար է, նույն սերը ամոքելով նորա կսկիծները, որ նա չէ կարող այլևս առնել, հափշտակություն հզանալ և այդ խորհրդով սպանել, երբ արդարադատություն առիթ չունի այլևս

գրպարտողների և սուտ վկաների թակարդի մեջ բռնվելով օրինական սպանություններ գործել, մինչև այս ավելի հավատարիմ դրավական չէ՞ ընկերության բարեկեցության։ Եվս սիրով ոգևորված այդ ընկերության յուրաքանչյուր անդամը չէ նայում այլևս իր ընկերի վրա որպես թշնամու կամ կատաղի գազանի վրա, եվս փոխանակ երկյուղի, որ ամենի սրտի մեջ ամրացած դադար չէր տալիս նոցա, սիրապետեն խաղաղությունը հիմնվելով փոխադարձ հավատի վրա, որի դրավականը և ապրյուրը էր սերը, մինչև ընկերությունը ավելի երջանիկ չի լինիլ, վրեժխնդրության սկզբունքը ներողության սկզբունքին զոհելով կամ հավատարությունը (պատժի և մահի մեջ!) սիրու զոհելով։

Մինչև ներողության մեջ հավատարությունը հավատարություն չէ՞. մինչև վրեժխնդրության հավատարությունը ավելի հզոր ներգործող է ընկերությունը ապահովելու համար։

Եսական ոգով վարակված ընկերության մեջ նույն ոգին հանցանք է գործում, նույն ոգին դարձյալ պատժում է հանցանքը։ Սորա արդյունքը որշափ որ քաոս երևույթին արդարություն և հավատարություն է, այնուամենայնիվ էականապես և դրականապես ընկերությանը վնասակար։

Սիրով ոգևորված ընկերությունը, սիրուց առնչվելով հնար չունի հանցանք հղանալ, հանցանք գործել, և նույն սերը դարձյալ ընդհանրական փոխադրության համար եղած հանցանքն էլ ներում է, որով զարմանալի կերպով փորրացնում է հանցանքների թիվը և կյանք է տարածում։

Ի՛նչ է այս քննության արդյունքը։

Մովսեսի կրոնից ազատվում է մահ, իսկ քրիստոնեությունից գլանք։

Առաջինից փոխադարձ վրեժխնդրություն, իսկ երկրորդից փոխադարձ ներողություն. առաջինից ժառանգական և հավիտենական թշնամություն, իսկ երկրորդից մշտնջենական սեր և հաշտություն. առաջինից եսականություն և վայրենություն, իսկ երկրորդից անձնազոհություն և քաղաքակրթություն։

Եվս ինչևս հավատարության անունով պիտի պաշտպաններ «ակն ընդ ական» վարդապետությունը, մենք ինչ ենք այն հավատարության վրա, որ երևում է միայն թշվառության և մահի մեջ և հաժար ենք անհավատար լինել չարագործության մեջ, երջանկությամբ էականապես և դրականապես հավատար լինելով։ Այս մտածմունքը ազդեցին ինձ վերը գրված փիլիսոփայության վրա մտածություններ։ Օգոստ. 12, 1863

Ոչնչեն փիլիսոփայի փիլիսոփայական համակարգությունը ուղղակի ազդերանում է այն ազգի կյանքից և պատմությունից, ինչ ազգի ինքը պատկանում է. այսպիսի դիպվածում փիլիսոփան կանգնած է յուր անմիական հազի վրա։ Ապա եվս նորա համակարգությունը բացի իր ազգի կյանքից ունի իր մեջ և օտար ազգի կյանքի ոգին, որ ընդունելով որպես նախապատրաստություն, հնանում է նորա ազգության տակ տրամադրել յուր

ազգային կյանքից բխած փիլիսոփայությունը, ինչպես Հեգելը անում է միշտ, աչքի առջև ունենալով հունական իդեալը, այն ժամանակ նորա փիլիսոփայական համակարգությունը իր ամբողջության մեջ երևեցնում է օտար տարրի խառնուրդ։ Եվ որչափ իրական լինի նորա համակարգությունը, այնուամենայնիվ մի մասով պատկանում է վերացականության, որովհետև մի ոտքը դրած է լոկ գաղափարի վրա, որ չէ ապրում այլևս որպես կենդանի, այլ տանվում է և բռնվում է մտքով։

Որչափ տարօրինակ է, երբ մարդիկ ընդհանրապես վազում են այս տիառնմից դեպի այն տիառնմը, «փիլիսոփա» դառնալու համար իր ազգի մեջ, որչափ կոիվ, խռովություն։ Մինը Քանթին է հետևում, մյուսը Ֆիխտեին, մյուսը Հեգելին և այլն, և այլն։ Եե՞ղծ. այդ բոլորը զերմանական փիլիսոփայություններ են. և քու ազգի կյանքից բխած չլինելով քու ազգի մեջ անգործադրելի, նրա գործադրությունը հասկանում ենք գրականապես, և իրավունք ունենք այսպես հասկանալու, որովհետև այդ համակարգությանց պաշտողքը, ընդունում են նորանց որպես գրական կետ. որպես α և ω։ Բացի սորանից, Քանթի փիլիսոփայությունը բխած էր Քանթի ժամանակակից կյանքից, այսպես և ուրիշներինը իրենց ժամանակակից կյանքից։ Մինևույն ազգի փիլիսոփայությունը, նույնիսկ իր համար չէ կարող ամեն ժամանակ ուղիղ լինել, որովհետև ժամանակն առաջ է վազում, հասկացողության գումարը կերպարանափոխ է լինում։ Է՛յ, դու, որ և ոչ բնավ գերմանացի ես, դու որ ապրում ես հարյուր տարի Քանթից հետո, քեզ ի՛նչ կարող են օգնել Քանթը կամ Հեգելը, նրա քո խուզարկությանց խորհուրդը քո ազգի վրա գործ դնել է նորա համակարգությունքը։

Մենաց որ չէ կարելի ճշմարտությունը քննել և ճանաչել ինքնակայապես, քանի որ մարդու խուզարկունակությունքը հպատակված են այս կամ այն հեղինակության։ Իրավունք ուներ Դեկարտը մինչ գրում էր, թե «նա սկսելով քննել, առաջին գործս այն արի, որ թափեցի վրայից ինչ որ մինչև այժմ պատեր։ Այս շատ խոր ճշմարտություն է և գրեթե հավիտենական։ Որովհետև նրա թափածը գրական ճշմարտություն է, նա ինքնակա կա քննությամբ գործել կգա դեպի նա և անհնարին է որ չգա. իսկ թե Համեմատական էր, այն ժամանակ հայտնի է, թե թափելով նորան ավելի շահվնցավ, քան թե համեմատականը ընդունելով որպես գրական։

Ինչ որ ինձ է վերաբերվում, ես ոչ մի համակարգություն չեմ ընդունում և ամեն համակարգությանց սորկարար հետևողը ծաղրից ավելի ուրիշ բան թող չսպասեն ինձանից։ Փիլիսոփայությունը պիտի բխի յուրաքանչյուր ազգի կյանքից. և այդ կյանքը յուր ամեն մի քայլափոխում, ամեն մի կերպարանքում (phasis) պիտի ազդարարեն նոր հայացք։ Առաջուց գրված համակարգությունքը կանգնում են, նա մնում է այն բոպեից, երբ նորա վերջին միտքը ընկել էր թղթի վրա. կյանքը գնում է առաջ, նորա ոտքերի մեջ անանց մարդոց համար, որևիցե մի հատարակ այդ անունով գրքերի մեջ անանց մարդոց համար, որևիցե մի հատարակ

ազգի մեջ ի՛նչ բան ունի փիլիսոփայությունը։ Կո՛չը զքնզ. նորա փիլիսոփայությունն էլ նորա կյանքիցն է բխում, ինչպես կյանքն է, այնպես է և նորա փիլիսոփայությունը. և քո սքանչելի փիլիսոփայությունը նրա կամենաս նորա վրա պատավաստել կդառնա նույն բանը, նրա մատածես մի ուսի վրա այլ ուսն հիմք դնել։ Ուզո՞ւմ ես փիլիսոփա դառնալ քո ազգի համար (որովհետև կամոզիկն փիլիսոփա չկա և չէ կարող լինել, քանի որ ազգությունքը կան, քանի որ բնությունը այլ և այլ աշխարհներում ունի այլ և այլ կերպարանքներ և ազգեցություններ), ապա ուրեմն ուսիր քո ազգի կյանքը, նորա հասկացողության աղբյուրքը, նորա պետքերը։ Այդ կյանքի բարվոքելը է ամենամեծ և ճշգրիտ փիլիսոփայությունը։

Սուտ է, կան ճշմարտություններ, որ համեմատաբար դրսականք են, բնիկ նոցա որակությունքը և նրա օգտակար և հարմար են քո ազգի կյանքին և պետքերին, ապա ուրեմն աշխատիր, որ այդ ճշմարտությունքը մտնեն նորա հասկացողության գումարի մեջ։ Աշխատիր իրականապես բարվոքել քո ազգի կյանքը և թող քո բոլոր խնամատարությունը ուղղվի դեպի նորա կյանքը։ Սոփեստությունը, մեջբմեջ վերացական միտապատ և բաշկուռուք վարպապետությունը ընդունելը նրա քեզ համար փիլիսոփայություն է, բարով երթաս։ Մարդը իր կյանքը չէ տանում առաջուց նշանակված մի ճամփով. կյանքը հոսանուտ բան է և հաղար տեսակ հարաբերությանց, դիմադրությանց,— ավելցուր սրա վերա անհատական ձգտողությունքը (հայտնի է թե միջին թիվը),— հանդիպելով կես մի կորցնում է իր նախաշավիղը, կես մի այլ ընթացք է բռնում, կես մի կանգ է առնում, կես մի վազում է անհնարին արագությամբ։ Եղան ժամանակներ, որ մարդը հարյուր տարի ապրեցավ, բայց մի օրվա ճամփա չընաց, բայց եղան ժամանակներ, երբ մի օրում մեկ դար քալվեց։ Պարո՛ն, դու դիրքդ ամուր բռնե ձևոքդ, տեսնեմ քու փիլիսոփայական կառեզորիներդ ինչ կառնուա։ Փիլիսոփայությունը նաև ազատություն քարոզած ժամանակ, նրա դրականապես դնում է իր վարդապետության ոճը և համակարգությունը որպես անմերժելի և անբողոքելի, արդեն ինչնամի է ազատության, արդեն խորտակում է իր փիլիսոփայությունը։ Մարդկության կյանքի այս անշափելի հեղեղի մեջ դու որի՛ տունն ես հարցնում քո ծանր ու բարակ սահմաններով, սևեռով և չդիտես դու ինչ զահրեմարով։

Մարդը տուն չունի, մարդը հաց չունի, մարդը հանգիրծ չունի, բնությունը իր առնելիքները կպահանջե, խոհեմ և բնական ճամփան, մարդասեր հնարներ, ես կարող ես գտնել, որ մարդը տուն գտնե, հաց ունենա, մեկուսությունը ծածկե, բնության պարտքերը հատուցանե, ահա այդ ճամփան և հնարներն են փիլիսոփայության խնդությունը. այն մյուս մնացած փիլիսոփայությունքը, որ բնության հետ գործ չունին և բնության մեջ գործադրելի չեն, այս կամ այն կերպարանքով ծալիր ծոցդ դիր, կամ գնա համալսարանների պատշգամբներում քարոզե, գուցե այնտեղ քո արհեստակիցքը հիանան քու խոր գիտության վրա. բնական աշխարհի մեջ, բնության որդոց մեջ դու տեղ չունի՛ս, կարցա՞նք հասկացնել։

P. S. Որպես ՔՆ մարդը կավ է, իսկ փիլիսոփայությունը բրուտ. ինչ ձև կամենա կտա այդ կավին. ցնծա՛:

Փիլիսոփայությունը ըստինքյան գրեթե երեք հյուղ է բաժանվում, տրամաբանություն, բնական փիլիսոփայություն, բարոյականություն: Գերբնական մասը մարդուն մնջ է դարձյալ, ուստի եթե բնական փիլիսոփայությունից դուրս գա, կորցնում է իր ամրությունը և դառնում է ազնիվ և բարակ զեզգեկություն:

Այս բոլորը եթե իրրև մի առանձին գիտություն, համակարգություն, ավանդվում են մի մարդու գրքի մնջ, և ուրիշները պատրաստ գտնում են նորան և առանց վերստին իրենց անձը աշխատության տալու ընդունում են նորան որպես ծայր գիտության, դառնում են այն հեղինակի արծաթագին սարուկը ԲՆԵ առանց գիտնալու և զգալու: Կորցված ազատությունը երևում է նորանց որպես գտնված ազատություն. հեղինակության հպատակությունը մինչև այն աստիճան շփոթում է հասկացողությունքը: Ապա եթե փիլիսոփայությունը, այսինքն որևիցե պատրաստ վարդապետության համակարգությունը մերժենք, մարդը ո՛րտեղից ուսանի ուղիղ խորհել, ուղիղ հասկանալ և ամեն բան նորա բնական գունով տեսնել և գնահատել:

Այդ փիլիսոփա պարոնը ի՛նչ տեղից առավ իր գրությունքը. հայտնի է. ԲՆ կա ազբյուր, կան քննության նյութեր, որ պատվանդան եղան նորա համակարգության: Իսկ ԲՆ նորա փիլիսոփայությունը չունի այդպիսի պատվանդան, ուրեմն, որպես բռնաբարված խելքի արդյունք, առավել և՝ պատվանդան մերժվին և արժանի չեն ընդունելության: Բայց ստույգ է, որ ընդհանուր պատմությունը, բնագիտությունը են փիլիսոփայության ՀՂԳՐԻՒ հանուր ազբյուրը և հաստատ պատվանդանը: Ուստի պատմությունը, ուստի բնությունը, ուստի մարդը, իմաստասիրն ընկերությունը, օրենքները, մարդկության կյանքի երևույթքը, գտիր պետքերը, ճանչցիր պետքերը լցնելու հնարներքը և կդտնաս փիլիսոփա, առանց սորա կամ նորա պատրաստած համակարգությունքը ընդունելու: Գիտությունքը առաջ են գնում և նոցա ընթացքը պարմանալի կերպով լծորդված է իրար հետ: Տնաբանության մնջ մի ապակի է մտնում, քիմիայի մնջ մի տարր է ավելանում և ահա ըուվանդակ գիտությունքը միահղույն վազում են առաջ: Այս վիճակում լինելով բանի գործությունը, հայտնի է, ԲՆ Արիստոտելի փիլիսոփայությունը շինանում է, մինչ նա ուղեղը նմանեցնում է սպունգին: Ոչ միայն մեղադրելի չէ նա այդ մասին, ոչ միայն պախարակելի չէ, այլ գործյալ պարմանալու արժանի մարդ է, որովհետև նորանից առաջ ուղեղի համար քար էլ է ասող չէ եղած, պատրաստ գիտությունքը ժառանգել և նոցա լուսով անցածը, որ գործված է խավարում գտտապարտել ոչ միայն իրավունք չէ, այլև անբարոյականություն: Մեր խոսքը այն է, ԲՆ գիտությունքը, մարդու կյանքը, ժամանակը, այսինքն հասկացողության գումարը շարժուն և հատանոտ բան լինելով, չէ կարելի փիլիսոփայությունը ավանդել մի անշարժ սյամարի մնջ:

Կարդա՛ այդ փիլիսոփայությունը, որպեսզի սորվիս փիլիսոփայության պատմությունը և կարողանաս դուդահեռապիծ քաշել անցածի և ներկայի մեջ, տեսնել և գնահատել թե ինչպես մարդկային գիտության շրջանը ավելի տարածություն է առանում աստիճան առ աստիճան։

Մանավանդ դրությունը, որ շատ մոտ են դրական ճշմարտության գաղափարին, պիտին, որ մարդը սորվի և տեսնի. նորա սրում են և զվարթացնում են նորա հասկացող ունակությունը և կան այնպիսի առածներ, որ ուղղակի բնության արտահայտություն լինելով բյուրապատիկ ավելի ամրություն և հաստատություն ունին, քան թե ամբողջ շինծու համակարգություններ, որ օդի մեջ են մնան գալիս, կամ ավելի վատ՝ ոչնչության մեջ, որովհետև օդը շոշափելի է գոնե թեև չնչին մասով։

Բայց պատրաստ վարդապետություններ սորվել և այնուհետև քիթը մինչև ի Կոկիսոն հայոց բոթթացնել, թե ես Քանթի, Շելլինգի, Դեկարտի, Բեկոնի, Հեգելի և այլն և այլն փիլիսոփայություններն եմ սորվել, և պահանջել, որ հանդիպողը ծունր դնե իր առջև, պարզ ցույց է տալիս, որ այդ փիլիսոփա պարոնը ինքը ծնրադրություններից աչք չէ բանում այս կամ այն վարդապետության առջև։

Անձնամահանաչություն, գիտակցություն, հաշվառու քննություն մարդկային թե՛ անցած և թե՛ ներկա կյանքին, այլև բնության երևույթներին և նույնիսկ բնության, ահա՛ փիլիսոփայության աղբյուրը, որ բաց է ամեն մարդու առջև, միայն թե մարդը չծուլանա օգուտ քաղել։ Եվ եթե մարդը ընդունակ չէ այդ բոլորի բևեռը իր մարդի մեջ որպես մի կենտրոնի մեջ ամփոփել, նորան միօրինակ անօգուտ են պատրաստ համակարգությունքը։

Մարդու էական արժանավորությունը է նորա մարդի անսահման ազատությունը. եթե այն էլ բռնաբարվեցավ այս կամ այն հնդինակությունից կամ համակարգությունից, էլ ի՞նչ համ կմնա մարդկային արժանավորության մեջ։ Հազար փիլիսոփայություն — մեկ առակ։

Կարող են ասել, թե փիլիսոփաների ճիշդը և նպատակն էլ այն է, ինչ որ դու առում ես ուրիշ խոսքերով, էլ ինչ երկար բարակ պլսացավություն։

Բանն էլ այն է, որ ուրիշ խոսքերով և եթե մարդկային խոսքը կշիռ ու խորհուրդ ունի, ապա ուրեմն ամեն խոսք իրարից տարբեր է և չէ շփոթվում։ Փիլիսոփա պարոնները իրենց համակարգությունքը հենց դրել են մեջտեղ որպես մի հավատալիք, որպես դոգմա. մենք ոչ թե ձեռնոց ենք նետում իմաստության, այլ այն ձևին և դատապարտում ենք նետում վարդապետությունը, որ երևում է որպես դոգմա։ Չէ սխալ մտածել, որ մինչև այժմ մարդու արած հառաջադիմությունը, բնև բան երևույթին կարծվի նորմուծություն, այնուամենայնիվ բանիցյան և էականապես ուրիշ բան չեն, եթե ոչ հին շինվածքների կործանում։ Այնքան շատ և այնքան խիտ են այդ անտես շինվածքը, որ մարդը համփոփ չունի, և քանի խնդրի է բնկնում, կամաց-կամաց կործա-

նելով նորանց բացում է իր Համփան։ Եթե որևիցե սորուկ ազատվում է սորկությունից, այդ չէ նշանակում թե նա նոր բան սաացավ, այլ թե ինչ որ կորցրել էր գտավ. նորը տակավին առջևումն է։ Բայց ինչպես է և ինչ պիտի լինի այդ նորը։ Եթե մենք քեզ հետ ապրենք մինչև այն ժամանակ, եթե ուսանենք այն ժամանակի պետքերը և շրջապատող աշխարհի հասկացողությանց գումարը, այն ժամանակ միայն կարող եմ քեզ ասել, թե ինչպես բան է այդ նորը, բայց մինչև այն ժամանակ ինձնից պատասխանի մի սպասե, ես փիլիսոփա չեմ։

Եւ այժմ, ես այսչափ միայն գիտեմ, որ կորցվածը պետք է փրնտրել, երբ որ այդ բոլորը ձեռք գա, այն ժամանակի մարդը ինոր հոգա և ստեղծե ինչ որ իրեն պետք է. ես ինչ իմանամ, թե ինչպես կլինի մարդու հասկացողությունը հարյուր տարի նորը, որ հիմիկվա գաղտղություն անեմ այն մասին։ Նախնիք որ կորցնում էին, մի՞թե այդ կորուսը միշտ զգալի էր. քավ լիցի, շատ կորուստներ, որ այժմ մեր հասկացողությամբ կորուստ են, նոցա աշքում եղած են որպես վնասակար բաների մերժողություն։ Եվ գիտե՛ն նոքա, որ նոցանից հարյուր տարի նորը նոցա ժառանգները որյուն-քրտինքով պիտի աշխատեն վերստին որպես մի կորած բան փնտրել, ինչ որ նոքա կամքով, ինքնությամբ կամ անխտհեմությամբ մերժել ու ջնջել էին։

Վե՞րջը։

Վերջը, խելքդ գլուխդ հավաքիր, աշքդ բաց և առնդ քամիին բացած լոկ գաղափարների ետևից մտն մի գար։ Օգոստ. 13

Գրանովսկին իր քննության մեջ Geschichte der Denk und Glaubensfreiheit im ersten Jahrhundert der Kaiserherrschaft und des Christenthums von Ad. Schmidt, Berlin, 1847 *(Դավանության և մտքի ազատության պատմությունը կայսերության և քրիստոնեության առաջին դարում. Ադ. Շմիդտ։* Собрание сочинений Гран[овского], Т. 2, стр. 276) [գրում է]։

«Այսպես է ժողովրական և քաղ մեծի մասին ասժանի (այդ ասվորության, այսինքն չկարգացվելու և անտես լինելու) հակառագիրը գերմանական գրքերի։ Ջնայելով, որ անդադար ուսումնասիրում են հին օրինակները (այսինքն հին հեղինակները), գերմանական ուսումնականք չեն ուանլ առնուլ նոցանից գեղեցիկ և կենդանի ձևով ավանդելու դաղտնիքը։ Այս պատճառով, շատ անգամ պատահում է նոցա խոսել Հունական արվեստի համեմատական գեղեցկության մասին այնպիսի լեզվով (այսինքն ձևով), որ կարո՛ղ է հարկադրել երկբայել, թե այդ արվեստը կարող էր ազգեցություն ունենալ իր պաշտոնների ճաշակի վրա։ Սիծադեկին այն է, որ շատերը այս ձևի հետ վարվելու կատարյալ ապիտությունը վերագրում են գերմանիկ ցեղի ավելի հիմնավորության (Gründlichkeit)։

Սենեկան խոստովանում է յուրաքանչյուր մարդկային անձին սըր-

բություն. homo res sacra*.... «Ամեն մարդ ազնիվ է, որովհետև առաջանում է աստուծուց. նրա մեջ ապրարանության մեջ կա մի մուխ աստիճան, անցիր նորա վրայից, կանգնիր բարձր: Վերացիր դեպի ազնվության աղբյուրը, դեպի այն, որից մենք ամենքս առաջացել ենք—մենք ամենքս աստուծո որդիք ենք»: Այս խոսքերի մեջ հնչում է բրիստոնեության նախապատրաստությունը: Հռոմեական ցիրկի արյունոտ տեսարանները զարթնցնում են նորա մեջ նույն զգացմունքը, որ հետացնում էր այդ տեսարաններից առաջին քրիստոնյաներին: Նա պատմում է դեպի Թամաշավորքը գառն խոսքերով. «Առանց բարկության, առանց երկյուղի, զրոսանքի համար, դուք մահի տալիս եք մարդը և հրճվում եք նորա հոգեվարական տխրությամբ: Դուք կասեք ինձ, թե նորա հանցավորք են և մահի արժանի դատվածք. համաձայն եմ, բայց ինչ հանցանք եք գործել դուք ինքներդ, որի համար պատապարտվել եք ականատես լինել մահապարտության» (նրնս 284):

Ասես թե իրավունք ունին, մինչ կարծում են թե Հեգելը իր փիլիսոփայությամբ կամենում էր Գերմանիո Մարիավելին լինել և իրավ որ, ինչպես նորա վարդապետությունը համեմատվելով դեպքերին՝ կերպարանափոխ է լինում, ինչպես վերջինը չնչում է առաջինը: Բայց Ֆլորենտացի պուպլիցիստը, մեզ թվում է թե ավելի խոր մտած է իր առջևը դրած գաղափարի մեջ, ավելի համարձակ հաստատությամբ բռնել է ամեն կողմից իր առջևի խնդիրը: Հեգելը իր քաղաքական ապարհնը «Գերմանիան տերություն չէ այլևս» երեմիականով, ավարտեց իր ընթացքը անգլիական կառավարության ընդդեմ անհիմն զգեցկությամբ: Զարմանալի է այս կողմից նմանությունը Հեգելի և անգլիացի Բուրքի միմյանց հետ: Բուրքը իր ծերության ժամանակ, մանավանդ ընկճված իր որդու մահի կսկծի տակ չկարողացավ կլլել Ֆրանսիո մեծ ոնոլյուցիոն: Բուրքը, որ իր բոլոր կյանքը և ուժը մինչև այն ժամանակ թափել էր ազատության պաշտպանելու համար, չվախենալով նորա կերպարանքներից, Բուրքը, որ յուր հայրենիքի անձնական օգուտը երկու ձեռքով զոհում էր ամերիկյան անկախության, որի մեջ ազատության նախապատմությունը ուներ մի հզոր փաստարան երեսփոխանական պալատի մեջ, իր հոգու վերջին կարողությունքը ամենայն ուժգնությամբ գործ դնելով Ֆրանսիո հեղափոխական շարժողության, խաչակիր արշավանք քարոզեց Ֆրանսիական ազգի ընդդեմ: Նա հիվանդ էր այն ժամանակ հոգեպես. որդու կորուստը զրկել էր նորա ուղեղը, ուստի և նորա աչքի առջև երևում էին միայն Լուդովիկոս XVI-ի և Մարիա Անտուանետտի արյունոտ գլուխները, այդ գործել էր նորա համար անշարժ գաղափար (idée fixe). նա էլ չէր հիշում Լուդովիկոս XVI-ի բռնակալու-

* (Լատ.) Մարդը սրբություն է: Խմբ.:

թյունքը, որ շարունակ 50 տարի ոչ միայն քամեցին Ֆրանսիո արյունը և հոգին, ոչ միայն իրը փոխանակեցին անառակ և փտածին կեղևի հետ, այլև հանգիստ շավիղ բոլոր Եվրոպային։ Նա մոռացել էր թե ինչպես այդ փառամոլ և բորբոքուն ճակատնուիրյամբ վարակված Բուրբոնը այդ փառամոլ և բորբոքուն ճակատնուիրյամբ վարակված Բուրբոնը ամեն կողմից վնասում էր Անգլիային, երբ Կարլոս II և Հակոբ II Սթյուարտները լուդովիկոսի արծաթագին վաստակներ դառնալով, մանավանդ այս վերջինս, ննջում և դավում էին Անգլիո ազատութեան։ Նա մոռացել էր բուրբոնների (Լուդ[ովիկոս] XIV և XV) հետամտութիւնքը և ձգտողութիւնքը վիլհելմ Օրանժյանի ընդդեմ, և պաշտպանութիւնքը նախ քան Ստյուարտ Հակոբ II-ին և վերջը նորա որդուն, որ 70 տարի թագ խնդրեցավ Հակոբ II-ին և վերջը նորա որդուն, որ 70 տարի թագ խնդրեցավ մուրացկանութեամբ։ Բուրբը էլ չէր հիշում, թե ինչ որ լուդովիկոս XIV-ը սկսել էր, XV-ը շարունակել էր, ավելցնելով իրեն անառակութիւնքը, շռայլութիւնքը և ֆրանսիական ազգի հարստահարելը. նա մոռացել էր, որ XVI նոցանից ոչ միայն պակաս, այլև ավելի էր անցել ամեն շափ ու կշիռ և ֆրանսեզների համբերութիւնը եթե ապառաժ լիներ, չէր կարող դիմանալ որ չպատռեր։ Նա էլ չէր հիշում Անգլիո ազատութեան կարլոս I ձեռքից, չէր հիշում երկայն-պառլամենտը, քաղաքական պատերազմները և այսպես անվանված պոչի (երկայն պառլամենտի մնացորդքը) լրբութիւնքը։ Բուրբի ժամանակ անգլիացիք առանց շունչ էին քաշում, ազգի ազատութիւնը վազուց ահա գրած էր Ալբիոնի ապառաժների վրա։ Նա միայն մեկ խոսք ուներ—մա՛հ ֆրանսիական անառակածներին, մա՛հ թագավորապաններին, մա՛հ ապստամբներին։

Գերմանական ազգը մեծ ազգ չէ և նորա փորքութիւնը և մեծութեան անընդունակութիւնը արդեն իրողապես երևում է նորա քաղաքական կյանքում պարզ և շոշափելի կերպով։ Երեսունից ավելի կտորներից քաղկացած նեղսիրտ և միմիայն ֆրանսիական մեծ հեղափոխութեան շնորհքով մի փոքր մարդ դարձած կառավարութիւններով, մինացնում է այն լուսակամարը, որ կապել էին նորա վրա Գյոթեն, Շիլլերը, Լեսինգը, Քանտը և ուրիշ շատ տեսութիւնքը իրենց մեջ կենտրոնացած, իրենց կնիքը խոր տպավորում են իրենց հպատակների վրա, որոնց թող կրոնական, այլև ընկերական կյանքի թշնամութիւնքը, մանր և կեղտոտ դիպվածներում միշտ ոտնահար են եղել և պիտի միշտ լինին գերմանական։

Ընկած լինելով այսպիսի խեղճ վիճակի մեջ իրողապես, գերմանիկ ոգին իր ելքը աշխատեցավ փնտրել անպտուղ իդեալների մեջ և մինչև այսօր չդադարեցան բերանբարց փիլիսոփաները, որ քամի կուլ տալով իդեա քարոզեցին, առանց այդ սքանչելի իդեան երբևիցե, իրենց համար հասկանալու։ Իրավունք ունի հռչակավոր Բոկլը գտատեսարանելու կարող

դարեջրի շոգիներով չէ բթացրել իր ուղեղը, ասել է ուրեմն և դեռ է նրբ նրնա առ նրնա քաշում է իրական աշխարհի հետ, նա դատապարտել է և պիտի դատապարտե։ Ընդհակառակ այս բոլորի վերա, երբ Հեգելը քաղաքից քաղաք և կայսրությունից կայսրություն իր աքանչելի մտահայաց դիտողությունները կարդալով մատն դալուց հետո, վերջապես Բեռլինի մեջ 1830—1831 թվերի վերջին անդամ կարդում էր պատմության փիլիսոփայության մասին, Յերանտու ռևոլյուցիոնի ոգին վերատին տեսքեց։ Յերանտական վուլկանական բնության ցնցյունը մեկ դիշերվա մեջ կործանեց Բուրբոնի գահը, որ դաշնակիցների քաղաքականությամբ և պաշտպանությամբ վերանորոգվել էր մեծ հեղափոխությունից հետո։ Ահաբեկության տարածեց ամեն տեղ այս ցնցյունը և Հեգելը ընկճվեցավ այս երկյուղի ծանրության տակ, ինչպես Բուրբը ընկճվել էր իր որդու մահի ծանրության տակ։

Շատ դեղեցիկ նկատում է Հայմը Հեգելի հույլ լարը. նա ասում է. «Վարելի է նորան շարշարում էր մի նախազդացություն, թե այդ տիեզերական նոր շարժողությունը տարածվելով առավել և առավել կարող է համփից հանել ոչ միայն ազնվությունը, այլև համակարգությունը՝ իդեալիզմի համակարգությունը»։

Եվ արդարև երկյուղը, թե համաշխարհական հանգստությունը դարձյալ կխանգարվի, հանգիստ չէ տալիս Հեգելին։ Շարժողության ոգին մտավ նաև Անգլիա, որ անհողդողդ պահպանել էր իր կառավարչական ձևերը և առաջին ֆրանսիական հեղափոխության մրրիկը ցամաքահողի մեջ այնքան դեպքեր պատճառելով անվնաս անցել էր նորա դլխից։

— Վերանորոգենք—ասում են Բոսանկի բարեկամքը—որ կարողանք պահպանել. ենդլային ամբոխմունքով խռնվում է ազգը պատմենտի դռներում, որ կարողանար առանալ թևերա ուժի գործադրությամբ կամակոր տորիների համաձայնությունը ազգային երեսփոխանական համակարգությունը վերանորոգելու համար։ Տեսնելով այս, Հեգելը նորից պուպլիցիստ է դառնում։ Նա հրատարակում է Պրուսիո տերությունական լրագրում իր վերջին հոդվածը «Անգլիական վերանորոգության խնդրի վրա քննություն» անունով, «Bill of reform»[1]. 14 օգոս.

Ահա այս հոդվածի մեջ Հեգելը նմանում է հալյուցինացու մեջ ընկած Բուրբին։ Հայմը այսպես է խոսում այս հատվածի վրա. «Այս հատվածի մակարդը է երկյուղը, թե տերության վերականգնյալ վիճակը կարող է խանգարվել, իսկ այդ կարծիքը ամենդեղու եղանակի մեջ տեսական ծայրահեղ իմաստասիրությունը (умничанье) խառնվում է պրուսական աստիճանավորի անուրջների (мечта) հետ։ Հեգելը չէ պախարակում ձգտողությունը և վերանորոգության խնդրի (bill) քննվանգակությունը, այլ դատապարտում է նույնիսկ վերանորոգության հակամիտությունը, որովհետև վտանգ է տեսնում այդ բանի մեջ։ Անգլիական տերությունը դտնվում է—ինչ հավատանք դիմանական փիլիսոփայի խոսքերին—այնպիսի դրության մեջ, որ նա ամեն ուրիշից

«ավելի բարվոքում է պահանջում, բայց միևնույն ժամանակ ամեն «ուրիշից պակաս է ընդունում նորան։ Մանրամասնությանց՝ խոր հար- «գության արժանի դիտությամբ, Հեգելը ցույց է տալիս անգլիական «կառավարչության առույգ կերպերը։ Առանց պայմանի պիտի հա- «մաձայնել կրիտիկոսի (Հեգելի) հետ ամեն բանի մասին, ինչ որ նա «ասում է օրինակի համար անճոռնի անդրանկական (майоратный) «կառավարության, հոգևոր ծուխերի անկարգության և ուրիշ տեսակ «արատների, անգլիական եկեղեցու դրության, անճոռնի կառա- «վարության Իռլանդիո և նորա տնտեսական և բնակրական հարաբերու- «թյանց մասին։ Ինչպես Հեգելը, նույնպես ոչ ոք չի պաշտպանել—թող- «նելով այդ իրավունքը ընչին հնապաշտների— դարերի ժանգը, որ այ- «լանդակում է անգլիական կառավարչությունը։ Տակավին կարելի է «համաձայնել և այս բանում, թե անգլիական կառավարչությունը (уч- «реждения) երևցնում են մի անհոգ հավաքույթ աստրատական սահմա- «նադրության», որի հակառակ նոր տերութենական կառավարչության «ներքին ազնվության հայտնի սկզբանց վրա հիմնված ավելի պարզ «ձևերը, գոնե տեսական հարաբերությամբ կարող են համարվել որպես «առաջադիմություն»։

Այս խոսքերում, պ. Հայմը մեծապես սխալվում է. և դորա պատ- ճառն է դարձյալ գերմանական փիլիսոփայությունը։ Նորա որպես առա- ջադիմություն ընդունած «պարզ ձևերը», որ հիմնված էին նոր տերու- թենական կառավարչության ներքին ազնվության վրա, ի՛նչ արդյունք ցույց տվեցին, երբ գործ դրվեցան։ Ստույգ է, որ պ. Հայմը ինքն էլ ցույց տվեցին, երբ գործ դրվեցան։ Ստույգ է, որ պ. Հայմը ինքն էլ դիտում է այդ բանի գործնական ամլությունը, ուստի և սահմանափակում է առաջադիմության ասպարեզը «գոնե տեսական հարաբերությամբ» խոսքով։ Զարմանալի է, որ չկամին հասկանալ, թե մի փոքր բերի, բայց գործադրելի ձևը ավելի նախընտիր է, քան թե գաղափարական կա- տարյալը, որ բոլորովին անգործադրելի է։ Ահա, շատ ընտիր գաղափար, ստույգը, որ չենք կարող նորան մարմնացնել, չենք կարող գործ դնել, օգուտը բայց որ չենք կարող նորան մարմնացնել, չենք կարող գործ դնել, օգուտը ինչ է։ Բայց պետք չէ մոռնալ, որ գերմանական շուր գաղափարի գերի փիլիսոփայության իջնելու կետն է այս։ Ես անհամ կերակուր եմ ուտում, փիլիսոփան չէ հավնում և իր մտքի մեջ ավելի համեղ կե- րակրի գաղափար ունի և ասում է, թե գոնե տեսական հարաբերությամբ իմ կառավարության առգտանված ձևերով, այսօր առաջինն է Եվրոպիո մեջ ազատության մասին, և անգլիական մարդը իրավամբ կարող է պարծենալ իր ազատությամբ, մինչդեռ ուրիշները և մանավանդ խեղճ ողորմելի գերմանացիք ցեխում խրված, նախանձու տրաքում են և ատակավին հավան էլ չեն Անգլիային։ Տո՛, մի նորա չափ ազատություն ձևոք բեր, հետո խոսիր է. զարտարաղցու ասածը չլինի «ըռխին յաշիր»։ Բայց մենք շատով կհասնենք այն թվվատին, որի տեսությունը միայն պրծացնում է գերմանացու շապիկը։ Նա չէ կարող տանել կամ տեսնել

երբևիցե կամ ուրևիցե «հանրապետական տարր» սահմանադրության մեջ. տրանից վախում է գերմանացին, ինչպես ագռավը խրտվիլակից, առանց քննելու թե այդ երևույթը ամենևին անվնաս է, եթե գործ է դրվում միայն որպես զուգակշիռ պահող տարր ընդդեմ նեղսիրտ դրականության։

«Բայց», շարունակում է Հայմը, որպես թե սթափելով և հետևյալ դրությամբ իր առաջվա կարծիքները հիմն ի վեր կործանելով, «բայց»— ասում է նա, «չէ կարելի երևակայել ավելի միակողմանի դատողություն, քան թե այն, որ բացառապաշար հիմնված է անգլիական տերության ներկայի այս մութ կողմերի վրա, և դրա պատճառով չէ ուզում տեսնել նորա մեջ շրջան առնող ազատ ուժերի հարատևությունը։ Անյատեղ վերստին կատարվում է մեր խոսքը, թե ազատության կենդանի գործողությունը (процесс) մեր փիլիսոփայի համար, ըստ ինքյան ոչինչ արժեք չունի և թե նա (Հեգելը) դորա հակառակ տեսնում է ազատության բոլոր արժանավորությունը հասկացողության համակարգության մեջ և առարկայապես (объективно) կազմակերպված, հայտնի կարգի մեջ բերված թևև անազատ, դիվանապետական (bureaucratique) պոլիցյակազմ ազատության մեջ»։

Հայտնի է, թե ազատությունը իսպառ կործանել նախադասությունը, համազոր է վերը մեջ բերված երկար բարակ ճառին, թե ի՛նչպես է Հեգելի կարծիքը ազատության մասին։ Ինչ որ Հայմին է վերաբերվում, նա ասես թե մի սառնություն է զգում իր մարմնի մակերևույթի վրա, որ տարածվում է, երբ հիշում է այն տեսակ փիլիսոփայական այլանդակություններ և անմիջապես մերժելով նորանց, աշխատում է բուլացնել անախորժ տպավորությունը այդ ժանդատ գաղափարների՝ թե՛ իր և թե՛ լսողի վրա։

«Հասկանալի է»,— շարունակում է Հայմը,— «թե ինչ խորհուրդ պիտի վերագրել Հեգելի սահմանադրական շինվածքին և նորա պատասխանատու ինքնավարությունը (самоуправлении) հարգելուն։ Ոչ մի տեղ ինքնավարության սկզբունքը չէ հասել մինչև այդ աստիճան պարունակության (объем) այդպիսի մեծության և դորա հետ միասին ոչ մի տեղ, այդ չափով և այդպիսի ուժով չեն երևել նորա օրհնած հետևանքը, ինչպես անգլիական պառլամենտականության մեջ»։ Ի վերջո՞, խոստովանեցավ դոնն Հայմը, թևև մի փոքր առաջ համաձայնում էր թե անգլիական սահմանադրությունը անհոգ հավատալի է տորտատական սահմանադրությանց»։

«Հեգելի կարծիքով, այդ պառլամենտականությունը շահմարան է պոլիտիկական ապահականության և անխնդրության։ «Ձևավոր ազատության ազգակը և փայլը», ասում է սրանչելի փիլիսոփան — «թույլ չէ տալիս ոչ առույգ ազատությանը ածել և ոչ իսկ հիշել նորան։ Ազատության դիմակի տակ դոյացել է շահատեր և ագահ օլիգարխիա, որ գործակից էր (օգնել էր, содействовавшая) ամենևին գարշելի հանրապետա-

«կանության. (15 ogпum.): Ստորաստական արտոնությունքը ժամանակի «բնաձրությամբ արմատացած նատկանությունը և ամենից ավելի ազգի «բազմության անհատացողությունը, նույնպես և խաժամուժ ամբոխի «ախտանքը, ահա այն տարերքը, որոնցից բաղկացել է անգլիական սահ-«մանադրության կյանքը»:

«Անգլիական պառլամենտի մասին Հեգելի դատողությանց մեջ, լի-«քը չափով կարելի է նկատել նույն սահմանափակությունը, նորա նա-«խապաշարմունքներով, և նույն հոգեկան ախտավոր ամբոխմունքը, որ «հատուկ բնավորություն է տալիս պոլիտիկական կուսակցությանց դա-«տողությանցը, երբ նորա խոսում էին իրենց հակառակ կուսակցությանց «մասին: Պրուսական դիվանապետականությունը միավորված գերմա-«նական դաղափարականության (idealism) հետ, կուսակցություն է կազ-«մում անգլիական սերության կարդադրության և Բենթոնի հայրե-«նակցաց գործական-էմպիրիկական խորհրդի ընդդեմ: Ինչպես կուր-«մարկյան կիսատապան (юнкер) դատողություն է անում ամեն ոչինչ բա-«նի վրա, նույնպես է Հեգելի դատողությունքը անգլիական ազատության «հիմնական սկզբանց մասին: Հնրիք չհամարելով ընտրողության և կաշա-«առնլու պատճառով առաջացած ամբոխմունքի և անկարգության ամենա-«սաստիկ կորուկ գծերով նկարագրություն, նա մինչև անգամ խոսակ-«ցությունքը (առաջարկությունքը և դիմադրությունքը) և պառլամենտա-«կան ճառերը համարում է որպես չնչին փոխանակիչք (замен) իմաստու-«թյան, որ նստած էր կանաչ մահուդի առջև և որ երեցնում էր իր ննջա-«կայությունը հրովարտակների (акт) ահագին բազմության պատրաս-«տությամբ, ինչպես մի հրովարտակների գործարան: Այդ ժողովների «մեջ ժամանակի մեծ մասը անցնում է, անդամների իրենց անձնական «գրության բացատրությամբ և նորա առաջարկում են իրենց կարծիք-«ները ոչ որպես գործին պատկանավոր անձինք, այլ որպես արտոնական «(привилегированный) դասության և որպես առենախոսք: Այդ առե-«նարանների գեղեցկախոսությունը «անձնագովությամբ լիքը դատարկա-«բանություն է» — միայն խելացի հայտարարությունքը այնպիսի մար-«գերի, ինչպես է Դուքս Վելլինգտոնը, ազդմություն են գտնում «Հեգելից»:

Մեզ շատ հասկանալի է, թե ինչի՞ համար Դուքս Վելլինգտոնի հայ-տարարությունքը հանդիպում են Հեգելի հարգության: Վելլինգտոնը իրեն զորապետ և ռազմագետ (стратегик) այո՛, ունի հոյակապ արժանավո-րություն, բայց պատերազմի դաշտից դուրս, մարդկային և քննկրական հարաբերությանց վերաբերությամբ, նորա տեսությունքը, հասկացողու-թյունը և հայացքը փոխադարձ չափով (пропорция) փոքրանում են և մոռանում այն ատեհման ոչնչության, որ նաև մի շատ հասարակ քաղա-քացիս և շատ հասարակ պուպլիցիստ չէին կարող առանց ամաչելու տր-տունել իրենց բերնից այն խոսքերը, ինչ որ գրված էին Դուքս Վել-լինգտոնի հայտարարությանց մեջ: Նա դրականապես ընդդեմ էր ամեն-

նայն վերանորոգության և պատերազմական դրական կարգերը (дисциплина) շատ խոր տպավորություն արած լինելով մեծ զորապետի ուղեղի վերա, դարձել էին նորա համար sine qua non*. նա կարծում էր թե ինչպես պատերազմի հաջող ելքը շատ դիպվածում կախվում է գնդի անձայն հնազանդությունից, այնպես և մարդկային կյանքը ավելի հաջող ընթացք կունենա, եթե այն ռազմական փիլիսոփայությունը ընկերական և բարերար սկզբունքների տակ կերպարանվելով հիմք դառնան ներքինական սահմանադրության կազմվածքին։

Իհարկի, ինչպես ուրիշ շատերը և մանավանդ Դուբս Վելլինգտոնը առատորեն քաղած լինելով իր սկզբունքների արդյունքը պատերազմի դաշտում, մոռանում են, թե պատերազմը մարդկային կյանքի մեջ, բնական, սովորական երևույթ չէ, այլ ցավագարական և պատահական, որի օրենքը երբեք չէ կարող դրվել մարդկային սովորական և ընկերական կյանքի վրա, առանց վնաս տալու այդ կյանքի բնական առողջության և առանց պատվաստելու այն ցավագարական ախտերը նորա կազմվածքի մեջ։ Պատերազմում մի ժամ, մի րոպե հերիք են շատ անգամ զարմանալի հույսեր ոչնչացնելու, աշխարհի դուռակիշերը խանգարելու համար և այդ մի ժամը կամ րոպեն կարո՛ղ է և հարմարություն ունի ջերի այն ղլված վիճակում դրական հնազանդություն գնվիլ։ Զինվորը դուրս է եկած իր ընկերական կյանքի շրջանից. նա ընկերական և քաղաքային կյանքի մեջ պաշտոն չունի. նա այն միջոցին ճնշված է նեղ շրջանակի մեջ և որոշված նպատակով մեռցնել կամ մեռնել։

Բայց այնպես նեղ, որոշյալ և սահմանափակ չէ մարդկային կյանքի առողջ վիճակը։ Զինվորը միայն ջնջամու հետ կարող է զարկվիլ, ուրիշ ոչինչ պետք, ոչինչ հարաբերություն, ոչինչ վիճակ չէ կարող նորան պատահել։ Իսկ մարդկային առողջ կյանքը իր լայն ճանապարհի վրա ամեն վայրկյան զարկվում է անթիվ պետքերի, անհամար հարաբերությանց և վիճակների հետ։ Հայտնի է, թե այս երկու մոմենտքը, պատերազմը իբրև ցավագարական (патологический) և առողջ կյանքը իբրև բնիկ (նախադասական (нормальный), երբեք չեն կարող միևնույն լարով չափվիլ, միևնույն ուղղությամբ քայլել, առանց անօգուտ և վնասակար դառնալու։ Բայց ի՛նչ անես, որ Հեգելի պես մարդը փրկություն է տեսնում բնական ֆիլոզոֆիկոսների ձեռքով զարդնված շղթայի մեջ, քան թե այն սահմանադրության, որ միմիայն անգլիական մարդը կարողացավ իրագործել և որին հաջորդից ուրիշ կերպարանքով նորա գաղթական եղբայրը՝ Հյուսիսային ամերիկյան դաշնակցությունը։

Ո՛վ չէ տեսնում, որ անգլիական սահմանադրությունը տակավին չէ հասած իր վերջին կատարելության, բայց խնդիրը այստեղ է, թե այդ կատարելությունն ասվածը արդյոք անշա՞րժ նպատակ է, գնալ որը մոտեցնելո՞ւ ամեն մի հաջող քայլափոխ, ամեն մի որոշյալ ժամանակամիջոց.

* (Լատ.) Անխուսափելի եմր.։

չէ՞ որ մարդկային հասկացողությանց չափով և կատարելության գաղափարը շարժում է դեպի առաջ։ Հայտնի է, թե փրկությունը դրած է դեպի կատարելությունը անդադար ձգտողության մեջ, որովհետև այդ երևույթի մեջ երևում է առողջ կյանք։ Եվ մարդը կամ իր քաղաքակրթության աստիճանից պիտի հետ դառնա, կամ բարոյապես պիտի մեռնի և նորա հասկացողության շրջանը անբացվելի պիտի փակվին, որ նորա կատարելության գաղափարը մնա անշարժ, բայց և այն ժամանակ տակավին չէ կարող հասած լինել նորան, որովհետև գաղափարի և նորա մարմնանալու մեջ, կա ժամանակ և ուժ, որ պիտի գործ դրվի մինչև այն կետը, բայց և կետը կվազն առաջ ձգտողության ուժգնության չափով։ Սրանից հետևում է, որ մարդը դադարելով կատարելագործվելու ձգտողությունից, չէ կարող այն վիճակում մնալ, ինչ վիճակի հասել էր, քանի որ ձգտողության զսպանակը գտնվում էր լարված վիճակի մեջ։ Նա պիտի հետ դառնա այն բոպեից սկսած, երբ կանգնել էր իր ճամփի վրա։ Հայտնի է, թե այս բոլորը կարելի է մտածել մի մարդկային ընկերության վրա, որ ամում էր ինքնակայապես։ Իսկ այն ընկերությունը, որի հասակը չափվում է հոգեբարձության ազատ կամքից առաջացած չափով, այնտեղ հանդեսը պատկանում է ֆրիդրիխոսներին և մարդկային ընկերությունը իջնում է անչափահաս որբերի աստիճանը։

Մյուս կողմից քննադատելով անգլիական սահմանադրությունը, ինչպես կարելի է՝ դադարել միմիայն նորա թերությանց վրա, նեռնելով միանգամայն բոլոր հաստատմատը և փրկարար դրությունը, որոնց միանգամայն բոլոր հաստատմատը և փրկարար դրությունը, որոնց հիմքերի վրա ամում է անգլիական մարդու իրավամբ պարծենցած ազատությունը։ Բայց սրանից, ՞ո՛ղ նորան դատապարտե մի ավելի ազատ ուժյունը։ Բայց սրանից, ՞ո՛ղ նորան դատապարտե մի ավելի ազատ և ավելի վսեմ սահմանադրությանց ենթարկված մարդ։ Բանը մինչև կոմիսիոմ է բարձրանում, երբ քաղաքականապես հզակատր եղած և մարդկությունը կյանքին բոլորովին անտեղյակ և թափառական գաղափարներ ստուկ գերմանացին է բերան բանում անգլիական սահմանադրության վրա, որի լոկ Habeas Corpus ակտը[6], թողում եմ մնացածը, ամբողջ Գերմանիոս հավասար պին ունի։ Եվ երբ անգլիական սահմանադրությունքը միջին դարերից սկսած բնական ճամփով աճելով աճում էր, բոլոր ցամաքահողը մինչև վիզը թաղվել էր սարկության մեջ։ Բռնակալությունը, բարքի ապականությունը, անանկությունը և մարդկային արժանավորության ուրացողությունը էին նորա ոգին։

Ի՛նչ տեղ էր Գերմանիան, երբ մարդկային արժանավորությունը իր ձեռքը անցուց Անգլիս գայիտոնը, թագը միայն թողնելով իր թագավորին։ Հայտնի է, թե Գերմանիան մարդ դարձավ Ֆրանսիս XVIII դարու փիլիսոփայությամբ, որի վերջին խոսքը էր 1789 և 93 թվականները։ Բայց ո՛րտեղից հանկարծ բխեց XVIII դարու այդ փիլիսոփայական հորձանքը, որ հեղհեղեց Եվրոպա և շարաշար գործ գրվնցավ։ Երբ անգլիացին ազատությամբ, որի վերջին խոսքը էր 1789 և 93 թվականները։ Բայց ո՛րտեղից հանկարծ բխեց XVIII դարու այդ փիլիսոփայական հորձանքը, որ հեղհեղեց Եվրոպա և շարաշար գործ գրվնցավ։ Երբ անգլիացին ազատությունն անուններով պատերազմում էր իր դավաճան թագավորի՝ Կարլոս առաջինի հետ, երբ պիջողությունը պիջողության քամակից որպես մի

արքանով քաշում հանում էր թագի իրավատուիյունից, երբ ի վերջո անհար մնալով ազգի ազատուիյան, ինև սխալ գործերով, դոհ էր բերում դրուժան թագավորը, ի՛նչ բանի մեջ էր նույն ինքը Ֆրանսիան, Գերմանիո և բոլոր ցամաքահողի, իրավամբ համարված լուսատու ճրագը։

Այո՛, մի բոպե փայլատակեց Հենրիկոս IV-ի ազդեցուիյունը բազաբակրթուիյան վրա. նորա հաջորդը, Րիշելիոն, չեմ հիշում անունով, միայն թագավոր Լուդ[ովիկոս] XIII, ունեցավ նույնպես փրկարար ազդեցուիյուն քաղաքակրթուիյան ընդհանուր գումարի վրա իր 18-ամյա վարչուիյամբ. սորա աշակերտ Մազարինին, Լուդ[ովիկոս] XIV-ի տղայուիյան և մանկուիյան ժամանակ կառավարելով, նույնպես առաջ նայեցավ, բայց այն հիսո՞ւն երկաթի սարիները, որ անցան Լուդ[ովիկոս] XIV-ի ձեռքից. այն վերապլները, այն շռայլուիյունը, այն կեղծավորուիյունը, մարդկային անհատական, որպես նաև ընդհանուրի արժանավորուիյան կամ խորհրդի ուրախուիյունը, հիմնեցին, կազմեցին, պատրաստեցին և մեջտեղ դրին մի այնպիսի սոսկալի բռնուիյուն, որի դեմ այնպիսի մեծ և զարհուրելի ցնցյուններ գործեց, երբ 79 և 93 դուրս էր գալիս Ֆրանսիական կազմվածքից։ Վաղուց սովորուիյուն է եղած դպրոցի բնավորական ազդեցուիյունը իսպառ ուրանալու համար, մանավանդ նրա կամենում էին բամբասված դպրոցը պաշտպանել, ասել, թե Ալեքսանդր Մակեդոնացին Արիստոտելի աշակերտն էր, Ներոնը՝ Սենեկայի, իսկ Վոլթերը՝ Հիզվիթների։ Իհարկե, ով որ չէ ուսել թե ի՛նչ է և ո՛վ է Վոլթերը և միայն անունն է լսել և ճանաչում է նորան որպես արդյունք Հիզվիթական դպրոցին, այնպիսին պիտի մտածե, թե XVIII դարու փիլիսոփայուիյունը աղբերանում էր Հիզվիթներից։ Բայց ով որ ճանաչում է XVIII դարում ներգործող փիլիսոփաներին ավելի մոտից, նա տեսնում է, որ նոցա բոլորի փիլիսոփայուիյունը փոխառնված է Անգլիուց, որովհետև երեք քառորդը այնտեղ մնացին տարիներով և մոտից տեսնվեցան ազատուիյունը և համեմատելով նորան իրենց հայրենիքի տարուիյան հետ, հղացան այն մեծ կրակի կայծը, որի բոցը պիտի այրեր և լափեր ինչ բանի որ պատահեր, թե լավ և թե վատ։

Ֆրանսիական ռեվոլյուցիան անգլիական փիլիսոփայուիյան արդյունք է. Հիզվիթները կամ ցամաքահողի բնակիչները ընդունակ չէին այդ բանին։ Սուտդ է, մինչև այն մեծ հեղափոխուիյունը իսկապես Ֆրանսիո աչքը տնկված էր Անգլիո վրա, բայց հեղափոխուիյունից հետո այդ երկու աշխարհների պաշտոնքը փոխվեցան և ռեվոլյուցիոնը իր կարդով ազդեցուիյուն ունեցավ Անգլիո ավելի առաջադիմուիյան վրա։ Բայց թե ազատուիյունը մի վանմական ավանդ է, ապա այդ ավանդը պահեց տոլերի հոգածների երեսից Անգլիան։ Մի փոքր ժամանակ անցավ այդ ավանդը Ֆրանսիո ձեռք, բայց նա չկարողացավ պաշտել նորան նպատակի համեմատ ձեով։ Վերատին կործանվեցավ այնտեղ ազատուիյան սիրտը և նորա ավերակների վրա բռնապետը մերկեց իր երկաթը։ Ազատուիյունը զրկված ազատասիրելուց դեպի այն կողմին, որ միայն մի նեղ

ջրանցքով բաժանվում էր Ֆրանսիուց և այն օրից մինչև այսօր, մինչդեռ ցամաքահողը ազատությունը գտնելով և կորցնելով հոգին բերանը նկավ, Անգլիան, իր այն ծերի համարված, և իրավամբ մի քանի պահպանություն ունեցող սահմանադրությամբ, ավելի և ավելի հաստատուց ազատության ծառի բունը և այն՝ բոլորովին բնական, խաղաղ և հանդարտ աճելությամբ, որին հազիվ թե տրամադրություն ունի ուրիշ ամենմարդ, որ ծնած չէր Բրիտանական կղզիների վրա։

Մի քանի ծերություններ, և վնասակար դրություններ, ինչպես և անդրանկական համակարգությունը, այո՛, մեր աչքում շատ սոգաանելի է, բայց հարցնենք անգլիացուց, և տեսնենք թե այդ համակարգությունը այսքան դարերով տևում է սահմանադրության մեռա՞ծ ոտոի ուժով, թե՞ թագի հարստահարելով։ Ոչ առաջինը և ոչ երկրորդը. այդ բխում է բուն անգլիական կյանքից, և նորա համար բնական երգը այդ է միայն։ Ի՛նչ անեն այստեղ վիգը կամ տորին, ինչ անեն երեսփոխանական ժողովը կամ թագը։ Հայտնի է, թե քանի որ այդ օրենքը բխում է ազգի հոգուց և հասկացողությունից, ամեն նորմուծություն նորա ընդդեմ պիտի ծանրանա ազգի վրա որպես հարստահարություն և ազատ իրավունքի բռնաբարություն։ Ով ո՛վ կարող է գործ դնել այդ հնարը։ Ով այն, որ անգլիացու աչքում բնական է և բաների կարգում, ի՞նչպես կարող է ենթարկվել արբագրության։ Սորանից երևում է դարձյալ, որ անգլիական սահմանադրությունքը բխում են ազգի հոգուց, և դուրսից դրված չլինելով, կարողանում են այնպիսի անխախտելի շարունակությամբ և հետևականությամբ ներգործել և արդյունավորել մարդկային կարելի և հնարավոր բարեկեցություն, որոշյալ հասկացողության շրջանի մեջ։

Տարակույս չկա որ կգա օր, երբ այդ անգրանկական համակարգությունը կընկնի և դորանով հողը դուրս կգա կապանքի տակից, բայց և այն ժամանակ արդյոք բոլորովին կատարյա՞լ կլինի նոր կարգը։ Ֆրանսիան, որի հողը կարտված է մինչև մանրացուցական բաժիններ, ուրիշ կերպով նույնպես չէ՞ զգում այդ համակարգության ծանրությունը։ Մնում է մնջանդը որպես միակ բարերար ելք հասարակական սկզբունքը (общинное начало), որ կա Ռուսիո մեջ։ Բայց ո՛վ գիտե թե երբ կարող են զարթնել Անգլիո և Ֆրանսիո գրակիռոանները։ Իսկ մինչև այն ժամանակ, ասուլդ է, որ անգրանկական համակարգությունը պիտի ծանրանա հասարակ ժողովրդի վրա մանավանդ, քան թե միջակ դասակարգին։

Միջակ դասակարգը պարապելով ձեռագործությամբ և վաճառականությամբ, անմիջական հարաբերություն չունի հողի հետ։ Նորա օգուտը և վնասը, նորա հույսերը և ահը,— այդ բոլորը կապված է վաճառականոցի (bourse) հետ. և քանի որ Անգլիո կառավարությունը ներգործելով արդեն ընդունված սկզբունքների վրա առաջ վարե իր ընթացքը թե ներքին և թե արտաքին գործերի մեջ, վաճառականությունը և ձեռագործությունը ապահո՛վ են, ուստի և միջին դասակարգը ժողովրդի միշտ պաշտպան այդ սկզբունքներին։ Սորանից պարզ է, թե անգրանկական համակարգությու-

նը լոկ ազնվական և ստորին դասակարգերի վրա է ներգործում։ Առաջինը չի կարնալ իր անշարժ անփոփոխականությունը բաժին-բաժին անել, այլ պարտական է ծողուլ անդրանիկ ժառանգին, իսկ երկրորդը երբեք չի առանիլ հողի երես, որովհետև հողը չմասնատվելով նաև ժառանգությամբ, միշտ մնում է ազնվական տների ուղղակի հաջորդության մեջ։ Եվ այս է այն սոսկալի աղբատության աղբյուրը, որ միմիայն Անգլիո մեջ կարող է առանալ այնպիսի ահարկու կերպարանք։

Հարկավոր է ուրեմն ավելի քաջ քացատրել մեր այն խոսքը, թե «Անդրանիկական համակարգությունը անգլիական ազգի հոգուց է բխում», որովհետև անհնար է ծուլ տալ անգամ թե ստորին դասակարգը կարող էր երբևիցե գոհ լինել այդ համակարգությունից։

Ազգ ասելով հասկացանք և հասկանում ենք անգլիական հասարակության այն բաժինը, որ ուղղակի կամ անուղղակի մասնակից է կառավարության և որի պոլիտիկական իրավունքը խոսուվանում է անգլիական կոնստիտուցիոնը, որովհետև այդ կոնստիտուցիոնը հասարակապետական և ոչ հանրապետական լինելով, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգներում, համարյան ազգի անձն յուր անդամներին չէ տալիս պոլիտիկական իրավունք։ Եվ կառավարության մեքենան շարժվում է միմիայն առաջին և միջին դասակարգերի ուժով։ Այդ երկու դասակարգի շահին էլ բնդդեմ է Անգլիո մեջ ամեն փոփոխություն, որ կարող էր շատ թե քիչ ատամնեցնել կամ ավելի փորր, կանդնեցնել բանների ամենօրյա ընթացքը։ Եվ այդ երկու դասակարգն բուռն ու դրական իշխանություն ունի իր ձեռքին, ոչ օրենքը, ոչ դրված կոնստիտուցիոնը և ոչ իսկ թագի արտոնությունքը ազդեցություն ունին նորա վրա. նա փոխում է օրենքը, արբագրում է սահմանադրությունը, փոխում է և գահակալության հաջորդությունը, ինչպես Հենրիկոս VIII-ի և Վիլհելմ III Օրանժյանի ժամանակ, փոխում է կրոնը, ի վերջո ինքը պատմականաբ և պիշխող և իշխեցյալ», ինքը դնում է օրենք և ինքը դարձյալ հնազանդում է նորան. վերատին փոխում է օրենքը և այդ նոր օրենսգրությունը նույն զորությունն ունի, ինչ որ ուներ առաջվանը. մեկ խոսքով, կենդանի սահմանադրություն և կենդանի օրենք անսահման և լրացյալ իշխանությամբ։

Հեգելը տեսնելով այս բոլորը սարսափում է և նորա նեղսիրտ դիվանագետական սառնարյունը չէ կարող մարսել, ուստի և չէ հերիքանում միայն մի քանի բերություններ շոշափելով անգլիական կառավարության սահմանադրության վրա, նա չէ գոհանում նորանց պախարակելով, այլ որպես թե ավելի ծանրացնելու համար իր պատասխանատվությունը, նորանց պախարակելու չափով գրվատանքներ և տաղեր է երգում գերմանական և պրուսական տերությանց, և այս՝ 1830—31-ին։ Թուրքի ասածի պես. մասգարալըք փարա իլնն փուլ իլնն գնիլ սրբ։

Տես թե ինչ է պատմում Հայմը Հեգելի բերնով, չսիր որ անկախ շատ չլսե։

«Այսպես» — ասում է Հեգելը, այսինքն Պրուսիո մեջ — «կառա-

աված է այն աշխատությունը, ինչ որ գեռ Անգլիան պիտի կատարեր ապրուսական թագավորների խորին խնդրը և ճշմարտության սերը, ճշտության և գիտական լուսավորության բազմազարյան աշխատությունը, արդեն իրագործել են այն, ինչ որ չկարողացան անգլիական ազգին առալ նորա երևելացուցիչքը: Նախանձը թագավորական իշխանության կապրողության վրա է ան գլ ի ա ց ի ն ե ր ի ի ս պ ա ռ ա ն խ ո ր ա տ ակ ե լ ի ան ա ֆ ա պ ա շ ա ր մ ու ն ք ը: Մինչև անգամ մտադրյալ վերանորոգություններ, ինչպես առաջուց կարելի է գուշակել, կատաղնորդն միմիայն դեպի կորստարեր հետևանքներ: Այս պատճառով, եթե նաև հաջողություն գան խնդիրը (bill), որի մասին է այժմ վեճը, և ճանապարհ բացան դեպի պատալամենտը տիրապետող համակարգության հակադիր մարդոց — պատերազմը կարող էր լինել միայն ավելի վտանգավոր պատճառ, արտոնության շահի և ավելի հիմնավոր պատասխանատվության մեջ չէր լինել ոչինչ միջին ծայրագույն իշխանություն, որ ակարողանար բռնել նորանց և հաշտեցնել: Մ ի մ ի ա յ ն կ ա ռ ա վ ա ր ու թ յ ու ն ա կ ան իշ խ ան ու թ յ ա մ բ կ ա ր ող ե ն հ աջ ող ա կ ի պ ր ա գ ո ր ծ վ ել իր ա վ ա ն ց և ազ ա տ ու թ յ ան խ ել ա ց ի և ճ ի մ ն ա վ ո ր ս կ զ բ ու ն ք ը: Անգլիո մեջ, իշխանությունը արտոնությունակ դասակարգի ձեռքին է: Այս պատճառով, ավելի կանոնավոր և հիմնավոր սկզբունքների երևեցուցիչքը, պիտի երևցնեն իրենց մեջ, կառավարության և ներկա բանների կարգի ընդդեմ՝ միմիայն դիմադրություն: Սակ այդ սկզբունքները չեն կարող ցույց առալ իրենց խորհուրդը և նշանակությունը իրենց բոլոր բանձրացյալ (էներգետանի), գործական ճշմարտության և գործադրության մեջ, ինչպես Գերմանիայում, այլ միայն ցույց են տալիս նորան ֆրանսիական վերացականության, անուրջի ավտանգավոր կերպարանքով: Վերանորոգությանց իրացուցումը հակասում է անգլիական տերության սկզբունքին, այս պատճառով, «հապիվ թե կարողանան նորա իրագործվել առանց տերության և հասարակության շաղկապը սաստկապես սասանեցնելու»:

«Ավելորդ ենք համարում — ասում է Հայմը — մերժել ինքնարավական և երկրոտ դիվանագետականության շաղակրատությունքը: Շուտով այդ բանները գրվելուց հետո, ինքը պատմությունը ապացուցեց, թե ինչպես անհիմն էին այս մտայլոտ գուշակությունքը Անգլիո մասին, ընդհակառակն և հայրենիքի վերականգնյալ գրության վրա գաղափարական «հասկացողությունքը: Բայց Հեգելին արված չէր տեսնել ոչ այն և ոչ էլ ամբողջը. Հեգելը մեռավ խոլերից նոյեմբեր. 14-ին 1831-ին»[8]:

Պարտական ենք այստեղ մի երկու խոսք ավելացնել այն պատճառով, մանավանդ, որ Հեգելի այս տեսակ կարծիքներուն մասին նմանցուցինք Բոռքին: Բայց վերստին կրկնում ենք, Բոռքը հիվանդ և տասանյալ ուղեղով, և մինչդեռ Հեգելի ամբողջ համակարգությանց մեջ կան իր վերջին փիլիսոփայականի հետքերը, Բոռքի անցած կյանքի վրա, մինչև

Նորա հիմնադանակը, չկան այնպիսի մութ գույներ, որ կարողանային խավարեցնել նորա անպայման և անշահախնդիր ազատասիրությունը:

Հետևյալ խոսքերով վերջացնում է Հայմը իր դասերը:

«Նա մնում էր իր գործունեության միջակետում, իր փառքի բարձրության մեջ, իրեն հետևող բազմաթիվ ամբոխի խոր հարգությունը կատարելապես վայելելով: Նորանից հետո մնաց ոչ միայն մի հզոր համակարգություն, այլև մի հզոր և մի լայնատարած դպրոց (ուղղություն) և այդ դպրոցը ըստ էության էր նորա ստեղծվածը և մինչև անգամ նորա փիլիսոփայության մի մասը: Այդպիսի մի համակարգություն անհնար է երևակայել առանց ձևավոր, հուսալի և գործարանավորված գրնկերության: Այս համակարգությունը, իր բովանդակությամբ լինելով էնցիկլոպեդիական, իր արտաքին երևույթով բնականապես տարածողական էր: Նա ուրիշ սահմանափակություն չգիտեր բացի գիտության սահմանադրից. նա կարող էր իրագործել իր հատարակաց հասկանալի լինելու ձգտողությունները միմիայն աշխատության մասնատությամբ (разделение труда) նա կարող էր շարժվել և լայնանալ մինչև անվախճանը, նորա բանախոսության (диалектика) և նորա երկմտության (двусмысленность) օգնությամբ, նորա հետ կարող էին բարեկամանալ բոլոր մյուսները մեկ ընդհանուր հասկացողությանց մարդիկ և նորա նշանակերպերի (формула) տակ կարող էին թաքնվել որևէ անկեղծ, նույնչափ և նորա կեղծից ոչ ազատ պաշտողը: Իր սկզբամբ միապետական, ձևակված և բացատրողական էր այդ համակարգությունը. ինքնըստինքյան շրջափակում էր նա իր հետևողը մի մշտական կենտրոնացությամբ (средоточием) խմբի մեջ և կախողության զգացողությունը վարձատրում էր անպայմանության հպարտ գիտակցությամբ: Համակարգության այս հատկությանց հետ միավորվեցավ և նորա արարչի (Հեգելի) տրամադրությունը (настроение) և դրությունը:

«Զարմանալով Բիշելիոյի և Նապոլեոնի անփոխան առանձին հատկությունքը ճնշելու արվեստի վրա, նա ինքը միևնույն ժամանակ իշնամի էր ամեն տեսակ փիլիսոփայության և կարծիքների մեջ նուաճ առանձին հատկությանց: Նա ձգտում էր հպատակեցնել միտքը նույն խիստ կարգին և նույն հնազանդության, որին հպատակված էր մարդոց կամքը»[9]:

Հայմը շարունակելով իր ստորագրությունը և նկարագրելով Հեգելին ավելի դիվանագիտական, քան թե նույնիսկ Պրուսիո այն ժամանակվա անդրությունը նույնպես և նորա օրագիր հրատարակիչը, նորա նկրտումները ևն ևն, ի վերջո վերստին հնչեցնում է առողջ բանականության ձայնը:

«Բայց,—ասում է նա (Հայմը),—կենդանի պատմության և նորա մեջ շրջան առնող ոգու ուժը, ամեն ուսումնական կուսակցություններից զորեղ է և համակարգությանց բոլոր շրջաններից ամուր: Հեգելի համակարգության մեջ, նույն այն բանը, որ շինում է նորան համակարգություն և

«Հնար է տալիս նորան դպրոց կազմելու, պատկանում է կրթության արգելն անցած ձևին. ինչ բան որ ուզում էր կյանքը շարունակել, պետք էր որ ավելի երկար ապրեր[10]։ Զուտաոս 16, կես գիշեր:

Ոչ Հեգելի աշակերտ ենք և ոչ Շելլինգի, բայց արդարությունը ստիպում է խոստովանել, որ երկուսի համակարգությունքն էլ մեծ օգուտ ցույց տվին գիտության ընդհանուր ձևերը հայտնագործելով, որոնց միջնորդությամբ առաջ է գնում զարգացման գործողությունը։ Այս հայտնագործությանց հիմնական արդյունքը երևում է հետևյալ առածի մեջ. «Զարգացման վերին աստիճանը իր ձևով նման է սկզբին, որտեղից առաջ է գնում այդ զարգացումը»։

Այս վարդապետությունը բովանդակում է իր մեջ շելլինգյան համակարգության արմատական իսկությունը, որ Հեգելը ավելի ճիշտ և ավելի մանրամասն քրքրել և քննել է, և ընդունելով որպես հիմնական սկզբունք կազմել է իր համակարգությունը, ուր տիեզերական կյանքի բոլոր երևույթների մեջ, սկսելով նոցա շատ ընդհանուր վիճակից մինչև էության յուրաքանչյուր առանձին կարգի ամենաճիշտ մանրամասնությունքը երևում է այս վարդապետությունը[11]։

Հեգելը պրակտապես ասում է թե «միջին արմատական մոմենտները, ավելի քան թե ուրիշները չեն հասնում առարկայական էության, մնալով միայն որպես արմատական մոմենտ։ Հերիք է նրա որշյալ միջին մոմենտը հասել է էության ուրևիցե կամ երբևիցե, սրբանով, ուրիշ տեղերում և ուրիշ ժամանակներում, զարգացման գործողությունը ազատվում է այդ մոմենտները առարկայական էության հասցնելուց»[12]։

«Մի գիտեմ առեալ է, կարող է փորձանաւորաց օգնական լինել»[13]. այս վարդապետության սկզբունքն էլ նույն կնոջից է իջնում։ Արդարև, նրա միջին մոմենտները, յուրաքանչյուր դիպվածում անշուշտ հասնելու լինեին առարկայական էության, զարգացումը ոչ միայն դանդաղ այլև անհնարին էր։ Սուտդ է, բնության մեջ ոստյունք չկան, այլ հետևական շղթայաշարություն, բայց նրա մի դիպվածում չէ իրագործվում միջին մոմենտը, այդ շղթան չէ կտրվում, որովհետև մի անգամ հասել է այն մոմենտը առարկայական էության և հերիք է։

Մինչև, մրրկից կոտրվելով կամ արմատից պոկ գալով ծառը շրնկներ ծովի մեջ և մարդը շանաներ, որ փայտը ջրի տակ չէ գնում, անհնար էր, որ մարդը կարողանար լաստ շինել, մինչև լաստ չշիներ, չէր կարող նավակ շինել, մինչև նավակ չշիներ, նավ շինել և վերջապես մինչև նավը չշիներ, շոգենավ չէր կարող շինել։ Թե ուր է նզել այս փորձը, այսինքն որտեղ և երբ հասել են այս միջին մոմենտները, իրենց առարկայական էության, այսինքն փայտը ջուրը բնկնելուց մինչև շոգենավի աստիճանին հասնելը, այդ փույթ չէ, հերիք որ մի անգամ կատարվել է և այսօր նին հասնելը, այդ փույթ չէ, հերիք որ մի անգամ կատարվել է և այսօր մի վայրենի մարդ, քաղաքակրթվելով պետք չունի շոգենավին հասնելու համար կոտրած ծառից սկսել, այլ կարող է ուղղակի շոգենավին ձեռք

զարկնել։ Մարդը, որ առաջ կրակը տեսավ մի կայծակից զարկված ծառի ճոմաստում, նորը երկու փայտ իրար հետ քսելով ավելի նորը հրացանը գտավ, նորը ֆոսֆորյան լուցկիք ևն, այսօր այս վերջինը կարող է ուղղակի ժառանգություն լինել այն վայրենուն, որ տակավին կրակը ստանում է երկու փայտ իրար հետ քսելով։

Առաջին առած. Զարգացման վերին աստիճանը իր ձևով նման է նորա սկզբին։

Երկրորդ առած. Եթե մի որևիցե ազգ հասել է իր զարգացման վերին աստիճանին, մի ուրիշ ազգ, որ խնդճ վիճակում է, կարող է հասնել այդ աստիճանին, առանց այնքան ժամանակ և այնքան ուժ գործ դնելու, որքան առաջին ազգը, և բնավ չհանդիպելով միջին մոմենտներին, որոնցից անցել էր առաջին ազգը[14]։

ՀԱՏՎԱԾՆԵՐ «ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա.

Արդեն քանի մի տարի է, որ մեր ուրիշները և մենք առիթ ունեցած ենք հայկական ժողովրդական լեզվի իրավունքը պաշտպանելու և այս օրվա օրս, գրեթե ավելորդ էր վերստին հանդես հանել այս խնդիրը, եթե մեր աշխատությունը հարակցություն չունենար նորա հետ։ Առաջին անգամ մեր ժողովրդական լեզուն մամուլի տակ ընկավ Թյուրքիո մեջ, բայց պետք չէ մոռանալ, որ այն լեզվով գրվածների հեղինակքը կատարել էին այդ գործը ոչ թե իրավունք տալով ժողովրդական լեզվին, ոչ թե խոստովանելով հնի մահը, այլ ակամա ու հարկից բռնադատված, որովհետև ժողովուրդը հինը չէր հասկանում։ Թեև այս, նաև ակամա գործողությունը, արդեն անբարբառ, բայց և այնպես հզոր բողոք էր հին լեզվի ընդդեմ, որի մեռելությունը պաշտելի լինելով քանի մը հայաբեռանների ապաներխական ֆանատիզմով, քարոզվում էր տակավին որպես կամուրջ լուսավորության։ Ներկա ներածության մեջ մենք առիթ կունենանք քննել և քրքրել այս...էական պատճառները։ Սուտ էր, ժողովրդական լեզուն դպրոց.....

Բ.

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Նոր լեզվի մշակությունը չէ կարելի առաջ առնել, ատրկանալով հին լեզվի ոգուն կամ ազգեցության, որովհետև նոր լեզվով խոսող հայերը ընկած են ուրիշ պատմական և բնական ազդեցությանց տակ, քան թե այն հայերը, որ երբեմն խոսել են հին լեզվով։ Ավելորդ է ասել, որ այն պատմական և բնական ազդեցությունքը պիտի ցոլանային և լեզվի վրա։ և այդ ազդեցությունքը արդեն իրենց պաշտոնը կատարելուց հետո անհնար է քրել հանել ազգի վրայից։ Ուրիշ խոսքերով ասելով, ինչ պատմական և բնական պատճառներ ուներ հին լեզվի այնպես և ոչ ուրիշ

անսակ կազմութիւնը կամ ձևակերպութիւնը, նոր լեզվի կազմութիւնը և ձևակերպութիւնը ունի նույնպիսի պատմական և բնական պատճառներ։ Եվ իսպառ սպնող չէ կարող մերժել այս դրութիւնը, որովհետև նրա այդպիսի պատճառներ չլինեին, լեզուն չէր ընկնիլ հեղափոխութեան տակ։ Հայտնի է, որ լեզուն չէ կարող կազմվել կամ փոխվիլ մի անհատի կամ խմբի ցանկութեամբ և կամքով. լեզուն որպես ամբողջ ազգի սեփականութիւն կազմվում է կամ փոխվում է նույնիսկ այդ ազգի միջնորդութեամբ, որ առանց պատճառի, առանց հարկի, առանց որևիցե ազդեցութեան ոչ մի խոսք ավելցնում է և ոչ մի խոսք պակասեցնում կամ այլայլում. այլ լեզվի ամեն շարժողութիւնը, դնալ որ կողմը և լինի, լինում է որպես հետևանք ներգործող պատճառի, որովհետև և անսանելի առարկաների մեջ, որ ամեն օր մեր աչքի առջևն են, շարժողութիւնը ինքը պատճառ չէ, այլ պատճառի հետևանք։

Այս հիման վրա, ինչ իրավունք որ ուներ անտիկյան Հայը խոսել հին լեզվով, հին ոճով, հին քերականութեամբ, նույն իրավունքը, իր կարգով ունի և այժմյան Հայը խոսել նոր լեզվով, նոր ոճով և նոր քերականութեամբ։ Մերժել այս իրավունքը համարյա է պատմութեան և ժամանակի ազդեցութեանցը ոտիստանալու. բռնաբարել նոր լեզուն, որ նա ամեն հին ձևի ազդեցութեան տակ, համարյա է պատմութեան և ժամանակի ազդեցութիւնը և իրավունքը մերժելու։ Մեռածը, մեռած է, անցածը, անցած. կենդանին և ներկան, կենդանի և ներկա ժողովրդի անհիականութիւնն է, և անխելքի՝ անհիականութիւն։ Մինչև այսօր ոչ մի մեռած մարդ բնև շատ էլ ազահ եղած լիներ իր կյանքում, դեռևս մինչ դուրս չէ եկել, որ իր ժառանգների իրավունքը բռնաբարեն և ժառանգութիւնը իր ձեռքը անցնեն։ Եվ մեկ անգամ մեռածը, երբ դուրս էլ գալու լինի դերեզմանից՝ ժառանգը նորան իրեն օտարական մի երևույթ, իրեն մի հիվազ կհաշվեն, և ոչ մեկայն ժառանգութիւն, այլև լուկ ընդունելութիւն չի ցույց տալ, որովհետև մեռածը ապատամբում է բնութեան ընդդեմ, իր դերեզմանից դուրս գալով։

Հին լեզուն անդա՞րձ դնաց, որովհետև հին ժամանակները դնացին, և երբ դնացած չլիներին վազուց, հին չէր լինելին. ինչ որ մնացել է, նորա պահպանութիւնը, նորա մշակութիւնը և նորան ծաղկեցնելը պիտի լինի ամեն խելքը գլխին մարդու գործը։ Մեռնողին սիրողը պիտի նորա ժառանգին խնամ տանի, սրանից ավելի հզոր ապացույց չունի նա իր սերը դեպի մեռածը վկայելու։ Իսկ սորա հակառակ ժառանգը թողուլ անխնամ, բնական և նախատել և հալածել, և ամուր փաթթվելով մեռած դիակի հետ երեմիականներ կարդալ, պարզ և հայտնի թշնամութիւն է մեռածին և ոչ սեր, որովհետև քո լաց ու ազով նորան չկենդանացնելուց հետո, բարեբախտս մեղանում ես և նորա գոմակը։

Ամերիկների բարերը կարող են պիտանանալ նոր շինվածքի, ինչպես պահանջում է ժամանակի հարստարտանութեան ճաշակը։ Եվ եթե այդ բարերից ոմանք փշրվել են, ոմանք մի անկյունն են կորցրել,

ժամանք խոռոչ են ստացել, դու որքան էլ կամենաս չես կարող, որ վերաստեղծես այդ քարերը դեպի իրենց սկզբնական ձևը. քո բոլոր աշխատությունը պիտի լինի մնացածը տաշել, կոկել և շինվածքին պիտույացնել: Հազար անգամ էլ որ աշխատիս կամ անկյունը վերականգնել կամ խոռոչը լցնել, զուր պիտի աշխատիս, որովհետև կարիատանը միշտ կարկատան կմնա: Ապրող ծառի ճյուղը կարելի է միայն ապրող ծառի վրա պատվաստել. չորացած ծառի ճյուղը որ կտրես և բերես, ապրող ծառն էլ կտրելով նորա տեղը պատվաստես, կամ ապրող ծառը կտրես ու տանես չորացած ծառի արմատի վրա պատվաստես, երկու դիպվածումն էլ զուր տեղը կտրեցիր քո ապրող ծառը, որովհետև ոչ չոր ծառի ճյուղը պիտի կենդանանա և զարթի ապրող ծառի վրա պատվաստվելով, և ոչ թարմ ու զարթուն ծառը պիտի առնի մեքենաբար խրվելով չորացած և անհյութ արմատի վրա:

Եվ ավերակի քարերը, եթե քո դիտավորությունը այն է, որ շինվածքը ծառայե քո իրական պետքերին, ապա ուրեմն պիտի հարմարվին միմյանց հետ և ամբողջ շինվածքը պիտի կազմեն, իրական պետքերի համար, նոր հարաբարգավաճության կանոններին համաձայն: Իսկ եթե նույն քարերով աշխատիս դարձյալ նրդիքով, առանց պատուհանների և հողե հատակով տուն շինել, ինչպես նախնիք շինում էին հնումը, տունդ կմնա դարտակ և ոչ ոք չի գնալ, որ բնակվի նորա մեջ, որովհետև այժմյան ժամանակում անպիտան են այդպիսի տները: Այո՛, կարո՛ղ ես շինել նաև նախնյաց շինածի պես, բայց լոկ մարդու ցույց տալու և հին ժամանակի ճարտարապետությունը ուսումնասիրելու համար, ինչպես Պոմպեի ավերակներում վերականգնեցին բանաստեղծի ասված տունը, կամ ինչպես առհասարակ փորում են և բացում են Եգիպտի և Հնդրուկանումի տները, բայց նորա միշտ կմնան անմարդաբնակ, որովհետև նրկա հայացքով և նրկա պետքերին նայելով, Նենապոլի և Պորտիչիու տները ավելի գեղեցիկ, ավելի հոյակապ և ավելի հարմար են բնակության, քան Եգիպտի այն տունը, ուր Քրիստոսի 79 թվականին վերջին անգամ ճաշ կերավ Պլինիոսը:

Հնության ավատրիտատը ժամանակի և պետքերի իրավունքը հափշտակելու շատ ուժ չունի: Մեր խոսքը սիրահար մարդու վրա չէ. սիրահարը օրենք և իրավունք չէ նայում, նա ճգնում է միայն իր սիրահարը օրենք և իրավունք չէ նայում, նա ճգնում է միայն իր սիրահարը ծին հասնել, ասածի բարի համփո տա: Ամբողջ աշխարհը չէ կարող ծին հասնել, ասածի բարի համփո տա: Ամբողջ աշխարհը չէ կարող իր ամեն բանը ուրանալ և նորա սիրականի նեռից վազել, ինչպես սիրահարը վազում է, որովհետև բազմությունը ավելի առողջ է, քան թե սիրահարը, որ մաշվում է սերի ախտով:

Հին լեզվի չատատովյալ գեղեցկությունը, նորա ավելի մշակված լինելը, նույնպես իրավունք չեն տալիս մեզ կենդանի ժողովրդի իրա-վունքը րոնարարելու և ուրանալու ոչ միայն բնության տեսական (ethnographique) ազդեցությունքը, այլև պատմական դեպքերը, որ անցան մեր ազգի գլխից: Ուրանալով այս դեպքերը պիտի անշուշտ հավա-

սարեինք մեր անձը այն չնաշխարհիկ եպիկուրոսին, որ իր սքանչելի տրամաբանությամբ ապացուցանում էր, թե նապոլեոն առաջինը եղած չէ աշխարհի երեսին։

Գեղեցկությունը իրավունք չէ։ Աշխարհիս երեսին ոչ դրական գեղեցիկ կա և ոչ դրական գեղեցկություն. ամեն բան կախվում է այն կետից, ինչ կետից նայում ես առարկայի վրա։ Ամեն բան կախվում է չափից. չափը միակն է, որ չափում է տարածությունը։ Տարածությունը քառինքյան ոչ մեծ է և ոչ փոքր, մինչև որ մի ուրիշ նորանից մեծ կամ նորանից փոքր բանի հետ չդադարավի և այդ դադարությամբ չափողի և չափվողի հարաբերությունը շնշանակվին։

Գեղեցկության մոտավոր սահմանը, բնության մոտ լինելը կամ բնության նմանելն է ասացին[1]. այստեղ բնությունը ուրեմն առացավ դարձյալ չափի պաշտոնը. ուրեմն և լեզվի գեղեցկությունը պիտի չափվի բնության չափով։ Բայց մարդկային խոսքը կամ նորա ձևը անտեսանելի և մարով միայն հասկանալի բան է. ի՞նչպես ուրեմն կարելի է, որ երևելի բնությունը նորան չափ դառնա։ Մենք արդեն խոսած ենք բնության ազդեցության մասին, բայց և այստեղ վերստին ասում ենք, որ լեզվի վերաբերությամբ միտքն է բնությունը. լեզվի ձևի վերաբերությամբ մտքի ձևն է բնությունը։ Պատճառ, միտքը և նորա ձևը կերպարանագործվում են մարդու մեջ բնության ազդեցությամբ կամ անմիջապես, կամ կյանքի միջնորդությամբ, որ առաջանում է բնական պայմանների վրա։ Ինչպես բնությունն է, ինչպես մարդու շրջապատող աշխարհն է, այնպես կլինի և մարդու կյանքը և ինչպես կյանքը, նորան համեմատ կլինի միտքը։ Եվ լեզուն, որ ուրիշ բան չէ, եթե ոչ մտքի հայտարարը, բնականապես պիտի նմանի մտքին, նորա ձևը ուրիշ բան չէ կարող լինել և չպիտի լինի, եթե ոչ մտքի ձևի ցոլացումը։ Սորանից պարզ երևում է, որ գեղեցկություն խոսքը, լոկ անդոր խոսք է, եթե գործ է դրվում հին լեզվի իրավունքը ջատագովելու համար։ Անշուշտ, այն գեղեցկությունը, որի մասին մենք խոսեցանք, այսինքն հարաբերաբար դրական գեղեցկության տեղ առնվածը, այլ է մի ուրիշ գեղեցկությունից, որ աներևին բան չունի բնության հետ, այլ կախվում է միայն հաշակից, սովորությունից և հասկացողությունից, ուստի և ամեն օր փոփոխության է ենթարկվում։ Անցյալ տարվա գեղեցիկը այսօր է տգեղ լինում, իսկ այսօրվա գեղեցիկը առաջիկա տարում։ Սորա պարզ և շոշափելի օրինակը թերևս շորերի վրա տանք։ Տասը տարի առաջ, թողնում եմ դարերով առաջիններըը, մեր հագած շորերը, որ շատ գեղեցիկ էին թվում մեզ, այսօր մարդ չկա որ հագնի. և եթե ծակ ու ծուկից մի մարդ դուրս էլ է գալիս այն շորերով, ի՞նչպես տգեղ է երևում մեզ։ Տարօրինակ չկա, շորը նույնն է, ինչ որ տասը տարի առաջ շատ գեղեցիկ էր երևում և մենք էլ էինք հագնում. հիմի ի՞նչ եղավ, որ նույն շորը շարժում է մեր ծիծաղը. և ոչ միայն այսչափ, այլ շատ անգամ և զզվա՞նքը։ եթե բաց աչքով տեսնում ենք շորի նույնությունը, նորա անփոփոխու-

թյունը, ինչպես էր տասը տարի առաջ, ապա ուրեմն այն ժամանակվա գեղեցկության և ներկա ազնվության պատճառները պիտի փնտրենք մեր մեջ։ Որովհետև, եթե երկու բանի նախնի հարաբերությունը փոխվել է, հարկ է որ այդ բաներն են փոփոխության ենթարկվել, և որովհետև պատկերները, մեր աչքը և հիշողությունը մեզ վկայում են, որ շորը չէ փոխվել, ապա ուրեմն մենք ենք փոխվողը, այսինքն մեր հայացքը։ Հայացքը մի կախարդական դիտակ է, որի մեջ ճաշակի, սովորության, հասկացողության և ժամանակի ապակիքը վարում են ամենամեծ պաշտոնը. միևնույն բանը ցույց են տալիս մեզ առաջ գեղեցիկ, երկում են նորան զանազան հրապուրիչ գույներով, հետո ասես թե աչքից ձգելով կամ բարկանալով այդ բանի վերա, այսինքն գարշելի կերպարանքով և ժժգույն ներկերով ներկում են, որ մենք հրաժարվում ենք նորանից։ Եվ այս խաղը խաղում է դիտակը միևնույն բանի հետ երեմն և քանի մի անգամ, այսինքն մեզ ազնիվ երևեցնելուց անարգել, և քանի մի անգամ, անհասկանալի կամապաշտության, վերստին հաշտվում է այն բանի հետ և սկսում է վերստին կախարդել մեր աչքը։

Հայտնի է, թե հին լեզվի գեղեցկության իրավունքը գեղեցկության և այս կատեգորիայով չէ կարող հաղթել նոր լեզվի իրավունքին։ Պատահար, ազնիվ երևեցածը չէ տանում ժամանակը, իսկ նոր լեզուն գնում է հետ, ազնիվ երևեցածը չէ տանում ժամանակը, իսկ նոր լեզուն ազնիվ չէ։ Սորան ժամանակի հետ զուգահեռաբար, ուրեմն նոր լեզուն ազնիվ չէ։ Սորան հակառակ գեղեցիկ համարվածը չէ թողնում ժամանակը, իսկ հին լեզուն վաղուց թողել է նա, ուրեմն նորա համար հին լեզուն գեղեցիկ չէ։ Պայց բոլորովին ավելորդ է լեզվի վրա նայել այնպես, ինչպես մի այլ բանի վրա, որ մեր ճաշակը փնտրում էր, առանց ուրիշ խորհրդի, միայն գեղեցկության համար։ Գեղեցիկ պատկերի, գեղեցիկ արձանի վրա նայելով կշտանում է մեր հոգու գեղասիրության քաղցը, բայց ոչ պետքերի քաղցը. և ամեն բանից առաջ նրա մենք պետքի քաղցը լըցնելու համար։ Եվ ամեն բանից առաջ նրա մենք պետքի քաղցը լըցնելու համար, մեր գոյության համապատասխանությունը կրնքվի և այնուհետև ոչ կշտացնենք, մեր գոյության համապատասխանությունը կրնքվի և այնուհետև ոչ Ֆաուստի Մադոննան կարող է փրկել մեր անձը և ոչ Բելվեդերյան Ապրոդիտեն։

Փարիզի տարազահնարքը, այն շռայլության հնարանքները, որ դրեթե բովանդակ քաղաքակրթյալ աշխարհին հրամայական են տալիս այսպես կամ այնպես հագվիլ, իրենք իսկ կիսողուն իրենց գեղեցիկ համարված հանգերձը և կատիպվին փաթաթվիլ արջի մորթու մեջ, նրա ընկերին բևեռային սառույցների մեջ։ Լուկուլլոսը (որ այսօր գրեթե հոմանուն է որկրամոլության), մեզ թվում է, թե կմոռանար իր համադամբը և անուշ կերակուրը և փառավորապես կուտար մորժերի և ջրշուններին եղը, նրա ընկներ նոր Գրենլանդիու կամ Բերևա Լաբրադորի էսկիմոսների մեջ, որովհետև ոչ փարիզյան տարազահնարքը իր շորերով կարող ների մեջ, որովհետև ոչ Լուկուլլոսը իր կերակուրներով էր տալել արջային շրջանակի տակ և ոչ նրա մենք պետքը նախընտիր նոր Գրենլանդիու կամ Լաբրադորի մեջ։ Պարզ է, թե պետքը նախընտիր է, քան թե գեղեցկությունը, որովհետև կյանք չկա, նրա պետքերը չհո-

գացմին։ Ցրտի տակ ընկած մերկ մարդը էլ գեղեցկության չի նայիլ, միայն թե մի բան գտնե, որի մեջ պատսպարե իր անձը ու չոպոզի սառչած ձուկի պես. քաղցածը էլ համին չի նայիլ, միայն թե ուտելիք գտնե։ Իսկ երբ մարդը հոգացել էր բոլոր էական պետքերը, երբ այդ բոլորն ապահով հոգալով ապահովել էր իր կյանքը, այն ժամանակ միայն գարթում են նորա մեջ մյուս հոգևական քաղցերը կամ ցանկությունքը, որոնց շատը դեռ անծանոթ ևս են շատ միլիոններին, բայց այդ միլիոնները նույնպես ապրում են, ինչպես ապրում են շատ նկարիչք, որ բան երևան տարիներով Հռոմի են նստում սիրահարվելով անտիկյան գեղեցկության կամ ճարտարության։

Այս դրությունից պարզ տեսնում ենք, թե ի՛նչ աստիճանի տղայական է լոկ գեղեցկության խնդիրը, լեզվի խնդրի մեջ, որ ծառայում է մարդու բովանդակ կյանքին, բոլոր պետքերին միահամուռ, և ոչ մասնավորապես այս կամ այն հոգևական ցանկության։

Ուստի ամենայն իրավունքով հարցնում ենք. հին լեզվի գեղեցկությունը, թերևս թույլ տալով այս, հերիք պատճա՞ռ է, որ նորան գերի լինելով, նորա վրա սիրահարվելով, անմշակ թողունք կամ, ոտքի տակ կոխկռտենք մեր նոր լեզուն, որ ինչքան էլ տգեղ լինի հնից, թերևս այս էլ թույլ տալով, այնուամենայնիվ այսօրվա օրս մեր բոլոր պետքերը նա է հոգում մեր համար. իսկ հին լեզուն հիմիկվա հայի համար դարձել է փարիզյան տարազահնարի շորը, արջային շրջանակի տակ, կամ Լուկուլլոսի կերակուրը Նոր Գրենլանդիու կամ Լաբրադորի մեջ։ Ասենք թե մեռած մայրը գեղեցիկ էր, բայց այս իրավունք տալի՞ս է մեզ սպանել նորա թևև տգեղ զավակը։ Ասենք թե մեր նախնիք շատ աղնիվ կերակուրներ են կերել, բայց որ այսօր մենք չենք կարող ուտել և մարսել այն կերակուրքը, իրավո՞ւնք է, որ նեռանք մեր մի կտոր շոր հացը, որին սովորել է մեր ստամոքսը և որ հազար նեղությամբ պահպանել էինք մեր և մեր զավակների կենդանությունը ապահովելու համար։ Ո՞րը ավելի շուտ կարող է մեզ կշտացնել, մեր առողջությունը պահպանել՝ մեր ունեցած շոր հա՞ցը, որ ուռվում է, թե այն շատ աղնիվ համարված բանը, որ թևև կերել են նախնիք, բայց մենք չենք կարող ուտել։

Չենք ուզում ասել, թե երթանք Իտալիա և իտալացոց ստիպենք թողուլ իրենց լատիներենի հարաբերությամբ աղճատ լեզուն ու խոսել հին հռոմեական դերատանձ լեզվով, կամ ֆլորենտացուն ստիպել, որ Դանթեի «Աստվածային կատակերգությունը» լատիներեն թարգմանե ու կարդա։ Եվ չենք ուզում միմիայն այն պատճառով, որ մեր ցանկությունն է այս գործի մեջ այնպիսի փաստեր և օրինակներ հանդես հանել, որ, ավելի իրական աշխարհին պատկանելով, շուշափելի էին նաև լոկ դիր կարդալ դիտնալով մեր գրածը կարդացողին։ Այս պատճառով ասում ենք. երթանք Իտալիա, և այնտեղ իտալացոց, որ այնի պատկվելին իրենց բնության աղբիւրների հետ, ասենք.— Թողե՛ք դորանց, ապե՛ր են, չունին այն աղնիվ և վերին գեղեցկությունը, ինչպես էին ձեր

նախնի մայրերը, որոնց պատկերքը և արձանները դուք ամեն օր տեսնում եք Վատիկանում։ Տեսեք, մինչև անգամ Միքել Անջելոյի ձեռագործքը, ի՞նչպես գեղեցիկ են, ի՞նչպես կատարյալ, ո՛րքան ներդաշնակություն կա, ո՛րքան դյուցազնաշուք, ո՛րքան շնորհք, ի՛նչ ճարտարություն, և այլն և այլն։ — Եվ քո ինչ է կարում, կգանե՞ս մի հատ իտալացի, որ ըսղուր իր հարսնացուն, միմիայն այն պատճառով, որ նմանություն չուներ քո ցույց տված հոյակապ արձաններին։ Չէ՞ որ կասեն քեզ.— Պարո՛ն, մեզ կնիկ է հարկավոր ներկայումս, իսկ մեր գեղեցիկ նախամայրքը ապրեցան և մեռան երկու հազար տարի առաջ, և մեզ այս սերունդը ըսղեցին, որին այժմ դու չես հավանում։ Եթե մենք էլ քո խելքին ընկեննք, ասել է թե առանց կնիկ պիտի մնանք, որովհետև ներկա աղջիկները դոքա են, որ կան և գոցանից ուրիշ էլ չկան։ Բնություն և ընկերական կյանքը կնիկ են պահանջում. կենդանի, շարժուն, ջերմություն և նրանց մեջ արյուն ունեցող էակներ։ Այն քարե՛ն, մեռած, անշարժ, սառը արձանները, որ մեզ ցույց ես տալիս, թեև այո՛, գեղեցիկ են, բայց ի՛նչ օգուտ, որ ընկերական կյանքում չեն կարող մեր պետքերին ծառայել։ Միմիայն նայելով նոցա սառը և անկենդան գեղեցկության վրա, կամ զարմանալով քանդակագործի հանճարեղ ճարտարապետության վրա, բնության հարկը չէ վճարվում, մեր տունը չէ կառավարվում, մեր այգիքը չեն մշակվում, մեր կերակուրը չէ եփվում, մեր շորերը չեն կարվում կամ լվացվում։ Կարո՞ղ ես, կրկնում ենք, գտնել գո՛նե մեկ մարդ, որ լսե քեզ և վերացական գեղեցկության սիրահարվելով իրական աշխարհի պետքերը, ասո՛ր, և իր մարդկային կոչումը ուրանա։

Մենք վերը ավելորդ համարեցինք լսաին լեզվի առաջարկությունը, մանավանդ այն պատճառով, որ նույն բանը, նույն առաջարկությունը կարելի է առնել և հայ մարդուն, որ նա խոսի Խորենացու կամ Եղիշեի ոճով ու լեզվով։ Հայտնի է, թե ներկա հայի համար անհնար է այս, որովհետև նա չգիտե այն ձև ու ոճը. նույնպես անհնար է և խոսացու համար, որովհետև լսաինախոսությունը վազուց արդեն թագված պըրծած է Հռոմեական Ֆորումի և Կապիտոլիոնի ավերակների տակ։

Ո՛վ չգիտե Բենվենուտտո Չելլինու հոյակապ նստուցվածքի արժանավորությունը. հայտնի է, թե եվրոպական մուզեոնների և անտիկավորությունը. հայտնի է, թե եվրոպական մուզեոնների և անտիկ սերնդի համար շատ բարձր գին ունեին։ Բայց չնայելով սորա վրա՝ կարո՛ղ ես իրրև դրամ գործ դնել նորա մեդալիոնները։ Բազար որ տանի՞ս, շինականը քեզ ալյուր ու եղ կտա, որ բերես քո զավակները կենդանի պահես։ Թե որ մի ընկերության մեջ փարայի և գրոշի սիրան ընդունում են և ճանաչում են, ու Չելլինու հրաշալի գործերի համար քեզ հաց չեն տալիս, ո՞րը կարող է քո պետքերին ծառայել, Բենվենուտտո Չելլինու մեդալիոննե՞րը, թե՞ փարան կամ գրոշը։

Ասենք թե ես պատկված եմ, կնիկս շատ էլ սիրող է. դիտեմ, բայց երբ որ իմ կյանքը նորա կյանքի հետ անբաժանելի կապերով կապված է,

երբ նա իմ զավակների մայրն է, իմ տան կառավարիչը, ի՞նչպես ես կարծում, ես դուրս կձգե՞մ նորան, երբ գաս ու քարոզես ինձ մեկ կողմից նորա ազնվությունը, մյուս կողմից «Հայոց աշխարհի փափկասուն տիկիններին» զեղեցկությունը[2]։ Ասենք թե խելագարվեցա և դուրս ձգեցի, դրանով ի՛նչ կշահվիմ, այն փափկասուն տիկինները կկենդանանա՞ն, որ դան իմ պետքերին ծառայեն։ Իսկի առաւոտվի մեջ, Եամիրամը իր թալիսմաններով և առնգներով չէ կարանում Արայի նոր անշնչացած դիակը կենդանացնել, ես երկու հազար կամ երեք հազար տարվա մեռած գնացած կանա՞յքը պիտի կենդանացնեմ և այն այս իրական աշխարհում, այս անողոքելի դարում, որի բաղաւորը չէ մի որպիսի և իցն քնարեր նաեիկ, այլ այն արդասավոր սկեպտիցիզմը, որ վերցնում է մարդկային մտքի ամբողջյան նախապատիները։

Հետու ենք մենք մեր այս գործը այս տեսակ օրինակների շատությունով բեռնավորելու դիտավորությունից, որովհետև աշխարհի երեսին ոչինչ այնքան շատ չկա, որքան մի բնական երևույթի կամ իրողության օրինակ. բացի սորանից այն բանը ինչ որ անցել է մեր լեզվի գլխից, ո՞ր ազգի լեզվի գլխից չէ անցել։ Հավաքել այդ բոլորը և նոցանով խճողել ու հաստացնել մեր աշխատասիրյան փորը՝ ձանձրալի է թվում մեզ և կարծում ենք, որ ընթերցողը ևս իրավունք կունենայինձանձրանալու։ Բայց մի քանի օրինակ հարկ եղավ դնել, որովհետև չկամեցանք շոր դրույթյուններով միայն շատանալ։ Բայց այս օրինակները դրինք, ոչ թե խոստովանելով հին լեզվի դրական գեղեցկությունը կամ նորի դրական ազնվությունը, ո՛չ. այլ միայն թույլ տալով և թույլ տալույց ևոքը նույնիսկ օրինակներով մեր դրույթյունը պաշտպանելու և հակառակ կարծիքները շղարշելի փաստերով մերժելու համար։ Ինչքը պիտին մարդը տեսնում է պարզ, որ հին լեզվի իրավունքը, երբեք ավելի չէ նոր լեզվից, հին լեզուն ավելի զեղեցիկ չէ, քան թե նորը, հին լեզուն ավելի ուժով չէ, քան թե նորը, թեև սա հին լեզվի և հարյուրում մասի չափ էլ մշակված ու գործածված չէ։ Խոստովանում ենք, որ նոր լեզվի մեջ կա թերություն կամ ճապաղություն. ավելի իրավունք կար զարմանալու, եթե չլիներին դրքա, որովհետև այդ լեզուն մինչև այժմ գրի տակ ընկած չլինելով և չմշակվելով, բնականապես պիտի ունենար այդ թերությունքը։ Բայց հին լեզուն, նույնպես, չունի՞ իր թերությունքը։ Նորա մեջ կան բառեր, ձևեր, որ նորի մեջ չկան, որովհետև շատ այդպիսիների զաղափարքը պետքերի հետ միասին կորած են և չկան ներկա հայի համար, բայց և նոր լեզուն ունի իր կենդանի և շարժուն ձևերը ու ոճերը, որպես ներկա զաղափարների և պետքերի հայտարար, որ հնումը չկան։ Եվ ինչո՞վ կաուշվին, կկոկվին նոր լեզվի պահապանքը, եթե ոչ մշակությամբ, և գրի տակ ձգելով, ինչո՞վ կսահմանափակվին նորա ճապաղությունքը, ինչո՞վ կազնվանան նորա ձևերը և ոճերը, եթե ոչ ուսումնասիրելով այդ լեզուն, գործ դնելով նորան և օրեօր աճեցնելով։ Իրավունք ունի Բևկոնը, մինչ ասում է. «Գարդայը հարստացնում է մարդու միտքը, խոսելու մեջ

վարժվելը հաջողագույնս է անում նորան, իսկ գրելը սուվեցնում է ճշտությունն: Իրավ որ կենդանի խոսքը ավելի ճապաղ է, քան թե գրությունը, որ ավելի քիչ խոսքով իմացնում է նույն գաղափարը: Հայտնի է, թե նոր լեզուն ապաստան մնալով միմիայն հասարակ ժողովրդի բերնին, պիտի ճապաղ լիներ ընդհանրապես, որովհետև գրի մեջ չմանելով ճշտված և սղմված չէին նորա ձևերը կամ ոճերը:

Կարող են մեզ ասել, թե մինչև այժմ մեր բերած վկայությունքը և ապացույցքը ավելի վերաբերվում են այն խնդրին, թե ո՛րը պիտի նախընտիր համարենք, հին՝ թե՞ նոր լեզուն, քան թե այն պատճառներին, թե ինչո՛ւ համար չէ կարելի առաջ տանել նոր լեզվի մշակությունը հին լեզվի ազդեցության սարկանալով:

Բայց սորա ընդդեմ մենք ասում ենք, որ հին լեզուն նորից նախընտիր, գեղեցիկ և մշակված համարվիլը շատ պինդ կապված լինելով նոր լեզուն բռնաբարելու և հնի ազդեցության սարկացնելու անխորհուրդ ձգտողության հետ, այո՛, մեր փաստերը երկու խնդրի ընդդեմ ևս կարող են գործ դրվիլ: Որովհետև եթե հին լեզուն նախընտիր համարելով նորը անարգելը և ոտնակոխ անելը նմանում է կենդանի զավակը սպանելու, այն պատճառով, որ նորա մեռած մայրը ավելի գեղեցիկ էր, նույն այն հին լեզվի գեղեցկության պատճառով նոր լեզուն էլ քաշկռտել և ժողովրդի իրավունքը բռնաբարելով, կենդանին մեռելի հետ պատանքելը, նմանում է այն բանին, եթե ասանելով, որ նորածին, բայց կենդանի մանուկի քիթը ավելի երկայն է, քան թե նորա մեռած մոր քիթը, մտածող լինելի կարել դանակով ավելորդ երկայնությունը, կամ եթե կարճ է, աքցանով քաշելով երկարացնել, որ միաչափ լինի մոր քթի հետ, նույնպես և մյուս բոլոր անդամները կամ գույնը: Պարզ է, թե այսպիսի գործողությունք նորածին մանուկի կազմվածքի վրա, անշուշտ մահառիթ են. և եթե մահ էլ չպատճառեն, ապա ուրեմն պիտի համաձայնել, որ ավելի այլանդակում են մանուկի կերպարանքը, քան թե գեղեցկացնում. պատճառ, բնության անբռնաբարելի իրավունքի վրա չէ կարելի անպատիժ ձեռք բարձրացնել:

Հայտնի է, թե մանուկը, բնականապես, պիտի ամեն և զորանա այն կերպարանքի տակ, ինչ կերպարանքով ծնել է իր մորից, կրթությունը և դաստիարակությունը պիտի օգնեն նորան, որ նա գառնա ընկերության պիտանի անդամ: Բայց իր մորը նման չէ, կամ այնպես գեղեցիկ չէ: Այս խնդիր չէ, այլ ցնո՛րք: Կարող է նա իր մորը չնմանելով ավելի գեղեցիկ լինել իր տեսակի մեջ, երբ նորա կազմվածքը պնդանա և ծաղկի. կարող է նաև գեղեցիկ չլինելով, իր ընդունակությամբ և լուսավորությամբ հարյուր անգամ նախընտիր և հարյուր անգամ պիտանի լինել, քան թե նորա մեռած մայրը: Այսպես ևս նոր լեզուն չպիտի տարկանա հնին, այլ պիտի մշակվի ինքնուրույնաբար: Թող նա ներկա մեր պետքերի անհրաժեշտ ընդունակությունը և ձգականությունը ունենա, որ պետքերի անհրաժեշտ ընդունակությունը և ձգականությունը ունենա, մենք գեղեցկության համարատատեսից կամ սիրողից կխնդրենք, որ նա,

իր շափը ծոցը դնեն, որովհետև նորը ընդունակություն և ձգականություն առանալով պիտի և նոր շափով չափվի. մեր հնաոճի չափը նորա համար կամ կարճ է կամ երկայն։

Բայց, լսում ենք, այսուհետ բարձրանում են ձայները, թե ինչո՞ւ է առաջացել ռամկական տրամաբանության տակ, և նրա նորա մշակությունը առաջ չտարվի հնի ազդեցության տրկացնելով, այն ժամանակ էլ հայկաբանություն չի մնալ, այլ սոսկ ռամկաբանություն և այլն և այլն։

Խոստովանենք, թե նոր լեզվի տրամաբանությունը շատ մոտ է ռամկական լեզվի տրամաբանության, նոր լեզվի բաղդատությունը շատ անգ գրելին նույն է ռամիկ լեզվի բաղդատության հետ. բայց ի՛նչ կանենա, երբ բոլո՛ր ազգդ այդ տրամաբանությամբ և այդ բաղդատությամբ է խոսում։ Մոռցնել նորան այդ բոլորը և քաշել տանել հին լեզվի տրամաբանության տակ, համազոր է հին լեզուն քարոզելու, որ իր կարգով համազոր է մարդկային կենդանի խոսքը ուրանալու։ Այն մարդը, որ մի անգամ հիմնավորապես հասկացել է լեզվի խորհուրդը, նորա պաշտոնը, այսպիսին, երբեք չէ կարող այսպիսի ոչինչ բաների առջև ընկրկիլ։ Ինձ հարկավոր է, որ իմ միտքը առջևիս կանգնած մարդը հասկանա. ես գործ դնելով նոր լեզուն, կատարելապես հասնում եմ իմ նպատակին, այն մարդը հասկանում է իմ միտքը։ Բայց ձևերը և տրամաբանությունը մոտ է եղած ռամկականին, ինձ ի՛նչ փույթ կամ ինչ օգուտ իմ բուն հայկական ձևերով կամ հայկական տրամաբանությամբ խոսելուց, երբ լեզուն այն ձևերի տակ գրկվում է իր խորհրդից և չէ կարում վարել իր պաշտոնը, երբ խոսողը չէ հասնում իր նպատակին, որովհետև նորա խոսակիցը չէ հասկանում նորա միտքը այն ձևերի տակ։ Տառկական տրամաբանությունը կամ բաղդատությունը, նոր լեզվի վրա ա՛չ մարկոսը պատվաստանց և ա՛չ կիրակոսը. բնությունը, պատմական դեպքերը և հազարամյա ժամանակները ավին նորան այն ձև ու կերպարանքը. կարո՞ղ ես անցած գնացած բաներն ընդհնմ պատերազմել. կարո՞ղ ես բնության ընդհնմ ճակատ ճակատի պատերազմել։ Այս տեսակ ձգտողության տեր մարդիկը, նրա ուրիշ բան չգիտեն, գո՛նե պիտի ներողություն խնդրեն, որ Աստվածաշունչը կարդում են, մենք էլ այս պատճառով դիմում ենք դեպի նորա օգնությունը։ Ինչի՞ համար լորը և մանանան թողած, Եգիպտոսի սոխ ու սխտորն էր հիշում Իսրայելը. հայտնի է, թե մեզ ամենևին համար, մեր ներկա հասկացողության և ճաշակի համար ավելի ազնիվ և ավելի նախընտիր են լորը և մանանան, քան թե սոխը և սխտորը։ Պատճառը շատ պարզ է, որովհետև Իսրայելը դարավոր ժամանակներով Եգիպտոս մնալով ընտանացել էր Եգիպտական բնության, նորա հաշակը և հասկացողությունը դոյացել և զարգացել էին այն բնության ազդեցության տակ և այժմ մեզ նախընտիր համարվածը լորը և մանանան չէին կարող բռնել նորա համար Եգիպտոսի սոխի և սխտորի տեղը։ Կարո՞ղ ես քո կամքով կամ անկախիդ մեջ քեզ շողացնելով պատ-

գամ տալ 5 միլիոն ազգիդ, որ նա թողու իր սովորական ձև ու ոճը ու առնու կամ հպատակի հին լեզվի ձևին, ոճին, կամ տրամաբանության։ Եթե ցերեկը ամպը և գիշերը կրակե սյունը, եթե Եհովայի որոտները Սինայի գլխից, և Մովսեսի պատվերները այնքան ազդեցություն չունենին մի խումբ Իսրայելի վրա, որ նա ամեն օր չհիշեր Եգիպտոսի շուշափելի աստվածները, եթե այս բոլորը հերիք չէին նաև Ահարոնի համար, որ նա ոսկեղեն հորթը չձուլեր, ը՞ն հրամանը կամ պատգամը կարծում ե՞ս թե տեղ կհասնի և 5 միլիոն ազգիդ գլխին հին լեզվի տրամաբանությո՞ւնը կհանգչի, ինչպես վերնատան հրեղեն լեզուները։ Մեղավո՞ր էր Իսրայելը, որ Եգիպտոսի մեջ տեսաննելի և շոշափելի աստվածների սորված լինելով, չէր կարող հասկանալ մի անտեսանելի և անշոշափելի աստված։ Կարելի՞ է դատապարտել նորան, եթե նորա հասկացողությունը գոյացած և ամած լինելով եգիպտական բնության, եգիպտական աստվածների ազդեցության տակ, գաղափար չուներ ազատության էական սկզբունքի մասին։ Հայտնի է, թե Եհովան շատ վազ էր մի այդպիսի ժողովրդի համար և այնքան վազ, որ նաև հազար տարի հետո Իսրայելի խուճկները ծխվում էին բարձրավանդակների վրա և զոհերի ծուխը բարձրանում Բահալին և Աստարտին։ Բայց Հռովմայեցոց Գալեստինին տիրելու ժամանակները, Բահալը և Աստարտը ուրե՞ն գաղթած Իսրայելցի պաշտողներ, հայտնի է, թե չէ. բեև այն ժամանակ Իսրայելը էլ ոչ ամպն էր տեսնում, ոչ սյունը, ոչ Եհովայի կրակն ու բոցը, ոչ Մովսես կար և ոչ Եղիա։ Ի՞նչ է պատճառը, որ Եգիպտոսից դուրս եկած օրից այնքան դարավոր ժամանակներում, ինչ որ չկարողացան արգելել Եհովայի, Մովսեսի և մյուս մարգարեների ավտորիտետը, Իսրայելը ինքը իրեն դադարեցավ և խափանեց Բահալի և Աստարտի պաշտոնները։ Հայտնի է, թե իսրայելական բնությունը հեղափոխության տակ ընկնելով այն դարավոր ժամանակամիջոցում, Եգիպտոսի ազդեցությունը նորա վրայից կորեց և դորա հակառակ Եհովայի ազդեցության տակ մնալով, էլ չէր կարող տեսաննելի և շոշափելի աստվածների հնազանդվիլ, որովհետև նորա իմացական հասակը բարձր էր այժմ, քան թե Նարուդոդոնոսորի վաթսուն կանգուն արձանը։ Այս հեղափոխությունից էլ մինչև այսօր երկու հազար տարի անցավ և այս երկու հազար տարվա մեջ Ավետարանի ձայնը Իսրայելի անկաշից չկտրվեցավ, բայց նա ոչ միայն չկամեցավ լսել, այլ Մովսեսի քարոզած պարզ Եհովայի կրոնի վրա պատվաստեց նաև մարգարիր և ժողովրդական կանոններ, որ հայտնի են Թալմուդի անունով, որով տրամագծականությամբ մանավանդ հեռացավ, օտարացավ Ավետարանի վարդապետությունից, և ավելի ևս, քան թե մովսեսական կրոնը։ Եթե դարավոր սովորության, բնության և պատմական դեպքերի ազդեցությանց մեջ չինարենք այս բաների բուն պատճառը, ի՞նչպես պիտի հասկանանք և մեկնենք երևույթը, որ լոկ բնական հետևանք են այն ազդող պատճառներին։

Հեղեղը, որ իջնում է սարից, կարգելվի՞, եթե մառածես պատ քաշել նորա առջև և քո տունը այդ ճամփով փրկել. չէ՞ որ ավելի խելքի մոտ է խանդակներ փորել և հեղեղի հորձանքը այն սահմանի մեջ ուղղելով, նորա ապականող և ավերող ուժից փրկվիլ։ Բնությունը կրա՛կ է, կա՛յրն, կմաշե եթե անմիջապես և կոպտությամբ վարվիս նորա հետ, բայց շնայելով սորա վրա, բնությունը անհաղթելի չէ, եթե կարգով, ճամփով, դարձյալ բնական հնարներով ընդդեմ դուրս գաս նորան։ Մինչև Ջրանկլինի շանթարգելը, որ հազար տարի Մասիսի նման ապառաժ էլ դեմ աներիր կայծակին, կարո՞ղ էիր քեզ ապահովիլ նորա հարվածից, բայց ա՜ւ, բնությունը դարձյալ զենք տվեց քո ձեռքը. մի երկաթե ձող է, բայց բորբոքված կրակի վրա ջուր ածելու պես, նատեցնում է օդի էլեկտրականության գործունեությունը և ապահովում է քեզ և քո տունը։ Ի՞նչ է պատճառը, որ Մասիսի նման ապառաժի չկարողացածը կարողանում է մի շնչին երկաթի կտոր։ Հայտնի է, թե Մասիսը դեմ դնելով կայծակին, միանգամ խելքիդ նատեցրել էիր, որ պիտի կարողանաս այն ահագին հսկայի ուժով հաղթել բնությանն, մինչդեռ բնությունը ծաղրում է նաև Հիմալայի, Չոմալարի և Դավալագիրի հսկայությունքը, ուր է մնում, նորա հետ համեմատելով մեր մեկ թիզ Մասիսը. բայց երկաթը, որ դեմ ես անում նորան, այնտեղ քո խորհուրդը բռնանալ չէ բնության վրա, այլ, ուղղություն տալ նորան և սահմանափակել նորա կարողությունը, որ իբրև էլեկտրականության լավ առաջնորդ, կամուրջ է լինում օդի և երկրագունդի մեջ, այնպես որ առհասարակ էլեկտրականությունը այն կամուրջի միջնորդությամբ կպչելով երկրագունդի էլեկտրականության հետ, կապվում է և ուղղվում է դեպի երկրագունդի էլեկտրական կենտրոնը, որ նույն պիտի լինի և նորա երկրաչափական կենտրոնի հետ, որովհետև չերմությունը նույնպես ազդյուր է էլեկտրականության, և որովհետև երկրագունդի կենտրոնը հալված վիճակի մեջ է իր անչափելի բարձրաստիճան չերմության։

Եթե հայոց ազգը դարերով սարկանալով պարսից, մոգոլների, սելջուկյան թաթարների, արաբացոց, օսմանցոց, եգիպտացոց, կամ դեռ չգիտեմ ինչացոց, այն պատմական դառը դեպքերի տակ ընկճված, մնառած ու հոգին բերանը եկած, չէր կարող բնական օրենքի ազդեցությունը քերել իր վրայից, չէր կարող չընդունել այն տիպը և կնիքը, որ այնքան դարերով, կրակով և բարձրաստիճան ճնշողությամբ դրոշմում էին նորա փափուկ սրտի վրա, եթե նորա կյանքը ներարկված էր այն ազգերի անպայման ազդեցության, միտքը, որ կյանքի հետ լծակից է, ենգուն, որ մարդ հայտարարն է, ի՞նչպես կարող էին ազատ մնալ այն ազդեցություններից։ Մի դեղ խոտ, մի բուռը հող դնում ես մեջտեղը ու նորը բոլոր աշխարհը ծածկում ես ջրհեղեղով, էլ խե՞լք է այնուհետև պահանջել, որ խոտը չոր մնա, կամ հողը չցրվի։ Հայտնի է, թե հայոց ազգը դեղեռնության բոցի կամ մովսեսյան մարննու աքանչելի որակությունքը չէր կարող ունենալ, որ ցողը նորան չթրջեր կամ կրակը չէրներ։ Դեռ մեծ ազգամար-

դուքյուն է հայոց ազգի կողմից, որ այնքան կարողացել է պահել, որ այսօր մեզ պես, ազգի կորած, շվարած որդիքը կարողանում են նորա կենդանի խոսքով երկու տող գրել։ Այո՛, մենք շատ խոտոր գիտենք, որ այսպիսի շրհնեղնեներից փառցան, շատ հողեր գիտենք, որ ցիր ու ցան եղան, որոնց անունն անգամ մոռացված է այսօր։

Լա՞վ է եղել, վա՞տ է եղել, խնդիրը այդ չէ։ Ամեն մարդ գիտե, որ այդ սոսկալի տարաբախտությունը էին, զարհուրելի հարվածներ, սարսափելի փոթորիկներ, որ անցան մեր ազգի գլխից, բայց որ եղել են ու պատահել են և իրենց հետքն էլ թողել են ազգի կյանքի, նորա մտքի և նորա լեզվի վրա. կարելի՞ է այս բոլորը ուրանալ և քերել հանել։ Ոչ ոք ուրախ չէ, ոչ մեկիս սիրտը չէ փառավորվում մեր հիշատակաբաններին կևսը արյունոտ, իսկ կևսը դարավոր արտասուքից փտած թերթերը դարձնելու ժամանակ, բայց ի՛նչ օգուտ. անցածը հետ կգա՞։ Եթե մեր հայկական անկախությունը, գուցե հայկական լեզվի տրամաբանությունն էլ մեր անարատ ու այսօր իր տաճկական տրամաբանությամբ չվշտացներ մեր պարոնների կույս անկաշը, բայց որ հայոց անկախության շինվածքը կործանվել, ու կատրներն էլ Նեվայից բռնած մինչև Յավա հասել, եթե ազգը հազար տարիներով ծանր սարկության մեջ շատ անգամ ատիպվել է կամ թաքուն խոսել, որ իր շարշարողը չտեսնե նորա խոսածը ու գլխին չզարկե, կամ պարապ միջոց գտած ժամանակը այնպես արագ խոսել, որ շարշարողը վրա չհասնի և այս պատճառով բառերի ձայնավորքը թողնել, կամ ձայնը չլավելու համար ակռաները և պռուշները սղմած երկար ձայնավորները դնալի կարճ փոխել, մեկ խոսքով եթե ազգը ստիպվել է հայախոսությունը որպես մի մաքառանելության հազար արգոսների աչքից ծածկելով, որպես մի սրրազան ավանդ, սիրտը բերանը եկած այսօր այս կերպարանքով բերել թողել ներկա սերունդին, այդտեղ հայկական տրամաբանությունը կարելի՞ է պահանջել։ Ո՞ր խիզճն է, որ պիտի ներե, ո՞ր ձեռքն է, որ պիտի բարձրանա մի գավազան էլ այստեղ նորա գլխին հասցնելու, քե «ձայնդ կորիր, տաճիկ տրամաբանությամբ ես խոսում, քե խոսում ես, խոսիր ինչպես խոսել են քու նախնիքը, բուն հայկական տրամաբանությամբ»։ Chapeaux beaux dégoutent puriste.

Գ.

Ալեքսանդրյան դպրոցի ծագելյալ ժամանակը բանի վարդապետությունը ոչ գուր տեղը մինչև այն աստիճան էր հասուցած, որ մինչև անգամ և քրիստոնեության մեջ անկյունաքար դարձավ. «Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն. նա էր ի սկզբանէ առ Աստուած, ամենայն ինչ նովաւ եղև և առանց նորա եղև և ո՛չինչ որ ինչ եղևն. նովաւ կեանք էր»։

«Ախ՝ լեզուն, լեզուն. լեզուն որ չըլի՝ մարդ ընչի՞ նման կըլի», ազատախոսում է նահատակ Արուխյանը։

Եվ արդարև բանը ասուված է, արդարև ամեն բան նորանով է եղել, նորանով է լինում և պիտի լինի։ Լեզուն է այն սքանչելի ուժը, որի ընդդեմ ակար են նաև միլիոնավոր բարբարոսների սվինները։ Բնության ահարկու ուժերից հետո, որպիսի են էլեկտրականությունն, քիմությունն և այլն, լեզուն առաջին զորությունն է, որ հայտնվում է բնության մեջ՝ բովանդակված բարոյական աշխարհում։ Լեզուն է ազգությանց դրոշակը, լեզուն է նոցա որպիսության և վիճակի հայտարարը։ Չկա աշխարհիս երևելի ազգ, որ բարբարոս լինելով լեզուն լիներ վսեմացած, չկա նույնպես ազգ, որ քաղաքագործվելով բարբարոս լեզու ունեներ։ Պատճառ, սոքա երկուքը ևս կապակից են իրար հետ և մինը չէ կարող առաջ երթալ առանց մյուսին, մինը չէ կարող հետ մնալ և ավերվիլ առանց մյուսին։ Լեզուն քաղաքացիության մի աման է, որով մարդը թափում է իր միտքը իր նմանների մտքի մեջ. սա է այն կամուրջը, որի վրայով կարող են ազատորեն ընթացք ստանալ մտքերի առևտուրքը։ Անվնաս մարդու վիճակը, այսինքն մունջի արտաոավելի վիճակը է ամենամեծ պատուհասը, որին կարող էր ենթարկվիլ մի մարդ։ Կուլըը, մխիթարվում է լեզվով, ձեռքից և ոտքից ընկած մարդը մխիթարվում է լեզվով. պատճառ, լեզվի միջնորդությամբ իր կարիքը հայտնելով մերձավորին, գտնում է իր համար օտար աչք, օտար ձեռք ու ոտք։ Սուտ՛ւդ է, չեն սոքա, որպես կարող էին սպասավորել նորա անփափկանքը բայց և այնպես ի՛նչ համեմատություն կա սոցա և մունջի մեջ։ Այն խշվառը աչք ունի, ձեռք ու ոտք ունի և շատ անգամ մի առույգ առողջություն ընդհանուր կազմվածքի, անանում է, շոշափում է, ճաշակում է, հոտոտում է, հետևաբար և ամեն վայրկյան արտաքին աշխարհի տպավորությունքը թափվում են նորա զգացողության վրա, բայց, պիտի մնան նոքա այնտեղ, որպես մի անելանելի վիրապում և պիտի մաշեն և շարշարեն այն զոհը, որ հնար չուներ դուրս թափելով նորանց, ինքնանալ իր բեռներից։ Այս է գեթ այն ցավը և խշվառությունը, որ նա զգում է, բայց սոքանից ավելի խշվառություն կա, որին ինև ենթակա է նա, բայց չգիտե։ Խաղացական աշխարհը փակ է նորա դիմաց։ Ահա այն առկախի վարագույրները։ Ոչ մի գաղափար, որ մարդկությունը արյունի գնով մշակել էր, չեն նորա համար։ Նա չգիտե մինչև անգամ ինչ է ինքը, ի՛նչ պաշտոն ունի ամենաբարի բնության գործում կատարելու, մինչև ո՛ւր հասնում է իր նմաններին (ո՛չ մունջերի) կարողությունքը և ձգտողությունքը։ Նա չգիտե ինչ ի՞նչ տեղից եկավ և ո՛ւր է գնում։ (Թեև այս բանը և շատ ուրիշների համար տակավին գաղտնիք է, բայց գոհություն բնության, օրնօր այդ անթափանցելի վարագույրը անուրջանում է)։

Մունջը, մի փորր ավելի լավ է դրված բնության մեջ, քան ինև վերին աստիճանի կիսապատանագործված կենդանիքը. և այս է նորա էության

գագաթնակետը: Նորա համար չկա բարոյական խնդիր: (Մեն գիտեն սորանից ավելի թշվառ վիճակ, թող ասեն մեզ. մենք, գո՛նե, չգիտենք):

Բարոյական խնդի՞ր.... Ո՞ւր է դորա աղբյուրը, միթե գո՞ւրս է գա մարդկությունից, որ մունջը մարդ լինելով անմահ է նորանից: Բանն էլ այս է, որ մունջը բարոյապես մարդ չէ. վերևն էլ ասացինք, մունջը է անրան կենդանիներից ամենակատարյալը. Մեն օրանգուտանգի կամ կորիլլի համար կա բարոյական խնդիր, ապա ուրեմն կա և մունջի համար. բարոյական խնդիրը կարող է լինել միմիայն լուսի մեջ, «և խաւար նմա ոչ եղև հասուս»: Կարծեմ ավելորդ էր ասել, որ այս լույսը լեզուն էր: Բնական աշխարհի լույսը ևս մի միջնորդ է, որ բնության մեջ, նորա ձեռքով կատարվին այս և այն պաշտոնակատարությունքը, իսկ բարոյական աշխարհում լեզուն է այդ միջնորդը, որի ապաւավորությամբ կատարվում են իմացականության պաշտոնակատարությունքը: Թեև մենք ընդհանրապես կուսակից ենք փորձական և վերածական փիլիսոփայության, որպես ավելի դրական տեսության, բայց այս խնդրի մեջ բնավ սխալ չէ և եզրակացականը և մենք առանց հոդդհողդվելու կարող ենք մի անհատի մի մունջ մարդու տեղ առնուլ մի ամբողջ ազգ նույնպես զուրկ լուսից, նույնպես անծանոթ քաղաքագործության արդյունքներին, նույնպես անլեզու վերաբերությամբ նաև այնպիսի բժրտնոզության, որ առաջին ստեղծանքն էին լուսավորության, թո՛ղ վեմ խրնդիրները, և ահա ճշմարիտ էր այն սարսափելի վէմերը և նորա վրա, որպես մի մունջ անհատի վրա:

Նորա, որ արդեն գուշակեցին, Մե ինչ էր մեր ասելիքը, տեսնում ենք որ բիբլերը կախում են և երեսները թթվեցնում, բայց մի՛ շտապեք բարկոծել մի մարդ, որ խոսում է այն ազգի մասին, որին ինքը ևս անգամ է, ինչպես նորա բնիկներցողքը. մի՛ դատապարտեք նորան, Մեն նա այն ծանր վճիռը դնում է իր ազգի վրա, անկողմնապահ ճշմարտության անուշով, պակա՞ս էր նորա սերը դեպի իր ազգը, քան Մե ձեր սերը, դժվար Մե կարողանաք ապացուցանել: Բուն այն ճշմարիտ սերը, որ չէ հնանում, որ չէ վախենում, բուն այն անխորտակելի շղթան, որով բնականապես կապված է նա իր ազգի հետ, ստիպում է նորան խոստովանել այս արտասովոր ճշմարտությունը: Կարելի էր քարկոծել նորան այն ժամանակ, Մեն նա սեր, սե և սպիտակը սպիտակ խոստովանելով, Հանցանք համարեր սեին իր սեությունը, որպես նաև սպիտակին իր սպիտակությունը: Բայց որովհետև նա գիտե Մե ի՞նչ բնական օրենքների ազդեցությամբ երևում են այդ գույները, և որովհետև այս գիտակցությունը չէ կարող լույս տալ, որ նա դատապարտե այդ գույները, ուստի քանի որ նա ներկա եղած ճշմարտությունն է խոստովանում, իրավունք չունիք և չեք կարող նորան քարկոծել առանց սուտ լյան և խաբեբի պաշտանյա դառնալու: Սխալ է նորա տեսությունը՝ ապացուցեք. բայց և ո՛չ այդ դիպվածում իրավունք ունիք դատապարտել նորան, Մեն նա այդպես էր ճանաչում իր հոգու կարողությունքը լիամասն կերպով լսելով: Արդեն

բանինքյան արժանի է հարգության ամեն մարդ, որ առանց վարագուրելու և կեղծավորվելու պարզապես և որոշակի հրապարակ է հանում իր իմացական կարողության արդյունքը։ Եվ ամեն այդպիսի մարդ թեև լիներ սխալված, այնուամենայնիվ այնքան մեղավոր է, որքան դուքը իր սեև լինելում։ Ոչ միայն մեր ազգի մեջ, այլ նաև շատ լուսավոր ազգերի մեջ, սրտի անխարդախ և անկեղծ խոստովանությունը չէ գտել տակավին այն գնահատությունը, որ արժանի էր նորան միայն նորա անկեղծ և անխարդախ լինելու համար, թո՛ղ նորա ուրիշ արժանավորությունքը։ Ո՞րքան ատաղիկ է խավարի բռնակալությունը, ո՞րքան հեռու է տակավին մարդը, այն աստիճանից, ուր միայն արժանի էր այս վսեմ անունին լիամասն կերպով. խնդիր, որ զայրացնում է զգայուն սրտի վերքերը։

Ազգը բաղկանում է ընտանիքներից, ընտանիքը անհատներից։ Ազգը ուրիշ բան չէ նեի ոչ ժողով անհատների, որոնց մեջ կային հասարակաց բաներ, հասարակաց ըմբռնողություն, հասարակաց ձև ու ոճ այդ ըմբռնողությանց համար, թող հատկությունքը, որ շատ անգամ սխալ, քան թե ուղիղ, որպես հասարակաց վերագրվում են այս կամ այն ազգին։ Ուրեմն ազգը է մի մեծ ընտանիք, ուրեմն ազգը է մի մեծ և հսկա անձնավորություն։ Այո՛, ազգությունը է մի վերացական անձնավորություն և երբ չկար այդ անձնավորությունը և ազգությունը չբացած էր։ Այնուհետև ամեն բան ընկնում է բնության վերլուծիչ ազդեցության տակ, քայքայվում է կազմվածքը, ցնդում են նորան կազմող տարերքը։ Հարկ չկա ասել, որ առաջին մահացուցիչ հարվածի հետ զգրում է և բարոյական խնդիրը։ Սա չէ նմանում այն նյութական տարերքներին, որոնք կապված լինելով բնության օրենքներով, պիտի աստիճանաստիճան թողուն իրենց կերպարանքը, ո՛չ, բարոյական խնդիրը չքանում է ական թոթափելի։

Ժամանակի հարվածը վաղուց արդեն հասուցել է մեր ազգին այս բարոյական մահը. այսօր մենք վերլուծվում ենք, քակվում ենք միայն նյութապես ազգային անձնավորության վերաբերությամբ։ Ո՞ր դիակը դաշտումը վեր ընկնի, որ կենդանիք նորան չմաքրազարդեն, երբ կարող է նա աղատ մնալ ջնջումից, խոնավության, լույսի և օդի, մեկ խոսքով նորան շրջապատող արտաքին աշխարհի ազդեցությունից, քանի որ կորուցել էր այդ ուժերին դեմ դնող անձնապահական զորությունը, կյանքը, որ անդադար շարժելով առուստրի մեջ էր այդ ներգործողների հետ։

Ի՛նչ մնաց մեզ անհատներիս հասարակաց ազգության անունով։ Կրո՞ն. քանիսը հաշվեմ. լուսավորչական, հռոմեական, բողոքական, հունական. լեզո՞ւ, ա՛հ, աշքդ լույս, ես էլ դորա քամակիցն եմ. ո՞ւր է Ռուբենն մեր ազգը անլեզո՞ւ էր».—Դու ես ասում։ ավելու չէ՞ որով գրում ես այս տողերը».—Ո՛հ, եթե սա լիներ հասարակաց ազգի, ո՛չ սա այլ երկու աստիճան տակավին տրանից ցած լիներ մի հասարակաց լեզու,

դլուխս քարը կոտրի, էլ չէի խոսիլ։ «Է՛հ, հոգիդ դուրս գա, այնպես գրե, որ ամենքը հասկանան».— Եկ դու գրե այդպես, տեսնո՞ւմ ես, երբեմն արժանահիշատակ Բաղիշեցյանցի ասածին պես, ես «յափսոսիցես եմ թաթոտնեում»։ Ո՛հ, եղե դու, և ո՛վ դու, որ դուցե մի պարոն ոք մին ես, այլև քո ծառան եղե գանե այդ փիլիսոփայական քարը, ես ոչ միայն «աշակերտիմ և հետևիմ», այլև օ՛վաաննա, «օրհնեալ եկեալ յանուն տեառն» ասելով ծունկ կշոքեմ նաև նորա առջևը։ Պարո՛ն, լեզվի խնդիրը ծանր խնդիր է և որքան ծանր, այնքան, վերադարձ չափակցությամբ, կարևոր է և որքան կարևոր, անհրաժարելի, նույնքան և էլ ավելի երեսի վրա ձգած։ Ո՛վ է մեղավորը։ Անտարակույս, ես, որ ասում եմ այս, իսկ նա, որ գոհ է ազգի վիճակից, որ կարծում է թե նա առաջ է գնում, որ մտածում է (եթե կարող էր կատարել այս պաշտոնը) թե ազգը սքանչելի լեզու ունի, բայց հեղինակների վատթարությունից միայն չէ հասկացվում ամբողջ ազգին, նա ե՞րբ կլինի մեղավոր։ Բայց այն պարոնը, ասում ենք բաց ու համարձակ, երկու տող չէ կարող գրել, որ հասարակաց լիներ հասկանալի, բովանդակելով իր մեջ արդի գիտությանց վերջին խոսքը։ Խոսել հազար ու մին մուրացած խառնուրդներով, խոսել կցկտուր, ճնճղուկի նման զույգ ոտքով այստեղից այնտեղ ոստնելով, և, այս ամեն սքանչելի հատկություններով, դեռ խոսել լոկ առանին խոշոր բաների մասին, կամ առևտուրի մասին, առանց հասարձակվելու մտածելու գիտության, թող ներեն մեզ եթե դորան լեզու չխոսասուլանենք։

Այսօր երկու գլխավոր բարբառներ մեր լեզվի — արարատյան և կ. Պոլսի — լավ ու վատ գործ են կատարում, թող նոցա ներքին բազմաթիվ հյուղավորությունքը, բայց արդյոք ուշագրությո՞ւն լինվում է մասն հյուղավորությունքը, աշխատելով օրեօր դնել նորան մի կարգի տակ։ Կարգ տանելով չենք իմանում բացարձակարար սորկանալ հին լեզվին նորի անժխտելի իրավունքները բռնաբարելով, որ բնավ չէ արդարանում և որ չենք կարող գովել, այլ մի տանելի ձև, որ կարելի եղածին չափ մոտ մնալով և օրեօր էլ ավելի մոտենալով ժողովրդին, դառնար մի բանալիք լուսե դուռը բանալու համար։

Եվ դեռ հերիք չէր, եթե այդ բարբառները առանձին-առանձին առաջ երթային, լոկ իրենց շրջապատի վերաբերությամբ. ո՛չ. մշակությունը պիտի լիներ ավելի ազատ, ավելի բազմակողմանի, ավելի հետաքրքիր, օրեօր այս երկու բարբառների ներքին կապերը միմյանց հետ աննշմարելի կերպով պնդելով, ամրացնելով, օրեօր այդ բարբառը միմյանցից բաժանող պատի այս աղյուսը, այն քարը, մյուս այունը խլելով։ Պիտի կարողանային այդ երկու բարբառը երբևիցե իսպառ միանալ, այդ չենք համարձակվում պնդել, բայց այսքանը անմերժելի է, որ շատ և շատ կարող էին մոտենալ. այսքանը անժխտելի է, որ առանց ընդհանուր միության լեզվի՝ ունա՞յն երազ է հասարակաց ազգի առաջ գնալը։ Բայց կրկնում ենք, այս շատ զգուշալի և նազիկ խնդիր է, որովհետև

հեղինակը հերիք չէ, որ պիտի օրնօր իջներ մինչև իր բարբառի տակը, այլև մոտենար և միավորվեր իր եղբոր հետ։ Արդարև կրկին շարժողությունն և ի՛ր առանցքի վրա և դեպի մյուս իր նմանը։ Կա՞ այս շարժողությունը, ես դառակս վեր եմ ձգում և այն ժամանակ կհամարձակվիմ այն ազատ և գունաթափ լույսը ընդունել որպես ապագայի հրաշափառ արշալույսի կարապետը. չկա՞ այս. բուեր եկնք, եկնք, երթանք դարձյալ մեր ավերակների խավար անկյուններում մեր գլուխը լալու։

Շատերը կծիծաղեն պարզամտությանս վրա, որ դեռ այդ երկու բարբառն էլ բնավ իրենց միմեղորեի համար անգամ խոպան հասարակաց դարձած չլինելով, նոցա միավորության խնդիրն ենք բարձրացնում։ Այդ խորհրդատու փիլիսոփային էլ խորհուրդ կտանք, որ լավ ուշադրություն անի երկու խոպան անմերձենալի կարծված բարբառներին։ Բարբառների մի քանի արտաքին ձևերը չեն և չեն այնպես անխորտակելի արգելք նոցա միավորության, ինչպես կարծվում է առաջին անգամ ակը տալիս. կենդանի լեզուն հոսանուտ մի բան է և ամեն օր փոփոխության տակ. մենք մեր կարճ կյանքում և մեր սրած փորձերից տեսնում ենք նորա հեղափոխությունքը։ Իշնո՞ւմ են այդ հեղափոխությունքը մինչև արմատը, ազդո՞ւմ են հասարակ ժողովրդի լեզվի վրա. այդ բանը թեև չէ նշմարվում մի քանի տարում, կամ չէ կարելի առանձին-առանձին քննելով գտնել մի մեծ տարբերություն, բայց գումարի պատասխանը ստորագրական է։ Չկա աշխարհիս երեսին բան, որ բնության օրենքներով չկառավարվեր. ինչ որ այդպես չէ, սուտ է։ Բայց որովհետև լեզուն իրողություն է և սուտ չէ, ուրեմն և ենթակա է բնության օրենքներին, իսկ բնության մեջ մենք տեսնում ենք, որ մի փորրիկ խմորոցը որոշյալ պայմանների ազդեցության տակ խմորում է շաղախը, եթե հացի և եթե այլ բաների. անհնար է թե լեզուն հեղափոխվելով ազգի ավելի առաջ գնացած մասին մեջ անփոփոխ մնա մյուս մասին վերաբերությամբ, անհնար է թե այդ հեղափոխությունը ազդեցություն չանի, շատ կամ սակավ, այդ այլ խնդիր է և կախվում է խմորոցի որակությունից, հասարակաց լեզվի վրա....

Դ

Դիտնալ հարկավոր է, նախ որ այս բառերից մեկ քանիսը ժողովրդական լեզվի մեջ գործ են դրվում բոլորովին այլ նշանակությամբ, քան թե նշանակում էին հին լեզվի մեջ և որոնց յուրաքանչյուրի մանրամասն բացատրությունն տալը ժողովրդական լեզվի բառարանին կմնա։ Երկրորդ, քանի մը բառեր էլ կան այստեղ, որ սեփական լինելով երևանի գավառին, անծանոթ են բոլոր ազգին, և որ չնայելով նորա վերա, իբրև ժողովրդական լեզվի հարստություն, մենք ուրախությամբ դրինք այս ցանկի մեջ, որովհետև այն գաղափարները հասկցնելու համար ուրիշ բառ չունենք։ Սոցա երբորդ ինչ տեղ որ հին լեզվի բառը իր հին նշանա-

կուլյամբ անփոխանակելի էր ժողովրդական լեզվի մեջ, և որոնք մանավանդ վերաբերվելով կենդանաբանության և բուսաբանության՝ անշուշտ հարկավոր էին, նույնպես պահեցինք այս ցուցակի մեջ, նայելով, որ ժողովրդական լեզվով փոխանակված հին բառերը առհասարակ աշխատեցանք հեռի պահել մեր ցուցակից, ինչպես երևում է բնագրից, այդ բառն համառոտ ցուցակից, թեև տակավին գտնվին քանի մը հին բառեր էլ և այն նոր հեղինակներից գործածված լինելու պատճառով իր ժամանակին կմոռնանք սրբել, մանավանդ, երբ ազգային կենդանի գանձարանի մեջ կան նոցա գաղափարը ասող ժողովրդական բառեր, որ մեզ կամ այլ հեղինակների դեռ անծանոթ են։ Չորրորդ, միավանկ, բայց անհոգնակի, թեև ժողովրդական լեզվին պատկանած բառերը կամ մակբայները բնականաբար չդրվեցան այս ցուցակի մեջ։ Հինգերորդ, քանի մը օտար բառեր ակամա թերևս մտան մեր ցուցակի մեջ, նոցա հայերենը ոչ ժողովրդական լեզվի և ոչ հեի մեջ լինելու պատճառով, հայերենը որ ժողովրդական լեզվի և ոչ հեի մեջ լինելու պատճառով, օրինակ այլ բառը, որ խոր հակառակն է, ճիշտ սայի գաղափարը դժար է հասկցնել խոր չէ, կամ ոչ խոր ասելով։ Գեխ բառը, որ օտարից է շինել ազգը և սեփականել, անհնար է առնուլ նորա բերնից և տեղը ընչացք դնել, այսպես էլ նալ բառը դժար է պայտով փոխանակել։ Հարկ չկա ասել, որ կամեցողք կարող են գործյալ գործ դնել հին բառերը, եթե ժողովրդի մեջ հասկցող գտնեն։

ե

... ուր այդ անսակ միավանկերի վերջին տառը մերժելով, բառի գաղափարը փոխվելու կամ բառը խափան անհասկանալի մնալու վտանգը, որ նա իրանից նույն բառի մեջ ավելացուցել է մի այլ տառ, որով $1^1/_2$ վանկը շինել է ուղիղ երկու վանկ։

Ժողովրդի համար միօրինակ դժար էր արտաբերել հին պայմանով ծաՌր, մաՌր, ոսկր և այլն բառերը, որոնց վերջին երկու տառի մեջ ն և ր մանում էր մի խուլ ը, ինչպես՝ մառն, գառն, նառն և այլ բառերի մեջ։

Հայտնի է, որ եթե այս բառերի վերջին ր տառը գուրս ձգվեր, այն ժամանակ կամ բառը անհասկնալի պիտի մնար, կամ գաղափարը և նշանակությունը պիտի փոխվեր. օրինակ ծառ, տառ, մառ։ Այս վտանգից, բայց միևնույն ժամանակ հին պայմանով $1^1/_2$ վանկը փոխանակ մեկ վանկի արտաբերելու դժվարություններից փախչելու համար, ժամանակը ամենայն խնամքով այս բառերի վերջին ն և ր տառերի մեջ դրել է մի ա, որով այս բառերի առաջին վանկը վերջանալով ծառ, տառ և մառ ձայներով տր, րի հետ, կազմում է մի այլ ամբողջ վանկ, ուր եթե ա և ր տառերի մեջ չդրվի ևս մի ը, այնուամենայնիվ դրականապես արտաբերվում է որպես տրր, որով ամբողջ բառը բաղկանալով երկու ամբողջ վանկերից, ծառ-տրր, տառ-տրր, մառ-տրր և հնչացնում է այս

բառերի արտաբերությունը և դուրս գալով միավանկ բառերի կարգից. հոգնականում առանում է ներ վերջավորությունը։

Նվ ևրև գրաբառը այսօր ևս առանց սի կամենան գործ դնել այս բառերը (որպես և գործ են դնում) ծանր, ոտն, մանր այսուամենայնիվ ստիպված են լեզվի բնական օրենքին համեմատ այդ բառերի հոգնակին վերջավորել իրրև բազմավանկ բառերի հոգնակի, ոտներ, մանրներ, ծանրներ և ոչ առներ, մանրեր, ծանրեր։

Այս օրենքից, իրրև բացառություն, ևրև չենք սխալվում, դուրս է մնացել միայն հարսն բառը, որ ժողովրդական բարբառով ամենայն տեղ միօրինակ արտաբերվում է հարս, որի հոգնակի թիվը վերի օրենքին ընդհեմ վերջավորվում է եր—հարսեր։ Ստույգ է, վերը դրած ձուկ, մուկ, մատ, եղ, որդ և այլն բառերը էլ Թյուրքիո Հայերի մեջ իրանց հոգնակի վերջավորությունը իրրև պարզ միավանկ եր— ձուկ-եր, մատ-եր. եղ-եր, որդ-եր, բայց բոլոր Հայաստանի մեջ պահել են հոգնականում ներ վերջավորությունքը, որով լռելյայն ցույց են տալիս, թե իրենց սկզբնական եղակի ուղղականը ճիշտ միավանկ չէր։ Իսկ հարս բառը և այնտեղ իր հոգնականում առանում է եր վերջավորությունը...

ԴԱՄԱԿՆԵՐ

1

Ս. Գ. ՍՈՒԼԹԱՆՇԱՀԻՆ

1856 թ., մարտ 21, Մոսկվա

Գերապատիվ հայրենակից, ՍԻՄԵՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ազգո բարեկամ.

Առաջին նամակը, որ գրում եմ ձեզ մանավանդ առաջին անգամ ծանոթանալուց հետո, պարունակում է յուր մեջ մի խնդիր, որ կարելի էր միայն գործել երկար ու շատ ծանոթութենից հետո: Չնայելով այս անհարմարության վերա, ես բաց սրտով գրում եմ Ձեզ այս նամակը, առանց սուտ քաղաքավարությունների, որ մինչև այժմ ևս չեն ամաչում ոմանք գործադրել:

Երկար ժամանակ է, որ ես և պարոն Նազարյանցն ցանկանում էինք դուրս տալ մի հայկական օրագիր, աշխարհաբար լեզվով հասարակին հասկանալի. երկար ժամանակ այս խորհուրդը մնացել էր մեր սրտումը բոլորովին անգործ, պատճառ, որ զանազան հանգամանք արգելք էին լինում այս ազգասիրական գործին: Այժմ տեսանելով այդ արգելարիւ հանգամանքների փոփոխությունը, տեսանելով մանավանդ, որ Ջուխոնները մինչև անգամ հրաման առացան Ռուսաստանի մեջ օրագիր տպելու, կրկին անգամ զորացավ մեր սրտի ցանկությունը, և սկսեցինք հետևել այս գործին, որ մեզ ևս թույլտվություն լինի տերությունից տպել ամենայն ամիս հայկական օրագիր Ռուսաստանի հայերի համար: Այս խորհրդով պ[արոն] Նազարյանցն ամսույս տասնիններից խնդիր գրեց ազգային լուսավորության նախարարին, որի հետ միասին ուղարկեց և տպելի օրագրի պայմանքը, որի համառոտ պարունակությունն այս է: Առաջինը՝ որ այդ օրագիրը պիտի դուրս տա պ. Նազարյանցը, ամենայն ամիս ութածալ ութն թերթ. (իմ անվամբ խնդրել չէր կարելի, պատճառ որ ես համալսարանում լինելով և բժշկությամբ պարապելով, չունիմ իրավունք հայտնի կերպով պարապել այսպես բանի, թեպետև առանձին գործակից եմ օրագրին, զոր որում մի մարդի անկարելի է այդ գործը կատարել): Երկրորդ՝ օրագիրը բազկանում է շորս մասնից, այսինքն Ուսումնական, Բանասիրական, Պատմական և Բնական հասվածներից, որոնք համաձայն հոդվածների պարունակությանը պիտու է զարդարվեն գեղեցիկ պատկերներով և օրինակներով: Երրորդ՝ օրագիրը պիտու է անվանվի «Հյուսիսային փայլողություն» (Северное сияние) և ամենայն ամսական տետրակի վերա պիտու է տպվի որպես անունը, նույնպես այս

ժայլոդության պատկերը։ Հույս ունինք, որ տերությունը հրամայեն, որ միայն մի արգելքը որ կա, մի կերպով վերանա — այսինքն Մոսկվայի մեջ հայոց լեզվի ցենզոր չինելը։

Այս մասին խնդրի մեջ ասված է, որ անդամ ընդունեն Մոսկվայի ցենզուրնի կոմիտեսին հայ Գուբերնակի անկրեատոր Գևորգ Կարապետյան Սուրենյանցը. սա ավարտել է յուր ուսումը Լազարյանց ճեմարանում, Լիցեևական արտոնությամբ, արժանացել է 12-երորդ աստիճանին. դիտեն ինչպես հայոց, նույնպես և այլ արևելյան լեզուները և այժմ վարժապետ է նույն ճեմարանի մեջ։ Գիտելով, որ տերությունը հանձնառու չի լինի հայ ցենզորի համար ջոկ ոռճիկ նշանակել, հոժարացել ենք, ինքներս նորան տարեկան բավականություն տալ և խնդիրի մեջ դրել ենք, թե նա առանց վարձի պատրաստ է ծառայել, որպեսզի տերությունը չհանդիպի դժվարության և ծուխ տար։

Լավ գիտեմ, որ թե այդտեղ մի հոգաբարձու մարդ չունենանք այս բանին, մեր խնդիրը չի ընդունվելու, մանավանդ, որ պատճառը պատրաստ է։ Վասն որո՞վհետև կարող էի դիմել այս խնդրովս, եթե ոչ ձեզ իբրև հայրենակցի և ազգի օգտին ցանկացողի։ Թեպետև այս բանը ձեր ծառայության պաշտոնից դուրս է, այսուամենայնիվ դուք շատ բարեկամներ ունենալով, որոնց առջև և հավատի գիտեմ, որ հարգելի էր ձեր միջնորդությունը, կարող էիք օգնել մեզ այս ազգային գործի մեջ, որով ոչ թե միայն մեզ կպարտավորեիք այլև բոլոր հայոց ազգը, որ չունի ոչինչ լուսավորության հնար։

Այս հիման վերա ես խնդրում են ձեզանից չխնայել ձեր աշխատությունը, որ նախարարությունը հետ չդարձուցանեն մեր առաջարկությունը, և ծուխ տար սկսանել մեր գործը։ Պարոն Նազարյանցը նույնպես մի պրոֆեսոր Մուխլինակիից խնդրել է, որ նա ևս աշխատի։ Ուրիշ մարդերից չէր կարելի խնդրել, պատճառ, որ հայերը դժբախտաբար այնպիսի մի զարմանալի հոգի տեր են դարձած, որ ենթե չկարողանան կամ չկամենան մի բանի օգնություն տալ, վնասելու և քանդելու միշտ պատրաստ են. իհարկե այս ոչ այլ ինչ է, բայց ենթե ապացույց նորա բարոյականության հիմանդության։

Գիտեմ, որ մեր օրագիր տալը քանի մը հնամոլ մարդերի ընդդեմ պիտի ելլի, պատճառ, որ դորա հին և մեռյալ լեզվի քամակից գնալով, կարծում են թե կարող են մի մոդական դավազանով հետ դարձնել հայերի համար հիմնադրած դարը, բայց այդ պարոնները փորձով կտեսանեն և աստուծով առաջին անգամ մեր օրագրի վերա, թե ժողովուրդը փորր ի շատե ճանաչել է ժամանակի իրավունքը, կտեսանեն, թե հայը ենթե մի պիր չի առնում ձեռը, բոլոր պատճառը այն չէ, որ չի կամենում կարդալ, բան հասկանալ, այլ մանավանդ այն է, որ կարդացածը չի հասկանում, և թե մինչև այժմ հայերի համար գրվել են միմիայն մի սխալատիկական կրոնական ընդին վիճելու վերա, որոնք ժողովրդի համար եղած թե չեղած մեկնություն է։

Մեր ցանկությունը այն է, որ կարողանանք ժողովրդին մոտեցնել փոքր ինչ պարույրյան հետ, նյութ և անունդ դնել հայկական չոր ու ցամաք պարույրյան մեջ, և ինչպես մի կողմից լնգուն, մյուս կողմից և նույն ինքյան պարույրյան հոգին և ուղղությունը որքան կարելի է շիննենք ժողովրդական, ազատելով արևելագիականությունից, որ[ի] մեջ մնացած է այժմ անտեր անտերունչ։

Շատ հույս ունիմ, որ ձեր աշխատությունը կպատակե մեր սրտի ցանկությունը և դա հավիտենական արձան լինի մեր անկեղծ բարեկամությանը։

Ողջ եղնք և ուրախ ձեր գերդաստանով։

Քո գրած նամակներդ երկուքը պ[արոն] Նազարյանցի վերա, երրորդը պ. Բերբերյանցի ձեռքով, ստացա անկորուստ։ Երկար ժամանակ նամակներիդ չպատասխանելուս պատճառը էր իմ անդադար զբաղմունքը, և քե ճշմարիտը կամիս՝ վերին աստիճանի թուլությունը և վերջումը տասն օրվա հիվանդությունս. ինչևիցե այժմ փառք աստուծո։

Ի 21 մարտ[ի], 1856

Մոսկվա

2

ԳՐԻԳՈՐ ՍԱՂԹԻԿՅԱՆԻՆ

Գաւվական եղբայր, ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

Սիրո ոզքունով հայտնում եմ, որ մեր օրագրի թուլլավությունը դուրս եկած լինելով, հրատարակում ենք այժմ հայտարարությունը. ահա ուղարկում եմ քեզ մի օրինակ, որ կարդաս, հոգիդ փառավորվի ու ցնծաս։ Ես քո այս բանի վերա ուրախանալուդ անցյալ եկածիդ Ռուսակի վնասների գրվածնդ գիտեի։

Հետևյալ փոշտերով կուղարկեմ մի քանի օրինակ ևս, որ ցրվես քո ծանոթներին և քո բնական ազգասիրությունովը հորդոր լինես, որ սորա մասնակից եղողների թիվը շատանա, որպեսզի այս գործը գլուխ գալով, վեննատ[իկ]կեցոց ազգաթը խառնվի. այլև, որովհետև օրագրի տարեվերջումը պետք է հրատարակենք ո՞ր քաղաքից ո՞րքան մարդ աստրագրվածը, այնտեղ ևս մեր նախիջևանի անունը թող առաջինը լինի յուր ազգասիրությունովը և լուսավորություն սիրելովը, քան թե այլ քաղաքներ։

Սիրական եղբայր, գիտես մեր գիշեր ցերեկ աշխատությունը և ջանքը, ուրեմն դուք ևս ձեր կողմից բան չհասկացողներին բան հասկացուցեք և դորանով այս ազգապարծանք գործին պատճառ եղնք հառաջ գնալուն։

Հերի՛ք է, որ մեր վերայից այն ամոթը, թե լուսավորությունը մեր ազգի մեջ պիտու է փառած պապական արեղաների ձեռքով մնանեն. նոցա լույսը խավարից շատ վատ է, վասն որո թող յուրյանց պահնեն.

հայոց ազգի մեջ կան այժմ մարդիկ, որ կարող էին հազար անգամ լավ գրել լուսավոր, ճշմարիտ և մաքուր, քան ԲՒ մի վիճնակեցի արելա։

Թափառական Հրեայն տպվում է անդադար, որի մասին կարող ես իմանալ Բերբերյանից, ԲՒ ի՞նչպես խնամատար էի նորա մաքուր, գեղեցիկ և անսխալ տպագրության։

Սիրելյր, ես խոսք չունիմ, որով կարողանայի կատարելապես հայտնել քեզ իմ սրտի շնորհակալությունը, պատճառ, ԹՒ այդ գիրքը պետք է երևի հայոց ազգի մեջ և պիտի մի օրինավոր ընթերցանության գիրք դառնա միևնույն ժամանակ պապականների աղբաթը խառնող, դորա պատճառը դու էիր։

Հույս ունիմ, որ իմ այս խոսքերս կընդունես, որպես անկեղծ սրտի բխվածք։

ԹՒ դու չլինեիր մեծահոգությունով հանձնառու դորա տպագրությանը, այդ աշխատությունը պիտի մնար ո՞վ գիտե որքան տարի և իմ այնքան տարվա ջանքս և տառապանքս պիտի դուր անցներ, ուրեմն ընդունիր իմ անկեղծ շնորհակալությունս, որպես գրավական մեր անքակտելի բարեկամության։

Ուղարկում եմ Քոխլովի առակը. 1. խրիստոմատիայի վերջին տիպը դեռ չէ դուրս եկել, 2. ԹՒ այն ևս ավարտվի, իսկույն կհասուցանեմ, իսկ պատեհաղմի վերաբերյալ երգերու հոտը ևս չկա այժմ Մոսկվայի մեջ։

Խնդրում եմ քո մեծահոգի ներողամտությունը, որ քո հանձնարարությունքը փոքր ինչ ուշ եմ կատարում. հավատա ասածիդ, որ մոխիր կտրել եմ. դուռնեն դուրս գնալու ժամանակ չունիմ, համալսարանի գործերը, Թափառական Հրեայի, օրագրի, և վերջապես սրբազանի գործերը, այնպես են արել իմ դրությունը, որ համարյա ԲՒ ամեն րոպես հաշված է։

Ես գիտեմ քո իմ վերա ունեցած անդդ և բարեկամությունդ և հույս ունիմ, որ երբեք բարկանալու չէիր իմ վերա։

Պարոն Օդդենը չկամի այն բաներն առնուլ ևս ևս, դուն ֆ՛ս իմ պարունս. արդ ունիմ դուլլուդիդ աղամ ջան, պահել իմ տանս և սպասում եմ հրամանիդ։

Ինչ որ մինչև այժմ գրել եմ ատացած Ֆեոդոր Միխայլիչից, այսինքն 200 մանեթ մի անգամ և հարյուր մանեթ վերջին անգամ, հասուցել եմ Լազարյանց Ճեմարան տպագրության բոլոր վարձը, իսկ ԹՒԻ պարտք ունիմ 65 ռուբլի, յուրաքանչյուրը 3 մանեթ 25 կոպեկ, որ շնորհակալ եմ. Ֆեոդոր Միխայլիչը երեկ եղավ և առավ Քաշագրով ասած մարդից, որ Նաժավոյ լինիում ունի յուր խանութը, մինչև որ դու այս մասին հոգաբարձություն առնես։

Սրբազանի գործերը մի կարողական ընթացք չունեցան մինչև այժմ, օրըստօրե սպասում ենք հրամանի, որ ինչպես լսում ենք մասնավոր կերպով պիտի լինի անպատճառ։ Մի երկու բան կպատմեմ քեզ Բերբերովը[1]։

Ուրիշ նոր բան չունիմ. Սուլթանին[2] թամամ հազար անգամ ասի, եղ-

բայր, ես դուցա խոսք հասկացնել չկարողացա, չգիտեմ ի՞նչ է միտքերը։

Այս ամառ հուլիսի վերջերին կամ կեսերին հույս ունիմ Նախիջևանում քեզ տեսանել։

Խնդրեմ ողջունես իմ կողմից բոլոր մեզ սրտով բարեկամքը։ Իմ բաների մասին որ սրբազանը [խոսք էր տվել] կատարել, բոլորն ևս կլինի. այս օրերս վանքի մասին տնօրինություն կլինի, միամիտ եղիր։

Ես գիշեր ցերեկ քուն չունիմ այդ գործերի մասին. քեզ ասում եմ, որ մոխիր եմ դարձել. հիվանդությունից հետո մի լավ օրինավոր առողջություն երես տեսած չեմ, որ քիչ մը կուատուսի ուժով բան տեսանեի. քա գնալեդ հետո կուատուսը մինչև 0-ը իջել է, փոխանակ, որ ձմեռը բարձրանում էր մինչև 74 կամ ավելի, մանավանդ Պետերբուրգի քաֆե-ռեստորանումը։

Մնաս բարյավ և ողջ եղիր. սպասում եմ պատվական նամակիդ։

Քեզ միշտ հոգով ու սրտով բարեկամ խ[ոնարհ] ծառա

Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

1857 հունիսի 1, Մոսկվայի մեջ

Թևաթը ասածդ ոտք չեմ կոխում, տեր Մավսեսն ասում է, թե Սալթիկովը վերջին անգամ լավ քոթակ տվեց պրոֆերանս. այն օրից ասում է բանս հետ գարկեց, մոտ 100 մանեթ տանել տվի։

3

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Մեծապատիվ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ուզո հայրենակից.

Շնորհավորում եմ ձեզ Քրիստոսի տյառն մերո սուրբ հարությունը և խնդրում եմ աստուծուց ողջություն և հաջողություն ձեր և ձեր ամբողջ գերդաստանի համար։

Այս շնորհավորական մաղթանքից հետո արժան եմ համարում հայտնել, որ մեր գրագրությունը վաղուց դադարած լինելով, ամենևին անծանոթ եմ ձեր գործերի կամ լավ ասել ազգային գործերի առհասարակ ընթացքին։ Ես մինչև այժմ սպասում էի ձեզանից իմ նամակիս պատասխանին, որ գրել էի դեռևս անցյալ տարումը, բայց մի ձայն ևս չլսեցի ձեր կողմից, վերջապես պատշաճ համարեցի գրել այս նամակը, որով և նորոգել մեր խզած նամակագրությունը։ Հույս ունիմ, որ օրագրի առաջին ամսաառաջարակը ստացած այժմ, երկրորդը հանապարհ կընկնի դեպի ձեզ այս շաբաթ, և ապրիլի մեջ կապենք Մարտը և Ապրիլը, այնպես որ մայիսին կհավասարվինք և այս անտանի ուշանալու մեղքը

կբավներ, թեև դա մեր մեզքը չէ, բայց այժմ այն տեղն է հասած մեր բանը, որ միշտ մենք փորր ի շատե բան հատկացողքս պիտո է ներողամիտ լինինք։

Օրագրի այսքան գլուխ գալու վերա ևս ուրախ ենք, որ գոնե կարողանանք մենք ցույց տալ, թե ի՛նչպես պիտո է լիներ օրագիր ասած բանը մեր ազգի դաստիարակության համար. ուրախ ենք, որ մեր մատենադրությունը մի փորր ձեռք ու ոտք առացավ, շարժողություն է ցույց տալիս յուր մեջ։ Իսկ եթե հայկական տպագրությունը ս՛ր աստիճանի մաքրության հասցուցինը, այդ իհարկե տեսաք, կտեսնեք միշտ օրագրի հետևյալ համարներին և նորատիպ մատյաններին մեջ։ Ով ևս պարծենում եմ նորանով, որ այդ տպարանը և օրագիրը պարտական է յուր գոյությամբը և հառաջ գնալովը իմ քաղաքացոց և գլխավորապես ձեզ։ Այդ բաների վերա հետևյալ համարներից մինի մեջ պիտի խոսենք և տանք արժանի հարգը։

Մինչև այժմ հայ ազգը կարծել է, թե միմիայն Վենետիկը և Վիեննան կամ թե Նորներսես Փարիզը, թե դոքա պիտո է, կամ կարող են միայն ազգը դաստիարակել, բայց մենք ցույց կտանք և կապացուցանենք թե որքան սխալ կարծիք է այդ և թե մեր ազգի հարազատ որդիքը ունին կարողություն բարոյապես առնել այդ բաները հազար անգամ լուսավոր գաղափարներով, քան թե պապական մոլակրոն և նախապաշարմունքների մեջ փտած մխիթարյանքը, միայն թե ազգը չխնայե մեզանից այնքան նյութական հնար, որքան հարկավոր էր մեր հոգևկան վաստակների վերա մարմին պատելու, որ կարողանայինը դոքա երևել մարդկեղեն աշխարհի մեջ։

Նազարյանցի հանգանի Բ հատորը ամարտված է, շուտով կտպվի Պավլոս և Վիրգինիան, իմ Բոփատական Հրեայն մինչև ապրիլի 10 կամարտվի նույնպես, և այն ժամանակ պիտո էր մի հոգարարձություն իմ մյուս աշխատությունը[3] հանդես հանելու համար, որի մասին վաղուց խնդրած էի ձեր օգնությունը նկատողների բերանով, թե մի փորր հարկավոր էր ապասել։ Այն օրից մինչև այսօր հինգ կամ վեց ամիս անցավ, վասն որո նորոգում եմ առաջարկությունս, հարակցելով թե, եթե դուք ազգի իշխանքդ և կարողքդ չօգնեք մեզ, մենք ոչինչ ենք, և ոչինչ գործ չենք կարող հառաջ տանել ազգի լուսավորության և դաստիարակության համար։

Այժմ ժամանակ է, որ և դուք և մենք, մինչդեռ կենդանի ենք, աշխատենք որքան կարող ենք, մեր ժամանակից մի փորր պարծանք թողուլ ապագա սերունդի համար և վասն ազգասիրության կրակը տառած սրտերի մեջ։ Ձեզ հայտնի կլինի, թե ինչ անձնազոհությամբ դիշեր ցերեկ կուրծք կոտրելով և աչք խավարեցնելով աշխատում ենք գրելով ու սրբագրելով, տպելով ու շարշարվելով. այսքան միայն կպա մեր ձեռքից. ապա նյութական հնա՞րը, այդ չունինք մենք և ազգը պիտի օգնե, և այդ ազգը չէ այն խաժամուժ ամբոխը, որ ոչ այս պիտո և ոչ այն, այլ ընտրյալքը,

որ ճանաչում էին յուրյանց անձը, յուրյանց ազգը, նորա օգուտը և վնասը և բարի սիրտ ունեին օգնել նորան։

Այս սրտով և հոգվով դարձյալ դիմում եմ դեպի ձեզ, արդո հայրենակից և խնդրում եմ ազգի անունով անտես չառնել իմ խնդիրը, այլ մի քանի ազգասիրաց ձեռնտվությամբ հասուցանել ինձ հարկավոր արծաթը, որ կարողանամ, գոնե ապրիլի 20-ից սկսանել տպագրությունը, որովհետև այդ միջոցում գործ չկա տպարանում։ Այս մասին գրել եմ այս փոշտով և խնդրել եմ պ[արոն] Սաղաթել Դավթյան Քայալյանից և հույս ունիմ, որ նա ևս յուր ազգասիրական ջերմեռանդությունը չխնայե նորա զավակների կրթության և դաստիարակության համար։ Մինչև այս րոպես դեռ Մոսկվա չեն եկած Սիբիրից, ո՛չ ձեր եղբայրը և ո՛չ Հակոբ Մատթեոսյանը։

Տեր Մովսեսը ստացավ ավագ քահանայություն և սպասեսական նշան սրբուհի Աննայի 3-րդ աստիճանի։ Չգիտեմ, թե կաթողիկոսի մասին ո՞վ ձնդանից ընտրվեցավ դեպուտատ։

Ժամ առ ժամ սպասում եմ ձեր ավետավոր նամակին։

Ողջ եղեք։ Ձեզ միշտ հարգող ու պատվող խ[ոնարհ] ծառա

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

Մարտի 27, Մոսկվա,
1858

4

ԳՐԻԳՈՐ ՍԱԼԹԻԿՅԱՆԻՆ

Սիրելի եղբայր իմ, ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հոգեհարազատ բարեկամ.

Քո գրած նամակներդ, երկուքը պ[արոն] Նազարյանցի վերա, երրորդը պ[արոն] Բերբերյանցի ձեռքով, ստացա անկորուստ։ Երկար ժամանակ նամակներիդ չպատասխանելու պատճառը էր իմ անդադար զբաղմունքը և ևթե ճշմարիտը կամիս, վերին աստիճանի ծուլությունը և վերջումը տասն օրվա հիվանդությունս. ինչևիցե, այժմ փառք աստուծու։

Ես հույսով եմ, որ մեր եղբայրական անխարդախ սերը նույն է և նույն պիտի մնա, ընդհակառակն, որ երբեմն նամակներս ուշանում էին։

Եղբայր, խնդրում եմ ներողություն Թափառական Հրեայի ճակատին գրած երկու տող բանիս համար, ես կամեի դորանով ցույց տալ քեզ իմ երախտագիտական շնորհակալությունը, բայց քո առաքինությունը գերազանցեց, քան թե իմ երախտագիտությունը՝ հետի փախչելով ամ[ենայն] արատքին փառքից ու պատվից։

Օրագրի հիշատակարանների վերա դարձուր առանձին ուշադրություն, մանավանդ 7 և 8 համարներին, և հատկացուր չհատկացողներին, որ իմանան։ 8-ի մեջ շատ ստոտիկ խառնված են մեր ինամիների ազ-

յաթիլը և այսուհետև ևս պիտի խառնվի։ Ճշմարտության ինձնամիների հույսը այն է, որ օրագիրը կխափանվի, բայց չէ պիտո թույլ տալ, որ այդ հարվածը տանանք. հայտնի բան է, այդ նոցա աչքը ծակում է և ծանր բան է հրապարակավ օրագրի մեջ խայտառակվիլ, որ ամ[ենայն] տեղ գնում է և կմնա շատ երկար տարիներ։ Թիֆլիզի մեջ այժմ բավական առորագրողք կան, և այնտեղ հույս կա, որ գալոց տարի ավելանա, ուրեմն պակասածը միայն պիտի լինի Ղրիմում և Նախիջևանում, բայց հույս ունիմ, որ դուք ձեր աղգասիրական օգնությունը չեք խնայելու։ Ներքայս, մենք առանց ձեր ոչինչ չենք, նույնպես և դուք առանց մեր. պետք է ձեռք ձեռքի տալ և միաբան ուժով ջարդել խավար վիշապի դլուխը։ Դեռևս նոր կամոզիկոսի հաստատությունը չկա. ձայն կա, որ Լանակոյն պիտի փոխվի և նորա տեղը, ասում են, որ պիտի կարգվի Ռաստովցևը։

Վարժապետի դործի մասին այսքան կարող եմ հայտնել, որ ինչ այստեղ կարելի էր, նորա օգտի համար գործ դրվեցավ. բայի դորանից մարդ գնաց այս տեղից Պետեր[բուրգ], որովհետև գործը մտավ «Государст[венный] сов[ет]. Հույս կա, որ շուտով վերջանա, բայց թե որքան կթվենանա բանը, այդ գիտցողը աստված է. եթե այստեղ լինեիր, մի երկու բան ևս կարող էիր լսել ինձանից այս մասին, որ գրել չէ կարելի և այլն։

Հոկտեմբերին պիտի առորագրություն բանանք գալոց 1859 թվա[կանի] Հյուսիսափայլի համար. ևս կարծում եմ որ ուշ չէ, բայց դու քո խորհուրդը հայտնի մեզ։ Եվ մի փոքր կամենում ենք ձեր մեծացնել կամ մի երկու թերթ ավելացնել։

Մանրը հունվարից կամի ճոպաքաղը իրրև օրագիր տալ ամիսը 4 թերթ. նշանակված գինն է 4—50 կոպեկ, որովհետև Իզմիրյանը կամ մի բանի այլ մարդիկ առաքիկանը տպելու են յուրյանց ծախքով։

Այս օրերս մեր օրագիրը մի երկու խոսք խոսելու է Մասյաց Աղավնու վերա, իհարկե կկարդաս, միայն ինչ որ կկարդաս և կհասկանաս, աշխատան, որ ուրիշներին ևս հասկացնես, որ Ճշմարտությունը հայտնվի։

Գալանի Նիկոլաևնայի սիրով ողջույնը ևս մոռացած չեմ և միշտ մտածում եմ նորա առողջության օրախնդությանը վերա, թե ինչ վիճակի մեջ է այժմ, լա՞վ, թե վատ, և եթե վատ, արդյոք ի՞նչ գիտավորություն ունիս այդ մասին։

Պետրոս Նիկոլայոսյանի նշանածներդ իմացա, շնորհավորում եմ։

ԵՒս ժամս ուրիշ բան չունիմ գրելու, ողջ եղիր։

Քեզ միշտ բարյացակամ եղբայր,

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

1858 սեպտեմբերի 1,
Մոսկվա

[*Հ. Գ.*] *Բերբերովը ողջունում է ձեզ։*

5

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Մեծապատիվ և ազգասեր ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հարազատ բարեկամ.

Ձեր գրած ապահովյալ նամակը արձակած հուլիսի 15-ից, ևթե չեմ սխալվում Թիվը, ստացա օգոստոսի 1-ին և տեսանելով, որ հասել էր Ձեր պատվականության ձեռքը իմ աշխատությունք[1], ուրախացա: Այն ստությունքը և խաբեությունքը, որոնցից գանգատ ունիք, և որոնց մասին ասում եք, ևե նոր չէին և այլն, այդ ստությունքը և խաբեությունքը, աստուծո անքննելի նախասահմանության կամքն էր, որ մեր ձեռքով պատժվելին և խայտառակվելին:

Ազգի և հշմարտության համար իմ կյանքը իմ աչքումը ոչինչ է և ամեն րոպե պատրաստ [եմ] զոհել, և այն օրից, երբ գրիչ վեր եմ առել ձեռքս, մինչև գերեզման ևս պիտի պատերազմեմ ստության և խավարի հետ և, որքան Թույլ տան մեզ շրջապատած հանգամանքը, պիտի խորտակեմ դավաճան վիշապի գլուխը: Իմ մինչև այժմ գրած բաները, ևե իմ և ևե կոմս Էմմանուելի անունով «Հյուսիսափայլի» մեջ, կարող են հավատարիմ գրավական լինել ասած կամ խոստացած բաներիս: Խնդրեմ առանձին ուշադրությամբ կարդալ 7 և 8 համարների «Հիշատակարանքը» և չի հասկացողներուն հասկացնել բանի զորությունը, որ հշմարտությունը ձայն առանց այդ կորած և մոլորած քաղաքի մեջ: 8-րդ համարը սարը Թամբղին տպվելով ամենևին լավ չէ ասում մեր պ[արոնայք] հակառակորդների մասին, վասն որս արժան է պ[արոն] Սահակյանի ուշադրությունը դարձնել այս բանի վերա, Թող մի փոքր [բաց] աստուծով նոր կաթողիկոսի նստելովը, նորա [բաց] ևս կսկսե յուր գործակատարությունը: Մեր պատերազմը դադարած չէ, և ձերը չէ պիտու գադարի, մեր ազգի բնաթյալ որդիքս պիտի ձեռք ձեռքի տանք միմյանց և շարունակենք մեր կռիվը ազգի և հշմարտության անունով, միշտ կրկնելով «Յորշափ շնչեմք զօդս»: ևե մեր Թշնամիքը միացած պատերազմ անեն, Թող անեն և մեզ միացած պատահեն: Իհարկե կարզացած կլինեք Մխիթարյանց մասին գրածս. նոյեմբ[երի] տետրակի մեջ կկարդաք վերջը և կտեսնեք բանի զորությունը[2]: Թող և ուրիշները կարդան և հավատան, որ նայրանդյանը ոչ ևե առանց ստորագրության սորան և նորան նամակ գրող է, այլ յուր գրածի տակ կարող է ստորագրել համարձակ յուր անունը և այնքան զորություն հոգու ունի, որ ապելով հրատարակե յուր կարծիքը Թշնամիների խայտառակության համար:

Նոցա միակ հույսն է, որ օրագիրը խափանվի, բայց գուք պիտի պաշտպանեք մեզ ազգի և հշմարտության համար, մինչև որ մի քանի տարի շարունակվելով, արմատ արձակե հշմարտությունը մեր ազգի մեջ,

այնուհետև ինքը ազդը կխնդրեն, բայց առաջին անգամը ծանր է։ Հիմանդը գոան դնդը դժվար է ընդունում, նրին մերձավորքը չհարկադրեն, բայց մի փորր առողջանալ սկսելով ինքը խնդրում է այնուհետև։

Հոկտ[եմբերի] անարակի մեջ կբանանք առաջարկությունը և հույս ունենք, որ դուք անձանձիր կհետևեք այս բանին, որ կանգուն մնա մեր ընկերության (партия) դրոշակը։ «Մեղուն» հոգևվարք է և Փիֆլիղոսը յուր խայտառակվել է, նույնպես նորա պաշտպանը Սարգիսը[7]։ Հունվարիս Մրբորքը[8] կամի «Ճոռաբաղ» ապիլ. դորան կարող են առաջարկվել միայն մեր ինդամիքը։ Ինչ ասեմ, կարծեմ, որ դուք ամեն բան առանց իմ ասելուն ևս գիտեք և հասկանում եք։

Յանկանում եմ Ձեզ հոգվով և սրտով առողջություն, երկար կյանք և ամեն տեսակ հաջողություն։ Աստված մեր հետ է։

Ձեզ միշտ հարգող և հոգվով մնծարող անխարդախ բարեկամ

խ[ոնարհ] ծ[առա]

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

1 սեպտեմբերի, 1858
Մոսկվա

6

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Պատվական եղբայր ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Մեծապատիվ բարեկամ.

Ձեր նամակը, որի զորությունով պիտի առացվեր Կամենշիքյանից 650 մանեթ, առացա։ Պ[արոն] Նազարյանը ամսույս 4-ին առացավ նշանակված դումարը և շատ շնորհակալ լինելով Ձեր գործունյա մասնակցությունից, խնդրում է, որ ամեն աշխատություն ի սեր ազգի գործ դնենք դարձյալ, որ մնացած տոմսակները ևս, որքան կարելի է, բաժանվին։ Խնդրեմ առացեք տեր Գևորգին, որ այս մասին աշխատի ամենայն ջանքով։

Լսեցի ձեր այժմյան պաշտոնավարությունը և ուրախ եմ, որ անտես եղած ազգային գործերը այժմ ձեր հոգաբարձությամբ կարող են արժանապես ընթացք առանալ։

Շնորհավորում եմ ձեր պատվանուն քաղաքացիության վկայագիրը առանալը. շատ ուրախ եմ և հոգվով, որ ձեր ազգասիրական հոգու արժանավորության հարմար, առացաք և արտաքին արժանավորություն, որ այժմյան ժամանակներումս շատ հարկավոր է։ Այս մասնավոր ծանոթությունքը գրելով ձեզ և հաստատապես համոզացած լինելով ձեր ազգասիրության և գնդի իմ նվաստությունը բարեկամության և սիրո վերա-

առաջարկում եմ իմ անձնական խնդիրս, որ թեպետ ուղղված է ազգին, մանավանդ Նախիջևանի հասարակությանը, բայց և այնպես ինձ ևս քաջալերություն կլինի և կբարվոքե իմ ադամաղյալ վիճակը։

Ես գրում եմ Ձեզ որպես բարեկամի առանց թաքուցանելու, որպեսզի Դուք իմանալով իմ հանգամանքը, միանգամայն շարժվիք և ազգասիրությամբ և կարեկցությամբ դեպի ինձ։ Ձեզ հայտնել էի մասնավորապես, որ շարադրել էի մի գիրք ամբինին խոսք, մյուսին հարանց անունով, որի խորհուրդն է, ինչպես եվրոպական այդպիսի աշխատությունների խորհուրդը, բարոյական լուսավորություն և կրթություն. և որովհետև այդ բանի գլխավոր նյութը առած է նախիջևանցոց կյանքից, վասն որո և մանավանդ հասկանալի և օգտակար նախիջևանցոց համար։

Այդ աշխատության տպագրությունը կարոտ է 400 մանեթ ծախքի. այս պատճառով խնդրում եմ, որ, ինչպես նազարյանցի հանգնաը տպվեցավ առորագրությամբ նվիրաբերաց, նույնպես գուք հանձնառու լինիք ի սեր ազգի և իմ, բանալ մի առորագրություն ձեր ծանոթների և բարեկամների մեջ։ 16 բաժին առնելով այդ գումարը, յուրաքանչյուրին կհասանի 25 մանեթ, որ մի մեծ բան չէ մի մարդու համար։ Ձեր Գևորգին ևս ասացեք, որ նա ևս աշխատի. ես հույս ունիմ, որ մի բաժինը նա ինքը առորագրե և մի բաժին կամ ավելի ուրիշին տա առորագրել։

Համաստի եմ, որ գուք չեք հրաժարվիլ ինձ այսպիսի մի ազգասիրական օգնություն մատուցանելուց, որով իմ տարեր աշխատությունը պիտի կենդանանա ազգի համար. համաստի եմ նույնպես, որ բավական կմնաք իմ աշխատությունից, որովհետև ամենայն մարդու խղճմտանքով գործակատար եմ գտնված։

Խնդրեմ ներեցեք, որ այսպիսի հանձնարարությամբ Ձեզ ձանձրացնում եմ և ելմե ձեր ազգասեր հոգու որպիսությունը ինձ քաջալերություն չտար, ես համարձակվելու չէի։

Համաստացած եմ, որ կկատարեք իմ խնդիրը։ Առորագրողների անունը, ինչպես պ[արոն] Նազարյանը արել է, ելմե կամենան, կդնեմ գրքի ճակատումը։

Ուրիշ բան չունեմ ասելու առ ժամս, միայն խնդրում եմ կատարել խնդիրս, ելմե կարելի է մինչև դեկտ[եմբերի] վերջը, որ կարողանամ հունվարից իսկույն գործ սկսանել։ Ելմե արժանի գիտությանբան պատահի, կգրեմ Ձեզ անշուշտ։

Ձեզ միշտ բարյացակամ հոգով և սրտով խ[ոնարհ] ծ[առա]

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

7 նոյեմբերի, 1858
Մոսկվա

7

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Մեծապատիվ բարեկամ, արգո ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հույս ունիմ, որ երկարաժամանակյա լռությունս վերագրած չինիք իմ անշուժ պարապմունքիս, թե՛ անձնական և թե՛ օրագրական գործերուդ։ Մինչև այս նամակիս ձեր առանալը, կարծեմ, որ Հասանի ձեղ և «Հյուսնսասփյուռի» 11 Ա[ը]. այնտեղ կտեսնեք իմ մին նամակը առ Հրատարակողը, որ ճշմարտությունից և խղճմտանքից Հարկադրված գրել եմ, զուցե գորաւով առանալու եմ մի քանի գորեղ թշնամիք, ինձ հակառակորդ, բայց անհույս չեմ, որ ազգի բարեմիտ անդամք կրարձրացնեն յուրյանց ձայնը Հարկ ժամանակում։ Այսքան ձեղ Հայտնի լինի, որ գեր[ապատիվ] Այվազովսկին Հայտնի թշնամի է մեր օրագրին, գանգատել է Լազարյանց մեր վերա և առջա մի անտեղի նամակով տպատաներ դրում են մեզ, Հայտնելով մեր օրագիրը թե մենք ազգը մոլորեցնում ենք և այլ այսպիսի բաներ։ Այժմ նորա ամեն ջանք գործ պիտի դնեն, որ մենք առորագրող չգտնելով, ընկնենք տարապայման նեղության մեջ. մեր ազգը, փառք աստուծո, առանց այդպիսի պատճառների ևս, շատ ուր չունի լուսավորության վերա, բայց այդպիսի բամբասանքներ լսելով առրանից և նորանից, Հոժարակամ պատրաստ է անտես առնել ամենայն ազգօգուտ գործ։ Մինչև այս օրերս չենք առացել ոչ մի առորագրություն, թեպետև այստեղից-այնտեղից լուր առաւում ենք և բավական մխիթարական։*

Դուք պիտի պահպանեք մեր օրագիրը, նա և ձերն է, որովհետև ազգինն է. պիտի ամեն ջանք և աշխատություն գործ դնեք, որ ինչքան կարելի է, բազմաթիվ լինին առորագրողքը, մանավանգ այժմ, որ վտրում ենք քաղաքագլխի պաշտոն, ուրեմն ավելի հնար ունեք ներգործելու։ Ձեզ քաջ Հայտնի է, թե որքան օգտակար է «Հյուսիսասփյուռը» մեր ազգին. ուրեմն, ինչպես մենք զոհում ենք մեր Հանգստությունը և կյանքը ռիսկ և գիշեր մաշվելով այդ բանի վերա, նույնպես և դուք, որպես երևելի անդամ մեր ազգի և եղբայր մեր Ճշմարտաքարոզ և Ճշմարտասեր ընկերության, պիտի ձեր վերա առնուք օրագրի մասին աշխատելու ծանրությունը։

Ի՞նչ պիտի առնենք, ազգը դժվար է Հասկանում առաջին անգամը, բայց եթե մի երկու տարի շարունակվի, այն ժամանակ Հույս կա, որ ավելի լավ լինի այդ բանի վիճակը։ Այս տարի ունինք մենք մոտ 270 առորագրողք, բայց այդքան առորագրություն գալոց տարու Համար աշխատել Հանձն առած ենք։ Տարեկան ծախքը օրագրի [Համար] < առացինք Հազիվ Հազ կարողանում ենք ծածկել. առում ենք Հազիվ Հազ, բայց պիտի իմանալ, որ մենք մարդ ենք, անմարմին չենք, և դիցուք թե

* < մասնավոր >

մի տարի զոհեցինք ազգին մեր տաժանելի աշխատությունը, բայց ամեն տարի պարտական չենք էշի նահատակ լինել։

Մենք երկու մարդ հանձն ենք առնում այս ահագին աշխատությունը և ծանրությունը, բայց ուրիշները չկամին 9 ռ. 50 կոպեկով թեթևացնել մեր ծանրությունը և մի փոքր քաջալերել մեզ։ Մի՞թե մենք մեղավոր ենք, որ ազգասեր ենք։ Այո, եթե մենք լինենինք հարուստ մարդիկ, այն ժամանակ հարկավոր չէր մեզ ոչինչ, բայց մեր նյութական կարողությունը քաջ հայտնի է ձեզ։ Գրյանք տպեցինք, մինչև այժմ տպագրության փողը չենք առացած և այդ պատճառով գտանվում ենք պարտքի տակ։ Մի՞թե արժան չէ, որ ազգային եղբորը օգնեին մեզ, մանավանդ մինչ տեսանում են, որ ամեն բան զոհում ենք ազգի օգտի համար։

Ահա սիրական եղբայր, մեր դրությունը. տարակույս չկա, որ մենք օտար մարդու առջև ցույց չենք տալիս մեր իսկական դրությունը, բայց պետք է մեզ մեռ մարդիկ իմանան այս բոլորը և իմանալով աշխատեն թեթևացնել մեր ծանրությունը։

«Հյուսիսափայլի» երևելը մեծ ազդեցություն գործեց ազգի վերա, շատ բաներ խոսեցավ օրագիրը, և շատ մարդիկ սկսեցին ուրիշ կերպ նայել բաների վերա. հույս կա, որ մի քանի տարուց հետո ակնհայտանի երևեն նորա արդյունքը և պտուղքը։

Տառագրողների բազմությունը մեր համար, բացի նյութականից, ունի և բարոյական օգուտ, որովհետև կարող ենք ցույց տալ պարծանքով, թե ահա ազգը ընդունում է, և այլն և այլն, և այն ժամանակ կպատանվեն մեր թշնամիների բերանները։ Եթե այս 1859 թվականում ևս Նախիջևանի մեջ այնքան լինեն մեր տառագրողքը, որքան այս տարի էր, բանը խինդ կլինի, ուրեմն ձեր առաջև բացվում է այժմ աշխատության և գործակցության հանդեսը։

Ես հույս ունիմ, որ մեր բարեկամք ամենեքյան աշխատություն հանձն կառնուն այս մասին հոգալ. սառն մնալով բան չէ հառաջանում, պետ է ջերմությամբ կպչել գործին։ Գիտեմ, որ այս բաները դուք ինքներդ ևս լավ գիտեք, բայց հիշեցնում եմ ձեզ և հայտնում եմ անկեղծորեն մեր դրությունը։

Երեկի երևելուն եկավ Սավել Դավիդիչը. տեսանելով միմյանց, ուրախացանք և փառավորապես կարգացինք օրագրի 11 համարը։ Առաջիկա փոստատով մի այլ նամակ ևս կգրեմ բոլորովին այլ գործի մասին։ Սպասում եմ ձեր մխիթարական նամակին և գործունեությանը։ Խնդրեմ ողջունել մեր բոլոր սրտակիցքը. չեմ մոռացել ոչ մինին և բոլորի համար պատրաստ կանգնած կամ մինչ ի մահ։ Ցանկանալով ձեզ ամեն ողջություն մեռամ գերապատիվ բարեկամիդ և ազգասեր եղբորդ խ[ոնարհ] ծ[առա]

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

27 նոյեմբեր, 1858
Մոսկվա

[Հ. Գ.] Լսեցինք, որ Զեյթունին Գրիգորը կաթվածով (паралич) հիվանդ է, և բժիշկներից օգուտ չտեսանելով այժմ տիրացու Սրապիոնին նարեկ կարդալ է տալիս. ճշմարի՞տ է այդ.....

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

8

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Մեծապատիվ բարեկամ, ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ահա գրում եմ ձեզ երրորդ նամակս, որ խոստացել էի առաջին նամակիս մեջ։ Բայց ժամանակով ինձ հարկավոր լինի հավատարիմ պատճառն այն տեղեկությյան, որ դուք 6-[ին] մարտ[ի]. վերջին անգամ դրեցիք սրբազան Մատթեոս առաջնորդին պ. Խալիբյանցի եկեղեցական մեծագումար պարտքի մասին։ Թող հայտնի լինի ձեզ, որ վերադարձյալ Գաբրիել վարդապետ Այվազովսկին գանգատավոր է առ նախարարն Ազգային լուսավորության, որպես թե «Հյուսիսափայլ»-ը հարուցանում է ժողովուրդն ընդդեմ հոգևորականության ընդհանրապես, իսկ ընդդեմ նորան (Այվազովսկիին) մասնավորապես. մենք բողոքեցինք այս մասին դեպի էջմիածնի սրբազնագույն Սիոնդոսն, թե նա անտեղի մեջ է մըտնում այնպիսի գործերի, որ չէ ենթարկվում առաջնորդական տեսչության, դրեցինք թե Այվազովսկին երեսփոխան չէ բոլոր Հայոց հոգևորականության և թե կենտրոն հոգևորականության է Սինոդոսն էջմիածնի, եթե մեք ընդդեմ հոգևորականության ունինք մի բան դրած, թող ինքը Սինոդոսը նկատած և գրե մեզ, մեք նորան կլսենք և կտեսնենք, ինչպես նորա կամքն է, քայց (գրեցինք), Այվազովսկին, ինքը վիրավորվելով օրագրից, չէ ուզում ասպարեզ մտանել յուր անունով և առավել ապահովության համար ծածկում է յուր անձը բոլոր հոգևորականության անունի տակ։

Ազգային լուսավորության նախարարն հարցմունք է առնում Ցենզուրնիյ կոմիտետից, թե ի՞նչպես թույլ է տվել այդպիսի դրդեցուցիչ հոդվածք. մեք ծանոթություն տվեցինք Ցենզուրական կոմիտետին, որ դրե յուր պատասխանի մեջ, բացի յուր արդարացուցիչ փաստերից, և այն, որ բարեհաճի պ[արոն] նախարարը մեզանից հարցմունք առնել. մենք շատ ուրախ ենք, եթե այդպես լինի, որովհետև գործի ներկը կբացվի, թող ցնծան հնաոռ

Պ[արոն] Նազարյանցն ատացել է ձեր նամակը. շնորհակալ է ձեզանից, բայց 62 մարդ, որպես ասաց պ[արոն] Սալթիքյանցն, ճշմարիտն ասած, փոքր է Նախիջևանի համար, գոնե 100 ատորագրություն հարկավոր էր. Թիֆլիսումը բարձրացավ մինչև 150։ «Մեղուն» պիտի վախ-

Ճանի։ Պետերբուրգից մի քանի մարդիկ, որոնց մեջ և պ[արոն] Իզմիրյանցն, նամակ են գրել Այվազովսկուն, որ նա զուր տեղը չհետևի վնասել կամ կարճել «Հյուսիսափայլը»-ը, որովհետև ասում են, մեծ անբավականություն կարող է ծագել ազգի կողմից դեպի նա։

Այս բանը շատ ձեռնտու է մեզ, միայն լազարյանք, որպես ինչպես մի ազգային լուսավորության, եթե ձեռքերից գա, ամեն բոպե կխափանեին, քայլ հույս ասում՝ ամեն բան կդրստվի։ Ամենևին վատ չէր լինելու, եթե մի քանի մարդ նույնպես մի քաղաքավարի նամակ գրեին Այվազովսկուն, որ մի փոքր զգուշ մնար «Հյուսիսափայլից» մասին։ Խնդրեմ դուք ձեր բարեկամությունը և նամակակցությունը անընդհատ պահեցեք սրբազան Մատթեոս արքեպիսկոպոսի հետ, այդ հարկավոր է։

Չգիտեմ ի՞նչ ազդեցություն գործեց իմ նամակս «Հյուսիսափայլ»-ի 11 №-ի մեջ։ Շուտով 12 №-[ը] կարձակենք տպարանից։ Սպասում եմ Հնդկաստանի փողերի մասին թղթերի օրինակին, որ կարողանամ առաջին համարի մեջ հրատարակել, մինչդեռ այդ բանը չէ երևիլ «Մասյաց աղավնուց» մեջ։

Ձեզ միշտ անկեղծ բարյացակամ խ[ոնարհ] ծ[առա]

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

19 դեկտեմբեր[ի], 1858
Մոսկվա

[Հ. Գ.] Սրբազանին գրած թղթին օրինակը, որ խնդրել եմ, ուղարկեցեք պ[արոն] Սալմիքյանցի անունով, Նովաքու-րեչաքի № 34

Մ[ԻՔԱՅԵԼ] ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

9

ԳՐԻԳՈՐ ՍԱԼԹԻԿՅԱՆԻՆ

23 ապրիլի 1859 թիվ։
Փարիզ *5 մայիսի*

Սիրական եղբայր իմ, ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ահա գտանվում եմ Փարիզում և էգուց դուրս կգամ դեպի Լոնդոն, միշտ իմ հետ տանելով ձեր ազնիվ բարեկամությունը և սերը։ Խնդրում եմ հարգությունը հայտնել Գայանե Նիկոլաևնային և Պետրոս Նիկոլաևիչին։ Ես կգրեմ Լոնդոնից ու կհայտնեմ իմ հասցեն։

Չգիտեմ, թե ի՛նչ վիճակի մեջ է Հյուսիսափայլը։ Այվազը այս կողմերը խայտառակված է և Արևմուտք անուն օրագիրը սաստիկ խայտառակում է նրան[9], ես այդ օրագրից ասացի հրատարակողին ուղարկել մի քանի օրինակ պ[արոն] Նազարյանցին, եթե ցենզորն ետղու, ուրեմն

Նախիջևան կատանաք դուք, պ[արոն] Հայրապետյանցը, պ[արոն] Էմմանի, Պոպովը և պ[արոն] Ալիմխյանցը։ Մասյաց Ազավնին վերջացել է և պ[արոն] Այվազի շնորհով այս տեղի երկու վարդապետքը՝ Ամբրոսիոս ու Խորեն Գալֆայանք մնծ նեղության և անսահմանի պարտքի մեջ են։

Ես հույս ունիմ, որ դուք բոլոր մեր ճշմարտասեր և ազնվամիտ հայրենակիցք և բարեկամք ինձ օգնական և ձեռնտու կլինիք, նիթե Մոսկվա փակվի Հյուսիսափայլը նորից ուրիշ անգ... վերանորոգելու և բոլոր մեր պլխից և ձեր գլխից, այլև ազգի և եկեղեցու գլխից անցածները ճշմարտությամբ հրատարակելու համար։ Հույս ունիմ և հույսս մնծ է. մի՞թե մեր ազգի մեջ մինչև այժմ ևս խավարը և սուտը պիտի հաղթանակն յույսի և ճշմարտության վերա։ Մենք բոլոր բան հասկացողքս պարտական ենք ընդդեմ գինվորվել և ցույց տալ ժամանակով մեր ապագայից, որ ազգի համար անհոգ չենք եղել, որ ազգի թշնամիների հարձակմունքին դեմ ենք դրել մեր կուրծքը և ճակատը, որ ազգի օգտի համար զոհել ենք մեր հանգստությունը, հայրենիքը, և այլն և այլն։

Այժմ նիթե կամենաք ինձ նամակ գրել, ուղարկեցեք պ[արոն] Նազարյանցին, նա կհասուցանե ինձ։

Իմ ողջույնը և հարգությունը հայտնել հնուկյալ պարոններին. Հայրապետյանցին, Քայալյանցին, Ալիմխյանցին, Պոպովին և այլոց, որ մեր սիրելի և բարեկամ կճանաչես ներկա թուղթումս։

Այստեղ լսեցի, որ կաթողիկոսը ճանապարհ է բնկել գնալի էջմիածին [.....] թե սուտ, սակայն նիթե Նախիջև[....] հույս չկա, որ դուք գիտեք ձեր բանը [.....]

Ահ ժամս այսքան, ավելի ոչինչ [....] մինչև որ Մոսկվայից լուր առանամ Հյուսի[սափայլի.....] այդ բանը միայն կարող է հասկացնել [...] ինչպես պիտի որոշեմ իմ ապագան, որ հ[ուսալով] աստուծո նախախնամությանը նվիրել եմ իմ սիրելի Ազգին։

Աղաչում եմ եղբայր, չմոռանալ ինձ այս օտարության մեջ, չմոռանալ, որ ես այս բոլորը քաշում եմ ազգի համար մեր դժոխքի ապագավոր հիզվիի հոգևորականներից, որոնց վերջին ջանքն է ազգը կուրացնելով վայելել նորա բարիքը։

Ես գիշեր ցերեկ մտածում եմ ձեր բոլորի վերա և մեր ողբալի ազգի խնդճ վիճակի վերա։ Ասելած տար, որ ես դնրեզման չմտած տեսանեի մեր ազգի գրության բարվոքվիլը և հոգևորականների բարբարոսությունից ազատությունը։

Աղաչում եմ ասելածը օգնել ձնզ, օգնել ինձ, պանդխտականիս...

Մնաք բարյավ, ասելած թող ձեր հետ լինի միշտ։

Ձեր անխարդախ բարյացակամ և հարազատ եղբայր,

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

10

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՎԱՃՅԱՆԻՆ

30 դեկ[տեմբերի] 1860,
11 հունվ[արի] 1861, Նեապոլիս

Արգո հայրենակից պ[արոն] Հ. ՍՎԱՃՅԱՆ[10]

Մարիկը չհողաց ինձ ուղղակի նամակ դնել Մարսելլ՝ հարկադրվեցա ոտք կոխել Սիկիլիա կղզին։ Երբ մեր շոգենավը մոտեցավ Ծովեզրին, Մեսսինայի նավահանգստում կանգնած էր մի ահագին բազմություն աշխույժ երիտասարդների, որոնց կարմիր շապիկը վկայում էր, թե պատկանում են իտալական Հերոսին՝ Գառիբալդիու բանակին։ Այդ վառվռուն երիտասարդների դեմքի վերա գծագրված էր ուրախություն և խոզճի հանգստություն. նոցա ճակատը փայլում էր արժանավոր պարծանքով։

Կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Գառիբալդի, անլուռ ազաղակում է հասարակ ժողովուրդը. կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Վիկտոր Էմմանուել, գոչում են բազաբացիք, այսինքն միջնակարգ ժողովուրդը։ Այս ուրախական բացագանչություններ, թնդանոթաձայնում են տարբեր սկզբունքներից, վերաբերությամբ դեպի Գառիբալդի և դեպի Վիկտոր Էմմանուելը, բայց «Իտալիան» ամորում է այս խոշոր տարբերությունը և այս պատճառով ևս հիշյալ երկու կացություններ գործ տեսան և ամոթահար հաղթահարեցին ազնվական կացությունը, որ հերիքանալով անձնական դյուրություններ, նեապոլիտանյան նեղսիրտ ապստելստոքիմի ժամանակ, երբ չկարողացավ դեմ դնել ազգի միջից գուրս արձակված դիմագրավ զորության, գնի մեծ ահաճություններ լանց և լսում է անլուռի «կեցցեներ»։

Ահա մի նոր խրատ մարդկության, մի տոկալի ապացույց այն բանին, թե բռնակալության արվեստի դժոխային մեքենան հանգչում է անձնասեր և նաստեր ազնվականների ուսերի վերա։ Այսուհետև ամեն մի բանական մարդու պարտքն է միօրինակ գործել և զգվիլ, որպես բռնակալության ուժի պատկերացույցից, նույնպես և նորա շրջանակից և պարագաններից։

Մարդերի իրավունքը և ազատությունը հավասա՛ր է. և եթե մինը ավելի ազատություն և ավելի իրավունք ճարեց յուր համար, քան թե նորա բնկերքը ունեին, ասել է թե ուրիշի անփականությունը գողացավ և հափշտակեց։ Մինի առավելությունը պիտի հիմնվի մյուսների աղքատության վերա. ազնվական կացությունը այսօր անարդություն է մարդկության անունին։ Ազնվականը բռնաբարելով հասարակ ժողովրդի ազատ վաճառատր ազատությունը և իրավունքը, խլում է նորան անզանազատիծ ձևերով, և ուրիշները աղքատացնելով, հարստանում է և սիրապանում է

ազգի բանականության վերա։ Այս բարոյական ավազակներին մա՞հ բարոյական։

Քանի որ մի ազգ, խեղճ վիճակի մեջ առնապելով, պատմական մահին հետ մարտ դնե և քանի որ չէ հաղթել ու չէ դուրս նկել ներկայից, ապագայի մեծ ճանապարհը բնկնելու՝ նորան հնշտ չէ հասկանալ և արժանապես գնահատել յուր մեջ հայտնված երևույթը, իսկ երբ բավական ճանապարհ կատարելով դեպի ապագան, կամենա ետ նայել, յուր անցածի վերա, յուր կատարած ճանապարհի որպիսության վերա, այն ժամանակ կտեսանե ամենայն բան և կարող կլինի գիտակցաբար հասկանալ թե ո՞վ էր յուր բարեկամը և ո՛վ էր թշնամին։

Մեսրնայի դղյակը դեռևս կրում է յուր պարապի վերա նեապոլիտանյան խայտառակ դրոշակը. 4.500 դինվոր, հավատարիմ մնացած Ֆրանսիսկոս երկրորդին, փակված են այնտեղ և նոցա առաջնորդում է Մայոռ Ֆեոդուլան։

Մեսրնայի քաղաքական կառավարությունը, որի ծերակույտ վերա ծածանում է Վիկտոր Էմմանուելի դրոշակը, երբ քանի մի անգամ առաջարկել է պ[արոն] Ֆեոդուլային անձնատուր լինել, նա մերժելով այս առաջարկությունը, սպառնացել է ամբակոծել քաղաքը, եթե սա-պանն դիջանիլ դեպի այդ պատերազմական անարգությունը։

Տեսե՛ք, թե մինչև ո՛ր աստիճան կատաղության հասնում է նախանձությունը և անձնական շահի քամակից գնալը, որ հայրենիքի փրկությունը, ազատությունը, միությունը և ապագա երջանկությունը համարում է պատերազմական անարգություն։ Նորա փույթը չէ, որ արյունաթաթավ Իտալիան ավելի քան կես դար լկվեցավ եզիպտական շարշարանքի մեջ՝ ազնվականը ցույց է տալիս դրծով, որ թե հնար ունենար, ապա ուրեմն անշուշտ խեղդելու էր Իտալիայի նորաբողբոջ ազատությունը դեռևս խանձարուրքի մեջ։

Իտալիայի ազատության պատմության մեջ պ[արոն] Ֆեոդուլայի և նորա նմանների անունները պիտի նույն տեղը գտանին, ինչ որ մեր պատմության մեջ Վասակը, Մեհրուժանը, Կիրակոս քահանան և Վնսա Սարգիսը։

Երկու դինվորյալ նավեր, մինը Ֆրանսիական, իսկ մյուսը անգլիական, կանգնած են Մեսրնայի ծովածոցի մեջ, որպես պահապան մանուկ ազատության։

Որշափ կարողացա հարց ու փորձ առնել, որ դղյակի մեջ փակված զորքի վիճակը շատ ողորմի է և՛ բարոյապես և՛ նյութապես։ Տառապում են սովից և դանակոծ լինելուց։ Գ. Ֆեոդուլան դրամ է խնդրել քաղաքական կառավարություններից զորքի անունով. քաղաքը պատասխանել է, թե Մեսրնան կամ Իտալիան զորք չունին այնտեղ՝ եթե՛ ունի մի Բուրբոն, թող ուրեմն պ. Ֆեոդուլան դիմե դեպի նա։ Այսչափ ննդության դիմանում է այս անպատճառ պարոնը ասելով, թե չէ պիտո զենքը ցած գնե, մինչև որ Ֆրանսիսկոս երկրորդը անձնատուր չլինի։

Այդ պայմանաժամը ևս հետի չէ. այսօր չորրորդ օրն է, որ ամբակոծում են Գայէթան. Ապանիան և Հռոմը երկու շոգենավ ունին պատրաստ Գայէթայի մոտակայքում Բշվառ թագավորի, Բշվառ, և ոչ ոքին պիտանացու կյանքը փրկելու համար։

Մեսսինա մուած երեկոյին (դեկտեմբ[երի] 26 հին ոճով) գնացի տեսանել թատրոնը և երբ ընդհատուիյան միջոցին դուրս եկա դահվեհտունը թարակ ծխելու, այն բավական ընդարձակ դահլիճի մեջ, ուր գտանվում էր ավելի քան Բև երկու հարյուր հոգի, կար մի մեծ աղմուկ և շփոթ։ Մտածեցի մոտենալ բազմութիյան և հասկանալ պատճառը, բայց հազիվ Բև կարողացել էի ոտքս շարժել տեղից և ահա բազմութիյան գլխի վերա շողացին երկու սուր։ Շրջակա բազմութիյունը՝ հեռացնելով միմյանցից այդ ջերմացած գլուխները, հնար տվեց մեզ հասկանալու, Բև սուր մերկացնողը երկու սպայք էին, մինը Վ[իկտոր] Էմմանուելյան, իսկ մյուսը բուրբոնյան, որ դղյակից թատրոն էր եկել և դահվեհտում հանդիպելով անպատուիյան՝ կամեցել էր արյունով լվանալ յուր անարգութիյունը։

Թև ուր տարին նորան և ինչ եղավ վերջը, չիմացա, քան որում թատրոնական գործողութիյունքը սկսված լինելով, մտա թատրոն և մյուս օր ուղևորվեցա դեպի Նեապոլիս։

Նեապոլսի մեջ համարյա Բև նույն չափով կան այն երեք միմյանցից տարբեր հասկացողութիյունքը, որքան Մեսսինայի մեջ, և երևում է, որ այս ընդհանուր է ամբողջ Իտալիային, հասարակ ժողովուրդը Գառիբալդյան, միջնակարգը՝ Վ[իկտոր] Էմմանուելյան, իսկ ազնվականք՝ Բշվա՜ռ եաբնթացք։

Քաղաքի մեջ փառավոր հրապարակների վերա հոյակապ ճարտարութիյամբ քանդակագործված արձանքը, որ երբեմն դրված էին բուրբոնների փառքի համար, այժմ ջարդ ու փշուր խորտակված թավալվում են փոշու մեջ։ Երևում է, որ սորանից իրը երկու հարյուր տարի առաջ, Արքեսյան դուքսի ընդդեմ ապստամբութիյան ժամանակակից անցքերը, Բևիև կերպով կրկնվել են դարձյալ Նեապոլսի մեջ. Ֆրանսիսկոս երկրորդի անվանագիրը, որ գրված էր որևիցե հրապարակական կամ տերութիւնական շինվածքների ճակատում, այդ բոլորը, առանց ամենայն բացառութիյան, խորտակված են այժմուս և նոցա փոխանակ գրվում է Վ. Էմմանուելի անվանագիրը։ Ամենայն տեղ, սկսած տերութիւնական շինվածքներից, մինչև գինետունքը մինչև վարաւիբրանների խանութները ծածանում է Սարդինյան դրոշակը և ազգի բերանը ուրախութիյամբ արտաբերում է յուր ազատիչների անուննները։

Այս հեղափոխութիյունների ժամանակ հոգևորականութիյունը շատ կերպով կամեցած է պաշտպաննել հին դրութիյունը, տեսանելով, որ հասաջընթացքը պիտի ոտք կոխեն մինչև վատիկանի դուռը։ Բայց Գառիբալդիին մի կողմից սպառնալով գնդակոծել նկնղեցիքը, իսկ մյուս կողմից հասաջընթացքը ահագուժանելով խռալական նկնղեցու վերա-

նորոգութիւնը, որ այսուհետև պիտի դուրս գար պապի իրավասութեան տակից, հոգևորականութիւնը դիջել է այս հնդափոխութեան: Հիսուսեանք (Յիզվիթները) հրաման են առացել հեռանալ իսկուն Նեապոլից, որոնց մի մասը լերդապատառ գնալի Հռոմի, իսկ մյուս մասը հրաժարելով եկեղեցական պաշտոն վարելուց, կան գեռևս յուրյանց տներում: Նոցա եկեղեցին խլված է և գառանվում է այլ կրոնավորների ձեռքում:

Նեապոլի ծովածոցում կանգնած են նուիրական պինվորյալ ֆրանսիական և անգլիական նավեր:

Այսօր պատրաստվում է Նեապոլիս ընդունել Կարինյանոս իշխանը, որ Վ. Էմմանուելից կարգված է ընդհանրական տեսուչ Նեապոլսի. ապագային թիկնապահ գունդը հավաքում է, որ ընդառաջ գնան յուր նոր գալու իշխանին: Բոլոր այդ գնդի հրացանների խողովակի ծայրը խրված են վարդի փնջեր, հիանալի և արուաշարժ տեսարան:

Էգուց կուղևամ ընթացքս գնալի հավիտենական քաղաքը:

Այս Հռոմը փորձանք գարձավ մարդկութեան գլխին: Սարկութեան և բռնակալութեան փոխադարձ սկզբունքների վերա հաստատված կառավարութիւնը իսկուն կերպարանափոխ եղան քրիստոնեական կրօնի ազդեցութիւնից՝ դորա հակառակ, Հռոմը սարկութեամբ և բռնակալութեամբ հիմնված մինչև այսօր հաստատ կացավ յուր սկզբունքին և քրիստոնեութիւնը ազդեցութիւն չգործեց նորա վերա:

Բայց Իտալիայի ներկա վիճակը, խելքերի ընդհանուր խմորումը վկայում են, թե շուտով կհնչէ և Հռոմի հակաապրակաև դանգակը՝ գնալի Հռո՜մ: Գուցե թե ասաքերս ինձ լինիս:

Նեապոլիտանիայի կառավարութեան հեղափոխութիւնը արձակեց և մամուլի շղթան՝ մամուլը, մարդկային ազատ բանականութեան սուրհանդակը, արձակված է կապանքից: Ազնքսանդր Տյումա (Հայրը) գառանվում է այսանել և հրատարակում է մի օրագիր «Անկախութիւն» անունով: Այդ օրագիրը սորանից երեք օր առաջ ասում էր, թե շուտով պիտի ազատվին և՛ Հռոմը, և՛ Լոմբարդիան, և՛ Հունգարիան, և՛ Լեհաստանը:

Այսանել կան շատ լեհացիք. գեռևս օրեօր հավելանում են՝ լսվում է մի խուլ ձայն, որպես թե նորա կամին կազմել այսանել մի պինվորյալ լեհական լեգեոն և պատրաստ և կազմ ազատել մի կրակոտ նշանի...:

Ահա այսքան յուր միայն Իտալիոյ մասին կարող եմ գրել առայժմ: Չեմ նախանձում Իտալիայի ազատութեան, գորա հակառակ ատ ի սրտե ուրախ եմ, սակայն անանձնով նորա ազատութիւնը և իմ ազգի ակարութիւնը, կրծում է սիրտս և այրում է հոգիս:

Եվրոպայի գեպքերը ի՞նչ վերաբերութիւն ունին մեզ, կասեն ինձ մի անասակ գժոխասեմ մարդիկ, և իրավունք ունին, որովհետև ինքյանք օր ու գիշեր պատրաստած են յուրյանց ինչքան արեզանների գործերով, կրոնական վհներով և միութեան խափանելով:

Այո՛, վերաբերութիւն չունին, կրկնում եմ ևս, ինչու որ գուք ար-

ժանի չենք վերաբերություն ունենալու եվրոպական ազգերի հետ, անցանել այն փրկության կամուրջը, որից անցանում են ուրիշ ազգեր։

Էտնան և Վեզուվին ծխվում են. Արարատի հին վուլկանի մեջ մի՞թե կրակ կմնա խաղաղ... մահաբեր մտածություն։

Մնաս բարյավ, ողջունիր իմ կողմից, որոնց կուրծքի մեջ զարկում է ասուպապես հայկական սիրտ. կենդանով հայ-չմարդներից «հրաժարելով հրաժարիմ»։

Հարգությամբ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

11

ՂԱԶԱՐՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

1862, դեկտեմբերի 30, Մ[անկո] Պետերբուրգ

Իմ բանկագին և շատ սիրելի եղբայր ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Քո դեկտեմբերի 29-ին գրած նամակն այսօր առավոտյան ստացա։ Նա ինձ ուրախացրեց և ահա քե ինչու։ Որովհետև իշխանության կողմից տեսակցության համար սահմանած օրերը զուր էին անցնում, այդ պատճառով ես կարծում էի, թե քո աչքերը առավել բորբոքվել են, որի համար և շատ էի անհանգստանում։ Այժմ, փառք աստծո, որ դու առողջ ես, ամենակարևորն առողջությունն է։

Դու ինձ ասում ես, որ ուրիշները տոնում էին, իսկ դու արտասուք էիր թափում և այլն։ Նախ՝ մեր տոնը հունվարի 6-ին է և ոչ թե դեկտեմբերի 25-ին, հետևապես, կարիք չկար օրդ լացով անցկացնել. երկրորդ, չեմ հասկանում, թե ինչի՞ համար են այդ արցունքները. ի՞նչ է, նրանք քեզ բավականություն են պատճառում, թե՞ կարող են ափսոսել ինձ։ Մինչդեռ քո աչքերն այնքա՞ն թույլ են։ Ինքդ մտածիր, ինչ կլինի մեր ծնողների ու նամանավանդ քեզ հետ, եթե, տերը մի արասցե, քո աչքերիդ նույն դժբախտությունը պատահի, ինչ 1856 թվականին։ Ջուշացի՛ր, եղբայր, այս տողերը ես գրում եմ ամենայն լրջությամբ։ Վերջապես դու պիտի հասկանաս գոնե, այն, որ վշտալի տեղեկությունները, տխրության արտահայտումները, պատմությունները արցունքների մասին—ոչ մի դեպքում չեն կարող ափսոսել ինձ, ընդհակառակն, նրանք տաղտուկին տաղտուկ են ավելացնում, իսկ ես այդ բանին կարոտություն չունեմ—մենակությունը միշտ առատ է դրանով։ Եթե առա՞ջ ինձ քեզ համար ձանձրալի է և տխուր, քեզ համար, որ ինչպես էլ լինի՝ ազատություն ես վայելում, թեև շատ նեղ շրջանում, ապա դրանից կարող ես եզրակացնել, թե ինչ վիճակում եմ գտնվում ես։ Բայց չնայած այս ամենին, լաց չեմ լինում և համբերությամբ տանում եմ իմ խաչը։

Ուրեմն դու այլևս լաց չես լինի և չես տրտմի, այնպես չէ՞: Ինձ հաճելի է նախօրոք անսահման հավատալ քեզ այս խնդրում, ինչպես բոլոր այլ խնդիրներում:

Մեր շատ սիրելի քրոջ՝ Գայանեի նամակն անշուշտ վշտացրեց ինձ այն պատճառով, որ նրա կուրծքը ցավում է և նա հազում է: Եվ այսպես՝ վիշտը վշտի վրա: Ի սեր աստծո, որքան հնարավոր է՝ շատ գրիր նրան, որ նա անհոգության չմատնի իր առողջությունը, որ դիմե լավագույն բժշկի խորհուրդին և կատարե նրա բոլոր պատվիրանները: Գրիր նույնպես, որ շխաբեն իմ մասին ու լաց չլինեն: Ես շատ եմ նեղվում, որ շորս կողմից անընդհատ ամբաստանում են ինձ արցունքներով. վերջ ավեք, ի սեր Քրիստոսի, այդ բոլորին. վերջապես, անտանելի է այդ: Ինչ վերաբերում է նրա ուղարկածին՝ անկեղծ շնորհակալ եմ, բայց ես, ինչպես բազմիցս ասել եմ քեզ, մի անգամ էլ կրկնում եմ—ինձ ոչինչ հարկավոր չէ, մի՛ ուղարկիր: Խնդրում եմ՝ ինչ սիրելի թույրիկս զբաղվի իր առողջությամբ. նրա առողջությունից է կախված իր ամբողջ ընտանիքի բախտը, իսկ դա երկրորդական խնդիր չէ: Հանգստացրու նույնպես մեր ծնողներին: Ներքին զգացմունքս ասում է, որ ես նրանց կենդանի կտեսնեմ: Բոլոր հարազատներիս, ազգականներիս և ծանոթներիս ողջույնիր իմ կողմից: Շնորհավորում եմ նրանց բոլորի առաջիկա նոր տարին ու Քրիստոսի ծննդյան և հայտնության գալիք տոները: Ի սրտե ցանկանում եմ նրանց բոլորին ամենայն բարիք:

Մեղմում եմ Հովհաննես եղբորս ձեռքը: Ափսոս, որ նա այնքան զբաղված է, որ չի կարող մի ժամով կտրվել գործերից՝ ինձ հետ տեսակցելու համար. սակայն, գործը գերադասելի է տեսակցությունից:

Ի սրտե շնորհակալ եմ սիրելի բարեկամ Անանիա Գավրովիչ Սուլթան-Շահինին, նրա՝ իմ վիճակի մասին հայտնած կարեկցության համար. ես երբեք չեմ կասկածել նրա՝ դեպի ինձ տածած սիրո մեջ: Այդ մասին ինքը լավ գիտե: Բայց նա, հավանորեն, քանի իր սովորության, գնում է, ինչպես մեզ մոտ են ասում՝ ափսյան ձիու վրա, որովհետև երկու շաբաթից ավելի է, իսկ նա դեռ Ճանապարհորդում է Մոսկվայից Պետերբուրգ. տրովադյան ձին էլ արդեն հասած կլիներ: Շատ ուրախ եմ, որ նա քննության է տալիս դոկտորի աստիճան ստանալու համար. ի բոլոր սրտե ցանկանում եմ նորան հաջողություն ո՛չ միայն քննությունների, այլև գիտության ասպարեզում: Ի դեպ՝ մի խնդիրք ունեմ նրան. ասա, խնդրեմ, նրան, որ նա ձեռք բերե այսօրեք «Ազատ տնտեսագիտական ընկերության» և կամ Մոսկվայում «բնախույզների ընկերության» մի քանի մասալ Sorghum Saccharatum-ի սերմեր: Սորգոյի շատ տեսակները կան, նրանցից մեկը այսպես կոչված Sorghum Saccharatum-ը, որը առացված է Չինաստանից: Չգիտեմ, կա արդյոք այսօրեք, բայց Մոսկվայում անշուշտ կա. համենայն դեպս, նա կարող է այսօրեք էլ հարցնել, և լավ կա, տալա տանել 2—3 մասալ, հնարո, Մոսկվայում,

նույնպես 2—3 մախաղ, այնպես որ ընդամենը լինի 4—6 մախաղ։ Երկու տեղից վերցնելը նրանով է լավ, որ այդ սերմերը հողի և կլիմայի համեմատ՝ ֆիզիկապես ենթարկվում են փոփոխության և ավելի կամ պակաս շեղվում նորմայից, որը ինձնս (իմ անձնական ենթադրությունն է), կապված է որևէ քիմիական փոփոխության հետ հենց ապագա օրգանիզմի կազմի մեջ։ Տեղի է ունենում այդ, թե ոչ, ես ավելներ չունեմ, չեմ փորձել, որովհետև Բենգալիայում չմնացի մինչև հաջորդ հունձը, որպեսզի կարողանայի համեմատել արդյունքը նախընթաց հունձի արդյունքի հետ, սակայն, սերմերի ձևափոխումը փաստ է։ Ես Հնդկաստանից հետս վերցրի ամբողջ հինդ ֆունտ, որ ստացված էր Չինաստանից, բայց դժբախտաբար, այն ճամպրուկը, որի մեջ էին սերմերը, կորավ Սաուտհամպտոնում, ուր ես ուղիղ ուղարկել էի ամբողջ իմ իրերը, և, հասնելով, չգտա մի ճամպրուկ, որտեղ, ինչպես ասացի, գտնվում էին սերմերը։ Կարելի է դարձյալ բերել տալ Հնդկաստանից՝ Չինաստանի վրայով, բայց տարի կանի մինչև ստացվելը, մինչդեռ առաջնակարգ նշանակություն ունի այն խնդիրը, թե արդյոք Նախիջևանում նա կհասնի մինչև սերմ տալու աստիճան։ Որ նա կարող է հասունանալ հյուսի արձակելու չափով, այդ ստույգ է, որովհետև այնտեղ հասունանում են խաղողը և նպիպատացորենը, բայց այնուամենայնիվ, հարկավոր է փորձել տեղում, de facto*։

Սերմերն ստանալուն պես, ինչ նա այն ուղարկի Նախիջևան որևէ գնացողի հետ։ Պետք է միջոցներ ձեռք առնել, որպեսզի սերմերը չսառչեն, այսինքն՝ լավ փաթաթած դնել ճամպրուկի մեջ, այլ ոչ թե պահել բացօթյա։ Հակառակ դեպքում կփչանան։

Քանի որ մենք հող չունենք, ինչ նա ուղարկի Կարպ Մակարովիչի անունով, որպեսզի ցանեն Դոնի ափում գտնվող նրա այգում։ Ինչ վերաբերում է ցանքի հսկելուն, նա (Սուլթան-Շահը) կարող է դրել իր փեսային, Իման Մինակիշին[11], որ հանձն առնի այդ աշխատանքը, և ես համոզված եմ, որ նա ինձ համար չի հրաժարվիլ դրանից։

Սերմերը պիտի լինեն նախիջևանում մարտի սկզբին։ Պետք է այդ սերմերը ցանել երկու շաբաթ առաջ այն օրից, որից հետո, հավանականության տեսությամբ, սառնամանիքներ չպետք է լինեն։ Եվ ահա թե ինչպես են կատարում այդ ցանքը. հողը հերկում են սովորական կարդով, ինչպես այլ ցանքաների համար, հետո հողը հավասարեցնում են տափանով կամ որևէ այլ այգեգործական գործիքով (որովհետև այդ մեզ մոտ կատարվում է իրրև փորձ, փոքր չափով), որից հետո որևէ գործիքով [անց են կացնում] իրար հատող զուգահեռ գծեր, որոնք գտնվում են միմյանցից 12 վերշոկ հեռավորության վրա. ահա այս ձևով, և այդ գծերի յուրաքանչյուր հատման կետում ցանում են մի կակաո սերմ։

* (Հատ.) Փաստորեն, իրագես։

Անոմները ծածկում են հողով։ Մոռացա ասել, որ հողը պետք է հերկել քան կարելույն խոր (և դաշտային ցանքաների համար՝ աշունքից).



ակզբնական շրջանում, սորգոյի ծլելուց հետո, թփերի մէջև եղած տարածութիւնը փափկացնում են և քաղհանում են մանրատը, իսկ երբ այն հասնում է 1—1½ արշին բարձրութեան, այն ժամանակ հողը հավաքում են արմատների մոտ։ Դա անհրաժեշտ է, որովհետև այլ խնամք չի պահանջում այս շատ օգտակար պլանտացիան։ Ինդրում եմ, եղբայր, հենց որ Մուլթան-Շահը գա, ցույց տուր նրան այս նամակը,— թող նա արտադրի այն ամենը, ինչ վերաբերում է սորգոյին և թող կատարե բոլոր հանձնարարութիւնները. հանուն բարեկամութեան, խնդրում եմ անուշադրութեան չմատնի իմ այս խնդիրը։ Թող նա, իր հերթին, մանրամասն գրի Իվան Միխանիչին[1] այն ամենի մասին, ինչ կվերաբերի նրա անմիջական հսկողութեան։

Անցյալ իմ նամակը դու հավանորեն արդեն ստացել ես և եթե հաճաձայնվես վերադառնալ տուն, ապա հենց ինքդ կտանես այդ սերմերը և կկատարես մնացյալը։

Ե՞րբ կտեսնվենք, վերջապես։ Ե՞րբ կլինեն թղթերը։ Ատելած վիճ, ոչինչ չեմ հասկանում։ Ցտեսութիւն, եղբայր, առողջ և ուրախ եղիր։

Հավետ քո ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հ. Գ. Չգիտեմ, երբ կտատանաս դու այս նամակը, բայց ես այնուամենայնիվ նորից շնորհավորում եմ քեզ գալիք նոր տարին և Քրիստոսի մոտալուտ ծնունդ։

Քո եղբայր

12

ՊԱՋԱՐՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

1863, փետրվարի 14, Մ[անկա] Գ[նեզ] բուրգ

Սիրելի եղբայր.

Երեկ երեկոյան մեծ հաճույքով ստացա քո փետրվարի 12-ին գրած նամակդ հոչակավոր Հանրագիտական բառարանի 5-րդ հատորի հետ միասին։ Սկսեմ իմ սիրելի բարեկամ Անանիայից։ Շնորհավորում եմ նորա բարեհաջող գործուեութեան երկարատև ու միաժամանակ դժվարին ու շատ վտանգավոր Հանապարհորդութենից հետո — Բելոկամեննոյ

[Մոսկվայից] Պիտեր [Պետերբուրգ]։ Նզրայր սիրելիս, այդպիսի հանդուգն ճանապարհորդությունը ում ասես, որ խելքից չէանի. բայց կատակը մի կողմը, նրա գալուստն ինձ շատ ուրախացրեց և ինչ որ «mentre ungrido» * ասում է ինձ, որ ես շուտով նրան պիտի գրկեմ և նրա այդ չմնա սոսկ ցնորք, այլ իրագործվի de facto, օ՛, այն ժամանակ, իհարկե, ես անչափ ուրախ կլինեմ և «երևակայության զավակներից» մեծագույնը, Գյոթեն, մի անգամ ևս անիրավացի կլինի իր անզգույշ, բացարձակ պատռոտությամբ՝ իբր «մենք մեր երևակայության զավակներն ենք»։ Ա՛յ քեզ մտահայաց զառանցանք։ Իրենք են անցել կորդինատի այն կողմը և կամենում են մեզ հավատացնել, որ մենք բոլորս բացատրական մեծություններ ենք. այդպես չի՛ կարելի։

Ինչ վերաբերում է Անանիայի բարի և սրտագին խորհուրդներին և առողջապահական զգուշացումներին, ինձ մնում է միայն շնորհակալ լինել նրան և միաժամանակ հայտնել, որ այդ միջոցները վաղուց արդեն գործադրվում են սելտերյան ջրի հավելումով, որպեսզի ալկալիական այդ ջրով շեղոքացվի արյան խիստ թթվեցումը և այդպիսով ըստ կարելույն խափանվեն այն արատաթորումները, որոնք տվյալ պարագայում հավանական են արյան զարկերակայնության դեպքում։ Աչքի առաջ ունենալով իմ նեղկա վիճակը, հիվանդությանս նկատմամբ ես կարող եմ միմիայն պաշտպանողական դիրք ընդունել. հարձակողական գործողությունների դեպքում պահանջվում են միանգամայն այլ պայմաններ,— այդ թվում նաև հոգու հանգստություն,— որոնք առայժմ չկան իմ տրամադրության տակ։ Ուրեմն համբերություն։ Փարոսը նրևում է, կհնդանի թե մեռած — որևէ կերպ ափ կհասանենք։

Ինձ ուղարկած հանրագիտական բառարանի նմուշը ցածր է ամենայն միջակությունից. այդ գիտեմ և ինքը խմբագրությունն ու դրա համար—թեև այլ պատճառաբանությամբ—գրքի առաջին էջում գործ է ածում սովորական փծուն Sprach**։ Համաձայնեմ, մեզ մոտ բոլոր հանրագիտական ձեռնարկումները դատապարտված են ճակատագրի անեծքով, որովհետև մինչև այսօր եղած բոլոր փորձերն անհաջող են եղել։ Դրա համար էլ հասարակությունը կհատուցի գրական գործերի այդ վարպետներին ըստ արժանվույն և նրանք, իրենց հերթին, դեմ կառնեն ծանծաղուտին։ Հիմա այն ժամանակը չէ, երբ անպատիժ խաբում էին հասարակությունը։ Թեև ես բանտարկված չլինեի, աշխարհի և ոչ մի բարիքի համար էժան չէի նատեցնել ալ. Պատկանյանին նրա՝ հայոց պատմության վերաբերյալ գրած հոդվածը։ Ասենք, ավելի լավ հոդվածներ՝ արգարացիորեն գնահատվել՝ չէին պատռշաճել այդ բառարանին. այժմ նրանք բոլորը ներդաշնակում են իրար ու նրանց առնչծողները, հավանաբեն, հանգիստ են վայելում դափնիների վրա։ Buone notta!***

* (Իտալ.) Այդ ժամանակ մի ձայն։
** (Գերմ.) Լեզու։
*** (Իտալ.) Բարի գիշեր։

Լիխտենբերգի գիրքը, չնայած իր թերություններին ու շատ բաներիր թերևսակի և մակերեսային ուսումնասիրության, այնուամենայնիվ ինքնուրույն, ավելին կասեմ՝ բարեխիղճ աշխատանք է, որովհետև վրիպումներն առաջ են եկել ոչ թե հոգու խարդախությունից՝ ճշմարտությունը խեղաթյուրելու նպատակով, ո՛չ, այլ անտեղյակ լինելուց, ու, թերևս, մասամբ ընդհանրացած կեղծ տրադիցիաներից, որոնց համար, այնուամենայնիվ, չի կարելի մեղադրել հեղինակին, քանի որ շատ կողմից է նրանից առաջ բացված ու տորոված սխալ ուղին։ Իհարկե, քարտեզի անճշտության համար էլ չի կարելի նրան մեղադրել. դա էքսպեդիցիայի տեղագրի կամ երկրաբաշխի գործն է, որը հավանորեն և կազմել է։ Այսպես թե այնպես, այդ գիրքն իր տեսակի մեջ հետիններից չէ. թերևս հեղինակը կուզղե իր մի քանի կոպիտ սխալները, եթե բարեխիղճ քննադատությունը ցույց տա նրան այդ. նման դեպքում, իհարկե, գիրքն ավելի կմոտենա ճշմարտության։

Ֆ. Մ. Ռուդնևի մահը, միանգամայն անկեղծ եմ ասում, խորապես վշտացրեց ինձ. հանգի՛ստ խեղճի ոսկորներին։ Վերջին անգամ նա նրան տեսա Հունիսի վերջերին, երբ գուրս էի գալիս Մոսկվայից. այն ժամանակ նա խճճված էր միանգամայն այլ հիվանդության ցանցում, հիվանդություն, որը, անշուշտ, անհայտ չէր Անանիային։ Իհարկե, նման հյուծախտի դեպքում կարմիր քամու բորբոքը կարող էր հասցնել օրհասական վախճանի, իսկ նա նրան ափսոսում եմ, այո, շատ եմ ափսոսում։ Նա ուներ այնպիսի մեղմ, բացախիտ և խաղաղ բնավորություն՝ միշտ տրամադրված ուրախանալու, որ չէր կարելի նրան չսիրել։ Մինչդեռ անհերքելի ճշմարտություն է, որ venit mors... et nemini paratui*! Այս է վախճանը այն ամենի, ինչ ակիզբ ունի, վախճան, իհարկե, միայն մտիկական և անհատական իմաստով և ոչ թե բնական ընդարձակ իմաստով, որտեղ մենք, բնության անծայրածիր անհնության մեջ գործ ունենք հավասարակշռության և տարրերի գանազան զուգորդումների հետ... Այդ գիտեմ մինչև անգամ Համլետը։ A propos**, այսօր նորին գեղազանցության, Սեմյոն Գրիգորևիչի, անվանակոչության օրն է. հենց որ ատանաս նամակս, բարևի հետ միասին հայտնիր նրան և իմ անկեղծ շնորհավորանքը և ցանկությունս, որ նա որքան կարելի է շատ տարիներ ուրախ և առույգ անցկացնի այդ օրը։ Սեղմում եմ սիրելի Անանիայի և Հովհաննեսի ձեռքը։ Բոլոր մնացած ծանոթներիս գերմ և անկեղծ բարևներս։ Մերոնց նամակ գրիր և՛ Գրիգոր եղբորս, և՛ վարվառն քրոջս, ու շնորհակալություն հայտնիր նրանց բոլորին անդադաճան զգացմունքների համար և, ըստ կարելույն, հանգստացրու նրանց իմ նկատմամբ։

Հենց որ դու որևէ լուր ստանաս անգնդյուրի վերաբերյալ, անմիջապես հայտնիր ինձ այդ մասին։ Ասենք, թերևս, մինչ այդ մենք տես-

* (Լատ.) Գալիս է մահը և ոչ որի չի խնայում։

** (Ֆրանս.) Ի դեպ։

նրվենք։ Երանի ձեզ բոլորիդ, որ հնարավորություն ունիք վայելելու հրաշալի երաժշտության թովիչ հնչյունները. ինչ վերաբերում է ինձ՝ բացի նրբնմնակի իմ ժննատատանին հասնող զանգերի տրտում զողանջից, ահա յոթ ամիս է, ինչ ուրիշ ձայն չեմ լսում։ Այժմ ինձ մնում է խոսել երկու բանի մասին, որպեսզի «գլուխս ազատեմ» (отписаться) ինչպես ասում են բյուրոկրատները— այն է՝ գրքերի և Գալուատովի շարաբաստիկ արկածների մասին։ Իհարկե նախապատում եմ առաջինը։ Այսպես ուրեմն, նորից կրկնում եմ՝ գրքեր, գրքեր և գրքեր։ Եղյանից խնդրիր Շլոսսերը, նարծեմ նա ուներ, իսկ եթե ոչ՝ գոհ էնձ համար Մակուլչի երկերի լիակատար ժողովածուն, որի համար ես անձնապես նեղություն տվի նորին գերազանցության պ[արոն] պարետին, որ նա քեզ հաղորդի այդ մասին։ Վնասերը ձանձրացրել են, իսկ բառարանները զվարճ են առաջացնում, ինչպես tartarus stibiaticus-ը, ուստի խնդրում եմ գրքերն ընտրել ամենայն ուշադրությամբ, որպեսզի նրանք կարոզանան քիչ մի շատ գրազեցնել ինձ ու միաժամանակ համապատասխանեն անհրաժեշտ հարցասիրության պահանջներին։ Ահա ձեզ ծրագիրս

Գալուատովի արկածը, որ դու այդքան պաթետիկ նկարագրել ես, մի անգամ ես համոզեց ինձ, որ պատմությունն առանց աշխարհագրության դժվար հասկանալի է։ Որտե՞ղ էր կատարվում այդ նավագնացությունը. անհավատար պայքար մահվան դեմ և, որ վատթարագույնն է, գաբշահոտության դեմ։ Կեցցե՞ շրարջի մորթուց մուշտակը. այս փորձից հետո նա ուղղակի կարող է փոխարինել եթե ոչ կարգավորիչին մեխանիկայում, ապա, համենայն դեպս, ապատարար նավակներին, որոնց մասին այնքան շատ գոռում էին անգլիական ժուռնալիստները։ Դա մեծ առաջադիմություն է ծովագնացության համար զորեղ քամիների ժամանակ. այդպիսի մուշտակի օգնությամբ նավը կարող է անպատիժ կանգնած մնալ մի ինչուն տեղում. նա կարող է հեշտացնել նոր գրահավոր նավերի նավարկությունը ևս, որոնց ծանրության վրա այնքան իրավացիորեն զանգատվում են, պահելով նավը համեմատարար ավելի բարձր շրի մակերևույթից՝ իր տեսակարար կշռով վերջինից ավելի քիթն լինելու հետևանքով։ Է՜հ, տերը նրա հետ, ես կարծում եմ, որ նա կատակ անելու ժամանակ չուներ. չէ՞ որ վտանգը լուրջ էր— այդ շպիտի մոռանալ։ Ներկայումս, սակայն, այդպիսի գործողություններից հետո նրան անհրաժեշտ է ազատային որևէ բազադրությամբ խառն քլորակրի հագեցած լուծույթի մի քանի վաննա ընդունել, նախ՝ կոշնչանա շափազանց անախորժ հոտը, իսկ երկրորդը՝ մեր հարգելի թառաչը ազատային կդառնա, այն ժամանակ ոչ մի խոնավություն չի ազդի նրա վրա։ Առանց այդ արշավի նա երբեք չէր ազատավորվի. ահա մի ապացույց ևս այն բանի, որ «չիք չարիք, առանց բարեաց»։

Սակայն, ցտեսություն, ձանձրույթից շատ խոսեցի։ Համբուրում եմ քեզ։

Քո եղբայր ՄԻՔԱՅԵԼ ՆԱՀԱՆԴՅԱՆ

13

ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

1863, փետր[վարի] 17, Մ[անկո] Պետերբուրգ

Սիրելի և անգին եղբայր.

Երեկ երեկոյան, այսինքն 16-ին, առացա նամակդ, որի վրա նշանակված էր ամսի 17-ը, միևնույնս, բոլանդակությունից պարզ էր, որ այն գրված էր 15-ին՝ նորին գերազանցությունն Մ. Գ. Սուլթան-Շահի անվանակոչության հետևյալ օրը: Դա փոքրիկ, սակայն, միանգամայն անվնաս, անախորժություն է Պատրիզպանական ընկերության և Օվսյանենիկովի յուցակները Sorghum Saccharatum-*ի նմուշների հետ նույնպես հասան իմ ձեռքը, և որ ամենից շատ ինձ ուրախացրեց՝ Ձողևի գիրքն էր, որի նեղածությունը ես արդեն կարդացի, և մի փոքր նեղքև կատեմ իմ կարծիքը: 14-ին նամակ էի գրել քեզ, հավանաբար, այժմ հասել է քո ձեռքը, որի մեջ ես արդեն արտահայտել եմ իմ կարծիքը հանրագիտական բառարանի և Լիխտենի գրքի մասին: Ի դեպ, այդ գրքերն ընդամենն վերադարձնում եմ: Ես քեզ խնդրել էի Շլոսսերը կամ Մակուլլը. ևքն քեզ հաջողվի հարել, ապա, խնդրում եմ, մի քանի հատոր միասին բերես, և ոչ թե համեմատաբիկ չափերով մեկական գրքույկ: Սիրայր դեռ ունեմ և կրթականացնի մինչև հետևյալ ամսվա սկիզբը, իսկ հետո՝ ինչ որ առաված առ: Շնորհակալությունս Անանեանին՝ առաջարկած ձկան համար, միայն խնդրում եմ, մի՛ բերի, ինձ ոչինչ հարկավոր չէ: Միամիտ ես դնում եմ այնտեղից, որտեղից դուք էլ կգնեիք, ուրեմն ոչ մի առարկություն չկա՝ ես եմ դնում, թե ուղարկում են ինձ, բացի նրանից, որ առաջին դեպքում ծախսառան ավելի շատ է ձեռքս հասնում: Այդ բաների համար հանգիստ եղիր:*

Թե մեզ վիճակված չէ շատով տեսնվել, ապա մի՛ մոռանար հաղորդել ինձ ձեր հետապնդումների արդյունքները՝ անգնդցյուրի համար, այդ ինձ չափազանց հետաքրքրում է: Քո նամակում, բացի նրանից, որ բոլորդ առողջ եք, ուրախացուցիչ այլ բան չկաս. նամակդ ինչ որ թաթխիծ է արտահայտում. իմ նամակների մասին խոսվում է որպես ձեր միակ ուրախության, և ձեր դրությունը ներկայացվում է որպես անելանելի: Խոստովանում եմ, որ նման խոսքերը չեն կարող ինձ ուրախություն պատճառել և վանել իմ բացարձակ միայնության վիշտը. նման բաներն առավել ևս չեն հասնում իրենց նպատակին, քանի որ դրանք սահմանված են ինձ միխիթարելու համար: Միևնույնս ևս արդեն սովորել եմ ձեր անվերջ արցունքներին և արտահայտություններին՝ վերև հիշածս սձով, և, վերջապես, միանգամայն համոզվեցի, որ ե՛ս պետք է ձեզ միխիթարեմ և ոչ թե հակառակը. այդ պատճառով ձեզ լիակատար ազատություն եմ տալիս լաց լինելու և ապրելու և ամեն անգամ չմոռա-

նալու հայտնել ինձ այդ մասին, դա ինձ կզվարճացնի։ Է՛հ, թողնենք այդ դատարկ բաները, դրանցից օգուտ չկա։

Սրտանց շնորհակալ եմ Անանիային՝ իմ նկատմամբ ունեցած եղբայրական վերաբերմունքի համար. ավելին չեմ ասում, որովհետև ինքն էլ գիտեն, որ ես գնահատում եմ նրա անբասիր և անզավաճան բարեկամությունը։ Միայն թե չհասկացա՝ ինչի համար է հաղորդում ինձ տորոնի յատիներեն անունը, հավանաբար երբեք մենք այդ մասին խոսել ենք և հայկական տորոնի յատիներեն անունը չենք գտել, համենայն դեպս եղբայրաբար սեղմում եմ ձեռքը։ Ինչ վերաբերում է այն բանին, որ ես նրան որևէ աշխատանք տամ, ապա իմ կարծիքն է՝ հետաձգել այդ բարենպաստ ժամանակի, մինչև մինչ այդ իմ հորիզոնն էլ կպարզվի և ի վիճակի կլինենք միասին զբաղվել կենդանաբանությամբ և բուսաբանությամբ, որոնց կարիքը մեր հայրենի գրականության մեջ այնպես խիստ զգալի է։ Առայժմ նա թող աշխատի իր մասնագիտությամբ՝ բժշկությամբ, մնացյալի մասին կարելի է հետո մտածել։

Մեր վերջին առնակցության ժամանակ դու ասացիր, որ փողի կարիք ունես. ի՞նչ է՝ ասացա՞ր, թե ոչ։ Եթե չես ասացել, ապա պետք կլինի խնդրել [բանակի] վարչությունից թուլտովություն, որպեսզի ես կարողանամ ինձ մոտ եղած փողից քեզ ուղարկել. նրանք այնպես էլ, արդեն յոթ ամիս է, ինձ մոտ անօգուտ ընկած են։

Իմ առողջության վերաբերմամբ հանգիստ եղեք. բոլորովին չեմ կարող պարծենալ նրանով, բայց հուսահատվել դեռ շուտ է, մանավանդ որ վազուց արդեն ատատպանքներին սովորել եմ. իմ կյանքի ճանապարհին նրբեք վարդեր չեն փթթել...

Բոլորիդ շնորհակալ եմ, որ իմ կենացը խմել եք. ես նրբեք չեմ կասկածել իմ լավ ընկերներիս զգացմունքների նկատմամբ։ Ողջունեցեք նորին գերազանցության Ս. Գ. Սուլթան-Շահին և շնորհակալություն հաղորդեցեք իմ նկատմամբ նրա ջերմ վերաբերմունքի համար։ Այդ ի՞նչ Գանեթի «Աշխարհագրություն» է։ Ասացեք Անանիային, եթե իրոք դա ուշադրության արժանի է, ապա ինձ համար մի օրինակ ձարեր, հավանաբար, այստեղ Գլազունովի մոտ կա, Սագովայա փողոցում։ Ի դեպ, ես շարունակ ծախսեր եմ փաթաթում քո վզին, բայց արդյոք փող ունե՞ս. Տատանց այդ էլ ասում էիր, թե այստեղ արդեն պարտքեր ես արել։ Տակա՞ց արդյոք ասացա՞ր և պարտքերն արդյոք վճարեցի՞ր։ Խնդրում եմ չմոռանաս այդ մասին ինձ գրել։ Ինձ տանջում է այն միտքը, որ դու այստեղ, օտարության մեջ, կարող ես ասանց փողի մնալ, բայց այդ քննենք նաև պարտքի մեջ։ Իմ փոխարեն անզմիր Հովհաննես եղբորս ձեռքը. հուսով եմ, որ նա այժմ արդեն կսկսի քոնս Տնտեսավորության բավարարել ձեր նրաժշտասոլության։ Արդյոք ե՞րբ կլսենք «Տրովատորո»-ից իմ սիրած երգը՝ Vivea և այլն։

Հիշո՞ւմ ես, դու ինձ ասում էիր, թե Ի. Պատկանյանը ցանկանում

է ինչ որ ինքի հրատարակել. ի՞նչ է, ուսա՞ց հրատարակել, ի՞նչպես է կոչվում և հասարակությունն ի՞նչ ընդունելություն ցույց տվից[12]: Շատ ցավում եմ, որ մեր «Հյուսիսափայլն» արդեն գոյություն չունի և ստիպրնդը մնացել է գրական գաճաճներին: Նամակ գրիր տուն և ինչպես անցյալ նամակում արդեն ասել եմ, նրանցից ինարցրու մեր տեսակցությունների ընդհատվելը. այդ կարող է նրանց շատ վշտացնել և զանազան սիալ եզրակացություններ հասցնել:

Այնուհետև, ձեզանից ավելի ուրախ նամակի ստանալով, անցնում եմ Ֆոշեի գրքին, իհարկե, սուսկ միայն ներածությանը, որ ես կարդացել եմ, և որի մեջ, ինչպես ինձ թվում է, հեղինակը լիովին շարադրել է իր հայացքն Անգլիայի կամ անգլիացիների բնութագրման վերաբերյալ: Լիովին գնահատելով Ֆոշեի ակնհայտնի առաղանդը, չեմ կարող, սակայն, համբերել և այստեղ չդացահայտել պատմական այն պատճառները, որոնք ստիպում են ինձ լրիվ չընդունել հեղինակի կարծիքը: Անգլիացիների նաստիության, նրանց հպարտության, ուրիշներին չնմանվելու, այլ ինքնուրույն զարգացման նրանց ձգտման մասին հեղինակի բոլոր ասածները զարմանալիորեն արդարացի են: Մինչդեռ դրանից հանած եզրակացությունը ոչ բոլորովին հիմնավոր է: Նա նրանց մեջ տեսնում է սուսկ միայն հնամոլություն, քանի որ վիգերի և տորիների գոյության մասին է խոսում, ապա, ուրեմն, լիովին ընդունում է արմատականների և առաջադիմականների համատեղ գոյությունը: Նա այն դաղափարն է անդկացնում, որ Անգլիան և նրա ներկայացուցչական սիստեմը, ինչպես որ մի անգամ կազմվել են, այնպես էլ մնացել են, մինչդեռ, բատ հեղինակի՝ «այն ժամանակներից քաղաքական փոխհատուցությունը բավականաչափ առաջադիմություն է արել և այլն»: Այնուհետև, որ «յուրաքանչյուր հասարակության կազմակերպման համար անհրաժեշտ ընդհանուր սկզբունքները ոչ մի կոնստիտուցիայի չեն խանգարում, որ նա իր վրա կրի տեղական ամանդությունների, բարքերի և նույնիսկ կլիմայի դրոշմը»: Մի բատ այստեղ կանգ առնենք: Ենթադրենք, որ Անգլիայում հիշյալ սիստեմը զարգացել է մի քիչ վաղ, քան մայր ցամաքում— դա դեռ ոչինչ չի նշանակում: Միջին դարերում, համեմատաբար կայարության փլատակների վրա, մայր ցամաքում առաջացան մի շարք սահմանադրական պետություններ, որոնք միմյանց հետ կրճատ մրցակցության մեջ էին և յուրաքանչյուրը պինդված էր ավելի կամ պակաս լրիվությամբ: Անգամ Բավարիան ուներ այնպիսի կոնստիտուցիա, որ կարող էր մրցել ժամանակակից անգլիական կոնստիտուցիայի հետ: Դա անհերքելի փաստ է: Այժմ տեսնենք, թե ինչ եղան այդ կոնստիտուցիաները, Ֆոշեի՝ «քաղաքական փոխհատուցության առաջադիմության» դեպքում: Մի՞թե նա մատնացույց կանի վերապը: Ո՞վ գիտե, մյուսներին նա հարկավ թե մատնանշի, որովհետև վերապը Լյուդվիդ XIV-ի ժամանակ ոչ միայն լրիվ բավարարում էր Ֆրանսիացիների անսահմանությունն ու բնթեռամասությունը, այլև ծառայում էր իրրև

օրինակ նրան շրջապատող մյուս պետություններին համար։ Թուրքիա չի բավականացնի, որպեսզի իմ միտքը լիովին զարգացնեմ։ Մայր ցամաքից ֆիզիկապես մեկուսացած Անգլիան (անկասկած՝ իր բախտից), եթե չենթարկվեց այն սատուրնալիային, որի հեղեղները մայր ցամաքի վրա ներկայացուցչական սիստեմի (de facto) վերջին հետքերը քշեցին հետու դեպի բաց ծովը, ապա միաժամանակ, նա չէր կարող չտանել և շղթալ վառոդ՝ հանձին կարլ I-ի։ Այդ ասելով, ես հետու եմ կրոմվելին արդարացնելու մտքից. ամեն մի բռնի միջոց հակառակ է իմ համոզմունքներին, և ես զզվանքով երես եմ դարձնում քաղաքական-վիրաբուժական բոլոր գործողություններից[13]. այնուամենայնիվ, ես հանձն չեմ առնում կարլի փաստաբանը լինել, որն այնպես անխղճաբար դավաճանեց Անգլիային։ Բավական չէ, որ նա որպես խոգավոր դավաճանեց կոնստիտուցիային, կոնստիտուցիայի անձեռնմխելիության մասին տված իր երդմանը, այլև, հույժ ամոթալի հանգամանքներում, դավաճանեց և ժողովրդին։ Հեղաշրջման նախօրյակին 60.000 ֆունտ ստերլինգով նա պատրամենտին վաճառեց իր համաձայնությունը հայտնի օրինագծի վերաբերյալ, իսկ հետևյալ օրը մտադիր էր զինված ուժերով հարձակում գործել պատրամենտի վրա։ Ինչ էլ որ լինի, այնուամենայնիվ, այդ փաստերը բոլորովին էլ չեն հանգեցնում անգլիացիներին մեղադրելուն, որովհետև նրանք ամուր պահպանեցին և չդավաճանեցին իրերի կարգին հանուն ալ[արոն] Ծոշեի «քաղաքական փիլիսոփայության առաջադիմության»։ Ֆրանսիացիները շատ են սիրում իրենց ռևոլյուցիայի մասին խոսել սնափառական արժանապատվության մեծագույն զգացումով։ Ով է իմանում, եթե Լամանշի այն կողմն անգլիացիներն իրենց սիստեմն անձեռնմխելի չպահեին, եթե,— ասես Ֆրանսիացիներին ի ծաղր,— վայելած չլիներին լավ կազմակերպության բոլոր առավելությունները, քիևրևս [հաջորդ] սերունդը Ֆրանսիական պատմության էջերում չկարդար այն արյունալի դրաման, որի մասին Ծոշեն խոսում է իբրև կոմֆլեյն [նշանավոր դեպքի]։ Ի դեպ, ինչպես կարելի է կռահել, այդ գիրքը բավական հին է. նա վերաբերում է թագավորական թվականներին և, այդ պատճառով հեղինակին կարելի է ներել մյուս վերհիշումները, ինչպես օրինակ նավաստիների բռնի հավաքագրման մասին, և այլն։ Բայց վրդովեցուցիչն այն է, որ պ. պ. թարգմանիչները թարգմանում են մի գիրք, որ բուռ մեծի մասին վերաբերում է Անգլիայի նախընթաց դարաշրջաններին, և իրենց կողմից ոչ մի ծանոթագրություն չեն տալիս. ես հավատացած եմ, թեև դեռ ամբողջ գիրքը չեմ կարդացել, որ այն ժամանակներից շատ բան է փոխվել, իսկ ինչու անցյալը ցույց տալ իբրև ներկա։ Ես անգլիամոլ չեմ, բայց գերագասում եմ ճշմարտությունը։ Ծոշեն, խախտելով այլ հանդիմանությունների թվում, խոսելով Անգլիայի նվաճումների մասին, նրան մեղադրում է Հնդկաստանի և Կանադայի համար։ Համաձայն եմ, բայց մի՞թե Ֆրանսիան պակաս մեծության թաթեր ունի։ Անգլիային հանդիմանելով հնամոլության հա-

մար, Ծոշևն այդ դեպքում, նրան չպետք է հանդիմաներ նամակի համար. բայց ինչպես կարդարացնի Ծոշևն «քաղաքական փիլիսոփայությանն» հետևող Ջրանախչային, երբ նա, ապատուելով իր հանդուրժելու դարաշրջանում, լեզուն լեզուների հետևից էր ուզարկում Աֆրիկան սարկացնելու համար. Ծող հիշատակներ Նիցցայի և Սավոյայի մասին, բայց դա կլինի մեղադրանք ex post facto*, որովհետև դիրքը կազմելու ժամանակ այդ դեռ անդի չէր ունենում։

Խնդիրն, այդ դրքի վերլուծութիւնը որևէ փոսատային Ծղմի վրա կատարելու բան չէ. դա հարկ էր քննարկել մինչև ոսկորների ծուծը, որովհետև նյութին արժանի է այդ աշխատանքին (իսկ շատ բան կա, որոնց մասին կարելի է յուրջ և ընդարձակորեն խոսել). և ես հետու եմ այն մտքից, որ ուսումնասիրեմ այդ դիրքն այժմ, և իմ այժմյան վիճակում, բայց այս մի քանի դիտողությունները Ծող մնան որպես հուշարձան Ծոշևի դրքի՝ իմ վրա գործած առաջին տպավորության։

Ես այն ուշադրությամբ կկարդամ, և նրին ինձ հաջողվի, երևի նրա մասին ձեզ հետ մանրամասն կխոսեմ։

Այժմ կրկին վերադառնում եմ ներկա վիճակիս։ Այսօր հրաշալի եղանակ էր և ես նրանից օգտվեցի 20 րոպե. կարող էի բաց օդում ավելի մնալ, բայց բանի էր ու հետևելով առածին, թե՝ «լավից-քիչ-քիչ», վերադարձա բնակավայրս, որպեսզի ամարեմ դեռևս առավոտյան սկսած նամակս։ Երկար և առանց ընդմիջման չեմ կարողանում գրել. անդրադառնում է կրծքիս և մեջքիս վրա, դրա համար յուրաքանչյուր նամակ գրում եմ տարբեր ընդմիջումներով, որոնց մեջ անկասկած, մանում է նաև ծխելս։

Ի դեպ, Օվսյաննիկովի գրացուցակի մասին։ Նոր շատ գրքեր եմ տեսնում, որոնք չկային 60 թվականի սկզբին, երբ ես մեկնում էի Ռուսաստանից, բայց պետք է ասեմ, որ նրանց մեջ ծանրակշիռ գրքերը քիչ են և գներն էլ չտեսնված բանկ են։ Որևէ խնդիր գրականագետ, որպեսզի անհրաժեշտ գրքերը ձեռք բերև կրկնվի իր գոյության վերջին միջոցներից։ Հա՛, էլ ի՞նչի մասին գրեմ։ Ախր այս բոլորը ձանձրույթից է և մասամբ նրա համար, որ կատարեմ ձեր ցանկությունը՝ ավելի շատ գրելու։ Ոչ որի չեմ տեսնում, ոչ մի նորություն չգիտեմ, որ ձեզ հազորդակից դարձնեմ. ինձ համար այսօրը երևելի կրկնություն է, իսկ վաղը, այսօրվա կրկնությունը կլինի։ Ես այնպիսի կյանք եմ վարում, որը ոչ որի օգտակար չէ։ «Ни богу свечка, ни чорту кочерга»**։ Այսպիսի կյանքը համարձակ կարելի է անվանել կենդանի մահ, ո՛չ ավելի։

Միրելի եղբայր, հարցրու Անանխային, գիտե արդյոք, որ ես Մոսկվայում, Արբատի թաղարամասում, նահանգապետի և գլխավոր սահմանապետի իշխանության ներքո եմ վարում իմ անփոփական կյանքը կապարա-

---

* Տես՝ post factum (լատ.) փաստը կատարվելուց հետո։

** Ոչ աստծուն մոմ, ոչ սատանային կրակախառնիչ։

ու Կարպովին հանձնելու համար. վերջինս պետք է հանձներ մեր հարազատներին, որոնք հաճախ են լինում Մոսկվայում։ Կարպովն ստացե՞լ է արդյոք բազաբամասից և մերոնք իրենց հերթին վերցրե՞լ են արդյոք նրանից։ Կեդրոսում եմ, որպեսզի քո նամակում իմ բոլոր հարցերի պատասխանը լինի, թե չէ այնքան անախորժ է, երբ պատասխան չի լինում, կարծես հարցդ հավիտենության գիրկն է սուզվել։

Դե, ժամ է ինձ հանգստանալու, ավելին չգրելու տեղ էլ չկա, և, պիտի խոստովանեմ, ուժ էլ չունեմ, չեմ ասում դեռ այն, որ գրելու բան էլ չկա. սպասում եմ ձնգանից լավ և ուրախ խաբարիկների և Թարմ նորությունների։ Ողջունիր երկու անգ բոլոր ծանոթներիս, յուրաքանչյուրին առանձին-առանձին։ Այնուհետև բոլորդ ողջ եղեք և ներողամիտ շփերը նամակիս համար։

Ամբողջովին քոնը՝ ՄԻՇԵԼ

Հ. Գ. Ուղարկիր ինձ Ա. Բուտկովսկու «Весталки»-ն, ես դրանց մասին մի քիչ գիտեմ հռոմեական պատմությունից. ինչու դա լավ մենագրություն է։ Գինն է մեկ ռուբլի արծաթով։

14

ՊԱՋԱՐՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

1863, փետրվարի 20, Մ[անկա] Գ[նեզդ] Բ[ուրգ]
Երեկոյան ժամը 9-ին, Nocturna*

Սիրելի եղբայր,

Երեկվա թվակիր քո սիրելի նամակը Շլոսսերի երկրորդ հատորի, Մակուլեյի երկրորդ հատորի և Գերվինուսի առաջին պրակի հետ միասին ստացա այսօր, Ճաշից հետո։ Նամակիդ քննությանը մեջ չմտնելով, առաջինը հարկ եմ համարում նկատել, որ վերոհիշյալների հետ ստացա նույնպես անգնդյույրի հարցին վերաբերող հայտնի նամակների պատճենները։ Բայց ի՞նչ նպատակով են այդ պատճենները ինձ ուղարկված։ Քո նամակում դու համառորեն լռում ես այդ մասին, ուստի ես ոչ մի կերպ հանձն չեմ առնում բացատրել։ Այդ նշանակո՞ւմ է, արդյոք, որ այդ պատճենների հիման վրա դիմում է արված կամ թե՝ ով որ դիմումը պիտի գրեր՝ հրաժարվել է և ես պիտի գրե՞մ բուն այդ պատճենների, և կամ՝ որպեսզի ես վերանայեմ անգնդյույրի պատմությանը վերաբերող դրույթները։ Այս բոլոր հարցերին ես մի պատասխան ունեմ — այն որ, ստա-

* Գիշերային։

բակուած եմ և բոլորովին ոչինչ չեմ հասկանում։ Նամակում գրում եր, որ անգնդզյուրի վիճակի մասին կհաղորդեր ինձ տեսակցութեան ժամանակ, կգրեր մոտ օրերս։ Սպասելով տեսակցութեան կամ ավելի պարզ խոսքերով շարադրված նամակիդ, ես առայժմ ինձ մոտ եմ թողնում հիշյալ պատճենները և անցնում եմ նամակիդ։ Գրքերի համար շատ և շատ շնորհակալութիւն, միայն թե Շլոսսերն ուղարկեցնք ինձ ո՛չ թե աշխարհի առեղծագործութիւնից, այլ Հռոմեական պատմութիւնից սկսած. մենք հետևակներ ենք և Հռոմից դենը չենք գնում՝ մնացածը առայժմ սրամտորեալով վինկելմաններին, Բնկերին և մյուս հնախուզներին, որոնք նախապատմական ժամանակներից որևէ մի փորրիկ իր գտնելով, հաստատապես վերականգնում են վաղուց անհետացած իրականութեան պատկերը։ Հաճախ է պատահում, որ այդպիսի մարդիկ, որոնք օժտված են հանճարեղ մտքով, Պոմպեյի կամ Հերկուլանումի ավերակների տակից գտնելով մի ժանգոտած մկրատ, ձեզ կպատմեն այդ մկրատը գործածող կնոջ ամբողջ արդուզարդի, նրա գիտատարքի մասին։ Ինչո՞ւ ես ծիծաղում։ Այո՛, լավ հնագետը նույնիսկ գրանով էլ չի բավականանում։ Նա անպայմանորեն կորոշե հնագույն ժամանակներում այդ մկրատը գործածող կնոջ մազերի գույնը — խորհրդաշատ էր նա, թե թխահեր։ Ինչ վերաբերում է մեզ, մենք դրական գիտութեան հետևողներ ենք և մեր ամբողջ ուժը կենտրոնացնում ենք միայն ուսումնասիրելու այն, ինչ գիտութեանը հաստատապես հայտնի է, այլ ոչ թե ենթադրաբար կամ տրտպպայմանորեն։ Հետևյալ անգամ Յոշեն և Դոն Քիշոտը ևս կուղարկեմ։ Հրեաների և Եգիպտոսի մասին հոդվածներում անպատճառ մատնանշում է ինձ Տոբոգոն։ Դրա հետ միասին «Եվրոպա» հոդվածում ամեն կերպ ձգտում է Եվրոպայի հայերի թիվը նվազեցնել մինչև 200,000, որպեսզի հնարավորութիւն ունենա նրանց (հայերին) դասել դնչունների հետ։ Խմբագրութեանը հաճելի չէ՞ արդյոք համաձայնել, որ Եվրոպայում՝ Ռուսաստանում (Եվրոպական), Թուրքիայում (Եվրոպական), Ավստրիայում, Վալաքիայում, Մոլդավիայում և այլն ապրում են ավելի քան 500,000 հայեր։ Միայն Եվրոպական Թուրքիայում, սկսած Իզմայիլից՝ Տուլչի, Սիլիստրիա, Վարնա, Սոֆիա, Ադրիանապոլիս և Կոստանդնուպոլսի Եվրոպական մասում՝ այսինքն՝ Բերեկ, Օրթա-Քեյ, Բերա, Ղալաթիա, Խասքեյ, էյուբ, Պալատ և բուն Կոստանդնուպոլսում՝ Սամաթիա, Յեդի-Կուլե, Այ-Սանֆանո, և այլն, բաս նորագույն հետազոտութիւններով՝ ապրում են 450,000 հայեր. Վալաքիայում և Մոլդավիայում՝ 36 հազար, Ավստրիայում՝ 18 հազար, Նախիջևանում՝ Բեսարաբիայի թեմում՝ 36 հազար. ես դեռ չեմ խոսում Թաւրիզիայի, Տրանսիլվանիայի և Եվրոպական Թուրքիայի, Ղրիմի և Լեհաստանի հայ կաթոլիկների մասին։

Տարօրինա՜կ է հայերի թվի մասին եղած վիճակագրութեան բանաբը։ Ջանազան պատահական մարդիկ ինչքա՜ն են գրել այդ փափուկ և սայթաքուն նյութի մասին. այդ բոլորն ուղիղ մեր սիրելի Անանիայի աղրաեոցը նետելու բաներ են։ Իսկ բաս դանազան փաստական տվյալների,

հշմարտությանն ավելի մոտ է այն, որ այդ թիվը տատանվում է 4.500.000 և 5.500,000-ի միջև։ Կոստանդնուպոլսի հայ երեսփոխանական ընդհանուր ժողովը ցանկանում էր վճռական միջոցներ ձեռնարկել այդ թվերը հիշյա հետապտուրդու համար, բայց տեղի ունեցած խառնակությունները ստիպեցին նրան այլ հարցերի թվում այդ ձեռնարկությունն էլ այժմ հետաձգել, մինչև ժողովրդական գործերի վերաբերյալ հայկական սահմանադրության (ստատուտ) վերջնական հաստատումը Թուրքիայում։

Առողջությունս վատ չէ. հույս կա, որ առանց որևէ դեղորայքի կանցկացնեմ. կրկին շնորհակալություն եմ հայտնում Անանիային իր խորհուրդների և ընկեր-բարեկամներիս մասին տված հույժ հետաքրքրական տեղեկությունների համար։ Ինչ վերաբերում է հայերի համակրությանը՝ ինձ մնում է միայն նրանց շնորհակալություն հայտնել. այժմ ուրիշ ոչնչով չեմ կարող հատուցել։

Հրեաների վերաբերյալ Անանիայի հետ ես համաձայն չեմ։ Շատ բան ունեմ ասելու այդ՝ հետաքրքրությունից ոչ զուրկ հարցի մասին, բայց այստեղ խոսելու տեղը չէ. բացի այդ, նման հարցերի պարզաբանման համար հարկավոր է ոչ թե ինչ-որ մի թերթ թուղթ, այլ ամբողջ ուսումնասիրություն, դրա համար էլ թողնենք այդ ավելի հարմար ժամանակի, քան այժմ է։ Եթե տեսնեք շատ հարգելի հրեա գիտնական Հայր Ֆիրկովիչին, հայտնեցեք նրան իմ անկեղծ հարգանքը։ Երևի նա ինձ կների, որ ես այն ժամանակ չկարողացա նրա մոտ լինել իմ հիվանդության պատճառով և աննշանալի անփութության հետևանքով։ Վերջերս ինձ ասացին, որ պ[արոն] Նորովը, Լ. Ս., նախկին մինիստրը, Սինայում հայտնաբերել է Աստվածաշնչի ամենահին հունական մի ձեռագիր, մեզ չկարողացան ինձ ասել, թե ո՛ր գարին է վերաբերում. Բերևս այդ մասին խոսել են ժուռնալներում, Բերևս այդ մասին պ[արոն] Ֆիրկովիչը գիտե։ Ինձ համար շատ հետաքրքրական է այդ մասին որքան կարելի է ավելի բան իմանալ։ Եթե սա գրված է Քրիստոսի ծննդից մի քանի դար առաջ, ապա այս իսկական գանձ է ստուգելու հրեական նահապետյան տեքստը և Քրիստոսի ծննդից հետո 3-րդ դարում Օրիգենի հավաքած հունական թարգմանությունը, որը համարվում է 72 մեկնիչների իսկական թարգմանությունը և որից 5-րդ դարում կատարված է մեր թարգմանությունը (այդ բոլորի մասին Դոն-Քիշոտը լռում է)։

Եթե Անանիան Ուստինովիչին կամ Կովալսկուն նամակ գրի, ապա ինչ ինձնից նրանց շնորհակալություն հայտնի՝ ինձ ուղարկած ոգևորության համար։ Նրանցից առաջինին ցանկանում եմ լիակատար առողջություն, եթե տեղից դեռ բոլորովին չի ապաքինվել, իսկ երկրորդին ցանկանում եմ, որ ամբոխն ասանա։ Այժմ որտե՞ղ է ծառայում Ալեքսեյևսկը, դարձյալ հիվանդանոցի բանվորական բաժանմունքո՞ւմ, թե տեղափոխվել է մանկատուն Воспитательный дом. Մոսկվայից իմ մեկնելու ժամանակ Մ. Ն. Պանովայի հետ նա այնքան էլ լավ հարաբերությունների մեջ չէր՝ հավանորեն վերջինիս իր երազ հետ գժտված լինելու պատճառով, և լուր

էր պատմում, թե Խահակն ամուսնանում է Նադ[եժդա] Նիկոլաևնայի հետ, չնայած դրան ես ոչ մի կերպ համաձայն չեմ կարող, բայց ո՞վ գիտե դրանց ինտիմ գործերը. Բերես Անանիան պատասխանեն այս հարցերին։ Ինչպե՞ս է Գրիշան։ Համալսարանը թողնե՞ց, թե դեռ համարվում է ուսանող «ex officio»*։ Ես նրան շատ եմ խղճում. հանցանքի ծանրությունը կրնկին Խահակի վրա. նա շեղնց նրան ճանապարհից՝ չնայած նրան ճշմարիտ ճանապարհի վրա դնելու իմ ջանքերին։— Ուսանողին ինչո՞ւ էր Խահակի հետ ապրում. ի՞նչը նրան ստիպեց. փող չունե՞ր, ինչ է։ Կարծեմ նրանք այնքան մոտ հարաբերությունների մեջ չէին։ Սիմն ես տեսնելի Անանիային, ապա, համենայնդեպ, նրան հարցերով կդնդակոծեմ, և նախ և առաջ, իհարկե, կասեմ. «Свет Любим Карпович! Հիշո՞ւմ ես անցյալը, երբ ջերմ ընկերական շրջանում դիշերներ էինք լուսացնում. ո՞ւր են այժմ մեր անատոմա-պաթոլոգիական և ֆիզիկո-բժշկական հավաքույթները, դրքերը, տետրակները, գրույցները, և որպես այդ բոլորի անհրաժեշտ ատրիբուտներ՝ շշերն ու բաժակները»։ Ճիշտ է ասում Շիլլերը, թե՝ «կյանքի մայիսը մի անգամ է ծաղկում». անդառնալի են մեզ համար ավյունով ու հույսերով լի այն երջանիկ օրերը։ Չնայած մեզանից յուրաքանչյուրի կյանքի պայմաններն ավելի քան սահմանափակ էին, բայց այն քաղցր բնկերական ավելի լայն պայմաններում էլ այլևս չենք տեսնի։ Ուսանողի կյանքն այնքան բազմազան է՝ ցանկացածի պես ապրելուն արգելակող միջոցների դեմ մղած պայքարից և իրական այն կյանքից, որ նա վարում է, չնայած սահմանափակ միջոցներին նա քշով բավականանում է, բայց այնուամենայնիվ, իր ուզածն է անում և ապրում է այնպես, ինչպես կցանկանար ապրել։

Սիրելի եղբայր, ե՞րբ, որտեղ, մենք կտեսնվենք, որպեսզի ներկայի մասին խոսանք, որովհետև անցյալի հուշերը մեզ համեմի են, մինչև մասամբ են բաժիշ բավարար դնում ներկայի վերքերին, և ոչ ավելին. մինչդեռ ներկայի ցավերը պահանջում են արդի միջոցներ։ Ուրախ եմ «Տրուվառորի» և «Միդդլմարչի» մեջ Հովհաննես եղբոր կատարած վարժությունների համար և ցանկանում եմ նրան լիակատար հաջողություն[11]։ Շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր ողջունում են ինձ։ Նրանց թվարկումը քո նամակում շարժեց իմ ժպիտը. դու գրում ես՝ «քո բարեկամները՝ և՛ կանայք և՛ աղջիկները և այլն», կարծես աֆիշ լինեի՝ տոհիկիններ, պարոններ, մանկլավիկներ, հյուրեր» և այլն։ Կրկին շնորհակալություն նրբին զգայունության Ս. Գ. Սուլթան-Շահին և երկու սեռի բոլոր բարեկամներիս՝ առանց բացառության։ Անանիային ողջույն չեմ գրում, որովհետև նա քաղցրահոսություն չի սիրում. միայն շնորհակալություն եմ հայտնում նրան՝ իմ մասին հայտնած շատ բարենպաստ կարծիքի համար, բայց, թվում է, թե դա մի փոքր չափազանցրած է։ Եվ այսպես, կրկին ցտեսություն։ Այդ Պեննելոպեի ձեռն է, երբ նա Ոդիսևսի վերադար-

* (Լատ.) Ի պաշտոնե, քան պարտավորության։

ձին էր սպասում։ Նամակ գրիր առն և ողջունիր բոլորին. ասա, որ ես ողջ-առողջ եմ, և որ մենք առաջվա նման տեսնվում ենք։ Թեև դա իրականանա։ Սպասելով տեսակցության կամ անհաջողության դեպքում՝ դոնե հանգամանալից նամակի,

Քո հավատարիմ եղբայր՝ ՄԻՇԵԼ

Հ. Գ. Ջոշեի գիրքը ժամանակակից Անգլիան ուսումնասիրելու համար միանգամայն անպետք է։ Խելքս չի հասնում, թե թարգմանիչներն ինչպես են հրապարակ հանել առանց ծանոթագրությունների, in modo crudo*։ Այդ վերնագիրը՝ «Очерки Англии» որոշակի է, մինչդեռ գիրքը Անգլիայի ներկա վիճակին չի համապատասխանում։ Այդ գիրքն այժմ ավելին չէ, քան Անգլիայի վիճակագրության և քաղաքակրթության համեմատական ուսումնասիրության մի ձեռնարկ։

15

ՂԱԶԱՐՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

1863 թ., փետրվարի 24, Մ[անկա] Պետերբուրգ

Անգին եղբայր,

Քեզ ընդարձակ նամակ գրելու իմ բուռն ցանկությամբ հանդերձ, մեծագիր ձիրքի ուղղակի սովի պատճառով, պետք է բավականանամ փորրով։ Հումորով չի երևկվա թվակիր նամակդ ատացա երեկոյան, այսօր գրում եմ պատասխանը, որ դու, հավանորեն, կատանաս վաղը։ Ինձ հաղորդած քո բոլոր տեղեկությունների համար շատ և շատ շնորհակալ եմ. մի քանի անգամ կարդացի նամակդ, որ ինձ մեծ բավականություն պատճառեց։ Այնուհետև, մեր տեսակցության հարցի ընթացքն ինձ հույս ներշնչեց, որ շուտով կրկին կզրկեմ ձեզ և կլսեմ իմ սրտակիցների կենդանի ձայները։ Կարդալով «История цивилизации»-ն ինձ ուղարկելու մասին՝ վերնագրից սիրտս քիչ էր մնում նվազեր այն բանից հետո, երբ ես արդեն կարդացել եմ Գիզոյի նույնանման պատմությունը[15] Փարիզում և բնլպիական ակադեմիայի անդամներից մեկի՝ փիլիսոփայության և ասեղծագործության ինչ-որ դոկտորի աշխատանքը՝ այսանդ։ Ա՛յ, թե պատմություն է, եղբա՛յր։ Հետո, շարունակելով ընթերցումը, տեսա, որ դա Բոքլի «Անգլիայի քաղաքակրթության պատմություն» է։ Ճիշտ է, մի փորր հանգստացա, բայց այնուամենայնիվ, վախում եմ, որ Բոքլն ամբողջ քաղաքակրթությունը չբխեցնի բողոքականությունից կամ պուրիտանիզմից, ինչպես ուրիշներն, առանց այլևայլու-

* (Լատ.) Հում ձևով

թյան, բխեցնում են անպայման կաթոլիկությունից. ուղիղն ասած, ես այդ հարցը դիտում եմ բոլորովին հակառակ տեսանկյունից: Ըստ իս, պրոգրեսի տեսակետից քաղաքակրթության զարգացման հիմնական խթանը կրոնի մեջ չէ, այլ, ավելի շուտ, կրոնների վերածնունդը և կերպարանափոխությունը քաղաքակրթության անխուսափելի հետևանքներն են՝ նրա զարգացման տվյալ մոմենտին: Հնազավոր Արևելքում բուդդայականության կամ բրահմինականության դարավոր տիրապետությունն ավելի շատ արգահատության է քաղաքակրթության և լուսավորության ցածր աստիճանի, որի վրա գտնվում են այդ կրոնները դավանողները: Կասկած չկա, որ կրոնն իր հերթին ուժեղ ազդեցություն ունի մասսայի վրա՝ նրա քաղաքակրթության գործում, բայց ես խոսում եմ հիմնական խթանի, այսինքն՝ ազդակի կամ դիաստազդի մասին, լծակի մասին, որն առաջինն ամբողջ մեխանիզմին ուժ է հաղորդում: Ո՞ր ազգը կամ նորմանը, կամ բրետոնը միջին դարերում կխիզախեր բողոքի դրոշ բարձրացնել հռոմեական եպիսկոպոսի տեղակալության անմեղանշելի լինելու դեմ: Բայց նրանք այդ դրոշը բարձրացրին նոր դարաշրջանի սկզբին, երբ այնքան էին քաղաքակրթված և լուսավորված, որ ամենայն պարզությամբ հասկանում էին իրենց գործի արդարացի լինելը:*

Չնայած այդ բոլորին, Բոքլն ուղարկեցեք. ես մի տեղ ինչ-որ բան եմ կարդացել այդ երկի մասին: Այժմ, արտագնդվելով, կկարդամ և՛ բուն գիրքը: Առայժմ կարդալու բան ունեմ. և ես գրքերը ո՛չ ին սոսկ կարդում եմ, այլ ուսումնասիրում՝ վերլուծական և քննադատական տեսակետից: Դրանք (այդ գրքերը), շատ բան չեն տալիս ինձ, բայց գիտության մեջ չպետք է արհամարհել և շատ քիչը, մանավանդ, որ ես ուրիշ զգացմունք չունեմ: Նամակիս հետ վերադարձնում եմ Գերվինուսը և հանրագիտական բառարանը: Մակոլեյը վերջացնելու վրա եմ. այնուհետև կսկսեմ Շլոսսերը և ապա նորից Ֆոշեն: Մակոլեյն, իր մշտական հումորով ինձ մեծ հաճույք է պատճառում: Գերվինուսն առայժմ լուրջ գրող է, չգիտեմ ինչ կլինի հետագայում: Բայց բավական է այս հարցերի մասին:

Հոգով շնորհակալ եմ սիրելի Անանիայից քո այս նամակում մանրամասնորեն շարադրածի համար. հուսով եմ, որ առաջիկայում էլ իր հումորից ինձ չի զրկի: Այսպայլյանի վերաբերմունքն Ռատիմովիչի գործում, ոչ միայն զովելի չէ, այլև, ինձ թվում է, արժանի է ամենայն պարսավանքի: Իր մտածողության ձևով նա տանել չի կարողանում հասարակ մահկանացուներին, և նրա վարմունքի մասին քո պատմածն ինձ չզարմացրեց: Անանյանների մոտ նա յուրայինների շրջանումն է. ես նրան (յուրջ եմ ասում), խղճում եմ. նա շար չէ, այլ շատ վատ ուղու վրա է: Սատանան գիտե, թե որտեղից է նրա մեջ՝ ամեն գնով արիստոկրատի, այն էլ նախիջևանցի արիստոկրատի, գեր խաղալու ձգտումը: Այդ յան-

* Գրախոսը շարքերի վերածող Ֆեխներ:

գոնցի պլեքենից ավելի լավ չէ։ Հարյուր անգամ ավելի օգտակար կլիներ խելքը գլուխը հավաքեր ու մի բան սովորեր, քան թե քաշ գար ինչ-որ Անանյանի նախասենյակում կամ իր հիմար հնարքներով խեղճ Գրիշային ճանապարհից շեղեր. վերջինիս էլ ես շատ եմ ափսոսում։ Նա եթե Ռատիմովիչի հետ գնար, հավատացած եմ, որ բոլորովին կուղղվեր և Ռատիմովիչի զեկավարությամբ հետագայում իրոք կկարողանար կանոնիզատի քննություն բռնել։ Ո՞րն է այժմ նրա ապագա հեռանկարը։ Ի՞նչ, նա գեռ Մար[իա] Նիկոլաևնայի մոտ է ապրում, թե եղբոր, ինչպես ասում է Անանիան՝ փողոցում։

Վայ ինձ, եթե Անանիան Մոսկվա կմեկնի նախքան իմ պատմությանս ավարտվելը. այժմ, համենայն դեպս, ես տեղեկություններ եմ ստանում այն շրջանից, ուր մի ժամանակ ապրել եմ, թե չէ ես ինձ կզգայի ուղղակի բևեռից դուրս, ինչպես ասում էր Ամիրյանը։ Չնայած էգոիզմ կլիներ իմ կողմից նրան սոխակել, որ մինչև իմ գործի վերջանալն այստեղ մնար, բայց ոչինչ, ես այդ էգոիզմն ինձ թույլ կտայի, եթե միայն նրա պայմանները ներեին. և թույլ կտայի՝ լիովին հավատացած, որ նա իմ այդ քմահաճույքը չի մերժի, եթե այդ քմահաճույք է և ոչ թե ընկերների և ազգականների կարոտ։ Համենայն դեպս, հույս ունեմ, որ նա այդ զոհաբերությունը կանի։

Սիրելի եղբայր, շուտափույթ տեսակցության ապաստով, իմ նախորդ նամակներում չասացի քեզ, որ դու չես պատասխանել իմ հարցին, թե ուրից ստացե՞լ ես արդյոք այն փողը, որի մասին գրել էիր, թե՞ ոչ։ Պարզ է, որ դրա պատասխանը կարճ է՝ այո կամ ոչ. իսկ դու գլուխդ ազատել ես ընդհանուր դատողություններով, կարծես խուսափելով ուղիղ պատասխանից։ Սատանան գիտե ինչու՝ մի տեսակ բթացել եմ. ուշ եմ հասկանում մութ և խճճված պատասխանները։ Հուսով եմ, որ այս անգամ կբավարարես իմ ցանկությունը։

Ստացե՞լ է արդյոք Հայրապետյանը նամակս, որ գրել էի Գ. Մ. Ալաջալյանի վերաբերյալ, և ի՞նչ տպավորություն թողեց այն։ Եթե գիտես՝ հաղորդիր ինձ։ Հուսով եմ, որ դու անհնազոց հաճախ ես գրում և հետևաբար, իմ և քո առողջության մասին մեզոնք գիտեն. դա անհրաժեշտ է նրանց հանգստության համար։

Ննդրիր Անանիային, որ քո նամակում որոշ նորություններ գրի (քանի որ դու ուսանքեն չես գրում) Մոսկվայի մեզ ծանոթ միջավայրից. ճիշտ է, նա մեծ պաշար ունի որպես ազբատհորի խմբագիր (թեև նախկին)։ Մանավանդ որ, ահա 8 ամիս է, ինչ ես թողել եմ Մոսկվան։

Ի դեպ՝ կատրը, որ ես թողել էի Մոսկվայում և որն այժմ գտնվում է Կամենեշչիկովի մոտ, նորոգման կարիք ունի։ Հո չպետք է Մոսկվայում թողնենք, իսկ այդ տեսքով տուն ուղարկել չի կարելի, կամ հարկ եղած դեպքում հնարավոր չէ դրանով ճանապարհ գնալ։ Անիվների օղակները թուլացել են, պետք է ամրացնել, և թեթև ուրիշ վնասվածքներ էլ կան։ Այս նամակն ստանալուդ պես Կամենեշչիկովին գրի, որպեսզի նա հրա-

վիրի մի լավ, բարեխիղճ վարպետ [կառնիագործ] և կառքը մանրամասն քննության ենթարկի, և ապա, որպեսզի նա հարկ եղածը հիմնավորապես ուղղել տա, և ոչ մի հնարք այնպես, իմիջիայլոց։ Այնուհետև կառքը պետք է ներկել։ Ամենալավը թող իմ հաշվին գրի, ես շնորհակալությամբ կվճարեմ՝ առաջին հնարավորության դեպքում։ Նստատեղի և կառապանի տեղի տակի արկղները պահասում են, բայց պատրաստելու պետք չկա. ինչպես քեզ հայտնի է, առաջինը տանը մնաց, իսկ երկրորդը նկատելիորեն վատացավ։ Ես եղբորս եմ, թող Անանիան այս մասին հանգամանորեն գրի Կամենչիկովին, որպեսզի վերջինս հիմնովին վերանորոգի կառքը և տա նրան նախկին տեսքն ու ամրությունը։ Իմ առողջությունը վատ չէ. այսօր շնայած արև է, բայց որովհետև սառնամանիք էլ է, դուրս չեմ գալիս. տեսնենք վաղն ինչպես կլինի։

Ողջույնս հազորդիր նորին գերազանցության Ս. Գ. Սուլթան-Շահին, Անանիային, Հովհաննես եղբորս և երկանս բոլոր բարեկամներիս և ծանոթներիս։

Հովհաննեսը, հավանաբար, ինձ համար պատրաստում է նրաժշտական մի սյուրպրիզ, երբ ես ի վիճակի կլինեմ նրան ասելու. «Ահա՛ և ես եկա։ Թերևս կգա և այդ ժամանակը, որովհետև Դոն-Ջեզար դե Բազանի հետ կրկնում եմ՝ «Աշխարհում ամեն ինչ շատ ունի, ամեն ինչ վախճան ունի», և այլն։ Առայժմ անկաշկանդ կողքի ընկած, անդորրության մեջ, մնում, փորը և ընդհանրապես ամեն տեսակ հատարակության (свет) հետս, կարդում եմ։ Այնուհետև՝ ցտեսության, մինչև հաճելի տեսությունը ձեզ հետ։

Գրկում եմ քեզ։

Քո Միշել

Հ. Գ. Ինչ նորություններ կան Մոսկվայի թատերական աշխարհում։ Հարցնում եմ ձանձրույթից, իսկ պատասխանը հաճույք կպատճառի ինձ։

16

ՊԱՋԱՐՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

1863 թ., ապրիլի 8, [Մանկո] Պետերբուրգ

Իմ սիրելի եղբայր,

Երեկ չէ մյուս օրն ստացել եմ գրքերն ու խմորեղենը, իսկ երեկ ստացա ամսիս 4-ին և 6-ին գրած նամակներդ։ Ցավում եմ, որ տեսակցությունը չհաջողվեց, այնուամենայնիվ քեզ շատով տեսնելու հույսս չեմ կորցնում, որովհետև տեսակցության համար նշանակված ժամանակը շատ հեռու չէ։ Շնորհակալություն նորին գերազանցությանը գրքերի և ողջույնի համար. խնդրեմ հազորդես նրան իմ անկեղծ հարգանքը։

Հավանորեն մոտ օրերս Անանիային նամակ կգրեմ, ապա չմոռանամ նրան հաղորդել իմ սրտանց շնորհակալությունը մեր բարեկամների և ծանոթների մասին նրա ուշած շատ հետաքրքրական տեղեկությունների համար։

Ներքում եմ, Քրիստոսի տոնի առթիվ, իմ անխախտ հարգանքը և շնորհավորանքը (նրան կարելի է այսպես արտահայտվել) հաղորդես ամենայարգի Մարիա Նիկոլաևնա Պանովային։ Ես շատ հաճախ եմ մտածում նրա նկարի վիճակի մասին, մանավանդ այն ժամանակվանից, երբ խմացա մեր ընդհանուր բարեկամ, սիրելի Ջեորջոր Մաքախմուդի մասին։

Այսպիսով, այժմ նա նույնպես մենակ է ապաստության մեջ, ինչպես ես մենակ եմ կալանքի տակ։ Շատ հավանական է, որ նա այժմ հաճախ է կրկնում Ռևպետիլովի խոսքերը. «բոլորը բաժանվեցին, մենք կորած, մյուսը բանտարկված»... բայց պետք է հուսալ, որ մոտյալ օրը հավետ այդպես չի մնա, ամպերը կանցնեն, գարնանանային հովը կփչի և արևը կծագի՝ լուսավորելու և ջերմացնելու մոտյալ և սառն դեմքերը՝ հոգնած երկար ժամանակ տանջանքի չթի տակ համբերելուց։ Մենք ցավ է սիրելի Ջեորջիչի մահը, որին արդեն վերադարձ չկա։ Ա՜խ, Ռուդնև, խաղաղություն նրա աճյունին։

Շնորհակալություն [Մարիա Նիկոլաևնային] ինձ հիշելու և իր անկեղծ զգացմունքների համար. սևդմում եմ նրա ձեռքը և ցանկանում եմ, որ լինի առույգ, ուրախ և երջանիկ։ Ահա այն ամենը, ինչ կցանկանայի հաղորդել նրան, և ավելի... առայժմ ոչինչ։ Հույս ունեմ, որ դու ամեն ինչ ճշտորեն կհաղորդես, որով ինձ շատ ու շատ պարտավորեցրած կլինենաս։

Ես չգիտեմ, թե պատասխ Բարտոլդը Թուրքիայի հայ բողոքականների մասին ինչ է ասացրել, բայց զգում եմ, որ դա պետք է լինի մի աշառու ներբող՝ մանավանդ իր եղբայրակիցների՝ ամերիկական արկածախնդիրների օգտին։ Այդ խնդրի մասին ինչ էլ որ ասացրեն միսիոներները՝ անիրավացի է ու սուտ, այդ հարցում նրանց կարելի է հավատալ այնքան, որքան կարելի է հավատալ եզիպտացիներին, երբ նրանք շարադրում են 16-րդ և հետագա դարերի պատմությունը։ Ի հարկե, ով անգում հիմնավորապես չի ուսումնասիրել, թե ո՛վքեր են հայ բողոքականները և որ գլխավորն է, թե ի՛նչ տեսակ մարդիկ են այդ պարոնայք միսիոներները, նա անպայման կխաբվի, բայց ինձ չեն մոլորեցնի ո՛չ արևմ Բարտոլդ, ո՛չ ինքը միսիան, որն աշխատում է նույն սկզբունքներով, ինչ սկզբունքներով պատվարժան Ջրանսուա Կասվինն աշխատում էր Ժնևի կատեդրալում և որոնցով աշխատում էին հետագայի եզիպտա-առաքյալները «երկնքի որդու» մայրաքաղաքում։ Ափսոս, որ այսպես չի կարելի ձեռք բերել ամերիկական ժուռնալ New-York Herald-ը, որտեղ շարք ու փշուր էին արել այդ կնճռ առաքյալներին։ 1861—62 թվականին Times-ում նույնպես կարելի է ցույց տալ մի շարք հոդվածներ, որոնց մեջ իրար հետևից երևացին շատ հարգալիր և սուր ըն-

դոքներ այդ միսիոներների դեմ: Ախր նրանք մեծ աշխատասիրած էին սատանում՝ Թուրքիայի մահմեդականներին ավետարանը բարդելու պատրաստակով: Պարոնայք միսիոներներն իրենց միսիայի առաջ ամբողջ հայ ժողովուրդը ներկայացրել են որպես մահմեդականներ և կանխիկ դրամով կամ անգլիական դեսպանության հովանավորությամբ գնված դավանափոխների շնչին թիվը հասցրել էին տասնյակ հազարների: Սուտը ի վերջո բացվեց: Դուալտին կանչեցին Ամերիկա, որտեղ նա անցյալ տարի մեռավ: Գնացքի ընդհարումը ուղղակի ad patres* ուղարկեց նրան՝ բոլորովին ազատելով պատասխանատվությունից և պատասխանատվություններից:

Այդ խարեբաներից մեկն ինձ հանդիպեց շոգենավի վրա՝ Զմյուռնիայի և Կոստանդնուպոլսի միջև և իրեն այնպես շնչին և զզվելի էր պահում, որ սկսեց քարոզել 18-տարեկան մի պատանու (հայ): Խեղճ պատանին միսիոների հարցերի տարափի տակ շփոթված, մեր ներկայությամբ նրա լկտի ծաղր ու ծանակից ամոթահար եղած և այլն, համարյա արտասվելով, այդ անզգամից պաշտպանվելու համար դիմեց ինձ: Ես դուրս եկա տախտակամածը, իսկ միսիոները, բոլորովին չկասկածելով, թե իր կողքին մահացու թույն է գտնվում դավանափոխության դեմ՝ թուքերեն լեզվով հանդիսատ շարունակեց իր գործը: Սկզբում ես նրան մի փոքր սատանցի, իսկ հետո, բան երևույթին, նա այլևս ավետարանով զբաղվելու գլուխ չուներ, քանի որ մինչև Կոստանդնուպոլիս հասնելը նավամատույցներից դուրս չեկավ:

Ամբողջ խնդիրը, կարճ ասելով, ահա թե ի՛նչ է: Հայերը Թուրքիայում բոլորովին անպաշտպան են, անգլիական և ֆրանսիական կառավարություններն այդ հանգամանքը գործադրում են իրենց օգտին: Փաշաների բռնություններից նրանք իրենց պաշտպանության տակ են վերցնում այն քրիստոնյաներին, որոնք բողոքական կամ կաթոլիկ են դառնում: Ահա՛ այն միակ թալիսմանը, որով պայմանավորված են այդ դավանանքների հաջողությունները Թուրքիայում՝ քառասնական թվականներին: Այժմ նրանք ոչ մի հաջողություն չունեն: Ավելին, շատերը նա են դառել մեր եկեղեցու ծոցը: Յուրաքանչյուր ոք, ով այդ խնդիրը դիտի այն տեսանկյունից, բնականաբար կհանգի հետևյալ հարցին. իսկ ի՞նչպես է հանդուրժում թուրքական կառավարությունը, երբ Անգլիայի և Ֆրանսիայի միջամտությունը շատ սուրբ է: Այդ հարցը շատ պատասխաններ ունի, բայց դրանք կարճ են:

Առաջին.— Քառասնական թվականներին, հայ-կաթոլիկների սրտմտության հալածանքներից հետո Կոստանդնուպոլսում, սպանությունների և խմբական սպանություններից հետո, գնդապետ բժիշկ Լուի Ֆելիքսը Դաանը խորհուրդ տվեց, որ նա միանգամայն անհոհեմաբար է կաթոլիկ հայերին հալածում, որ Դաան շահը ո՛չ թե կաթոլիկ հայերին հալածելու, այլ

* (Լատ.) Ա՛ռ հարքս, նախնիքների մոտ գնալ—մեռնել:

կաթոլիկության և նրին հնարավոր է՝ որևէ այլ կրոն խրախուսելու մեջ է՝ հայ մասսան իրար առաջ դավանաբանական մի քանի պարտիանների բաժանելու համար։ Ի հարկե, Ռենից խնամքով թաքցրին մեզ այս երևոյթ, որտեղ խորամանկ ձևերով գրված էր, թե կաթոլիկության համեմատաբար ամում է նաև Ֆրանսիայի բարոյական ազդեցությունը։ Դուք հասկացել էր միայն [մեզ] առաջին երևոյթ, հենց այն պատճառով, որ դրանից ոչ շատ առաջ «Le principe» թարգմանված էր Բուրքերենն։

Բացի այդ, ժամանակ առ ժամանակ Դուանը կրկնում էին, որ հայերը, որոնք դավանում են իրենց հին կրոնը, Դևան համար վտանգավոր են, որովհետև նրանց նկատմամբ քիչ բանով է տարբերվում հունական նկատմունքը։

Պետք է ավելացնել նաև, որ այդ ամբողջ պրոպագանդը մղվում էր հանուն կրոնի, իսկ Դուան իրավունք չունի քրիստոնյաների կրոնական գործերին միջամտելու։ Այդ պատճառով նա համբերում էր, իսկ այժմ առավել ևս կհամբերի, քանի որ իր նամակն էլ նա առանց արևմտյան դեսպանների թույլտվության չի կատարում։ Է՛հ, բավական է այս մասին, առանց այն էլ դրան շատ տեղ հատկացրի։

Երևի Անանիան մոռացել է հայր Մովսեսին հաղորդել իմ շնորհավորանքը՝ նրա հարևանի դրական ժողովածուն ընդհատվելու առթիվ[16]։ Լավ է, որ նրանք դադարեցրել են, թե չէ, իրավ, հայր Մովսեսի բանը վատ կլիներ։ Հա՛, հա՛, հա՛։

Իսկապես, ինչո՞ւ Տիգրանյանին մերժեցին։ Անանիան չգիտի՞ արդյոք։

Երկաթե բոլոր բարեկամներիս հայտնիր իմ հարգանքը, իսկ Մարիա Աֆանասևնային շնորհակալությունս՝ ուղարկածի համար։ Փառք աստծո, նա առողջ եմ և բավական լավ պարտապուռ եմ. հուսով եմ, որ տգնությունս խլուր չի անցնի։ Ասենք, ոչ որ չի տեսնի աշխատանքս, նրին ևս նրանից գոհ չլինեմ։ Այնուհետև՝ ցտեսություն, համբուրում եմ քեզ, Հովհաննեսին և Սաշային։

Հավետ քո Մխ[իթար]

Հավելում. Մի կողք թուղթ ևս գտնելով, գրում եմ այն բանների մասին, ինչի մասին որ մոռացել էի։ Ո՞ւր է այժմ Սարգս Դավիդովիչը։ Երբ ես Թուլուսաստան եկա, նա Եզիպտոսում էր։ Ինձ հանձնարարված էր Մելքոն Գասպարիչի միջոցով նրան հանձնել 250 ռուբլի արծաթով, և նա ճշտությամբ կատարեցի այդ և չեմ կասկածում, որ նա փողն առացել է, և հարցնում եմ ոչ թե դրա համար, այլ միայն ցանկանում եմ իմանալ նրա առողջության մասին և թե՝ որտեղ է գտնվում այժմ։ Անանիան նրա մասին պետք է որ իմանա. նա մասկվացի է, բայց այդ եղել է նիժնիգորոդի առևտրաճառում, որտեղ մշտապես շամախեցիներ շատ են լինում։

Չկա՞ն արդյոք մեր լեզվով գրական նորություններ, բացի պարբերականների համաճարակից։ Ես հավատացած եմ, որ այժմ որևէ լավ պարբերաթիվ, իսկ ամենից ավելի՝ քաղաքական և գրական օրաթերթ մեծ հաջողություն կունենար՝ շնայած մինչ այժմ գոյություն ունեցած բոլոր խմբագրությունների խիստ հուսահատական վիճակին։ Պետք է ճշմարիտն ասել, որ խմբագրությունները քիչ չեն մեղավոր՝ իրենց նկատմամբ ժողովրդի անտարբերության համար։

Այժմ մտքումս մի ընդարձակ ծրագիր ունեմ, և որն արդեն, որքան հնարավոր է մշակել եմ (իհարկե, մասին) նույնիսկ ամենափոքր մանրամասնություններով՝ գրել «Մեր լեզվի արմատական բարեփոխության մի փորձ», շարադրել հին քայքայման և նորի կազմակերպման ընթացքը, և քան հնարավորության, նոր լեզվի երկու կարևորագույն ճյուղերը հաշտեցնել, միանգամայն հրաժարվելով ժողովրդի այժմ կենդանի լեզվում անգործածելի բոլոր ձևերից, բացառությամբ, իհարկե, օտար բառերից՝ նրա ժողովուրդը գործածում է առանց կարիքի և առանց խըրթության. շարադրել նոր լեզվի համեմատական քերականությունը՝ քան ինձ հայտնի ավյալների, զանազան տարեգրություններ և այն վայրերի հայերի լեզվի, որոնց բարբառները տեղական նրանգ ունեն։ Դրանից հետո գրել (հենց այստեղ) քերականության փորձ, որպես ձեռնարկ այն բոլոր գպրոցների համար, որտեղ լսվում է հայերեն խոսքը։ Ես գիտեմ, որ Թուրքիայի միլիոնավոր հայերը ծարավի են դրան։ Այդ առաջարկությամբ ինձ հաճախ էին դիմում, բայց ես այն ժամանակ հնար չունեի դրանով զբաղվելու, այժմ ես պատրաստ եմ նման, ինկուզ հանդուգն, աշխատանքի, սակայն ոչինչ, ես կսկսեմ, ծող ուրիշներն ավարտեն։ Յուրաքանչյուր գործի սկիզբն անկատար է լինում։ Իմ ենթադրությամբ, այդ աշխատանքը ծավալով կլինի մեկտես 15—20 տպագրական մեծ թերթ։ Եվ մինչև քաղաքացիական նոր լեզուն չդասավանդվի գպրոցներում, մինչև այդ լեզվի պետական ճյուղերը չընդունեն մի հայտարարի, մինչ այդ ժամանակ գրական ամեն մի ձեռնարկություն կմղվի իսկական քաոսի ճահճում և ոչ մի արդյունքի չենք հասնի։ Չգիտեմ, կհաջողվի՞ արդյոք ինձ շուտով այդ ծրագիրն իրականացնելու հնարավորություն առանալ, այնուամենայնիվ, վազ թե ուշ, ես կկատարեմ այն՝ եթե միայն չմեռնեմ։

Այսպիսով, առաջին գրաղմունքը, որ ինձ սպասում է ազատվելուցս հետո՝ հիշյալ աշխատանքն է։ Եվ մինչև որ չավարտեմ այդ խնդիրը՝ այնպես, ինչպես ես եմ ցանկանում ավարտել՝ ոչ մի տող չեմ գրի, բացի, իհարկե, քննադատություններից և ինձ վրա եղած հարձակումների պատասխաններից, որոնց ես դեռ չեմ պատասխանել։ Ես պարտքի տակ եմ։

Մ. Նալբանդյան

17

ՂԱԶԱՐՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

1863, ապրիլի 12, Մ[անկա] Պետերբուրգ

Իմ անգին եղբայր.

*Երեկ երեկոյան, ծխախոտի և գրքույկի հետ միասին ստացա հենց 11-ի իվակիր նամակդ։ Միայն՝ քեզ պիտի ասեմ, որ դու բոլորովին այն չես ուղարկել, ինչ որ ես խնդրել էի։ Այս գրքույկը պարունակում է ոմն Մատաթյանի անպետք ոտանավորները, որը գրում է «Մայաթ» կնճռոտ նոտով։ Այս հանգամանքն էլ հենց, երևի, քեզ մոլորեցրել է, որովհետև ես խնդրել էի Մայաթ-Նովան, որ բոլորովին այլ է։ Քո ուղարկած ոտանավորները գրված են ո՛չ թե որևէ գավառական բարբառով, այս բառի իսկական իմաստով, այլ որևէ բնույթից զուրկ աղավաղված լեզվով։ Մինչդեռ «Մայաթ-Նովա» երգարանը գրված է բացառապես և իսկական իմաստով այն բարբառով, որով խոսում են Վրաստանի հայերը։ Ինձ անհրաժեշտ են բնօրոշ բարբառներ և ոչ թե լեզուների խառնուրդ։ Սայաթ-Նովան կարգին գիրք է, տպագրված Մոսկվայում 1853 կամ 1854 թվին[17], ուր զետեղված է նաև Գ. Ախվերդյանի՝ այդ բարբառի վերլուծությունը։ Հույս ունեմ, որ դու այժմ հասկացար, թե ի՛նչ եմ խնդրել ես։ Ջափուրանց ինձ կուրախացներ, եթե դու ինձ համար ձեռք բերեիր «Սոս և Վարդիթերը» և «Վերք Հայաստանին». այստեղ, երևի, ծանոթների մոտ կա. աղաչում եմ՝ խնդրեցեք և ուղարկեցեք։ Բացի այդ, ինձ էլի հարկավոր են մի քանի գրքեր և բառարաններ, բայց այդ մասին ես այժմ չեմ գրում, որովհետև, թերևս քեզ հաջողվի երաշխավորությամբ գուցե բերել ինձ բանտից. այն ժամանակ կարելի է անհամեմատ ավելի լավ աշխատել, քան հիմա, երբ չեմ լսում հայերեն ո՛չ մի բառ, ո՛չ մի արտահայտություն, և լեզվի մասին զառում եմ հիշողությանս և 20-ամյա փորձիս շնորհիվ, բայց այդ բոլորը քիչ են։

Ընդհանրապես մեզանում դեռ շատ սակավ են իմ ներկա ձեռնարկության համար անհրաժեշտ նյութերը, բայց իմ միակ հույսն այն բանակոխվին է, որ առաջ կբերի իմ այդ աշխատությունը. տարբեր վայրերից գրված քնդդիմախոսություններում երեսուն կտոր զանազան ձևեր և ես հայհոյանքը մի կողմ թողնելով և նրանց չպատասխանելով, կօգտվեմ տրված դասերից։ Ի՛նչ խոսք որ, ավելի հաճելի կլիներ, եթե մեկ ուրիշը հանձն առներ ձեռնարկելու մի այդպիսի աշխատանք՝ արդեն իր ձեռքն ունենալով մի որևէ ֆոն՝ իմ աշխատանքը։ Իսկ քանի դեռ մեզանում չկա բազմաթյունական լեզվի բնական մոտավոր քերականություն, Շշգրթսի մասին մտածելն անգամ դեռևս անկարելի է, քանի դեռ այդ քերականությունը ուսուցիչների և աշակերտների ձեռքին չի լինի, նոր լեզվի գրականությունը ոչ մի առաջադիմություն չի ունենա։ Կարելի է, թերևս, սահման էլ դրել, բայց նա խորթ կլինի ժողովրդին, որը նրան երբեք և ոչ մի

գնով չի մարսի, հետևաբար, նա ժողովրդի բարոյական կազմի մեջ չի էլ մտնի, որովհետև այդ սահմանագրության տարրերը կենդանի լեզվից չեն վերցված, այլ՝ հին, մեռածի դարավոր ավերակներից, կպցրած են ապրած-անցած սիստեմի աղդեցությամբ, որտեղ, թեկուզ երբեմն, լքվում էլ են նախադասություններ կենդանի լեզվից, բայց դրանք ընդհանրապես կորչում են խիստ սիստեմատիզացիայի հետեզում։ Ակներև է, որ այս խոսքերով ես ինձ էլ եմ մեղադրում և ոչ թե միայն ուրիշներին, և այս դիտակցությունը ես դասում եմ ամեն սխալից բարձր և ամեն հանդիմանությունից դուրս։ Քաղաքացիական լեզուն մենք առաջինը ընդհանուր գործածության մեջ մտցրինք գրականության մեջ։ Ահա արդեն տասը տարի է անցել այն օրից, երբ այդ լեզվով լույս տեսավ առաջին գիրքը և մենք միշտ մտմտուքում արտահայտել ենք մեր սխալներն ուղղելու պատրաստակամությունը, եթե բարեխղճորեն մեզ ցույց կտան այդ սխալները։ Բայց չնայած այդ բոլորին, ոչ ոք չէր խոչընդոտում նախաձեռնել լուրջ աշխատանք և մեր կոչերին պատասխանում էին միայն հայհոյանքներով և համատարած կշտամբանքներով քաղաքացիական լեզվի հասցեին, փոխանակ ցույց տալու մեր մասնակի մոլորությունները։

Վերջապես, տասնամյա փորձը այս ասպարեզում, շփումը ժողովրդի հետ՝ բոլորովին տարբեր կողմերում, մեզ բերին վերոհիշյալ փրկարար դիտակցությունը, և ինչ որ առավել շոյում է մեր ինքնասիրությունը՝ առանց գպիրների, հնության երկրպագուների, ինչպես և գավառական աղճատումների ամենափոքր օգնությամբ։

Մեզանից ոչ ոք իրեն հաշիվ չի տվել, թե նոր լեզվում բայը քանի եղանակ և քանի ժամանակ ունի։ Թեկուզ այժմ այդ ծիծաղելի է թվում, այնուամենայնիվ փաստ է։ Ճիշտ է, հետագործվելով լեզվի ոգուն, դրանցից մի քանիսը մենք անգիտակցաբար գործ էինք ածում, բայց և մի քանիսն էլ, ի վնաս մեր նոր խոսքի, մնում էին անձնամխիթարի. թեկուզ պետք է խոստովանել, հաճախ անհրաժեշտ էր լինում դրանց գործածել, բայց մենք, դեռևս տատանվելով և ոչ բոլորովին հաստատ հողի վրա կանգնած լինելով, ամեն կերպ խուսափում էինք՝ այդպիսի ուշադրությամբ, ինչպես փորձառու նավավարը խուսափում է ծանծաղուտներից։ Մեր նկարագրած այդ բոլոր կոր գծերը, որ կեռ-նպատակը տասնով ամենակարճ ուղիղ հանապարհից շեղվում են, հանդիսանում են հե՛նց այն խութերը, որոնցից խուսափում է ժողովուրդը և որոնք անանցանելի պատի նման գրականությունը բաժանում են ժողովրդից։

Նոր լեզվի մի քանի ձևերը նույնպես արհամարհվում էին այն պատճառաբանությամբ, թե դրանք չկան հին լեզվի մեջ, որովհետև եղանակներից և ժամանակներից գործածվում էին միայն նրանք, որոնք հին լեզվի համապատասխան եղանակների և ժամանակների բառացի թարգմանությունն էին հանդիսանում, կարծես 19-րդ դարի հայը առորագրությամբ պարտավորվել է հին հայերին՝ ապագայում չարտահայտվել այլ կերպ, քան խոսել են նրանից 2000 տարի առաջ։ Ահա՛ ազազակող և՝ նոր

չեղուն գործածության մեջ մտցնելու մեր ակզբունքին ուղղակիորեն հակասող սխալը։ Չէ՛ որ Տուրինյան պալատի օրինակելի բանավիճողներից ոչ մեկը և կամ Ֆլորենցիայի հռետորներից ոչ ոք չի ճնշվում Սեննեկայի կամ Ցիցերոնի հեղինակությունից. նրա համար միևնույն է, թե նրանք ինչպես կխոսեին իրենց ժամանակ, որովհետև նա լիովին գիտակցում է իր իրավունքը՝ ներկայումս խոսել ի՛ր իմացածի պես։ Լեզուն ժամանակի արդյունք է և մշակվում է ժողովրդի ըմբռնումների և քաղաքակրթության համեմատ։ Լավ է թե վատ, դա այլ հարց է, բայց փաստն այն է, որ նա, որպես ժամանակի լեզու, այնպիսի անձեռնմխելի իրավունք ունի, ինչպես նրան նախորդող հին լեզուն։ Բացի այդ՝ ինչո՞ւ նա լավ է, իսկ սա՝ ոչ։ Ո՞ւր է այն բացարձակ չափանիշը, որ կարող է պատասխանել այս հարցին։ Բացարձակ ոչինչ չկա, այլ ամեն ինչ գնահատվում է հարաբերականորեն՝ որոշ տեսակետով։ Իսկ ի՞նչ բան է տեսակետը։ Հեղինակությո՞ւնը։ Այդ դեպքում հուշակավոր տեսակետն ազատ չէ, այլ սորուկ։ Տեսակետը ոչ այլ ինչ է, եթե ոչ կենդանի մարդու հատկանիշը, հետևապես, ժամանակի և քաղաքակրթության արդասիք է։ Բայց եթե այդ՝ ժամանակը ոչնչով չնախատեսելով նախորդների ընդունած նորման, նրան բոլորովին թողնի և ստեղծի մեկ ուրիշը՝ նոր հիմունքներով, միթե դա (ճիշտ է՝ լռելյայն), բայց փաստացի բացառումը չէ՞ ոչ միայն գեղեցկության, այլև պիտանիության, այն բանի, որ մի ժամանակ պաշտվել և իդեալ է եղել։

Ժամանակակիցից մարդուն ի՞նչ օգուտ (սոցիալական իմաստով) միքել Անջելոյի մեռած ու սառն արձաններին գեղեցկությունից ու շքեղությունից, երբ նրան պակասում է իրականն և կենդանի կինը՝ թող որ ոչ այնպես նրբագեղ, բայց այնուամենայնիվ կենդանի, և, հետևապես իր սոցիալական և ֆիզիոլոգիական պահանջներին համապատասխան։ Եթե չկա ավելի գեղեցիկը, մարդ արտարածը չի հրաժարվի նույնիսկ ամենասլանդակ կնոջից միայն այն պատճառաբանությամբ, թե Վատիկանի արձաններըը շքեղությամբ և գեղեցկությամբ շատ ու շատ գերազանցում են նրան։ Ճիշտ չէ՞, որ ապուշի անուն ու սիրտոս կվաստակեր մեկը, եթե անհրաժեշտ պայմաններից բնևադրված՝ ամուսնությունից հրաժարվեր միայն նրա համար, որ իր հարսնացուն Բելվեդերյան Վեներային նման չէ։ Ինչ ուզում եք ասեք՝ դա ծայրահեղ հիմարություն էր։ Ե՛հ, ես ինքս իմ թույլ լարին դիպա և շատախոսեցի, մոռանալով, որ քեզ նամակ եմ գրում, այլ ոչ դիսերտացիա։

Շնորհակալ եմ Մարիա Աֆանասևնայից իր նեղության համար, և խնդրում եմ հաղորդել նրան, ինչպես և երկու տեղ բարեկամներիս՝ իմ ողջույնը։ Տանից հաղորդած լուրը, թե մեռոնք բոլորն առողջ են՝ ինձ ուրախացրեց. ես այն ժամանակ մոռացա հարցնել հեռագրի մասին՝ ուղարկեցի՞ր և մեռոնք առացի՞լ են, արդյոք։ Բայց այդ մասին կխոսենք երեքշաբթի։ Ենդրում եմ աշխատես քեզ հետ բերել «Սոս և Վարդիթերն» ու «Վերք Հայաստանին»։ Մինչև երեքշաբթի կարելի է գտնել ընկերնե-

բի մոտ։ Չէ՛ որ Հանրային գրադարանից գրքեր տուն չի տրվում, հետևապես այնտեղից չի կարելի, թեկուզ դու գրում ես, որ այնտեղ գուցե կգտնես։ Անանիային նամակ գրեն և ասա, որ չծուլանա գրել։ Ես դեռ հույս ունեմ նրա մասին խարրիկ տառնալ, իհարկե բեզանից, մինչև երեքշաբթի, եթե ինձ մոտ օրերս տառնաս։ Ողջունի՛ր նորին գերազանցության Ս. Գ. Սուլթան-Շահին։ Եղբոր՝ Հովհաննեսին գրկում եմ։ Երևի անգնջյուրի վերաբերյալ դրույթներն արդեն ընթացքի մեջ են. այս մասին կասես տեսակցության ժամանակ։

Համբուրում եմ քեզ. ցտեսություն,

Քո Միշել

18

ՊԱՋԱՐՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

1863, ապրիլի 14, Մ[անկա] Պետերբուրգ

Իմ թանկագին եղբայր,

Այս րոպեին տասցա 13-ի թվակիր նամակդ. 12 շիշ գինու հետ, որի մասին նամակումդ ոչինչ չի ասվում։ Դու ինձ խոստացար պաքսիմատ (սուխարի) ինչո՞ւ դրանք գինու վերածվեցին։ Ես բեզանից գինի չեմ խնդրել և պարտանում եմ, որ դու այդպիսի աննեբելի վրիպումներ ես գործում։ Ինչի՞ համար են այդ բոլորը։ Ավելին ասել ex post facto *նույնպես ոչ մի արդյունքի չի հասցնի, և դրա համար էլ անցնում եմ սիրելի Անանիայից ստացած տեղեկություններին։*

Ինձ համար շատ հետաքրքրական կլինի մի օր կարդալ «Ռուսկիում» մատնանշված հոդվածները, իսկ առայժմ հանգուցյալ Աիվերդյանի կարծիքի մասին, թե «Տարոնի գավառում ավելի շատ, քան մի այլ տեղ, պահպանվել են լեզվի լավագույն ձևերը»։

Ես հարգում եմ հանգուցյալ հայրենակցիս գիտելիքները ու տաղանդը, այնուամենայնիվ, գնում եմ այլ ուղղությամբ։

Տարոնի բարբառը նա հանձնարարում է բացարձակորեն, իսկ մենք ընդունում ենք միայն հարաբերականորեն, որովհետև նրա առաջ բացարձակորեն առկայանալը մեզ ուղղակի կհասցնի անվերջ հակասությունների։ Չէ՛ որ ժողովուրդը թողել է կամ այսպես ասած՝ ապրել, անց է կացրել (пережил) հին լեզվով, հին ձևով իր մտքերը շարադրելու շրջանը և սկսել է գործածել նոր, վայրի, չմշակված ձևը, ո՛չ թե նրա համար, որ առաջինը վատ է կամ այլանդակ է նորից, կամ ընդհակառակը՝ նորը լավ է և գեղեցիկ է հնից, այլ նրա՛ համար, որ հնացած-անցած ձևերն այլևս չէին համապատասխանում նրա մտքերի կառուցվածքին։ Միևնույն պատմական պատճառը, որ հարկադրել է ժողովրդին թողնել հին ձևը՝ հարկադրի նրան չնեղաբեկվել բացարձակորեն որևէ բարբառի ձևերին և

այնքան ավելի խուսափել նրանից՝ հօգուտ նոր պրոգրնսիվ լեզվի, որքան այդ բարբառի մեջ տեսնում ենք լիովին պահպանված հին լեզվի ձևերը։ Ժողովուրդը մշակված և բավական ճկուն հին լեզուն թողել է անհրաժեշտաբար, որովհետև հին ձևով այլևս չի հասկանում — ապա ի՞նչ տրամաբանությամբ մենք կարող ենք դիմել մի բարբառի, որտեղ այնպես առատ են հին ձևերը։ Նոր լեզուն բոլորովին կկորցնի իր իմաստը, եթե նա չպետք է դիտվի ինքնուրույնաբար։ Ես ինքս էլ առաջ, ավելի կամ պակաս չափով, պաշտպանում էի այն ուղղությունը, որ այժմ դրվատվում է «Կռունկում», բայց ես ճգնաժամ ապրեցի, և իմ աչքերը բացվեցին։ Ինձ համար այժմ կարևորություն չունի, թե ո՛ր բարբառով ավելի երբագեղ են խոսում, այսինքն՝ ավելի մոտ հին ձևերին. ես փընտրում եմ ուրիշ բան, թե որ բարբառում ավելի շատ են նոր լեզվի մշակված, կենդանի ձևերը։ Հին ձևերի համար, որոնք (եթե, ինչպես հավատացնում են) գործ են ածվում Տարոնի բարբառում, ես վերջինիս դիմելու հարկ չեմ զգում, որովհետև ես դրանց կարող եմ գտնել 5-րդ կամ հարյուրդ գարերի ամեն մի կլասիկ երկում, բայց եթե նրա (Տարոնի բարբառի) մեջ կան ժամանակի ընթացքում մշակված, մեր արդի պահանջներին համապատասխանող նոր ձևեր, ապա խնդրեմ տվեք։

Լեզուն որևէ ուսմունք, այսինքն՝ դոկտրինա, չէ. ամենագռեհիկ ուսմունքը կարելի է անցկացնել և նա, նայած իր որակին, որևէ տեղ, ավելի կամ պակաս հետևողներ կգտնի։ Բայց լեզուն ուսմունք չէ, այն չի կարելի քարոզել, եթե հավաքես ամբողջ ժողովուրդը և աշակերտական նրա տարաններին նստեցնես,— մի բան որ անհնար է,— դարձյալ ոչինչ անել չես կարող։ Դա շատ նուրբ խնդիր է։ Լեզուն տրակտատ չէ՝ չի շարադրվում։ Լեզուն օրենք չէ՝ չի հրամանագրվում։ Որևէ մարդ արտահայտության լավագույն ձևը եթե գտնենք որևէ գավառում, մենք այդ պետք է մտցնենք լեզվի մեջ, բայց ոչ պարտադրաբար կամ պաշտոնապես, այլ որպես մաքառանենգ տպրանք, գաղտնի, որպեսզի ընդդիմադրություն առաջ չբերենք։

Որևէ բարբառի հին ձևերը նոր լեզվի համար նույնքան են պետքական որքան դեղձենու կեղևը փշատերև ծառերի համար, ձևով տարատեսակները չեն միացվում, նշանակով տարատեսակները՝ իրար ձգում են, և ընդհակառակը՝ ձևով միատեսակները իրար ձգում են, այսինքն՝ համապրվում են, բայց նշանակով միատեսակները՝ իրար վանում են և չեն համապրվում։ Յուրաքանչյուր ժամանակ-գարաշրջան իր բնույթին ու իր դրոշմն ունի։ Նույն բնույթը և նույն դրոշմը, բնականաբար պետք է ունենա և նրա լեզուն։ Մեր հին լեզվում կա «ծնծ խմել» ձևը, իսկ նոր լեզվում ծնծը չի խմվում, այլ ուսվում է, այնինչ հին լեզվում ոչ մի տեղ չի կարելի գտնել նման ձև։

Գավառաբարբառները ընդհանուր լեզվին կարող են օգնել ինքնուրույնաբար մշակված առանձին բառերով և արտահայտություններով, բնդորում միայն այնպիսիներով, որպիսիք ուրիշ բարբառներում չկան,

կամ նրան մի ձևը դերադասվում է մյուսից։ Ընդհանուր պահանջների և ընդհանուր կարիքի փոխադարձ լրացումը նոր լեզվի ստեղծման համար կարող է միայն իրեն ծառայել, իսկ ամբողջությամբ վերցրած որևէ գավառաբարբառ, ինչքան էլ լավ լինի, օտար հողի մեջ չի կարող արմատներ արձակել, որովհետև նա արդյունք և սեփականությունն է որևէ ազգի գավառի։

Որևէ բարբառի յուրաքանչյուր փորձ՝ բոլոր մյուսների համար պարզել իր դրոշակը՝ «մեր՛ը պահա» մակագրությամբ, միշտ կմնա «ձայն բարբառոյ յանապատի»։ Ջանազան գավառների մարդիկ, նրա իրոք ցանկանում են նոր լեզուն բարձրացնել ժողովրդի բարոյական դրծոնի աստիճանին, պետք է զոհաբերեն իրենց գավառային ինքնասիրությունը։ Այլապես ոչինչ չի ստացվի։

Ընդհանուր լեզվի օգտին գավառական մի քանի վերջավորությունների և մասնիկների փոխադարձ ժխտումը, կամ, ընդհակառակը՝ այդ ազգերի փոխադարձ ընդունումը, կարող է հասցնել միայն ցանկալի արդյունքի։ Ինքնին հասկանալի է, որ այդ գործողությունը, այսինքն՝ մի քանիսի հնացնելը և ուրիշների պատվաստումը պետք է կատարվի շատ զգույշ և նպատակահարմար կերպով, որպեսզի գործողության արդյունքը դյուրամարս լինի. այսոնց ձևը և դեղնցկությունը երկրորդական են։ Ոչ մի կասկած չկա, որ ժողովուրդն իր վիճակի չի լինի ընդհանուր լեզվով խոսելու, և կենդանի խոսքը յուրաքանչյուր գավառի ժողովրդի բնականում իր քմահաճույքներն ունի (բայց ոչ իրավունքը)։ Բայց լեզվի ստեղծման առաջին խնդիրն այն է, որպեսզի նա հասնի դյուրըմբռնելի բարոյական դրծոնի աստիճանին, որպեսզի նա քիչ թե շատ բանիմաց գավառացուն մատչելի լինի և դրանով դիտության համար դյուրացնողների ուղի բանալ, առանց որի ամեն մի լուսավորություն և ամեն մի ազատագրում (эманципация) անիմաստ է։ Որպեսզի այն դարձնել ընդհանուր խոսակցական լեզու՝ ոչ միայն մնալանում, այլև ամենաուժեղ ժողովուրդներից, որից ոչ մեկում չկա ոչ մի հնարավորություն՝ ենթարծ համալսարաններին, ակադեմիաներին, ուսումնական զանազան հաստատություններին և ամսագրերի ամբողջ բանակին։ Ինձ այնքան անհրաժեշտ չէ տեսնել, որ ինձ հետ խոսող մարդը խոսեր ինձ նման. խնդիրը բացատրելս այն է, որ նա հասկանար ինձ։ Հասկանալն առաջին քայլն է, ինչ որ ներկա սերունդը կհասկանա, այդ աջցանով էլ չի կարելի պահել հաջորդ սերնդից։

Առաջարկված արմատները գործին բոլորովին չեն վնասելու։ Նյութերի նման հավաքածուները կարող են լույս ածել միայն անցյալի վրա, այնինչ ես ներկայի կարիքն եմ զգում։ Գտանելով ինձ ծանոթ պատմական ավյալներից, հիշյալ արմատում կարող են լինել միայն մի քանի հիշատակարաններ Ջուղայի կամ Պարսկաստանի գավառների կամ թե Աստրախանի հայկական խոսակցական լեզվի, որովհետև հայերը Ալեքսանդ Մեծից յոթ ժամանակներից առևտրական որոշ կապեր են ունեցել կատարելության հետ։ Բայց այդ բոլորը, գործյալ կրկնում

եմ, կարող են հետաքրքիր լինել միայն գիտության համար, հետաքրքրությունը բավարարելու համար, ինչևէ հայկական առևտրի պատմության համար: Մեր արխիվը՝ ապրող սերունդն է. եթե նա չի պահպանել կամ չի մշակել ավյալ մարքի համար որևէ ձև, ապա այստեղ ո՛չ մի արխիվ չի օգնի. սխալ է այն ուղղությունը (այստեղ ես հիշում եմ Դովրիտովին), որ իբր թե լեզուն, ինչ որ ազատանգի պես կարելի է փակել արկղում և հենց որ արկղը բացեն, նրան իսկույն կարող է անփականել յուրաքանչյուր ոք, ինչպես կանփականեր որևէ թանկարժեք իր: Դա ոչ այլ ինչ է, եթե ոչ հավատ դնալի կախարդական գավազանը:

Իմ ամբողջ շարադրածից պարզ է, թե ես ինչ ուղղություն եմ բռնել: Ոչ մի կերպ ես ինձ վրա պատասխանատվություն չեմ վերցնում հարցին այնպես պատասխանել կամ խնդիրն այնպես լուծել, որ կարելի լիներ ասել «Satis est»* կամ «ecce homo»**. Ես հեռու եմ այդպիսի մանր ինքնաբերությունից: Իմ ինքնասիրությունը կբավարարվի, եթե ես կարողանամ կատարել այն, ինչ որ իմիջայլի եմ և ինչ որ միայն կարող եմ: Ես միանգամայն գոհ կլինեմ, եթե գտնեմ գեթ ամենափոքր արձագանք ո՛չ թե հօգուտ իմ աշխատանքի՝ այս բառի նեղ մտքով, այլ հօգուտ իմ ուղղության. եթե ես կարողանամ համոզել այդ ուղղության անհրաժեշտության մեջ, այդ ինձ բավական է: Ես, որպես առանձին վերցրած միավոր, մանավանդ հարցերում կարող եմ և մեծ սխալներ գործել. բոլ նկատողներն ուղղեն: Ներկա միջոցներով այժմ հնարավոր չէ պահանջել, որ նկարի յուրաքանչյուր, առանձին վերցրած դեմքը նկարված լինի գերազանց կերպով. իմ նպատակն այն է՝ որպեսզի յուրաքանչյուր դեմք իր տեղում լինի և իր բնական գիրքով: Ինչ վերաբերում է նրանց երրագեղությանը կամ արտահայտությանը՝ դա ժամանակի գործն է, որովհետև «լեզուն արտկատար չէ՝ չի գլխում, որովհետև լեզուն օրենք չէ, չի հրամանագրվում», ինչպես արտահայտվել եմ վերևում:

Չնայած ես դեռ բոլորին չեմ հասել, բայց նախապես կարող եմ ասել, որ խոնարհումները պակասում են, իսկ եղանակներն ու ժամանակները ավելանում, մի բան, որ չկա հին լեզվի մեջ. ես այնպես, փորձի համար, խոնարհեցի մի բայ և ուրախությամբ տեսա, որ ժամանակները և եղանակները շատ ավելի ճշգրիտ և ուղիղ են, քան հին լեզվի մեջ: Բայց այս մասին բավական է:

Ես նյութեր եմ պատրաստում ֆիզիկո-ֆիլոլոգիական, պատմա-աշխարհագրական մի մեծ աշխատության ներածության համար, մի բան, որ դեռևս բոլորովին չի եղել: Դրանով ես պարտական եմ Բոլլին: Ես նրանից սովորեցի: Բայց այդ նյութերն ինձ մոտ դեռևս բաժան-բաժան են, որովհետև գրում եմ յուրաքանչյուր ինչի մասին առանձին: Այստեղ այդ նյութերն ընդհանրացնել չեմ կարող և հնարավոր էլ չէ՝ նախքան աշխատանքս ավարտելը և նախքան իմ ապաստվելը: Այդ ներածության

* (Լատ.) Բավական է:

** (Լատ.) Ահա մարդը:

հատվածներից մեկում կա մի շատ լուրջ, բայց և վերին աստիճանի ծիծաղաշարժ հատված, որտեղ պատմվում է, թե ինչպես վիեննացի մի հայ (կալիում քլորը դեռ մոռացված չէ, KCl) Փարիզում նրած ժամանակ խոսում է մի նորեկ հայի հետ՝ Փարիզի վայրերի անունները թարգմանելով հայերեն և նույնիսկ իր գերմաներեն «Donner Wetter»-ը, իսկ նորեկը, բնականորեն, ոչինչ չի հասկանում։ Ափսոս, որ ռուսերենում կոմիզմը կորչում է՝ նմուշի համար թեկուզ այստեղ մի քանի տող կբերեի։ Բայց բավական է։ Հույս ունեմ, որ արդեն ստացել եք 12-ի թվակիր նամակս։*

Ողջունում եմ ձեզ ու ձեր բոլոր բարեկամներիս, և սպասում խոստացած մեր անսակցությանը՝ երեքշաբթի։

Ընդմիշտ ձեր ՄԻՔԵԼ

Հ. Գ. Երեխաները Նազարյանցն այս ամառ կմտնի՞ արդյոք համալսարան։ Նա վաղուց է խոստացել ինձ իր լուսանկարը (փոքրագիր)։ Ողջույներ իրեն և հորը, և եթե նկարը տա՝ նամակիդ հետ ուղարկիր։

19

ՊԱՋԱՐՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

1863, մայիսի 1, Մ[անկա] Բեռներտորֆ

Թանկագին իմ եղբայր.

29-ին գրեցի քեզ մի նամակ, ընդորում դեռ մի նամակ էլ՝ ծնողներիս ուղարկելու համար, որ դու արդեն, հավանաբար, ստացել ես։ Նույն օրը քեզանից մի նամակ էլ ստացա մոլորված Անանիայի նամակի առթիվ, անթվակիր։ Փառք աստծո, որ նա առողջ է, թե չէ ես արդեն մոռալ մտածմունքներն էի քննել։ Եվ ինչպե՞ս չքննեի, երբ ամբողջ երեք շաբաթ է նրանից ձայն-ծպտուն չկար։ Գրիր, որ այսուհետև այդպիսի բան չանի, թե չէ վա՛յ նրան։

Շատ ուրախ եմ կենդանաբանական այգու բացման համար, մանավանդ, որ նրա հիմքում դրված է գործնական նպատակ, որը զարմանալիորեն գիտությունը մոտեցնում է հասարակությանը և ընդհակառակը։ Գործնական կենդանաբանությունը և գործնական բուսաբանությունն առաջիկայում մեծ ապագա ունեն։ Դյուզառնանասությունը և քաղաքառնասությունն առանց նրանց մնույալ են, կամ թե՝ առանց կոմնացույցի նավարկություն։ Թեկուզ նորագույն փիլիսոփայությունը, համենայն դեպս, ժխտում է քաղաքառնասությունը որպես գիտություն, բայց չնայած դրան, նա դեռ հարկավոր է։ Գիտությո՞ւն է արդյոք նա,— ինչպես այնպես են շատերը,— թե ոչ՝ ինչպես ասում են եվրոպական մի

---

* *(Գերմ.)* Որոտ և կայծակ, վրդովմունքի և զայրույթի բացականչություն։

բանի հրապարակախոսներ, դա բոլորովին այլ հարց է. ըստ էության, բանն այն է, որ գիտությունը նպաստի մարդու կենցաղը՝ իր տունն ու բուսը բարելավելուն, իսկ հետո արդեն հարց կառաջանա փոխանակման և ֆինանսական շրջանառության միջազգային իրավունքի մասին:

Մարդն իր կենցաղը չի կարող բարելավել, քանի դեռ բնությունն իրեն չի ենթարկել, այսինքն՝ քանի դեռ հասու չի լինի նրա գաղտնիքներին: Իսկ բնագիտությունն այդ հարցին տալիս է ուղղակի և գործնական պատասխան, նշանակում է՝ բնության ուսումնասիրությունը սոցիալական տեսակետից՝ մեծ նշանակություն ունի: Առաջ, ինչպես բոլոր գիտությունները, բնագիտությունն էլ շոր ֆորմալ էր՝ առանց կենսագործման, և դրա հետևանքով, նրանով քիչ էին զբաղվում, իսկ անտիկ աշխարհում նա սոսկ գիտություն էր համարվում, որովհետև փիլիսոփաները գիտնականի համար մատերիայով զբաղվելը համարում էին սոսկ և անվայելուչ բան, քանի որ բոլորն իրենց շրջապատությամբ կատարում էին վերացական աշխարհում: Գործնական կենդանաբանության և գործնական բուսաբանության գաղափարը, այսինքն՝ կենդանիների և բույսերի օգընտելացումն առաջին անգամ կիրառեց Փարիզում նոր վախճանված Նշանավոր Սեն Իլեր Ժոֆրուան: Եվրոպան դրանով նրան շատ է պարտական: Եվ ամեն անգամ, երբ ես որևէ բան եմ լսում վերոհիշյալ օգընտելացման մասին, ախորժում եմ, որովհետև նա, որ անհապաղ ընթանալով Ս. Ի. Ժոֆրուայի ուղիով — Կ. Ռուլյեն — օգընտելացման առաջին հիմքը դրեց, դրեթե առանց որևէ օգնության, աղքատիկ միջոցներով հրատարակելով «Вестник естественных наук»* և զբաղվելով կենդանիների, ապա նաև բույսերի օգընտելացմամբ (նա հրավիրված էր այգեգործության սիրող ընկերության կողմից) — նա այլևս չկար: Որքա՜ն կհրճվեր նա՝ տեսնելով իր անխոնջ ջանքերի այդպիսի հսկայական հաջողությունը: Ինձ թվում է, որ նա գիշեր ու ցերեկ կենդանաբանական այգում կանցկացներ:

Նույնպես շատ ուրախ եմ, որ Անանևային զբաղեցնում է սպիտնաբանությունը. դա, եղբայր, հրաշալի գիտություն է. ճշմարիտ է, դեռ մանուկ է նա, բայց քե՛ ինչպիսի՜ սպագա է սպասում նրան — խոսքով գրեթե անկարելի է արտահայտել, որովհետև բարեպաշտ իգնալիտների մազերը կդիզանան, իսկ Խալանիայում բնիկ նորից կրոբրոբեն ինկվիզիցիայի խարույկները...

Ես նրան (Անանիային) խորհուրդ կտայի զբաղվել այս գիտությամբ. նա հեշտ կգտնի դնկավար: Ես սպիտնաբանությունից ոչինչ չգիտեմ, բայց առաջին հնարավոր դեպքում պիտի զբաղվեմ այդ գիտությամբ, նա կարևոր է թե՛ բնական և թե՛ բժշկական գիտությունների համար:

Ափսոս, որ քիմիան շատ բաներում դեռ կապում է, բնև նա զրական գիտություն է, բայց մինչև այժմ էմպիրիկ է, շատ բաների նկատմամբ

* Բնական գիտությունների բանբեր:

չի կարող հաշիվ տալ։ Բազմաթիվ «ինչո՞ւ» և «ինչի՞ հիման վրա» հարցերին մենք կամ պատասխան չունենք, կամ այդ պատասխանն այնքան անիմաստ է, որ ամոթ է հիմա խոսել։ Օրինակ, հանդատացուցիչ այն պատասխանը, որ իբր «ատոմների զանազան դասավորություններից է կախված միևնույն քիմիական բաղադրություն ունեցող նյութերի տարբերությունը, ինչպես օրինակ՝ քարշյուղի և սոսինձ» և այլն։ Ամիսս, որ մանրադիտակը հարկավոր չափով դեռ չի կատարելագործված։ Երբ քիմիան ու մանրադիտակը մի քանի քայլ ևս առաջ գնային, այն ժամանակ հենց միայն հիացմունքից, հենց միայն բանականության հպդիմանակից կարելի էր մնանել։ Ամենամեծ միայն կարելի է, որ քիմիան և մանրադիտակը կանգ են առել արդեն այն սահմանագծի վրա, այն շեմքում, որտեղ արդեն իսպառ վերջանում է զանազան սուտ իմաստակությունների սահմանը և սկսվում է նոր ճշմարիտ ճանապարհ։ Բայց հենց այստեղ էլ նրանք դժբախտաբար կանգ են առել։

20-րդ և հաջորդ դարերի մանուկը հավանորեն այնտեղ ժպտա Բերցելիուսի, Լավուազեի, Լիբիխի և Յուստուսի նախնիների վրա, ինչպես որ դու ժպտում ես փիլիսոփաներից մեծագույնի՝ Արիստոտելի վրա, երբ՝ ուղղը սպասելի հետ համեմատելու համար — ինչպես և ուրիշ շատերի վրա։

Ներքում եմ Անանիային պես, որպեսզի հիմնավորապես և մասնագիտորեն ուսումնասիրի արհեստականորեն ձկներ բազմացնելու խնդիրը. սա մի մեծ բան չէ, սեռականորեն ֆիզիոլոգիայից մենք ամենքս գիտենք, բայց իմ խոսքը գործնական ուսումնասիրության մասին է, որպեսզի նա իմիջայլի չինի ձևերով կատարել, կամ տեղակ ձկան կատարելու այն գործողությունները, որ նա կատարում է մեղնից հետու և գաղտնի։ Հավանորեն նույն կերպ կարելի է նաև սերելյաց բազմացնել, հետևապես՝ նաև ամեն տեսակ ձուկ. սա շատ կարևոր է տնտեսական տեսակետից։

Պետք է, վերջապես, գիտությամբ պարապել, թե չէ՝ ի՞նչ արժեք ունի միակողմանի սոսկ բժշկությունը — ինչպես իր արհեստով զբաղվող մի որևէ արհեստավոր. այսպես վարվելը և՛ ամոթ է, և՛ հանցանք։

Ցավում եմ, որ նա գլխի չի ընկել Նախիջևան ուղարկելու կոնխինխինյան հարմ մի քանի ձու — կբազմանային նրանք այնտեղ, ապա կարելի կլիներ տարածել և ուրիշ տեղեր։ Մի անգամ էլ կրկնում եմ՝ կենդանիների և բույսերի օդընտելացումը մարդկային կենցաղի բարելավման մի նոր աղբյուր է. առաջ հիմնականում կար միայն երկու աղբյուր՝ հող և աշխատանք. բայց այժմ օդընտելացումից կարելի է օգտվել իբրև երրորդ աղբյուրից՝ առաջին երկուսի՝ հողի և աշխատանքի օգնությամբ։

Անանիայի ուշադրությունն եմ դարձնում «Coccinella» ընտանիքին պատկանող որդերի պատմության ուսումնասիրության վրա, մեկ, որոնց մեզ հայտնի է, այդ որդերը գտնվում են «կակաոաս» ընտանիքին պատկանող բույսերի վրա, այնուամենայնիվ, նա (որդան կարմիրը) գտնվում

և աճում է Հայաստանում, Արաքսի հովտում: Առաջին անգամ նրանց հայտարարել է 20 կամ 25 տարի առաջ ծաղկաբեր եպիսկոպոս Սահակը, որի համար և ռուս կառավարության կողմից արժանացավ ցմահ կենսաթոշակի: Այս եպիսկոպոսը մեռավ 50-ական թվականներին և նրա հետ գերեզման իջավ [ներկ] պատրաստելու եղանակը: Մինչդեռ, եթե այս վերին աստիճանի թանկարժեք որդերի պատմությունն ու կյանքը լավ ուսումնասիրենք, նաև նրանց աճեցնելու եղանակը, ապա կարելի է Արարատյան դաշտի հայ շինականների բարբառով մի փոքրիկ բրոշյուր հրատարակել և սովորեցնել նրանց, թե ինչպես պետք է աճեցնել և ժողովել որդան կարմիրը—իսկ դա կարևոր բան է այնտեղի ազքատ շինականների համար: Էջմիածնում տակավին կան մի քանի մարդիկ, որոնցից կարելի է իմանալ, թե ինչ տեսակ բույսերի վրա է գտել հանդուցյալը [այդ միջատները], իսկ եթե այդ մարդիկ չկան, կարելի է նրանք (միջատները) որոնել ու գտնել. չէ՞ որ՝ եթե նրանք ապրել են այնտեղ մինչև հիշյալ եպիսկոպոսը, ապա, անպայման, այժմ էլ ապրում են: Բայց առաջին գործն է՝ լավ ուսումնասիրել այս խնդիրը: Անանիան շատ ճանապարհներ ունի այդ անելու. 1) զոոլոգիայի պրոֆեսորը, 2) բնախույզ ընկերություն, 3) կենդանիներ օգընտելացնող ընկերություն, և այլն: Հետևապես, նա կարող է այս ամենն իմանալ և շատ հեշտությամբ ուսումնասիրել:

Շնորհակալ եմ Անանիային, որ սկսել է հետաքրքրվել Գրիշայով, բայց ցանկանում եմ, որպեսզի այդ լոկ խոսքով չլինի, այլ de facto: Մի անգամ ևս նրա ուշադրությունն եմ հրավիրում այդ հարցի վրա և խնդրում եմ լարել բոլոր ուժերը նպատակին հասնելու համար:

Այն խեժը, որ գիտության մեջ հայտնի է «Dorema armeniaca» անունով, կարելի՞ է արդյոք գործածել իբրև անուշահոտություն: Անանիային խնդրում եմ այդ մասին հարցնել խնդրի մասնագետից՝ Գուվարտավսկուց. Dorema armeniaca-ն այն խեժն է, որ մեզանում հայտնի է «ս[ուրբ] Կարապետի մաստակ» անունով:

Ահա որքան հարցումներով և աշխատանքով բեռնավորեցի Անանիային, բայց չէ՞ որ պետք է աշխատել. ի՛նչ արիստոկրատները ձեռքերը ծալած նստեն, իսկ մենք կոչված ենք աշխատելու: Ինչ վերաբերում է ինձ, ես առայժմ աշխատում եմ քերականության վրա, մի վերին աստիճանի ծանր գործ, բայց թեև դանդաղ, թեև հավիտ քայլով, այնուամենայնիվ, առաջ է գնում: Ես մտադիր չեմ ավարտելու այդ գործը բանասիրության մեջ, և անկարելի էլ է, բայց նա անպայման կավարտվի իմ ազատվելուց հետո, իսկ թե ե՞րբ՝ այդ ևս չի կարելի ասել, որովհետև դժվար խնդիր է:

Բարևներ երկու սեռի բարեկամներիս, նրանց բոլորին դու գիտես:

Ցտեսություն մինչև ուրբաթ:

Գրի՛ր Անանիային և ասա՛, որ հաճախ գրի:

Քո Մի՞շել

Հ. Գ. Կա՞ արդյոք ռուսերեն լեզվով շերամաբուծության պիտանի ու կարդին ձեռնարկ։ Սպասում եմ Անանիայից այս հարցի պատասխանին։ Հարցնել օգընտելացնողներից կարելի՞ է արդյոք և ի՞նչ նշանակով օգընտելացնել Փոքր Ասիայի գիտորարեր պիծակ (орехотворка) *միջատը. նրա լավագույնը գտնվում է Ջմյուռնիայի մոտ և լավագույն գիտորը* (чернильный орешок) *Ջմյուռնիայից է։ Սպասում եմ պատասխանին։*

Նորից Հ. Գ. Ի՞նչ բույս է խառ ավող կոնը (ворсовальная шишка)—webecarden, № 436, *որ Այգնգործության սիրող ռուսական ընկերության կենտրոնական գնպոյի ցանկի մեջ գետնելված է տնտեսական սերմերի կարգում. ի՞նչ բանի է գործածվում և ինչպե՞ս է մշակվում։ Պատասխանն սպասում եմ Անանիայից։*

20

Ա. ՆԱՆԻԱ. ՍՈՒԼԹԱՆՇԱՀԻՆ

1865, Գնարուս-Գողոյան բերդ

Անգին քնկեր.

Այս նամակս մի այլ ճանապարհով կատանաս։ Տակավին ես այս խոնավ բերդում կմնամ 6—8 ամիս ամենաքիչը. բարբարոս կառավարությունը էլ չդիտեմ ինչ միջոց գործ դնել ազատ խոսքը բռնաբարելու և մեր գաղափարքը աշնչացնելու նպատակով։ Ինձ արգելված է հայոց լեզվով նամակներ գրել, պետք է գրեմ ռուսերեն. բացի այդ, նամակներս պետք է կարդամ կոմենդանտի առաջ. բարբարոսի արարքն էլ ծայր աստիճան չունին։ Եթե նամակս հասնի ձեռքդ, գուցե այլ նամակներ գրեմ մանրամասն տեղեկություններով քո հարցրած և մեզ հետաքրքրող հարցերի մասին...

Միշտ քեզ սիրող

քո ՄԻՔԱՅԵԼ

21

Ռ. Տ.-ԻՆ[18]

Կամիշլին—$\frac{[15\ \text{գեկո}[\text{եմ քերքի}]}{3\ \text{հատված}[\text{է}]}$ 1865

Ք. Տ. . . .

Ամսիս 7-ին մատս Կամիշլին առավել մնառած, քան ըն կենդանի՝ ճանապարհին թաշածնևրս անասանելի էին իմ վիճակում, բայց գործյալ վերջին ուժերս և ոգիներս գործ դնելով, դիմացանք։ Հասա այստեղ հա-

պիվ, մի բնակարան գտա և 4 օր պառկած էի ջերմով բռնված, մինչև ստիպվեցա հրավիրել տեղվույս բժիշկներից մինը և խնդրել, որ տա ինձ բինա և այլն. ընդունեցի, և այս 2—3 օրն էլ տան պիտանի բաները ճարելու աշխատելով, ահա այսօր առաջին նամակը գրում եմ Ձեզ և...

Այս քաղաքի մասին լավ բան չունիմ ասելիք, անպիտան մի տեղ է և ձմեռը բոլորովին մեռած. ամառը ասում են, մի կենդանություն փայլում է անդադար շոգենավերի և անցորդների հաճախության պատճառով, բայց ես դրանից էլ օգուտ չպիտի քաղեմ, պատճառ ապրիլի 15-ին ևս միայն մնացի կենդանի, կերթամ քաղաքից դուրս մի հովտի մեջ, ուր շատ ծառաստանք կան և աղբյուրներ և ուր բժիշկ նայդենները կումիս է խմացնում տկարներին. ուրեմն մինչև սեպտեմբեր գրեթե ես կմնամ այնտեղ. ինչ կըլլա եղեր, ինձանից շատ նամակ մի՛ պահանջեցեք. դիտեմ ասածդ, որ շունիմ ուժ և զորություն: Այս տողերը գրում եմ, բայց կուրծքս և թիկունքս ցավից խեղդում են. երբ մի փորր առողջանամ, պարապությունից այնքան գրեմ, որ դուք էլ զզվիք, բայց առայժմ ներեցեք:

22

ԳՐԻԳՈՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

8 փետրվարի, 1866, Կամիշլին

Սիրելի եղբայր իմ, ԳՐԻԳՈՐ ՂԱՋԱՐՅԱՆ.

Եղբայրական ողջույնիվ հայտ առնեմ, որ հունվարի 11-ից գրած նամակդ առացա երեկ, այսինքն ամսույս 7-ին. պատճառը չգիտեմ. նամակիս հետ վերադարձուցի պահարանը, որ ինքդ աչքովդ տեսնես խոթրիս առուգությունը:

Սիրելի եղբայր, ես այսքան տարի չարչարված լինելուց հետո, այսօր էլ ծանր հիվանդության տիրացած եմ, որ մաշում է ինձ առավել, քան ևս տարի, ուստի և բնավ սիրտ չունիմ ձեր անճառելի կոիվները մտիկ անելու, և ևս որ նամակներուդ մեջն էլ չլինեին անպատշաճ և անճառելի բաներ, հարկավ ձեռքս կպած ժամանակ կպատասխանեի, բայց այնպիսի թուղթերու պատասխանելը իմ գործը չէ:

Որովհետև իմ աքսորը և տկարությունը մինչև այժմ տևում են և գիտեմ կարող են երկարել, ուստի ես բարվոք համարեցա դարձյալ ձեր շարը նայելով, գրել տեղվույդ Մագիստրոսին մի խնդիր, որ նա մեր հորը վախճանից հետո ինչ որ մնացել է, իհարկե բոլորն ևս՝ շարժական և ևս՝ անշարժ, և այս բոլորը, ինչպես օրենքը կհրամայե, ծախե և դումարը պահելով յուր գանձապահում, քննե և վճռե ժառանգների իրավունքը, և բան այնմ յուրաքանչյուրին յուր պատկանյալ բաժինը տա:

Այս խնդրի մեջ, որ այսօր այս ինդիս հետ փոշա տվի, գրած եմ նույնպես, որ եղբոր Ղազարոսին Սերոբեն ստացած 700 մանեթը, նրա ստուգապես հարս փողն է եղած, ուրեմն ես ընդունում եմ իմ հաշվիս վրա։ Ինձ համին գրածիս օրինակը քեզ կուտան, և դու կտեսնես, որ բնավ կողմնապահություն չկա, այլ ուղած կատարյալ արդարություն է և իրավունք։

Ես երկար բարակ պատասխաններու սիրտ չունիմ և մեջտեղի եղածը չարժիլ տալս տալապալի, մնաց որ պատշաճ բան էլ չէ. հույս ունիմ, որ դուն ալ նույն ոգվույն կհետևիս և օր առաջ այս գործը վերջանալուն ջանք կանիս, ապա թե ոչ, վնասը ձեզ կլինի, ինձ չէ, ինչու որ դուք առուտուրի մարդ եք։ Ինձ համար թե որ երկարելու լինի, միևնույն է դրեթե։

Գրում ես, թե անպատճառ միտք ունիս գալու ինձ տեսության. շատ շնորհակալ եմ, բայց այս է բանը, որ շոգենավերը հազիվ հազ ապրիլի 20-ին սկսին ներգործել, իսկ ես մայիսի 1-ին դուրս կուգամ այս տեղից Սամարի գավառը խրճըղ խմելու երթալու, և արդեն մեկ ամիս է, որ մինիստրից խնդրել եմ, և այս օրերս հույս ունիմ հրամանը անպատճառ ստանալու։ Ուրեմն քո գալը դուր կլինի գարնան, ես կվերադառնամ օգոստ[ոսի] 15-ին և, եթե մինչև այն ժամանակ հրաման դուրս չգա ինձ նախիջևան գալու, այն ժամանակ հրամեցնեք, ինձ այստեղ կգտնեք։ Գրում եք, որ գրեմ արտիս ուզածը ու բերեք, շատ շնորհակալ եմ, ինձ ոչ մի բան հարկավոր չէ, և դուք դուք տեղը անհանգիստ մի՛ լինիք։

Տկարությունս չէ ներում երկար բարակ նամակ գրել, ուստի և վերջացնում եմ գիրս, ցանկալով քեզ ու քո ընտանիքին աս ի սրտե ամեն բարի, ամեն հաջողություն, առողջություն և երջանիկ կյանք։

Ինձանից շատ նամակ մի՛ սպասիլ, ինչու որ չունիմ կարողություն գրելու, հարկավորություն էլ թե որ ասանք չկա, շատ սուտ չի լինիլ։

Մնամ քեզ միշտ աս ի սրտե բարյաց փափագող եղբայր

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

23

ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

12 փետրվարի, 1866, Կամիչին

Սիրելի Եղբայր իմ ԳԱՅԱՆԵ.

Թե որ անցյալ փոշտի եղբոր Ղազարոսին գրած գիրիս մեջ խոստացած չլինեմ, թե դիմացի փոշտով քեզի ալ կգրիմ, առնի, հնչ գրելու ուժ չկար վրաս, մինչև որ ան թերմաշ խնդիրը գրեցի Մագիստրատս, մեռնիս նկատվ։ Ինչևիցե, ասի, ինչ ալ ըլլանա, գրեմ, ազգիկը աչքը

ճամփան ինչ չի նայի տեսի։ Քո գրած գիրդ որդուդ Գարրիելին գիրին մեջը, առի, և ձեր ողջությունը իմանալով ուրախ եղա։

Կգրես, թե այս քանիսում դիրն է պատասխան չունիմ տեսի. ես քեզիմեն մեկ հատ գիր առիլ էի, պատասխանը հատուկ քո անունովդ գրիլ եմ հունվարի 28-ին, անկից հետև մեմալ աս էր առածս, քանիսում գիրս է տեսին խոտոզամիշ եղածդ ի՞նչ է, ամմիշ կարդացող պիտ՝ լաս։ Գիտեմ որ դուն ալ, սիրելի ճիճաս ալ սիրտերդ ինչ-ինչ կեցկլիք— աճապ ի՞նչ խաղեր կառնուք ինձմեն առողջությանս մասին. ինչ գրելուս ես ալ չիմ գիտիմ, միայն կանուխվանեն պետիր չիմ, քիչ մը աղեկ ալ իմ ասիմեն, աստ չէ, թեև կելերլի կիղելրլի է. ինչ ալ ըլլանն այժմ անվտանգ մայիսին կհասանիմ և խրմըզդի ալ կերթամ տեսի, հույս ունիմ, և ինձ նայող բժիշկն ալ առաջվա պես չի վախնալ. մեկ ամիս առաջ ես ալ շատ հույս չունեի. բժիշկն ալ նումիրը բռնված՝ մայիս չէ, մարտին թարաքը կելլիս, կկանչեր, բայց այժմ սրքլիլ է, բանը քիչ մը աղեկ է, կասե։

Աղեկը ի՛նչ է. չերմը ամեն օր չի բռնիլ, բռնածն ալ առաջվան չափ էչլիմիշ չանիլ. աս չերմն է իմ տունս քանդողը, ճարին ճարը առհա գտած չիմ։ Հույսս խրմըզդին վրան է, մեմալ տաք տեղ մը երթալու դիմացի ձմեռը կամ նախիջևան մնալու. արդիս նայինք, ո՛րը ավելի շուտով կհրամայեն, բայց երիմը ինձի շատ լավ կըլլար։ Տարին վաղուց անցավ, որ ես ամեն չր ճար կխմիմ և բնհրիզ իմ. կհավատաս—հոգիես արևես զզվիլ իմ. աստր մեռնիմ նե, աշքս չերևնալ, բայց երևումը տահա կերեզման չերևնալ, կասե թուղթ նայող Ասվատուրը։

Թե որ ապրիլի մեջ ճիճայիս ինձի տեսության գալը հաստատ է նե, ճիճայիս ասա ինձի մեկ հիվի աղեկ ապուխտ թող բերե։ Երեշկիկ չուզիմ, չիմ ուտիլ, միայն ապուխտ, ան ալ 2 հատ, չըլա թե ավելի, գնեն խրմըզդի ատեն ուտելու բան չէ, իսկ վրայեն ալ տաքերը անցնին նե, վերուր թապլե, անոր համար կասիմ, որ երկու հատը խիստ բավական է։ Ասկից ջոկ մեկ կապ մը աղեկ թաժա չորցած թառան ձուկ, կիսաչոր ալ ըլլանե, թող առնու, հոս կչորնա, զարար չունի։

Ուրիշ բան պետք չէ, քանի մը հատ լիմոն, փորթաքալ կուզենայի ամա, ան ժամանակը պետիմ տահա չի ըլալ, գնեն գիտցածս խորնելեզենորուն կրերեն նախիջևան։

Ուրիշ գրելու բան չունիմ, մարդուդ շատ և շատ բարև արա, Գարրիելին նույնպես. նարա յալ ջոկ գիրնր գրելու սիրտ չունիմ, հիմա մեծերուն գրեցինք ու մանրերը մնացին։ Նամակս պիտ վերջացնեի, ինչու որ լեզս ելլած կգրեմ, բայց աս ալ հիշեմ ասի, որ Մագիստրատս տված թուղթիս մեջ քեզի ալ և մամայիս ալ գրիլ եմ, ասիլ եմ, որ հորս մեռնելեն ետքը, 3 ապրար, 1 քույր և մայրս մնաց. նույնպես խնդրիլ եմ, որ քո և մորս իրավունքները տեղը բերին և ինչ որ կպատահի նե, ձեզի էլ չի զրկին. աս բանը պարոն Գրիգորի քիմըն ի վեր չերթալուն գիտեմ, բայց նարա ասելովը բան չի ըլլալ, թե որ օրենքը կարե՝ Հորդ է, պատահած ժամանակն ալ մեկ մեծ բան մը չէ, բայց ինչ կուզե թող ըլլա,

ազգս տնը խա, գուն ալ ան Հարը գովակն խա, ինչ օրենք է քեզի գրկել— պատոն Գրիգորը ինձի գրել էր մնկ անգամ Պետերբուրգ, քի գուն քո բաժինդ Հարանութեանդ ժամանակ ավելի[ի]րով առիլ խա, և ինքն է եղել պապայիս ատակ ավազը, այդ ալ նոր լսեցինք։

Ակա գիրս առնելդ նորը, անպատճառ ձիճայիս երթաս և գիրս կարդաս ու ինձիմեն ալ արտպանեով բարև անիս։ Մամայիս արդի բան ալ չեմ գրիլ, ինչու որ չի հասկանալ կասիր։ Միրական Ղազարոս եղբորս շատ և շատ բարև. աստված կատարյալ առողջութիւն տա։

Դիմացի փոշտին ալ Բերբերովին կգրիմ, ամենը մնկ օր չեմ կարող էհ, տահա ինչ ասիմ. աստուծո ատածը ըլա։

Եղբայր քո անբաժանելի Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

Տուրաները, պոռան խըչամներնը 10 օր է խափանմիչ արել են ինձի, տանը մեռելկոխ նատիլ իմ, դուրը մարդ մարդու չի տեսնուլ, օրը 2 անգամ սոպա կվառենք, կենեն չի տաքնալ ցուրտին մեծ եղածնեն, նայինք երբ պիտի վերջանա։

24

Կամիշլեն, 1866 թ.։

... *Ակատնդ բժիշկ Նայդենովը, որ կումիտով պարապում էր ամառնները մասնավոր կերպով, դժբախտաբար տեղափոխվում է գնալի Սարատով, ուստի ինձ հարկ եղավ ամառվա 15-ից վաղօրոք խնդիրը գրել առ գավառապետն, որ հրամայե Հանն կամ ինքը առ մայիսի 1-ից մինչև օդոստոսի 15-ը երթալ Սամարի գավառը, Սամարից 60 վերստ հեռի, կումիս խմելու. քանի մինչև մայիսի 1-ը հասնելս աստված գիտե. այս ոչ քի լոկ իմ խոսքն է, այլ այս անդի եղածներից ամենալավ վինոդրատով բժիշկը ինձ պարզապես ասաց և ես օրեօր մոռանում եմ գնելդ մասին։ Համառացեք, այնպես վատած եմ այժմ, որ ինքս ինձ հասկնալի մեջ տեսնել վախենում եմ. վկա է աստված, ջերմը ամենայն օր հոգիս է հանում. քրտինքը, հազը և թուքը քիչ չունի. ավելցուր սոցա վերա իմ անօգնական միայնութիւնը. մի կուխարկա (կերակուր եփող աղախին) ունիմ անունով. միայն շշի, կաշա գիտե, որ ես չեմ ուտում, այլ բան բնավ, ուրիշ բան էլ չկա։ Ուր ծողում բարոյական անախորժութիւնը ամենայն քայլափոխ... Բժիշկը ինձ պատվիրում է աստիճ խաղաղութիւն հոգվս, բայց ծողո՞մ են խաղաղ. մի շնչին խաղաղութիւն ինչերով է ձեռք գալիս, ինչ օգուտ, գրել չեմ կարող, խոհեմութիւնդ հասկացիր և . . . . .*

ՄԻՔ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1859 թ., № 9 (Մ. Նալբանդյանի «Հիշատակարան»-ում)։ Առանձին լույս է տեսել նախ Հ. Սվաճյանի «Մեղու»-ի 1860 թ. № 103-ում։ Այնուհետև «Ազատություն» բանաստեղծությունը արժանացել է բազմաթիվ տպագրությունների, դարձել հայ ժողովրդի ամենասիրած գործերից մեկը։

Տպագրվում է նաև «Հիշատակարան»-ում, որպես նրա անբաժան մասը։

ՀԻՄԱՐԱՅՏ ՈՒՍՄԱՆ ՎՐԱ ՈՒՆԵՑԱՒ ԿԱՐԾԻՔԸ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Արարատ», 1851 թ. ապրիլի 28։

Նալբանդյանի աշակերտական հասակում գրած սատիրական բանաստեղծություններից է։ Ձեռագիրը չի պահպանվել և գրության թվականը ճշտված չէ։ Ավանդաբար դրվել է 1845—47 թթ.։

Տպագրվում է Մ. Նալբանդյանի «Երկեր»-ի Ա հատորում լույս տեսած տեքստով։

ՎԱԶՈՂ ՋՐԻՆ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Ազնվա գրականական և պատմականաց III գիրք, 1890 թ.։ Տպագրվում է Մ. Նալբանդյանի «Երկեր»-ի Ա հատորում լույս տեսած տեքստով։

ՄԱՐԳԱՐԻՑ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Արշալույս», 1940 թ., № 3։

Հերմանուսի „Пророк" բանաստեղծության թարգմանությունն է։

Տպագրվում է Մ. Նալբանդյանի «Երկեր»-ի Ա հատորում լույս տեսած տեքստով։

---

1 *1941—1949 թթ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչությունը լույս է ընծայել Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի կողմից տպագրության պատրաստված Մ. Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուն»-ը չորս հատորով։ Նկատի ունենալով, որ սույն միհատորյակի ծանոթագրություններում հաճախ է կրկնվում այդ հրատարակության անունը, մենք այստեղ և հետո գրում ենք համառոտ Մ. Նալբանդյանի «Երկեր» Ա հատոր, Բ հատոր և այլն։*

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հանդես գրականական և պատմականաց», II գիրք, (1889)։

«Բանաստեղծ»-ի աղբյուրը Գուշկինի „Поэт"-ն է և նալբանդյանն իր բանաստեղծությունը համարել է նմանություն։

Տպագրվում է Մ. Նալբանդյանի «Երկեր»-ի II հատորում լույս տեսած տեքստը։

ՎԻՇԵՐՈՐԴԸ — ՄԻ ՇՆԱՐ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հանդես գրականական և պատմականաց», II գիրք, (1889)։

Տպագրվում է «Երկեր»-ի II հատորում լույս տեսած տեքստը։

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1858 թ., № 3, Կոմս Խմմանուել ստորագրությամբ։

Բնագիրն է „Les étoiles qui filent" վերնագրով բանաստեղծության փոխադրությունն է, որ նալբանդյանը կատարել է ռուսերենից։

Տպագրվում է «Հյուսիսափայլ»-ում լույս տեսած տեքստը։

ԱՂՔԱՏ ԿԻՆ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1858 թ., № 3, Կոմս Խմմանուել ստորագրությամբ։

Բնագիրն է „La pauvre femme" բանաստեղծության փոխադրությունն է, որ նալբանդյանը կատարել է ռուսերեն թարգմանություններից։

Տպագրվում է «Հյուսիսափայլ»-ում լույս տեսած տեքստը։

ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1858 թ., № 3, Կոմս Խմմանուել ստորագրությամբ։

Տպագրվում է «Հյուսիսափայլ»-ում լույս տեսած տեքստը։

ԱՊՈԼՈՆԻՆ

Առաջին անգամ տպագրվել է՝ Հ. Սվաճյանի «Մեղու»-ի 1861 թ., № 148-ում, Կոմս Խմմանուել ստորագրությամբ։ Գրվել է 1859 թ. մայիսի 31-ին Էմսում։

Տպագրվում է «Երկեր»-ի II հատորում լույս տեսած տեքստը։

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1860 թ., № 7, Կոմս Խմմանուել ստորագրությամբ։ Նույն տարին լույս է տեսել Գոլոսում Հ. Սվաճյանի «Մեղու»-ի № 107-ում։ Գրելու տեղը և ժամանակը Հյուգոն չէր «Հյուսիսափայլ»-ի խմբագրությունից հետաքրքրուց հետո նալբանդյանը մինչև 1860 թ. օգոստոսը գտնվում էր Պետերբուրգում։ Հավանաբար այստեղ էլ գրել է այս բանաստեղծությունը։

Տպագրվում է «Հյուսիսափայլ»-ում լույս տեսած տեքստը։

Օ Շ Ա Կ Ա Ն

Առաջին անգամ տպագրվել է՝ «Մեղու», 1861 թ., № 117, Կոմս Էմմանուել ատոր-բագրությամբ։

Գրելու ժամանակը հայտնի չէ։ Երկրորդ անգամ արտասահման գնալուց առաջ, 1860 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նալբանդյանը եղել է Հայաստանում։ Բանաստեղծությունը հավանորեն գրել է հենց Օշականում։

Տպագրվում է «Բ»-ի և հատորում լույս տեսած տեքստը։

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲԻ ՏՈՆԻՆ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հանգիստ գրականական և պատմականաց», VI գիրք, (1895)։

Բանաստեղծության ձեռագրությունը պահպանվել է և գտնվում է հնդինակի արխիվում։

Գրվել է բերդում, 1863—64 թթ.։

Տպագրվում է «Հանգիստ»-ում լույս տեսած տեքստը։

Ո Խ Ղ Ե Ր Զ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1864 թ., № 3, Փառսիտոս Ծոլակյանց ստորագրությամբ։ Գրության ճիշտ ժամանակը հայտնի չէ։

1. Մեղուխնջա — Հարություն Մկռտչյանի ծածկանունն է։

Տպագրվում է «Հյուսիսափայլ»-ում լույս տեսած տեքստը։

ԿՆԴՈՒԿ ԳՈՂԱՏԻ ԵՎ ՆՐԱ ՍԱՆՉՈՅԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հանգիստ գրականական և պատմականաց», VI գիրք (1895)։

Գրելու թվականը պարզված չէ, բայց հայտնի է, որ գրվել է բանտում։

Բանաստեղծության ձեռագրությունը չի գտնվել, պահպանվել է միայն տեսագիրը։

Տպագրվում է «Հանգիստ»-ում լույս տեսած տեքստը։

1. Մանչո Գանատ Դոն Քիշոտի պինակիրն է (Մերվանտեսի «Դոն Քիշոտ» վեպի հերոսները)։

Ժ. Ժ. ՌՈՒՍՍՈՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հանգիստ գրականական և պատմականաց», VI գիրք (1895)։

Գրվել է 1865 թ. բերդում։

Ձեռագիրը չի գտնվել։

Տպագրվում է «Բ»-ի և հատորում լույս տեսած տեքստը։

Մամիկոնյան մեծ Վահանի պատասխանը։

Առաջին անգամ տպագրվել է՝ «Քնար հայկական» (1868)։

Նալբանդյանը այս և հաջորդ («Հիշեցնը») պարոդիաները գրել է բերդում իր զտզտարական հակառակորդ Ի. Պատկանյանին «Քաջն Վարդան Մամիկոնյանի մահը և Հայկ և Հնոնին մոռանանք եղբայրը» չափածո գործերը կարդալուց հետո։

Նալբանդյանը այս պարոդիայով ծաղրում է Պատկանյանի ազգայնական ոճամտածողությունը, ոտաբյուն անվանում նրա բարոյած ազգային միասնությունը, իսկ նրա հայրենասիրությունը փրուն, Հլան ու կնճռ։ Պատմիչ են «Հիշենք»-ի առողջը.

Ղադաչ, ապրուզի գլուխն երևցավ,
Մեր ազգասերը ժառավ ծակուր։

Տպագրվում է «Նկիծ»-ի Ա հատորում լույս տեսած տեքստը։

ՀԻՇԵՆՔ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Քնար հայկական» (1868)։
Տպագրվում է «Նկիծ»-ի Ա հատորում լույս տեսած տեքստը։

ՆԱԽԱՀԱՅՐ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Հեղինակի՝ «Ազգմիքր» ընդհանուր վերնագրով գրած բանաստեղծություններից, որոնք Նալբանդյանը գրել է բանտում որպես պարոդիա՝ նպատակ ունենալով նար-Պեյի «Վարդենիքր» բանաստեղծությունների ծաղրվածուն։ «Ազգմիքր»-ից առաջին անգամ մի պատառիկ լույս է տեսել «Արևելյան մամուլ» ամսագրում (1874)։ Հետագայում լրիվ տպագրվեց «Լումա», 1903 թ., № № 2, 3, 4, 5 և 6։

Տպագրվում է «Նկիծ»-ի Ա հատորում լույս տեսած տեքստը։

ՄԵՌԵԼԱ ՀԱՐՑՈՒԿ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1859 թ., № № 8, 9, 10։

«Մեռելահարցուկ»-ը Նալբանդյանի վիպական երկրորդ գործն է, առաջինը եղել է «Մինին խոսք, մյուսին հարսն» վիպը, որը առանձին գրքով տպագրվել է 1858 թվականին, բայց հավանաբար ոչնշացվել է։

Ճշտված չէ, թե երբ է գրվել «Մեռելահարցուկ»-ը, պարզված չէ, նաև, թե ինչու Նալբանդյանը կիսատ է թողել իր նոր վիպը։

Ենթադրվում է, որ «Մեռելահարցուկ»-ը գրվել է 1858 թ. վերջերին և 1859 թ. սկզբներին՝ «Հիշատակարան»-ին զուգահեռ։ Այդ են վկայում երկերում շոշափված հարցերը։

«Մեռելահարցուկ»-ը առաջին հայ վիպն է բուրժուական հասարակության մասին, մի վեպ, որում քննադատական ռեալիզմի մեթոդով դիմակազերծ է արվում խարտյաշ վաճառականությունը, նրա կոզոգությունները և շարաշահումները տանուտեր հիմնավորող կղերա-բուրժուական ընկերիկենցյան, բուրժուազիայի կեղծ ազգասիրությունը և գրվածում էպոխայի առաջավոր մարդու, հասարակ ժողովրդի լուսավորության և ազատության պայքարին նվիրված հերոսի գործունեությունը։

«Մեռելահարցուկ»-ում Նալբանդյանը լույներևն քննում է լուսավորության, արվեստի և գրականության հարցերը, պահանջ դնելով հոգևոր կուլտուրայի բոլոր ոճտակները ծառայեցնել ժողովրդի լուսավորման գործին։

Համագրվելով էսթետներին ու միստիկներին, Նալբանդյանը պնդում է, որ «Ազգերի բանաստեղծության միակ ապրյուրը է նոցա ազգային պատմությունը, այսինքն ազգի կյանքը։ Իսկ ազգ ասելով նա հասկանում է հասարակ ժողովուրդ։ Արովյանի «Վերք Հայաստանի»-ից հետացած Նալբանդյանը ասում է. «Այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը։

Նալբանդյանը ցույց է տալիս իր անմիջական և սերտ կապը Բելինսկու և Չերնիշևսկու հետ, երբ առաջադրում է ռեալիստական հշմարտացի բարձր ժողովրդայնության դրականություն առնգծելու իր պահանջը։

Նվ չնայած անավարտ վիճակին, Նալբանդյանի այս երկը ազդել է ժամանակակից գյուղի վրա, ոգեշնչելով առաջավոր երիտասարդությանը ժողովրդին ծառայելու ազնիվ գործումներով։

Տպագրվում է «Հյուսիսափայլ»-ում լույս տեսած տեքստը։

1. Կունցով (Կոնցովո) — Մոսկվայի մարզի գյուղերից մեկը, որտեղ գտնվում են պատմական շատ հուշարձաններ։

2. Շահրնգ — Նալբանդյանի գրական ծածկանուններից մեկը «Հիլատակարան»-ում։

3. «Մենու Հայաստանի» — բազմաբնական, բանասիրական և առևտրական լրագիր. հրատարակվում էր Բինգհեմում Մա. քշե. Մանգինյանցի խմբագրությամբ։ Ուներ կղերապահպանողական ուղղություն ու քշնամական դիրք էր բռնել «Հյուսիսափայլ»-ի նկատմամբ։ Հատկապես հարձակումներ էր գործում Կոմս Էմմանուելի՝ Նալբանդյանի վրա։

4. Տեղափ պիրլիք — թյուրքական ոսկեդրամ, որ պարունակում է չորս լիրա. բառացի նշանակում է՝ չորսը միասին։

5. 1847 թ. Նոր-Նախիջևանում տարածվեց խոլերան։ Հիվանդացավ նաև պատանի Նալբանդյանը և շատ դժվարությամբ առողջացավ։

6. «Լույս գվարթը» — կրոնական երգ։

7. Այստեղ և հետագա տողերում հարվածն ուղղված է կղերական ռեակցիոն գործիչներ Սարգիս Ջալալյանի (Ջալալ) և Գաբրիել Այվազովսկու (Այվազ) դեմ։

8. Այս երգը առաջին անգամ տպագրվել է Մ. Բաղիանցյանի խմբագրությամբ լույս տեսած «Ազգասեր»-ի 1847 թ. № 2-ում, Հ. Կ. ստորագրությամբ։ Ենթագրվում է, որ հեղինակը Բաղիանցյանն է։

9. «Ազգասեր» — շաբաթաթերթ, հրատարակվում էր 1845—48 թթ. Կալկաթայում, Մ. Բաղիանցյանի խմբագրությամբ։

10. «Արշալույս արարատյան» — շաբաթաթերթ պահպանողական ուղղության, հրատարակվում էր Զմյուռնիայում, Ղ. Գալդազարյանի խմբագրությամբ, 1840—1887 թվականներին։ 60-ական թվականներին միացած «Բուռնակ»-ին և այլ ռեակցիոն պարբերականների, պայքար էր մղում Մ. Նալբանդյանի գաղափարների դեմ։ Հետագայում Նալբանդյանը սուր քննադատության է ենթարկել «Արշալույս արարատյան»-ը և գրել է.

«Արշալույս արարատյանը» մի անարգ թերթիկ է, որ պատիվ չի բերում հայ մամուլին, ունի միայն մի խմբագիր, ի դեմս կաշառված Ղուկաս Բալչադարյանի... նա մի վարձկան է, աշխատում է հօգուտ Թյուրքիայի և Անգլիայի։

11. «Պորտիչիու համր կամ ֆեննելլա» — ֆրանսիական կոմպոզիտոր Դանիել Օբերի (1782—1871) օպերան։

12. «Բազդասար խալիֆայի բոլոր տազերը» — խոսքը վերաբերում է Բազդասար դպրի «Տաղարան փորրիկ» խորագրով գրքին, որը լույս էր տեսել Կ. Պոլսում։

13. Մ. Նալբանդյանը հետագայում, բանտից՝ Ղ. Նալբանդյանին գրած նամակում մի՛անգամայն գրական է արտահայտվում Սայաթ-Նովայի երգերի մասին։ Նա գրում է. «Սայաթ-Նովան կարգին գիրը է, տպագրված Մոսկվայում, 1853 կամ 1854 թվին» (տե՛ս «Բնչիժ»-ի Գ հատ., էջ 194)։

14. «Քնար հայկական»-ում այս բանաստեղծությունը զետեղված է իրրև թարգմանություն, կատարված Նալբանդյանի կողմից։

15. «Ճառարտ» ռեակցիոն ամսագիր, հրատարակվում էր Մոսկվայում (1858—62 թթ.) Նալբանդյանի և առհասարակ դեմոկրատիայի թշնամիները Մանր Մանրյանցի և իր որդի Ջարմայր Մանրյանցի խմբագրությամբ։

16. «Հայի հայրենիքը» — Նալբանդյանի բանաստեղծություններից մեկն է։

17. Բնգզագն — «Հիլատակարան»-ում Նալբանդյանի կերտած գիշատիչ բուրժուայի տիպ է։ Ղեկավարվելով ամարդը մարդուն գայլ ցինիկ նշանաբանով, կատարում է խարդախություններ, խարներություններ, սուորություններ և այլն։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Առաջին անգամ տպագրվել է «Հյուսիսափայլ», 1858 թ., №№ 4, 5, 6, 7, 8, 9, 10, 1859 թ. №№ 1, 2, 8, 9, 11 և 1860 թ. №№ 5, 6։ «Հյուսիսափայլ»-ից տպագրվել է Նալբանդյանի «Երկեր»-ի առաջին հատորում։

«Հիշատակարան»-ում Նալբանդյանը հանդես է գալիս և իրրև մեծատաղանդ գրող և իրրև հայ իրականության մեջ մրցակից չունեցող մի խոշոր հրապարակախոս։

Գաղափարական բովանդակության տեսակետից «Հիշատակարան»-ը մի ամրողջական երկ է, թայց նրա կառուցվածքում մենք միասին շաղկապված տեսնում ենք գանազան օրագիրը, պատմվածքը, ակնարկը, դրախատությունը, բազմազան տեսություններ, ֆելյետոններ, բանաստեղծություններ, հրապարակախոսություններ և այլն։ «Հիշատակարան»-ի պայմանական հեղինակը բարձր մարդկայնությամբ, բնավորության վեհ գծերով օժտված Կոմս Էմմանուելը և հերոսներից կալվածատիրական-կապիտալիստական հասարակության պահապան՝ գիշատիչ Բնզդալեն սկզբից մինչև վերջը հանդես գալով «Հիշատակարան»-ում՝ իրենց հակամարտությամբ ու պայքարով այժմեական ասպրներ են մտցնում երկում։

«Հիշատակարան»-ը Նալբանդյանը գրել է 1858—60 ԹԹ., «Գյուղացիական անֆորմիզ» նախօրյակին։

Հետևելով „Современник"-ի ուղղությանը, աշակերտելով Չերնիշևսկուն, Նալբանդյանը «Հիշատակարան»-ում մի նոր աստիճանի է բարձրացնում հայ հասարակական միտքը, գտնելով նոր հասանքի անկյուցիան-դեմոկրատական շարժման հիմնագիրն ու առաջնորդը։

«Հիշատակարան»-ում Նալբանդյանը շոշափել է հայ հասարակական կյանքի բոլոր հարցերը, երևույթները դիտելով և գնահատելով ժողովրդի շահերի տեսանկյունից։

Նալբանդյանը բննել է լեզվի, գրականության, արվեստի, գպրոցի, ժամուկի, կրթության և գաստիարակության հարցերը։ Նա կռվել է կղերական խավարամոլության, բուրժուական լիբերալիզմի, կոսմոպոլիտիզմի, կեղծ ու սուտ հայրենասիրության, ազգային բացառիկության և նացիոնալիզմի բոլոր տեսակի արատավորություններն դեմ։

Նալբանդյանը շոշափել է դիտական բազմաթիվ հարցեր, օգտագործելով բիմիայի, ֆիզիկայի, բժշկության և հողագործության վերաբերյալ հրապարակվող լավագույն գրականությունը։

Լեզվի, գրականության և բնագիտության տեսական հարցերը Նալբանդյանը բննել է իրրև մատերիալիստ մտածող։

«Հիշատակարան»-ը մեծ նշանակություն ունի իրեն՝ Նալբանդյանի աշխարհայացքի զարգացման ուղղությունը և քննացրը պարզելու համար։ Ուսումնասիրողները կարող են տեսնել, թե ինչպես Նալբանդյանը արագորեն բարձրանում է լուսավորական դեմոկրատիզմի մակարդակից և հասնում ռևոլյուցիոն դեմոկրատիզմին։

«Հիշատակարան»-ը 19-րդ գարի 50-ական թվականների հայ հասարակական մտքի հանրագիտարանն է։

Անհամեմատելի մեծ է նրա «Հիշատակարան»-ի ազդեցությունը ժամանակակից առաջավոր երիտասարդության վրա։ Նալբանդյանի առաջին կենսագիր Մ. Տեր-Գրիգորյանը պատմում է, որ ամսի սկզբին ժամեն բաժանորդ անհամբերությամբ ապասում էր «Հյուսիսափայլ»-ի նոր համարը գուրս գալուն, որ կարգա Կոմս Էմմանուելի Հիշատակարանը կամ մյուս հոդվածները։

Մարդիկ «Հիշատակարան»-ի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքով են ճանաչվել հասարակության մեջ, ապստամբի, կատիլի կամ խավարապաշտի, կղերամոլի անուն վաստակել։

Տպագրվում է «Հյուսիսափայլ»-ում յուրս տեսած տեքստը։

1. Առաջին իսկ օրից պահպանողական ըմբռնու Հայաստանին-ն քննամական դիրք բռնեց «Հյուսիսափայլ»-ի և մասնավորապես նրա գլխավոր հրապարակախոս Մ. Նալբանդյանի նկատմամբ։ Հայ կղերա-ֆեոդալական և բուրժուական-նացիոնալիստական հոսանքների հակաժողովրդական գործերի անխնա մերկացումը Նալբանդյանի կողմից «Ընդու Հայաստանին»-ի խմբագիր Մանդինյանը համարում էր սրբապղծություն և ազգափրծան արարմունք։ «Ազգը իզուր չվատաբանենք»,— գրում էր այդ թերթը՝ խավարամիտ կղերին և խարդախ վաճառականներին դիմակազերծ անելը համարելով ամբողջ ազգի վատաբանում»։ Այդ թերթը կոչ էր անում «չպատահական աշգայինն ուժերը», «համձնաչյա գործել»։ Նալբանդյանը գտնում էր, որ հենց ժողովրդի, ազգի շահերն են պահանջում այդ մերկացումները կատարել և չի կարելի քննամական իրարամերժ ուժերի մեջ բորբոքվող պայքարը կասեցնել. այդ պայքարը բնական է և անհրաժեշտություն։ Մանդինյանը թերթի 1858 թ. № 16-ում հանգես եկավ մի նոր հոդվածով՝ ուղղված «Հյուսիսափայլ»-ի դեմ։ Նալբանդյանը ակնարկում է ահա այդ հոդվածը։

2. Մանդինյանը մի ժամանակ եղել է Նալբանդյանի քաղաքական քննամի և հալածող, Ենթանս Աշտարակեցու բարեուղարը և ակնարկը դրա մասին է։

3. Ռեակցիոներ Մանր Մանրյանը կրոնի գաղափրը կաշխելու համար Ենթանս Աշտարակեցուց ստացել էր «աստվածաբանության մագիստրոս» տիտղոսը։ Հեղինակն ակնարկում է այդ փաստը։

4. «Հանգիս նոր հայախոսության» կրիտիկայում Նալբանդյանը մերկացրել է ոճաբանական կարծիքը բնագաստության մասին։ Ակնարկը վերաբերում է գրաս (Մ. Նալբանդյան, ան[illegible], Բ հատոր, 1947 թ., էջ 143)։

5. «Կովկաս» շարաթաթերթ, հրատարակվում է 1846—47 թթ. Թիֆլիսում Հ. Կաբենյանի և Մ. Գասպանյանի խմբագրությամբ, գրաբար լեզվով։ Այս շարաթաթերթին աշխատակցել է Հալատուր Աբովյանը։

6. «Ազբարաս» — 1850—51 թթ. Թիֆլիսում՝ Գարրիել Գասպանյանի խմբագրությամբ՝ լույս տեսնող պահպանողական ուղղության՝ քաղաքական-բանասիրական և առևտրական շարաթաթերթ։ Առաջին անգամ այս շարաթաթերթում է տպագրվել Նալբանդյանը։

7. Նալբանդյանը նկատի է ունեցել «Նոր քնար Հայաստանի» ընդհանուր խորագրի տակ լույս տեսած գրքերից աշուղ Սեյրանի ժողովածուն. «Զանազան երգը, պ. Գնորոսի Տ. Յովհփնան Մադաթեանց Շամախեցւոյ Սեյրանի մատենատանէից..., Մոսկվա, 1857։

8. Նկատի ունի Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահված առասպելը Արտավազդի մահվան մասին։

9. Բանաստեղծությունը փոխադրություն է Բերանժեից, համանուն կատարված ռուսերեն թարգմանությունից։

10. Նալբանդյանի առանձին հոդվածը աշուղ Սեյրանի ժողովածուի (հնար ինար Հայաստանի» չarrarդ անտրակի) մասին լույս չի տեսել, չնայած «Հյուսիսափայլ»-ում նախապատրաստություն է տվել, քե ամսագրի համարներից մեկում հրատարակելու է այն։

11. Բնգդագե — հավարական տիպ, խավարամոլ, փոզամոլ, խարդախ և բռնավոր վաճառական։ Մեծ վարպետությամբ կատարված ընդհանրացում։

12. Ակնարկում է «Հյուսիսափայլ»-ի բաժանորդների թիվը։

13. Լոթիո — Հիլտը՝ լութերական։

14. Յարմատն — Հիլտը՝ ֆրանկմասոն, մասոնականության հետևող։

15. Գիրառաս բրամինապես — նկատի ունի ռեակցիոներ Մարգիս Հայկազյան Ջալալյանին։ Վերջինս հասցրել է, որ Գիրառաս ինքն է (Մարգիս անանունը կազմող առաձերը տեղադրված) և հետագայում կովկասյան փոխարքայի գլխավոր գրասենյակի պետին գրած գեկուցագրում դատապարտել է գրա գեմ։

16. Կոմս Լիմանուելը հորեղբայր էր անվանում «Հյուսիսափայլ»-ի գլխավոր խմբագիր Նազարյանին։ «Հորեղբորիցս ծածուկ շարագրել էի— արտահայտությամբ Նալբանդյանը բողոքում էր, որ չիրնրալ հայացքներ ունեցող խմբագիրը խանգարում է նրան ցցնրա-ազատական և բուրժուական ազգայնական հոսանքների դեմ ազատ գրելու։

Մի ուրիշ տեղ Նալբանդյանը (Կոմս Լիմանուելը) գրում էր իր ընկերոջներին. «Ինչպես վազուց հայտնել եմ ձեզ, պատվելի ընկերոջը, մի հորեղբայր ունիմ, որ միշտ օգնում է իմ բոլոր առանձնական գրվածքն անցամուտ Նալբանդյանը դանդաղվում էր, որ Նազարյանը նրա գլխին ոչ միայն խմբագիր է, այլև ցնծագոր։

17. Ներսես Աշտարակեցին Նախիջևանի դպրոցից, որտեղ սովորում էր Նալբանդյանը, վատրեց Գաբրիել Պատկանյանին և նրա փոխարեն ուսուցիչ նշանակեց իր լրտես, կաթոլիկ Մկրտիչ Տգանյանին։ Նալբանդյանը դասի ժամանակ, հրապարակորեն ցույց տվեց Տգանյանի տգիտությունը և հեռացավ դպրոցից։ Այս եղավ Նալբանդյանի առաջին ելույթը քոնակալ Աշտարակեցու դեմ։

18. «Միհին խառն, մյուսին ուտան» Նալբանդյանի առաջին վիպական գործն էր, որ տպագրվեց 1858 թվականին, բայց մեզ անհայտ պատճառներով հրապարակ չհանվեց։

19. Ե. Շահազիզի վկայությամբ իր անհայտ կորած «Մրճին խոտ, մյուսին հարտան վնտում, Նալբանդյանը նկարագրել է Նոր Նախիջևանի ս. Խաչի վանքի այս ազգությունը։

20. Ակնարկում է «Ազգասեր»-ի 1847 թ. № 60-ում տպագրված Մանեկ Բարաչանի կտակը։ Օգտագործելով այն, որ այդ կտակի գործով, Նոր-Նախիջևանի հասարակությունն իրեն պատվիրակ է ընտրել, 1860 թվականի վերջերին Նալբանդյանը մեկնեց արտասահման ուսուցչական աշխատանքներ ծավալելու համար։

21. Ակնարկում է Ն. Աշտարակեցու կողմից Թիֆլիսում հիմնադրած Ներսիսյան դպրոցը, որի մասին Նալբանդյանը բացատական կարծիք ուներ։

22. Իտալական կոմպոզիտոր Վերդիի այս օպերան շատ էր սիրում Նալբանդյանը։

23. Մովսես Խորենացու արտահայտությունն է։

24. Խորենացուն վերագրվող այս անունով աշխատություն չի հայտնաբերվել։

25. Ակնարկում է, որ Նազարյանցը («Հորեղբայրը») խանգարում է իրեն բուրժուազիայի ներկայացուցիչների դեմ ելույթ պատրաստելու։

26. Սարգիս Վանանդեցու «Արիստակնես ոզբերգությունը»։

27. «Մասյաց ազավնի» — կղերական ռեակցիոն հանդես, հրատարակվում էր սկզբում Փարիզում (1855—58)՝ Հալածեն և Ֆրանսերեն, ապա Թեոդոսիայում (1858—65)՝ Հայերեն և ռուսերեն։ Խմբագրում էր ցարական լրտես, ռեակցիոներ Գաբրիել Այվազովսկին։

28. Տե՛ս առաջին ծանոթագրությունը։

29. «Ճռաքաղ»-ը Մանր Մանրյանցի գեղամարությամբ գլխակցում էր Գաբրիել Այվազովսկուն՝ Նալբանդյանի և «Հյուսիսափայլ»-ի դեմ մղած կռվում։

30. Անգլո-ֆրանսերական գործակալ, կռվկատյան ժողովուրդների և Թուրքաստանի ջնջումի, 19-րդ դարի 30—50-ական ԹԹ. ռեակցիոն շարժման՝ մյուրիդիզմի պարագլուխ Իմամ Շամիլի անունը Նալբանդյանն օգտագործել է Գաբրիել Լպխոպոս Այվազովսկուն բնութագրելու համար։ 1859 թ. մարտի 31-ին Գր. Մալխիկյանին գրած նամակում Նալբանդյանը ասում է. «Հիշատակարանն իմ հարկն կարդացել, ինչ ասրոն] Շամիլը յուր հալիլ Նալիբին մին հազոց ասեր (Մ. Նալբանդյան, «Երկեր», Գ հատոր, 1949 թ., էջ 61)։ Հալիլ Նալիբի անվան տակ Նալբանդյանը նկատի ուներ Այվազովսկու գլխակից՝ Նոր-Նախիջևանի հասարակությանը հարստահարող Հարություն տեր Նալիբյանին։

Գեղարվեստական փայլուն պատկերի միջոցով Նալբանդյանը առաջադրել է Շամիլի գնահատման իր կոնցեպցիան։ Նալբանդյանը Շամիլի մեջ տեսել է կատաղի բռնապետին և հասարակ ժողովրդի ազատության մոլեռանդ թշնամուն։ Նալբանդյանի նկարագրած Շամիլն իր նալիքների շրջապատում ասում է. «Ազատությունը ստեղծել է ամենած միմիայն հզոր մարդերի համար. մյուս անզոր մարդիկ զրկված են նրանից։ Ով այդ է պատճառը, որ մինները տիրողք են, իշխող և հրամայող, իսկ մյուսները ծառա, ստրուկ և հրամանակատար։ Ամենայն գործոցությունն հասարակ և անզոր մարդերի կողմից ազատությամբ հառաչացուցած, մենք համաչում ենք ազատամբությունն, իսկ ազատամբությունը — պատժի արժանի հանցանք»։

Շամիլի նպատակը ոչ թե հասարակ ժողովրդի ազատությունն է, այլ այդ ժողովրդի վրա իր բռնակալական իշխանության հաստատումը։

Այվազովմանն համեմատելով Շամիլի հետ Նալբանդյանը մերկացրել է հայ ժողովրդի թշնամուն, իսկ Շամիլին համեմատելով Այվազովմու հետ՝ դիմակազերծ է արել լեռնական գնպատրին ու խավարապաշտին։

Հետևելով պատմական գրականության սխալ տոպիկներին, Նալբանդյանի երկերի սովետական հրատարակությունների ծանոթագրողները մեր պայծառ դեմոկրատին մեղադրել են Շամիլին սխալ գնահատելու մեջ։

31. «Արմենուհի» — լիբերալ հայ պարբերական, որ 1859—1865 թթ. (որոշ ընդհատումներով) լույս էր տեսնում Փարիզում, Մոսկվան Ոսկանի խմբագրությամբ։ Նալբանդյանը քաջալերել է «Արմենուհի»-ին բռնած բացասական դիրքը Այվազովսկու նկատմամբ։

32. Ակնարկում է Մարգիս Ջալալյանի «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան» աշխատության երկրորդ հատորը։

33. «Ուտումեանական ազգայինն»-ի ով լինելը չի պարզված։

34. Գալֆայանները «Հյուսիսային Հայաստանի» անունով պարբերական չեն հրատարակել։

35. Այդ ժամանակներում, ինչպես պատմում է «Արևելքը»-ի աշխատակիցը (1855 թ., էջ 227), Լոմբոում պահվում էր Տրդատ թագավորի արձանը։ Հավանորեն հենց այդ արձանն էլ տեսել է Նալբանդյանը։

36. Ակնարկը վերաբերում է Նապոլեոն Բոնապարտին։

37. Ապերախտ բռնակալը Լուի Բոնապարտն է։

38. «Համարիկի գանգատանքը» հավանորեն Նալբանդյանը չի քարգմանել։ Ուրիշ հիշատակում չկա այդ առիթով։

39. Բոռնակ Կրճոիկյանը Փարիզում տպարանատեր Ճանիկ Արամյանի գրական ծածկանունն էր։

40. Հավանաբար այս բանաստեղծությունը գրել է Նալբանդյանն ինքը։

41. Տիրատուրյան Մեսրոպ — Նալբանդյանի ծածկանուններից մեկը։

42. Տես «Մեղու Հայաստանի», 1860, № 13։

43. Խուդաբաշևի հիշյալ ուսանքն աշխատությունը լույս է տեսել 1859 թ. Պետերբուրգում։

44. Նալբանդյանը չորրորդ կետում բողոքում է, որ «Հյուսիսափայլ»-ի կենդանի կապը բուն երկրի՝ հայ իրականության հետ քույլ է։ Նա ինքը ամեն ինչ կատարում էր ամսագիրը ժողովրդի կյանքին մոտեցնելու համար, սակայն խանգարում էին մի կողմից գաղտնի ցենզուրան, մյուս կողմից հասարակ ժողովրդի հոգածերից հետու կանգնած գլխավոր խմբագիրը։ Նալբանդյանը չէր համաձայնում գավառներից ուղարկված նյութերը գեղեցիկ ամսագրում, պատճառաբանելով, որ այդ նյութերից շատերի մեջ «բանախոսությունը ցուցանում էր ամենևին մերկանգամ էշմարտությունն (Հյուսիսափայլ» 1859, № 7, էջ 568)։ Այդ մերկանգամ էշմարտությունը հաճախ չէր լինում նաև մեծ բարդությունների, այնինչ Նալբանդյանը բորբոքված ուզում էր ժողովրդի կյանքի՝ հասարակական նշանակություն ունեցող էշմարտության փաստերը՝ ժողովրդի թշնա-

մինչեւին մերկացնելու համար։ Այդ հողի վրա Նալբանդյանն ընդհարվում էր Նազարյանի հետ։

45. Նալբանդյանը 1853 թ. ծանոթացել է Մա. Նազարյանին և այսուհետ հավիտենին նկատի ունի նրան։

46. Չի պարզվել, թե ով է այդ տգղերգուն։

47. Նազարյանի դեմ գրած Հ. Չերքեզյանի՝ «Հերքումն կարծեաց այնոցին, որ բարձում են, թե պետք է վերանորոգության (ռեֆորմ) առնել Հայաստանյաց նկենգության» վերնագրով հոդվածը լույս տեսավ «Ճռաթաղթ»-ի 1860 թ. 9-րդ տետրակում, և հետո առանձին գրքով։

48. Նգր Փառամեռակերտցի կաթողիկոսը 632 թ. Կարնո ժողովում, քաղաքական նկատառումներով ուխտադրուժ եղհանելից հայոց նկնգելու դիրքերից և քեզուսնելով Հերակլ Բագրատունի հավատո գիրը, ընդունեց Քաղկեդոնի ժողովը։ Դրանից հետո գավառաձան կաթողիկոսի անվան առաջին տառը հայերը գլխիվայր էին գրում, այս ձևով արտահայտելով իրենց ատելությունը նրա նկատմամբ։

49. Նալբանդյանի ծածկանուններից մեկը «Հիշատակարան»-ում։

50. Սկայորդի — Ջարմայր Մսերյանի ծածկանունը։ Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1860, № 12, 14։

ՀԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅԻ

Էվժեն Մյուլի «Թափառական հրեա» վեպի թարգմանությունը Մ. Նալբանդյանի կողմից օրգանապես կապված է այն պայքարի հետ, որ 19-րդ դարի 60-ական թվականներին մղում էր հայ ժողովուրդը վատիկանի կողմից հրահրվող կաթոլիկական պրոպագանդայի դեմ։ Այդ պրոպագանդայի նպատակն էր գավանափոխ անելով հայ ժողովրդի մի մասին՝ չլսուկ նրա ուժերը, հարվածել հայ ժողովրդի ազատական և ազգային-ազատագրական պայքարին և գավանափոխ հայերին դարձնել ֆրանսիական գաղութարարների հենարանը Թյուրքիայում։ Մ. Նալբանդյանը թարգմանելով «Թափառական հրեան», նրան կցելով «Հիսուսյանց» վերնագրով ընդարձակ հոդվածը, նպատակ ուներ ցույց տալ Քրիստոսի ավետարանի անունից խոսող եզվիտներին անցյալ և ներկա բոլոր անբարոյությունները, գազանություններն, ցույց տալ, որ կրոնական և գավանաբանական պրոպագանդայի բուն սակ եզվիտական միաբանությունը ներազանցապես կատարում էր բաղաքական բայբայիչ աշխատանք։

Առաջին անգամ տպագրվել է՝ «Արեւմուտք», 1859 թ., № № 21 և 22։

Տպագրվում է «Թափառական հրեա»-ին կցված տեքստը։

1. Նկատի ունի Մխիթարյան Միաբանության անգամ Ղուկաս Ինջիջյանի (1742—1830) «Ուսումնասիրություն նավուզոդոնոսորյան» աշխատությունը, որ լույս է տեսել Վենետիկում, 1809 թվականին։

2. Նկատի ունի այն մարդկանց, որոնք հայ պատմագիրների աշխատությունները կարդում էին ուսերեն կամ ֆրանսերեն լեզուներով։ Այդ թվականներին ուսերեն թարգմանված էր Մ. Խորենացու «Հայոց պատմությունը» Մ. Էմինի կողմից։

ԿՐԻՏԻԿ ՀԱՆԴԵՍ ՆՈՐ ՀԱՅԱԲՈՍՈՒԹՅԱՆ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1858 թ., № 1, Մ. Նալբանդյանց ստորագրությամբ։ Հետագայում, 1903 թ. տպագրվել է Նալբանդյանի երկերի ռուսերեն հրատարակության 2-րդ հատորում և 1947 թվականին՝ Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի Բ հատորում։ Հիմք ենք ընդունել Նալբանդյանի «Ընտիր»-ի Բ հատորի տեքստը։

1. Մ. Նալբանդյանի «Մինչեն խոսր, մյուսին հարաշ աշխատությունը, որից մեջբերում է կատարված այստեղ, ինչպես երևում է հենց Մ. Նալբանդյանի վկայությունից, լույս տեսած պետք է լինի 1858 թվականին։

2. Ակնարկված «խոլատիկները, որոնք իր ժամանակ շատ հեշտ հասկացվել են, այժմ դժվար է պարզել, քանի որքեր են նրանք կարելի է միայն ենթադրել, որ Մոսկվայի «խոլատիկը նրանք Մանր Մասրյանցը, որ այն ժամանակ դասախոս էր Լազարյան ճեմարանում։ Մ. Նալբանդյանի նկատմամբ Բ հատորի թանոթագրության մեջ ենթադրվում է, որ Բիֆլիսի «խոլատիկը Հակոբ Կարինյանն էր։ Այդ պարզ թյուրիմացություն է, նախ՝ քանի Հ. Կարինյանը նրանք էզգայական հայր և դժվար թե «խոլատիկներից մեկը լինելով զգայական, մյուս «խոլատիկը ծագրեր հանձնարարի հատկապես այդ հատկանիշը։ Ավելին, անհավանական չէ, որ Հ. Կարինյանը հենց այն զգայական հայրն է, որի դիմորը քննադատում են նրանք «խոլատիկները։ Այդ փաստը ավելի ևս հավանական է դառնում, երբ նկատի ունենանք, որ 1841-ական թվականներին իրոք որ Մոսկվայում լույս է տեսել Հ. Կարինյանի «Ընդհանրագրությունները», որ պատրաստվել է Բիֆլիսում, քանի որ նրա հեղինակը ապրելիս է նրանք այստեղ։ Հ. Կարինյանի պահպանողական, մի «խոլատիկ լինելը չի փոխում բանի էությունը։ Նալբանդյանը քննադատելով «խոլատիկներին, ամենևին պատրապանական խոսր չի տալիս քննադատվողի մասին։ Նրան տվյալ դեպքում հետաքրքրել է բանավեճի անկեղծությունը, անձնական խոչընդոտների վրա հիմնված լինելը. այն, որ կրիտիկան նրանք դարձրել են «րամբասանք և նախատինք»։

3. «Հյուսիսափայլ»-ի 1858 թ. № № 5, 6 և 11-ում լույս տեսավ Մ. Նալբանդյանի «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» հոդվածաշարրը, որտեղ խոսվում է այդ հարցերի մասին (տե՛ս Մ. Նալբանդյան, Երկ-ի Բ հատոր, էջ 185—231)։

4. Ստ. Նազարյանցի վերոհիշյալ երկու աշխատություններն էլ լույս են տեսել Մոսկվայում, 1853 թվականին։

5. Մեջբերումը կատարված է Ստ. Նազարյանցի «Հանդես նոր հայախոսության դրրի և հատորի առաջարանից։

6. Մ. Նալբանդյանը երկրորդ հատորի մասին չի գրել։

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1858 թ., № 10, Մ. Նալբանդյանց ստորագրությամբ, ապա արտատպվել է Մ. Նալբանդյանի երկերի ռուսատյան հրատարակության Բ հատորում և Երկ-ի Բ հատորում։

Տպագրում ենք «Հյուսիսափայլ»-ում լույս տեսած տեքստը։

ՀՐԱՇԱՓԱՌ ԵԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին անգամ տպագրվել է՝ Հ. Սվաճյանի «Մեղու», 1860 թ., գնկ. 10, Մ. Շահրիք ստորագրությամբ։ Նալբանդյանի այս ստեղծական գործը ակնիզ դրել էր այն բուռն պայքարին, որ մղվեց Կ. Պոլսի պրոգրեսիվ և ռեակցիոն մամուլի միջև։ Պայքարը մղվում էր Հ. Սվաճյանի խմբագրությամբ լույս տեսնող դեմոկրատական «Մեղու» պարբերականի և ռեակցիայի կենտրոն հանդիսացող Հ. Չամուռճյանի «Երևակ»-ի ու նրան ձայնակցող «Արևելյան պարե»-ի միջև։

«Հրաշափառ խայտառակությանն» լույս ընծայումից հետո Չամուռճյանը դրան պատասխանեց «Խայտառակությանն քննության» հոդվածով, որը նախ լույս տեսավ «Երևակ»-ի 1861 թ. հունվարի 16-ի համարում, ապա՝ արտատպվեց «Մեղու»-ի 1861 թ. № 123-ում, Չամուռճյանի խնդրանքով։

1. Տոպատակի բերված այս մեջբերումը Նալբանդյանը վերցրել է «Ծերակոյ»-ի 1860 թ. հուլիսի 1-ի համարում տպված «Լազագույցը պատմությանց» հոդվածից, որի մեջ Ջամուռճյանը փորձում էր հիմնավորել գների գոյությունը։

2. Այս հատվածը գրված է հայոց նկնգնցու «Հավատաս Հանգանակից» նամանուշությամբ։

3. Ըստ երևույթին Ջամուռճյանի «Ծերակոյ»-ի հուլիսի 1-ի համարը լույս է տեսել նոյեմբերի 1-ին, մեծ ուշացումով, որը սովորական էր այդ պարբերականի համար։

ՆԱՄԱԿ «ՄԵՂՈՒՆ»-Ի ԽՄԲԱԳՐԻՆ

«Հրապարակախոսական ժառանգության ամենափայլուն էջերից մեկը կազմող այս նամակը գրված է անմիջապես Հ. Սվաճյանի առաջարկով։ Նա, «Հրապարակախոսություն» հոդվածի թողած տպավորությունից խանգավառված, ցանկանում է, որ Նալբանդյանը հանդես գա և իր հեղինակավոր խոսքը ասի այդ օրերին հայ հասարակությանը հուզող մի շատ կարևոր հարցի մասին, այն մասին, թե հայ հոգևորականությունը իրավունք ունի՞ անպատիժ սանձարձակություններ գործելու և հայերի չարաչար ժողովրդին, ինչպես այդ կատարել էր չարաչարած Գողթա վարգապետը Վանում, որի ոճրագործությունները խնամքով թաքցվում էին Կ. Գոլսի պատրիարքարանի կողմից։

Մ. Նալբանդյանը առիթ գտնելով վերահիշյալ փաստը, իր խոսքն ասից ոչ միայն այդ հարցի մասին, այլև առհասարակ համարձակորեն հրապարակ բարձց մի շարք խնդիրներ, որոնք նորություն էին պետական պայմաններում։ Նա ոգևորելով հասարակությանը հուզող հարցերը հրապարակով քննարկելու և լուծում տալու վերաբերյալ, «Մեղուն»-ի նախաձեռնությունը, առաջ բարձց այդ հարցերի լուծմանը մոտենալու, նկնգնցու ինքնիշխան կամայականություններին վերջ տալու խնդիրը, բարձրացնելով նաև ազգային անհավասարության հարցը, անդադար պայքար մղելով շահագործողների դեմ։

Հարցերի շատ համարձակ առաջ բարձումը, համոզիչ և կուռ արտահայտությունը, որ նկատվում էր անգամ Ջամուռճյանը («լավ կտրամաբանես»), ռեակցիայի նկատմամբ բռնած վճռական ու անհաշտ դիրքը, Մ. Նալբանդյանի նամակը գարձնում են մի հրահանգ-պատգամ Կ. Գոլսի դեմոկրատական ինտելիգենցիայի համար, որն սկսում է այն օգտագործել և՛ մամուլում, և՛ իր պրակտիկ գործունեության մեջ։

«Ծերակոյ»-ում Ջամուռճյանը փորձում է պատասխանել Նալբանդյանին և 1860 թ. օգոստոսի համարում տպում է «Նալբանդյանի մեկ նամակի վրա» հոդվածը, որտեղ ճգնում է Նալբանդյանի գաղափարները համարել «Ուստա Հակոբավոր անհավատ հեղինակի ազգեցությամբ գրված» և որ Նալբանդյանի քարոզածը «Ծագիկ և նորը բոլոր Մխոցա ասին ի վրա բնազ ասոխյանների կամ կարմիր հատարակագնականներուն գրություններն էր։

Տպագրվում է «Մեղուն»-ում լույս տեսած տեքստը։

1. Նկատի ունի այն փաստը, որ «Մեղուն»-ն առաջինը համարձակվեց «Վանցի Գողթա եպրայրը» հոդվածով («Մեղուն», 1860, № 118) հրապարակ հանել այդ հարցը և խստորեն դատապարտել հոգևորական իշխանությունների։

2. Մեյրնրումը կատարված է Մաշտոցի «Ձեռնագրություն արծաթյիս գլխից»։

3. «Մեղուշ»-ում խորատավիյակ (ըղթագող) բառը տառասխալով տպվել էր խրտվիլակ՝ որը օգտագործել է Չամուռճյանը Նալբանդյանի դեմ գրած հոդվածում։ Նկատի ունենալով, որ Նալբանդյանը իր «Երկու տող»-ի ծանոթագրության մեջ անգրագետում է դրան և այն համարում սովորական տառասխալի արդյունք, մենք տեքստի մեջ վերականգնել ենք ճիշտ ձևը՝ խորատավիյակ։

4. Ցիտատը վերցված է գործյալ Մաշտոցից։

5. Խոսքը Գողտի մասին է։ Նալբանդյանը Մոզես ձևը գործածելով, ցանկացել է նրան ներկայացնել որպես ուրացող։

6. Ցիտատը վերցված է Ամենատանից։

ԵՐԿՈՒ ՏՈՂ

Նալբանդյանը «Երկու տող» պամֆլետը տպագրել է Փարիզում, Ճ. Արամյանի տպարանում, 1861 թ. մարտ ապրիլ ամիսներին և գրքից 300 օրինակ ուղարկել է Կ. Գոլխա։

«Երկու տող»-ը հայ ռևոլյուցիոն-դեմոկրատական հրապարակախոսության ամենափայլուն արտահայտություններից մեկն է, որտեղ հեղինակը հանդես է գալիս իրբև աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանը։

«Երկու տող»-ը գրելով, Մ. Նալբանդյանի նպատակը չի եղել պատասխանել Չամուռճյանի վերոհիշյալ հոդվածին, որը ոչ մի տպավորություն չէր թողել ինտելիգենցիայի վրա, այլ այդ առիթով հրապարակել իր բազմակողմանի ծրագիրը։

Պահպանողական մամուլից պարզվում է, որ նախքան «Երկու տող»-ի ստացվելը Գոլտում, թե՛ պրոգրեսիվ ինտելիգենցիան և թե՛ պահպանողական տարրերը գիտեին, որ Նալբանդյանը նման մի գիրք է պատրաստում։

Թե որքան մեծ է եղել Նալբանդյանի դատափարձերով ոգևորված մարդկանց թիվը, երևում է այն փաստից, որ «Երկու տող»-ի ստացված 300 օրինակը խանութ տպավում է և մեկօրյա հարկադրված է լինում՝ ընթերցողների պահանջը բավարարելու համար գիրքը մաս-մաս արտատպել «Մեղուշ»-ի էջերում։

Կ. Գոլխի գեմոկրատական խավերի այդ չնչին ընդունելությունը գազազեցնում է ունակների տարրերին։ «Աբեթյան գարշ-ը քուռնա տողերով է իր ընթերցողներին խոցում «հենթանասական», «սատրատրոսական» այդ գրքի հրապարակ գալը և պահանջում է էջմիածնի սինոդից ու Կ. Գոլխի պատրիարքարանից միջոցներ ձեռք առնել։

Տպագրվում է 1861 թ. հրատարակության տեքստը։

1. 1861 թ. հրատարակության մեջ տպված Այվազյան անունը «Երկու տող»-ի հետագա բոլոր հրատարակություններում սխալմամբ տպված է Այվազյան և ծանոթագրություններին մեջ էլ այն ներկայացված է որպես Աբրահամ Այվազյան, մինչդեռ խոսքը Մարինոս Այվազյանի մասին է, որն այդ օրերին «Մեղուշ»-ում տպված հոդվածներով հանդես է եկել Նալբանդյանի պաշտպանությամբ, ենթարկվելով Չամուռճյանի հարձակումներին։

2. Ակնարկում է Խորեն Նարբեյին։

3. Ակնարկում է «Մեղուշ»-ի խմբագրին ուղղած վերոհիշյալ նամակը։

4. Ըստ բիբլիական ավանդության Մովսես մարգարեն Սինա լեռան գագաթին ստացավ տախտակներ, որոնց վրա գրված էին Իսրայելացիների դեմավարման առանցքային պատվիրանները։

5. Դամիեթիացիների կրոնական կարգը հիմնվել է միջնադարում Դամիեթիոսի (1170—1221) գլխավորությամբ։

6. Ակնարկում է հայ եզիդիանների։

7. Բոաֆորի ասիական ափամերձ մասամաս, ուր տպրում էր Չամուռճյանը։

8. Ըստ բրիստոնեական ավանդության Հրեաստանի թագավոր Հերովդեսի կինը՝

պահանջեց կարել Հովհ. Մկրտչի գլուխը և նրա ցանկությունը կատարվեց։ Գրականության մեջ հիշատակվում է որպես գաժան ու արյունարբու կնոջ սիմվոլ։

9. Խոսքը Երուսաղեմի ս. Հակոբ վանքի հայկական միաբանության մասին է, որը հիմնվել է 14-րդ դարում և դարեր շարունակ օտարազորձելով հավատացյալների կրոնական ջերմեռանդությունը, շահագործել է նրան, բազմաթիվ կտակներով մեծացրել իր կալվածները և արդյունքով պահել մի ամբողջ խումբ ձրիակեր վարդապետներ։ 60-ական թվականներին Երուսաղեմի միաբանությունը՝ ցանկանալով պահել իր ինքնուրույնությունը, դեմ գուրս եկավ այսպես կոչված «Ազգային սահմանադրությանը», որը պահանջում էր Երուսաղեմի նոր պատրիարք ընտրել ոչ այդ միաբանությունից։

10. «Փարիզը» շարաթաթերթը լույս է տեսել 1860—1863 թվականներին, Փարիզում, Աբրահամ Մուրադյանի խմբագրությամբ, ունեցել է լիրնրալ ուղղություն. մի շարք առիթներով նպաստավոր տողեր է գրել Նալբանդյանի մասին, իսկ 1861 թվականին մասամբ պաշտպանում էր «Մեղու»-ի գիրքերը։

11. Նալբանդյանի ակնարկած տպարանը ամենևին հավանականությամբ չի գործել, այլապես գոնե «Երկրագործությունը որպես ուղիղ Հանապարհ» գիրքը կամ մի որևէ այլ աշխատություն կտպագրվեր այնտեղ։

12. «Հյուսիսափայլ»-ի 1860 թ. № 10-ում տպվել էր Մա. Նազարյանցի «Մենեկլեան, Հնսինգ, Հավատներ» հոդվածը, որտեղ խոսվում էր Կ. Պոլսում տնչի ունեցող վնճերի մասին և պահանջվում էր հայ նկնդեցու ունեցվածքի նայրանդյանը ակնարկում է այդ հոդվածը։

13. Գ. Այվազովսկին եղել է «Մասյաց աղավնի»-ի ոչ միայն խմբագիրը, այլև ցնդողը, դրա համար էլ նրա երկերը տպվել են առանց ցենզորական բննության։

14. 1848 թ. երբ Գ. Այվազովսկին Մխիթարյան Միաբանության անդամ էր, նշանակվում է Փարիզի Մուրադյան վարժարանի տնչի օգնական։ Նա, ցանկանալով գրավել տնչի պաշտոնը, սկսում է Մարգիս Թեոդորյանի մասին վարկաբեկող գազանի նամակներ գրել Մխիթարյան միաբանության արրահորը, որը և հեռացնում է Մարգիս Թեոդորյանին և Այվազովսկուն նշանակում տեսուչ։ Երբ Այվազովսկին հետևում է Միաբանությունից, վերջինս ցանկանալով երևան հանել Այվազովսկու բարոյական կերպարանքը, հրապարակ է հանում հիշյալ նամակները։

15. Ակնարկում է Ս. Թեոդորյանի, Գ. Այվազովսկու և Ա. Գալֆայանի համատեղ հրատարակած հայտարարությունը մխիթարյանների դեմ։

16. Այվազովսկու «Օսմանյան պատմությունը», բազկացած երկու հատորից, լույս է տեսել Վենետիկում, 1841 թվականին։

17. Այդ կանոնները լույս են տեսել «Մասյաց աղավնի» պարբերականի 1856 թ. № 10-ում «Արևելյան վարժարանի բարեկարգման հիմունքը» վերնագրով։

18. «Հոգևոր վարժություններ» Իգնատիոս Լոյոլայի գիրքն է, որտեղ շարադրված գաղափարներով են առաջնորդվել եզվիտները։

ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ ԳՈՒՍԻ ՄԵՋ

Առաջին անգամ տպագրվել է՝ «Մեղու», 1861 թ., դեկտեմբերի 20, Մ. Նալբանդյանց առարկությամբ։ Նալբանդյանը այն նախօրոք կարդացել է «Արևելյան Թատրոնի» առաջին ներկայացման օրը։ Ինչպես երևում է՝ գա առվորական ավուր պատշաճի մի հատ չէ, ինչպրված օրվա հանդիսավոր հանդամանքներով։ Նալբանդյանը, որ գոլիա կատարած իր երկու այցելություններն բնթացքում մոտիկից գրազվել է հասարակական կազմակերպությունների, միությունների աշխատանքով, չէր կարող աչքաթող անել այնպիսի մի կարևոր բնագավառ, ինչպիսին Թատրոնն էր, որը, ինչպես ինքն է ասում, մի ուսումնական ամբոխ էր և լավագույն միջոց՝ հասարակությանը գաստիարակելու

համար։ Նալբանդյանի կապերը շատ ավելի սերտ են եղել ժևրևնյան թատրոնի զնգվարության ու ստեղծագործական կոլեկտիվի հետ, քան կարծվում էր առաջ և անհավանական չէ, որ զանազան սիրողների կողմից բեմ հանված պատահական ներկայացումներից հետո, Պոլսում պրոֆեսիոնալ մի թատերախմբի կազմակերպման նախաձեռնությունը անխզելիորեն կապված է Մ. Նալբանդյանի հետ։

Տպագրվում է «Մեղու»-ում չույա տեսած տեքստը։

ՊՈԼՍԱՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Գրվել է 1861 թվականին։

Տպագրվում է «Ծիլք»-ում չույա տեսած տեքստաք։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը Նալբանդյանը գրել է 1862 թվականին, Լոնդոնում և Փարիզում։ Տպագրվել է նույն թվականի մայիսին, Փարիզում, Սիմեոն Մանիկյան տառագրությամբ։

Հրատարակությունից անմիջապես հետո այն անլռելի կերպով մուտք է գործել և՛ Ռուսաստան և՛ Թուրքիա, անցել է ձեռքից ձեռք, արտագրվել է և տարիների ընթացքում մեծ ազդեցություն է թողել պրոգրեսիվ ինտելիգենցիայի վրա։

«Երկրագործությունը» առաջին անգամ Ռուսաստանում տպագրվում է 1906 թվականին, Մ. Նալբանդյանի երկերի ռոստովյան հրատարակության Բ հատորում, շենգուրական մեծ կրճատումներով, որոնք ըստ էության աղավաղում և աղճատում են նրա ունկլուցիոն բովանդակությունը։ Դրանից հետո աղճատված ձևով լույս է տեսնում նաև արտասահմանում։

«Երկրագործության» ամբողջական տեքստը տպագրվեց միայն սովետական տարիներին, նախ 1929 թ., Մ. Նալբանդյանի ծննդյան հարյուրամյակի առիթով, և ապա՝ 1940 թվականին, Մ. Նալբանդյանի Նկ-ի Գ հատորում։ Նկատի ունենալով, որ վերջին երկու հրատարակությունները պարունակում են նկատելի վրիպակներ, մենք սույն հրատարակության համար հիմք ենք ընդունել հեղինակի կողմից նայված՝ 1862 թվականի առաջին հրատարակության տեքստը։

1. Մեքենագրված է Ն. Գ. Օգարյովի «Что нужно народу» հոդվածից։ Տե՛ս՝ А. И. Герцен. Полн. соб. соч. и писем», под ред. М. К. Лемке. т. XI. 1919. стр. 138.

2. Դիալոգներով տրված վերոհիշյալ ամբողջ խոսակցությամբ Մ. Նալբանդյանը սուր ծաղրի է ենթարկել 1848 թ. փետրվար ամսին Ֆրանսիայում կատարված ռևոլյուցիան, երբ բուրժուազիան, ժողովրդի անունից հանդես գալով, նրա ջանքերով ռևոլյուցիա կատարելով, ոչինչ չավեց նրան, գարձյալ նրան թողեց հոզագործի և աղքատ վիճակում։

3. «Սնափականությունը գողություն է» արտահայտությունը վերցված է Պրուդոնի «Սնափականություն» աշխատությունից։

4. Ակնարկում է Նապոլեոն Բոնապարտին։

5. Ակներև էր կոչվում Ղրիմի համպանիան (1853—1856)։

6. Տվերի նահանգի ազնվականների այս ուղերձը լույս է տեսնել «Колокол»-ում, 1862 թ. մարտի 22-ին (№126)։

7. Ուղերձին կցված այս հատվածը, որի համար Նալբանդյանը որպես հեղինակ նշում է իր արևմտահայ բարեկամներից մեկին, ամենայն հավանականությամբ գրել է ինքը՝ Մ. Նալբանդյանը՝ արևմտահայ բարբառով, զգուշության համար։

8. Մ. Նալբանդյանը երիտասարդ անդամ արտասահման էր ուղևորվում այն օրերին, երբ մի բանի ամիս առաջ, «Ռուսկոյե»-ի 1860 թ. մարտի 1-ի համարում լույս էր տեսել «Ռուս մարդուն» նամակը, որտեղ Հարավսլավական կարգերի վերացման համար մեկ ուղի առաջադրված էր ռևոլյուցիայի ուղին, կացնին դիմելու ուղին։ Մեզ, մեր գրությունը ապստամբելի է, անտանելի, և միայն կացինը կարող է մեզ ազատել և, կացնից բացի, ոչինչ մեզ չի օգնիր, ասված էր այնտեղ։ «Երկրագործությանս մեջ անդրադառնալով այդ կնճռոտ հարցին, Նալբանդյանը կանգնում է Չերնիշևսկու նույն այդ ռևոլյուցիոն դիրքերի վրա և գտնում, որ գյուղացին, առանց հույս դնելու ցարի վրա, ինքը պետք է վճռե «Հողերի» հարցը, այսինքն անտանելի խնդիրը, դիմելով կացնի ճանապարհին։ «Երկրագործությանս» այն բոլոր հատվածները, որոնք վերաբերում են այդ հարցին, հանգիստանում են այդ անտանելիի լավագույն հիմնավորումը։

9. Ըստ հունական առասպելի Դանայի թագավորի 50 աղջիկները իրենց ամուսիններին սպանած լինելու պատճառով դժոխքում գտատպարտվել էին անհատակ մի տակառ մեջ ջուր լցնելու պատժին։ Դրականության մեջ այդ արտահայտությամբ ակնարկվում է ապարդյուն աշխատանք։

10. Մեջբերումը կատարված է Ավետարանից։

11. Մեջբերումը կատարված է Մ. Խորենացուց։ Տե՛ս Մ. Խորենացի, դիրք Ա, գլ. Ը։

12. Մեջբերումը կատարված է Առակագրքից։

13. Ավստրիայի ամենաանգթորեն պետական գործիչներից Կլեմենս-Վենցել Մետերնիխի (1773—1859) խոսքերն են։

14. Նալբանդյանի այս արտահայտությունից չպետք է եզրակացնել, թե նա դեմ է եղել Հայաստանի միացմանը Ռուսաստանին։ Նալբանդյանը քննադատել է ցարական բռնապետությանը, որը ինչպես հայ, այնպես էլ ռուս և այլ ժողովուրդների ընչաքաղցն էր։ Նալբանդյանը ինքնակալական կարգերի նկատմամբ նույն վերաբերմունքն ուներ, ինչ որ ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատներ Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը և մյուսները։

15. Մեջբերումը կատարված է Ավետարանից։

16. Հունական դիցաբանությունից՝ Ուրանոսի որդիների ապստամբությանը վերաբերող այս հատվածը և քսան իմաստի և չեզոքական տեսակետից ազատվածված է ապադրվել բոլոր հրատարակություններում և դժվար է վերականգնել իսկականը։

17. Մեջբերումը կատարված է Ավետարանից։

ԿՐՏԻԿԱԿ «ՍՈՍ ԵՎ ՎԱՐԴԻԹԵՐԻ»

«Սոս և Վարդիթերը» կրիտիկայի համառոտ վարիանտը լույս է տեսել 1890 թ. «Հանդես գրականական և պատմականը» № 3-ում։ Սույն քննարկական վարիանտը երկար ժամանակ համարվում էր կորած։ Միայն սովետական տարիներին հնարավոր եղավ այն հայտնաբերել Նալբանդյանի անհատական ցուցմունքներին վերաբերող նյութերի հետ միասին։

Տպագրում ենք «Սոս և Վարդիթերը» կրիտիկայի քննարկական վարիանտը՝ հիմք ընդունելով «Նվիժը» ամսագրի՝ Ձեռագրի հետ համեմատությամբ ուղղելով որոշ ազատվածներ։

1. Ժամանակակիցներից մեկի վկայությամբ Մ. Նալբանդյանը Կ. Պոլիս այցելելիս հյուրընկալվել է Օտյաններին տանը։ Այդ ընտանիքին Օտյաններին գերազանցեց հայտնի գեմը էր Գր. Օտյանը, որը աշխատակցում էր նաև «Մեղու»-ին գրելով լրերով ուղղությամբ հոդվածներ։ Կա նաև վկայություն, որ Նալբանդյանը անձամբ ծանոթ է եղել Գր. Օտյանին։ Նալբանդյանը իր սույն կարևոր աշխատությունը նվիրել է Գր. Օտյանի եղբոր՝ Հակիկ Օտյանին (Երվանդ Օտյանի հայրը)։ Հակիկ Օտյանը գրական-

նուիրյամբ չի գրաղվել։ Թե ինչու է Նալբանդյանը նրան նվիրել այս աշխատությունը, մեզ հայտնի չէ։

2. Ակնարկում է Մ. Էմինի ժվնպը հնուկն Հայաստանի» ուսումնասիրությունը, որը լույս է տեսել 1850 թ. Մոսկվայում։

3. Ակնարկում է Ղ. Ալիշանի «Երգք նահապետի» աշխարհաբար բանաստեղծությունների շարքը, որը լույս է տեսել Ալիշանի «Նուագք բանաստեղծությունների հինգ հատորանոց ժողովածուի Գ. հատորում։

4. Նալբանդյանի հիշատակած «Ազգապի» վիպը, լույս է տեսել հարյուր տարի առաջ, 1851 թվականին, Կ. Պոլսում և ամբողջ մեկ դար մնացել է անհայտության մեջ։ Միայն վերջին տարիներս, երբ լույս տեսավ Նալբանդյանի «Երիտիկան» մեծ հետաքրքրություն առաջացավ այդ վիպի նկատմամբ։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտին հաջողվեց ձեռք բերել այժմ հազվագյուտ այդ վիպի ֆոտոպատճենը, թարգմանել և պատրաստել տպագրության։ Վիպը լույս կտեսնի ընդարձակ առթում։ Նալբանդյանի հիացմունքը այս վիպի նկատմամբ պետք է բացատրել նրա մի շարք գլուխների ռեալիստական նկարագրություններով և գաղափարական շեշտակի եզրատակայացությամբ, որի հիմքում ընկած է պայքարը հայ իրականության մեջ բարքաշիշ աշխատանք կատարող կաթոլիկ գործակալների դեմ։ «Վերք Հայաստանի»-ի հետ համեմատությունը ըստ երևույթին կատարված է պարզապես նկատի ունենալով այդ երկի վիպային կառուցվածքը, տեխնիկան, այլապես անհամատեղ է ոտար լեզվով գրված, շատ սահմանափակ ընդգրկում ունեցող (հայ բուրժուազիայի այլասերված բարքերի նկարագրությունը) մի վիպի համեմատությունը այնպիսի մի էպոպեային երկի հետ, ինչպիսին է «Վերք Հայաստանի» վիպը, որը հանդիսանում է հայ նոր գրականության սկիզբը, արտացոլում է բուն աշխատավոր ժողովրդի պայքարը իր ազատագրության համար և նվիրված է այնպիսի մի կարևոր պրոբլեմի, ինչպիսին է Հայաստանի արևելյան հատվածի միացումը Ռուսաստանին։

5. Ակնարկում է Վսոդա և Վսոդիա բույրերի անունը, որը պատմվում է Աստվածաշնչում։

6. Մեջբերումը կատարված է Սղիշևից. Տե՛ս Սղիշևի «Վասն վարդանայ և հայոց պատերազմին», Մոսկվա, 1861, էջ 15։

7. Նալբանդյանը այս, և մի քանի այլ առիթներով գործածում է «Ինչնադարյան հերետիկոսարան» Արևմտահայ գրականության մեջ ընդունված ձևն է «Ոսկեմիշյան հերետիկոսարան»։ Նալբանդյանի ոխերիմ հակառակորդ, Հայաստի ռևակցիոներ Զամուռչյանը իր հրատարակություններում այդպես էր կոչում Կ. Պոլսում Մ. Նալբանդյանի շուրջ համախմբված մարդկանց հավաքատեղին, որը գտնվում էր Մեծ Նոր խանի մի՛չանցրային (ոսկեմիշյան) մի սենյակում։ Տերյենցը այս գաղտնի կազմակերպության մասին որոշ տեղեկություններ տալիս է մասնավորապես իր «Մ. Մ. Այվազյանին նամակին քննության ենթարկում, Կ. Պոլիս, 1861 թ.»։

8. Մեջբերումը Հ. Սվաճյանի ծածկանունն է, որը օգտագործված է «Մեղու»-ում։

9. Վանցի Պողոսի մասին տե՛ս ասույն հատորում տպված Նալբանդյանի «Ազգային բվղատություն» հոդվածը (տես նաև հտ. III, էջ 103)։

10. Տիրացու Հոիփսիմեի մասին տե՛ս Նալբանդյանի «Ազգային բվղատություն» հոդվածը (տես նաև հտ. III, էջ 103)։

11. Հավանաբար բանաձում Մ. Նալբանդյանի ձեռքի տակ եղել է ֆրանսիացի գործոդ Արման Կատրֆաժի (1810—1892) ռուսերեն թարգմանված „Превращение в мире животных и человека" աշխատությունը, որ լույս է տեսել Պետերբուրգում, 1859 թվականին։

12. Մեջբերումը կատարված է Ամֆիտարանից։

13. Շիվա, Դուրգա և Վիշնու, հնդկական աստվածներ են։ Ըստ հին հնդկական դիցարանության Դուրգան եղել է Շիվայի կինը և աշխի է բնկել իր գաժանությամբ։

14. Նալբանդյանը օգտագործել է Ֆրանսիացի Հայանի Ֆիզիկիս Ժրանուա Արագոյի (1786—1853) „Гром и молния" աշխատությունը, որ ռուսերեն լեզվով լույս էր տեսել Պետերբուրգում, 1859 թվականին, Խստոնենկու թարգմանությամբ։

15. Նալբանդյանը օգտագործել է Ֆիմմերմանի „Общие физические явления" աշխատությունը, որը 1861 թ. լույս է տեսել Պետերբուրգում։

16. Մեջբերումը կատարված է Աստվածաշնչից։

17. 18. 19. Մեջբերումները կատարված են Ավետարանից։

20. Մեջբերումը կատարված է «Ինքը պատմությանց նկարչին Տարոնոյ, որ կոչի Զենոր Բլակ» գրքից։

21. «Ժամանակ» ունկցիան ուղղության պարբերականը լույս է տեսել Կ. Պոլսում, 1862—1863 թթ.։ Մի շարք հարցերում ամբողջովին պաշտպանում էր Հայոնի ունակցիան գազափարախոս Ջամուռճյանի տեսակետները, դրա համար էլ, Նալբանդյանը իրավացիորեն այդ պարբերականը համարում է Տնորհենցի «բնական» ախրահոչակ հանգնաի ճառը։

22. Մեջբերումը կատարված է Ավետարանից։

23. Ըստ ավանդության Ղուրանի աստվածային Հայտնության լինելը հաստատելու համար, Մուհամմեդը և հայ հոգևորական Սարգիս Բալթարացին պայմանավորվում են, որպեսզի Սարգիսը իր հետ վերցնի գրված Ղուրանը, մանի ջրհորի մեջ, Մուհամմեդի չգրված օրինակը իջնցնի ջրհորը, բարձրացնի Սարգսի փոխած՝ գրված օրինակը և ցույց տալով հավաքված ժողովրդին, ապացուցիր հրաշքը։ Այդ բանը կատարելուց հետո Մուհամմեդը, իբր հրամայում է հավաքված ժողովրդին, մեկ-մեկ բար գցել ջրհորը, որով սպանվում է Սարգիսը։

24. Մեջբերումը կատարված է Աստվածաշնչից։

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Մ. Նալբանդյանը իր այս կարևոր աշխատությունը, որն ուղղված է հայ իրականության մեջ բարբարիչ աշխատանք կատարող եվրոպական գազութարարների դեմ, գրել է բանտում, ամենայն հավանականությամբ 1864 թվականին։ Առաջին անգամ տպագրվել է Կ. Պոլսում լույս տեսնող «Երկրագունդ» հանդեսի 1871 թ. 3-րդ համարում, հետևյալ ծանոթագրությամբ. «Ուսումնասիրելով բարեհիշատակ հանգուցյալին երկու հոդվածը առաջանք, որը ցարդ ուրիշ տեղ չեն հրատարակված. ուստի, ի հիշատակ նորա, «Երկրագնդիս» մեջ կդնենք զանոնք, թեև տող-տող իր կարծյացը բոլորովին համաձայն չենք։ Հոդվածները 7—8 տարի առաջ գրված են, բայց ներկայիս համար ալ բավական հետաքրքրական և միանգամայն օգտակար կոդմեր ունենան։

(«Երկրագունդ», 1871 թ., թիվ 3, էջ 39)։

Մեր ձանապարհով են այս երկու հոդվածները (որոնցից մյուսը՝ նույնպես «Նկատողություն» վերնագրով, հետագայում լույս է տեսել նաև «Փորձ»-ում), ընկել Կ. Պոլիս, հայանի չէ։ Գարգ է միայն, որ Նալբանդյանի բանտում գրած աշխատություններից մի բանիսը, ամենայն հավանականությամբ արտագրություններին միջոցով թափանցել են Թյուրքիա և ձեռքից ձեռք անցել, նաև տպագրվել մամուլում։ Այսպես, նույն այդ թվականներին, Պոլսում սասցվել է նաև Նալբանդյանի «Ազգմիքա»-ի տեքստի արտագրությունը, որից մի հատված միայն հրատարակել է Մ. Մամուրյանը «Արևելյան մամուլ»-ում։

1. Նալբանդյանի քննադատության առարկա հոդվածը լույս է տեսել Հ. Սվաճյանի «Մեղու»-ում, 1862 թ. № № 176, 177, 178, և 1863 թ. № № 220, 221, 222, 223, 226-ում,

ենկարագիր միսիոներական նրնանամյա բնթացից ի Տաճկաստան և տարարախտությունն հայ ժողովրդյան» վերնագրով։ Այդ հոդվածը, ըստ էության արձագանք էր այն պայքարի, որ մղում էին «Մեղու»-ի շուրջը համախմբված առաջավոր մտածողները արևմտաեվրոպական էթոգանսիայի դեմ, այդ թվում ամերիկյան գաղութարարների գործակալ միսիոնարների դեմ, որոնք բալբալիչ աշխատանք էին կատարում մասնավորապես Տաճկահայաստանում։

2. Հանիբալ Փոռթաս (յատիներեն) նշանակում է «Հաննիբալը գռների առաջ էր»։ Ակնարկվում է Հաննիբալի շարժվելը Հռոմի վրա 211 թ. (մեր թ. ա.), գրականության մեջ գործածվում է որպես ասացվածքի նշան։

3. Փաֆագծային հարցական և բացականչական բոլոր նշումները նալբանդյանինն են։

4. Ակնարկում է Թոմաս Մակոլեյի (1800—1859) „История Англии от восшествия на престол Якова II" աշխատությունը, որը լույս է տեսել Պետերբուրգում, 1862 թվականին, Մակոլեյի երկերի 7-րդ հատորում։

5. Հ. Բոկլի (1821—1862) «Քաղաքակրթության պատմությունը Անգլիայում» աշխատության ռուսերեն թարգմանությունը, որ օգտագործել է Նալբանդյանը, լույս է տեսել Պետերբուրգում, 1864 թվականին։

6. Նալբանդյանի ակնարկը վերաբերում է Թորնթոն Օուենի կողմից 1800 թ. Նյու-Լինարկում (Շոտլանդիա) հիմնադրված գպրոցին՝ բանվորների համար։ Մարքսը գրական է արտահայտվել այդ գպրոցի մասին «Կապիտալ»-ում («Կապիտալ», Ա Գիրք, Երևան, 1933 թ., էջ 452)։

7. 17-րդ դարում հիմնված քրիստոնեական աղանդ, որին հետևող ձեռնարկատերերը դաժանորեն շահագործում էին բանվորներին։ Մարքսը քվակերների դաժանություններից ցնցող փաստեր է բերում «Կապիտալ»-ում (տե՛ս «Կապիտալ», Ա հատոր, էջ 205)։

ՀԵԳԵԼԸ ԵՎ ՆՈՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Գրվել է բերդում, 1863 թ. օգոստոսին։

Առաջին անգամ տպագրվել է «Լուսա» ամսագրի 1902 թ. № 10-ում։ Այնուհետև ձեռագրի հիման վրա առաջված տեքստը մտել է Մ. Նալբանդյանի «Երկեր»-ի Գ հատորը (1940 թ.)։ Ձեռագիրը պահպանվում է Նալբանդյանի արխիվում։

Իր տարբեր բնույթի երկերում Նալբանդյանը հաճախ է շոշափել փիլիսոփայական հարցեր, և խոսել փիլիսոփայության գերի մասին, սակայն «Հեգելը և նորա ժամանակը» նրա միակ գործն է, որի նյութը ամբողջապես փիլիսոփայությունն է։

«Հեգելը և նորա ժամանակը» երկում Նալբանդյանը հաճախ է հենվում Ջերմինյանցու վրա, գրանորում իր գաղափարական կապը և մատերիալիստական փիլիսոփայական հայացքների ընդհանրությունը ռուս հանճարեղ մտածողի և ռևոլյուցիոն դեմոկրատի հետ, բերելով նրանից ընդարձակ մեջբերումներ։

1. Ռուդոլֆ Հայմից (1821—1901) բերված այս և հետագա բոլոր մեջբերումները կատարված են նրա «Հեգելը և իր ժամանակը» աշխատության (1857 թ.) ռուսական թարգմանից (R. Гайм.—„Гегель и его время", пер. Сольянкова. СПБ. 1861), որ եղել է Նալբանդյանի տրամադրության տակ, բանտում։

2. Բանտում Մ. Նալբանդյանի տրամադրության տակ եղել են նաև ռուս նշանավոր պրոնական Տ. Ն. Գրանովսկու (1813—1855) աշխատությունները, որոնցից կատարված են այս և հետագա մի քանի մեջբերումները։

3. Մեջբերումը կատարված է Հայմից. R. Гайм. „Гегель и его время", стр. 8.

4. Ակնարկում է 1833 թ. ընդունված բնաբանական նախագծին։

5. Տե՛ս R. Гайм, նույն տեղում, էջ 375։

6. Habeas corpus — լատիներեն բառացի նշանակում է «մարմին ունենաս». Այդպես էր կոչվում 1679 թ. ընդունված այն ակտը, որի համաձայն ամեն մի ձերբակալություն պետք է կատարվեր պատշաճաորանված հրամանով։

7. Բանաում ամենայն հավանականությամբ Նալբանդյանի տրամադրության տակ եղել են „Современник"-ի այն համարները, որոնք պարունակում էին Ն. Գ. Չերնիշևսկու հայտնի հոդվածները, որտեղ ասւա մեծ մտածողը զարգացնում էր իր տնտեսականները հասարակական սկզբունքի (общинное начало). այսինքն՝ ուտոպիան համայնքի մասին, որպես ապագա սոցիալիստական հասարակարգի հնարավոր ապագա նրա տրամադրության տակ եղել է մասնավորապես „Современник"-ի այն համարը (1858 թ.), որտեղ տպագրված էր Ն. Գ. Չերնիշևսկու «Համայնական հողատիրության հակառակ փիլիսոփայության նախապաշարումների քննադատություն» նշանավոր հոդվածը, որից Նալբանդյանը կատարել է մեջբերումներ, առանց հեղինակի անունը հիշատակելու։

8. Տե՛ս Р. Гайм. նույն տեղում, էջ 377—378։

9. Նույն տեղում, էջ 378։

10. Նույն տեղում, էջ 380։

11. Նախորդ՝ չակերտների մեջ առնված հատվածը Նալբանդյանը նույնությամբ թարգմանել է Չերնիշևսկու «Համայնական հողատիրության հակառակ փիլիսոփայական նախապաշարմունքների քննադատություն» հոդվածից (տե՛ս Н. Г. Чернышевский, „Полн. собр. соч." т. V Москва, 1950, стр. 363).

12. Դարձյալ բառացի թարգմանություն Չերնիշևսկու նույն հոդվածից (տե՛ս Н. Г. Чернышевский, „Полн. собр. соч., т. V, Москва, 1950, стр. 387).

13. Վերցված է Աստվածաշնչից։

14. Այս հատվածը նույնպես Նալբանդյանը թարգմանաբար վերցրել է Չերնիշևսկուց։

ՀԱՏՎԱԾՆԵՐ «ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՔՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Գրվել է բանաում 1862—63 թվականներին. Առաջին անգամ լույս է տեսել «Համայնքում», 1900 թ. № 1-ում։ Տպագրում ենք ըստ «Նիվ»-ի տեքստի։

1. Ասացին բառով Նալբանդյանը ակնարկում է Ն. Գ. Չերնիշևսկուն, որի անունը նա բանաում չէր կարող գրել։

2. Այս հատվածը վերցված է Նեքրեևից։

3. Ակնարկում է «Տնտեսի հայոց աշխարհին» ամսագրին, որը նման կարծիք էր հայտնել (տե՛ս «Տնտեսի», 1862 թ., երկրորդ կիսամյակ, էջ 661)։

4. Վերցված է Ավետարանից։

ՆԱՄԱԿՆԵՐ

Մ. Նալբանդյանի նամակներից՝ ուղղված իր հարազատներին, գաղափարակիցներին կամ պաշտոնական անձանց, մեզ հասել է մոտ 100 նամակ։ Դրանցից այս հատորի համար ընտրել ենք միայն այն նամակները, որոնց մեջ առավել մեծ չափով է խոսվում հասարակական-քաղաքական հարցերի մասին, հայ գրականության, պատմության և կուլտուրայի այլ բնագավառների մասին։

Նալբանդյանի՝ բանտից գրած նամակները առանձին են։ Նկատի ունենալով, որ դրանց բնագիրը և թարգմանությունները մանրամասն ծանոթագրություններով լույս են տեսել Նալբանդյանի Նիվ-ի 4-րդ հատորում, մենք նպատակահարմար գտանք հրատարակել միայն հայերեն թարգմանություններդ, համառոտ ծանոթագրություններով։

1. Ակնարկում է Հովհաննես Բերբերյանին, որ եղել է Մ. Նալբանդյանի մտերիմ

ընկերներից մեկը,— բանաստեղծ այցելել է նրան և Նալբանդյանի մահից հետո հետաքրքրվել է ցարական կառավարության կողմից՝ Նալբանդյանի թողած արտասանած դամբանական ճառի համար։

2. Ակնարկում է Անանիա Մուշեղյանին, որ եղել է Նալբանդյանի ամենամերձավոր գաղափարակիցներից մեկը։

3. Ըստ երևույթին խոսքը վերաբերում է Մ. Նալբանդյանի «Մինչեն խոսք, մյուսին հարցն» վեպին։

4. Համապատասխան նկատի ունի իր թարգմանած «Փափուռական հրեայ»-ն։

5. Ակնարկում է իր «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» հոդվածաշարքը, որը լույս է տեսել «Հյուսիսափայլ»-ի 1858 թ. № № 5, 6, 11-ում։

6. Խոսքը Թիֆլիսում Սա. Մանդինյանի խմբագրությամբ լույս տեսնող «Մեղու Հայաստանի» պատկանողական գործերակաների մասին է։

7. Ակնարկում է Սարգիս Նազ. Ջալալյանին։

8. Ակնարկում է Մսեր Մսերյանցին, ունակցիան «Ճռաքաղ» պարբերականի խմբագրին։

9. Նկատի ունի Սա. Ոսկանի հոդվածները «Արևմուտք»-ի 1859 թ. 4, 5 և 6-ում, Գ. Այվազովսկու դեմ։

10. Մ. Նալբանդյանի ծոցատետրից երևում է, որ նա մի շարք նամակներ է գրել իր համախոհներից Հ. Մվաճյանին, շարադրելով իր տեսակետները օրվա հուզող հարցերի մասին։ Մվաճյանը հնարավորություն չտեսնելով դրանք հրատարակել սուլթանական ցենզուրայի պայմաններում, պահել է երկար ժամանակ և կյանքի վերջին տարիներին, 1871 թ. դրանցից մեկը՝ հրապարակել է «Մեղու»-ի 1871 թ. սեպտեմբերի 9-ի համարում։ Նամակին կցած սեզմ ծանոթագրության մեջ նա հայտնում է, որ իր նպատակն է «այն վաղամեռիկ մարդուն, այն իրավամբ գիտուն և ստուգապես ազգասեր չնաշխարհիկ Նալբանդյանցի վարքը գրել, զոր պարտ մը անազատ եմ ինձի, իր մանրամասնություններին մին ըլլալու պատիվը ու բախտը ունեցած ըլլալուս համար»։

Մվաճյանը այս տողերը գրելուց 3 տարի հետո վախճանվեց, առանց հնարավորություն ունենալու կատարելու իր խոստումը։

11. Ակնարկում է Հովհաննես Բերբերյանին։

12. Ակնարկում է «Հյուսիս» շաբաթաթերքը, որ 1863 թ. լույս է տեսել Պետերբուրգում, Ռ. Գաբրիելյանի խմբագրությամբ։

13. Ինչ խոսք, որ Նալբանդյանի այս խոսքերը մեծագումարն հակառակ էին նրա բազաբական համոզմունքներին։ Ամենայն հավանականությամբ բանտային գրաքննությանը մոլորեցնելու համար էր նա գրում նման տողեր։

14. Ակնարկում է երաժշտագետ Հովհ. Սահրադյանին, որը եղել է Նալբանդյանի բարեկամներից։

15. Ըստ երևույթին նկատի ունի ֆրանսիացի բուրժուական պատմաբան Գիզոյի (1787—1874) «Եվրոպայի քաղաքակրթության պատմություն» աշխատությունը։

16. Ակնարկը վերաբերում է Մ. Մանդյանցի «Ճռաքաղ»-ի գաղափարին։

17. Նալբանդյանը չի հիշել թվականը։ Մայաթ-Նովայի երգերը՝ Գ. Հախվերդյանի խմբագրությամբ և ծանոթագրություններով լույս են տեսել Մոսկվայում, 1852 թվականին։ Նալբանդյանի վերոհիշյալ տողերից երևում է նրա միանգամայն գրական վերաբերմունքը Մայաթ-Նովայի երգերի նկատմամբ։

18. Ք. Տ.-ի ով լինելը պարզված չէ։

19. Այս նամակը նույնպես հայտնի չէ, քն ուսն է ուղղված։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Խմբագրական հոդվածք 5

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգագրություն 9
Հիմարաց աւժան վրա ունեցած կարծիքը 11
Մարզպան 12
Բանաստեղծ 13
Վաղոց Չրխե 14
Վեցերորդը-ժի շնար 15
Վայր բնիկոց ատպեր 17
Ազբատ կին 20
Ապրանքն 23
Հայ մարգու հայրենիքը 24
Մանկություն օրեր 27
Սուրբ Մեսրոպի տանին 29
Ուղեւոր 31
Օշական 32
Ժ. ժ. Թումանյի հիշատակին 35
Մամիկոնյան Մեծ Վահանի պատմությունը 37
Կնդուկ պոչատի և նորա Սանչոյի մկրտությունը 39
Հիշենք 40
Ազգմիք—նախահոր արկածները 42

ԱՐՁԱԿ

Մեհեկահարցուկ 53

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

. 139
Հիշատակարան 325
Հատկացան Քաֆտատեան հրեայի 335
Կրթական հանգես Նոր Հայաբնակության 344
Նկատողություն 356
Հրաշափառ խաչատառնկություն 358

Նամակ ամենուին խմբագրին 359
Երկու տող 367
Ազգային թատրոն Գոլսի մէջ 369
Գալատիոյ լուսաժորչական համայնքը 394
Երկրագործութիւնը որպես ուղիղ ճանապարհ 401
Երկու խոսք, թե ինչպես է մեր հայացքը մի օրագրի պաշտոնակատարութեան մասին 462
Յառաջ է լսվելու համար 470
Երբեմն ամա և վարդիներին 479
Նկատողութիւն 547
Հնգելը և նորա ժամանակը 552
Հատուածներ Աշխարհաբարի քերականութեան ներածութենից . . . 577

ՆԱՄԱԿՆԵՐ 597

ՄԱՆՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 659

Հրատարակչության խմբագիր
Ե. ՋԱՐՑԱՆ

Սուպերք, կազմք, ֆարզացր. անվանաբերքերը և գլխագործերք
Ճկարիչ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՑԱՆԻ

Տեխնիկական խմբագիր
Գ. ՍԱՐՈՑԱՆ

Կոնտրոլ սրբագրիչներ
Ա. ՇԱՂԳԱՄՑԱՆ, Հ. ԲՈՒՋԻԿԱՆՑԱՆ

Վկ 03744, Խվհ 145, Հրատ. 915, պատվեր 92, տիրաժ 6000

Հանձնված է արտադրության 23/II 1953 թ., տպագրված է տպագրության 23/VIII 1957 թ., թուղթ 70×108¹/₁₆, տպագր. 42³/₄ մամ. + 2 ներդիր, 42,5 հրատ. մամ.։ Գինը 12 ռ. 75 կ., կազմը 2 ռ.

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան փող. 124։

...Ես անբարբառ մի տեսակ
Երկու ձեռքս պարկեցի,
Եվ իմ անկար թոռներով
Ակարտոլցումն գրկեցի...

Ասում են, ապագայում, երբ
հիմնովին մարդկությունը ապագա-
յանա վերաբերմունքը, մեզ
խոհարար անվան...

Ն. ԵՐԵՄՅԱՆԻՑ

ՀԱՊՀ Հիմնարար գիտ. գրադ.

A II 28786